




g (~)
p-87









Խ Օ Ս Ք

Պ. Ա. Ս. Ն

Տ Ի Ե Ջ Ե Բ Ը Կ Ը Ն

Պ Ը Տ Մ Ո Ի Թ Ե Ը Ն

2004

F-87

480-664

2307 y.

Բ Ո Ս Ո Ւ Ե Տ Ե Յ

ՄԵՂՂԵՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Խ Օ Ս Ք

ՂԱՍՆ

Տ Ի Ե Զ Ե Ր Ե Կ Ե Ն

Պ Ե Տ Մ Ո Ւ Թ Ե Ե Ն

Թ Ե Ր Գ Մ Ե Ն Ե Ը Լ

ՅԱՀԱԿԵՐՏԱՅ ՄԻԹԵՐԱՅ ՄԵՇԻ ԱՐԲԱՅԻ

Ի Ե Ն Դ Ր Ո Յ

Ե.ՐՆՈՒԵԿԵՆ ՊԵՐՈՆ ՅՈՎՀԵՆՈՒ

ՄՈՒՐ Ե Տ Ե Ե Ն Յ

Ե Ի Ն ՈՐԻՆ Ծ Ա Խ Ի Ի Գ Գ Ր Ո Շ Մ Ե Ը Լ

N 27.



Ի Վ Ի Է Ն Ն Ը

Ի ՂԱՍՆ Պ. ՍՈՒՐԻ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

1841



1810
40395

9 (~)

7065

7065

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

PHYSICS

1923

PHYSICS

PHYSICS

PHYSICS

PHYSICS

PHYSICS

PHYSICS

PHYSICS

PHYSICS

7065

Handwritten initials



PHYSICS

PHYSICS

PHYSICS



Յ Ե Ռ Ե Ջ Ե Բ Ե Ն

ՕՐՈՍՈՒՒՑ ԸՆԴ այնպիսին համարիմ, որք բազում
իւիք զարմանալի խցեն, եւ դորձք կենաց նոցա դժուարինք առ ի սատմել, որպէս ոմն ուրեմն յիմաստնոցն եւ ի ճարտարաց ասաց: Իմաստութեամբն եւ հանձարով հաւասար դուաւ իմաստնոցն առաջնոց, եւ զբազմօք անցոյց զանցոյց. ուսուցիչ է յեկեղեցւոջ բանիւք եւ խրատու, եւ խստամբերութեան վարուքն՝ օրինակ առ աքրինութեան, փիղիսոփայութեան ճարտարութեան հմուտ, եւ աստուածխօսութեան բանից տեղեակ եւ ծանօթ: Ի դոյզն կարգէ բարձրացեալ ընդ աջմէ մեծա մեծաց երկրի, եւ կոչեցեալ յարբունիս թագաւորաց, եղեւ սիրելի եւ մեծարեալ ի մեծ թագաւորէն, եւ զօրագոյն հանձարով եւ առաքինութեամբ:

ԸՅԼ եւ բազմապատիկ գրովք իւրովք ընդ ամենայն աշխարհ փառաւոր եւ քաջանուն եղեւ. յորոց ազնուազոյն ՏԵՅՏԵՐԱԸՆ ԳԵՏՄՈՒԹՅՈՒՆ է, յորում զեւրաքանչիւր զմատենագրացն զանցնիւր ճարտարութիւնս միանգամայն առեալ սպայճառանայ: Իբրեւ զթուակի դիդէս քաղաքաց կարդս եւ յօրինուածս ցուցանէ, իբրեւ զՔսենոփոն վարժիչ երեւի, իբրեւ զՏիտոս

Վիւիոս բանիրուն ճարտարախօս : Ընդ ամենայն ընթաց, ընդ հանուր արշաւի, եւ ընդ բնաւ սլանայ, եւ ի բելր կերպարանս փոփոխի. մերթ նահապետ յերկրին քանանացւոց, մերթ սպասաւոր ի տան թագաւորին բարեղացւոց. երբեմն ընդունայնութեան պաշտամանն կշտամբիչ ի Մեմփիս, երբեմն ի Սպարտիա օրէնադիր, երբեմն աթենացւոց եւ հռոմայեցւոց քաղաքի քաղաքացի, եւ նոցին խորհրդոցն խորհրդակից : Ի ժամանակաց ի ժամանակս փոփոխի, եւ տեղեաց ի տեղիս. ընդ ամենայն անցեալ սահեալ, զամենայն ինչ որ խկզբանէ եղեալ էին, համառօտ պատմէ :

Եւ քանզի զաստիարակ լեեալ էր որդւոյ թագաւորին, որ ժառանգն էր աթոռոյ թագաւորութեանն, եւ փոյթ ի մտի ունէր զմանկութեան միտս արքայորդւոյն, ի ծերութեան պարարտութեան իմաստութիւն փոփոխել, զբազում ազգաց պատմութիւն եհար ի մատենի. զիւրաքանչիւր թագաւորս եւ զգորավարս, եւ զմիոյ միոյ զքաջութիւն եւ զվատութիւն կարգեաց եդ, զի ընդ նոսա հայեցեալ՝ ուսանիցի զառաքինութեանն զանուականութիւն եւ զչարութեանն զյոռութիւն, եւ բարեացն նախանձաւոր լեեալ նմանել, եւ խորշել մերժել զանձն ի չարէ անախ :

Արդ՝ քանզի զայսպիսի ցանկալի մատեան բազումք յազգաց ի լեզուս իւրեանց թարգմանեցին, զնոյն ցանկացեալ ազգասէր եւ ազնուական Պարոն Յովհաննու Ս. Մուրատեանց, արժանի որդւոյ մեծի բարերարի ազգիս, Պարոն Սամուէլի Ս. Մուրատեանց, զի եւ ի մեր լեզուս փոխեսցի ինդրեաց ի մէջ թար-

դմանեւ զգիրսն, զի մի ի շահից անտի օգտութենէ՝ աղ-
գբս զըկեալ գտանիցի, եւ անդոսնիցի, զոր օրինակ
զՅոյնս ի ձեռն եգիպտացւոյն Պղատոն յանդիմանիցէ՝
թէ Յոյնք միշտ մանկաի են, վասն զուսումն զհին ժա-
մանակին չունելոյ։ Քանզի զե՞նչ ընդհատ ի մանկուոյ
իցէ, որ զեւրոյ ժամանակին եւ եթ զգիտութիւն ու-
նիցի։ Իցեն ծերք հինօրեայք՝ որոց տարեւոր միտք
իցեն, եւ մանկունք մատաղօրեայք՝ ալեւորք մտօք։

Քսոյն ցանկալի մատեան ի մէջ գաղիացւոց բա-
զումք բազում անգամ դրոշմեցին, որ ուրեք ուրեք ի
միմեանց այլակերպք են։ Մեզ դրոշմեալն ի թագաւո-
րակաց քաղաքն Պարիս, յարքունի արուեստանոցի Ֆիր-
մինոսի Վիդոտեայ, բարւոք թուեցաւ. զի այն է բուն
օրինակ մատենադրին՝ զոր ինքն իսկ ետես, եւ ինչ
ինչ փոփոխումն արար կամ յաւելուած. զոր յայնմ
ժամանակէ հետէ այնպէս ձուլեալ դրոշմեն, զոր եւ մեր
գտեալ զդրոշմեալն յամի հաղարերորդի ութհարիւրո-
դի երեսներորդի վեցերորդի, թարգմանեցաք։ Իսկ ո-
մանք եւ յետ մահուանն յաւելուածս ինչ բանից ձե-
ռագիր գտեալ առ նմա, ի բուն կարգ անդր դրոցն յա-
ւելին. բայց մեզ չթուեցաւ հաճոյ զյաւելուածսն զայ-
նոսիկ ի կարգի դրոցն թարգմանել, զի եթէ մատենա-
գիրն յաւելուլ զայնոսիկ ի մտի ունէր, բայց թերեւս
այլադէ ինչ։ Ըսդ մէք զբուն օրինակն՝ որպէս էրն պա-
հեցաք, իսկ զյաւելուածսն զկնի դրոցն ուրոյն կար-
գեցաք, զի որք կամիցինն՝ այնմ եւս լինիցին տեղեակք։

Քայս ամենայն ջան յանձն առեալ վաստակեցաք,
ոչ ընդ վայր ինչ եւ վայրապար փութացեալ, այլ ի

բարւոք ակնկալութիւն զանձինս ապաստանեալ թէ
որ ընթեռնուցուն, ի միտ առցեն զաշխարհի փառաց
ընդունայնութիւն, եւ զարմասցին ընդ եկեղեցւոյ Աս-
տուծոյ անշարժութիւն եւ անմեղկութիւն եւ ամբու-
թիւն: Օ՛րհ հայեցեալ ընդ իրս մարդկօրէնս՝ որ իրրեւ
զանիւ շրջըջին եւ իրրեւ զվտակ սահին, մի բեւեռեա-
ցուք ընդ չխայս եւ ընդ չմնալիս, այլ հաստատեալ ի
գեղեցիկ խարխսն յուսոյ, անշարժ կացցուք ի Վրիս-
տոս Յիսուս՝ որ երէկ եւ այսօր նոյն եւ յաւիտեանս:



Խ Օ Ս Ք

Վ. Լ. Ս. Ն.

ՏԻԵՂԵՐԵԿԸՆ ՊԵՏՄՈՒԹԵԸՆ

Ը Ռ

ԸՆԳՐԸՆԵՒԿ ՈՐԳԻՒԹԵՂԸՆՈՐԻՆՆԵՐՆԵՐ



ԹԻՒ Վ. Լ. Ս. Ն. ԷՐ ԻՐԻՔ ԳՐԵՅԸՆԻ ՍԵՏԵԸՆՍ

ԼՅՈՒՆ՝ անողուտ ինչ այլոց ի մարդկանէ պատմութիւնն կարծիցի, իշխանաց պարտ է տալ զի բնթեոնուցուն. քանզի չիք ինչ քան զնոյն պատշաճական առ ցուցանել եւ յայտ առնել նոցա, զոր ինչ միանգամ ախտք ոգւոցըն, եւ շահից ցանկութիւն, եւ ժամանակք, եւ դէպք եւ խրատք շարացն եւ բարեսաց բաւական իցեն վճարել ։ Պատմութիւնքն զգործոց՝ որ նոցա ի դէպ իցեն, ճառեն. եւ ամենայն ինչ՝ որ ի պատմութեան իցէ, թուի՝ թէ ի նոցա պէտս լեալ իցէ ։ Օ՛ ի եթէ կարեւոր իցէ նոցա զբազում իրաց զգործ առնուլ, առ ի շահելոյ զեմաստութիւն՝ որ տայն բարւոք թագաւորել. չիք ինչ աւելի շահաւոր ի նոցա կրթութիւն, քան զգործ իրացն՝ զոր հանապաղ առնուն, յօրինակս անցելոց ժամանակացն յաւելուլ ։ Փոխանակ այնր՝ զի բազում անգամ իւրեանց հնազանդելոցն եւ անձանց պարճանաց քնասու, ուսանին դատաստան առնել զըժուարին ինչ իրաց՝ որ դիպին նոցա ։

*) Ստորագրելու Վեպին տէ. քանզի որոշող անորոշից ինչորոշ
բոցն քանզի որոշող յառնելոյն Վեպին ինչին ։

եթէ, օգնականութիւն ի պատմութենէ առնուցուն, այնուհետեւ՝ առանց ինչ փաստու, յանցելոց զխլաց ուսանիցին զԼուսնայն միտս յարդարել : Աւ իրբեւ տեսանիցեն զիշխանն՝ որ մինչ զեռ կենդանիքն էին, ի բազմաց առնուին զովութիւն, եւ այժմ՝ առաջի ամենայն մարդկան խայտառակեալ ի մէջ զան ակաք ծածուկք ողւոց նոցա, ամաչեսցեն պատկառեսցեն ուրախ լինել ընդ փաղաքշանս մարդահաճոյիցն եւ սուտակասպասաց . եւ ի միտ առնուցուն՝ թէ ճշմարիտ փառաւորութիւն այն է, յորժամ արժանի ըստ որոց գործեսցն որ ինչ, փառաւորիցի :

Պարձեալ եւ ամօթ իսկ է, ոչ եթէ իշխանի միայն, այլ եւ ամենայն մարդոց իմաստնոյ առ հասարակ, չղիտել զազո մարդկան եւ զփոփոխմունսն նշանաւորս՝ որ յիւրաքանչիւր ժամանակս յաշխարհի զխլեցան : Օ՛ի եթէ չուսանիցի որ ընտրել ի պատմութենէ զժամանակսն, այնպիսի զմարդիկ համարիցի ընդ օրինօք բնութեան եւ ընդ օրինօքն գրելովք, որպիսի ինչ ընդ աւետարանին օրինօք իցեն . յայնժամ զՊարսից՝ որ առ Աղէքսանդրիւ ի պարտութիւն մատնեցան, իրբեւ զնոցանէ՝ որ յաղթեցինն առ Ալեքսանդր, ճառիցէ . նոյնպէս զՅուդայ աշխարհն այնպէս ազատ ի Փիղիպպեայ ժամանակսն համարիցի, որպէս ի ժամանակսն Թաւմիստոկի կամ Միգաղապեայ . եւ զազոն Հռոմոց այնպէս համարձակեալ առ Թագաւորօքն կարծիցէ, որպէս առ հիւպատիւքն . եւ զԵկեղեցի այնպէս խաղաղացեալ առ Վիտղղետիանոսիւ հաշուիցի, որպէս առ Առստանդիանոսիւ . եւ զՎաղկացւոց աշխարհս՝ որ յուզէրն եւ խռովէր յընտանի պատերազմաց ի ժամանակսն Արտողոսի Թերորդի եւ Ներսիկոսի Վորդի, այնպէս հարուստ եւ հզօր համարիցի որպէս ի ժամանակսն Ղուգովիկոսի Վժ կորդի, յորում միարանեալ ընդ մեծ թագաւորան ի վերայ ամենայն եւրոպէացւոց աշխարհին նշան յաղթութեան կանգնէ :

Արդ՝ զի դու յանպատեհ իրաց աստի զերծանիցիս, ընդ հին եւ ընդ նոր պատմութիւնսն անցեր : Աւ յառաջ քան զամենայն ինչ ի դրոց սրբոց ընթերցար ըզպատմութիւն ժողովրդեանն Աստուծոյ, որ հիմն իսկ

է ևւ հաստատութիւն կրօնիցն: Աւ շեա ինչ անտեղեակ ոչ Յունաց ևւ ոչ Հռոմոնց պատմութեան. ևւ որ կարեւորագոյն էր, այն փութով ցուցաւ քեզ, պատմութիւն մեծի թաղաւորութեանս այսորիկ՝ զոր պարս ևւ պառչաճ է քեզ բարեշէն երջանիկ դործել:

Այլ զի մի պատմութիւնքս այս, ևւ այլն ամենայն՝ զոր դեռ ևւս ուսանելոց ես, խառնակեալ շփոթեցին ի միտս քո, հարկ է մի ըստ միոջէ զամենայն զկարգ ժամանակացն համառօտիք կարճառօտս քեզ յանդիման կացուցանել:

Այս օրինակ՝ տիեզերական պատմութեան, առ իւրաքանչիւր աշխարհաց ևւ ազգաց պատմութեան այնպէս է, որպէս պատկեր ինչ համօրէն աշխարհիս առ պատկերի վայրաց ինչ կամ վաւառաց: Օ՛ի ի պատկերի տեղոց իրիք զամենայն կողմանս թաղաւորութեան կամ գաւառի միոջ տեսանիցես, իսկ ի պատկերս համօրէն աշխարհիս ուսանիցիս զիւրաքանչիւր կողմանս աշխարհիս յանցնիւր կայանս կացուցանել. ևւ նշմարիցես թէ զինչ Պարթան կամ կղզին Վաղիայ ի թաղաւորութեանն իցէ, ևւ զինչ սա յերոսկէացոց աշխարհին, ևւ Աւրոսն ի տիեզերս:

Բայտ նմին օրինակի ևւ ուրոյն վէպք զկարգ իրացն՝ որ ի միում ազգի դիպեցան, մանր մասամբք յանդիման կացուցանեն. այլ զի զամենայն ի միտ ոք առնուցու, հարկ է զհամեմատութիւն զանցնիւր պատմութեանց՝ զոր ընդ միմեանս ունիցին, դիտել. արդ՝ զսոյն ի համառօտ պատմութենէ մարթի ոք ուսանել, յորում զամենայն կարգ ժամանակացն միանգամայն ոք տեսանիցէ:

Այսպիսի կարճառօտ պատմութիւնս տեսիլ մեծ քեզ ցուցանիցէ: Օ՛ամենայն ժամանակնս առաջինս, իբրև ի միում վայրկեան ժամանակի, ի մէջ ածեալ տեսանիցես. զտէրութիւնն նշմարիցես՝ թէ զկարգ զմիմեանս փոխանակիցեն. ևւ որպէս կրօնք ճշմարտութեան, յազգի ազգի փոփոխմունսն, ի սկզբանէ աշխարհի մինչև ի մեր ժամանակս, կացին ի կայի ևւ ի հաստատութեան:

Օ՛կարգ երկուց իրացս, զկրօնիցն ասեմ ևւ զտէրութեանց, պարս է քեզ ունել ի մաի. ևւ քանզի

կրօնք եւ քաղաքաց տեսչութիւն երկու կողմանք հաստատութեան են, յորոց վերայ շրջ շրջին իրք մարդկօրէնք, որ միանգամ միա եղեալ նայիցի ընդ իրան ընդ այնոսիկ՝ որ ի համառօտ մատենի բովանդակեալ կայցեն, եւ այնպէս զամենայն զկարգն առնուցու ի միա, այնպիսին բովանդակեաց մտօք իւրովք զամենայն մեծամեծս մարդկան եւ եկաց ի վերայ համօրէն իրաց աշխարհիս:

Արդ՝ զոր օրինակ յորժամ զպատկեր համօրէն աշխարհի նկատիցես, ելանես ի դաւառէ՝ յորում դուզ ծնեալ ես, եւ ի տեղւոջէ՝ յորում դու կաս, արշաւել ընթանալ ընդ ամենայն երկիր բնակութեան՝ զոր մտօք ամփոփեալ ունիս հանդերձ ամենայն սահմանօքն ճովու եւ ցամաքի. նոյնպէս յորժամ ընդ համառօտ կանոնս ժամանակագիր մատենից անցանիցես, ըստ անձուկ սահմանս աւուրց կենաց քոց արտաքս ելեալ ընդ ամենայն յաւիտեանսն ընթանայցես:

Այլ որպէս ոք առ զիւրաւ տեղեակ լինելոյ վայրաց, նախ՝ զքաղաքս ինչ գլխաւորս նկատեալ ունի ի մտի, եւ ապա՝ զայլ եւս քաղաքսն զնորօք զետեղէ, իւրաքանչիւր ըստ իւրում անջրպետութեանն. ըստ նմին օրինակի եւ ի կարգի դարուցն պարտ եւ պատշաճ է ընտրել ժամանակս ինչ նշանաւորս՝ յորում մեծամեծ ինչ դէպք պատահեցին, յորս զայն ամենայն պարտ է ածել:

Այս իսկ է՝ որ աստուծոյ կոչի, ի յոյն բանէ անտի՝ որ աստուծոյ * նշանակէ. քանզի անդէն, իրրեւ ի տեղւոջ ուրեք հանդստեան, դադարիցէ ոք, զամենայն՝ որ ինչ յառաջ կամ յետոյ զխպեցաւ, նկատել. զի մի զժամանակն շփոթիցէ:

Աւ աստէն ի սկզբանս սակաւ ժամանակս արժան է ընտրել, որպէս ի նախնեացն պատմութեան գտանեմք:

Ազամ, կամ արարչութիւն.

Մոյ, կամ ջրհեղեղն.

Աբրահամու կոչումն, կամ սկիզբն ուխտին Աստուծոյ ընդ մարդկան.

Սոփսէս, կամ դրով օրէնք.

*) Այս լատին գաղտնիքս քաղաքացի արժան է ինչնալ:

Ընունը Խղիննի.

Սողունն, կամ տաճարին կազմած.

Ումիզոս, կամ շինուած Հոմ քաղաքի.

Աւերոս, կամ դառնալ Հրէից ի գերութենէ.

Սկիպիոն, կամ կարքեդոնացւոյն ի պարտութիւն մասնել.

Օնունդն Վրիստոսի.

Աստանդիանոս, կամ խաղաղութիւն եկեղեցւոյ.

Աարողոս մեծ, կամ Հաստատութիւն նորոյ տէրութեանն:

ՕՀաստատութիւն նորոյ պետութեանն առ մեծն Աարողոսի, իրրեւ զվախճան նախնեաց պատմութեան զնեմ, քանզի անդէն իսկ վախճանեցաւ առաջին տէրութիւն Հոռոմոց. եւ վասն այնորիկ իսկ անդէն ի նմին նշանաւոր վայրի զտիեզերական պատմութիւնս Հանդուցանեմ: Իսկ որ ինչ յետ այնորիկ լեալ իցէ, զայն քեզ յայլում մատենի գրեսցուք, եւ ածցուք Հաստուցուք զքեզ մինչեւ ի ժամանակս յայս՝ զոր տեսանեմք պայծառացեալ գործովք քաջութեան հօրն քո արքայի. յորում ժամանակի հայեցեալ եւ ընդ քեզ՝ զի փութաս ստէպ զհետ երթալ Հայրենի առաքինութեանն, եւ այլում եւս փառաւորութեան ի քէն ակն ունիմք:

Ըրդ՝ յետ ցուցանելոյ թէ վասն էր իրիք գրիցեմք զմատենս, զերիս ինչ առնելոց եմք. որպէս զի զոր ակն ունիցիմք ի մատենէս շահել, շահիցեմք:

Նախ՝ հարկ է ընդ քեզ ընդ ժամանակսն՝ զոր առաջի եղի, անցանել. եւ սակաւ բանիւք զերեւելի երեւելի դէպսն՝ որ ըստ իւրաքանչիւր ժամանակաց զի պեցան, նշանակել. զի ընդելանիցին միտք քո զիւրաքանչիւր ի դիպաց անտի յիւրում տեղւոջ կացուցանել, միտ եզեալ միայն կարգի ժամանակացն: Այլ քանզի յօժարութիւն ի մտի այն կայր՝ զի ցուցից քեզ ի կարգի աստ ժամանակացն, զկարգ կրօնիցն եւ զմեծամեծ պետութեանց. յետ զիրս երկոցունց սոցա ի միասին ըստ դնացից ամացն գրելոյ, սկսայց միւսանդամ առանձինն ճառել կարեւոր քննութեամբք, նախ զայնցանէ՝ որ ԲՄԸՏԼԶԵՆԵՒՈՐ ՏԵՆՈՒ ԿՐՕՒԻՅՆ մեղ ցուցանիցեն, եւ ապա՝ թէ ԲԻՆԶ ԳՆՏՈՒՄ-Ր ԻՅՆ ՓՈՓՈԻՆՈՅ ԳՆՏՈՒԹԵՆԵՆ:

Այնուհետև զորինք եւ ի նախնեաց պատմութեանէ ընթերցցիս, ամենայն քեզ յօգուտ լինիցի: Ազգանցանիցեն զքեւ ինչ դէպք՝ զորոց չմանայցես զկատարածն: Չարմասցիս դու ընդ կարգ խորհրդոցն Աստուծոյ, զոր ի վերայ իրաց կրօնիցն ցուցանէ. տեսանիցես եւ զյօրինեալ յարդարումն իրաց մարդկան, եւ անտի ծանիցես՝ թէ որպիսի ինչ խորհրդով եւ իմաստութեամբ զայն ամենայն սբարտ իցէ վճարել:



ԱՌԵՋԱԿՆ ԴՊՐՈՒԹԻՒՄ

Ե Ա Մ Ա Ն Ա Կ Ք

1874-1875

ԵՌԵՋՒՆ ԳՊՐՈՒԹՒՒՆ

Ե Մ Ե Ն Ե Կ Ք



Ե Մ Ե Ն Ե Կ Ե

ԵՊԵՄ ԿԵՄ ԵՐԵՐՉՈՒԹԻՒՆ

Ե Ռ Ե Ջ Ւ Ն Գ Ե Ր Ե Շ Խ Ե Ր Է Ի

ԵՌԵՋՒՆ ժամանակն՝ անդէն ի սկզբանն տեսիլ մեծ քեղ յանդիման կացուցանէ. զԱստուած՝ որ զերկինս եւ զերկիր իւրով բանիւն ստեղծանէ, եւ ի պատկեր իւր առնէ զմարդն: Աստափն իսկ սկիզբն առնէ Մովսէս, երկցազոյնն քան զամենայն պատմագիրս, հոյակապն քան զամենայն փիղիսոփայս, եւ քան զամենայն օրէնս-դիրսն իմաստնագոյն:

Ջայս հիմն իւրոյ պատմութեանն եւ վարդապետութեան եւ օրինացն դնէ. ապա գնովիմք ածեալ՝ զամենայն մարդիկ ի մի միայն մարդն բովանդակեալ ցուցանէ, եւ թէ նորին կին անդստին ի նմանէ լինէր. նոյնպէս զմիարանութիւն ամուսնութեանց, եւ զժողովս ազգի մարդկան ի վերայ այսր հիման հաստատեալ ցուցանէ. զկատարումն եւ զեշխանութիւն մարդոյն, մինչ զեռ զԱստուծոյ պատկերն անարատ պահէր. գնորս աւրութիւն ի վերայ ամենայն անասնոց. եւ զանմեղութիւնն եւ զերանութիւնն ի զբախտին փափկութեան, որոյ յիշատա-

կրն յԱսիկ անուանեալ ազգին պետիկոսաց պահի. զաստուածեղէն հրամանն մերոց առաջնոց հարցն տուեալ. եւ զփորձէին նենդութիւն, որ ի կերպարանս օձի կրեւէր. զանկաներն Վդամայ եւ Նւայի, որով անհնարին աղէտք իւրեանց առ յապաց կկեղոցն լինէին. եւ թէ առաջին մարդն յիրաւի եւ յարժանի պատիժ պատուհասի յամենայն յիւր որդիսն կրէր, եւ ազգ մարդկան յԱստուծոյ անխճանէր: Ի նոյն յարեալ ապա եւ զառաջին աւետիան նորոգման, եւ թէ մարդիկ յաղթելոց են աստանայի՝ որ զնոսայն կորոյս, յառաջադոյն պատմէ: Հայնո՛վ ժամանակի կրկիւր սկիզբն առնոյր ընուլ, եւ անօրէնութիւնք յաճախէին: Եւ Ապէն, որդի անդրանիկ Վդամայ եւ Նւայի, զառաջին աղէտսն աշխարհի ցուցանէր՝. եւ անդասին իսկ սկիզբն առնէին օխտք զառաքինութիւն հալածել: Աարգ վարուց երկուց եղբարցն հակառակ միմեանց, Վրէղի անմեղութիւնն, որ էր հովիւ խաշնարօտ խաշանց, նուէր նորա՝ զոր նուիրէր, եւ ընդունելի լինէր. եւ զնորին հակառակն պատարազն՝ զոր Ապէնն մատուցանէր եւ անարգէր. նորին աղահուլութիւն եւ անպարտութիւն, որ եւ եղբայրասպան դտաներ. դարձեալ եւ նախանձն՝ որ մայրն է սպանութեանց. պատիժ պատուհասի անօրէնութեանն նորա. խիղճ մտացն յուզեալ ի յաճախ երկիրդէն. առաջին քաղաքն՝ զոր նոյն անօրէն շինէր, եւ կամէր իմն պատասպարան ընդդէմ՝ ամենայն ազգի մարդկան՝ որ զնայն ատէին եւ զարշէին, դտանել. ճարտարութիւնքն՝ զոր նորին որդիք հնարէին. կարեացն բռնութիւն եւ անհնարին չարութիւն մարդկեղէն մտաց՝ որ հանապաղ ի չարիս միտադոյն են. զաւակն Ախթայ՝ որ ի մէջ այնպիսի խոտորութեանց, հաւատարիմ առ Աստուած լինէր. Անովքայ աստուածպաշտութիւնն՝, որ պանչելեօք փոխեցաւ յերկրի՝ որում էր իսկ արժան զե զարդարն պահիցէ. բնարութիւն Աստուծոյ որդւոյն՝ յորդոց անտի մարդկան, այս ինքն է նոցա՝ որ ըստ հոգւոյ կեանս կէին, ի նոցանէ՝ որ ըստ մարմնոյն վարէին. նոցա ընդ միմեանս խառնակել, եւ համօրէն աշխարհի ապականութիւն, բնաջինջ մարդկան լինել:

զոր Աստուծոյ արդար դատաստանք սահմանէին¹. նորին ցատումն՝ զոր մեղաւորաց ի ձեռն ծառային իւրոյ՝ Աոյի յառաջադոյն պատմէր. որ ապա՝ զնոցա խտասարտութիւնն, իրրեւ չապաշխարեցին, ջրհեղեղաւ պատժէր. եւ թէ զխարդ ¹Նոյ եւ ազգատոհմ՝ նորա, առ ի զազգ մարդկան անդրէն հաստատելոյ, ապրէին. այս ամենայն յայնմ ժամանակի երեւէր:

Ահաւասիկ որ ինչ միանգամ անցք յամն հազար վեցհարեւր յիսուն եւ վեց անցանէին: Այսպիսի է սկիզբն ամենայն պատմութեանց, ուր մեծագոր զօրութիւնն, իմաստութիւն եւ բարութիւն Աստուծոյ յայտ յանդիման երեւին. եւ թէ քանիօն երանելի անմեղութիւնն իցէ, որում նայն պաշտպանիցէ. նոյնպէս նորա արդարութիւնն, յորժամ վասն մեղաց վրէժս պահանջիցէ, եւ համբերութիւնն՝ որով երկայնամիտ վասն դարձի մեղաւորացն լինիցի. մեծութիւն եւ աւագութիւն մարդոյն յիւրում առաջին հաստատութեանն, եւ յօժարութիւն մտաց մարդկան զինի եղծանելոյն. բնութիւն նախանձուն, եւ ծածուկ պատճառք բռնութեանց եւ մարտից պատերազմաց, այս ինքն՝ ամենայն հիմունք կրօնից եւ բարոյից:

Նոյ զազգ մարդկան եւ զճարտարութիւննն պահեաց, ոչ զայնոսիկ լով՝ որ ի հաստատութիւն են կենաց մարդկան, եւ զորս մարդիկ անդուստ ի վերուստ գիտէին, այլ եւ զայնոսիկ՝ որ առ յապայ ի հնարագիտութենէ մարդկան դասն: Այս առաջին արուեստք՝ զոր մարդիկ անդատին ի սկզբանէ, նա՝ որպէս թուի, յարարէն իսկ ուսան, են մշակութեան², հովուելոյ³, զզգեստս յօրինելոյ⁴, եւ թերեւս բնակելոյ հանդամանք: Քանզի եւ գրտանեմք իսկ զայսպիսի ճարտարութեանց սկիզբն յարեւելս, անդէն ի նմին տեղոջ՝ ուստի ազգ մարդկան սիռեալ տարածանէր:

Տիեզերական ջրհեղեղին տրւելութիւնք ընդ բնաւ երկիր գտանին: Տապանն՝ յորում մնացորդք ազգի մարդկան ապրեցան, ցանգ հռչակաւոր ընդ արեւելս լինէր, առաւել ի տեղինն՝ ուր յետ ցածնլոյ ջուրցն

դադարեաց: Բազում եւ այլ ինչ անցք այսր նշանաւոր պատմութեան ի մատենա յիշատակաց եւ ի արւչութիւնս հնոց ազգացն դրոշմեալ գտանին⁵. Ժամանակքն իսկ այսմ միաբան են, եւ ամենայն իրք յայնպիսի հեռաւոր ժամանակի, որչափ ինչ մարթիցի ակն ունեւ, միմեանց կից ընթանան:

¹) Մտն. Լ. 3. 4: ²) Անդ. Լ. 15. Գ. 17. 18. 19. Դ. 2: ³) Անդ. Դ. 2: ⁴) Անդ. Գ. 21: ⁵) ԲՆԲՍՍ. ՊԵՂԵ. Պատմ. Վազգ. ԼԲՈՆ. ՆԳԻԳ. Փիւն. Պատմ: ՍՆԸՍ: ՆԻԿ. ԴԵՄԵՍ. ԳԻՐԸ Գ. 2: ԼԲԻԻԴ. Սարայ եւ Ասոր. առ Յովն. շնա. ԳԻՐԸ Լ. 21. 4. եւ ԳԻՐԸ Լ. ընդդ. Լչիսն: Եւ ԼԻՍ. ԳԻՐԸ Թ. Պատր. աւետ. 21. 11. 12: ՊԳՈՒՏ. ԳԻՐԸ. ԼՐԳԵՔ առաւել իմաստնադ. իցեն ցամաքա. թէ ջրայ: ՂՈՒԿԵՆ. Վան Ղից ԼՍՈՐ:

Ժ Ե Մ Ե Ն Ե Կ Ի

ՆՈՅ ԿԵՄ ԶԲԷԵՂ.ԵՂ.

Ե Բ Կ Բ Ո Բ Դ Կ Ե Բ Ե Ը Ի Ե Բ Է Ի

Են՝ ուրեմն մտա ի ժամանակս ջրհեղեղին նուազու-
թիւն աւուրց կենաց մարդկան զիպէր^Ե. դարմանք փո-
փոխէին^Ը, եւ նոր իմն կերակուր փոխանակ մրգոց երկրի
պարգեւէր. հրամանք ինչ լոկ բարբառով՝ *Նոյի աւան-
դէին*. բազմամբոյս խառնախօս խրղուլբափուն ի միարա-
նեպան եկեալ մտանէր, մինչ զեռ ի Վարեղոն զաշտարակն
շինէին^Յ, որ է առաջին յիշատակ ամբարտաւանութեան
եւ տկարութեան մարդկան. երեք որդիք *Նոյի սահմանս
բաժնից հատանէին*, եւ բաժանելոյ աշխարհաց սկիզբն
լինէր:

Արից այսոցիկ առաջնոց նահապետաց անուն, որ
գլխաւորք ազգաց եւ ժողովրդոց եղեն, ի մէջ մարդկան
պահեցաւ: *Յարեթ*՝ որ զմեծ մասն արեւմտից կողմանն
բազմութեամբ լնոյր, անդէն հռչակաւոր ի մէջ նոցա
լինէր, զոր Յապետոսթէ անուանեալ կոչէին: Վամ եւ
նորին որդի Վանան ոչ սակաւ ինչ ծանօթ յեգիպտա-
ցոց եւ ի փիւնիկեցոց աշխարհին լինէին. իսկ Աե-
թայ յիշատակ հանապաղ իսկ տեւեաց բաւեաց ի մէջ
երրայական ազգին՝ որ անդստին ի նմանէ իսկ էին:

Յետ սակաւ ինչ ժամանակի բաժանելոյ ազգի
մարդկան, *Ներբովթ*, այր կաշմբունն զօրաւոր, վասն
իւրոյ սաստիկ բնութեանն առաջին քան զամենայն աշ-
խարհակալս լինէր. եւ այս իսկ է սկիզբն տիրելոյ աշ-
խարհաց: Ենդէն ի բարեղացոց աշխարհին զիւր թա-
գաւորութիւնն հաստատէր^Դ, ի նմին իսկ տեղւոջ՝ ուր
սկիզբն լինէր աշտարակադործութեանն, որ եւ ի բար-
ձրարերձ բարձունս իսկ հասեալ էր, այլ ոչ այնչափ՝ որ-
չափ ընդունայնապարծ հպարտութիւն մարդկան յօ-
ժարէր: Օայնու ժամանակաւ եւ *Նինուէ* քաղաք շե-
նէր, եւ հին ինչ թագաւորութիւնք հաստատէին, որ

փոքր ի սկզբան էին. զի յեզիպոսացւոց աշխարհին միայն՝ չորք հարստութիւնք կամ իշխանութիւնք դասնին. թերացւոց, թիւնացւոց, մեմփացւոց եւ Տայանու՝ որ քաղաք թաղաւորութեան էր ստորին կողմանցն Ազիպոսսի:

Մարթի եւ զսկիզբն օրինաց եզիպոսացւոց եւ զյօրինուածութիւն քաղաքի նոցա այնց ժամանակաց համարել, յորում եւ զերեանց պիրամիդան՝ որ են յուրանք բրածեւք, շինեին, որ այժմ իսկ կան մնան. նոյնպէս եւ նկատութեանց աստեղագիտացն՝ սկիզբն ի նմին ժամանակի լինէր, ոչ նոցայն միայն այլ եւ քաղեացւոցն՝ որ նոյնդունակ աստեղանշմարք էին: Կա՛ եւ ոչ իսկ քան զնոյն ժամանակն երկցադոյն զանդեկութիւնն՝ զտանեմք, զոր քաղեացիք՝ որ արդարեւ առաջին աստեղանշմարք կային, ի Բարեղոն՝ Աաղիթենեայ վասն Արխատոտեղեայ ետուն:

Ետէն ուրեմն ամենայն իրաց սկիզբն լինէր. չեք իսկ բնաւ պատմութիւն ինչ հին՝ յորում ոչ միայն անդէն յառաջին ժամանակն, այլ եւ յետ ընդերկար ժամանակաց, յայտնի նշմարանք նորակերտն լինելոյ աշխարհի ճշմարիցին: Յայտնի իսկ տեսանիցէ որ՝ եթէ զեարդ օրէնք հաստատէին, բարք մարդկան յօրինեալ յարգարէին, եւ տէրութիւնք կանգնէին. ազգ մարդկան մեզմով եւ սակաւ սակաւ զանադորոյն միտան թողոյր, եւ զբազում իրաց զփորձ առեալ կրթէր. ճարտարութիւնք հնարէին եւ կատարէին: Որչափ մարդիկն բազմանայր, նոյնչափ եւ երկիր տակաւ երթայր եւ լնոյր. տար աշխարհս հարկանէին, զերինս եւ զխորածորս, զգետս եւ զծովս իսկ հատեալ անցեալ, զի նոր իմն բնակութիւն այլուր հաստատիցեն: Այրկիր՝ որ ի սկզբանն անտառախիտ թանձրամայրի էր, յայլ իմն կերպարանս փոփոխէր. քանզի իրրեւ զանառան հաստանէին՝ զաշտք, արօտք եւ շինավայրք երեւէին, արուարձանք եւ քաղաքք շինէին: Աւսանէին եւ անատունս ինչ յանասնոց ունել, եւ զնոսա ի համբոյր եւ ի քծինս ածել, որ ընդեկեալ ընդ մարդկան՝ նոցա ի հարկի կային: Օգտաւնն հարկ

իմն լինէր ընդ դազանս վայրասունս մարտ պատերազմի
 զնել, առաջին դիւցազունք նշանաւոր յայսպիսի մարտս
 եղեն. նմին իրի եւ զէնս իմն եւ զարդս հնարէին, զոր
 յետոյ ապա մարդիկ յիւրեանց նմանին զարձուցեալ,
 ընդ միմեանս մաքառէին: **Օչ** երրովթ, զառաջին պա-
 տերազմոյ եւ աշխարհակալ, որսորդ սկսց անուանեալ
 կոչեն աստուածեղէն գիրք: **Մարդիկ**՝ զոր օրինակ զգա-
 զանան ընտելացոցին, նոյնդունակ եւ զպտուղս եւ
 զտունկս քաղցրացուցանելոյ հնարս իմացան. մինչեւ եւ
 գրբէական նիւթան եւս յիւրեանց պէտս պաշտէին, եւ
 տակաւ տակաւ զամենայն բնութիւնս իրաց յիւրեանց
 սպասաւորութիւն ամէին:

Օր օրինակ պարտ եւ պատշաճ էր՝ զի ժամանա-
 կաւ ազգի ազգի իրք հնարիցին, նոյնպէս պարտ իսկ էր՝
 զի եւ այլ բազում ինչ իրք մոռացին, դոնեայ առ բա-
 զում մարդիկ: **Այդ** զառաջին ճարտարութիւննս պա-
 հեաց, որք ի կրզմանն յայնոսիկ՝ ուր առաջին հաստա-
 տութիւն մարդկան լինէր, հանապաղ պոյծառադոյնք
 եղեն. այլ որչափ ի դուռաց անտի հեռանային, նոյն-
 չափ եւ ճարտարութիւնքն նուազէին. վասն որոյ եւ
 հարկ իսկ լինէր՝ զի զնոսս մարդիկ անդրէն ուսանիցին,
 եւ կամ նոքա՝ որոց զճարտարութիւննս զայնոսիկ պա-
 հեալ էր, առ այլս ամիցեն: **Ամին** իրի եւ ամենայն
 ճարտարութիւնք յաշխարհաց անտի դան, որ ցանկ
 մարդաշէն են, յորս եւ հիմունք ճարտարութեանց բո-
 վանդակ կան մնան մշտնջենաւորք. եւ անդէն իսկ հանա-
 պաղ բազում ինչ պիտանացու ուսանէին մարդիկ: **Անգ**
 եւ **Մատուծոյ** ծանօթութիւն եւ յիշատակ նախակերտն
 արարչութեան պահեցաւ, սակայն սակաւ սակաւ երթայր
 իմն եւ նուազէր, եւ նախնեացն արչութիւնք ի խոր
 մոռացումն անկանէին եւ զկզէին. իսկ առասպելք պա-
 ճուճեալք՝ որ նոցա զհետ եկին, վարկպարագի ունէին
 զկերպարանս ճշմարտութեան. այնու հետեւ եւ դից իմն
 սնուուոց պաշտօն յաճախէր, եւ նոյն իսկ լինէր պատ-
 ճառք **Արբա** համու կոչմանն:

¹⁾ Օրոհ. յ. 9. 10. 11: ²⁾ Պորֆ. առ Սիմոն. Գիրք. Բ.
 9. Երկնից:

Ժ Ե Մ Ե Ն Ե Կ Գ

ԵՐԲԷՀԵՄՈՒ ԿՈՉՈՒԲՆ

Ե Ր Ր Ո Ր Գ Գ Ե Ր Ե Շ Խ Ե Ր Հ Ի

ՉՈՐԵՎԷՐԵՆԻՐ քսան եւ վեց ամօք յետոյ քան զՋրհեղեղն^Ե, մինչ դեռ զնային ամենայն ազգք իւրաքանչիւր ի ճանապարհս իւր եւ մոռանային զայն՝ որ արարն զնոսա, մեծազօրն Աստուած՝ վասն զյաճախութիւն չարեացն կարծելոյ, ի մէջ եղծագործն ապականութեան սկսանէր զատանել իւր ժողովուրդ ընտիր: Արբահամ ընտրեցաւ ամենայն հաւատացելոց սկիզբն եւ հայր լինել: Առջեաց զնա Աստուած յերկիրն քանանացւոց՝ ուր զեւր պաշտօնն կամէր հաստատել եւ բնակեցուցանել զորդիս նահապետին, զոր բազմացուցանելոյն էր իրրեւ զաստեղս երկնից եւ իրրեւ զաւազ առ ամն ծովու: Յաւեախնս զոր խոստանայր նմա՝ եթէ Օջաւակի քում տաց զերկիրդ զայդ, մեւս եւս իմն քան զնոյն պայծառադոյն յաւել. այս ինքն է, զն ի Վրիստոս Յիսուս՝ որ ի զաւակէ նորա ծնանելոց էր, օրհնելոց էին ամենայն ազգք երկրի: Օյսս Յիսուս Վրիստոս պատուէր Արբահամ, յորժամ մեծարէր զՍեղբիսեղեկ քահանայ մեծ, զայն՝ որ առակ օրինակի էր Վրիստոսի¹, եւ նմա տայր զաստանորդս աւարին՝ զոր ի թագաւորաց անտի առ, եւ ի նմանէ օրհնէր:

Արդ՝ մինչ դեռ այնպէս մեծատուն էր յոյժ Արբահամ, եւ ճոխ եւ փառաւոր իրրեւ զթագաւոր, ոչ փոխեաց նա զառաջին կարգս իւր. յամենայն ժամանակի ասպաճարահական կեանս կեայր, բայց սակայն առատ էր նա եւ ամենայն մարդկան վանատու եւ ասպնջական: Հիւրս յերկնից ընդունէր՝ հրեշտակք զխորհուրդսն Աստուծոյ յայտնէին նմա, եւ նա հաւատայր նոցա. եւ լն էր հաւատովք եւ աստուածպաշտութեամբ:

Աս սովաւ Խնաքոս, քաջ ի բաց հին քան զամենայն թագաւորսն՝ որ ծանօթ իցեն Յունաց, զարդիացւոց թագաւորութիւնն հաստատեաց:

Յետ Արրահամու գտանեմք զՍահակ նորին որդի եւ զԹոռն նորա զՅակովբ, նմանօղ նախանձաւոր հաւատոց նորա, որ եւ զնոյն կեանս խաշնարածաց կէին. զնոյն աւետիսն՝ զոր խոստացեալ էր հօր նոցա, խոստանայր եւ նոցա Աստուած. եւ յամենայն իրս, որ պէս նմա՝ նոյնպէս եւ նոցա առաջնորդէր: Խահակ որհնէր զՅակովբ հակառակ Ասաւայ եղբօր նորա երիցու՞, եւ կերպարանօք խարեալ, արդեամբք զխորհուրդսն Աստուծոյ կատարէր:

Յակովբ՝ որում օգնական էր Աստուած, յամենայնի անցուցանէր եւ առաւելոյր քան զԱսաւ: Հրեշտակն՝ ընդ որում զխորհրդական մարտն կռուեցաւ, Խարայէղ անուն գնէր նմա, ուստի եւ որդիքն՝ խարայէղացիք կոչէին: Օճանն ի նմանէ երկոտասան նահապետքն, տանուտեարք երկոտասան ցեղիցն երբայեցուց. յորոց մի էր Ղեւի՝ ուստի պաշտօնեայք սրբութեան նուիրացն ելանելոց էին. եւ Յուդա՝ յորմէ, ընդ արքունական առհմին՝ եւ Վրիստոս գալոց էր, թագաւոր թագաւորաց եւ տէր տերանց. եւ Յովսէփ՝ զոր սիրեաց Յակովբ առաւել քան զամենայն որդիսն իւր:

Անդ միւսանդամ յայտնէին ծածուկքն տեսութեան Աստուծոյ: Տեսնէ որ անդէն յառաջ քան զամենայն ինչ զարդարութիւն եւ զմաստութիւն մանկանն Յովսէփայ՝ որ յամենայն ժամանակի բարեւէր չարատեաց էր եւ արագ կշտամբիչ եղբարցն չարութեան. զերազնն նորա զխորհրդականն եւ զմարդարեականս. զեղբարցն չարահնել, եւ նախանձուն միւսանդամ պատճառք եղբայրասպան անօրէնութեանն լինել՞, զվաճառել առնն արդարոյ եւ զհաւատարիմ լինել տեսուն իւրում, եւ զպարկեշտութիւնն սքանչելի՞, եւ զհալածել վասն զգաստութեան. զընտան եւ զհաստատութիւն մտաց նորա՞, ըզկանխախօսութիւնն, եւ զսքանչելի փրկութիւնն, եւ ըզզարմանալի մեկնութիւն երազոցն Փարաոնի, եւ ըզյայտնի լինել առնն արժանաւորութեան, եւ զհանձար ուղղութեան մտաց նորա, եւ զօգնականութիւնն Աստուծոյ՝ որ ամենայն ուրեք զնա տէր եւ հրամանատար

կացուցանէր. զհող խնամակալութեան նորա, եւ զխնատուն խրատն⁶, եւ զմեծ իշխանութիւն նորա ընդ ամենայն թագաւորութիւն ստորին կողմանցն եզխատացւոց, եւ զփրկութիւն հօր իւրոյ Յակորայ եւ ամենայն ազգատոհմի նորա: Ինչպէս ազգատոհմն այս՝ որ սիրելին էր Աստուծոյ, ի կողմն մի եզխատացւոց աշխարհին՝ որոյ մայրաքաղաք Տայանիս էր, ուր ամենեցուն թագաւորաց անուն Փարաւոն կոչէր:

Յակովբ մեռանէր⁶. եւ փոքր մի յառաջ քան զմահն մարգարեանայր զերեւելի մարգարէութիւնն՝ յորում յայտ արարեալ իւրոց որդւոցն թէ զինչ առ յապայ լինիցի նոցա,՝ երոյց Յուդայի զժամանակն (Օձւրցն՝ որ ի նորա ազգէն դալոց էր:

Ի սակաւ ժամանակի բաղմանայր տուն նահապետին, եւ լինէր յաղզ մեծ. մինչեւ նախանձեալ եզխատացւոց ընդ բաղմանալ նոցա սքանչելապէս, յանիրաւի ռխանային ընդ երրայեցիսն եւ անողորմ չարարէին զնոսա. աայր նոցա Աստուած զերծուցիչ զՄովսէս⁷՝ զոր փրկէր ի ջուրց Նեղոս գետոյ, եւ աայր զնա ի ձեռս դատեր Փարաւոնի՝ որ իբրեւ զլուր որդի սնուցանէր զնա, եւ վարժէր ամենայն իմաստութեամբ եզխատացւոցն:

Ի ժամանակն յայնոսիկ եզխատացիքն յայլ եւ այլ կողմանս Յունաց աշխարհին բնակեցին: Աեկրոփս հատուած հանեալ յԱզխատոսէ՝ երկոտասան քաղաք շինէր⁸ կամ թէ երկոտասան աւանս, ուստի զաթ ենացւոց թագաւորութիւն կացուցանէր. եւ հաստատէր անդ գօրէնս աշխարհին իւրոյ, եւ զգինս՝ որոց անդէն երկիր պաղանէին: Սակաւ ինչ յետոյ առ Վեւկաղիոնիւ ջրհեղեղն ի թեաղացւոց աշխարհին լինէր, զոր Յոյնք⁹ ընդ համաշխարհական ջրհեղեղին շփոթեն: Հեղինոս Վեւկաղիոնի որդի ի Փթիա թագաւորէր, ի դաւառի ուրեք թեաղացւոց կողմանցն, եւ զլուր անուն անուանէր ի վերայ Յունաց աշխարհին: Եւ որ յառաջն Յոյնք կոչէին, այնու հետեւ յամենայն ժամանակի Հեղեղէք աւուանեցան, թէպէտ եւ զատինացիք զառաջին անունն կարգան նոցա: Ընդ այն ժամանակս Աղգմոս Աղկնորայ

որդի ի փիւնիկաստան դաւառաց դաղթականս ի Յու-
նաց աշխարհն փոխէր, եւ զքաղաքն թերացւոց ի Բէոլի-
սիա շինէր. եւ զիբն Եսորւոց եւ փիւնիկեցւոց ընդ
նմա ի Յունաց աշխարհն մտանէին:

Օայնու ժամանակաւ Մովսէս աճէր եւ զարգանայր:
Եւ իբրեւ քառասնամենի էր, արհամարհեաց նա զմե-
ծութիւն թագաւորութեան եգիպտացւոց, եւ տեսեալ
զվեշտս եղբարցն իւրոց խրայեղացւոց համարձակեցաւ
մխիթարել զնոսա: Իսկ նոքա ոչ միայն զնախանձն նորա
եւ զհամարձակութիւն ապախտ առնէին, այլ եւ մա-
տնէին եւս զնա Փարաւոնի՝ որ ցատուցեալ կամէր կորու-
տանել զնա: Եւ Մովսէս յԱգիպտոսէ փախստեաց մա-
զպուր ի կողմանս արաբացւոց անկանէր, ուր՝ վասն օգ-
նական ներկելոց լինելոյ, դատու նմա տեղի ամրութեան
ապաստանաց: Եւր՝ վհատեալ այնու հետեւ առնն ի յու-
սոյ փրկութեան ժողովրդեան իւրոյ, կամ թէ այլու՞
լուազոյն ժամանակի ակն կալեալ, զքառասունս ամ արա-
ծէր զհօտս երամակաց Յոթորայ աներոյ իւրոյ. եւ տե-
սանէր յանապատի անդ զմորենին՝ որ վառէր՞, եւ լսէր
զբարբառ Եստուծոյ հարցն իւրոց, զի առաքէր զնա յԱ-
գիպտոս հանել զեղբարսն ի ծառայութենէն: Յայնժամ
խոնարհութիւն եւ համարձակութիւն եւ նշանք աս-
տուածեղէն օրէնադրին յայանի լինէին, եւ խատարտու-
թիւնն Փարաւոնի, եւ ահագին պատիժք պատուհասից՝
զոր Եստուած առաքէր. զատիկն, եւ ի վաղեւ անգր
անցանել ընդ ծովն կարմիր, եւ ընկղմել Փարաւոնի եւ
եգիպտացւոց ի ջուրսն, եւ համօրէն փրկութիւն խրայե-
ղացւոցն:

ԵՄԲ ԵԸԵԵԲԸԲ

Ե2473. Ե2513.

ԵՄԵՄ. ԲԵՆ Բ.ՔՔԻՍԱՍ

Ե1531. Ե1491.

1) ԵՄԲ. Ե. 1. 2. 3. այլովքն հանդերձ: 2) ՄԵՄԲ. ԵՄԵՄԵԲ.
կամ ժաման. ստու:

Ժ Ա Մ Ե Ն Ե Կ Գ

ՄԱՊԱՆԵՍ ԿԱՄ ԳՐԱՊ. ՕՐԵՆՔ

Չ Ո Ր Ր Ո Ր Գ Կ Ե Ր Ե Շ Խ Ե Ր Է Ի

Ի ԺԱՄԵՆԵԿԻ աստ յայսմիկ օրինացն գրելոց սկիզբն լինէր: **Օ**րէնքս այս առ Մովսէս տուան, յեա չորեքհարեւր եւ երեսուն ամաց Աբրահամու կոչմանն, եւ զինի ութհարեւր յիսուն եւ վեց ամաց, յորմէ հեռէ ջրհեղեղ ջուրցն լինէր, ի նմին իսկ տարւոջ՝ յորում երացական ժողովուրդն ել յԱզիպտոսէ: **Ա**յս ժամանակ նշանաւոր է, քանզի աստատին իսկ սկիզբն առնեն կարգել զընաւ ժամանակսն՝ որ անդատին ի Մովսիսէ մինչեւ ցՅիսուս Քրիստոս եղեն: Եւ յովանդակ այս ժամանակ անուանեալ կոչի ժամանակ ԳՐԱՊ. ՕՐԵՆՔ, առ ի ընարելոյ ի ժամանակէ անախ՝ որ յառաջագոյն էր, որ եւ ժամանակ ՕՐԵՆՔ ԲՆՈՒԹԵՆ կոչէր, յորում մարդիկ առաջնորդ եւ վարիչ անձանց զընտելաւոր միտան եւ զլւրեանց նախնեացն վարդապետութիւնս ունէին:

Այդ՝ իրրեւ Աստուած զլւր ժողովուրդն ի բռնութենէ եզիպտացւոցն փրկէր, առ առաջնորդելոյ նոցա յերկիրն՝ ուր նմա պաշտօն հարկանիցեն. մինչ չեւ էր զնոսա անդր զետեղեալ, օրէնս իմն դնէր, զի նորօք յաշխարհին՝ յոր երթային, վարիցին: **Օ**չայսր օրինաց հիմն, որ են տասնհրամանեան հաւատք՝ յորում առաջին զլիաւոր կարգք աստուածպաշտութեան եւ միարանութեան մարդկան բովանդակին, Աստուած իւրովի իւրովք իսկ ձեռօք յերկուս տախտակս գրէր եւ տայր Մովսիսի ի գլուխ լերինն Սինայ: Իսկ զայլ հրամանսն ինքնին Մովսէս աստուածեղէն ողւովն գրէր, եւ հրամանաւ Աստուծոյ զվրան ժամուն յօրինեալ կազմէր, առակ օրինակի զալոց ժամանակին¹, եւ զտապանակն՝ յորում Աստուած յայտ յանդիման երեւէր ի ձեռն պատգամացն, յորում եւ տախտակք օրինացն կային: Գարձեալ եւ զլւր եղբայրն զԱհարոն յաւադութիւն հասուցանէր, մեծի նուիրական քահանայութեանն կամ քահանայապետու-

Թեան, առանձինն պատիւ՝ որ նմա եւ նորին որդւոց շնորհեցաւ: Անդ երեւէր եւ օծութիւն կատարման նոցա, եւ խորհրդական զգեստուցն կերպարանք, սպասս պաշտաման քահանայից որդւոց Ահարոնի եւ զԷւտացւոց, հանդերձ այլովք կրօնիցն խարութեամբք. եւ քան զամենայն գեղեցիկ եւ զարմանալի՝ կանոնք արհեստայն բարոյից, յօրինուածութիւն եւ առաջնորդութիւն ժողովրդեանն ընտրելոյ՝ որոց ինքնին Աստուած օրէնսդիր կամէր լինել: Ահաւասիկ որ ինչ միանգամ նշանակեալ կան ի ժամանակին՝ յորում գրով օրէնք տուան: Յետ այնորիկ տեսանեմք զճանապարհորդութիւնն յառաջ մատուցեալ յանապատի անդ, զսպաստարութիւնս, զկուսպաշտութիւնս, զպատիժս պատուհասիցն, զմխիթարութիւնն ժողովրդեանն Աստուծոյ՝ զոր մեծազօր օրէնսդիրն սակաւ սակաւ եւ սովին պայմանաւ կատարէր: Ազիպալար օծանէր ի գրլուխ քահանայութեանն, եւ նորին հայրն Ահարոն վախճանէր. իսկ Փեննհէս, որդի Ազիպալարու, զբարւոք նախանձն նախանձեալ՝ զնուիրական քահանայութիւնն առանձինն աւետօք յիւր որդիսն հաստատէր:

Օայնու ժամանակաւ եւ եղիպտացիք անդրէն զԷրեանց դաղթականս ի տեղիս տեղիս հաստատէին, այլ առաւել ի Յունաց աշխարհին՝ ուր Վանաւոս, այր եւ զիպտացի յազգէ, յԱրդոս թագաւոր կայր, եւ զհին թագաւորսն՝ որ Անաբայ էին, յաշխարհէն վտարէր:

Իբրեւ մօտ ի վախճան լինէր ճանապարհորդութիւն ժողովրդեանն Աստուծոյ յանապատին, սկիզբն լինէր պատերազմաց՝ եւ աղօթիւք Մովսիսի նշան յաղթութեան կանգնէին: Յետ այնորիկ ի կենաց վախճանէր նա, եւ թողոյր խրայէզացւոցն զամենայն զԷրեանց պատմութիւն՝ զոր նա բազում հաւաստեաւ յօրինեալ կարդեաց, անպատին ի սկզբանէ աշխարհի մինչեւ ի ժամանակս իւրոյ վախճանին: Յետ այնորիկ ի հրամանէ Յեսովայ եւ իւրոց պայտազատացն, նոյն պատմութիւն յառաջ մատուցեալ կարդեցաւ: Օոր յետոյ ի բազում գիրս բաժանեցին, եւ անտի իսկ հասին առ մեզ զիւրք Յեսուայ, եւ դատաւորացն զպրութիւն, եւ մատենաք չորից թա-

գաւորութեանց: Եւ պատմութիւնն իսկ՝ զոր Մովսէս գրեաց, յորում եւ ամենայն օրէնք բովանդակեալ կային, նոյն օրինակ ի Հինգ զլուսս գալրութեան կարգեցաւ, որ եւ Հինգ գալրութիւնք անուանեալ կոչին, եւ են հաստատութիւն կրօնից:

Յետ մահուան առնն Աստուծոյ, զՅետովայ մարտն գտանեմք, եւ զարութիւնս ինչ՝ որ ի նմանէ գործեցան, եւ զբաժանել երկրին սրբոյ. ⁵ եւ թէ զհարգ բազում անգամ ապատամբէր ժողովուրդն, եւ կշատմեալ անգրէն հաստատէր: Անդ նշմարին եւ Պոթոնիկոն յաղթութիւնք՝ որ զագին ի բռնութենէ Վուսարսագեմայ՝ արքայի Ասորոց Միջագետաց զերծուցանէր, եւ յետ ամաց ութանից Աւովգ՝ Ագղոմայ՝ արքայի Մովարու յաղթէր:

Օայնու ժամանակաւ Պեղոփս ի փոխգացոց աշխարհէն՝ Տանտաղեայ որդի՞, ի Պեղոպոնէս թագաւոր կայր, եւ յիւր անուն զերեւելի գհոյակապ աշխարհն աւնուանէր: Ինչ՝ թագաւոր քաղղեսացոց, աստուածեղէն պատիւ ի ժողովրդոց անախ ընդունէր:

Իսրայէլացիք ապաշնորհք երակաակորոյք անդրէն վտարանդի լինէին՝, զորս Յարին, արքայ քանանացոց, ընդ ձեռամբ նուաճէր: Այլ Վերովլա կին մարդարէ՝ որ դատէր զժողովուրդն, ⁶ եւ Բարակ ուսար Արինէմայ հարին ի հարուածս զՄիսարա, զօրագլուխ զօրաց թագաւորին: Յետ ամաց երեանից Վեդէոն՝ որ առանց կռուոյ յաղթեաց, զմագիանացիսն վանեալ վկանդէր: Կորին որդի Արմեդէք՝ իշխանութեանն ակն եգեալ վտարէր, սպանեալ զիւր եղբարսն, եւ լինէր բռնակալ. որ յետոյ հանդերձ իշխանութեամբն եւ ի կենաց իսկ անկանէր: Յեփթայէ՞ զիւր յաղթութիւնն շաղախեաց արեամբ, ի ձեռն զոհին՝ որում չմարթի իսկ չլինել մեղադիր, եթէ ոչ հրամանաւ Աստուծոյ լինեալ զիրսն համարիցիմք. այլ զամանէ ծանօթս սալ մեզ չեղին կամք Աստուծոյ:

Ի նմին իսկ ժամանակի բազում իբք նշանաւորք եւ ի մէջ հեթանոսաց զիսկեցան. զի եթէ արգար ինչ որ

ՅԵՐԵՄԻԱՅ

ՅԵՐԵՄ. ԲԱՆ. ԲՐՈՍՏՈՍ

¹2559. ²2599. ³2679. ⁴2682.

⁵1445. ⁶1405. ⁷1325. ⁸1322.

⁹2699. ¹⁰2719. ¹¹2759. ¹²2768.

¹³1305. ¹⁴1285. ¹⁵1245. ¹⁶1236.

¹⁷2817.

¹⁸1187.

զԱրողոտեաց ժամանակադրութենէն կարծիցէ², որ յիրաւի քան զամենեսին ճշգիւ դատեալ պատմէ, հարկ է զՆինոս Բեղայ եւ զառաջին ասորեստանեաց թաղաւորութիւնն զայնու ժամանակաւ համարել³, որ հինգհարեւր չորեքաստան ամօք յառաջ իսկ է քան զշնուած հռոմայեցւոց քաղաքին, ի Վերովրայ ժամանակն: Աթոռ թաղաւորութեանն հաստատէր ի Նինուէ քաղաքի³, հին եւ անդուստ ի վերուստ հոյակապ եւ անուանի, զոր եւ Նինոս զարդարէր եւ պայծառադոյն ամենեւին եւ ազնուադոյն դործէր: Արք միանգամ ի թիւ հազարաց եւ երեքհարիւրոց ամաց զառաջնոց ասորեստանեաց իշխանութիւնն դումարեն, ունին իւրեանց հիմն հաստատութեան անդրտին զՏուրթիւն քաղաքին. իսկ Արողոտոս՝ որ հինգհարեւր ամս եւ եթ ժողովէ, զտեւել բաւել իշխանութեանն յայտ առնէ, որ առ թաղաւորութեամբ Նինեայ որդւոյ Բեղայ ի վերին աշխարհին ասիացւոց տարածանէր:

Յետ սակաւ ինչ ժամանակի, մինչ դեռ եւս նոյն աշխարհակալ թաղաւորէր, ի դէպ զայ կարգել եւ զշնուած⁴ կամ զնորոգութիւն արւարացւոց քաղաքին⁴, որ նաւարկութեամբ եւ գաղթականութեամբք երեւելի լինէր: Յետ այնորիկ՝ սակաւ ինչ ժամանակ յետոյ քան զԱբիմեղէք, զԷրակղեայ որդւոյ Ամփիտրիոնի զերեւելի նահատակութիւնն դտանելք. նոյնդունակ եւ զԹեոսեայ ակթենացւոց թաղաւորի՝ որ յերկոտաստան աւանացն Աեկրոպայ մի եւ եթ քաղաք յօրինէր, եւ յազնուադոյն իմն պայման զակթենացւոց առաջնորդութիւնն յարդարէր:

Յաւուրս Յեփթայեայ, մինչ դեռ Շամիրամ այրին Նինեայ եւ յանձանձիչ Նինուասայ զասորեստանեաց պետութիւնն՝ աշխարհս բազումս նուաճեալ, ընդարձակէր, անուանի եւ հռչակաւոր քաղաքն տրովացւոց՝ զոր Յոյնք մի անգամ, առ թաղաւորութեամբն Ղաւոմեդոնեայ՝ որ երրորդ թաղաւոր եկաց յԱղիոն, առին, միւսանգամ ի նոյնոնց իսկ ի Յունաց, առ Պրիամաւ որդւով Ղաւոմեդոնեայ յետ տասն ամաց պաշարման՝ ի յատակաց բրեցաւ⁵:

ԵՄԲ ԵՇԻԲԷԲ
Ե2737. Բ2752. Գ2820.

ՅԵՈՒՅ. ԲԵՆ ՉՐԲՐԱՍՈՍ
Ե1267. Բ1252. Գ1184.

¹) ԼԵՐ. Թ. 9. 23: ²) ԼԵՐԿ. Գիրք Լ. 41. 26: ³) ՕՍԵ. Ժ. 11: ⁴) ՅՆՈՒՆ. Ժ. 29: ՅՈՎ. շնա. Բ. 2:

Ժ Ե Մ Ե Ն Ե Կ Ե

ԵՐԵՎԱՆ, ԲՆԱԿԱՆՔ

ԵՅԱ ժամանակ Խղինի աւերածին՝ որ իրրեւ երեքհարեւր եւ ութ ամաւ յետոյ քան զԵլն յԱղիպտոսէ, եւ հազար հարեւր վաթսուէն եւ չորս ամաւ յետոյ քան զՔրհեղեղն եղեւ, երեւելի եւ անուանի է. մի՛ վասն զի մեծ իսկ են իրքն որ զիպեցան, զորոց եւ երկու պեւտեայք Յունաց եւ իտաղացւոց ճառեն. եւ մեւս իմն՝ զի ի սոյն մարթի մօտ համարել զերս նշանաւորս ժամանակայն՝ որ անուանեալ կոչին առասպելաց կամ զիւցաղանց ժամանակք. առասպելաց՝ վասն այնորիկ զի առասպելօք զօղեալ են պատմութիւնք ժամանակայն այնոցիկ, եւ զիւցաղանց՝ վասն նոցա զորս պեւտեայքն որդիս զիցն եւ կիսապիս զիւցաղունս անուանէին: Աւ շեն ինչ սոքա հետի ժամանակաւ յԽղինի աւերոյն. քանզի առ ժամանակօք Վառմեղոնեայ հօրն Պրիամու երեւէին ամենայն զիւցապունք Ոսկի գեղմանն, Յասոն, եւ Հերակղէս, եւ Արիւեւս, եւ Ասասոփը, եւ Պոլլոքոս, եւ այլքն եւս՝ որ ծանօթք քեզ են. եւ ի Պրիամու իսկ ժամանակսն, ի յետին պաշարման Խղինի, երեւեցան Աքիլղէս, եւ Եղամեմնոն, եւ Սենեղաոս, եւ Աղիսեւս, եւ Ակատր, եւ Սարպեդոն Երամազայ որդի, եւ Կնէաս Եստղիան որդի՝ զոր հռոմայեցիք իւրեանց առաջնորդ համարին, եւ այլ եւս բաղումք՝ յորոց առհմք երեւելիք եւ ազգք եւ ազինք պարծին՝ թէ ծնան: Երդ՝ զիպօղ իսկ է զամենայն՝ որ ինչ ճշմարիտ եւ գեղեցիկ յառասպելաց ժամանակսն կայցէ, ի սոյն ժամանակ գումարել:

ԵՅԼ որ ի զրոց սրբոց պատմութիւնսն կան, առաւել նշանաւոր են. Սամիսոնի՞ նորանշան ուժգնութիւնն, եւ զարմանալի սկարութիւն. Հեղի՞ քահանայապետ՝ պատուեալ սատուածպաշտութեամբն եւ թշուառացեալ անկեալ վասն անօրէնութեան որդւոց իւրոց. Սամուէղ՞, դատաւոր ստոյգ եւ մարդարէ՞ զոլընորեաց Եստուած օճանել զթաղաւորս. Շաւուղ ա-

ուսման թաղաւոր ժողովրդեանն Մատուծոյ, յաղթութիւնք նորա եւ ձեռնհրէցն լինել զոհել զոհս աւանց քահանայիցն, եւ անաստութիւնն՝ զոր պատճառանօք կրօնիցն արդարացուցանէր. եւ անարդեւն նորա եւ անկանել :

Ի ժամանակն յայնտիկ Աողբոս, աթենացոց թաղաւոր եւս զանձն ի մահ վասն կենաց ժողովրդեան իւրոյ, եւ շնորհաց ժողովրդեան յաղթութիւն մահուամբ իւրով : Իսկ Սեդոն եւ Նիղեւս որդիք նորա ի վերայ թաղաւորութեանն կուռէին : Հայնմ ժամանակի բարձին աթենացիքն ի միջոյ զթաղաւորութիւնն եւ ասէին՝ թէ Երամազդ միայն է թաղաւոր ժողովրդեանն : Եւ կացին նոցա այնու հետեւ ցիեանս իշխանք կամ վարիչք՝ որ համարս իւրեանց վերակացութեանն տալոց էին, եւ սոքա անուանեալ կռչէին Երբոնդէս՝ որ են իշխանք : Սեդոն ուստր Աողբեայ զառաջինն կայր ի նմին վերակացութեան, եւ յազգատոհմի նորա ժամանակս բաղումն նոյն իշխանութիւն պահէր : Եթենացիք զաղթականս ի մի կողմն ուրեք փոքր ասիացոց աշխարհին՝ որ Յոնեայն կուչեցաւ, առաքէին : Եւ ողական զաղթականութիւնքն եւս մօտ ի նոյն ժամանակս եղեն, եւ ամենայն աշխարհն փոքուն ասիացոց լի եղև յունական քաղաքօք :

1010
1035
101

Յետ Շառուղի Պատիթ երևէր, այն՝ որ հովիւ էր խաշանց, եւ հօրին Պաղիաթայ եւ ամենայն թշնամեաց ժողովրդեան Մատուծոյ յաղթէր. թաղաւորն մեծ, յաղթօղն եւ մարդարէն, արժանի զքանչելիս Մատուծոյ ամենապօր զօրութեանն նուազելոյ, այր ըստ սրտին Մատուծոյ, որպէս եւ ինքն անուանէ զնա. որ եւ ապաշխարութեամբն իւրով՝ զանօրէնութիւն իւր ի փառս արարչին զարձուցանէր :

Օսոյն աստուածապաշտ եւ պատերազմօղ թաղաւոր պայազատեաց նորին որդի Պողոմոն, իմաստուն եւ արդար եւ խաղաղարար, որոյ ձեռք իւր սուրբ յարենէ՝ արժանի կղեն՝ զտաճարն Մատուծոյ շինել :

ԵՄՔ ԵՇԵՐԲԻ ԵՄԵՆՔ ԲԵՆ ԶԲՐՈՍԱՍ
Բ2919. Բ2970. Դ2990. Դ2992. Բ1055. Բ1031. Դ1014. Դ1012.



Վ Ե Մ Ե Ն Ե Կ Օ

Ս Ո Ղ Ի Ս Մ Ո Ն Կ Ե Մ Տ Ե Տ Ե Ր Ի Կ Ե Ջ Մ Ե Յ

Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ Գ Ե Ր Ե Ե Ե Ե Ր Հ Ի

ՅԵՐԵՎԱՆԵՐԻՐՈՐԴՈՒՄ ամի աշխարհիս^Ե, չորեքհարեւր ութսուն եւ ութ ամօք յետոյ քան զեյսն, եւ զի կշռիցեմք զժամանակս պատմութեան գրոց սրբոց ընդ արտաքնոցն, հարեւր եւ ութսուն ամօք յետոյ քան զառնուլ Խղինի, եւ երկերիւր եւ յիսուն ամաւ յառաջ քան զշինուած Հռովմ քաղաքի, եւ կանխադոյն հաղար ամօք քան զՔրիստոս, կատարեաց Սողոմոն զհրաշակերտ շինուած ծրն: Եւ արար նա՞ զնաւակատիս տաճարին աստուած պաշտութեամբ եւ մեծաւ փառաւորութեամբ: Եւ յետ այնորիկ այլ եւս բաղում նորակերտ նորանշան զարմանալի գործ գործեաց Սողոմոն ի թագաւորութեան, եւ ապա ուրեմն վատթարեալ անկաւ ամօթսից: Գնաց նա զհետ սիրոյ կանանց, անկան խոնարհեցան միաք նորա, տկարացաւ սիրտ նորա, եւ աստուած պաշտութիւն նորա ի կռոց պաշտօն փոխեցաւ: Եւ Ըստուծոյ յիրաւի ցասուցեալ խնայէր ի նա վասն Գաւթի ծառայի իւրոյ, այլ զապախտաւորութիւն նորա ամենեւին առանց պատժոց պատուհասից չկամէր թողուլ. եւ յետ մեռանելոյ նորա բաժանէր զթագաւորութիւն նորա՞, առ որդւոջն իւրով Աորովամաւ: **Օ**ի առ ամբարտաւանութեան մտաց մանկանն Աորովամայ, ի բաց գնային ի նմանէ տասն ցեղքն՝ զորս մեկնեաց Յերբովամ յԸստուծոյ իւրեանց եւ ի թագաւորէ: Եւ զի մի գառնայցեն նոքա միւսանգամ առ թագաւորան Յուզայ, հրաման ապր՛ զի մի ի տաճար անդր երթիցեն զոհել. եւ զորթան իւր ոսկեղէնս կանգնեաց կացոյց, եւ անուն եզ Ըստուած Խարայէղի, զի մի կարի օտար ինչ փոփոխումն թուիցի: Ս ասն նորին պատճառանաց եւ զօրէնան Մովսիսի ընդունէր, զոր ինքն որպէս ինչ կամէր՝ մեկնէր. այլ զրեթէ զամենայն կարգս զքաղաքի եւ զկրօնից՝ որ յօ-

ԵՐՊ ԵԵԵԵԲԲ
՝3000. ՝3001. ՝3029.

ՅԵՆԵՅ ԲԵՆ ԲԱՐՔՈՍՈՒ
՝1004. ՝1003. ՝975.

րէնան կային, հրաման տայր պահել¹. մինչ զի հինգ դարութիւնքն յամենայն ժամանակի մեծարոյ էին ի մէջ ցեղիցն բաժանելոց:

Արդ՝ այսպէս թագաւորութիւն Խարայէղն հակառակ թագաւորութեան Յուդայ յառնէր: Ի թագաւորութեան Խարայէղն հանապաղ ամպարշտութիւն եւ կռոյ պաշտօն յաճախեալ էին. իսկ ի թագաւորութեան Յուդայ աստուածապաշտութիւնն, թէպէտ եւ բազում անգամ ծածկէր, այլ ոչ ամենեւին պակասէր:

Ի ժամանակին յայնմիկ զօրացեալ էին եգիպտացւոց թագաւորքն: Չորք թագաւորութիւնք ի մի թագաւորութիւն թերացւոցն դումարէին: Թուրի՝ թէ Սեսոսարինն, աշխարհակալ եգիպտացւոց, Սիսակ արքայ եգիպտացւոց է, զոր ի ձեռն առ Աստուած տանջել զամպարշտութիւն Ռորովամայ²:

Յաւուքս թագաւորութեան Արիայ որդւոյ Ռորովամայ, զերեւելն յաղթութիւնն տեսանեմք, զի յաղթեաց աստուածապաշտ թագաւորն ամենայն ցեղիցն որոշելոյ: Իսկ զնորին որդւոյ զԱսայ՝ զաստուածապաշտութիւնն յարգեն գիրք. այլ պատմեն՝ թէ իբրեւ խօթանայր առաւել յօգնականութիւն բժշկական ճարտարութեան յուսայր, քան ի մարդասիրութիւն Աստուծոյ իւրոյ: Առ սովաւ Ամրի արքայ Խարայէղն շնեաց զՇամբին³, եւ եգ անգ զաթոռ թագաւորութեան իւրոյ:

Յետ այնորիկ թագաւորէր Յովսափաթ⁴, եւ ի թագաւորութեան նորա աստուածապաշտութիւն, իրաւունք եւ արդարութիւն ծագէին, եւ նաւարկութիւն եւ արուեստ զինուորութեան պայծառանայր: Այլ մինչ զեռնա իբրեւ զՎաւիթ երեւէր ի թագաւորութեան Յուդայ, Աքաաբ եւ Յեզարէղ կին նորա՝ որ յարայէղն թագաւորէին, ի վերայ կռապաշտութեան Յերոբովամայ յաւելուին ամպարշտել զամենայն ամպարշտութիւնս հեթանոսացն. եւ երկոքեանն միանգամայն կորեան⁵ թշուառացեալք: Այլ Աստուած՝ որ համբերն կռապաշտութեանց նոցա,

կամեցաւ առնուլ ի նոցանէ, զվրէժ արեանն՝ Կարով[ժայ՝
 զոր սպանին, քանզի չառ յանձն վաճառել զժառան-
 դութիւնն հարց իւրոց, որպէս հրամայէին օրէնք Սով-
 սիսի: Ա՛ճիւ դատաստանին ի բերանոց Ազղիայի մարդա-
 րէի պատմէր՝ նոցա: Այլ իրրեւ ժամանակք ինչ ի վերայ
 անցանէին, սպանանէր Աքաար՝, թէպէտ եւ ամբանայր
 զի զանձն սպրեցուցեց:

Պարտ է մօտ ի ժամանակս յայս զշնուած Պարքե-
 դոնի կարգել, զոր Վիդոն ի Տիւրոսէ եկեալ, շինեաց ի
 անգղոջ ուրեք՝ ուր մարթ էր ըստ օրինակի տիրացւոց
 քաղաքին, վաճառաշահ լինել եւ ծովակալել: Այլ
 նշանակել թէ, յորում ժամանակի ընկերհաշտութիւնն ի
 քաղաքի անդ յարդարեցաւ, դժուարին է. բայց ի խառ-
 նել ընդ միմեանս տիրացւոց եւ ամբիկեցւոց, եղև նա
 միանգամայն քաղաք պատերազմողաց եւ վաճառականաց:
 Հինք ի պատմագրացն՝ որ զսկիզբն նորա քան զաւերն
 Իզդոնի երիցացուցանեն, այնպիսի ինչ կարծիս ասն կար-
 ծել թէ, Վիդոն մեծացոյց եւ պնդեաց զքաղաքն, եւ ոչ
 թէ ինքն հիմն արկ:

Փոփոխումն լինէր ի թագաւորութեան Յուդայ:
 Վովթողիս դուստր Աքաարու եւ Յեզարեղայ զամպարըշ-
 տութիւնն ընդ իւր առեալ բերէր ի տուն Յովսափաթայ:
 Յովրամ՝ այնպիսի աստուածապաշտ թագաւորի որդի,
 յօժարէր մանաւանդ նմանող աներոյն իւրում լինել
 քան հօրն: Այլ էր ձեռն Աստուծոյ ի վերայ նորա, կար-
 ձեալ լինէր ժամանակ թագաւորութեան նորա՝, եւ ա-
 հազին վախճան հասանէր: Յայնպիսի պատժոց պա-
 տուհասից միջի, նորակերտ նորանշան զարմանալիս առնէր
 Աստուած, որ չեւ էին ուրեք յականջալուր եկեալ, եւ
 վասն իսրայէղացւոցն իսկ՝ զորս յապաշխարութիւն կա-
 մեր կոչել: Իսկ նոքա տեսին զքանչեւիսն Ազղիայի եւ
 Ազղիսէի, եւ շարձան, որ մարդարեանային ի թագաւո-
 րութեանն Աքաարու եւ հնդից պայտալատաց նորա:

Ի ժամանակին յայնմիկ Հոմերոս պոյծառանայր՝,
 եւ Ասիողոս երեսուն ամաւ յառաջ քան զնա: Ի հնոց
 սովորութեանցն՝ զոր նոքա մեղ յանդիման կացուցանեն,

եւ ի նշմարանաց անտի լոկ եւ անկազմ կենաց նախնեացն՝ զոր հանդերձ մեծաւ փառաւորութեամբն պահեն, այլոց եւս ժամանակաց՝ որ քան զնոսս հնազոյնք իցեն, տեղեկանամք. եւ խնանամք զառանց պաճուճանաց կիրպարանս՝ որ ի գիրս սուրբս կան:

Եւ էր տեսանել իրս ահադինս ի թագաւորութեան Յուդայ եւ Իսրայէղի: Եւ Յեղարէղ ի բարձուէ աշտարակին՝ Յէուայ հրամանաւ հոսէր: Եւ զինէր ինչ նմա օգուտ պճնելն եւ զարգարել, զի ընկեց զնա Յէու կոխան լինել ամրակաց երիւարացն: Սպանանէր զՅովբամ արքայ Իսրայէղի զորդի Եքաարու, եւ ջնջէր սպառէր ամենայն տունն Եքաարու, եւ փոքր մեւս եւս եւ տուն թագաւորացն Յուդայ ընդ նմա կործանէր: Եւ արքայ Աքոզիա, որդի Յովբամայ արքայի Յուդայ եւ Գոթողիայ, սպանանէր ի Շամրին հանդերձ եղբարբքն իւրովք, իրրեւ դաշնաւոր եւ բարեկամ որդւոցն Եքաարու: Իրրեւ համբաւն յարուսողէմ հասանէր, եդ ի մտի Գոթողիա սատակել զամենայն զաւակ մնացեալ յարքունական ազգէն, եւ ինայել ինչ յորդիսն իւր, եւ կոտորեալ զիւրսն ամենայն՝ ինքն կամէր թագաւորել: Միայն զՅովբամ, զուսոր Աքոզիայ զմանուկն ստրնդիաց, պրծեալ ապրեցուցանէին ի սրամտութենէ հանոյն իւրոյ: Յովբարէէ, քոյր Աքոզեայ եւ կին Յովեգայեայ քահանայապետի, թագուցանէր զնա ի տան Եստուծոյ, եւ զպատուական մնացորդ տանն Գաւթի ապրեցուցանէր: Իսկ Գոթողիա՝ կարծեալ եթէ ընդ այլսն ամենեւին եւ նա սպանաւ, անխէթ եւ անկասկած կայր:

Ղիզուրկոս զակեզմնացւոց օրէնսդիր ճանայէր³: Եւ դարովէր վասն զամենայն օրէնսդրութիւնսն զպատեւրազմաց ընծայեցուցանելոյ, ըստ օրինակին Մինովայ՝ զորոյ կարգաց զհեա զնացեալ էր. եւ չննելոյ ինչ օրէնս կանանց պարկեշտութեան, ուր վասն զօրականս զմարդիկ կացուցանելոյ, աշխատասէրս եւ ժուժկալս հրամայէր լինել:

Ոչինչ հակառակ Գոթողեայ ի հրէաստանի յառնէր, եւ կարծէր նա զանձնէ՝ թէ վնց ամաց թագաւոր

րու թեամբն հաստատեցաւ յարքայութեան իւրում: Այլ անուշանէր Աստուած ի անդուջ ամբութեան տաճարին զայն՝ որ խնդրելոց էր վրէժ ի նմանէ: Իբրեւ անոց եւ թանց էր նա՞, եւ Յովիզայէ ծանօթս զնմանէ ոմանց ի զօրավարաց անտի զօրու թագաւորին, զորս յառաջագոյն ի բանի արարեալ էր ընդ իւր, եւ անդէն ի տաճարին հանդերձ զեւտացւոյքն օծանէր զմանուկ թագաւորն: Աւ ժողովուրդն ընկալաւ վազվազակի զժառանգական Պաւլթի եւ Յովսափաթայ: Իսկ Պոթողեա իբրեւ լուսազէյն աղաղակին, ընթացեալ հասանէր. եւ մինչ զեւ զամբոխ ապստամբացն կամէր փարատել, անդէն ի վերայ հասեալ հանէին ի դաւթէ տաճարին, եւ առ ետեղ արժանի ըստ անօրէն վնասուն սասակին:

Արչափ ժամանակս կենդանի էր Յովիզայէ, զգուշանայր Յովսա օրինացն Մովսիսի: Իսկ յետ քահանայապետին մեռանելոյ, մնորեալ ի հրատուրելոյ իշխանացն իւրոց, նոքօք հանդերձ ի կռակաշառութիւն կործանեցաւ: Օգբարիս քահանայ մեծ որդի Յովիզայեայ կամեցաւ յանդիմանել զնոսա, իսկ Յովսա չսիշեաց ինչ զերախտիսն հօր նորա՞ եւ հրաման եւ քարկոծ առնել: Աւ վազվազակի վրէժխնդրութիւն ի վերայ հասանէր, զի ի դալ ամին միւսոյ հարկանէր Յովսա՞ յԱսորւոց անափ, եւ յանարդութիւն կործանեալ յիւրոց անտի սպանանէր. եւ Ամասիաս նորին որդի ազնուազոյն քան զնա՞, ի հօրն աթոռ նստէր: Թագաւորութիւնն Խորայեղի, հարեալ եւ վատթարեալ ի թագաւորացն Ասորւոց եւ յընտանի պատերազմաց, միւսանգամ սո Յերօբովամաւ Բրորդիւ զօրանայր:

Ազիս՝ որ եւ Ազարիասն կոչէր, որդի Ամասիայ՝, նոյնպիսի փառաւորութեամբ առաջնորդէր թագաւորութեանն Յուդայ: Այս այն Ազիս է՝ որ բորոտեցաւ, զոր եւ բազում անգամ դարովն գիրք վասն զի յաւուրսն իւրում ի վերջէնս, իշխեաց ձեռն արկանել ի պաշտօն քահանայութեան՝ որ չէր օրէն, եւ անձամբ յանձնէ խուսկս արկ ի վերայ սեղանոյ խնկոցն: Թէպէտ եւ թա

ԵՄԲ ԵՇԵՄԲԷ

՝3126. ՝3164. ՝3165. ՝3179.

՝3194.

ՅԵՆՆՏ. ԴԵՆ Ք.ՐԲՄՏՈՍ

՝878. ՝840. ՝839. ՝825.

՝810.

դաւոր էր, այլ ի բաց որոշեցին զնա ըստ օրինացն Կովսիսի, եւ Յովաթամ որդի նորա՝ որ յետոյ եկաց պայազատ, իմաստութեամբ առաջնորդէր թագաւորութեանն: Առ թագաւորութեամբ Աղեայ մարզարէքն՝ որոց գլխաւորք ի ժամանակին յայնմիկ Ավսէէ, եւ Ասայի էին՝, ըսկիզբն առնէին զբոլ զեւրեանց մարդարէութիւնն տարածանել, եւ գրել իւրաքանչիւր ի մատենի, եւ զբուն օրինակս նոցա ի տաճարին զնէին, զի յիշատակ աշխարհ եկելոյն լինիցին: Իսկ սակաւ մարդարէութիւնք՝ որ ի բարբառ բերանոյ միայն լինէին, ի մատեանս յիշատակաց տաճարին ըստ սովորութեանն զբոշմէին հանդերձ ժամանակին պատմութեամբ:

Բմբշական մրցութիւնքն, ի Հերակղեայ կարգեալք, բնդ երկար ժամանակս խափանեալ անդրէն նորոգեցան: Ի նորոգութենէ անտի ողոմպիսպքն կարգեցան, ուստի Յոյնք համարին զժամանակն: Աստ իմն վախճանին եւ ժամանակքն՝ զոր Ա արոն առասպելաց անուանէ, քանզի մինչեւ ի սոյն ժամանակ արտաքնոյն պատմութիւնք խառնակ շփոթութեամբ եւ կցկցանօք լի են. եւ սկաննին պատմութեան ժամանակքն՝ ուր դէպք աշխարհի բազում հաւաստեաւ եւ ճշգրտս պատմին: Կուսիրոս ի ստաղին յաղթէր, եւ այն առաջին ողոմպիսս կարգեցաւ, որ բնդ հինգ հինգ ամաց վերստին յարդարէր, չորից ամաց ի միջի կատարելոց: Անգ ի տօնս տարեկանացն՝ ուր ամենայն Յունաց աշխարհն ժողովէր, ի Պիսսա զառաջինն եւ սպա Աղղիս, անուանի զուպարածքն կատարէին, յորում որ յաղթէին, պսակէր եւ յարգանք եւ կայթիւնք եւ զոփիւնք ի մօտակացոյն յաճախէին: Այսպէս մրցութիւնքն ի պատուի էին, եւ Յունաց աշխարհն երթայր հանապաղ եւ հզօրադոյն եւ արնուազոյն լինէր: Իտաղացոց կողմանքն զբիթէ ամենեւին խուժադուժք էին: Ղատինացոց թագաւորք յԱնեայ արգէն, յաղբանացոց աշխարհին թագաւորէին:

Փուզոս ասորեստանեաց թագաւորէր: Օսա Սարգանապաղղայ հայր կարծեն, որ ըստ արեւելեաց սովորութեան Սարգանփուզոս կոչէր, այն իսկ է Սարգան Փուղայ

որդի: Արծի՛ թէ այս փուղոս կամ Պուղոս է թագաւոր նինուէացւոց, որ ի քարոզելոյ Հովնանու ամենայն ժողովրդովք իւրովք հանգերձ ապաշխարէր: Մա իրբելէր զամբոխ թագաւորութեան Խարայէղի, խաղացեալ գայր նուաճել զնոսա ընդ իւրեւ. այլ ցածուցեալ ի ձեռն Մանայեմնց, հաստատէր զնա յաթոս թագաւորութեան իւրոյ՝ զոր բռնութեամբ յինքն վտարեալ էր, եւ առնոյր ի նմանէ հարկս հաղար տաղանտ: Ըստ նորին որդւով Սարգանսագողաւ, եւ յետ Լղկմէնի՝ որ յետին է քան զամենեսին որք ցկեանս իշխանք կացին յԼթէնս, աթենացիք՝ որ մեղմով տակաւ տակաւ յընկերհաշտեաց վերակացութիւն յօժարեալ գային, կարձէին զելխանութիւն ոստիկանացն իւրեանց եւ ի տասնամեայ ժամանակ իջուցանէին զվերակացութիւն իշխանացն: Եւ առաջին Քարոփս եկաց յայնմ վերակացութեան:

ԵՄԲ ԵՇԵՐԷԹ

Է3233.

ԵՄԵՑ. ԲԵՆ ՉՔՐՐՍՈՍ

Է771.

1) Գ. ԹԵՐ. Ե. 32: 2) ՍԵՐ. ԵՐՈՒՆ: 3) ՊԵՐ. ՎԱՆ ԲՆԿԵՐՀԱՆ. ԳԻՐԲ Ը: ՎԱՆ ՕՐԻՆԱՅ. ԳԻՐԲ Ը: ԵՐՐՍ. ՎԱՆ ԲԱՂԱՐ. ԳԻՐԲ Ը. ԳԸ. 9: 4) ՍԵՐ. Ը. 1:

Ժ Ա Մ Ե Ն Ե Կ Է

ՌՈՍՏՐՅԱՆ ԿԵՄ ԸՐԵՈՒԵՄ ԷՌՈՄ ԲԵՂԱԲԻ

ՌՈՍՏՐՅԱՆ և Ռեւոնս յազդէ հնոց թաղաւորայն աղբանացւոց յԱղեայ մօրէ, զՆովհատվը զհաւն իւրեանց՝ զոր նորին եղբայրն Ըմուղեոս մերժեաց, անգրէն յաղբանացւոց թաղաւորութեանն հաստատէին, և արագ արագ այնու հետեւ զՀոռոմոց քաղաքն շինէին, մինչ դեռ Յովթամ թաղաւորէր ի հրէաստան:

Ի վախճանել ամին երրորդի՝ վեցերորդի ողորմակադին, քաղաքիս այսորիկ հիմն անկանէր⁵, որ հանդերձեալ էր իշխան օրեղբայր լինել, և յետոյ ապա աթոռ դիտաւորութեան կրօնից. չորեքարեւր և երեսուն ամաւ յետոյ քան զառնուլ Տրովադայ, ուստի Հոռոմք զիւրեանց նախնիսն համարին թէ իցեն, և ևեթնհարեւր յիտուն և երիւք ամօք յառաջ քան զկենարար աստուածայայտնութիւնն: Սովիդոս՝ վշտամբերութեամբ ի մէջ անգիտողաց սնեալ, և ամենեւին յամենայն ժամ ի հրահանդս մարտից թիգեալ կազմեալ, Վից պատերազմի՝ զոր հայր իւր անուանէր, զքաղաքն նուիրեաց:

Սօս ի շինուած Հոռոմ քաղաքի դիպի առաջնոյ ասորեստանեաց պետութեանն՝ կործանել, վասն Սարգանապաղղայ յուղութեանն և վախկութեան: Սարք, ազգ պատերազմօղ, քաջալերեալ ի բանից անտի Վարբակայ իւրեանց առաջնորդի, տային օրինակս հնազանդելոցն Սարգանապաղղայ արհամարհեալ անարգել ըզնորա մեղի բարսն: Ըմենեքին առ հասարակ հակառակ նմա յառնէին, և կորեաւ նա ի գլխաւոր քաղաքի անդ իւրում, ուր բռնադատեալ՝ անձամբ զանձն, հանդերձ կանամբք և ներքինեօք և ամենայն կազմածով այրէր:

Յաւերածոյ անտի այսր տէրութեան, երեք մեծամեծ թաղաւորութիւնք յառնէին: Արբակէս՝ զոր այլք Փառնակէս անուանեալ կոչեն, զՍարս ինքնօրէնս աղիկամիս թողոյր, որոց յետ ընդերկար ժամանակաց անտէրընչութեան, թաղաւորք մեծազօրք կացին: Ղարձեալ՝

ՌՐՔ ԵՇԻԲԷԶՐ
Ե3250.

ՌՐՔ ԷՌՈՂՄԵՅ
Ե1. 76.

ՅԵՌՍՑ. ԲԵՆ ՔԱՐԹՈՏՈՍ
Ե754. Ե753. Ե748.

անդէն վաղվաղակի զինի Սարգանապարտայ, երկրորդ թագաւորութիւն ասորեստանեաց յառնէր^Ե, որոյ քաղաք թագաւորութեան էր Վինուէ, եւ մեւս այլ թագաւորութիւն դարձեալ բարեղացւոցն: Օչերկուց այսոցիկ թագաւորութեանց յեանոց, եւ արտաքնոցն մասեանք տան ծանօթս, եւ են իսկ նշանաւորք յաստուածեղէն պատմութեանն: Ասորեստանեաց երկրորդ հարստութեան ի Թագաւորաց որդւոյ Փաղսարայ սկիզբն լինէր, վասն այնորիկ իսկ նմա Թագաւորութիւնս անուն կարգային, զոր ոմանք եւ Վինուս կրտսեր անուանեն: Իսկ Բաղդան՝ զոր Յոյնք Բեղեսիան անուանեալ կոչեն, զբարեղացւոց թագաւորութիւնն հաստատէր. զնա բարեղացիք Վարոնասարոս անուանէին: Անդստին ի Վարոնասարայ քաղաքացւոց ժամանակադրութիւն կարգէր, որ երեւելին է առ Պաղոմեայ, եւ առ Հինսն ճարտարութեան աստեղագիտութեանն՝ որ զերեանց տարինն ի նորա թագաւորութենէն հաշուէին: Բմրոն եւ ի զէպ է ասել ասա՝ եթէ այս բարբառ ճԵՐԵՆԵՆԵԳՐՈՒԹԻՒՆ, զկարգ համարոյ տարեկանայ նշանակէ, սկիզբն արարեալ ի ժամանակէ՝ յորում մեծամեծ ինչ զէպք նշանաւորք զիպեղան:

Աքաղ արքայ Յուդայ, անօրէն ամբարիշտ չարագործ, իրրեւ նեղէր ի Հուսախմայ արքայէ Ասորեաց եւ ի Փակէէ որդւոյ Ռոմեղայ արքայէ Խարայէղե, փոխանակ յԱստուած խրախուսելոյ, որ յարոյցն զնոսա թշնամիս, զի տանջեցէ զնա նոքօք, զԹագաւորութիւնս արքայս գառաջին թագաւոր ասորեստանեաց կամ նինուէացւոց կոչէր, եւ նորա եկեալ՝ զթագաւորութիւնն Խարայէղե մօտ ի կործանումն հասուցանէր, եւ զԱսորոց թագաւորութիւնն համօրէն եղծանէր. միանգամայն եւ աւար հարկանէր զթագաւորութիւն Յուդայ՝ որ վարձկանութիւնս օգնականութեան ի նմանէ խնդրեաց: Աւ այնպէս թագաւորք ասորեստանեաց ուսանէին զճանապարհ երկրին սրբոյ, եւ ի մտի զնէին արիւր աշխարհին: Սկիզբրն առնէին^Զ ի թագաւորութենէ Խարայէղե՝ զոր Սաղմանասար որդի եւ ժառանգ Թագաւորութիւնս արքայ, քակէր: Ավսէէ արքայ Խարայէղե յուսացեալ էր յօգնակա-

նութիւն Սարակայ արքայի եթւովպացւոց՝ որ եւ Սովա կամ Սուան կոչէր, եւ զաշխարհն եգիպտացւոց ընդ ձեռամբ նուաճեալ ունէր: ԸյՂ եւ սա՝ որ հզօր աշխարհակարս էր, չկարաց թափել զնա ի ձեռաց Սաղմանասարայ: Տասն ցեղքն՝ յորս նուաղեալ էր աստուածապաշտութիւն, փոխեցան ի Նինուէ եւ ցրուեցան ընդ ազգս եւ ամենեւին կորեան, մինչեւ չէ մարթ զնշմարանս ինչ նոցա ումէք գտանել. իսկ ոմանք ի նոցանէ ընդ Հռեայսն խառնեցան, եւ էին փոքր ինչ մասն թագաւորութեան Յուդայ:

Ըս այնու ժամանակաւ Վոմիդոս սպանաւ: Ըս էր նա համակ ի ճակատու, եւ յամենայն ժամանակի յաղթէր. այլ ի մէջ մարտից պատերազմաց հիմն կրօնիցն եւ օրինաց արիւնէր: Իսկ Նումաս՝ նորին պայազատն յերկայնժամանակեան խաղաղութեան զործն ի դուխ հանէր եւ կատարէր: Օկրօնան յօրինէր եւ զլարս դազանութեան ազգին Հռոմոց զզօնացուցանէր: Ըս սովաւ դաղթականք ի Աորնթոսէ եւ յայլոց եւս քաղաքաց Յունաց աշխարհին եկեալ զԱիրակուսաս ի Սիկիդիա շինէին, եւ զԱրովտոն եւ զՏարանտոն, թերեւս եւ այլ քաղաքս ի կողմն խաղացւոց աշխարհին, զոր առաջինք ի յունական դաղթականութեանցն՝ որ ընդ ամենայն գաւառն ցան աստ անդ բնակէին, մեծ աշխարհ Յունաց կոչէին:

Ի ժամանակին յայնմիկ Ազեկիաս, աստուածապաշտ եւ արդար քան զամենայն թագաւորսն՝ որ յեա Վաւթի կացին, թագաւորէր ի հրէաստանի: Սենեքերիբ, որդի եւ ժառանգ Սաղմանասարայ, յաճախադունդ զօրօք բազմատարած բանակօք եկեալ պաշարէր զնա յԱրուսաղէմ: Հրեշտակ Եստուծոյ ի միում գիշերի հար սատակեաց զբազմութիւն զնդին: Իսկ Ազեկիաս՝ որ այնպիսի սքանչելի օրինակաւն փրկեցաւ, առաւել եւս հաւատարիմ լինէր ծառայել Եստուծոյ հանդերձ ամենայն ժողովրդեամբն: ԸյՂ յեա Ազեկիայ մեռանելոյ՝ առ նորին որդւով Սանասիւլ, մոռացաւ ժողովուրդն զԵստուած, եւ բազմացան անօրէնութիւնք ի նոսա:

Բնկերհաշտութիւն յայնժամ՝ յաթենացւոց միջի հաստատէր^Է, եւ սկիզբն առնէին զիշխանսն տարեւորս ընտրել, որոց առաջին Արէոն:

Մինչ զեռ ամպարշտութիւնք ի թագաւորութեանն Յուդայ յաճախէին, զօրութիւն բռնութեան թագաւորացն ասորեստանեաց՝ որ վրէժխնդիր անօրէնութեանց նոցա լինելոց էին, ընդ Ասորդանաւ որդւով Սենէքերիբայ ածէր: Աս զբարեգացւոց թագաւորութիւնն ընդ նինուէացւոցն միաբանէր^Ը, եւ յասիացւոց աշխարհին առաջնոց ասորեստանեաց զօրութեանն հաւասարէր: Բնդ նորա թագաւորութեամբ քութացիք ժողովուրդք կողմանցն ասորեստանի, որ յետոյ շամրացիք կոչեցան, առաքեցան բնակել ի Շամրին¹: Արքա զԱստուծոյ պաշտօնն ընդ կողմն պաշտաման խառնէին, եւ յԱսորդանայ զմին ի քահանայից իսրայէղացւոց ընկալան, որ նոցա զպաշտօն Աստուծոյ աշխարհին ուսուցանէր². այս ինքն է պահել զօրէնսն Մովսիսի: Չկամէր Աստուած՝ եթէ իւր անունն իսպառ ջնջելցի յերկրէն՝ զոր ետ նա իւրում ժողովրդեանն, նմին իրի եւ զիւր օրէնսն անդէն ի վայրութիւն թողոյր: Բայց քահանայն նոցա, լոկ զգիրսն Մովսիսի տայր նոցա, զոր տասն ցեղքն՝ որ ձեղքեցանն, ի ժամանակի հերձուածոյն հաստատուն ունէին: Իսկ զայլ զբեանն յետոյ ուրեմն կարգեալ ի մարդարէից՝ որ զոհս ի տաճարին մատուցանէին, դարչելի եւ խտան համարէին. վասն այնորիկ շամրացիք եւ այժմ իսկ լոկ զհինգ դարութիւնսն ընդունին:

Ի ժամանակին՝ զի Ասորդան եւ ասորեստանեայքն յասիացւոց աշխարհին զօրացեալ հաստատէին, նոյնգունակ եւ Մարացն իշխանութիւն նշանաւոր եւ երեւելի լինէր: Գիտիէս՝ որ նոցա զառաջինն թագ կապեաց, զոր դիրք Արփաքսադ անուանեն, զհոյսկապ քաղաքն զԱհրատանս շինէր, եւ յաղթ պետութեանն հիմն արկանէր: Օ՛նա Մարք ի բարձ թագաւորութեանն հասուցանէին, զի զառնն զառաքինութիւն պատկիցեն, եւ անկարգութեանցն՝ որ յանաւորնութեանն գիպէին³, զրաւ լինիցի: Առաջնորդեալք ի մեծ թա-

գաւորէ, անտի յարուարձանեաց ամրանային, այլ չաւարածէին ուրեր :

Հոռոմայեաց քաղաքն աճէր, այլ մեղմով եւ տակաւ տակաւ : Մեղ Տուղղեաւ Աստիղեաւ¹ որ երրորդ թագաւոր եկաց Հոռոմոց, եւ նշանաւոր կռուովն Արատեանց եւ Աուրիատեանց, աղբանացւոց քաղաքն նուաճէր եւ յաւեր լինէր. եւ նորին բնակիչք, ի նոսա՝ որ յաղթեցինն, եկեալ յարեցան, վասն որոյ եւ քաղաքն մեծացեալ ամրանայր : Աստիղոս զառաջինն զնոյն պայման հայթայթանօք ի կիր արկեալ էր, վասն բազմամբոխ գքաղաքն դործելոյ, զի զսարկինացիս եւ զայլ եւս ազգան՝ որ ի պարտութիւն մատնեցան, ի քաղաքն ընդունէր : Արք զլուրեանց պարտութիւնն մոռանային, եւ միամտութեամբ զչեա աերանցն միտէին : Հոռոմայեցիք զլուրեանց իշխանութիւնն տարածեալ, եւ զզօրսն յարդարէին. անդէն իսկ առ թագաւորութեամբն Տուղղեայ Աստիղեայ զայնպիսի դեղեցիկ հրահանգան ուսան, որ զնոսա յետոյ տիեղերաց իսկ իշխան կացուցանէր :

Նգիպատացւոց հարստութիւնն, վասն ընդ երկար երկիպատակութեանց եւ բաժնից նուազեալ², առ Փասմետիկեաւ անդրէն նորոգէր : Իշխանս այս՝ որ զլուր կեանսն յոնիացւոցն եւ կարաղացւոց պարտէր, զնոսա անդէն յեգիպտացւոց աշխարհին բնակեցոյց, որ մինչեւ ցայնժամ օտարաց չէր օրէն : Աւ սոյն իսկ առիթ լինէր եգիպտացւոց ընդ Յունացն տուրեւտիկ փոփոխմանց. յայսմ ժամանակէ հետէ եւ եգիպտացւոց պատմութիւնն՝ որ մինչեւ ցայնժամ ի հնարադիտութենէ քրմացն պաճուճեալ առասպելօք խառն էր, սկսանէր, ըստ Արտոգոսեայ, ունել կայ եւ հաստատութիւն³ :

Հայնմ ժամանակի ասորեստանեաց թագաւորք երթային, եւ ահագինք ամենայն արեւելից լինէին : Սաւուդուքին⁴ որդի Ասորպանայ՝ որ ի Յուդթայ գիրսն Աարուքողոնոտորն կոչի, ճակատ տուեալ վանէր զԱրիաքսադ զարքայ Սարաց : Մեղ այն հպարտացեալ ձեռն արկանէր զամենայն երկիր ընդ իւրեւ նուաճել⁵, եւ անցեալ ընդ Ափրատ գետ, աւար հարկանէր մինչեւ ի հրէաստան :

ԵՐԳ ՀՈՒԳՄԷՅ
 183. 184. 197. 198.

ԵՆՈՒՅ. ՔԱՆ ԶՐԻՍՏԱՍ
 671. 670. 657. 656.

Իսկ Հրեայքն յետ բարկացուցանելոյ զՄատուած եւ ի կռապաշտութիւն կործանելոյ զՄանասէ օրինակ շարեաց արարեալ, ապաշխարեցին հանգերձ թագաւորան. եւ Մատուած այնու հետեւ օղնական էր նուցա: Եւ զօրութիւն յաղթութեան Նարուքոգոնոսորայ եւ Հողովեռնեաց զօրագլխի զօրաց ներա, ի ձեռն կնոջ միոյ յանկարծակի խափանէր:

Վիտիէ՝ թէպէտ եւ յասորեստանեաց խորտակէր, այլ այնպէս զթագաւորութիւնն թողոյր, որպէս զԵմարթիցի առ իւրովք պայաղատօքն աճել եւ մեծանալ: Սինչ դեռ նորին որդի Փրաւորտէս եւ թոռն Ախաբսարէս, զՊարսից աշխարհն նուաճէին, եւ ի փոքր Մսիա մինչեւ ցԱղիւս դետ հասանէին, վախճան լինէր ի հրէաստանի անօրէն թագաւորութեան՝ Մաննի որդւոյ Մանասէի. եւ Յովսիա, որդի Մաննի՝ որ իմաստուն էր ի մանկութենէ իւրեկ, ջանայր բառնալ զամենայն անկարգութիւնսն՝ որ յառաջին թագաւորացն մտին:

Հոովմայեցիք՝ որոց թագաւոր Մնկոս Մարկոս էր, զոմանս ի զատինացոց ընդ իւրեանց առաջնորդութեամբ նուաճէին. եւ ի թշնամեացն՝ իւրեանց քաղաքացիս առնէին եւ ի բուն քաղաքն ընդունէին: Իսկ վէիացիքն թշնամիք նոցա՝ որ ի ձեռն Սոմիլոյ ախարացեալ էին, բազում վայրս միւսանդամ յիւրեանց աշխարհէն աուժեցան: Հասանէր հարկանէր Մնկոս մինչեւ ցմտաւոր ծովն, իւր զՍասիա քաղաք ի խառնուրդս Տիրերիս դետոյ շինէր:

Ի ժամանակին յայնմիկ Բարեղոն ի Նարուպաղսայ նուաճէր: Մասնիչս այս եւ անօրէն՝ զոր Վինաղադանայ, որ եւ Սարակոնն կոչէր, արարեալ էր զօրավար զօրաց իւրոց տալ մարտ պատերազմի ընդ Ախաբսարայ արքայի Մարայ, երթեալ յարէր յԱժդահակ որդի Ախաբսարոյ. եւ զՎինաղադան ձերբակալ ի Նինուէ առնէր եւ զմեծ քաղաքն յատակաց բրէր, որ ամենայն քաղաքաց արեւելից աիկին լիեալ էր. եւ նստէր յաթոթ թագաւորութեան տեառն իւրոյ: Եւ այնպիսի ամբարտաւան թագաւորաւ հպարտացաւ Բարեղոն:

Իսկ ի վերայ Հրէիցն՝ որոց ամպարշտութիւն ելեալ զեղոյր, ահ եւ երկեւղ էր յամենայն կողմանց: Ասան խոնարհութեան Յովսիայ աստուածապաշտ թագաւորին, սակաւ ինչ ժամանակ յամեցին պատիժք պատուհասից՝ որոց արժանի էր ժողովուրդն վասն անօրէնութեան դորձոց իւրոց, այլ առ նորին որդւովք ստուարացան չարիքն: Նարուքողոնոսոր Ռւրորդ՝ որ քան զՆարուպողասար զհայր իւր ահագին էր, զնա փոխանակէր՝, սա՛ որ ամբարտաւանս էր, եւ յամենայն ժամանակի կրթեալ ի մարտ պատերազմի, զբազում կողմանս զարեւելից եւ զարեւմտից եհաս կալաւ՝, եւ Ռարեղոն զամենայն երկիր սպառնայր ի հարկի ծառայութեան կացուցանել: Սպառնալիքն վաղվաղակի արդիւնք ի վերայ Հրէիցն լինէին: Թողեալ լքեալ լինէր Արուսաղէմ առաջի ամբարտաւան թագաւորին՝ որ երիցս իսկ առ զնա, առաջին՝ ի սկզբան թագաւորութեան իւրոց ի չորրորդում ամի Յովակիմայ, ուստի սկիզբն լինի ամաց եւ թանասնից դերութեանն բարեկացւոց, զոր Արեմիա մարդարէ եցոյց՝, եւ երկրորդ անգամ՝ առ Յեքոնեա՝ կամ Յովաքիմաւ որդւով Յովակիմայ. եւ երրորդ անգամ՝ առ Սեզեկիաւ, յորժամ քաղաքն ի հիմանց տապալէր՝ եւ տաճարն հրձիգ լինէր, եւ թագաւորն եւ մեծամեծք ժողովրդեանն հանգերձ քահանայապետան Վարայիաւ վտարանդեալ ի դերութիւն վարէին: Փառաւորք դերութեանն Ազեկիէղ եւ Ղանիէղ մարդարէք էին. ընդ գերեալսն համարին եւ երեք մանկունքն՝ զոր Նարուքողոնոսոր չկարէր յերկրպագութիւն պատկերին դարձուցանել եւ ոչ հուրք ծախել:

Յունաց աշխարհն փառաւոր եւ քաջանուն լինէր՝, եւ եւթն խնաստունքն պայծառանային: Սակաւ ինչ կանխազոյն քան զհուսկ յետին աւերն Արուսաղէմի, Ուղոն, մի յեւթանց խնաստնոցն, օրէնս արժենացւոց զրնէր եւ զպատուութիւն յարգարութեան վերայ հաստատէր, փոկեացիքն ի յոնիացւոց աշխարհէն, զառաջին գաղթականութիւնն ի Մարսիղեա ածէին:

ԵՎԵՐ ՀՈՌՈՎԵՐ
 130. 144. 147. 155. 624. 610. 607. 599.
 156. 160. 598. 594.

Տարիութենայ Պրիսկեայ՝ Հուսմոց թագաւորի⁵, յետ զկողմն մի ետրուրիրացւոց ընդ ձեռամբ նուաճելոյ, եւ զՀուսմ քաղաք գեղեցիկ շինուածովք զարգարելոյ, վախճան թագաւորութեան հասանէր: Առ նովաւ զաղաւտացիք առաջնորդեալք ի Բեղովեսեայ, զվայրսն՝ որ շուրջ զՊաղոս գետով յառաղեա էին, շահեալ կալան⁶, մինչ գեռ Աեղովեսեան՝ նորին եղբայր, այլ եւս բազմու թիւն մարդկան ի նմին ազգէն, անդր ի Գերմանիա հասուցանէր: Սերուիոս Տուղոս պայապատն Տարիութենայ եղ զհանդէս համարոյ քաղաքացեացն յուրոյն կարգբա զատուցելոց, ուստի եւ մեծ քաղաքն իրրեւ զտուն մի կամ զտոհմ յօրինէր:

Նարուքողոնոսոր զՎարեղոն՝ որ մեծացաւն յառէ եւ յաւարէ Արուսաղէմի եւ կողմանցն արեւելից, զարգարէր եւ գեղեցիկ գործէր. այլ յետ ոչ բազում ժամանակաց միւսանգամ եղծանէր, զի եւ թագաւորն իսկ՝⁷ որ պարսպօքն եւ մահարձանօք եւ ազգի ազգի զարդու զՎարեղոն յօրինեաց⁶, ի մեռանելն իւրում մտա առ կուրծս հասեալ զաւերն տեսանէր: Նորին որդի Աւիրդարուղոքոս զեղծ եւ անօրէն ի թագաւորութեանն գտեալ, աւելի ամենեցուն լինէր⁷. եւ նենդ գործեալ նմա ի Ներիդ գասարայ ի քեռն առնէ, սպանանէր, եւ զթագաւորութիւնն՝ որ զնենդն գործեաց Ներիդգասարոս առնոյր:

Ղոյնպէս եւ Պիսիսարատէս յԱթէնս զմեծ իշխանութիւնն յափշտակէր, զոր զերեսուն ամ ի բազում փոփոխանց միջի պահէր, եւ իւրոց իսկ որդւոց թողոյր:

Ներիդգասարոս չկարէր այնու հետեւ ժուժալ Մարաց զօրութեանն՝ որ յարեւելն բազմանային, եւ ի մարտ պատերազմի ընդ նոսա կամէր բախել: Աւ մինչ գեռ Աթղահակ, որդի Արաքսարայ առաջնոց, կազմէր պատրաստեր ի գիմի հարկանել, ի կենաց վախճանէր, եւ զպատերազմն իւրում որդւոյն Արաքսարայ Բ բորդի թողոյր⁸, որ ի Վանիէղէ Վարեհ Մար անուանի: Սա կացուցանէր զօրավար զօրաց իւրոց զԱլլուրոս, զորդի Մանգանեայ քեռն իւրոց եւ Աամբիւսեայ արքային Պարսից,

ԸՄՔ ՀԹԹԳՄԵԸ

Ե176. Բ188. Գ192. Դ194.

Ե195.

ՅԵՈՒՔ. ԲԵՆ Բ.ՔՐԻՍՏՈՍ

Ե578. Բ566. Գ562. Դ560.

Ե559.

որ ընդ Մարաց իշխանութեամբ էր: Սանն Համբաւոյ քաջութեանն Ալեքոսի՝ որ փառաւոր եւ քաջանունն ի պատերազմունս լեալ էր առ հաւուն իւրով Աժգահաւ, բաղումք ի թագաւորացն արեւելից ի կողմն Ախաքսարայ գային գումարէին: Օ Արեսոս արքայ զեւ գացոց ի քաղաքի իւրում ի ընին ձերբակալ առնէր⁵. եւ առնոյր զառ եւ զպուռս եւ զաւար նորս. եւ զայլ եւս զաշնաւորս թագաւորացն բարեղացոց նուաճէր⁶. եւ ոչ միայն Ասորոց տիրէր, այլ եւ յառաջ եւս անցեալ ի ներքս ի փոքր Ասիա խաղացեալ հասանէր: Եւ ապա չու առնէր գնայր ի Բարեղոն⁷, եւ առեալ զքաղաքն նուաճէր ընդ ձեռամբ Ախաքսարայ մօր եղբօրն, եւ նորս զարմացեալ ընդ հաւատարմութիւն նորս եւ ընդ գործս քաջութեանն, տայր նմա ի կնութեան զլուսար իւր զմիամօր եւ զժառանգ:

Ի թագաւորութեանն Ախաքսարայ, Վանիէղ⁸ որ առ առաջին թագաւորօքն մեծամեծ տեսլեամբք պատուեալ էր, յորս առաջի աչաց յայտնական կերպարանօք զայնչափ թագաւորս եւ զպետութիւնս անցեալս տեսանէր, այլով իւր յայտնութեամբ զեւթանասուն եւ թներորդան ուսաւ, յորս ժամանակքն Քրիստոսի եւ Հրէից իրք նշանակին: Սորա եւթներորդք էին ամացն, որ միահամուռ գումարին ամք չորիքհարեւր իննսուն. զի սովորութիւն էր Հրէից զոյն ձեւ զտարիսն վարիսնել, որք եւ զամն եւթներորդ հանդատեամբ սրբէին իրրեւ զօրն եւթներորդ:

Իրրեւ ժամանակք ինչ ի վերայ անցանէին տեսլեանն⁹, Ախաքսարէս մեռանէր, որպէս եւ Մամբրեւսէան հայր Ալեքոսի. որ եւ յաջորդեալ գնոսա, զՊարսից թագաւորութիւն՝ որ ցայնժամ աննշանն էր, ի Մարաց թագաւորութիւն խառնէր, զորոց զահմանան ինքն արութեամբ եւ քաջութեամբ ընդարձակեալ էր: Եւ այնպէս ամենայն արեւելից իշխան խաղաղարար լինէր, եւ հաստատէր զհարստութիւնն զմեծն եւ զյազթ քան զամենայն պետութիւնս՝ որ յաշխարհի լեալ էին:

ԱՄԻՔ ՀԻՌՈՎՄԵՑ

Բ206. Բ211. Բ216. Բ217.
Բ218.

ՅԵՌԵՄ. ԲԵՆ ԲԱՐՄՈՍՈՍ

Բ518. Բ543. Բ538. Բ537.
Բ536.

Այլ զոր առաւել պարտ է վասն կարգի ժամանակաց մերոց ցուցանել, այն է՝ թէ Ալուրոս յառաջնակ ամէ թագաւորութեան իւրոյ հրաման տայր զտաճարն Աստուծոյ յԱրուսաղէմ նորոգել, եւ զԷրեայն ի հրէաստան դարձուցանել:

Յայսմ վայրի սահաւ ինչ պարտ է դադարել, զի աստ առաւել իմն եղծեալ եւ շփոթեալ են կանոնք ժամանակագիր մատենից, վասն դժուարին լինելոյ զարտաքնոցն պատմութիւնս ընդ զբոց սրբոց պատմութեան կշռել: Ապաքէն տեսեալ իցէ քո՞ զի զոր ինչ եւ զԱլուրոսէ պատմեմ, յայնմանէ՞ զոր ի Յուստինեայ գիրան ընթերցեալ եւ, կարի իսկ այլակերպ է. եւ զի նա զերկրորդ թագաւորութենէ ասորեստանեաց, եւ զթագաւորացն անուանեաց զասորեստանեաց եւ զբարեղացւոց չճառէ ինչ, զորոց կան ճառք յերբայական պատմութեանն. եւ զի բանքս իմ չեն ինչ այնմ միտքան, զոր սոյն այր զերկրց զառաջին միահեծան իշխանութեանցն դրէ. զասորեստանեաց իշխանութենէ՞ որ մինչեւ ցԱարդանապաղզոս հասանէր եւ անդէն վախճանէր, եւ զՄարաց հարստութենէ՞ որ անէր բաւէր մինչեւ ցԱժգահակ ցհաւն Ալուրոսի, եւ զՊարսից պետութենէ՞ որոյ սկիզբն ի Ալուրոսէ լինէր եւ յԱղէքսանդրէ քակէր:

Ի Յուստինեայ վերայ յաւել եւ զՎիոզորոս եւ զբաղումն ի մատենագրացն Յունաց եւ զատինացւոց՝ ուրոց մատենք առ մեզ կան. որ եւ այլազգ ինչ քան զոր մէքս դրեցաք, զտոցանէ պատմեն:

Իսկ վասն իրացն Ալուրոսի, ի մէջ արտաքնոցն մատենագրաց բազում չմիարանութիւն կրի. այլ եւ հաւանեալ եմ մանաւանդ զՔսենոփոնի զհետ դնալ, հանդերձ երանելեաւն Արոնիմոսի՞, քան Ատեսեայ վիպագրի՞ որ բազում ինչ առասպելս տողէ, ուստի բաղումք ի Յունաց առեալ մատենագրեցին, որպէս եւ Յուստինոս եւ զատինայիք՝ ի Յունացն. մանաւանդ քան զԱրդոտոս իսկ զնա հաւատարիմ համարիմ, թէպէտ եւ աս իմաստուն իցէ եւ հանձարեղ: Աւ զայս այսպէս յայն սակս ընտրեցաք, քանզի Քսենոփոնի պատմութիւնն ինքնին առաւել հաւանութեան թուի, եւ յանկ ի զրոյրն պատմութիւնս՝ որք հնութեամբն, եւ համեմա-

առեթեամբ՝ որ ընդ իրս Զրէիցն եւ արեւելից ի միջի կայ, քան զամենայն յունական պատմութիւնն վաւերականք են, թէպէտ եւ չգիտիցէ իսկ որ թէ Զողոտին սրբով գրեալ իցեն:

Իսկ զոր վասն երկից առաջին միահեծան իշխանութեանցն բաղուժք ի Յունաց մատենագրեցին, իմաստնոցն Յունաց երկմտութեան թուեցաւ: Պղատոն⁸ եգիպտացւոց քրմաց բանիւ յայտ առնէ՝ եթէ ամենեւին չգիտեին Յոյք զուսումն զհին ժամանակին. եւ Արիստոտելէս⁹, զնոսս՝ որ զասորեստանեաց վեպասանութիւն գրեցին, ընդ այնոսիկ որ առասպելս արկանիցեն, համարի:

Վանդի անագան ուրեմն գրեցին Յոյք, եւ զի կամեին նախնեացն պատմութեամբք զըօսեցուցանել զաշխարհն Յունաց՝ որ յամենայն ժամանակի քննիչ եւ ընդ վայրախոյզ էր, յանյայտ յիշատակացն կարգէին իւրեանց պատմութիւնս. եւ շատ եւ բաւական համարէին բանիք պաճուճելովք յարմարել զնոսս, զճշմարտութենէ անփոյթ առնելով:

Իւ կարգն իսկ երկից առաջին միահեծան իշխանութեանցն՝ զոր գրեն, լի են յայտնապէս առասպելօք. քանզի յետ առ Վարդանապողոս ասորեստանեաց իշխանութեան ի միջոյ բառնարոյ, զՄարս ի մէջ բերեն եւ ապա զՊարսիկս. որպէս թէ Մարաց՝ զամենայն հարբստութիւն ասորեստանեաց պայտղատեալ իցէ, եւ Պարսիկք զՄարս վանեալ ինքեանք կացեալ իցեն:

Եւ զնորին հակառակն այն իսկ ճշմարիտ է՝ թէ յորժամ Վարբակէս ապստամբեցոյց զՄարս ի Վարդանապողոս, յազատութիւն միայն հան զնոսս, եւ ոչ եթէ ընդ նոքօք ինչ զասորեստանեաց իշխանութիւն նուաճէր: Արդոտոս¹⁰ զորոյ զհետ երթան քաջք ի ժամանակագրացն, զՎիտիէս առաջին թագաւոր լեալ նոցա պատմէ յիսունամօք յետոյ քան զապստամբութիւնն նոցա: Վարձեալ եւ այն ստոյգ է, որպէս միաբան Արդոտոս վեպապատում մատենագիրն եւ Վասնոփոն¹¹ եւ այլ եւս բաղուժք վկայեն, եթէ ի ժամանակի՝ որ Մարաց իշխանութեանն համարեալ է, թագաւորք հարուստք ասորեստանեաց կացին, յորոց ամենայն արեւելք գողային, զորոց եւ զգորութիւնն՝ Աիւրոս առեալ զՎարեղոն, խորտակէր:

Ս ան որոյ եթէ շտոք ի Յունաց, եւ զատինացիք իսկ՝ որ նոցա զհետ չոքան, զԹաղաւորաց անտի բարե- ղացւոց ոչ ինչ յիշատակիցեն, եւ զայնպիսի յաղթ պե- տութիւն ի կարգի առաջնոց միահեծան իշխանութեանց՝ զորոց զպայտալատութեանցն պատմեն, չհամարիցին. եւ զարձեալ՝ եթէ զԹաղաւորացն անուանեաց, զԹաղաթ- փաղսարայ, զՍաղմնասարայ, զՍենեքերիբայ, զԱարու- քոզոնոսորայ եւ զայլոց բազմաց յիշատակս՝ որ նշանաւոր յատուածեղէն զիրս եւ յարեւելեաց պատմութիւնան են, ի նոցա մատենաս չդասնիցեմք, պարտ եւ պատ- շած է զայն Յունաց անդիտութեանն համարել, որ յիւ- բեանց պատմութիւնան առաւել ճարտարութեան բանից, քան ճշմարտութեանն հաւաստեաց փոյթ յանձին ու- նէին. եւ կամ հարկ է ասել՝ եթէ որ ինչ ստոյգ եւ ճշ- զրիտ ի նոցա պատմութիւնան կայր, կորեաւ:

Քանզի եւ Արոզոտոս¹² ուրոյն եւ զատ զասորես- տանեացն պատմութիւն կարգել խոստացաւ, որ այժմ՝ չեք ուրեք ի միջի. իցէ թերեւս՝ զի կորուսեալ իցէ, կամ զի չինէր նմա ժամանակ ի գէս՝ զի զոր խոստացաւն կա- տարիցէ: Աւ ի գէս իսկ է զայնպիսի իմաստուն պատ- մադէ կարծել, եթէ չառնոյր յանձն զԹաղաւորսն՝ որ յերկրորդ հարստութեան ասորեստանեաց կացին, ամե- նեւին առանց ճառելոյ թողուլ. քանզի եւ զՍենեքերի- բայ՝ որ անգատին մի ի նոցանէ էր, ճառեալ ի գիրսն իւր՝ որ այժմ՝ կան¹³, Թաղաւոր լինալ, ասէ, ասորեստա- նեաց եւ արարացւոց:

Սարաբոնիոս¹⁴ որ յԱւգոստեայ ժամանակն էր, Մեղասթենէս, ասէ, մատենագիր այր քաջ ի բաց հին եւ մօտ ուրեմն յԱղէքսանդրի ժամանակն, զԱարուքո- զոնոսորայ քաղզեացւոց Թաղաւորի զերս եւ զարու- թիւնս զբով զբոշմեալ թողոյր. որ եւ զրէ իսկ զայժմու ճառեալ Թաղաւորէ պէս զայս օրինակ: Օււրոպէացւոց աշխարհն, ասէ, հատեալ անցանէր, եւ ի Սպանիա միտր, եւ անտի ապա չու առնէր, խաղայր զնայր մինչեւ ի Հերակղեաց արձանն: Իսկ Աղիանոս՝ Տիդկանոս ոմն անուն¹⁵, ասէ, Թաղաւոր կացեալ ասորեստանեաց. որ այն իսկ է՝ որ Թաղաթփն անուանեալ կոչի ի նուիրական պատմութեանն: Օւոյն ձեւ օրինակի եւ Պտղոմէոս

կարգ ըստ կարգէ, յեռեալ առդէ զԹագաւորաց իմն զՀաւմար, որ մեծամեծ իշխանութեանց տիրեցին, յորոց միջի երկայնաձիգ ինչ կարգ Թագաւորաց ասորեստանեաց՝ որ անձանօթ են Յունաց, նշմարի. զոր եւ զիւրաւ մարթի ընդ երբայեցւոց զբոցն միարանել :

Այլ որ ինչ միանգամ ի մատենան յիշատակաց Ասորեոցն կան, զոր եւ Վերոսոսն եւ Աբիւղենոս եւ Ալիկողայոս դամասկացին վիպադրեն, զամենայն ի պատմութիւնս ածել չկամիմ, զի մի տողեալ երկայնեցից զճառս : Յովսէպոս¹⁶ եւ Ալեսքիոս կեսարացի զցանկալի Հատակոտորսն այնց մատենադրաց, նա եւ բազմաց իսկ զայլոց՝ որոց մատենանք ի նոցա ժամանակս ողջ կային, պահեցին. որոց վիպութիւն Հաւատարիմ առնիցէ զայն՝ զոր գիրք վասն արեւելեացց նախնեացն պատմութեան, եւ առաւել վասն ասորեստանեացն, ասեն :

Իսկ վասն Մարացն միահեծան իշխանութեան, զոր բազումք՝ որ զարտաքնոց պատմութիւնն զբեցին, երկրորդ ի կարգի մեծաց իշխանութեանց Համարին ուրոյն ի Պարսիցն, յայտ իսկ է՝ զի աստուածեղէն գիրք զնոսս զերկոսեան ի միասին յեռուն. եւ տեսանես իսկ՝ զի ոչ լոկ զբոց սրբոց ճոխութիւն, այլ եւ արդեանցն իսկ կարգ զայն իմն պահանջեն :

Մարք յառաջ քան զԱլեքոս, Թէպէտ եւ ճոխք եւ անուանիք էին, սակայն նուազեալ իմն երեւէին ի մեծութենէ փառաւորութեան Թագաւորացն բարեղացւոց : Այլ քանզի Ալեքոս, որպէս յառաջագոյն յայտ արարեալ ցուցաք ըստ Վաւենոփոնի պատմութեանն, զգորութիւնս Մարաց եւ Պարսից ի մի վայր գումարեալ, զբարեղացւոց իշխանութիւն՝ զոր յետոյ օրինօք պայտաւեաց, ի ներքոյ ձեռին նուաճեալ Հնազանդէր, վասն որոց եւ Հարկ իմն լինէր, զի մեծ իշխանութիւնն՝ որում նայն Հիմն արկանէր, յերկուց աղղաց անտի զիւր՝ անունն առնուցու. մինչեւ Մարաց եւ Պարսից իշխանութեանն մի իսկ լինել, Թէպէտ եւ վասն փառացն Ալեքոսի Պարսից անունն անցանէր զանցանէր քան զՄարացն :

Մարթի դարձեալ եւ այլազգ ինչ զմասւ ածել եւ Թէ յառաջ քան զՎարեգոնի պատերազմն, Թագաւորք Մարաց բռնացեալ մինչեւ մօտ ուրեմն երթեալ Հասանէին

ի կողմանս հատուածից Յունաց՝ որ ի փոքր Ասիա բնակեալ էին, նմին իրի եւ անուանի ի մէջ Յունաց լինէին. վասն որոյ եւ Յոյնք զտէրութիւն մեծի ասիացւոց աշխարհին նոցա համարէին, քանզի բաց ի նոցանէ յամենայն թագաւորաց արեւելից զոք շնանալէին: Իսկ թագաւորք նինուէացւոց եւ Բաբելոնի, ու ժգնադոյնք քան զՄարաց թագաւորսն, բայց անծանօթք Յունաց աշխարհին, ի մնացորդս յունական պատմութեանցն ի խոր մտացումն անկան. եւ բնաւ ժամանակն յետ Սարգանսպաղղայ մինչեւ ցԱլեքոս, Մարաց միայն համարեցաւ:

Սասն որոյ չէ ինչ հարկ բազում աշխատութիւն յանձն առնուլ, առ ի զարտաքնոցն պատմութիւնս ընդ նուիրական գրոցն միաբանելոյ. քանզի վասն առաջին թագաւորութեանն ասորեստանեաց ի հարեւանցի անցանեն գիրք, ոչ զՆինոս՝ որ զնոյն իշխանութիւն կանգնեաց, եւ ոչ իսկ, բաց ի Փուզայ, զայլ ոք ի նորա պայապատացն յիշեն. զի եւ չէր ինչ հաւասարութիւն ի միջի ընդ նոցա եւ ընդ երբայեցւոց պատմութեանն: Իսկ զերկրորդ ասորեստանեացն իշխանութիւն, բազումք ի Յունաց թերեւս ամենեւին չգիտէին, եւ կամ զի չէին ստուգիւ ինչ հասու, ընդ առաջինսն շփոթեցին:

Այլ թերեւս զՅոյնս ոք ի մէջ բերիցէ՝ որ ի կարծեաց եւ պաճուճանօք զերից առաջնոց միահեծան իշխանութեանցն պատմութիւն կարգեալ, յետ հնոյն ասորեստանեացն իշխանութեան՝ կարգ ըստ կարգէ զՄարացն պայապատութիւն ի նոյն յետեալ յարեն, ոչինչ զնորոյն ձառեալ, զոր աստուածեղէն գիրք այնպէս մեծազօրս ասեն լինեալ. արդ՝ այնպիսեացն տացուք պատասխանի՝ եւ թէ Յոյնք զնոյն մասն պատմութեան բնաւ չգիտէին, որ եւ ոչ լոկ գրոց սրբոց, այլ եւ իւրեանց ազգին մատենադրաց ստուգաց եւ գրադիտաց հակառակս բարբառին:

Այլ որ համառօտիւք զամենայն պատճառս հտտանէ, այս իսկ է՝ զի նուիրական մատենագիրք, առաւել մօտաւորք էին ժամանակաւ եւ վայրօք թագաւորութեանց կողմանցն արեւելից. հանդերձ սոքիմբք դարձեալ եւ զպատմութիւն ժողովրդեան միջ՝ որոյ իրք ընդ մեծամեծ տէրութեանցն այնոցիկ խառն են, գրէին. արդ՝ եթէ զայդ առաւելութիւն եւ եթ ունէին, մարթ էր եւ այնպէս ըզ-

Յոյնս եւ զղատինացիս՝ որ զնոցա կնի գնացին, ըմբերանել:

Աթէ տակաւին պնդեալ զնոյն նշանաւոր կարգ երկց առաջնոց միահեծան իշխանութեանցն հաստատել կամիցին, եւ զի Մարաց միայն զերկրորդ կարգն՝ զոր ասն նոցա, պահիցեն, զթագաւորսն բարեղացւոց նոցա ընդ ձեռամբ նուաճեալ յօթարիցին. սակայն եւ ասիցեն եւս՝ եթէ բարեղացիքն յետ զհարեւր ամ ուրեմն ի հնազանդութեան կալոյ Մարաց թագաւորութեանն, յապրստամբութիւն մտաբերեցին, մարթիցի թերեւս սովին զերբայեցւոց պատմութիւնն ազատ ի բամբասանաց թողուլ. սակայն չէ մարթ նոցա ընդ ազնուազոյն պատմութեանց արտաքնոցն միաբանել, ընդ որոց զիւրք միաբանս խօսին, այնու՝ զի ամենայն ուրեք զՄարաց իշխանութիւն ընդ Պարսիցն ի միասին կարդեն:

Գոյ եւ այլ ինչ առ ի միա առնելոյ զմթարութիւն նախնեացն պատմութեանց: Աւ այս իսկ է՝ զի թագաւորք արեւելից բազում անուանս, կամ եթէ պարս եւ պատշաճ իցէ ասել, յաճախ յորջորջանս առնուին, որ յետ այնորիկ փոխանակ բուն անուան լինէր նոցա, զոր եւ իւրաքանչիւր ազգք թարգմանէին եւ կամ այլազունակս հնչէին, ըստ ազգի ազգի խօսից իւրաքանչիւր բարբառոց. արդ այնպիսի հին պատմութիւնք՝ որոց կարի սակաւ յիշատակք կան, յիրաւի այսու օրինակաւ զեղչեալ եւ զօղեալ իցեն: Ենուանցն շփոթութիւն եւ խառնակութիւն, առանց երկրայութեան բազում երկեւան ի կարգս իրաց եւ երեսաց մուծին, եւ վասն այնորիկ դժուարին է կարգել ի յունական պատմութեանն զթագաւորսն՝ որոց Երշաւիր անուն էր, զի զսոսա՝ որ արեւելեայց կարի ծանօթ էին, Յոյնք չճանաչէին:

Յիրաւի ո՞րք հաւատալ յանձն առնուցու՝ եթէ Պիաքսարէսդ նոյն անուն է՝ որ ինչ Եսուերոսն, յօգեալ յերկուց բարբառոց՝ ա, այսինքն է՝ տէր, եւ բաւուս՝ որ յայտնի իսկ ցուցանէ զԵքսուերոսն կամ Եսուերոս՝ որ է Երշաւիր: Արեք կամ չորք իշխանք զնոյն անուն կրեցին, թէպէտ եւ բազում եւ այլ անուանս ունէին: Աթէ որ չիցէ տեղեակ՝ եթէ՝ Աարուքողոնոսոր, Աարուկողրոսորոս եւ՝ Աարոկողասարոս նոյն անուանք են, կամ միոյ ուրուք

անուն, թերեւս չառնուցու յանձն հաւատալ. սակայն ճշմարիտ է: Սարակոսն՝ Աննէքերիբ է, Ողիսան՝ Ալաբիաս, Անգեկիսան՝ Մարթանիաս, Հովարթան՝ Անդուաբեւս կոչէր, իսկ Ատրդան՝ զոր անխտիր անուամբ Ասարադոն կամ Ատրադան եւս անուանեն, նոյն է՝ որ ի քութացւոցն Ասնափար յորջորջի¹⁷. եւ Սարդանապաղդոն ի Հունաց նորանշան իմն անուամբ՝ զորոյ սկիզբն չմարթի ումէք գիտել, Թոննոս Աոնկողերոս կոչի: Սարթէր տողել մեծաձիգ իմն կարգ արեւելեայց՝ որոց ի պատմութիւնս բազում անուանք այլակերպք եւ այլադունակք նշմարին, այլ շատ է՝ եթէ վարկպարաղի ոք զայդ սովորութիւն գիտիցէ: Այս չէր ինչ անձանօթ եւ հոմայեցւոց՝ որոց անուանք յորջորջանաց եւ որդեղրութեան, զրուն անուանան յաճախեցին: Օր օրինակ՝ Ադոսատոն եւ Ափրիկանոս, անուն յորջորջանաց են՝ որ յետոյ սեփական անուանք եղեն Ապսեր Ախարեայ եւ Ակիպիոնեանց. նոյնգունակ եւ Ներոն եւ նորին նմանիք, Ապար անուանեցան: Չեն ինչ երկրայութեան իրքս. եւ աւելի երկայնագոյն վասն այսպիսի իրաց յայանեաց վիճել, քեզ ոչինչ կարի յօդուս լինիցի:

Այսու հետեւ ի խառնակութիւնս ժամանակական կանոնաց աստանդել զքո միտոյ չկամիմ. զի անտի չեն ինչ քեզ կարեւոր պէտք. իսկ որ ասացանս կարի կարեւորք էին, մինչեւ չէր իսկ մարթ յայսմ վայրի առանց յատկադոյնս եւ լուսաւորագոյնս մեկնելոյ թողուլ. արդ՝ որչափ ինչ բաւական մերում զխառնութեան էր՝ ձառեալ, աւն առ այժմ՝ սկիզբն արասցուք վերստին ըզկարգէ մերոց ժամանակացս բուռն հարկանել:

¹⁾ Դ. ԹԵՂ. ԺԼ. 24: Ը. ԼՊՐ. Դ. 2: ²⁾ Դ. ԹԵՂ. ԺԼ. 27. 28. այլովքն հանդերձ: ³⁾ ԱՐՄԻ. ԳԻՐԲ Ը. ԳԼ. 27: ⁴⁾ ՆՊՆ. ԳԻՐԲ Ը. ԳԼ. 95: ⁵⁾ ԱՐՄԻ. ԸԼ. 11. 12. ԻԹ. 10: ⁶⁾ ԱՐՄԻ. առ ԼԵՍԵ. ԳԻՐԲ Թ. Պատր. առ. ԳԼ. 41: ⁷⁾ ԱՐՄԻ. ի Դան: ⁸⁾ ՊՂԵՏ. ի Տիմ: ⁹⁾ ԱՐՄԻ. վասն Բաղաք. Լ. 10: ¹⁰⁾ ԱՐՄԻ. ԳԻՐԲ Ը. ԳԼ. 26. 27: ¹¹⁾ ՎՍՍՆՍԹ. Կիւր. խրա. Լ. 9. այլովքն հանդերձ: ¹²⁾ ԱՐՄԻ. ԳԻՐԲ Ը. ԳԼ. 28. 47: ¹³⁾ ԱՆԳ. ԳԻՐԲ Ը. ԳԼ. 91: ¹⁴⁾ ԱՐՄԻ. ԳԻՐԲ ԺԼ: ¹⁵⁾ ԱՐՄԻ. ԳԻՐԲ ԺԼ. ՎԵՐՉ. եւ ԳԻՐԲ Ժ. ԳԼ. 11. 21: ¹⁶⁾ ՀՈՍՍ. Հնա. ԳԻՐԲ Թ. ԳԼ. վերջ. եւ ԳԻՐԲ Ժ. ԳԼ. 11. ԳԻՐԲ Ը. Ինդդ. Ագիոն: ԼԵՍՍԵ. Պատր. առ. Թ. 17: Ը. ԱՐՄ. Դ. 2. 10:

Ժ Ե Մ Ե Ն Ե Կ Ը

ԿԻՐՐՈՍ ԿԵՄ ԴԵՌՆԵՆ, ՀՐԷԻՑ Ի ԿՆՐՈՒԹԵՆԸ

Վ Ե Յ Ե Ր Ո Ր Դ Դ Ե Ր Ե Շ Խ Ե Ր Հ Ի

Երկերիւր ութուտասն ամաւ յետոյ քան զշինուած Հռոմ քաղաքի^Ե, կանխազոյն հինգհարեւր երեսուն եւ վեց ամօք քան զՔրիստոս, յետ եւթանասուն ամաց գերութեանն բարեղացւոց, յամի՛ յորում զՊարսից պետութիւնն հաստատեաց Աիւրոս թագաւոր՝ զոր Աստուած ընտրեաց լինել փրկիչ ժողովրդեանն իւրոյ եւ նորոգիչ տաճարին, նոյն՝ ձեռն արկանէր զգործն ի գլուխ տարեալ վճարել: Աղվաղակի իբրեւ հրաման հրովարտակին ելանէր, Գորարաբէղ հանդերձ քահանայապետաւն Յեսուաւ Յովսէփեկեանց, ածէր զգերութիւնն. եւ եկեալ սեղան կանգնէին^Ը, եւ երկրորդ տաճարին հիմն արկանէին: Իսկ շամրտացիքն նախանձորդք փառաւորութեան նոցա, կամէին գործակից շինուածոյն լինել. եւ պատճառեալ թէ եւ մէք երկիր պաղանեմք Աստուծոյ Խորայէղի, թէպէտ եւ զԱստուծոյ պաշտօնն ընդ պաշտօն դիցն իւրեանց սնտուոց խառնէին, մատուցեալ աղաչէին զԳորարաբէղ՝ զի թողցէ նոցա հասարակ ընդ նմա զտաճարն Աստուծոյ շինել: Եւ յորդիքն Յուդայ՝ որ խորշէին գարշէին ի խառնակ պաշտամանէ նոցա, չառին յանձն: Բարկացեալ շամրտացւոց, նենգութեամբ բռնութեամբ խափանել ջանային:

Օայնու ժամանակաւ Աերուխոս Տուղոս, յետ զՀռոմ քաղաք մեծացուցանելոյ, զմտաւ ածէր յընկերահաշտեաց առաջնորդութեան զքաղաքն կացուցանել: Եւ նա յայնմ մտաց խորհրդի սատակէր^Ը, նենգ գործեալ նմա յիւրմէ դատերէն, եւ հրամանաւ Տարկինեայ Սուպերբեայ փեսային իւրոյ: Տարկինոսս այս բռնացեալ կալաւ զաշխարհն, եւ երկայնաձիգ ժամանակաւ բազում չարարարոյս ցուցանէր:

Ի ժամանակին յայնմիկ տէրութիւնն Պարսից աճէր եւ մեծանայր, եւ ոչ միայն գաւառք մեծամեծք մեծի

ԵՄՔ ՀՈՌՊՄԷՑ
Ե218. Ե219. Ե221.

ՄԵՌՄՔ. ՔԵՆ ԲՈՐՄՈՍՈՍ
Ե536. Ե535. Ե533.

աշխարհին ասիացւոց, այլ եւ ամենայն ընդարձակութիւն երկրին ներքին կողմանցն Ասիայ հնազանդեաց նոցա : Ասորիք եւ արարացիք մտանէին ընդ հարկաւ նոցա, եւ եզիպտացիքն՝ որ նախանձախնդիր էին օրինացն իւրեանց, զնոցա օրէնս ընկալան. Պամբիւսէս որդի Աիւրոսի հնազանդեաց զնոսա : Անիտս այս եւ անագորոյն ոչինչ յերկարեալ բաւէր քան զՕմերդիս զիւր եղբայրն՝ զոր վասն անցայտ ինչ երազ տեսանելոյ, կասկածեալ դաղտ սպանանէր : Օմերդիս մոգ ժամանակ ինչ թագաւորէր², որպէս թէ Օմերդիս եղբայր Պամբիւսեայ իցէ. այլ վաղվադակի յայտ եկն խարէութիւնն : Աւթն դիւսուոր տանուտեարք խար գործեալ նմա սպանանէին, եւ մի ոմն ի նոցանէ թագ կապէր : Այս ինքն էր Պարեհ ուստր Վչասպեայ³ որ ի դրոշմել իւրում զիւր անուոնն, ազնուագոյն եւ գեղեցկագոյն քան զամենայն մարդիկ զանձն անուանէր : Ի բազում ինչ իրաց յայտ է՝ եթէ սա է Արշաւիր արքայ՝ որ յԱսթերայ գիրսն կայ, թէպէտ եւ բազումք չմիարանեն³ : Ի սկզբան թագաւորութեան նորա տաճարին շինուած կատարեցաւ, յետ բազում անգամ գործոյն ի շամրտացւոց անտի դատարկանալոյ : Անհարին թշնամութիւն ի մեջ ազգացն երկոցունց անկանէր. եւ հակառակք միմեանց էին յոյժ Արուսագէմ եւ Շամրին :

Ի Պարեհի ժամանակն սկիզբն լինէր Հոռոմոց եւ աթենացւոց ազատութեան, ՚ եւ Յունաց փառաւորութեան : Արմոդիոս եւ Արիստոգիտոն աթենացիք, զաշխարհն իւրեանց յԱպարքեայ ի Պիսիտրատեայ ուստերէ զերծուցանէին, եւ յանձնապահացն նորա մեռանէին : Իպիաս եղբայր Իպարքեայ զուր ընդ վայր ջանացեալ կալ անդէն յիշխանութեանն, մերժէր, եւ Պիսիտրատեանցն բռնութիւնն ՚համօրէն շիջանէր : Յազատութիւն հասեալ աթենացւոցն, պատկեր կանգնեցին որոց զերծուցինն զնոսա, եւ ընկերհաշտութիւն կալան : Իպիաս փախստական առ Պարեհ անկանէր, եւ դռանէր զնա պատրաստեալ երթալ տիրել Յունաց աշխարհին, եւ ի նա միայն յուսայր :

ԱՄՔ ՀՈՌՈՎՄԵՑ

Ե229. Բ232. Դ233. Դ241.
Ե244.

ՅԵՌԱՊ. ԲԵՆ ՔՐԻՍՏՈՍ

Ե525. Բ522. Դ521. Դ513.
Ե510.

Ի ժամանակի՛ զի մերժէր նա, եւ հռոմայեցիք յիւրեանց բռնակալացն զերծանէին: Տարկինոս Սուպերբոս՝ որ թարգմանեալ կոչի ամբարտաւան, բռնութեամբ իւրովք ստելի եւ դարշելի զթագաւորութիւնն եցոյց՝. եւ նորին որդի Սեքստոս քակեաց զթագաւորութիւնն վասն լիտի մտացն: Ղուկրեոսիա խարդաւանեալ, անձին աւարար. ի նորա յարնէ, եւ ի բանից անտի Բրուտայ քաջալերեցան հռոմայեցիք: Թագաւորք վտարեցան, եւ հիպատք կացին ըստ խորհրդոցն Սերուիոսի Տուղոսի, այլ վաղվաղակի ի ժողովրդեան նախանձուէ տկարացան: Ընդէն յառաջնում հիպատին, վասն Պ. Վաղերիոսի բզեշխի՛ որ բաղում նշան յաղթութեան կանգնեալ էր, կասկած եղեւ քաղաքացեացն. եւ զի հաճեսցին զմիտս նոցա, օրէնք եղան՝ թէ իշխանութիւն լինիցի, ի ծերակուտէն եւ ի հիպատիցն ի ժողովուրդն բողոքել, յորժամ դատաստան ինչ լինիցի զքաղաքացի զոք պատժելոյ: Տարկինեանքն՝ որ հալածեցան, բաղում օգնականս դտանէին. թագաւորք արուարձական կողմանցն զնոցա վտարելն թշնամանս ամենեցուն թագաւորաց համարէին. եւ Պորսենա արքայ կղուսացւոց՝ որ բնակէին Ղատրուրիա, ՚ի մարտ պատերազմի ընդ հռոմայեցւոց զբզուէր: Իբրեւ ի նեղ անկանէր քաղաքն եւ հուպ յառնուլ լինէր, քաջութեամբ Որատիոս Աղիզէս զերծուցանէր: Իրա զարմանալիս հռոմայեցիք վասն իւրեանց ազատութեան առնէին. Ակեւողա պատանեակ իւրովի զիւր ձեռն խարշատէր, զի վրիպեաց հարկանել զՊորսենա. Աղիզիա օրիորդ զՊորսենա համարձակութեամբն զարմացուցանէր: Թուղոյր Պորսենա զհռովմ ի խաղաղութեան, եւ տարկինեանքն այնու հետեւ անոք անօգնական մնային:

Իսկ Իպիաս՝ որում Վարեհ օգնական էր, մեծամեծ իրաց ակն ունէր: Ըմենայն աշխարհն Պարսից զզրգէր վասն նորա, եւ պատերազմ սաստիկ ի վերայ աթենացւոց պատրաստէր:

Մինչ դեռ Վարեհ ի մարտ պատերազմի ի վերայ աթենացւոց կազմէր, հռոմայեցիք՝ որ այնպէս զօտարաց զգէմ կալան, անձամբ զանձինս մօտ ի կործանումն հա-

սուցանելին . պատրիկքն եւ խառնազանճ՝ ռամիկն խանտացեալ ընդ միմեանս անկանէին : Իշխանութիւն Հիւպատոսութեանն , թէպէտ եւ օրինօքն Պ . Սաղերիոսի յառաջագոյն նուազեալ էր , այլ զեռ եւս առաւել իմն թուէր ժողովրդեանն՝ որ յոյժ պահանջիչ էր իւրոյ ազատութեանն . եւ մեկնեցաւ զնաց ժողովուրդն յԱւենտինոն լեառն : Չլինէր ինչ հնար անտի սպառնապետք իջուցանել զնա , բայց միայն Մենենիոս Աբրիպպա քաղցրախառն բանիւք մատուցեալ ածէր ի հաւան . այլ հարկ լինէր այնու հետեւ եւ կարգս իմն քաղցունս յօրինել եւ տալ ժողովրդեանն ռամկապետս , զի ի հիպատիցն պաշտպանեսցեն նոցա : Օրէնքս այս՝ որ զնոր իշխանութիւնն եղին , օրէնք նուիրականք կոչէին . եւ աստ սկիզբն լինէր ռամկապետացն :

Խաղաց զնաց Վարեհ ի վերայ Յունաց աշխարհին : Վորին փեսայ Մարգոնիոս , յետ ընդ ասխացոց աշխարհն անցանելոյ , յաճախութեամբ զօրաց իւրոց՝ Յունաց յաղթել կարծէր . այլ Միզտիադէս տասն հազար աթենացոց զօրօք՝ զտուար դունդն ի Մարաթոն դաշտի վարատէր :

Նոովմայեցիք հասանէին հարկանէին շուրջանակի զթշնամիս իւրեանց , եւ թուէր իմն՝ թէ չեք կասկած ուստեք բայց յանձանց իւրեանց : Վորիողանոս՝ որ պատրիկն էր եւ քաջ քան զամենայն զօրավարս քաղաքին , յետ բաղում գործոց քաջութեան , ի լինել խոռովութեան իւրիք ի ժողովրդեանն , վտարէր , եւ խորհէր այնու հետեւ զիւր հայրենի դաւառն աւերել . ժողովէր ածէր զվողակացիան , ի նեղ մեծ զքաղաքն հասուցանէր , եւ չլինէր որ ձեռնհաս ցածուցանել բայց միայն իւր մայրն :

Յոյնք ի հանգստեանն՝ որ յետ Մարաթոնի կռուին եղեւ , չվայելէին ինչ երկայն ժամանակաւ : Ասան զվրէժ թշնամանացն Վարսից եւ Վարեհի ինդրելոյ , Քսերքսէս նորին որդի եւ պայազատ եւ թոռն Աիւրոսի , յԱտոսսեայ մօրէն , խումբ գործեալ տայր պատերազմ ընդ Յոյնս՝ հարեւր տասն բիւրու մարտիկ զօրաց , իսկ այլք հարեւր եւ եւթանասուն բեւր ասնն , թող զնաւական զօրն հա-

զար երկերիւր նաւաց : Պ եւոնիդաս արքայ սպարաացւոց՝ որ երեքհարեւր այր եւ եթ ունէր, հար սատակեաց ի նոցանէ քսան հազար յանցս Թերսոնպիւղեաց, եւ իւրովքն հանդերձ անկանէր : Թեմիստոկղի աթենացւոյ խորհրդով նաւամարտիկ տորմիզ նաւացն Վսերքսի ի նմին ամի ի Սաղամին խորտակէր, եւ Վսերքսէս ընդ Եղղեսպոնտոս անցանէր տազնապաւ . եւ յետ ամի միոջ զօր նորա՝ որ ի ցամաքի էր, եւ առաջնորդէր Մարդոնիոս, առ Պղատեաւ խորտակէր ի Պաւսանիայ արքայէ զակեղմոնացւոց, եւ յԱրխատիդեայ աթենացւոյ՝ որ արգարն կոչէր : Բնդ այգն ընդ առաւօտն խառնէր պատերազմն . եւ յերեկոյի աւուրն, Յոյնքն յոնիացիք՝ որոց խլուալ էր զուծն Պարսից, երեսուն հազար այր ի նոցանէ ի Միկաղեայ կռուին սատակէին, եւ առաջնորդէր նոցա Վեռափքիդէս : Սա առ իւրոյ զօրաց քաջալերութիւն, ասէր ցնոսա՝ Թէ Մարդոնիոս ի Յունաց աշխարհին ի պարտութիւն մատնեցաւ : Եւ բանն ճշմարիտ դատանէր, կամ զե վաղվաղակի համբաւ ինչ ուստեք եհասս, կամ Թէ այնպէս իսկ դէպք եւ պատահարք տային . եւ ամենայն Յոյնք փոքու Եսիայ յապատութիւն հասանէին : Իրք նոցա ամենայն ուրեք յառաջագէմ յաջողէին, եւ սակաւ ինչ յառաջադոյն կարքեղմնացիքն՝ որ ի ժամանակին զօրացեալ էին, հարան ի Միկիղեա՝ որում կամէին տիրել ըստ Պարսից իրատուն : Թէպէտ եւ ձախողեցան իրք կարքեղմնացւոցն, այլ ջանային հնարէին հանապաղ առնուլ զկողին՝ ուստի զիւրին էր ծովակալել, որպէս եւ ցանկայինն : Յայնմ ժամանակի Յոյնք ծովակալէին, այլ զարեւելից միայն եւ զՊարսից փոյթ էր նոցա : Պաւսանիսա՝ զԱլուպրոս կոչի ի նոցանէ Թափեալ⁷, խորհէր այնու հետեւ մատն իւրում դաւառին լինել : Բնդունայն եղեն խորհուրդք նորա, Թէպէտ եւ զամենայն ինչ Վսերքսէս խոստանայր նմա . եւ որ դահիճ եւ մատնիչ դաւառին լինէր, ի նմանէ՝ զոր առաւելն սիրէր, մատնէր . ⁷ եւ անարժան սէրն զնա ի կենաց արկանէր : Ի նմին ամի Վսերքսէս սպանանէր յԱրտաւանայ՝ որ անձնապահապետ էր նորա, կամ զե Թադաւորութեան ակն եղեալ

յիւր կամէր վտարել նենդին, կամ զի երկեաւ ինչ ի ցամանէ թագաւորին, զի վանօրէն հրամանսն չէր վաղվազակի արդեամբք ի պուխ հանեալ⁴:

Արտաշէս երկայնարազուկ նորին որդի ըստ նմանէ թագաւորէր, եւ յեա սակաւ ինչ ժամանակի գիր ի Թեմիստոկղեայ առնոյր⁵. որ յիւրոց քաղաքացեաց տարազիր եղեալ խոստանայր հարկանել զպատերազմունս նորս հակառակ Յունաց: Սեծարեաց զնա թագաւորն, որպէս արժան էր զզօրավար մի զայնպիսի զանուանի մեծարել. եւ կարգեաց նմա ուճիկ յարքունուստ, թէպէտ եւ նախարարքն նախանձէին ընդ նա:

Այս թագաւոր մեծ թեկն ածէր⁶ հրէական ազգին⁵. եւ ի քսաներորդում ամի թագաւորելոյ նորս, որ սոմ նշանաւոր է վասն իրաց ինչ յետոյ գիպելոց, ՚հրաման տայր Նէեմեայ զԱշուսաղէմ հանդերձ պարսպօքն նորոզել⁶: Հրովարտակս այս Արտաշէսի, այնու վատ է ի հրովարտակէն Ալւրոսի՝ զի սորայս վասն տաճարին էր, եւ նորայն վասն քաղաքին:

Յորժամ գրեցաւ հրովարտակս՝ զոր Վանիէզի յառաջագոյն նկատեալ էր⁷ եւ ցուցեալ ի մարգարէութեան իւրում, սկիզբն լինէր չորեքարեւր իննսուն ամաց եւ թներորդացն: Աւ այս մեր համարս բազում իրօք ստոյգ է: Թեմիստոկղե մերժելն ի քրոնիկոն ժամանակական կանոնսն Աւսերի, ի վերջնում ամի եւ թանասներորդի վեցերորդի ողոմնիազին կայ, որ կշօի երկերիւրորդի ութսուներորդի ամի շինուածոյ Հոտմ քաղաքի: Իսկ այլք ի ժամանակազրացն սակաւ ինչ խոնարհագոյն դնեն. բայց փոքր ինչ է խտիրն, եւ ժամանակին իրք զթիւ ամացն Աւսերի հաւատարիմ առնեն: Թուկիդիդէս գրէ զիրան⁸, որ զամենայն ինչ ճշդիւ դատկաւ վկայադրէ. եւ սոյն այր, գրեթէ ժամանակակից Թեմիստոկղե լեալ եւ նորին քաղաքի քաղաքակից, ի սկզբան թագաւորութեան Արտաշէսի զնմանէ գիր գրեալ պատմէ: Առանդիոս Նեպոս⁹ հին եւ իմաստուն եւ քաջ մատենագիրն ասէ, թէ չէ արժան նթէ երկմիտ ոք ի թուոյ աստի ամաց լինիցի, յորժամ Թուկիդիդէս վկայիցէ. եւ այնու իսկ աւելադոյն հաստա-

տուն է բանն, զի այլ ոմն՝ եւս հնադոյն քան զԹուղիդիդէս, ընդ նմա միարանէ: Սա ինքն Վարոն զամիսակացի՝ զոր Պղուտարքոս ի մէջ բերէ¹⁰ եւ զնովիմբ ածեալ յարէ՝ թէ եւ մատենաք յիշատակացն Պարսից միարան համախօս երկոցունց մատենագրացն աւանդեն, բայց ինքն չերթայ զհետ նոցա, այլ զայնր պատճառս շատէ ինչ. եւ պատմադիրքն՝ որ ութ կամ ինն ամօք յետոյ, թաղաւորութեանն Արտաշեսի սկիզբն լեալ պատմեն, ոչ ի նմին ժամանակին, եւ ոչ այնպէս արժանի հաւատարմութեան: Արդ՝ առանց երկմտութեան թուի՝ թէ զսկիզբն նորա ի կատարած կոյս եւթանասներորդի վեցերորդի ողումպիադին ի դէպ է զնել, մօտ ուրեմն յերկերիւրորդ ութաներորդ ամն շինուածոյ Հռոմ քաղաքի, ուստի քսաներորդ ամն Արտաշեսի ի կատարած կոյս ութաներորդի առաջնորդի ողումպիադին կռի, մօտ յերեքհարիւրորդ ամն շինուածոյ Հռոմ քաղաքի: Հանդերձ սոքիմբք՝ եւ որ խոնարհագոյն զսկիզբն թաղաւորութեան Արտաշեսի զնեն, վասն զմատենագիրսն միարանելոյ, հարկ ի վերայ կայ այնպիսեացն յանձն առնուլ՝ թէ զոնէ զնա հօրն բարձակից թաղաւորութեան արարեալ էր, յորժամ Թեմիստոկլէս դիր գրէր. եւ այնպէս ամենայն ուստեք յայտ է՝ թէ ստոյգ է մեր թիւս: Աւ յորժամ զայս հիմն զնկցեմք, դիւրին է այնու հետեւ զայլ եւս ժամանակացն թիւ գումարել. եւ որ առաջիս կայցէ, զնոյն յայտնադոյն առնիցէ:

Իբրեւ գրեցաւ հրովարտակն Արտաշեսի, փութային Հրեայք գրադաքն իւրեանց շինել, եւ կանգնել զպարիսպս նորա, որպէս յառաջագոյն ասացեալ էր Վանիդ զե¹¹: ‘Սէեմիա՛ մեծաւ իմաստութեամբ եւ պնդութեամբ առաջնորդէր գործոյն, մինչ զեռ շամրտացիք եւ արաբացիք եւ ամոնացիք զիմադարձ լինէին: Աստակէր եւ ճգնէր ժողովուրդն, եւ Աղիասիր քահանայ մեծ իւրով անձամբ քաջալերէր զնոսա:

Ի ժամանակին յայնմիկ իշխանքն՝ որ նոր ի վերայ ալզին Հռոմոնց կացին, զբաժինս եւ զերկպառակութիւն քաղաքին բազմացուցանէին. եւ ի Հռովմ, քանզի ընդ թաղաւորօքն կարգեալ եւ յօրինեալ էր, ոչ գոյին օրէնք՝ որ առ բարեօք հաստատութիւն ընկերահաշարից վերակացութեան կարեւորք իցեն: Արդ՝ վասն մեծի համբաւոյն

Յունաց՝ որ առաջնորդութեամբն իւրեանց մանաւանդ անուանիք եւ երեւելիք էին քան յաղթութեամբն, յօժարեցին հռովմայեցիք ըստ նոցին նմանութեան օրէնս անձանց կարգել: Եւ ամեն այնորիկ եւ հրեշտակս առաքէին խնդրել զօրէնս քաղաքացն Յունաց, եւ մանաւանդ զաթենացւոցն՝ որոց օրէնք նոցա ընկերհաշտութեանն պատշաճադոյնք էին: Եւ ըստ Յունաց օրինակի յետ տարեւոր ժամանակի զատեան կացին տասն իշխանք՝ որ Տասն արքն անուանեցան, զի զօրէնս երկոտասան տախտակացն գրեցին, յորս հռովմայեցւոց իրաւունք հաստատեալ կան: Իսկ ժողովրդեան զարմացեալ ընդ արդարութիւն օրինացն՝ զոր եդին, զմեծ իշխանութիւնն թողին նոցա առնուլ, եւ նոքա բռնութեամբ ի կիր արկեալ վարէին: Եւ Յայնժ ժամանակի անհնարին խռովութիւնք յուզէին, վասն անառակութեամբ գնալոյ Ապեայ Աղաւղեայ՝ որ մի ոմն ի Տասն արանցն էր, եւ վասն Վիրգիւնեայ սպանութեանն, զոր իւր հայրն լաւ համարեցաւ իւրովք իսկ ձեռօք սպանանել, քան Ապեայ ի խարդաւանութիւն մատնել: Սորա մահն, որպէս եւ Ղուկրեառայն, զարթոյց եւ սթափեաց զազն Հռոմոց, եւ վաղվազակի Տասն արքն փախտեայ հալածական դնային:

Մինչ զեռ հռովմայեցւոց օրէնք առ Տասն արամբն դնէին, Ազրա պատմիչ օրինացն եւ Աէեմիաս առաջնորդ ժողովրդեանն Աստուծոյ՝ որ զեռ եւս դարձեալ էին ի հրէաստան, զոր ինչ եղծեալ էր նորոգէին, եւ զգուշացուցանէին պահել զօրէնսն Մովսիսի՝ զորս նախ ինքեանք պահէին: Եւ մի ինչ ի գլխաւորացն՝ զոր ուղղեցին¹² այն էր՝ զի հրաման տային ամենայն ժողովրդեանն, եւ առաւել քահանայիցն, թողուլ զկանայս օտարոսիս՝ զոր ոչ էր օրէն առնել: Իսկ Ազրա զգիրս սուրբս կարգէր եւ յօրինէր եւ ճշդիւ անցանէր ընդ նոսա. ի մի վայր կուտէր զՏին իմն յիշատակս ժողովրդեան Աստուծոյ, եւ զերկուս դպրութիւնս Մնացորդացն կամ քրոնիկոն ժամանակակիւն մատենից կարգէր. եւ առնթեր զիւրոյ ժամանակին պատմութիւն յաւելոյր, զոր Աէեմիաս ի գլուխ հանեալ կատարեաց: Ի գիրս նոցա կատարի երկայնաձիգ

պատմութիւնն՝ զոր Մովսիսի սկսեալ էր, եւ այլք՝ որ յետոյն եկին, առանց զկարգն ընդ մէջ Հաստաներոյ, մինչեւ ցնորդութիւն Արուսաղէմի ածին Հասուցին: Իսկ այլ եւս պատմութիւնք՝ որ ի զիրս կան, ոչ նովին կարգաւ գրեցան:

Մինչ զեռ Ազրա եւ Նէեմի զայնպիսի մեծ պատմութիւն ի գլուխ հանեալ կատարէին, Արողոտոս՝ որ յարաւքնոցն մատենագրաց հայր պատմութեան անուանի, սկիզբն առնէր զիրս զնեւոյ: Աւ այնպէս հուսկ յեափնքն ի նոցանէ՝ որ զզրոց սրբոց պատմութիւն հարին ի մատենի, ընդ առաջին մատենագրի յունական պատմութեանն պատահան. եւ յորժամ Յունաց պատմութեան սկիզբն լինէր, ի շրէից վեպասանութեանն, միայն յԱբրահամ, հետէ, հնդեասասն ազգք անցեալ էին: Արողոտոս զշրէից չունէր ինչ փոյթ ի մաի ճառել ի պատմութեանն՝ զոր մեզ եթող. եւ չէր ինչ պիտոյ Յունաց տեղեկանալ ազգացն, բայց միայն ընդ որոց պատերազմ ինչ էր նոցա կամ վաճառք, կամ որ անուանիքն էին եւ փառաւորք: Արք՝ հրէասասն յայնժամ որ զեռ եւս յեաւերածին շինէր, չէր ինչ երևելի եւ հոյակապ:

Յայնմ թշուառութեան ժամանակի եւ երբայեցւոց լեզուն կասեաց, եւ ոչ եւս հրեերէն խօսէին: Ի ժամանակի դերութեան, եւ յետոյ վասն հաղորդութեան՝ զոր հարկ լինէր ընդ քաղղեացւոցն ունել, շրեայքն զնոցա բարբառն ուսան, որ շրէիցն կարի մօտ էր, եւ գրեթէ զնոյն ճարտարութիւն զպրութեան ունէր: Վասն սոցին իրաց ստիպեալ՝ յօժարեցան եւ զառաջին կերպարանս իւրեանց նշանագրացն փոփոխել, եւ այնու հետեւ սկիզբըն արարին զքաղղեացւոց նշանագիրսն ի կիր արկանել, որով եւ յաճախ վարէին եւ զիւրին իսկ ի զրել էր: Այս փոփոխումն զիւրաւ կատարէր ի մէջ երկոցունց մտաւոր բարբառոց՝ որոց նշանագրացն մի եւ նոյն զօրութիւն էր, եւ կերպարանօք եւ եթ այլակերպք էին: Յայնմ ժամանակէ հետէ գիրք սուրբք ի մէջ շրէից քաղղեացւոց զբով եւ եթ գրեցան. սակայն սամարացիք հանապաղ զնախնեացն պայման գրելոյ հաստատուն ունէին: Յետ նոցա՝ նոցին պայազատք նովին օրինօք մինչեւ այսր ուրեմն ի մեր աւուրս վարեցան, եւ սովին օրինա-

կաւ զՏինդ գարութիւնն՝ որ շամրտացւոցն անուանեալ կոչե, պահեցին շրէից նախնեացն նշանագրովք, որպիսի եւ ի քանդակաց գրոշմն եւ ի շիրխն Տին ժամանակաց գրոշմեալ գտանեմք :

Շրեայքն ընդ իշխանութեամբն Արտաշէսի ի խոր խաղաղութեան վայելէին : Իշխանս այս, ի Աիմոնէ որդւոյ Միգտիադեայ ակթենացւոց զօրավարէ ի նեղ մտեալ, զամօթայից հաշտութիւնն ի միջն հաստատէր. եւ զիչունէր ակն այնու հեաեւ պատերազմաւ Յունաց յաղթեւ, կայր մնայր շահս ի նոցա երկպառակութենէն շահել : Եւ յիրաւի մեծամեծ հերձուածք ի մէջ ակթենացւոց եւ զակեղմոնացւոց լինէին : Եւս երկու ժողովուրդք, միմեանց նախանձաւորք, զամենայն աշխարհն Յունաց ի մէջ իւրեանց բաժանեցան : Պերիկղէս ակթենացի, պատերազմին՝ որ ի Պեղոպոնեսոս գումարեցաւ, սկիզբն առնէր. յորում՝ ժամանակի Թերամենէս, Թրասիւբուղոս եւ Աղկիրիադէս յակթենացւոց քաղաքէ, պայծառանային : Թրասիգաս եւ Միւնգարէս, ի զակեղմոնացւոց քաղաքէն, ճակատ արււեալ վասն իւրեանց աշխարհին, մեռանէին : Եոյն պատերազմ տեւեաց բաւեաց ամս քսան եւ եւթն, եւ զրաւ լինէր ի զակեղմոնացիս երանելով յաղթութեանն, զօրաւիզն օգնականութեան նոցա լինալ Պարեհի շարձորդւոյ, ուստեր Արտաշիսի՝ զոր պայապատեաց յիշխանութեանն : Ղիւսանդրոս զօրավար նաւամարտիկ նաւացն զակեղմոնացւոց, զակթենացւոց քաղաքն առնոյր՝ եւ զառաջնորդութիւն քաղաքին փոփոխէր : Սակայն Պարսիկք վաղվաղակի ի միտ առնուին՝ եթէ զակեղմոնացւոցն կարի ետուն ճոխանալ : Սորա ձեռն տուեալ պատսպարելին զԱիւրոս կրտսեր, մինչ գեռ ընդդէմ Արտաշիսի երիցուեղջօրն յառնէր՝, որ զՊարեհ զիւր հայրն փոխանակեաց. սորա անուն յորջորջանաց Մեմոն կոչեցաւ, որ թարգմանի Ուշեղ, վասն ազնուական ուշի մտայն : Աիւրոս կրտսեր ի բանտէ եւ ի մահուանէ ասպրեալ, օգնականութեամբ Պարսատեայ իւրոյ մօրն, վրէժխնդրութեան ուշ առնէր. եւ զշահապսն ի բանի արարեալ իւրով քաղցրարան պաճուճանօքն, զփոքր ասիացւոց աշխարհն

Հատեալ անցանէր, ի վերայ երթեալ թագաւորին իւրոյ եղբօրն, ի մարտ պատերազմի ի մէջ բուն իսկ նորա թագաւորութեանն, զնա իւրովք իսկ ձեռօք հարեալ վիրաւորէր. եւ մինչ զեռ իւր զյաղթութիւնն համարէր, վասն ժպրհութեանն սատակէր: Բեր մի ի Յունաց՝ որ նմա սպաս հարկանէին, նորանշան զարմանալի նահատակութիւնս զործեցին ի զառնալ իւրեանց ի պատերազմէն, որոց ի կատարածին զօրավարէր Վսենոփոն, մեծ փիղիսոփոսն եւ զարմանալի զօրավար, որ եւ զնոյն պատմութիւն ի մատենի տուեալ պատմէ: Ղակեմոնացիք հանապաղ ընդ Պարսից տէրութեանն գոռային^Ե. զոր Ադեսիղաւոս, սպարտիացւոց քաղաքին թագաւոր, տայր սարսել ի փոքր ասիացւոց աշխարհին. սակայն հերձուածք՝ որ ի Յունաց աշխարհին եղեն, զնա անդրէն յիւր աշխարհն կոչեցին:

Օայնու ժամանակաւ վէիացւոց քաղաքն՝ որ փառաւոր եւ հոյակապ իրրեւ զձում էր, յետ զասան ամ պաշարելոյ, եւ բազում եւ ազգի ազգի յաջողութեանց ի զլուխ ելանելոյ, ի զօրավարութեան Աամիղղեայ ի հռոմայեցւոց առաւ: Նորին արնուականութիւն նմա այլում իմիք յաղթութեան առիթ լինէր. զի փաղխացիք՝ զորս նայն ի պաշարումն եւ յարգել արկանէր, անձնատուր լինէին^Զ, զարմացեալ ընդ նորա սրտին լաւութիւն, զի զնոցա մանկտին՝ որ յիւրեանց վարդապետէն մատնեցան, անդրէն առ նոսա ի քաղաքն առաքէր: Քանզի հռոմայեցիք դաւաճանութեամբ յաղթել ճիւղմէին, եւ ոչ իսկ զվատի ուրուք նենդութիւն, որ զհնազանդութեամբ մանկանց մատաղաց անմեղաց զեղծանէր, անձանց շահ համարել: Յետ սակաւ ժամանակի դաղատացիք սենոնեանք, յիտաղացւոց աշխարհն արշաւէին^Է, եւ զկղուսացւոց քաղաքն շուրջ նստեալ պաշարէին: Հռոմայեցիք զերեւելի մարտն յԱղղեա մարտուցեալ ի պարտութիւն մատնեցան, ^Ը քաղաքն նոցա առաւ եւ հրձիգ եղեւ: Մինչ զեռ նորա ի Ասպիտողին ամրացեալ կային, նոյն իրք ի ձեռն Աամիղղեայ՝ զոր ինքեանք տարազիր արարին, միւսանդամ անդրէն արծարծէին նորո-

գէին¹³ : Պաղատացիք եւթնամեայ ժամանակ բռնացեալ ունէին զքաղաքն, եւ ապա բռնադատեալ վասն իրիք իրաց, լցեալ աւարաւ բաղմաւ յաշխարհէն թափեցան :

Մինչ դեռ Յոյնք զԼեւեանց աղմկաւ էին, Եպամինոնդէս¹⁴ ի թերացւոց քաղաքէն, իւրով արդարութեամբն եւ զգաստութեամբ, որպէս եւ յաղթութեամբքն նշանաւոր լինէր : Ըսեն վասն նորա՝ եթէ օրէնս իմն ունէր ամենեւին եւ ընդ խաղ իսկ չստել : Մեծամեծ իրք նորա եւ արութիւնք, ի վերջին ամսն ուշեղն Երտաշեսի եւ յառաջինսն Ովքայ, պայծառագոյն լինէին : Ընդ այնպիսի մեծաւ զօրավարաւ, թերացիք նշան յաղթութեան կանգնեցին, եւ զակեղմոնացւոց զօրութիւնն բեկանէր :

Մակեդոնացւոց հարստութեանն սկիզբն լինէր ի Փիղիպպեայ¹⁵ հօրէ Եղէքսանդրի մեծի : Սոյն թագաւոր՝ ընդ հակառակս իմն Ովքայ եւ նորին որդւոյ Երսէսի, թագաւորաց Պարսից՝ որ նմա դիմադարձ լինէին, եւ ընդդէմ իսկ Վէմոսթենեայ ճարտարախօսութեանն՝ որ գաթենացւոց ազատութիւնն պատսպարէր եւ նմա խոչընդակն լինէր, զքսան ամ յաղթեալ զքնաւ Յունաց աշխարհն ի ներքոյ ձեռին նուաճէր¹⁶ . յորում պատերազմն՝ զոր ի Վերոնէս մղեաց ընդդէմ աթենացւոց եւ նոցին դաշնաւորաց եւ յաղթեաց, անընդդիմակաց զօրութիւն նմա պարգեւէր : Յայնմ նշանաւոր մարտի, մինչ դեռ նա գաթենացւոց ճակատն խորասկէր, ուրախ լինէր ի տեսանելն զԵղէքսանդրոս՝ որ դեռ եւս յութեւտասն ամաց հասակի էր, զի զգունդս գունդս թերացւոցն՝ որ օրինօքն Եպամինոնդեայ կրթեալ էին, հերձոյր մանաւանդ զնուիրական գունդն, անուանեալ բարեկամաց, զոր անհնարին առ յաղթութիւն համարէին : Ըսյապէս տէր Յունաց աշխարհին, թիկունք օգնականութեան լեալ նմա եւ որդւոյն՝ յոր կարի վստահ էր, ի բարձրագոյնս յօժարել յանդգնէր, ի վերայ Պարսից ուշ առնէր քանդել աւերել զաշխարհ նոցա, որ եւ իշխան հրամանատար ընդդէմ նոցա կարգեցաւ . այլ նոցա կործանումն Եղէքսան-

զրի պահեալ էր: Մինչ դեռ Փիղիպպոս զնորոց հարսանեաց զուրախութեան տօնսն կատարէր, խար գործեալ նմա մեռանի ի Պաւսանեայ^ա որ մանուկ մարդ էր ի տանէ աղնուաց, որում չէր արարեալ թագաւորն իրաւունս: Բագուաս ներքինի ի նմին իսկ տարւոջ սպան զԱբէս թագաւոր Պարսից, եւ թագաւորեցոյց փոխանակ նորա զՎարեհ որդի Արշամայ՝ որոյ անուն յորջորջանաց էր Ադումանոս: Սա արժանի իսկ է վասն իւրոյ քաջութեանն՝ զի ի նոցա կարծիս, որ ասեմ՝ եթէ յարքունական զարմէ էր, յարեսցուք, որ եւ կարի հաւանութեան է:

Այսպէս երկոքին թագաւորքս առաքինի արութեամբ, ի միասին իւրեանց թագաւորութեանն սկիզբն առնելին, Վարեհ Արշամայ, եւ Ադէքսանդր Փիղիպպեայ: Որք եւ միմեանց ընդ ախամբ հայէին, եւ թուէր իմն՝ եթէ վասն ընդ աշխարհի միահեծան իշխանութեան ընդ միմեանս կռուելոյ, ծնեալք իցեն: Բայց Ադէքսանդրոս կամէր զանձն սնդել, յառաջ քան ընդ իւրում ոսոխին ընդհարկանել: Վասն խնդրէր քէնս վասն հօրն մահուան, զազգսն ստահակեալ՝ որ զնորա մանկութիւնն արհամարհեալ նշկահեցին, անդրէն ընդ ձեռամբ նուաճէր. ^բ ընդ Յունաց բախէր եւ յաղթէր, որ կամէին զփորձ առնուլ զհանդէս տեսանել, զնորա լուծն խղել, զթերացւոց քաղաքն յատակէր, ուր զզարմ եւ զզաւակ տանն Պինդարեայ միայն՝ ընդ որոյ երգսն Յոյնք զարմանային, խնայեալ ապրեցուցանէր: ^ա Հօր եւ անուանի յաղթութեամբք, յետ զայնպիսի արութիւնն վճարելոյ, զօրաժողով լեալ ի Յունաց՝ խաղայր գնայր ընդդէմ Վարեհի, ^բ երկցս ճակատ տուեալ յաղթէր, ^գ եւ ձաղեալ ի Բարեղոն եւ ի Շաւշ քաղաք մտանէր, ^դ զրուն զարքունի քաղաքն նախնեաց թագաւորացն Պարսից ի վեր կործանէր, ^ե մինչեւ ի Հնդկաց աշխարհն ուրեմն հասանէր հարկանէր, եւ ի Բարեղոն եկեալ, զախտս մահու ջերանէր, որով եւ մեռանէր իսկ^է, մինչ դեռ երեսուն եւ երկոց ամաց էր:

Ի նորա աւուրան Սանասէ, եղբայր Յաղղեայ զուրախութեանն, ի խռովութիւն եւ ի խակա-

ՄՐԻ ՀՈՌՊՄԵՑ

Դ18. Դ19. Դ20. Դ21.
Դ23. Դ24. Դ27. Դ30.

ՅԵՈՒՅ. ԳԵՆ ԶՔՐԻՍՏՈՍ

Գ36. Գ35. Գ34. Գ33.
Գ31. Գ30. Գ27. Գ24.

գործ ստահակութիւն զՀրեայն գրգռէր: Սա կին արար ի Շամրնէ, զըուսար Սանարաղատայ՝ որում Պարեհ ըզշամրտացւոց կողմանցն մարդպանութիւն շնորհեաց: Փոխանակ զօտարոտին զայն արձակելոյ, զոր եւ երուսաղէմացւոց ատեննն եւ իւր եղբայրն Յադդոս բռնադատել յօժարէին, ի շամրտացւոց հերձուածն միտեցաւ: Բազում եւ այլք ի Հրէից, զի մի գնոյն օրինակ դատաստան կրիցեն, ի նա յարեալ գնոյն ախտ ջերանէին: Իսկ եւ իսկ ի մտի գնէր նա շինել տաճար մերձ ի Սամարիա ի Պարիզին լերին. զոր շամրտացիք նուիրական համարէին, եւ անդ ի մեծ քահանայութիւն հասանել: Նորին աներն՝ որ յոյժ բանկայ էր արքայի, յօժարեցուցանէր զնա վստահ ի թագաւորին ինաման լինել, եւ դէպք տային առնն ամենեւին յաջողել: Բանզի իրրեւ ամբարձաւ Աղէքսանդրոս, Սանարաղատոս զիւր տէրն թողոյր լքանէր, եւ զօրս յօգնականութիւն ածէր հասուցանէր առ Աղէքսանդր յաղթօղ, մինչ դեռ նա զախւրացւոց քաղաքն պաշարէր: Աւայնպէս զոր ինդրէրն առնոյր. տաճար ի Պարիզին կանգնէր, եւ Սանասէի զրապարծի տարապարտ հպարտութիւնն յադէր: Իսկ Հրեայք հանապաղ հաւատարմք Պարսից, զԱղէքսանդր՝ որ թիկունս օգնականութեան ի նոցանէ ինդրէր, մերժեցին: Սա խաղայր զնայր յԱրուսաղէմ, ի մտի եզեալ վրէժս ի նոցանէ պահանջել, սակայն յիրացն՝ զոր եդ ի մտի, մեկուսի կայր, տեսեալ զմեծ քահանայպետն՝ զի գայր նմա ընդ առաջ, հանգերձ պաշտօնէիւք զօհիցն պատարաղաց՝ որ զըեցեալ էին զիւրեանց հանդերձան պաշտաման, եւ ժողովուրդն ամենայն սպիտակ հանդերձիւք առաջի ընթանայր: Յուցանէին նմա զկանխասացիկ պատգամն մարդարէութեանցըն որ անդուստ ի վերուստ վասն նորա յաղթութեանցըն՝ բարբառեցան, այս ինքն է՝ զՎանիէզի կանխախօսութիւնն: Հրէից զամենայն զիւրեանց հայցուածան շնորհէր, որք եւ ի նմին հաւատարմութեան, որպէս ցանդ թագաւորացն Պարսից, նոյնպէս նմա կային:

Մինչ դեռ նա զարութիւնն վճարէր, հռոմայեցիք, ընդ սամիտացիս՝ իւրեանց արուարձականս ի մարտ

պատերազմի զրգուէին . եւ էին իսկ յանհնարին ճգնութեան առ ի զնոսա նուաճելոյ, թէպէտ եւ Պապիրիոս Սուրհանդակ առաջնորդէր, որ քան զամենայն զօրավարս նոցա բռնադոյն եւ հոյակապ էր :

Յետ մահուան Աղէքսանդրի, իշխանութիւն նորա բաժանեցաւ . Վերդիկկաս, Պտղոմէոս Ղազոսեայ որդի, Ընտիգոնոս, Սեղեւկոս, Ղլւսիմարոս, Ընտիպատրոս եւ նորին որդի Պատանդրոս, եւ բնաւ ամենայն իշխանք զօրուն՝ որ ընդ մեծաւ աշխարհակալուն ցանդ ի պատերազմի անեալ էին, ի սուր սուսերի իւրեանց յանձինս կորզել զիշխանութիւնն մտարերէին . նախ ի զլուս տանն Աղէքսանդրի զիւրեանց անագորոյն մտացն դառնութիւն թափէին՝, զնորին եղբայրն եւ զմայրն, զկանայս նորա եւ զմանկունս եւ զքորսն իսկ զնորա ընդ սուր հանէին . ամենայն ուրեք պատերազմ եւ արիւն եւ անհնարին յոյգք երեւէին :

Ի մէջ այնչափ անկարգութեանց, բազում ժողովուրդք ի փոքր ասիացւոց աշխարհին, եւ յարուարձանեայս նոցա զանձինս զերծուցանէին, եւ զպոնտացւոց, զբլւթանացւոց եւ զպերգամացւոց թագաւորութիւնսն հաստատէին : Ի շէն երկրին վաղվազակի մեծացան յըդփացան զօրացան : Աոյնդունակ եւ աշխարհն շայոց ի նմին ժամանակի զճանրատաղտուկ լուծն մակեդոնացւոց ընկենոյր, եւ լինէր թագաւորութիւն մեծ եւ հզօր : Միթրիգատէս, եւ նորին որդի համանուն, զկապազովկացւոց իշխանութիւնն կացուցանէին : Սակայն երկու միահեծան իշխանութիւնք քան զամենեսեան՝ որք եղենն, բռնադոյնք երեւեցան . առաջին՝ եգիպտացւոցն՝ որում Պտղոմէոս Ղազոսեայ որդի հիմն արկանէր, յորմէ եւ Ղազիգեանքն սերեցան . երկրորդ՝ ասիացւոցն կամ Ըսորւոց՝ զոր Սեղեւկոսն յօրինեալ յարգարէր, եւ անախ Սեղեւկիդեանքն յորժորժեցան . որք բաց յԱսորւոց կողմանցն՝ հասին կալան եւ զգաւառան մեծազանձ մեծատարած զվերին ասիացւոց՝ ուր Պարսից տերութիւնն էր : Այսպէս համօրէն արեւելից կողմանք ընդելանէին ընդ Յունաց աշխարհին, եւ զնոցա բարբառն ուսանէին :

Բայց եւ աշխարհն իսկ Յունաց յիշխանացն Աղէքսանդրի յաղթահարէր: Մակեդոնիա, առաջին թագաւորութիւն նորա՝ որ հրամանատարս ամենայն արեւելից կողմանցն կացուցանէր, ինքն յաւար եւ յափշտակութիւն բռնաւորաց եկելոց լինէր: Որդիքն Ասասնգրի՝ այր զեղբայր իւր յիշխանութենէ մերժեցին: Վիւռոս արքայ եպիրացւոց՝ որ զկողմն մի աշխարհին ունէր, Վախտանիան լինէր ի Վեմետրեայ որդւոյ Անտիգոնեայ, որոյ անուն յորջորջանաց էր Պաշարիչ: Գրայց եւ զնա անդրէն Պիւռոս հալածէր. Գապա եւ ինքն երկրորդ անգամ մաղապուր ի Վիւսիմաքեայ ապրէր. իսկ զՎիւսիմաքոս վտարէր Սեղեւկիոս. եւ զնա Պտղոմէոս՝ որ Աերաւնոսն կոչէր, այս ինքն է բարկութիւն, յեգիպտացւոց աշխարհէն ի Պտղոմեայ առաջնոյ յիւրմէ հօրէն վտարանդի լեալ, սպանանէր, որ բազմապատիկ ի նորա երախտիսն վայելեալ էր: Այոն նենգազործ իսկ եւ իսկ իրրեւ ի վերայ մակեդոնացւոց աշխարհին բռնանայր, ի գաղատացւոց խուճապէր, եւ ի ճակատի ուրեք՝ զոր ընդ նոսա ետ, կորնչէր:

Ի ժամանակի արեւելեայց խռովութեանն, սոքա միահամուռ գէմ՝ եղեալ մասնէին ի փոքր ասիացւոց աշխարհն, վարեալ ի Բրենեայ յիւրեանց թագաւորէն, եւ զետեղէին ի գաղղոգրետացւոց, այս ինքն՝ ի գաղատացւոց աշխարհին՝ որ ի նոցա իսկ անուն անուանեալ կոչէր. ապա անտի ի մակեդոնացիս անդր յարձակէին, կասուտ կողոպուտ զաշխարհն առնէին, եւ զՅոյնս համօրէն ահիւ խուճապեցուցանէին: Եւ զորք նոցա ի տաճարակողոպուտ մեհնահապուտ ժպրհութեանն՝ զոր ի մեհնիս Վեղփեայ ժպրհէին, սատակեցան: Եւ յապա ամենայն ուրեք խլրտէր, եւ ամենայն ուրեք հէք եւ թշուառական էր:

Եւ մօք ինչ կանուխ քան զՎեղփեայ իրսն, զգաղատայիք բնակեալք յՊտաղիա, որք վասն անհնարին անգաղար պատերազմացն եւ ստէպ յաղթութեանցն բազում շտապ տալնապի հռոմայեցւոց հասուցանէին, սա-

ԵՄՔ ՀՈՌՊՄԵՑ

Ը458. Ը460. Ը465. Ը468.
Ը473. Ը474. Ը475. Ը476.
Ը471.

ՅԵՌԵՄ. ԲԱՆ ՔՐԻՍՏՈՍ

Ը296. Ը294. Ը289. Ը286.
Ը281. Ը280. Ը279. Ը278.
Ը283.

զրեալ ի սամնիտացւոց, ի բրուտինացւոց, եւ յետրուրիացւոց ընդ նոսա ի մարտ պատերազմի բախեցան^ս։ Օտուջինն նոր իմն նշան յաղթութեան կանգնեցին, սակայն սպանեալ զհրեշտակն դարչեցուցին զփառան։ Հռոմայեցիք ի յասման լեալ, ի վերայ յարձակէին^ս, եւ զնոսա վհանգեալ՝ յերկիր նոցա մտանէին, եւ վարատահանա՝ յաշխարհին բնակեցուցանէին. եւ ապա երկիցս եւս ճակատ տուեալ զիէսն նուաճէին եւ զայլս բռնադատէին ի հաշտութիւն խօսել։

Իբրեւ դադատայցիք՝ որ յարեւելս բնակին, յաշխարհէն Յունաց վարեցան^ս, Անտիգոնոս Պոնատաս՝ Վեմեարի Պաշարողի, որ յերկրտասան ամաց հետէ Յունաց թագաւորէր, բայց չէր կարի խաղաղութեամբ, զՄակեդոնիա զխրաւ եւ անջան պատերազմաւ նուաճեր։ Յայնմ ժամանակի Պիւռոս այլուր պատաղեալ էր, եւ իբրեւ յաշխարհէն տարագիր եղև^ս, եղ ի մտի զստաղիա՝ ուր ի տարանտոնացւոց կոչեցաւ, երթալ նուաճել, եւ զիւր ամբարտաւան միտն հաճել։ Տարանտոնացւոցն բաց ի նմանէ չկայր այլում յուսոյ ակն ունել, յետ պատերազմին՝ յորում հանգերձ սամնիտացւոքքն, ի հռոմայեցւոց ի պարտութիւն մատնեցան։ Պիւռոս բազում անգամ ճակատ ընդ հռոմայեցւոց տուեալ յաղթէր^ս, բայց այն նմա առ եղեռանէ լինէր։ Պիւռեայ փիղքն զհռոմայեցիս յապուշ կրթէին, այլ Փարրիկոս հիւպատոս արագ արագ հռոմայեցւոց եցոյց՝ եթէ մարթի եւ Պիւռեայ ի պարտութիւն մատնել։ Թագաւորն եւ բզեաշին թուէր իմն՝ եթէ ընդ միմեանս ի վէղ դային, զի առաւել զիւրեանց առատամիտ մտացն աղնուակաւ նութիւն ցուցանիցեն, քան եթէ ի զինուցն պարճանս յաճախիցեն։ Պիւռոս առանց զնոց փրկանոց զլերին գամենայն հիւպատոսին շնորհեաց. զի պարտ եւ պատշաճ է, ասէր, սրով եւ աղեղամբ պատերազմ հարկանել, եւ մի բնաւ արճաթոյ. ^ս իսկ Փարրիկոս առ թագաւորն յղեաց զնորա նենգաւոր բժիշկն՝ որ կկեալ զեղով սպանանել զիւր տէրն խոստանայր։

ՎԵՐ ԼՈՌՈՎՄԵՑ

Ը472. Ը477. Ը474. Ը475
^ս476.

ՅԵՌՈՒՄ. ՈՒՆ ԶՐԲՄՍՈՍ

Ը282. Ը277. Ը280. Ը279
^ս278.

Օսյնու ժամանակաւ կրօնք եւ ազն յուզայական սխանէր ի մջ Յունաց պայծառազոյն լինել : Ժողովուրդս այս, բազում մարդասիրութիւն գտեալ ի թագաւորաց Եսորոց, ի հանդարտութեան ըստ իւրեանց օրինացն վարէին : Ընտիրքս Թէոս, թոսն Սեղեւկեայ, զնոսս ի փոքր ասխացւոց աշխարհին ցրուեաց, որք անտի ապա ընդ բնաւ Յունաց աշխարհն սփռեցան. եւ ամենայն ուրեք հանդիտապատիւ բնակչաց քաղաքացն զնոյն իրաւունս ունէին, եւ ի նմին ազատութեան վայելէին¹⁵ : Պաղոմոս Վազոսեայ ի նոցանէ յեղիպտացւոց աշխարհին եւս բնակեցուցեալ էր : Ըստ նորին որդւով Փիղագեղփոսն Պաղոմեաւ, նոցին գիրք ի յունարէն լեզու թարգմանեցան, եւ այն սքանչելի թարգմանութիւն՝ որ եւ թանասնիցն կոչի, ի յայտ եկն : Եւ թանասունքն ծերք էին գիտունք՝ զորս Եղիազարոս քահանայապետ, առ թագաւորն՝ որ խնդրէին զնոսս, առաքեաց : Ոմանք ասեն՝ եթէ զհինգ գիրս զօրինացն եւ եթ թարգմանեցին¹⁶, իսկ զմնացորդս ազնուական գրոցն, յետոյ ուրեմն հանին ի յոյն լեզու, ի Հրէից սէտս՝ որ ցրուեալ կային վայրավառինք ընդ ամենայն աշխարհն եղիպտացւոց եւ Յունաց. որ եւ մոռացեալ էին ոչ միայն զիւրեանց նախնեացն խօսս՝ որ էր երբայեցերէն, այլ եւ զքաղղեացւոց լեզուն՝ զոր ի վտարանդութեանն ուսեալ էին : Եոր իմն յունական բարբառ յօրինէր, ըստ առանձինն բարբառոց երբայեցւոց՝ որ եղղենական կոչեցաւ. եւ թանասնիցն թարգմանութիւն, եւ ամենայն գիրք նորոց կտակարանաց ի սոյն բարբառ գրեցան : Սինչ դեռ Հրեայք այսպէս վտարանդի էին, տաճարն նոցա ընդ ամենայն երկիր սքանչելի լինէր, եւ ամենայն թագաւորք արեւելեայց նուէրս ի նմա նուիրէին :

Ըրեւմտեայ աշխարհն ուշ ունէր պատերազմին հռոմայեցւոց եւ Պիւռեայ : Պիւռոս ի Աուրեայ բգեշխէ ի պարտութիւն մասնեալ, փախտեայ յԵպիւրոս զերծանէր : Սակայն եւ անդ չկայր ընդ երկար ժամանակ ի հանդրատեան, եւ զգարձ փոխարինի պատերազմին՝ որ ձախողեցաւ նմա յատաղիս, ի մակեդոնացւոց անտի կամէր ընդ ունել : Ընտիրքոսս Պոնատաս ի Թեսաղոնիկն շուրջ

փակեալ, Վ յախամայ իսկ թողոյր Պիւռեայ զմնացորդս թագաւորութեանն : Եւ յլ մինչ զեռ Պիւռոս խուճապէր, եւ խրոխաէր ի պատերազմ ընդդէմ զակեղմոնացւոց եւ արգիւացւոց, Եւտիզոնոս խրախուսեաց ընդդէմ նորա : Աջիղքին թագաւորքս թշնամիք, ի նմին ժամանակի յերկուց կողմանց ընդ միմեանս հակառակելոց ի ներքս մուծան յԱրգոս ընդ երկուս այլ եւ այլ դրունս : Սասակ կուռոյ ի քաղաքին լինելոյ, ոմն ի կանանց անսեալ զՊիւռոս զհեա պնդեալ իւրոյ որդւոյն՝ որ զնայն խոցեալ էր, զնա քարիւ հարեալ ջարդէր : Եւտիզոնոս, յայնպիսի հակառակորդէ պրծեալ, ի Մակեդոնիա մտանէր, եւ մակեդոնացւոց հարստութիւնն, յետ փոփոխմանց ինչ, խաղաղութեամբ յիւրում առհմին մնայր : Չտայր նմա զօրանալ ժողով դաշնաւորացն աքայեցւոց, որ էր յետին պարիսպ ալատութեան աշխարհին Յունաց, յորմէ եւ հուսկ վերջին քաջքն եղին Արատոս եւ Փիղոպեմնէս :

Տարանտոնացիք՝ զորս Պիւռոս պատրեաց յուսացոյց զուր աւրապարտուց, յետ նորա վախճանին զկարբեղանացիս իւրեանց թիկունս օգնականութեան կօչեցին : Եւ յայն թիկունք օգնականութեանն չլինէին ինչ նոցա յօգուտ . ի ճակատ մտեալ, հանդերձ բրուտինացւոյքն եւ սամիտացւոյք իւրեանց դաշնաւորօք, կոչկոծեցան : Սոքա՝ յետ զամս եւթանասուն եւ երկուս ստէպ պատերազմունս մղելոյ, բռնարար ընդ լծով ծառայութեան հռոմայեցւոց մտանէին : Աոյն անցք վաղվաղակի եւ ընդ Տարանտոն անցանէին . նոցին արուարձականք եւս չհանդարտէին, եւ համօրէն հին ժողովուրդք իտաղացւոց ընդ ձեռամբ նուաճէին . իսկ դաղատացիք, քանզի ստէպ հարան, խլրտել չիշխէին :

Յետ չորեքհարեւր եւ ութսուն ամաց կուռոյ, հռոմայեցիք զԼատաղեա միախումբ կալան¹⁷, յայնժամ սկիզբն արարին եւ վասն իրաց՝ որ արտաքոյ էին, փոյթ յանձին ունել . ի նախանձ մտեալ խանապին ընդ կարբեղոնացիս՝ որ կարի ուժգնագոյնք էին յիւրեանց արուարձանեայս, յաղթութեամբքն՝ զոր ի Աիկիղեա կանգնէին .

որք եւ ի վերայ նոցա եւ խաղաղացոց զխնայ ձեռներեց լինելին, զօրաւիզն օգնականութեան լեալ տարանտոնացոցն:

Կարբեղոնացւոց ընկերհաշտութիւնն զերիւս եղերս մեծի ծովուն ունէր: Թող զգերեացւոց համատարածքն ուր գրեթէ ամենեւին համօրէն շահեալ տիրեալ էր, զսպանիացւոց կողմամբն եւս ընդ կիրճն ձգէր տարածանէր: Իշխան լեալ ծովու եւ վաճառաշահութեան, զկղզին սիրւանացւոց եւ սարգոնիացւոց գրաւեաց կալաւ: Սիկիզիացւոց անձուկ մեծ էր զանձինս պատսպարել. իսկ խաղաղացոցն՝ սպառնալիք մօտ առ կուրծս կային, եւ յիրաւի բազում երկեղ էր: Ընտի եւ պունիկեան պատերազմացն սիկզն լինէր. թէպէտ եւ գաշնիք ի միջի կռեցան, այլ երկրքին կողմանքն եւս չկային յուխտին՝ զպէ ուխտեցին:

Ըսածին պունիկեան պատերազմն⁶, նաւամարտիկ լինել հասնայեցւոց ուսոյց: Օսաւջինն իշխանք լինելին ի ճարտարութեանն՝ որում ամենեւին չէին հմուտ. Վուլիզեոս հիւպատոս զառաջին նաւամարտիկ կռիւն կռուեցաւ⁷, եւ յաղթեաց: Ուեզուզոս զնոյն պարծանս հաստատուն կալաւ. որ եւ նաւարկեալ յախրիկեցւոց աշխարհն հասանէր, ուր դէպք տային նմա կռուել ընդ նորաքանն վիշապին՝ յորոյ վերայ հարկ լինէր զամենայն զեւր զօրսն թափել: Ըմենայն ինչ յաջողէր ի ձեռս նորա, կարբեղոնացիք ի նեղ մտանէին, այլ զօրտիզն օգնականութեան լինէր նոցա Վասնախպարս զսկեզմնացի, եւ զերծանէին: Հոռնայեցւոց զօրավարն ճակատ տուեալ, ձերբակալ լինէր⁸, այլ քան նորին յաղթութիւնք, առաւել բանդն զնա պղտուաբոցն գործէր: Օնա կարբեղոնացիք յիւր բանն ապաստան, արձակեցին երթալ վասն փոփոխելոյ գերեոյն հողալ. նա եկեալ ի միջ սինկիզիտոսայն պատսպարէր զօրէնս իմն՝ որ զամենայն յոյս բառնայր յորոյ միանգամ ի բուռն անկանէին, եւ ինքն անդրէն ի գուշակաւոր մահն զխմէր: Հոռնայեցիք երկիցս սաստիկ նաւակոծ լեալ, բռնադատէին միւսան

ԸՄՔ ՀՈՌՎՄԵՑ

Է490. Է494. Դ495. Դ498.

Է499.

ՅԵՌԵՄ. ՔԵՆ ՔՐՈՒՅՈՍ

Բ264. Բ260. Դ259. Դ256.

Է255.

դամ՝ զձովական իշխանութիւնն կարբեղոնացւոց թողուլ : Յաղթութիւն ընդ երկար ժամանակ ի մէջ երկուց պղ-
 դացն չլինէր յայտնի . եւ հռոմայեցիք շնորհել խորհէին ,
 բայց զիւրեանց նաւատորմիղն վերստին նորոգեցին : Միւս-
 անգամ ճակատ տուեալ յաղթութիւնն ի հռոմայեցիս
 ելանէր⁶ , եւ Ղուսատիոս բղեշի զբաւ առնէր սպառե-
 լաղմին : Արքեպոնացիք բռնաբար յանձն առին հարկս
 հարկանել , եւ զՄիկիղիա հանդերձ ամենայն կղզեօքն՝ որ
 ի մէջ Միկիղիայ եւ Խաղիայ էին , թողուլ : Հռոմայեցիք
 զկղզին զայն միահամուռ առին , բայց ի կալուածոցն Արու-
 նայ արքայի Միւրակուսայ , իւրեանց դաշնաւորի :

Յեա մարտին ի զլուխ ելանելոյ , կարբեղոնացիք մօտ
 ի կորնել լինէին վասն զօրացն ընդդէմ յաննելոյ . զի
 վարձկանութիւնս օգնականութեան դումարեալ , բստ
 իւրեանց սովորութեան , յօտար զօրաց դուռդ կազմեցին ,
 որք յետոյ վասն արծաթոյ ապստամբեցին : Մասն ա-
 նադորոյն խնտութեան նոցա , գրեթէ ամենայն քաղաքք
 իշխանութեան նոցա կապարձս դարձուցանէին , եւ ի
 նոյն դուռդ խոռոպայն յաւելուին : Արքեպոնացւոց քա-
 ղաքն սաստիկ պաշարեալ զյետին կործանումն կործա-
 նէր , եթէ չէր ի թիկունս հասեալ Մմիղկարայ՝ որ Բար-
 կանն յորջորջեցաւ : Սորա անձամբ զդէմ կալեալ էր
 վերջին պատերազմին : Նորին տահմային քաղաքացիք
 վասն յաղթութեանն եւս՝ զոր ընդդէմ ապստամբացն
 կանդնեցին , նմա շնորհ ունէին : Օլարդոնիա տուժե-
 ցան , զի պահապանքն՝ որ ի քաղաքին պահ ունէին , ա-
 պրստամբեալ ի հռոմայեցիս ձեռս ետուն¹⁰ : Արքեպո-
 նացիք առ երկիւղն՝ զի մի անդրէն գնտսա ի պատերազմ
 գրդոխցեն , յակամայ իւրեանց յայնպիսի պիտանացու-
 կղուոյ ի բաց կացին , եւ յաւելին եւս ի հարկսն՝ զոր
 հարկանէին : Մակայն դուն դնէին ի Սպանիա զիւրեանց
 իշխանութիւն՝ որ վասն ապստամբութեան խախտեցաւ ,
 նորոգել : Մմիղկար հանդերձ իւրով որդւով Մնիբա-
 ղաւ՝ որ իննամեայ էր , յայն դաւառ անցանէր⁷ , եւ անդ
 ի ճակատու ուրեք մեռանէր : Յիննամեայ ժամանակի
 անդ՝ յորում Մմիղկար բազում պատերազմունս իմուռ-

ՄՄՐ Կ 210-211, ՄԵԸ
 513. 516. 524.

ՍԵՍԵՑ. ԳԵՆ. Զ.ՐԻՄՍՍՍ
 241. 238. 230.

տութեամբ եւ քաջութեամբ հարկանէր, որպիսորա ընդ այնպիսի մեծ զօրավարաւ վարժէր եւ ընդերանէր, եւ յանհարին հեռ եւ ի նախանձ ընդդէմ հռոմայեցւոց զբզուէր : Ասորուբաղ նորին նիզակակից, լինէր յանձանձիչ իշխանութեանն : Սեծաւ խմաստութեամբ իւրում աշխարհին առաջնորդէր, եւ շինէր զմեւս Աարքեզոն քաղաք, որ զսպանխացւոց աշխարհն ի հնազանդութեան կալաւ :

Հռոմայեցիք զբաղեալ էին ի պատերազմին ընդդէմ Տեւայ, տիկնոջ զԵրիկեցւոց՝ որ անխեթ եւ անխիզ՝ զամենայն ծովակոյս կողմն ասպատակէր : Ուրուցեալ ամբարտաւանեալ աւարօքն մեծամեծօք՝ զոր առնոյր ի Յունաց եւ յեպիրացւոց¹⁹, զհռոմայեցիս եւս անգոսնէր, եւ զնոցա պատգամաւորն սպանանէր : Այլ վարկազակի բնիձէր : հռոմայեցիք վայրս ինչ նմա ի զԵրիկեցւոց աշխարհին շնորհէին, ²⁰ եւ զԱորկիւբա կողին՝ զոր բամբիշն վտարեալ էր, կալեալ շահէին : Յայնմ ժամանակի առ Յոյնս հրեշտակաղնաց լեալ մեծաւ շքով, բազում պատիւ փառաւորութեան յաշխարհէն ընդունէին, եւ անդ եւս սկիզբն առնուին գիտակ եւ ծանօթ մեծապօր զօրութեանն նոցա լինել : Ասոն մեծամեծ աջողութեանց Ասորուբաղայ՝ հռոմայեցիք նախանձարեկ լինէին, այլ գաղատացիք բնակեալք յառաղեա²⁰ խոչընդակն էին նոցա մինչեւ շմարթ ել վասն իրայն սպանխացւոց փոյթ յանձին ունել : Քառասուն եւ հինգ ամբ էին յորմէ հեռէ հեշտիւ կային նոքա, եւ մանկաին՝ որ այնպէս ի զԻւրոջ անեալ էր, վասն անցելոցն կորստեան ինչ ոչ հոգայր, այլ ընդ քաղաքին խիզախէր²¹ : Հռոմայեցիք զանձինս յարահոյս արարին ի կարբեդոնացւոց, զի առանց կասկածանաց ընդ սահմանակիցսն խռովիս ի դիմի հարկանիցին : Ղաշինս բարեկամութեան ընդ Ասորուբաղայ կոնցին, որ երգմնի լինէր նոցա անգր քան զԻրերոս չանցանել :

Պատերազմ ի մէջ հռոմայեցւոց եւ գաղատացւոց յերկոցունց կողմանց իսկ անհարին մոլեկան կատաղութեամբ մղեցաւ²², բնակիչք լեռնակողմանցն՝ որ յայս կոյս

և որ յայն կոյս Աղայից բնակեալ էին, եկեալ ի միմեանս յարեցան, այլ միահամուռ խորտակէին: Աոնկողիտանոս, մի ոմն ի թագաւորաց զաղատացւոց, ի կռուին ի բուռն անկանէր. մեւս ոմն թագաւոր Անրոտեստոս անձին արար: Հռոմայեցիք թշնամեացն յաղթեալ՝ ըլլալովս զեւս զառաջին նուազ անցանէին, ի մտի եղեալ զամենայն արուարձանեայս շուրջ զգետովն, որոց նոքա յայնչափ ժամանակաց հեռէ շահեալ տիրեալ էին, ի բաց ի նոցանէ բառնալ: Յաղթութիւն ամենայն ուրիշ զնոցա զհեա երթայր. Սեղիողանոն առաւ, գրեթէ ամենայն աշխարհն նուաճէր:

Օպնու ժամանակաւ Ասորուբաղ ի կենաց վճարէր⁵, և Անիրազ՝ որ դեռ եւս որդի քսան և հինգ ամաց էր, զնա պայազատեաց: Աւանդէն ամենայն որ գուշակէր՝ եթէ պատերազմ լինելոց է: Սոր ոստիկանն ձեռն ի դործ առնէր յայտ յանդիման զսպանիացւոց աշխարհն նուաճել, և ի դաշանցն չպատկառէր: Տռոմայեցիք զԱպոնդեայ զԷրեանց դաշնաւորի բողոքն լուեալ, հրեշտակազնաց առ կարբեղոնացիս լինէին: Սոքա, զԷրեանց իրս յարգարեալ՝ ըմբոստանային, հաւանել չյօժարէին. զի և վասն զԱիկիղիս յԷրեանց ձեռաց հանելոյ հռոմայեցւոցն, և զԱրգոնիս յանիրաւի տարապարտուց վտարելոյ, և վասն հարկացն յաճախութեան ի խոր խոցեալ էին: Աւայսպէս կողմն՝ որ զԱնիրազ յԷրացն լուծանել կամէր, վճարել ինչ ոչ կարէր:

Օջրավարս այս զամենայն իրաց հողայր: Պաղտ պատգամադնաց լեալ, դաշինս կռիւր ընդ դառլատացւոց՝ որ յիտաղացւոց աշխարհին բնակէին. որք քանզի չէին առակ իւրեանց անձանց զօրութեամբ յիրս ինչ մտարելել, զայն ժամ զիպօղ յապստամբութիւն համարեալ՝ յանձն առնուին: Անիրազ զԷրերոս զեւս, զպիւրենական լերինս, և զամենայն աշխարհն զաղատացւոց՝ որ յայն կոյս Աղայից բնակէին, և զԱղպս իսկ հատեալ անցեալ, իրբեւ ի միում վայրկեան ժամանակի ի վերայ իտաղացւոց աշխարհին անկանէր: Պաղտացիք զօրա-

ցուցանել զնորա գունդն չդանդաղէին . եւ զամենայն հնարս հնարէին զի զիւրեանց ալատութիւնն շահեցին :
 Ե Չորիցս ի պարտութիւն մատնեալ հռոմայեցւոց, կարծիս տային որպէս թէ մօտ ի կործանել հասեալ իցին :
 Ը Արկիղիս ի յաղթողն կողմն լինէր : Արոնխոս թաւաւոր սիրակուսացւոց, հռոմայեցւոցն ընդդէմ յառնէր . գրեթէ ամենայն իտաղացւոց աշխարհն թօթափէր ի նուցանէ , եւ յեաին յոյս քաղաքին ի Ապանիա ընդ երկուց Ալիպիոնեանցն գող իրրեւ կորուսեալ իմն էր :

Յայնպիսի անհնարին տաղնապ հասեալ , ի ձեռն երկց արանց աւաղաց փրկութիւն հռոմայեցւոց լինէր : Փարբիկեայ Մաքսիմեայ հաստատութիւն , որ զամենայն ազմուկ խառնազանճ մարդկան անդոսնեալ , երթեալ ի մենութեան տայր պատերազմ , ամրութիւն խրում աշխարհին լինէր : Մարկեղոս՝ որ զՆոդեայ պաշարումն արդել , եւ զԱլիպիուսաս առն , իւրովք դործովք ոյժ պնդութեան զնդացն շնորհէր : Բայց հռոմայեցիք՝ որ ընդ երկուս արս ընդ այսոսիկ ընդ աւաղս զարմանային , աւելի իմն զամենեքումք անցեալ զանցեալ զկրտսնն Ալիպիոն տեսանէին : Իբրեւ խորհուրդք նորա նորանշան իմն կարդաւ ի դուխ ելանէին , ամենեքին ի կարծիսն՝ զոր գնմանէ կարծէին , հաստատեցան , որպէս թէ յաստուածեղէն աղգէ իցէ , եւ ընդ զիսն հանապաղ խօսիցի : Յամի հասակի իւրոյ քսաներորդի չորրորդի՝ ժտեր յանդգնէր ի Ապանիա երթալ , ուր հայրն իւր եւ հօրն եղբայր այն ինչ կորուսեալ էին . * մարտ գնէր ընդ նորոյ քաղաքին կարբեդոնացւոց՝ որպէս թէ ի զից ուրուք զրգելոյ դործիցէ , եւ զօրք նորա իսկ եւ իսկ զքաղաքն առնուին : Ը մենեքին՝ որ զնայն տեսանէին , ի հռոմայեցիս ձեռս տային . եւ կարբեդոնացիք յապանիացւոց աշխարհէն թափեցան : Իբրեւ յափրիկեցւոց աշխարհն հասանէր նա , թաւաւորք անձնատուր լինէին : Արբեդոնացիք սրտաբախ սրտաթռնող լեալ , զիւրեանց զօրսն խորտակեալս տեսանէին : Ը Ալենիբաղ՝ որ զվշտասան ամ պար-

ԸՄՔ ՀԹԹՄԸԸ

Ը536. Ը537. Ը538. Ը539.
 Ը542. Ը540. Ը542. Ը543.
 * 544. 548. Ը551.

ԸՄԸԸ. ԸԸՆ ԸԸԸԸԸԸԸ

Ը218. Ը217. Ը216. Ը215.
 Ը212. Ը214. Ը212. Ը211.
 Ը210. Ը206. Ը203.

անաց, զուր եւ վայրագար յղեալ կոչեցին, որ եկեալ զեւր հայրենի աշխարհն ապրեցուցանել չկարէր: Ալիսպիոն աշխարհին տիրէր⁶, եւ փոխարէն Ափրիկանոս անուն ընդունէր: Հռոմայեցիք զզաղաացիս եւ զափրիկեցիս վանեալ, ոչ ուստեք այլ եւս երկեւղ տեսանէին, եւ այնու հետեւ առանց տազնապի պատերազմ հարկանէին:

Յընդմիջել առաջնոյ պունիկական պատերազմին, Թէոդոտոս բակորիացւոց ազդին առաջնորդ, քաղաքս հազար վտարէր՝ յՆտիոքայ՝ որոյ անուն յորջորջանաց Թէոս էր, յորդոց Նտիոքայ Ասորոց Թագաւորի՝ որ Սովաէրն կոչեցաւ: Պարթեւ ամենայն աշխարհն արեւելից նոյն օրինակ յետս կացին: Պարթեւք ապաստամբեցին ընդ առաջնորդութեամբ Արշակայ, աւագի տանն Արշակունեաց. սա յաղթ պետութեան միոջ հիմն արկանէր, որ սակաւ սակաւ ընդ ամենայն վերին աշխարհն ասիացւոց պարզեալ տարածանէր:

Թագաւորք Ասորոց եւ եգիպտացւոց անհնարին իտաղութեամբ ընդգէմ միմեանց կատաղեալ, մերթ բռնութեամբ, մերթ դաւով, զմիմեանս քակել փութային: Սասն Վամանակոսի էր պատերազմն նոցա եւ վասն նորին կալուածոց՝ որ Խոր Ասորիք անուանէին, եւ էր սահմանակալ երկուց Թագաւորութեանցն. իսկ ասիացւոց իրքն ամենեւին ուրոյն եւ զատ էին յիրաց եւրոպէացւոց:

Ինչ բնաւ ժամանակս ընդ այնոսիկ փիզիսոփայութեան ճարտարութիւն յաշխարհին Յունաց ծագէր: Ազանդ փիզիսոփայիցն՝ որ իտաղացւոց անուանէր, եւ մեւս ջոկ՝ որ անուանեալ կոչէր յոնիացւոց, բազում արամբք մեծամեծօք զաշխարհն լնուին. այլ ի մէջ նոցա եւ այլ բազմութիւն այլանդակաց խառնէր, որոց Յոյնք ընդվայրախոյզք՝ փիզիսոփոս անուն անուանել չկորչէին: Ի ժամանակս Աիւրոսի եւ Աամրիւսեայ, Պիւթագորաս ի մեծի աշխարհին Յունաց, ի շուրջանակի վայրսն նեպոդոսեցւոց աշխարհին, իտաղական ազանդոյն գաիչ ճանաչէր: Սժա ի նոյն ժամանակս Թաղէս միզեսացի զյոնիական ազանդն յարդարէր: Անտի մեծ խնաստունքն

Յունաց Էրակղիտոս, եւ Վենոկրիտոս, եւ Կամիլեդուկղէս, եւ Պարմենիդէս ճանաչէին. Անաքսագորաս՝ որ սակաւ ինչ կանուխ քան զՊլեղոպոնեսացւոց պատերազմն էր, զաշխարհս ի յաւիտենական ողւոյ հաստատեալ եցոյց. իսկ Սոկրատէս՝ որ փոքր մի յետոյ էր, զփիղիստոփայութեան իմաստութիւնն ընդ ուսման բարուց միաբանէր, եւ բարոյից փիղիստոփայութեանն հայր ճանաչէր. նոյն դունակ եւ Պղատոն նորին աշակերտ, գլուխ փիղիստոփայիցն՝ որ ակադեմեան կոչէին, եւ Եւրիտատեղէս աշակերտ Պղատոնի, եւ Եղէքսանդրի վարդապետ, պերիպատետիկեանց զլիաւոր, պայծառանային. իսկ առ Եղէքսանդրի պայազատօքն, Ջենոն՝ որ կիտացի անուանէր, ի քաղաքաց ուստեք Ալպրոս կղզւոյ՝ յորում եւ Տնեալ իսկ էր, ստոյիկեանցն առաջնորդ յառնէր. եւ Նպիկուրոս ակթենացի իշխան փիղիստոփայիցն՝ որ կից ի նորա անուն եպիկուրեան անուանեցան, եթէ բնաւ մարթիցի փիղիստոփայս զնոսա անուանել, որ զինամակալութիւն ուրանային, եւ առ չգիտելոյ զինչ լաւն իցէ, զինչ պատշաճն իցէ, առաքինութիւն՝ զցանկութիւն հաշուէին: Մարթի ի մէջ աւարաց իմաստնոցն Յունաց եւ զԵպպոկրատէս համարել, որ բժշկական ճարտարութեան հայր ճանաչէր, եւ ի մէջ այլոցն յայնպիսի երանելի եւ երջանիկ ժամանակի Յունաց աշխարհին պայծառանայր:

Նոմայեցիք յայնմ ժամանակի այլ իմն ալք փիղիստոփայութեան ունէին, որ ոչ ի մաքառման, եւ ոչ ի ճառս հաստատեալ էր, այլ ի ժուժկալութեան, ի չքաւորութեան, ի վաստակս շինակոնութեան եւ մարտից պատերազմաց, յորում զիւրեանց նախնեաց, եւ զհոռական անուան պարծանս անձանց փառս համարէին. որ եւ տեարս իսկ զնոսա ամենայն իտաղացւոց եւ կարբեղոնացւոց աշխարհին առնէր:

1) Բ. Ե. Բ. Գ. 2. 3: 2) Ե. Բ. Գ. Գ. Բ. Գ. 159: 3) Բ. Ե. Բ. Գ. Բ. Գ. 9: 4) Ե. Բ. Գ. Գ. Բ. Գ. 10: 5) Բ. Ե. Բ. Գ. Բ. Գ. 6) Ե. Բ. Գ. Գ. 1: 7) Գ. Բ. Գ. Գ. 25: 8) Ե. Բ. Գ. Գ. Գ. Բ. Գ. 9) Ե. Բ. Գ. Գ. Գ. Բ. Գ. 10) Ե. Բ. Գ. Գ. Գ. Բ. Գ. 11) Գ. Բ. Գ. Գ. 25: 12) Ե. Բ. Գ. Գ. Գ. Բ. Գ. 3: 13) Ե. Բ. Գ. Գ. Գ. Բ. Գ. 6: Գ. Բ. Գ. Գ. Գ. Բ. Գ. 18. 22: 14) Ե. Բ. Գ. Գ. Գ. Բ. Գ. 20: 15) Ե. Բ. Գ. Գ. Գ. Բ. Գ. 3: 16) Ե. Բ. Գ. Գ. Գ. Բ. Գ. 2: 17) Ե. Բ. Գ. Գ. Գ. Բ. Գ. 1: 18) Ե. Բ. Գ. Գ. Գ. Բ. Գ. 62. 63: Գ. Բ. Գ. Գ. Գ. Բ. Գ. 1: 19) Ե. Բ. Գ. Գ. Գ. Բ. Գ. 79. 83. 88: 20) Ե. Բ. Գ. Գ. Գ. Բ. Գ. 12. 22: 21) Ե. Բ. Գ. Գ. Գ. Բ. Գ. 21:

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Թ

ՍԿԻՊՈՆ ԿԱՄ ԿԵՐԲԵՏԻՆԵՑԻՑՅՆ Ի ՊԵՐՏՈՒԹՐԻՆ ՄԵՏՆԵԼ

Ի ՀԻՆՊ-ՀԱՐԻԻՐՈՐԻ Երկրորդի երկրորդի ամի շինուածոյ Հոսմ քաղաքի, իրբեւ երկերիւր եւ յիսուն ամօք յետոյ քան զկալ միահեծան տէրութեանն Պարսից, եւ կանխագոյն երկերիւր եւ երկու ամօք քան զՔրիստոս, կարբեղոնացիք հոռմայեցեոց հնազանդեցին: Անիրազ չազարէր դաղտ ամենայն ուրեք՝ ուր ձեռնհաս էր, թշնամիս ի վերայ հոռմայեցեոց յարուցանել. այլ չլինէր ինչ նոցա դամագիւտ, եւ զամենայն բարեկամս իւր զհինս եւ զնորս ընդ իւր եւ ընդ իւրում հայրենի աշխարհին, ի կործանումն հասուցանէր: Փղամինեայ հիւպատոսի յազթութեամբք, Փիղիպպոս արքայ մակեդոնացեոց՝ որ դաշնաւոր էր կարբեղոնացեոց, ի պարտութիւն մասնէր՝ մակեդոնացեոց թագաւորք ի նեղ անկանէին, եւ Յոյնք՝ զերծանէին ի լծոյ նոցա: Հոռմայեցիք ձեռն արկանէին կորուսանել զԱնիրազ՝ որ եւ յեա պարտութեանն ահազին էր նոցա: Այս զօրավար մեծ, Պախատեայ յաշխարհէն զնացեալ անձնապուր ուրեք զկեանս անձին շահել, շարժէր եւ գորդէր դարեւելս ի վերայ նոցա, եւ ածէր զնոսա ի ծակատս յաշխարհն ասիացեոց: Ի բանից անտի նորա, Անտիոքոս արքայ Ասորեոց՝ որոյ անուն յորջորջանաց Մեծ կոչէր, նախանձեցաւ ընդ զօրութիւնս նոցա, ի եւ ի մարտ պատերազմի ընդ նոսա բախեցաւ. այլ ի կռուին չզնայր զհեա խրատուն Անիրազայ՝ որ ածն իսկ զնա յայն: Իբրեւ վանեալ վիանդէր ի ծովու եւ ի ցամաքի, յանձն առնոյր զոր ինչ Ղուկիոս Ակիլիոն բղեշն, եղբայր Ակիլիոնի Ափրիկանոսի, հրաման տայր. եւ ի Տաւրոս լեառն արգելեալ փակէր: Անիրազ փախըտական առ Պրուսիաս արքայ բիւթանացեոց անկանէր, ի եւ զեղօք անձին արարեալ ի հոռմայեցեոց զերծանէր: Ամենայն երկիրս սարսէր ի նոցանէ, եւ ոչ այլ ինչ իշխանութիւն քան զԼուրեանց իշխանութիւն կամէին

ՊԵՐՏՈՒՄ ԼՈՒՊՄԵՑ
 Կ556. Կ558. Կ559. Կ561.
 Կ572.

ՅԵՌՈՒՄ ԿԵՆ ԲՔՐՈՍՏՈՍ
 Կ198. Կ196. Կ195. Կ193.
 Կ182.

Թէ իցէ: Հարկ էր թագաւորաց զեւրեանց որդիան ի պատանդս տալ նոցա վասն հաւատարմութեան իւրեանց: Ընտիրոքս՝ որ ապա Եղիփանէան կոչեցաւ, որ է Երեւելի, երկրորդ որդի Ընտիրոջ մեծի արքայի Եսորոց, բազում ժամանակս կայր ի պատանդս ի Հռոմ քաղաքի, այլ մօտ ի վախճանել թագաւորութեան Աեղեւկեայ փիղոպատորայ եղբոր իւրոյ անդրանկան, դարձաւ անախեալ փոխանակ նորա հռոմայեցիք զՎեմեարիոս Սովտեր զարքայորդի՝ որ տասն ամաց էր յայնժամ, խնդրէին: Յայնմ նեղութեան ժամանակի Աեղեւկոս մեռանէր, եւ Ընտիրոքս յեղբորորդոյն զթագաւորութիւնն յինքն վրտարէր: Հռոմայեցիք զմակեղանացւոց իրօք պատարեալ էին. զի Պերսեւս ի Մակեդոնիա զարուարձականան նեղէր եւ չկայր յախտին եղեկոյ ընդ հօրն նորա Փիղիպպեայ:

Յայնմ ժամանակի՝ հալածումն ի վերայ աղգին Հրէից սկսանէր: Ընտիրոքս Երեւելի իբրեւ զնդիկան ոք թագաւորէր, զամենայն զայրուցան ընդ Հրեայն հանէր. ձեռն արկանէր զտաճարն աւերել, եւ զօրէնսն Մովսիսի եղծանել, եւ զամենայն աղգն ջնջել: Ըրգեաւ ի հռոմայեցւոց զօրութենէ երթալ տիրել եգիպտացւոց աշխարհին: Տային նոքա պատերազմ ընդ Պերսեայ՝ որ արագաւոյն էր ի ձեռն արկանել քան արդեամբք կատարել, առ ազահոութեան նորա մեկնէին ի նմանէ դաշնաւորք իւր, եւ առ ծուլութեանն՝ զօրն նորա թօթափեցաւ ի նմանէ: Ի պարտութիւն մտանէր ի Պաւղոսէ Եմիղեայ հիւպատոսէ, եւ ի հարկէ յակամայ կամս անձնատուր լինէր: Անտիրոս արքայ զԵրփիկեցւոց նմին դաշնաւոր, զերեսուն օր յԱնիկեայ ոստիկանէ վանեալ ի պարտութիւն մտանէր: Մակեդոնացւոց թագաւորութիւնն՝ որ յեւթնհարեւր ամս ձգեալ յաւտիանէր, եւ զամս երկերիւր իշխանօ կացուցանէր, ոչ միայն ի վերայ Յունաց աշխարհին, այլ եւ ամենայն արեւելից, եղև իբրեւ զմի ի նահանգացն Հռոմոց: Ընտիրոքս առաւել մոլեղնեալ յանդէնէր ի վերայ ժողովրդեան Աստուծոյ: Եւ էր տեսանել յայնժամ զգիմարած լինել Մա-

տաթեայ՝ որ քահանայապետ էր, յազդէն Փեննհէղեայ, նորա նախանձուն նախանձաւոր. եւ զՏրամանն՝ զոր ի մեռանելն իւրում արտուիրէր վանս փրկութեան ժողովրդեան իւրոյ՝. եւ զյաղթութիւնն՝ զոր յաղթէր Յուդա Մակարէ՝ նորին որդի, անչափ բազմութեան թշնամեաց իւրոց. եւ զբարձրանալ ազդատոհմն ասամանեանց կամ մակարէացոց՝. եւ զմիւսանդամ արել տաճարին՝ զոր հեթանոսացն պղծեալ էր. եւ զքահանայապետութիւնն Յուդայ, եւ զնորոգել վառաւորութեան քահանայութեանն՝. զմահն Անտիոքայ, արժանի ըստ անկարշտութեանն եւ հպարտութեան. եւ զխարէութեան դարձն մինչ զեռ յախա հիւանդութեան անկեալ զնէր, եւ զանհնարին ցասումն Աստուծոյ ի վերայ հպարտացեալ թագաւորին: Աորին որդի Անտիոքոս Աւապտոփը զնա ի մատաղ հասակի փոխանակէր, եւ էր նորա դայեակ Վիւսիաս յանձանձիչ իրաց արքունի: Այնչ զեռ մանուկ իսկ էր թագաւորն, Վեմեարիոս Սոփալը՝ որ էր ի պատանդս ի Հռոմ քաղաքի, կարծէր սոճուլ զՏայրենի թագաւորութիւնն, այլ շառ յանձն ծերակոյտն առաքել զնա ի քաղաք արքայութեան իւրոյ. քանզի հոռմայեցիք ընդ թագաւոր մանուկ առաւել կամէին:

Առ Աւապտոփըն Անտիոքաւ նոյն հալածումն ի վերայ Հրէիցն կայր՝, եւ Յուդա Մակարէ բազում անդամ նշան յաղթութեան կանգներ: Հերձուած լինէր ի թագաւորութեանն Ասորոց: Վեմեարիոս ի Հռոմ քաղաքէ պրծեալ ելանէր, ազգն հաճեալ հաւանէին ընդ նա, եւ մանուկն Անտիոքոս Վիւսիաս դայեկան հանդերձ սպանանէր: Այլ Հրէիցն առ Վեմեարեաւ նոյն վիշտք էին, որպէս առ առաջին թագաւորօքն. բայց եւ սա իրրեւ զառաջինն վառթարէր, զորավարք նորա ի կռուի ի պարտութիւն մասնէին ի Յուդայ Մակարեայ, եւ ձեռն անօրինին Վիկանովոյ՝ որ հպարտացեալ մեծարանէր բազում անգամ ի վերայ տաճարին, զտաճարէ կախեցաւ: Այլ իրրեւ սահաւ ինչ ժամանակ ի վե-

բայ անցանէր, և անկանէր Յուդայ ի խռանն, մինչ զևս անհնարին քաջութեամբ կռուէր: Աորին եղբայր Յովնաթէս կայր փոխանակ նորա, եւ զնոյն նահատակութիւն նահատակէր. եւ ի նեղ անկեալ չվհատէր: Իսկ հռոմայեցիք ուրախ լիեալ եթէ կարասցեն ցածուցանել զհպարտութիւն թագաւորացն Ասորեաց, ամբողջութիւն Հրէիցն լինէին, եւ բարեկամութեան դաշինս ընդ նոսա հաստատէին, վասն որոյ Յուդա հրէշտակազնաց լեալ խօսէր. բայց չեղին ինչ նոցա զօրաւիգն, այլ փառաւորութիւն միայն անուան հռոմայեցւոց մեծ իմն օգնականութիւն տառապեալ աղզին լինէր:

Ասորւոց ազմուկն օր ըստ օրէ յաճախէր: Օլջէքսանդրոս Բաղաս՝ որ պարծէրն եթէ Անտիոքայ Արեւելոյ որդի իցէ, ի բարձ թագաւորութեան անտիոքացիքն մատուցանէին: Իսկ եգիպտացւոց թագաւորք՝ որ հանապաղ Ասորւոց թշնամիք էին, յերկպառակութիւնս նոցա զանձինս խռնէին, թերեւս շահել ինչ անախ մարթացեն: Պողոմէոս Փիղոմեաովը՝ Բաղայ զօրաւիգն լինէր: Պատերազմ սաստիկ լինէր, Վեմետրիոս Սովաեր մեռանէր, եւ թողոյր միայն զերկոսին որդիսն իւր համօրէն մատաղս հասակաւ, զՎեմետրիւս Ախիանովը եւ զԱնտիոքոս սիդէացի, զի զվրէժ առցեն զիւրոյ մահուն: Աւ այնպէս նա՝ որ զթագաւորութիւն յափշտակեաց, հանգչէր, եւ տայր նմա թագաւորն եգիպտացւոց զըւստր իւր զԱլէքսանդրոս ի կնութեան: Իսկ Բաղաս, իբրեւ կարծէր՝ թէ չեք որ դիմակալ լինիցի նմա, այնուհետեւ յանպիտանութիւն հատանէր, եւ յամենեցուն հնազանդեցելոց յաշաց ելանէր:

Ի ժամանակին յայնմիկ Փիղոմեաովը՝ դատաստան ի մէջ շամբացւոց եւ Հրէից առնէր: Շամբացիքն՝ քանզի հանապաղ հակառակ կային Հրէիցն, երթային յարէին ի թշնամիս նոցա, եւ վասն ընդ միա մտանելոյ Անտիոքայ Արեւելոյ՝ որ Հրէիցն հալածիչն էր, զտաճարն իւրեանց ի Վարիզին՝ հիւրասէր որմզական գիցն վանատրի նուիրէին: Աւ յետ այնպիսի պղծութեանն,

ԵՄՔ ԼՈՌԳՄԵՑ

Է593. Ը600. Գ604. Դ604.

Ե587.

ԵԸՈՒԷԳ ԲԵՆ ԲՔՐՈՍՏՈՍ

Է161. Ը154. Գ150. Դ150.

Ե167.

ամբարշտակաւր յԱղէքսանդրիա, առաջի Պաղոմէի Փիղովետտոսայ պնդէին՝ թէ տաճարն նոցա քան վերուսաղէմացոցն աղուսաղոյն իցէ: Արիղքին կողմանքն վիճէին առաջի թագաւորին². եւ դաշինք ի միջե կռէին, անգրաթին ի բանից անախ Մովսիսի վերեանց հակառակութիւն հաւատարիմ առնել, ապա թէ ոչ՝ մեռանել: Հրեայք յաղթէին, եւ շամրտացիք մահու պատիժ ըստ բանիցն ընդունէին: Աոյն թագաւոր թոյլ տայր Ռնիայ՝ որ յազգէ քահանայութեան էր, յԱրեգ քաղաքի եղիպտացոց տաճար, զձեւ եւ զօրինակ երուսաղէմացոց տաճարին շինել³. զայն գործ խոտեր ծերակոյտ ժողովրդեանն Հրէից, եւ հակառակ օրինացն համարէր:

Օայնու ժամանակաւ կարբեղոնացիք խլաւէին, եւ գժկամակ լինէին ընդ բանն՝ զոր Աիկալիոն Ափրիկանոսն պատուիրեաց նոցա: Հռոմայեցիք խորհուրդ խորհեցան համօրէն քանդել զքաղաքն, եւ երրորդ պունիկական կռուին սկիզբն լինէր:

Մանուկն Վեմեսարիոս Վիկանովը՝ իբրեւ ի չափ հասանէր, կամէր նստել յաթոռ թագաւորութեան հարցն իւրոց. եւ առ ծուլութեան այնր՝ որ զարքայութիւն հարցն յափշտակեալ էր, ամենայն իմիք սին ունէր հասանել: Իբրեւ մօտ եկեալ հասանէր, խռովէր Բաղաս⁴. յայնմ ժամանակի եւ աներ նորա Փիղովետտովը հակառակ նորա դրդուէր, քանդի չեա նմա Բաղաս առնուլ վերկիր թագաւորութեան իւրոց. եւ Աղէպատոսայ կնոջ նորա՝ որ տիկնութեան տենչանայր, զնա թողեալ ամուսնացաւ ընդ թշնամեոյ նորա. եւ ապա՝ յեա ի կռուի ուրեմն ի պարտութիւն մատնելոյ, յիւրոց անախ սատակէր: Իբրեւ առուրք ինչ ի վերայ անցանէին, եւ Փիղովետտովը ի վիրացն՝ զոր ի կռուին առ, մեռանէր, Մսորոց աշխարհն այնու հետեւ յերկուց թշնամեաց զերծանէր:

Արիւլ քաղաքք մեծամեծք ի սմին ժամանակի կործանէին: Օվարբեղոն առնոյր եւ հրձիգ առնէր Աիկալիոն Ամիգիանոս՝ որ նովին յաղթութեամբն զԱփրիկանոս անուն յիւրում տանն հաստատէր, եւ ժառանգ արժանի Աիկալիոնի հաւուն իւրոյ երեւէր: Աոյն անցք եւ

ընդ Աորնթոս անցանէին, եւ նովին աքայեցոց ընկեր-
հաշտութիւն միանգամայն ի միջոյ բառնայր: Մուսիս
բղեշին ի հիմանց յասակէր զընչաւէա եւ զհոյակապ քա-
ղաքն քան զամենայն քաղաքն Յունաց: Աւ զչքնաղ
պատկերսն ածէր նա անտի ի Հոմ, թէպէա եւ զպա-
տիւն չդիտէր, քանզի Յունաց ճարտարութեան խամ եւ
անանդեակ էին հռոմայեցիք, եւ բաւական համարէին
զտեղեկութիւն ճարտարութեան պատերազմի եւ զքա-
ղաքի օրինաց եւ զվնակութեան:

Մինչ զեռ ժխոր եւ աղմուկ էր յատրեստան, Հը-
րեայք յամենայն հողմանց ամրանային. զՀոմնաթէս եր-
կոքին հողմանքն յիւրեանա առնուլ խնդրէին, եւ Աիկա-
նովը յեռ յաղթութեանն իրրեւ ընդ եղբօր զնայր ընդ
նմա: Աւ լինէր նմա վաղվաղակի ընդ այնր հատուցումն.
զի ի ժամանակի խռովութեան իրիք լինելոյ, Հըրեայք
առ հասարակ ի վերայ դիմէին եւ զնա յատրեստան ձե-
ռաց հանէին. եւ Հոմնաթէս մեծապատիւ մեծադարգեւ
մեծարէր: Այլ իրրեւ կարծէր թաղաւորն՝ եթէ այնու
հետեւ յամուր զգուշութեան է, միւսանգամ ի խոր-
հուրդս հարցն իւրոց շրջեցաւ, եւ Հըրեայք լլկէին եւ
չարչարէին իրրեւ զառաջինն:

Միւսանգամ խռովութիւնք յատրեստան յուզէին.
քանզի Վիտորուէս՝ որոյ անուն յորջորջանաց Տրիփոն կո-
չէր, սնուցանէր զմի ոք յորդուցն Ռաղայ՝ որում Ենտիո-
քոս թէոս անունն դնէր, եւ ի մանկութեան հասակին
ինքն զայեակ մտեալ ոստիկանութեամբ փայփայէր: Առ
հարստութեան Վեմեսրի՝ հակառակ յառնէին նմա ժո-
ղովուրդք, եւ ամենայն ատրեստան աղմկեալ էր. զայն
ժամանակ իւր պարսպոց դտեալ Հոմնաթէսնայ, ՚ միւս-
անգամ զզաշնան ընդ հռոմայեցիս նորոգէր: Աւ ամե-
նայն ինչ աջողէր ի ձեռս նորս, մինչեւ Տրիփոն ստեալ
բանկոյն, տայր հորուսանել զնա հանդերձ որդուփն:
Վորին եղբայր Հմաւոն, իմաստնաղոյն եւ երանելի
քան զամենայն մահարէացիսն, զնա փոխանակէր. եւ զօ-
րաւիզն լինէին նմա հռոմայեցիքն, որպէս այլոցն՝ որ յա-
ռաջ քան զնա եղեն: Իսկ Տրիփոն սաւր Ենտիոքայ սա-

նուն իւրում, որպէս եւ ստեացն Յովնաթանայ. եւ նա սպանանել զմանուկն ի ձեռն բժշկական ճարտարութեան, պատճառանօք որպէս թէ յախտէն՝ զոր քարն անուանեն, բուժել զնա կամիցին. եւ տիրեաց կողման միջ թագաւորութեանն: Շ մաւռն ի Վեմետրեայ Նիկանովրայ կողմէն ելանէր, որ օրինօք թագաւոր լիեալ էր. եւ իրրեւ զեւրոյ գաւառին սղատութիւն ի նմանէ առնոյր, ընդ Տրիփոնի՝ որ սպասամբեացն էր, ի դիմի հարկանէր, եւ ի վերայ սղատութեան աշխարհին կուռէր: Ասորիքն ի միջնաբերդէ անախ՝ ուր բնակէին յԱրուսաղէմ՝, եւ սպա յամենայն կողմանց հրէաստանի մերժեալք հալածական լինէին: Աւ այնպէս զերծեալ Հրէից ի լծոյ հեթանոսացրն ի ձեռն գործոց քաջութեան Շ մաւռնի, արքունական պատիւ նմա եւ ամենայն սղգատհմի նորա տային. եւ Վեմետրիոս Նիկանովր հաւանէր յանձն առնոյր զերան: Անդէն սկիզբն առնոյր Հրէից նոր թագաւորութիւնն, եւ ասամոնեանց իշխանութիւն՝ որ ընդ քահանայապետութեանն հանապաղ խառն էր:

Ի ժամանակին յայնմիկ Պարթեւք, յաղթութեամբքն Միթրիդատայ՝ որ ուժգնագոյն էր քան զամենայն Արշակունիան, բակորիացոց եւ Հնդկաց տիրեցին՝: Սինչ գեռ խաղայր գնայր Միթրիդատէս ի կողմանս Աւիրաա գետոյ, Վեմետրիոս Նիկանովր՝ կոչեցեալ յազգայն բնակելոց ի կողմանսն՝ զոր Միթրիդատէս նուաճեաց, ակն ունէր հնազանդել զՊարթեւս՝ զորս Ասորիքն սպասամբս յիւրեանց համարէին: Վեմետրիոս բազում նշան յաղթութեան կանդներ, եւ իրրեւ յասորեստան կամէր դառնալ զի զՏրիփոն ըմբռնիցէ, դարան գործեալ նմա միում ի զօրավարացն Միթրիդատայ, ի բուռն անկանէր, եւ ի գերութիւն ըմբռնէր ի Պարթեւաց: Ի Տրիփոնէ՝ որ յետ ըմբռնելոյ թագաւորին, յամուր զգուշութեան զանձն կարծէր, յանկարծակի իւրքն թօթափէին՝. քանզի չկարէին այնու հեռեւ ամբարտաւան մտացն տանել: Սինչ գեռ որ օրինօք թագաւոր էր նոցա Վեմետրիոս, ի բանդի էր, առ Աղէոպատրա կին նորա եւ առ որդիան նորա անկանէին. այլ հարկ էր այնու հեռեւ եւ զմի դք ոստիկան

յանձանձիչ որդւոց թագաւորին գտանել : Ըյս՝ Անտիոքայ սիդէացւոյ անկ էր , քանզի նա էր եղբայր Վեմեարի . եւ Աղէոպատրա ընդ ամենայն երկիր թագաւորութեանն զնա յայտ առնէր : Վարձեալ եւ առաւել իմն քան զնոյն գործ գործէր . Փրատէս եղբայր եւ պայազատ Սիթրիդատայ , զԱիկանովր թագաւորարար ունէր , եւ զզուսոր իւր զճողողունա տայր նմա կնութեան . իսկ Աղէոպատրայ չարակնեալ ընդ կինն , զի եհան ի նմանէ զայրն եւ զտիկնութիւնն , ընդ Անտիոքայ սիդէացւոյ ամուսնացաւ , եւ եդ ի մտի ամենայն անօրէնութեամբ թագաւորել : Անտիոքոս սիդէացի ի դիմի հարկանէր Տրիփոնի . եւ Շմաւոն եկն զօրաւիգն լինել նմա ի գործ պատերազմի՝ , եւ բռնաւորն պաշարեալ անդէն յիւրում վայրն արժանի ըստ գործոցն սատակէր : Անտիոքոս իբրեւ առ ըզթագաւորութիւնն , մոռացաւ վաղվադակի գերախօսան Շմաւոնի , զի զօրաւիգն եղեւ նմա կուռին , եւ ետ կուրուսանել զնա : Սինչ զեռ նա զամենայն զօրութիւն Ասորոց ի վերայ Հրէիցն դումարէր , Յովհաննէս Հիւրկանոս ուստր Շմաւոնի , զհօրն քահանայապետութիւն յաջորդէր , եւ ամենայն ժողովուրդն նմա հնազանդ լինէր : Եւ քաջութեամբ ժոյժ ունէր պաշարմանն յԱրուսաղէմ . եւ քանզի Անտիոքոս ի ճակատս ի վերայ Պարթեւաց կազմէր , զի զիւր եղբայրն որ ի գերութեան էր , ապրեցուցէ , դիւրութիւն առնէր դաշանց Հրէիցն :

Ի ժամանակի զի այս խաղաղութիւն հաստատէր , եւ առաւելուին մեծութեամբ յոյժ հռոմայեցիքն , սաստիկ թշնամիք յանհնարին բազմութենէ ծառայիցն ի վերայ նոցա յառնէին : Աւետս մի ոմն ի ծառայից անտի զճառայապատամբ պատերազմն ի Սիկիդիա յարոյց . եւ զի նուաճեսցեն զնոսա հռոմայեցիքն , զամենայն զօրութիւնս իւրեանց ի վերայ նոցա դումարէին :

Սակաւ ինչ յետոյ , Ատտաղեայ արքայի պերգամացւոց պայազատութիւն , բաժինս ի մէջ քաղաքացեացն արկանէր . քանզի կտակ դրեալ զազն Հոռոմոց իւր ժառանգ կացոյց : Վրակքեանց խռովութիւնք սկիզբն առնուին : Տիրերիոս Գրակքոս ռամկապետ , մի ոմն յա-

րանց պատուականաց շնորհքով քաղաքի, վասն խոսովութիւնս յուղելոյ, սատակէր. զի սպան զնա ծերակոյտն ի ձեռն Ահիպիոնեայ Նասիկայ, քանզի զայն իմն հնարս եգիտ խափանելոյ զբաշխել արծաթոյն՝ որ վնասակար իսկ էր, քանզի այնու զժողովուրդն ուղբէր: Ահիպիոն Ամիղիանոս զգնուորաց կրթելոյ հանդամանս նորոգէր. եւ սոյն այր՝ որ զԱարքեդոն կործանեաց, զնուամանտիանացոց քաղաքն ի Ապանիա քանդէր, որ հանդոյն Աարքեդոնի ահագին էր հռոմայեցոցն:

Իսկ Պարթևք առաջի Անտիոքայ սիգէացոյ տկարացեալ գտանէին. զի թէպէտ եւ Վասնհնարին շուայտութիւն եւ ի ծուլութիւն հատեալ էր զօրն՝ որ ընդ նման էր, այլ աջողէր գործն ի ձեռս նոցա: Յովհաննէս Վերկանոս՝ որ հանդերձ շրէիքն զհետ նորս գնացեալ էր, բազում արութիւն եւ քաջութիւն ի խառնուրդս ճակատուցն ցուցանէր. եւ տայր ակն ածել ի հրէական պաշտամանէն, յորժամ հանդարտէր զօրն, զի սրբեցնէ շրեայք զօր շարաթուս: Ամենայն ինչ աջողէր առաջի Անտիոքայ սիգէացոյ. եւ Փրասատէս տեսեալ թէ տէրութիւնն իւր յառաջին չափս իւր դարձաւ, չվհատէր ինչ, այլ կարծէր այնպէս թէ Վեմետրիաւ զօր ի բանտին ունէր, զիւր թաղաւորութեանն յարգարկոյ էւ գասորեստան նուաճեացէ: Յայնմ ժամանակի նորանշան իմն դէպք Վեմետրի գիպէին. զի մերթ արձակէր զնա անկրն իւր եւ մերթ արգելոյր, քանզի եւ մերթ ակն ունէր եւ մերթ կասկածէր. այլ ապա ուրեմն դայր հասանէր ի դէպ ժամանակ, զի կարծեալ Փրասատէս՝ եթէ չլք այլ ինչ հնարս գտանել, թէ ոչ զի նովաւ զԱսորիս խոտորեցուցանիցէ, արձակեաց զնա: Յայնժամ շրջեցաւ աջողութիւնն՝ զի Անտիոքոսն սիգէացի առ չժուժալ ծախից, անհնարին յափշտակութիւն գործէր, վասն որոյ յանկարծ համօրէն խուժանն ի վերայ յառնէր, եւ սատակէր նա հանդերձ գնդաւն՝ որ բազում անդամ բազում ճակատուց յաղթեաց: Փրասատէս հրաման տայր պնդել զհետ Վեմետրի, այլ յընդունայն ելանէր, քանզի չէր այնուհետեւ ժամանակ, զի Վեմետրիոս ի քաղաք թաղաւոր

բութեանն մտանէր : Եւ Աղէոպատրա կին նորա՝ որ թագաւորել եւ եթ կամէր, դառնայր առ նա վաղվազակի, եւ Հռոդոզունա մերժէր :

Իբրեւ ժամանակ իւր պարագոյ դտանէր Հիւրկանոս, զՍիւքէմ ի շամրասցւոց առնոյր, եւ ի Հիմանց զտաճարն ի Վարիզին կործանէր, որ կանխադոյն երկերիւր ամօք ի Սանաբաղատայ շինեցաւ : Եւ յետ աւերածի տաճարին, չգաղարէին շամրացիք ի լերինն զիւրեանց պաշտօնն պաշտել, եւ կային մնային թշնամացեալք արգքն երկօքեան : Ի գալ ամին միւսոյ՝ ամենայն եղունցեցիքն՝ որոց յաղթեալ Հիւրկանեայ խառնեաց ի թագաւորութիւնն Յուդայ, ընկալան զորէնսն Սոփսիսի Հանդերձ թլխատութեամբն : Իսկ Հռոմայեցիք Հանապաղ թիկունք օգնականութեան լինէին Հիւրկանեայ, եւ դարձուցանէին ի նա զքաղաքսն՝ զոր Եսորւոց Հանեալ էր ի նմանէ :

Եւ հպարտութեան եւ բռնութեան Վեմետրի Վիկանովայ⁶, չկայր բազում ժամանակս ի խաղաղութեան ասորեստան : Սապարճս դարձոյց յետս եկաց ժողովուրդն յապստամբութիւն : Եւ եղիպտացիքն թշնամիք նոցա, ետուն նոցա թագաւոր զԵղէքսանդրոս Գարինասս զՎաղայ որդի, զի մի վախճան ապստամբութեան լինիցի : Վեմետրիոս հարկանէր, եւ Աղէոպատրայ կարծեալ՝ թէ առաւել համարձակութեամբ առ որդւովքն քան առ արամբն թագաւորիցէ, սպան զնա : Մոյնպէս եւ զորդի իւր զանդրանիկ զՍեղեւկոս՝ որ յակամայ նորա թագաւորելն կամէր, խոր դործեալ նենդանաւ սպանանէր : Իսկ երկրորդ որդի նորա Ենտիդոս⁷ որ Վախապոսն կոչէր, զապստամբսն վանեալ դառնայր յաղթութեամբ ի ճակատուէ : Եւ Յայնժամ Աղէոպատրա, իբրեւ մեծարանս առնելով՝ տաշտ զեղով Հանդերձ մատուցանէր նմա, եւ նորա զգաստ լեալ վասն սատակիչ խորհրդոյն, նմին իսկ տայր արբուցանել : Աղէոպատրա ի մեռանել իւրում բաժինս եւ խռովութիւնս ի մէջ որդւոցն իւրոց թողոյր, զորս յերկուց եղբարցն ծնաւ, ի Վեմետրեայ Վիկա-

ԵՄՔ ՀՈՌԳՄԵՑ

625. 626. 629. 630.
633.

ՅԵՌՈՒՅ. ՔԵՆ ՔՐԻՍՏՈՍ

129. 128. 125. 124.
121.

նովրայ եւ Մնտիրայ սիդէացւոյ: ⁵Յայն աղմուկ ըմբռնեալ Ասորոց, Հրէից ինչ չկարէին մնասել: Յովհաննէս Հիւրկանոս, զԸ ամբին սունոյր, այլ զչամբտացիս չկարէր դարձուցանել: Յեա Հինգ ամաց մեռանէր. եւ Հրէաստան ի խաղաղութեան էր առ երկուք որդւովք նորա Արիստարուղաւ ⁶ եւ Աղէքսանդրիւ Յաննեաւ ⁷, որ մի ըստ միովէ կարգաւ բարձառուք լինէին եւ յԱսորոց թագաւորաց չնեղէին:

Հռոմայեցիք Ասորոց թագաւորութեանն թողութիւն անձամբ յանձնէ քակել, եւ ինքեանք ընդ արեւմտից կողմն արշաւէին: Մինչ դեռ Վեմետրիոս Վիկանովր եւ Չարինաս ի մարտ պատերազմի ընդ միմեանս բախէին ⁸, նոքա յայն կողմն Աղաից լեռանցն պարզեալ անցանէին ⁹, եւ Սեքստիոս, դադատացւոց՝ որք սաղեացիքն կոչէին, յաղթեալ, գաղթականս յԱչքս քաղաքի բնակեցուցանէր, որք եւ այժմ ի նորա անուն կից անուանին: Վաղատացիք պատերազմաց զդէմ չկարէին ունել: Փարիոս՝ զԱղորրուէսն եւ զամենայն արուարձականն հնազանդեաց ¹⁰. եւ ի նմին ամի յորում Վալուպոս զդեղն՝ զոր նմա մօրն պատրաստեալ էր, նմին իսկ ետ արբուցանել ¹¹, նարբոնական աշխարհն դադատացւոց իբրեւ զմի ի գաւառացն Հռոմոնց լինէր: Աւ այնպէս Հռոմոնց տէրութիւն մեծանայր, եւ առ սակաւ սակաւ ամենայն իսկ ծովու եւ ցամաքի շահեալ տիրէր: Այլ որչափ արտաքոյ յաղթութեամբն դեղեցիկ կերպարանք երեւէին ընկերահաշտութեանն, նոյնչափ եղծեալ եւ խանդարեալ էին կարգք վասն քաղաքացեացն անկարգութեան եւ ցանկութեան փառաւորութեանն, եւ վասն ընտանի պատերազմացն: Որ երեւելիքն էին ի նոսա, աւելի մնասիչք հասարակաց իրաց լինէին: Արկու Վրակքոսքն, զողոքսն եւ եթ բարբառելով ժողովրդեան, արկին բաժինս՝ որ ընկերահաշտութեամբն հանդերձ վախճանեցան: Վայիոս եղբայր Տիրերեայ, սրամտեալ ընդ դժնդակ մահ եղբօրն, եւ որպէս կարծենն ի Տիրերեայ ստուերէ զբղեալ բորբոքէր վեժժ առնուլ, եւ զամենայն քաղաքացիսն վառեալս ընդ մի-

ՆՈՐ ՀՈՌԱՅԵ

⁶645. ⁶650. ⁷651. ⁷629.
⁸630. ⁹631. ⁶633.

ՅԵՐԵՄ. ՊԵՆ ՔՐԻՍՏՈՍ

⁶109. ⁶104. ⁷103. ⁷125.
⁶124. ⁶123. ⁶121.

մեանս արկանէր, եւ իբրեւ զընաւ վեր ի վայր հարեալ եղծանել կամէր, եւ ինքն զնոյն մահ զորոյ զվեժ կամէր խնդրել, մեռանէր:

Վանայն ինչ ի Հոռոմ արծաթով վճարէր: Յուզուրթաս^Ե արքայ նու միդացւոց, զեղբարսն՝ որոց հոռոմայեցիք թիկունք օգնականութեան լինէին, կոտորէր. եւ բազում ժամանակս չանկանէր ի բուռն, ոչ զի պատերազմաւ ինչ ի դիմի հարկանէր, այլ զի առատացեալ պարզեւս բաշխէր: Եւ Մարիոս^Մ որ յաղթեացն իսկ նմա, ի զօրավարութիւն չկարաց հասանել մինչ չեւ էր զժողովուրդն ի կռիւ ընդ ազնուականաց զբռնեալ:

Միւսանդամ ի Արկիղեա ծառայապատամբ պատերազմն յառնէր^Ն, եւ իբրեւ զառաջինն, ոչ սակաւք ի հոռոմայեցւոց կոտորէին: Մարիոս զՏեւտոնս^Տ եւ զկիմբրացիս վանեաց, եւ զայլ եւս ազգս հիւսիսոյ՝ որ ի դադատացւոց աշխարհին եւ ի Ապանիա եւ յատաղեա խողային: Յաղթութիւնքն^Ս զոր յաղթեաց նա ազգացն, պատճառք լինէին միւսանդամ վայրաց եւ սահմանաց բաժինս կարգելոյ: Մեռեղղոս^Մ որ այնմ գիմնդարձն լինէր, ի հարկէ այնու հետեւ հաւանէր^Վ, եւ երկպառակութիւնք չցածնուին մինչեւ զՄատոռնինոս ռամկապեա սատակէին:

Մինչ զեռ հոռոմայեցիք Գամրայ^Գ թիկունք օգնականութեան լինէին, հակառակ Միթրիդատայ արքայի պոնտացւոց, եւ այնպիսի մեծ թշնամի չհանդարտէր կալստաջի Հոռոմոց զօրութեանն, հանդերձ Յունաց աշխարհաւն, քանզի եւ Յոյնք ի նորա բանի էին. յայնժամ խաղաղցիք՝ որ ի մարտ պատերազմի վարժեալք եւ կրթեալք էին, վասն բազում անգամ ընդդէմ հոռոմայեցւոց, կամ հոռոմայեցւոյք հանդերձ ձախառ տալոյ, ^Պառհասարակ ապատամբեալք զՀոռոմոց ակրութիւն ի սազնապի կացուցանէին: Հոռոմայեցիք միանդամայն խոռովեցան վասն Մարեայ^Մ եւ Աիւղայ մոլեկան կատաղութեանն. յորոց մին զհարաւ եւ զհիւսիսի սարսեալ էր, եւ մեւնն Յունաց եւ ասիացւոց յաղթեալ: Աիւղայ^Պ

ԸՄՔ ՀՈՌՈՄԵՅ

ՅԵՈՒՄ. ԲԵՆ ԲԱՐՄՈՍՈՍ

Դ635, 641. Դ648. Դ651. Դ652.

Դ654. Դ660. Դ666. Դ668. Դ663.

Դ666 եւ որ ի կարգին. Դ672.

Դ106. Դ103. Դ102.

Դ110. Դ94. Դ88. Դ86. Դ91.

Դ82.

զոր երանելին կոչէին, արդարեւ եղև խոյ երանելի, սահայն հակառակ հայրենի աշխարհին, զոր յորժամ զիկատորն էր, բռնացեալ ի հարկի կացուցանէր: «Թէպէտ եւ կամաւ զպլուսորութեան իշխանութիւն եթող, այլ զոր ընդ նա հայեցեալ այլքն դարձեցին, զայն չկարաց խափանել. քանզի ամենեքին այնու հետեւ տիրել յօժարէին:

Արտորիոս՝ որ ընդ Մարեայ էր, ի Սպանիա երթեալ ամրանայր՝, եւ ի Միթրիդատէս բարեկամեալ յարէր: Ընդունայն էր այնու հետեւ այնպիսի մեծի զօրավարի զօրք ի դիմի հարկանել. զի եւ Պոմպէոս չկարաց նուաճել, թէ ոչ զնոսս՝ որ ընդ նմայն միարանեալ էին, ի միմեանց քակեաց՝:

Ամենեքին անդ յիշխանութեան ցանկութիւն մտարերէին, մինչև Վապարտակոս անդամ՝ որ ի մենամարտիկ ուղորեցցն էր, ի նոյն ցանկացաւ: Այս Վապարտակոս ծառայ զոստիկանան եւ զհիպատոս տառապեցոյց՝, որպէս Միթրիդատէսն զՂուկուղղոս: Սաստիկանայր պատերազմն մենամարտիկ կուեւրոցն, մինչև սարսել Հոռոմոց տերութեանն: Արասոս չէր ատակայնու հետեւ ինքնին զպատերազմն ի դուխ հանել. եւ զՊոմպէոս հարկ լինէր ի վերայ նոցա առաքել:

Ղուկուղղոս յարեւելս զօրանայր: Հոռոմայեցիք ըստ Ալաճանի դետ անցանէին՝, այլ ինքն զօրավարն նոցա՝ որում թշնամիք չէին ձեռնհաս յաղթել, զիւր զօրականն չկարէր ունել յակաստանի: Միթրիդատէս՝ որ բազում անդամ վանեալ եւ չվհատէր, միւսանդամ պատըսպարէր. եւ թուէր իմն՝ թէ Պոմպէի աջողութեան պէտք իցեն առ զրաւ առնելոյ պատերազմին: Սա յեա զհէնս ի ծովէ հալածական առնելոյ՝, որ յասորեստանէ մինչև ց՛ւերակղի արձանսն ի ծովու դարանեալ նստէին, ի վերայ Միթրիդատայ առաքեցաւ: Յայնժամ փառք նորա ի բուն կատար հասանէին: Այկեալ զհզօր թաղաւորն նուաճէր՝, հնադանդէր զչայոց աշխարհ, ուր ապաստանեալն էր, եւ զՎէրս եւ զՂուանս՝ որ նմա թիկունք

ՐՄՐ ՀՌԹՎՄԾԾ

ՅԵԹԷՄ. ԿԵՆ ՔՐԻՍՏՈՍ

675. 680. 681. 683.

79. 74. 73. 71.

686. 687. 689.

68. 67. 65.

լինէին, եւ զասորեստան՝ որ երկպառակեալ էր ի խոռ-
 փութեանց անտի իւրոց, եւ ՚զհրէաստան՝ ուր վասն ասա-
 մոնեանց երկպառակութեանն, իշխանութիւն Հիւրկա-
 նեայ Բ ըրորդի, որգւոյ Աղէքսանդրի Յաննեայ, ամենեւին
 նուազեաց, եւ զամենայն իսկ զարեւելս. այլ չգոյր նմա
 տեղի՝ ուր զայնչափ թշնամիս ձաղիցէ, թէ Աիկերոն
 բգեշխ չէր ի միջն, որ զքաղաքն ի դաւոյն ապրեցուցանէր,
 զի Աատիղինա եւ ընդ նմա արք երեւելիք հռոմայեցիք
 ի նենգութիւն պատրաստէին: Օսոսա զմիաբանեալս
 ընդ միմեանս, առաւել Աիկերոն ճարտարխօսութեամբ կոր-
 ծանեաց, քան Աայիոս Ենտոնիոս նորին ընկեր զինու:

Եւ այնու Հռոմոց ազգին ազատութիւն չլինէր
 ինչ առանց կասկածանաց: Պոմպէոս իշխէր ի ծերակու-
 տին. եւ մեծ անուն նորա ամենայն ընտրոյ զնա տէր
 առնէր: Յուղիոս Այսար զզաղատացիս հնազանդեալ՝,
 մեծ իմն շահ իւրում աշխարհին շնորհէր, որպիսի չեւ
 էր լեալ: Եւ վասն այնպիսի գործոյ քաջութեան ի
 քաղաքին զիւր իշխանութիւն հաստատէր: Կախ Պոմ-
 պէի հաւասարել յօժարէր, եւ ապա ամենեւին իսկ ան-
 ցուցանել:

Արասոս յանհնարին ընչաւետութիւն ապաստանեալ,
 կարծեաց զանձնէ՝ թէ մարթիցի առնել իւր անուն քա-
 ջութեան, ըստ օրինակի երկուց արանցն աւագաց, որ-
 պէս ճոխութեանն նոցա հաղորդ էր: Չեռն ի գործ ար-
 կանէր յանդգնել ի մարտ պատերազմի՞ ընդ Պարթեւաց
 բախել, որ առ եղեռանէ իւր եւ հայրենի աշխարհին
 եղեւ: Երշակունիք յաղթէին՞, եւ հռոմայեցւոց ոսն-
 հար լինէին, զամբարտաւանութիւն նոցա ծաղր առնելով,
 եւ զանյաղ ազահութիւն զօրավարի նոցա դարովէին:

Եւ ի Արասոսի պարտութեանն՝ քան զտօթն հռո-
 մայեցւոց այն իսկ գժնդակադոյն էր, զի Արասոսի իշխա-
 նութիւնն իբրեւ ի հասարակակշիռ կշիռս ունէր զիշխա-
 նութիւն Պոմպէի եւ Այսար՝ զորս նա իբրեւ յակամայ
 կամն նոցա ընդ միմեանս միաբանէր: Իսկ յեա Արասոսի
 մեռանելոյ՞, այն՝ որ ունէրն զնոսա յակաստանի, բար-

ԵՄՔ ՀՈՌՊՄԵՑ

691. 696 եւ որ ի կարգին.
 700. 701. 705.

ՅԵՈՒՆՔ ԲԵՆ ՔՐԻՍՏՈՍ

63. 58 եւ որ ի կարգին.
 54. 53. 49.

ձաւ ի միջոյ: Արկղքին վերագքն՝ որ զամենայն զօրս զօրութեան աշխարհին ընդ իւրեանց ձեռամբ ունէին, ընդ միմեանս դրդուեալ՝ խառնուրդք ճակատուց ի Փարսաղիա լինէին, անդ բազում վերաւորք անկանէին՝, ուր եւ Աայսեր յաղթեալ պատերազմին, ի միում վայրկեան ժամանակի ընդ ամենայն համօրէն աշխարհս երեւէր, յաշխարհն եգիպտացւոց, եւ ասիացւոց՝, եւ մովրիտանացւոց՝, եւ սպանիացւոց՝. եւ ամենայն կողմանցն յաղթեալ, ի Հռոմ՝ եւ յամենայն տէրութեան Հռոմոց տէր ճանաչէր: Բրուտոս եւ Աասիոս զիւրեանց քաղաքացիս կարծեցին յազատութիւն հանել սպանեալ զնա՝ իւրրեւ զըզնակալ զօք, թէպէտ եւ դթած իսկ էր:

Հռոմ միւսանգամ անկանէր ի ձեռս Մարկոսի Անտոնինոսի, եւ Վեպիդեայ, եւ Աայսեր Ռքտաւիանոսի մանկան՝ որ էր թոռն քեռ Յուղեայ Աայսեր, եւ յորդեգիրս իսկ առեալ ի նմանէ: Օայս երկց անադորոյն բռնակալաց զիշխելն, եւ զտարագիր զմարդիկ առնել, եւ այժմ՝ որ թէ ընթեռնուցու, դողումն ունի: Այլ քանզի սաստիկ էին, վասն այնորիկ իսկ չտեւէին բազում ժամանակս: Սորա երեքին բաժանէին զտէրութիւնն յիւրեանս: Աայսր առնոյր զՎատղիա, եւ վաղվաղակի զառաջին անադորոյն միտան ի քաղցրութիւն եւ ի մարդասիրութիւն դարձուցեալ, կարծեցուցանէր այնպէս՝ թէ յրնկերացն դրդելոյ եկն յայնպիսի անադորոյն խստութիւն: Իսկ այլք՝ որք ցանկային ընկերհաշտութեան, ընդ Բրուտեայ եւ ընդ Աասեայ կորնէին: Անտոնինոս եւ Աայսր յետ զՎեպիդոս կործանելոյ, ինքեանք ընդ միմեանս անկանէին: Եւ ամենայն զօրութիւն հռոմայեցւոց ի վերայ ծովու արշաւէր:

Աայսր՝ Ակտեայ պատերազմին յաղթէր՝. զօրն եգիպտացւոց եւ արեւելից՝ զոր Անտոնինոս ընդ իւր դուամարեալ ածէր, ցրուէին. եւ ամենայն բարեկամք նորա մեկնէին ի նմանէ, եւ ինքն իսկ Աղէոպատրա՝ առ որոյ ցանկութեան ի վսեր եկեալ յանդգնէր: Հերովզէս եզովմայեցի՝

ԵՄՔ ՀՌՈՂՄԵՅ				ԵՇՈՒԷՉ ԲԵՆ ԲԱՐՐՈՍՈՍ			
706.	707.	708.	709.	48.	47.	46.	45.
710.	711.	712.	718.	44.	43.	42.	36.
	722.	723.			32.	31.	

որ Մնտոնինեայ ունէր զինչ ունէրն, ի հարկէ ականաց կամօք այնմ՝ որ յաղթեացն, անձնատուր լինէր¹։ Եւ այնպէս թաղաւորէր ի հրէաստանի իրրեւ զառաջինն, ի ժամանակին՝ յորում բարձեալ էր թաղաւորութիւն յասամնեանց, քանզի եւ Հիւրկանոս լքեալ էր եւ Տերացեալ : Ըմենայն ինչ առաջի Այսեր յաջողէր . նմա Աղէքսանդրիա զգրունն բանայր, զԱզխարտոս ընդ նահանգաւ առնէր, իսկ Աղէոսատրա՝ իրրեւ չունէր ակն պահելոյ զաշխարհն, յետ Մնտոնինեայ անձին արարեալ մեռանէր : Հոտմ գիրիս արկանէր եւ ընդունէր զԱյսոր² որ եւ Աւդոստոս յորջորջեցաւ եւ ինքնակալ կոչեցաւ . եւ ամենայն տէրութեան Հոռոմոց իշխան եւ հրամանատար եղեւ : Ըռ պիւրենական լերամբնն³ զկանտարրացիս եւ զաստուրիացիս ապստամբեալ՝ հնազանդէր . եթւոսպայիք աղօթկեարս արձակեալ ի հաշտութիւն խօսէին⁴ . Պարթեւք զահի հարեալ զգրօշնն՝ զոր ի Արասեայ կռուին առին, ⁵ հանդերձ ամենայն հռոմայեցոսպք՝ որ ի պահեստի կային առ նոսա, դարձուցանէին : Հնդիկք հրեշտակաբնաց արարեալ բարեկամութեան դաշնս ի նմանէ խնդրէին⁶ . հայեցեալ ի սաստիութիւն զինուորա ի միտ առին հռետացիք կամ գրիսոնացիք⁷ եթէ լերինքն իւրեանց չկարեն ապրեցուցանել զնոսա . Պանոնիա հնազանդեաց նմա . Վերմանիա սարսեաց ի նմանէ, եւ ⁸ Վիսուրգիս եկաց ի հարկի ծառայութեան նորա : Ի Տովու եւ ի ցամաքի յաղթեալ, ⁹ զՅաննեայ մահեանն ազխեալ փակէր : Ըմենայն տիեզերք խաղաղանային ընդ իշխանութեամբ նորա, եւ ¹⁰ Վրխտոս դայր յաշխարհս :

ԸՄՐ ԱՌՈՎՄԵՑ

Ե724. Ե727. Ե730. Ե732.

Ե734. Ե739. Ե742. Ե747.

Ե753. Ե754.

ՅԵՌՈՒՅ ԴԵՆ ԶՐԲՐՍՏՈՍ

Ե30. Ե27. Ե24. Ե22.

Ե20. Ե15. Ե12. Ե7.

1) Լ. Ս. Ս. Գ. 2 : 3304. Ս. Հնա. Գիրք Ժ. 7 : 2) Եղն. Լնդ. Գիրք Ժ. Գ. 4Լ. 6 : 3) Եղն. Լնդ :

Ժ Ե Մ Ե Ն Ե Կ Ժ

Մ Ն Ա Ի Ն Ե Դ Ն Ք Ր Ր Ս Ո Ս Ի

Ե Ի Թ Ն Ե Ի Ր Ո Ր Դ Ի Ե Ի Յ Ե Տ Ի Ն Դ Ե Բ Ե Ե Լ Ե Բ Լ Ի

Լ (Ր) եկաք հասար ի Մեսիայի գալստեան ժամանակն, որոց ցանկային հարքն մեր: Մեսիա՝ Վրիստոս կամ օծեալ Տեառն յայտ առնէ. եւ այս անուն յիրաւի է Յիսուսի, զի քահանայապետ եւ թագաւոր եւ մարդարէ է:

Իսկ եթէ ի քաներորդում ամի եկն, երկբանութիւն է, եւ ամենեքին միարանին՝ եթէ ճշմարիտ ծնունդքն ամօք ինչ քան զհասարակաց ժամանակադրութիւնն կանխեալ պատահէ. այլ մեք ընդ այլոցն ամենեցուն զհասարակաց ժամանակադրութեան զհետ զնայցեմք զի առաւել դիւրին լինիցի: Աչ ինչ այսու հետեւ ճշգիւ վասն ամի ծննդեան Տեառն մերոյ վիճեցուք, շատ այնչափ է թէ դիտասցուք զի մօտ ի չորեքհազարերորդ ամն աշխարհի ծնունդն եղև: Ամանք սակաւ ինչ կանխադոյն գնեն, եւ այլք՝ փոքր ինչ յետոյ, իսկ կէսք ի նմին իսկ տարւոջ. իսկ այլ եւ այլն ասել բազմաց անտի է, զի ոչ ծննդեան Տեառն մերոյ ժամանակն ստոյգ է, եւ ոչ հաւատեալ յայտ ամք աշխարհիս: Երբ որպիսի ինչ եւ կարծիցի, սակայն մօտ ի սոյն ժամանակս, հազար ամօք յետոյ քան զնաւակատիս տաճարին, եւ յեւթնհարիւրորդ յիսներորդ չորրորդ ամ շինուածոյ Հռոմ քաղաքի, Յիսուս Վրիստոս որդի Աստուծոյ մշանջնաւորութեամբ, որդի Երրահամու եւ Վաւթայ ի ժամանակի, ի կուսէ միոջէ ծնաւ: Քան զամենայն ժամանակն այս ժամանակ երեւելի է, ոչ միայն զի այնպիսի մեծ ինչ յայնժամ դիպեցաւ, այլ զի եւ քրիստոնեայք ի բազում ազգաց հետէ անտի սկսանին զեւրեանց տարիսն համարել: Վարձեալ եւ այնու եւս նշանաւոր է, զի կից ընթանայ ընդ ժամանակին՝ յորում Եւզոստոս միախումբ կալաւ զհոռմայեցւոց հարստութիւնն:

Յաւուրս Եւզոստեայ ամենայն արուեստք պայծառանային. եւ զարուեստ ճարտարութեան պետեկց ի

րուն իսկ կատարումն հասուցանէին Վերդիղիոս եւ Ռբաւիոս՝ զորս թագաւորն ոչ միայն պարզեօք իւրովք յօժարեցուցանէր, այլ եւ համարձակեցուցանելով նոցա առ ինքն մատչել :

Յետ Վրիստոսի ծնանելոյ Հերովդէս մեռանէր :
 Եթագաւորութիւն նորա յորդիան բաժանէր. եւ մեծ մասն հռոմայեցոց բաժին ելանէր : Եւզոստոս բազմապատիկ փառաւորութեամբ թագաւորեալ ի կենաց վախճանէր :

Տիրերիոս՝ զոր յորդեղիբս իսկ առեալ էր, զնա փոխանակէր՝, եւ չլինէր զբ զիմադարձ. եւ տէրութիւնն այնու հետեւ ժառանգութիւն ի տան կայսերացն լինէր : Ար ի Հռոմն էին, բաղում վշտաց տանէին վասն Տիրերի անաղորոյն խստութեանն. իսկ այլ եւս քաղաքք տէրութեանն խաղաղացեալ հանդէէին : Վերմանիկոս եղբօրորդի Տիրերեայ երթեալ զապստամբսն ցածուցանէր, զտէրութիւնն չառնոյր յանձն, ՚ զԱքմինիոս զզազանաբարոյն հարկանէր, ՚ եւ մինչեւ ցԱղբիս դեռ հասեալ տիրէր. եւ իրրեւ ամենայն ժողովրդեանն դութ ընդ նա անկանէր, նախանձեալ հօր եղբօրն իւրոյ՝ տայր սպանանել զնա՝ կամ տրամութեամբք կամ զեղովք :

Ի հնգետասաներորդում ամի Տիրերեայ կայսեր, ՚ Յովհաննէս մկրտիչ երեւէր. զայր Յիսուս կնիք առնուլ յաստուածեղէն կարապետէն՝, Հայրն յաւիտեան կան անդուստ ի վերուստ բարբառ արձակեալ վկայէր՝ եթէ Վա է որդի իմ սիրելի, սուրբ Հօգին ի կերպարանս հաշտութեան աղանոյ ի վերայ կենարարին իջանէր, եւ Երրորդութիւն յայտնէր : Յայնժամ քարոզութիւնն Վրիստոսի սկիզբն առնոյր հանդերձ եւթանասներորդ եւթներորդօքն Վանիէղի : Եյս յետին եւթներորդս քան զամենայն եւթներորդան երեւելի եւ յայտնադոյն է : Վանիէղ յայլոցն զատանէ զնա, զի ի նմին հաստատելոց էր ուխտն, եւ յրնդմիջել նորա զԵջք հնոց կաւկարանացն խափանելոց էին՝ : Եւթներորդս խորհրդոց մարթեմք կոչել զնա. զի ի ամին Վրիստոս զառաքումնն իւր եւ զուսումն վարդապետութեան իւրոյ ի ձեռն ան-

համար սքանչելեացն, եւ սպա մահուամբն հաւատարիմ արար: Մեռաւ նա ի չորրորդում ամի պաշտամանն իւրոյ⁵, որ ամ չորրորդ էր վերջին եւթներորդացն Վանիէղի. եւ այնպէս մեծ եւթներորդս նորա մահուամբն ընդ մէջ հատաւ:

Արդ այսպէս զթիւ եւթներորդացն դիւրին է գումարել, մանաւանդ թէ եւ գումարեալ իսկ իցէ. շատ է միայն ի չորեքհարեւր յիսուն եւ երեք ամնն՝ որ յերեքհարեւր ամաց հեռէ շինուածոյ Հոմ քաղաքի, եւ ի քսաներորդ ամէն Արտաշեսի մինչեւ ցհասարակաց ժամանակադրութիւնն ժողովին, յաւելուլ զերեսուն ամն ժամանակադրութեանս՝ որ ի գլուխ ելանէ ի հալետասներորդում ամի Տիրերեայ, եւ ի մկրտութեան Տեառն մերոյ. եւ միահամուռ գումարին չորեքարեւր ութսուն եւ երեք ամք: Յեւթն ամաց անտի՛ որով չորեքհարեւր իննսուն թիւն կատարիցի, ի չորրորդումն՝ որ միջին իսկ է, Յիսուս մեռաւ. եւ ամենայն ինչ՝ զոր Վանիէղի մարդարեացեալ էր, յայտնապէս իսկ փակեալ կան ի չափս ժամանակաց՝ զոր ինքնին սահմանեաց: Չէին ինչ այնչափ հաւաստեաց պէտք, եւ չէր իսկ ինչ որ տաղնապիցե ճշդիւ զմիջին ժամանակն՝ զոր Վանիէղ յայտ առնէ, դասնել, զի եւ որ հաւաստեաւ քննիչքն իցեն, բաւական համարին ի մէջ երկուց կողմանցն ուրեք զժամանակն դասնել. եւ զայս յայն սակս ասացի՛ զի մի, որ իրաւունս համարիցին սակաւ ինչ երիցադոյն կամ կրտսերադոյն զսկիզբըն թաղաւորութեան Արտաշեսի կամ զմահ Տեառն մերոյ դնել, տաղնապեսցին վասն իւրեանց համարոյն. եւ որք լըբել ժտել եւ զյայտնի իրս ժամանակադրութեան խարեութեամբ արդելուլ յոժարեն, յանօգուտ եւ ի դատարկ քննութենէ զերծանիցին:

Խաւարն՝ որ զամենայն երեսս երկրի ի միջօրեայ ժամանակի ծածկեաց, յորժամ ել ի խաչ Յիսուս², հեթանոսացն մատենագրաց՝ որ նշանաւոր իրացն այնմիկ միտ եղին³, արեղական նուազութիւն կարծեցաւ: Այլ առաջինք ի քրիստոնէիցն՝ որ հոռմայեցւոց առաջին զերացն ճառեն, իրբեւ զսքանչելեաց ինչ՝ որ ոչ

միայն յիւրեանց մատենադրացն դրեալ իցեն, այլ եւ ի մատենա զիւանացն զրոշմեալ, յայա առնեն՝ թէ ոչ ի ժամանակի լուսնի ինչոյն յորում Վարխատոսն մեռաւ, եւ ոչ յողջոյն իսկ ամին՝ յորում այսպիսի նուազութիւն երեւեցաւ, մարթ էր արեգական նուազել, թէ ոչ ի վեր քան զընութեան օրէնս ինչ գիպէր: Առնիմք զբանս Փղէզէոնի ազատելոյ յԱդրիանոսէ, որ ի մէջ բերեալ են յայնպիսում ժամանակի՝ յորում զգիրսն նորա ամենեքին առ իւրեանս ունէին. ունիմք եւ զատրական պատմութիւնս Թաղեայ՝ որ զՓղէզէոնի զհետ գնաց. եւ ի չորրորդում ամի՝ երկերիւրորդ երկրորդ ողոմպիազին, որ ի Փղէզէոնի մատենին նշանակի, Տէրն մեր մեռաւ:

Իսկ Յիսուս՝ զի զխորհուրդսն կատարիցէ, յարուցեալ ի գերեզմանէ, յերիր առուր իւրոց սեպհականաց աշակերտացն երեւէր, եւ առաջի նոցա յերկինս վերանայր. զհոգին սուրբ առաքէր նոցա. եկեղեցի հաստատէր, հալածումն սկիզբն առնոյր. Ստեփանոս քարկոծ լինէր, եւ Պապղոս դառնայր:

Յետ սակաւ ինչ միոյ, Տիրերիոս մեռանէր: Սաղեպուղա թոռն նորին եղբօրն, որ յորգեղիւս էր նմա եւ պայազաա, յիմարութեամբ եւ անազորոյն մտօք զախեղերս զարմացուցանէր. հանգոյն զից պատիւ առնոյր, եւ հրաման տայր յերուսաղէմացւոց տաճարին զիւր պատկեր կանգնել. Վերէաս զաշխարհս յայնպիսի դազանէ գերծուցանէր:

Սղաւդիոս ըստ նմանէ թագաւորէր⁷, թէպէտ եւ մտօքն տխմար էր: Ի Սասիղինայ յիւրմէ կնոջէ անարգէր⁸, եւ յետ սպանանելոյ զկինն, խնդրէր զնա: Սիւսանդամ զԱդրիպինա դուստր Վերմանիկոսի⁹ կին արար:

Ժողովեցան առաքեալքն¹⁰ յԱրուսաղէմ¹¹ եւ յարուցեալ ի միջի նոցա Պետրոս նախ բարբառէր, որպէս եւ ամենայն ուրեք արար: Որ ի հեթանոսացն դարձեալ էին, ազատեցան ի լծոյ օրինացն: Եւ ազատութեան վճիռն յանուն Հոգւոյն սրբոյ եւ Եկեղեցւոյն տուաւ: Պապղոս եւ Բառնարաս տանէին զհրամանս ժողովոյն եկեղեցեացն¹², եւ ուսուցանէին հաւատացելոցն հնազանդ

լինել հրամանացն: Աւ առաջին ժողովն զայս ձեւ օրինակի կատարէր:

Իսկ թագաւորն անմիա զՎերիտանիկոս զեւրարոյն որդի ի ժառանգութենէ մերժէր, եւ զՆերոն ուսար Ագրիպինայ յորդեգիրս առնոյր: Ագրիպինա փոխանակ երախտեացն՝ զայրն զիրահաւան զեղովք սպանանէր. այլ իւրոյ որդւոյն տիրել, որպէս ամենայն քաղաքացեացն, նոյնպէս եւ նմին իսկ մօրն փնասակար լինէր: Այն միայն եղև փառք թագաւորութեան նորա՝ զի Աորբուղոն ի վերայ Պարթեւաց եւ Հայոց՝ նշան յաղթութեան կանգնեաց:

Ի նմին ժամանակի՝ Ներոն սկիզբն առնէր ընդ Հրէից կռուելոյ՝ եւ զքրիստոնեայս հալածելոյ: Այս առաջին թագաւոր է՝ որ զեկեղեցի հալածեաց: Օգտարոս եւ զՊաւղոս ի Հռոմ քաղաքի՝ սպանանէր: Այլ քանպէ զընաւ իսկ զմարդկութիւնս միանգամայն հալածէր,՝ յամենայն կողմանց ապստամբեցին ի նմանէ. իբրևս զիտաց՝ թէ Տերակոյտն զնա մահու պարտաւոր արար, զիւր սուր հանեալ անձին առնէր: Իւրաքանչիւր ի գրնդացն մի մի թագաւոր կացուցանէր. մօտ ի Հռոմ, եւ ի Հռոմ իսկ սաստիկ պատերազմ լեալ վախճանէր դժտութիւնն. Պաղրաս եւ Սթոն եւ Վիտելիոս ի ճակատուն անկանէին:

Առ Վեսպիանոսիւ հանդէր տէրութիւնն՝ ի տառապանաց իւրոց: Այլ Հրեայք ի մեծ նեղութիւն հասանէին, Արուսաղէմ առեալ եւ հրձիգ լինէր: Տիտոս, Վեսպիանոսի որդի եւ պայազատ, սուղ ինչ ժամանակս զաշխարհս ուրախ առնէր,՝ եւ աւուրք նորա՝ զորոց կարծէր թէ կորոյս, յորժամ չէր բարխ ինչ ումեք ի նոսա արարեալ, վաղվազակի անցանէին: Ղոմեախանոս թագաւորեալ հանդոյն Վերոնի անօրինէր:

Սիւսանդամ հալածումն յարեաւ: Յովհաննէս առաքեալ ելեալ ի բորբոքեալ ձիթոյ անտի՝ ի Պաթմոս կղզի տուաւ, ուր զյայտնութիւնն գրեաց: Յետ սակաւ միոյ, իննանամենի գրեաց զաւետարանն, եւ ոչ միայն առաքեալ եւ մարդարէ, այլ եւ աւետարանիչ եւս եղև:

Յայնմ հետէ քրիստոնեայք հանապաղ հալածական լինէին ոչ միայն առ չարադործ թագաւորօք, այլ եւ առ լաւօքն: Այս հալածումն մերթ թաղաւորաց հրամանաւ լինէր, եւ մերթ առ դատաւորացն սխութեան. երբեմն խուժանին ի վերայ յառնելով, եւ երբեմն ի ճերակուտին ճոխութեամբ վճիռս ինչ, ի հրովարտակաց թագաւորացն, կամ նոցունց խի թաղաւորաց առաջի, ընթեռնելով: Յայնժամ սաստիկ էր հալածումն եւ համօրէն ամենայն ուրեք. եւ այնպէս անհաւատքն՝ որ սխալեալք, հանապաղ զեկեղեցի ի միջոյ բառնալ ջանային, անձամբք յանձանց երբեք երբեք դրդուեալք մոլեղնեալք առաւել դազանէին: Ըստ թուոյ յաճախելոյ բռնութեանն, նոյնպէս եւ տասն հալածանս առ տասն թագաւորօք եկեղեցւոյ պատմագիրք համարին: Յայն երկայնժամանակեան վիշտան եւ ոչ մի ինչ երբեք խոփութիւն քրիստոնեայք յուզեցին: Յամենայն հաւատացելոց միջի, ընդ եպիսկոպոսաց հանապաղ գոռային. յամենայն եկեղեցեաց միջի զհռոմայեցւոց եկեղեցի մանաւանդ բռնութեամբ հալածէին, եւ երեսուն քահանայապետք արեամբ իւրեանց, զաւետարանն՝ զոր ընդ ամենայն երկիր պատմէին, հաստատեցին:

Գոմեախանոս սպանանէր. Եւ տէրութիւնն առ Ներուաւ ոգի առեալ կազդուրէր: Ասան ծերութեան հասակին զերսն չկարաց յարգարել, այլ զի հասարակաց հանգիստն տեւեցէ, զՏրայխանոս իւր սրայազատ կացոյց: Ի ներքոյ խաղաղացեալ էր տէրութիւնն, եւ արտաքոյ փառաւոր եւ քաջանուն, մինչեւ զարմանալ ամենեցուն ընդ թագաւորին լաւութիւն: Օչոյս ի մտի ունէր հանապաղ թագաւորն՝ թէ պարտ եւ պատշաճ է այնպիսի որ սուաջի իւրոց քաղաքացեացն դոտանել, որպիսի կամէր՝ թէ իցէ թագաւորն, եթէ գոյզն որ քաղաքացի լինալ էր: Սա զՎակս, եւ զՎեկեբազոս զթագաւոր նոցա, հնազանդեաց. եւ հաս տիրեաց արեւելից. Պարթեւոց թագաւոր կացոյց, եւ զարհուրեցոյց զնոսս ի հռոմայեցւոց զօրութենէ. երանի թէ յարբեցութենէ եւ յանպատեհ ցանկութենէ՝ որ այնպիսի մեծի թա-

գաւորի չվայելէ, յանիրաւութիւն եւ ի բռնութիւն ցմտարեւեր:

Իբրեւ այս ժամանակք՝ որ ընկերհաշտութեան օգտակարք եւ շահաւորք էին, անցին՝, եկին հասին Եդրիանոսի ժամանակքն՝ յոր մերթ չարիք են եւ մերթ բարիք: Սա զզնուորութեան կրթութենէ փոյթ յանձին ունէր. եւ ինքն իսկ ի զօրականաց օրինի կեայր, զլին զանհանգերձ կերակորն կերակրէր. նահանգաց ինամակալ լինէր, զճարտարացն արուեստս պայծառացուցանէր, եւ զՅունաց աշխարհ՝ որ մայր արուեստիցն էր: Երգելան խուժադուժքն եւ բարբարոք, զահի հարեալ ի զնուց զօրութեան նորա: Ե ինեաց միւսանգամ զԱրուսաղէս եւ յիւր անուն անուանեաց զնա, ուստի եւ Աղիա անուն առ քաղաքն. զէրեայս անտի մերժեաց, զի հանապազ ի հռոմայեցոց ապստամբէին, եւ անողրով վրէժ առ զկամակոր յամառութեան նոցա: Եւ զփառաւորութիւն թագաւորութեան իւրոյ, անադորոյն խստութեամբ եւ անպատեհ ցանկութեամբ յանարդութիւն դարձոյց. այն իսկ զի զԱնտինոյոս զվատանուն եւ զանուանարկ աստուած համարեցաւ, զամենայն զկեանս նորա եղծ եւ ամօթալից խայտառակեաց: Սարժեցաւ թէ թագաւորն, զոր յանցեանն, ուղղիցէ, եւ զփառան՝ զոր կորոյս, շահիցի, յորդեգիրս առեալ զԱնտոնինոս բարեպաշտօն՝ որ զՄարկոս Եւրեղիոս զեմաստունն եւ զփիղիստփոս յորդեգիրս առ:

Յայս երկուս թագաւորս երկու նկարագիրք գեղեցիկք երեւին: Սայրն հանապազ ի խաղաղութեան էր, եւ ի կռուել կազմ թէ պիտոյ ինչ լինէր. իսկ որդին համակ ի ճակատու, եւ հանապազ պատրաստ ընդ թշնամեաց խաղաղութիւն առնել եւ զերկիր տէրութեան իւրոյ ի խաղաղութեան պահել: Սայր նորա Անտոնինոս ուսոյց նմա՝ թէ լաւ է զմի քաղաքացի ապրեցուցանել քան զհազարս ի թշնամեաց կոտորել: Պարթեւք եւ Մարկոմանք զսփ առին զաստիկ զօրութեան Մարկոսի Եւրեղեայ. Մարկոմանքն ի Չերմանից աղգէն էին, զորս նուաճեալ ինքնակալն մեռանէր: Ս ասն առաքինութեան եւ

ԵՄՔ ՊՐԻՍՏՈՍԻ

117. 120, 127. 130. 135. 131. 138. 139. 161. 162. 169. 180.

քաջութեան երկուց թաղաւորացն՝ որ Ընտոնինոս աւուանէին, այն անուն ցանկալի եղև հռոմայեցւոց:

Փառաւորութիւն այնպիսի գեղեցիկ անուանն չեղծանէր, ոչ ի յուղութենէ Վուկիոսի Բերոսի եղբօր Սարկոսի Ըւրեղեայ, որ բարձակից թաղաւորութեանն էր, եւ ոչ յանադորոյն մնաց Աոմոզեայ՝ որ էր նորա որդի եւ պայազատ թաղաւորութեանն: Սա՛ որ չէրս իսկ արժանի այնպիսի հայր ունել, զհօրն թեղադրութիւն եւ զառաքինութիւն մոռանայր: Օտերակոյան եւ ժողովուրդքն ատէին զնա. յանդիմանակացք նորա եւ հոմանին ետուն սպանանել: Ետրին պայազատն Պերտինաքս^ա որ սաստիկ խնամակալ էր զինուորացն կրթութեան, փողոտեալ մեռանէր՝ ի ցանուլ զօրականացն ի վատութիւն եւ յանպիտանութիւն հատելոց, որ փոքր ինչ յառաջադոյն բռնարար զնա ի թաղաւորութիւն մատուցեալ էին:

Օթաղաւորութիւն այնու հետեւ զօրքն ի վաճառիջուցանէին, եւ գտաւ ոք՝ որ զնոց առ զնա: Վիդիոս Յուդիանոս օրէնագէտ յանդռնեալ միջամուխ լինէր՝ եւ նմին իսկ իրի ի կենդանութենէ անկանէր. Սեւերոս Ըւփրիկանոս սպան զնա, զՊերտինակայ վրէժ առ, յարեւելից յարեւմուտս անց, եւ յԱտրիս եւ ի գաղատացիս եւ ի մեծ աշխարհն բրիտանացւոց ի ճեմելի ել: Ըրագ հասանէր հարկանէր՝, յաղթութեամբքն՝ Ապսեր հաւատար լինէր, այլ գթութեանն չլինէր նախանձաւոր, եւ ի մէջ իւրոց որդւոցն համոզել չկարէր: Ետրա որդի անդրանիկ Բասիանոս կամ Աարակազդոս^ա որ Ըղէքսանդրի նմանօղ լինել կեղծաւորէր, վաղվաղակի յետ հօրն մեռանելոյ՞, զեղբայրն զՎետաս՝ որ իրրեւ զնա ինքնակալ էր, ի գիրկս Յուդիայ մօրն սպանանէր՞. այնու հետեւ զամենայն աւուրս իւր անադորոյն խատութեամբ վարեալ՝ կատորած գործէր եւ մահ ցաւազին յանձն իւր կորզէր: Սեւերոս զնա սիրելի արարեալ էր զօրացն եւ ժողովրդրդեան, անուն եղեալ նմա Ընտոնինոս. այլ նա արժանի ըստ անուանն գործ ինչ ոչ վճարէր: Էղիօզարաղէս ասորի կամ մանաւանդ Ըղազարաղէս, նորին որդի՞ կամ թէ նորա որդի կարծեալ, յառաջնումն Ընտոնինոս ա-

նուն անձին իւրում եղեալ սիրելի զօրացն եղև, եւ Մա-
կրինեայ յաղթեաց. այլ յետ այնորիկ վաղվազակի վասն ան-
օրէնութեան գործոցն ասելի եւ դարչելի մարդկան լի-
նէր, եւ ի կորուստ անձամբ զանձն մասնէր: Աղէքսան-
դրոս Սեւերոս⁵, Մամեայ որդի նորա ազգական եւ պայ-
ազատ թագաւորութեան, սակաւ ինչ ժամանակ կե-
ցեալ յօգուտ աշխարհիս՝ վախճանէր: Սուգ առեալ աշ-
խարէր վասն աւելի դժուարին լինելոյ նմա զիւր զօրսն
ունել յակաստանի, քան զթշնամիսն պարակ: ⁶ Սայ-
րին՝ որ առաջնորդէր նմա, պատճառք մահուն նորա լի-
նէր, որպէս փառացն առիթ լեալ էր: Առ սովաւ Ար-
տաշէս⁷ պարսիկ՝ զԱրտաւան զիւր տէրն սպանանէր,
զհուսկ յետին թագաւոր Պարթեւաց. եւ զՊարսից պե-
տութիւն յարեւելս հաստատէր:

Ի ժամանակն յայնոսիկ եկեղեցի դեռ եւս ծնեալ
զամենայն երկիրս ընդ⁸, եւ ոչ միայն զարեւելս՝ ուր
սկսաւն, այս ինքն՝ զպաղեստինացւոց աշխարհն, եւ զա-
սորեստան եւ զԱդիպոսս եւ զԲոքր Ասիա եւ զՅունաց
աշխարհ, այլ եւ յարեւմուտս եւս, բաց յիտալացւոց
կողմանցն՝ եւ զբաղում ազգս զաղատացւոց, եւ զամե-
նայն դաւառս սպանիացւոց, եւ զղերէաստան, եւ զՎեր-
մանիա, եւ զմեծ աշխարհն բրիտանացւոց ի տեղիս՝ յորս
Հռոմոց զէնք չհասին. նա՛ եւ արտաքոյ իսկ քան զհռո-
մայեցւոց տէրութիւնն, զՀայս, զՊարսիկս, եւ զՀնդիկս,
եւ զժողովուրդս բարբարոսիկ ազգացն, զՊարմատս, ըզ-
Վասիս, զսկիւթացիս, զմովրիտանացիս, զգետուղիացիս,
եւ մինչև ի կղզիս անձանօթս: Մարտիրոսացն արիւն՝
զեկեղեցի Աստուծոյ պարարտացեալ պաղարեր առնէր:
Առ Տրայիանոսիւ սուրբն Իգնատիոս անտիոքացւոց նա-
հանդին եպիսկոպոս, ⁹ զազանաց առաջի արկաւ: Մար-
կոս Աւրեղեոս զրպարտութիւն գքրիատոնէից լուեալ,
¹⁰ զՅուստինոս փիղիստիոս ի մեր համարի, սպանանէր, որ
եւ գիրս պաղատանաց վասն քրիստոնէից դրեաց: Սուրբն
Պողիկարպոս¹¹ զմիւռնացւոց աշխարհին եպիսկոպոս, ա-
շակերտ Յովհաննու առաքելոյ, ութսնամենի առ նովին
թագաւորաւ ի հուր այրեցաւ: Մարտիրոսք ի Վուկտո-

նիա եւ ի Բիւննա անհնարին տանջանաց համբերին՝, օրինակ առեալ զԼւբեանց եպիսկոպոսն զսուրբն Փոտինոս՝ որ իննսուն ամաց էր: Պաղատացւոց եկեղեցին զամենայն աիեղերս իւրով փառօք ելից: Սուրբն Կրենէոս աշակերտ Պողիկարպեայ, եւ Փոտինեայ յաջորդ, իւրում նախնոյն նախանձաւոր եղեւ,՝ եւ առ Սեւերոսիւ վիպեաց հանգերձ բազմութեամբ հաւատացելոց իւրոյ եկեղեցւոյն:

Երբեք երբեք ցածնոյր հալածումն: Դ լինել սաստիկ նուազութեան ջուրցն, եւ ի ծարաւոյ նեղել Մարկոսի Լւբեղեայ ի գերմանացւոց աշխարհին, գունդ մի ի քրիստոնէից զինուորաց աղօթիւք անձրեւ ընկալան, մինչեւ բաւական լինել զօրուն ի ծարաւն. եւ ընդ անձրեւոյն հրացան կրակատեղաց բարկութիւն իջեալ ըզթշնամիս խուճապեր: Յայնմ սքանչելեաց՝ փայլատակիչ անուն զնզին կոչէր կամ հաստատէր: Օթաղաւորն զարմանք ունէին, եւ առ Տերակոյան գրէր այնու հետեւ զիւրութիւն առնել քրիստոնէից: Իսկ իղձքն հաւանեցուցանէին նմա՝ թէ ի դից եւ յիւրոց աղօթից այն սքանչելիք եղին, ուր զմասւ անգամ չածէին հեթանոսքն այնպիսի ինչ ըզձանալ:

Ս ան այլոց եւս պատճառաց երբեմն յամէր կամ մեղմանայր հալածումն սակաւ ինչ ժամանակ, այլ ընդունայնութեան պաշտօնն՝ զոր Մարկոս Լւբեղիոս առանց բժշկութեան ախտացեալ էր, եւ հասարակաց ռիտութիւնն եւ զըպարտութիւնքն՝ զորս զքրիստոնէից զըպարտէին, յաղթահարէին վաղվաղակի: Յասումն հեթանոսացն բորբոքէր, եւ արիւն մարտիրոսացն իրրեւ զգետ հոսէր: Բոտ յաճախել չարչարանաց եւ նեղութեան, առաւելոյր եւ վարդապետութիւնն:

Ն ա Սեւերոսիւ եւ սակաւ ինչ յետոյ, Տերտուղիանոս երէց կարբեղոնացւոց, գրովք իւրովք զեկեղեցի պայծառացոյց, եւ սքանչելի զիրս պաղատանաց վասն եկեղեցւոյ մատոյց.՝ ապա կուրացեալ ամբարտաւան խստութեամբն եւ տեսլեամբք Մոնտանեայ սուտ մարգարէի խարեալ, եթող զեկեղեցի: Սոտ ի նոյն ժամանակս Աղեմէս երէց աղէքսանդրացի, զհին ինչ իրս հեթանոսացն

կրկտէր, զի զնոսա անդատին ի նոցունց բանից կշտամբեացէ: Արողինէս, Վեռնիդեայ մարտիրոսի որդի, զարմանալի յեկեղեցւոջ անդատին ի մատաղ հասակէ ճանաչէր, եւ մեծամեծ ճշմարտութիւնս ուսուցանէր, յորս եւ բազում մոլորութիւն խառնէր: Մանիոս, փիղիսոփոս ի մերմէ ոճոյս, զպղատոնիկեան փիղիսոփայութիւն ի կիր արկանէր, մինչեւ հեթանոսաց իսկ ի նմանէ ակն ածել:

Յայնմ ժամանակի վաղենտիանոսք եւ գէտք, եւ այլ եւս ամաբարշտութեան աղանդք, ի ձեռն ընդունայնութեան արւչութեանցն ընդ աւետարանին գոռային. սուրբն Խրենէոս ի դիմի հարկանէր աւանդութեամբ եւ իշխանութեամբ առաքելական եկեղեցեացն, մանաւանդ հռոմայեցւոց եկեղեցւոյն՝ որում Պետրոս եւ Պաւղոս առաքեալք հիմն արկին, որ եւ ամենայն եկեղեցեաց գլուխ է⁷. Գնոյն եւ Տերաուղիանոս առնէր⁸: Իսկ եկեղեցի ոչ յաղանդաց կործանեցաւ, եւ ոչ ի հերձուածոց, եւ ոչ յերեւելի երեւելի վարդապետացն անկանել: Քանզի սրբութիւն կարգաց դնացից նորա այնպէս լուսաւոր է, զի եւ թշնամիք իսկ նորա ակամայ յարգեալ գովեն:

Իբք հռոմայեցւոց տէրութեանն յանհարին խռովութեան էին: Յետ Աղէքսանդրի մեռանելոյ, Սաքսիմինոս բռնակալ՝ որ սպան իսկ զնա, տէր լինէր, թէպէտ եւ յազգէ Վթաց էր այրն: Իսկ ծերակոյտն չորս թագաւորս հակառակ նորա յարուցանէր, եւ երկուս ամս չբաւեալ սատակէին: Յորս էին եւ երկու Պորդիանոսք հայր եւ որդի, սիրելիք Հռոմոնց ազգին: Պորդիանոս մանուկ նոցին որդի, թէպէտ եւ ի մատաղ հասակի զծերութեան աւաղութեան իմաստութիւն ցուցանէր, ՚բայց հազիւ բաւական լինէր տէրութեանն ակարացելոյ ի բազում երկպառակութեանց, պաշտպանել յերեսաց Պարսից: Ըազում վայրս ի նոցանէ պիտանիս առնայր⁹. այլ Փիղիպպոս արուայիկ զայնպիսի մարդասէր թագաւոր սպանանէր¹⁰. եւ առ երկիւղի թէ մի երկու թագաւորքն՝ զոր մի ըստ միոջէ կացոյց ծերակոյտն, յաղթահարեցն զնա, աղօթիկեարս արձակէր առ Շապուհ արքայ Պարսից եւ ի հաշտութիւն խօսէր: Ըյս առաջին եղև ի հռո-

մայեցեաց՝ որ զերկիր ինչ տերութեանն, գաշինս ի միջի հաստատեալ, թողոյր: Ըսի՝ թէ եւ քրիստոնեայ եւս ելեւ, ի ժամանակի՝ զի յանկարծակի վաղվաղակի ազնուազոյն երեւեցաւ. այլ այն իսկ ճշմարիտ է՝ թէ մերում ոճոյս գիւրութիւն արար⁹: Մնս ընդ հակառակս ելեալ Վեկոս՝ որ սպան իսկ զնա, յարոյց հալածանս աստիկ յոյժ որպիսի չեւ էր լեալ:

Այնպէս յամենայն կողմանց տարածանէր, եւ առաւել ի գաղափարացիս¹⁰, իսկ Վեկոս՝ որ արութեամբ անբութեան պաշտպանէր, վաղվաղակի մեռանէր¹⁰: Պաղղոս եւ Վորոսիանոս փութանակի անցեալ գնային⁶. Ամիզեանոս երեւել միայն երեւէր⁷, այնու հետեւ զմեծ իշխանութիւնն ի ձեռս տային Ազգերխանոսի. եւ արժանաւորութեամբ իսկ այնմ հասանէր մեծարեալ ծերունին: ⁸Առ մեք անաղորոյն դասանէր, բայց միայն քրիստոնէից: Ըս սուլաւ սուրբն Ստեփանոս քահանայապետ, եւ սուրբն Ախարիանոս⁹ կարգեգոնացեաց եպիսկոպոս, ընդ միմեանս զուպարած եղեալ մաքառէին, այլ ի հաղորդութենէ կորդութեան չբակեալ, երկոքեան նմին պսակի հասանէին: Սողորութիւն սրբոյն Ախարիանոսի, որ զինիքն՝ զոր հերթակոսք տային, մերժէր, ոչ նմա ինչ եւ ոչ եկեղեցեոյ վնասեաց: Ըւանդութիւն աթոռոյն սրբոյ, յանձնէ բաւական լինէր զպատիր պատճառանաց եւ զբանից սուն միոյ մեծի զգէմ ունել. թէպէտ եւ այլ եւս արքաւաղք նորա վարդապետութեան ջատագով մտանէին: Իսկ մեւս եւս իմն հակառակութիւն առաւել չարիս գործեաց. ¹⁰Սարեղիոս զերիս աստուածեղէն անձինսն ընդ միմեանս խառնակէր, եւ զՆստուած՝ մի անձն եւ եթ ընդ երիւք անուամբք պատմէր: Ինդ այնպիսի օտարտի ուսումն սոսկացաւ եկեղեցի. եւ սուրբն Վիտնեսիոս աղէքսանդրացեաց եպիսկոպոս, ¹¹զպարոյց սրբոյն Վեսեստայ Բրորգի քահանայապետի զմոլորութիւն հերձուածապեալին¹¹: Ըյս քահանայապետ զհետ գնայր մարտիրոսութեամբ սրբոյն Ստեփանոսի՝ որ նախն էր նորա. քանզի գլխատեալ մեռանէր, եւ մեծ եւս պատերազմ իւրում սարկաւազին Վտրենտեայ թողոյր պատերազմել:

Յայնմ ժամանակի սկիզբն առնոյր բարբարոսաց սպասակն: Բուրդինոնք եւ այլ եւս ազդ գերմանացւոց⁶, Վուլթք՝ որ երբեմն Վետք կոչէին, եւ այլ եւս ազգք՝ որ բնակեալ նստէին առ Լաքսինոս համասարած ծովուն, եւ յայն կոյս Վանուր գետոյ, յԼարոպն արշաւէին: Սկիւթացիք՝ որ յասիացւոց կողմանսն էին, եւ Պարսիկք արեւելից տիրէին: Օլլաղերիանոս Պարսիկք պարտեցին, եւ սպա ննդութեամբ խաբանօք կաբան. եւ յետ ի գծնդակ ծառայութեան անդ մեռանելոյ, ՚ըստ Պարսից օրինակին մորթեցին, զի մորթն քերեալ յիշատակ յաղթութեան նոցա լինիցի: Վաղեանոս նորին որդի եւ ընկեր, զընաւ եղծ յուլութեամբ ծուլութեամբ: Արեսուն բռնակալք բաժանեցան յիւրեանս զտէրութիւնն:

Ոչենատոս, արքայ Թեդմոս⁷ հին քաղաքի՝ որոյ շինիչ Սողոմոն է, քան զամենեսին երեւելի լինէր. սա զարեւելից դաւառան ի բարբարոսաց ձեռաց զերծուցանէր, եւ ընդ իւրեւ նուաճեալ ի հնազանդութեան կացուցանէր: Աորին կին Օենորիա նովաւ հանդերձ զօրավարէր զօրուն, որ եւ յետ նորա վախճանին ինքն միայն զօրավար կայր զօրացն. եւ երեւելի եւ անուանի ընդ ամենայն երկիր լինէր, վասն զգլխատութիւն հանդերձ գեղեցկութեամբ ունելոյ, եւ զխառութիւն խառն ընդ զօրութեան: Աղաւգիոս Բ՝ բորդ եւ ըստ նմանէ Լարեղեանոս⁸ յարգարէին զիրս տէրութեանն: Մինչ զեռ նոքա⁹ զՎուլթս եւ զՎերմանիկս մեծաւ յաղթութեամբք հարկանէին, Օենորիա իւրոց որդւոցն պահէր զամենայն՝ զոր ստացաւ հայր նոցա: Սա ի հրէութիւն իմն միտէր. վասն այնորիկ իսկ՝ եւ Պաւղոս սամոստացի¹² անտիրքացւոց եպիսկոպոս, մարդ փառասէր եւ խռովիչ, զի ընդ միտ մտանիցէ կնոջն, զհրէական կարծիսն զանձնէն Վրիստոսի ուսոյց, եւ մարդ մի լոկ զնա համարեցաւ: Նէ յետ դունակ դունակ կերպարանօք զայնպիսի խտտորութեան ուսումն թագուցանելոյ, ՚յՆտիրքայ ժողովն յաղթահարեալ դատապարտեցաւ: Իսկ Օենորիա տիկին ընդ Լարեղեանոսի ի ձակատ մտեալ կռուէր, եւ Լարեղեանոս համարէր ինչ ամօթ զայնպիսի կին երեւելի ձաղել: Ի մեջ հանապաղորդ պատերազմացն,

Աւրեղիանոս զպատերազմօղն ի հռոմայեցւոց իրատու եւ ի կրթութեան պահէր . եւ յայտ առնէր՝ թէ յորժամ զհետ կարգաց եւ կերակրոց ժուժկալութեան նախնեաց զնայցեմք, մարթի բաղում զօր ի ներքոյ եւ արտաքոյ ածել ժողովել, եւ չլինել բեռն տէրութեան:

Յայնմ ժամանակի Փրանկք՝ որ թարգմանին ալատք, զօրանային, մինչեւ բաղմաց զահի հարկանել ի նոցանէ՝: Սոքա ջոկ էին ի Վերմանից ազգէն՝ որ առ Սենտն գետով բնակեալ նստէին: Ընունն իսկ նոցա յայտ առնէ՝ եթէ առ դուժ ալատութեան առ միմեանս եկեալ ժողովեալ էին: Աւրեղիանոս ի զօրավարութեանն եհար զնոսա, եւ իրրեւ ինքնակալ եղեւ՝ ահիւ խուճապեցոյց եւ չեա խլրտել: Այնպիսի թագաւոր վասն արիւնհեղութեանն յաչաց ելանէր: Ահազին ցասումն նորա պատճառք մահուն իւրոյ լինէր⁵. զի որ զանձինս ի տաղնապի կարծէին՝ կանխեցին քան զնա, եւ դպրապեան՝ առ ահի սպառնալեացն, եկաց ի գլուխ խաղմադործ նենդութեանն: Իսկ զօրն իրրեւ ետես՝ եթէ կորեաւ այրն միարան խորհրդով այնչափ պիտաւորացն, չառ յանձն թագաւոր ընտրել, զի մի յայնցանէ՝ որ սպանինն զԱւրեղիանոս, զօք ի բարձ թագաւորութեան մատուցանիցէ . որով եւ ծերակոյսն՝ զիւր զառաջին իրաւունս ի ձեռն առեալ, զՏակիտոս բնարեաց: Աւէր սա տիովքն եւ առաքինութեամբ մեծարեալ . այլ վասն բանութեան ազգականին՝ որում զզօրավարութիւն զօրացն ի ձեռս ետ, յաչաց ելանէր . եւ նու վաւ հանդերձ ի լինել խոռովութեան իրիք, սատակէր⁶ ի վեցերորդում ամսեան թագաւորութեան իւրոյ: Աւայնպէս ի պատիւ թագաւորութեան վերանալով ի կենաց կարճէր: Արին եղբայր Փղորիանոս կարծէր առնուլ զտէրութիւնն պայտաղատութեան օրինօք, քանզի նա էր մերձաւոր ժառանգն, այլ այն օրէնք չլինէին ընդունելի . Փղորիանոս սպանանէր, եւ զՊրօբոս բռնադատէին զօրականքն առնուլ զտէրութիւնն, թէպէտ եւ նա սպառնայր նոցա՝ թէ օրինօք եւ կարգօք սամ ձեզ կեալ:

Այնպիսի քաջ զօրավարաւ ամենեքին ի պարտութիւն մասնէին⁷. Վերմանիէք եւ Փրանկք⁸ որ ի գաղա-

ասցուոց աշխարհն կամէին մտանել, մերժէին. եւ յարեւելս եւ յարեւմուտս՝ ամենայն աղօք խուժադուժք ակն ածէին ի հռոմայեցւոց զօրութենէ: Այսպիսի այր գոռ պատերազմօղ խաղաղութեան ցանկայր, եւ կարծեցուցանէր մարդկան աշխարհին չկարօտանալ այնու հետեւ արանց պատերազմողաց: Բակ զօրն վրէժ խնդրեաց ի նմանէ վասն բանին այնորիկ, եւ վասն խստութեան կարգացն՝ զոր ի վերայ նոցա դնէր թագաւորն: Այլ յետ սակաւ միոյ սարջացեալ ընդ բռնութիւնն՝ զոր ի վերայ մեծի թագաւորին բռնացան, մեծարանս եղին յիշատակի նորա. եւ զԱարոս՝ նորին յաջորդ կացուցին, որ իբրեւ զնա խրատու եւ կրթութեան նախանձախնդիր էր: Այս հօր թագաւոր առ զվրէժ Պրորեայ, եւ զբարբարոսն՝ որ յետ նորա մեռանելոյ խրոխտէին, ցածոյց: Վնաց նա յարեւելս ի ճակատս ի վերայ Պարսից հանդերձ՝ Նոմերիանոսիւ երկրորդ որդւովն. եւ ի հիւսիսոյ զԱրիւնոս, զորդի իւր զանդրանիկ, յանդիման թշնամեացն ճակատեցոյց, զոր եւ կայսր իսկ արար. քանզի երկրորդ պատիւ էր այն, ուստի վաղվազակի ի թագաւորութիւն հասանէին: Ամենայն աշխարհն արեւելից սարսէր առաջի Աարեայ. Միջագետք հնազանդէին, Պարսիկք ի միմեանց քակեալք եւ ձեռքեալք՝ չկարէին զդէմ ունել նորա: Մինչ դեռ ամենայն ինչ աջողէր նմա, յանկարծակի փայլատակամբ խարշատէր: Նոմերիանոսի աչք մերձ էին կալ առ յոյժ լալոյ եւ աշխարհելոյ զհայրն: Այլ զե՛նչ ինչ ի մարդիկ թագաւորութեանն ցանկութիւն չզործիցէ. աներն նորա Ապրոս, փոխանակ ընդ նորա շարեացն արգահատելոյ, սպանանէր զնա, այլ Վիոկղեալանոս առնոյր զվրէժ մահուան նորա՞, եւ ապա յետոյ եհաս թագաւորութեանն՝ որում սաստիկ ցանկացեալ էր: Արիւնոս, թէպէտ եւ ծոյլ էր, յառնէր, եւ զՎիոկղեալանոս վանէր՞. այլ իբրեւ պնդեալ երթայր զկնի փախրատէիցն, մի ոմն յիւրոց անտի՝ զորոյ զկինն խարդաւանեաց, զնա ի կենաց արկանէր: Այլ այնպէս զերծանէր թագաւորութիւնն ի նմանէ՝ որ քան զամենայն մարդիկ բռնաւոր եւ խառնագնաց եւ անօրէն էր:

Վիտիզեախանոս մեծաւ զօրութեամբ առաջնորդէր, այլ անհնարին ընդունայնակարծ հպարտութեամբ ամբարհաւածնեալ մեծամտէր: Եւ զի զդէմ կալցի զբազմութեան թշնամեացն՝ որ ի ներքոյ եւ արտաքոյ ամենայն ուսանք ի վերայ յառնէին, ՚ զՄաքսիմիանոս բարձակից թագաւորութեան առնէր, զգլխաւոր իշխանութիւնն իւր միայնոյ սեպհականեալ: Իւրաքանչիւր յինքնակալաց մի մի կայսր կացուցանէր. Աոստանդիոս Վղորոս, եւ Վաղերիոս՝ այնմ պատուոյ արժանի լինէին: Չորք իշխանք հազիւ բաւական լինէին զայնչափ ճակատան մղել: Վիտիզեախանոս ի Հռոմէ փախստեայ դնայր վասն քաղաքացեացն ժպրհութեան, եւ ի Վիտիմիգա երթեալ բնակէր, ուր հանգոյն զից ի մարդիանէ երկրպագութիւն առնոյր, որպէս արեւելեաց խակ բարք են: Ի ժամանակին յայնմիկ Պարսիկք՝ ի պարտութիւն մասնեալ ի Վաղերեայ, նահանգս մեծամեծս եւ թագաւորութիւնս բովանդակ հռոմայեցւոց թողուին: Յետ այնպիսի մեծամեծ յաջողութեանց, Վաղերիոս ընդ իշխանութեամբ չկամէր լինել, եւ սարանայր կայսր անուանել: Սկիզբն առնէր նախ զՄաքսիմիանոս երկեցուցանել: Վիտիզեախանոս յերկար խօթութիւն անկեալ յապուշ միտս կործանէր. եւ Վաղերիոս, թէպէտ եւ փեսայացեալ էր նմա, բռնադատեայ զնա զթագաւորութիւնն թողուլ. նոյնպէս եւ Մաքսիմիանոս այնու հետեւ ի հարկէ ընդ նա հայեցեալ ի բաց կայր ի թագաւորութենէն¹⁴:

Եւ այնպէս թագաւորութիւնն ի Աոստանդիոս եւ ի Վաղերիոս հասանէր՝ եւ փոխանակ նոցա երկու կայսերք Սեւերոս եւ Մաքսիմիանոս կացին, հրամանաւ ինքնակալացն՝ որ զայն իշխանութիւն թողին: Վաղատիա, եւ Սպանիա, եւ մեծ աշխարհն բրիտանացւոց առ Վղորոսն Աոստանդեաւ ի խաղաղութեան եւ ի շինութեան էին, այլ առ սահաւ մի ժամանակ: Սա հարկս չկամէր պահանջել, եւ ամբաստանեալ վասն նորին իրաց որպէս թէ զանձուն արբունի մնասիցէ, եցոյց՝ թէ զանձս բազումն ունէր ի հաճութեան կամաց հնադանդեկոցն իւրոց: Իսկ այլ եւս կողմանք թագաւորութեանն՝ ընդ այնչափ ին-

քնակալօք եւ կայսերօք բազմապատիկ վիշտս վշտանային .
ըստ յաճախել թաղաւորացն, յաճախէին եւ սպասա-
ւորքն . ծախք անհնարին լինէին, եւ հարկք սաստիկ¹⁵ :

Մանուկն Առստանդիանոս, Առստանդեայ Վաղորեայ
որդի, երեւելի լինէր . այլ էր նա ընդ ձեռամբ Պա-
ղերեայ : Պաղերիոս՝ որ խանտայր ընդ անուն փա-
ռաւորութեան նորա, բազում անգամ զնա յանհնարին
տաղնապի կացուցանէր : Հրաման տայր նմա ընդ դա-
զանայ ի ստաղին ուղորել . այլ ի դազանայ չէր ինչ պա-
կաս ահագին Պաղերիոս : Առստանդիանոս ի ձեռաց զեր-
ծանէր եւ դտանէր զհայրն մերձ ի մահ : Ի ժամանակին
յայնմիկ Մաքսնտիոս¹⁶, ուսար Մաքսիմիանոսի եւ փեսայ
Պաղերեայ, ի Հռոմ ինքնակալ կայր ընդդէմ դարձեալ
աներոյ իւրոյ . եւ ի վերայ այլոց շարեաց աշխարհին,
քաղաքացեաց երկպառակութիւնք յաւելուին : Օգտա-
կեր Առստանդիանոսի՝ որ զհայրն յաջորդեաց, ի Հռոմ
ըստ սովորութեանն ածին, եւ Մաքսնտեայ հրամանաւ
ի բաց ընկեցաւ¹⁶ : Վանզի դպասկերսն ընդունել՝ զնորոգ
ոք թաղաւոր ընդունելոյ նշանակ էր : Յամենայն կող-
մանց այնու հետեւ մարտի պատրաստէին : Այսար Սեւե-
րոս¹⁷ զոր Պաղերիոս առաքեաց ի ճակատս ի վերայ Մա-
քսնտեայ, հար դողացոյց զնա ի Հռոմ քաղաքի : Եւ
նորա առ ահին տաղնապեալ՝ զՄաքսիմիանոս զհայրն ի
թիկունս օգնականութեան կոչէր : Իսկ ճերուներն՝ որ
թաղաւորութեանն ցանկացեալ էր, ի տեղոջէ՝ ուր ա-
կամայ միայնացեալ նստէր, ելանէր, եւ շատ ջանացեալ
չկարէր զՎիտիղեաիանոս զիւր ընկեր դարձուցանել յան-
դաստանացն՝ զոր ի Սաղոնա արօրադիր առնէր : Իբրեւ
լու լինէր՝ թէ Մաքսիմիանոս միւսանգամ ինքնակալ ե-
ղեւ, թօթափէին զօրքն ի Սեւերեայ : Եւ ինքնակալն
տայր սատակել զնա . եւ զե արասցէ իւր թիկունս յե-
րեսաց Պաղերեայ, տայր ցԱռստանդիանոս զիւր դուստր
զՓաւստա : Եւ ի Պաղերեայ թիկունք օգնականու-
թեան պիտոյ էին յետ Սեւերեայ մեռանելոյ, վասն այնո-
րիկ իսկ եւ զՎիկինոս յօժարէր ինքնակալ կացուցանել¹⁷ .
այլ ընդ այն Մաքսիմիանոս զչարէր, քանզի նա էր կայսր

եւ նմա անկ էր իշխանութիւնն: Չառնոյր երբեք յանձրն Վիկինեայ հնազանդ լինել. եւ երթեալ համարձակ յարեւելք կայր: Վաղերեայ այնու հետեւ գրեթէ Վիւրիկէ միայն մնայր, ուր յետ հալածական յատազեայ լինելոյ, մտեալ զազարեալ էր:

Իսկ այլ եւս կորմանք արեւմտից հնազանդէին Մաքսիմիանոսի եւ Մաքսենտեայ նորին որդւոյ, եւ փեսային Աոստանդիանոսի: Ելլ նա որպէս զօտարան, նոյնպէս եւ ոչ զիւր որդիս, կամէք՝ թէ, աթոռակիցք թագաւորութեանն լինիցին: Չանայր ի Հռոմէ զիւր որդի Մաքսենտիոս հալածական առնել, այլ ինքն ի նմանէ հալածական լինէր: Աոստանդիանոս՝ որ ընկալան զնա ի գաղատացւոց աշխարհին, եգիտ զնա ի նոյն միտս նենգութեան: Մաքսիմիանոս յետ ազդի ազդի կերպարանօք ջանալոյ, զյետին գաւն նիւթէր¹⁵. եւ կարծէր այնպէս՝ թէ հաւանեցոյց զզուսոր իւր զՊաւստա, զի իւրում առն նենգիցէ: Ելլ խարէր զնա զուսորն, եւ Մաքսիմիանոս՝ որ կարծէրն թէ զԱոստանդիանոս ըսպան, սպանեալ զներքինին՝ որ յանկողնի նորա եգեալ կայր, բռնարար անձին առնէր¹⁶: Ելնու հետեւ նոր պատերազմ դրուէր. եւ Մաքսենտիոս, պատճառանօք որպէս թէ զՏօրն վրէժ խնդրիցէ, ՚յառնէր հակառակ Աոստանդիանոսի, եւ նա զօրու հանդերձ խաղայր զնայր ի Հռոմ: Յայնմ ժամանակի զՄաքսիմիանոսի պատկերան կործանէր, եւ Վիոկղեոփանոսի պատկերքն՝ որ կից էին, ընդ նոսա խորտակէին: Խռովէր տաղնապէր Վիոկղեոփանոս ի թշնամանաց անտի. եւ յետ սակաւ ինչ միոյ առ տրամութեանն, եւ առ ծերութեանն վախճանէր:

Ի ժամանակին յայնմիկ Հռոմ քաղաք՝ որ հանապազ թշնամի էր քրիստոնէից, անհնարին ճգնէր զքրիստոնէութիւն շիջուցանել, սակայն առաւել հաստատէր: Վաղերիոս՝ զորմէ պատմագիրք վիպադրեն¹⁷, թէ նա եղև առաջնորդ յետին հալածանացն, երկուք ամօք կանխազոյն քան զատիպել նորա զՎիոկղեոփանոս թողուլ զտէրութիւնն, ՚ստիպեաց զնա զսատակիչ հրամանն տալ հալածելոյ գրքիստոնեայս անհնարին յոյժ որպէս չիցէ.

լինեալ : Մաքսիմիանոս՝ որ թշնամութեամբ էր ընդ քրիստոնէից, եւ ի քերելոյ եւ ի տանջելոյ զնոսա չգաղարէր, զպատուորսն եւ զպահիճնս քաջալերէր. բայց թէպէտ եւ սաստիկ էր բռնութիւնն, այլ չէր իրրեւ զՄաքսիմիանոսին եւ զՎաղերեայ : Հանապաղ բազում նորանոր չարաչար տանջանս իմանային, եւ ոչ միայն ընդ հաւատոյն, այլ եւ ընդ օրինաւոր ամօթն կուսանացն քրիստոնէից կուռէին : Օմատեանս կաակարանացն յուզէին խնդրէին փութով յօժարութեամբ, զի զսխաւտակս նոցա անհետ ի միջոյ բառնայցեն. եւ քրիստոնեայք զգիրսն առ անին չիշխէին ունել, եւ ոչ ընթեանուլ իսկ : Ըրդ՝ յեա երեքհարեւր ամաց հալածանաց, եւս աւելի խստացաւ ատելութիւն հալածչացն. իսկ քրիստոնեայք համերութեամբ իւրեանց վաստակեցուցին ըզնոսա : Դողրվուրդք զարմացեալք ընդ վարս սրբութեան զնացից նոցա, առ հասարակ դառնային : Վաղերիոս ի միտ առնոյր՝ թէ նոցա չկարէ յաղթել : Եւ մինչ դեռ յանհնարին ակտ անկեալ գնէր, զառաջին հրամանն զարձուցանէր. « եւ մեռանէր զմահ Ընտիրայ, իրրեւ զնա խարէութեամբ ապաշխարեալ : Մաքսիմիանոս զնոյն հալածումն յաճախէր. այլ մեծն կոստանդիանոս իմաստուն եւ յաղթող թագաւորն ի քրիստոնէութիւն դառնայր՝ :

ԵՄՔԱՆՈՒԹ
 Ե311. Ե312.

1) ՎԵՆ. Թ. 27: 2) ՄԵՏՔ. ԻԼ. 45: 3) ՓՂԵՊ. ԺԳ. Ողոմզ. ԹԵՂ. Պատմ. Գ. ՏԵՏՈՒՂ. Պատասխ. ԻԼ: ՈՐԿ. Ի. Ընդդ. Կեղո. եւ խօսք 11: Ի Սատթ: ԼԵՍ. եւ ԼԵՐՆ. Ի Ժամանակ: ՅՈՒՂ. ԼՓԲԲ. անդ: 4) ՎՈՐՄ. ԺԼ: 5) ԼՆԳ. ԺՕ. 4: 6) ՏԵՏՈՒՂ. Ընդդ. ՀԵԿ. Լ. Պատասխ. 11: 7) ԻԵՆ. ԳԻՐՔ Գ. 1. 2. 3: 8) Հանգիմ. ՀԵՐԵՍ. ԳԼ. 36: 9) ԼԵՍ. Օ. ԴԿՐ. ԳԼ. 39: 10) ՎԵՐԿ. ՏՈՒՐ. ԳԻՐՔ Լ. Պատմ. Գաղ. 28: 11) ԼԵՍ. Պատմ. Եկեղ. Լ. ԴԿՐ. ԳԼ. 6: 12) *ԱՅՆ. անդ. ԳԼ. 27. եւ որ ի կարգին: ԼՔՆ. առ ՍԻՅԱՅ: ԹԵՂՈՒ. ԳԻՐՔ Ի. Լ. առաջ. ՀԵՐԵՍ. 8: ԿԵԿՓ. ԳԻՐՔ Օ. ԳԼ. 27: 13) Պատմ. Լ. Գ. Լ. ԵԿԵ. ԳԼ. 7: ՓՂՈՐ. ԳԼ. 2: ՊՐՈՐ. ԳԼ. 11. 12: ՓԵՐՄ. ԳԼ. 13: 14) ԼԵՍ. Պատմ. Լ. ԴԿՐ. 13: ԸՆՈՔ կոստ. առ Ս. ՍԻԵՆՏ. 25: ԴԵՄՏ. Զաղաղս ՍՊՏ. հարած. ԳԼ. 17. 18: 15) *ԱՅՆ. անդ. ԳԼ. 24: 16) *ԱՅՆ. անդ. ԳԼ. 26. 27: 17) *ԱՅՆ. անդ. ԳԼ. 28. 29. 30. 31. 32: 18) *ԱՅՆ. անդ. ԳԼ. 42. 43: 19) ԼԵՍ. Պատմ. Եկեղ. Լ. ԴԿՐ. ԳԼ. 16. կոստ. վարք. Լ. 57: ԴԵՄՏ. Զաղաղս ՍՊՏ. հարած. ԳԼ. 9: եւ որ ի կարգին:

Ժ Ե Մ Ե Ն Ե Կ ԺԵ

ԿՈՍՏԱՆԿՆՊՈԼԻՍ ԿԵՄ ԵԿԵԴ.ԵՑԻՈՅ ԻՐԴ.ԵԴ.ՈՒԹՅՈՒՆ

ԼՅՅՈ նշանաւոր յայանութիւն Առստանդիանոսի յամի երեքարիւրորդի երկոտասաներորդի Տեառն մերոյ զիպեցաւ: Սինչ դեռ նա զՍնքսենատիոս ի Հռոմ քաղաքի պաշարէր, խաչ լուսաւոր շողացեալ յօգս երեւէր նմա, յանդիմանն ամենայն աշխարհաժողով բազմութեանն, եւ էր զիր գրոշմեալ՝ որ նմա զյաղթութիւնն նաւթձէր. նոյն տեսիլ նմա եւ ի քուն յայտնեալ հաստատեցաւ: Ի վաղիւ անդր ճակատ տուեալ յաղթէր հրօշակաւոր մարտին՝ որ զՀռոմ քաղաք յաղիտարար բռնաւորէն, եւ զեկեղեցի ի հալածչէն զերծոյց: Ե խաչն այնուհետեւ իրրեւ զէն զարդու հռոմայեցւոց ժողովրդեանն եւ ամենայն իշխանութեանն կանգնէր: Սակաւ մի յետոյ եւ Սաքսիմինոս, ի Վիկինեայ՝ որ ընդ Առստանդիանոսի միտբան էր, ի պարտութիւն մատնէր. եւ նոյն օրինակ վախճանաւ, որպէս եւ Վաղերիոսն, վախճանէր: Եկեղեցի հանդարտեալ խաղաղեցաւ, զոր Առստանդիանոս մեծապատիւ մեծապարգեւ մեծարէր: Յաղթութիւն ամենայն ուրեք զհետ նորա երթայր, զհուժս բարբարոսս նա եւ նորին որպէք նուաճէին: Յայնմ ժամանակի եւ Վիկինիոս ի հակառակութիւն ընդ նմա գրդուեալ, անդրէն հալածանս յարուցանէր: Բնդ ծով եւ ընդ ցամաք պատերազմեալ խորտակէր, մինչեւ յակամայ խակ եւ ի հարկէ զելչխանութիւնն թողոյր լքանէր, եւ ապա յարեւէն եւս անկանէր:

Օայնու ժամանակաւ Առստանդիանոս ի քաղաքին նիկիացւոց ի Բիւթանիա, զառաջին տիեզերական սիւնհոգոսն գումարեաց, ուր երեքհարեւր ութեւտասն եպիսկոպոսք՝ որ զեկեղեցի համօրէն յանդիման կացուցանէին, զԱրիոս երէց, զթշնամի Արգւոյն Աստուծոյ աստուածութեանն, կշտամբեալ մերժէին. եւ զկարգ հաւատոյ բանին յօրինէին, յորում միարուն ինքնութիւն Արգւոյ ընդ Հօր հաստատէր: Արիցունք հռոմայեցւոց

ԵՄՔ ՔՐԻՍՏՈՍ

Յ313. Գ315. Գ324. Գ325.

եկեղեցւոյն՝ զորս սուրբ քահանայապետն Հռոմայ Աեղբնատրոս առաքէր, ի մէջ ժողովոյն ամենայն եպիսկոպոսացն իշխան եւ դուլս լինէին. եւ մասննազիր ոմն Հին՝ ի Յունաց ազգէն, ի մէջ հրեշտակաց սրբոյ աթոռոյն համարի զհոյակապն եւ զքանչելին Ավսիոս՝ որ եպիսկոպոս էր կորգուբացւոց, եւ ի սիւնհոդոսին յառաջին տեղւոջ բազմէր: Թագաւորն ինքնին անդր եկեալ նստէր, եւ զհրամանն իրրեւ զերկնաւոր պատգամ՝ ընդունէր: Ըրիանոսը զԷրեանց ուսումն խտտորութեան թաղուցանէին, եւ պաճուճեալ կեղծաւորութեամբ զթագաւորին միտս հաճէին:

Այնչ դեռ նորին քաջութիւն զիշխանութիւնն ի խոր խաղաղութեան ունէր՝, հանգիստ արքունի տանն, վասն Փաւստեայ իւրոյ կնոջն նենդութեան, խռովէր: Արիսպոս, որդի Աոստանդիանոսի յայլմէ ամուսնութենէ, ամբաստանեալ ի նմին իսկ ի մօրուէն, որպէս թէ խաղաւանել զնա յօժարեալ իցէ, անողորմ արամտութեան հօրն զխախտէր: Աորին մահուանն վրէժք վաղվաղակի ի տիկնոջէն պահանջէին, որ յանդիմանեալ ի բաղանիսն հեղձնոյր: Բայց Աոստանդիանոս՝ որ թշնամանեցաւն վասն իւրոյ կնոջն նենդութեան, բազում պատիւ վասն աստուածպաշտութեան մօրն ընդունէր: Ի ձեռն նորա յաւերակն հին Արուսաղէմի ճշմարիտ նշանագործ խաչն դտանէր. եւ սուրբ գերեզմանն նոյնպէս ի յայտ դայր: Աորաչէն քաղաքն երուսաղէմացւոց՝ զոր Ըզրիանոս շինեաց, խուղն՝ յորում կենարարն մեր ծնաւ, եւ ամենայն սուրբ տեղիք ի Հեղինեայ եւ ի Աոստանդիանոսէ հոյակապ շքեղ տաճարօք յօրինեալ զարդարէին: Իբրեւ քառամեայ ժամանակ ի վերայ անցանէր, կայսրն զբիւզանտացւոց քաղաքն կազմեալ յարդարէր՝, զոր եւ Աոստանդինուպողիս անուանէր, որ է կոստանդինական քաղաք, եւ զերկրորդ աթոռ թագաւորութեան ի նմա հաստատէր:

Այկեղեցի՝ որ ընդ Աոստանդիանոսիւ ի խաղաղութեան վայելէր, անհնարին դժնդակ վշտօք ի Պարսից աշխարհին վշտանայր. անչափ դունդք դունդք մարտիրոսաց զԷրեանց հաւատոսն կնքէին: Այստն ի զուր Ըղ-

Շ ապուհ ողորքել ջանայր, եւ ի քրիստոնէութիւն ածել : Սակայն քրիստոնեայք հալածեալք՝ յօգնականութենէն Աստանդիանոսի աւճան եւ պատսպարան գտանէին : Իշխանս այս, յամենայն եկեղեցւոյ յարգեալ եւ գովեալ, յետ զտէրութիւնն ի մէջ երկց որդւոցն՝ Աստանդիանոսի, Աստանդեայ եւ Աստասայ բաժանելոյ, ուրախութեամբ եւ յուսով մեռանէր : Սիարանութիւն որդւոց թաղաւորին վաղվաղակի խախտէր : Աստանդիանոս կորեալ ի պատերազմին՝ զոր ընդ իւրում եղբօրն Աստասայ, վասն սահմանաց թաղաւորութեանն մղէր : Կոյնդունակ եւ ի մէջ Աստանդեայ եւ Աստասայ հանապաղ գժտութիւն էր : Աստաս նիկիական հաւատոցն պատսպարան լինէր, ուր զնորին հակառակն Աստանդոս մարտ եղեալ կռուէր : Յայնմ ժամանակի եկեղեցի ընդ յաճախ անհնարին զկանս երանելւոյն Վթանասի զարմանայր, որ աղէքսանդրացւոց հայրապետ էր, եւ նիկիական սիւնհոգոսին թիկունք : Ի հրամանէ Աստանդեայ, յիւրմէ աթոռոյն մերժեալ՝, անդրէն ըստ օրինացն ի սուրբ քահանայապետէն Հռոմայ Յուղիոսէ առաջնոց հաստատէր, զորոյ զհրամանսն պնդեալ հաստատէր Աստաս : ԸՍԼ աստուածապաշտ իշխանն ոչ տեւէր յերկար ժամանակս կեալ : Սաղնենտիոս բռնակալ նենդ գործեալ սպանանէր զնա՝, եւ ինքն ապա ընդ հուպ, ի Աստանդայ ի պարտութիւն մատնեալ չոգաւ զիւրովին :

Ի պատերազմին՝ յորում ձախողեցաւ նմա, Վարէս չեպիսկոպոս մի արխանոսաց աղանդոյն, ի ծածուկ յիւրոց բարեկամաց ազգեալ, ճշգրիտ պատմէր Աստանդայ՝ եթէ զօրք բռնաւորին ի փախստի ուրեմն են, եւ յողդողէր ածէր ի հաւան վկայսն, որպէս թէ ի ստոյգ գուշակութենէ զայն գիտիցէ : Սանս այսր սուտ գուշակութեան Աստանդոս մտադեւր զհետ արխանոսաց միտէր : Որթողոքս եպիսկոպոսքն յիւրեանց ի բուն աթոռոցն վտարանդի վարէին, համօրէն եկեղեցի խռովութեամբ եւ աղմկաւ ընդր . Վիբերիոս մեծ քահանայապետն հռոմայեցւոց՝ որ պնդեալ հաստատեալ էր, ի տաղտկալից վտարանդութենէն ծանրացեալ, չկայր յակաստանի : Ով

սիրոս՝ որ երբեմն սին եւ հաստատութիւն եկեղեցւոյ էր, առ չժուժալ վշտացն ոտնառեալ կործանէր^ն: Այսիննեայ ժողովն^ն որ զառաջնն այնպէս հաստատուն էր, ապա ի պատրելոյ եւ ի բռնապըօսութենէ խախտէր. ոչ ինչ որպէս պարտ եւ պաշաճ էր, գործէր. զի թագաւորին ճոխութիւն օրէնք համարէին: Իսկ արիանոսքն՝ որ նովին ճոխութեամբ զամենայն ինչ վճարէին, ընդ միմեանս միաբանել չկարէին. եւ օր ըստ օրէ զլուրեանց խտտութեան վարդապետութիւն շրջէին: Այլ նիկիական հաւատք տեւէր բաւէր. երանելին Աթանաս, եւ Իղարիոս պիկտաւիացւոց եպիսկոպոսն, նորին հաւատոյ ճշմարտութեանն սաստիկ վրէժխնդիրք, ընդ բնաւ երկիր նշանաւ որ լինէին:

Մինչ զեռ Աոստանդոս կայսր, զհետ արիանոսաց ուսման դեպերեալ, զերաց իշխանութեանն չունէր փոյթ, Պարսիկք բազում մեծամեծ շահս շահէին: Պերմանացիք եւ Փրանկք ի կողմանց կողմանց սպրդեալ ի ներքս ի գաղատացւոց աշխարհն մտանել ջանային: Յուդիանոս՝ որ ազգական էր կայսեր, կարծէր զնոսա եւ խորտակէր: Կայսրն ինքնին զՊարմասս վանէր, եւ ընդդէմ Պարսից չու առնէր: Ընդ Յուդիանոս յապտամբութիւն հակառակ թագաւորին մտաբերէր, եւ ի հաւատոցն ուրանայր^ն: Աոստանդոս ի կենաց վճարէր^ն. Յուդիանոս առնոյր զթագաւորութիւնն եւ սկիզբն առնէր արդարութեամբ զիշխանութիւնն վարել. նոր իմն ալք հալածանաց յարուցանէր, եւ զեկեղեցի սաստիկ վշտօք չարչարէր: Հերձուածական մոլորութեանցն թողոյր ճարակել, եւ զքրիստոնեայնն ոչ ի պատուոց միայն, այլ եւ յուսմանէ մերժէր. եւ ըստ սրբոց խրատուց եկեղեցւոյ կեղծաւորեալ, նորին զենուք կարծէր ընդ նմա ողորկել: Թողեալ զկրօնիցն անուն, այլ իմն բարուրս ի մէջ ածէր, առ ի զքրիստոնեայս տանջելոյ: Քրիստոնեայք կացին մնացին ի հաւատարմութեան իւրեանց թագաւորին, այլ փառացն մոլեկան տենչութիւն զնա արադ կորուսանէր^ն. զի իբրեւ յանդգնեալ յախուոն ի Պարսից աշխարհն արշաւէր, անդէն անկեալ սատակէր: Յովիա-

նոս նորին պայազատ՝ որ քրիստոնեայ նախանձաւոր էր, իրրեւ յանհարին տաղնապ հասեալ զիբն տեսանէր, զաժօթոյ հաշտութիւնն խօսէր, եւ ինքն մեռանէր:

Յետ Յովնանոսի, Աղենտինիանոս ճակատ տուեալ քաջութեամբ կուէր⁵. զեւր որդին Գրատիանոս ի մատաղ հասակի ընդ իւր ի պատերազմ ածէր⁶, զզինուորութեան հրահանգս պահէր, զբարբարոսն խուժադուժս բեկանէր, զասմանս թագաւորութեան ամբացուցանէր, եւ յարեմտից աշխարհն՝ նիկիական հաւատոցն թեկն ածէր: Ատէս նորին եղբայրն՝ զոր նա բարձակից թագաւորութեանն արար, յարեւելից կողմանն զնոյն հաւատս հալածէր. եւ իրրեւ շինէր մարթ զեղծուցանել կամ ըմբերանել զերանելին Ղասիղիոս եւ զերանելին Գրիգորիոս նազիանզացի, այնու հետեւ շունէր ակն հաւատոցն յաղթելոյ: Միանոք ոմանք նոր ուսումն խոտորութեան յառաջին աղանդոյն վարդապետութեան վերայ յաւելին: Մերիոս չերէց մի արխանտայ աղանդոյն, որպէս ի մատանս սրբոց հարցն գտանի³, նոր իմն հերձուածոյ գտակ ճանաչէր, վասն զերթցութեան կարգն հաւասար ընդ եպիսկոպոսութեան հաշուելոյ, եւ զնուէրսն եւ զաղօթան՝ զոր եկեղեցին վասն ննջեցելոցն առնէր, անպիտան համարելոյ: Մեւ եւս խոտոր վարդապետութիւն նորին հերձուածապետի այն իսկ էր՝ զի պահս ինչ պահել, օրինաց ծառայութիւն համարէր, եւ կամէր իմն՝ եթէ պահք ըստ մարդկան հեշտի լինիցին: Մ. նորին կենդանեօք, երանելին Լպիփանէս հերձուածոցն պատմութեամբ՝ զոր գրեաց, երեւելի լինէր. յորում, ընդ այլոցն ամենեցուն, եւ զնա կշտամբէր: Սուրբն Մարտինոս տուրոնիացոց եպիսկոպոս անկէր⁷, որոյ սրբական վարուցն եւ նշանագործութեանցն համբաւ ընդ բնաւ տիեզերս ընթանայր, կենդանեաւ իւրով եւ յետ մահուանն իսկ: Աղենտինիանոս, յետ ուժգին հրապարակախօս առաջի թշնամեաց թագաւորութեանն լինելոյ, մեռանէր. նորին սաստիկ ցասումն՝ որ ահագին զնա այլոցն գործէր, իւրում անձինն իսկ ապականիչ լինէր: Օգրատիանոս նորին պայազատ, շունէր նախանձարեկ

ԱՄԲ ՔՐԻՍՏՈՍ

364. 366 պողոկքն հանդերձ. 375.

իւրոյ կրտսերոյ եղբօրն Վաղենտինեայ Ռորդի յաւա-
գութիւն հասանել, զոր մինչ դեռ իննամեան ուրեմն էր,
ի բարձ թագաւորութեան հասուցանէին: Յուստինէ
մայր նորա՝ որ արխանտայ թեկն ածէր, յանձանձիւ կայր
իրաց թագաւորութեանն ի նորա մասաղութեան:

Եսա ի սակաւ ամն բազում նորանշան դէպք եւ պա-
տահարք պատահէին. Պութք նշկահէին զՎաղէս⁵. Իշ-
խանս այս թողեալ զՊարսս, երթայր զպատամբսն կըշ-
տամբել⁶: Պրատիանոս նմա ի թիկունս հասանէր յետ
զմեծաբանն յաղթութիւնն ընդդէմ Պերմանայ ի գլուխ
տաներոյ. իսկ Վաղէս՝ որ անձամբ լոկով յաղթել կա-
մէր, աճապարէր տայր պատերազմ, յորում եւ սպանաւ
նէր իսկ մերձ յԱզրիանուպոզիս քաղաք: Պութք յաղ-
թեալ, զնա ի խարոյկ արկին ի զեղջ ուրեք՝ յորում ա-
մրացեալ կայր: Պրատիանոս, ծանրացեալ նեղեալ յի-
րայն, ՚զմեծն թէոզոսիոս բարձակից իշխանութեանն
ստանէր, եւ թողոյր նմա զարեւելից կողմանցն մարզպա-
նութիւն: Պութք ի պարտութիւն մատնէին, ամենայն
խուժադուժք յաշի եւ յերկիւղի կային. եւ որ մեծն
էր եւ թագաւորին ցանկալի, հերեսիովայքն Մակեդո-
նի աղանդոյն՝ որ ի Հողոյն սրբոյ աստուածութենէ յու-
րաստ լինէին, ՚ի Աստանգլինուպոզիս սիւնհոզոսն մեր-
ժէին: Ենդ եկեղեցին Յունաց միայն գտանէր, այլ ա-
մենայն արեւմտից աշխարհն եւս, եւ մեծ քահանայա-
պեան Հոռմայ երանելին Վամասոս հաճեալ եւ հաւա-
նեալ, երկրորդ արեղերական սիւնհոզոս զնա անուանէին:

Մինչ դեռ թէոզոսիոս մեծաւ զօրութեամբ եւ յա-
ջողութեամբ բազմաւ զիշխանութիւնն վարէր⁷, Պրա-
տիանոս՝ որ արութեամբ եւ աստուածպաշտութեամբ
ոչ ինչ թերադոյն քան զնա էր, թօթախեալ ի նմանէ,
զօրացն՝ զոր յօտարաց դումարեաց, Մաքսիմեայ բռնա-
ւորի ի բուռն անկանէր: Եկեղեցի եւ թագաւորութիւնն
արարին կոծ մեծ ի վերայ նորա: Մաքսիմոս եղաւ զթագ
գաղատացոցն⁸, եւ թուէր իմն՝ եթէ զայն բաժին իւր
շատ համարիցի: Տիկինն Յուստինէ յանուն իւրոյ որ-
դեոյն հրովարտակս գրէր⁹, որով արխանտայ դեւր աւ-

նէր: Սուրբն Ամբրոսիոս, եպիսկոպոսն Մեղիողանոն քաղաքի, զառողջ վարդապետութիւնն, զաղօթս եւ զհամբերութիւն միայն նմա հակառակ դնէր. եւ այնպիսի զեւնուք ոչ միայն զեկեղեցիսն՝ զոր հերետիկոսայքն ըմբռնել ջանային, պահէր, այլ եւ զարքայորդին եւս յուղեղ փառաւորութիւն ածէր: Յայնմ ժամանակի Մաքսիմոս սկսանէր խլրտել, եւ Յուստինէ տիկինն զսուրբ եպիսկոպոսն՝ զոր սպստամբ համարէր, քան զամենայն որ հաւատարիմ գտանէր: Օչնա առեալ առաքէր առ բրունաւորն, բայց եւ նորին բանք խոնարհեցուցանել ածել ի հաւան զանհաւանն չկարէին: Սանուկն Վաղենտինիանոս մարբն հանդերձ փախտակայ մազապուր զերծանէր: Իսկ Մաքսիմոս զհռոմ քաղաք առնոյր, եւ անդ զպաշտօն զիցն սնտուոց նորոգէր, զի զճերակոյան՝ որ դրեթէ տակաւին հեթանոսք էին, զեւրեւ ածիցէ: Յետ համօրէն զարեւմտից աշխարհն նուաճելոյ՝, իբրեւ ի խոր խաղաղութեան զանձն համարէր, թէ՛նոգոսիոս զՓրանկս թիկունս արարեալ, զնա ի պանոնիացւոց աշխարհին վանեալ վիանդէր, ապա յԱլիդիա երթեալ շուրջ պահարկանէր, եւ թողոյր զնա յիւրոց զօրացն սատակել:

Թէնոգոսիոս կայսր, իշխանն միահեծան երկուց թագաւորութեանցն, զարեւմտից իշխանութիւն Վաղենտինիանեայ շնորհէր, այլ նա յերկար ժամանակս զթագաւորութիւնն ըմբռննել չկարաց: Վաշխանս այս մանուկ բարձրացոյց եւ կորացոյց յոյժ զԱրքողաստէս մի յիշխանաց անտի զօրուն Փրանկաց, այր քաջ, որ զանձին օղուտ չինդրէր, սակայն զիշխանութիւնն՝ զոր ի վերայ զօրացն ունէր, ազգի ազգի անօրէնութեամբք վարէր: Մեծացոյց սա Վաւդինէոս բռնակալ՝ որ շատխօսելն միայն գիտէր, եւ զՎաղենտինիանոս սպան, որ զհպարտ եւ զամբարտաւան Փրանկն հրամանատար ունել չկամէր: Սոյն ազէսք մօտ ի Բիէննա քաղաք գաղատացւոց դործէին: Սուրբն Ամբրոսիոս՝ զոր մանուկ թագաւորն կոչեալ էր կնիք առնուլ ի նմանէ, լայր զկորուստ նորա, այլ չէր ամենեւին անյոյս ի նորա փրկութենէն: Նորին մահն ոչ առանց պատժոց պատուհասից մնայր. ՚ յայտնի նշանք՝

յաղթութիւն թէոգոսեայ պարգեւէին, որ զԱւգինէոս եւ զնոտի կուռան՝ զորոց նոյն բռնակալ զպաշտամունսն նորոգեաց, ի բաց ի միջոյ բառնայր: Աւգինէոս ձերբակալ լինէր. հասարակաց վրէժք խնդրէին, եւ նոյն եղևոն ի նորին գլուխ կատարէր. ի սատակել նորա եւ ապստամբքն ցածնուին: Իսկ Արքուպատէս ժանան, լաւ համարէր անձամբ անձին ձեռնամուխ լինել քան ի գլթութիւն յաղթողին պատսպարել, զորոյ զփորձ առին ամենայն ապստամբք՝ որ ի նա ձեռս ետուն:

Թէոգոսիոս ինքնակալ միահեծան, ցանկալի զարմանալի եւ պատճառք ուրախութեան ամենայն տիեզերաց լինէր: Օլիբոնս հասատէր, զհերեսիովտաց բերանս կարկէր, զանսուրբ նուէրս հեթանոսաց ի միջոյ բառնայր, զգրգութիւն հալածական առնէր, եւ զաւելորդ ծախսն կարճէր: Խոնարհութեամբ զիւր յանցուածսն խոստովան լինէր՝ եւ ապաշխարէր. երանելոյն Ամբրոսիոսի մեծանուն վարդապետի եկեղեցւոյ անայր, որ զնա կշտամբեալ յանդիմանէր վասն ցասմանն՝ որ առանձինն բիծ էր այնպիսի մեծի թաղաւորի: Թէպէտ եւ միշտ յաղթող էր, սակայն վասն կարեւոր պիտոյից միայն տայր պատերազմ: Օգոռովուրդն բարեշէն եւ երանելի գործեաց, եւ ինքն մեռաւ ի խաղաղութեանն, առաւել հաւատովքն քան յաղթութեամբքն պայծառազոյն երեւեալ:

Ի նորա աւուրս երանելին Արոնիմոս՝ երէց, մենակեաց բնակութեամբ ի Բեթղահէմ, ի տեղւոջն՝ ուր կենարարն մեր ծնաւ, ՚վասն զրոց սրբոց մեկնութեան յանհնարին վաստակս ձեռնամուխ լինէր, զբաղմոց թարգմանչաց գիրս ընթերցեալ, եւ ընդ պէսպէս մատենաս նուիրական եւ արտաքին պատմութեանց անցեալ, որ զմտաց զրոց ընծայութիւն լուսաւորել բաւական էին. եւ ի Հրէից երբայականէն զաստուածաշունչ գիրս թարգմանէր, զոր եւ բովանդակ եկեղեցւոյ ընկալեալ շարեւեռ բարեբանէին:

Իշխանութիւնն՝ որ առ Թէոգոսեաւ անհնարին առ յաղթութիւն համարէր, առ նորին որդւովքն յանկարծակի փոփոխէր: Արկադէոս զարեւելից զիշխանութիւնն

ըմբռնէր, իսկ Անորիոս զարեւմտից աշխարհն. երկոքին եւս իւրեանց պաշտօնէից ոստիկանութեամբ վարեալ, յուրուք ուրուք առանձինն շահ զիւրեանց իշխանութիւնըն ի կիր արկանէին: Ուռփինոս եւ Աւարոպիոս արքանօրէնք, մի բսա միջէ բարեկամեալ ընդ Արկաղեայ⁵, արագ արագ կորնչէին⁶. եւ իրքն այնու հետեւ չլինէին ակնուազոյն ընդ անաւազ իշխանաւն⁷: Կորին կին Աւգոքսիա տայր նմա զերանելին Յովհան ոսկերերան, զհայրապետ կոստանդինական քաղաքին, եւ զարեւելից լոյսն, հալածական յաշխարհէն վտարել⁸: Սուրբ քահանայապետն Հռոմայ Բնտկենտիոս, եւ ամենայն արեւմտեայ աշխարհն ձեռնառւ էին մեծի եպիսկոպոսին, ընդդէմ թռփոփիղեայ՝ որ հայրապետ էր աղէքսանդրացւոց քաղաքին, եւ արբանեակ զշտոյին բռնութեան:

Արեւմտից աշխարհն⁹ զղորդեալ էր վասն արշաւանայ բարբարոսաց. Ռադալեսէս խուժ ազգաւ եւ հեթանոս, զխտադացւոց աշխարհն յաւարի առնոյր: Սանդաղք, ի Վլթաց ազգէ՝ որ վարիանոսաց ախան ունէին, վայրս ինչ ի դադատացւոց աշխարհէն կալեալ՝ անդուստ յսպանիացւոց աշխարհն տարածանէին: Աղարիկոս թաղաւոր Վլթաց յարեւմտից աշխարհին բնակելոց՝ որ նոյն զունակ զարիանոսաց ցաւսն ջերանէին, բռնադատէր զԱնորիոս, զմեծ դաւառսն զոր Սանդաղքն իւրեանց ի վրտարանդի արարին, նմա ի ձեռս տալ: Ստիղիկոն ի նեղմտեալ ի բարբարոսաց անախ, մերթ հարկանէր մերթ ուղղէր, ապա բարեկամեալ ընդ նոսա, անդրէն ի բաց քակէր, եւ զայն ամենայն յիւր օգուտ գործէր. սակայն զթագաւորութիւնն՝ զոր ի մտի եղեալ էր իւր սեփական խորել, հաստատուն պահեաց:

Յայնմ ժամանակի Արկաղէոս վճարէր¹⁰. եւ չգտեալ զքարժանաւոր յամենայն արեւելից աշխարհին, զիւր որդին թռփոգոսիոս՝ որ էր ամաց իրբեւութից, Հազկերտի Պարսից արքայի յանձն առնէր, ոստիկանութեամբ յանձանձել զմանուկն: Բայց Պողքրա քոյր մանկանն բազում փոյթ նպաստ լինէր ի մեծամեծ իրաց վերակացութիւն: Թագաւորութիւնն թռփոգոսեայ իմաստութեամբ

եւ աստուածապաշտութեամբ տիրենցն, յամուր զգուշութեան պահէր:

Իսկ Անորեայ իշխանութիւնն թուէր իմն մօտ ի խարխալել հասեալ: Օ՛րտիղիկոն ետ սպանանել, եւ զայլ ոք նմին նման ժիր չգտանէր, որում մարթէր տալ զվերահացութիւնն: Յետ նորա մահուանն՝ վիշաք ի վերայ վըշտաց հասանէին, Առստանդիանոսի վտարանջել, բովանդակ դադատացւոց եւ սպանխացւոց աշխարհին վտարել⁵, առնուլ հռոմայեցւոց քաղաքին յԱղարիկեայ եւ յարեմոնեայ Վթաց⁶ որք զառ եւ զսպուռ եւ զաւար քաղաքին առեալ երթային: Ատաւղփոս⁷ որ ուժգնագոյն եւ վայրենագոյն քան զԱղարիկոսն էր, միւսանդամ անդրէն կասուտ կողոպուտ գնոյն քաղաքն առնէր, եւ փութայր իմն համաջինջ աստակել եւ բառնալ զանուն հռոմայեցւոց. բայց դէպք տային Ատաւղփեայ ի միասին տանել զՊղակիդա քոյր թագաւորին, զոր անդ կին առնէր. եւ այն յօգուտ մեծ թագաւորութեանն լինէր, զի օրիորդս այս ի ծառայութիւն վտարանդեալ, ցածուցանէր զընձաւորն: Պութք ընդ հռոմայեցւոց զաշինաբարեկամութեան կռեալ⁸, յսպանխացւոց աշխարհն բնակեցին⁹, իսկ ի դադատացւոց կողմնս զգաւառսն եւ եթ¹⁰ որ առնթեր կան պիւրենական լերանց, անձանց պահեցին: ¹¹Թագաւոր նոցա Ալաղխաս, իմաստութեամբ ըզմեծամեծ խորհուրդսն ի դուռն հանէր: Սպանխացւոց աշխարհն զիւր գեղեցիկ հաստատութիւնն ցուցանէր, եւ ոչ յողորմէր թիւրել ի հաւատոց անտի, ընդ իշխանութեամբ մոլեկան արիանոսացն:

Իսկ Բուրգիսոնքն¹² որ են գերմանիկ ազգաւ, վայրս ինչ շուրջ զԱլենոն գետով ըմբռնէին, անտի ապա ոտն ոտն յառաջ խաղացեալ շահեալ տիրէին աշխարհին¹³ որ եւ ցիմ ամսս կից ի նոցա անուն անուանի: Իսկ Փրանկք Հանգարտէին, ¹⁴ի մտի եղեալ միւսանդամ զիւրեանց ոյժ եւ զզօրութիւն թափել առ ի զգադատացիս նուաճելոյ, զՓարամոնդոս զորդի Մարկոմիրեայ ի բարձ թագաւորութեանն հասուցանէին, ընդ նովաւ միահեծան իշխանութեանն դադխացւոց սկիզբն լինէր, որ երկցա-

գոյն եւ ազնուականագոյն է քան զամենայն իշխանութիւնս՝ որ իցին յաշխարհի :

Մտորիոս ի մանկանէ անժառանգ վախճանէր⁵, եւ չժամանէր իսկ հրաման տալ վասն իշխանութեան իւրոյ : Թէպէտ զնորին քեռորդի զԱ շաքենախնիանոս Պ որդ⁶, զորդի Պղակիզայ, որ ի Առատասայ յերկրորդ առնէն ծնաւ, ինքնակալ անուանէր. եւ զնա վասն տխեղծ հասակին ընդ մօրն ինամովք կարդէր, որում եւ արկնութեան պատիւ շնորհեաց :

Չայնու ժամանակաւ Աեղեասիոս եւ Պեղագիոս զառաջին վեղան⁷, եւ զշնորհան⁸ որով եմքս իսկ քրիստոնեայ⁹, ուրանային : Թէպէտ եւ գունակ գունակ կերպարանէին, սակայն զիբէացւոց ժողովքն զնոսա դատապարտէին : Սեճ քահանայապետն Հոսմայ երանելին Աննոկենա տիոս եւ Չոսիմոս¹⁰ զոր յետոյ երանելին Աեղեասինոս յաջորդեաց, զայն դատաստան հաստատէին, եւ ընդ բնաւ արեղերս սիռեալ տարածանէին : Սուրբն Աւգոստինոս զնոցին զժանտագործ հերետիկոսացն բերանս կարկեր, եւ զեկեղեցի իւրով զարմանալի դրովքն լուսաւորէր : Այն երանելի, օգնականութեամբ Պրոսպերեայ աշակերտին իւրոյ, զկիսապեղագիանոսն եւս պապանձեցուցանէր, որ զարդարութեան սկիզբն եւ զհաւատարն՝ առանձինն զօրութեան անձնիշխանութեան մարգոյն համարէին :

Ի ժամանակի ասա յայմիկ՝ յորում յանհնարին թշուառութիւն պետութիւնն հասանէր, եւ բազում հերձուածական մոլորութիւնք յաճախէին, բարեշէն եւ պերճացեալ լինէր քրիստոնէութիւնն : Այստովութիւն ուստեք զնա յողորդէր, եւ ոչ հերձուածք զեղծուցանէին : Ակեղեցի, լի արամբք աւագօք, զամենայն մոլորութիւնն խայտառակեալս ամօթապարտեալս կացուցանէր : Յետ հալածանացն, հաճոյ թուեցաւ Աստուծոյ զիւրոց վկայիցն փառս սրայծառագոյն գործել. ամենայն պատմութիւնք եւ մատենանք լի են նշանացն զարմանալիօք, զոր սրբոցն օգնականութիւն յուրուք ուրուք կարգալոյ, եւ շիրմք հանդստոցայ նոցա մեծարեալք, ընդ

ամենայն երկիր կատարէին: Ա իգիզաս¹ որ ընդդէմ այսպիսի հասարակաց կարծեաց բախէր, ի սրբոյն Արոնիմեաց ըմբերանեալ², խափանէր: Վրիստոնէութեան հաւատք հաստատէին, եւ որ ըստ օրէ յօրդեալ տարածանէին:

Բայց արեւմտից իշխանութիւնն այլ եւս տակալ չունէր ժոյժ, յայնչափ թշնամեաց նեղեալ՝ յիւրոց զօրափարացն նախանձաւորութենէ առաւել եւս ի տկարութիւն կործանէր: Տիկինն Պղակիզա, նեղութեամբն Աէտեայ, ³ ի կարծիս անկանէր զՆոնիփակեայ՝ որ էր ոստիկան յափրիկեցոց աշխարհին: Մախարարն թշնամանեալ ի տիկնոջէն, զՎենեսերիկոս եւ զԱնդաղը՝ զորս Պութք հալածականս առնէին յսպանիացոց աշխարհէն, կոչէր, այլ անաղան ուրեմն եւ ինքն ստրջանայր զի կոչեաց զբարբարոսն: Յայնժամ զերէացոց աշխարհն ի հռոմայեցոց լինելոյ դադարեաց:

Ակեղեցի ազգի ազգի վիշտս ի բռնութենէ արխանոսացն կրէր, եւ անչափ անչափ դունդս մարտիրոսաց պատկեայս տեսանէր: ⁴ Արիւ մոլեկան հերձուածք յառնէին. Աեստորիոս Աոստանդինուպողսի հայրապետն զՃիսուսի Վրիստոսի զանձն բաժանէր, եւ քսան ամաւ յետոյ, Աւաիքէս հայր վանականաց զերկուս բնութիւնն կենարարին շփոթէր: Արանելին Ալուրեղ՝ որ աղէքսանդրացոց քաղաքին հայրապետ էր, ընդ Աեստորի մաքառէր⁵, որ եւ ի սրբոյ քահանայապետէն Աեղեստինեայ վճիռ դատաստանի բնդունէր: Ափեսեայ ժողովն⁶ որ երրորդ համաշխարհական սիւնհոգոս է, զնոյն վճիռ ի գլուխ տարեալ կատարէր, զԱեստորիոս յիշխանութենէն հանէր, եւ զսրբոյն Աեղեստինեայ հրամանն հաստատէր, զոր եպիսկոպոսք ժողովոյն⁷ հայր անուանէին յիւրեանց սահմանին: Օսուրբ Աոյսն Աստուծոյ մայր ճանաչէին, եւ երանելոյն Ալուրղի վարդապետութիւնն ընդ ամենայն երկիր նշանաւոր լինէր: Թէոդոսիոս, յետ խռովութեան իրիք լինելոյ, հնազանդ լինէր սիւնհոգոսական հրամանացն, եւ զԱեստորիոս ի վտարանդիկս հանեալ սահմանէր: Աւաիքէս⁸, իրրեւ զնոյն հերձուած կամեր

յանդիմանել, անդէն յայլ իմն մոլորութիւն ունատեալ կործանէր, բայց եւ զնա նոյնպէս մերժէին: Սուրբ քահանայապետան Հռոմայ մեծն Ղեւոնդէս զնա դատապարտ առնէր, յանդիմանեալ թղթովք իմն՝ որ ընդ ամենայն արեւելքս մեծարոյ է: Չորրորդ արեւելքական սիւնհոյսն՝ որ ի քաղկեդոնացւոց քաղաքին եղեւ՝, յորում նոյն մեծ քահանայապետան վասն իւրոյ վարդապետութեան, եւ աթոռոյն ճոխութեան, զառաջին պատիւն ունէր, ՂԵՆԱԽԷԷՍ եւ ՂՎԻՍՈՒԿՐՈՍ զաղէքսանդրացւոց հայրապետան, զնորին խորհրդոյ խորհրդակից, նգովէր: Թուղթ սիւնհոյսական հայրապետայն՝ զոր առ մեծն Ղեւոնդէս առաքէին՝, յայանի խկցուցանիցէ՝ եթէ նոյն քահանայապետ զիւր հրեշտակն առաքեալ, որպէս գլուխ առ իւր անդամն, այնպէս գլխաւոր ի մէջ ժողովելոցն լինէր: Մարկիանոս կայսր եկեալ նստէր ի մեծի սիւնհոյսին, ըստ նմանութեան Առատանդիանոսի, եւ նովին պատուով զհրամանն ընդունէր: Պողքրա արկինն յառաջագոյն ընդ նմա ամուսնացեալ, եւ ի թագաւորութիւնն հասուցեալ էր: Քանզի յեղբօրն անորդի վախճանել, ամենեքին զնա արկին ճանաչէին, սակայն պարտ եւ պատշաճ էր եւ զայլ ոք իշխան թագաւորութեանն կացուցանել. եւ Մարկիանեայ արեւելքանութիւնն նմա այնպիսի պատուոյ առիթ լինէր: Ի ժամանակս երկոցունց սիւնհոյսացն թէրորեառս եպիսկոպոսն Ալեքեայ նշառաւոր լինէր, որոյ ամենեւին առանց մեղադրութեան վարդապետութիւնն լինէր, եթէ մատեանքն՝ զոր նա նիւթեաց եհան ընդգէմ սրբոյն Ալեքի, չունէին պէտս յըստակագոյն եւ լուսաւորագոյն մեկնութեան: Աս ողջմտութեամբ զմեկնութիւնն ընծայեցուցանէր, եւ ի ճրջմարտահաւատ եպիսկոպոսացն համարի լինէր:

Պաղատացիք սկիզբն առնուին զչափ առնուլ զգօրութեան Փրանկաց: Աէտիոս զօրաւիգն եղեւ նոցա ընդգէմ Փարամոնդեայ, եւ Աղոգիոնի՝ որոյ անուն յորձորչանաց Հերաւոր կոչէր: Բայց Մերօրեւս քան զամենեսեան արեւելքոյն եղեւ, որ եւ ամբացոյց զիշխանութիւնն, զրեթէ ի նմին խկ ժամանակի՝ յորժամ անդ-

զիացիք ի սաքսոնիացւոց ազգէն, զմեծ աշխարհն բրիտանացւոց կալան, զոր եւ յիւրեանց անուն անուանեցին, եւ բազում թագաւորութիւնս ի նմա հաստատեցին:

Օչայնու ժամանակաւ Հոնք՝ որ բնակեալ նստէին առ Մէտլաին ծովակաւ, բազմազունդ բանակաւ անմարդի եւ թափուր զենաւ տիեզերս կացուցանէին, որոց զօրավարէր Ետտիղա՝ որ էր նոցա թագաւոր, զժնդակագոյն քան զամենայն մարդիկ: Եւտիոս՝ որ զնա ի գաղատացւոց աշխարհին պարտեաց, չկարէր զնա ի քանդելոյ զխաղաղացւոց աշխարհն արգելու: Աղղիքն՝ որ ի հանդրին համատարածն են, բազմաց ապաւէն յերեսաց սրտմտութեան նորա լինէին: Ա ենեաիք քաղաք ի մէջ ջուրցն կանգնէր: Սուրբ քահանայապետն Վեռնդէս, հփօրազոյն քան զԵտիոս եւ քան զՀոռոմոց զօրսն գտանէր, որ մեծապատիւ ի հեթանոս թագաւորէն մեծարէր, եւ զՀոռոմ յաւարառուացն ապրեցուցանէր. բայց ոչ բազում ժամանակք ի վերայ անցանէին, նոյն քաղաք վասն իւրոյ թագաւորին Ա աղենտինիանեայ զեղծ վարուցըն կապուտ կողոպուտ լինէր: Մաքսիմոս՝ զորոյ նա ըզկինն խարդաւանեաց, եզիտ հնարս զնա կորուսանելոյ, մարթանօք զիւր ցաւսն թագուցանէր, եւ որպէս թէ հաճեալ ընդ թագաւորին ամպարշտութիւն, շնորհս ի նմանէ գտանէր: Սորին նենդաւոր խորհրդովք, թագաւորն յապշութիւն կործանեալ զԵտիոս, զպատսպարան թագաւորութեանն, տայր սպանանել: Մաքսիմոս՝ որ առաջնորդ սպանութեանն էր, զԵտեայ բարեկամնն ի վրէժխնդրութիւն դրդուէր, եւ զթագաւորն տայր վախճանել: Սովին օրինօք ամբարձաւ Մաքսիմոս յաթոռ թագաւորութեան. եւ թախանձէր զգլխոյն Աւգոստիա, զդուտար թէոզոսեայ կրտսերոյ՝ ամուսնանալ ընդ նմա: Եւ ի նորա ձեռացն զերծանելոյ, փութացաւ տիկինն ձեռս տալ ի Պենտերիկոս: Հոռոմայեցւոց քաղաքն մատնէր յաւար բարբարոսին, չլինէր ումէք մարթ, բայ ի սրբոյն Վեռնդէայ արգելուլ զխուժն՝ զի մի յայրեաց եւ յաւեր զքաղաքն դարձուցանիցէ: Մաքսիմոս յամբոխն պատառ պատառ կոտորէր, ի մէջ այնչափ եկեալ

հասեալ վշտաց այս միայն մխիթարութիւն եղև ժողովրդեանն:

Արեւմտից աշխարհն համակ ի խռովութեան էր, ի նմին իսկ ժամանակի բազում ինքնակալք յառնէին, եւ անդէն անկանէին: Վրան զամենեսեան Վայծառազոյն լինէր Մայիորիանոս: Աւիտոս^Բ անձամբ անձին զիւր աւուռն եղծանէր, եւ եպիսկոպոս լեալ զերծանէր ի մահուանէն: Հռոմայեցիք Մերոբեայ, եւ Վիզզերիկեայ նորին որդւոյ, զդէմ ունել չկարէին. այլ հուսկ յեախնն՝ Վիզզերիկոս, վասն իւրոյ զեղխադործութեան մօտ ի կործանումն հասանէր: Իւր հնազանդեալքն զնա մերժէին^Գ, այլ մի ոմն ի կարեւոր բարեկամացն՝ որ եկաց մնաց հաւատարիմ^Դ, զնա անդրէն տայր կոչել: Ասան արութեանն ահագին թշնամեացն լինէր, եւ ի դազատացւոց աշխարհին զիւր իշխանութիւնն բնդարձակէր: Արեւելից աշխարհն ի խաղաղութեան վայելէր ընդ իշխանութեամբըն՝ Վեոնդեայ^Ա որ ի թրակացւոց աշխարհէն էր, եւ յաջորդեաց զթագաւորութիւնն Մարիկանեայ, եւ ընդ Օւենոնիւ^Բ որ էր փեսայ Վեոնդեայ եւ զնա պայազատեաց: Բասիղիսկեայ ապստամբութիւնն^Բ որ իսկ եւ իսկ նուաձեցաւ, սակաւ ինչ խռովութեան պատճառք կայսերն լինէր: Իսկ արեւմտից թագաւորութիւնն գլեալին իսկ աւերն կրեաց: Աւգոստոս^Բ որ Աւգոստուղոս յորջորջեցաւ, Արեստեայ որդի, հուսկ վերջին թագաւոր եկաց ի Հռոմ. եւ իսկ եւ իսկ յետոյ յԱլգոսկրեայ յերուզիացւոց թագաւորէ ի պատուոյն անկանէր: Արուղիացիքն ազգ էին՝ որ եկեալ հասանէին յԱւքսինոս ծովէ, եւ ի սակաւ ժամանակի անտէրունչք լինէին:

Յարեւելից աշխարհին, Օւենոն կայսր նորանշան իմն օրինակաւ զանձն անուանի գործել ձեռներեց լինէր: Սա եղև առաջին ի թագաւորաց՝ որ ժտեաց զհաւատոց խընդիրան յարդարել: Սինչ գեռ հերձուածօղք՝ որ խորհրդակից էին ձախող աղանդոյն եւախրիանոսաց, գիմադարձ քաղկեդոնական սիւնհոգոսին լինէին^Բ, թագաւորն հակառակ նմին գիրս իմն նիւթեաց եհան, զոր Անտոնիոն անուանէին, որ է միաբանութեանն վճիռ: Ար առողջ միաս

ունէին խորշէին եւ գարշէին անտի՞, զոր եւ Փեղէքս
 Գ որդ քահանայապետ խոտեաց եւ մերժեաց: Թէո-
 դորիկոս թագաւոր Գթաց՝ որ յարեւելից աշխարհին
 բնակէին՞, զերուղիացիս ի քաղաքէն հռոմայեցւոց հա-
 լածական ասներ, եւ զխաղացւոց թագաւորութիւնն
 կանգնէր՞: Սա թէպէտ եւ յարիանոսաց ազանդոյ ան-
 տի էր, սակայն եւ ճշմարտութեան հաւատոցն բողում
 զիւրութիւն ասներ: Ընաստասիոս յարեւելս ընդ նմին
 ճշմարտութեան հաւատոցն ոգորէր: Գնայր նա զճա-
 նագարհս իւրոյ նախնոյն Օննոնի՞, եւ էր թիկունք
 հերեսիովաացն, որով եւ խոտեցաւ իսկ ի ժողովրդենէն՞,
 եւ շեղեւ նմա հնար միւսանդամ զնոսա զիւրեւ ածել,
 թէպէտ եւ զճանրատաղաուկ հարկան երարծ: Խաղա-
 ցւոց աշխարհն Թէոդորիկեայ ի հնազանդութեան կայր:
 Ոգոսիրոս ի նեղ մտեալ ի Հռաւեննա, փութայր դաշ-
 նաւորութեամբ զանձն ասրեցուցանել. Թէոդորիկոս չը-
 կայր յուխտին, եւ երուղիացիք բռնադատէին յաշխար-
 հէն թափել: Թէոդորիկոս, բաց յիտաղացւոց կող-
 մանցն, եւ զՊրովենկիա ընդ ձեռամբ նուաճեալ ունէր:
 Ի նորա աւուրսն, երանելին Բենեդիկտոս՞, յանապատ
 ուրեր խաղացւոց աշխարհին երթեալ մենակեցութեամբ
 դադարէր, եւ անդստին ի մատաղ հասակէն սկիզբն աւ-
 նէր սրբական վարուցն՝ զորոյ յետոյ զազնուական կարգան
 գրեալ ծագկեցուցանէր, զոր ամենայն վանականացն ա-
 րեւմտից ընկալեալ մեծարէին, ըստ օրինակի կարգացն
 սրբոյն Բարսղի՞ որ յարեւելից աշխարհին մեծարոյ եղեն:

Գաղատացիք զհռոմայեցիս ի սպառ նշահացին յազ-
 թութեամբքն Աղովսեայ որդւոյ Վիդդերիկեայ. որ եւ
 ընդդէմ Գերմանից նոյն օրինակ ի Տողբիակ նշան յազ-
 թութեան կանգնէր, քանզի ուխտ եղեալ էր քրիստո-
 նեայ լինել, եւ նորին կինն եւս Աղտիղդէ անդադար ի
 նոյն թեւաղիք լինէր: Տիկինս այս ի տոհմէ թագաւորացն
 բուրգոնացւոց էր, եւ ճշմարտահաւատ նախանձաւոր,
 թէպէտ եւ իւր տունն եւ աղդ ի պիղծ ազանդն արխա-
 նոսաց յօժարեալ էին: Աղովեա, ի սրբոյն Վաստեայ
 կրթեալ, ի Հռոմս քաղաքի յերանելոյն Ռեմեայ՝ որ

էր մետրապոլիտ այնր քաղաքի, իւրովք սեփականօքն մկրտէր: Սա միայն յամենայն թաղաւորաց, համաշխարհական հաւատոցն պատասպարան դատանէր, եւ ԲՐԻՍՏՈՆԵՑ ԸՋՆԻԻ՞ անուանելոյ զիւր պայազատսն արժանի առնէր: Ղականա տուեալ ընդ Աղարիկեայ թաղաւորի Վթաց արեւմտից, իւրովք իսկ ձեռօք զնա սպանանէր՞. եւ տողոսացւոց քաղաքն եւ Ակիտենիա ի նորա թաղաւորութիւնն յաւելուին: Բայց արեւելից Վթաց յաղթութիւնն, զքնաւ՝ մինչեւ ի պիւրենական լերինսն նուաճելոյ խափան լինէր, եւ կատարած թաղաւորութեան նորա՞ զսկզբանն փառսն մթացոյց: Չորեցունց որդւոցն նորա զթաղաւորութիւն բաժանեալ՞, ընդ միմեանս անկանէին: Մնաստասիրոս ի հրացան բարկութենէ սատակէր՞:

Յուստինոս՝ որ չէր ազնուական, բայց ժիր եւ անհնարին աստուածապաշտ, ի խորհրդական ատենակալացն ինքնակալ անուանէր: Համօրէն իւրովք ժողովրդովքն սրբոյն Արմիզայ քահանայապետի հրամանացն հնազանդ լինէր, եւ ամենայն խռովութիւնք եկեղեցեաց արեւելից դադարէին: Ի նորա աւուրսն, Բոէկէս՞ հոյակապ վարդապետութեամբն եւ ազգին ազնուականութեամբ, եւ Աիմաքոս նորին աներն, ի մեծ պատիւ աւազութեան հասեալ Թէոդորիկեայ նախանձուն մատնեցան, որ վայրապար կարծիս ի մտի զնէր, որպէս թէ հակառակ իշխանութեանն մտարերիցեն: Թաղաւորն, ի չարեացն խղճէ ցնորեալ, թուէր իմն ի վերայ սկանդն՝ զոր նմա պաշտէին, զԱիմաքեայ զգլուխն տեսանել, եւ սակաւ մի ժամանակ յետոյ վախճանէր: Մնադասոնտէ, նորին դուստրը, եւ մայր Ատաղարիկեայ՝ որում՝ անկ էր թաղաւորութիւնն յետ իւրոյ հաւոյն մահուան, ի Վթաց խափանեալ չկարէր զմանուէն, որպէս ինչ ազգին ազնուականութեան վայել էր, կրթել. եւ յակամայ իսկ եւ ի հարկէ թողեալ զնա ընդ մանկաին հասակակիցս իւր, տեսանէր զի զառաճանէր մանուէն, եւ չկարէր մարթել Հնարս իրացն դատանել:

Յետ տարեւոր ժամանակի՞, Յուստինոս վճարէր յետ զիւր քեռորդին Յուստինիանոս բարձակից իշխա-

նութեանն առնելոյ, որոյ երկայնաձիգ ժամանակաւ իշխանութիւն հռչակաւոր է վասն Տրիրոնիանեայ վաստակոցն, որ արար քաղուածոյս յիրաւանց հռոմայեցւոց, եւ վասն նշաւակութեան Բեղիսարեայ եւ Ներսէսի ներքինոյ: Արիոքեան զօրավարքս անուանիք եւ հոյակապք, զՊարսիկս կարճէին, զՎութս արեւելեայս եւ զԱյնդաղս խորտակէին, զղիբէաստան եւ զԽաղացւոց աշխարհըն, եւ զՀռոմ քաղաք անդրէն ընդ հռոմայեցւոց իշխանութեամբն նուաճէին. իսկ կայսրն խանտայր ընդ նոցա փառսն, այլ չնախանձէր զնոյն օրինակ առաքինութիւն ընդ նոսա առաքինանալ. եւ փոխանակ զօրաւիգն օգնականութեան լինելոյ, հանապազ զնոսա ի խռովութիւն արկանէր:

Պաղիսացւոց թաղաւորութիւնն ընդարձակէր⁶: Քիզերերրոտս եւ Աղոսերոտս, որդիք Աղովսեայ, զըուրդոնացւոց թաղաւորութիւն ընդ ձեռամբ նուաճէին: Ի նմին ժամանակի զօրդիան կրտսերս Աղոզոմիրեայ եղբօրն իւրեանց, իշխանութեան նորա ակն եղեալ, սատակէին, եւ զնորա թաղաւորութիւնն ի մէջ իւրեանց բաժանէին: Սակաւ ինչ ժամանակ յետոյ, մինչ զեռ Բեղիսարիոսն ընդ Պութս արեւելից ի մարտ պատերազմի բախէր, իշխանութիւնն՝ զար ի դաղատացւոց աշխարհին ունէին նոքա, դաղիսացւոց մատնէր: Սոքազայնու ժամանակաւ անդրքան զՍենոն դեռ զիւրեանց սահմանս տարածանէին. սակայն բաժինք կալուածոց իշխանացն՝ որ իբրեւ ուրոյն թաղաւորութիւնք էին, չթողուին նոցա ընդ միով իշխանաւ միարանել: Պլիսաւոր բաժինք աշխարհին էին նեւտարիացւոցն եւ աւստրասիացւոց, որ է՝ արեւմտից եւ արեւելից Պաղիս:

Ի նմին իսկ տարւոջ յորում Ներսէս զՀռոմ քաղաք անդրէն նուաճէր⁷, Յուստինիանոս ի Աոստանդինուպոլիս զհինգերորդ տիեզերական սիւնհոգոսն դումարէր, որ զառաջին սիւնհոգոսն հաստատեաց, եւ զիրս իմն մերձաւորս Նեստորի խոտորութեան դատապարտեաց. որ եւ երեք դուլիք անուանեալ կոչէին, վասն յերից արանց գրելոյ: Օսոցանէ՝ որ վախճանեալ իսկ էին ի բազում

ժամանակաց հետէ, բազում զրոյցք լինէին յայնմ ժամանակի: Թէոփորայ մոպսուեսացւոց եպիսկոպոսի յիշատակն եւ մատենաք, թուղթ մի Խրասայ եգեսացւոց եպիսկոպոսի, եւ ի գրոցն Թէոփորեայ, որ ինչ հակառակ երանելոյն Աւերդի գրեալ կային, դատապարտեցան. նոյնպունակ եւ Արտալինեայ մատենաքն՝ որ ի բազում ժամանակաց հետէ արեւելից աշխարհին խռովութեան պատճառք լինէին, իրրեւ զնոսանս ի բաց ընկեցան: Ըստ սիւնհոդոս՝ որում անօրէն խորհրդովք սկիզբն եղեւ, բարւոք յանգ ելեալ կատարէր. զոր ընդունէր եւ սուրբ քահանայապետն Հոռոմայ՝ որ զառաջինն հակառակ կայր:

Օրկրկեամ մի յետոյ քան զսիւնհոդոսն՝, Ներսէս՝ որ զեաղացւոց աշխարհ ի Պթաց եհան, զնոյն ի գաղկացւոց եւս զերծուցանէր. եւ մեծասքանչ նշան յաղթութեան կանգնէր ընդդէմ Բուկեղինեայ զօրավարի զօրացն աւսորասիացւոց: Յետ այսր ամենայնի առաւելութեանց, իտաղացւոց աշխարհն զկայր մնայր ընդ երկար ընդ իշխանութեամբ թաղաւորին: Ըստ Յուստինեաւ Բրորդիւ, Յուստինիանեայ քեռորդւովն՝, եւ յետ Ներսէսի մեռանելոյ, զոնգորարացւոց թաղաւորութիւնն յԱղբինեայ կանգնէր: Կալաւ նա զԱրտաղանոն քաղաք եւ զՊաւլիա՞. Հոռոմոց քաղաքն եւ Հաւեննա հազիւ ի նորա ձեռացն զերծանէին: Ղոնգորարացիք անհնարին վիշտս հոռոմայեցւոց հասուցանէին: Ինքնակալք հոռոմայեցւոց յամենայն կողմանց յարշաւանաց Արուարաց՝ որ ի Խաղտեաց ազգէն էին, ի Տաճկաց բնակելոց յարարացւոց աշխարհին, եւ առաւել ի Պարսից նեղեալ, որպէս պարտն էր՝ Հոռոմ քաղաքին ի թիկունս հասանել չկարէին: Յուստինոս՝ որ իւրում անձին եւ իւրոց կարեացն միայն անսոյր, ցանգ ի Պարսից եւ ի Խոսրովայ նոցին թաղաւորէ խորտակէր: Օայնչափ կորուստն ըզմտաւ աճեալ յանհնարին վհատութիւն կործանէր, մինչեւ յափշտութիւն զառաժանել: Ընտու հետեւ նորին կինն Պոփիա կայր յանձանձիւ իշխանութեանն: Այլուկ եւ հէք իշխանն անազան ուրեմն ի միտս եկեալ զդատաւանայր՞, եւ իրրեւ մեռանէրն՝ ի միտ առնոյր զնենպու-

Թիւն իւրոց սուտակասպասաց՝ որ նմայն փաղաքէին : Յեանորա, Տիրերոս Բ՝ բորդ՝ զոր նա ինքնակալ անուանեաց, Թշնամեացն յաղթէր, զժողովուրդան սփոխէր^Ե, եւ իւրով ողորմութեամբքն մեծանայր : Ասորով արքայ ամբարտաւան տեսեալ զՄաւրիանայ յաղթութիւնսն^Ը, որ ի կապաղովկացւոց աշխարհէն էր եւ իշխան զօրաց կայսերն, առ զայրուցս սրամտութեանն սատակէր : Մաւրիաիոս իւրոց յաղթութեանցն փոխարէնս զԹաղաւորութիւնն ընդունէր^Թ, զոր նմա Տիրերոս ի մեռանել իւրում շնորհեաց, ընդ նմին եւ զԼւր դուստրն Աստանդինա եւ նմա կնութեան :

Օչայնու ժամանակաւ հզարտ ամբարտաւանն Փրեզեղոնդա, կին Թաղաւորին Վիղպերիկեայ առաջնոց, բազում խռովութեան պատճառք գաղկացւոցն լինէր. եւ զԹաղաւորս աշխարհին սատիկ պատերազմաւ ընդ միմեանս արկանէր :

Մինչ գեռ անհնարին աղէտք յխաղացւոց աշխարհին լինէին, եւ^Թ սրածութեան ակա զՀռոմոց քաղաքն նեղէր, երանելին Վրիգորիոս՝ որ Մեծն յորջորջեցաւ, յակամայ իւր յաթոռն սրբոյն Պետրոսի նստէր : Վահանայապետս այս մեծ՝ իւրովք աղօթիւք զժանան հալածէր, զԹաղաւորսն կրթէր, եւ ի պատշաճական հնազանդութիւն զնոսա ածէր. զպփրիկեցւոց աշխարհն մխիթարեալ ամրացուցանէր. ի սպանիացւոց աշխարհին զՎութս արեւմտեայս՝ որ յարիանոսաց աղանդոյն յուղիղ փառաւորութիւն դարձեալ էին, հաստատէր. նոյնպէս եւ զՎեկարեդոս ճշմարտահաւատ՝ որ նորոգ զճշմարտութեան հաւատսն ընկալեալ էր, պնդէր. զանդղիացւոց աշխարհն դարձուցանէր. ի գաղկացւոց աշխարհին զկարգա խրատու յերիւրէր, եւ զնոցա Թաղաւորսն՝ որ հանապաղ ուղղահաւատք էին, առաւել քան զամենայն Թաղաւորս փառաւորէր. զընդորարդացիս ցածուցանէր. զՀռոմ եւ զՎատաղիւս ուր ինքնակալքն ի Թիկունս հասանել չկարէին, ապրեցուցանէր. զամբարհաւածութիւն հայրապետաց կոստանդինական քաղաքին սանձահարէր. զընտելեղեցի իւրովք վարդապետութեամբքն լուսաւորէր. ա-

րեւելից եւ արեւմտից կողմանցն՝ հաստատութեամբ եւ խոնարհութեամբ առաջնորդէր, եւ օրինակ կատարեալ եկեղեցւոյ կարգաց առաջնորդութեան ամենեցուն ընծայեցուցանէր:

Յեկեղեցւոյ պատմութեան չիք ինչ առաւել գեղեցիկ եւ աղնուական, քան զարրոյ վանականին Աւգոստինոսայ ի կանտացւոց թագաւորութիւնն մտանել⁵ հանգերձ քառասուն եւս իւրովք զուգականօք⁷, որոց զինի նշանի տէրունական խաչին, եւ պատկերի մեծի թագաւորին տեսուն մերոյ Յիսուսի Վրիստոսի ընթացեալ, ազօթս եւ պաղատանս առ Աստուած վասն դարձի անգղեացւոց աշխարհին մատուցանէին: Սուրբն Վրիգոր՝ որ զնոսայն առաքեալ էր ի նոյն մշակութիւն քարոզութեան, առաքելախօս թղթովքն զնոսս վարժեալ կրթէր. եւ զզուշացուցանէր զերանելին Աւգոստինոսս, զի մի ի մէջ յաճախ սքանչելեացն՝ զոր զարմանադործն Աստուած ի ձեռն նորին պաշտամանն դործէր, յանձն ինչ ապաստան լինիցի⁶: Բերթա դշնոյն գաղեացւոց զարքայն Ադիլդերեդոս զիւր այրն ի քրիստոնէութեան հաւատս դարձուցանէր: Թագաւորքն գաղեացւոց եւ տիկինն Բրունաւազտ նորոյ քարոզութեանն թեկն ածէին: Ապիսկոպոսունք եւս աշխարհին ի նոյն հոգեւորական փոյթ նպաստ լինէին, որք եւ քահանայապետին հրամանաւ զսուրբն Աւգոստինոսս ի նուիրական եպիսկոպոսութիւնն օծանէին⁸: Թախունք օգնականութեանն՝ զոր սուրբն Վրիգոր նորրնծայ եպիսկոպոսին առաքէր, բազում նորանշան զարմանալի դործս դործէին⁹. եւ անգղեացւոց եկեղեցին յօրինեալ յարդարէր: Սաւրիտիոս ինքնակալ զփորձ առեալ զհաւատարմութեան սրրոյ քահանայապետին, նորին խրատութն զգոստանայր, եւ յարգանս եւ դովութիւնս արժանաւորս քրիստոնեայ թագաւորի ի նմանէ ընդունէր, վասն փութոյ աստուածպաշտութեանն՝ որով չտայր թոյլ իւրոյ ժամանակին հրեւսիովտացն ճոխանալ: Բայց եւ այնպիսի աստուածապաշտ թագաւոր ի կարեւոր ինչ իրս սխալեաց⁷. զանթիւ բազմութիւն հռոմայեցւոց ի ձեռս բարբարոսաց թողոյր կորնչել, վասն չտալոյ զգինս փրկա-

նայն դրամ մի առ դուրս : Այլ վաղվադակի սորջանայր աստուածասէր թագաւորն, եւ զԱստուած աղաչէր ասա պատուհասել, եւ մի յանախ տանջանն մատնել : Փոկաս յետս կայր¹⁵ ի նմանէ եւ առաջի աչաց նորա զազգաստոհմն նորա կոտորէր. յետ ամենեցուն եւ ինքն ինքնակախն փողոտեցաւ. նա յամենայն չարիան՝ զոր կրէր, անմոռնէ կայր, եւ զայն միայն յեղձեղէր, զոր սաղմասա նուազն ասէ՞¹⁶ եթէ Արդար ես դու Տէր, եւ ճշմարիտ են դատաստանք քո : Փոկաս՝ որ անօրէն սպանութեամբն ըմբռնեաց զաթոռն, պատիւ արարեալ մեծարէր ըզսուրբ քահանայապետն, եւ զնորա պատուոյն առաւելութիւն հաստատէր, եւ այսպէս մարթանօք զժողովուրդն զեւրեւ ածել ջանայր : Այլ վճիռ դատաստանի նորա հատեալ էր¹⁷ : Արակղիտս¹⁸ ի զօրաց անախ՝ որ ի զերէացեաց աշխարհին էին, ինքնակալ անուանէր, եւ խաղայր ի մարտ պատերազմի ի վերայ նորա : Փոկաս ի միտ առ յայնժամ՝ եթէ առաւել անառակութիւնք քան անաղորոյն խտուրթիւն իշխանաց փնաս գործեն. քանզի Փոխնոս՝ զորոյ նա զկինն լլկեալ էր, մատնէր զնա ի ձեռս Արակղեայ՝ որ սայր առ ետեղ սպանանել զանօրէնն :

Սակաւ ինչ յետոյ անհնարին դժնդակ աղէաք դազեացեաց աշխարհին հասանէին : Տիկինն Բրուհաղտէ¹⁹, մատնեալ ի ձեռս Աղոտերեայ Բրորդի, յանհնարին լլկանրս մատնէր ի նորա ամբարտաւանութենէն. յիշատակ նորա եղծանէր, եւ առաքինութիւն նորա՝ որ այնչափ գովեալ եւ դրուատեալ է ի սուրբ քահանայապետէն Պարիզորէ, չկայր յակաստանի :

Իսկ հռոմայեցեաց իշխանութիւնն ի կործանումն հասեալ էր : Խոսրով Բրորդ արքայ Պարսից, զվրէժ մահուանն Սաւրիտեայ բարուրս առնէր, զի զՓոկաս կորուսանիցէ : Բնդ իշխանութեամբն Արակղեայ եւս՝ բազում վայրս ի հռոմայեցեաց վտարէր : Վայսն ճակատ տուեալ խորտակէր, ճշմարիտ խաչովայսն յայրազեաց առնոյր. ²⁰սպա գէպք եւ սատահարք սատահէին Արակղեայ հնգիցս նշան յաղթութեան կանգնել. յայնժամ հռոմայեցիք ի Պարսից աշխարհն արչաւէին, Խոսրով

յիւրմէ որդւոյն սատակէր, եւ զսուրբ խաչն անդրէն կորզէին հռոմայեցիք :

Մինչ դեռ Պարսից բռնութիւնն այնպէս նուաճէր, այլ սոխ բռնադոյն ընդդէմ Հռոմոց իշխանութեանն եւ ամենայն քրիստոնէութեան յառնէր : Սահմէա ի մէջ Տաճկաց մարդարէ ճանաչէր⁵ : Ի Մեկկա քաղաքէ յիւրոց սեպհականաց հալածական լինէր : Ի նորին փախստենէ Տաճիկք զիւրեանց ժամանակն համարին : Սուտ մարդարէն ի հաստատութիւն իւրոյ առաքելութեանն՝ զիւր յաղթութիւնն ընծայեցուցանէր : Յիննամեայ ժամանակի զբնաւ արարացւոց աշխարհն, որ կամօք որ ակամայ, ընդ ձեռամբ նուաճէր, եւ պայազատաց թաղաւորութեանն հիմն արկանէր :

Ի նոյն չարիս յաւելաւ եւ մոնոթեղիտաց հերձուածըն⁶, որք թէպէտ եւ երկուս բնութիւնս ի Տէր մեր ճանաչէին, սակայն երկուս կամն ընդունել չյօժարէին, որ յեանոյ անմտութեան է : Արպէս թէ մարդկութիւնն նորա, ըստ նոցա անհամութեանն, չկամիցի ինչ, եւ ի Վրիստոս Յիսուս՝ միայն Բանին կամք դառնիցին : Հերեսիովտայքս այսոքիկ վտարանդի բանիւք զիւրեանց մոլորութեանն ժանկարեր թոյնս ծածկէին, խաղաղութեան կերպարանօք պատուէր տային՝ զի մի ոք ուրեք զմիոջէ կամ զերկուց կամաց խօսիցի : Արք եւ մենքենաւորութեամբ զՄնորիոս զառաջին, զհռոմայեցւոց քահանայապետն զեղծուցանէին⁷ : որ ի նոցա խորհուրդս միտեալ, յանձն առնոյր հաւանել լուութեանն, որով ստութիւն եւ ճշմարտութիւն ի միասին զօղեալ թաղէին : Յետ սակաւ ինչ ժամանակաց⁸, Արակղիոս ինքնակալ ձեռներէց լինէր իւրով ճոխութեամբ զինդիրն լուծանել, եւ գիրս իմն մերձաւոր նոցա մոլորութեանն դրեալ ցուցանէր, որում մեկնութիւն անուն եզ, եւ այն յաւելուած չարեաց լինէր : Սակայն հերեսիովտացն խարէութիւն խայտառակէր : ⁹Յովհաննէս Վրորդ քահանայապետ զԱրակղեայ մեկնութեան գիրսն դատապարտէր : Աստանդոս նորին թռռն, զիւրոյ հաւոյն գիրս այլով հրովարտակաւ՝ զոր պատճէն անուանեալ կոչէին, պատրա-

պարէր^է: Սուրբ աթոռն, եւ թէոզորոս քահանայապետ, նորին ժպրհութեանն հակառակ յառնէին^Ը: Արանելի քահանայապետն Մարտինոս առաջին, զ՛լ ատերանեայ սիւնհոգոսն զումարէր, յորում զպատճէն Աստանդեայ եւ զնոցին հերեսիովտաց զգլխաւորսն նորովէր: Սուրբն Մաքսիմոս՝ որ յամենայն արեւելից աշխարհին անուանի եւ հոյակապ էր վասն իւրոյ աստուածաբաշտութեանն եւ վարդապետութեան, թողոյր լքանէր զարքունիսն՝ որ ընդ նոյն խոհեր հերեսիովտացն թաթաւեալ էր, եւ զթագաւորսն՝ որ զհաւատոցն խնդիրս լուծանել յանդգնէին, ազատարեան բարբառով կշտամբեալ յանդիմանէր. վասն որոյ եւ ազգի ազգի վիշտս եւ լլկանս վասն համաշխարհական կրօնիցն կրէր^Թ: Քահանայապետն բազում անգամ վտարանդեալ, եւ ցանգ յանադորոյն խստութենէ ինքնակալին նեղեալ, ի տառապանս առանց տրանջերոյ մեռանէր^Ր, եւ ի գեղեցիկ հաստատութենէն արժանի իւրում պաշտամանն, ոչինչ իւլէք թուլանայր:

Իսկ անգղիացւոց եկեղեցին՝ որ նորրնձայ ի հաւատան էր, յաղնուական փութոյ քահանայապետացն Բոնիփակեայ Ա երորդի, եւ Անորեայ պնդեալ ամրացեալ, ընդ ամենայն երկիր մեծանուն եւ հռչակաւոր լինէր: Աշանագործութիւնք հանդերձ առաքինութեամբք, որպէս յառաքելոց ժամանակս, նոյնպէս եւ աստ յաճախէին. եւ չէր ինչ անդ առաւել շնաշխարհիկ ի տեսանել, որպէս իւրոց թագաւորացն սրբութիւն: Ադուինոս, հանդերձ իւրովք ժողովրդովք, դառնայր ի հաւատարս^Յ որ նմա յաղթութիւն ի վերայ թշնամեացն շնորհեալ էր, ապա եւ զիւր արուարձականսն եւս նոյնպէս դարձուցանէր: Ասրաղդէս^Ն թարգման աւետարանական վարդապետութեանն քարոզացն լինէր. եւ որ այնպէս անուանի յաղթութեամբքն էր, զքրիստոնեայն լինել առաւել քան զիւր փառան մեծարոյ եւ պատուական համարէր: Սերկիացիքն՝ Սսուխնեայ նորթումբերդանդացւոց թագաւորէ ի հաւատոս դառնային: Ացոյն սահմանորդքն եւ պոյաղատք եւս, զնոյս զհետ չորան. եւ բարեացն նոցա՝ զոր գործէին, չէր թիւ եւ համար:

Իսկ յարեւելից կողմանն ամենայն ինչ յապահանու-
թիւն երթայր: Մինչ դեռ ինքնակալք ի կրօնիցն խրճ-
բիծս դեղերեալ մաշէին⁵, եւ ազդի ազդե հերեախու-
թեանց գտակ լինէին, Տաճիկք զօրաժողով լեալ յաշ-
խարհն արշաւեցին. զԱսորոց եւ զպաղեստինացոց աշ-
խարհն կալան, եւ զսուրբ դետինն նուաճեցին. նոյնպե-
սակ եւ զհզօր թագաւորութիւն Պարսից՝ որ ի բաժնից
եւ հերձուածոց ձեղքեալ էր, առանց ուրուք զիմադարձ
լինելոյ ի հարկի կացուցանէին: Ի զերէաստան մեհեան,
զաշխարհն ընդ նահանգաւ արարին⁶. կիսբացոց կղզին
եւս ի նոսա ձեռս տայր⁷: Օճմենայն աշխարհն՝ զոր
երեսնամեայ ժամանակաւ ընդ ձեռամբ նուաճեցին, ի
Մահոմէեայ թագաւորութիւնն յաւելին:

Իտաղացոց աշխարհն, միշտ եղուկ եւ ընդվայր-
ընկեցիկ, յարշաւանաց զոնգորարդացոցն նեղէր: Աոս-
տանդոս, իբրեւ տեսանէր՝ եթէ չիք հնար ամենեւին զնու-
սա յաշխարհէն հանելոյ, ի մտի գնէր այնու հետեւ աւա-
րարար առնուլ, զոր մարտի պայմանաւ նուաճել չկարէր:
Անագորունադոյն քան զզոնգորարդացիան գտաւ. ի Հոմ
եկեալ⁸ զգանձն յաւարի առնոյր, եւ ոչ իսկ եկեղեցիք
մարթացան ի նորա ժլատութենէն սպրել. զսարգոնիա-
ցոց եւ զսիկիղիացոց աշխարհն խլէր. եւ ընդ բնաւ
երկիր ատելի լեալ սպա յիւրոյն մեռանէր⁹: Առ նորին
որդւով Աոստանդիանոսիւ՝ որ Պոլոնաստան յորժորջեցաւ,
Տաճիկք¹⁰ զկիղիկեցոց եւ զեկիացոց կողմանն ըմ-
բռնէին: Թագաւորակաց քաղաքն կոստանդինական պա-
շարեալ¹¹, սքանչելեօք սպրէր: Իռւղզաբք, յազոց ան-
ախ՝ որ առ Աթէղ գետով բնակեալ են, եկեալ ի թշնա-
միս անդր հոռոմայեցոց յարէին¹², եւ վայրս ինչ ի թրա-
կացոց աշխարհէն վտարէին, որ յետոյ կից ի նոցա անուն
անուանեցաւ, եւ յառաջն Միւսիա կոչէր:

Անգղիացոց եկեղեցին այլ եւս եկեղեցիս ծնանէր.
սուրբն Վիգիլիոզոս յորկացոց եպիսկոպոսն յիւրմէ ա-
թոռոյն հարաձական լեալ, զՓրիսիա դարձուցանէր:

Նամօրէն եկեղեցի ի Աոստանդինուպոզսի սիւնհո-
ղոսէն¹³ որ է վեցերորդ անգլերական սիւնհողոս, նոր

լուսաւորական կարգս ընդունէր: Սուրբն Ագաթն քահանայապետ զիւր հրեշտակն գահերէցս յիւր անուն անգրք առաքէր, եւ զարմանալի թղթովքն զհամաշխարհական հաւատս մեկնէր: Սիւնհոգոսն զեպիսկոպոս մի՞ որ նշանաւոր էր վարդապետութեամբ, եւ զայլ ոմն աղէքսանդրացւոց հայրապետ, եւ չորս հայրապետս կոստանդինական քաղաքին, զգլխաւորս հերեսիովտաց՝ որք մի կամն ի Վրիստոս զնէին, հանգերձ Ստրեաւ քահանայապետաւ՝ որ չեկաց հակառակ մոլորութեան նոցա, խուտեալ նդովէր: Յետ Ագաթնեայ մահուանն, որ ի ժամանակս սիւնհոգոսին զիպեցաւ, սուրբ քահանայապետն Վեռնդէս Քրորդ զվճիռս ժողովոյն հաստատեաց եւ զամենայն նդովն ընկալաւ: Առսանդիանոս Պոզնետոս, ըստ նմանութեան մեծին Առսանդիանոսի եւ Մարկիանեայ եկեալ մտանէր ի մեջ սիւնհոգոսական հայրապետացրն. որ եւ զնոյն մեծարանս ըստ օրինակի նոցա ցուցանէր, վասն այնորիկ եւ ինքն նովին պատուով, իրբեւ զուղարհաւատ պաշտօնաւոր, իրբեւ զխաղաղասէր թագաւոր, իրբեւ զնորոգիչ կրօնից ի նոցանէ պատուեալ մեծարէր: Նորին որդի Յուստինիանոս Քրորդ՝ ի մատաղ հասակի, առնոյր զհօրն զեշխանութիւն: Առ նովաւ ճշմարտութեան հաւատք տարածանէր եւ յորդէր ի կողմանս հիւսիսոյ: Սուրբ Աղիանոս, առաքեալ ի Անտնեայ քահանայապետէ, ի Փրանկոնիա զաւետարանական վարդապետութիւնն քարոզէր: Առ Սերգեաւ քահանայապետաւ, Աէադուաղէս մին ի թագաւորաց անգղեացւոց, իւրովի գայր տեսանել, զհռոմայեցւոց եկեղեցին, ուստի ճշմարտութեան հաւատք ի նորս թագաւորութիւնն հասեալ էին. եւ յետ զինիքն առնոց ի նմին քահանայապետէ, մեռանէր որպէս եւ ինքն իսկ ցանկացեալ էր:

Արովսեայ ազգատոհմն յանհնարին անկաճութիւն հասեալ էր. բազում թագաւորք ի մատաղ հասակի թագաւորեալ, ի փափկութիւնս հատանէին, եւ յետ ի չափ հասանելոյ եւս՝ թողուլ ի բաց զզրգանան չառնութիւն յանձրն: Անտի իսկ յառաջ եկն երկայնաձիգ կարգ թագաւորաց վատասրտաց թուլամորթաց՝ որ զանունն եւ կթ

Թագաւորի ունեկին, եւ բովանդակ զելչիանութիւնն թողուն ի ձեռս հաղարապետաց արքունի: Ի նմին հաղարապետութեան եկաց Պեպինոս Արխանդոս^Ե, որով եւ զիւր տոհմն ի մեծ պատիւ փառաւորութեան հասուցաներ: Աորին ձոխութեամբն, եւ յետ սրբոյն Ա իղբերտեայ մարտիրոսութեանն^Ը, ի Փրիսիա եւս՝ զոր գաղիացիք նորոգ ընդ ձեռամբ նուաճեալ էին, հաւառք հաստատեցան: Սուրբն Ա իրերտոս, սուրբն Ա իղբերոգէս, եւ այլ բազումք՝ որ ի նոյն մշակութիւն քարոզութեանն պարտադէին, ի մօտաւոր դաւառս զաւետարանական վարդապետութիւն տարածանեին:

Օայնու ժամանակաւ Յուստինիանոս ի խաղաղութեան ի չափ հասաներ: Ղեւնդէս Տաճկաց յաղթեալ խորտակէր զնոսս, եւ զփառս Հռոմոնց տերութեան յարեւելս նորոգէր: Այլ զօրավարս այս քաջ՝ յանիրաւի կայր ի պահեստի, եւ սպա յանդէպ ժամանակի արձակեալ, զիւրոյ թաղաւորին զունչս հատանէր^Գ, եւ հալածական առնէր: Աւ ի վերայ սպստամբին նոյնպիսիինչ վեշաք հասանէին ի Տիրերեայ՝ որ Աբսիմարոսն յորջորջէր, բայց եւ սա չյերկարէր: Յուստինիանոս միւսանդամ ի բարձ թագաւորութեան մատչէր, եւ սպախտաւոր առ իւր բարեկամն գտանէր. եւ մինչ զեռ ի թրշնամեացն վրէժ առնոյր, եւս ահաղին թշնամիս անձինն պատրաստէր, որ եւ սպանանէին իսկ զնա^Ե: Օպատկերս Փիղիպպիկեայ՝ որ պայապատ էր նորա, չընկալան ի Հռոմ քաղաքի, զի ձեռնտու էր որոց մի կամն ի Վրիստոս զնեկին, եւ վեցերորդ սիւնհոգոսին հակառակ կայր: Անաստասիոս Բ բորդ ի Առստանդինուպոզիս ընտրեցաւ^Զ, այր ճշմարտահաւատ. եւ զՓիղիպպիկեայ զաչս խարեցին:

Ի ժամանակին յայնմիկ վասն Հռոգերիկեայ արքայի զեղծ եւ անօրէն վարուցն, սպանիացոց աշխարհն մատնէր մովրիտանացոց. մովրիտանացիս՝ զղբեկատանի Տաճիկան կոչէին: Վանդի Յուղիանոս կամն, վասն խնդրելոյ զվրէժ գատերն իւրոյ՝ զոր Հռոգերիկոսն լլկէր, աճ զնոսս ի վերայ աշխարհին: Առքա գային հասանէին հարստարուն զօրօք, զթագաւորն սատակէին, զսպանիացոց

աշխարհն ընդ հարկօք կացուցանէին, եւ զՎլթաց հա-
րըստութիւն ի միջոյ բառնային: Յայնժամ սպանիա-
ցւոց եկեղեցւոյն այլ իմն նեղութիւն ի վերայ հասա-
նէր. այլ որպէս առ արիանոսօքն հաստատուն կացեալ
էր, նոյնպէս եւ Տաճիկք նմա ինչ չկարացին ստնանել:
Յառաջնումն ազատութիւն ետուն եկեղեցւոյն, այլ
յապա ժամանակս մեծ պատերազմ ի վերայ յառնէր. եւ
ու միայն վասն հաւատոց, այլ եւ վասն զգաստութեան
կուսութեան բազումք վկայեցին, յորժամ այնպիսի ազգ
անհաւատ եւ դազանամիտ բռնացեալ էր:

Մնաստասիրոս ինքնակալ չյերկարէր. Կորթն զԹէո-
դոսիոս Պ որդ ստիպէին ծիրանիս արկանել եւ թագ առ-
նուլ: Ի մարտ պատերազմի ընդ միմեանս գոռացին. Թէո-
դոսիոս յաղթէր պատերազմին, եւ զՄնաստասիրոս ի վանս
ուրեք դնէին:

Մովրիտանացիք՝ սպանիացւոց աշխարհին տիրեալ,
կարծէին վաղվադակի կողմանցն՝ որ յայն կոյս պիւրենա-
կան լերանցն էին, իշխել: Եւս Աարողոս Մարտեղոս՝ որ
նուաճելոց էր զնոսա, փառաւորեալ էր ի դաղեացւոց
աշխարհին, եւ թէպէտ խորթ եւս էր, յաջորդեալ էր
զիշխանութիւն հօր իւրոյ Պեպինայ Արիստեղայ՝ որ զԵւս-
տրասիա ազգատոհմին իւրում եթող իրբււ գլխաւոր ինչ
իշխանութիւն, եւ զոստիկանութիւնն ի Աեւստրիա՝ հա-
զարապետութեան իշխանութեամբն: Աարողոս արու-
թեամբ քաջութեամբ զայն ամենայն միարանէր:

Արեւելից իրք աղմկեալ եւ խռովեալ էին: Պե-
ւոնդէս իսաւրացի, կուսակալ կողմանցն արեւելից, չառ-
նոյր յանձն ընդունել զԹէոդոսիոս. եւ նա դիւրաւ եւ
առանց հակառակութեան թողոյր զթագաւորութիւնն,
քանզի ակամայ իսկ բռնարար թագաւորեալ էր, եւ մե-
կնեալ ի քաղաքն եփեսացւոց ի ճշմարիտ մեծութիւնսն
պարտպէր:

Ի Պեւոնդեայ թագաւորութեան հարան Տաճիկք՝
ի հարուածս մեծամեծս: Ի բաց կացին՝ նոքա ամօթա-
լից ի պաշարմանէ կոստանդինական քաղաքին: Պեղա-
գիոս՝ որ յաստուրիացւոց լերինսն բանակ եհար, գու-

մարեալ ընդ իւր զընտիր ընտիր նահատակացն Պթաց, յետ նշան յաղթութեան կանգնելոյ, նոր թաղաւորութիւն հակառակ Տաճկաց կացոյց, որ ապա մերժելոց իսկ էր զնոսա ի սպանիացւոց աշխարհէն: Թէպէտ եւ Արդերամնս զօրավար նոցա՝ եկեալ հասեալ մեծաւ սաստիութեամբ, անչափ զօրու ի ճակատ պատրաստէր, Աարողոս Մարտեղոս՝ ի տուրնիացւոց քաղաքի յաղթէր մեծի պատերազմին: Յայնմ վայրի Տաճկաց անհնարին կոտորածք լինէին, եւ ինքն Արդերամնս անկանէր ի ճակատուն: Յայնմ յաղթութենէ եղևն եւ այլ ինչ շահք՝ որովք Աարողոս զմովրիտանացիս արգել, եւ մինչև ցպիւրենական լերինն զթաղաւորութիւնն ընդարձակեաց: Յայնմ ժամանակի դաղատացիք համօրէն՝ դաղիացւոց հնազանդեցին. եւ ամենեքին հաւանեցան հաճեցան ընդ Աարողոս Մարտեղոս: Սա՛ որ յաջողակ էր յիրի եւ ի պատերազմի, եւ իշխան անարգել ամենայն երկրին, թաղաւորեաց առ բազում թաղաւորօք՝ զորս ինքն կացուցանէր ի թաղաւորութեան եւ հանէր որպէս ինչ կամէր. այլ զթաղաւորի անուն չիշխէր առնուլ, զի մի տանուտեարք դաղիացւոց նախանձիցին ընդ նա:

Արօնք ի Վերմանիա հաստատէին: Սուրբ երէցն Բոնիփակիոս դարձոյց զաղան զայնոսիկ, եւ եպիսկոպոս եկաց նոցա ի Պրիգորէ Բ՝ բորդէ քահանայապետ՝ որ առաքեալն էր զնա անդր:

Ի խաղաղութեան էր յայնժամ տէրութիւնն. այլ զեւոնդէս խռովութիւն արկ, որ բազում ժամանակ ձգեցաւ: Սա ձեռն արկանէր իբրեւ զկուռս ինչ զպատկերան Վրիստոսի եւ զսրբոց նորա կործանել: Իբրեւ չլինէր ձեռնհաս միաբանել ընդ իւր զտուրն Վերմանոս զհայրապետ կոստանդինական քաղաքին, այնու հետեւ զիւր իսկ իշխանութիւն ի ձեռն առնոյր. եւ յետ վճիռ պատգամաւորութեան ի ծերակուտէն ելանելոյ, նախ զպատկերն Վրիստոսի՝ որ ի վերայ մեծի դրան եկեղեցւոյն Առստանդինուպոզսի եղեալ կայր, իւրով իսկ ձեռամբ խորտակէր: Եւ անտի սկիզբն առնուին իկոնուկլաստայց բռնութիւնքն, որ է՝ զպատկերս խորտակողաց:

Նոյնպէս եւ զայլ պատկերան՝ զոր ինքնակալք եւ եպիսկոպոսք եւ ամենայն հաւատացեալք, ի ժամանակէ անտի խաղաղութեան եկեղեցւոյ, ի հրապարակս եւ առանին կանգնեալ էին, խորտակէին: Օայն տեսեալ ժողովրդոյն գրգռէին, եւ զպատկերս ինքնակալին ի բազում տեղիս կործանէին: Իսկ թագաւորն իրրեւ թշնամանս անձին զիրան համարեցաւ, յայլոց կշտամբեցաւ՝ եթէ զնոյն թշնամանս եւ ինքն Վրխտոսի եւ սրբոց նորա զնկցէ, եւ իւրով իսկ բերանով յայտ առնկցէ՝ թէ յորժամ զպատկեր դք ուրուք թշնամանկցէ, զայն՝ ոյր պատկեր էր, թշնամանեաց: Եւ յՊատաղեա եւս աւելի յանդգնէին. վասն անպարշտութեան ինքնակալին, շեատուն զսակ հարկացն աշխարհին: Ղուխտպրանդոս արքայ զնկորարդացւոց զնոյն բարուր առնէր զի առցէ զճաւեննա քաղաք՝ ուր կայանք էին ոստիկանացն. ոստիկան անուանէին վարիչքն՝ զոր ինքնակալք Պատաղեա սուսքէին: Վրիդորիոս Բ՝ բորդ քահանայապետ հակառակ կայր պատկերացն կործանման. այլ միանգամայն եւ զգէմ ունէր թշնամեաց աշխարհին, եւ զժողովուրդս ի հնազանդութիւն ջանայր կացուցանել: Ինք զոնկորարդացւոց՝ հաշտութեան դաշինք ի մէջ կռէին, եւ ինքնակալն զիւր հրաման հրովարտակին՝ զոր վասն պատկերացն արար, մեծաւ բռնութեամբ ի դուխ հանէր: Եւ իւրանելին Յովհան դամասկացի յայտ առնէր նմա՝ թէ այլում իմիք հրամանի, որ վասն հաւատոց իցէ, չառնում յանձն հաւանել, բայց միայն յեկեղեցւոյ հրամանացն. եւ բազում վշտաց տանէր: Ինքնակալն զսուրբ հայրապետն Պերմանոս յաթոռոյն իւրմէ ի բաց մերժէր, որ եւ ինչնրանամենի յաքտորս վախճանէր:

Յետ սակաւ մի ժամանակի զոնկորարդացիք միսանգամ ի կռիւ գրգռէին. այլ ձեռն ի զործ արկեալ կարծէր զնոսա ի չարեացն Կարողոս Մարտեղոս՝ զոր Վրիդորի Բ՝ բորդի քահանայապետի յօգնականութիւն կոչեալ էր:

Նոր թագաւորութիւն սպանիացւոցն՝ զոր յաւաջին ժամանակս անդ որւիէտացւոց թագաւորութիւն կո-

էին, աճէր եւ մեծանայր յաղթութեամբք, ի զօրաւարութեան Աղփոնեայ փեսային Պեղազեայ, որ ըստ օրինակի Հուկարեղեայ՝ ուստի սերեալ էր, ճշմարտահաւատ յորջորջէր:

Ղեւոնդէս մեռանէր^Է, եւ թագաւորութիւնն եւ եկեղեցի յանհնարին խռովութեան էին: Արտաւազ՝ որ ոստիկանն էր ի վերայ Հայոց աշխարհին, թագաւորէր փոխանակ Աոստանդեայ Աոպրոնիմոսի, Ղեւոնդեայ որդւոյ, եւ զպատկերս նորոգէր:

Յետ Աարողոսի Մարտեղեայ մեռանելոյ, միւսանգամ ի մարտ պատերազմի Ղուխոպրանդոս ի վերայ հռոմայեցւոց պատրաստէր. Հուսէննա նահանգ ի տազնապի էր^Ը, եւ իմաստութեամբ սրբոյ քահանայապետին Օսքարիայ՝ խտաղացւոց աշխարհն ապրէր: Աոստանդիանոս^Ս որ զարեւելից կողմամբք պատաղեալ էր, թագաւորութեան միայն փութայր հասանել. հան նա Ղարտաւազ, առ զԱոստանդինուպողիս, եւ բազում տանջանս ի վերայ քաղաքացեացն հասոյց:

Արիւ որդիքն Աարողոսի Մարտեղեայ, Աարղոմանոս եւ Պեպինոս զհօրն իշխանութիւն յաջորդէին. այլ Աարղոմանոս գարշելի համարեալ զաշխարհս, թողեալ զմեծութիւն իւր եւ զյաղթութիւնս, վանականաց կեանքս յանձն առնոյր. եւ այսպէս իւր եղբայրն Պեպինոս բովանդակ զամենայն իշխանութիւն յինքն առնոյր: Սա արժանի ըստ մեծութեան գործս վճարէր, եւ ի մտի դնէր թագ առնուլ: Քիղզերիկոս^Վ որ քան զամենայն իշխանսն հիքագոյն էր, հորդեաց նմա ճանապարհ ի թագաւորութիւն հասանել, եւ ի դատարկութեան վերայ զյիմարելոյ եւ զմոլելոյ կարծիս առ: Քաղկացիք՝ որ յիշխանացն թուլամորթաց եւ դատարկացելոց տաղտկացեալ էին, եւ ի բազում ժամանակաց հետէ ընդելեալ ընդ ազգատոհմն Աարողոսի Մարտեղեայ՝ ուստի բազում արք աւազք ծնան, ոչ իւրիք ինչ խափանէին, բայց զեբրդմնի եղեն Քիղզերիկեայ: Այլ իրրեւ գրեաց պատասխանի Օսքարիա քահանայապետ, այնու հետեւ զերծեալս զանձինս համարեցան, եւ ազատեալս յերզմանէ,

անտի՞ զոր իւրեանց թագաւորին երգուան. մանաւանդ վասն այնորիկ՝ զե երկերիւր ամբ էին, յորմէ հեռէ ինքն թագաւորն եւ որ յառաջ քան զնա թագաւորեցին, թուէր՝ եթէ հրաժարեալ իցեն յիրաւանց անտի իշխելոյ ի վերայ նոցա, զամենայն իշխանութիւնն ի ձեռս տուեալ հաղարապետին արքունի: Աւ այնպէս թագ եղ Պեպինոս, եւ յիշխանութեան վերայ զանուն եւս զթագաւորի առ:

Առ Ստեփանոսիւ Պ որդիւ քահանայապետաւ,⁶ եւ սա զնոյն նախանձ նախանձեցաւ, զոր եւ Սարգղոսն Սարտեղոս նախանձեալ ընդ զոնդորարդացւոց կռուէր ի վերայ աթոռոյն սրբոյ: Օ՛ի յորժամ խնդրեաց յինքնաւ կալէն քահանայական թիկունս օգնականութեան եւ չեզիտ, զաղիացւոց յանձն եղեւ: Առ ընկալաւ զնա թագաւորն ի Պաղիա մեծաւ փառաւորութեամբ⁷. եւ նորա ձեռամբ կամեցաւ օծանել եւ պսակել: Ի նմին ժամանակի անց նա ընդ Աղսից լերինսն, զչորմ եւ ըղչաւեննա նահանգ զերծոյց, եւ զԱստղիոս արքայ զոնդորարդացւոց ամ ի հաւան արդարութեամբ դաշնս կռել:

Յայնմ ժամանակի ընդ պատկերացն գոսայր ինքնակայն: Օ՛ի եւ եկեղեցական ճոխութեամբն հաստատեալ ամրանայցէ, զբազումս ամ կուտեաց ի մի վայր. եւ եղեւ ժողով մեծ ի կոստանդինական քաղաքին¹⁰: Աւ անդ էր ոչ զհրեշտակս աթոռոյն սրբոյ ըստ սովորութեանն տեսանել, եւ ոչ զեպիսկոպոսունս, կամ զհրեշտակս այլոց հայրապետութեան աթոռոյն¹¹: Ի ժողովեստս, ոչ միայն զմեծարանս՝ որ պատկերացն զնիցին, առ յիշատակի այնոցիկ՝ որոց պատկերքն իցեն, իրրեւ զկոսպաշտութիւն խոտէին, այլ եւ զգրօշադործութիւն եւ զնկարչաց ճարտարութեան հանգամանս իրրեւ արուեստարս փնասակարս մերժէին: Այս Տաճկաց իսկ կարծիք էին, քանզի եւ ասնն իմն՝ թէ եւ Պեւոնգէս զնոցա խրատուն զհետ երթեալ զպատկերս կործանեաց: Այլ վասն նշխարացն սրբոց չեղնն ինչ հակառակութիւնս: Ժողովն Ասպրոնիմեայ¹² չարգել մեծարանս նշխարացն

դնել եւ նզովիւք նզովեաց զայնոսիկ՝ որ շառնուցուն յան-
ձըն ի բարեխօսութիւն սրբոյ Առսին եւ սրբոյն ապաս-
տանել : Հաւասարեալքն՝ որ վասն զպատկերս մեծա-
բերոյ հարածէին, տային պատասխանի թագաւորին՝ եթէ
լաւ իցէ մեզ թէ պէսպէս ազգի ազգի նեղութեանց տա-
նիցիմք, եւ դունակ դունակ տանջիցիմք, քան ի պատկե-
րի իսկ նմանութեանն Վրխտոսի, զՎրխտոս Յիսուս
ոչ պատուիցեմք :

Յաւուրն յայնոսիկ Պեպինոս ընդ Ազպից լերինս
կրկին անցանէր, եւ զԱստորփոս^Ե որ չկայր ի խաղաղու-
թեան դաշինս, կշտամբէր : Տայր պարզեւս աստուա-
ծապաշտ թագաւորն հռոմայեցւոց եկեղեցւոյն, որպիսի
ինչ պարզեւս չիցէ ուրուք տուեալ եկեղեցւոյն : Օւ-
մենայն քաղաքսն՝ զոր ի զոնդորարդացւոց առ, նմն
շնորհէր, եւ զԱստորնիմոս ծաղը առնէր, որ զքաղաքսն
ի բաց պահանջէր, այն՝ որ չկարացն իսկ պահել զնոսա :
Յայնմ հետէ նշկահեցին ի Հռոմ զինքնակարսն, զի վասն
խրեանց ակարութեան արհամարհեցան, եւ վասն մոլո-
րութեանց ատեցան : Օ՞՞՞՞՞՞՞ Պեպինոս այնու հետեւ հռո-
մայեցւոց ժողովրդեանն եւ եկեղեցւոյն պաշտպանիչ հա-
մարէին : Օ՞՞՞՞՞՞՞ Օ՞՞՞՞՞՞՞ Օ՞՞՞՞՞՞՞ Օ՞՞՞՞՞՞՞ Պեպի-
նեայ եւ ամենայն թագաւորք զաղիացւոց :

Աստորոս մեծն, Պեպինեայ որդի, արութեամբ եւ
աստուածապաշտութեամբ զնոյն անուն առնոյր : Ագրիա-
նոս քահանայապետ զնա ի թիկունս օգնականութեան
կոչէր զայ կռուել ընդ Վիգիլիայ^Ը արքային զոնդորար-
դացւոց՝ որ բազում քաղաքս առ, եւ զՎտաղիա համօրէն
ստնուլ պատրաստէր : Աստորոս մեծ ընդ Ազպից լերինս
անցանէր^Գ, զրնաւ ցածուցանէր : Վիգիլիոս մատնէր ի
ձեռս նորա^Զ զոնդորարդացւոց թագաւորք՝ որ հռոմայ-
եցւոց եւ քահանայապետաց թշնամիք էին, խորտա-
կէին. առ նա զթագ զնտաղացւոցն, եւ զաղիացւոց եւ
զոնդորարդացւոց թագաւոր անուանեցաւ : Ի նմին իսկ
ժամանակի զմեծ իշխանութիւնն, իրբեւ զպատրիկ ի
Հռոմ քաղաքի իսկ ի դործ արկանէր, եւ զպարզեւսն^Ը
զոր իւր հայրն եւ, հաստատէր : Ինքնակալք հազիւ բա-

ւական լինէին զԼուղարաց զդէմ ունել, եւ զուր զոն-
գորարդացուոյ՝ որք մերժեցանն, զօրաւիզն լինէին զխմա-
գարձ լինել Ասորոցսի մեծի:

Իսկ վասն պատկերացն՝ Հանապաղ դժտութիւն էր:
Ղեւոնդէս Ղորդ, Ասպրոնիմեայ որդի, յառաջնումն
թուէր՝ թէ ցածուցեալ իցէ. այլ իբրեւ ետես՝ թէ Հաս-
տատեցաւ թաղաւորութիւն նորա, միւսանգամ Հալա-
ճանս յարուցանէր. եւ վաղվաղակի մեռանէր: *Սորին*
որդի Աոստանդիանոս, ի տասն ամաց Հասակի զնա պայ-
աղաւէր, եւ ընդ Իրենեայ մօրն Հողարարձութեամբ
թաղաւորէր: Յայնմ՝ ժամանակի փոփոխումն լինէր ի-
րացն. *Պաւղոս Աոստանդինուպոզսի* Հայրապետ ի Տե-
րութեան ժամանակի խոստովան եղեւ՝ թէ պատկերաց
ընդդէմ դարձաւ իրադէտ մտացն խղճիւ, եւ ինքն մե-
կնեալ ի վանս ուրեք երթայր, ուր սուգ առեալ աշխարէր
առաջն տիկնոջն զվեշտս եկեղեցւոյն Աոստանդինուպոզսի՝
որ ի չորից Հայրապետութեան ամոռոցն քակեալ էր, եւ
աւեր նա ցնա՝ թէ չեք այլ ինչ հնարս կարձելոյ չարեացն
զտանել, բայց զհամաշխարհական սիւնհողոսն գումա-
րել: Տարասիոս՝ որ յաջորդեաց զնա, Հաստատե՛ր՝ թէ
վասն խնդրոյն այնորիկ չեղեւ դատաստան օրինօք. քան-
զի այնր սկիզբն թաղաւորին հրամանաւ եղեւ, եւ յետ
այնորիկ անկարգութեամբ ժողով գումարեցաւ. փոխա-
նակ զի ի հաւատոցն վարդապետութեան, ժողովոյն ար-
ժան է սկիզբն առնել, եւ ինքնակալաց՝ լինել Հաստա-
տութիւն դատաստանացն եկեղեցւոյ: Օայս ի մտի ե-
ղեալ՝ մինչ չեւ խոստացեալ նմա տիեզերական ժողով
գումարել, չառ յանձն զհայրապետութիւն աշխարհին:
Սկանէր սիւնհողոսն ի կոստանդինական քաղաքին, եւ
ի Աիկիա ի դուխ ելանէր¹³: Ընդր առաքէր զհրեշտակս
իւր քահանայապետն. ժողով այնոցիկ՝ որ զպատկերսն
խորտակեցին, դատապարտէր. եւ խոտէին նոքա իրբեւ
զմարդիկ՝ որ ըստ Տաճկաց օրինակի քրիստոնէից մեղա-
դիր լինիցին, թէ կուռս պաշտեն: Աճիւ լինէր՝ թէ
պատկերք պատուեցցին առ յիշատակի եւ սիրոյ այնոցիկ՝
որոց կերպարանքն իցեն. այս անուանեալ կոչի ի սիւնհո-

դոսն պաշտօն ըստ պատշաճութեան, երկրպագութիւն եւ ողջոյն մեծարանաց, որ զատ է ի մեծ պաշտամանէն, եւ յերկրպագութենէն աստուածեղէն պաշտամանն՝ զոր Աստուծոյ միայն հրամայէ մատուցանել ժողովն: Բայ ի հրեշտակաց անտի աթոռոյն սրբոյ եւ ի հայրապետէն Աստանդինուպողսի, էին եւ հրեշտակք այլոց եւս հայրապետութեան աթոռոյն՝ զորս ի ժամանակին յայնմիկ անհաւատքն ներէին: Ոմանք վիճին՝ թէ չառաքեցան նոքա, այլ վասն այնր չիք ոք որ հակառակիցի՝ թէ այս ամենայն գլխաւոր եպիսկոպոսք չխտտեցին զսիւնհոգոսն, եւ ոչ միայն չխտտեցին, այլ եւ առանց հակառակութեան ընկալան, եւ համօրէն իսկ եկեղեցի յանձն առ:

Գաղիացիք շուրջ պատեալ ի կռապաշտացն, կամ նորոգ ի հեթանոսութենէ եկելոց, կասկածէին՝ թէ դուցէ մոլորիցին միտք նոցա եւ խրաչիցին իմն, դարձեալ եւ վասն բազմապատիկ մտաց բանին երկրպագութեան, վարանեալ դանդաշէին: Չկամէին այլոց պատկերաց բայց միայն նշանի խաչին մեծարանս դնել, որ ամենեւին իսկ այլակերպ է ի դրօշելոց անտի՝ զոր բուն աստուածեղէն էութիւն իսկ համարէին հեթանոսքն: Բայց եւ զայլ պատկերան եղին ի դիպան վայրի ի նշանաւոր տեղոջ, մանաւանդ թէ եւ եկեղեցիս իսկ, եւ դարչէին խորչէին մերժէին ի նոցանէ՝ որ զպատկերան խորտակէին: Աւ այլակերպութիւնն իսկ՝ որ ի միջն կայր, չհասն ինչ հերձուած: Այլ ապա ուրեմն գիտացին զգաղիացիք՝ եթէ հարքն *Նիկիայ զնոյն պաշտօն հրաման տային պատկերացն մատուցանել, ըստ իւրաքանչիւր պատշաճութեան, զոր եւ ինքեանք նշխարաց սրբոյն եւ աւետարանին եւ խաչն մատուցանէին. եւ ժողովս այս ընդ ամենայն տեղիս քրիստոնէութեան պատուեցաւ, եւ թնրորդ համօրէն սիւնհոգոս անուանեալ:

Արդ տեսաք զեւթն տիեզերական ժողովն՝ զորս արեւելք եւ արեւմուտք, եւ եկեղեցի Յունաց եւ Հռոմոց, միանդամայն մեծաւ պատուով ընկալան: Ինքնակալք զայնչափ բազմութիւն ի մի վայր ժողովէին, քանզի ի վերայ ամենայն եպիսկոպոսաց իշխանութիւն ունէին, կամ գոնեայ ի գլխաւորաց վերայ՝ որոց այլ ամենայն եպիսկոպոսք հնազանդէին, որք եւ ընդ տէրութեամբ

բըն էին յայնժամ: Գեսպակք եւ կառք արքունատուրք պատրաստէին նոցա: Օժողովն յարեւելս ժողովէին ինքնակալքն, ուր կայանք իսկ էին նոցա, եւ առաքէին անդր բաղում անդամ իշխանս զե մի անկարգ ինչ անցք անցանիցեն: Ապիսկոպոսունք՝ որ գային ժողովէին, ըզճոխութիւն պատգամաց Հողւոյն սրբոյ բարձեալ բերէին, եւ զեկեղեցեաց աւանդութիւն: Անդուստ ի բնէ քրիստոնէութեան երեք գլխաւոր աթոռք կային, որ այլոց ամենեցուն եկեղեցեաց գահերէցքն էին, հռոմայեցւոց եւ աղէքսանդրացւոց եւ անտիոք սցւոց եկեղեցին: Աիկիական սիւնհոգոսն¹⁴ եւ եպիսկոպոսի քաղաքին սրբոյ զնոյն պատիւ շնորհեաց: Արկրորդ եւ չորրորդ սիւնհոգոսն բարձրացուցին զաթոռն Առստանդինուպոլսի եւ կամէին յերկրորդական պատիւ հասուցանել: Աւ այնպէս հինգ աթոռք եղին, որ առ յապայ հայրապետութեան աթոռքն կոչեցան: Շնորհեալ էր նոցա գահերէց գլխաւորութիւն ի ժողովի: Ի մէջ այնց աթոռոց, հռոմայեցւոց աթոռն յամենայն ժամանակի առաջին համարեալ էր, եւ նիկիական ժողովն¹⁵ ըստ հռոմայեցւոց աթոռոյն, զայլոց աթոռոց զկարգս յորինեաց: Այն եւ եպիսկոպոսք մետրապոլիտք՝ որ նահանգաց գլխաւորք էին, եւ գահերէց այլոց եպիսկոպոսացն: Յետոյ անագան ուրեմն սկսան եպիսկոպոսապետ կոչել զնոսա, բայց չէր ինչ յառաջագոյն անձանօթ իշխանութիւն նոցա: Յորժամ յորինէր սիւնհոգոսն, զզիրս սուրբս առաջի դնէին, եւ զհնոց հարցն՝ որ վկայք են աւանդութեանն, զմատեանս ի մէջ բերեալ ընթեռնուին. զզիրս աւանդութիւն մեկնէր, այսպէս հաւատացեալ էր՝ թէ ճշմարիտ միտք աստուածատուր գրոց այն է, զորմէ եւ մարդիկն՝ որ յանցեալ ժամանակն էին, նոյնպէս իմացան, եւ այլազո ինչ ումէք չէր իշխանութիւն մեկնել: Իսկ որ ժողովոյն հրամանաց չյօժարէին հնազանդել, այնպիսիքն զովեալ լինէին: Յետ զհաւատան մեկնելոյ, զեկեղեցական կարգսն յարգարէին եւ կանոնս դնէին: Այսպէս իսկ համարէին՝ թէ հաւատոցն չէ հնար փոփոխել. եւ թէպէտ կարգացն եւ յորինուածոց մարթ եւ պատշաճ է ըստ ժամանակացն եւ ըստ տեղեաց դունակ գունակ կերպարանօք փոփոխել, այլ հարկ է՝ զե որչափ ինչ մարթիցի, ի կատարեալ նմանութիւն հին ժա-

մանակին հասանիցէ: Յառաջին տիեզերական սիւնհոգոսան ինքեանք քահանայապետք չեկին, այլ հրեշտակա առաքեցին. բայց զնոցա վարդապետութիւնն ճշգրտեալ հաստատեցին, եւ յեկեղեցւոջ մի միայն հաւատք եղեն:

Առստանդիանոս եւ Իրենէ՝ սատուածապաշտ մտօք տային արդեամբք զհրամանս եւթներորդ ժողովոյն կատարել. այլ յետ այնորիկ յանպիտանութիւն զառաձանէին: Թաղաւորն մանուկ որում կին ած մայրն զգուսոր մի՝ զոր նայն չսիրէր, զանարժան սիրով հարկանէր. եւ տաղտկացեալ այնու հետեւ ի մօրն հնազանդութենէ, որ ճոխացեալ էր ի վերայ նորա, ջանայր մերժել զնա յիրաց արքունի, զի մայրն իսկ յանձանձէր արտաքոյ կամաց նորա:

Ազգիոնոսս պարկեշան՝ ի Սպանիա թաղաւորէր: Արժանի ըստ հանապազորդ ժուժկալութեանն, այնպիսի գեղեցիկ անուն առնոյր. եւ արժանի լինէր զսպանիացւոց աշխարհն գերծուցանել ի հարկանելոյ հարկս զհարեւր զատերսն՝ զոր իւր աներն Մաւրեղատոս շնորհեալ էր մովրիտանացւոց: Աւթն բեւր այր ի մովրիտանացւոց անտի, ի կռուի ուրեմն Մուղետաւ զօրավարան հանդերձ սպանեալ, զիւր ոյժ պնդութեան ցուցանէր:

Նոյնպէս եւ Առստանդիանոս ջանայր Բուղզարաց ի դիմի հարկանել եւ երեւելի լինել. այլ ոչ որպէս ինչ ինքն ակն ունէր, գործն վճարեցաւ: Հան նա յԻրենեայ զիշխանութիւնն, եւ քանզի չէր ձեռնհաս անձին առաջնորդել, եւ ոչ հանդարտել թէ այլք իշխեսցեն նմա, զիւր կինն զՄարիամ մերժեաց զի ամուսնացի ընդ Թէոդատեայ նաժշտի նորա: Իսկ մօրն ցասուցեալ, սաստկացոյց զնոպութիւնսն՝ որ ի դայթազդութենէ անտի յուզեցան: Առստանդիանոս, նենդ գործեալ նմա ի մօրէն, մեռանէր: Աւ նա զժողովրդեան զմիտս հաճէր զհաս եւ զսակ եւ զբաժ աշխարհին նուազեցուցեալ, եւ զվանականս եւ զկղերն, աստուածապաշտութեան կերպարանօք, ընդ իւր միաբանէր: Աւ եղեւ նա միայն տիկին աշխարհին:

Հռոմայեցիք նշկահեցին զայնպիսի առաջնորդութիւն, եւ դարձան առ Մարողոս մեծ՝ որ զՄաքսոնս հնազանդէր, զՏաճիկս նուաճէր, զաղանդսն քակէր, քահա-

նայրապետաց պաշտպանէր, զաղզս անհաւատս ի քրիստոնէութիւն դարձուցանէր, զգիտութիւննսն եւ զեկեղեցական յօրինուածնսն հաստատէր, ժողովս երեւելիս գումարէր, ուր ամենքին զարմանային ընդ բանս իմաստութեան նորա. եւ ոչ միայն ի Վաղիա եւ յԱտաղիա, այլ եւ ի Սպանիա, եւ յԱնգղիա, եւ ի Վերմանիա զիւր աստուածապաշտութիւնս եւ զիրաւունս եւ զարդարութիւնս ցուցանէր:

1) Պատմ. հիշատակ. Պատմ. ժողով Նիկ. Գիրք Բ. 9. Իկ:
 2) Սարգս. Պատմ. Եկեղ. Բ. 15: Սարգս. Գ. 8: 3) Երզնկ. Հեր. 75: Երզ. Հեր. 53: 4) Երզն. ընդդ. Վիզիղ: Գ.Ն.Ն.Ն.Ն. Յաղագս Սատենագ. Եկեղ: 5) Սասն Բ. ժողով. Եփես. գործ Է. Վճիռ. դատապ. նկատորի: 6) Թուղթ սրբոյ ժողով. Բաղկ. առ Դեւոնդ. ժող. Սասն 3: 7) Բարե. Գիրք Է: 8) Պատմ. Գիրք Թ. Թուղթ 58: 9) Սար. Մ. Ժ. 1: 10) Երզն. Երզ. Բ. գործ 9: 11) Ենդ. սահմ. սուտ ժողով. կոս: 12) Ենդ. սուտ ժողով կոս. Թ. եւ Ժ. 1: 13) Երզն. Երզ. Բ. գործ 1: 14) Երզն. Երզ. կանոն Է: Երզն. Երզ. Բ. կանոն Գ: Երզն. Երզն. կանոն ԻԲ: 15) Երզն. Երզ. կանոն 9:

ՅԵՄԻ ութհարիւրորդի Տեառն մերոյ, սոյն մեծազօր պաշտպան Հռոմ քաղաքի եւ իտաղացւոց, նա մանաւանդ համօրէն իսկ եկեղեցւոյ եւ ամենայն քրիստոնէից, մինչ գեռ ամենեւին չունէր ակն, ի հռոմայեցւոց ինքնակալ ընտրէր, եւ պսակէր ի Ղեւոնդեայ Պ որդէ հռոմայեցւոց քահանայապետէ, որ եւ յօժարեցոյց ած զազն յայն ընտրութիւն: Սոյն ինքնակալ Հիմն արկ նորոյ պետութեանն եւ ժամանակեան փառաւորութեան սրբոյ աթոռոյն:

Ըւասիկ երկոտասան ժամանակք՝ զոր մի ըստ միոջէ յեռեալ հարիւրի համառօտ մատենիս: Աւ զնշանաւոր դէպսն՝ որ ըստ իւրաքանչիւր ժամանակաց զիպեցան, անդէն նոցին առ ընթեր եղի: Սարթի քեղ այժմ դիւրաւ եւ պատրաստագոյնս ըստ կարգի ժամանակացն զերեւելի երեւելի դէպս նախնեացն պատմութեան յօրինեալ կարգել, եւ զմի մի ի դիպաց անտի, ընդ իւրով նշանաւն զետեղել:

Ի կարճառօտ պատմութեանս ի կիր արկի եւ զայն կարեւոր բաժին՝ որով ժամանակագիրք զնդերկարութիւն ժամանակաց աշխարհի յութ դարս բաժանեն: Առ իւրաքանչիւր սկիզբն դարուց զմեր անուանեալ ժամանակրս կարգեցի. ապ եթէ ուրեք ի դարսն աւելի ինչ ժամանակ մուծեալ իցէ, այն վասն առաւել յայտնագոյն ըզպատմութիւնս գործելոյ եղաւ, եւ զի ճշդիւ գտակաւ ի վերայ հասանիցեմք կարգի ժամանակացն:

Ղառքս զկարգէ ժամանակաց ոչ վասն այնորիկ դրեցան, զի դու նստեալ տառապիցիս զայնչափ թիւ համարոյ ժամանակաց հաւաստեաւ ուսանել, եւ ոչ ես իսկ զայդ պահանջեմ. եւ կամ զի ի հակառակութիւնս ժամանակադրացն մտանիցես, որք բազում անգամ վասն սակաւ ինչ այլակերպութեան ամաց վիճին: Յիրաւի կարի կարեւոր են եւ այն ժամանակագիր կանոնք՝ որք մանրաշ հետեալ մանր զժամանակն, վասն սակաւ երկրանութեան կռուին. բայց այս աւելորդ է քեզ, եւ առ ի լուսաւորել զմիտս իշխանի ոչինչ կարի պատշաճական: Ամին

իրի եւ ոչ իսկ կամեցայ մանր զայնպիսի երկբայութիւնս կրկտել . եւ ի թիւս համարոյ ժամանակաց, որ ինձ առաւել հաւանութեան թուէր, զայն ի կիր արկի, ոչնչ փոյթ յանձին կալեալ զի արժանի հաւատարմութեան ցուցից զայն՝ զոր ենն ընկալայ :

Իսկ ի թիւս համարոյ ամացն՝ զոր անդուստ ի վերուստ յարարու թենէ անտի մինչեւ ցԱբրահամու տիս համարին, եւ ժամանակիցն արդեւք դուամարութեան իցէ արժան զհետ երթալ, որ հեռի ժամանակօք զսկիզբն աշխարհի երկիցացուցանեն, եթէ Հրէից երբայականին՝ որ բազում ամօք կրտսեր զարարած աշխարհիս զնէ, թէպէտ եւ երբայեցւոց օրինակին ազնուութիւն քան զեւթանանիցն առաւելուցու, սակայն յայսմ վայրի ոչ ինչ խտիր ի միջի ընդ սա եւ ընդ նա դասնի . եւ եկեղեցի՝ որ ընդ սրբոյն Աբրահամեայ ըստ մերում հասարակաց ընթերցուածոյ զերբայեցւոց ժամանակագրութիւն ի կիր արկանէ, յիւրում մարտիրոսաց զիրսն ըստ եւթանանիցն դուամարութեան եթող զժամանակացն համար : Աբրահարեւ վայրապար ամաց նուագութիւն կամ յաճախութիւն զինչ շահ ի պատմութիւնս նպատ լինիցի, յորժամ գործք ինչ արժանի վիպասանութեան չգտանիցին : Չիցէ՞ այն շատ, զի թիւ համարոյ ժամանակաց՝ որ կարեւոր է, հաւաստեալ եւ ճշգրիտ գրոշմեալ գտանիցի . եւ անցնիւր բաժինք ժամանակաց հիմն հաստատութեան ունիցին : Իսկ սակաւ ամաց չմիաբանութիւնն յայնպիսի ժամանակագրութեան չտայցէ այսր անդր հարկանել զմիտքս : Օր օրինակ գրեսցուք՝ եթէ ամօք ինչ կանուխ կամ յետոյ պարտ իցէ կարգել կամ զհռումոց քաղաքին շինուած, եւ կամ զկենարար աստուածայայտնութիւն . արդ յայտ իսկ է՝ եթէ այս սակաւօք չմիաբանութիւնն չխախտէ զկարգ պատմութեանց, եւ ոչ զաստուածեղէն խորհրդոցն կատարումն : Աւ դուլ եւ պատուէր տամ աստէն մի ի սխալ ժամանակական կանոնս՝ որ զկարգ իրաց վեր ի վայր հարեալ եղծանեն, վայրապար դեղերել . այլ թողուլ իմաստնոցն ընդ միմեանս մաքառել :

Գարձեալ եւ չկամիմ հեղձուցանել զվիշատակս քո յաճախութեամբ համարոյ ողոմպիադացն, թէպէտ եւ Յոյնք՝ որ նորօք վարին, զնոսա կարեւորս առ հաստա-

տուն կարգելոյ զժամանակս համարիցին: Արդ՝ թէպէտ
 եւ հարկ է եւ զնոսա ի միտ առնուլ, զի յորժամ պէտք
 ինչ լինիցին մարթացուք եւ զնոսա ի կիր արկանել. բայց
 առ այժմ շատ լիցի քեզ կիրթ ի մտի ունել զբաժինս
 ժամանակաց՝ զորս վերադոյն կարգեցի, որ եւ դիւրին իսկ
 են եւ ընդերական. այս ինքն՝ անդստին ի սկզբանէ աշ-
 խարհի մինչեւ ց՝ ուռումոց քաղաքին շինուած, եւ ի Հո-
 ուումոց քաղաքին շինուածոյ մինչեւ ցկենարար աստուա-
 ծայայտնութիւնն, եւ անտի եւ այսր եւ առ յապոյ:



ՆՐԱԿՐՈՐԿ ԴՊՐՈՒԹԻՒՆ

Կ Ա Ր Գ Կ Ր Օ Ն Ի Ց



ԵՐԿՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ

Կ Լ Ր Գ Կ Ր Օ Ն Ի Ց



Գ Լ Ո Ւ Խ Ը

ԵՐԵՐՉՈՒԹԻՒՆ ԿԵԾ ԸԹԸՋԻՆ ԺԵՄԵՆԵԿԻ

ՕՒՅՍ ամենայն համառօտեալ կարգել յօժարեցի, ոչ վասն այնորիկ ինչ՝ զի զկարգ ժամանակացն ցուցանիցեմ, թէպէտ եւ այն իսկ կարեւոր է, վասն զամենայն պատմութիւնս ի կարգ արկեալ յեւլոյ, եւ զառ միմեանս համեմատութիւն գտանելոյ. այլ որպէս կանխադոյն իսկ ասացի, զայն ի մտի ունէի՝ զի ի կարգի ժամանակացն ԶՏԻՆԻ, ԺՈՂՈՎՄԵՆԸ ԸՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԶՄԵԾՄԵԾ ՊԵՏՈՒԹԵՆՑ ցուցանիցեմ:

Սորա երկդեան, ի շջշջեւ ժամանակացն, միանգամայն խաղան եւ միմեանց առ երի ընթանան. այլ վասն բարւոք ի միտ առնելոյ, պարտ է երբեմն ի միմեանց գատանել, եւ միտ եղեալ նայել թէ զինչ միումն գէպ իցէ եւ զինչ միւսումն պատշաճ:

Մեծ իսկ եւ շահաւոր քան զամենայն ինչ՝ զոր մարթիցի ոք մարդկան յանդիման կացուցանել, կրօնք են, եւ մշանջենաւոր տեւել ժողովրդեան Աստուծոյ, թէ այնպէս ոք ընդ նոսա միտ եղեալ նայիցի: Օի գեղեցիկ իսկ է յանդիման առաջի աչաց տեսանել զազգի ազգի անցս ժողովրդեանն Աստուծոյ, առ բնութեան օրինօքն եւ առ նահապետօքն, առ Մովսիսիւ եւ առ օրինօքն զբերովք, առ Վաւթաւ եւ առ մարգարէիւքն. յեա ի գերութենէ գառնալոյ մինչեւ ցՔրիստոս. եւ առ Քրիստոսիւ իսկ, առ շնորհօքս եւ առ աւետարանաւ. ի ժամանակսն՝ յորս Օձելոյն ակն ունէին մարդիկ, եւ յորս Օձեալն երեւեցաւ. ի զարսն՝ յորս աստուած-

պաշտութիւնն ի միում ազգի միայն էր, եւ յայնուսիկ՝ յորս ըստ հնոցն մարդարէութեանց ընդ ամենայն երկիր աստուածապաշտութիւնն տարածեցաւ. յազգսն՝ յորս մարդիկ, զեռ եւս տիմարադոյնք եւ թանձրամիտք, ժամանակեան հասուցմանց եւ պատժոց պատուհասից՝ կարօտանային, եւ յայնս՝ յորս հաւատացեալք թեքեալք եւ կրթեալք, ի հաւատոց եւ եթ պարտին կեալ, յաւիտենից բարութեանցն ցանկացեալք, եւ ակն կալեալք այնց բարութեանցն հասանելոյ՝ ամենայն վշտաց ժուգկալել, զի նոցա հանդէս համբերութեանն երեւեսցի:

Արդարեւ չէ մարթ՝ թէ աւելի ինչ արժանաւոր Աստուծոյ ոք իմանայցէ, քան յառաջագոյն ընտրել Աստուծոյ իւր ժողովուրդ սեպհական՝ որ նշանակ երեւելի իւրոյ մշանջնական տեսչութեանն լինիցի. որոց բախտաւորութեան պատճառք՝ աստուածապաշտութիւնն իցէ, եւ չաջողութեան՝ կռապաշտութիւնն, եւ որոյ անցք իւրացն վկայութիւն ընծայեցուցանիցեն իմաստութեանն եւ արդարութեան այնր՝ որ վարէրն զնա: Աստաին իսկ սկսաւ Աստուած, եւ զզոյն իմն եցոյց հրէական ազգաւն: Այլ յետ այնչափ երեւելի ընծայութեամբք զայն անշարժական հիմն արկանելոյ՝ թէ ինքն միայն ըստ իւրոց կամացն զամենայն իրս մօտաւոր կենացս մատակարարէ, ժամանակ էր այնու հետեւ ի բարձրագոյնսն զմարդիկ փոփոխել, եւ զՅիսուս Վրիստոս առաքել, որում անկ էր նոր ժողովրդեան յամենայն ազգաց աշխարհիս ժողովելոյ զանձառ ճառս հանդերձելոց կենացն յայտնել:

Ինք երկոցունց ժողովրդոցն պատմութիւնն զիւրաւ մարթիս անցանել, եւ տեսանել՝ թէ զեարդ ի միախառն հաւասարութիւն ածեալ զերկոսին միանգամայն ընդ միմեանս զօղեաց Վրիստոս, քանզի եւ յառաջն՝ մինչ զեռ ակն ունէին նմա, եւ յետոյ՝ յորժամ պարզեւեցաւն նոցա, նա էր յամենայն ժամանակի մխիթարութիւն եւ ակնկալութիւն որդւոցն Աստուծոյ:

Տեսանե՞ս զհասնապաղ զմիաձեւ զմիանման կրօնսն, մանաւանդ թէ զմիշտ նոյն անդատին ի սկզբանէ աշխարհի. ի կրօնսն յայնս յամենայն ժամանակի մի նոյն Աստուած արարիչ ճանաչել, եւ մի նոյն Վրիստոս կենարար մարդկութեան:

Աստի իսկ առնուցուս ի միտ՝ թէ քան զկրօնս յոր հաւատացեալն ես, հնադոյն ինչ ի մարդկան միջն չեք, եւ թէ ոչ վայրապար ինչ հարքն քո՝ մեծ իսկ քան զամենայն փառաւորութիւն անձանց համարեցան, ջատագով կրօնիցն մտանել :

Արպիսի՞ ինչ վկայութիւն նորա ճշմարտութեանն չեցէ այն, յորժամ աեսանիցեմք զի ի ժամանակսն՝ յորս արտաքնոցն վկայասանութիւնք առասպելս արկանիցեն, կամ թէ իրս ինչ խառնակեալս շփոթեալս եւ մոռացեալս պատմիցեն, զիրք աստուածեղէնք՝ որ առանց հաւատակութեան քան զամենայն գիրս որք յաշխարհի իցեն, հին են, ի ձեռն այնչափ զիտպացն պատահելոց եւ կարգաւ իսկ իրացն, զմեղ ի բուն սկիզբն անդր յԱստուած հանեն, յայն՝ որ զբնաւ արար. եւ մանր կարգ ըստ կարգէ գրոշմեն զհաստումն աշխարհի, եւ ուրոյն զարարած մարդոյն, եւ զանուշակ զերանալից կենացն վայելչութիւնն, եւ զպատճառս իւրոյ չուսուութեանն եւ վատթարութեան, եւ զաշխարհի եղծադործն ապահանութիւն եւ զհեղեղ ջուրցն, եւ զսկիզբն հանգամանաց ճարտարութեան եւ զպզպաց, եւ զգեանոց զբաժինս, եւ զմարդկան տարածանել, եւ այլ եւս ինչ գործս՝ որ պիտանացու իցեն, զորոց արտաքնոցն պատմութիւնք շփոթութեամբ ճառիցեն, մինչեւ այլ ուստեք արդար պատմութիւնս խնդրելոյ կարօտանալ :

Իսկ արդ՝ եթէ հնութիւն կրօնիցն այնպիսի վկայութիւն զնմանէ մատուցանէ, ապա եւ հանապազորդ կարգին, առանց ընդ մշջ հատանելոյ եւ առանց փոփոխելոյ զայնչափ ժամանակս, մանաւանդ՝ յորժամ այնչափ խափանիչք ի վերայ հասանէին, յայտ առնէ՝ եթէ ձեռն Աստուծոյ է որ զնա ունի :

Քե՞նչ քան զայն զարմանալի կայցէ, աեսանել ըզկրօնսն ի սկզբանէ աշխարհի ի նմին հաստատութեան վերայ կացեալ մնացեալ. մինչ զի չեղեն ինչ ձեռնհաս, ոչ եթէ անհեա ինչ ի միջոյ բառնալ, այլ եւ ոչ փոփոխել իսկ զնա, ոչ կուսպաշտութիւն եւ ամպարշտութիւն՝ որ զնա յամենայն կողմանց պատեալ պաշարեին, ոչ բռնակալք՝ որ հալածեցինն զնա, ոչ հերեափկոսք եւ անհաւատք՝ որ ապականելն ջանացան, ոչ հեղզացեալքն՝ որ

այնմ մասն եղեն, ոչ որ անարժանութեամբ զհետ զնացեալ թշնամանեցին զնա յանցանօքն իւրեանց, եւ ոչ երկայնաձիգ ժամանակն՝ որ բաւական իսկ է միայն զամենայն ինչ զմարդկան եղծանել:

Այլ եթէ այժմիկ մատուցեալ դէտ ակն ունիցիմք տեսանել՝ թէ որպիսի ինչ միտս մեզ զԱստուծոյ տայցեն մեր կրօնքս իմանալ, ընդ որոյ հնութիւն զարմացեալս եմք, խոստովան լինիցիմք՝ թէ քան զամենայն միտս մարդկեղէնս այն ի վեր է, եւ արժանի է թէ իբրեւ յԱստուծոյ եկեալ համարեսցի:

Աստուածն՝ որում երբայեցիքն եւ քրիստոնեայք հանապաղ պաշտօն մատուցին, չէ ինչ հանդոյն դիցն՝ որ թերակատարութեամբ լի են եւ սպականութեամբ, որոց այլք ի մարդկանէ երկիր պաղանէին: Աստուած մեր մի է, անբաւ է, կատարեալ է, միայն արժանի զյանցանաց վրէժս խնդրելոյ եւ զառաքինութեան նահատական պատկելոյ, քանզի ինքն իսկ միայն սրբութիւն է:

Սա առանց չափոյ քան զառաջին պատճառն ի վեր է, եւ քան զառաջին շարժիչն՝ զոր ծաննեան փիղիսոփայքն, եւ չպաղին երկիր: Ահաք ի փիղիսոփայիցն՝ որ առաւելն եղեն միջամուխք, մի Աստուած եղին, որոյ դատեալ նիւթ ինչ մշանջենաւոր եւ ինքնակաց, որպէս ինչ ինքն էր, ի դործ արկ. եւ իբրեւ զդոյզն ոք արուեստագէտ ի զարդ եւ ի յարդ եւ ի կերպարանս ած, որպէս թէ ի դործելն իւրում կարօտ ինչ ոք էր նիւթովն, եւ նիւթոյն արդասեօք՝ զոր իւր չիցէ արարեալ. եւ չկարացին առնուլ ի միտ՝ եթէ նիւթն թէ անարար ինչ եւ ինքնակաց էր, ոչ օտարի ուրուք ձեռաց կարօտանայր առ կատարել, եւ եթէ անբաւ ինչ ոք եւ կատարեալ էր Աստուած, չէր իւրք կարօտ վասն զամենայն ինչ՝ զոր կամէր առնելոյ, այլ ինքն իսկ եւ իւր ամենազօր կամք բաւական էին: Այլ Աստուած հարցն մերոց, Աստուած Աբրահամու, այն՝ զորոց զզարմանալիսն դրեաց մեզ Մովսէս, ոչ միայն յարդարեալ յօրինեաց զաշխարհս, այլ եւ բունանդակ իսկ նիւթոյն, եւ արդուց եւ զարդուց եւ կերպարանաց արարիչ է: Մինչ չեւ էր ինչ արարեալ նորա, էական ինչ չզոյր բայց միայն ի նմանէ: Առաք մեք զնմանէ՝ թէ զամենայն առնէ, զբոլոր իւրով բանիւ դործէ, այնու՝ զի զա-

մենայն իմաստութեամբ առնէ, եւ զընաւ առանց չարչարանաց դործէ, եւ զայնպիսի մեծամեծան միով բանիւ եւ եթ բաւական է առնել, այս ինքն՝ զի եւ կամելն իսկ շատ է:

Այլա եթէ յառաջ մատուցեալ ընդ արարութեան պատմութիւն անցանիցեմք, որով հետեւ միանգամ սկըսաք, Մովսէս ուսուցանիցէ՝ թէ ամենարուեստ ճարտարապետս՝ որում այնպէս զիւրին է զամենայն ինչ ստեղծանել, ոչ զամենայն միանգամայն յօժարեաց առնել, այլ վեցորեայ ժամանակաւ կամեցաւ զաշխարհս հաստել. զի յայտ առնիցէ՝ թէ ոչ ի հարկէ իմեքէ դործիցէ, կամ թէ յանկարծադէպ ինչ խառն ի խուռն որպէս ոմանք ի փիղիսոփայիցն կարծեցին: Արեղակն յական թօթափել զամենայն ճառագայթսն՝ զոր ունի, արձակէ. այլ Աստուած՝ որ իմաստութեամբն եւ անձնիշխանութեամբ դործէ, ուր ուրեք կամիցի եւ որչափ ինչ կամիցի աղդեցուցանէ. եւ զոր օրինակ ի բանիւ զաշխարհս առնել, յայտ առնէ՝ թէ չէ ինչ այն նմա դժուարին, նոյնպէս զընաւ միանգամայն չառնելով, ցուցանէ՝ թէ նիւթոյն եւ արարածոյն եւ ամենայն դործոց իւրոց տէր է, եւ օրէնք դործոց նորա իւր կամք են, որ միշտ իրաւականն է:

Սոյն դարձեալ յայտ առնէ՝ թէ ամենայն ինչ Աստուծոյ իսկ ձեռացն դործ է: Աթանոսքն եւ փիղիսոփայք՝ որ կարծեցին հողոյ ընդ ջրոյ զանդանել, եւ կամ թէ աւելի քան զայս կամիցիս, տապոյ արեղական ի վերայ հասեալ, իւրովի տունկս եւ անասունս ծնուցանել, մեծամեծս սխալեցին: Պիրք ակնարկեն՝ եթէ տարերք ամուլ անձին անպտուղ են, թէ ոչ Աստուծոյ բանն զնոսա ի ծննդականութիւն դարձուցանէ: Ոչ հող, ոչ ջուր, ոչ օդք երբեք զտունկս եւ զանասունս՝ զոր տեսանեմք, ունեին, թէ Աստուծոյ՝ որ արարն եւ պատրաստեաց ըզնիւթն եւ զատաղձս նոցա, չէր ածեալ զնոյն ի կերպարանս ի ձեռն իւրոցն ամենալօր կամացն, եւ իւրաքանչիւր՝ զանցնիւր սերմանան բաշխեալ, զի յամենայն ժամանակս բազմանայցեն:

Տեսեալ մարդկան զտունկս եւ զըոյսս խոտոց զի ի գոլխատն տապոյ արեղական ծնանին եւ աճնն, թերեւս

ի միջև կայր կարծելոյ՝ թէ նոցա արարիչ արեգակն իցէ։ Այլ գիրք ցուցանեն՝ եթէ երկիր զալարուով եւ ազգի ազգի անկովք զարգարեալ էր, մինչ չեւ արեգակն եղեալ, զի առնուցումք ի միա՝ թէ ամենայն իրիք Աստուած եւ եթէ վարիչ։

Նաճոյ թուեցաւ մեծի ճարտարապետին առնել լոյս, մինչ չեւ ածեալ զնա յայն կերպարանս՝ յորս զարեգակն եւ զաստեղս յօրինեաց. քանզի կամէր իմն ցուցանել՝ եթէ լուսաւորքն մեծամեծք եւ գեղեցիկք՝ զոր եւ աստուածս իսկ ոմանք ի մարդկանէ կարծեցին, չունէին ինչ յանձանց, ոչ զնիւթն գեղեցիկ եւ համապայծառ՝ ուստի կազմեալ եւ կան, եւ ոչ զմեծաքանչ կերպարանս՝ յոր տեսանեմք զնոսա։

Արդ արարչութեանն ճառք ըստ այնմ օրինակի՝ զոր Մովսէս գրէ, յայաննն զանճառ ճառս ճշմարիտ փիղիստփայութեանն, թէ Աստուած է միայն՝ որ զամենայն յամենայնի ազգեցուցանէ եւ ամենայնի կարող է։ Արանելի, իմաստուն, ամենազօր եւ անկարօտական, ոչ ի հարկէ ինչ դործէ որպէս եւ ոչ առ պիտոյից. ոչ կարօտեալ եւ ոչ դրաւեալ ի նիւթոյ անտի իւրմէ՝ ուստի զամենայն զոր կամի՝ առնէ, այնու՝ զի եւ յառաջնումն իսկ իւրովք կամօքն ետ նմա զլինելն. վասն որոյ եւ յիրաւի շրջէ զնա եւ փոփոխէ եւ շարժէ զիւրաւ։ Ամենայն զմաննէ կախեալ կայ. եւ եթէ ըստ կարգին հաստատելոյ ի բնութեան ամենայն ինչ զմիմեանց կախեալ է, որպէս ծնանելն եւ աճել տնկոց զտապոյ ջերմութեան արեգական, այս յայն սակս է՝ զի որ զամենայն կողմանս աշխարհիս արար Աստուած, կամեցաւ՝ զի ընդ միմեանս կապեալ, ընդ իրեարս դրկախառն իցեն, եւ զի զիւր ամենարուեստ իմաստութիւնն զարմանալի յօրինեալ կարգաւն ցուցանիցէ։

Այլ այն ամենայն՝ զոր ուսուցանիցեն մեզ գիրք սուրբք վասն աշխարհի արարչութեան, առ այնու՝ զոր զարարածոյ մարդոյն ճառեն, չէ ինչ։ Յայժմ Աստուած զամենայն հրամանաւ առնէր¹. Աղեցի լոյս, եղեցի հաստատութիւն ի մէջ ջրոցդ, եւ եղեցի մեկնել ի մէջ ջուրցդ եւ ջուրց. երեւեսցի ցամաքն, բղխեսցէ երկիր բանջար խոտոյ. եղեցին լուսաւորք ի հաստատութեան, մեկնել ի մէջ տուրնջեան եւ ի մէջ դիշերոյ. հանցեն ջուրք գե-

ուունս շնոց կենդանեաց, եւ թռչունս թեւաւորս. հանցէ երկիր շունչ կենդանի ըստ ազգի չորքոտանի, եւ սողունս եւ գազանս երկրի ըստ ազգի: Այլ յորժամ յայն եկն՝ զի զմարդն առնիցէ, յայլ իմն բարբառ ած զնա Մովսէս. Արասցուք, ասէ, մարդ ըստ պատկերի մերում եւ ըստ նմանութեան՝:

Այսու հետեւ ոչ այն բան իշխանութեան եւ տէրութեան, այս բան հեղութեան է, թէպէտ եւ ազգական է իբրեւ զնա: Աստուած յանձին իւրում խորհուրդ խորհի, եւ ինքն զինքն զարթուցանէ, զի ցուցցէ՝ թէ զորձն զումէ բուռն հարկանելոց է, զամենեքումրք՝ զոր ցայնժամ արարեալ էր, անցանէ զանցանէ:

Արասցուք մարդ: Յանձն իւր խօսի Աստուած, խօսի ընդ ումեք՝ որ առնիցէ իբրեւ զնա, ընդ այնպիսումն՝ որոյ մարդն արարած եւ պատկեր իցէ. ընդ այլում ումեք՝ որ ամենեւին նման նմա իցէ, խօսի. ընդ այնմ՝ որով ամենայն ինչ եղեւ, որ եւ յիւրում աւետարանին ասէ՝ եթէ Օ որ շայր առնէ, զնոյն եւ Արդի նմին նման զորձէ՝: Աւ ի խօսելն ընդ Արդւոյն իւրոյ, միանգամայն եւ ընդ շողոյն խօսի, որ ամենապօրն է եւ հանգիտապատիւ եւ մշտնջենաւորակից երկոցունց:

Չիք ուրեք լուեալ ի գիրս՝ եթէ այլ որ քան զԱստուած զանձնէ բազմաբար խօսիցի, Արասցուք: Աւ Աստուած իսկ ինքնին ի գիրս երկիցս կամ երիցս անգամ միայն այնպէս խօսէր. արդ զայսպիսի նորանշան բարբառ ի կիր արկանէ յորժամ զմարդն ստեղծանիցէ:

Յորժամ Աստուած զբարբառ բանից փոփոխիցէ կամ զընդելական կերպարանն իւրք իւրք, ոչ եթէ ինքն անձամբ փոփոխիցի, այլ ցուցանէ՝ եթէ նոր ինչ կարգ իրացն սկսանելոց է, ըստ յաւիտենիցն նկատեալ խորհրդոցն:

Աւ այնպէս մարդն՝ որ քան զայլ արարածս, զորոց զստեղծուածն գրոշմեաց Մովսէս, վերագոյն է, եկն ի լինել նորանշան օրինակաւ: Արբորդութիւնն յայտնել սկսանէր ի հաստել բանաւոր եւ մտաւոր արարածոյն՝ որոյ մտացն խորհուրդն թերակատար պատկեր է Աստուծոյ յաւիտենական խորհրդոյն՝ որով ինքն յինքեան զբանքն ծնանի: Աստուծոյ խորհրդեան բարբառ ի կիր ար-

կանել, յայտ առնէ՝ թէ այս արարած միայն որ լինելոց է, կարող է խորհրդով եւ իմաստութեամբ գործել:

Իսկ որ ինչ յետ այնորիկ եղև նոյնպէս զարմանալի է: Մինչև ցայժմ չէր տեսեալ մեր յարարածոցն պատմութեան՝ զի մասն Աստուծոյ ի վերայ եղծանելի նիւթոյ գործից: Ասան զմարմին մարդոյն կազմելոյ, ինքն իսկ առնու հող յերկրէ՝ հողն այն այնպիսի ձեռամբ կազմեալ՝ յօրինէր ի կերպարանս գեղեցիկս, որպիսի ինչ յաշխարհի չիցէ երևեալ:

Եւ Աստուծոյ միտ զնել խնամով ի ժամանակի ըզմարդն առնելոյ, ցուցանէ՝ թէ ընդ մարդն աւելի իմն գութ ունի, թէպէտ եւ ամենայն ինչ՝ որ է, ի նորա իմաստութենէ մատակարարիցի:

Այլ պայման արարածոյ ոգւոցն եւս սքանչելագոյն է. ոչ ի նիւթոյ իմքէ հանէ զնա, այլ ինքն իսկ անգուստ ի վերուստ փչէ զնա. ոգի կենդանութեան է՝ որ ի նմանէ եկն:

Յորժամ զգազանն ստեղծ, ասէ Հանցին ջուրք գեռունս շնչոց կենդանեաց՝ եւ նովին բանիւն ստեղծ զվեշապան ծովականս եւ զամենայն շունչ կենդանի գեռուն շարժուն կայտառ, որ լցին զջուրս: Վարձեալ ասէ՝ եթէ Հանցի երկիր շունչ կենդանի ըստ ազգի չորքոտանի եւ սողունս:

Օ՛ի այնպէս իսկ պարտ եւ պատշաճ էր ծնանել շնչոց՝ որ անասնութեան կեանս կելոց էին, եւ որոց այլ ինչ գործ չետ Աստուած, բայց զշարժելն ըստ մարմնոյն առաջնորդելոյ. վասն այսորիկ եւ զշունչս անասնոցն ի ջրոյ եւ ի հողոյ հան Աստուած: Այլ շունչս այս՝ որ նմանութիւն ինչ իւրոյ կենդանութեանն լինելոց էր, եւ իւրեւ զնա խորհրդով եւ իմաստութեամբ կեանս կելոց էր, եւ ընդ նմա միաւորելոց էր տեսանելովն զնա եւ սիրելով, որով եւ ըստ պատկերի կերպարանաց նորա արարեալ էր, չէր մարթ՝ թէ ի նիւթոյ երանէր: Օ՛նիւթ փոփոխելով Աստուծոյ, եւ ի զարգ եւ ի կերպարանս ածելով, յօրինել յօրինէ գեղեցիկ ինչ մարմին, այլ բեւր անգամ թէ ի զարդ եւ ի կերպարանս եւ յարգասիս զնիւթն ածիցէ, զիւր պատկեր եւ զնմանութիւն չգտանէ: Ոգւոյն՝ որ ըստ պատկերի նորա եղև, եւ մարթի երանելի լինել

զնա ստանալով, պարտ էր այլով իմն օրինակաւ հաստել, եւ ի վերուստ անտի դալ. եւ զայս ինչ յայտ առնէ շունչն կենդանի՝ զոր փչեաց Աստուած ի բերանոյ անտի իւրմէ:

Յուշ լիցի մեզ՝ զի Մովսէս ընդ մարդկան ընդ մարմնաւոր իրս բեւեռելոց, երեւելի ինչ նամանութեամբք ըզյտակ եւ զիմանալի ճշմարտութեանցն ճառէ: Մի կարծեսցուք՝ թէ Աստուած ըստ օրինակի շնչաւորացն փչիցէ, կամ թէ մեր ոգիքս հոգմ ինչ նուրբ իցէ կամ շոգի անօսր. շունչն՝ զոր Աստուած փչեաց, որ եւ ունի յինքեան ըզպատկեր Աստուծոյ, ոչ հոգմ է եւ ոչ շոգի. մի համարեսցուք դարձեալ թէ ոգիքն մեր մասն իցէ աստուածեղէն բնութեանն, որպէս ոմանք ի փիղիսոփայիցն բանդագուշեալ կարծեցին. քանզի Աստուած ի մասունս չբաժանի: Օ՛ ի եթէ ի մասունս ինչ կոտորէր Աստուած, ապա չլինէին արարած մասունքն. քանզի չէ մարթ արարչին, անարար էութեան, յարարածոց յօդել: Արարան ոգիքն, եւ այնպիսիք արարան՝ զի չեն ինչ Աստուծոյ էութենէ, այլ ինչ մի ի պատկեր եւ ի նամանութիւն աստուածեղէն բնութեան եղեալ. որ ցանկ ընդ նմա՝ որ յօրինեացն զնա, միաւորելոց է. զայս յայտ կամի առնել Աստուծոյ փչելն, զսոյն ցուցանէ եւ շունչն կենդանի:

Արդ հաստեցաւ եկաց մարդն: Ղարձեալ նմին ընկեր ի նմանէ Աստուած ստեղծանէր եւ տայր նմա: Ամենայն մարդիկ ի միոջէ ամուսնութենէ ծնան, զի յաւիտեանս ժամանակաց, թէպէտ եւ աստ անդ ցրուիցին եւ բաղմանայցեն, մի տուն իցեն եւ մի առհմ:

Իբրեւ այսպէս ստեղծան մեր առաջին հարքն, եզան ի տեղւոջն փափկութեան՝ որ դրախտն կոչի. զի Աստուծոյ իսկ արժան էր զիւր պատկերն երանելի առնել:

Պատուիրան ետ մարդոյն, զի առցէ ի միտ՝ թէ է ոմն որ տէր է նորա. վասն աղբական եւ զննական իրաց ետ զպատուիրանն, քանզի մարդն զզայնօք արարաւ. զիւրին էր դարձեալ հրամանն, զի կամէր զկեանս նորա հեշտականս առնել, մինչ դեռ առանց մեղաց էր:

Իսկ մարդն անաստեալ ստունդանեաց պատուիրանին՝ զոր այնպէս զիւրին էր պահել. փորձչին ունկնդիր եղև եւ անձինն, փոխանակ Աստուծոյ միայն անսա-

լոյ. եւ անհրաժեշտ կորուստ եկն: Այլ պարտ եւ պատշաճ է յուզել թէ այնր սկիզբն ուստի իցէ, կամ թէ զինչ ինչ զայնր զհետ զայցէ:

Աստուծոյ ի սկզբան արարեալ էր զհրեշտակս իւր, ողիս սուրբս, մեկնեալ պարզեալ որոշեալ յամենայն նիւթոյ: 'Սա' որ զամենայն զոր առնէ զեղեցիկս առնէ, զամենեսեան զնոսա սուրբս ստեղծ, որ եւ երանութեան կարէին հասանել թէ զանձինս կամակար մտօք այնմ' որ արարն զնոսա, մատուցանէին: Այլ քանզի ամենայն ինչ' որ յոչնէ եւ ի չոյնէ լինիցի, վրիպական է, վասն այնորիկ մասն մի ի հրեշտակաց անտի յանձնախրութիւն կործանեցաւ: Այն արարածոյն' որ ընդ իւր անձն հաճիցի, եւ ոչ ընդ Աստուած. ի միում վայրկեան ժամանակի յամենայն պարզեաց անկանի այնպիսին: Այսչափ կարող եւ զօրաւոր են մեզք. ողիքն լուսաւորք' ողիք խաւարին եղեն, կորովութիւն մտաց նոցա ի նենդութիւն եւ ի խորամանկութիւն շրջեցաւ: Փոխանակ ընդ սիրոյն' անհնարին նախանձ եւ խանտաւորութիւն, փոխանակ բնակաւոր մեծութեանն' ամբարտաւանութիւն, երանութիւն նոցա ի ցուրտ միթարութիւն փոխեցաւ, իւրեանց չարեաց ընկերակիցս առնելոյ, եւ երանելի սպասաւորութիւն նոցա' ի տառապանս զմարդիկ փորձելոյ: Ատարեւ լազոյնն ի նոցանէ' որ քան զամենեսին հպարտացաւ ամբարտաւանեցաւ մեծամտեաց, քան զամենեսեան վնասակար եւ մեղանշական դտաւ, որպէս եւ քան զըօրբեսեան հիքադոյն: 'Ինչ մարդն' զոր փոքր մի խոնարհ արար Աստուած քան զհրեշտակս', այնու' զի ընդ մարմնոյ կապեաց զնա, նախանձեցաւ այնպիսի կատարեալ ողին. կամեցաւ զնա ընդ իւր ի հատուածութիւն եւ ի խակագործ ստահակութիւն հանել, զի ապա ընդ քարշարկեալ յիւր կորուստն տանիցի: Այն դիցուք զհարդ կամ որով որինակաւ ընդ նմա խօսիցի, եւ լինիցիմք խելամուտ հայթայթանաց նորա:

Աստուծո Նւա³ ի տկարակողմն անդր. ընդ Նւայի խօսելով, եւ առ այրն նորա զբանն ձգէ: Օյն⁶ իսկ բնաւ արդել ձեզ Աստուած չուտել ի ծառոյ անտի: Աթէ զձեզ բանաւորս եւ մտաւորս արար, զամենայն իրիք զպատճառս պարտիք դիտել. չէ ինչ սատակիչ պտուղն, թէ

ուտէք չմեռանիք : Տես ուստի սկսաւ ստահակեցուցիչն . վասն հրամանին վիճի, եւ վասն ունկնդրութեան երկեւան երկմտութեան ի ներքս մուծանէ : Վինիցիք իրրեւ զաստուածս, անձնատէր կամակար, անձամբք երանեալ երջանիկ, յանձանց խակ իմաստունք, ճանաչել զբարի եւ զչար, չեցէ ինչ՝ որում խելամուտ չկարկցէք լինել : Արդ այսպիսի հրապուրանօք միտք հակառակ հրամանի արարչին յառնեն, եւ ըստ օրէնսն արտաքս վազեն :

Իսկ Աւուս փոքր մի հաւանեալ, հայեցաւ ի պտուղ անդր, որոյ գեղեցիկութիւնն քաղցր ճաշակս խոստանայր : Ատես՝ զի զողի ընդ մարմնոյ կապեալ էր Աստուծոյ ի մարդն, կարծեաց՝ եթէ եւ ընդ ծառս թերեւս զօրութիւն ինչ ի վեր քան զընութիւնս վասն մարդոյն խառնեաց, եւ ընդ իրս երեւելիս եւ զննականս՝ պարզեւս ի մանալիս : Իբրեւ կերաւ ի գեղեցիկ պողոյ անտի, տարամատոյց առն իւրում : Անդ անհնարին պատերազմ ամա ի զիմի հարկանէր : Աւ կնոջն ուսել եւ դուրսն սաստիկացուցին զփորձանսն . յանձն առ հաճեցաւ ընդ բանս փորձչին՝ որ այնպիսի օգնականութեամբք զօրացեալ էր . ի վրիպեցուցիչ գատարկ քննութենէ, եւ յամբարտաւանութեան մտաց, եւ ի ծածուկ ցանկութենէ անձամբ յանձնէ եւ ըստ անձին զիւրի գործելոյ կուրացեալ՝ եկն յայն . զիւր անձնիշխանութեան կամեցաւ զփորձ առնուլ, եւ անհնարին վտանգեցաւ, եւ ճաշակեաց հանդերձ պողոմն՝ յորմէ արգելեալ էր նմա չուտել, զատակիչ քաղցրութիւն զիւր միտս հաճելոյ . զգայունքն եւս աւելի յաճախէին զնոր հրապոյրսն ցոփացուցիչս, եւ նա բղձեալ գնաց նոցա եւ հնազանդեցաւ եւ ծառայացեալ եկաց նոցա ի հարկի, որ տէրն էր նոցա :

Ի նմին ժամանակի ամենայն ինչ առաջի նորա փոփոխէր : Այնու հետեւ երկիրս ոչ իրրեւ զառաջինն իւրովի պարարտացեալ տոհմականս բերէ, այլ փշաբեր փշալից խոպանացեալ երեւի . եւ թէ ոչ նախ վաստակեալ տուայտիցի զերկիր գործել եւ ակօսս կոտորել, չըմբռնիցէ արդիւնս շայեկանս . օգք չեն հանապաղ յստակ եւ խաղաղ . որ զամենայն անասունս մինչեւ զկարի խակ վայրենադոյնսն իւր զբօսանս առանց մեղաց առնէր, այնու հետեւ ահագինս եւ սոսկալիս տեսանէր զնոսս . որ զամենայն ի

նորա վայելչութիւն արար Աստուած, յանկարծակի վազ-
վաղակի զբոլոր ի պատիժս պատուհասից զարձոյց: Ինքն
իսկ անձին ծանրատաղտուկ թուէր, այն՝ որ այնչափ
սիրեաց զանձն: Յապտտամբելոյ զզայնոցն իւրոց ի միտ
առնոյր զամօթն իւր. չէր նա այնու հետեւ առաջին
ձեռակերտ արարչին, յորում ամենայն ինչ գեղեցիկ էր.
մեղք այլ իմն գործ գործեցին, զոր պարտ էր ծածկել:
Սարգն չկարէր ամօթոյն ժուժալ, եւ կամէր իմն՝ թէ
յիւրոց աչացն զանձն թաղուցանէր: Այլ եւս աւելի
չամբթէր Աստուծոյ ժուժկալ լինել: Օ՛ի մեծազօրն
Աստուած՝ որ ըստ իւրում նմանութեան արար զնա, եւ
զզայունս շնորհեաց նմա իրրեւ յօգնականութիւն որդո-
ցրն մտաւորաց, յօժարէր երեւելի կերպարանօք յայանել
նմա. այլ յայնմ հետէ չկարէր մարդն հանդարտել կալ
առաջի նորա՞, զնացեալ փախտական յանտառախիտ
մայրիսն ամրացեալ ծառախիտ տերեւապատ լինէր, զի
ծածկիցի յայնմանէ՞ զոր յառաջն քան զամենայն ինչ
հեշտական համարէր: Ստղտեալ բամբասեալ ծանօթա-
կան խղճիւն կշտամբէր, մինչ չեւ Աստուծոյ խօսեցեալ.
եւ պատճառելն իսկ նորա յամօթ արար զնա: Հարկ է՞
զի մեռանիցի, զարման բժշկութեան անմահութեան
բարձաւ ի նմանէ. եւ այլ իմն մահ եւս ահագին՝ որ է
մահ որդոցն, առակեցաւ նմա ի մարմնաւոր մահու անդ՝
յոր ինքն պարտաւորեցաւ:

Այլ եւ մեր վճիռ հատաւ յորժամ զվճիռ դատաս-
տանին եղ ի վերայ նորա Աստուած: Օ՛ի զոր օրինակ ի
մտի եղեալ էր Աստուծոյ հատուցանել զվարձս ունին-
գրութեան նորա, ոչ նմա միայն այլ եւ ամենայն զաւակի
նորա. իրրեւ ապտտամբեացն պարտաւորեցուցանէր զնա,
եւ պատիժս ի վերայ ածէր, ոչ ի վերայ նորա միայն այլ
եւ ամենայն որդոցն, իրրեւ ի վերայ սիրելեաց նորա եւ
ցանկալեաց. մեք ամենեքին անիծեալ եմք ի սկզբանն մե-
րում, ծնունդս մեր յականէ ապականեալ պղտորեալ է:

Աստ ոչ ինչ ի խոյզ արկեալ քննեսցուք զօրէնսն
ահագին աստուածեղէն արդարութեանն, որովք մար-
դկութիւնս ի սկզբանէն անիծաւ. երկիր պաղցուք դա-
տաստանացն Աստուծոյ՝ որ զամենայն մարդիկ իրրեւ զմի
մարդ հաշուի ի նմա՝ ուստի կասի թէ ամենեքին ելանի-

ցեն. Համարեցուք զանձինս անկեալս ի մեծութեան պատուոյ ընդ հօր մերում՝ որ ապստամբեալ ի բայ եկաց յԱստուծոյ, եւ վատթարեալս ի ձեռն վճռոյ դատաստանին՝ որով նայն դատապարտեցաւ, եւ նովաւ հանդերձ մերժեալս եւ տարադիրս ի դրախտէ անտի՝ ուր ծնանելոցն էր զմեզ :

Օրէնք մարդկեղէն դատաստանաց մարթեն մեղօքնական լինել՝ զի մտցուք ի խորութիւն աստուածեղէն արդարութեանն, որոյ ստուեր իմն են դատաստանք մարդկօրէնք. այլ գլատակա խորոցն յայտնել ոչ կարեն : Հաւանեցուք՝ թէ Աստուծոյ ստուգութիւն եւ ողորմութիւն, արդարութեամբ եւ ողորմութեամբ մարդկան չսփին, եւ թէ մեծ են նորա եւ առաւել քան զմարդկանս :

Այլ մինչ դեռ աստիկ պատիժքն Աստուծոյ ի վերայ մարդկութեանս զարհուրեցուցանեն զմեզ, զարմասցուք՝ թէ զեարդ յայլ իմն հեշտական յոյս փոխէ զմեզ : Քանզի օձի սողելն եւ գելուլ եւ գալարել, պատկեր եւ նմանութիւն էր ցոփացուցիչ հրապուրանացն եւ հայթայթանաց եւ մեղմեխանաց ոգւոյն չարի, վասն այնորիկ եւ Աստուած օձին առակաւ եցոյց Աւայի մօր մերում՝ թէ պարտեցաւ թշնամին, եւ յայտ արար զգաւակն օրհնեալ՝ որ ջախջախելոց էր զգլուխ այնորիկ որ յաղթեացն նմա¹⁰. այս ինքն՝ զի կոխելոց էր զհպարտութիւն ամբարտաւանութեան նորա, եւ յամենայն երկրէ քակելոց էր զեշխանութիւն նորա :

Չաւակն օրհնեալ Քրիստոս էր որդի կուսի միոջ. ի Քրիստոս միայն՝ Ադամայ չէր մեղուցեալ, քանզի յԱդամայ սքանչելի օրինակաւ ելանելոց էր, յղացեալ ոչ յառնէ, այլ ի Հողւոյն սրբոյ :

Այլ մինչ շեւ շնորհեալ մեզ Աստուծոյ զիրկիչն, պարտ էր մարդկութեանս երկայնաձիգ ժամանակաւ ըզփորձ առեալ ճանաչել թէ այնպիսի օգնականութեամբ կարօտ է : Արդ թողաւ մարդկան ըստ կամս անձին իւրոյ գնալ. ապականեցան եղձան միտք նորա, անառակութիւնք նորա յանշարտութիւն ելին, եւ անօրէնութիւն ծածկեաց զամենայն երեսս երկրի :

Յայնժամ խորհեցաւ Աստուած վրէժ առնուլ, եւ կամեցաւ՝ թէ յիշատակ յուշարար վրէժինդրութեաւ

նրն մի մոռացի ի մարդկան միջի. աճ հասոյց զհամաշխարհական ջրհեղեղն՝ որոյ յիշատակք եւ այժմ՝ յամենայն ազգս կան, որպէս եւ անօրէնութեանցն յիշատակն, վասն որոց եկն եհաս բնաջինջ համակորոյս սասակումն :

Մի կարծիցեն մարդիկ՝ թէ աշխարհս իւրովի վարիցի, եւ թէ որ ինչ եղեն՝ հանապաղ կացցէ, որպէս թէ յանձնէ: Աստուած՝ որ զամենայն արար, եւ որով ամենայն կայ, զամենայն անասունս հանդերձ մարդկամբ հեղձուացէ, եւ այնպէս զընտիր ընտիր ձեռակերտաց իւրոյ եղծանիցէ:

Ինքն չկարօտանայր իւրք առ եղծանել զամենայն՝ զոր միով բանիւ արար. այլ զարարածսն արժանիս համարի իւրոյ վրէժխնդրութեանն սպասաւորս կացուցանել, եւ զճուրս կոչէ ողորմանել դերփել զերկիր՝ որ անօրէնութեամբ լլաւ:

Այլ եղիտ նա յերկրի այր մի արդար: Մինչ չեւ էր սպրեցուցեալ զնա Աստուծոյ ի ջրհեղեղէ ջուրցն, պահեաց զնա ի ձեռն շնորհացն իւրոց յանօրէնութեան հեղեղէ: Տոհմ նորա պահեցաւ, զի բազմացին եւ լցցեն զերկիր՝ որ յաւերն դառնալոց էր եւ յանապատ մեծ: Ի ձեռն հողարարձութեան առնն այնորիկ զերժուցանէր Աստուած զանասունսն. զի իմացի մարդն՝ թէ վասն նորա արարան անասունք, եւ նմա ի հարկի կան հրամանաւ արարչին:

Աշխարհս նորոգէր, եւ երկիր միւսանգամ ի ջուրց ելանէր. այլ ի նորոգութեան աստ յայմիկ կայ մնայ նշանակ մշանջնաւոր Աստուծոյ վրէժխնդրութեանն: Մինչեւ ցճրհեղեղն ամենայն բնութիւն յաստիս եւ յուժի զօրութեան էր, այլ յայնչափ յաճախութենէ ջուրցըն՝ զոր աճ Աստուած ի վերայ երկրի, եւ յընդերկար դաւարելոյ անդէն ջրոցն, տղմացեալ սկացեալ երկրին, հիւթն եւ պարարտութիւնն՝ զոր ունէր, ապականեցաւ. օղբ՝ ծանրացեալք յանչափ տամուկ խոնաութենէն, յաճախեցին զպտածառս ապականութեանն. եւ իրբեւ առաջին կազմած փեղեբաց խախտեցաւ, կեանք մարդկան՝ որ մօտ ուրեմն մինչեւ ցհազար ամ ձդէր, առ սակաւ սակաւ նուազեցին. բանջար եւ պտուղք յառաջին զօ-

բութենէ տկարացան. եւ հարկ լինէր այնու հետեւ մարդկան այլ իմն հաստատուն կերակուր տալ, զմիս շնչաւորաց:

Եւ այնպէս տակաւ անհետ ի միջոյ բառնալոց էր, որ ինչ յառաջին կարգաց հաստատութենէ մնացեալ կայր. եւ բնութիւնն իսկ փոփոխմամբն դուշակէր մարդոյն՝ թէ ոչ իբրեւ զառաջինն զնայ ընդ նմա Մատուած, յետ այնչափ անօրէնութեամբ զնա ի ցատումն ածելոյ:

Գարձեալ՝ այս երկայնակեաց կեանք առաջնոց ի մարդկանէ, որ ի Հրէից զիրս զրեալ կայ, չէ ինչ անծանօթ այլոց եւս ազգաց, զի եւ հին իմն աւանդութիւնք նոցա զայնր յիշատակս պահեն¹¹: Սահ ճեպելովն եւ կանխելով, զերազ վրէժխնդրութենէ՝ մարդկան յայտ առնէր. եւ քանզի հանապազօր առաւել ի յատակս անօրէնութեան իջանէին մարդիկ, հարկ էր՝ զի եւ աւելագոյն տանջանք զօր հանապազ ի տանջանս տանջանաւորացն յաւելուցուն:

Սիայն կերակրոցն իսկ փոփոխումն բաւական էր նոցա ցուցանել՝ թէ զկարգ առ սակաւ սակաւ վատթարեալ ի յոռութիւնս զային, քանզի որչափ տկարանային, այնչափ ի կերակուրս եւ ի միսս անասնոց մտարերէին:

Յառաջ քան զժամանակս ջրհեղեղին, կերակրելն մարդկան առանց աշխատութեան, ի մրդոց՝ որ ինքնին թօթափէին, եւ ի բանջարոց՝ որ նոյնպէս վաղ ցամաքէին, նշխար իմն էր առաջնոց անմեղութեանն եւ վայելչութեան՝ յոր հաստեայն էաք. իսկ այժմ ի մեր դարման հարկ է արիւն շնչաւորաց հեղուլ եւ զմիս պտուրուճակաց յօշել, յորոց եւ մեք իսկ բնութեամբ քստմունիւք. եւ ազգի ազգի համեմանքն եւ հայթայթանք՝ որովք բազմախորտիկ սեղան մեզ առաջն յօրինեմք, հազիւ բաւական լինին ծածկել զշաղկոյն ի մէնջ, զոր ի հարկէ իսկ ուտեմք զի յազիցիւք:

Եւ այս ամենայն սակաւ ինչ մասն է մերոց թշուառութեանց: Օր կեանքս մեր՝ որ ինքնին իմն կարճակեաց սակաւօրեայ է, ի բռնութենէ բռնազբօսիկ ինչ իրաց՝ որ սպրդելին մօտն ի մարդիկ, եւս վաղադոյն քան զժամանակն կարձին: Սարդ՝ որ ի ժամանակն առաջինս ի կենդանութիւն զազանացն խնայէր եւ զընդայր, այնու հետեւ ընդեւեալ իւրոց նմանեաց իսկ կենացն չիւր-

նայէր: Օւր պատուիրեաց Աստուած վաղվաղակի յեա ջրհեղեղին զմարդոյ արիւն չհեղուլ. զի կամեցեալ Աստուծոյ զնշմարանս ինչ առաջնոյ երանութեան բնութեան մերոյ պահել, յորժամ թոյլ ետ զանասնոց զմիս ուտել, պատուիրեաց զմիս արեամբ շնչոյ մի ուտել¹². քանզի յայնմ հետէ սպանութիւնք բազմացան առանց չափոյ¹³: Թոկպէտ եւ յառաջ քան զջրհեղեղն Այլին զիւր եղբայրն առ նախանձու սպան¹⁴, եւ Վամքք, ի զաւակէն Այցենի, զերկրորդ սպանութիւնն գործեաց, եւ մարթի կարծել թէ յեա նոցա օրինակ անօրէն գործոյն լինելոյ, եղեն եւ այլ եւս սպանութիւնք. այլ պատերազմունք դեռ եւս չէին գտեալ: Վանզի յեա ջրհեղեղին երեւեցան նահանգացն աւարառութն՝ զոր անուանեալ կոչէին աշխարհակալք, որ առ ցանկութեան միայն փառաց իշխանութեան, զայնչափ զանմեղսն ջնջեցին: Ներրովթ, շառաւիղ անիծից ի Վամայ՝ զոր անէծ հայր իւր, սկսաւ ճակատ յարդարել եւ կռուել վասն զիւր թագաւորութիւն կանգնելոյ¹⁵: Յայնմ հետէ, առ իշխանութեանն ցանկութեան, զմարդկան կեանս չզրէին ինչ ամենեւին. եւ յայն չափ հասին՝ զի զմիմեանս առանց ատելութեան ինչ սպանանէին. բուն իսկ փառաւորութիւն, եւ քան զամենայն արուեստ գեղեցկագոյն լեալ էր զմիմեանս սպանանել զմիմեանս կոտորել:

Ահա այս սկիզբն է աշխարհի, որպէս Մովսիսի իսկ պատմութիւնն եցոյց մեզ. յառաջնումն գեղեցիկ է սկիզբըն, այլ յետոյ անհնարին չարեօք լի. իսկ ըստ Աստուծոյ՝ որ զամենայն առնէ, ցանգ զարմանալի. այնպիսի իսկ՝ զի եթէ մտօք անցանիցեմք ընդ նա, ուսանիցիմք նկատել զտիեզերս եւ զազգս մարդկութեան հանապազընդ ձեռօք արարչին, նորա բանիւ ի չզոյէ եղեալ, նորա մարդասիրութեամբ պահեալ, եւ իմաստութեամբն առաջնորդեալ, արդարութեամբն ի պատիժս մտեալ, եւ ողորմութեամբն զերծեալ, եւ միշտ ընդ նորա իշխանութեամբն կացեալ:

Զի ինչ այնպիսի աշխարհս, որպէս ինչ փիղիսոփայքն կարծեցին թէ իցէ. ոմանք՝ թէ մարմինք ինչ էին զառաջինն, եւ ի միախուռն ընթանալոյ նոցա՝ յանկարծադէպ իմն թանձրացեալ յօղեցաւ եկաց ինքն աշխարհս.

իսկ այլք՝ որ խնաստնադոյնքն իցեն, զնիւթն, ասնն, արարչին ինքն եա, եւ այնպէս զնմանէ չէ կախեալ աշխարհքս, ոչ բուն գոյութեամբն եւ ոչ այնու կերպարանօք՝ որով յառաջն էր. եւ ընդ օրինօք իմն զնա արկանէ՝ ընդ որս եւ ինքն իսկ չկարէ անցանել :

Սովսէս, եւ Հարքն մեր առաջինք՝ զորոց զաւանդութիւնսն Սովսէս ի մի վայր ժողովեաց, այլ իմն միտս մեզ տան իմանալ : Եւստուած՝ զոր Սովսէս եցոյց մեզ, ունի եւ այլ ինչ զօրութիւն. կարող է եւ առնել եւ եղծանել, որպէս ինչ նմա Հաճոյ թուիցի. բնութեանն օրէնս զնէ, եւ երբ կամի եղծանէ :

Եւ թէ վասն զիւր գիտութիւն ընծայեցուցանելոյ, ի ժամանակի՝ յորում բազմաց ի մարդկանէ մոռացեալ էր զնա, սքանչելի նշանս եցոյց, եւ նեղեաց պընդեաց զբնութիւնս յիւրոց Հաստատուն օրինացն ելանել. յայն սակս արար, զի ցուցցէ նոքիմք՝ թէ բնութեանն ինքն արձակ տէր է, եւ թէ իւր կամքն միայն զօղ է՝ որ կապեալ ունի զկարդ աշխարհիս :

Եւս իսկ է՝ զոր մարդիկ մոռացան, այնպիսի գեղեցիկ կարգի անշարժութիւնն առաւել Հաւանեցուցանէր զնոսս՝ թէ այն կարգ էր միշտ եւ ինքնակաց գտեալ. ուստի յերկրպագութիւն եւս եկին կամ աշխարհի առ Հասարակ, կամ աստեղաց եւ տարերց, եւ ամենայն իսկ մարմնոց մեծամեծաց՝ ուստի աշխարհս յօղեալ եւ կայ : Երբ Եւստուած արժանի ըստ իւրում մեծութեանն մարդասիրութիւն եցոյց առ մարդիկ, յերեւելի ինչ ժամանակի զայն կարգ եղծանելով, ընդ որ նոքա ոչ միայն չըզարմանային ինչ, քանզի ընդելեալ իմն էին, այլ եւ այնու արտաքոյ քան զԵւստուած մշտնջննաւորութիւն եւ անարգել տէրութիւն ինչ ածէին զմտաւ թէ իցէ, զի այնչափ իսկ կուրացեալ էին :

Պատմութիւն ժողովողեանն Եւստուծոյ, որ Հաւատարիմ է յիւրմէ իսկ կարգէն, եւ ի բարւոք կրօնից այնոցիկ՝ որ գրեցինն եւ որ պահեցին մեծաւ յօժարութեամբ, իրրեւ ի ստոյգ արձանադրի մի ըստ միօճէ գրեալ ունի զյիշատակս սքանչելեացն. եւ նոքիմք ընծայեցուցանէ մեզ զճշմարիտ գիտութիւն մեծութեան իշխանութեանն Եւստուծոյ ամենազօրի տեսնն արարածոց,

որ իշխանն է ոչ միայն զիւր արարածսն ընդ հասարակաց օրինօք՝ զորս ինքն ետ, արկանել, այլ եւ այլ իմն օրէնս տալ նոցա, յորժամ կարեւոր համարիցի խթել եւ զարթուցանել զմարդկութիւնս ի գլխադարն թրմբութենէ:

Այսպիսի ոք է Աստուածն՝ զոր Մովսէս ի գիրս իւր եցոյց մեղ, թէ նմա միայնոյ պարտ է ի ծառայութեան կալ եւ արբանեկութիւն հարկանել. սա է Աստուածն՝ որում յառաջ քան զՄովսէս նահապետքն երկիր պագին. եւ համառօտ իսկ ասել՝ Աստուածն Արրահամու եւ Սահակայ եւ Յակովբայ, որում հայր մեր Արրահամ կամեցաւ զենուլ զորզի իւր զմիամօր. որոյ քահանայ էր Մեղքիսեզեկ, առակ օրինակին Վրիստոսի. որում հայր մեր Նոյ յարկղակերտ աապանէ ելեալ զոհս մատոյց. զոր արդարն Աբէղ ծանեաւ, զընտիր ընտիր խաշանցն նմա մատուցանելով. զոր Մէթ, շնորհեալ Ադամայ ի տեղւոջ Աբէղի, ծանոյց որդւոց իւրոց՝ որ որդիք Աստուծոյ կոչեցան. զորմէ եւ Ադամ իսկ եցոյց իւրոց որդւոցն՝ թէ ինքն իսկ նորոգ ի նորա ձեռաց ել, եւ թէ նա միայն կարօղ է բառնալ ի միջոյ զվիշտս իւրոյ զաւակին ի թշուառութիւնս հասելոյ:

Գեղեցիկ է փիղիսոփայութիւնս՝ որ այսպիսի սրբական խորհուրդս զարարէն մերմէ տայ ածել զմտաւ. գեղեցիկ է տըւչութիւնս՝ որ մեղ զսիշատակս մեծամեծ գործոց արարչին պահէ: Օչ սուրբ է ժողովուրդս Աստուծոյ. քանզի կարգաւ անդադար ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցմեր աւուրս, զայնպիսի աւանդութիւնն սուրբ եւ զզգաստական առաքինութիւն պահեաց:

Այլ քանզի առ Արրահամաւ նահապետաւն ժողովուրդն Աստուծոյ յայլ իմն ազնուադոյն կերպարանս փոխեցաւ, հարկ է սակաւիկ մի քեզ առ սովաւ դադարել:

1) ՊՆՆ. Ը: 2) ԱՆԳ. Ի. 9: 3) ՅՈՎ. Գ. 19: 4) ՊՆՆ. Ի. 7: 5) ԱՆԳ. Ը. 20. 24: 6) ԱՆԳ. Ի. 7: 7) ՍԵՂ. Բ. 6: 8) ՊՆՆ. Գ. 1. 4. 5. 6: 9) ԱՆԳ. Գ. 8: 10) ԱՆԳ. Գ. 14. 15: 11) ՍԵՂ. Բ. ԲԱՐՈՒ: ԼՍՏԲԵՍ: ԳԻԿ. ԴԵՄ. եւ պլլ. ք առ Յովսեպ. շնա. Ը. 4: ԼՍՏԲԳ. Գ. ԿՐԾ. Ե. օր: 12) ՊՆՆ. Թ. 4: 13) ԱՆԳ. Գ. 8: 14) ԱՆԳ. 23: 15) ԱՆԳ. Ժ. 9:

ԱՐՐԱԵՄ յետոյ ուրեմն քան զՋրհեղեղն երեքհարեւր յիսուն ամօք ծնաւ, ի ժամանակի՝ յորում կեանք մարդկան թէպէտ եւ կարճեալ իմն, այլ դեռ եւս երկայնակեաց էին: Այո այն ինչ մեռեալ էր, Այ՛մ որդի նորա անդրանիկ դեռ եւս կեայր, եւ Արրահամու մարթ էր կեալ ընդ նմա յամենայն կեանս իւր:

Օմտաւ ած զաշխարհս դեռ եւս նոր, եւ աղմացեալ ի ջուրցն հեղեղէ, յորժամ մարդիկ, քանզի այնպէս մօտ էին ի սկիզբն իրացն ամենայնի, չկարօտանային իւրք առ ի ճանաչել զմի Աստուած եւ զարժանաւոր ծառայութիւնն նմա մատուցանել. զի թաւական էր աւանդութիւնն՝ որ վասն իրացն այնոցիկ յԱդամայ եւ ի Աոյէ հետէ պահեալ էր. մանաւանդ զի այնպէս իսկ պատշաճական էր մտացն խորհրդոց՝ աւանդութիւնն, մինչեւ կարծել թէ այնպիսի լուսաւոր եւ կարեւորն ճշմարտութեան չէր մարթ երբեք ծածկել, եւ ոչ ի մարդկան միջի մոռանալ: Այնպիսի իմն էին կրօնք զառաջինն մինչեւ յԱրրահամ, յորում ժամանակի մարդիկ յիւրեանց մտացն եւ ի յուշարար յիշատակէ տեղեակ եւ հմուտ լինէին մեծութեանցն աստուածութեան:

Այլ տկար եւ ապականեալ էին միտք. եւ ըստ չափոյ հեռանալոյ յիրացն սկզբանէ, մոռացօնս առնէին մարդիկն ամենայնի՝ զոր յիւրեանց նախնեացն ընկալան. մանկունք անհաւանք եւ սոսահակք չկամէին այնու հետեւ հաւուցն իւրեանց ծերացելոց զառանցելոց հինօրէից պատմութեան հաւատալ, զոր յետ այնչափ ազգաց հազիւ ճանաչէին. միտք մարդկեղէն յերեւելիսս եւ ի մարմնաւորս հարեալ հատեալ, այնու հետեւ վերանալ եւ խմանալի ինչ զմտաւ չմարթէր ածել. եւ զոր ինչ տեսանէին մարդիկ, այնմ կամեցեալ երկիր պաղտանել, կռապաշտութիւն ընդ ամենայն աշխարհս տարածանէր:

Այսն չար՝ որ զառաջին մարդն վերկեցոց, ճաշակէր յայնժամ զպտուղ պատրանացն իւրոց, եւ տեսանէր զարդիւնսն ի զլուխ ելեալ զբանին այնորիկ զոր ասացն՝

Եթէ ԻՆԻՔԻՐ ԻՐԲՈՒ ԶԱՍՏՈՒԾՍ: Յորմէ հետէ ասաց զբանն զայն, խորհէր զԱստուած ընդ արարածոց ի միտս մարդկան խառնակել, եւ բազմաց բաժանել զնել զանհաղորդական անունն Աստուծոյ: Աւ զօր խորհեցան՝ աջողեցաւ նմա. մարդիկ, թէպէտ եւ ի մարմին եւ յարին հարեալ հատեալ էին, ունէին յիշատակ ինչ զաստուածեղէն զօրութեանն մթին եւ ընդ աղօս՝ որ իւրովին իսկ հաստատեալ մնայր. այլ շփոթեալ նոցա զյիշատակս Աստուծոյ զօրութեանն ընդ պատկերի նմանութեան՝ որ աղէր զզայնոց նոցա, ամենայն իմիք՝ ուր շարժումն ինչ եւ զօրութիւն երեւէր, երկիր պապանէին: Աւ այնպէս նախ արեգակն եւ աստեղք՝ որ ի հեռաստանէ ազդեցութիւնս գործէին, հուր եւ տարերք՝ որ ամենեցուն պիտանիք եւ կարեւորք էին, առ հասարակ երկրպագութեան արժանի լինէին: Աւ ապա թագաւորք մեծամեծք, եւ աշխարհակալք՝ որ ամենայն իմիք կարօղ էին ի վերայ երկրի, եւ որ հանդամանս ինչ արուեստից՝ որ պիտանի կենաց մարդկան իցէ, իմանային, վաղվաղակի աստուածեղէն պատուոյ հասանէին: Այնպէս մարդիկ պատիժս կրեցին վասն հնազանդ լինելոյ իւրեանց զզայնոցն. զե զամենայն ինչ զզայնօքն դատեցան, եւ մտաց ընդդէմ դարձեալ, արարին զաստուածան՝ որոց երկիր պապին ի վերայ երկրի:

Օխորդ օտարացեալ երեւէր յայնժամ մարդն յառաջին կարգէ արարածոցն իւրոյ, եւ զխորդ եղծեալ ապականեալ էր պատկեր կերպարանայն Աստուծոյ. քանզի զինչ մարթ էր Աստուծոյ այնպիսի խտտորութեամբք ստեղծանել զնա, որ օր ըստ օրէ առաւել յայտ դային. ոչ ապաքէն յօժարելն իսկ այլ ամենայն իրաց ի հարկի կալ, բայց միայն ի բուն Տեառնէն, յայտ առնիցէ՝ թէ ձեռն իմն օտարոտի զգործն Աստուծոյ վեր ի վայր հարեալ եղծ ի միտսն մարդկեղէնս, մինչ զե հազիւ ումէք մարթիցի զնշմարանս ինչ զնորս գտանել: Այնպէս անհնարին կուրութեամբ հարեալ, ի կռապաշտութիւնս անառեալ ընկղմէին մարդիկ, եւ չլինէր ուրեք կայ եւ հաստատութիւն:

Անհնարին ելեալ զեզոյր մոլորութիւնն: Արդ՝ զե մի զամենայն մարդկութիւնս ապականիցէ եւ ամենեւին

զԱստուծոյ զխտութիւնն շեջուցանիցէ, մեծազօրն Աստուած զծառայ իւր զԱբրահամ անդուստ ի վերուստ կռչեաց, եւ կամէր զիւր պաշտօնն հաստատել յաղգատոհմին նորա, եւ պահել զՀին հաւատս աշխարհի արարչութեան եւ զիւրոյ տեսչութեան՝ որով զմարդկան իրս վարէ:

Աբրահամ յամենայն ժամանակի անուանի եւ երեւելի է յարեւելս: Չեն երբայեցիք միայն՝ որ զնա իւրեանց հայր համարին¹, զի եւ եղոմայեցիք պարծին՝ թէ ի նմանէ իցեն. Խամայէզ որդի Աբրահամու, ի մէջ արարացւոց նահապետ ազգին ճանաչի, եւ թլխատութիւնն՝ որ ի միջի նոցա կայ, յայտ առնէ՝ թէ ուստի իցեն. զի յամենայն ժամանակս թլխատութիւնն ընկալան, ոչ յութերորդում աւուր ըստ Հրէից օրինակին, այլ յերեքտասաներորդում ամի, որպէս գիրք պատմեն՝ թէ Խամայէզ հայր նոցա թլխատեցաւ. զնոյն ցայժմ եւ Տաճիկք սովոր են առնել: Այլ եւս ազգք արարացիք զԱբրահամ եւ զՔետուր յիշատակեն, եւ սոքա յայնցանէ են՝ զորոց եւ զիր ասէ² թէ յԱբրահամէ եւ ի Քետուրայ ծնան: Աւ էր նահապեան քաղղեացի յազգէ, եւ քաղղեացիք՝ որ անուանի են իւրեանց աստեղադիտութեամբն³, զԱբրահամ իրրեւ զմի յիւրեանց հմուտ աստեղանշմար ճարտարացն հաշուին: Ասորոց պատմադիրք⁴, զնմանէ Վամասիկայ թագաւոր լեալ ասեն, թէպէտ եւ օտար եւ ի բարեղացւոց եկեալ. եւ պատմեն՝ թէ զՎամասիկայ թագաւորութիւնն եթող, զի երթեալ ընակեացէ յերկրին քանանացւոց՝ որ յետոյ հրէաստան իսկ անուանեցաւ: Այլ պարտ եւ պատշաճ է մանաւանդ միտ դնել այնմ՝ զոր ինչ Հրէիցն պատմութիւնն զառնէն զայնմանէ ճառիցէ:

Յառաջագոյն իսկ ասացաք՝ եթէ Աբրահամ զնոյն կեանս կեայր, զոր եւ առաջինք ի մարդկանէ, մինչ չեւ թագաւորաց կացեալ էր ի վերայ ամենայն աշխարհաց. թագաւորէր նա յիւրում տոհմին, ինչն եւ ազգատոհմ նորա զանդիորդութեան կեանս՝ որ վասն յստակութեան եւ անմեղութեան անուանի եւ երեւելի էին, յանձն առնուին. ընչաչատ, խաշնաւէտ, տէր ծառայից եւ ազախնաց, մեծատուն ոսկւով եւ արծաթով⁵, այլ երկիր եւ կալուածս չունէր. բայց սակայն յօտարին թագաւորու-

Թեան մեծարեալ եւ համարձակ իրրեւ զԹաղաւոր կայր. աստուածպաշտութիւն եւ ուղղութիւն՝ որում Աստուած ջատագով լինէր, այնպէս մեծարոյ եւ պատուական առնէր զնա: Հաւասար Թաղաւորաց պատիւ ունէր, եւ Թաղաւորք հաշուութեան զաշինս ի նմանէ խնդրէին. եւ անտի եղեւ կարծել հնոցն՝ թէ եւ ինքն Թաղաւոր իցէ: Թէպէտ եւ ցածուն եւ մեկին կեանս ունէր, գիտէր զտեղեկութիւն պատերազմի, այլ միայն վասն զաշնաւորսն իւր զլիկեալս զերծուցանելոյ: Օկրծոյց զնոսս եւ առ զվրէժս նոցա մեծաւ յաղթութեամբ, դարձոյց նոցա զամենայն ինչս եւ զստացուածս նոցա՝ զոր ի թշնամեաց նոցա Թափեաց, եւ չառ ինչ իւր յաւարէ անտի, բայց միայն զտասանորդսն՝ զոր Աստուծոյ մատոյց, եւ զմասն՝ որ անկանէր օգնական զնոցայն, զորս ամ գումարեաց ի մարտ պատերազմի: Գարձեալ՝ յետ այնպիսի մեծաց եւ րախտեաց, չառ զպատարազս Թաղաւորացն չքնաղ մեծանձնութեամբն, եւ չառ յանձն եթէ պարծիցի որ՝ թէ ես զԱրրահամ մեծացուցի: Այլում ումէք չկամէր պարտապան երեւել, բայց միայն յԱստուծոյ՝ որ օգնական էր նմա, զորոյ եւ զհետ երթայր միայն կատարեալ հաւատովք եւ հնազանդութեամբ:

Յայնմ հաւատոց առաջնորդեալ՝ Թող նա զերկիր ծննդեան իւրոյ, գալ յերկիրն՝ զոր Աստուած ցուցանէր նմա: Աւ որ կոչեացն զնա Աստուած, արժանի արար զնա ուխտին իւրում, եւ այս էր ուխտն նորա: Յայտարար նմա՝ թէ եղիցի ինքն Աստուած նորա եւ որդւոց նորա, այս ինքն՝ զի պաշտպան իցէ նորա. եւ նորա ծառայեցեն նմա, իրրեւ Աստուծոյ միայնոյ արարչի երկնի եւ երկրի:

Խոստացաւ նմա տալ երկիր, զքանանացւոցն, ի հաստատուն բնակութիւն զաւակի նորա, եւ տեղի կրօնիցն ճշմարտութեան: Չունէր նա որդի, եւ Սառա կին նորա ամուլ էր: Յանձն իւր երդուաւ Աստուած՝ եւ ի ճշմարտութիւն իւր յաւատնից՝ թէ ի նմանէ եւ ի կնոջէ անտի ծնցի զաւակ, իրրեւ զաստեղս երկնից բազմութեամբ եւ իրրեւ զաւաղ առ ելը ծովու:

Այլ այս խն էր յաւետիսն Աստուծոյ քան զամենայն արժանի յիշատակի: Ամենայն ազգք ի կռապաշ-

տուժիւն կործանէին, արդ խոստացաւ Աստուած⁸ նահապետին սրբոյ՝ թէ ի նմա եւ ի զաւակի նորա, ամենայն ազգք կոյրք՝ որ զԵրեանց արարիչն մոռացան, օրհնելոց էին, այն իսկ է՝ զի յաստուածածանօթ զխառնութիւնն կոչելոց էին, որ ճշմարիտ օրհնութիւնն է:

Արրահամ բանիւն այնուիկ ամենայն հաւատացելոց հայր եղև, եւ զաւակ նորա ընտրեցաւ լինել աղբեր՝ ուստի օրհնութիւն ընդ ամենայն երկիր տարածանկոյի:

Յաւեախ անդ փակեալ կայր զալուստ Օծելոյն՝ զորմէ բազում անգամ յառաջադոյն ասացաւ հարցն մելոց. այլ այնպէս պատմեցաւ յամենայն ժամանակի՝ որպէս թէ ամենայն հեթանոսաց եւ ամենայն ազգաց աշխարհիս փրկիչ լինիցի:

Աւ այնպէս շառաւեղն օրհնութեան՝ որ Աւային խոստացաւ, եղև նոյնպէս շառաւեղ եւ զարմ Արրահամու:

Այս իսկ է ուխտն, եւ սոյն պայման նորա: Ընկալաւ Արրահամ զնշան ուխտին թլփատութեամբն⁹. զի թլփատութեան այն գործ էր՝ զի ցուցցէ թէ այս այս սուրբ, Աստուծոյ է հանդերձ ամենայն տոհման:

Առանց որդւոց էր Արրահամ յորժամ օրհնել սկըսաւ Աստուած զտոհմն նորա¹⁰: Ամբ բազումն չեա նմա Աստուած որդի: Յետոյ ծնաւ զԽամայէղ՝ որ ազգի միոջ մեծի հայր լինելոց էր, այլ ոչ ժողովրդեան ընտրելոյ՝ որ բազում անգամ խոստացեալն էր Արրահամու: Հայր ժողովրդեանն ընտրելոյ ի նմանէ եւ յԵրմէ կնոջէն ի Սառայէ՝ որ ամուլն էր, ծնանելոց էր: Ապա երեքտասան ամօք յետոյ քան զԽամայէղ, եղև մանուկն ցանկալի. անուն կոչեցաւ նմա Խահակ¹¹, այն իսկ է Վառլ, խնդութեան որդեակ, սքանչելեաց որդի, աւետեաց մանուկ, որ իւրով իսկ ծննդեամբն յայտ առնէր՝ թէ ճշմարիտ որդիք Աստուծոյ ի շնորհացն ծնանին:

Սինչ դեռ ի չափ հասեալ էր օրհնութեան որդեակրն, եւ յայնպիսում տիս՝ յորում մարթ էր հօրն ակնունել, թէ լինիցին նմա որդիք ի նմանէ, յանկարծակի հրաման ետ նմա Աստուած զենուլ զնա¹²: Սեծ էր հանգէս փորձութեան հաւատոյն: Առ ած Արրահամ զՍահակ ի լեառնն՝ զոր Աստուծոյ ցուցեալ էր նմա, եւ պա-

արաստեալ էր զըհել զորդի իւր վասն որոյ խոստանայր նմա Աստուած՝ թէ նովաւ միայն հայր ժողովորդեան իմոյ եւ Օծելոյ արարից զքեզ : Իսահակ մատուցանէր զպարանոց իւր սրոյն՝ զոր պատարաստեալ էր հայրն վաղվազակի հարկանել . իսկ Աստուծոյ հաճեալ ընդ հնազանդութիւն հօրն եւ որդւոյն, աւելի ինչ ոչ խնդրէր : Սորա երկոքին՝ յետ մարդկան զստոյգ եւ զգեղեցիկ նկարագիր կամաւոր պատարագին Քրիստոսի ցուցանելոյ, եւ մաօքն զգառնութիւն խաչի նորա ճաշակելոյ, արժանի համարեցան Քրիստոսի նախնիս լինել : Հայեցեալ ընդ հաւատարմութիւնն Արրահամու, հաստատեաց նմա Աստուած զամենայն աւետիսն իւր¹³, եւ միւսանդամ օրհնեաց ոչ զտոհմն նորա միայն, այլ եւ նորա տոհմաւն զամենայն աղբս մարդկան :

Եւ էր իսկ հանապազ պաշտպանութիւն Աստուծոյ ի վերայ Սահակայ որդւոյ նորա եւ Յակոբայ թոռինն : Աղեն նորա նմանօր նախանձաւոր նմա, զնախնեացն հաւատս յանձն առեալ, եւ զնախնեաց կեանս՝ որ անդիորդութեան կեանք էին, եւ զհետ զնացին զառաջին կարգի ազգի մարդկան՝ յորժամ իւրաքանչիւր ոք ի նահապետացն իշխան էր յիւրում տանն : Եւ այնպէս մինչ զեռ հանապազ փոփոխմունք ի մարդկան միջի լինէին, կարգ հնոցն ժամանակաց կայր մնայր ի կրօնն եւ ի զնացս Արրահամու եւ որդւոց նորա :

Ս անս այնորիկ եւ Աստուած՝ զնոյն աւետիսն միւսանդամ Սահակայ եւ Յակոբայ խոստացաւ¹⁴, զոր եւ Արրահամու խոստացեալ էր . եւ զոր օրինակ՝ Աստուած Արրահամու կոչեցեալ էր, անուանեցաւ եւ Աստուած Սահակայ եւ Աստուած Յակոբայ :

Սորա երեքին յերկրին քանանացւոց սկսան բնակել, եւ Աստուած պաշտպան էր նոցա . այլ իրրեւ ըզպանդութտան եւ զնժդեհան բնակեցին, եւ չժառանգեցին ի նմա եւ ոչ քայլ մի ոտին¹⁵, մինչեւ Յակոբ առ սովոյն վասնզի եկն յԷդիպտոս՝ ուր բազմացեալ որդւոց նորա, եղեն վաղվազակի յազգ մեծ եւ ի բազում, որպէս Աստուծոյ խոստացեալ էր :

Արդ թէպէտ եւ ժողովուրդս այս՝ որ յուխտին Աստուծոյ ծնանէր, ընդարձակելոց էր ծննդովք, եւ օր-

հնութիւնն ըստ մարմնոյ ազգականութեան լինելոց էր, այլ եցոյց Աստուած հանապազ ի տոհմին զընտրութիւն շնորհացն իւրոց: Քանզի յեա ընտրելոյ զԱբրահամ ի միջոյ ազգացն, ի մէջ որդւոցն Աբրահամու՝ զԱհաբի ընտրեաց, եւ յերկուորեակ որդւոցն Իսահակայ՝ զՅակոբ ընտրեաց, որում եւ Իսրայէլ անուն եղ:

Յակոբ երկոտասան որդիս ծնաւ, որ երկոտասան ցեղից նահապետք եղին: Ամենքին մտանելոց էին յուխտըն. այլ Յուդա ի միջոյ ամենայն եղբարց ընտրեցաւ, լինել հայր Թադաւորաց Իսրայէլի, եւ հայր Օծելոյ՝ որ բազում անգամ խոտացեալ էր հարցն իւրոց:

Եւ լինելոց էր ապա ժամանակ՝ յորժամ տասն ցեղք զատեալ յԱստուծոյ ժողովրդենէն վասն իւրեանց կռուպաշտութեանն, զաւակն Աբրահամու վրիպելոց էր ի հին օրհնութենէն, այս ինքն՝ ի կրօնից, եւ յերկրէն քանանացւոց, եւ յակնկալութենէ Օծելոյն, մինչեւ ցեղին Յուդայ միայն մնալ, յորմէ եւ ամենայն իսրայէլացիք՝ Յուդայեանք կոչելոց էին, որ են Հրեայք, եւ աշխարհըն՝ Յուդայաստան, որ է հրեաստան:

Եւ այնպէս՝ յամենայն ժամանակի ընտրութիւն Աստուծոյ եւ ի մարմնաւոր ազգին իսկ երեւէր, որ ըստ մարմնաւոր կարգի սերելոյ բազմանալոց էր:

Յակոբ զծածուկ խորհուրդս ընտրութեանն ետես¹⁶: Սինչ դեռ մերձ էր զողիսն հանել, եւ որդիք նորա շուրջ զմահճօք նորա՝ զհօրն օրհնութիւն խնդրէին, յայտնեաց նմա Աստուած զոր ինչ անցք ընդ երկոտասան ցեղսն անցանիցեն, յորժամ իցեն նոքա յերկրին աւետեաց. զամենայն սակաւ բանիւք եցոյց, եւ ի սակաւ բանսն անհամար խորհուրդք փակեալ կան:

Թէպէտ եւ ամենայն ինչ՝ զոր զեղբարցն Յուդայ բարբառեցաւ, նորանշան օրինակաւ ասացեալ են, մինչեւ յայտնի իսկ լինել թէ ի զարմացման լեալ էր այրն հոգւովն Աստուծոյ. այլ իբրեւ եհաս ի Յուդա՝ բարձրագոյնս եւս բարբառէր. Յուդա, ասէ, զքեզ օրհնեցեն եղբարք քո. ձեռն քո ի վերայ թիկանց թշնամեաց քոց. երկիր պագցեն քեզ որդիք հօր քո: Արորին առիւծու Յուդա. ի շառաւեղէ ելեր որդեակ իմ, ելեր բազմեցար ննջեցեր իբրեւ զառեւծ, եւ իբրեւ զկորիւն առիւծու.

ն յարուցանէ զնա: Մի պակասեցէ գաւազան Յուդայ, այս ինքն է՝ իշխանութիւնն. եւ մի պետ յերանաց նորա, մինչեւ եկեսցէ նա՝ որ առաքելոցն է, եւ նա է ակնկալութիւն Հեթանոսաց¹⁷: Աամ որպէս այլ ընթերցուած ունի, որ թերեւս չէ ինչ պակաս քան զնա հնութեամբ, եւ ոչ օտար ի սմանէ մտացն զօրութեամբ, Մինչեւ եկեսցէ, ասէ, նա՝ որոյ իւրն է հանդերձեալքն. եւ այլն եւս մի ըստ միջէ որպէս ասացարն:

Այլ եւս կարգ մարգարէութեանն, մինչեւ ցտիղորայս ապաստան, զտեղւոյն ակնարկէ, ուր ի սուրբ երկրին բնակելոց էր ցեղն Յուդայ: Այլ յետին բանքն՝ զոր ասացաք, որպիսի ինչ օրինակաւ դք կամիցի առնուլ, այլ ինչ ճշմանակնն, բայց զայն՝ որ առաքեալ Աստուծոյ լինելոց էր, սպասաւոր եւ պատմիչ կամաց նորա, կատարումն աւետեացն խոստացելոց, եւ թագաւոր ժողովրդեանն նորոյ, այս ինքն՝ Օծեալ Տեսուն:

Ընդ Յուդայի միայն առանձինն ճառէր Յակոբ զՕծելոյն, զի ի նմանէ իսկ ծնանելոց էր. եւ ի Յուդայի իրսն փակեաց զիրս համօրէն ազգին, զի յետ ցրուելոյ ազգին, մնացորդք այլոց ցեղիցն ընդ Յուդայի իշխանութեամբ ժողովելոց էին:

Ամենայն բանք մարգարէութեանն լուսաւորագոյն են. բայց միայն ի բանէ գաւազանին՝ զոր ըստ մերում լեզուիս բարբառոյ մարթի վասն թագաւորութեան միայն առնուլ. ուր ի ճառս գրոցն սրբոց առ հասարակ զօրութիւն, իշխանութիւն, դատաւորութիւն նշանակէ: Ըստ սմին օրինակի ստէպ դիրք զգաւազան անուն ի կիր արկաննն. եւ յայտնի իսկ է՝ թէ նոյնպիսի ինչ մտօք եւ ի Յակովբայ մարգարէութեանն ասացեալ իցէ, զի յայտ իմն այնպէս կամի առնել նահապետն՝ թէ յաւուրս Օծելոյն պակասեցի իշխանութիւն ի տան Յուդայ, որ զհամօրէն կործանումն աշխարհին գուշակէ:

Եւ այնպէս՝ ժամանակք Օծելոյն աստ երկուք փոփոխմամբք նշանակին: Առաջին՝ զի սպառնալիք եղին թագաւորութեան Յուդայ եւ Հրէից ազգին կործանելոյ ըզհուսակ յետին կործանումն: Արկրորդ՝ զի նոր թագաւորութիւն կանգնելոց էր, ոչ միոյ եւ եթ ազգի, այլ ամենայն ազգաց՝ որոց Օծեալն դուրս եւ ակնկալութիւն եղիցի:

Օչրէից ազգն միարար եւ առաւելութեամբ իմն սովոր են անուանել զիրք¹³, Ե.Պ. կամ յ.ՈՂ.ՈՂ.ՈՂ.ՐԳ. ԵՍՏՈՒԾ.ՈՅ. եւ յորժամ Ե.Պ.Ս զք գտանիցէ, որ կրթեալք եւ ընդեւ լեալք ընդ գիրս իցեն, զայլ ազգան իմանան, որք խոստացեալ եղեն Օճելոյն ի Յակովբայ մարդարէութեանն:

Ե.Ս երեւելի մարդարէութիւն սակաւ բանիւք փակեալ ունի զամենայն պատմութիւն Տրէական ազգին, եւ Վրբիստոսի՝ որ նմա խոստացեալ եղել: Սա՛ որ ինչ յետոյ անցք ընդ ժողովուրդն Եստուծոյ անցանելոց էին, ցուցանէ, եւ արդիւնք մարդարէութեանն մինչեւ ցայժմ տեսնի:

Սասն որոյ չկամիմ իսկ այնմ մեկնութիւն ընծայեցուցանել. չեն ինչ քեզ այնր պէտք, քանզի զանցս ժողովրդեանն Եստուծոյ լոկ նշանակելով՝ տեսանիցես զմիտս պատգամացն իւրովի յայանեալս, զի եւ արդիւնք իսկ իրացն միայն՝ այնր մեկնիչք լինիցին:

¹⁾ ՕՆՆ. յ.Չ. յ.Ի. 25: ՅՈՂ.Ս. ՀՆԱ. Ը. 13: ²⁾ ՕՆՆ. Ի.Է: Ը.Գ.Ս. ՌԵՔ.ՄԵՂ. առ Յովս. ՀՆԱ. Ը. 19: ³⁾ ԼՆՐԱՍ: Ե.ՍԵՏ: Ե.Ի.Գ: Ը.Գ.Ս. ՌԵՔ.ՄԵՂ. եւ այլք առ Յովս. ՀՆԱ. Ը. 8: Եւ Ե.ԻՍ. Պատր. Ը.Է.Ս. Թ. 16. 17. 18. 19. 20. եւ յ.Գ. 11: ⁴⁾ ԳԽ. ԴԵՍԵՍ. Գ.ԻՔՔ Դ. Տիեզ. պատմ. ի Վաղուածոյսն Վաղ. ԵՐ. 491. եւ առ Յովս. ՀՆԱ. Ը. 8: Եւ Ե.ԻՍ. Պատր. Ը.Է.Ս. Թ. 16: ⁵⁾ ՕՆՆ. յ.Գ. յ.Գ. ԻԸ. 22. 27. ԻՎ. 6: ⁶⁾ ԼՆՊ. յ.Ի. յ.Ի. ⁷⁾ ԼՆՊ. յ.Ի. 2. յ.Ի. 4. 5. Ի. 19: ⁸⁾ ԼՆՊ. յ.Ի. 3. յ.Ի. 18: ⁹⁾ ԼՆՊ. յ.Ի. ¹⁰⁾ ԼՆՊ. յ.Ի. յ.Ի. յ.Գ. 3. 4. յ.Ի. 20. ԻԸ. 13: ¹¹⁾ ԼՆՊ. ԻԸ. 2: ¹²⁾ ԼՆՊ. ԻԻ. ¹³⁾ ԼՆՊ. ԻԸ. 28: ¹⁴⁾ ԼՆՊ. Ի. 11. Ի.Չ. 4. ԻԸ. 14: ¹⁵⁾ ԳՆՐԾ. Ի. 5: ¹⁶⁾ ՕՆՆ. ԽԹ. ¹⁷⁾ ԼՆՊ. ԽԹ. 8: ¹⁸⁾ Ե.ՍԵՏ. ԿԼ. եւ որ ի կարգին. ՀՈՍ. յ. 21. Ե.ՍԵՏ. Ի. 2. 3. ԽԹ. 6. 18. ՕԼ. 4. 5. այլովքն Հանգերձ:

ՅԵՏ Յակովբայ վախճանելոյ, ժողովուրդն Աստուծոյ բնակեաց յեղիւզաացւոց աշխարհին, մինչեւ ի ժամանակն՝ յորում առաքեցաւ Մովսէս, զամս իրրեւ երկերիւր:

Եւ այսպէս չորեքհարեւր եւ երեսուն ամք ժողովին, նախ քան զշնորհել Աստուծոյ իւրում ժողովրդեան զերկիրն՝ զոր խոստացաւ հարցն նոցա:

Կամէր իմն Աստուած յերիւրել զիւր ընտրեալն վատահ ի նորա աւետիսն լինել, հաստատեալ ի մտի՝ զե եթէ վաղ եւ եթէ անագան, զոր խոստացաւն կատարիցէ, ի ժամանակ նկատեալ ի նորա յաւիտենական տեսութենէն:

Չափ մեղացն ամովրհացւոց՝ զորոց զերկիրն եւ զառ եւ զապուռ նոցա շնորհել կամէր՝, չեւ եւս լցեալ էր, որպէս ինքն իսկ Աբրահամու յայտ արար. եւ այնմ կայր մնայր Աստուած առ ի մատնելոյ զնոսա ի դժնդակ եւ յանպարոյն խստութիւն՝ որով կամէր վրէժս ի նոցանէ պահանջել ի ձեռն ժողովրդեան իւրոյ ընտրելոյ:

Ամին իրի պարտ եւ պատշաճ էր ժողովրդեանս այսմիկ շնորհել ժամ եւ ժամանակ աճել եւ բազմանալ, որով մարթիցեն լնուլ զերկիրն՝ որ անգատին վասն նոցա նկատեալ պահէր, եւ նուաճել զաշխարհն ի սուր սուսերի եւ ի կորովս կապարձաց իւրեանց, խլել եւ յատակել զբնակիչսն անխճեալս յԱստուծոյ:

Գարձեալ կամէր իսկ՝ զե նորա յեղիպտացւոց աշխարհին զանհարին ծանրատաղտուկ լուծն բառնայցեն, զե յորժամ նորադործ նորանշան սքանչելեօք զերծանիցին, զիւրեանց զերծուցիչն սիրիցեն, եւ կիրթ ի բերան ունիցին զնորա մարդասիրութիւնն:

Ահաւասիկ կարգ աստուածեղէն խորհրդոցն, որպէս եւ ինքն իսկ զլխովին եցոյց եւ յայտ արար մեզ, զե ուսանիցիմք երկեղ ի մտի զնել, նմա պաշտօն հարկանել, եւ զնա սիրել, եւ հաւատովք եւ երկայնամութեամբ նմին ակն ունել:

Այլ իրրեւ եկն եհաս ժամադիր ժամանակն, լուաւ **Աստուած** զըողօք ժողովրդեան իւրոյ՝ որ լիկէրն չարալըլուկ յեղիպտացւոց անտի. եւ առաքեաց նա զՄովսէս, զիւր որդիան ի նոցա բռնութենէն թափել:

Յայտնեաց նա զանձն իւր առնս մեծի այնպէս, որպէս ոչ ումք ի մարդկանէ յայտնեաց երբեք: **Շքեղ** եւ ահաւոր տեսեամբ, այլ մեղմով եւ սիրտիւով երեւէր նմա. յայտ արարեալ նմա՝ եթէ Եւս: որ Եւ: **Ար** ինչ կանուխ քան զնա է՝ շուք եւ ստուեր է: **Աս** ստ, ասէ, որ Եւ³, լինել՝ եւ առանց իրիք թերակատարութեան, ինձ միայնոյ ի դէպ եւ պատշաճ է: **Աոր** իմն յորջորջանս զինքեամբ առնոյր, որ ի նմա զէութիւնն եւ զկենդանութիւն իրրեւ ի բուն աղբեր յայտ առնէ. եւ կամէր **Աստուած**՝ զի յայնմ հետէ մարդիկ նովին անուամբ՝ որ մեծն է եւ ահաւոր, խորհրդական, անհասնութական, նմա պաշտօն տանիցին եւ երկրպագութիւն մատուցանիցին:

Գործ աւելի համարիմ մանր մի բստ միովէ զամենայն հարուածս եղիպտացւոցն պատմել. զՓարաւոնի խտասարտութիւն, զանցանել ժողովրդեանն ընդ ծովն կարմիր, զծուխն, զմատախուղն, զփայլուն փայլատականցրն, զփողն հնչական, զահագին բարբառն՝ զոր ետեան եւ լուաւ ի Մինա խառնիճաղանձն երբայեցւոց: **Անդ** **Աստուած** իւրովի իւրովք իսկ ձեռօք յերկուս տախտակս քարեղէնս գրոշմեալ տայր զհրամանսն՝ որ հիմն հաստատութեան են կրօնից եւ միարանութեան մարդկան. իսկ զայլ եւս հրամանսն մեծաձայն բարբառով տայր **Մովսիսի**:

Առ ի փոյթ պահպանութեան օրինացս այսոցիկ, հրաման առնոյր **Մովսէս** ժողով մեծարոյ եւթանասուն արանց խորհրդականաց կարգել⁶, զոր մարթ էր ծերակոյտ անուանեալ կոչել, եւ ատեան մշանջենաւոր ժողովրդեանն **Աստուծոյ**: **Աստուած** յայտ յանդիմանն առ հասարակ ամենեցուն երեւէր, եւ իւր իսկ յանդիմանն տայր բարբառել զօրէնսն, ահեղ նշանօք մեծութեանն եւ փառացն:

Չեւ եւս էր տուեալ **Աստուծոյ** կարգս հրամանաց գրովք՝ յերկրել եւ ուղղել զմարդիկ: **Օ** աւակն **Երբա** համու զթրփատութիւնն միայն ունէր եւ զպաշտօն

Թրիատութեան, յիշատակ յուշարար ուխտին՝ զոր ուխտեաց Մատուած ընդ ազգին ընտրելոյ: Առվին նշանաւ ի հեթանոսաց անտի՝ որոց զըուն Մատուածն Թողեալ ի պիտական զառածան, զատեալ որոշէին նոքա: Աինդ ունէին զՄատուծոյ ուխտն, զի յիշատակ աւետեացն՝ որ առ հարսն նոցա եղեն, ունէին ի մտի. որք եւ պաշտօնեայք Մատուծոյ Արրահամու, Խսահակայ եւ Յակովբայ ճանաչէին: Այսպէս ի խոր մոռացումն անկեալ էր Մատուած, մինչեւ հարկ լինել յիւրոց երկրպագուացն առնուն զնա ճանաչել. որոց ինքն էր պաշտպան:

Այլ ամենազօրն Մատուծոյ չեղեն կամք այլ եւս երկայնաձիգ ժամանակաւ զկրօնիցն եւ զիւրոյ ուխտին խորհուրդս վայրապար ի յիշատակս մարդկան Թողուլ լքանել. եկեալ հասեալ էր ժամանակն՝ յորում պարտ եւ պատշաճ էր պարիսպս ամուրս ածել ընդդէմ կռպաշտութեանն յորդութեան՝ որ զընաւ ազգ մարդկան հեղեղատէր, եւ նուազագոյն լոյսն՝ որ ի բնութեանն կայր, ամենեւին ի խաւար դառնայր:

Յաւուրց անտի Արրահամու տգիտութիւն եւ կուրութիւն անհնարին թանձր շուրջ մածեալ կայր: Անորին կենդանեօք եւ յետ սակաւ միոյ ի պաղեստինացոց եւ յեգիպտացոց աշխարհին տակաւին աստուածածանօթութիւն երեւէր: Մեղքիսեղեկ թաղաւոր Սաղիմայ, քահանայ էր Մատուծոյ բարձրելոյ՝ որ արար զերկինս եւ զերկիր⁵: Աբիմեղէք զերարացոց թագաւոր, եւ նորին անուանակից պայազատն, երկիւղածք էին յՄատուծոյ, ի նորա անուն երդնուին, եւ ընդ նորին մեծագօր զօրութիւն սքանչանային. ի սպառնալեաց անտի նորին մեծազօրն Մատուծոյ զարհուրէր Փարաւոն արքայ եգիպտացոց⁶. այլ առ Մովսիսիւ եւ այս ազգք ի նոյն խոտորութիւն դարձեալ էին:

Ագիպտացիք զճշմարիտն Մատուած ոչ ամենայն ազգաց տիեզերաց Մատուած ճանաչէին, այլ երբայեցոցն միայն⁷: Օգազանս անգամ եւ զամենայն զեռուն կայտառ ի պաշտօն առնուին: Իաց յՄատուծոյ, ամենայն ինչ Մատուած էր. եւ աշխարհս՝ զոր Մատուած արար առ ի ցուցանելոյ զիւրոյ մեծաքանչ զօրութեանն զհանդէս, թուէր իմն մեհեան լեալ դարշեկեաց զբօշելոց:

Ազգ մարդկան յայնպիսի ամբարշտութիւն զառաճեալ, մինչև իւրոց ախտիցն եւ կարեաց պաշտօն մատուցանել . եւ չեն ինչ զարմանք, քանդել եւ չէր իսկ զօրագոյն ինչ կամ բռնագոյն քան զկարեացն բռնութիւն: Մարդիկ՝ որ սովոր էին զամենայն ինչ որ ուժգին էր, աստուածս համարել, իբրև յանհարին կարեացն բռնութենէ: Ընդ երկիր քարշեալ զանձինս տեսանէին, վաղվաղակի ի կարծիս անկանէին՝ եթէ զօրութիւն իմն գուցէ, որ արտաքուստ զայն ազգեցուցանիցէ, եւ զայն անդէն աստուածս համարէին: Ամին իրի եւ անամօթ լալըռութեանն սիրոյ այնչափ բազինք կանդնէին, եւ անհարին պղծութիւնս՝ զոր ընդ լսել իսկ ուրուք սոսկումն ունի, ի նուիրական զոհան խառնէին⁸:

Անգթութիւն սպրդեաց եմուտ ի վարս մարդկան: Մարդ յանցաւոր՝ որ հարեալ տանջէր ի չարեացն խղճէ, առ յաղերս ածելոյ զաստուածականն՝ յոր իբր ընդ թշնամի նայէր, զսովորական սպանդան չհամարէր բաւական. եւ վասն այնորիկ հարկ լինէր խառն ընդ պատրուճակս եւ զմարդիկ զենուլ: Հարք՝ ցնորական երկիւղել խուճապեալք, զիւրեանց որդիան ածէին ի սպանդ յաղել գիցն իւրեանց, եւ անցուցանել ընդ հուր փոխանակ խնկոց հանդերձանաց: Այսպիսի մարդազենք առ Մովսիսիւ յաճախէին, եւ սոյն իմն էր մին յամբարշտութեանցն աւմովրհացւոց՝ զորոյ Աստուած զվռէժն իսրայելացւոցն պատուիրեաց պահանջել:

Բայց սակայն եւ ոչ լոկ ազգայն այնոցիկ սևփական էր այնպիսի պաշտօն, այլ եւ ի մէջ ամենայն ազգաց՝ որ ի ներքոյ երկնից, մարդիկ զիւրեանց նմանիսն ածէին ի զենումն⁹. եւ բնաւ չէր ուրեք տեղի ի վերայ երկրի, յորում մարդիկ առ ի զանհաշտ թշնամութիւն գժնեայ եւ անադորոյն գիցն՝ զորս պաշտէին, ցածուցանելոյ, այնպիսի զոհիւք չկարօտանայցեն:

Ի մէջ այնչափ անադորունութեանց, մարդիկ յայնպիսի անհանձարութիւնս հատան, մինչև զործոց ճարտարութեան ձեռաց իւրեանց պաշտօն տանել եւ երկրպագութիւն մատուցանել . եւ համարէին այնպէս՝ եթէ ոգի աստուածեղէն ի զրօշեալն կայցէ. եւ մոռացեալ զիւրեանց արարածոյն պայման՝ եթէ յԱստուծոյ եղեն,

յիւրեանց հայթայթանաց այլոյ ուրուք սատուծոյ հաստիչ լինել մտարեբէին: Այդպիսիք ո՞րք հաւատալ այսմ յանձն առնոյր, եթէ ոչ եւ փորձ իրացն հաւատարիմ առնէր զայն՝ եթէ այնպիսի դժնդակ եւ անհանձարական մոլորութիւն ոչ կալ եւ կապ միայն զամենայն տիեզերս ունէր, այլ եւ այնպէս տակ առեալ եւ արմատս ի խոր տուեալ, մինչեւ զամենայն ուղղութեան կարծիս ի միջոյ ի բաց բառնալ: Աստի մարթի եւ այնմ եւս ի վերայ հասանել՝ եթէ յամօթ եւ ի նախատինս մարդկան, առաջին ճշմարտութիւնն՝ զոր աշխարհս քարոզէ, եւ որոյ այնպէս աղբական զորութիւն է, ամենեւին ընդ վայր եւ խափանեալ զնէր: Աւանդութիւնն՝ որ ի միտս նոցա նկարեալ պահէր զնոյն ճշմարտութիւն, թէպէտ եւ պայծառ եւ յայտնադոյն երեւէր՝ եթէ միանգամ ի նոյն դք մտադիր լինէր, սակայն եւ այն երթայր եւ եղձանէր. առասպելք ստայօդք, անհնարին ամբարշտութեամբ եւ այլանդակութեամբ, զնորս տեղին ունէին:

Սոս առ կուրծս կայր ժամանակն՝ յորում ի միտս մարդկան այլ ընդ այլոյ կամեկորեալ ճշմարտութիւնն, առ ի պահպանութիւն ի նշանազիրս գրեւոյ կարօտանայր. զարձեալ՝ եւ ի մտի եղեալ Աստուծոյ յայտնադոյն եւ աղբի աղբի օրինօք զիւր ժողովուրդն առ առաքինութիւն յարդարել, դրով գօրէնան կամեցաւ ընծայեցուցանել:

Օարմանալին Մովսէս՝ որ ի նոյն գործ կարգեցաւ, զանցելոց ժամանակաց զպատմութիւնն ի մի վայր գումարեաց. զԱդամայն, զՆոյին, զԱբրահամուն, զԱսահակայն, զԻսահորայն, զԻզովսէփայն, նա աւանիկ՝ եւ զԱստուծոյն խակ եւ զնորին նշանակերտն յօրինուածոց:

Չէր ինչ հարկ նմա անդուստ ի վերուստ զիւրոց նախնեացն արշութիւնս կրկտել եւ ի յայտ ածել: Հարեւր ամառ ուրեմն յետոյ քան զԻսահովբայ մահն ծնաւ նա. ճերք իւրոյ ժամանակին թերեւս բազում ժամանակս ընդ սրբոյ նահապետին բնակեալ էին. Զովսէփայ անուն, եւ յիշատակ զարմանալեացն՝ զոր Աստուած ի ձեռն մեծի պաշտօնէին թագաւորացն եգիպտացւոց դործեալ էր, տակաւին յամենեցուն բերանս կայր: Աւուրք կենաց եւ ըից կամ չորից մարդոց ձգեալ հասանէին անդ ուրեմն մինչեւ ի Նոյի աւուրն, որոյ եւ զորդիան Ադամայ տե-

սեալ , գող իմն ի սկիզբն անդր արարածոց մօտ հասեալ էր :

Աւ վասն այնորիկ մարթ էր գիւրաւ զհին տըշու թիւնս ազգի մարդկան եւ արբահամեան տոհմին ժողովել . զի եւ յիշատակ այնոցիկ ողջ բովանդակ պահէր : Ապա եւ չէ ինչ պարտ զարմանալ ընդ այն՝ զի սքանչելին Մովսէս յիւրում արարածոց գպրութեան , զերաց իրաց գիպելոց ուր ուրեմն ի բացեայ յայնց ժամանակաց , իրրեւ զյայտնեաց եւ զզուշակաւորաց ճառիցէ , այնու՝ զի եւ յազգս արուարձականս , եւ ի քանանացւոց երկրին տակաւին բազում յիշատակք նշանաւորք նշմարէին :

Ի ժամանակին՝ զի Աբրահամ եւ Իսահակ եւ Յակովբ յաշխարհին յայնմիկ բնակեցին , ըստ իւրաքանչիւր զիպաց՝ որ նոցա զիպեցան , յիշատակ յուշարար ի գիպան վայրս եւ ի նշանաւոր տեղիս կանգնէին : Տակաւին եւ տեղիքն՝ յորս պանդխտեցանն , եւ ջրհորքն՝ զորս ինքեանք փորեցին յերկրին յանջրգին , արբուցանել զորդիս իւրեանց եւ զիսաշինս իւրեանց , լերինքն՝ յորս զոհս մատուցին Աստուծոյ որ երեւեցան նոցա , կոթողքն՝ զորս կոթողեցին , եւ կարկառ քարանցն՝ զոր կուտեցին յիշեցուցիչ առ յապա եկելոցն , շիրինքն՝ յորս ոսկերք նոցա հանդուցեալ էին , յայտ յանգիման երեւէին : Յիշատակ աւագ որերոյն գեռ եւս ամենեցուն ծանօթ էր , ոչ ի դաւառին միայն , այլ եւ բնաւ յարեւելից աշխարհին . ուր բազում ազգք անուանիք , եւ այժմ իսկ տակաւին յիշեն՝ եթէ յազգէ նոցա իցեն :

Արդ յորժամ խառնիճաղանձն երրայեցւոց եմուտ յերկրն աւետեաց , ամենայն ուրեք համբաւ հարցն նոցա հոչակէր . քաղաքք , եւ լերինք , եւ քարինք իսկ խօսէին զարանց անտի զանուանեաց , եւ զզարմանալի տեսլեանցն՝ որովք Աստուած գնոսս ի հին եւ ի ճշմարիտ հաւատս հաստատէր :

Ար միանդամ գնախնեացն սովորութիւնս գիտիցէ , մարթի ի միա առնուլ՝ եթէ քանիօն առաջինքն փոյթ յանձին ունէին կանգնել եւ պահել զայնպիսի յիշատակս , եւ զիարդ յետինքն գրէպն՝ որոց վասն նոյն յիշատակք կանգնեցան , խնամով ի մտի ունէին : Աւ սոյն այս ազգ իմն պատմութեան էր . յետոյ զլոկ քարինսն կոփեցին եւ

ի զարդ եւ ի կերպարանս ածին ըստ օրինակի սեանց . յեա սեանցն ապա արձանս ի կոփածոյ քարանց, փոխանակ յաղթ եւ ստուար վիմացն կանգնէին :

Ի դէպ իսկ է կարծել՝ եթէ ի մէջ ազգատոհմին՝ որ աստուածագէտ եւ աստուածաճանօթ ճանաչէր, յիշատակ հնոց ժամանակաց դրով եւս դրոշմեալ պահէր . քանզի մարդիկ ամենեւին չկացին ի բաց յայնպիսի փութոյ : Քէթ ճշմարիտ է՝ եթէ երգս յօրինէին, եւ իւրեանց որդւոց ուսուցանէին, ի ժողովս տօնից եւ ի տարեւոր տարեկանս զնոյն օրհնութիւնսն մրմնջել . որով իրք ինչ կամ գործք յիշատակաց արժանի ի մէջ նոցա պահէին :

Անտի սկիզբն լինէր ճարտարութեան երգոց վիպասանաց, զոր յետոյ ի բազում կարգս եւ ի կերպարանս ածին . երիցադոյնքն ժամանակաւ յերգոց անտի ցարդ եւս ի նուագս եւ ի մրմունջս գտանին, զոր առաջինքն ի կիր արկանէին, եւ այժմ իսկ բազում ժողովուրդք՝ որ չունին ինչ ուսումն դպրութեան, նորօք վարին ի փառաւորութիւն աստուածութեանն եւ ի գովութիւն արանց անուանեաց :

Բանք երգոցս այսոցիկ ուժգին եւ սաստիկ են, բայց եւ մեծաւ ճարտարութեամբ զընութեանն կարիս ճշդիւ յանդիման կացուցանեն . եւ վասն այնորիկ մերթ այսր ընթանան եւ մերթ անդր արշաւին, ի հասարակաց բանից կշռութենէ արտաքս վազեալ . յօրինեալ յարդարմամբ, որպէս թէ չափ իմն եւ թիւ ի բանս կայցէ, որով բանն զիւր զօրութիւնն յաճախէ, լսելեաց բազում հեշտականութիւն պարգեւէ, զուշն ապուշ ի բաց մերժէ, զողիսն յորդորէ եւ գիւրաւ տայ ի միտ առնուլ զասացեալն :

Առաւել քան զամենայն ազգս, երբայեղիք զայնպիսի երգս ի կիր արկանէին : Մովսէս ի գիրս իւր բազում ուրեք երգս իմն ի մէջ մուծանէ¹⁰, զորոց միայն զառաջին բանսն նուագեալ թողու, զի զմնացեալն հաւատեաւ ուսեալ դիտէր ժողովուրդն : Ինքն իսկ երկուս երգս նոյնպիսի եւ նոյնգունակ յօրինեաց : Յառաջնումն¹¹ երգս առեալ նուագէ զանցանել ժողովրդեանն ընդ ծովն կարմիր, եւ զթշնամիս ազգին ընտրելոյ, զկէսս ընկուղեալս, եւ զկէսս առ ահին վտանդի ի պարտութիւն

մատնեալս: Իսկ յերկրորդումն¹² զերախտակորոյս միտս
 Հրէիցն յերգ արկեալ հենգնէ, եւ զՄատուծոյ բարե-
 բարութիւնսն եւ զսքանչելիսն հռչակ հարկանէ: Մմենե-
 քին՝ որք յետ նորա զօրհնութիւնսն գրեցին, զնորա
 զհետ գնացին. որք զՄատուած միայն եւ զնորին զարմա-
 նագործս նուագէին յերգսն իւրեանց: Մատուած իսկ
 ինքնին ի նոսա յաջողէր. եւ պարտ եւ պատշաճ է ասել՝
 եթէ յերբայական աղբին միայն երգոց ճարտարութիւն
 առանց բռնապրօսութեան էր:

Յակոր զնոյն խորհրդական բարբառ ի կիր արկ ի
 պատգամսն՝ յորս զերս ինչ որ յետոյն գիպելոց էին իւ-
 ըրոց որդւոցն, դուշակէր. եւ զայն վասն այնորիկ արար՝
 զի իւրաքանչիւր ցեղ այնու դիւրաւ զիւր պատշաճն ի
 մօր ունիցի, եւ յորդորիցի գովել զայն՝ որ սքանչելին
 է, ոչ այնու միայն՝ զի յառաջագոյն զչեղեալսն եւ զսպ-
 առնիս բարբառի, այլ զի եւ զկանխասացիկ պատգամսն
 հաւաստեաւ կատարէ:

Մասիկ եղաք խելամուտ՝ եթէ որպիսի հնարս ի
 կիր արկ Մատուած, առ ի զանցելոց իրաց յիշատակ ողջ
 մինչեւ ցՄովսէս հասուցանելոյ:

Մորն զարմանալի զամենայն այսպիսի հնարիւք ու-
 սեալ, եւ ի Հողւոյն ի բարձունս թռուցեալ, զբեաց
 զզործս զարմանագործն Մատուծոյ բազում հաւաս-
 տեաւ եւ ճշգրիտ առանց պաճուճանաց, որով զամենե-
 ցունց միտս եւ զզարմանս ոչ յինքն ինչ, այլ անդր առ
 Մատուած կորդէ: Մռ դէպս անցելոց իրաց՝ յորս սկիզբն
 եւ հին աւանդութիւնք ժողովրդեանն պահէին, յաւել-
 նա եւ զնշանսն՝ զոր յայնժամ գործէր Մատուած, առ
 ի թափել զնոսա ի բռնութենէն: Մմին իրի ոչ յայլուստ
 ուստեք զոր, այլ զնոսին իսկ զերբայեցիսն ականատես եւ
 ականջալուր նշանացն վկայս ի մէջ մուծանէ: Մովսէս
 ոչ իրս ինչ յանմատոյց եւ յառանձինն տեղւոջ գիպեալ,
 կամ ի խորս ուրեք ի խաւարի գործեալ, պատմեաց նո-
 ցա, եւ ոչ օգարանս ինչ խօսեցաւ. այլ մի բառ միովէ
 մանրապատումն նշանօք, իրեւ զայր մի՝ որ ոչինչ խիղճ
 նենդութեան զանձնէ գիտիցէ, այնպէս ազատագէտ՝ զա-
 մենայն եցոյց եւ յայտ արար: Ի վերայ նշանացն՝ որոց
 ինքեանք ականատես լեալ էին, հաստատեաց զամենայն

օրէնս նոցա, եւ զընկերհաշտութիւնն: **Նշանօքս** այսոք թիւք վաղվաղակի յական թօթափել բնութիւն իրաց, որպէս ուրեք ուրեք դիպեցաւ, ի նոցա փրկութիւն եւ ի պատիժ պատուհասի թշնամեացն փոփոխէին. ծովն հերձանէր, երկիր բանայր, հաց յերկնից տեղայր, ջուր յորդ բղիէր յապառած վիմէ ի հարկանել դաւազանին. նշան երեւոյթ յերկնուստ շնորհեալ, նոցա զճանապարհն ցուցանէր. եւ այլ եւս սոցին նման զարմանալիք զորս զքառասուն ամ տեսանէին յանապատի անդ:

Արրայեցոց խուժանն, չէր ինչ իմաստնագոյն եւ հանձարեղ քան զայլ ամենայն ազգս, որք յերեւելիս եւ ի զննականս բեւեռեալ, աներեւոյթ զՆստուած իմանալ չկարէին. այլ թանձրամիտ էր եւ ապստամբ իբրեւ զնոսա, նա մանաւանդ՝ քան զամենեսեան թանձրագոյն եւ անագորունագոյն. բայց **Նստուած**՝ որ աներեւոյթ եւ անտեսական է, այնպէս յաճախ նշանօքն մեղմով զանձն ազդական առնէր, եւ **Մովսէս** իսկ այնպիսի փութով ստէպ զեղեալ սքանչելիսն յիշեցուցանէր նոցա, մինչեւ ժողովուրդեանն իսկ՝ որ այնպէս մարմնաւորագոյնք եւ թանձրամիտք էին, պարզական եւ անտարրական զՆստուած իմանալ, որ բաւականն է իւրովն բանիւ զամենայն վճարել, որ ամենայնիւ ողի է, ամենայնիւ բան է, ամենայնիւ միտք է:

Աւ այսպէս մինչ դեռ կռապաշտութիւնն՝ որ յետ **Աբրահամու** այնպէս յաճախեաց, յորդեալ ունէր զամենայն երեսս երկրի, միայն զաւակ նահապետին զերծ գտանէր յանօրէն կրօնիցն. նոցին հակառակորդք իսկ զնոյն վկայութիւն զնոցանէ վկայէին, եւ ազգք՝ յորոց միջի չէր ամենեւին եղծեալ աւանդութեանն ճշմարտութիւն, զարմացեալք ասէին¹³ **Աչ** գոն գրօշեալք ի **Յակոբ**, ոչ հմայք եւ ոչ բղձութիւնք ի մէջ **Խարայեղի**. ահա ժողովուրդ յուսացեալ ի **Տէր Նստուած** իւր՝ որոյ մեծ է զօրութիւն նորա:

Առ հաստատել ի միտս նոցա՝ եթէ մի եւ միագոյ է աստուածութիւնն, եւ թէ ազգի ազգի խառնակ պաշտամունս չստորժէ **Նստուած**, ստէպ յեղշեղէր նոցա **Մովսէս**¹⁴ եթէ ընտրեացէ **Տէր Նստուած** իւր տեղի յերկրին ժառանգութեան, անդ միայն կատարեցեն զսօնս տարեկանացն, եւ մատուցեն զպատարագս իւրեանց եւ

զգահամունս իւրեանց, եւ զամենայն հասարակաց սպասաւորութիւն անդ վճարիցեն: Աւ մինչ զեռ թափառէր ժողովուրդն յանապատին, յառաջ քան զցանկալի երկիրն ժառանգել, կազմեաց Մովսէս զվրան ժամունս, զօրէն տաճարի՝ զոր մարթ էր բառնալ եւ կրել, ուր որդիք Խարայէղէ աղօթս մատուցանէին առ Աստուած՝ որ արար զերկինս եւ զերկիր, որ եւ չգարշէր ուղեկից եւ առաջնորդ նոցա լինել:

Ի վերայ այսր սկզբան կրօնից, ի վերայ այսր նուիրական հիման հաստատեալ էին օրէնքն սուրբ, արդար, բարերար, զգաստական, իմաստուն, զգուշացուցիչ եւ պարզ, որ զմարդիկ ընդ միմեանս, եւ զամենեւին ընդ Աստուծոյ ընդերուդանէր եւ աստուածամուխ եւ աստուածամերձ յարդարէր:

Յայնպիսի նուիրական կարգս յաւել Մովսէս եւ բազում պաշտամունս փառաւորութեան, եւ տօնս տարեկանաց, զի նորօք զգրանելիսն՝ որովք փրկեցանն¹⁵, անթափ ի մտաց յիշեսցեն. եւ կանխեաց յառաջադոյն եւ յայտ արար՝ եթէ ամենայն ինչ յաջողելոյ է նոցա, եթէ օրինացն պատկառ կայցեն, եւ զնորին հակառակն՝ եթէ ստունգանիցեն եւ զհրամանօքն անցանիցեն, անհրաժեշտ անհնարին վրէժս լուծանիցեն, զոր ոչ որ յարտաքնոցն՝ որ զօրէնան եղին, զայն առնել իշխեաց երբեք: Այս հարկ է ասել՝ եթէ աստուածախօս եւ աստուածուսոյց էր այն՝ որ այնպէս ճոխութեամբ հանդերձելոց ինչ իրօք զօրէնան ամբացուցանէր. եւ արդիւնքն ի գլուխ ելեալ, յայտնի արարին զբանիցն ճշմարտութիւն՝ եթէ ոչ յանձնէ մարդիօրէն ինչ կցիցեաց Մովսէս:

Իսկ ազգի ազգի օրինացն խախը՝ ընդ որովք կապեաց նա զերբայեցեոց ազգն, թէպէտ եւ մեղ այժմ վայրապար ինչ եւ աւելորդ կարծիցին, սակայն յայնմ ժամանակի կարի իսկ կարեւոր էին, առ ի զԱստուծոյ ժողովուրդն յայլոց ազգաց զատանելոյ. եւ զարձեալ զի խորանքն այն արգել եւ խափան ի կոոցն պաշտօն զառնալոյ լինիցի նոցա:

Առ ի զկրօնան եւ զամենայն տրւչութիւնս ժողովրդեանն Աստուծոյ պահելոյ, ի միջոյ տասանց անտի ցեղիցն ցեղ մի ընտրեցաւ, որում ետ Աստուած բաժին հան-

դերձ տասանորդօքն եւ նուիրօք, զհոգնուիրական սպասուց: Վ եւ ի եւ նորին որդիքն սրբեցան Աստուծոյ իրրեւ տասանորդ ի միջոյ ամենայն ժողովրդեանն: Աւ ի մէջ որդւոցն Վ եւեայ զատուցաւ Ահարոն, լինել զլսաւոր քահանայութեան. եւ օծութիւնն եղև վիճակ ժառանգութեան ազգատոհմին նորա:

Աւ այսպէս պաշտօնեայք ի սպաս սեղանոյն կարգէին, եւ խնամակալք առանձինն ի պատուարել զօրէնսն ընտրէին, եւ զկարգ ժողովրդեան Աստուծոյ հաւատարիմ առնէ պայազատութիւն քահանայապետացն՝ որ յետ Ահարովնի առաջնոյ քահանայապետի, պայազատ ի պայազատէ առնուին զելիանութիւնն:

Իայց առաւել աղնուական էր օրէնքս այս, այնու՝ զի առ այլ իմն բարձրագոյն եւ աղնուագոյն օրէնս ճանապարհ հորդեր, որ ոչ միայն ծանրատաղտուկ ինչ հրամանս չէր ի վերայ դնելոց, այլ եւ յաճախագոյն յառաքինութիւն զոգիս մարդկան յարգարելոց էր:

Աւ զի ուշակալուք առ այս հանդերձեալ օրէնս դրտանիցին, Մովսէս հաւատարիմ արար նոցա զգալուստ մեծի մարգարէին՝ որ ի զաւակէն Աբրաամու, Իսահակայ եւ Յակովբայ յառնելոց էր. Մարգարէ, առ¹⁶, յեղբարց քոց իրրեւ զիս յարուսցէ քեզ Տէր Աստուած քո, նմա լուիջիք: Աւ արգ մարգարէս այս՝ որ իրրեւ զՄովսէսն գալոց էր, նմին նման օրէնսդիր, ո՞ այլ ոք իցէ, եթէ ոչ Օծեալն Տէր մեր՝ որոյ կենարար վարդապետութիւնն հանդերձեալ էր սրբել եւ յերիւրել զամենայն ոգի:

Մինչեւ ցՕծեալն չէր ոք յառնելոց յամենայն Իսրայէլի մարգարէ իրրեւ զՄովսէս¹⁷, ընդ որում Աստուած բերան ի բերան եւ ձեռն ի ձեռն խօսիցի, կամ որ օրէնս ինչ դնիցէ. վասն որոյ, մինչեւ ի ժամանակս Օծելոյն, ժողովուրդն ամենայն ուրեք եւ յամենայն ծուփս զՄովսէս ունէին իւրեանց հաստատութիւն ամբութեան: Օ որ օրինակ հռոմայեցիք՝ զԱռմիղայ եւ զԱռամայ եւ զերկօտասան տախտակացն օրէնս մեծարէին, եւ աթենացիք՝ զՍողոնին, եւ զակեղմոնացիք՝ զՎիկուրդայն, նոյնդունակ եւ շրեայք զՄովսիսի օրէնսն վեր ի վայր յեղիւրդուին:

Ձանդերձ այսու ամենայնիւ դարձեալ եւ օրէնսդիրն այնպիսի պատշաճութեամբ եւ կարգաւ զամենայն ինչ

յարդարեաց, մինչեւ չլինել հարկ փոփոխումն ինչ ի բանսրն մուծանել : Ասան այսորիկ գիրք Հրէիցն իրաւանց, ոչ ի պէսպէս օրինաց, ի ժամանակս եւ ի դէպս այլադունակս տուելոց, ծայրաքաղ ինչ արարեալ բովանդակեցաւ. այլ Մովսէս աստուածեղէն ոգւովն անդուստ ի վերուստ զամենայն ետես եւ դրեաց : Այ ուրեք օրէնս ինչ ի Պատթայ տուեալ գասնեմք, եւ ոչ ի Մողոմոնէ եւ ի Յովսափաթայ եւ կամ Ղազեկիայ, թէպէտ եւ ամենեքեան եւս նախանձախնդիրք արդարութեան էին : Իշխանաց աստուածապաշտաց շատ էր յօժարեցուցանել զժողովուրդն՝ զօրէնսն Մովսիսի պահել¹³. եւ բաւական համարէին թելադիր լինել եւ պատուիրել իւրեանց պայազատացն զզուշանալ օրինացն. յաւելուլ ինչ կամ հատանել ի նմանէ¹⁹, անհարին անպարշտութիւն համարէր :

Յամենայն ժամ օրինաց պէտս ունէին առ ի զամենայն օրինօք յարդարելոյ. ոչ վասն տօնից տարեկանաց միայն, եւ զոհից եւ պաշտամանց, այլ եւ վասն ամենայն հասարակաց եւ առանձին պիտոյից օրէնք գոյին. վասն դատաստանաց, տուրեւտոիկ փոփոխմանց եւ դաշանց, ամուսնութեանց, պայաղատութեանց, վասն զխահանութեան, վասն կերպարանաց հանդերձից իսկ, եւ վասն ամենայնի՝ որ առ բարս մարդկան ի դէպ գայցեն : Չէր այլ մատեան՝ յորում մարթէր ոք վկարգս լաւութեան ուսանել. հարկ էր ի նոյն հանապաղ թեւակոխել, եւ զայն խոկալ զցայգ եւ զցերեկ, առնել քաղուածոյս յօրինացն եւ զնոյն ցանգ առաջի աչաց ունել : Ընտի ըսկիզբն առնէին մանկուէք մատաղք զառաջին նշանադիրսն ուսանել. ծնողք զիւրեանց որդիս նովին աստուածածանօթ օրինօք հրահանգէին, զայն նոցա վեր ի վայր յեղյեղուն, եւ ի նոյն յօժարեցուցանէին, որ բաւական էր զնոսա անդստին ի մատաղ հասակէն մտավարժս յարդարել : Պարտ եւ պատշաճ էր ամենայն ումեք զնոյն ի ձեռին ունել :

Այ միայն յաճախ առանձինն, այլ եւ յետ եւթն ամի ժամանակի նշանաւոր տարւոյն թողութեան եւ հանգըստեան ի տօնի տաղաւարահարացն, զոր ամենայն ժողովուրդն ի մի վայր եկեալ խմբէին զաւուրս ութ, ըզնոյն օրէնս առաջի աշխարհաժողով բաղմութեան ընթեռ-

նուէն²⁰ : Մովսէս զբուն օրինակն երկրորդման օրինաց եւ առննթեր տապանակին, ուր ամենայն օրէնք համառօտիւք բովանդակեալ կային²¹ : Բայց առ երկիւղն՝ զի մի յետ ժամանակաց առ չարութեան ինչ որ, կամ առ ծուլութեան կամակորիցէ, եւ այլայլս ինչ դրիցէ, թող զպատճէնս՝ որ ի մէջ ժողովրդեանն շրջէին, ստոյգ օրինակս դրէին ի մատեանս, զոր ճշգիւք քննեալ քահանայից եւ ղեւտացւոց, յամուր զգուշութեան պահէին, որք իրբեւ զբուն օրինակսն համարէին : Աւ զի յառաջագոյն նկատեալ ծանեաւ Մովսէս՝ եթէ կացուցանիցէ ժողովուրդն ի վերայ իւր թաղաւոր որպէս եւ այլ աղք, նմին իրի, որպէս յերկրորդման օրինացն դրեալ է²², թաղաւորաց եւս ուրոյն օրէնս ետ ստոյգ եւ անսխալ օրինակ մի ի քահանայից անտի ինդրել եւ առնուլ, զի զպատճէնս դրիցեն, եւ զամենայն առուրս կենաց իւրեանց ընթեռնուցուն : Պատճէնք օրինակացն այնպէս ճշգիւ յայտ յանդիման ուղղեալք, մեծարոյ եւ պատուական էին յաս ժողովրդեանն, զոր իրբեւ բուն Մովսիսի ձեռամբ դրեալ համարէին, այնպէս որջ եւ բովանդակ, որպէս էրն յորժամ ինքն Մովսէս աստուածեղէն հոգւովն ուսեալ գրէր : Առ թաղաւորութեամբն Յովսեայ հին ինչ մատեան յօրինակաց անտի հաւաստեաւ եւ ինամով ուղղելոց²³, ի տան Տեառն գտեալ, որ թերեւս բուն իսկ օրինակն էր՝ զոր Մովսէս եղ ի պահեստ առննթեր տապանակին, վառեաց զերանելի թաղաւորն յաստուածպաշտութիւն, եւ եղեւ նմա պատճառք յապաշխարութիւն զժողովուրդն ամելոյ :

Նրապարակաւ զօրէնսն ընթեռնուլ յամենայն ժամանակի բազում մեծամեծ շահս գործեաց : Նամառօտ իսկ ասել մատեանս այս ամենեւին կատարեալ, ի Մովսիսէ կից ընդ պատմութեան ժողովրդեանն Աստուծոյ դրեալ, ուսուցանէր նոցա զւրեանց սկիզբն, զկրօնս, ըզքաղաքային կարգս, զբարս, զխմաստութիւն, եւ զամենայն ինչ՝ որ առ յարգարել զվարս մարդկան, եւ ագմիարանել եւ յօրինել զհասարակաց ընկերութիւն ի դէպ իցեն. զբարեացն եւ զւարաց օրինակս, զկիտոցն վարձուց հաստուցումն, եւ զայլոց զգժնդակ պատիժս պատուհասից :

Ժողովուրդն ելեալ ի գերութենէն, եւ զբառասուն ամ յաճեալ ընդ անապատն, սովին զարմանալի խորատու թեքեալ եւ վարժեալ, յերկիրն՝ զոր ժառանգելոցն էր, հասանէր: Մովսէս զնոսա ի մուտս անգր ածեալ հասուցանէր²⁴, եւ ապա զգաստ լեալ զիւրոյ մտաւոր վախճանէն, զՅետու յանձանձիչ իրացն կացուցանէր: Բայց մինչ չեւ մեռեալ էր, զայն զերկայնաձիգ եւ զգարմանալի օրհնութիւնն գրեաց, որոյ սկիզբն է զայս ձեւ օրինակի²⁵. Նայեցարուք երկինք եւ խօսեցացց, եւ լուիցէ երկիր զպատգամս բերանոյ իմոյ: Եւրգ՝ յայնպիսի լուութեան, ի սկզբան բանիցն անհնարին սաստկութեամբ առ ժողովուրդն բարբառի, եւ յառաջագոյն հայեցեալ ի նոցա անաստութիւնն, զանհնարին չարին յանդիմանէ նոցա: Եւ ապա վարվաղակի յսկան թօթափել ի զարմացման եղեալ, որպէս թէ զամենայն մարդկօրէնս խոնարհագոյն համարեալ, զաստուածականն ի մէջ մուծանէ, խօսել եւ ասել խառն զբարձրագոյնն եւ զաղերսականս, մինչեւ չէ մարթ ումեք ասել՝ եթէ առաւել երկեւդ եւ ամօթ, եթէ սէր եւ վստահութիւն ի միտս լսողացն արկանիցէ:

Ժողովուրդն ամենայն հրամանաւ Եստուծոյ եւ Մովսիսի զաստուածեղէն օրհնութիւնն ուսանէր²⁶: Յետ այնորիկ մեռանէր Մովսէս աչալուրջ երեսօք, իրրեւ զայր մի՝ որ զամենայն փոյթ ի մէջ առեալ իցէ, առ ի զԵստուծոյ բարերարութեանցն եւ զհրամանաց յիշատակ ի մէջ իւրոցն պահելոյ: Եթող նա զիւր որդեակսն ի մէջ իւրեանց ընտանեկաց տոհմային քաղաքացւոց, ոչինչ առաւելութիւն կամ պատիւ աւագութեան տուեալ նոցա: Այլ ի մէջ իւրոյ ձեռական ժողովրդեանն միայն, այլ եւ ի մէջ ամենայն ազգաց աշխարհի զարմանալի լեներ, եւ ոչ զք երբեք յամենայն օրէնադրաց իրրեւ զնա քաջանուն ի մէջ մարդկան եղեւ:

Եսի՛ թէ եւ զՅովբայ գիրսն նորա գրեալ իցէ: Խորհրդոցն խորութիւն, եւ բարձրութիւն պատգամացն՝ արժանի Մովսիսի զնոյն պատմութիւն գործեն: Եւ կասկած՝ զի մի երբայեցիքն հպարտացեալ ձեռն յանձին հարեալ, անձանց եւ եթ զԵստուծոյ շնորհսն համարիցին, ի դէպ եւ պատշաճ էր տալ նոցա ի միտ առ-

նու՛լ եթէ մեծագորն Աստուած ի մէջ տոհմին իսկ Ասաւայ՝ զիւր ընտրեալսն ունէր: Օ՛րնչ ինչ առաւել կարեւոր քան զայս վարդապետութիւն կայր. եւ որպիսի՞ շահաւէտ օրինակ մարթ էր Մովսիսի ի մէջ բերել ժողովրդեանն յանապատին թախծելոյ, քան զՅովբայ համբերութիւնն, որ ի սատանայի ձեռան մատնեալ առ յազդի ազդի փորձանան զտելոյ, յընչից եւ յստացուածոց անկանէր, յորդւոց իսկ եւ յամենայն երկրաւոր միթարութենէ: Եւ ապա չարաչար կեղով հարեալ եւ տրորեալ, եւ ի ներքոյ ի հայհոյութեան եւ յանյուսութեան զիւէն լլկեալ, տակաւին հաստատուն կայր. յայտ արարեալ՝ եթէ հաստատուն ողի, վառեալ Աստուծոյ օգնականութեամբն, ի մէջ անհնարին փորձանաց իսկ եւ ամենայն տրտմականաց՝ զոր դեւն զրդիցէ, ոչ միայն չվհատիցի եւ չկեղծանիցի, այլ եւ անձինն վշտօք պատապարիցի, եւ յերկնաւորականն ի բարձունս թռանիցի. եւ ի վիշտան՝ որովք վշտանայն, զմարդոյն անկաճութիւն եւ զԱստուծոյ տէրութիւնն, եւ զնորա զանեզրական իմաստութիւնն ծանիցէ: Օայս ամենայն Յովբայ դիրքն ուսուցանեն²⁷: Ըստ խակութեան ժամանակին տեսանեմք զառն հաւատոս ժամանակեան հեշտականութեամբ պսակեալ. բայց եւ այնպէս ուսաւ ժողովուրդն Աստուծոյ ի միտ առնուլ՝ եթէ որպիսի զօրութիւն վշտացն իցէ, եւ սկիզբն առ ճաշակել զչնորհան՝ որ երբեմն ընդ խաչին կապելոց էր:

Մովսէս զնոյն ճաշակս ճաշակեալ էր, մինչ դեռ զկարիս եւ զանարդութիւն՝ զոր ընդ իւրում ժողովրդեանն կրելոց էր, քան զամենայն դրդանս եւ զյղփութիւն տան թաղաւորին եզիպտացւոց լաւագոյն եւ ազնուագոյն համարէր²⁸: Յայնմ ժամանակէ հետէ՝ ճաշակեցոյց նմա Աստուած զնախատինսն Վրիստոսի²⁹: Առաւել վայելեաց նա յայն ճաշակ ի ժամանակին՝ յորում փախուցեալ մարդապուր լինէր, քառասնամեայ ժամանակ վտարանդեալ: Բայց ամենեւին իսկ քամեաց նա զբաժակըն Վրիստոսի, յորժամ ընտրեալ փրկիչ ժողովրդեանն, յանձն առնոյր զողիս ի բռին ունել եւ ժուժել տանել յաճախ ապստամբութեանն նոցա³⁰: Աւսաւ՝ եթէ քանի՞օն զժնդակ իցէ փրկել զորդիսն Աստուծոյ, եւ ան-

գուտ ի վերուստ նկարեաց զօրինակ զժնդակագոյն վշտացրն՝ զոր հանգերձեալ էր կրել կենարարն աշխարհի, վասն ազնուագոյն եւս փրկութեան:

Զկարաց իսկ հասանել մտիթարութեանն մտանելոյ յերկիրն աւետեաց. այլ ի լեառն մի բարձր ելեալ բացուստ ի բաց տեսանէր զերկիրն, եւ չհամարեցաւ ամօթ գրել³¹ եթէ վասն իրիք մեղաց վրիպեաց եւ տարագիր եղեւ. եւ թէպէտ եւ փոքր ինչ յանցուածքն թուիցին, բայց զե յայնպիսի բարձրագոյն շնորհս վայելեալ էր, յերաւի պատժեցաւ: Մովսէս եղեւ օրինակ Աստուծոյ սատիկ նախանձաւորութեանն, եւ թէ զկարգ անհնարին բազում հաւաստեօք դատաստանս ի վերայ նոցա ածիցէ, զորս իւրովք պարզեւօքն վառեաց ի բարձրագոյնս թեւակոխել:

Բայց եւ այլ իմն բարձրագոյն խորհուրդ ցուցաւ մեզ ի Մովսիսի տարագիրն լինել: Իմաստուն օրէնսդիրն՝ որ այնչափ նշանօքն հաղիւ զԱստուծոյ որդիսն ի մօտաւոր վայրս երկրին նոցա հասուցանել կարաց, ինքնին տայ մեզ ի միա առնուլ՝ եթէ իւրոյ օրինացն չէ մարթ զմեզ ի կատարումն տանել³², եւ թէ յանդ հանել զաւետիսն չէ ձեռնհաս, այլ ի հեռաստանէ միայն ցուցանիցէ³³, կամ առաւել եւս առ դրունս ժառանգութեան մերոյ զմեզ ածիցէ: Յետուայ միայն կամ Յիսուսի, զե այդ իսկ էր ստոյգ անուն Յետուայ, մարթ եւ պատշաճ էր մուծանել զժողովուրդն Աստուծոյ յերկիրն սուրբ, զե անուամբ եւ պաշտամամբ իւրով առակ օրինակի էր կենարարին: Յետո թէպէտ եւ ամենայն իրօք խոնարհագոյն քան զՄովսէսն էր, բայց անուամբն գեր ի վերոյ էր քան զնա:

Յերեսաց նորա դարձան յետ ջուրքն Յորդանանու, եւ պարիսպքն Արիքովի ինքնին անկան, եւ եկաց արեգակն ի մէջ երկնից. ի ձեռն յաղթութեանց նորա, հաստատեաց Աստուած զիւր որդիսն յերկիրն քանանացւոց, մերժեալ նոքօք զպղծալից ազգսն: Օլոր հաւատացեալս յատելութիւն ընդդէմ նոցա գրգռեալ, ի նոցա գարշութենէ հեռանալ յօժարեցուցանէր. եւ պատիժ պատուհասին՝ զոր էած Աստուած ի ձեռն նոցա ի վերայ ազգացն այնոցիկ, տազնապեցոյց զնոսա ահիւ

աստուածեղէն արդարութեանն՝ զորոյ ինքեանք զհրամանն կատարէին: Ոմանք յազգաց անտի՛ զորս խլեաց Յեսու յաշխարհէն իւրեանց, եկեալ բնակեցան յսփրիկեցւոց աշխարհին, ուր յետ բազում ժամանակաց ի հին ինչ մատենան յիշատակաց՝ նոցա փախուստն եւ Յեսուայ յաղթութիւնքն զրոշմեալ դտան:

Յետ նորագործ զարմանալի յաղթութեամբք ժառանգեցուցանելոյ որդւոցն Խարայէղի զմեծ մասն երկրին աւետեացն՝ եղևոյ առ հարսն նոցա, ձեռն արկանէր Յեսու հանդերձ Աղեղարաւ քահանայապետաւ, եւ գրեխաւորօք երկոտասան ցեղիցն, բաժանել զբաժինն³⁵ որպէս հրամայեաց Մովսէս. եւ զազնուադոյն եւ զմեծագոյն բաժինն ցեղին Յուդայ ետուն: Անդտփին ի ժամանակէ անտի Մովսիսի՛ ցեղն Յուդայ անցանէր զանցանէր զամենեքումբք բազմութեամբ, եւ քաջանուն եւ փառաւոր քան զայլն էր:

Սեռաւ Յեսու եւ ժողովուրդն տակաւին նուաճէր զերկիրն սուրբ: Կամեցաւ Եստուած՝ զի ցեղն Յուդայ առաջի խաղսցցէ³⁶, եւ յայտ արար՝ եթէ մատնեաց զաշխարհն ի ձեռս նորա: Արդարեւ հար խորտակեաց Յուդա զքանանացին³⁷, եւ առ զԱրուսաղէմ՝ որ հանդերձեալ էր քաղաք սուրբ, քաղաք թաղաւորութեան ժողովրդեանն Եստուծոյ լինել. եւ քաղաքս այս հին Սաղիմն էր, ուր Մեղքիսեղեկ առ ժամանակօքն Արրաամով թաղաւորէր: Մեղքիսեղեկս³⁸ այս թագաւոր արդարութեան, զի զայդ իմն իւր անունն յայտ առնէ, է նոյնգունակ եւ թագաւոր խաղաղութեան, զի Սաղիմը խաղաղութիւն թարգմանի. զնա Արրաամ ազնուադոյն քան զամենայն քահանայապետս աշխարհի ճանաչէր. որպէս թէ Արուսաղէմ անդտփին ի նմին ժամանակէ սահմանեալ իցէ քաղաք սուրբ, եւ զլուխ կրօնից լինել: Քաղաքս այս ի սկզբանն՝ որդւոցն Բենիամինի տուաւ³⁹, որք քանզի տկար եւ սակաւաւորք էին, զժերուսացիսն զհին բնակիչս աշխարհին մերժել անտի չկարացին, եւ ի մջ նոցա բնակեցին:

Առ դատաւորօքն այլ ազգ վարէր ընդ նոսա Եստուած, որպէս ինչ ինքեանք գնացս գնային բարի կամ չար:

Յետ վախճանելոյ ծերոցն՝ որոց զսքանչելիս ձեռին
 Եստուծոյ տեսեալ էր, յիշատակ մեծապարանչ զարմանա-
 լեացն նուազէր, եւ հասարակաց ազգի մարդկան մտացն
 դիւրամէտ ոտնառութիւն, զժողովուրդն մղէր ընկենոյր
 ի կռապաշտութիւն: Որչափ ի նոյն ամպարշտութիւն
 զառածանէր, պատիժս պատուհասից կրէր. եւ որչափ
 դառնայրն եւ ապաշխարէր, փրկէր: Խնամակալութեան
 հաւատք, եւ ստուգութիւն խոստմանցն եւ սպառնա-
 լեացն Սովսիսի երթայր եւ հաստատէր ի միտս ճշմար-
 աից հաւատացելոց: Բայց Եստուած մեծամեծս եւս
 օրինակս ի նոյն պատրաստէր: Խնդրեցին թագաւոր,
 եւ ետ նոցա Եստուած զՇ առուղ՝ որ վաղվաղակի վասն
 իւրոցն մեղաց խոտեցաւ: Եւս խորհեցաւ Եստուած
 հաստատել տոհմ արքունական՝ յորմէ Քրիստոսն դայցէ.
 եւ զնոյն տոհմ ի յուդայական ազգին ընտրեաց: Ղաւթ
 մանուկ եւ հովիւ խաշնագարման, ի ցեղէ անտի Յու-
 դայ, կրտսեր քան զամենայն որդիս Յեսսեայ, որոյ ազ-
 նուականութեան շին ծանօթ հայրն եւ ազգատոհմն նո-
 րա, բայց զոր Եստուած եզիտ ըստ սրափ իւրում, օծաւ
 ի Սամուելից ի Բեթղահէմ յիւրում դաւառի⁴⁰:

1) ԾՆՆ. յ. 16: 2) Լ. 1. 9: 3) ԼՆՊ. 9. 14: 4) ԼՆՊ. Ի. 1. և ԹՈՒ. յ. 5: 5) ԾՆՆ. յ. 18. 19: 6) ԼՆՊ. Ի. 22. 23. Ի. 28. 29. յ. 17. 18: 7) Լ. 1. 2. 3. Թ. 1. այլովքն հանդերձ. Ի. 26: 8) ՂՆՏ. Ի. 2. 3: 9) ԼԲՐԻ. ԳԻՐԲ Բ. 4. և 5. Յաղագս Պատեր. Գաղատ: ԻԲՐԻ. ԳԻՐԲ Լ. 5: ՊԻՆ. ԳԻՐԲ Լ. 1: ԵԹՆ. ԳԻՐԲ Ի. 4: ՊՈՐՓ. Յաղագս յ. 1. և 2. և 3. Յաղագս Իրաց ԳԹԱԳ: 10) ԹՈՒ. Ի. 14. 17. 18. 27. այլովքն հանդերձ: 11) Լ. 1. յ. 12: 12) ԼԲՐԻ. օր. 1. Լ. 13: 13) ԹՈՒ. Ի. 21. 22. 23: 14) ԼԲՐԻ. օր. յ. 1. յ. 2. յ. 3. յ. 4. յ. 5. այլովքն հանդերձ: 15) ԼՆՊ. Ի. 1. և 2. այլովքն հանդերձ: 16) ԼՆՊ. յ. 15. 18: 17) ԼՆՊ. Ի. 10: 18) Գ. ԹՈՒ. Ի. այլովքն հանդերձ: 19) ԼԲՐԻ. օր. Գ. 2. յ. 32. այլովքն հանդերձ: 20) ԼՆՊ. Ի. 10. և 11. և 12. և 13. և 14. և 15. և 16. և 17. և 18. և 19. և 20. և 21. և 22. և 23. և 24. և 25. և 26. և 27. և 28. և 29. և 30. և 31. և 32. և 33. և 34. և 35. և 36. և 37. և 38. և 39. և 40: 21) ԼԲՐԻ. օր. 1. 26: 22) ԼՆՊ. յ. 18: 23) Գ. ԹՈՒ. Ի. 8. այլովքն հանդերձ. Բ. ՍՆՏ. Ի. 14. այլովքն հանդերձ: 24) ԼԲՐԻ. օր. 1. և 2: 25) ԼՆՊ. Ի. 19. 22: 26) ՅՈՒ. յ. 15. յ. 14. յ. 15. յ. 21. յ. 25. և 26. այլովքն հանդերձ: 27) Լ. 1. և 2. և 3. և 4. և 5. և 6. և 7. և 8. և 9. և 10. և 11. և 12. և 13. և 14. և 15. և 16. և 17. և 18. և 19. և 20. և 21. և 22. և 23. և 24. և 25. և 26. և 27. և 28. և 29. և 30. և 31. և 32. և 33. և 34. և 35. և 36. և 37. և 38. և 39. և 40: 28) ԼՆՊ. յ. 13: 29) ՊՈՐՓ. ԳԻՐԲ Բ. Յաղագս Պատեր. Կանդ: 30) ՅՈՒ. յ. 1. յ. 2. և 3. և 4. և 5. և 6. և 7. և 8. և 9. և 10. և 11. և 12. և 13. և 14. և 15. և 16. և 17. և 18. և 19. և 20. և 21. և 22. և 23. և 24. և 25. և 26. և 27. և 28. և 29. և 30. և 31. և 32. և 33. և 34. և 35. և 36. և 37. և 38. և 39. և 40: 31) ԼՆՊ. Ի. 12: 32) ԼԲՐԻ. Լ. 19: 33) ԼՆՊ. յ. 13: 34) ՊՈՐՓ. ԳԻՐԲ Բ. Յաղագս Պատեր. Կանդ: 35) ՅՈՒ. յ. 1. յ. 2. և 3. և 4. և 5. և 6. և 7. և 8. և 9. և 10. և 11. և 12. և 13. և 14. և 15. և 16. և 17. և 18. և 19. և 20. և 21. և 22. և 23. և 24. և 25. և 26. և 27. և 28. և 29. և 30. և 31. և 32. և 33. և 34. և 35. և 36. և 37. և 38. և 39. և 40: 36) ՂՆՏ. Ի. 1. 2: 37) ԼՆՊ. Ի. 4. 8: 38) ԼԲՐԻ. Լ. 21: 39) ՂՆՏ. Ի. 21: 40) Լ. ԹՈՒ. յ. 5:

Գ Լ ՈՒ Խ Խ Գ

Կ Ե Ր Ի Ք Թ Ե Ղ Ե Վ Ե Բ Ե Բ Ե Բ Ե Բ Ե Բ Ե Բ Ե Բ Ե Բ Ե Բ Ե Բ Ե Բ Ե Բ Ե Բ

Լ ԵՍ Ժողովուրդն Աստուծոյ առաւել ազնուագոյն կերպարանս առնոյր, Թագաւորութիւնն ի տանն Վաւթի հաստատէր: Ազգատոհմն այս սկիզբն առնոյր յերկուց Թագաւորաց՝ որոց նկարագիրն այլապէս նշանակ էր, բայց երկօրեան եւս զարմանալի էին. Վաւթի պատերազմասէր եւ աշխարհակալ, զհակառակորդս ժողովրդեանն Աստուծոյ նուաճեալ, ահապէս զերբայեցիսն ընդ ամենայն արեւելից աշխարհն կացուցանէր. իսկ Մողոմոն մեծարոյ լեալ վասն իւրոյ իմաստութեանն ի մէջ իւրոցն եւ օտարաց, ի խոր խաղաղութեան երանելի երջանիկ զազն դործէր:

Այլ կրօնիցն կարգ աստէն ի սկզբանս, ի մէջ ուրոյն տեղեկութիւնս վասն վարուց երկուց մեծաց Թագաւորացս պահանջն:

Վաւթի զառաջինն Թագաւորէր ի վերայ Յուդայ, հարուստ եւ յաղթող երեւեալ, եւ ապա՝ յամենայն խաւայէրացեացն նոյնպէս նշանակ Թագաւոր ճանաչէր: Օգրացաւ Վաւթի ի վերայ յերուսացեացն, եւ առ նա զամրոցն Միոնի, որ էր միջնարեւոյն Արուսաղէմի: Քաղաքին տիրեալ, հրամանաւ Աստուծոյ զաթոռ Թագաւորութեանն եւ զկրօնից ի նմա հաստատէր¹: Միոն եղեւ նիստ նորա. եւ շինեաց Վաւթի զՄիոն շուրջանակի ծագէ ի ծագ, եւ անուանեաց զնա քաղաք Վաւթի²: Յովար նորին քեռորդի զայլ եւս կողմանս քաղաքին շինէր, եւ Արուսաղէմ ի նոր իմն կերպարանս յարդարէր: Ազն յուղայական համօրէն զաշխարհն կալաւ, եւ Բենիամին սակաւաւոր խառն ընդ նոսա բնակեաց:

Տապանալին ուխտալին՝ զոր Մովսէսն կազմեաց, ուր Աստուած ի վերայ քերովրէիցն հանդէպ, յորում եւ երկօրին տախտակք տասնհրամանեան հաւատոցն զգուշութեամբ պահէին, չունէր ուրեք տեղի հաստատուն³: Ահա զնա Վաւթի հռչակաւ ի Միոն՝ զոր Աստուծոյ մեծազօր զօրութեամբն կալաւ, զի Թագաւորեսցէ Աստուած ի Միոն, եւ յայտնի լինիցի անդ՝ եթէ Վաւթի եւ Ա-

բուսադէմի եւ ամենայն թագաւորութեանն վերակացու է Աստուած: Դակ վրան ժամուն՝ ուր ժողովուրդն պաշտէր զԱստուած յանապատին, տակաւին ի Գաբաւոն էր. եւ անդ մատչէին զոհք եւ պատարագք ի վերայ սեղանոյն՝ զոր Մովսէս կանգնեաց՝: Աւ զայդ ամենայն գործէին, ակն կալեալ զիպօղ ժամանակի՝ յորում տաճար շինեսցի, ուր մարթիցի զսեղանն եւ զտապանակն ի միում վայրի զեակել, ուր եւ պաշտօնն ամենայն կատարեսցի:

Դաւիթ իբրեւ հար խորտակեաց զամենայն զիւր թշնամիսն⁵, եւ ընդարձակեաց զասմանս ժողովրդեանն Աստուծոյ մինչեւ ցկողմանս Արածանւոյ, խաղաղացեալ եւ ամենեցուն յաղթեալ, եդ ի մօրի զաստուածեղէն պաշտօնն հաստատել. եւ հրամանաւ Աստուծոյ նշանակէր զտաճարին տեղն⁶, ի նմին իսկ լերին՝ ուր Աբրաամ զիւր որդին զմիամօր զենուլ պատրաստեալ, ձեռամբ հրեշտակի միոջ արգելոյր: Աւ եցոյց նա մանր զամենայն հանգամանս շինուածոյն, կուտեալ յաճախութեամբ նիւթս մեծադինս եւ պատուականս. եւ զառ եւ զպուռ եւ զաւար պղպան եւ թագաւորաց՝ որ պարտեցանն, ի նոյն պէտս կարգեաց:

Բայց տաճարս այս՝ որ ի ձեռն պատերազմողին կարգելոց պատրաստելոց էր, հանդերձեալ էր նիստ առեալ շինել ի ձեռն խաղաղարարին: Սողոմոն շինեաց զնա ըստ օրինակին վրան ժամուն: Օսեղանն ողջակիցաց, զսեղանն խնկոց, զաշտանակն ոսկի, զսեղանն հացին առաջաւորութեան, եւ զամենայն կահ սպասու սրբութեան տաճարին, զձեւ եւ զօրինակ սպասուցն Մովսիսի՝ զոր յանապատին ետ գործել⁷, գործէին. Սողոմոն բաց ի վայելչութենէ եւ ի մեծութենէ, չարար ինչ յաւելուած ի գործ անդր: Օտապանակն՝ զոր այրն Աստուծոյ կազմեաց, բարձին եւ եդին ի սրբութիւն սրբութեանցն, յանմուտն, առակ օրինակի Աստուծոյ անմատոյց մեծութեանն, եւ երկնիցն՝ որ փակեցան մարդկան, մինչեւ եկեալ Քրիստոս նոցա զմուտն իւրով արեամբն բանայցէ: Յաւուր նաւակատեաց տաճարին Աստուած իւրով փառօքն անդէն երեւէր: Բնարեաց նա զտեղին հաստատել ի նմա զիւր անունն եւ զպաշտօն. եւ ետ հրաման այլուր ամենեւին չզոհել, ի միոջէ մեկնակ տաճարէն, միաբուն աստուա-

Տուրթիւնն ցուցաւ : Արուսաղէմ եղև քաղաք սուրբ, առակ օրինակի եկեղեցւոյ՝ յորում Աստուած իրել ցիւրում ի բուն ի ճշմարիտ տաճարի բնակելոց էր, եւ երկնից՝ ուր զմեզ յայտնութեամբ իւրոցն փառաց երանելիս մշտնջենաւորութեամբ զործեսցէ :

Սողոմոն յետ զտաճարն շինելոյ, եւ ապարանս արքունիս շինեաց, նորանշան մեծապայծառ եւ ճաշխարհիկ, որպէս վայել իսկ էր այնպիսի մեծի եւ փառաւոր թագաւորի : Աւարար արքայ իւր տուն զբօսանաց՝ զոր անունեաց տուն անտառին Ղիրանանու, եւ էր նոյնդունակ զարդարուն եւ գեղեցիկ : Տունն՝ զոր վասն տիկնոջն շինեաց, եղև ի զարդ փառաւորութեան Արուսաղէմի : Ամենայն շինուածք՝ զորս շինեաց արքայ Սողոմոն, շքեղ եւ պնտապոյն էին, պատշգամբն եւ անդաստակքն, եւ տուն շտեմարանացն, եւ սրահքն, եւ աթոռն արքայի, եւ ատեանն՝ ուր նստէր արքայ եւ դատէր : Աւ զամենայն զործուածսն զործեսց եղևնափայտեայս, ընդելուզեալս ոսկւով եւ ակամբք պատուականօք : Բնակք եւ եկք զարմանային ընդ մեծաշուք փառաւորութիւն թագաւորացն երբայեցւոց : Աւ այլն ամենայն հանգոյն այնմ փառաւորութեան էր . քաղաքք, եւ տունք զինուց, ձիք եւ կառք, եւ սպասք անձնապահաց թագաւորին : Տուրեւտով փոփոխուին, եւ նաւարկութիւն, եւ յօրինուածութիւն քաղաքին, եւ խոր խաղաղութիւն, զԱրուսաղէմ քան զամենայն քաղաքս արեւելից աշխարհին հոյակապ զործէին : Աշխարհն ի հանդարտութեան եւ յաւատութեան վայելէր : Աւ այն ամենայն զօրինակ երկնաւոր փառացն ընծայեցուցանէր . Վաւթի պատերազմունքն յայտ առնէին՝ եթէ փաստակովք հարկ է արժանաւոր փառացն գտանել, իսկ Սողոմոնի թագաւորութիւնն նշմարեցուցանէր՝ եթէ քանիօն ցանկալի երկնից վայելութիւնն իցէ :

Վարձեալ՝ երկուց այսոցիկ մեծաց թագաւորաց եւ արքունական ազդին բարձրութիւն, առանձինն հրաւիրանաց արդիւնք լինէին : Աւ Վաւթի ինքնին զխտովն զայնպիսի ընտրութեան զքանդելիս զայս օրինակ հռչակ հարկանէ եւ ասէ . Բնորեաց, ասէ, Տէր Աստուած յամենայն ազգաց Վարայէղ . եւ յամենայն Իսրայէղէ՝ ընտրեաց զՅուդաս, կանգնել զթագաւորութիւնն իւր յա-

ւիտենական . եւ ի տանէն Յուդայ՝ ընտրեաց զտուն Հօր իմոյ . եւ յորդոց Հօր իմոյ՝ կամեցաւ զիս լինել թաղաւոր ի վերայ ամենայն Խարայէղն . եւ յամենայն որդոց իմոց , վասն զի որդիս բազումն եա ինձ Տէր , ընտրեաց զՍողոմոն որդի իմ , նստուցանել յաթոռ թաղաւորութեանն Տեառն ի վերայ Խարայէղն¹⁰ :

Այս աստուածեղէն ընտրութիւն բարձրագոյն ինչ քան զոր երեւին , ընծայեցուցանէ : Սեւիայն , ըստ յաճախագոյն աւետեացն զաւակ Արրահամու , նոյնդունակ եւ Վաւթի եւ ամենայն թաղաւորացն Յուդայ որդի լինել հանդերձեալ էր : Ի խորհուրդ Օծելոյն եւ նորին մշտնջենաւոր թաղաւորութեանն , խոստացաւ Աստուած Վաւթի՝ եթէ աթոռ նորա կացցէ յաւիտեան : Սողոմոն ընտրեալ առ ի զնայն պայտաղատել , առակ օրինակի էր , որ զնոյն ինքն զՕծեալն ի գլխովին յանդիման կացուցանէր : Յայն սակս իսկ ասաց Աստուած վասն նորա¹¹ , Ես եղէց , առէ , նմա ի հայր , եւ նա եղեցի ինձ յորդի . զոր ոչ ուրեք նովին ճոխութեամբ զայլմէ ումեքէ թաղաւորէ կամ զմարդոյ ասաց երբեք :

Այսպէս քան յամենայն ժամանակս , առաւել ի ժամանակս Վաւթի եւ առ թաղաւորօք նորին որդեովք , խորհուրդ Օծելոյն՝ ի ձեռն կանխասաց պատգամաց մարգարէիցն , մեծաւ պատուով , լուսաւորագոյն քան զարեգակն յայտնէր :

Վաւթի զնոյն անդուստ ի վերուստ տեսեալ , ի սողմոսին անհամեմատ սքանչելի երզս առեալ նուագէ : Բազում անգամ ի մտի եղեալ զՍողոմոնի զիւրոյ որդւոյն փառս հռչակել , անդէն արտաքոյ իւրոց մտաց եղեալ , եւ անգր ի վեր ի բարձունս թռուցեալ , զայն՝ որ փառաւորագոյն եւ իմաստնագոյն քան զՍողոմոն էր¹² , տեսանէր : Արեւէր նմա Օծեալն նստեալ ի վերայ աթոռոյ , քան զարեգակն եւ քան զլուսին տեսական¹³ : Տեսանէր նա զամենայն ազգս պարտեալս առաջի ոտից նորա , որք եւ ի նմայն օրհնէին , ըստ առ Արրահամ եղելոյ աւետեացն : Ապա ի բարձրագոյնսն եւս թեւամուտ լինալ , տեսանէր զնա ի վայելութիւն սրբոցն , եւ յառաջ քան զարուսեակ , ելեալ մշտնջենաւորութեամբ ի ծոցոյ Հօր , քահանայ յաւիտեան՝ որոյ ոչ պայտաղատ ոք

զուցէ, եւ ոչ ինքն զոք պայազատեալ, կարգեալ սքանչեապէս, ոչ ըստ կարգին Ահարոնի, այլ ըստ կարգին Մեղքիսեղեկի, կարգ նորանշան զարմանալի՝ որում օրէնքն չէին ընդել եւ ծանօթ: Ատես զնա նստեալ ընդ աջմէն Աստուծոյ, հայեցեալ յերկնիցն բարձանց յիւր թշնամիան խորտակեալս: Յայնպիսի չքնաղ տեսնէ զարհուրեալ, եւ ընդ սքանչելական փառան սխրացեալ, տէր իւր զիւր որդին անուանէր¹⁴:

Տեսանէր զնա Գաւթիթ՝ զի Աստուած է, զոր Աստուածն օծ, առ ի թագաւորեցուցանելոյ զնա ի վերայ ամենայն երկրի, վասն ճշմարտութեան հեղութեան եւ արդարութեան¹⁵: Արոյ եւ մերձաւոր եւ ընտանի եղեալ հագուով աստուածեղէն խորհրդոցն, ինքնին զըուն զբարբառն ի բերանոյն լսէր յաւիտեանական Հօր, առ իւր Արդին առ միածինն բարբառեալ՝ եթէ Աս պսօր ծնայ գքեզ¹⁶: Յոր յաւելեալ Աստուծոյ եւ զաւետիս մշտնջենական անեղբ թագաւորութեանն, համաշխարհական ի վերայ ամենայն հեթանոսաց, անչափական անսահմանական, որում սահման աշխարհս միայն է: Առովեսցին հեթանոսք, եւ ժողովուրդք խորհեսցին ի սնոտիս. եւ թագաւորք եւ իշխանք ի զուր ժողովեցին¹⁷: Բարձրեան ծիծաղեսցի զնոքօք ի բարձանց վասն նոցա անստութեան խորհրդոցն. եւ հակառակ նոցա հաստատեսցէ զարքայութիւն Օծելոյ իւրոյ: Աւ զայն ի նոցունց իսկ վերայ հաստատեսցէ. եւ հարկ իսկ է նոցա՝ զի որք ըզՎարիսաօսի լուծն խղել ընկենուլ ջանային, նախ ինքեանք զանձինս ընդ նորա հնազանդութեամբն առնիցեն:

Թէպէտ եւ գիրք բազում անգամ վասն թագաւորութեան մեծին Օծելոյ յառաջագոյն բարբառեալ, մեծամեծս տային իմանալ, սակայն Աստուած չթագուցանէր ի Գաւթայ զթշնամանն՝ զոր կրելոց էր նա որ պրտուղ էր օրհնեալ որովայնի նորա: Տեղեակ այսմ լինել ժողովրդեանն Աստուծոյ կարի կարեւոր էր: Պարտ եւ պատշաճ էր Աստուծոյ զժողովուրդն թանձրամիտ ժամանակեան խոստմամբք զիւրեւ ածել, սակայն չէր արժան զնոսա թողուլ զի զլուխ ամենայն բարութեանց եւ իւրեանց վարձուց հաստուցումն, զմեծութիւնս մարդկեղէնս միայն համարիցին. նմին իրի իսկ եւ Աստուած յա-

ուճադոյն մեղմով եւ ընդ աղօտ զՕձեալն, զայն՝ զոր խոստացաւն եւ որում ցանկային, որ օրինակն էր կատարման եւ զոր այնպէսն սիրեաց, ի ցաւս ընկզմեալ ցուցանէր: Խաչն՝ իրրեւ զճշմարիտ աթոռ նորաքանչ թաղաւորիս, երեւէր Վաւթի: Տեսանէր զնորա ձեռսն եւ զոտս ծակեալ, եւ ոսկերք անդամոցն նորա ի վերայ մորթոյն երեւեալ¹⁸, ծանրաբեռն բեռամբ մարմնոյն կախեալ: Տեսանէր՝ զի զհանդերձսն բաժանէին. եւ վիճակս ի վերայ պատմութեանն արկանէին. լեղի եւ քացալս ի ծարաւ նորա արբուցանէին. ամենայն թշնամիք նորա շէկն ի վերայ նորա, եւ նորա արեամբն յաղէին¹⁹: Բայց իսկ եւ իսկ եւ զփառաւորութիւն եւ զուրքն՝ որ զնորա տառապանացն զհետ եկին, տեսանէր. զազգս երկրի նշմարէր, որք զիւրեանց Նստուածն՝ զոր երկայնաձիգ ժամանակաւ ընդ վայր հարեալ ի մոռացօնս դարձուցեալ, անդրէն ի միտս եկեալ յիշէին. զառաջինն ազքատք ի ճաշ անդր Օձեւոյն դային, եւ ապա մեծատունք եւ հարուստք. ամենեքին երկրպագուք եւ փառաւորիք նորա, եւ ինքն ի մէջ մեծի բազմամտիս ժողովոյ եկեղեցւոյ նստեալ, այս ինքն ի մէջ ժողովողեան՝ որ ի հեթանոսաց անտի, զՆստուծոյ անունն եւ զնորին զմշանջնաւոր ճշմարտութիւն իւրոց եղբարցն պատմէր:

Վաւթի՝ որ զայդ ամենայն ետես, ի միտ առ՝ եթէ թաղաւորութիւն իւրոյ որդւոյն չէր յայսմ աշխարհէ: Եւ չդարմանայր ինչ ընդ այն, քանզի զիտէր՝ եթէ անցաւոր է աշխարհս. զի թաղաւորն՝ որ եւ ի բարձ թաղաւորութեանն իսկ այնպէս խոնարհ էր, ճարտար զիտէր՝ եթէ չէ այնչափ ինչ ազնուագոյն բարձ եւ իշխանութիւն, մինչեւ զամենայն զիւր յոյս ի նմա կապիցէ, եւ աւարտ իւրոց անկալութեանցն զայն համարիցի:

Եւ յի ի մարդարեկից ոչ պակաս ինչ քան զնա զՕձեւոյն խորհուրդ տեսանէին. մեծամեծ եւ սքանչելի իմն ցանդ զնորա թաղաւորութենէն բարբառէին: Մի ոմն րչԲեթղահէմն տեսանէր, զիոքը քաղաքիկն Յուդայ, պայծառագոյն եղեալ վասն նորին ծննդեանն. եւ ապա անդէն մեղմով ի բարձրագոյնս մատուցեալ, այլ իմն ծնունդ տեսանէր, զառ ի Հօրէ մշանջնական ծնունդն²⁰. իսկ այլ ոմն զնորա մօրն կուսութիւն տեսանէր, եւ զոմն Լամնա-

նուէզ, Եստուած ընդ մեզ կուսածին ծննդեամբ, մանուկ զարմանալի՛ զոր եւ Եստուած իսկ անուանէ՝²¹ : Ոմն զնորա յիւր տաճարն մտանել նշմարէր²² . այլ ոք զփառաւորութիւնն ի գերեզմանին՝ ուր մահն պարտեցաւ²³ : Ե՛լ այնպէս հռչակաւոր եւ աղբական արարեալ զմեծաբանչ փառաւորութիւնն, չթաղուցանէին ինչ զանարդանն : Տեսանէին զնա վաճառակուր եղեալ վասն իւրոյ ժողովրդեան . եւ որչափ զնոց նայն գնեցաւ, այս ինքն է՛ գերեսուն արծաթին, եւ թէ՛ յինչ պէտս ի կիր արկին²⁴, եւ զայն եւս հաւաստեաւ գիտացին : Ի ժամանակին՝ զի մեծ եւ բարձրացեալ զնա տեսանէին, անդէն նախատ եւս եղեալ եւ արհամարհեալ ի մարդկանէ տեսանէին . այնպէս զարմանալի վասն անկաճութեանն, որպէս վասն մեծութեանն . յետին մարդկան, այր ցաւոյ՝ որ զմեզս մեր բառնայ, բարեգործեալ եւ փոխարէն չարիս գտեալ . եւ թէ՛ ոչ գոյր նորա տեսիլ եւ ոչ գեղեցկութիւն ի վերաց անտի, եւ մեք նորա վիրօքն բժրչկեցաք . եղեալ իրբեւ զսատժապարտ, ի մահ մատնեալ ընդ անօրէնս, եւ ի սպանդ վարեալ՝ իրբեւ զգառն անմեղ անմուռնչ կայ . եւ թէ՛ զաւակ երկայնակեաց ծնաներոց էր ի նմանէ, եւ վրէժխնդրութիւն ի վերայ ժողովրդեան իւրոյ՝ որ ոչն հաւատային, յայաներոց²⁵ : Եւ զի մի ինչ իւր իրօք պակաս մարդարէութիւնն իցէ, զթիւ համարոյ ամացն եւս մինչեւ ի նորա գալուստն, ճշդիւ վարկանին²⁶ . եւ բաց ի կուրութենէ չիք այլ պատճառք եւ բարուրք զնայն չճանաչերոյ :

Եւ ոչ միայն զՅիսուս Վրիտոս տեսանէին մարդարէքն, այլ եւ ինքեանք եւս առակ օրինակի նորա էին, եւ զնորա խորհուրդսն եւ մանաւանդ զչարչարանացն յանդիման կացուցանէին : Գրեթէ ամենեքին նոքա հալածանս վասն արդարութեան կրեցին . եւ յիւրեանց լլկութեանն՝ զՏէր մեր զանմեղն եւ զարդարն հալածեալ նկարէին : Օ՛վրդիա եւ զՎրիշա հանապաղ պատուհասակոճ առնէին : Վանիցս անդամ եւ Եսայի այսպն կատականաց ժողովրդեան եւ թաղաւորաց լինէր . որք եւ ապա զնա, բատ հաստատուն շրէիցն աւանդութեան, իւրեանց մուլեկան կատաղութեանն զոհեցին : Օ՛քարիա որդի Բարաբեայ քարկոճ եղև . Եղեկիէզ հանապաղ ի լլկանս

էր. իսկ Աշխիւիայի չարիքն անհնարինք էին, զոր չէ մարթ ճառիւք պատմել. Վանիէդ երկիցս ի զուք առիւծուց արկաւ. ամենայն ուրեք նոցա հակառակս բարբառէին եւ տառապեցուցանէին զնոսա, եւ ամենեքին նոքա յայտ առնեն իւրեանց օրինակաւ՝ եթէ հասարակաց Հրէիցն խակութիւն թէպէտ եւ զժամանակեան բարիս պահանջէր, առ ի զանձն յակաստանի կացուցանելոյ, սակայն որ հաստատուն միտս ունէին ի նոսա, արք սուրբք զարմանալիք՝ անդատին իսկ տառապանաց հացիւն սնանէին, եւ յառաջադոյն, առ ի սուրբ առնելոյ զանձինս, ի բաժակէ անտի պատրաստելոյ որդւոյն Աստուծոյ ըմպէին. բաժակ այնչափ առաւել դառն եւ դաժան, որչափ առաւել սուրբ էր Վրիստոս՝ որ զայն ըմպելոցն էր:

Բայց մարդարէքն առաւել յատակադոյն տեսանէին, եւ ազնուադոյնս պատմէին զօրհնութիւնն՝ որ ի ձեռն Օծելոյն ի վերայ հեթանոսաց սիռեցաւ: Աքանելի մարդարէն Ասայիաս՝ զարմանն Յիսակայ եւ զՎաւթի տեսանէր իբրեւ զնշան յԱստուծոյ շնորհեալ ազգաց եւ ազանց, զի ի նա կարգայցեն²⁷: Այրն այն վարակեալ ցաւովք, որոյ վերօքն մէք բժշկեցաք, ընտրեալ էր լուանալ զհեթանոսս ի ջուրն սրսկման սրբութեան²⁸, այս ինքն՝ իւրով արեամբն եւ մկրտութեամբ: Թաղաւորք շուք եւ դեալ նմա, ափիբերան լինէին առաջի նորա: Արոց ոչ պատմեցաւ վասն նորա՝ տեսանէին. եւ որոց չէր նայն ծանօթ եւ ընդել, կոչեցան ընդ նա պշուցեալ հայել: Տուեալ ի վկայութիւն հեթանոսաց, իշխան եւ հրամանատար ազգաց²⁹: Առ նովաւ ազգ անծանօթ եկեալ յարեցի ի ժողովուրդն Աստուծոյ, եւ հեթանոսք անդր յամենայն կուսաց խուռն ընթանայցեն: Վաս ինքն է արդարութիւն Աիովնի, որ իբրեւ զլոյս ծագեցէ, եւ փրկկութիւն նորա, որ իբրեւ փայլակն վառեցի: Աւ տեսցեն հեթանոսք զարդարն զայն, եւ ամենայն թաղաւորք ծանիցեն զայրն փառաւորեալ ի մարդարէան Աիովնի³⁰:

Գարձեալ ազնուադոյնս եւս նկարեալ մանրապատումն նշանակօք: Այր մի քաղցր եւ մարդասէր յոյժ, ընտրեալ յԱստուծոյ, ընդ որ հաճեցաւ անձն նորա, իբրաւունս հեթանոսաց հանցէ, եւ կղզիք ակն կալցին օրինայն նորա³¹. զի երբայեցիք զեւրոպացւոց աշխարհն եւ

զաշխարհս հեռաբնակս կողիս անուանեալ կոչէին: Ալ խոսով հարկանիցէ եւ ոչ շիտթ առնիցէ, այնչափ հեղ եւ խաղաղական լինիցի, մինչեւ ոչ որ զբարբառն նորա լուիցէ: **Օ** եղէզն ջաղջախեալ չառնիցէ, կոխան օտից իւրոց, եւ զպատրոյզն առկայծեալ մի շեջուացէ: **Օ** տկարսն եւ զորս ի մեղան կայցեն ոչ միայն չթողուցու ի վհատութիւն կործանել, այլ եւ քաղցրախառն բանիւք զնոսս կոչիցէ, եւ զիւր զբարերար ձեռնն ի նոսս կարկառուցու: **Օ** կուրաց աչս բանայցէ, բանդականաց եւ կալանաւորաց թողութիւն առնիցէ: **Ք**ան զիւր բարութիւնն ոչինչ նուազագոյն իւր զօրութիւնն գասնիցի: **Ք**ոյս բարուց նորա է զքաղցրութիւն ընդ սաստկութեան խառնել, եւ յայն սակրս իսկ նորին հեշտական բարբառն վաղվազակի յական թօթափել ի ծաղաց երկրի մինչեւ ի ծաղս նորուն անցանիցէ, եւ առանց զմարդիկ ընդ միմեանս արկանելոյ, զամենայն երկիր դրդուիցէ: **Զ**է ինչ նա խիտտ, եւ ոչ սաստիկ ինչ որ. եւ այն՝ զոր մինչ դեռ ի հրէաստանին էր, հազիւ որ ճանաչէր, ոչ միայն հաստատութիւն ուխտի ժողովորդեանն լինիցի, այլ եւ ամենայն հեթանոսաց լոյս ծաղիցէ: **Մ**ռ նորա մեծասքանչ թաղաւորութեամբն՝ ասորեստանեայք եւ եգիպտացիք եկեալ յեցեալ ընդ ժողովորդեանն Աստուծոյ միամտիցեն: **Մ**մենեքեան խարայեղացիք իցեն, բնաւք սուրբ լինիցին: **Մ**րուսաղէմ ոչ եւս առանձինն ուրեք քաղաք ինչ իցէ, այլ առակ օրինակի նորանշան միարանութեանն՝ ուր ամենայն ազգ յարդարեալք միաժողով կայցեն. **Մ**ւրոպիա եւ զիրէաստան եւ ասիացւոց աշխարհն զաւետարանիչսն ընդունիցին, զորս Աստուած կնքիցէ եւ առաքիցէ ի հեթանոսս առ ի զիւր փառան յայտնելոյ: **Մ**նարեալքն՝ որոց ցայնժամ Խարայեղանուն կոչէր, այնու հետեւ յայլ անուն կոչեացին. յորում կատարումն աւետեաց, եւ ամէնն երանելի դրոշմեալ կայցէ: **Ք**ահահանայք եւ զեւտացիք՝ որք մինչեւ ցայնժամ յԱհարովն սերկին, յայնմ հետէ ի հեթանոսաց անտի լինիցին³²: **Մ**որ իմն պատարաք՝ որ առաւել սուրբ իցէ եւ յոյժ ընդունելի քան զորս ի հնումն մատչէին, զնոսին փոխանակիցէ. եւ յայտնի լինիցի՝ եթէ ընդէր Ղաւիթ նոր որ քահանայապետ յայլմէ կարգէ տայր օծանել: **Մ**րդարն յերկնից իրր զմանրացող իջանիցէ. եւ երկիր զիւր

բողոքն արձակիցէ. եւ նոյն՝ ինքն իւրովի կենարարն իցէ, եւ հանգերձ նովաւ եւ արդարութիւնն համապայծառ ծագիցէ: Արկինք եւ երկիր ի մի վայր եկեալ երկնիցեն, եւ իբրեւ զդեղեցիկ հաւանընկերս միարան, զայն՝ որ խառն երկնաւոր եւ երկրաւոր իցէ, ծնանիցին: Աոր իմն միտս զառաքինութենէ ունիցին մարդիկ, թեքեալք ի նորա օրինակսն եւ ի կենարար վարդապետութեանն. եւ շնորհք Հոգւոյն՝ զոր նայն սփռիցէ, զնոսին զառաքինութեանն կերպարանս ի սիրտս քանդակիցեն: Ամենայն ինչ նորա դալտեամբն յայլափոխ կերպարանս շրջիցի. եւ Աստուած իւրովի յիւր անձն երզնու՝ եթէ ամենայն ծուեր կրկնեսցի առաջի նորա, եւ ամենայն լեզու զնորա մեծազօր զօրութիւնն դաւանիցէ³³:

Ահաւասիկ մասն ինչ սքանչելեացն՝ զոր Աստուած կանխեաց եւ եցոյց մարգարէից, առ թագաւորօքն որդւովք Վաւթի, եւ Վաւթի իսկ զլիտովն յառաջագոյն քան զնոսա: Ամենեքին զորդւոյն Աստուծոյ պատմութիւնն՝ որ հանգերձեալ էր եւ Աբրահամու եւ Վաւթի որդի լինել, անդուստ ի վերուստ գրեցին: Ինչպէս ամենայն զայս օրինակ ի կարգի աստուածեղէն խորհրդոյն կատարէր, եւ նոյն Օծեալն ի հեռուստ զաւակ Աբրահամու ցուցեալ, ի մօտոյ Վաւթի եւս որդի յայտնէր. արքայութիւն մշտնջենաւորական խոստացաւ նմա, ստոյգ նշանակ եւ պտուղ նորա յայտնութեանն՝ աստուածածաւնօթն լինել ամենայն տիեզերաց կարգեցաւ. դարձն հեթանոսաց, եւ ամենայն ազգաց երկրի օրհնել, որ անդուստ ի վերուստ Աբրահամու, Ռահակայ եւ Յակովբայ խոստացաւ, միւսանդամ անդրէն հաստատէր, եւ բովանդակ Աստուծոյ ժողովուրդն նովին յուսով կեայր:

Սակայն Աստուած տակաւին նորանշան օրինակաւ առաջնորդել ժողովրդեանն յօժարէր: Միւսանդամ ուխտ ընդ Վաւթի հաստատէր, եւ յանձն առնոյր վերակացու լինել նմա եւ ըստ նմանէ թագաւորացն իւրոց պայազատաց, եթէ ի հրամանսն՝ զոր Մովսիսիւն ետ, գնայցեն. իսկ եթէ հետիցեն, անհնարին պատիժս պատուհասից կրիցեն³⁴: Վաւթի սակաւիկ ինչ մոռացօնս արարեալ, նախ ինքն պատժեցաւ³⁵. այլ իբրեւ ի զղձումն եկն, եւ զանձին վրէպս ուղղեաց, ի բազում բարիս վայելեաց, եւ օրի-

նակ բարւոյ թագաւորի եղև . եւ թագաւորութիւնն յիւրում տոհմին հաստատեցաւ : Սողունն նորին որդի մինչ զեռ զնորա աստուածպաշտութիւնն յանձին ունէր , երանելի էր . այլ ի ծերութեանն խտորէր , եւ Աստուած որ զընդայրն եւ ինայէր ի նա վասն Գաւթի ծառայի իւրոյ , յայտ արար՝ եթէ պատիժս ի վերայ առ նորին որդւով ածիցէ³⁵ : Աւ սովին տայ հարց ի միտ առնուլ՝ եթէ ըստ իւրոց դատաստանացն զաղտնեաց , յետ մահուան իսկ նոցա տայ տեւել զհաստեցմունսն եւ զպատուհասն ըստ իւրաքանչիւր արժանեաց . եւ առ ի շահ օգտի անձանց , այս ինքն յօգուտ իւրեանց արդատոհմին ընդոստուցեալ զնոսս ընդ հնազանդութեամբ օրինացն պահէ : Աւ զի Աստուծոյ սպառնալիքն ի դուլս ելանիցեն , Ռարովամ՝ ժպիրհ եւ յանդուզն , վատ խրատուացն անսայր . վասն որոյ եւ տասն ցեղքն ի նմանէ , յետս կային³⁷ : Սինչ զեռ տասն ցեղքն՝ որ ապստամբեցանն եւ հերձան , յիւրեանց Աստուծոյն եւ ի թագաւորէն մեկուսի կային , ազգն յուղայսկան ընդ Աստուծոյ եւ ընդ Գաւթի՝ զոր նայն ընարեաց , միամտեալ , յուխտին եւ ի հաւատսն Արրամու կային մնային : Պ եւտացիքն ընդ Բենիամինի եկեալ ի նոսա յարեցան , եւ զթագաւորութիւն ժողովրդեանն Աստուծոյ յահաստանի կացուցանէին , բայց ի Յուդայ ելանէր անուն թագաւորութեանն . մովսիսականքն հանդերձ ամենայն խորութեամբքն ի նոսա հաստատուն պահէին : Թէպէտ եւ ընդ կռապաշտութեամբ եւ ընդ անհնարին եղծադործն ապականութեամբ արկին զանձինս տասն ցեղքն , սակայն Աստուած զուխտն՝ զոր ընդ Արրամու եւ ընդ Սահակայ եւ ընդ Յակորայ հաստատեաց , տակաւին յիշէր : Աստուածեղէն օրէնքն չէին ամենեւին ի մէջ ապստամբացն այնոցիկ շեջեալ . եւ Աստուած հանապազ անթիւ նշանօքն , եւ յաճախ ի ձեռն մարգարէից իւրոց թելադիր լեալ զարթուցանէր զնոսս ուշաբերել ապաշխարութեան : Իսկ նոցա սալացեալ խտացեալ ի մեղսն , այնու հետեւ չժուժայր նոցա , այլ զնոսս յերկրէն մերժէր , վայրավատինս առանց յուսոյ միւսանդամ ի նոյն յարգարելոյ³³ :

Սակայն Տօլբիթայ իրքն՝ որ զայնու ժամանակաւ ի սկզբան գերութեանն եղեն , զընտրելոցն Աստուծոյ զաղ-

նուականութիւն, որ ի մէջ ցեղից բաժանելոց կացին, յայտ առնեն: Եւրոն աստուածապաշտ յառաջ քան զնոցա վտարանդել, ի մէջ նոցա բնակեալ, ոչ միայն զանձըն անարատ յիւրոց եղբարցն ընտանեկաց ամբարշտութենէ, որ ի կուռսն զառաձան, պահէր. այլ եւ զօրէնան կատարէր եւ յայտ յանդիման երթեալ յԱրուսաղէմ ի տաճարին երկիր Եստուծոյ պագանէր. ոչ չարացն օրինակ եւ ոչ մարդկօրէն ինչ երկեւղ ազնուականութեանն նորա խափան ինչ լինել մարթէր³⁹: Ատարանդի եւ հալածական ի Նինուէ քաղաքի, հանդերձ իւրով տամբն չկասէր յաստուածապաշտ փութոյն. եւ զարմանալի օրինակաւ նա եւ նորին որդի աստ եւս զիւրեանց հաւատոցն փոխարէնս ընկալեալ, յայտ առնեն՝ եթէ Եստուած, թէպէտ գերութիւն հասանէր թէպէտ հալածանք, դիտէր ազգի ազգի հնարիւք զիւր ծառայան՝ օրինացն օրհնութեամբ լնուլ. նոքիմբ իսկ չարեօքն՝ զորս կրելոց, էին ի բարձրագոյն խորհուրդս զնոսա թռուցեալ:

Տովբիթայ օրինակօքն եւ նորին սրբովք խրատութն խրայեղացիք զԵստուծոյ ձեռնն՝ որ զնոսայն պատուհասէր, ճանաչել յորդորէին, դէթ յայնժամ՝ յորժամ ընդ պատժովքն էին. բայց գրեթէ ամենեքին ի յամառութեան կային: Իսկ յուրայեանքն փոխանակ ի նոցա պատուհասէն մտաւարժս լինելոյ, ի նոսա հայեցեալ զնոյն օրինակ ստահալութիւն եւ ինքեանք ստահակէին: Եստուած չկայր ի բաց ի զգուշացուցանելոյ զնոսա ի ձեռն մարդարեից իւրոց՝ զորս առաքէրն առ նոսա, յարուցեալ ի գիշերի եւ կանխեալ ընդ առաւօտն, որպէս ինքն իսկ ասէ, յաճախագութն հայր առ ի զիւր խնամն յայտ առնելոյ: Եւ ի նոցա ապախտաւորութենէն նեղեալ, ծանրացասումն լինէր յոյժ նոցա. եւ սպառնայր նոցա, զոր օրինակ ընդ եղբարս իւրեանց ստահակեալս, նոյնպէս եւ ընդ նոսա զնալ⁴⁰:

Չիք ինչ այնպէս նշանաւոր ի պատմութեան ժողովուրդեանն Եստուծոյ, քան զսպաս պաշտաման մարդարէիցն: Եւք զատուցեալք ի միջոյ ժողովուրդեանն մենակեցութեամբ եւ հանդերձիւք, ի տունս ուրեք միաժողով բնակեալք, ընդ միով գլխաւորաւ՝ զոր Եստուած տայր նոցա. աղքատութեամբ եւ սպաշխարութեամբ իւրեանց

օրինակ լինէին վշտամբերութեանն՝ որ ընդ աւետարանաւն երեւելոց էր: Աւ ինքն Աստուած իւրովի ընդ նոսա ընդելեալ զինչանէր, եւ զիւր. ընդ նոսա ընդելութիւնն առաջի ժողովրդեանն պայծառազոյն դործէր. բայց առաւել յատկազոյն ի ժամանակին՝ յորում յայնպիսի անհանձարութիւնս հատան, մինչեւ ի կարծիս անկանել՝ եթէ կռապաշտութիւնն զաստուածեղէն օրէնսն ամենեւին եղծանիցէ: Յայնպիսի հիբութիւն հասեալ, մարդարէքն եւ բանիւ եւ դրով զԱստուծոյ սպառնալինն, եւ զվկայութիւնն՝ զոր վասն նորին ճշմարտութեան վկայէին, յամենայն կողմանց հնչեցուցանէին⁴¹: Աոցա դրեանն յամենեցուն ձեռս էր, եւ բազում զգուշութեամբ ի յիշտակ մշտնջենաւոր դալոց ժամանակաց պահէր: Արաստուածապաշտ որ ի ժողովրդեանն էր, եկեալ ընդ նոսա միաբանէր. եւ տեսանեմք իսկ՝ զի ի մէջ իսրայէղացւոց, ուր կռապաշտութիւն յամախէր, որ հաստատուն հաւատացեալքն էին՝ զշարաթս եւ զածնս տարեկանաց կարդեալս յօրինացն Մովսիսի ընդ մարդարէսն փափուկ ունէին: Արք եւ ուղղագործացն խրախոյս տային հաստատուն կալ յուխտին⁴²: Բազումք ի նոցանէ ի մահ մանեցան. եւ զնոցա զհետ երթեալ, շառք ի հաւատացելոց ի ժամանակին՝ յորում անհնարին զեղծաւ ազգն, այս ինքն՝ առ թագաւորութեամբն Մանասէի, զարիւնս իւրեանց վասն ճշմարտութեան հեղին, որպէս զի եւ ոչ մի ժամ առանց վկայութեան ճշմարտութիւնն մնայր⁴³:

Այսպէս ժողովուրդն Աստուծոյ տակաւին տեւէր, մարդարէք ի մէջ նոցա բնակէին, բազմութիւն աստուածապաշտաց յայտ յանդիման մերկադրուխ զօրէնսն պահէին, ընդ նոսա եւ ընդ քահանայսն զեւտացիս ընդ որդիսն Սագովկայ, որք որպէս ասէն Ազեկիէդ, պահեցին զպահպանութիւնս սրբութեանց⁴⁴ ի մոլորել տանն Իսրայէղէ:

Արդ թէպէտ եւ մարդարէքն կային, եւ քահանայք հաւատարիմք հանդերձ ժողովրդեամբն զօրէնսն պահէին, սակայն յամախ եւ ի մէջ ազգին Յուդայ իշխանքն եւ խառնիճաղանձն ի կռապաշտութիւն օտնառէին, ըստ օրինակի իսրայէղացւոցն՝ որք կործանեցան: Թէպէտ եւ թագաւորքն զԱստուած հարցն իւրեանց մոռացան, սա-

կայն նա տակաւին ժուժայր նոցա վասն Վաւթի ծառայի իւրոյ . քանզի Վաւթի իմն հանապազ երեսս առնէր : Թագաւորքն որդիք Վաւթի յորժամ հայրենի առաքինութեանն նմանօղ լինէին , Լստուած բազում նորագործ նորանշան պքանչելիս վասն նոցա գործէր . այլ իբրև ի հարցն ավնուականութենէ խոտորէին , անդէն զանհնարին ուժոյ ձեռինն Լստուծոյ զհորձ առնուին , որ ծանրէրն ի վերայ նոցա : Եգիպտացւոց եւ Եսորւոց , եւ առաւել ասորեստանեացն եւ բարեղացւոց թագաւորք , գործի վրէժխնդրութեանն Լստուծոյ լինէին :

Ենորէնութիւն բազմանայր . եւ Լստուած յարեւելից աշխարհին ուժգնագոյն եւ զժնդակագոյն քան զամենայն թագաւորսն՝ որ ցայնժամն եղեն , յարոյց զՆարուքոզոնոսոր արքայ բարեղացւոց , քան զամենայն աշխարհակալս ահաւորագոյն . զնա Լստուած բացուստ ի բաց ցուցանէր ⁴⁵ արդաց եւ աղանց եւ թագաւորաց , վրէժխնդիր կարգեալ առ ի զնոսայն պատժելոյ : Մերձենայր նա , եւ ահ եւ երկեւղ երթայր առաջի նորա : Օռառջինն՝ զԵրուսաղէմ առնոյր , եւ զմասն ինչ ի բնակաց անտի ի Բարեղոն տարեալ բնակեցուցանէր ⁴⁶ : Եւ ոչ որ յաշխարհին մնացին , եւ ոչ որ գերեցանն , թէպէտ եւ նոցա Երեմիաս եւ սոցա Եղեկիէղ թելադիր լինէին , յապաշխարել եկին . քան զսուրբ մարգարէսն , զիղձսն՝ որ տեսիլս սուստ մարգարեանային նոցա եւ զողորմն բարբառէին ի մեղս իւրեանց , նախամեծար առնէին ⁴⁷ : Սրէժխնդիրն միւսանգամ արագ արագ ի հրէաստան մխէր . եւ Երուսաղէմ ընդ ծանրատաղտուկ լծովն մտանէր , այլ ոչ ամենեւին ի վեր կործանէր : Եւ յայնորիկ իբրև զկապիձն չարեաց լցին , եւ հանդերձ տկարութեամբն եւ ամբարտաւանութիւն յաճախէր , Նարուքոզոնոսոր եկեալ հարթյատակ առնէր զքաղաքն եւ յաղարտ վարէր ⁴⁸ :

Լստուած յիւր սրբութիւնն իսկ ոչ խնայեաց ⁴⁹ : Եւ այն հոյակապ ընդ ամենայն տիեզերս շքեղ տաճարն՝ որ մշանջենաւոր լինելոց էր եթէ երբայեցիքն յաստուածպաշտութենէն չէին զեղծեալ , յասորեստանեացն հրձիգ լինէր : Սպարապար շրեայքն վեր ի վայր յեղձեղուն , Տաճարն Լստուծոյ , տաճարն Լստուծոյ , տա-

ճարն Աստուծոյ ի միջի մերում⁵⁰, որպէս թէ նուիրական տաճարն մարթէր նոցա առանձինն պատասպարան լինել : Աստուած յայտ իմն առնել կամէր՝ եթէ ոչ ի ձեռագործ ինչ տաճարս բնակիցէ, այլ զողիս հաւատարիմս խնդրէ դառնել : Յայն սակա իսկ խլեաց զտաճարն, եւ զգանձն եղ յաւար եւ յափշտակութիւն . եւ զանօթան ծանրագինս զնուիրեայն յաստուածապաշտ թաղաւորաց, ի ձեռս անօրէն թաղաւորին մասնէր :

Այլ ժողովրդեանն Աստուծոյ ոսնառել, հանդերձեալ էր խրատ ամենայն տիեզերաց լինել : Յանօրէն թաղաւորէ անտի՛ որ ամբարիշտ էր եւ յաղթօղ, զինչ ինչ աշխարհակալքն իցեն, ի միտ առնուցումք : Բազումք ի նոցանէ անօթք Աստուծոյ վրէժխնդրութեանն են, Աստուած նոքօք զիւր արգարութիւն ի կիր արկանէ, զոր եւ յետոյ ապա ի նոցա զլուս զարձուցանէ : Աբուքոզոնոսոր արքայ զաստուածեղէն զօրութիւնն ազեալ, եւ նովին պաշտամամբ անհնարին առ պարտել երեւեալ, զթշնամիս ժողովրդեան Աստուծոյ կշտամբէր . զեզովմայեցւոց, զամնացւոց եւ զմովարացւոց երկիրն վերփէր աւերէր, զԱսորոց թաղաւորսն խլէր . եւ զեզիպտացւոց աշխարհն, որ բազում անգամ ի վերայ հրէաստանի երանէին եւ հարստահարէին, կապուտ կողպուտ առնէր, եւ լինէին եզիպտացիքն Աբուքոզոնոսորայ ի ծառայս պատարագարեա⁵¹ . նորին բռնութիւն եւ Հրէից եւս, քանզի յԱստուծոյ երկայնատութենէն՝ որ յապագէրն նոցա, շահել չգիտացին, առ եղեռանէ լինէր : Բնաւանկանէր, ամենայն խորտակէր յաստուածեղէն արգարութենէն՝ որոյ Աբուքոզոնոսոր արքայ սպասաւոր էր . բայց եւ ինքն իսկ կործանելոց էր, եւ Աստուած՝ որ ի ձեռն առ զթաղաւորն առ ի զիւր որդիսն պատուհասելոյ, եւ զթշնամիս եղծանելոյ, նմա իւրովի զիւր մեծագոր ձեռնն պահէր :

Բայց թէ զինչ ի վերայ թաղաւորին՝ որ զնոսայն պատժէր, պատահարք պատահելոց էին, եւ զինչ ի վերայ քաղեկացւոց թաղաւորութեանն՝ ուր նոքա հանդերձեալ էին ի ծառայութիւն վտարանդել, Աստուած յառաջագոյն իւրոց որդւոցն պատմէր : Օ՛ր մի ընդ ամ պարշտաց փառս եւ ընդ նոցա պերճացեալ ամբարտաւա-

նեալ իշխանութիւնն զարմացեալ ի վարանս ինչ բմբրոնիցին, մարդարէքն յառաջագոյն յայտ առնէին՝ եթէ սակաւժամանակեայ լինելոց է: Ասայի՛ որ անբուստ ի վերուստ յառաջագոյն քան զնորին ծնունդն, զԱարուքողոնոստրայ փառան եւ զնորա անհանձարական ամբարտաւանութիւնն ետես, զանկանելն եւս զնորա եւ զնորին թագաւորութեան կանխաւ եցոյց⁵²: Պարթէ իբրեւ ոչ ինչ իմն էր Բարեղոն, մինչ մարդարէս այս զնորա փառաւորութիւն, եւ յետ սակաւ միոյ զկործանումնն տեսանէր: Արդ շքշքումն փոփոխելոյ քաղաքաց եւ թագաւորութեանց՝ որք զԱստուծոյ ժողովուրդն սառսպեցուցանէին, կամ շահս ի նոցա կորստենէն շահէին, ի նորա մարդարէութիւնսն գրեալ էր: Յառաջախօսութիւնքն արագ արագ ի գլուխ ելանէին. եւ Հրեայք՝ որ այնպէս սաստիկ պատիժ պատուհասի կրեցին, յառաջագոյն կամ ի միասին կամ յետոյ, ըստ կանխախօսութեան իւրեանց մարդարէիցն, ոչ միայն զՇամրին, եւ զԱդովմ, եւ զՊաղա, եւ զԱսկաղոն, եւ զՎամասկոս, զքաղաքս ամենացւոց եւ զմովսրացւոց՝ որ ընդ նոսա անհաշտ թշնամութիւն ունէին, կործանեալս տեսանէին, այլ եւ զքաղաքս թագաւորութեան մեծագոր թագաւորաց. զՕուրքաղաք զիշխանն ծովու, զՏայանիս, զՍեմիիս, զԹերէհարեւր դրամիք հանդերձ ամենայն մեծութեամբքն Սեսոստրի, զԱինուէ իսկ զլիտվին, զաթոռ թագաւորացն ասորեստանեաց՝ իւրոց հալածչաց, եւ զհպարտ զտրարհաւաճեալ զբարեղացւոց քաղաքն, մեծայաղթ լցեալ աւարօք ազգայն՝ որոց յաղթեաց:

Արդարեւ երուսաղէմացւոց քաղաքն զայնու ժամանակաւ վասն ամբարշտութեան ազգին կորնչէր, այլ Աստուած ամենեւին զամենայն յոյս ոչ երարձ ի նոցանէ: Ասայի՛ որ զնորին կործանումն յառաջագոյն յայտ արար, կանխեաց եւ բարբառեցաւ նոյնպէս վասն նորին անդրէն փառօք յարդարելոյ. եւ զԱլուրոս զնորին ազատիչ երկերիւր ամաւ կանուխ յականէ յանուանէ ծանուցանէր⁵³: Արեմիա՛ որ այնպէս ճշգիւ գտակաւ անհանձարիցն եւ ապաշնորհաց զիւրեանց կորուստն մօտ առ կուրծս ցուցանէր, զդարձն եւս նոցա յետ եւթանասուն ամի գերուութեանն մարդարեացաւ⁵⁴: Ի ժամանակին՝ յորում վտա-

բանդի էր ժողովուրդն մեծապատիւ վասն մարդարեկիցն մեծարէր . զերիք ամայիք՝ մեծարարբառ թաղաւորաց եւ աղզաց զանհնարին զահագին դատաստանն եկեալ հասեալ դուշակէին : Վարուքողոնոսոր՝ որ կամէն երկրրպագութիւն առնուլ, ինքնին անկեալ Վանիէղի երկիր պապանէր, սքանչացեալ ընդ ծածուկ աստուածեղէն խորհուրդան՝ զորս նայն յայտնէր նմա . եւ զիւր վճիռն եւս ի նմանէ ուսանէր, որ վտղվադակի կատարեցաւ⁵⁵ : Իշխանս այս մեծայաղթ ի Ռարեղոն քաղաքի՝ զոր ինքն մեծացոյց եւ պնդեաց, եւ ալնուազոյնս ամենեւին եւ չնաշխարհիկ մեծապայծառ յօրինեաց⁵⁶, թաղաւորէր . բայց Աստուած անդէն ի նմին քաղաքի կամէր վնորա առ բարտաւանութիւնն ցածուցանել : Արանելն եւ իրր անհնարին առ խոցել համարեալ ի ճակատու եւ ընդ բնաւ ժամանակս իւրոց յաղթութեանցն, հանդերձեալ էր ըստ Ազեկիէղե պատգամացն յապարանս իւր կորնչել⁵⁷ : Մինչ դեռ զարմոցեալ ընդ իւր մեծութիւնն եւ ընդ Ռարեղոնի դեղեցիութիւնն, մեծամեալ վերագոյն քան զմարդիկ լինել կամէր, աստուածահար եղեալ ի մտաց եւս անկանէր, եւ ի մէջ գազանաց երթեալ բնակէր⁵⁸ : Ապա ի ժամանակեալ ժամուն՝ որպէս Վանիէղն դուշակեաց, ի միտս եկեալ դառնայր, եւ զՏէր Աստուած երկնից եւ երկրի ճանաչէր, զմեծազօր զօրութեանն նորա զագզուսն ընկալեալ : Այլ նորին պայտալտօք շահս ինչ ի նորա օրինակէն ոչ շահէին :

Ռարեղացւոց իրքն յաղմկի եւ ի խռովութեան էին . եւ ժամագիրն նկատեալ ի մարդարեկից վասն նորոգութեան Զուգայ ի մէջ այնպիսի աղմկի հասանէր : Ալլուրոս Վարաց եւ Պարսից թաղաւորեալ, հասանէր հարկանէր եւ զամենեսին ընդ ձեռամբ նուածէր⁵⁹ : Մեղմով ի վերայ քաղղեացւոց աշխարհին զօրաժողով լինէր, խաղայր դնայր, այլ բազում անդամ ի ճանապարհին խտրանէր : Համբան ի հեռաստանէ տարածանէր, որպէս ասացն իսկ Արեմիա⁶⁰ . ապա հոտօրէն ի վերայ յարձակէր : Ռարեղացւոց քաղաքն, թէպէտ եւ մարդարեքն յաճակ սպառնային, յեցեալ ի հպարտութիւն ամբարտաւանութեան, չապաշխարէր . տեսանէր զիւր յաղթօրն եկեալ հասեալ, եւ յընչաց քերէր : Ի մեծութիւնս իւր, եւ յաշ-

տարակին մահարձանօք զարդարեալս, յազգան անթիւս, ի նորանշան պարիսպն՝ որ բովանդակ վաշխարհն շուրջ փակէր, որպէս հինք վկայեն⁶¹, եւ ի յաճախութիւն պաշարաց իւրոց մեծամտեալ՝ բարձրացաւ սիրտ նորա: Շուրջ պաշարեալ ժամանակս բազումն, եւ ոչ ուստեք նեղեալ, զիւր թշնամիսն եւ զփոսն՝ զորս Աիւրոսն փութէր, ծաղը արարեալ արհամարհէր. ի խնձոյս եւ ի կաքաւս եւ յանօրէն լիտութիւնս հատեալ էին: Բաղտասար արքայ Վարուքոդոնոսորայ թոռն, իրբեւ զնա ամբարտաւան, այլ փստ արանց, առնէր կոչունս մեծաւ պատրաստութեամբ եւ բազում առատութեամբ նախարարաց իւրոց եւ ամենայն մեծամեծաց աւագանւոյն: Անհարին առատութեամբ դործէր տաճարին խրախուրթիւն: Բաղտասար զսպաս սրբութեան երուսաղէմացւոց տաճարին, որ անդր յաւար երթեալ էին, տայր ածել ի կոչունան, եւ պղծութիւն ընդ զեղխութեան խառնէր: Բարկութիւն Աստուծոյ վաղվաղակի յայտնէր. թաթ ձեռին յաստուածակոյս կողմանէ բանս ահազինս դրէր ի վերայ որմոյ տաճարին՝ ուր զխրախուրթիւնն առնէին⁶²: Վանիէղ զմիտս բանիցն մեկնէր. մարդարէս այս՝ որպէս զանհարին կործանումն Վարուքոդոնոսորայ հաւոյն յառաջագոյն պատմեաց, նոյնպունակ եւ թոռին նորա յայտարար զըարկութիւնն՝ որ անդէն իսկ մտաալուտ ի վերայ հասանելոց էր: Բարեղացւոց քաղաքն ի Աիւրոսէ խրամատէր, եւ Աստուծոյ բանքն արդիւնք լինէին: Աիւրոս զգեան Երաճանի ի փոսն՝ զորս փորեաց, դարձուցանէր. եւ անցեալ ընդ հունն, յանկարծօրէն յեղակարծումն ի քաղաքն մտանէր:

Աւ այսպէս հպարտացեալ քաղաքն, ըստ բարբառոյ մարդարէիցն, յաւար եւ ի յափշտակութիւն Մարաց եւ Պարսից եւ Աիւրոսի լինէր. հանդերձ նովաւ եւ քաղղեացւոց հարստութիւնն՝ որ զայլ բազում թաղաւորութիւնս տապալեաց, վախճանէր: Խորտակեցաւ եւ մանրեցաւ ուռնն ամենայն երկրի: Օսոյն յառաջագոյն իսկ յայտարար Արեմիա՝ եթէ Արեկ Տէր զաւազանն՝ որով եհար զազոս⁶³: Վոյնդունակ եւ Ասայեայ դուշակեալ էր. ժողովուրդք՝ որ ընդ լծով էին թաղաւորացն քաղղեացւոց, անդէն եւ զնոսա իսկ ընդ լծով տեսանէին: Ա-

մենեքեան ասէին⁶⁴, Եւ դու իրբեւ զմեզ ըմբռնեցար, եւ ընդ մեզ համարեցար: Գու ասէիր ի մտի քում. ելից յերկինս, ի վերոյ քան զաստեղս երկնից արկից զաթոռ իմ, եղէց նմանօղ բարձրելոյն:

Եւ զկործանումն եւս զնորա կանուխ ասաց Եսայի. Ընկաւ, ասէ, կործանեցաւ Բարեղովն, եւ ամենայն պատկերք նորա եւ ձեռագործք իւր կործանեցան յերկրի. անկաւ Բէդ, խորտակեցաւ Գաղովն⁶⁵: ՏՕ ի Պարսիկք թշնամիք նոցա, քանզի արեւասպաշտք էին, դժկամակ լինէին ընդ կուռնն, եւ ընդ թաղաւորան՝ որ հանգիտապատիւ զից համարէին: Բայց զինքն կորեաւ Բարեղուն. այնպէս՝ որպէս մարդարէքն դուշակեցին. ցամաքեցան Չուրք նորա, որպէս ասէն Արեմիա⁶⁶, զի տացեն անցս յաղթողին. մինչ զեռ արբեալ էին եւ թմրեալ, յուրախութեան իւրեանց մատնեցան, որպէս ասէ նոյն մարդարէ, անկան ի բուռն թշնամեաց իւրեանց, եւ յորուգայթ՝ զոր ոչ զխտէին, ըմբռնեցան⁶⁷: Բնդ սուր հանին զամենայն բնակիչս աշխարհին. քանզի Մարք՝ յորոց պարտեցանն, զարծաթ եւ զոսկի ոչինչ համարէին⁶⁸, ասէ Եսայի, այլ վռէժ առնուլ փութային, եւ յաղեցուցանել զանցադ զցասումն իւրեանց կործանմամբ անողորմ աղբին՝ որ ամբարտաւանութեամբն ամենեցուն ատելի էր: Գուժկան դուժկանի զիպէր դոյժ առնել թաղաւորին բարեղացուոց՝ թէ առաւ քաղաքն նորա⁶⁹. եւ զայդ Արեմիա յայտ արար: Ըստեղադէտքն եւ քաղեայք՝ յորս յուսացեալ էին, որք մշանջենական թաղաւորութիւն խոստանային նոցա, յաւարառուացն իւրեանց փրկել ըզնոսա ոչ կարացին. եւ զչոյն Եսայի եւ Արեմիա միաբան բարբառեցան:

Ի մէջ անհարկն կոտորածոյ, Հրեայք՝ որ յառաջագոյն իրազգածն եղեն, ապրեցան ի սրոյն սուսերի: Աիւրոս թաղաւոր՝ որ նովին յաղթութեամբ միահամուռ զարեւելից աշխարհն կալաւ, աստուածեղէն աստուածամերձ զաղզն զայն համարէր, թէպէտ եւ բաղում անգամ նկուն եղեալ զնոսա տեսանէր: Տարմացեալ ընդ կանխասացիկն պատգամս՝ որ զնորա յաղթութիւնն դուշակէին, խոստովան լինէր՝ եթէ Աստուած երկնից, զոր Հրեայքն սրաշտեն, ետ նմա զթաղաւորութիւնն. եւ

խակ եւ խակ յառաջնում ամի թաղաւորութեան իւրոյ, զիւր ազնուականութիւնն ցուցեալ, զտաճարն եւ զժողովուրդն Աստուծոյ վերատին յարդարէր⁷⁰ :

Ո՞ այն ոք իցէ, որ ոչ ընդ Աստուծոյ տեսութիւնն զարմանայցէ, այնպէս յայտ յանդիմանն ի վերայ Հրէիցն եւ քաղզեացւոց, ի վերայ Արուսաղէմի եւ Բաբելոնի երեւեալ: Վամեցեալ Աստուծոյ զերկոսեան զնոսա պատուհասել, կանխեաց եւ բարբառեցաւ մարդարէիւքն, որպէս զի նորա զօրութեանն ակահ լինիցին, եթէ ինքն է միայն՝ որ զայն ամենայն գործէ: Արուսաղէմ եւ Բաբելոն ի նմին ժամանակի, եւ ի նոցունց մարդարէից զսպառնալիսն լուեալ, մի ըստ միոջէ ի նկատեալ ժամանակին կործանէին:

Բայց Աստուած աստ զմեծ խորհուրդ երկոցունց պատուհասիցն՝ զորս նայն ի կիր արկանէ, յայտնադոյն եցոյց. մի պատուհասն խստութեանն ի վերայ քաղզեացւոցն, եւ մեւսն զթութեանն հօր ի վերայ երբայեցւոցն՝ որ են նորա որդիք:

Վաղզեացւոցն ամբարտաւանութիւն, ազգին նկարագիր՝ յոր ամենեքին միտեալ էին, ամենեւին առանց յուսոյ կործանէր: Տկարացի հպարտութիւն քո, եւ կործանեացի, եւ ոչ ոք իցէ որ յարուցանիցէ զնա, ասէր Արեւիա⁷¹. եւ Ասայի զնոյն գունակ յառաջագոյն քան զնա. Աւ եղիցի, ասէ, Բաբելոնի՛ն՝ որ փառաւորն կոչի ի թաղաւորէն քաղզեացւոց, որպէս կործանեաց Աստուած զՍոգոմ եւ զՊոմոր⁷². որում չիցէ ամենեւին յոյս վերբստին յարդարելոյ:

Այլ ոչ ըստ նմին օրինակի եւ Հրէիցն դիպէր: Աստուած զնոսա իրրեւ զորդիս ստահակեալս այնպէս պատուհասէր, զի պատուհասին ընդոստուցեալ ածիցէ յիրան եւ յարժան. սպա ընդ նոցա արտասուսն զթացեալ խանդաղատէր, եւ զամենայն զյանցուածս նոցա մոռանայր: Աւ դու մի երկնչիւր ծառայ իմ Հակոր, ասէ Տէր. զի ես ընդ քեզ եմ, թէ արարից վախճան ամենայն ազգաց՝ ուր ցրուեցի զքեզ անդր, այլ քեզ ոչ արարից վախճան. եւ խրատեցից զքեզ յիրաւունս, եւ քաւելով ոչ քաւեցից զքեզ⁷³: Վասն այնորիկ զԲաբելոնն ի քաղզեացւոց հանեալ, օտարագեաց մասնէր.

խակ Արուսաղէմ՝ յետ նորանշան զարմանալի փոփոխմանն անդրէն հաստատեալ, յամենայն կողմանց զիւր որդիսն ժողովեալս տեսանէր:

Օրորաբարէզ՝ յազգէ Յուդայ եւ ի թաղաւորաց տոհմէ, դարձոյց զնոսա ի գերութենէն: Յուդայեանքն խուռն հասանէին եւ զամենայն դաւառն լնուին: Տասն ցեղքն ցրուեալք վայրավատինք ի մէջ հեթանոսաց կուրեան, բաց ի նոցանէ՝ որք յանուն Յուդայ եւ ընդ նորին նշանաւն միաբանեալ, յերկիր հարց իւրեանց եկեալ մտանէին:

Արք՝ սեղանն կանգնէր, տաճարն վերստին շինէր, Արուսաղէմի պարիսպքն բարձրանային: Արուարձականք երբայեցւոցն՝ որ ընդ նոսա խանտային, ի թաղաւորաց Պարպց սանձահարէին, որք թիկունք օգնականութեան լինէին ազգին Հրէից: Քահանայապետն ի պաշտօնն սրբութեան մտանէր հանդերձ քահանայութն զեւտացւովք՝ որք ի մտոնից յիշատակաց զեւրեանց յազգէն սերել ցուցանէին, իսկ որոց չզոյր վկայութիւն ուստեք, մերժէին: Ազգա՝ որ քահանայ էր եւ դպիր օրինաց, եւ Աէեմի ոստիկան, զամենայն անկարգութիւնա՝ որ ի ժամանակի դերութեանն մուծան, յարդարէին, եւ տային պահել զգուշութեամբ զատուածագործ օրինադիր կրօնիցն սրբութիւնն⁷⁴: Ժողովուրդն հանդերձ նոքօք յարտատուս հարեալ լային զօրինօքն անցանել, որով այնչափ անհնարին վրէժս ետուն. եւ զՄովսիսի կանխախօսութիւնն ի միտ առնուին: Ամենեքին առ հասարակ ընթերցեալ յատուածատուր գիրսն զպառնալիս առնն Աստուծոյ, զամենայն բովանդակ ի գլուխ ելեալ տեսանէին. ընդ Արեմիայի պատգամն, եւ ընդ դարձն յետ եւթանասուն ամի գերութեանն յառաջագոյն խոստացեալ, զարմացեալք մեխթարէին. զԱստուծոյ դատաստանն փառաւոր առնէին, եւ զնա ընդ իւրեանս հաշտ արարեալ, ի խաղաղութեան վայելէին⁷⁵:

Աստուած՝ որ զամենայն յիւրում ժամանակի դործէ, զայն ժամանակ ի դէպ համարեցաւ զնորանշան կարգսն ի միջոյ բառնալ, այս ինքն՝ զմարդարէութիւնն, ի ժողովողեան՝ որ յառաջագոյն իսկ որչափ ինչ բաւականն էր կրթեցան: Յետ իրբեւ հինգ հարեւր ամաց

Օճեալն դարոց էր: Աստուած յիւրոյ որդւոյն իշխանութիւնն արար ապաստան ընդ ամենայն ժամանակն ընդ այնոսիկ զմարդարէսն ընդուցանել, առ ի զիւր ժողովուրդն զարթուցանելոյ ակն ունել այնմիկ՝ որ կատարումն ամենայն կանխասացից հանդերձեալ էր լինել:

Այլ մօտ ի վախճան ժամանակին՝ յորում Աստուած ի մօի եղեալ էր զբաւ առնել ամենայն մարդարէութեանց, այնպէս յատկազոյնս զիւր ծածուկս հանդերձեալ ժամանակին յայտնէր, մինչ զի թուէր իմն՝ եթէ զամենայն զիւր զմեծապայծառ լոյսն սփռիցէ, եւ զիւրոյ տեսչութեանն խորհուրդս բանայցէ:

Ի ժամանակի դերութեան, եւ մանաւանդ մերձ ի վախճանել դերութեանն, Վանիէդ⁷⁶ որ վասն իւրոյ աստուածարշտութեան ի թաղաւորաց իսկ հեթանոսաց մեծարէր, եւ վասն իմաստութեանն իշխան հրամանատար ի մեծամեծ իրս արքունի լինէր, ի պէս պէս նուազս եւ յազդի ազդի կերպարանս, զչորեսին միահեծան իշխանութիւնն՝ ընդ որովք երբայեցիքն լինելոց էին, մի ըստ միօջէ տեսանէր⁷⁷. եւ զնոսա ըստ իւրաքանչիւր անձնիւր կերպարանաց դրոշմէր: Ընթեռնումք անդ՝ թէ թաղաւորի ուրուք Յունաց իշխանութիւնն իրբեւ զգեա սահեալ անցանիցէ. որ է Աղէքսանդրի մակեդոնացւոց⁷⁸: Ի խորտակելն նորա այլ թաղաւորութիւն քան զնորայն խոնարհազոյն, եւ յիւրոյ բաժնից եւ ի խռովութեանց տկարացեալ, յառնիցէ. եւ սոյն Աղէքսանդրի պայազատացն է, յորոց միջի չորք ի մարդարէութեանն յայտ յանդիման նշանակեալ կան, Անտիպատրոս, Աեղեւկոս, Պաղոմէոս եւ Անտիգոնոս: Յայտ իսկ է ի պատմութենէն՝ եթէ սոքա ուժգնազոյն քան զայլն եղին, եւ ըստ նոցանէ նոցին որքիք պայազատ ի պայազատէ առնուն զիշխանութիւնն զօրէն թաղաւորաց: Ընթեռնումք դարձեալ եւ զնոցա ի մարտ պատերազմի ընդ միմեանս բախել, ընդ միմեանս խանաալ, դաշինս բարեկամութեան նենդանաւ կռել⁸⁰. զԱսորոց թաղաւորացն խստութիւն եւ զամբարտաւան միտս. զԱնտիոքայ Արեւելոյ ամբարհաւածութիւն եւ զայլ եւս նշանակս նորին թաղաւորի՝ որ անհաշտ թշնամութիւն ընդ ժողովրդեանն Աստուծոյ ունէր. զարագ վախճանել թա-

դաւորութեանն նորա, եւ զերազահասան պատուհաս նորին ամբարշտութեանն³¹: Մօտ ի կատարած կոյս, եւ որպէս յերկրի թաղաւորութեան նոցա, տեսանեմք ըսկիզբն լեալ արքայութեանն որդւոյ մարդոյ: Այս յորջորջանք կենարարին մերոյ են. բայց սոյն որդւոյ մարդոյ արքայութիւնն, անուանեալ կոչի նոյնպէս թաղաւորութիւն սրբոց բարձրելոյն: Ընդ նորին մեծազօր խաղաղական թաղաւորութեամբն ամենայն ազգք հնազանդեացին. մշտնջենաւորութիւն եւս նմա խոստացաւ, եւ թէ նա միայն լինելոց էր յամենայն թաղաւորաց, զորոյ իշխանութիւնն այլ թաղաւորութիւն չէր փոխանակելոց:

Բայց երբ նոյն որդին մարդոյ եւ Օծեալն ցանկալի քայցէ, եւ զեարդ զգործն՝ որ նմա յանձն էր, այս ինքն՝ զմարդկեղէն ազգի նորոգութիւն, կատարեցէ. զայն եւս Աստուած յայտ յանդիման նմին մարդարէի կցոյց: Սինչ դեռ նա ի բարեղացւոց քաղաքին զզերութենէ որդւոց ազգին իւրոյ, եւ զեւթանասուն ամացն՝ ընդ որովք զվտարանդել ազգին փակեաց Աստուած, մտախորհ լեներ, յաղօթսն՝ զոր վասն իւրոց տոհմային եղբարցն ազատութեան մատուցանէր, վաղվաղակի յական թօթափել ի խորհուրդս անձառս վերանայր մտօքն. եւ այլաբունակ ինչ թիւ համարոյ ամաց, եւ այլակերպ ազնուագոյն փրկութիւն տեսանէր: Փոխանակ ամացն եւ թանասնից՝ զոր Արեւիայն գուշակեաց, զեւթանասուն եւ թներորդան տեսանէր, որոց սկիզբն եղեւ յետ հրամանին՝ զոր ետ Արաաչէս արքայ որ կոչեցան Արկայնաբազուկ, վասն նորոգման երուսաղէմացւոց քաղաքին, որ ամ քսաներորդ էր թաղաւորութեան նորա: Յայտնի եւ մեկին բանիւք յայտ առնէ մարդարէն ի կատարած եւ թներորդացն զքաւել ամպարշտութեանց, զզալ յաւիտեանական արդարութեան, զինքել տեսլան եւ մարդարէի, եւ զօծանել սրբութեան սրբութեանցն: Յետ վաթսուն եւ ինն եւ թներորդաց հանդերձեալ էր Օծեալն զիւր պաշտօնն առնուլ, եւ առաջնորդ ժողովրդեանն երեւել: Յետ վաթսուն եւ ինն եւ թներորդաց, քանզի զայդ իմն յաճախ յեղեղէ մարդարէն, սպանցի, ասէ, Օծեալն: Աւ մեռանելոց էր նա զմահ գառնու-

Թեան, եւ առ ի կատարելոյ զխորհուրդս՝ զանձն պատա-
 րագելոց: Աւթներորդ մի ի մէջ եւթներորդաց նշանա-
 կեալ կայ, այն ինքն է եւթանասներորդն եւ յետին եւ-
 թներորդ՝ յորում զինչոց էր Օծեալն. յայնժամ Չօրա-
 ցուսցէ, ասէ, զուխտ բազմաց. եւ բարձցին զոհք եւ
 նուէրք. առանց ինչ երկբայութեան զկնի մահուանն
 Վրիստոսի, քանզի վաղվաղակի յեա նորին մահուան
 նոյն փոփոխումն լինէր: Յետ մահուան Օծելոյն եւ
 բառնալոյ զոհից, անհնարին տազնապ եւ խոռովութիւն
 նշմարի. Վաղաքն, ասէ, եւ սրբութիւնն ապականես-
 ցին հանդերձ առաջնորդաւն՝ որ դայցէ. ի վերայ տաճա-
 րին պղծութիւն աւերածոյն կացցէ. եւ մինչեւ ի վախ-
 ճան ժամանակի կատարած տացի ի վերայ աւերածի
 աղղին՝ որ ապախտաւոր ընդդէմ իւրում կենարարին
 դտաւ: ⁸²

Աւթներորդքս այսոքիկ ըստ սովորութեան դրոց
 եւթներորդք ամաց են, որք եւ զամն չորեքհարեւր եւ
 իննսուն բովանդակին. եւ ստուգիւ նոյնչափ ամք ի
 քսաներորդ ամէն Արտաշիսի մինչեւ ցհուակ վերջին եւ-
 թներորդն գումարին, որ լին է խորհրդովք, յորում եւ
 Յիսուս Վրիստոս զենեալ, իւրով մահուամբն վախ-
 ճան առնէր օրինացն զոհից, եւ զօրինական խոյր:

Բաղումք յիմաստնոցն այլազունակս համարին, առ
 ի ճշգիւ զթիւ համարոյ ժամանակացս միաբանելոյ. այլ
 որ ի մէջն կարգեցաւ, առանց շփոթութեան է: Ար
 ժամանակաղբութիւնս ոչ միայն զկարգ պատմութեան
 թաղաւորացն Պարսից չլեղէ, այլ մանաւանդ լուսաւո-
 րադոյն եւս գործէ. թէպէտ եւ երկբանութիւն ինչ ի
 ժամանակաղբութիւնս թաղաւորացս այսոցիկ գտանէր,
 սակայն եւ այնպէս չէր ինչ պարտ ընդ այն կարի զար-
 մանալ, եւ ի մէջ չորեքհարեւր եւ իննսուն ամաց համա-
 րոյ, վասն ութ կամ ինն ամաց երկբանութեան խնդիրս
 մեծամեծս առնել եւ վիճել, անդր ի բաց անշահու-
 թիւն է: Բայց առ այս չէ մեղ հարկ յերկարագոյնս տո-
 զել բանս: Աթէ երկբայութիւն ինչ եւս կայր, զայն
 Աստուած ինքնին երարձ ի միջոյ բազում հաւաստեաւ
 եւ ճշգրիտ, որ զամենայն տարակոյս ի բաց հատանէ:
 Արդիւնք իրացն՝ որ յայտնագոյն գործեցան, չթողուն

մեզ ի դատարկ քննութիւնս ժամանակագրոցն անկա-
նել. եւ Հրէիցն համաձունջ սատակումն՝ որ վաղվազակի
յետ Տեառն մերոյ մահուանն դիպեցաւ, թանձրամտացն
խակ եւ անհանձարից տայ ճշգրիտ ի վերայ հասանել
մարգարէութեանն ի զլուխ ելանելոյ:

Պարտ եւ պատշաճ է աստ եւ այլ ինչ կարեւոր ի
միտ առնուլ: Ղանիէզ նոր ինչ խորհուրդս յայտ առ-
նէ: Ի Յակովբայ պատգամացն ուսաք՝ եթէ թագաւոր-
ութիւն յուրացական ազգին դադարելոց էր ի դալ Օ-
ծելոյն. այլ չպտանեմք ուրեք ի նորա բանն՝ եթէ Օ-
ծելոյն մահ պատճառք եղծանելոյ թագաւորութեանն
լինիցի: Եւս Եստուած զայս խորհուրդ եցոյց եւ յայտ
արար Ղանիէզին. որ, որպէս յայտ է, յայնանազոյնս եւ
լուսաւորագոյնս պատմեաց՝ եթէ Հրէիցն կործանման ա-
ռիթ Վրիտտոսի մահն եւ նոցա ապախտաւորութիւնն
լինիցի: Միտ գիր յայտմ վայրի. եւ կարգ իրացն՝ որ
դիպեցան, համառօտիւք զհաւաստիս բանից մարգարէին
յայտ առնիցեն:

Օր ինչ Եստուած եցոյց նմին մարգարէի, յա-
ռաջ քան զԱլիւրոսի յաղթութիւնն, եւ նախ քան ըզ-
տաճարին յարգարել, զայն ամենայն յայտ յանդիման տե-
սանես: Ի ժամանակին՝ յորում տաճարն կազմէր, յարոյց
նա մարգարէս զԱնդէոսն եւ զՕպքարիաս. եւ իսկ եւ
իսկ յետոյ առաքեաց զՄաղաքիաս՝ որ հուսկ վերջին է ի
մարգարէից:

Օրն էր զոր ոչ մարգարեանայր Օպքարիաս:
Գոգ ամենայն ստուածեղէն վճռոցն մտեանք բացեալ
իմն էին առաջի մարգարէիս, ուր՝ որ ինչ անցք առ յա-
պայ յետ վտարանդութեանն ընդ ժողովուրդն Եստուծոյ
անցանելոց էին, ընթեռնոյր:

Օհալաճանս թագաւորացն Եսորոց, եւ զմարտս
պատերազմացն՝ զոր ընդ Յուդայ մղեցին, մի ըստ միոջէ
տեսանէր³³: Եոյնպէս եւ զառնուլ Արուսաղէմի, զքա-
ղաքին աւերել, զանհնարին յափշտակութիւնն, զանչափ
անկարդութիւնն, զազգին փախստեաց յանապատս ան-
շէնս թափառել, յանհնարին վարան տարակուսի ի մէջ
կենաց եւ մահու անկեալ. եւ թէ զկարգ յայն յետին
տագնասպ հասեալ, յանկարծակի զուարթանայցէ եւ ար-

Ճարժիցի . թշնամիք ի պարտութիւն մատնեցին , եւ կուռք ամենայն ի սուրբ երկրին կործանեցին , քաղաքն եւ աշխարհն ի խաղաղութեան եւ յղփութեան վայելիցէ , եւ տաճարն ընդ բնաւ աշխարհն արեւելից մեծարոյ եւ փառաւոր լինիցի :

Գարձեալ եւ զերս ինչ նշանաւորս պատերազմայն տեսանէր մարգարէն . այս ինքն՝ եթէ Աճրուսաղէմ յիւրոց որդւոց մատնեցի , եւ բազումք ի Հրէից անախ ի թշնամիս անդր մատնաու լինիցին եւ ընդ նոսա միաբանիցեն⁸⁴ :

Արբեմն ի բազում եւ յանչափ յաջողութիւն հասեալ տեսանէր . զՅուդա զօրացեալ , զթշնամիսն՝ որ զնայն յաղթահարէին , ի կոր կործանեալս . զազգս մօտաւորս՝ որ զերբայեցիսն տառապեցուցանէին , ի պատիժս պատուհասից մատնեալ . զմանս ի հրէութիւն դարձեալս , եւ ի մի մարմին խառնեալ ընդ ժողովրդեանն Աստուծոյ : Ատես նոյնդունակ զժողովուրդն յղփացեալ աստուածեղէն բարեօք . ի մէջ այնպիսի բարութեանց նաւթձէ մարգարէս զցածուն եւ զմեծաշուք փառս թագաւորին աղբատի , հեղոյ եւ կենարարի , որ եկեալ ի քաղաք իւր Աճրուսաղէմ մատնիցէ հեծեալ ի վերայ յաւանակի տրմի⁸⁵ :

Յետ զաջողութեանցն բարբառելոյ , սկիզբն առնէ մանր զչարիսն՝ որ դալոց էին , պատմել : Յանկարծօրէն հուր հարեալ զտաճարէն տեսանէր . զամենայն զգաւառն հանդերձ զխաւոր քաղաքաւն յաւեր լեալ . սպանութիւնս , բռնութիւնս եւ թաղաւոր զոմն՝ որ յայնպիսի չարիս մտարերել ամենեցուն համարձակ առնիցէ : Իսկ Աստուած արգահատեալ իւրում ժողովրդեանն լքելոյ , ինքնին նոցա հովիւ եւ վերակացու լինիցի : Ապա զնստանի պատերազմայն տոչորել ցուցանէ , եւ զամենայն վեր ի վայր հարեալ : Օժամանակ փոփոխմանն այնորիկ ստոյգ նշանակօք զբողմէ . երեք հովիւք , սաէ , ի միում ամսեան յիւրեանց պատուոցն անկանիցին , եւ այն սկիզբըն շրջաշրջելոյ իրացն լինիցի⁸⁶ :

Ի մէջ այնպիսի չարեաց եւ այլ վիշտք կարեւորք ի վերայ հասանիցեն : Յետ սակաւ ինչ ժամանակի ի վերայ այնպիսի խռովութեանց անցանելոյ , ի ժամանակին՝ յու-

բում ամենայն ինչ վեր ի վայր հարեալ եղծանիցի, ազն ապաշնորհ զլուր Տէրն երեսուն արծաթոյ գնոց գնիցէ: Սարգարէն մանր նշանակէ զամենայն, մինչև զազարակն իսկ բրախ՝ ուր եւ զարծաթն արկին ի կիր⁸⁷: Ենտի բազում անկարգութիւն ի մէջ հովուաց ժողովրդեանն յաւնիցէ. որք ապա կուրանայցեն, եւ իշխանութիւն նոցա քակեսցի:

Իսկ զինչ զգարմանայի յայանութենէն Չաքարիայ ասացից, որ ետես զհովիւն հարեալ, եւ զոչխարն ցըրուեալս: Ասմ զայն մարգարէութիւն՝ որ ասէն վասն ժողովրդեանն, եթէ Հայեսցին ի նա՝ յոր խոցեցինն⁸⁸. եւ թէ Առծեսցին ի վերայ նորա կոծ իբրեւ ի վերայ սիրելոյ. եւ աշխարեսցեն աշխար իբրեւ ի վերայ անդրանկան: Չայս ամենայն ետես Չաքարիա. բայց առաւել ազնուագոյն է տեսանելն նորա զՏէրն առաքեալ ի Տեառնէ բնակել յԱշրուսաղէմ. ուստի զհեթանոսս կոչիցէ առնել զնոսս մի հօտ ընդ իւրում ժողովրդեան, եւ ինքն ի մէջ նոցա բնակիցէ⁸⁹:

Ենդէոս համառօտս հատանէ, բայց զոր ասէն՝ գրանչել է: Մինչ դեռ երկրորդ տաճարն շինէր⁹⁰, եւ ծերքն՝ որոց զառաջին շքեղ տաճարն տեսեալ էր, զնորա փառաւորութիւն եւ զվերջին շինուածոյն նուազութիւն ընդ միմեանս կշռեալ՝ յարաստուս հարկանէին, մարգարէս այս՝ որ ի բացուստ ի հեռատանէ տեսանէր, սկսաւ զերկրորդ տաճարին փառս հռչակ հարկանել, եւ զնա ազնուագոյն եւ շքեղագոյն քան զառաջինն ցուցանէր⁹¹: Եպա զնովիմբ ածեալ յայտ առնէ՝ եթէ ուստի առաւելութիւն փառաց նորոյն քան զհնոյն իցէ. քանզի եկեսցէ, ասէ, ցանկալին հեթանոսաց, (Ծեալն անդուստ ի վերուստ աւետարանեալ, անդստին ի սկզբանէ աշխարհի, իբրեւ փրկիչ հեթանոսաց, յայդ նորակերտ նորաշին տաճարդ դայցէ: Խաղաղութիւն անգէն հաստատեսցի. ամենայն տիեզերք միահամուռ շարժեալ վկայ դալստեան նորոգչին իւրեանց լինիցին. փոքր մեւս եւս՝ եւ ահա այն ամենայն լինիցի. եւ նկատեալ ժամանակն՝ յորում իրքս այս ի գլուխ երանիցեն, ի մօտոյ դայցէ:

Երդ տաճարն շինէր, եւ զոհք ի նմա զենուին. սակայն Հրեայք աղահէին ի նուէրան, զխտաանն եւ զա-

րատաւորն մատուցանէին: Սաղաքիսա՛ որ զնոցա ռք-
զութիւն կշամբէր, ի բարձրագոյն խորհուրդս մտօքն
վերանայր, եւ փոխանակ անտուրբ նուիրացն շըէից,
զպատարազն սուրբ տեսանէր, անխառն ամենեւին յա-
մենայն պղծութենէ. որ ոչ Արուսաղէմ միայն որպէս
յայնժամն, այլ եւ ընդ բնաւ երկիր յարեւելից մինչեւ
ի մուտս արեւու Աստուծոյ մատչիցի, ոչ ի շըէից լոկ,
այլ եւ ի հեթանոսաց խակ՝ յորոց միջի փառաւոր լինի-
ցի անունն Աստուծոյ⁹²:

Արպէս Անգէոսն, նոյնպէս եւ սա զերկրորդ տա-
ճարին փառաց եւ զ(Օ)ծելոյն՝ որ իւրովն զնոյն տաճար
փառաւորելոց էր, մարդարեացաւ. բայց եւ անգէն ըզ-
նովմբ ածեալ զ(Օ)ծելոյն աստուածութենէ՛ որում նոյն
տաճար նուիրեալ էր, ճառէ. Ահա ես առաքեմ զհրեշ-
տակ իմ, եւ տեսցէ զճանապարհս իմ առաջի իմ. եւ
յանկարծակի եկեսցէ ի տաճար իւր Տէրն՝ զոր զուք
ինդրէք, եւ հրեշտակ ուխտին՝ զոր դուք կամիք, ա-
հաւաղիկ դայ, ասէ Տէր ամենակալ⁹³:

Շրեշտակն առաքեալ է. բայց առաքեալս այս մե-
ծաշուք իցէ եւ փառաւորեալ, ունիցի իւր տաճար եւ
ինքն գլխովն Աստուած իցէ, որ անգր իրբեւ յիւր սե-
փական բնակութիւն եկեալ մտանիցէ. ամենայն ազգաց
ցանկալի, որ դայցէ ուխտ նոր հաստատել. եւ նմին իրի
խակ հրեշտակ ուխտի կամ կտակի անուանեալ կոչիցի:

Արդ Աստուած՝ առաքեալ յաստուածակոյս կողմա-
նէ յերկրորդ տաճարի անդ հանդերձեալ էր երեւեւ⁹⁴. բայց
եւ այլ ոք առաքեալ յառաջագոյն քան զնա դալոց էր,
զի նմա ճանապարհս պատրաստիցէ: Արդ՝ յառաջ քան
զ(Օ)ծեայն, զնորա կարապետին երեւել ի Սաղաքեաց մար-
գարէութեանն դտանեմք: Ակարագիր եւս կարապետին
նմին մարդարէի ցուցաւ. այս ինքն՝ եթէ նոր ոմն Աղիա
լինիցի, նշանաւոր վասն իւրոյ սրբութեանն եւ վշտակե-
ցութեան, վասն ճոխութեանն եւ նախանձուն:

Այսպէս վերջին մարդարէն՝ որ եկաց երբայեցւոյն,
զառաջին մարդարէն՝ որ յեա նորա դալոց էր, նշանա-
կեաց. այս ինքն զԱղիայն զայն զՏեսառն կարապետ՝ որ
յամայր ամս երեւելոց էր: Մինչեւ ի նոյն ժամանակ չէր
արժան ժողովրդեանն Աստուծոյ այլում մարդարէի ակն

ունել, մովսիսեան օրէնքն բաւական էին նոցա. եւ վասն այնորիկ իսկ Մաղաքիաս այսպիսի ինչ բանիւք յանդ հասնէ զիւր մարդարեւութիւնն. Յիշեցէք, ասէ, զօրէնսն Մովսիսի ծառայի ինչոյ. որպէս պատուիրեցի նմա ի Վարէք, զամենայն զհրամանս եւ զերաւունս: Ես առաքեմ առ ձեզ զԱղիա թեզբացի՝ որ պատրաստեցէ զսիրաս հօր առ որպիս⁵⁾. եւ ցուցցէ նոցա զայն՝ որում այլքն ակն ունէին:

Յօրէնսն Մովսիսի յաւել Եստուած զմարդարեւն՝ որ ի նոյն յանդ եւ միաբան խօսեցան, եւ զիւրոյ ժողովբարեանն պատմութիւն՝ զոր նորին իսկ մարդարեւք գրեցին, ուր զօրինացն զաւետիս եւ զսպանալիս արդիւնք իրացն կատարելոց հաստատէին: Եւ մենայն ինչ հաւաստեալ եւ ճշգրիտ գրեցաւ, կարգեալ եւ յարդարեալ ըստ կարգի ժամանակացն. եւ Եստուած, իբրեւ զմարդարեւութիւնսքն դատարեցուցանէր, զայն առ ի կրթել զիւր ժողովուրդն թողցր:

¹⁾ Ի. թճԵԳ. Ե. 6. 7. 8. 9. Ը. ՍՆԵՏ. ԺԼ. 6. 7. 8: ²⁾ ԼՆԳ. Ի. 16: ³⁾ Ի. թճԵԳ. Գ. 16: ⁴⁾ Ը. ՍՆԵՏ. Ժ. Գ. 39. ԻԼ. 29: ⁵⁾ Ի. թճԵԳ. Ի. Ը. ՍՆԵՏ. ԺԲ. ⁶⁾ Ի. թճԵԳ. ԻԴ. 25. Ը. ՍՆԵՏ. ԻԸ. ԻԳ. եւ այլքն: ՅՅՊ. շ. 10: ⁷⁾ Գ. թճԵԳ. Գ. Ի. Ը. ՍՆԵՏ. Գ. Դ. Ե. Գ. Ի. ⁸⁾ Գ. թճԵԳ. Ի. Ժ. ⁹⁾ ԼՆԳ. Ժ. Ը. ՍՆԵՏ. Ը. Թ. ¹⁰⁾ Ը. ՍՆԵՏ. ԻԲ. 4. 5: ¹¹⁾ Ի. թճԵԳ. Ի. 14. Ը. ՍՆԵՏ. ԻԲ. 10: ¹²⁾ ՍԵՏ. Գ. 29: ¹³⁾ ՍԵԳ. ԸԸ. 5. 11. 17: ¹⁴⁾ ԼՆԳ. ՈԴ. ¹⁵⁾ ԼՆԳ. ԽԴ. 3. 4. 5. 6. 7. 8: ¹⁶⁾ ԼՆԳ. Ի. 7. 8: ¹⁷⁾ ԼՆԳ. Ի. 1. 2. 4. 9. 10. այլովքն հանդերձ: ¹⁸⁾ ԼՆԳ. ԻԸ. 17. 18: ¹⁹⁾ ԼՆԳ. ԿԸ. 28. ԻԸ. 8. 13. 14. 17. 21. 22. 26. 27. եւ որ ի կարգին: ²⁰⁾ ՍՆԵ. Ե. 2: ²¹⁾ ԼՆԵՏ. Ի. 14. Թ. 6: ²²⁾ ՍՆԵ. Գ. 1: ²³⁾ ԼՆԵՏ. ԺԸ. 10. ԾԳ. 9: ²⁴⁾ ՕՆԵ. ԺԸ. 12. 13: ²⁵⁾ ԼՆԵՏ. ԾԳ. 13. ԾԳ. ²⁶⁾ ԳՆԵ. Թ. ²⁷⁾ ԼՆԵՏ. ԺԸ. 10: ²⁸⁾ ԼՆԳ. ԾԳ. 13. 14. 15. ԾԳ. ²⁹⁾ ԼՆԳ. ԾԼ. 4. 5: ³⁰⁾ ԼՆԳ. ԿԸ. 1. 2: ³¹⁾ ԼՆԳ. ԽԸ. 1. 2. 3. 4. 5. 6. ԽԹ. 6: ³²⁾ ԼՆԳ. ԺԹ. 24. 25. Կ. 1. 2. 3. 4. 11. ԿԸ. 1. 2. 3. 11. ԿԸ. 1. 2. 11. ԿԸ. 1. 2. 15. 16. ԿԸ. 19. 20. 21: ³³⁾ ՍՆԵ. ՈԴ. ԼՆԵՏ. ԽԸ. 8. 23. 24: ³⁴⁾ Ի. թճԵԳ. Ի. 8. այլովքն հանդերձ. Գ. թճԵԳ. Թ. 4. այլովքն հանդերձ. Ը. ՍՆԵՏ. Ի. 17. եւ այլքն: ³⁵⁾ Ի. թճԵԳ. ԺԸ. ԺԳ. այլովքն հանդերձ: ³⁶⁾ Գ. թճԵԳ. ԺԸ. ³⁷⁾ ԼՆԳ. ԺԳ. ³⁸⁾ Գ. թճԵԳ. ԺԸ. 6. 7. եւ այլքն: ³⁹⁾ ՏՅՊ. Ը. 5. 6. 7. Ի. 12. 21. 22: ⁴⁰⁾ Գ. թճԵԳ. ԺԸ. 19. ԻԳ. 26. 27. Ը. ՍՆԵՏ. Ը. 15. ԼՆԵՏ. ԽԹ. 19: ⁴¹⁾ Ը. թճԵԳ. ԻԸ. 14. Գ. թճԵԳ. ԺԹ. 19. Գ. թճԵԳ. Ը. 8. ԼՆԵՏ. Ի. 2. ԳՆԵ. ԺԳ. 5. Ը. թճԵԳ. Ժ. 10. ԺԹ. 19. 26. Գ. թճԵԳ. ԺԸ. Գ. թճԵԳ. Ի. 3. 15. 18. 19. 25. Դ. 10. 38. Գ. 1. 2. ⁴²⁾ ԼՆ. ԺԸ. 14. ԼՆԵՏ. Ի. 8. ԻԴ. 16. ԼՆԵՏ. ԻԸ. 30. ԻԸ. 2. 11. Ը. Ը. ՍՆԵՏ. Ը. 22. Ը. ԼՆԵՏ. Ը. 1. ԴՆԵ. Թ. 2. Գ. թճԵԳ. Դ. 23: ⁴³⁾ ԼՆԳ. ԻԸ. 16: ⁴⁴⁾ ԼՆՏՅ. ԽԸ. 15: ⁴⁵⁾ ԼՆԵՏ. ԻԸ.

պլլովքն Հանդերձ. Երև. Ի.Չ. պլլովքն Հանդերձ: 45) Դ. թուր. ԻԿ. 1. Բ. Սուս. Լ.Չ. 47) Լքր. ԺԴ. 14: 48) Դ. թուր. ԻԿ: 49) Լքր. ԻԿ. 7. 8. 50) Լքր. ԻԿ: 51) Դ. թուր. ԻԿ. 7: 52) Լքր. ԺԳ. ԺԴ. ԻԿ. ԽԿ. ԽԶ. ԽԷ. ԽԸ. ԽԹ. ԽՃ. 53) Լքր. ԽԿ. ԽԸ. ԽԹ. 54) Լքր. ԽԿ. 11. 12. ԽԹ. 10: 55) Պս. Բ. 46. Դ. 1. 26: 56) Լքր. ԽԿ: 57) Լքր. ԻԿ. 30: 58) Պս. Բ. 31: 59) Լքր. Գիրք Է. Քսեն. Գիրք Բ. Գ. Է. պլլ. Դաստիար: 60) Լքր. ԾԼ. 46: Լքր. Գիրք Է. Քսեն. Գիրք Է. Դաստիար: 61) Լքր. Դ. Քաղ. 3: 62) Պս. Է. 63) Լքր. ԺԴ. 17. ԻԿ. 2. ԽԸ. ԽԹ. ԽԿ. Լքր. ԾԼ. 11. 28. Լքր. ԺԴ. 16. 17. Լքր. Ծ. 23: 64) Լքր. ԺԴ. 5. 6. 10: 65) Լքր. ԻԿ. 9. ԽԹ. 1: 66) Լքր. Ծ. 38. Ծ. 36: 67) Լքր. Ծ. 24. ԾԼ. 39. 57: 68) Լքր. ԺԴ. 15. 16. 17. 18. Լքր. Ծ. 35. 36. 37. 42: 69) Լքր. ԾԼ. 31. Լքր. ԽԿ. 12. 13. 14. 15. Լքր. Ծ. 36. Լքր. ԽԿ. 20. Լքր. Ծ. 8. 28. ԾԼ. 6. 10. 50. պլլովքն Հանդերձ: 70) Բ. Սուս. Լ.Չ. 22. Բ. Լքր. Է. 2: 71) Լքր. Ծ. 31. 32. 40: 72) Լքր. ԺԳ. 19: 73) Լքր. ԽԹ. 28: 74) Բ. Լքր. Բ. 62: 75) Լքր. Է. 1. Կեր. Է. 8. Բ. թ. 76) Պս. Բ. Կ. Է. Բ. 27: 77) Լքր. Բ. Է. Բ. Ժ. ԺԼ: 78) Լքր. Է. 6. Բ. 21. 22: 79) Լքր. Բ. 22: 80) Լքր. ԺԼ: 81) Լքր. Բ. 44. 45. Է. 13. 14. 27: 82) Լքր. Խ. 23. 24. 25. 26. 27: 83) Օր. ԺԳ. 84) Լքր. ԺԴ. 14: 85) Լքր. Խ. 1. 2. 3. 4. 5. 6. 7. 8. Ժ. 6. 11: 86) Լքր. ԺԼ. 8: 87) Լքր. ԺԼ. 15. 16. 17: 88) Լքր. ԺԳ. 7. ԺԴ. 10: 89) Լքր. Բ. 8. 9. 10. 11: 90) Բ. Լքր. Դ. 12: 91) Լքր. Բ. 7. 8. 9. 10: 92) Սր. Է. 11: 93) Լքր. Դ. 1: 94) Լքր. Դ. 1. Դ. 5. 6: 95) Լքր. Դ. 4. 5. 6:

ՅԵՅՆՊԻՈՒ խրատուէ մեծ իմն փոփոխումն բարուց խա-
րայէզացւոցն լինէր: **Չ**կարօտանային այնու հետեւ ոչ
յայտնութեան, եւ ոչ յայտնի ինչ կանխախօսութեան,
եւ ոչ չքնազ նշանաց՝ զոր բազում անգամ առ ի նոցա
փրկութիւն առնէր **Մ**ատուած, զի բաւական էին նոցա
վկայութիւնքն՝ զոր ընկալան. եւ կշտամբեալ վասն թե-
րահաւատութեան իւրեանց, ոչ միայն ի ձեռն արդեանցն
կատարելոց, այլ եւ ստէպ ստէպ վասն նորին ի պատիժս
պատուհասից մտեալ, ապա ուրեմն եղեն զզօնադոյնք:

Մին իրի չլառածան յայնմ հետէ ի կռապաշտու-
թիւն՝ յոր կարին յօժարեալ էին: **Պ**իտոացին՝ եթէ չար է
նոցա ընկենուլ յեա զ**Մ**ատուած հարցն իւրեանց: **Հ**ա-
նապազ զ**Ա**արուքողոնոսոր յիշէին, եւ զկործանումն իւ-
րեանց՝ որ յառաջագոյնն պատմեցաւ հանդերձ ամենայն
մասամբք, եւ վաղադոյն քան զոր կարծէինն՝ ի դուխ ել:
Մոյնպէս զարմանք ունէին զնոսա վասն դառնալոյ նոցա
ի գերութենէ, որում չունէին ակն, ի նկատեալ ժա-
մանակի եւ ի ձեռն այնորիկ՝ որ ցուցեալն էր նոցա: **Ի**
տեսանել նոցա զերկրորդ տաճարն, յիշէին՝ թէ ընդէր
առաջինն կործանեցաւ, եւ զխարդ երկրորդս այս կան-
դնեցաւ. եւ այնպէս հաստատէին հաւատալ գրոցն իւ-
րեանց, որոց ամենայն անցք՝ որ ընդ նոսա անցին,
վկայութիւն տային:

Չէր այնու հետեւ սուտ մարդարէս ի միջի նոցա տե-
սանել. քանզի գերծեալ իմն էին ի յօժարութենէ ան-
սալոյ մարդարէիցն ստոց եւ կոռց երկիր պաղանելոյ:
Օւքարիս միով պատգամաւ յառաջագոյն ասացեալ էր՝
թէ այս երկու ինչ ի դուխ ելանելոց էին ի նոսա¹. եւ
մարդարէութիւն նորա առ զյայտնի կատարումն: **Պ**ա-
կասեցին սուտ մարդարէք առ երկրորդ տաճարաւն. ժո-
ղովուրդն ձանձրացեալ ի խարէութեանցն նոցա չկամէին
այնու հետեւ անսալ նոցա: **Օ**ճշմարիտ մարդարէան **Մ**ա-
տուծոյ անդադար ընթեռնուին, եւ չլինէին ինչ նոցա
պէտք մեկնութեան, զի եւ իրքն իակ՝ որ հանապազօր ի

գլուխ ելանէին ի կատարումն մարգարէութեանցն նոցա, ստոյգ մեկնիչք այնոցիկ լինէին:

Օ՛խ եւ ամենայն մարգարէքն նոցա խաղաղութիւն եւ շինութիւն խոստացան նոցա: Ուրախ լինիցի որ յորժամ ընթեանուցու զգիրս Ասայայ, եւ զԱզնկիկէզի պատգամն վասն ժամանակի շինութեանն, որ յետ գերութեան բարեղացւոց գալոց էր: Օ՛խ յայնժամ որ ինչ աւերեալն էր եւ կործանեալ կանգնէր, քաղաքք եւ աւանք միւսանդամ աղնուադոյն շինէին, եւ ամենայն երկիրն մարդաշատ, եւ ժողովուրդն անթիւ ի բազմութեանէ, թշնամիքն կորացեալք, եւ լեութիւն եւ պարարտութիւն գեղից եւ անդաստանաց եւ արգիւնք եւ տոհմականք. անդ է եւ զուրախութիւն տեսանել եւ ըզհանգիստն եւ զամենայն պտուղ երկայնժամանակեան խաղաղութեան: Խոստանայր Աստուած ժողովրդեան իւրում տալ կատարեալ խաղաղութիւն ընդ երկայն աւուրս: Այլելիցին նոքա ի խաղաղութեանն առ Պարսից թագաւորքն. ջորքան ժամանակս կայր Պարսից տէրութիւնն, հրովարտակքն Աւուրսի՝ որ վայն պետութիւն կանգնեաց, խաղաղութեան եւ հանգստեան պատճառք Հրէիցն լինէին: Թռէպէտ եւ յետին կործանումն ի վերայ հասեալ կայր նոցա առ Աքշաւիր արքայիւ ոմամբ, այլ հայեցեալ Աստուծոյ յարաստունն նոցա, յանկարծակի փոխեաց զսիրտ թագաւորին, եւ հան անհարին վրէժս Ղամանայ թշնամոյ նոցա: Բաց ի ժամանակէ աստի նեղութեան՝ որ վաղվաղակի անց, միշտ անկասկած էին: Ուսեալք իւրեանց մարգարէիցն հնազանդ լինել թագաւորաց՝ ընդ որոց իշխանութեամբ եղեալ էր վնոսա Աստուծոյ⁵, կացին մնացին հաւատարիմք առանց իրիք նենդութեան. վասն այնորիկ եւ յամենայն ժամանակի սիրելի եղեն: Թնթեւ ինչ հարկօք՝ զոր տային թագաւորացն, որք մանաւանդ պաշտպանիչք էին նոցա քան տեարք, կային ըստ իւրեանց օրինացն. քահանայութեան իշխանութիւն որպէս էր յառաջադոյն պահեցաւ, քահանայապետք՝ ժողովրդեանն առաջնորդէին, հասարակաց խորհրդականութիւն՝ զոր նախ Մովսէսն կացոյց, ունէր զիւր գառաջին իշխանութիւնն. եւ ինքեանք ի մէջ իւրեանց իշխան էին կենաց եւ մահու, եւ չլինէր որ ձեռ-

նամուխ ի դործս նոցա⁶ : Օչ այնպէս իսկ հրաման տային թաղաւորքն :

Իսկ ի կործանել Պարսից պետութեանն՝ չեղև ինչ փոփոխումն իրացն նոցա : Աղէքսանդրոս մեծարեաց ըզտաճարն նոցա, զարմացաւ ընդ մարդարէութիւնս նոցա, եւ յաճախեաց տալ նոցա թողութիւնս⁷ : Սակաւ ինչ առ առաջին պայտատօքն նորա նեղեցան . Պտողմէոս Վադոսեայ յանկարծակի խաղաց եկն եհաս յԱրուսաղէմ, եւ հարեւր հաղար այր խախտեաց եւ ի դերութիւն վարեաց . այլ դադարեաց վաղվաղակի ի թշնամութենէն : Ինքն իսկ զնոսա աղէքսանդրացւոց քաղաքակիցս արար, եւ Աղէքսանդրիա էր բուն քաղաք թաղաւորութեան նորա, կամ թէ զերաւունս՝ զոր Աղէքսանդրի յառաջագոյն տուեալ էր նոցա, հաստատեաց . եւ չգտեալ յամենայն արքայութեան իւրում առաւել հաւատարիմս քան զՀրեայն, ժողովեաց ի նոցանէ իւր զօրս, եւ զերեւելի երեւելի տեղիս իշխանութեանն նոցա յանձն արար⁸ : Պազիղեանք պատուականս համարեցան զնոսա, իսկ Անդեկիդեանքն՝ ընդ որոց իշխանութեամբն էին, առաւել եւս գրգռութեամբ ունէին զնոսա⁹ : Անդեկոս Արիանովր նահապետ Անդեկիդեանց, բնակեցոց զնոսա յԱնաիոք, եւ նորին թոռն Անտիոքոս թէոս ընկալաւ զնոսա յամենայն քաղաքս փոքու աշխարհին ասիացւոց, եւ այնպէս սփռեցան ընդ ամենայն աշխարհն Հունաց, եւ գնացին անդէն ըստ իւրեանց օրինացն, եւ ի նմին ազատութեան վայելէին որպէս եւ այլ քաղաքացիքն, զոր օրինակ կայինն յԱղէքսանդրիա եւ յԱնաիոք :

Բնդ այն ժամանակս եւ օրէնքն նոցա, հրամանաւ Պտողմէայ Փիղադեզիեայ արքայի եզխպտացւոց, ի յոյն լեզու փոխեցան¹⁰ : Արօնք Հրեից ծանօթ լինէին ի միջ հեթանոսացն, թաղաւորք եւ ժողովուրդք պատարաւօք մեծապատիւ մեծապարզեւ զտաճարն երուսաղէմացւոց մեծարէին, ի խաղաղութեան եւ յաղատութեան էին Հրեայք ընդ իշխանութեամբ թաղաւորացն Ասորւոց, եւ այնպիսի խաղաղութեան ճաշակս չէին առեալ երբեք առ իւրեանց թաղաւորքն :

Եւ թուէր իմն՝ թէ մշտնջենաւոր լինելոց էր խաղաղութիւնն, թէ նոցա չէր իւրեանց չմիտրանութեամբն

խոսվեալ : Արեքհարեւր անք էին, յորմէ հետէ յայնմ խաղաղութեան վայելէին, զորմէ բազում անգամ յառաջագոյն մարգարէքն նոցա պատմէին, եւ ապա սէր իշխանութեան եւ նախանձ մտեալ մերձ էր կորուսանել զնոսա : Սմանք ի մեծամեծաց անտի զիւրեանց ազգն մասնեցին, վասն թագաւորաց ընդ միա մտանելոյ¹¹ . կամեցան ըստ Յունաց օրինակին երեւելի լինել, եւ զնոտի փառաւորութիւնն նախամեծար ընտրեցին, քան զճշմարիտ փառսն՝ զոր ի մէջ քաղաքացեացն ունէին, վասն պահպանութեան օրինացն նախնեաց իւրեանց : Թեաւ տրոնս եւ կրկէս իբրեւ զհեթանոսս շինէին : Այնպիսի նոր տեսիլ զժողովրդեան աչա խոտղեաց . եւ կռապաշտութիւն՝ զայն շքեղ կերպարանս զեցեալ, բազմաց ի շրէից գեղեցիկ թուեցաւ : Յայնց փոփոխմանցն վերայ մտին հակառակութիւնք վասն քահանայութեանն՝ որ գլխաւոր պատիւ էր ազգին : Ար իշխանութեանն ցանկային, երթային յարէին ի թագաւորսն Ասորոց, զի քահանայապետութեան կարիցեն հասանել, եւ զնուիրական պատիւն այնու հետեւ սուտակասպասութեամբ զնէին բարեկամք թագաւորին :

Սասն նախանձու եւ երկպառակութեան ոմանց, վաղվաղակի ըստ սովորութեանն, մեծամեծ չարիք ի վերայ ամենայն ազգին հասանէին : Անտիոքոս Արեւելի արքայ Ասորոց, եղ ի մտի կորուսանել զազգն բաժանեալ, զի ըմբռնեսցէ զինչս եւ զստացուածս նոցա եւ ըզմեծութիւն նոցա : Յայնժամ երեւեցաւ թագաւորս այս այնպէս, որպէս ինչ Վանիէղի նշանակեալ էր¹² . հպարտ ամբարտաւան, կծծի, խորամանկ, անագորոյն, այգաւնօղ, ամպարիշտ, անմիտ, հպարտացեալ փքացեալ ընդ յաղթութիւնսն, եւ ապա զայրացեալ ընդ կորուսան՝ զոր կորոյս : Պայր մտանէր ի քաղաքն երուսաղէմացւոց եւ կարօղ էր զամենայն ինչ առնուլ ի բուռն . ոչ իւր ինչ զօրութիւնն, այլ շրէից երկպառակութիւնն համարձակեցուցանէր զնա . եւ այսպէս իսկ յառաջագոյն մարգարեացեալ էր զնմանէ Վանիէղ¹³ : Անհնարին անագորունութիւնս գործէր . հպարտութեամբն ըստ ամենայն չափ անցանէր, եւ խօսեցաւ հայհոյութիւնս հակառակ բարձրելոյն, որպէս նոյն մարգարէի յառաջագոյն

ասացեալ էր¹⁴ : Ըն ի կատարումն մարդարէութեանցն , եւ վասն մեղաց ժողովրդեանն , սուաւ նմա զօրութիւն ընդդէմ հանապազորդ զոհիցն եւ պատարագաց : Պրղծեաց նա զտաճարն Աստուծոյ , զոր թագաւորքն հալք նորա մեծարեալ էին . աւար հար զնա , եւ առեալ անտի ոսկի եւ արծաթ ելից զպանձ իւր՝ որ նուազեալն էր¹⁵ : Պատճառանօք որպէս թէ կամիցի միաբանել զբարս իւրոց հնազանդելոցն , եւ արդեամբք ի մտի եղեալ զիւր աղահոյսութիւն լնուլ , աւար առեալ զամենայն հրէաստան , հրաման ետ Հրէիցն երկիր պաղանել զիցն՝ զոր եւ Յոյնքն սաշտեն , մանաւանդ կամէր՝ զի ողոմպիական Արամազայ երկիր պաղանիցեն , զորոյ եւ զպատկերն ի տաճարին կանգնեաց . եւ ամպարշտաբոյն քան զԱբուքոզոնոսոր դառեալ , ձեռն արկ զտօնսն քակել , եղծանել զօրէնսն Մովսիսի , զգոհսն , զկրօնսն եւ զամենայն ազգն :

Ըսլ էր շտի սահմանեալ աջողութեան թագաւորին , զոր ցուցեալ էին մարդարէութիւնքն : Մտաթիա բռնութեանց նորա ընդդէմ դարձաւ , եւ զօրինապահսն շուրջ զիւրեաւ դումարեաց : Յուդա Մակարէ նորին որդի սակաւաձեռն գնդաւ մեծամեծ իրս վճարեաց , եւ զտաճարն Աստուծոյ , յետ երկոց ամաց եւ կիսոց պղծութեանն , սրբեաց , որպէս յառաջաբոյն ասացեալ էր Ղանիէղի¹⁶ : Օհեա պնդեալ հալածական արար զեղովմայեցիսն եւ զայլ ամենայն ազգան՝ որ ձեռն տային Լնտիորայ . եւ զպնուաբոյն տեղիսն նոցա բրբռեալ , դարձաւ յաղթութեամբ եւ խոնարհութեամբ , զոր օրինակ տեսեալ էր զնա Ասայեայ , երգս ի բերան առեալ նուազելով զօրհոյսութիւնսն Աստուծոյ՝ որ մասնեաց ի ձեռս նորա զթշնամիս ժողովրդեանն իւրոյ , եւ ամենեւին թաթաւեալ յարիւն եւ յապատոյժ վերաւորաց նոցա¹⁷ : Յամենայն ժամանակի զնոյն նշան յաղթութեան կանգնէր , թէպէտ եւ անհարին բաղում էր զոր զօրավարացն Լնտիորայ : Ղանիէղ վեց ամ միայն ետ ամպարիշտ թագաւորին , լլկել եւ տանջել զժողովուրդն Աստուծոյ¹⁸ . եւ անպէն ի կատարել սահմանելոյ ժամանակին , լուաւ նա յԱլիրատանս զգործ նահատակութեան Յուդայ : Յանկարծակի դառնութեան խիթք ի փոյն անկանէին , եւ մեռանէր թշուառացեալ , որպէս յառաջաբոյն ասա-

յեալ էր մարգարէին սրբոյ¹⁹, այլ ոչ ի ձեռաց մարդկան, յեա անագան ուրեմն ճանաչելոյ զգորութիւն Աստուծոյ Խորայէղի²⁰:

Չին ինչ ինձ պիտոյ պատմել քեզ՝ թէ զխորգ կամ որով օրինակաւ նորա պայազառք զնոյն պատերազմն պատերազմեցան հակառակ հրէաստանեացն, եւ ոչ զմահն Յուդայ՝ որ զՀրեայնսն փրկեաց, եւ ոչ զյաղթութիւնս երկուց եղբարցն նորա, զՅովնաթանայ եւ զՀմաւոնեայ, որք կարգաւ առին զքահանայապետութիւն, որոց քաջութիւնն նորոգեաց զՀին փառան ժողովորդեան Աստուծոյ: Արից արանցս աւագայ՝ Ասորոց թագաւորք եւ ամենայն ազգք արուարձականք միարանեալ ընդդէմ դարձան. եւ այն իսկ առաւել աշխարանաց էր՝ զի բազում անգամ եւ յուգայեանքն իսկ վառեալ յարձակեցան ի վերայ իւրեանց աշխարհին եւ Արուսողէմի, որ ցայնժամ չէր երբեք յսկանջալուրս եկեալ, այլ յայննապէս իսկ ցուցեալ էր ի մարգարէիցն²¹: Ի մէջ այնչափ վշտաց յուսացան յԱստուած եւ կացին անասանք եւ ոչ պարտեցան: Արանելի եղև հանապազ ժողովուրդն ընդ առաջնորդութեամբն նոցա, եւ ապա ի ժամանակս Հմաւոնի զերծեալ ի լծոյ հեթանոսաց, հնազանդեցաւ եւ մուտ ընդ իշխանութեամբ Հմաւոնի եւ որդւոց նորա, հաւանութեամբ թագաւորայն Ասորոց:

Այլ հրամանն որով զամենայն հասարակաց իշխանութիւն ետ ժողովուրդն Աստուծոյ ի ձեռս Հմաւոնի, եւ շնորհեաց նմա արքունական պատիւ, նշանաւոր է: Եւ էր հրամանն օրինակ զայս՝ եթէ Եշխան քահանայապետ կացցէ նա յաւիտեանս ժամանակաց, մինչև կանգնեսցի մարգարէ հաւատարիմ²²:

Ո՛ր ժողովուրդն ի բնէ իսկ ընդելլալ ընդ աստուածեղէն առաջնորդութիւնն, եւ զխտացեալ՝ թէ յորմէ հետէ նստաւ Վաւիթ յաթոռ թագաւորութեան, Աստուծոյ հրամանաւ, տան Վաւթի անկ էր զլիւաւոր իշխանութիւն, յոր ապա զառնարոցն էր ի ժամանակս Վրիստոսի. յայտնապէս եդ զայն բան սահմանարկու իշխանութեանն տուելոյ քահանայապետիցն, եւ եկաց ընդ նորք Վրիստոսի ակն կալեալ, որ բազում անգամ խոստացեալն էր:

Այսպէս թաղաւորութիւնս այս ազատ եւ համարձակ, զիւր իրաւունսն ի կիր արկանէր, եւ բնորէր իւր առաջնորդ: Օւաւանն Յակովբայ ի ձեռն ցեղին Յուդայ, եւ մնացորդացն՝ որ ընդ Յուդայի իշխանութեամբն մտին, եկաց մնաց իրրեւ զալզ մի, եւ համարձակութեամբ եւ խաղաղութեամբ վայելեաց յերկիրն՝ որ առաւ նմա:

Ի ձեռն հրամանին ժողովրդեանն, զորմէ յառաջագոյն ճառեցաք, Յովհաննէս Հիւրկանոս որդի Շմաւոնեայ, զհայրն յաջորդեաց: Առ սովաւ Հրեայք երեւելի յաղթութեամբք մեծացան. զՇամրին հնազանդեցին, զոր եւ Ազեկիէղ եւ Արեմիա մարգարեացեալ էին²³. զեւոյմայեցիս, զփղշտացիս եւ զամոնացիս, զհանապազորդ թշնամիս իւրեանց, նուաճեցին. որք եւ ի հրէութիւն եւս դարձան, որպէս ցուցեալ էր Օւաքարիայ²⁴: Աւապա, թէպէտ եւ առէին եւս եւ նախանձէին ընդ նոսա ազգք՝ որ շուրջ զնոքոք բնակեալ նառէին, նոքա ընդ իշխանութեամբ իւրեանց քահանայապետիցն՝ որ եւ թաւաւորք իսկ եղին նոցա, կանգնեցին զնոր թաղաւորութիւնն զասամոնեանց կամ զմակաբէացւոց, հզորագոյն քան զամենայն ժամանակի բաց ի Վաւթայ եւ ի Սոզոմոնի ժամանակաց:

Տեսեր զեարդ յետ այնչափ փոփոխմանց լինելոյ կայ մնայ ժողովուրդն Աստուծոյ. եւ ժողովուրդս այս՝ որ մերթ աանջէր, եւ մերթ մխիթարէր ի նեղութիւնս իւր, ի ձեռն պէսպէս իրաց բոտ իւրոց արժանեացն ի վերայ հասելոց, տայ վկայութիւն զտեսչութենէ՝ որ զաշխարհս վարէ:

Այլ յամենայն ժամանակի միշտ ժամանակոց Օծելոյն ակն ունէր, զի յայնժամ մեծամեծ եւս շնորհաց քան զոր բնկալեալն էր, հասանելոյ ունէր ակն. եւ չեք իսկ ոք՝ որ չգիտիցէ, թէ հաւատք Օծելոյն եւ սքանչելեաց նորա, որ եւ ցայժմ իսկ ի մէջ Հրէից կայ, կարգեալ դայ ի նահապետացն նոցա եւ ի մարգարէից, անդուստ ի բնէ ազգին իւրեանց²⁵. քանզի ի բազմամեայ ժամանակսն՝ յորս եւ ինքեանք իսկ առին ի միտ, թէ խորհրդով Աստուծոյ տեսչութեանն, չերեւէր մարգարէ ոք ի միջի նոցա, եւ ոչ նոր ինչ յառաջագոյն պատմէր նույա Աստուած, եւ ոչ խոստանայր ինչ նոր, առաւել

Հաստատուն էին հաւատք Օծելոյն՝ որ զալոց էր: Եւ աւելի եւս հաստատեցաւ, յորժամ երկրորդ տաճարն շինեցաւ, մինչեւ չլինել պիտոյ մարդարէկց առ ի հաստատել զնոսա ի հաւատոն: Պնային նոքա հաւատովք առաջնոց մարդարեութեանց՝ զորս իւրեանց իսկ աչօք տեսին, զի բազում ինչ իւրք էլին ի զլուխ, եւ զմնացերոցն յայնմ հետէ չլինէին երկմիտ. եւ հաւատային հաւանեալք՝ թէ որ յամենայնի հաւատարիմ Աստուածըն է, յիւրում ժամանակի կատարիցէ զայն՝ զոր զՕծելոյն խոստացաւ, որ ամենայն աւետեացն իւրոց զլուխ էր, եւ հիմն այլոցն ամենեցուն:

Ոչ ամենայն իսկ պատմութիւն նոցա, եւ որ ինչ հանապաղօր հասանէր նոցա, մեկնէին եւ յայտնէին միշտ զպատգամն՝ զորս Հողոյն սրբոյ տուեալ էր նոցա: Թէպէտ եւ դարձեալք ի դերութենէ յերկիրն իւրեանց, զերեքհարեւր ամ ի խաղաղութեան վայելեցին, թէպէտ եւ տաճարն նոցա մեծարեցաւ, եւ օրէնքն նոցա յամենայն արեւելք պատուեցան, թէպէտ եւ իւրեանց երկպառակութեամբքն խաղաղութիւն նոցա ի խռովութիւն դարձաւ, թէպէտ եւ ամբարտաւան թագաւորն Ասուրոց անհնարին ջանացաւ ջնջել զնոսա, եւ ժամանակս ինչ յաղթահարեաց զնոսա, եւ յետ սակաւու միոյ պատիժս կրեաց, եւ հրէական օրէնքն եւ ամենայն ժողովուրդն Աստուծոյ մեծապանչ փառօք փառաւորեցան, եւ մեծացաւ արքայութիւն Յուդայ բազում կողմանց տիրելով. այլ որպէս յառաջագոյն իսկ տեսեր, այս ամենայն դրեալ կայր ի մարդարէսն նոցա: Արքարեւ ամենայն ինչ նշանակեալ էր ի նոսա, մինչեւ յժամանակս անդամ հարածանացն, եւ մինչեւ ցտեղիան՝ ուր պատերազմունք մղելոց էին, եւ մինչեւ յերկիրսն՝ որոց տիրելոց էին:

Ինչ ինչ ի մարդարեութեանց աստի վարկպարազն ի մեջ բերի, զի վասն մանր զամենայն պատմելոց երկայնադոյն ճատից պէտք են: Հայտմ վայրի զնշմարանս եւ եթ կամիմ նկարել զկարեւորն ճշմարտութեանց՝ որոց այնչափ խեղամուտ ոք լինիցի, որչափ յառաջ մատուցեալ զմի մի ի նոցանէ քննիցէ: Օչայն եւ եթ սլոժմիկ ցուցից՝ թէ մարդարեութիւնք ժողովրդեանն Աստուծոյ

այնպէս յայտնի իսկ ի գլուխ ելին յամենայն ժամանակն յայնստիկ, զի ապա եւ հեթանոսք իսկ, Պորփիրոս եւ Յուզիանոս ուրացեալ՝ որ գրոցն թշնամիք էին, յորժամ մարգարէական կանխախօսութեանց օրինակս յօժարեցին ընծայեցուցանել, ի մէջ Հրէիցն խնդրեցին²⁵ :

Եւ մարթեմ ճշմարտութեամբ իսկ ասել՝ զի թէպէտ եւ զհինգհարեւր ամ առանց մարգարէի էր ժողովուրդն Աստուծոյ, այլ ամենայն անցք ժամանակացն այնոցիկ մարգարէութեամբ պատմեալ էին . գործն Աստուծոյ յուղի անկանէր, եւ մեզմով առ սակաւ սակաւ պատրաստէին ճանապարհք առ բովանդակ կատարումն հետցն պատգամացն :

Դառնալ գերութեանն բարեղացւոց ստուեր իմն էր պատուութեանն՝ որ մեծ եւս էր եւ կարեւոր, զոր Օծեալն շնորհելոց էր մարդկան գերելոց ի մեղաց : Եւ զովուրդն այսր անդր ցրուեալ ի վերնագաւառսն ասիացւոց եւ ի փոքր Ասիա, յԱգիպոսս եւ ի Յունաց իսկ աշխարհին, սկսանէր պայծառացուցանել ի մէջ հեթանոսաց զանուն եւ զփառս Աստուծոյ Իսրայէղի : Գիրք սուրբ՝ որ լոյս աշխարհի լինելոց էին, թարգմանեցան ի լեզու՝ որ առաւել ծանօթ էր ամենայն աշխարհի, եւ ծանուցաւ հնութիւն նոցա : Մինչ զևս մեծարէր տաճարն եւ սփռէին գիրք ի մէջ հեթանոսացն, զկերպարանս իմն հանդերձեալ դարձին նոցա ցուցանէր Աստուած, եւ զայնր հիմունս անդուստ ի բնէ արկանէր :

Այնպէս եւ որ ինչ անցք ի մէջ Յունաց անցանէին, պատրաստութիւն իմն էին առ ճշմարտութեանն գիտութիւն : Փիղիսոփայքն նոցա ծանեան՝ թէ աշխարհս յԱստուծոյ ումքէ վարիցի, որ շեցէ այնպիսի ոք, որպիսի ինչ իցեն գիբն՝ որոց խառնիճազանձ՝ ռամիկն երկիր պաղանէր, որոց ինքեանք իսկ փիղիսոփայքն ռամկան հանդերձ յարրանեկութեան կային : Յունաց պատմութիւնք հաւատարիմ առնեն՝ թէ այսպիսի գեղեցիկ զգաստասիրութեան ճառք յարեւելից եկին, եւ ի կողմանց՝ ուր Հրեայքն ցրուեալ էին . այլ այս ուստի եւ կեկալ իցէ, այնպիսի մեծ ճշմարտութեան ճառք ի հեթանոսաց միջի տարածեալ, թէպէտ եւ հակառակութիւն եւս կրեալ, թէպէտ եւ նոքին իսկ՝ որ ուսուցանելին, չզնա-

ցին զՏեա, սահայն զմարդկութիւնս սկսանէին զարթու-
ցանել, եւ պատրաստէին յառաջագոյն պատճառս ճշմա-
րիտս այնոցիկ՝ որ ապա յանգիտութենէ հանելոց էին
զազգս մարդկան:

Այլ քանզի հեթանոսութեան դարձն՝ Վրիստոսի
գործ էր եւ նորա դպտտեանն ճշմարիտ նշանակ, ընդ
բնաւ մոլորութիւն եւ ամպարշտութիւն տիրէր: Ար
հանձարեղք եւ խմաստնագոյնք քան զամենայն ազգս էին,
քաղզեացիք եւ եգիպտացիք եւ փիւնիկեցիք եւ Յոյնք
եւ Հռոմք, տգիտագոյնք եւ կուրացեալք էին ի ճշմա-
րիտն կրօնից. զի ճշմարտիւ շնորհք պիտոյ են վասն ճրշ-
մարիտ կրօնիցն հասանելոյ, եւ խմաստութիւն առաւել
քան զմարդկեղէնս: Ա՞ իշխիցէ պատմել զպաշտամունս
անմահ զիցն եւ պղծալից խորհրդոցն նոցա: Յանկու-
թեանց նոցա, եւ անազորունութեանց, եւ նախանձուն,
եւ այլ ամենայն անպիտանութեանցն տօնս տարեկանաց
առնէին, զոհս մատուցանէին, զերգս վիպասանաց ի բե-
րան առեալ նուազէին, եւ նկարեալ ի մեհեանս նոցա
նուիրէին: Աւ այնպէս անօրէնութիւն երկրպագութիւն
առնոյր, եւ կարեւոր առ պաշտօն զիցն ճանաչէր:
Օգաստագոյնն ի փիղիսոփայիցն²⁷ արդելու գինի մի
բմալել յաճախութեամբ, այլ ի տօնս սանդարամետա-
կան զիցն, եւ ի պատիւ զիցն այնորիկ, արժան է ասէ:
Այլ ոմն²⁸ դարձեալ յետ սաստիկ դարովելոյ զամենայն
պատկերս լիտիս, զպատկերս զիցն այնոցիկ՝ որ այն-
պիսի ժանտագործութեամբք պատիւ առնուլ կամէին,
չգարովէ: Չէ մարթ թէ չզարմանայցէ, յորժամ ըն-
թեանուցու որ զպատիւ Աստղեանն, եւ զանառակու-
թիւնն՝ որ կարգեալ էին յերկրպագութիւն նորա²⁹:
Յոյնք՝ թէպէտ եւ խրատեալ եւ խմաստուն էին, զխոր-
հուրդան դարշելիս ընկալեալ էին: Յիրս ինչ կարեւորս,
իւրաքանչիւր որ եւ առ հասարակ ամենեքին՝ նուիրէին
կանայս սպասաւորս Աստղեան, եւ չպատկառէին Յոյնք
ասել՝ թէ փրկութիւն նոցա ի նոցա աղօթից եղեւ, զոր
առ իւրեանց զիսն արարին: Յետ խորատակելոյ Վսերքսի
եւ անհնարին զօրաց նորա, եղաւ ի մեհեանիս տախտակ՝
յորոյ վերայ նկարեալ կային ուխտք նոցա եւ նուէրք.
եւ էր գիր գրեալ ի Աիմնիդեայ անուանի պետէ այս-

պէս, Սոքա աղաչեցին զգիսն Աստղիկ՝ որ առ սէր նոցա զՅուսոյց աշխարհ վրիեաց³⁰ :

Աթէ սիրոյ ինչ պարտ էր երկիր պաղանել, դէթ զգաստութեան սիրոյ երկիր պաղանէին, այլ չէր ինչ այնպիսի : Օ՛րորնէ ս՞ կարէ կարծել, կամ ակն ունել յայնպիսի առնէ մեծէ այնմ անհարկն նշաւակութեան . սա զմհեան Աստղիկն ցանկութեան պղծութեան յԱթէնս շինեաց³¹ : Ամենայն իսկ աշխարհն Յուսոյց լի էր մհհհնիւք նուիրելովք զիցն այնմիկ, եւ ոչ մի մհհհեան սիրոյ ամուսնութեան գոյր յամենայն դաւառին :

Բայց սակայն զնութիւն եւ արանց եւ կանանց խտտէին . ամուսնութիւն նուիրեալ եւ սուրբ էր ի միջի նոցա : Այլ յորժամ ի կրօնս դային, մոլեգնէին իմն եւ դիւսցեալք զբնածին իւրեանց մտայն զմաստութիւն մոռանային :

Իսկ հռոմայեցիք՝ որ զգաստագոյնք իմն էին, չէին ինչ բնդհատ ի նոցանէ կրօնիւքն . քանզի եւ նոքա իւրեանց զիցն զպղծութիւնս թատերցն, եւ զանօրէն տեսիլ նշաւակի մենամարտիկ ոգորելոյն նուիրէին, որ ամենեւին իսկ լի էին ապականութեամբ եւ վայրենութեամբ :

Այլ մորոսութիւնքն եւ ծաղրալից պատմութիւնք՝ որք ի կրօնսն խառնէին, առաւել փաստակարագոյնք էին, քանզի նոքօք արհամարհ իմն կրօնքն լինէին : Օ՛խարդ մարթ էր աստուածեղէն իրաց, որպէս պարտ եւ պատշաճ էր, մեծարել, յորժամ առասպելք անպիտանք կարկատունք ի միջի պատմէին, որոց ճառք եւ յիշատակք մեծ մասն աստուածեղէն պաշտամանն էին : Ամենայն պաշտամունք նոցա հանապազորդ պղծութիւն էին, մանաւանդ թէ եւ թշնամանք իսկ Աստուծոյ անուանն . եւ հարկ էր՝ թէ զօրութիւն ինչ լինէր անդ թշնամի հակառակորդ անուանն այնորիկ սրբոյ, որոյ ձեռն արկեալ անարդել զանուն աստուածութեան, դրդեաց զմարդիկ չնչնոցն եւ անպիտանեաց զայն անուն անուանել, եւ աստուած իսկ կարդալ այնպիսի անարժան իրաց :

Թէպէտ եւ յետոյ ծանեան փիղիտոփայքն՝ թէ է այլ ոմն Աստուած, քան զայնոսիկ՝ որոյ խառնադանձն երկիր պաղանէր, այլ չիշխէին խոստովան լինել զնմանն : Օ՛նորին հակառակն, Սոկրատէս հրաման տայր՝ թէ, իւ-

բաբանչեւ որ զեւրոյ աշխարհի կրօնից պարտի զհետ երթալ³² : Պղատոն նորին աշակերտ՝ որ զամենայն աշխարհն Յունաց եւ զամենայն կողմանս աշխարհի անմտութեան եւ զայթակղանաց պաշտամամբն լցեալս տեսանէր, զայս իրրեւ հիմն իւրոյ բնկերհաշտութեանն արկանէր, թէ չէ արժան փոփոխել ինչ ի կրօնից՝ որ եզեալ լցեն, եւ թէ որ այնպիսի ինչ առնել մտաբերիցէ, ի մտաց անկեալ է³³ : Փիղիսոփայք իմաստունք, եւ որ զայնպիսի դեղեցիկ բանքս զաստուածեղէն բնութենէն ճառեցին, չիշխեցին հասարակաց մոլորութեանն հակառակել, եւ անյոյս եղին յաղթել մոլորութեանն : Յորժամ Սոկրատէս ամբաստանեցաւ, թէ զգիցն՝ որոյ առ հասարակ երկիր պապանէին, յուրաստ է, իրրեւ զյանցանս ինչ յանձնէ ի բաց քերէր զիրսն³⁴. եւ Պղատոն զԱստուծոյ՝ որ զամենայն աշխարհս կազմեաց, ճառեալ, ասէ՝ թէ զնա դժուարին է դասնել, եւ թէ արդելեալ է յայանել զնա ժողովորեանքն³⁵ : Այլ յայտ առնէ՝ թէ հանապաղ զնմանէ առակօք խօսիմ, զի մի ծաղը ինչ զայնպիսի ճշմարիտ ճառս առնիցեն :

Յորպիսի անդունդս էր մարդկութիւնս, զի եւ զսակաւ ինչ ճառս ճշմարիտն Աստուծոյ չկարէր տանել : Աթենացիք՝ որ առաւել խրատեալք եւ իմաստանդոյնք քան զամենայն Յոյնս էին, անաստուածս համարէին զնոսա՝ որք զիմանալի ինչ իրաց ճառէին . եւ մի ինչ ի պատճառանաց՝ վասն որոյ Սոկրատէս զատապարտեցաւ, այս էր³⁶ : Աթէ ոմանք ի փիղիսոփայից իշխէին ուսուցանել՝ թէ անդրիատքն եւ պատկերք չեն աստուածք, որպէս ռամկաց միտք իմանային, ասպ ստիպեալ լինէին ի հարկէ զյառաջագոյն ասացեալ զբանս եղծանել³⁷, եւ յետ այնորիկ իրրեւ զամպարիշտս արէոսպապայ հրամանատարազիր լինէին : Աոյն մոլորութիւն բնդ ամենայն երկիր շահեալ տիրէր, եւ ճշմարտութիւն չիշխէր երեսել : Աստուած մեծ արարիչ աշխարհիս, տաճար եւ պաշտօն յարուսաղէմ միայն ունէր : Յորժամ առաքէին անդր հեթանոսք զպատարազս իւրեանց, ոչ այլ ինչ պատիւ մաստուցանէին Աստուծոյ Խարայէղի, բայց զի զնա ընդ այլ աստուածսն խառնէին : Արեւստան միայն դիտէր՝ թէ յոյժ նախանձոտ է Աստուած, եւ տեղեակ էր՝ թէ զկրօն-

սրն ի մէջ նորա եւ ի մէջ այլոց աստուածոց բաժանել ,
զկրօնսն եղծանել է :

Իսկ ի վախճան ժամանակացն եւ ինքեանք իսկ
Հրեայքն՝ որ ճանաչէին զնա եւ աւանդապահք էին կրօ-
նիցն, սկսան ոչ մոռացօնս առնել Աստուծոյ հարցն իւ-
րեանց , այլ խտռնել ի կրօնսն ինքնակամ պաշտամունս
անարժանս Աստուծոյ . զի այնպէս իսկ առ սակաւ սա-
կաւ մարդիկ զճմարտութիւն ակարացուցանեն : Առ ա-
սամոնացւոց թագաւորութեամբ , եւ ի ժամանակս իսկ
Յովնաթամու , փարիսեցւոց աղանդն ի մէջ Հրէիցն սկիզ-
բրն առնոյր : Յառաջնումն մեծարոյք երեւէին սրբու-
թեամբ ուսման վարդապետութեան իւրեանց , եւ սոյդ-
պահպանութեամբ օրինացն . վարք նոցա քաղցունք էին ,
թէպէտ եւ կարգեալ եւ կանոնեալ , եւ մեծաւ միարա-
նութեամբ կեային ընդ միմեանս : Սեճաւ նախանձու
հաստատելով՝ եթէ զոն հատուցմունք եւ պատիժք պա-
տուհասից ի կեանսն հանդերձեալս , բազում փառս եւ
պատիւ անձանց շահէին³³ : Այլ ապա իշխանութեան
ցանկութիւն սարդեաց եմուտ ի նոսա : Առաջնորդ լինել
կամեցան , եւ արդեամբ իսկ արարին զանձինս համարձակ
իշխանս ի վերայ ժողովրդեանն . եղևն դատաւորք վար-
դապետութեան եւ կրօնից , զկրօնսն առ սակաւ սակա-
յաւերորդ իրս եւ յինքնակամն պաշտօն դարձուցին , որ
օգուտ էին նոցա եւ կարեւոր առ ի լինել նոցա տեսարս
մտացն խղճի , որպէս կամէինն իսկ . եւ այնպէս օրինացն
ճմարտութիւն մերձ էր կորնչել :

Յայսց չարեաց վերայ մեւս եւս մեծ չարիք յաւե-
լան , հպարտութիւն եւ մեծարդութիւն , զի մեծարդու-
թեամբն զպարգեւան Աստուծոյ անձանց դրէին : Հրեայք
ընդելեալք ընդ երախտիսն նորա , եւ ի բազում ժամա-
նակաց նորա զխտութեամբն լուսաւորեալք , մոռացան
զայն՝ թէ մարդասիրութիւնն նորա միայն յայլոց ազգաց
զատոյց զնոսա , եւ զչնորհան նորա իբրեւ զպարտս իմն հա-
մարեցան : Քանզի ազգ ընտիր էին եւ յերկուց հազար
ամաց օրհնեալ , զանձինս եւ եթ արժանիս աստուած-
գիտութեան համարեցան , եւ այլ ազգ ինչ զանձինս կար-
ծեցին քան զայլս ի մարդկանէ՝ զորս զրկեալս տեսանէին
յաստուածածանօթ գիտութենէ : Օայս ի մտի եղեալ

անհնարին արհամարհանօք ընդ հեթանոսս հայէին : Մասն յԱրրահամէ ըստ մարմնոյ սերկոյ, թուէր իմն նոցա՝ թէ բնութեամբ իսկ ընտիրք իցեն եւ քան զայլսն աւանութենէ, սուրբս զանձինս բնութեամբ համարեցան եւ ոչ շնորհօք . եւ ցայժմ իսկ զսոյն մոլորութիւն ախտանան : Օչոյս կարծիս փարիսեցիք ի ներքս մուծին, ի կատարած կոյս ժամանակացն, զի խնդրէին փառաւոր լինել իւրեանց իմաստութեամբն եւ ստոյգ պահպանութեամբ կարգաց օրինացն : Քանզի զատանել եւ եթ զանձինս յայլոց ի մարդկանէ կամէին, յաճախեցին բաղմացուցին անհնարին զզործան արտաքինս . եւ զամենայն խորհուրդս մտաց իւրեանց, թէպէտ եւ հակառակք եւս իցեն օրինացն Աստուծոյ, իրրեւ ճշմարիտ աւանդութիւնքս ուսուցանէին :

Թէպէտ եւ այսպիսի խորհուրդք չեղեն հասարակաց հաւանութեամբ ի կրօնան եւ ի հրամանս ժողովրդանոցին ընկալեալ, այլ մեղմով սպրդէին մտանել ի ժողովուրդն՝ որ խռովէրն եւ պղտորէր եւ յուզէր : Աւսպա երկրպառակութիւնքն՝ որ ըստ իւրեանց մարդարէիցն՝ սկիզբն լինելոց էին կործանման նոցա, յայտնէին, յորժամ դէպ եղև խռովութեանց ի տան ասամոնացւոց լինել : Ապիւ վաթսուն ամբ ի միջի էին մինչև ցՔրիստոս, յորժամ Հիւրկանայ եւ Արիստարուղայ, որդւոց Աղէքսանդրի Յաննէայ, դուպարած կայր վասն քահանայութեան՝ ընդ որում խառն էր եւ թաղաւորութիւնըն : Այս իսկ ժամանակ է չարեացն եւ տառապանացն⁴⁰, յորում զառաջին պատճառս կործանման Հրէիցն ցուցանէ պատմութիւնն : Պոմպէոս՝ զոր երկոքին եղբարք կուչեցին, զի եկեալ յարգարեացէ զերս Հրէիցն, զերկոսեանըն եւս հնազանդեաց, ի ժամանակի զի ընկէց զԱտիոքոս՝ որոյ անուն յորջորջանաց Ասիացի կոչէր, զյետին թաղաւոր Ասորոց : Այս երեք թաղաւորք ի միասին միանգամայն անկեալք յիշխանութենէ, եղեն նշանակք կործանման՝ զոր յայտնութեամբ եցոյց Օւքարիա մարգարէն⁴¹ : Ի պատմութենէ յայտ է՝ թէ այս փոփոխումն իրացն Ասորոց եւ Հրէից ի ձեռն Պոմպէի յայնժամ եղև, յորժամ յեա ի գլուխ հանելոյ զՄիթրիզատայ

կռիւն, պատրաստեալ զառնալ ի Հռոմ, յարդարեաց զերս արեւելից: Մարդարէն զայն եւ եթ նշանակէ, որ զխաօղ իցէ կործանման Հրէիցն՝ որք յերկուց եղբարց անտի որ եւ թաղաւոր իսկ լեալ էին, զմին տեսին ի բանտ արկեալ առ ի ձաղել զնա Պոմպէի, եւ զմեան՝ զՀիւրկանոս զտկարն՝ յորմէ հան Պոմպէոս զթաղն եւ զմեծ մասն տէրութեան նորա, զի չունէր ինչ բայց միայն անուն լոկ իշխանութեան՝ զոր կորոյսն իսկ վաղվազակի:

Յայնժամ եղև Հրէից՝ հռոմայեցւոց հարկս հարկանել, եւ աւերն ասորեստանի փութացոյց զկործանումն նոցա. քանզի զթաղաւորութիւնս զայս մեծ՝ որ մերձաւոր սահմանակից էր Հրէիցն, ընդ նահանգաւ արարեալ հռոմայեցւոց, զօրացաւ անդէն իշխանութիւն նոցա, մինչեւ չմնալոյ այնու հետեւ յուսոյ փրկութեան, բայց միայն հնազանդ լինել հռոմայեցւոց: Ասորեստանի ոստիկանք հանապազօրդ ջանային նենդութեամբ ի վերայ հրէաստանի. Հռոմք համարձակ տիրեցին աշխարհին, եւ ի բազում ինչ իրս զիշխանութիւն առաջնորդութեան նոցա նուազեցուցին: Աւ ապա ի ձեռն նոցա թաղաւորութիւնն բարձաւ յասամոնացւոց՝ որոց յանձն լեալ էր, եւ աուաւ ի ձեռս Հերովդի օտարոտոյ եւ եղովմայեցւոյ: Թաղաւորն անազորոյն խստութեամբն եւ իշխանութեան ցանկութեամբ, զամենայն կարգս հին առաջնորդութեանն փոփոխեաց, զի եւ զօրէննն իսկ հրէականս կերպարանօք եւ եթ ունէր: Այնու հետեւ Հրեայք չէին ինչ անձանց տեսարք, որպէս առ յաղթ տէրութեամբն Պարսից, եւ առ առաջին Սեղեւկիդեամբքն, յորժամ խաղաղացեալք անհոգ նստէին: Հերովդէս՝ որ անդէն իսկ ընդ իւրով իշխանութեամբն ծառայացեալս կացոյց զնոսս, զամենայն ինչ եղծ. զպայազատութիւն քահանայապետացն, որպէս զխորդ ինքն կամեցաւ, շփոթեաց. զքահանայապետութիւնն տկարացոյց եւ արար ընդ իշխանութեամբ, եհար զՋիդս իշխանութեան խորհրդականութեան ազդին, որ չէր իմիք այնու հետեւ ձեռնհաս. եւ ամենայն իշխանութիւն հասարակաց անկաւ ի ձեռս Հերովդի եւ հռոմայեցւոց՝ որոց ինքն ծառայ էր, եւ քակեաց տապալեաց ընկէց զհիմունս զՀրէից ընկերհաշտութեան:

Ի նՈՒՂՁԵԼ կրօնիցն եւ ի կործանել իրացն շրէից, ի վախճան թաղաւորութեան շերովդի, ի ժամանակի՝ զի փարիսեցիք այնչափ անպիտանութիւնս ի ներքս մուծանէին, առաքեցաւ Վրիտտոս յերկիր, զի կանդնեսցէ զթաղաւորութիւն ի տան Վաւթի, բարձրագոյն պայմանաքան զխորհուրդս շրէիցն մարմնաւորաց եւ աստէն ի սոյն կեանս ծնդեւոց, եւ զի քարոզեսցէ զուսումն՝ զոր Աստուծոյ ի մտի եղեսալ էր ամենայն համօրէն աշխարհաց պատմել: Սննուկս սքանչելի՝ որ յԱսայայ Աստուած հզօր կոչեցաւ, հայր հանդերձեալ աշխարհին, եւ իշխան խաղաղութեան, ծնաւ ի կուսէ միոջէ ի Բեթղահէմ, եւ եկն անդ՝ զի յայանեսցի ծաղումն ազգատոհմի նորա: Յղացեալ ի շողոյն սրբոյ, սուրբ ծննդեամբն իւրով, միայն արժանի զմերոյ բնութեանն զպակահնութիւն նորոգելոյ, Փրկիչ՝ անուանեցաւ, զի փրկելոց էր զմեզ ի մեղաց մերոց:

Աղվազակի յետ ծննդեանն ասող ինչ նոր, առակ օրինակի լուսոյն՝ զոր հեթանոսաց ծաղելոց էր, յարեւելս երեւեցաւ, եւ ած առ կենարարն մանուկ նորածին զերախայրիս հեթանոսացն զարձելոց: Յետ սակաւ միոյ, Տէրն՝ որում այնչափ ցանկացեալ էին, եկն ի տաճար իւր սուրբ, ուր Շ մաւռն զնա ոչ միայն փառս Խորայէզի կոչեաց, այլ եւ լոյս ազգաց անհաւատից՝:

Յորժամ մերձեցաւ ժամանակ քարոզութեան աւետարանի նորա, Յովհաննէս մկրտիչ՝ որ պատրաստ առնելոց էր զճանապարհս առաջի նորա, կոչեաց զամենայն մեղաւորս յապաշխարութիւն. եւ հնչեցոյց ի ձայն բարբառոյ իւրոյ զամենայն անապատն, ուր յառաջին տիոցն մեծաւ խստամբերութեամբ եւ անմեղութեամբ կայր: Իսկ ժողովուրդն՝ որոյ ի հինգհարեւր ամաց հետէ չէր տեսեալ մարգարէ, ծանեաւ զնորն Աղիա, եւ պատրաստեալ էր բնդունել զնա՝ թէ սա է փրկիչն, քանզի այնպէս մեծ իմն թուէր սրբութիւն նորա. այլ ինքն իսկ եւ

ցոյց ժողովրդեան զայն՝ զորոյ զխրացս կօշկաց նորա չէր բաւական լուծանել³ :

Ապա սկիզբն արար Վրիստոս քարոզել զաւետարանն իւր, եւ յայտնէր զծածուկն՝ զոր ի յաւիտենիցն ի ծոց Զօրն իւրոյ աւեսանէր : Արի նա զՏիմոնն եկեղեցւոյ իւրոյ զերկոտասան ձկնորսն կոչելով, եւ զՊետրոս ի գլուխ գնդին կայուցանէր յայտնի առաւելութեամբ իւրիք, մինչ զի աւետարանիչքն՝ որ յորժամ զառաքեալսն ի համար արկանիցեն, կարգ ինչ ստոյգ չպահեն, միարան զՊետրոս յառաջ քան զայլսն համարին⁴ իրրեւ զառաջին : Վրիստոս այսր անգր բնդ ամենայն հրէաստան ընթացաւ, եւ ելից զնա երախտեօքն իւրովք : Հիւանդաց ձեռնկալու եղև, մեղաւորաց գթացաւ, որոց զանձն իւր ճշմարիտ զեղ բժշկութեան եցոյց առ ինքն մատուցանելով զնոսա, երեւեալ մարդկան այնպիսի ճոխութեամբ եւ հեղութեամբ, որպիսի ինչ ճոխութիւն եւ հեղութիւն չեւ էր երեւեալ բայց միայն ի նմա : Աորհուրդս բարձրագոյնս պատմէր, այլ մեծամեծ նշանօք զնոսա հաստատէր. մեծամեծ առաքիւնութիւնս հրաման տայր առաքինանալ. այլ շնորհէր եւ մեծամեծ դիտութիւնս եւ օրինակս եւ շնորհս : Ասան այնորիկ իսկ եւ երեւէր Վի շնորհօք եւ ճշմարտութեամբ, եւ ի լրութեանէ անտի նորա մեք ամենեքին առաք⁵ :

Ամենայն ինչ ի նմա հանապազ հաստատուն կայր, կեանք նորա եւ ուսումն եւ սքանչելիք : Աոյն ճշմարտութիւն ամենայն ուրեք ի նմա պայծառանայր. ամենայն ինչ համօրէն միախուռն ի մի վայր եկեալ զնա աէր ազգի մարդկան ցուցանեն եւ օրինակ կատարման :

Աս միայն, ի մարդկան միջի կեցեալ եւ առաջի աչաց ամենայն մարդոյ, կարաց անխիղճ անխեթ համարձակ ասել թէ Ա՞ ի ձէնջ յանդիմանէ զիս վասն մեղաց. եւ դարձեալ թէ Աս եւ լոյս աշխարհի. իմ կերակուր այն է՝ զի արարից զկամս Զօր իմոյ. որ առաքեացն զիս՝ ընդ իս է, եւ ոչ եթող զիս միայն, զի ես զհաճոյսն նորա սունեմ հանապազ⁶ :

Աքանչելիք նորա առանձինն կարգաւ իւրք են եւ նորասքանչ կերպարանօք : Չեն նշանք յերկնից, որպիսի ինչ Զրեայք խնդրելին⁷. զրեթէ, զամենայն իսկ զնշանն

ի վերայ մարդկան առնէր եւ վասն զհիւանդութիւնս նոցա բժշկելոյ: Ամենայն սքանչելիք նորա առաւել մարդասիրութեանն քան զօրութեանն, եւ ոչ այնչափ զարմացուցանէին ինչ զտեսողսն, որչափ զխորս սրտից նոցա բախէին: Իշխանութեամբ առնէր զնոսա. զեւք եւ հիւանդութիւնք հնազանդէին նմա, բանիւն նորա կոյրք ի ծնէ տեսանէին, մեռեալք ի գերեզմանաց արտաքս երանէին, եւ մեղք թողուին: Ակիզըն նոցա ի նմա իսկ էր, յականէ իսկ հոսէին. Գիտացի, ասէ, եթէ զօրութիւնն ել յինէն⁸: Մասն որոյ եւ ուրուք չէր արարեալ այնպիսի նշանս մեծամեծս եւ բազումս թուով. բայց սակայն ինքըն խոստանայ՝ թէ աշակերտքն նորա մեծամեծս եւս քան զոյցնս առնիցեն⁹, զի այնպէս իսկ առատ եւ անսպաս էր զօրութիւնն՝ զոր յանձին իւրում բարձեալ բերէր:

Ո՞րք չգարմանայցէ՝ թէ զիարդ զեջանելով զբարձրութիւն վարդապետութեանն քաղցրացուցանէր: Ուսումն նորա տղայոցն կաթն էր, եւ միանդամայն հաց հաստատելոցն եւ զօրացելոց: Ի երեւէր զաղանեօքն Աստուծոյ, այլ ոչ ի զարմացման լեալ հանդոյն այլոց մահկանացուաց՝ որք Աստուծոյ հաղորդակիցք լինիցին. սա բատ բնութեան իմն ճառէ զնոցանէ, իրրեւ ի ծածուկան յայնոսիկ եւ ի փառսն ծնեալ. եւ զոր առանց չափոյ ունի¹⁰, չափով տայ, զի մեր ակարութիւնս բաւական լինիցի տանել:

Թէպէտ եւ վասն ամենայն աշխարհի առաքեցաւ, նախ՝ առ ոչխարս կորուսեալս տանն Խարայէղի մատչէր, որոց մանաւանդ առաքեալ էր. այլ հորդէր ճանապարհ դարձին շամրտացւոց եւ հեթանոսաց: Աին մի շամրտացի ծանեաւ զնա՝ եթէ Վրիստոսն է, զի եւ շամրտացիքն ակն ունէին նմա որպէս եւ Հրեայքն, եւ ուսաւ ի նմանէ ըզխորհուրդ նորոյ պաշտամանն՝ որ չէր այնու հետեւ գրաւելոց ի միում վայրի¹¹: Աին մի քանանացի եւ կռապարիշտ, թէպէտ եւ ի բաց եւս մերժեցաւ, յափշտակեաց իմն ի նմանէ զբժշկութիւնն դատերն իւրոյ¹²: Բազում ուրեք ի մէջ հեթանոսաց որպիս Աբրահամու եգիտ¹³, եւ զիւրմէ վարդապետութենէն պատմէ՝ թէ քարոզելոց է, եւ ամենայն երկիր հակառակելոց է եւ ընդունելոց: Մարդկան այսպիսի ինչ երբեք չէր տեսեալ, եւ առաքեալքն իսկ

ընդ այն զարմանային: Ալ ծածկեաց նա յիւրոյն զվերա-
սըն եւ զնեղութիւնս՝ ընդ որս անցանելոց էին: Այցոյց
նոցա զբռնութիւնն եւ զխռովութիւնս՝ որ ի վերայ նո-
ցա հասանելոց էին, զհալածանս, զմոլորութեան ուս-
մուննս, զուտ եղբարս, զպատերազմուննս ի ներքոյ եւ
արտաքոյ, զհաւատս զտեալս սրբեալս յայս ամենայն
փորձանաց. եւ ի վախճան ժամանակաց զտկարանալ հա-
ւատոցն, եւ զպակասել սիրոյ ի մէջ աշակերտացն իւրոց.
եւ զէկեղեցւոյ իւրոյ եւ զճշմարտութեան յայնչափ վըշ-
տաց միջի չմասնել ի պարտութիւնս¹⁴:

Արդ այս նոր իմն յօրինուածք են եւ նորոգ կարգ
իրաց. ոչ ճառին յայնմ հետէ որդւոցն Աստուծոյ ըզ-
ժամանակեան հատուցմանց. կեանս հանդերձեալս եցոյց
նոցա Վրիստոս, եւ յայն ակնկալութիւն բեւեռեալ զնո-
սա, յամենայն իրաց երեւելեաց ուսոյց զանձինս ի բաց
քակել: Խաչն եւ համբերութիւն եղեն բաժինք նոցա ի
վերայ երկրի, եւ արքայութիւն երկնից եղաւ առաջի
նոցա՝ զի բռնաբարեցի¹⁵: Ինքն իսկ Վրիստոս՝ որ զայս
նոր ճանապարհ եցոյց մարդկան, ընդ այն նախ եմուտ.
Ճշմարիտ ճշմարիտ պատգամս քարոզեաց, որովք ապշե-
ցան միտք մարդկան թանձրամտացն եւ ամբարտաւանից.
աճ յայտ զծածուկ հպարտութիւն եւ զկեղծաւորութիւն
փարիսեցւոցն եւ զպարայ՝ որ զօրէննս իւրեանց մեկնու-
թեամբք եղծանէին. այլ ի յանդիմանելն իսկ զնոսա, մե-
ծարանս զներ պաշտամանն նոցա, եւ աթոռոյն Մովսիսի՝
յոր նստան¹⁶: Յաճախէր ի տաճարն, եւ տայր ակն ածել
ի սրբութենէ տաճարին, եւ զըրրոտսն՝ զորս սրբեաց, ա-
ռաքէր առ քահանայսն: Աղբիմբք ուսոյց մարդկան՝ թէ
զկարգ արժան է յանդիմանել եւ խափանել զանպատեհ-
սըն, ոչ ինչ մնասեալ պաշտամանն կարգելոյ յԱստուծոյ.
եւ եցոյց՝ թէ դեռ եւս որջ կայր ժողովրդանոցն, թէ-
պէտ եւ ոմանք ստրականեալ էին: Այլ յայտնապէս իսկ
ի կործանումն բերէր:

Վահանայապետքն եւ փարիսեցիք հակառակ յա-
րուցանէին Վրիստոսի զազն Հրէից՝ որոց կրօնք յրնդ-
ունայնութեան պաշտօն դառնային: Ալ կամեցաւ ժո-
ղովուրդն զփրկիչն աշխարհի ընդունել, որ կոչէր զնոսա
ի կրթութիւնս հաստատունս, այլ դժուարինս: Ար քան

զամենայն մարդիկ սրբազոյն եւ պնուազոյն էր, եւ ինքն իսկ սրբութիւն եւ մարդասիրութիւն, նոցա քան զամենեսեան ատելի եւ դարշելի եղեւ: Իսկ նա չգնայր ի բաց, եւ չզագարէր առնել կրախտիս քաղաքացեացն իւրոց, այլ ետես զազախտաւորութիւն նոցա, եւ զայնր պատիժան յառաջադոյն ասաց արտասուելով, եւ պատմեաց Նշուսաղէմի զաւերն՝ որ մօտ հասեալ կայր: Ասաց եւ զայն յառաջադոյն՝ թէ Հրեայք թշնամիք ճշմարտութեան զոր պատմէրն նոցա, ի մոլորութիւն զառաժանելիցն, եւ խաղ առնիցեն զնոսա սուա մարդարէքն:

Ի ժամանակին յայնմիկ փարիսեցիքն առ նախանձուածին զնա ի տանջանս ձաղութեան. թողին զնա աշակերտք իւր, մի ոմն ի նոցանէ մնանեաց զնա, եւ որ դուխրն էր նոցա եւ ջերմաջերմ քան զամենեսին՝ երկոցս ուրացաւ զնա: Ամբաստանեալ առաջի ատենին, մեծարեաց մինչեւ ցլխսնձան զպաշտօն քահանայիցն, եւ յայտնի բանիւք պատասխանի տայր քահանայապետին՝ որ հարցանէրն զնա օրինօք դատաստանի: Այլ եկեալ հասեալ էր ժամանակ անարգելոյ ժողովրդանոցին: Քահանայապետն եւ ամենայն ատեանն դատապարտեցին զՅիսուս, զի ասէր զանձնէ՝ թէ Քրիստոսն իցէ, Արդի Աստուծոյ: Ստանեցաւ Պնտոս Պիղատոսի ոստիկանի հռոմայեցոց. դիտաց դատաւորն՝ եթէ անմեղ է, այլ ակն առեալ զի մի վնաս ինչ լինիցի նմա, թիւրեաց զիրաւունան ընդդէմ մտացն խղճի. եւ արդարն ի մահ դատապարտեցաւ: Ար քան զամենայն յանցանս մեծ էր, եղև պատճառք հնազանդութեանն՝ որում չոյր համեմատ. Յիսուս, աէր կենաց իւրոց եւ ամենայն իրաց, կամաւորութեամբ մնանեաց զանձն ի ձեռս անօրինացն մոլեգնելոցն եւ կատաղելոց. եւ մատոյց զպատարազն՝ որ ազգի մարդկան քաւութիւն լինելոց էր: Ի խաչին հայեցաւ ի մարդարէութիւնան՝ թէ իցէ այլ ինչ առնել նմա, կատարեաց զնա եւ սպա ասաց, Ամենայն ինչ կատարեալ է¹⁷:

Իբրև զայս ասաց, ամենայն ինչ յաշխարհի փոփոխեցաւ. օրէնք դադարեցին, առակք օրինակաց նորա անցին, եղձան զոհքն կատարելազոյն պատարադան: Օայս արար Յիսուս եւ սղաղակեալ ի ձայն բարձր եհան զոգին. ամենայն բնութիւն սասանեցաւ, հարիւրապետն՝

որ պահէրն զնա, զարմացեալ ընդ այնպիսի մահն, բողոք բարձեալ աղաղակեաց՝ եթէ արդարեւ Աստուծոյ որդի է. եւ որ տեսինն, դարձան անտի զկուրծս բախելով: Յարեաւ յաւուրն երրորդի, երեւեցաւ իւրոյն սեպհակահացն՝ որոց թողեալ էր զնա, որ եւ հակառակեալ յարութեանն չհաւատային: Տեսին նոքա զնա, խօսեցան ընդ նմա, շօշափեցին զնա եւ հաւանեցան: Օ՛ր հաստատուն առնիցէ զհաւատս յարութեան իւրոյ, բազում անգամ բազում ուրեք երեւեցաւ նոցա: Աշակերտքն նորա զատ ի միմեանց տեսին զնա, եւ տեսին դարձեալ զնա ամենեքին միանգամայն. երբեմն աւելի քան հինգ հարիւրոց ժողովիւց երեւեցաւ: Մի ոմն յառաքելոց՝ որ զայս գրեաց, վկայէ՝ թէ բազումք ի նոցանէ՝ գեռ եւս կենդանի էին, ի ժամանակի՝ յորում գրէրն¹³:

Յիսուս յետ յարութեանն ետ նոցա ժամ եւ ժամ մանակ, զի հայեցցին ընդ նա բարեոք եւ իմասցին. եւ յետ տալոյ զանձն ի ձեռս նոցա այնպէս՝ որպէս ինքեանք ակորթէին, մինչեւ չմնալոյ այնու հետեւ երկմտութեանն եւ տարակուսանաց, հրաման ետ նոցա՝ զի վկայեցեն զոր տեսինն եւ լուան եւ շօշափեցին: Աւ զի մի երկմտ ոք լինիցի ի ճշմարտութենէ նոցա եւ ի հաւանութենէ մտաց նոցա, պատուիրէր զվկայու թիւնն իւրեանց՝ արեամբ իւրեանց կնքել: Աւ այնպէս չէ մարթի թէ կործանիցի վկայութիւն նոցա. հիմն նորա հաստատուն գործ է, վկայեալ միաբանութեամբ յայնցանէ՝ որ տեսին: Ղրջմարտութիւն նոցա անհնարին փորձանօք, որչափ միտք ուրուք բաւական իցեն ածել զմտաւ, ճշգրտեցաւ, որ են փորձութիւնք տանջանաց եւ մահու խկ: Այսպիսի կրթութեամբք կրթեցան առաքեալք:

Յայսր վերայ հաստատեալ երկոտասան ձկնորսք ձեռն արկին զամենայն աշխարհս դարձուցանել, զոր տեսանէին այնպէս հակառակեալ ընդ օրէնսն՝ զոր ի վերայ նորա գնելոց էին, եւ ընդ ճշմարիտ պատգամն՝ զորս պատմելոց էին նոցա: Հրաման առին յԱրուսաղէմէ նախ սկիզբն առնել, եւ անտի ընդ ամենայն երկիր սարաճանել, եւ ուսուցանել զամենայն աղքս եւ մրկրբաւել զնոսս յանուն Հօր եւ Արդւոյ եւ Հոգւոյն սրբւրոյ: Խոստանայր նոցա Վրիստոս լինել ընդ նոսս զա-

մենայն աւուրս մինչեւ ի կատարած աշխարհի¹⁰, եւ եցոյց բանին այնուիկ զհասապարոյդ տեւել եկեղեցական պաշտամանն: Օչսս ասաց եւ ինքն յանդիման նոցա յերկինս վերացաւ:

Աւետիքն կատարէին, մարդարէութիւնք լուսաւորազոյն յայտնէին: Հեթանոսք յաստուածդիտութիւն կոչեցան հրամանաւն Վրիտտոսի՝ որ յարեաւն ի մեւելոց. նոր ինչ կարգ հաստատեցաւ վասն միւսանդամ ծննդեան նորոյ ժողովրդեանն. եւ ուսան հաւատացեալք՝ եթէ Ճշմարիտն Աստուած, Աստուածն Իսրայէլի, մին Աստուած եւ անբաժին՝ որում մկրտութեամբ նուիրեցան, է միանդամայն Հայր եւ Արդի եւ սուրբ Հոգի:

Արդ յայնժամ յայտնեցան մեղ խորք անհասականք աստուածեղէն էութեանն, եւ անձառ անպատում բարձրութիւն միութեան նորա, եւ անբաւ մեծութիւն բնութեանն՝ որ առասն է առաւել ի ներքոյ քան արտաքոյ, որ կարօղն է երկոց անձանց հանդիտապատիւ զուգականաց առանց բաժանելոյ զինքն հաղորդել:

Յայնժամ յայտնեցան խորհուրդքն՝ որ ծածկեալ եւ կնքեալ իմն էին ի գիրս հնոցն կտակարանացն: Առաք ի միտ զճածուկս բանին այնորիկ՝ եթէ Արացոյք մարդ ըստ պատկերի մերում²⁰. եւ Արրորդութիւնն՝ որ ցուցաւ յարարութեան մարդոյն, ի միւսանդամ ծննդեանն նորա լուսաւորութեամբ յայտնեցաւ:

Խելամուտ եղեաք՝ թէ զինչ իցէ իմաստութիւն, զորմէ Սողոմոն ասէ՝ թէ Հաստատեցաւ ի Տեառնէ ի սկիզբն ճանապարհաց իւրոց ի գործս իւր, յառաջ քան զյաւիտեանս հաստատեալ²¹: Պիտեմք՝ թէ ո է զոր Վաւիթ յառաջ քան զարուեսակ ծնեալ ետես²². եւ նոր կտակարանք ուսուցանեն մեզ՝ եթէ սա է Բանն, բարբառ ներքին Աստուծոյ, եւ յաւիտեանական խորհուրդ նորա՝ որ է միշտ ի ծոց նորա, եւ որով ամենայն ինչ եղև:

Նովմբ տամք պատասխանի խորհրդական հարցուածոցն՝ որ յառական կան²³. Օ՛հնչ անուն է նորա, կամ զ՛նչ անուն որդւոյ նորա, զի գիտացես: Օ՛հ գիտեմք՝ թէ անունս Աստուծոյ, խորհրդականն եւ ծածկեալն, Հայր է, որով իմանամք խորհրդով՝ թէ մշանջնաւորութեամբ հայր է նա որդւոյ՝ որ զուգական իցէ նմա. եւ թէ

անունն որդւոյ նորա Բան է՝ զոր մշանջնաւորութեամբ ծնանի, ինքն զինքն ածեալ զմտաւ, որ է կատարեալ կերպարանք ճշմարտութեան նորա, պատկեր նորա, Միածին որդի, Ճառագայթ փառաց եւ նկարագիր էութեան նորա²⁴ :

Հանդերձ Հարրն եւ Արդւով ճանաչեմք եւ զսուրբ Հոգի, երկոցունց սէր, եւ զօր մշանջնաւոր: Այս Հոգի է՝ որ մարդարէս յարդարէ, եւ է ի նոսա վասն ըզխորհուրդս Աստուծոյ եւ զճաճուկս Հանդերձելոց իրիք իրաց նոցա յայանելոյ. այն՝ զորմէ դրեալ է, եթէ Տէր Տէր առաքեաց զիս եւ Հոգի նորա²⁵. որ զասուցեալն է ի Տեառնէ, եւ է իսկ ինքն Տէր, քանզի մարդարէս առաքէ եւ զլինելոց իրս յայանէ նոցա: Այս Հոգի՝ որ ընդ մարդարէսն խօսէր եւ ի ձեռն նոցա բարբառէր, ընդ Հօր եւ ընդ Արդւոյ միաւորեալ է եւ Համադործ ի սրբել զնոր մարդն:

Աւ այնպէս Հայր եւ Արդի եւ սուրբ Հոգի, մի եւ եթ Աստուած երեք անձամբք, զոր ընդ աղօտ միայն դիտելին Հարքն մեր, ի նոր ուխտիս լուսաւորագոյն յայտնեցաւ: Այնպիսումն բարձրագոյն խորհրդոյ տեղեկացեալք, եւ ընդ անհասական խորհուրդսն զարմացեալք, ծածկեմք զերեսս մեր առաջի Աստուծոյ, Հանդերձ սրովբէիւքն՝ զորս Ասայի ետես²⁶, եւ նոքօք Հանդերձ այնմ՝ որ սուրբն է եւ երկոց սուրբ, երկիր պաղանեմք:

Ինքն իսկ միածին Արդին՝ որ էր ի ծոց Հօր²⁷, որ եւ ոչ թողեալ թափուր զծոցն Հայրենի եկն առ մեզ, յայանելոց էր մեզ լիով զմեծաքանչ ճաճուկսն աստուածեղէն բնութեանն, զորոց Մովսէս եւ մարդարէքն ի հարեանցի անցեալ խօսեցան:

Աս ուսուցանելոց էր մեզ՝ թէ ընդէր Օծեայն Տեառն, որ խոստացեալ եղեւ իրրեւ զմարդ ոք՝ որ փրկիցէ զայս ի մարդկանէ, յայանեալ էր միանգամայն եւ իրրեւ զԱստուած միաբար եւ առանց յաւելուածոյ, ըստ այնմ օրինակի՝ որպէս ցուցաւ մեզ արարիչն. եւ զայս յայտ առնէ յորժամ ուսուցանիցէ՝ թէ, թէպէտ եւ որդի Արրաամու էր, յառաջ քան զլինելն Արրաամու էր²⁸. եթէ յերկնից էջ, եւ յերկինս է²⁹, Աստուած էր եւ որդի Աստուծոյ, միանգամայն եւ մարդ, որդի մարդոյ, ճշմարիտ Ամմանուէր, ընդ մեզ Աստուած. Բանն մարմին եղեալ,

միաւորեալ յանձն իւր զընութիւն մարդկեղէն ընդ աստուածեղէն բնութեանն, զի զամենայն ինչ յինքեան միաբանեցէ :

Եւ այնպէս երկու զխաւոր խորհուրդք յայտնեցան մեզ, Արրորդութեանն եւ մարմնաւորութեանն : Այլ որ յայտնեացն մեզ զնոսա, եղ զպատկեր նմանութեան նոցա յանձինս մեր, զի առաջի աչաց մերոց հանապաղ կայցեն, եւ առջուք ի միտ զպատիւ մերոյ բնութեանս :

Օ՛ի եթէ լռեցուցուք զզգայունս մեր, եւ սակաւիկ ինչ միտ եղեալ հայեացուք ի ներքս յողիան մեր, այս ինքն յայն մասն՝ որ ճշմարտութիւն իմանայցէ եւ խելամուտ լինիցի, պատկեր ինչ նմանութեան Արրորդութեան՝ որում երկիր պաղանեմք, նշմարիցեմք : Խորհուրդըն՝ որ ի մեզ ճնանիցի, իբրեւ ի մերոց մտաց բուսեալ, իբրեւ մերոց մտաց որդի, կերպարանս ինչ ցուցանէ մեզ զՍրբուոյն Աստուծոյ՝ որ մշանջնաւորութեամբ յղացեալ է ի միտս Հօրն երկնաւորի : Եւ յայն սակա Բան անուանի Արդին Աստուծոյ, զի իմանայցեմք՝ թէ ճնանի ի ծոց Հօրն, ոչ որպէս մարմինք ճնանիցին, այլ որպէս յոգիս մեր ներքին բանն ճնանիցի, զոր մտօք իմանամք յորժամ ճշմարիտ ինչ ածիցեմք զնաւ³⁰ :

Այլ մերոց մտաց ճննդականութիւն չկայ ի ներքին բանն, յիմանալի խորհուրդն, ի պատկերն ճշմարտութեան՝ որ ի մեզն կերպարանիցի : Արեւմբ եւ զբանն զայն զներքին, եւ զմիասն՝ յոր նայն ճնանիցի, եւ սիրելով իսկ մեր զնա, իմանամք՝ թէ է ինչ ի մեզ ոչինչ պակաս ազնուարոյն քան զմեր միտս եւ զխորհուրդ, որ պտուղն է երկոցունցն, եւ միաւորէ զնոսա, եւ ինքն ընդ նոսա միաւորի, եւ մի կեանս ունի ընդ նոսա :

Բնտ օրինակիս ըստ այսմիկ, որչափ ինչ Աստուծոյ առ մարդոց համեմատութիւն գտանիցի, բխէ յԱստուած՝ սէրն յաւիտեանական, որ ելանէ ի Հօրէն՝ որ խորհի, եւ յԱրդւոյ՝ որ խորհուրդն է նորա. եւ ընդ նմա եւ ընդ խորհրդոյ նորա մի եւ նոյն բնութիւն զուգական երանելի եւ կատարեալ է :

Եւ միանգամայն իսկ ասել՝ կատարեալ է Աստուած. եւ Բանն նորա, պատկեր կենդանի անկոր ճշմարտութեանն, է ինչ պակաս քան զնա. եւ սէրն նորա՝ որ յան-

սպառ աղբերէ, բարութեանն կէտալ՝ զամենայն լրումն բարութեան ունի, յանբաւ կատարմանէն չմարթի պահասել . եւ քանզի այլ ինչ միտս զՄատուծոյ մեք չկարեմք իմանալ բայց միայն զկատարմանն, թէ զԼւարաքանչևր յերկոյ իրաց անտի ուրոյն նկատիցեմք, արժանի են Մատուած կոչելոյ . բայց քանզի երեքին սոքա հարկ է թէ ի մի բնութիւն պատշաճիցին, երեքինն մի եւ եթ Մատուած են :

Արդ չէ պարտ յԱրրորդութեան ասա՝ որ արժանի երկրպագութեան է, կարծել թէ իցէ ինչ չըուգական եւ բաժանեալ . եւ թէպէտ եւ առանց հասանելոյ իցէ այնպիսի զուգականութիւն, այլ ողիքն թէ անսայցեմք, ասացեն ինչ մեզ զնմանէ :

Ի ողի . եւ յորժամ զխտէ հաւաստեալ՝ թէ զինչ ինքն իցէ, միտք նորա պատշաճն ճշմարտութեան էութեան նորա³¹ . եւ յորժամ սիրէ զինն իւր հանդերձ մտաքն իւրովք, որչափ ինչ արժանի իցեն սիրելոյ, աչրն նորա հաւասարէ երկոցունցն կատարման : Արեքին սոքա չբաժանին երբեք, եւ զմիմեանս բովանդակեալ ունին . իմանամք՝ թէ եմք, եւ թէ սիրեմք, եւ կամիմք՝ թէ իցեմք եւ իմանայցեմք : Մ որ զամանէ յուրաստ կայցէ, թէ անձին լսիցէ : Առ ոչ միայն մին ի սոցանէ քան զմեան չիցէ աչնուաղոյն, այլ եւ երեքին միանգամայն քան զմի մի ի նոցանէ չեն ինչ լաւաղոյնք . քանզի իւրաքանչևր զնաւոյնքեան ունի, եւ յերեսեանն հաստատեալ կայ երանութիւն եւ պատիւ բանաւոր եւ մտաւոր բնութեանն : Այսպէս եւ անբաւ առաւելութեամբ, կատարեալ եւ անբաժին է, եւ մի էութեամբ եւ հաւասար ամենայնիւ Արրորդութիւնն՝ որում ծառայեմքն, յոր եւ սրբեցաքն մերով մկրտութեամբս :

Այլ մեք՝ որ պատկեր եմք Արրորդութեանն, այլով ինչ իւրք պատկեր եմք մարմնաւորութեանն : Ողիքն մեր, մտաւոր բնութեամբ եւ անսպականացու, ունի մարմին ապականացու՝ որ ընդ նմայն միաւորեալ է . եւ յերկոցունց միաւորելոյ կատարի ողջոյն իսկ կենդանին՝ որ է մարդն, ողի եւ մարմին միանգամայն, անսպականն եւ ապականական, իմաստունն եւ ամենեւին անխնասն³² : Այս ամենայն յաւելուածք ողջոյն իսկ մարդոյն պատշաճն, առ համե-

մատուցեան երկոցունց մասանցն իւրոց . ըստ նմին օրինակի եւ Բանն Աստուծոյ՝ որոյ զօրութիւն զամենայն ունի, առանձինն իմն օրինակաւ միաւորեցաւ, մանաւանդ թէ եւ ինքն իսկ կատարեալ միաւորելով՝ եղեւ Յիսուս Վրիստոս որդի Մարեմայ . եւ այնպէս եղեւ Աստուած եւ մարդ միանգամայն, ծնեալ ի յաւիտենից եւ ծնեալ ի ժամանակի, միշտ կենդանի ի ծոց Հօրն, եւ ի խաչն մեռեալ վասն զմեզ կեցուցանելոյ :

Այլ ուր զԱստուծոյ բանք իցեն, համեմատութիւնք՝ որ ի մարդկօրէն իրաց աստի ի մէջ դայցեն, թերակատարք գտանիցին : Ոգիքն մեր չեն յառաջագոյն քան զմարմին մեր, եւ պակասէ իսկ ինչ ողւոյն, յորժամ մարմինքն ի նոցանէ որոշիցին : Իսկ Բանն ինքնին կատարեալ ի յաւիտենից, վասն պատուելոյ եւ եթ զընութիւնս մեր միաւորի ընդ նմա : Ինքն իսկ ոգին՝ որ առաջնորդէ մարմնոյն, եւ ազդի ազդի փոփոխմունս ի նմա գործէ, կրէ կիրս եւ ի մարմնոց աստի : Թէպէտ եւ մարմինն շարժիցի ընդ հրամանսն, եւ ըստ կամաց ողւոյն դայցէ, սակայն եւ ոգիքն խռովն եւ նեղն եւ փոփոխին ի բեւր կերպարանս, կամ ի վշտագինս եւ կամ ի հեշտականս, ըստ մարմնոյն ազդի ազդի փոփոխմանցն . մինչ զի, զոր օրինակ ոգին զմարմին առ իւր ամբառնայ առաջնորդելովն նմա, նոյնպէս եւ ինքն ընդ նովաւ խոնարհի զկիրան ի նմանէ կրելով : Այլ ի Յիսուս Վրիստոս՝ Բանն ամենայնի իշխէ, Բանն զամենայն ընդ իւրով ձեռամբ ունի : Ասան այսորիկ իսկ, թէպէտ եւ մարդն ամբարձաւ, այլ Բանն ոչ իւրք ինչ իրօք նուազեաց . կացեալ մնացեալ անշարժ եւ անփոփոխ, յամենայնի ամենայնիւ իշխէ բնութեանն՝ որ միաւորեցաւն ընդ նմա :

Ուստի ի Վրիստոս, մարդն ամենեւին հպատակ կացեալ ներքին առաջնորդութեան Բանին՝ որ զնա առ իւր ամբառնայ, աստուածեղէն խորհուրդս եւ եթ եւ շարժմունս ունի : Ամենայն ինչ՝ զոր խորհին, զոր կամին, զոր խօսին, զոր ի ներքան թաքուցանէ եւ զոր արտաքս ցուցանէ, ի Բանէն թելադրեալ է, ի Բանէն առաջնորդեալ, արժանի Բանին, այս ինքն՝ արժանի մտացն իսկ եւ ի մատուցեան եւ ճշմարտութեան : Ասան այնորիկ իսկ ամենայն ինչ լոյս է ի Վրիստոս, վարք նորա կանոնք են,

պրանչելիք նորա խրատք են, բանք նորա հոգի են եւ կեանք :

Ամենեցուն չէ տուեալ առնուլ ի միտ զպատգամն ճշմարտութեան զբարձունս, եւ ոչ հայել եւ տեսանել կատարեալ զայս մեծագրանչ պատկեր աստուածեղէն իրաց, զոր սուրբն **Ա**ւգոստինոս եւ այլ եւս հարք այնպէս ճշմարիտ համարեցան : **Օ**գայունք մեր անդր քան զսահմանն տարեալ հաննն զմեզ, եւ ցնորք մտաց մերոց՝ որ յամենայն խորհուրդս մեր մխել կամին, չթողուն մեզ կալ եւ նայել հանապազ ընդ լոյսն յատակ : **Մ**էք զանձինս մեր չզիտեմք, եւ զմեծութիւնս՝ զոր ի բնութեանն մերում բարձեալ բերեմք, ոչ ճանաչեմք, զի աչք սրբեալք եւ յըստակեալք եւ պարզեալք եւ եթ մարթ են նկատել զնոսա : **Այլ** թէպէտ եւ սակաւ ինչ մտանիցեմք ի ծածկեալան եւ ի թաքուցեալս, եւ փոքր ինչ կարիցեմք նկատել ի մեզ զպատկեր երկոցունց խորհրդոցն՝ որ հիմն են հաւատոցն մերոց, սակայն բաւական են հանել զմեզ քան զամենայն ինչ ի վեր, եւ ապականացու ինչ մեզ չկարիցէ մտել :

Ասն այնորիկ Վրիստոս զմեզ յանմահ փառան կոչէ, եւ այս իսկ է պտուղ հաւատոցն՝ որով խորհրդոցն հաւատամք : **Այս** Յիսուս Վրիստոս Աստուած եւ մարդ, ճշմարտութիւնն եւ իմաստութիւն մարմնացեալ՝ որ տայն մեզ հաւատալ իրաց մեծամեծաց վասն իւրոյ վկայութեան միայնոյ, խոստանայ ի ժամանակն յաւիտենից ցուցանել մեզ զնոսա համարձակ եւ երանելիս առնել, իբրեւ վարձս ինչ հաւատոցն մերոց :

Այսու ամենայնիւ յայտ է թէ առաքումն Վրիստոսի յոյժ իսկ քան զՄովսիսին վերագոյն եւ բարձրագոյն է : **Ա**ռաքեցաւ Մովսէս, ի ձեռն ժամանակեան հատուցմանցն զարթուցանել զմարդիկ զմարմնաւորս եւ զանմտացեալս : **Վ**անդի ամենեւին իսկ մարմին եղեն, պարտ էր յառաջնումն յերեւելեացն առնել սկիզբն, եւ այնպէս հայթայթանօք ուսուցանել նոցա զաստուածգիտութիւնն, եւ զգարչել եւ զխորչել ի կռապաշտութենէ՝ յոր յոյժ իմն միտէր ազգ մարդկան : **Այս** դործ էր Մովսիսի : **Այլ** Վրիստոսի էր տալ ի միտս մարդկան խորհուրդս բարձրագոյնս, եւ ծանուցանել նոցա յայտնագոյն զպատիւ եւ զանմահութիւնն եւ զյաւիտենիցն երանութիւնն ողւոցն :

Յանդիտութեան ժամանակսն, ի ժամանակսն՝ որ յառաջ քան զԲարիսաոս էին, որով իւրք զարախու ողւոյ եւ զանմահութիւն ճանաչէին, նովին բազում անդամ ի մոլորութիւն կործանէին: Պարթէ կուսարաշտութեան հաստատութիւն պաշտօն մարդոց մեռելոց էր, եւ գրեթէ ամենայն մարդիկ՝ ուրուականաց զոհս մատուցանէին, որ են մեռելոցն ուրք: Այսպիսի հին մոլորութիւնք ճշմարախ ցուցանեն մեզ՝ թէ զեարդ հին իմն էր հաւատալ, թէ անմահ են ողիքն, եւ յայտ առնեն՝ թէ զսքնդ առաջին աւանդութիւնս ազդի մարդկան պարս է համարել: Այլ մարդն՝ որ զրնաւ եղծանէր, նովին յանպիսանութիւն կործանեցաւ, քանզի անտի ի զոհս մեռելոցն եկն: Ամանք եւ յայն իսկ հասին, մինչ արս կենդանիս նոցա զոհել. զճառայս նոցա կոտորէին եւ զկանայս իսկ, զի երթեալ ի միւսում աշխարհի ծառայութիւն հարկանիցեն: Օայս առնէին զաղատացիքն հանդերձ այլ եւս բազում ազգօք³³. եւ Հնդկիք՝ զորոց հեթանոս մատենադիրք ասեն, թէ ընդ այնտիկ են՝ որ ուղւոցն անմահութեան նախ ջատաղով մտին, զառաջինն զայսպիսի դարշելի սպանութիւնս, կրօնիցն բարբառօք մուծին յաշխարհ: Նորին իսկ Հնդկիքն ընդ իւրեանց սուրն երանէին, զի յառաջեալ հասանիցեն երանութեան հանդերձելոցն կենաց. եւ ցայժմ զնոյն չար կուրութիւն կուրացեալ են արդքն այնորիկ: Այսչափ ինչ վտանդ է ուսուցանել զճշմարտութիւնն այլով ինչ իւրք կարգաքան զոր Աստուած եղեալ իցէ, եւ յայտնել լուսաւորագոյն մարդկան զամենայն՝ որ ինչ իցեն, մինչ չեւ զԱստուած կատարեալ ծանուցեալ իցեն:

Օի առ զԱստուած չճանաչելոյ, բազումք ի փրկեստոփայից չառին յանձն՝ եթէ անմահ իցեն ողիքն, թէ ոչ նախ եղին՝ եթէ մասն է յաստուածեղէն բնութենէ, եւ աստուած իմն, էութիւն յաւիտենական, անեղծ եւ անարար, անսկիզբն եւ անվախճան: Իսկ զնոցանէ զինչ ինչ ասիցեմ, որ զչնչոց փոփոխմունան եղին, որք զլուսնսն յերկնից յերկիր կործանէին, եւ սպա յերկրէ յերկնս, յանասնոց ի մարդիկ եւ ի մարդկանէ յանասունս, յերանելի կենաց ի թշուառութիւն եւ ի թշուառութենէ ի վայելութիւն, եւ այնց փոփոխմանց ոչ սահման ինչ էր

եւ ոչ կարգ: **Օ**խնորդ զեղչեալ իմն եւ զօղեալ էր արդարութիւն եւ խնամակալութիւն եւ մարդասիրութիւն **Աստուծոյ**, յայնչափ մոլորութեանց միջի. եւ զխնորդ կարեւոր պիտոյ էր ճանաչել զ**Աստուած** եւ զկարգ իմաստութեան նորա, յառաջ քան զողի եւ զնորին անմահութիւն ճանաչել:

Ասան այնորիկ իսկ եւ մովսիսեան օրէնքն սակաւ ինչ ծանօթս տային մարդկան զբնութեան ողւորն եւ զերանութեան: **Տեսաք զի** ի սկզբան ոգին՝ **Աստուծոյ** զօրութեամբն եղև, որպէս եւ այլ եւս արարածք. այլ զայն իմն առանձինն նկարագիր ունէր՝ զի ըստ պատկերի նորա եղև եւ փշելովն նորա, զի խմասցի ոգին՝ թէ ում նմանէ ի բնէ, եւ մի ի մարմնոց բնութենէ զանձն համարիցի, եւ ոչ ի նոցա միարանութենէ յօղեալ: **Այլ** որ ինչ յետ այսր վարդապետութեան կարգեալ գայր, եւ զարմանալիք հանդերձելոց կենացն, չյայտնեցան յայնժամ առ հասարակ, զի յաւուրսն Վրիստոսի լոյսն մեծ ծագելոց էր յայտնապէս:

Օչնշոյս ինչ լուսոյն մեծի տարածեալ է **Աստուծոյ** ի գիրս հնոց կտակարանացն: **Սողոմոն** ասաց՝ թէ **Գարձցի** հօղն յերկիր որպէս եւ էրն, եւ հողին դարձցի առ **Աստուած**՝ որ ետ զնա³⁴: **Ա**հապետքն եւ մարդարէք նմին ակն կալեալ կային, եւ **Գանիէղ** յառաջագոյն պատմեաց՝ եթէ **Ա**կեսցէ ժամանակ, զի բազումք ի ննջեցելոց ի հող երկրի յարիցեն, ոմանք ի կեանսն յաւիտենականս, եւ ոմանք ի նախատինս եւ յամօթ յաւիտենական³⁵: **Այլ** վաղվաղակի իբրև այս իբք յայտնեցան նմա, հրաման տուաւ նմա՝ թէ **Փակեա** զբանսդ, եւ կնքեա զգիրդ մինչև ի ժամանակ վախճանի³⁶. զի առնուցումք ի միտ՝ թէ կատարեալ յայտնութիւն ճշմարիտ պատգամացն այլում ժամու եւ ժամանակի ի դէպ էր:

Արգ՝ թէպէտ եւ Հրեայքն ունէին զաւետիս ինչ խոստացեալս վասն յաւիտենիցն երանութեան, եւ մօտ ի ժամանակսն Վրիստոսի՝ յորս յայտնելոց էին, յաճախագոյն զնոցունց ճառէին, որպէս յայտ յիմաստութեան եւ ի մակարայեցւոց գրոց է. սակայն այն ճշմարտութիւն չէին կրօնք համօրէն՝ ամենայն ժողովրդեանն, զի եւ սաղուկեցիքն՝ որ զայն չառնուին յանձն, ոչ միայն ի ժո-

զովորենէ չելանէին, այլ եւ քահանայութեամբ եւս պատուէին: Վրանդի եւ այս նշան իմն է ժողովորեան նորոյ, զնել չիմն կրօնից զհաւաստ կենաց հանդերձելոյ, եւ սոյն լինելոց էր պտուղ զալստեանն Վրխատոսի:

Ս ասն այնորիկ չհամարեալ բաւական զասելն՝ եթէ մշանջնեաւոր կեանք երանելիք պահեալ կան որդւոցն Աստուծոյ, ասաց եւ զայն մեզ՝ թէ որով օրինակաւ լինիցիմք երանելիք: Արանելի կեանք այն իսկ են՝ զի ընդ նմա լինիցիմք ի փառս Աստուծոյ հօր իւրոյ³⁷. երանելի կեանք այն են՝ զի տեսանիցեմք զփառսն նորա, զոր ի ծոց Հօրն յառաջ քան զլինելն աշխարհի ունի. երանելի կեանք այն են՝ զի Վրխատոս ի մեզ իցէ իբրեւ յանդամսն իւր, եւ յաւիտենական սէրն՝ զոր Հայր սիրէ զԱրդին, արեւեցի ի վերայ մեր եւ ընուցու զմեզ նովին պարդեւօքն. եւ միանդամայն իսկ ասել, երանելի կեանք են՝ զի զմին եւ զճմարիան Աստուած ծանիցուք, եւ զոր առաքեացն զՅիսուս Վրխատոս, այլ զի ծանիցուք զնա ըստ այնմ օրինակի՝ որ մեծապայծառ տեսին կոչիցի, դէմ յանդիման եւ յայտնապէս³⁸. այն տեսիլ նորոգէ ի մեզ եւ կատարէ զպատկերն Աստուծոյ, ըստ այնմ զոր երանելին Յովհաննէս ասաց՝ թէ՛ Աման նմա լինելոց եմք, զի տեսանելոց եմք զնա որպէս եւ էն³⁹:

Ինչ այնմ տեսլեան գոյ եւ սէր անչափ, եւ անճառ ուրախութիւն, եւ յողթութեան պսակ անսպառական: Ալելուիայն մշանջնեաւոր եւ ամենն մշանջնեական՝ որ առ հասարակ լսելի լինի յԱրուստղէմն երկնաւոր⁴⁰, յայտ առնեն՝ թէ ամենայն ցաւք եւ հեծութիւնք մերժեալ են, եւ ամենայն ցանկութիւն կատարեալ. չէք ինչ այնու հետեւ բայց զԱստուծոյ մարդասիրութիւնն օրհնել:

Հանդերձ այնպիսի նոր վարձուք հատուցմանցն, պարտ էր Վրխատոսի եւ նոր իմն կերպարանս առաքինութեան եւ կատարելագոյն եւ սրբադոյն վարժից առաջի զնել: Արօնիցն կատարած, եւ առաքինութեանց կատարումն, եւ լրումն օրինաց սէր է: Այլ մարթի իսկ ասել՝ թէ մինչեւ ցՎրխատոս չէին ինչ բովանդակ ծանօթ կատարումն առաքինութեանն այնորիկ եւ դորձք: Բուն իսկ Վրխատոս ուսոյց մեզ՝ զի Աստուծով միայն շատասցուք: Ս ասն զսիրոյն թագաւորութիւն հաստատելոյ եւ

յայտնելոյ մեզ զամենայն զսիրոյն պարտան, զՄատուծոյ սէրն մեզ առաջի արկանէ, մինչ զանձինս իսկ առել, եւ զհետ պնդեալ առանց վաստակելոյ, զսկիզբն ապականութեան՝ զոր ամենեքին ի սրտի ունիմք, հալածական առնել. զսէր մերձաւորին մեզ առաջի արկանէ, մինչեւ ի վերայ ամենայն մարդոյ սփռել մեզ զբարերարութեանն յօժարութիւն, եւ զմեր հալածիչն իսկ չառնել անմասն. պատուիրէ համ դնել զգայնոցն տենչանաց, մինչեւ ամենեւին իսկ հատանել ընկենուլ զանդամս մեր, այս ինքն զայն ինչ՝ որ կարին սիրելի իցէ եւ հաճոյ սրտից մերոց. հրամանս տայ հնազանդ լինել Մատուծոյ հրամանացն, մինչեւ խնդալ մեզ ընդ նեղութիւնսն՝ զոր առաքիցէ մեզ. խոնարհութիւն պատուիրէ, մինչեւ զթշնամանս վասն Մատուծոյ փառացն սիրել, եւ դնել ի մտի՛ թէ ոչ մի ինչ թշնամանք մարթեն այնպէս զմեզ արհամարհ առաջի մարդկան առնել, որչափ մեղօք մերովք արհամարհ լինիմք առաջի Մատուծոյ:

Ի վերայ այս սիրոյն հիման, հասուցանէ ի կատարումն զամենայն կարգս կենաց մարդոյն: Մտի ամուսնութիւն յառաջին կերպարանս իւր դարձաւ. սէր ամուսնութեան չէ այսու հետեւ ի բազումս բաժանեալ, այսու հետեւ այնպիսի սրբական միաբանութիւն չքակի՝ բայց միայն մահուամբ, եւ մանկունք չտեսանեն զմայրն իւրեանց մերժեալ՝ զի կացցէ փոխանակ նորա մօրուն: Յայտնի եղև թէ կուսութիւն՝ հրեշտակաց կենաց նմանութիւն է, որք յՄատուած եւ եթ պարապեն եւ ի սուրբ վայելութիւնս սիրոյ նորա: Ար մեծն իցեն, ուսանին՝ եթէ այլոց ծառայք են, եւ առ նոցա օգուտ կարգեալ: Ար ընդ իշխանութեամբ իցեն, ի միտ առնուն՝ եթէ օրինօք իշխանութիւնք յՄատուծոյ են, եւ յայնժամ իսկ՝ յորժամ ի չարիս ի կիր արկանիցեն իշխանք զիւրեանց իշխանութիւնն. այսպիսի խորհուրդք՝ զհպատակութեան տառապանս քաղցրացուցանեն, եւ ընդ դժնդակ տերամբք իսկ, հնազանդութիւն չէ ինչ այսու հետեւ դժբնդակ ճշմարիտ քրիստոնէի:

Յայն հրամանն զբարձրագոյն կատարման խրատնս յաւելլու. յամենայն հաճոյից հրաժարել, կեալ ի մարմնի իրրեւ այն՝ թէ չիցէ ի մարմնի, թողուլ զամենայն, ըզ-

բնաւ աղքատաց տալ, առ չստանալոյ ինչ բայց միայն յԱստուծոյ, կեալ փոքու, եւ գրեթէ ոչ ինչ իւրք, եւ փոքուն այսմիկ յԱստուծոյ տեսչութենէ ակն ունել:

Այլ բուն իսկ օրէնք աւետարանին այս է, տանել զխաչ իւր: Խաչն՝ ճշմարիտ հանգէս է հաւատոցն, ճշմարիտ խարխիս յուսոյ, կատարեալ սրբութիւն սիրոյն, եւ միանգամայն իսկ ճանապարհ երկնից: Յիսուս Վրիստոս մեռաւ ի խաչափայտին, տարաւ նա զիւր խաչն զամենայն աւուրս կենաց իւրոց. արդ՝ կամի զի խաչին զնորա զհետ երթայցեմք, եւ խաչին զնոց տայ զկեանս յաւիտեանականս: Այս՝ որում նախ առանձինն զհանգիստ հանգերձեալ աշխարհին խոստացաւ, ընկեր էր խաչի նորա. Այսօր, ասէ, ընդ իս իցես ի զբախտին: Այլ փաղակի իրբեւ ի խաչ ել, վարագոյրն՝ որ զսրբութիւն սրբութեանցն ծածկէր, ցելաւ վերուստ ի վայր, եւ բացան երկինք ոգւոցն սրբոց: Յետ ի խաչափայտէն եւ յահէ տանջանայն զերծանելոյ, երեւեցաւ իւրոց աշակերտացն փառաւորեալ եւ մահուն յաղթեալ, զի առցեն ի միտ՝ եթէ խաչին սարտ էր մտանել նմա ի փառսրն իւր, եւ թէ այլ ինչ ճանապարհ ոչ ցուցանէր իւրոց որդւոցն:

Այնպէս տուաւ աշխարհի Վրիստոսիւ պատկեր կատարեալ առաքինութեան՝ որ չունի ինչ եւ չմնայ իմիք ի վերայ երկրի, որում մարդիկ չտան ինչ փոխարէն հատուցումն, այլ հանապաղ հալածական առնեն, որ չզադարէ առնել նոցա երախտիս, եւ իւրովք իսկ բարերարութեամբն զյետին տանջանսն յանձն իւր կորզէ: Սեռաւ Վրիստոս եւ ոչ գտան երախտահատոյցք որ ընկալան զերախտիսն նորա, բարեկամք նորա մեկնեցան ի նմանէ, եւ դատաւորք նորա զերաւունս թիւրեցին: Անմեղութիւն նորա, թէպէտ եւ ծանուցաւ, ոչ փրկեաց զնա. եւ Հայրն իսկ նորա՝ յոր միայն յուսացեալ էր, զամենայն զիւրոյ պաշտպանութեան զնշանս երարձ. արդարն ի ձեռս թշնամեաց իւրոց մատնեցաւ, եւ մեռաւ թողեալ լքեալ յԱստուծոյ եւ ի մարդկանէ:

Այլ պարտ եւ պատշաճ էր ցուցանել մարդոյ առաքինելոյ թէ յանհնարին վիշտս իսկ նեղութեանն չէ ինչ մարդկեղէն մխիթարութեամբ կարօտ, եւ ոչ երեւելի ինչ

նշանի Աստուծոյ օղնականութեանն : Սիրեսցէ միայն եւ վստահ լինիցի, յուսացեալ եթէ Աստուած զնմանէ հոգայցէ եւ խնամակալ լինիցի, ոչ ինչ նշանակ իւրոյ խնամակալութեանն նմա ցուցեալ, եւ թէ պահեալ կայցէ նմա երանութիւն յաւիտենից :

Իմաստնադոյնն քան զամենայն փիղիսոփայն⁴² ի խոյզ արկեալ զկերպարանս առաքինութեանն, եզիտ՝ թէ զոր օրինակ քան զամենայն չարագործն եւս աւելի չարագործ այն ինչ որ է, որ զիւր յոռութիւն այնպէս ծածկել կարիցէ, մինչեւ մարդ բարեգործ կարծել, եւ հնարիւք եւ հայթայթանօք ի պատիւս՝ որ յառաքինութենէ լինիցին, վայելել . նոյնպէս եւ առանց հակառակութեան առաքինի քան զամենայն մարդիկ նա է, ընդ որում, վասըն կատարման առաքինութեան նորա, ամենայն մարդիկ նախանձ բերիցեն, մինչեւ չմնայոյ ինչ նմա, բայց միայն իւր մտայն խիղճն, եւ տեսանիցէ զանձն սողտեալ զըրկեալ թշնամանեալ գունակ գունակ խայտառակեալ, եւ ի խաչ անգամ ելեալ, եւ զայն իսկ չկարիցէ շնորհել նմա առաքինութիւն իւր՝ զի յայնպիսի տանջանաց ապրեսցի : Աջ ապաքէն թուիցի՝ թէ Աստուծոյ արկեալ իցէ ի միտս առն փիղիսոփայի զմեծաքանչ կերպարանս առաքինութեան, զի զայն արդեամբ ի դլուխ հանիցէ ի ձեռն Արդւոյն իւրոյ, եւ ցուցցէ թէ այլ փառք են արդարոյ, եւ այլ հանդիստ եւ այլ բարութիւնք քան զայն ամենայն՝ զոր ի վերայ երկրի որ մարթիցի ունել :

Օչայն ճշմարտութիւն հաստատել, եւ զնոյն ի դլուխ ելեալ ցուցանել յայտնապէս յանձն իւր, մահուամբ չափ ձգնեալ, քան զամենայն գործ՝ զոր մարդ որ ձեռնահաս իցէ առնել, մեծ էր. եւ այնչափ մեծ զայն համարեցաւ Աստուած, զի Վրիստոսի միայն՝ որ բազում անգամ խոտաացեալն էր, պահեաց, մարդոյն՝ զոր ընդ Արդւոյն իւրոյ միաճնի մի նոյն անձն արար :

Վրանզի զե՞նչ ինչ մեծ քան զնոյն մարթ էր պահել Աստուծոյ՝ որ եկն ի վերայ երկրի, եւ զե՞նչ գործ մարթ էր նմա յերկրի գործել, որ առաւել վայելիցէ նմա, քան ցուցանել յերկրի զառաքինութիւն բնաւին կատարեալ, եւ զյաւիտենիցն բարութիւնս՝ յորս անհնարին վիշտքն առեալ տանին զառաքինութիւնն :

Այլ եթէ միտ եղեալ նայիցիմք ընդ բարձրագոյնն եւ ընդ մեծամեծս խաչին խորհրդոյ, որ միտք մարդկեղէն բաւական իցեն հասու լինել : Անդ յայտնեցան մեղ առաքինութիւնք՝ զորս միայն մարդն եւ Աստուածն Վրիստոս կարող էր առաքինանալ : Ո՞ր այլ ոք իրբեւ զնա կարող էր զանձն փոխանակ ամենայն հնոց պատարագացն դնել, եւ եղճանել զնոսա եւ կացուցանել փոխանակ նոցա այլ պատարադ՝ որոյ անբաւ պատիւ իցէ եւ արժանաւորութիւն, եւ առնել զի յայնմ հետէ չիցէ ինչ որ մատուցի Աստուծոյ, բայց միայն ի նմանէ : Այսպիսի ինչ կրօնից առաքինութիւն եցոյց Վրիստոս ի խաչին : Սնրթ ինչ էր Հօրն յաւիտենականի, կամ ի հրեշտակս կամ ի մարդիկ, այնմ հանդոյն հնազանդութիւն դտանել, զոր մատոյց նմա իւր Արդին սիրելի. քանզի իրբեւ ոչ ոք կարող էր զնա ի կենաց արկանել, նա կամաւ եւ զանձն զի նմա հաճոյ լինիցի :

Իսկ զի՞նչ զկատարեալ միակամութենէ ընդ Աստուծոյ կամացն ասիցեմ, եւ զսիրոյն որով ընդ Աստուծոյն՝ որ ի նմայն էր, միաւորեցաւ, Չաշխարհս հաշտեցուցանել ընդ իւր⁴³ : Ի միաւորել անդ նորա՝ որ անհասականն է, զիրիս արկ զամենայն մարդկութեամբս, եւ զերկինս եւ զերկիր հաշտեցոյց. եւ անշափ եռանդամբ թաթաւեցաւ յարիւնն՝ յոր մկրտելոյն էր հանդերձ ամենայն իւրայովքն, եւ հան ի վերաց իւրոց զհօւր աստուածեղէն սիրոյն՝ որ բորբոքելոց էր զամենայն երկիր⁴⁴ :

Այլ զու տես զայն՝ որ ըստ ամենայն միտս անցանէ, զարդարութիւն՝ զոր արար Վրիստոս Աստուածն եւ մարդ, որ եթող զանձն՝ զի դատապարտեցի յաշխարհէ, որդէս զի աշխարհս յաւիտենան ժամանակաց կացցէ դատապարտեալ վասն անօրէն անիրաւ դատաստանին : Արպէս եւ Վրիստոս ինքնին ասէ՝ եթէ Այժմիկ դատաստանն է աշխարհիս այսորիկ, այժմիկ իշխան աշխարհիս այսորիկ ընկեացի արտաքս⁴⁵ : Սատանայ՝ որ հնազանդեալ էր զաշխարհս, վրիպեցի ի սմանէ. ընդ արդարոյն հակառակեալ, զլանցաւորսն՝ զորս ի դերութեան ունէր, ստիպեցի արձակել. եւ ձեռագիր մերոյ հակառակութեանն՝ որով մատնեալն էաք հրեշտակացն սպտամբաց, ջնջեցաւ. բեւեռեաց զայն Վրիստոս ընդ խաչափայտին⁴⁶, զի իւ-

բով արեամբն ջնջեացի. սուղ առին դժոխք, զի կապուա կողոպուա եղեն. ի խաչին նշան յաղթութեան կանգնեաց կենարարն մեր, եւ զօրութիւնք թշնամեացն գլխարկեալ դողութեամբ գնան զհետ կառացն յաղթողին:

Այլ մեծ եւս քան զնոյն ձաղումն մեզ յայանեցաւ. զի ինքն իսկ Աստուծոյ արդարութիւն ի պարտութիւն մատնէր. մեղաւորն՝ ուստի վրէժս արժանի ըստ գործոցն պահանջելոց էր, յափշտակեցաւ ի ձեռաց նորա. եղիտ նա պատարագ ողջակէզ՝ որ բաւական էր տալ փրկանս փոխանակ նորա անբաւ գինս: Քրիստոս զընտրեալն մշանջնաւորութեամբ ընդ իւր միաւորէ, վասն որոց տայ զանձն. նոքա անդամք եւ մարմին են նորա, այնու հետեւ ի գլուխն նոցա տեսանէ զնոսա Հայրն յաւիտենական, վասն որոց զանչափ սէրն՝ զոր սիրէ զիւր Արդին, սփռէ ի վերայ նոցա: Ինքն իսկ Արդին զայս խնդրեաց ի նմանէ, եւ չկամէր՝ թէ որոշեացի ի մարդկանէ՝ զորս գնեացն. Հայր, ասէ, զորս ետուրն ինձ, կամիմ՝ զի ուր եան եմ, եւ նոքա իցեն ընդ իս⁴⁷. Ըցին հոգւով իմով, եւ վայել լեցեն ի փառսն իմ, եւ ընդ իս նստիցին յաթոռ իմ⁴⁸:

Յետ այսչափ մեծաց երախտեաց, չեք ինչ՝ որ զմեր գոհանալս յայտ առնիցէ, քան ուրախութեան բարբառ արձակել: Ամն փիղիսոփոս մեծ եւ մարտիրոս բողոք բարձեալ գոչէ⁴⁹. Ո՞վ մեծաքանչ զարմանալիք, ո՞վ անհասական փոփոխումն եւ սքանչելի արուեստգիտութիւն Աստուծոյ իմաստութեանն: Մի ոք միայն հարաւ, եւ ամենեքին ապրեցան: Օ Արդի իւր զարդարն եհար Աստուած առ սէր մարդկան մեղաւորաց, եւ եթող մարդկան մեղաւորաց առ սէր Արդւոյն իւրոյ արդարոյ: Արդարն, զոր չպարտէրն հատոյց, եւ թափեաց զմեղաւորս յորոց պարտէինն. քանզի զե՛նչ ինչ այնպէս կարող էր զմեր մեղս ծածկել, թէ ոչ նորա արդարութիւնն: Օ Խորգ մարթ էր բառնալ եւ ջնջել ի միջոյ ծառայիցն ապստամբութեան, թէ ոչ որդւոյն հնազանդութեամբ: Բազմացն անօրէնութիւն միով միայն արդարովն ծածկեցաւ, եւ միոյն արդարութիւն զըաղումն արդարացոյց:

Եւ արդ ի՞մ իմիք չունիցիմք ակն հասանելոյ: Յայտնեաց Աստուած զսէրն իւր ի մեզ, զի մինչ դեռ մեղա-

ւորքն էաք, Վրիստոս վանն մեր մեռաւ․ որչափ եւս առաւել յարդարանալս մերում այժմիկ արեամբ նորա, ապրեսցուք նովաւ ի բարիութենէ անտի: Օ՛ի եթէ մինչ թշնամիքն էաք, հաշտեցաք ընդ Աստուծոյ մահուամբ Արդւոյ նորա, որչափ եւս առաւել ի հաշտելս մերում ապրեսցուք կենօքն նորա⁵⁰: Ամենայն ինչ Վրիստոսիւ տուաւ մեզ․ շնորհք, եւ սրբութիւն, եւ կեանք, եւ փառք, եւ երանելի լինել․ Արդւոյն Աստուծոյ արքայութիւն՝ ժառանգութիւն մեր է․ չեք ինչ վերագոյն քան զմեզ թէ միայն մեզէն զանձինս յանարգութիւն չհասուցանիցեմք:

Մինչ զեռ ելից Վրիստոս զքանկութիւն սրտից մերոց, եւ առաւել քան որում ակն ունէպքն արար, հան ի դուխ եւ կատարեաց զգործն Աստուծոյ՝ որոյ սկիզբն առ նահապետօքն լեալ էր, եւ յօրէնան Մովսիսի:

Յայնմ ժամանակի կամէր Աստուած՝ զե ծանիցեն զնա երեւելօքս զփորձ առեալ․ եւ երեւէր նա մեծատուն զժամանակեան աւետիսն խոստանալով, առատ ի պարզեւել որդւոց բարիս երեւելիս եւ զննելիս, հզօր ի փրկել զնոսա ի ձեռաց թշնամեաց իւրեանց, հաւատարիմ՝ ածել զնոսա յերկիրն՝ զոր խոստացաւ հարցն նոցա, արդար փոխարինօքն եւ պատուհասիւք՝ զորս յայնապէս ըստ գործոց նոցա առաքէր նոցա:

Այս ամենայն սքանչելիք հորդէին ճանապարհ ճշմարիտ պատգամացն՝ զորս Վրիստոսն ուսուցանելոց էր: Աթէ առատ է Աստուած, մինչ զի եւ զայն իսկ՝ զոր մեր զգայունքս խնդրեն, շնորհէ մեզ, որչափ եւս առաւել տացէ մեզ զոր ոգիս մեր՝ որ ըստ պատկերի նորա եղեւ, խնդրեսցէ: Աթէ այնպէս յաճախաբար թ եւ բարերար է նա իւրոց որդւոցն, զգութս եւ զառատութիւն իւր ի սակաւ աման եւ եթ փակիցէ, զորս կեամքս․ չտայցէ այլ ինչ արդեւք սիրելեացն իւրոց, բայց զատուեր միայն զերանելի կենաց, եւ երկիր միայն պարարտ լցեալ ցորենով եւ ձիթով, չուցէ՞ այլ իմն գաւառ՝ ուր առատանայցէ զեղուլ զճճմարիտ բարութիւնան:

Ապաքէն իցէ իսկ ինչ գաւառ այնպիսի, եւ զայն Վրիստոս մեզ ցուցանիցէ: Վանդի ամենազօրն ոչինչ այնպէս արժանի ըստ իւրում մեծազօր զօրութեանն գոր-

ծրս գործեալ էր, թէ ամենեւին ամենայն մեծասպաս փառաւորութիւն գործոց նորա այնչափ էր, որչափ մերոց տկար զգայնոցս ազդէր: Ամենայն՝ որ չիցէն մշանջննաւոր, չէ ինչ արժանի ոչ մեծութեան Աստուծոյ յաւիտենից, եւ ոչ յուսոյ մարդոյն՝ որում զիւր մշանջննաւորութիւնն ծանոցց. գործ ինչ արժանի ըստ չափոյ Աստուծոյ հաւատարմութեանն լեալ յայնժամ երեւեցի, յորժամ զանմահ ինչ եւ զմնացական տալ հաւատարիմ գտանիցի Աստուած:

Արդ՝ պարտ եւ պատշաճ էր յետուստ ուրեմն բանալ Վրիստոսի մեզ զերկինս, զի ցուցցէ անդ հաւատոցն մերոց զհաստատուն քաղաքն՝ ուր ժողովելոցս եմք յետ այսց կենաց⁵¹: Յուցանէ նա մեզ՝ եթէ յայն սակս անուն յաւիտենական առնու Աստուած զանձամբ, կոչել Աստուած Աբրահամու եւ Սահակայ եւ Յակովբայ, զի արքն այնոքիկ սուրբք միշտ կենդանի են առաջի նորա: Աստուած չէ Աստուած մեռելոց⁵². անարժան է նմա առնել իբրեւ զմարդիկ՝ որք մինչեւ ցգերեզմանն երթեալ յուզարկ լինին բարեկամացն իւրեանց, եւ անտի անդր յոյս ինչ չթողուն նոցա. եւ ամօթ իսկ էր նմա այնպէս մեծաբարբառ զանձն Աստուած Աբրահամու կոչել, թէ ոչ շինեալ էր յերկինս քաղաք յաւիտենական՝ ուր Աբրահամ եւ որդիք նորա կեցցեն երանելի կենօքն:

Բստ սմին օրինակի ճշմարիտ պատգամք հանդերձելոց կենացն ի ձեռն Յիսուսի Վրիստոսի յայտնեցան մեզ: Կա՛ եւ յօրէնս իսկ յայտնեաց մեզ զնոսա. ճշմարիտ երկիրն աւետեաց՝ արքայութիւն երկնից է⁵³: Այսմ երանելի աշխարհի ցանկացեալ էին Աբրահամ եւ Խահակ եւ Յակոբ. պաղեստինացւոց աշխարհն չէր բաւական զցանկութիւն սրտից նոցա լնուլ, եւ ոչ այն միայն էր, որում ընդ երկար ակն կալեալ սպասէին հարքն մեր:

Ազխպոսս՝ ուստի պարտ իցէ ելանել, եւ անապատն՝ ընդ որ հարկ իցէ անցանել, եւ Բարեղոն՝ յորոյ կապանաց հարկ է սպրել, զի մոցուք կամ դարձցուք այսրէն ի դաւառն մեր, աշխարհս է հանդերձ պատրանօքն իւրովք եւ ընդունայնութեամբք. աստ ճշմարտիւ գերեալ եմք եւ թափառականք, պատրեալք ի մեզաց եւ ի ցանկութեանց նորա. հարկ է զլուծն խորտակել, զի հասցուք

Ճշմարիտ ազատութեանն եւ անձեռագործ սրբութեանն՝ ուր փառքն Աստուծոյ Խարայէղի երեւիցի մեզ, յԵրուսաղէմ ի քաղաք Աստուծոյ մերոյ:

Ի ձեռն այսր վարդապետութեանն Վրիստոսի՝ ծածուկքն Աստուծոյ յայտնեցան մեզ, օրէնք ամենեւին հոգեւորք լինին, աւետիք նորա առեալ տանին զմեզ առ աւետիս աւետարանին, եւ լինին աւետարանին հիմն: Ամենայն ուրեք նոյն մի լոյս երեւէր. առ նահապետօքն ծագէր, առ Սովսիսիւ եւ առ մարգարէիւքն աճէր, իսկ Յիսուս Վրիստոս, մեծ քան զնահապետն, ճոխ քան զՍովսէս, պայծառագոյն քան զմարգարէսն, եցոյց մեզ մեծապայծառ զուսաւորութիւնն:

Ուսուցանել մեզ զամենայն ճշմարտութիւն, այս ինքն՝ զտորհրդոց եւ զառաքինութեանց, եւ զվարձուցն փոխարինաց՝ զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց, այն Վրիստոսի գործ էր, որ մարդն էր եւ Աստուած, մարդ՝ որ փոխանակ ճշմարտութեանն կայր ի վերայ երկրի, որպէս երանելի սուրբն Աղոսախնոս ասէ, եւ ըզճշմարտութիւն, անձամբ ի մերում միջի կացեալ ցույանէր:

Այսպիսի մեծութիւնս պարտ էր Հրէից յիւրեանց Վրիստոսն խնդրել: Չիք ինչ մեծ քան զայն՝ զի յինքեան զբարձեալ բերիցէ եւ յայտնիցէ մարդկան զամենայն զրոգանդակ ճշմարտութիւն՝ որ կերակրէ զնոսս եւ առաջնորդէ նոցա, եւ զպղտորութիւն աչաց նոցա պարզէ, մինչեւ բաւականս առնել զնոսս զԱստուած տեսանելոյ:

Այսպէս կարգեալ էր, զի ի ժամանակի՝ յորում ճշմարտութիւնն յայտնելոց էր մարդկան այնպիսի յայտնութեամբ, պատմեցի ընդ ամենայն երկիր եւ յամենայն ժամանակս ճշմարտութիւնն: Դողովուրդ մի միայն ետ Աստուած Սովսիսի, եւ ժամանակ սահմանեալ, այլ ամենայն յաւիտեանք եւ ամենայն ժողովուրդք աշխարհի տուան Վրիստոսի. ունի նա ընտրեալս ամենայն ուրեք, եւ եկեղեցի նորա՝ որ ընդ ամենայն համօրէն աշխարհս տարածեալ է, չզադարիցէ ընտրեալս ծնանել: Արթայք, ասէ, աշակերտեցէք զամենայն հեթանոսս. մկրտեցէք զնոսս յանուն Հօր եւ Արդւոյ եւ Հօգւոյն սրբոյ: Ու-

սուցէք նոցա պահել զամենայն որ ինչ պատուիրեցի ձեզ .
 եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս, մինչեւ
 ի կատարած աշխարհի⁵⁵:

1) ՄԵՏՔ. Լ. 21: 2) ՊՈՒԿ. Բ. 32: 3) ՀՈՎ. Լ. 27:
 4) ՄԵՏՔ. Ժ. 2. ՍԵՐԿ. Գ. 16. ՂՈՒԿ. Օ. 14. ԳՈՐԿ. Լ. 13.
 ՍԵՏՔ. Ժ.Օ. 18: 5) ՀՈՎ. Լ. 14. 15. 16: 6) ԼՆՊ. Բ. 12. 29.
 46. Դ. 34: 7) ՄԵՏՔ. Ժ.Օ. 1: 8) ՊՈՒԿ. Օ. 19. Բ. 46: 9) ՀՈՎ. Լ.
 Ժ. 12: 10) ԼՆՊ. Գ. 34: 11) ԼՆՊ. Դ. 21. 25: 12) ՄԵՏՔ.
 Ժ.Լ. 22: 13) ԼՆՊ. Բ. 10. 11: 14) ԼՆՊ. Ժ.Օ. 18: 15) ԼՆՊ. Ժ.Լ.
 12: 16) ԼՆՊ. Ի.Գ. 2: 17) ՀՈՎ. Ժ.Թ. 30: 18) Լ. ԿՈՐԻՒ. Ժ.Լ. 6:
 19) ՊՈՒԿ. Ի.Գ. 4. ԳՈՐԿ. Լ. 8. ՄԵՏՔ. Ի.Բ. 19. 20: 20) ԾՆՆ. Լ.
 26: 21) ԼՆՊ. Բ. 22: 22) ՍԵՐ. ՇԴԹ: 23) ԼՆՊ. Լ. 4: 24) ԼՆՐ.
 Լ. 3: 25) ԼՍՆՍ. ԽԲ. 16: 26) ԼՆՊ. Օ. 2: 27) ՀՈՎ. Լ. 18:
 28) ԼՆՊ. Բ. 58: 29) ԼՆՊ. Գ. 13: 30) ՊՈՒԿ. ՆԵՉ. ԲԱՆ Լ.Օ:
 Լ.Կ. ՎԱՆՆ ԼԵՐՐՈՂ. Թ. 4. ԱՅՐՈՎ. ԶԱՆՊԵՐՃ. ԵՒ Ի ՀԱՎՏ. ԽՈՒՐ
 Լ. ԱՅՐՈՎ. ԶԱՆՊԵՐՃ. ԵՒ ԶԱՂԱԳՍ ՔԱՂԱՔ. Ժ.Լ. 26. 27. 28:
 31) ԵՊՆ. ԼՆՊ: 32) ԵՊՆ. ԹՈՒՂԹ 3. ԱՍՎԱՊԱ. ԳԼ. 3. ԶԱ-
 ՂԱԳՍ ՔԱՂԱՔ. Ժ. 29: ԿՐԻՐ. ԹՈՒՂԹ ԱՍՎԱՊԵՐԻԱՆ. Գ. ՍՊԱՆ
 ԺՊՈՎ. ԼՎԻՍ. ԱՅՐՈՎ. ԶԱՆՊԵՐՃ. ԼԱՆ. ԼՃԹԱՆ. ԱՅՐՈՎ. ԶԱՆ-
 ՊԵՐՃ: 33) ՄԵՏՔ. ԶԱՂԱԳՍ ՊԱՍՆԵՐ. ԳԱՂԱՍ. Օ. 34) ԺՈՐՈՎ. Ժ.Բ.
 7: 35) ՊՈՒԿ. Ժ.Բ. 2. 3: 36) ԼՆՊ. Ժ.Բ. 4: 37) ՀՈՎ. Ժ.Լ: 38) Լ.
 ԿՈՐԻՒ. Ժ.Գ. 9. 12: 39) Լ. ՀՈՎ. Գ. 2: 40) ՀԵՍ. Լ. 12. Ժ.Թ.
 1. 2. 3. 4. 5. 6: 41) ՊՈՒԿ. Ի.Գ. 43: 42) ՍՈՒՐ. ԱՍՎԱՊԱ. ԽՈՒՐ
 Բ. ՎԱՆՆ ԲՆԻԿԵՐՏԱՆ: 43) Լ. ԿՈՐԻՒ. Լ. 19: 44) ՊՈՒԿ. Ժ.Լ. 49. 50:
 45) ՀՈՎ. Ժ.Բ. 31: 46) ՄՈՐ. Բ. 13. 14. 15: 47) ՀՈՎ. Ժ.Լ. 24.
 25. 26: 48) ՀԵՍ. Գ. 21: 49) ՀՈՐՈՍ. ԹՈՒՂԹ ԱՍՎԱՊԱ:
 50) ԼՈՐ. Լ. 6. 7. 8. 9. 10: 51) ԼՆՐ. Ժ.Լ. 8. 9. 10. 13. 14.
 15. 16: 52) ՄԵՏՔ. Ի.Բ. 32. ՂՈՒԿ. Ի. 38: 53) ԼՆՐ. Ժ.Լ. 14. 15.
 16: 54) Լ. ԿՈՐԻՒ. Լ. 1: 55) ՄԵՏՔ. Ի.Բ. 19. 20:

Գ Լ Ո Ի Խ Է

ՀԱՅԻՌԱՅԻ ՍՐԲՈՑ ԻՋՄԵՆԻ, ԵՆԵՂՆԵՐԻՈՑ ՀԵՍՏՈՇՈՒԹՅՈՒՆ ԳԵՏՏՈՇՄԵՆ
ԷՍՏՈՒԿՈՑ Ի ՎԵՐԵՑ ՀՐԷՑ ԵՒ ՀԵԹՄԵՆՈՍԵՑ

Օ՛ր սփռեցցին ընդ ամենայն տեղիս յամենայն ժամանակի այնպիսի բարձրագոյն ճառք ճշմարտութեան, եւ զի կացցեն հաստատեալ եւ ամրացեալ ի մէջ ապականութեան այնպիսի սրբութեան հրահանգք, զօրութիւն ինչ առաւել քան զմարդկեղէն զօրութիւն պիտոյ էր: Ասան այնորիկ եւ Վրիստոս խոստացաւ առաքել զՀոգին սուրբ, զի պնդեցէ զառաքեալան, եւ զընաւ իսկ զեկեղեցի զօրացուցէ յախտեանս ժամանակաց:

Եւ զի այս զօրութիւն Հոգւոյն սրբոյ առաւել յայտնի լինիցի, ի տկարութեան յայանելոց էր: Ասաց Յիսուս ցիւր առաքեալսն. Աս առաքեմ զաւետիս Հօր խոյ ի ձեզ, այս ինքն՝ զՀոգին սուրբ, եւ դուք նստաբուք ի քաղաքիս յԱրուսաղէմ. դորժ ինչ մի դորժիցէք, մինչեւ զգնուցուք զօրութիւն ի բարձանց՝:

Առքա զհետ երթեալ հրամանին, կացին փակեալ զաւուրս քառասուն. էջ Հոգին սուրբ ի ժամանակեալ ժամադիր ժամուն. լեզուքն ի հրոյ՝ որք ի վերայ աշակերտացն Վրիստոսի երեւեցան, զաղօղեցութիւն բանիցն նոցա յայտ առնեն. քարոզութիւնն սկիզբն առ, առաքեալքն ետուն վկայութիւն զՅիսուսէ, պատրաստ էին զամենայն վիշտս չարչարանաց կրել, զի հաւատարիմ առնիցեն՝ թէ տեսին զնա յարուցեալ: Աշանք զհետ երթային բանից նոցա. մի անգամ եւ երկիցս ի խօսելն Պետրոսի ութ հազարք Հրէիցն դարձան, եւ սուգ առեալ վասն չարեաց դորժոց իւրեանց, արեամբն՝ զոր ինքեանք հեղին, լուացան:

Արդ՝ հաստատեցաւ եկեղեցի յԱրուսաղէմ ի մէջ Հրէիցն, թէպէտ եւ մեծ մասն ազգին չէր հաւատացեալ: Աշակերտքն Վրիստոսի այնպիսի ինչ սեր եւ պնդութիւն եւ հեզութիւն ցուցին առաջի ամենայն աշխարհի, որ ի միաբանեալս ուրեք չեւ էին երեւեալ: Յարեաւ հալածումն, հաւատք աճեցին, եւ որդիք Աստուծոյ ուսան առ սակաւ սակաւ երկնից բարութեանցն եւ եթ ցան:

կանալ : Հրեայքն իւրեանց կամակոր յամառութեամբն զՄատուծոյ վրէժխնդրութիւնն կորզեցին յանձինս իւրեանց, եւ փութացուցին ածել զգետին չարիսն՝ որ ըսպառնացեալ էին նոցա . աշխարհն նոցա եւ ամենայն իրք նոցա յաւեր կործանէին :

Մինչ դեռ ընտրէր առնոյր Մատուած ի նոցանէ բազմութիւն մարդկան եւ ընդ ընտրեալսն իւր խառնէր, առաքեցաւ Պետրոս զի զԱռնեղիոս մկրտեցէ, զհարիւրապետ հռոմայեցի : Ուսաւ նախ ի ձեռն երկնաւոր տեսլանն, եւ սպա փորձիւ իսկ եթէ յաստուածգիտութիւն կոչեցան հեթանոսքն :

Քրիստոս, զի զնոսա կամէր դարձուցանել, խօսեցաւ ի վերուստ ընդ Պաւղոսի՝ որ նոցա վարդապետ լինելոց էր . եւ ի ձեռն սքանչելեաց՝ որ չեւ էին յականջալուրս եկեալ, ի հալածչէ ոչ միայն ջատաղով զնա աբար, այլ եւ նախանձայոյզ պատմիչ հաւատոցն . զծածուկ խորհուրդ հեթանոսաց կոչմանն յայտնեաց նմա ի ձեռն անարդութեան Հրէից ապաշնորհաց՝ որ առաւել երթային եւ զանձինս անարժանս աւետարանին առնէին : Պաւղոս կարկառ ձեռն հեթանոսաց, եւ զարմանալի պնդութեամբ զայնց մեծամեծ խնդրոցն ճառէր, Եթէ չարչարելոց է Քրիստոսն, եթէ առաջին ի յարութենէ մեռելոց լոյս պատմելոց է ժողովողեանն եւ հեթանոսաց : Եւ զի հաւատարիմ առնիցէ, զՄովսէս ի մէջ բերէ եւ զմարդարէսն, եւ զկուսպաշտան յաստուածածանօթ դիտութիւնն կոչէ յանուն Յիսուսի Քրիստոսի ի մեռելոց յարուցելոյ : Ղառնային նոքա խուռն բազմութեամբ . եցոյց Պաւղոս՝ եթէ ի շնորհաց է կոչումն նոցա, որ զհրեայ եւ զհեթանոս չընտրէ :

Մոլեղնէին եւ նախանձաբեկ լինէին Հրեայքն . բազում անգամ խորհուրդ առին միարանեցին, զՊաւղոս սպանանել, թշնամանեալք մանաւանդ այնու՝ զի հեթանոսաց քարոզէր եւ ի ճշմարիտն Մատուած ածէր զնոսա . սպա հռոմայեցւոց մատնեցին զնա, որպէս եւ զՅիսուս մատնեալ էին նոցա :

Մենայն տերութիւն Հռոմոնց յառնէր հակառակ եկեղեցւոյն՝ որ դեռ եւս ծնեալ էր . եւ Ներոն, հալածիչ ամենայն մարդկութեանս, զառաջինն զհաւատա-

ցեարս հալածեաց: Բռնաւորս այս զՊետրոս եւ զՊաւլոս սպան: Հռոմ նոցա արեամբն սրբեցաւ. եւ մարտիրոսութիւն Պետրոսի՝ որ առաքելոցն գլուխ է, հաստատեաց ի բուն քաղաք հռոմայեցւոց տէրութեանն ըզգլխաւոր աթոռ կրօնիցն:

Յայնժամ մերձ էր ժամանակ վրէժխնդրութեան Աստուծոյ, ի վերայ Հրէիցն չապաշխարելոց յայտնելոյ. այնու հետեւ յանկարգութիւն կործանէին, սուտ նախանձու վառեալք եւ նովին կուրացեալք ամենայն մարդկան յաչաց ելին. սուտ մարդարէքն նոցա թոփէին զնոսա պատիր թագաւորութեան աւետօք: Պատրեալք ի ձեռն խարէութեանցն նոցա, չկարէին հանդարտել տէրութեան իրիք՝ որ օրինօքն իցէ, եւ յաճախէին անդադար ձեռն ի դործ արկանել եւ ապստամբել: Ստանեաց զնոսա Աստուած ի միտս անարգութեան: Ապստամբեցին նորա ի հռոմայեցւոց, եւ սոքա եկին հասին եւ անհնարին նեղեցին զնոսա. ինքն իսկ Տիտոս՝ որ կործանեացն զնոսա, ի միտ առնոյր՝ թէ ոչ ինքն ինչ առնէր, այլ զիւր ձեռն՝ Աստուծոյ ընդ նոսա ցասուցելոյ, մատուցանէր³: Արքիանոս եկեալ ջնջէր զնոսա: Չ՛նջեցան կորեան նորա հանդերձ ամենայն նշանօք Աստուծոյ վրէժխնդրութեանն. մերժեալք յերկրէն իւրեանց, խախտեալք եւ ի գերութիւն վարեալք ընդ ամենայն տիեզերս, ոչ աաճար գոյ նոցա եւ ոչ սեղան, ոչ զոհ, ոչ աշխարհ, եւ չիք իսկ կերպարանս ինչ զժողովրդեանն ի Յուդա տեսանել:

Այլ Աստուած բաց զաչս հեթանոսաց եւ միարանեցին հոգւով ընդ Հրէիցն դարձելոց. եւ այնպէս մտին ի տոհմն Աբրահամու, եւ եղեալք նորա որդիք հաւատովք, ժառանգեցին զաւետիսն՝ որ եղենն նմա: Աոր ժողովուրդ եղել, եւ զոհն նոր՝ զորմէ բաղում անգամ մարդարէքն ճառէին, սկիզբն առ ամենայն ուրեք մատչել:

Արդ բովանդակ ի գլուխ ելեալ կատարեցաւ կանխասաց պատգամն Յակովբայ. բաղմացաւ Յուդա ի սկզբանէ, առաւել քան զամենայն եղբարս իւր, եւ յամենայն ժամանակի առաւել իմն քան զայլսն երեւեալ, ապա ընկալաւ զԹագաւորութիւն իբրեւ զժառանգակալ: Իսկ յետոյ ժողովուրդն Աստուծոյ ի մի տոհմ գումարեցաւ.

եւ ի ցեղի անդ նորա բովանդակեալ, առ զանուն ցեղին :
Ի Յուդայ ձգեալ կարգեցաւ ժողովուրդն Աստուծոյ՝ որ
 խոստացեալն էր Աբրահամու եւ Սահակայ եւ Յակով-
 բայ . ի նմա այլ եւս աւետիքն մշտնջենաւորէին, Աստու-
 ծոյ պաշտօնն, տաճարն, զոհքն, եւ ունելն զերկիրն աւե-
 տեաց՝ որ յայնմ հետէ Յուդայաստան կոչեցաւ : Թէ-
 պէտ եւ աղզի աղզի անցք անցին ընդ նոսա, այլ կային
 մնային յամենայն ժամանակի իբրեւ ժողովուրդ յարգա-
 րեալ եւ Թաղաւորութիւն, զիւրեանց օրէնսն ի կիր ար-
 կեալ : Աւ տեսանիցէ որ ի նոսա՝ զի հանապաղ Թաղա-
 ւորք դոն կամ իշխանք եւ զատաւորք, մինչեւ եկն Օ-
 ծեալն . իսկ իբրեւ սա եկն, Թաղաւորութիւն Յուդայ առ
 սակաւ սակաւ աւերեալ կործանեցաւ : Ապա ամենեւին
 իսկ քակեցաւ . եւ հրէական աղցն մերժեցաւ առանց յու-
 սոյ յերկրէ հարցն իւրոց : Օծեալն եղև ակնկալութիւն
 հեթանոսաց եւ Թաղաւորեաց ժողովուրդեան նորոյ :

Այլ զի մի պակասեցի պայազատութիւնն եւ հա-
 նապազորք կարգն, հարկ էր՝ զի նոր ժողովուրդս յառա-
 ջին անդր պատուաստէր, զոր օրինակ եւ Պաւղոս ասէ .
 Չիթենի վայրենի պատուաստեցար ի նոսա, եւ բաժա-
 նորդ եղեր արմատոյն եւ պարարտութեան ձեթենեղնն :
 Աւ այսպէս իսկ դիպեցաւ, զի եկեղեցի՝ որ զառաջնն ի
 մէջ Հրէից հաստատեցաւ, ապա զհեթանոսս ընկալաւ,
 զի լինիցի նորօք հանդերձ մի ծառ, մի մարմին, մի ժո-
 ղովուրդ, եւ արասցէ զնոսա հաղորդս եւ հաւասարորդս
 շնորհացն իւրոց եւ աւետեացն :

Իսկ որ ինչ յետ այնորիկ առ Ստափանոսիւ եւ առ
 Տիտոսիւ Հրէից անհաւատից դիպեցաւ, այն ոչ ի ժո-
 ղովուրդ անդր Աստուծոյ պատշաճէր . պատիժք պատու-
 հասից ապատամբելոց էին իրքն, զի անհաւատն լինելով
 ի զաւակէ անտի խոստացելոյ Աբրահամու եւ Պաւթայ,
 չեն այնու հետեւ Հրեայք եւ ոչ որդիք Աբրահամու,
 բայց միայն ըստ մարմնոյ . եւ հրաժարեցին յաւետեացն՝
 յոր օրհնելոց էին հեթանոսք :

Այդ՝ այս յետին եւ ահագին կործանումն Հրէից,
 չէ ինչ վայրաց փոփոխումն, որպէս առ բարեղացւովքն,
 չէ խտրանումն ինչ առաջնորդութեան աշխարհին, եւ
 կարգի ժողովուրդեանն Աստուծոյ եւ կամ աօնից տարե-

կանաց նորա. նոր ժողովուրդս՝ որ եկն եւ ժողովեցաւ եւ ընդ հնոյն ի մի կարգ առ Վրիստոսիւ յօրինեցաւ, չփոխեցաւ տեղի ի տեղւոջէ, այլ ձգեցաւ տարածեցաւ անդադար, յԱրուսաղէմէ ուր ծնանելոյն էր, մինչեւ ի ծագս երկրի: Զեթանոպն առ Զրեայսն ժողովեալ, յայնմ հետէ ճշմարիտ Զրեայք եղեն, եւ ճշմարիտ թագաւորութիւն Յուդայ, հակառակ Խարայեղի՝ որ զանձն ի բաց քակեաց եւ ճեղքեցաւ Մատուծոյ ժողովուրդենէն, ճշմարիտ արքայութիւն Վաւթի, հնազանդութեամբ օրինաց եւ աւետարանին Վրիստոսի որդւոյ Վաւթի:

Զպարտ զարմանալ՝ թէ ընդէր ամենայն ինչ եղծաւ կորեաւ ի հրէաստանի, յետ այսր նորոյ թագաւորութեան հաստատելոյ: Զէր ինչ իմիք պիտոյ երկրորդ տաճարն յետ կատարելոյն Վրիստոսի զոր ինչ ի մարգարէութիւննս գրեալ էր: Փառաւորեալ իսկ էր տաճարն փառօքն՝ որ խոստացեալն էր նմա, քանզի եկեալ էր անդր ցանկալին հեթանոսաց: Արուսաղէմն երեւելի, զոր ինչ արժանն էր առնել, արար. քանզի անտի իսկ ծնաւ եկեղեցի, եւ անտի հանապաղ ընդ ամենայն երկիր զոստան տարածանէր: Զկայր ինչ այնու հետեւ հրէաստանի եւ Զրէից ընդ Մատուծոյ եւ ոչ ընդ կրօնից. եւ յիրաւի վասն կամակոր յամառութեանն իւրեանց, յետ կործանմանն՝ ընդ ամենայն երկիր ցրուեցան:

Մյս իսկ ի Վրիստոսի ժամանակս զիպելոց էր նոցա, ըստ Յակովբայ եւ ըստ Վանիէզի եւ ըստ Չաքարիայ եւ ըստ ամենայն մարգարէից նոցա⁵. այլ քանզի երբեմն զառնալոց են նոքա առ Վրիստոս՝ յորմէ անձանօթն եղեն, եւ զի Մատուածն Աբրահամու ոչ երարձ ամենեւին զողորմութիւնս իւր յանհաւատ տոհմէ անտի նահապետին, եղիս նա հնարս իմն՝ որում հանդոյն չեք յաշխարհի, պահելոյ զԶրեայսն արտաքոյ քան զաշխարհըն իւրեանց եւ ի կործանմանն իւրեանց, երկայն ժամանակօք առաւել քան զազս՝ որ յաղթեցինն նոցա: Զիք ինչ մնացորդս զհնոց ասորեստանեաց կամ զՄարաց կամ զՊարսից եւ զհնունաց տեսանել, եւ ոչ զհռոմոց իսկ. ամենեւին իսկ հետակորոյս բարձան ի միջոյ եւ ընդ այլ ազգս խառնեցան: Իսկ Զրեայք՝ որ տառապեցան յազգաց անտի՝ զորոց բազում վիպասանութիւնք գրուցեալ

կան, առաւել քան զնոսա կեցին. եւ Աստուած զնոսա պահելով, մեզ տայ ակն ունել այնմ՝ զոր ինչ առնելոց է ընդ թշուառական մնացորդս ժողովրդեան, որ երբեմն սիրելին էր նմա:

Այլ նոցա խստասրտութիւնն՝ հեթանոսաց պատճառք փրկութեան լինին, եւ զայս իմն օգտութիւն շնորհեն նոցա՝ զի գտանեն նոքա ի ձեռս նոցա առանց կասկածանաց զգիրս՝ որք յառաջագոյն զՔրիստոսէ եւ զխորհրդոցն նորա պատմեցին մեզ: Այլ ի գիրս անդ հանդերձ այլովք իրօք զկուրութիւն եւ զտառապանս տեսանեմք զՀրէիցն՝ որք զգուշութեամբ պահեն զմատեանն⁶: Ուստի եւ մեք ի նոցա չարեացն առնումք շահս. թերահաւատութիւն նոցա հաստատութիւն մերոց հաւատոցն լինի. ուսուցանեն նոքա մեզ Աստուծոյ երկնչել, եւ են նոքա մեզ տեսիլ յաւիտենական Աստուծոյ դատատանացն՝ որովք զորդիսն իւր ապախտաւորս դատիցի, զի ուսցուք մի հպարտանալ ընդ շնորհսն՝ որ եղենն հարցն մերոց:

Օայսպիսի զմեծաբանչ խորհուրդս եւ զպիտանի առ մարդկան կրթութիւն արժան է բարիօք ածել ըզմտաւ: Այլ չեմք ինչ մեք կարօտ մարդկեղէն ճառիւք առ ի զայն լսելոյ, զի Հողին սուրբ փոյթ յանձին կալաւ մեկնել մեզ բերանովն Պաւղոսի. եւ աղաչեմ միտ գնել զոր ինչ առաքեալս վասն նորին առ հռոմայեցիս գրիցէ:

Իբրեւ ասաց թէ սակաւք ի Հրէից ընկալան զաւետարանն, եւ այլոցն կուրացան միտք իւրեանց, ճառ արկեալ յուղէն, թէ զինչ լինելոց իցէ ժողովուրդն՝ որ այնչափ շնորհօքն պատուեալ էր, եւ միանգամայն յայտնէ մեզ թէ զինչ շահս ի նոցա անկանելոյ շահիցիմք, եւ որչափ օգուտ լինելոց իցէ, յորժամ երբեմն դառնայցեն: Իսկ արդ, ասէ՞, ասեմ մի թէ վասն այնորիկ յանցեան՝ զի կործանեցին. քաւ լիցի, այլ նոցա յանցանօքն փրկութիւն հեթանոսաց, զի նախանձ արկցէ նոցա: Իսկ եթէ յանցանքն նոցա մեծութիւն աշխարհի, եւ պարտութիւն նոցա մեծութիւն հեթանոսաց. որչափ եւս առաւել լրութիւն նոցա: Այլ ձեզ ասեմ հեթանոսաց, յորքան ժամանակս իցեմ հեթանոսաց առաքեալ, զպաշտօնն իմ փառաւոր առնեմ. զի թերեւս նախանձ արկից

նոցա մարմնով խնով, եւ ապրեցուցից զամանս ի նոցանէ: **Օ** ի եթէ մերժումն նոցա հաշտութիւն աշխարհի է. իսկ ընտրութիւն զե՛նչ է, եթէ ոչ կենդանութիւն ի մեռելոց: Իսկ եթէ սկիզբն սուրբ է, եւ զանգուածն եւ արմատն, ապա եւ ոտքն: **Ե**թէ յոստոց անտի ումանք փշրեցան, եւ դու՛ որ ձիթենի վայրենի էիր, պատուաստեցար ի նոսա, եւ բաժանորդ եղեր արմատոյն եւ պարարտութեան ձիթենւոյն, մի պարծիր առ ոստովքն. ապա թէ պարծիցիս, ոչ եթէ դու զարմատն ի վեր ունիս, այլ արմատն զքեզ: Իսկ արդ՝ ասիցես, ոտքն փշրեցան, զի ես պատուաստեցայ. բարւոք է, անհաւատութեամբն փշրեցան, եւ դու հաւատովք հաստատեցար. մի հպարտանար, այլ երկիր, զի եթէ **Ա**ստուած ի բուն ոստն ոչ խնայեաց, զուցէ երբեք եւ քեզ ոչ խնայեացէ:

Որ ոչ զողացի յորժամ զբանս առաքելոյ լսիցէ: **Օ** ինքզ չպարհուրիցիմք ի վրէժխնդրութենէ՛ որ յայնչափ ժամանակաց սասախի ի վերայ Հրէիցն յայտնեցաւ. քանզի Պաւղոս ազգ առնէ մեզ յաստուածակոյս կողմանէ՛ թէ նայնպիսի անցք եւ ընդ մեզ անցանիցեն, եթէ ապակտաւոր լնիցիմք:

Այլ զկարգ եւս զմեծի խորհրդոյն լուիցուք: **Ա**ռաքեալ յառաջ մատուցեալ ընդ հիթանոսացն դարձելոյ խօսի: **Տ**ես, ասէ՞, զքաղցրութիւն եւ զաստկութիւն **Ա**ստուծոյ. ի վերայ կործանելոցն սաստկութիւն, եւ ի վերայ քո քաղցրութիւն **Ա**ստուծոյ, եթէ կայցես ի նմին քաղցրութեան, ապա թէ ոչ, եւ դու կոճոպեցիս: **Ա**ւնոքս եթէ ոչ ի նմին անհաւատութեանն կայցեն, պատուաստեցին. զի կարող է **Ա**ստուած միւսանկամ պատուաստել զնոսա: **Օ** ի եթէ դու ի բուն վայրենի ձիթենւոյ անտի հատար, եւ յանբուն քո ի բարի ձիթենւոյն պատուաստեցար, որչափ եւս առաւել նոքա՛ որ բունքն իսկ են, պատուաստեցին յիւրեանց ձիթենւոյն:

Յայմ վայրի առաքեալ ամբռնայ ի վեր քան զամենայն՝ զոր ասացն եւ եղեալ միջամուխ ի խորս խորհրդոցն **Ա**ստուծոյ, յառաջ մատուցեալ ճատէ զտոյն ձեռքինակի բանից՝: **Ա** կամիմ եղբարք՝ եթէ տղէտք իցէք խորհրդոյս այսմիկ. զի մի յանձինս ձեր իցէք իմաստունք. զի կուրութիւն փոքր ի շատէ եղև. Կարայելի, մինչև

լուսն հեթանոսաց մոցէ, եւ ապա ամենայն Կարայեղ կեցցէ. որպէս եւ գրեալ է¹⁰, Կհեցցէ ի Միովնէ փրկիչ, եւ դարձուցցէ զամպարշտութիւնս Յակովբայ: Աւ այս նոցա, որ յինէն ուխտ յորժամ բարձից զմեզս նոցա:

Այս բան Ասայայ՝ զոր Պաւղոս յայսմ վայրի ի մէջ բերէ ըստ եւթանամիցն թարգմանութեան, որպէս սովոր խոյ էր, վասն ընդ ամենայն երկիր նոցա թարգմանութեանն ծանօթ լինելոյ, առաւել զօրեղ եւ գեղեցիկ է ի բուն մատենին հանդերձ ամենայն կարգաւն. քանզի յառաջ քան զամենայն ինչ անդէն զհեթանոսաց դարձն գուշակէ մարգարէն ասելովն¹¹. Աւ երկիցեն յարեւմուտս յանուանէ Տեառն, եւ յարեւելս ի վառաւորեալ անուանէ նորա: Աւ յետ այնորիկ առակաւ գետոյ բռնութեան՝ որ ի շնչելոյ հողմոյ սաստկութեան վարիցի, տեսանէ Ասայի ի հեռաստանէ, զհալածանան՝ որ զեկեղեցի աճեցուցանելոց էին: Ապա ուսուցանէ նմա Հողին սուրբ՝ եթէ զինչ լինիցին Հրեայքն. եւ յայանէ նմա՝ թէ¹² Կհեցցէ ի Միովնէ փրկիչ, եւ դարձուցցէ զամպարշտութիւնս Յակովբայ, ասէ Տէր: Աւ այս նոցա, որ յինէն ուխտ, ասէ Տէր: Հողի իմ՝ որ է ի քեզ, եւ բանք՝ զոր ետու ի բերան քո, մի պակասեցցէ ի բերանոյ քումմէ. եւ ի բերանոյ զաւակի քոյ, եւ ի բերանոյ զաւակէ զաւակի քոյ, ասէ Տէր, յայսմ հետէ մինչեւ ի յաւիտեան:

Աւստի ցուցանէ մեզ յայանապէս՝ թէ յետ դարձին հեթանոսաց, փրկիչն՝ յորմէ անծանօթ եղև Միովն եւ մերժեցին զնա որդիքն Յակորու, դարձցի միւսանդամ առ նոսա, ջնջեցցէ զմեզս նոցա, եւ խելամուտ աւրացցէ զնոսա մտաց մարգարէութեանցն՝ զոր երկայն ժամանակաւն մոռացան, զի պայազատաց ի պայազատս աւանդեալ յապա ժամանակն կացցեն միտք մարգարէութեանցն եւ այլ մի մոռացին:

Արդ՝ դարձցին երբեմն Հրեայք, եւ այլ մի մեկնեացին. այլ ոչ մինչ չեւ լցեալ իցեն արեւելք եւ արեւմուտք, այս ինքն՝ ամենայն արեւելք, երկիւղիւն եւ դիտութեամբն Աստուծոյ:

Յուցանէ Հողին սուրբ Պաւղոսի՝ եթէ Հրէից եւ բանիլի դարձն ի սիրոյ անտի է, զոր սիրեաց Աստուած զհարսն նոցա: Ասն այնորիկ այսպէս հանէ ի գլուխ

զճառսն. Բստ աւետարանիս, ասէ¹³, թ շնամիք են վասն ձեր, ըստ ընտրութեանն սիրելիք վասն հարցն. քանզի անզեղջ են շնորհքն եւ կոչումն Աստուծոյ: Օ՛ի որպէս եւ զուք երբեմն ապստամբք էիք յԱստուծոյ, եւ արդ ողորմութիւն գտէք առ նոցա ապստամբութեամբն. նոյնպէս եւ նոքա այժմ ապստամբք եղեն առ ձերով ողորմութեամբդ. զի եւ նոքա ողորմութիւն գտցեն: Վանզի արդել Աստուած դամենեսին յանհաւանութիւն, զի ամենեցուն ողորմեսցի: Ո՛վ խորք մեծութեան եւ իմաստութեան եւ զիտութեան Աստուծոյ. իրպէս առանց քննելոյ են դատաստանք նորա, եւ առանց զննելոյ են ճանապարհք նորա: Օ՛ի ո՞վ զիտաց զմիսա Տեառն, կամ ո՞վ խորհրդակից լինիցի նմա, կամ ո՞վ ետ նմա փոխ, եւ առնուցու փոխարէն ի նմանէ: Օ՛ի ի նմանէ, եւ նովաւ, եւ ի նոյն ամենայն. նմա փառք յաւիտեանս, ամէն:

Օ՛այս ասէ Պաւղոս վասն ընտրութեանն Հրէից եւ անկանելոյ եւ դառնալոյ նոցա, եւ վասն դարձին հեթանոսաց՝ որ կոչեցան զի կացցեն փոխանակ նոցա, եւ ի վախճան յաւիտեանյն ածցեն զնոսա յօրհնութիւնն՝ որ խոստացեալն էր հարցն նոցա, այն իսկ է Վրիստոսն՝ զորմէ յուրասա եղեն: Յուցանէ մեզ առաքեալս մեծ զշնորհան՝ որ յաղզէ յաղզ անցանեն, զի ամենայն ազգք երկիցեն թէ գուցէ զշնորհան կորուսանիցեն. եւ յայս ասնէ զշնորհայն զօրութիւն անհնարին առ յաղթութիւն, այնու՝ զի յետ զկռապարիշտն գարձուցանելոյ, յետուստ ուրեմն հանգերձեալ է զկամակորութիւն Հրէիցն եւ զխոստարտութիւն կակղել:

Այնու իմաստուն խորհրդովն Աստուծոյ, մինչեւ ցայսօր կան Հրեայք ի մէջ ազգացն՝ յորս ցրուեալ են եւ վարեալ ի գերութիւն. այլ կան եւ ունին զնկարագիր մերժելոյ իւրեանց, յայտնապէս իսկ վրիպեալ՝ առ չլինելոյ նոցա հաւատարիմ, յաւեանաց անտի եղիլոց առ հարսն նոցա. մերժեալ յերկրէն աւետեաց, եւ գետին իսկ առ ի վար չունին. ամենայն ուրեք՝ ուր իցենն, ծառայք են, առանց պատուոյ, առանց ալատութեան եւ ոչ իբրեւ զժողովուրդ:

Անկան նոքա յայն անհնարին տառապանս, երեսուն եւ ութ ամօք յետոյ քան զխաչելն նոցա զՎրիստոս, յոր-

ժամ զժամանակն՝ որ տուեալն էր նոցա զի զգաստասցին, ի հալածել զաշակերտան նորա անցուցին:

Այլ մինչ գեռ հին ժողովուրդն խոտեցաւ վասն չլինելոյ հաւատարիմ, աճեաց եւ մեծացաւ զօր հանապաղ նոր ժողովուրդն ի մէջ հեթանոսացն. ուխտն՝ որ եղև երբեմն ընդ Աբրահամու, սիռեցաւ ըստ աւետեացն ընդ ամենայն ազգս աշխարհի՝ որոց զԱստուած մոռացեալ էր. եկեղեցի Վրիստոսի զամենայն մարդիկ առ իւր կոչեաց. եւ հանդարտեալ զբազում ժամանակս, յանհնարին հալածանաց միջև, ուսոյց մարդկան չունել ակն յերկրի աստ երանելի լինելոյ:

Այս իսկ էր պտուղ արժանի գիտութեանն Աստուծոյ, եւ արդիւնք մեծի օրհնութեանն՝ զոր Վրիստոսիւ ակն ունէր օրհնել աշխարհս: Այն օրհնութիւն սիռեք զօր հանապաղ յազգաստահմէ յազգատահմ, ի ժողովրդինէ ի ժողովուրդ. մարդիկ առ սակաւ սակաւ բանային զաչս, տեսանել զկուրութիւնն՝ յոր կռապաշտութեամբն ընկրղմեալ էին. եւ թէպէտ եւ հակառակ կայր հոռոմայեցոց զօրութիւնն, այլ քրիստոնեայք ոչ ապստամբեալ եւ ոչ խռովութիւնս ինչ յուզեալ, եւ միայն ազգի ազգի անագորունութեան համբերեալ, փոփոխեցին զկերպարանս աշխարհիս եւ ընդ ամենայն տիեզերս սիռեցան:

Յոյժ վաղվազակի այնպիսի մեծի փոփոխմանն լինել, յայանի իսկ պբանելիք են: Յառաջագոյն ասացեալ էր Վրիստոսի՝ թէ վաղվազակի քարոզեսցի աւետարանն իւր ընդ ամենայն երկիր. այս նշան վաղվազակի յետ մահուանն նորա ի գլուխ ելանելոց էր, զի եւ ասացեալ էր նորա՝ թէ յորժամ բարձրանայցէ յերկրէ, այս ինքն՝ յորժամ ի խաչափայտին բեւեռիցի, զամենեսեան ձգեսցէ առ ինքն¹⁴: Առաքելոց նորա չև էր կատարեալ զընթացս իւրեանց, եւ Պաւղոս ասէր իսկ ցհոռոմայեցիս¹⁵ թէ Հաւաքք ձեր պատմեալ են ընդ ամենայն աշխարհ: Եւ ցկողոսայիս ասէր¹⁶ թէ Առարուք բանին ճշմարտութեան աւետարանին՝ որ եհաս առ ձեզ, որպէս ընդ ամենայն աշխարհ աճէ եւ պողարբերէ: Ի հաստատուն աւանդութենէ ուսանիմք՝ եթէ թոյլմաս ի Հրեղիկս տարաւ հասոյց զաւետարանն, եւ այլքն՝ յայլ գաւառս հեռաւորս¹⁷:

Այլ չեն ինչ պէտք պատմութեան վասն զայն ճշմարտութիւն հաստատուն առնելոյ. արդիւնք իրացն բարբառին, եւ տեսանիցէ իսկ որ՝ թէ զիարդ յիրաւի յառաքեալս հանիցէ Պաւղոս¹³ զբան սաղմոսերգութիւն՝ եթէ Ղնդ ամենայն երկիր ել բարբառ նոցա, եւ մինչեւ ի ծագս աշխարհի են խօսք նոցա : **Ա**ռ աշտիւրտօքն նոցա գրեթէ չորս իսկ նահանգ ինչ հեռի եւ անծանօթ, ուր չէր հասեալ աւետարանն : **Հ**արեւր ամօք յետոյ քան ըզՎրիստոս, սուրբն Յուսափնոս¹⁹ ընդ հաւատացեալսն ի կարդ արկեալ համարէր բազում ազգս վայրենիա, եւ ըզժողովուրդս անգամ զթափառականս՝ որ աստ անդ վաչիւքն եւ սայլիւք շրջիցին, եւ չունիցին հաստատուն բնակութիւն : **Ա**ւ չէին ինչ աւելեաց բանք. այլ արդիւնք դործոց հաստատունք եւ յայանիք, զորոց նա ինքնակալաց առաջի խօսէր, եւ յանդիման համօրէն ամենայն աշխարհաց : **Յ**ետ սակաւ ինչ միոյ եկն եկաց սուրբն Իրենէոս, եւ թիւ եւ համար եկեղեցեացն յաճախեաց : **Ա**ւ այն իսկ զարմանալի էր՝ զի միաբանք ընդ միմեանս էին. զի որում ի դադատացւոց եւ սպանիացւոց եւ դերմանացւոց աշխարհին հաւատային, նմին եւ յԱդրիպոսս եւ յարեւելս հաւատային. եւ զոր օրինակ յամենայն աշխարհի մի արեգակն էր, նոյնպէս ի բոլոր եկեղեցւոջ, ի ծագաց աշխարհի մինչեւ ի ծագս նորա, նոյն լոյս ճշմարտութեան երեւէր²⁰ :

Թէ սակաւ ինչ որ յառաջ մատչիցի, զարմանք ունիցին զնա վասն յառաջադիմութեանն՝ զոր տեսանիցէ : **Ի** մէջ դարուն երրորդի, Տերտուղիանոս եւ Արիպենէս²¹ ցուցանեն լեալ յեկեղեցւոջ ողջոյն ազգս՝ որ յառաջ քան զսակաւ ինչ չէին : **Օ**րոց Արիպենէսն ասէ՝ թէ չեն յեկեղեցւոջ, որք ի կողմանս աշխարհիս յոյժ հեռաւորս բնակէին, յետ սակաւ ինչ ժամանակի զնոսս **Ա**ռնորիս յեկեղեցւոջ գնէ²² :

Աւ արդ՝ զնչ էր որ զաշխարհս այնպէս փութանակի առ Վրիստոս մատուցանէր : **Ա**թէ նշանս ինչ ետես աշխարհ, ապաքէն ձեռն Եստուծոյ իցէ ի դործն յայն. սպ եթէ նշան ինչ չէր տեսեալ, ո՛չ այս իսկ նոր պանչիլիք էին մեծ եւ չհաւատալի քան զայնոսիկ՝ որոց չկամին ոմանք հաւատալ, դարձուցանել զաշխարհս առանց

սքանչելեաց, եւ զայնչափ զտղէտան ի խորհուրդս բարձրագոյնս մուծանել, եւ ուսուցանել զխանոցն զխոնարհութեամբ հպատակ կալ, եւ զանհաւատան հաւանեցուցանել, զայդչափ իրս չհաւատալիս առնուլ յանձն²³:

Այլ քան զամենայն սքանչելիսն սքանչելադոյն այն իսկ է՝ զի ընդ հաւատոցն առաքինութիւնք բարձրագոյնք եւ վարժք զժուարինք ընդ ամենայն երկիր տարածեցան: Աշակերտքն Վրիտտոսի գնացին զհետ նորա ընդ նեղ եւ ընդ նուրբ ճանապարհս: Ամենայն խմբ վասն ճշմարտութեան համբերել, ի մէջ որդւոցն նորա հանապազորդ իմն կրթութիւն էր. եւ վասն նմանող իւրեանց փրկչին լինելոյ, առաւել յօժարութեամբ զիմեցին ի տանջանն, քան այլք ի հանդիստ: Աւ չեցէ իսկ որ բաւական արկանել ի համար, զմեծատունն՝ որ վասն աղքատաց օգնական լինելոյ, աղքատացան, եւ ոչ զաղքատն՝ որք զաղքատութիւն քան զմեծութիւն նախամեծար համարեցան, եւ ոչ զկուսան՝ որք յերկրի զկենաց հրեշտակաց զնմանութիւն բերին, եւ ոչ զհոփիւան խնամակալ՝ որ ամենեցուն ամենայն ինչ եղեն, միշտ պատրաստեալք ոչ տքնել եւ եթ եւ վաստակել վասն հօտին, այլ եւ զանձինս եւս գնել: Օրհնէ իսկ բնաւ զապաշխարութենէ եւ զվշտամբերութենէ ասիցեմ. դատաւորք աւելի սասախի արդարութեամբ չլատին զպատժապարտան, քան որչափ մեղաւորքն ապաշխարօղք զանձինս զատիցին: Աւ է ինչ առաւել քան զսոյն. արդարքն ածին պատիժս ի վերայ անձանց անհնարին խստութեամբ, վասն առաւել յօժարութեանն՝ զոր ի մեզսն յօժարեմք: Ահանք Յովհաննու մկրտչի, որ Հրէիցն այնչափ զարմանալի թուեցաւ, հասարակաց իմն էին ի մէջ հաւատացելոցն. եւ եղին շէն մարդաշատ անապատք յայնցանէ՝ որ նախանձեցանն եւ նմանեցին նմա, եւ այնչափ մենակեացք անգէն էին՝ զի կատարելադոյնք ի նոցանէ ի ներքսագոյն անապատսն յօժարեցին զիմել. այսչափ յաշխարհէ փախրստեայ գնացին, եւ քաղցրացան ի քիւմն նոցա կեանք մենակեցութեան:

Այսպիսի գեղեցիկ պտուղս բերելոց էր աւետարանն: Օր օրինակ մեծատուն է եկեղեցի հրամանօքն, մեծատուն է, եւ այնորիւք՝ որ պահեցին անարատ զհրամանն,

եւ յայնի եղև սրբութիւն վարդապետութեան նորա այնչափ անչափ սրբովք՝ որ ի նմա գտան: Աւ Աստուած՝ որ զիտէն եթէ ի մէջ վշտաց եւ համբերութեան առաքինութիւնք զօրագոյնք ծնանին, մարտիրոսութեամբ հիմն արկ եկեղեցւոյ, եւ զերեքարեւր ամ յայն վիշտս եթող զնա, մինչ զև եւ փոքր ինչ ժամանակ չկարաց ուզի առնուլ:

Իսկ իբրև եցոյց փորձիւ զայնչափ բազում ժամանակս՝ եթէ չէր կարօտ մարդիկեղէն օշնականութեամբ, եւ ոչ երկրաւոր զօրութեամբք առ ի զևր եկեղեցի հաստատելոյ, սպա եւ զինքնակալսն կոչեաց անդր, եւ ամ քրիստոնէութեան ջատագով յայնապէս զմեծն Առտանդիանոս: Յայնմ հետէ թագաւորք յամենայն կողմանց առ հասարակ յեկեղեցի ընթացան. եւ որ ինչ ի մարգարէութիւնսն վասն առ յապայ լինելոյ փառացն եկեղեցւոյ գրեալ կայր, առաջի ամենայն երկրի ի գլուխ ել:

Արդ՝ որպէս յարտաքնոցն պատերազմաց չարտեցաւ եկեղեցի, այնպէս եւ ոչ յերկպառակութեանցն ներքնոց: Ակին հասին աղանդքն՝ զորոց բազում անգամ յառաջագոյն ասաց Վրիստոս եւ առաքեալքն նորա. եւ հաւատք հալածական եղևալ յինքնակալաց, միանգամայն ի հերձուածողաց եւս դժուարին հալածանս կրէր: Աւ ոչ այնպէս երբեք սաստկացաւ այն հալածումն, որպէս յորժամ դադարեաց հալածումն հեթանոսացն: Յայնժամ մեծաւ բռնութեամբ ջանացաւ սատանայ, անձամբ յանձնէ իսկ քակել զեկեղեցի՝ ընդ որում յայնի թըշնամիք նորա բախեցան, եւ առաւել պնդեցին զնա:

Այնչ զեռ սակաւ ինչ ուղի առնուլ կամէր, յորժամ Առտանդիանոս խաղաղութիւն արար եկեղեցւոյ, անդէն Արիոս երէց հէքն եւ թշուառական, մեծ խռովութիւնս յեկեղեցւոջ յուղեաց, որպիսի չեւ էր լեալ ի նմա: Առտանդոս Առտանդիանոսի որդի, պատրեալ յարիանոսաց անտի, զկրօնս նոցա յանձն առեալ զճշմարիտ հաւատացեալսն ամենայն ուրեք տանջէր, եւ քրիստոնէից նոր հալածիչ լինէր. եւ այնչափ ահագին եւ սոսկալի էր, որչափ զի զՎրիստոսի անուն առեալ ընդ Վրիստոսի գրլխովին հակառակեալ կռուէր: Աւ առաւել եւս յաճախեցին չարիքն, զև եկեղեցի մինչ զեռ այնպէս բաժանեալ

եւ ձեղքեալ էր, անկաւ ի ձեռս Յուդիանոսի ուրացելոյ՝ որ զամենայն հնարս հնարեցաւ, զն զքրիստոնէութիւն քակեցէ. եւ այլ ինչ հնարս զխող չեղիտ, բայց ըզհերձուածսն սասակացուցանել, որովք բաժանեալ էր քրիստոնէութիւնն: Յետ նորա եկն Վաղէս եւ սա յարեցաւ յարիանոսսն, որպէս եւ Աստանդոսն, այլ սասակադոյն եւս էր: Եւ այլ ինքնակալք ըստ նմին օրինակի մոլեգնեալ, այլոց եւս աղանդոց եղին պատասպարան:

Օայսչափ ժամանակս զփորձ առեալ եկեղեցւոյ ի միտ առ թէ ոչ սակաւ ինչ վիշտս առ քրիստոնեայ թագաւորօք կրիցէ, քան որչափ առ անհաւատ թագաւորօքն կրեաց. եւ թէ պարտ է հեղուլ զարիւն ոչ միայն ի վկայութիւն ամենայն համօրէն վարդապետութեան իւրոյ, այլ եւ ի վկայութիւն միոյ միոյ ի հրամանակարգ բանից անտի: Վանդի եւ չեք իսկ մի բան վարդապետութեան հաւատոց, ընդ որ չեցեն հակառակեալ որդիք նորա. բեւր հերձուածք եւ բիւրապատիկ աղանդք ի միջոյ եկեղեցւոյ եկին եւ հակառակ եկեղեցւոյ յարեան: Եւ զոր օրինակ՝ ետես նա զնոսա ամբարձեալս, ըստ յառաջադոյնն պատմելոյ Վրիստոսի, նոյնպէս ետես զամենեսին զնոսա անկեալս եւ կործանեալս, ըստ աւետեացն Վրիստոսի՝ զոր խոստացաւն նմա, թէպէտ եւ ինքնակալք եւ թագաւորք թիկունք էին նոցա: Եկեղեցւոյ ճշմարիտ որդիք նովին յայսնի եղեն, որպէս ասէ իսկ Պաւղոս. ճշմարտութիւն յորժամ հակառակութիւնն կրեաց՝ զուրացաւ, եւ եկեղեցի եկաց անշարժ եւ աւանց կործանելոյ:

1) ՊՈՒՆ. ԻԿ. 49: 2) ՊՆՈՐՄ. ԻՕ. 23: 3) ՓԻՂՈՍՏ. Վաղք Եպոդ. Տիւան. Գիբք 9: ՅՈՎՍ. Վանն Լբէա. Պատեք. Գիբք Է. 16: 4) ԼՆՈՐ. ԺԼ. 17: 5) ՈՎՍ. Գ. 4. 5. ԵՍԵ. ԾԹ. 20. 21. ԼՆՈՐ. ԺԼ. 11. այլովքն հանդերձ: 6) ԼՍԵԵ. 9. ԾԹ. ԾԳ. ԿԼ. ԴԵՆ. Թ. ՍԵՏԹ. ԺԳ. ՅՈՎ. ԺԻ. ԳՈՐՄ. ԻԼ. ԼՆՈՐ. ԺԼ: 7) ԼՆԳ. ԺԼ. 11. այլովքն հանդերձ: 8) ԼՆԳ. ԺԼ. 22. այլովքն հանդերձ: 9) ԼՆԳ. ԺԼ. 25. եւ որ ի կարգին: 10) ԼՍԵԵ. ԾԹ. 20: 11) ԼՆԳ. 12) ԼՆԳ. ԾԹ. 20. 21: 13) ԼՆՈՐ. ԺԼ. 28. այլովքն հանդերձ: 14) ՅՈՎ. Լ. 28. ԺԻ. 32: 15) ԼՆՈՐ. Լ. 8: 16) ՊՈՐ. Լ. 5. 6. 23: 17) ՊՆՐԿ. ՆԵ. ԶԵՆ. Բան ԻԵ: 18) ԼՆՈՐ. Ժ. 18: 19) ՅՈՒՍՏԻՆ. Պատասխ. Բ. եւ բնդէմ Տրիփ: 20) ԻՐԵՆ. Լ. 2. 3: 21) ՏԵՐՏՐԿ. բնդէմ Լբէից Է. եւ Պատասխ. ԼԷ: ՈՐՈՒ. Խօզք ԻԼ. ի Սասթ. եւ Բան Դ. յեղեկ: 22) ԼՆՆՈՐ. Գիբք Բ. 23) ԼՆԿ. Յաղաք Քաղաք. ԼԷ. 7. ԻՆ. 5:

Մինչ զեռ. աշխատ լինէի ցուցանել քեզ , առանց ընդ մէջ հասանելոյ , զկարգ խորհրդոցն Աստուծոյ ի կալ մնալ մշանջենաւոր ժողովրդեան իւրոյ , զբազում ինչ իրօք փութանակի անցի , զորոց արժան էր զգուշութեամբ խորհել : Արեւոյ ինձ միւսանդամ դառնալ անդր , զի մի յայնպիսեաց իրաց մեծամեծաց վրիպեցուցից զքեզ :

Աւ նախ՝ աղաչեմ զմտաւ ածել մեծաւ մտազիւրութեամբ զկործանումն շրջիցն . զի ամենայն՝ որ ընդ նոսա անցք անցին , վիպք աւետարանին ճշմարտութեան լինիցին : Աւ այս անցք յարանց անհաւատից մեզ պատմին , ի շրջից եւ ի հեթանոսաց՝ որ առանց զկարգ Աստուծոյ խորհրդոցն խմանալոյ , պատմեցին մեզ զկրտս մեծամեծս՝ որովք յօժարեացն Աստուած զխորհուրդս կամաց իւրոց յայտնել :

Ունինք զՅովսէպոս , զշրջից վեպապատում մատենադիր , զհաւատարիմ եւ հմուտ իրաց ազգի իւրոյ , որ զերբայսկան նախնեաց պատմութիւն լուսաւորագոյն ի սքանչելի մատենի ուրեք գրեաց : Օվերջին պատերազմն եհար ի մատենի , յորում կորեաւ ազգն , յետ աւրնութեակաց եւ ակնատես այնմ ամենայնի դտանելոյ եւ զօրավար աշխարհին լինելոյ :

Իսկ շրեայք եւ այլ եւս մատենադիրս հինս մեզ մատուցանեն , զորոց տեսես զվկայութիւնսն : Ունին մեկնութիւնս հինս վասն գրոց սրբոց , յորոց մի է եւ քաղզէական մեկնութիւնն՝ զոր նօքա ընդ գրոցն իւրեանց գրոշմեն : Ունին եւ զիրս իմն՝ որում անուն կարգան Տաղմուդ , որ է ուսումն վարդապետութեան , զոր իրիւ զզիրս աստուածաշունչս մեծարոյ համարին : Աւ է սա գումարութիւն ճառից եւ բանից հնոց վարդապետաց իւրեանց . եւ թէպէտ եւ ամենայն մասունք մատենին չեն ի նմին ժամանակի ի հնումն գրեալ , այլ հուսկ յետին մատենադիրքն՝ որ անգէն յիշին , յաւաջին ժամանակն եկեղեցւոյ կեցին : Անց ի մէջ անբաւ առասպե-

լաց տխմարաց մտաց կարկատելոց, զորոց մեծ մասն յեա Վրխտոսի ժամանակացն տեսանիցէ որ սկսեալ, դասնին դեղեցիկ մնացորդք հնոց արւշութեանց հրէական աղբին, եւ վիպուածիւնք առ ի զւրեայսն բմբերանելոյ :

Եւ նախ այն իսկ ճշմարիտ է, որպէս շրեայքն խոստովան լինին, զի ոչ այնպէս երբեք արհաւիրն եւ յայտնապէս երեւեցաւ վրէժխնդրութիւն ցասմանն Աստուծոյ, որպէս ի վերջին աւերն նոցա : շատատուն իմն աւանդութիւն է, վիպեալ յիւրեանց Տարմուղն, եւ հաստատեալ յամենայն վարդապետաց նոցա՝ թէ քառասուն ամօք յառաջ քան զաւերածն Արուստղէմի, որ մօտ ի ժամանակա մահուն Վրխտոսի կշռի, ստեպ ստեպ նորանշան տեսիլք ի տաճարին երեւէին : Օգր հանապաղ չքնաղ նշանք յայտնէին, մինչեւ վարդապետ մի անուանի՝ դոչեաց ի միում աւուր եւ ասէ . Տաճար տաճար, ո՞ է որ զքեզն խոռովէ, զի՞ դու քեզէն զքեզ վարհուրեցուցանես :

Օրնչ ինչ քան զայն զզրդիւն եւ սաւաստիւն ահադին եւ սոսկալն կայր, որ ի քահանայիցն ի սրբութեանն լսելն լինէր յաւուր պենտակոստից, եւ զի՞նչ քան զայն բարբառ յայտնադոյն, որ անտուստ ի ներքուստ ի նուիրեալ տեղոջէ անտի ելանէր՝ թէ ՊԱՆՏՈՒՆՆԱՅՐ, ԳՆԱՅՐ : շրեշտակք սուրբք պահապանք տաճարին, մեծարարբառ դոչէին՝ թէ թողումք զսա, քանկել Աստուած՝ որ եղեալ էր զբնակութիւն իւր անդ զայնչափ ժամանակա, խոտեալ էր զնա : Յովսեփոս եւ Տակիտոս իսկ պատմեցին զնշանս զայս². բայց զայս քահանայք միայն իմացան :

Այլ է մեւս եւս նշան՝ որ առաջի աչաց ամենայն ժողովրդեան երեւեցաւ, եւ ոչ նշան ինչ երբեք այնմ հանգոյն այլում ժողովրդեան երեւեցաւ : Յովսեփոս ասէ՝³ թէ Չորս ամօք յառաջ քան զպատերազմն, այր մի շինական աղաղակիլ սկսաւ եւ ասէ, Այլ բարբառ յարեւելից կուսէ, ել բարբառ յարեւմտից թերէ, ել բարբառ ի կողմանց չորից հողմոց . ձայն բարբառոյ ընդդէմ՝ Արուստղէմի եւ ընդդէմ տաճարին, բարբառ ընդդէմ նորոց ամուսնացելոցն եւ նորամուտ հարսանց, բարբառ ընդդէմ ամենայն ժողովրդեանն : Եւ յայնմ ժամանակէ հետ չգաբարէր ոչ գտիւ եւ ոչ զզիշեր բողոքել . Այլ,

վայ Լըրուսաղէմի: Բաղմացուցանէր զգոչիւնն յառուրս տօնիցն տարեկանաց: Ոչինչ այլ ինչ բան երբեք ել ի բերանոյ նորա. որ արդահատէինն նմա, եւ որ անիծանէինն զնա, եւ որ զկարեւոր պէտան տային, չլուան այլ ինչ երբեք ի նմանէ, բայց զահագին բանն՝ թէ Վայ Լըրուսաղէմի: Բմբռնէին, հարցանէին, հրաման տային զատաւորք զանաղից չարադան տանջել. իսկ նա ցիւրաքանչիւր հարցուածսն եւ ի հարուածս զանին, առանց հեծեծութեան տայր պատասխանի՝ թէ Վայ Լըրուսաղէմի: Լը արձակէին իբրեւ զայր մի ի մտաց անկեալ, իսկ նա ընթանայր ընդ ամենայն աշխարհն եւ երկրորդէր անգագար զչար կանխասացութիւնն: Օլելիթն ամ այնպէս դռչեաց, ոչ լքաւ եւ ոչ տկարացաւ բարբառ նորա: Ի ժամանակի յեփին պաշարմանն Լըրուսաղէմի, արդեւ եւ փակեաց զանձն ի քաղաքին, եւ առանց վաստակելոյ շուրջ կկեալ զպարսպօքն գոչէր ուժգին՝ թէ Վայ տաճարին, վայ քաղաքին, վայ ամենայն ժողովրդեանն. ապա յաւել՝ թէ Վայ եւ ինձ. եւ նոյն ժամայն վէմ մի ուրմաքարաց հասեալ՝ զնա յերկիր կործանէր:

Ըրդ ո՞ ոչ իմացի՞ եթէ վրէժ քինուն Եստուծոյ յայտնի եւ երեւելի լեալ իցէ յառն յայսմիկ, որ վասն զվճիռ ցասմանն Եստուծոյ պատմելոյ միայն կենդանի էր. եւ թէ ելից զնա Եստուծոյ վրէժխնդրութիւնն իւրով զօրութեամբն, զի ըստ արժանի վշտաց ժողովրդեանն բողոքել կարիցէ. եւ թէ պարտ էր նմա ի վրէժխնդրութենէ անախ կորնչել, զորմէ զայնչափ ժամանակս պատմէր, զի առաւել սաստիկ եւ մօտաւոր զվրէժխնդրութիւնն ցուցանիցէ, յորժամ ոչ միայն մարգարեանայցէ զնմանէ եւ վկայ լինիցի, այլ եւ զնոյն տանջանս կրիցէ:

Սա՞ որ մարգարեանայր զչարիսն Լըրուսաղէմի, Յիսուս կոչէր: Թճուի՞ թէ անունն Յիսուսի, փրկութեան եւ խաղաղութեան անունն, գուշակ չարեաց լինելոց էր շրթիցն՝ որ անարդեցին զՏէր Յիսուս. եւ զի երախտակորոյսքն եւ երախտամոռացք մերժեցին զՅիսուս՝ որ նուցա զշնորհս եւ զողորմութիւն եւ զկեանս պատմէր, առաքեաց նոցա Եստուած մեւս եւս Յիսուս՝ որ զվեշտս առանց բժշկութեան պատմէր, եւ զանհրաժեշտ վճիռ կկեալ հասեալ աւերածին:

Միտ եղեալ նայեսցուք անդր իսկ ի դատաստանն Աստուծոյ, ըստ իւրոց գրոցն առաջնորդելոյ: Արուսագէտ՝ եւ տաճարն երկիցս անդամ քանդեցան. մի՛ ի Նարուքոգոնոսորայ, եւ մեւս եւս՝ ի Տիտոսէ: Բայց յերկոսին եւս ժամանակն նովին օրինակաւ յայտնեցաւ Աստուծոյ արդարութիւնն, թէպէտ եւ եւս յայտնադոյն ի յեանումն:

Եւ զի բարւոք զայս կարգ խորհրդոցն Աստուծոյ իմանայցեմք, յառաջ քան զամենայն ինչ զայն ճշմարտութիւն՝ որ ի դիրս սուրբս բազում անգամ գտանիցի, կարգեսցուք. քանզի ահագին ցասման վրէժխնդրութեան Աստուծոյ գործ է, յորժամ վասն զառաջին ինչ մեր մեզս պատժելոյ, թողուցու Աստուած զմեզ գնալ մեզ ըստ կամս անձանց մերոց, մինչեւ իւրացեալք՝ իմաստուն խրատուն չլսել, եւ կուրացեալք՝ չտեսանել զճանապարհս փրկութեան՝ որ յայտնեցին մեզ, եւ լինել վաղվազս առհաւատալ ամենայնի՝ որ կորուսանէն զմեզ, միայն թէ ակորժելի մեզ իցէ, եւ յանդուռնս հարկանել բունն զամենայնէ, չածեալ ինչ զմտաւ երբեք զկար զօրութեան մերոյ, առաջի սաստկութեան թշնամեաց մերոց՝ զորս ի ցասումն ածեմք:

Այսպէս կորեան զառաջինն, ի ձեռն Նարուքոգոնոսորայ արքային բարեղացւոց Արուսագէտ՝ եւ իշխանք նորա: Տկարացեալք եւ բազում հարուածս ի հզօր թագաւորէ անտի առեալ, զփորձ առեալ գիտէին՝ թէ ի զուր է նմա ընդդէմ գառնալ, եւ երգուան իսկ նմա հաւատարիմ կալ⁴: Արեմիա մարդարէ յայտ առնէր նոցա յաստուածակոյս կողմանէ՝ թէ Աստուած իսկ եթող զնոսա ի ձեռս թագաւորին, եւ թէ չկր փրկութիւնն նոցա, բայց բառնալ զլուծ թագաւորին: Ասէր⁵ ցՍեղեկիա արքայ Յուդայ եւ ցամենայն ժողովուրդն. Մուծէք ըզպարանոցս ձեր ընդ լծով արքային բարեղացւոց, եւ կեցջկք. եւ ընդէր մեռանիք դուք, եւ լինիցի քաղաքդ աւերակ: Թեքահաւատ եղեն նոքա ի բանից անտի. եւ մինչ գեռ Նարուքոգոնոսոր ազգի ազգի մենքենայս մատուցեալ, պաշարեալ շուրջանակի զքաղաքն նոցա փակէր զնոսա, նոքա սուտ մարդարեիցն անային, որ վրիպեցուցանէին զնոսա խաբէութեամբ յաղթութիւն պատմե-

լով եւ խօսէին ընդ նոսա յանուն Աստուծոյ, եւ Աստուծոյ չէր առաքեալ զնոսա. Խորտակեցի, ասեն, ըւծ արքային բարեկացւոց ի անդւոջէդ յայդմանէ, յետ այլ եւս երկուց ամաց աւուրց. եւ ես դարձուցից ի անդիդ յայդ զամենայն սպաս տանն Տեառն, զոր միանդամ առ Վարուքողոնոսոր արքայ բարեկացւոց ի անդւոջէդ յայդմանէ, եւ տարաւ ի Վարեղովն⁶: Արդ՝ Ժողովուրդն ի սնտաի յոյս կապեալ, սովոյ եւ ծարաւոյ եւ անհնարին վշտաց համբերէր, եւ ցայնվայր անզղայեալ յանդիներ, մինչեւ չլինելոյ նմա ամենեւին ողորմութիւն: Վաղաքն ի հիմանց բրեցաւ, հրձիգ եղեւ տաճարն, ամենայն ինչ կորեաւ սպառեցաւ⁷:

Յայամ ամենայնէ ի միտ առին Հրեայք՝ թէ ձեռն Աստուծոյ է ի վերայ նոցա: Այլ զի նոյնպէս յայտնի եւ դուշակաւոր լինիցի Աստուծոյ վրէժխնդրութիւնն ի յեանուս աւերածին Արուսաղէմի, որպէս յառաջնումն ըսալ էր, յերկոսեան եւս նոյն խոսովութիւն եւ յանդրգնութիւն եւ խտասարտութիւն երևուէր:

Թեպէտ եւ սպատամբելն նոցա՝ ած զգորս Հոռոմոց խաղալ ի վերայ, զի յանդիներալ ի վեր եկեալ խղիցին ընկեցին զուծն՝ ընդ որով համօրէն ամենայն տիեղերք մտանէին, այլ Տիտոս չկամեցաւ կորուսանել զնոսա. բազում անգամ թողութիւն առաքէր նոցա, ոչ միայն ի սկսանել մարտին, այլ եւ յորժամ չկարէին ապրել ուրեք ի ձեռաց նորա: Այլ էր նա կանգնեալ շուրջ զԱրուսաղէմաւ պարիսպս ամրացեալս աշտարակօք եւ պատուարս ամուրս անխարս իրրեւ զքաղաքն իսկ գլխովին, յորժամ առաքեաց առ նոսա զՅովսելպոս զիւրեանց քաղաքացի, զգորավար նոցա եւ զքահանայ՝ որ բմբռնեցան ի կռուին մինչ դեռ զքաղաքն պահէր: Օրհնէ բանս ոչ ասաց վասն ամեղոյ զնոսա ի հաւան: Արչափ պատճառաւօք յօժարեցոյց զնոսա հնազանդ լինել: Յուցանէր նոցա զերկինս եւ զերկիր՝ թէ միաբանեալ են եւ ի դաշն ընդ միմեանս մտեալ հակառակ նոցա. եւ եթէ ի վէպ գայցեն եւ հակառակիցին՝ անհրաժեշտ կորուստ է, եւ կեանք ի գլխութեան Տիտոսի: Ապրեցուցէք, ասէր, զքաղաքն սուրբ, ապրեցուցէք զանձինս ձեր, ապրեցուցէք զտաճարն, զհրաշակերտն եւ զհոյակապ ընդ ամենայն աշ-

խարհ, զոր Հոռութք մեծարեն եւ Տիտոս տրամի ընդ կորուստ նորա⁸ : Այլ չէր ինչ հնար ամենեւին ապրեցուցանել զմարդիկն՝ որ այնպէս հեռացին եւ սիրեցին զկորուստ անձանց իւրեանց : Խարեալք ի սուտ մարդարեկիցն իւրեանց, չլէին իմաստուն խրատուն : Ի նեղ մեծ հասեալ էին, բազում սովարեկք լինէին ի նոցանէ քան զանկեալսն ի պատերազմի, եւ մարք ուտէին զմանկունս իւրեանց : Իսկ Տիտոս խանդաղատեալ ի դուժ դարձեալ, զգիտն իւր ի վիայութիւն տանէր՝ թէ չէ ինչ ինքն պատճառք կորստեան նոցա : Այլ մինչ դեռ այս ամենայն թըշուառութեան անցք անցանէին, նոքա սուտ կանխաստութեանցն հաւատային՝ թէ ամենայն աշխարհաց տիրելոց են : Մանաւանդ թէ առեալ իսկ էր քաղաքն, եւ յամենայն կողմանց հուր այրէր . իսկ նոքա անմտացեալք սուտ մարդարեկիցն հաւատային, որք ասէին՝ թէ եկեալ հասեալ է օր փրկութեան⁹, զի ի սպառ հահառակ կայցեն եւ մի ոք ողորմեսցի նոցա : Արպէս եւ արդեամբք իսկ ամենեքին առ հասարակ սատակեցան . տապալեցաւ քաղաքն ի հիմանց, եւ բաց յաշտարակաց ինչ՝ զոր թող Տիտոս զի լինիցին յիշատակք առ յապայ ժամանակաց, չմնաց անդ քար ի քարի վերայ :

Տեսանե՞ս զի զնոյն վեճ լուծին երուսաղէմացիք, զոր առ Եղեկիլաւն : Օ՛հ եւ Տիտոս առաքեցաւ յԱստուծոյ, որպէս եւ Նարուբոզոնոստրն . եւ Հրեայք նոյն օրինակ կորեան : Նոյն ապստամբութիւն յԱրուսաղէմ, նոյն սով սուր եւ նեղութիւն, նոյն ճանապարհ փրկութեան բացեալ, նոյն խարէութիւն, նոյն խտաստութիւն, նոյն կործանումն . եւ զի ամենայն ինչ նման լինիցի, երկրորդ տաճարն առ Տիտոսիւ ի նմին ամսեան ի նմին աւուր հրձիգ եղեւ, յորում աւուր առ Նարուբոզոնոստրաւ առաջին տաճարն այրեցաւ¹⁰ . քանզի պարտ էր ամենայն իմիք յայտնի լինել, զի մի երկմիտ ինչ ժողովուրդն յԱստուծոյ վեճիսնդրութենէն լինիցի :

Բայց են ինչ ընտրութիւնք ի միջի ընդ երկուս կործանմունս Արուսաղէմի եւ Հրեկիցն . այլ այն ամենայն յերկրորդումն զսաստիկ արդարութենէ յայտ առնեն : Նարուբոզոնոստր հրաման ետ հրձիգ առնել զտաճարն . իսկ Տիտոս զամենայն հնարս հնարէր ապրեցուցանել զտա-

Ճարն, թէպէտ եւ խրատ եւս տային խորհրդականք նորա՝ թէ ցորչափ տաճարն կայցէ, Հրեայք՝ որ ի նմա զանձանց փառաւորութիւն կամ զչուառութիւն հաստատեալ ունէին, չդադարեն յապստամբութենէ: Այլ էր եկեալ հասեալ օրն՝ որ էր տասներորդ նաւասարդ ամսեան, յորում աւուր պրեցաւ տաճարն Սողոմոնի: Թէպէտ եւ արդեւ Տիտոս եւ պատուէր ետ առաջի հռոմայեցւոյն եւ Հրէից՝ թէ մի այրէք, մանաւանդ զի եւ զինուորացն միաք յայն միտին զի յաւար հարկանիցեն եւ ոչ թէ հուրբ զմեծութիւնսն մաշեցեն. այլ ասէ Յովսեպոս՝ թէ զօրական մի դրդեալ յԱստուծոյ ազդեցութենէ, եւ հանեալ զնա ընկերաց իւրոց ի պատուհան մի, արկ հուր ի շքեղ տաճարն: Կնթանայր Տիտոս, հրաման տայր տաղնապաւ, փութալ արագ արագ շեջուցանել զըոյն բորբոքեալ: Տարածեցաւ վառեցաւ ընդ բնաւ բոյն ի միում վայրկեան ժամանակի, եւ հրաշակերտ շնուածն մոխրեալ անկաւ:

Իսկ արդ՝ եթէ խտասորտութիւն Հրէիցն առ Աղեկիաւ ահադին դործ եւ նշանակ յայտնի Աստուծոյ վրէժխնդրութեանն էր, զի՞նչ ոք զկուրութենէն ասիցէ, զոր ի Տիտոսի ժամանակսն կուրացան: Պէթ յառաջնում աւերածին Արուսաղէմի, միաբանք ընդ միմեանս էին Հրեայքն. իսկ յերկրորդումն, մինչ դեռ պաշարեալ էր քաղաքն ի Հռոմոց, ընդ երիս ձեղքեալ էին քաղաքացիքն թշնամութեամբ¹¹: Աւ որպէս երեք բաժինքն նոցա մեծաւ քիտու մոլեղնեալ էին ընդդէմ հռոմայեցւոցն, նոյնպէս եւ ընդ միմեանս զայրացեալք զկծեալք՝ ընդ իրեարս բախէին. արաաքին պատերազմն քան զներքինն սակաւազոյն արիւն հեղոյր ի Հրէիցն: Ազգավազակի իբրեւ ընդ օտարին բախեցան յարձակեալք, սկիզբն առնէին քաղաքացիքն ընտանի պատերազմաց իւրեանց. բռնութեամբ եւ յափշտակութեամբ եւ զրկանօք լի էր քաղաքն: Ապականէր կորնէր քաղաքն, եւ էր նա իբրեւ զզաշտ մեծ ծածկեալ ի դիականցն անկերոց, եւ գլխաւորք խաղմարարացն անդէն ի վերայ տէրութեանն կրուռէին: Այս ապաքէն պատկեր իցէ սա դեհնինն՝ ուր զմիմեանս առնն դատապարտեալքն, որպէս եւ զդեւան՝ որ նոցա հասարակաց թշնամիք են. եւ ուր ամենայն ինչ

լին է հպարտութեամբ եւ խառնակութեամբ եւ կատաղութեամբ:

Արդ պարտ եւ պաշաճ է խոստովան լինել, թէ արդարութիւնն՝ զոր արար Աստուած ի վերայ Հրէիցն ի ձեռն Նարուքոզոնոսորայ, ստուեր էր այնր՝ որում Տիտոս սպասաւոր եղել: Յորում քաղաքի արդեւք այսպիսի ինչ երեւեցաւ, հարեւր տասն բեր մարդկան, յեւթըն ամնեան ի միում պաշարման ժամանակի կորնչել: Այս անցք ընդ Հրեայս ի յետին պաշարման Արուսաղէմի անցին: Այսպիսի ինչ վիշտս չհասուցին ի վերայ նոցա քաղաքացիքն: Առ քաղաքացւոյքն, գերութիւն նոցա եւթանասուն ամ միայն բաւեաց. իսկ աստ հազար վեց հարեւր ամ է, զի գերեալ են նոքա ընդ ամենայն երկիր, եւ չեք ինչ միսիթարութիւն գերութեան նոցա:

Այսու հետեւ ընդ այն ինչ չէ պարտ զարմանալ թէ Տիտոս յետ յաղթութեանն եւ առնելոյ զԱրուսաղէմ, չքկամէր ընդունել զինդակիցն լինել աղքատն արուարձանեացն, եւ ոչ զպսակն՝ զոր առաքէին նմա ի պատիւ եւ ի փառս յաղթութեան նորա: Վանդի զարմացուցանէին զնա անցք իրացն, եւ սրտմտութիւն Աստուծոյ յայտնապէս երեւեալ, եւ ձեռն նորա՝ զոր այնպէս մօտ տեսանէր. վասն որոյ եւ ասէր իսկ զայն՝ զոր յառաջադոյնն ասացաք, թէ ոչ նա էր որ յաղթեացն, այլ գործի մի էր անպիտան՝ վրէժինդրութեանն Աստուծոյ:

Զգիտեր նա զամենայն ծածուկս իրացն. քանզի չեւ էր եկեալ ժամ ճանաչելոյ թաղաւորաց զՎրիստոս: Դեռ եւս ժամանակ էր նեղութեան եւ հալածանաց եկեղեցւոյ: Վասն այնորիկ Տիտոս՝ որ ծանեաւն թէ յԱստուծոյ արդարութենէ կորեաւ հրէաստան, չգիտաց թէ վասն որոց մեղաց զայնպիսի ահագին պատիժս կամիցի Աստուած ի վերայ ածել: Այն քան զամենայն մեղս դաժանադոյն մեղք էին, զի եւ ցայնժամ չէր ինչ ծանօթ, այս ինքն զԱստուած սպանանել. վասն որոյ եւ այնպիսի վրէժս ետուն, զի չեւ էր ուրեք այնմ հանդոյն յաշխարհի երեւեալ:

Այլ եթէ բանայցեմք սակաւիկ զաչս, եւ զկարգ իրացն ածիցեմք զմտաւ, չէ մարթ թէ ծածկիցին ի մէնջ, ոչ անօրէն գործ Հրէիցն եւ ոչ պատիժքն պատուհասից:

Օայն միայն յիշեացուք, զոր նոցա յառաջագոյն ասացեալ էր Վրիստոսի: Սանխաւ պատմեաց նոցա զաւերելոյ Արուսաղէմի եւ տաճարին. Ալ մնասցէ, ասէ, այդք քար ի քարի վերայ¹²: Եւսաց եւ զօրինակ պաշարման ապախտաւոր քաղաքին, եւ զահագին պատնէշ պաշարմանն՝ որ զնովաւ պատելոց էր շուրջանակի. դուշակեաց եւ զսոփն սաստիկ՝ որ նեղելոց էր զքաղաքացիան, եւ յիշատակեալ էր զսուտ մարդարէան՝ որովք նոքայն պատրելոց էին: Եւ էր դուշակեալ շրէկցն՝ թէ ժամանակ թշուառութեան նոցա մերձ էր, եւ տուեալ էր նշանս՝ որ ցուցանիցեն զժամն եւ զժամանակն. ցուցեալ էր նոցա եւ զյաճախութիւն անօրէն դործոցն՝ վասն որոց յայնպիսի պատիժս մտանելոց էին, եւ միանգամայն իսկ պատմեալ էր մի ըստ միովէ զպաշարումն եւ զապակախութիւն Արուսաղէմի:

Միտ գիր, զհարգ մօտ ի չարչարանաց ժամանակն արար զկանխասացութիւնն, զի առնուցուն բարեոք ի միտ զպատճառս չարեացն իւրեանց: Մերձ էր ժամանակ չարչարանաց նորա, յորժամ ասէրն ցնոսա՝¹³ թէ Եհուսաիկ եւս առաքեմ առ ձեզ մարդարէս եւ իմաստունս եւ զբպիրս. ի նոցանէ սպանանիցէք, եւ ի խաչ հանիցէք, եւ ի նոցանէ տանջիցէք ի ժողովուրդս ձեր, եւ հալածիցէք ի քաղաքէ ի քաղաք: Որպէս զի եկեսցէ ի վերայ ձեր ամենայն արիւն արդար հեղեալ յերկրի, յարենէ Երէզի արդարոյ, մինչեւ ցարիւնն Օսքարիայ որդւոյ Բարաքեայ՝ զոր սպանէք ընդ մէջ տաճարին եւ սեղանոյ. ամէն ասեմ ձեզ, եկեսցէ այն ամենայն ի վերայ ազգիս այսորիկ: Արուսաղէմ՝ Արուսաղէմ, որ կոտորէիր զմարդարէս եւ քարկոծ առնէիր զառաքեալսն առ քեզ. քանիցս անգամ կամեցայ ժողովել զմանկունս քո, զոր օրինակ ժողովէ հաւ զձագս իւր ընդ թելովք, եւ ոչ կամեցարուք. ահա թողեալ լիցի ձեզ տունդ ձեր աւերակ:

Եւս իսկ պատմութիւն է շրէկց: շալածեցին նոքա զՕծեալն իւրեանց, զնա եւ զիւրսն ամենայն. եւ յուղեցին զամենայն աշխարհս հակառակ աշակերտացն, եւ չետուն նոցա հանդիս ի քաղաքի ուրեք. զհոռմայեցիս եւ զթաղաւորս վառեցին ընդդէմ եկեղեցւոյ՝ որ նորոգ իսկ ծնեալ էր. քարկոծ արարին զՍտեփանոս, սպա-

նին զՅակովբոս եւ զմեւ Յակովբոս՝ յորոց եւ ինքեանք, առ սրբութեան գնացից նոցա պատկառէին, սպանին զՊետրոս եւ զՊաւղոս ի ձեռն հեթանոսաց: Հարկ էր՝ զե եւ ինքեանք կորնչէին. քանզի այնչափ արիւն խառնեալ ընդ արիւն մարգարէիցն՝ զոր կոտորեցին, բողբ ունին առ Աստուած. տունք նոցա եւ քաղաք նոցա անպատ եղիցին, ոչ փոքր քան զգործ անօրէնութեան նոցա՝ լինիցի աւերն նոցա. պատմեաց նոցա Վրիստոս զաւերածն¹⁴, եւ եթէ մօտ է ժամանակն: Այնչեպէ, ասէ, ազգս այս մինչեւ այս ամենայն եղիցի. այս ինքն մարգիկն՝ որ յայնժամ կենդանի էին, վկայք լինելոց էին իրացն:

Այլ լուիցուք կարգի կանխախօսութեան կենարարին մերոյ: Իբրեւ մտանէր Աշուսաղէմ աւուրբք ինչ յառաջ քան զմահն, խանդաղատեալ ընդ չարին՝ զոր մահն նորա հասուցանելոց էր ի վերայ թշուառական քաղաքին, հայեցաւ ընդ նա, ելաց եւ ասէ¹⁵. Աթէ գիտէիր դու գոնէ յաւուրս յայսմիկ զխաղաղութիւնն քո, բայց այժմ՝ ծածկեցաւ յերեսաց քոց: Օհ եկեցեան աւուրբք ի վերայ քո, եւ պատեցեն զքեւ թշնամիք քո պատնէշ, եւ պաշարեցեն զքեզ, եւ նեղեցեն զքեզ յամենայն կողմանց. եւ յատակեցեն զքեզ, եւ զորդիս քո ի քեզ. եւ ոչ թողուցուն քար ի վերայ քարի յամենայն ի քեզ. փոխանակ զե ոչ ծանեար զժամանակ այցելութեան քո:

Սովին յայտնապէս ցուցանէր զօրինակ պաշարմանն, եւ զգետին գործս վրէժխնդրութեանն: Այլ չէր պարտ Յիսուսի գնալ ի տանջանն, առանց յայտ առնելոց Աշուսաղէմի՝ թէ զինչ պատիժս երբեմն կրիցէ վասն գնա անարգելոյ: Իբրեւ երթայր ի Վողզոթա, բարձեալ զխաչն ի վերայ ուսոց իւրոց, զհեա գնային նորա ժողովուրդ բազում, եւ կանայք՝ որ բախէին զկուրծս իւրեանց եւ աշխարէին զմահն նորա: «Աս եկաց, դարձաւ առ նոսա եւ ասաց ցնոսա զքանս զայս¹⁶. Վաստեք Աշուսաղէմի, մի լայք ի վերայ իմ, այլ լացէք ի վերայ անձանց եւ ի վերայ որդւոց ձերոց. զե եկեցեան աւուրբք՝ յորս ասիցեն, թէ Աբանի՛ ամլոց եւ որովայնից՝ որ ոչ ծնան, եւ ստեանց՝ որ ոչ գիեցուցին: Յայնժամ սկսանիցին ասել լերանց՝ թէ Անկերուք ի վերայ մեր, եւ բլրոց՝ թէ Օսածկեցէք զմեզ:

Օի եթէ ընդ վայտ դարար զայս առնեն, ընդ չորն զե՞նչ լինիցի: **Ե**թէ չյանցուցեալն եւ արդարն այսպիսի սանջանս կրիցէ, ի՞մ խմիք ակն չունիցին յանցուցեալքն:

Մի թէ **Ն**րեմիայի աւելի՞ ինչ երբեք քան զնա դառնապէս սուգ առեալ իցէ ընդ կորուստ շրէիցն: **Օ**ի՞նչ բանս քան զնոյնս սաստկաբոյն մարթ էր կենարարին բարբառել, զի տացէ նոցա առնուլ ի միտ զթշուառութիւն եւ զվհատութիւն նոցա, եւ զահադին սոյն՝ որ նեղէր զմանկունան, եւ վարանեցուցանէր զմարսն՝ որ զստինսն ցամաքեալս տեսանէին, որ քան զարտասունն, այլ ինչ չունէին զի տացեն մանկանց իւրեանց, որ եւ զպտուղ աղեաց իւրեանց կերան:

Այսպիսի ինչ են կանխախօսութիւնքն՝ զոր արար նա ամենայն ժողովրդեանն:

1) Ուրբ. ԵՅԳ. Բւսար Զակ. Խօսք վասն Տօնի Բաւու-
թեան: 2) ՅՊՎ. Վասն շրէա. Պատեր. Է. 12: ՏԵԿԵՏ. Պատմ.
Գիրք Ե. ԳԼ. 13: 3) Գիրք Է. Վասն շրէա. Պատեր. ԳԼ. 12:
4) Ի. ՍԵՏ. Լ. 13: 5) Երեւ. ԻԷ. 12. 17: 6) Լնդ. ԻԲ. 2.
3: 7) Գ. ԹԵԳ. ԻԷ: 8) ՅՊՎ. Գիրք Է. Վասն շրէա. Պատեր. 4:
9) Լնդ. 11: 10) Լնդ. 9. 10: 11) Լնդ. Գիրք Զ. Է. 12) ՍԵՏ.
ԻԳ. 1. 2. ՍԵԿ. Ե. Գ. 1. 2. ԳՐԿ. ԻԷ. 5. 6: 13) ՍԵՏ. ԻԳ.
34. այլովքն հանդերձ: 14) Լնդ. ԻԳ. 34. ՍԵԿ. Ե. Գ. 30. ԳՐԿ.
ԻԷ. 32: 15) Լնդ. Ե. Թ. 41: 16) Լնդ. ԻԳ. 27:

ՎԵՆԵՇԵՍՈՒԹԵՆՅՆ՝ զոր առանձինն աշակերտացն ա-
րար, արժան է առաւել եւս միտ դնել: Վան սքա յեր-
կայն եւ ի սքանչելի ճառսն՝ ուր զաւերն Արուսաղէմի
խառնէ ընդ աւերն օրիցերաց: Աւ այս ոչ խառն ի խու-
ւրն, այլ խորհրդով:

Արուսաղէմ, քաղաք բարեշէն մարդաշատ՝ զոր ըն-
տրեաց Տէր, մինչ դեռ կայրն յուխտի աւետեացն խոս-
տացելոց, առակ օրինակի եղեւ եկեղեցւոյ, եւ կերպա-
բանք երկնից՝ ուր երեւի Աստուած որդւոց իւրոց: Վա-
սըն այնորիկ իսկ տեսանեմք բազում անգամ զմարդարէսն,
զի ի նոցին բանից կարգի, զայն ինչ՝ որ Արուսաղէմի պատ-
շած իցէ, յայն՝ որ ինչ եկեղեցւոյ եւ երկնաւոր փառաց
դէպ իցէ, խառնեն. այս՝ մի ինչ ի դաղանեաց անտի մար-
դարէութեանց է, եւ նոյն բանայ զմիտս զբոց մարդա-
րէիցն: Այլ Արուսաղէմ՝ որ անարդեցաւն եւ ապախ-
տաւոր առ փրկիչ իւր դատաւ, պատկեր գեհննի լինելոց
էր. երուսաղեմացիքն ուխտագրուէք՝ դատապարտելոցն
նմանելոց էին. եւ դատաստանն ահագին՝ որով զնոսայն
դատելոց էր Վրիստոս, առակ օրինակի էր այնմ՝ զոր ի
վերայ ամենայն աշխարհաց առնելոց է, յորժամ դայցէ ի
վախճան աշխարհի փառօք իւրովք, դատել զկենդանիս
եւ զմեռեալս: Վանզի սոխորութիւն իմն է զբոց, վասն
զխորհուրդս ինչ ծածուկս ի միասն նկարելոյ, զօրինակն ի
ճշմարտութիւն անդր խառնել, առ ի մեր կրթութիւն:
Բառ նմին օրինակի խառնեաց Տէր մեր զպատմութիւն
աւերածին Արուսաղէմի, ընդ աւերն՝ որ ի կատարածի
աշխարհիս լինելոց է. եւ այս է որ կայ ի ճառս՝ զորմէ
մեքն խօսիմք:

Բայց մի այնպէս ինչ կարծեսցուք՝ եթէ վասն խառ-
նակ շփոթութեան չկարիցեմք ի միմեանց ընտրել, թէ
զինչ միումն պատշած իցէ, եւ զինչ միւսումն անկ: Օս-
տոյց զնոսա Վրիստոս ստոյգ նշանակօք՝ զոր կարէի իսկ
զիւրաւ յուցանել, թէ ինդիւր ինչ էր զնոցանէ: Այլ

շատ եւ բաւական է խելամոռեալ տեղեկացուցանել զքեզ, վասն աւերածին Արուսաղէմի եւ կոտորելոյ Հրէիցն:

Առաքեալք, մօտ ի չարչարանաց ժամանակսն, ժողովեալք առ վարդապետին իւրեանց, ցուցանէին նմա զսաճարն եւ զշնուածսն շուրջանակի. վարմանային ընդ քարինսն, եւ ընդ յօրինուածն, եւ ընդ վեղեցութիւնն, եւ ընդ հաստատութիւն. եւ նա ասէ ցնոսա, Տեսանէք զայդ ամենայն շնուածս. ոչ թողցի այդք քար ի քարի վերայ: Իսկ նոցա զարմացեալ ընդ բանն, հարցին ցնա զժամանակ այնպիսի ահագին իրացն ի զլուխ եւ լանելոյ. եւ նա, քանզի չկամէր՝ թէ յանկարծ ըմբռնեցին ի կործանմանն Արուսաղէմի, զի կամէր յայնմ կործանման քաղաքին նկարել զօրինակ յեօին ընտրութեանն չարացն եւ բարեացն, պատմել սկսաւ նոցա զչարիսն որպէս կարգաւ դիպելոց էին:

Սալա՛ նշանակեաց նոցա սրածութեան ցաւս, սովս եւ սասանութիւնս երկրի. եւ պատմութիւնք ցուցանեն՝ թէ ոչ երբեք այնպէս ստէպ ստէպ սով սուր եւ շարժմունք մեծամեծք եղին, որպէս յայն ժամանակսն: Յաւել նա՛ թէ ընդ ամենայն աշխարհ խռովութիւն եւ պատերազմունք եւ համբաւք պատերազմաց լինելոց են, եւ յարիցէ աղզ յաղզի վերայ, եւ ամենայն երկիր ի խռովութեան կայցէ: Արդ՝ մարթ ինչ էր լաւագոյն մեզ յանդիման կացուցանել զվերջին ամսն Վերոնի, յորժամ ամենայն տէրութիւն՝ որ են համօրէն ամենայն տիեզերք, որ խաղաղացեալ էր յԱւգոստոսայ յաղթութենէ հետէ, եւ առ իշխանութեամբ ինքնակալացն, սկսաւ տապալել. այնու հետեւ զաղատացիք, եւ սպանիացիք, եւ ամենայն թաղաւորութիւնք՝ յորոյ հռոմայեցոց տէրութիւն հաստատեալ կայր, յանկարծակի շարժեցան. չորք թաղաւորք ի նոյն ժամանակի յարեան ընդդէմ Վերոնի, եւ ինքեանք հակառակք միմեանց. վաշտք ոստիկանացն, եւ դունդք Մտրուոց եւ Վերմանից, եւ այլքն ամենեքին՝ որ ի կողմն ուրեք արեւելից կամ արեւմտից էին, ի մարտ պատերազմի ընդ միմեանս բախէին, եւ անցանէին առաջնորդութեամբ թաղաւորացն իւրեանց ի ծաղայ երկրի մինչեւ ի ծաղս նորա, մեծաւ պատերազմաւ զի տիրեցեն: Մեծ իսկ են չարիքն, Այլ չեւ է, ասէ, կատարած: Տան-

ջեացին Հրեայք ընդ այլոցն ամենեցունց ի համաշխարհահան խռովութեանն, այլ եկեացեն ի վերայ նոցա հուս ընդ հուս այլ եւս չարիք ուրոյնք. Այն ամենայն, ասէ, սկիզբն է երկանց:

Յաւել թէ հակառակ եկեղեցւոյ իւրոյ, որ նեղէրն յամենայն ժամանակի անդատին յառաջնմէ, հաստատութենէ իւրմէ, բորբոքելոց է ի ժամանական յայնոսիկ հալածումն սաստիկ, որպիսի չիցէ երբեք լեալ: Օ՛ր եւ Ներոն ի վերջին ամսն իւր, ձեռն արկ կորուսանել ըզքրիստոնեայն, եւ զՊետրոս եւ զՊաւղոս սպան: Հալածումնս այս՝ որ ի նախանձուէ եւ ի բռնութենէ, Հրէիցն յուզէր, ճեպէր զկորուստն նոցա, այլ զժամանական դեռ եւս ստոյգ ոչ յուշանէր:

Պալուստ սուտ քրիստոսիցն եւ սուտ մարգարէից, մօտ առ կուրծս հասեալ զյեթին աւերն պատմէր. քանզի որոց ստունդանենն ունկնդրութեան ճշմարտութեան, հատուցումն այն է՝ զի ի մարգարէից անտի մոլորեցուցչաց յիւրեանց կորուստն ընդ քարշ անկեալ ձգիցին: Չթաքոյց Վրիստոս յառաքելոց իւրոց՝ թէ այս անցք անցցեն ընդ Հրեայսն. Յարիցեն, ասէ, սուտ մարգարէք, եւ զբազումն մոլորեցուցանիցեն: Աւ դարձեալ թէ Չգոյշ լուրք, զի յարիցեն սուտ քրիստոսք եւ սուտ մարգարէք:

Մի ոք ասիցէ, թէ զայս գիւրին ինչ է այնմ՝ որ զբարս ազգին գիտիցէ, գուշակել. քանզի յուցի խիկ, թէ ձանձրացեալ Հրէից ի մոլորեցուցչաց անտի՝ որ բազում անգամ կործանմանն նոցա պատճառք լեալ էին, եւ մանաւանդ ի ժամանակի Սեղեկիայ, իմացան զպատրանսն եւ դադարեցին այնու հետեւ լսել նոցա: Աւելի քան զճիւղ հարեւր ամ ի վերայ անց, եւ ոչ երեւեցաւ սուտ մարգարէ յարայէզի: Այլ սաստանայ՝ որ դրդիչ է սուտ մարգարէիցն, զարթեալ ի գալստեանն Վրիստոսի. եւ Աստուած՝ որ կարճէն եւ արգելու ըստ իւրոց կամացն զողիսն մոլորեցուցիչս, թոյլ ետ նոցա՝ զի առաքեացէ Հրէիցն տանջանս, միանգամայն եւ հաւատացելոցն իւրոց փորձանս ընտրութեան: Այ այնչափ սուտ մարգարէք երբեք երեւեցան, որպէս յետ մահուան Տեառն մերոյ: Աւ առաւել մօտ ի ժամանակս հրէական պատերազմին, եւ առ թագաւորութեամբն Վերոնի՝ որ սկիզբն ա-

բար կռուին. ցուցանէ Յովսէպոս բաղում յաճախութիւն խարերայից՝ որ հանէին զժողովուրդն յանապատ, անտախ խարէութեամբ եւ մողութեան հնարիւք, արաղ արաղ վաղվաղակի սքանչելի վրկութիւն խոտտանալով²: Ասան այսորիկ եւ Տէր մեր ի կանխասացութիւնսն³, զանապատն ցուցանէ իբրեւ տեղե ինչ թաքստի ստոց զերծուցչացն՝ որ ձգեցին զժողովուրդն ի յետին կործանումնն: Աւ քանզի առանց անուանն Վրիստոսի չգոյր կատարեալ վրկութիւն Հրէիցն, հաւանեաց դու այսպէս՝ թէ անձանց Վրիստոս անուն եղեալ, պատրանօք զաւետան խոտտանային. եւ յորժամ զայն՝ որ յետ այսորիկ զալոցն է, տեսցես, առնուցուս զայդ յանձն:

Աւ ոչ միայն հրէաստան այնպիսի պատրանօք ըմբռնեցաւ, այլ առ հասարակ յամենայն տէրութեանն Հռոմոց զեղոյր մողորութիւնն: Չիք այլ ինչ ժամանակ ի պատմութեան, ուր առաւել յաճախութիւն երեւիցի խարերայիցն՝ որ պարծիցին զլինելոց իրաց յառաջագոյն բարբառել, եւ մողորեցուցեն զժողովուրդսն կախարչութեամբ իւրեանց: Ի նմին ժամանակի Ամոն մող, եւ Ազիմաս, եւ Ապոլոնիոս Տիւանէս, եւ այլ եւս բաղում կախարչք՝ որ ի նուիրական եւ յարաքնոցն պատմութիւնս կան, յարեան. թուէր իմն այնպէս՝ թէ սաստիկ ջանայցէ յայնժամ ստտանայ, զիւր կործանեալ թաղաւորութիւնն կանգնել: Ասան այնորիկ եւ Վրիստոս յայսմ ժամանակի ցուցանէ զբազմութիւն մարգարէիցն ստոց, եւ առաւել ի մեջ Հրէիցն: Աւ եթէ մանր ոք միտ դնիցէ բանից նորա, տեսանէ՝ զի յառաջ եւ յետոյ քան զաւերն Արուսաղէմի բազմանալոց էին նոքա, բայց մօտ ի նոյն ժամանակն. եւ թէ յաճախեալ յայնժամ պատրանացն, ի սուտ նշանաց անտախ եւ ի խոտոր վարդապետութեանց, այնպէս զօրանալոց էր խարէութիւնն, Մինչեւ մողորեցուցանել, եթէ հնար ինչ իցէ, եւ զընտրեալսն⁴:

Չասեմ՝ թէ ի կատարածի աշխարհիս նմին հանդոյն կամ եւս անհնարին վիշաք չեցեն հասանելոց. քանզի տեսաք՝ զի որ ինչ անցք ընդ Արուսաղէմ անցին, առակ օրինակի յետին ժամանակացն էին. այլ այս իսկ ճշմարիտ է՝ թէ ետ մեզ Վրիստոս զպատրանսն նշանակ յասմանն Աստուծոյ ի վերայ Հրէիցն, եւ կորստեան նո-

ցա: Արդիւնք իրայն հաւատարիմ արարին զմարգարէութիւն նորա. ամենայն ինչ հաստատեալ է վկայութեամբք առանց հակառակութեան: Քանզի զկանխախօսութիւն մոլորութեանց նոցա յաւետարանի ընթեռնումք, եւ ի պատմութիւնս նոցա ի գլուխ ելեալ տեսանեմք, եւ մանաւանդ ի Յովսեպայն:

Յետ պատմելոյ Վրիստոսի յառաջագոյն զիրան, քանզի ի մտի ունէր ապրեցուցանել զիւրսն ի շարեաց անտի՝ որ հուպ ընդ հուպ հասանելոյ էին ի վերայ Արուսաղէմի, եկն այնու հետեւ ի մերձաւոր նշանս յետին ապահանութեան քաղաքին:

Չոայ միշտ Աստուած այնպիսի նշանս իւրոց ընտրելոցն: Օ՛ր յորժամ ահաղին ասանջանօք կամիցի Աստուած զիւր մեծագօր զօրութիւն ողջոյն իսկ ազգաց ցուցանել, հարկանէ բազում անգամ զարգարն ընդ ամուգարշափն. քանզի նա լաւագոյն իմն հնարս զիտէ զատանելոյ զնոսա ի միմեանց, քան զոր մեր միտք իմանայցեն: Վոյն անխք սղոցաձեւք են կամնասպլից, որ զյարդն խորտակեն եւ զցորեանն ընտրեն. ի նմին կրակի՝ ուր յարդն ծախիցի, զտի եւ սրբի ոսկի. եւ նովին պատժովք՝ որովք անօրէնքն տանջիցին, սրբին հաւատացեալք: Այլ յաւերածին Արուսաղէմի, զի պատկեր յետին դասաստանին յայտնագոյն նկարիցի, եւ վրէժխնդրութիւնն Աստուծոյ ի վերայ թերահաւատիցն յայտնեցի, ոչ կամեցաւ զի շրեայքն՝ որ ընկարան զաւետարանն, ընդ այլոցն խառնակեացին. եւ իւրոց աշակերտելոցն ետ Վրիստոս նշանս ճշմարիտս՝ որովք մարթիցեն զխակ, թէ երբ ժամանակ իցէ ի քաղաքէն ելանելոյ: Աւ ըստ իւրում սովորութեանն, հաստատեաց զբանն ի վերայ հնոց մարգարէութեանց՝ զորս թարգմանէրն եւ լնոյր. եւ իրրեւ անցանէր ընդ այն տեղի՝ ուր յետին աւերն Արուսաղէմի յայտնապէս ցուցաւ Վանիէզի, ասէ այսպէս⁶. Յորժամ տեսանիցէք զպղծութիւն աւերածոյն, որ ասացեալն է ի ձեռն Վանիէզի մարգարէի, զի կայցէ ի տեղւոջն սրբութեան, որ ընթեռնուն ի միտ առցի. կամ որպէս Մարկոս ասէ⁷, Ի տեղւոջ՝ ուր շեցէ արժան: Յայնժամ որ ի հրէաստանի իցեն, փախիցին ի լերինս: Օ՛րոյն եւ Վուկաս պատմէ այլովք բանխք⁸. Յորժամ տեսանիցէք շուրջ պատեալ զօրօք

ՂԱՐՈՒՍԱՊԷՄ՝ յայնժամ գիտաճեք՝ թէ մերձ է օր նորա :
Յայնժամ որ ի հրէաստանի իցեն փախիցեն ի լեւրինս :

Միմեանց մեկնիչք լինին աւետարանիչք . եւ անդրատին ի բանիցն համեմատութենէ : Ղիւրին է առնուլ ի միտ, թէ պղծութիւնն՝ որ ի Վանիէղէ յառաջադոյն ասացաւ, զգօրացն յայտ առնէ, որ պատեցան ՂԱՐՈՒՍԱՊԷՄ : Եւ յայպէս իմացան հարքն սուրբք՝ եւ հասարակաց միտք նոյնպէս խմանան :

Պղծութիւնն՝ գարշութիւն է, եւ ըստ գրոց սովորութեան կուռս նշանակէ . եւ ո՞րք ոչ գիտիցէ՝ եթէ զօրքն Հոռոմոց ի դրօշն իւրեանց տանէին զպատկերս զիցն իւրեանց, եւ կայսերացն՝ որ առաւել քան զամենայն դիւն իւրեանց մեծարեալ էին : Օգրօշն զայնոսիկ պաշտէին զօրականքն . եւ քանզի ըստ Աստուծոյ հրամանին, չէր պարտ երբեք կոոց ի սուրբ երկրի երեւել, մերժեալ էին անտի դրօշն Հոռոմոց : Ասան այնորիկ իսկ եւ տեսանեմք ի պատմութեան՝ թէ ցորչափ մեծարոյ ինչ զչրեայն համարէին հոռոմացիք, չմուծին երբեք զգրօշսն իւրեանց ի հրէաստան : Մին իրի եւ Վիտեղիոս, ի ժամանակի՛ զի անց ընդ աշխարհն, երթալ ի պատերազմ յերկիրն արաբացւոց, խաղացոց զգօրսն առանց դրօշու¹⁰ . զի դեռ եւս զհրէական պաշտօնն մեծարէին, եւ չկամէին ինչ նեղել զնոսա գործովք՝ որ հակառակ օրինացն իցեն : Եւ ի ժամանակի վերջին հրէական կուռին, մարթի համարել՝ թէ չինայեցին Հոռոմք յազգն ժպիրհ զօրջնջել եւ սատակելն կամէին : Եւրդ՝ յորժամ Արուսապէմ պաշարեցաւ, յայնչափ կոոց շուրջ պատեալ էր, որչափ ինչ դրօշք հոռոմացւոց էին . եւ ոչ պղծութիւն երբեք այնչափ եղեւ, ուր չէր արժան թէ լինիցի, այս ինքն՝ ի սուրբ երկրին եւ շուրջ զտաճարաւն :

Թերեւս ասիցէ որք, այս իցէ նշան մեծ՝ զոր Վրիտտոն տալոց էր . կամ թէ, դոյր ինչ ժամանակ փախըստեան, յորժամ պաշարեաց Տիտոս ՂԱՐՈՒՍԱՊԷՄ եւ զել եւ զմուտ քաղաքին փակեաց, մինչեւ չոյր ուստեք հրնար ապրելոյ : Եւ իսկ է սքանչելի մարգարէութեանն նշանակ : Օի ի ժամանակսն յայնոսիկ երկիցս անգամ պաշարեցաւ Արուսապէմ¹¹ . զառաջինն՝ Աեսաիոս պաշարեաց, ոստիկան կողմանցն Ասորւոց, ի վաթսներորդի ու-

Թերորդի ամի Տեառն մերոյ . եւ երկրորդ անգամ՝ Տիտոս յետ չորից ամաց, յամի եւթանասներորդի երկրորդի: Յերկրորդում պաշարման չդոյր հնար ապրելոյ . քանզի մեծաւ սաստիութեամբ կռուէր Տիտոս, զի յանկարծ ի վերայ հասեալ փակեաց զամենայն ազգան՝ որ Ղարուսաղէմ էին ի զտակի պասեքատօնին, առանց ուրուք մտապուր ուրեք փակելոյ, եւ ահաղին պտանէչ պաշարմանն՝ զոր մատոյց զքաղաքան, զամենայն յոյս բնակացն հատանէր: Եւ ի Աեստիայ պաշարմանն այնպիսի ինչ ոչ դոյր¹². բանակ եհարնա յիսուն վտաւանաւ ի բացեայ Ղարուսաղէմ, այս ինքն՝ վեց միոնաւ: Եւ զօրն տարածանէր սփռէր շուրջանակի, այլ չհատանէր խրամ քաղաքին. եւ այնպէս յուլութեամբ ծուլութեամբ մարտնչէր, զի չուկարաց առնուլ զքաղաքն, ուր եւ ահն իսկ եւ խռովութիւնն՝ որ ի քաղաքին էր, բաւական էր բանալ նմա զզրունսն, մանաւանդ զի եւ գաղտ եւս պատգամագնաց ի ներքս լինէր: Յայնմ ժամանակի, չէր ինչ անհնարին փակելն, զի եւ պատմութիւնն յայննապէս ցուցանէ՝ թէ բազումք ի շրէից անտի մեկնեցան¹³: Եւս ուրեմն յայնժամ պարտ էր ելանել, այս իսկ էր նշանն՝ զոր տայր իւրոցն Արդին Եստուծոյ: Օ՛ի եւ ինքնին իսկ երկուս պաշարմունս զատոյց. մի՛ յորժամ խրամ հատանելոյ էր զքաղաքան եւ պաշարելոյ¹⁴, եւ այնու հետեւ մահ էր ամենեցուն նոցա՝ որ ի ներքս էին. եւ մեւս եւս՝ յորժամ փակելոյ էր միայն զօրօք¹⁵, եւ պատելոյ էր մանաւանդ քան պաշարելոյ, յայնժամ էր ժամանակ ի լերինսն փակելոյ:

Ար քրիստոնեայքն էին, բանից վարդապետին հնազանդեցին: Թէպէտ եւ բեւրք բիւրուց քրիստոնէից էին Ղարուսաղէմ եւ ի հրէաստանի, այլ ոչ ի Յովսեպայ եւ ոչ յայլոց պատմութեան ուրեք գտանել՝ թէ մի ոք ի քաղաքին գտաւ, յորժամ առան: Եւ յեկեղեցական պատմութենէ եւ ի յիշատակաց նախնեաց մերոց յայտ է՝¹⁶ թէ մեկնեցան նոքա ի փոքր քաղաքիկն Պեղղայ, ի լեռնակողմանն մօտ առ անապատն, ի սահմանս հրէաստանի եւ արարացւոց աշխարհին:

Եստատին մարթի առնուլ ի միտ՝ թէ զխարդ յայննապէս աղղ լեալ էր նոցա. եւ չեք իսկ ինչ այնպէս նշանաւոր, որպէս զատանել շրէից անհաւատից՝ ի շրէիցն

դարձելոց ի քրիստոնէութիւն. նոքա կային մնացին յԱրուսաղէմ կրել զպատիժ պատուհասի թերահաւատութեան իւրեանց, եւ սոքա մեկնեալ զնացին ի քաղաք մի փոքրիկ, իրրեւ զՎոլա՝ որ ել յերկրէն սողումացւոց, եւ անտի դէտ ակն ունէին եւ հայէին գողութեամբ ի գործ վրէժինդրութեանն Աստուծոյ, ուստի փրկեացն զնոսա:

Բայ ի կանխախօսութեանցն Վրիստոսի, էին եւ կանխախօսութիւնք բազմաց աշակերտացն իւրոց, յորս եւ Պետրոսին եւ Պաւղոսին: Օ՛ր յորժամ զերկոսին հաւատարիմ վկայս յարութեանն Վրիստոսի, ձգեալ տանէին ի տանջանս, զմօտաւոր կորուստն պատմեցին Հրէիցն՝ որ ի հեթանոսաց ձեռս մատնէին զնոսա: Ասացին ցնոսա¹⁷, թէ ի հիմանց բրեսցի Արուսաղէմ, եւ կորիցեն նոքա ի սոլոյ եւ ի վհատութենէ. եւ մերժեսցին յերկրէ հարցն իւրեանց, եւ գերի վարեսցին ընդ ամենայն երկիր, եւ թէ չէ ինչ հեռի ժամանակն. եւ այս ամենայն չարիք հասցեն ի վերայ նոցա վասն արհամարհելոյ նոցա եւ անարգելոյ զԱրդին Աստուծոյ զսիրելին, որ երեւեցաւն նոցա նշանօք եւ արուեստիւք: Ի հնոց ժամանակաց անտի եհաս առ մեզ այս կանխախօսութիւն առաքելոցն, որ ի մօտոյ ի գլուխ ելանելոց էր: Իսկ Պետրոս եւ այլ ինչ բազում մարդարեացաւ, կամ յԱստուծոյ ազդեցութենէ, կամ զբանս իւրոյ վարդապետին մեկնելով: Եւ Փղէգէոն այր հեթանոս, զորոյ զվկայութիւն ի մէջ բերէ Արողինէս, գրեաց՝¹⁸ թէ զոր ինչ այսր առաքելոյ յառաջադոյն ասացեալ էր, հաստատութեամբ ել ի գլուխ:

Արդ ամենայն անցք՝ որ ընդ Հրէայս անցին, յառաջադոյն մարդարէութեամբ պատմեալ էին նոցա: Եւ յայտ իսկ են մեզ պատճառք նեղութեանն նոցա, այս իսկ՝ զի զՅիսուս եւ զաշակերտան նորա թշնամանեցին: Ժամանակ շնորհացն անցեալ էր, եւ անհրաժեշտ կորուստ եկեալ հասեալ: Ապա ուրեմն զուր կամէր Տիտոս փրկել զԱրուսաղէմ եւ զտաճարն. քանզի վճիռ դատաստանին ի բարձանց անտի տուեալ էր, եւ չէր մնալոց անդէն քար ի քարի վերայ:

Արդ եթէ մի թաղաւոր Հոռոմոց զուր ջանացաւ արգելուլ զաւեր տաճարին, մեւս եւս դարձեալ թաղա-

ւոր Հոռոմնոց զուր ընդ վայր տարապարտուց ձեռն արկեալ կանգնել կամէր: Աւրացեալն Յուդիանոս, յորժամ ընդ Վրիստոսի ճակատ տուեալ կռուէր, կարծեաց զանձնէ՝ թէ բաւական իցէ զկանխախօսութիւնսն Վրիստոսի ընդունայն առնել: Ի մտի եղեալ ամենայն ուստեք թշնամիս եւ հակառակորդս քրիստոնէից յարուցանել, յայն եկն՝ զի զՀրեայնսն անգամ զխոտեալսն եւ զարհամարհս աշխարհի, յանձն առ փառաւորել: Ղեպեաց զնոսա շինել զտաճարն, եւ ետ նոցա գանձս բազումսն, ձեռնկալու եւ օգնական եղեւ նոցա տէրութեանն զօրութեամբ: Ընդ զու եւ զելս իրացն, եւ տես զիարդ յամօթ առնէ Աստուած զիշխանսն հպարտացեալս: Հարբ սուրբք եւ եկեղեցւոց պատմագիրք զնոյն միարան ի մէջ բերեն, եւ յիշատակարանօքն՝ որ ի ժամանական նոցա կային, հաւատարիմ առնեն: Այլ պարտ էր եւ ի նոցունց իսկ ի հեթանոսաց անտի հաւատարիմ լինել իրացն: Ամիսնոս Սարկեղինոս հեթանոս կրօնիւք եւ աստիկ ջատագով Յուդիանոսի պատմէ զայս ձեւ օրինակի բանից. Մինչ զեռ, ասէ, Աղեպիոսն, օգնականութեամբ ոստիկանի աշխարհին, ձեպէր զգործն րատ իւրում կարի, հուր ահագին բորբոքեալ գունդագունդ եղանէր ի հիմանց անտի՝ որ եւ յառաջագոյն իսկ մեծաւ բռնութեամբ զզրդեալ էին. իսկ գործաւորքն՝ որ բազում անգամ անդրէն սկիզբն արարին գործոյն, բազում անգամ այրեցան. եւ էր տեղին անմատոյց եւ դադարեաց գործն¹⁹:

Իսկ եկեղեցւոց պատմագիրք փոյթ յանձին կալեալ հաստատագոյն պատմել զանցս իրացն, եւ հուր եւս, ասեն, տեղաց յերկնից: Այլ եւ յես այսր ամենայնի հաստատուն եկաց բանն Վրիստոսի: Սուրբն Յովհանն Ասկերերան²⁰ բողոքէ. Շինեաց զեկեղեցի իւր ի վերայ վիմի, եւ ոչ մի ինչ կարաց կործանել զնա. կործանեաց զտաճարն, եւ ոչ մի ինչ մարթաց կանգնել զնա. չկարէ որ կործանել, զոր Աստուածն կանգնէ, եւ ոչ կանգնել՝ զոր Աստուածն կործանէ:

Գաղարեսցուք այսու հետեւ վասն Արուսաղէմի եւ տաճարին ճառել. հայեսցուք ի ժողովուրդ անդր՝ որ երբեմն տաճար կենդանի էր զօրութեանցն աստուածութեան, եւ արդ ասելի եւ դարչելի: Մանաւանդ Հրեայք

կործանեցան քան տաճարն նոցա եւ քաղաքն: Այսու հետեւ չեք ողի ճշմարտութեան ի միջի նոցա. շիջաւ մարգարէութիւն, եւ աւետիքն՝ յոր յուսացեալ էին, ընդունայնացան. ամենայն ինչ՝ որ ի ժողովրդեան անդ էր, վեր ի վայր կործանեցաւ, եւ ոչ մնաց անդէն քար ի քարի վերայ:

Աւ տես զհարդ յատակս իսկ մնորութեանն հասեալ անկան: Ասաց Վրիստոս ցնոսա²¹. Աս եկի յանուն Հօր խմոյ, եւ ոչ ընդունիք զիս. եթէ այլ որ եկեսցէ յիւր անուն, զնա ընդունիցիք: Աւ յայնմ ժամանակէ հետէ ողի մնորութեան շահեալ արիւ ի նոսա, եւ յամենայն ժամանակի երազունք են ի պատրել: Աւ այն իսկ չեղեւ բաւական՝ զե սուտ մարգարէքն մասնեցին զԱրուսաղէմ ի ձեռս Տիտոսի. քանզի չեւ եւս մերժեալ էին Հրեայքն ի հրէաստանէ, եւ բազումք իսկ ի նոցանէ առ դուրժ հայրենի դաւառին ի մէջ աւերակայն բնակէին. այլ եկն եկաց այլ ոմն սուտ քրիստոս եւ ամենեւին իսկ կորոյս զնոսա:

Յիսուն ամօք յետոյ քան զան Արուսաղէմի, ի դարու անդ մահուան Տեառն մերոյ, այր մի վատանուն վատանշան Բարկոքերաս անուն, աւազակ անօրէն չարագործ, քանզի անունն իսկ աստեղ որդի նշանակէր, ասէր զանձնէ՝ թէ աստղ իցէ Յակովբայ, որպէս յառաջագոյն ասացեալ է ի թուոց զիրան²², եւ կարծեցուցանէր զանձնէ՝ թէ Վրիստոսն իցէ: Ակիրաս գլուխ ամենեցուն վարդապետացն, եւ ամենեքին՝ զորս իւրեանց իմաստունս կոչէին Հրեայք, զհետ նորա գնացեալ, ի նորա կողմն անկան. նշան ինչ իւրոյ առաքելութեանն չեա մնորեցուցիչն, բայց միայն զի Ակիրաս ասէր՝ թէ չէ պարտ կարի Վրիստոսի յամել: Ապտամբեցին Հրեայքն յամենայն տէրութեան Հոռոմոց, եւ Բարկոքերաս առաջնորդ էր նոցա, եւ խոստանայր զտէրութիւն աշխարհի: Հարստակեաց ի նոցանէ Ագրիանոս վաթսուն բեւր. եւ ծանրացաւ լուծ ի վերայ պարանոցոց նոցա, եւ մերժեցան ի հրէաստանէ յաւիտեանս ժամանակաց²³:

Ա՞ որ շտեասնիցէ՝ եթէ ոգւով մնորութեան ըմբռնեցան սիրաք նոցա: Վրիստոսի զի զսէրն ճշմարտութեան ոչ ընկալան զի ասրեցին, եւ վասն այնորիկ առա-

Գ Լ Ո Ի Խ Ժ

ԱՅՈՒՆԻՍ ԿՈՆՎԵՆՏԻՆԻՆԻՆԻ ԸՐԻՑՆԵ ՆԻ ԹԷ ԶԻՆԸՄ ՄԵՆԿԵՑՆԵ ՆՈՐԸ
ԶԻՆԸՄ ԸՐԻՑԻՆԻՆԻՆԻՆԻ

Երկու մարդարեւութիւնք զժամանակն Վրիստոսի ցուցանելին Հրէիցն, որպէս յառաջագոյնն ասացաք. մին՝ Հակովբայ, եւ մեւն՝ Գանիէղի: Արկորքին մարդարեւութիւնքն զանկանել թագաւորութեանն Հուդայ ի ժամանակի դաւաժանն Վրիստոսի ցուցանելին. այլ Գանիէղ յայտ առնէ՝ թէ պատճառք ամենեւին քակելոյ թագաւորութեանն, մահն Վրիստոսի լինելոյ է. եւ Հակովբ լուսաւորագոյնս բարբառի՝ թէ յանկանել թագաւորութեանն Հուդայ, Վրիստոս՝ որ յայնժամն դայցէ, իցէ ակնկալութիւն ազգաց, այս ինքն՝ զերծուցիչ լինիցի նոցա, եւ կազմիցէ իւր թագաւորութիւն նոր, ոչ ի միոջէ ազգէ միայն, այլ եւ յամենայն ազգաց աշխարհիս: Օրոնս մարդարեւութեանն չմարթի այլազգ ինչ խմանալ. եւ հաստատուն իմն արւչութիւն է Հրէիցն՝ թէ այսպէս իսկ պարտ է խմանալ զնոսա:

Անտի իսկ սկիզբն եղև կարծելոյ հնոց վարդապետացն նոցա՝, որպէս եւ ի Տաղմուզն նոցա կայ, թէ ի ժամանակի՝ զի դայցէ Վրիստոսն, չունիցին իշխանութիւն դատելոյ. մինչ զի չոյր ինչ աւելի կարեւոր առ զիստելոյ զժամանակ Օծելոյ իւրեանց, բայց միտ դնել՝ թէ երբ յայնպիսի տկարութիւն անկանիցին:

Արդարեւ բարւոք սկսեալ իսկ էին. եւ եթէ միտք նոցա աշխարհական մեծութեամբք չբռննէին, չէր մարթնոցա անձանօթ լինել ի Վրիստոսէ. քանզի կամէին իմն՝ թէ այնպիսի մեծութեամբ դայցէ Օծեայն, զի եւ ինքեանք ընդ նորա տէրութեամբն հաղորդ եւ բաժանակից մեծութեանն լինիցին: Հիմն՝ զոր արկեալ էին, ճշմարիտ էր. քանզի վազվազակի իրբեւ ի բռնանալ առաջնոց Հերովդի եւ ի փոփոխել հրէական ընկերհաշտութեանն, որ ի ժամանակսն Հերովդի զիպոցաւ, զիտացին զժամանակ անկանելոյ թագաւորութեան, որ ցուցեալն էր ի մարդարեւութենէ, չերկմտեցին՝ թէ դալոց է Վրիստոսն, եւ յայանելոց է առ ժամայն նորոգ թագաւորութիւնն՝ յոր ամենայն ազգք ժողովելոց էին:

Մի ինչ՝ զոր նորա նկատեցին², այն է՝ զի իշխանութիւն կենաց եւ մահու բարձաւ ի նոցանէ: ՍԵՃ իմն փոփոխումն էր այն, քանզի զնոյն իշխանութիւն հանապազ, ընդ որով եւ աերութեամբ էին, ունէին, եւ ի Բարեզոնեւս ի ժամանակի դերութեանն. եւ յայտ Շ ուշանայ պատմութիւնն առնէ³, եւ նոյն հաստատուն աւանդութիւն է ի նոսա: Աւ թագաւորքն Պարսկց՝ որ գերեզարձ արարին նոցա, զսոյն իշխանութիւն թողին հրովարտակաւ արքունի՝ զոր յիւրում աեղոջն նշանակեցաք: Աւ առաջին Աեղեւկիկեանքն, որպէս կանխագոյն պատմեցաք, առաւել իշխանութիւն եւ համարձակութիւն տային նոցա քան կարճէին⁴: Իսկ զթագաւորութենէ մակարայեցւոցն բնաւ չէ իսկ պիտոյ միւսանգամ ձառել. զի ոչ միայն ազատք էին յայնժամ, այլ եւ հզօրք եւ ահագինք թշնամեայն: Պոմպէոս՝ որ տկարացոյցն զնոսա, որպէս յառաջագոյն ասացաք, բաւական համարեցաւ զնոսա ի հարկի կացուցանել, եւ առնել զնոսա այնպիսիս՝ զի յորժամ պէտք լինիցին Հռոմոց ազգին, հրաման տայցէ նոցա ազգն որպէս ինչ կամիցի, եւ եթող զիշխանն նոցա ամենայն օրինօքն իւրովք հանդերձ: Օ ի յայտ իսկ է՝ թէ հռոմայեցիք նոյնպէս վարէին, եւ յառաջնորդութիւն աեղեացն՝ ուր զըուն թագաւորան նոցա թողուին, չմխէին:

Արդ Հրեայք միարանութեամբ խոստովան լինին՝ թէ զիշխանութիւն կենաց եւ մահու կորուսին, միայն քառասուն ամօք կանխագոյն քան զաւերն երկրորդի տաճարին, եւ չէ իսկ մարթ երկմիա լինել թէ նախ առաջին Հերովդէս սկիզբն արար գնել այնպիսի վէրս ազատութեան նոցա: Քանզի յորմէ հետէ՝ վասն վրէժս յատենէ Հրէիցն խնդրելոյ⁵, ուր հարկեցաւն երեւել յառաջ քան զթագաւորն լինել, եւ յետ այնորիկ վասն զամենայն իշխանութիւն յինքն կորզելոյ, հակառակեալ ընդդէմ կայր ժողովոյն՝ որ էր իբրեւ գծերակոյտն զոր կացոյց Մովսէս, եւ զհանապազորդ խորհրդականութիւն ազգին՝ ուր վճիռ դատաստանի եւ իրաւունք լինէին, առ սակաւ սակաւ կորոյս ժողովն նոցա զիշխանութիւնն իւր, եւ սակաւ ինչ իշխանութիւն ունէր յորժամ եկն Քրիստոս յաշխարհ:

Աւ առ որդւովքն Հերովդի եւս առաւել վտտթա-
րացան իբք Հրէիցն, յորժամ բաժին արքայութեանն
Արքեղայ, որոյ գլխաւոր քաղաք էր Աբուսաղէմ, յա-
ւելաւ ի նահանգսն Հոռոմոց, եւ առաքեցին թագաւորք
Հոռոմոց թիւակալ պահապանս առաջնորդել տեղեացն :
Հրեայք յայնպիսում ժամանակի չունէին բնաւ ամենե-
ւին իշխանութիւն կենաց եւ մահու, մինչեւ վասն ըզ-
Յիսուս սպանանելոյ, թէպէտ եւ զամենայն ինչ առ-
նուին յանձն թէ զնա միայն կորուսանիցեն, հարկ ե-
ղեւ նոցա ընթանալ առ Պիղատոս. եւ իբրեւ ասաց ոս-
տիկանն ցնոսա՝ թէ դուք ինքնին սպանէք, ետուն պա-
տասխանի միարան՝ թէ Սեղ չէ արժան սպանանել զք⁶ :
Սասն այնորիկ իսկ եւ զՅակովբոս զեղբայր Յովհաննու-
ի ձեռն Հերովդի սպանին, եւ զՊետրոս նորին հրամա-
նաւ ի բանտ արկին : Աւ իբրեւ զՊաւղոս սպանանելն
խորհէին⁷, մատնեցին ի ձեռս հռոմայեցւոց որպէս եւ ըզ-
Յիսուսն. եւ այնու՝ զի ուխտ եղին եւ նզովեցին զան-
ձինս նախանձ իմն առեալ վասն օրինացն, ոչ ուտել եւ
ոչ բմպել մինչեւ սպանցեն զառաքեալն, յայտ առնի՝ թէ
եւ նոքին գիտէին, եթէ չունին իշխանութիւն սպանա-
նելոյ օրինօք : Թէպէտ եւ քարկոծ արարին զՍտեփա-
նոս⁸, այլ այն աղմկաւ իմն եղեւ եւ խռովութեամբ
յայնցանէ՝ որք նախանձախնդիրս զանձինս կոչէին, զորս
միշտ չկարէին նուաճել հռոմայեցիքն :

Ապա ուրեմն պարտ եւ պատշաճ է ի պատմութե-
նէ անտի, եւ ի Հրէիցն հաւանելոյ, եւ ի կարգէ իրացն
ճշմարիտ համարել՝ թէ ի ժամանակի իբրեւ եկն Տէրն
մեր, եւ մանաւանդ յորժամ զիւր պաշտօնն սկսաւ, ան-
կան բովանդակ ի ժամանակեան իշխանութենէ : Աւ ի-
բրեւ տեսին՝ թէ կորուսին, յիշեցին նոքա զհին մարգա-
րէութիւնն Յակովբայ, որ յառաջագոյն պատմեաց նու-
ցա՝ թէ ի ժամանակի Օծելոյն չգուցէ իշխանութիւն ի
միջի նոցա, եւ ոչ դատաստան : Մի ոմն ի հնոց մատենա-
գրաց անտի նոցա զնոյն նշանակէ⁹, եւ յերաւի խոստո-
վան լինի՝ թէ գաւաղան արքայութեան չգոյր յայնժամ
ի Յուդա, եւ ոչ իշխանութիւն ի գլխաւորս ժողովբո-
ղեանն, քանզի հասարակաց իշխանութիւն բարձեալ էր
ի նոցանէ : եւ զի ստեան գատաստանի նոցա անարգեցաւ,

այնու հետեւ ոչ եթէ դատաւորք էին ատենակալքն, այլ լոկ ուսուցիչք: Այս ուրեմն եւ ըստ նոցա մտայն իսկ, ժամանակ էր Վրիստոսի երեւելոյ: Աւ քանզի զտոյն ստոյգ նշանակ հասանելոյ նորոյ թագաւորին տեսանէին, որ ամենայն ազգաց տիրելոց էր, գիտացին՝ թէ արդարեւ ի մտոյ յայանելոց է: Աւ համբաւն շուրջանակի տարածանէր. եւ հաւանեցան իսկ որ յարեւելս էին՝ թէ ոչ յետ բազում ինչ ժամանակի, արք հրէաստանեայք թագաւորելոց են ի վերայ ամենայն երկրի:

Տակիտոս եւ Սուետոնիոս¹⁰ պատմեն՝ թէ համբաւս այս ի հաստատուն կարծեաց, եւ ի հրամանէ իմեքէ՝ որ ի նուիրական մատանս հրէական ժողովրդեանն կայր, հաստատեալ էր: Յովսեպոս զտոյն մարգարեութիւն ի մէջ բերէ նովին բանիւք, եւ ասէ որպէս եւ նոքայն՝ թէ դտանէր նոյն եւ ի վիրս սուրբս: Մեծ իմն պատիւ էր առ արեւելեայսն գրոցն այնոցիկ՝ զորոյ զկանխախօսութիւնն բազում անգամ յայտնապէս ի գլուխ ելեալ տեսանէին. իսկ Հրեայքն՝ որ քան զայլն առաւել միտ դնէին տեսանել զիրացն հանդամանս, որ մանաւանդ առ ի նոցա կրթութիւն գրեալ էին, ծանեան զժամանակ Օծելոյն, զոր նշանակեալ էր Յակովբայ, կործանմամբն նոցա: Ասան որոյ խորհուրդքն՝ զոր ի վերայ անձանց խորհեցան, իրաւացիք էին. եւ առանց վրիպելոյ կացին ի վերայ ժամանակին, եւ գիտացին թէ զալոց է ի ժամանակին՝ յորում եւ եկն իսկ:

Այլ ո՛հ նկնութիւն մարդկեղէն մտաց, եւ տարապարտ հպարտութիւն, անհնարին պատճառք կուրութեան. կենարարին խոնարհութիւն ծածկեաց ի հպարտացելոցն զճմարիտ մեծութիւնն՝ զոր պարտ էր նոցա յՕծելոյ անտի իւրեանց խնդրել: Աամէին թէ թագաւոր ոմն լեալ էր, հանգոյն թագաւորաց երկրի: Ասան այնորիկ եւ որ սուտակասպաքն էին առաջնոյն Հերովդի՛ ասացին, թէ նա իսկ իցէ թագաւորն՝ որ խոստացեալն էր, զարմացեալք ընդ շքեղ մեծութիւն նորա, որ թէպէտ եւ բռնակալ եւս էր, այլ զհրէաստան մեծացուցանէր¹¹: Անտի իսկ Հերովդիանոսաց ազանդն եղեւ, զորմէ բազում բանք յաւետարանին ճառին¹², զոր եւ հեթանոսք գիտացին. քանզի Պերսոս¹³ եւ նորին մեկնիչն պատմէ

Թէ եւ ի՛նչերոնի ժամանակն, զոր ծննդեան շերտվզի արքայի տօն խմբէին ազանդաւորք նորա որպէս զաւուրս շարաթուցն :

Եւ Յովսէպոս յայնպիսի իմն մոլորութիւն կործանեցաւ : Եւ յոս այս, որպէս ինքն պատմէ¹⁴, վարժեալ ի հրէական մարդարեութիւնն, քանզի քահանայ էր եւ ի քահանայութեան ցեղէ, ծանեալ թէ զպուստ թագաւորին՝ որ խոստացեալն էր ի Յակովբայ, ի շերտվզի ժամանակն կռէր, յորում ժամանակի ինքն իսկ ցուցանէ մեծաւ փութով թէ սկիզբն կործանման շրէիցն լինէրպէս իբրեւ յիւրում ազգին փառաւորութիւն ինչ այնպէս շեանս, որպէս ինչ ազգն զՔրիստոսէ կարծէր, այսուրեմն խոնարհագոյն տարաւ իջոյց զժամանակ մարդարեութեանն, եւ ի Վեսպիանոս պատշաճեաց, եւ ասաց թէ հրամանս այս գրոյ զմանէ յայտ առնէ, որ թագաւորն անուանեցաւ ի հրէաստանի¹⁵ :

Եւ այնպէս զգիրան կամակորէր առ ճշմարիտ զսուտակասպասութիւնն կարճեցուցանելոյ, կուրացեալ յօտարտօխն փոխէր զլոյսն Յակովբու եւ զՅուդայ, որ որդի Երրահամու եւ Պաւթայ զՎեսպիանոս համարէր, եւ կռապաշտ թագաւորին կոչէր զանուն այնորիկ՝ որոյ լոյսն զհեթանոսս ի կռապաշտութենէ յաստուածաճանօթ զխտութիւն ածելոյ էր :

Եւ ժամանակն իսկ նմա ի դէպ պատահէր : Եւ յմինչ դեռ նա ի Վեսպիանոս պատշաճէր զայն՝ զոր ըզՔրիստոսէ ասացեալ էր Յակովբայ, նախանձաւորքն՝ որ պաշտպանէին Նրոսաղէմի, ի վերայ անձանց առնուին զմարդարեութիւնն : Եւ յայն իմն միայն հաստատեալ զտէրութիւն աշխարհիս անձանց խոստանային, որպէս Յովսէպոս պատմէ¹⁶. այլ առաւել իմաստութեամբ քան զնա, այնու՝ զի նոքա գոնեայ ոչ արտաքոյ քան զիւրեանց ազգն ինդրէին զկատարումն աւետեացն եղելոյ առ հարս նոցա :

Եւ արդ՝ զհարգ շրացին զաչս, տեսանել զմեծամեծ արդիւնն՝ զոր քարոզութիւն աւետարանին անդրատին յայնմ ժամանակէ ի մէջ հեթանոսացն ծնուցանէր, եւ հայել ի նոր պետութիւնն՝ զոր հաստատէր Քրիստոս ընդ ամենայն աշխարհ : Օ՞րնչ ինչ քան զայն թա-

գաւորութիւնն դեղեցիկ կայր, ուր աստուածպաշտութիւն թաղաւորէր, ուր ճշմարիտն Աստուած պատուեալ եւ կռապաշտութիւն խոտեալ, ուր կեանք յաւիտենականք պատմէին ազգացն անհաւատից. ոչ ապաքէն եւ տէրութիւն կայսերաց սնտախի իմն էր եւ ընդունայնութիւն առ նորա համեմատութեամբն: Այլ այս թաղաւորութիւն չէր ինչ կարի փառաւորեալ յաս մարդկան:

Պարտ եւ պատշաճ է զփառս մարդկեղէնս խոտել, զի զՔրիստոս ծանխցուք: Պիտացին Հրեայք զժամանակն, տեսանէին զազգս՝ զի կոչէին առ Աստուածն Երրահամու, ըստ մարդարէութեանն Յակովբայ, ի ձեռն Յիսուսի Վրիստոսի եւ աշակերտաց նորա. այլ ոչ ծանեան նորա զՅիսուս՝ որ յայանեցաւն նոցա այնչափ նշանօքն: «Աս, թէպէտ եւ ի կեանսն իւրում եւ յետ մահուն բազմապատիկ նշանօք եւ արուեստիւք հաւատարիմ զիւր առարումն արար, նոքա կուրացեալք մերժեցին զնա. քանզի հաստատուն մեծութիւն միայն ունէր նա յանձին իւրում, զատեալ եւ մեկնեալ յամենայն երեւելի պաճուճանաց, եւ զի պատուհասել զայր զհպարտութիւն ամբարտաւանութեանն նոցա, եւ ոչ յարգել եւ պակել:

Բայց սակայն ստիպեալ ի զիպաց եւ յանցից ժամանակին, թուէր՝ թէ երբեք երբեք ի կանխակալ կարծեաց անտի իւրեանց արտաքոյ ելանէին, թէպէտ եւ շացեալք եւս էին մտօք իւրեանց: Ամենայն ինչ ի ժամանակի Տեառքն մերոյ այնպէս յարգարէին առ ի յայանութիւն Օծելոյն, զի կարծեցին՝ թէ զուցէ Յովհաննէս մկրտիչ իցէ Վրիստոսն¹⁷: Օրինակ խստութեան վարուց նորա, արտաքոյ քան զհասարակաց կարգս եւ սքանչելի, զարմացոյց զնոսս. եւ զի չգոյր ի նմա աշխարհական մեծութիւն, զառաջինն շատանալ իմն թուէին նորացոյց կենացըն պայծառութեամբ: Իսկ զոյցն եւ հասարակաց վարքն Վրիստոսի հակառակէր իմն զժնդակ եւ ամբարտաւան մտաց նոցա՝ որ յերեւելի իրս եւ եթ բեւեռեալ էին, եւ ի ճշմարիտ դարձէն հեռացեալք՝ ընդ այն ինչ եւ եթ զարմանային, որ աննման էր: Ասան այնորիկ իրրեւ Յովհաննէս մկրտիչ՝ զոր արժանի համարէին թէ Վրիստոսն իցէ, եցոյց նոցա զճշմարիտ Վրիստոսն, չհաւատացին բունից նորա. եւ Յիսուս Վրիստոս՝ որում հարկ էր նմանօղ

լինել որոց հաւատասցենն ի նա , ոչ ինչ արժանի թը-
ւեցաւ Հրէիցն՝ զի զհետ երթիցեն նորա :

Այլ քանզի զայն իմն յոյժ հաստատուն ունէին ի
մտի՝ թէ յայնմ ժամանակի յայտնելոց է Վրիստոսն ,
վասն այնորիկ եւ զգար մի անդէն ի նմին ակնկալութեան
էին : Արթեցին՝ թէ մարթի կատարման մարդարէու-
թեանցն յամել , եւ ոչ ժամանակ ինչ սահմանարկու գոյ
նոցա . որպէս զի զհարեւր ամ ստէպ ստէպ սուտ քրիս-
տոսք երեւէին ի միջն նոցա , որ զբազումս զհետ իւ-
րեանց ձգեալ տանէին , եւ սուտ մարդարէք՝ որ աւետա-
րանէին զնոսա :

Իսկ յառաջին դարսն ոչինչ այնպիսի գործեցաւ . եւ
ոչ վայրագար ումէք Վրիստոս անուն կոչեցին Հրեայքն ,
ոչ յորժամ Յուդա Մակարէ բազում անգամ նշան յող-
թութեան ի վերայ բռնաւորին կանգնէր , եւ ոչ յորժամ
նորին եղբայր Շմաւոն թափէր զնոսա ի լծոյ հիթանո-
սաց , եւ ոչ յորժամ առաջին Հիւրկանոս բազում կող-
մանց արէր : Վանզի ժամանակքն եւ այլ եւս նշանք
չէին ի դէպ . եւ միայն ի դարուն Վրիստոսի սկիզբն ե-
ղև զօծելոցն զայնցանէ ճառել :

Որ ինչ Հրեայքն , զնոյն եւ շամրտացիք գործե-
ցին , քանզի ի հինգ դպրութիւնսն ընթեռնուին զմար-
դարէութիւն Յակովբու . եւ սակաւ ինչ յետոյ քան
զՎրիստոս հաւատային ի Վոսիթեւս : Սիմոն մոդ ի նմին
աշխարհէ , նոյնպէս ձեռն յանձին հարեալ պարծէր՝ թէ
Աստուծոյ որդի իցէ . եւ Սենանդրոս նորին աշակերտ՝
անձին անուն կոչէր վրկիչ աշխարհի ¹⁸ : Աւ առ կենդա-
նութեամբն իսկ Վրիստոսի հաւատասցեալ էր կինն շամր-
տացի՝ թէ դալոց է ընդ հուպ Սեսիայն ¹⁹ . այսպէս յայտ
իմն էր ազգացն եւ ամենեցուն նոցա՝ որ զՅակովբայ մար-
դարէութիւնն ընթեռնուին , թէ ի ժամանակսն յայնոսիկ
յայտնելոց է Վրիստոսն :

Իսկ իրրեւ անց ժամագիր ժամանակն մինչև չկայր
ինչ այնու հետեւ իմիք ակն , եւ զփորձ առեալ գիտա-
ցին Հրեայք թէ քրիստոսքն ամենեքին՝ զորոց զհետ
դնացին , ոչ միայն չգերծուցին զնոսա ի չարեացն , այլ
առաւել եւս ի խորսն իջուցին զնոսա , յայնմ հետէ բա-
զում ժամանակս գաղարկեցին սուտ քրիստոսքն երեւել

ի միջի նոցա. եւ հուակ յետին Քարկոքերաս է, զոր նոքա Վրիստոս համարեցան, յառաջին ժամանակս անդ քրիստոնէութեանն: Այլ առաջին խորհուրդն շանկարովանդակ ի մտաց նոցա: Այլ փոխանակ համարելոյ՝ թէ երեւեալ իսկ է Վրիստոսն, որպէս յառաջագոյն յԱզրիանոսի ժամանակն կարծեցին. առ Անտոնինոսիւ եւ առ մեւս Անտոնինոսիւ նորին պայազատօք, հնարեցան աւել թէ Օծեալն նոցա յաշխարհի է թէպէտ եւ չերեւի ուրեք ի միջի, քանզի Ազրիայի մարդարէի մնայ, որ դաւոյց է եւ օծանելոց զնա: Օչայս բանս առ հասարակ խօսելին նոքա ի ժամանակս սրբոյն Յուստինեայ²⁰. եւ դասնեմք եւս յիւրեանց Տաղմուզն զվարդապետութիւն միոյ ուրուք ի հնոց վարդապետաց նոցա²¹, որ ասելոյ թէ եկեալ է Վրիստոսն, ըստ այնմ՝ որ ի մարդարէան ցուցեալ է, այլ թաքուցանէ զանձն ի կողմն ուրեք ի հռոմայեցւոց քաղաքի, ընդ աղքատսն՝ որ ի մոյրն երանիցեն:

Այլ այսպիսի դանդաշանաց բանից՝ միտք նոցա չկարացին հաւանել. այլ տագնապեալ այնու հետեւ շրէիցն խոստովան լինել, թէ չեկն Մեսիայն ի ժամանակի՝ յորում պարտ էր ակն ունել նմա ըստ հնոց մարդարէութեանցն իւրեանց, ի մեւս եւս խորածորս սանառեալ կործանեցան: Փոքր մեւս եւս եւ զյոյս դաւառեան Օծելոյ իւրեանց հատանելին, քանզի չերեւեցաւ յիւրում ժամանակին. եւ բազումք զվարդապետի ուրուք զերեւելոյ զճեա գնացին²², որոյ բանք ի Տաղմուզն կան: Սորա տեսեալ թէ ժամանակն քաջ ի բաց անցեալ է, ասաց՝ եթէ չեք այսու հետեւ խրայէղացւոց ակն ունել Օծելոյ, քանզի տուաւ նոցա Օծեալ արքայ Ազրեկիաս:

Այլ այսպիսի կարծիք, ոչ միայն չօրացաւ ի մէջ շրէիցն, այլ եւ մերժեցաւ իսկ: Բայց քանզի չգտանէին ինչ այնու հետեւ ի ժամանակսն՝ որ ի մարդարէութեանց իւրեանց ցուցեալ էր, եւ չգիտէին՝ թէ ուր զերծանիցին յայնպիսի տագնապէ, եզին բան հաւատոց, որպէս ի Տաղմուզն կայ²³, թէ ամենայն ժամանակք՝ որ վասն դաւառեան Մեսիային նշանակեալ էին, անցեալ են. եւ ամենեքին միարան բարբառեցան՝ թէ անիծեալ որք հաշուիցին զժամանակս Օծելոյն. որպէս ինչ ի մրրկի դէպ լինիցի, յորժամ նաւն հեռի ուրեք ի ճանսպարհէ խո-

տորիցի, եւ նաւափարն վհասեալ զթիւ եւ զհամար թողուցու, եւ գնայցէ յո եւ գնայցէ:

Եւ յայնմ հետէ ջանան թափել զանձինս ի մարդարէութեանց անտի՝ ուր Վրիստոսի ժամանակն նշանակիցի. եւ չէ ինչ փոյթ նոցա զարչութիւնս հարցն իւրեանց եղծանել, թէ միայն զմեծաքանչ մարդարէութիւնն ի քրիստոնէից հանել կարիցեն. եւ զայն եւս իշխեցին ասել՝ թէ Յակովբայ մարդարէութիւնն չիցէ վասն Վրիստոսի:

Եւս նոցին իսկ հին մատեանք սուտ առնեն զնոսա: Քանզի զոյն մարդարէութիւն յՕծեալն առնու Տաղմուղն²⁴. եւ ըստ այնմ օրինակի, որպէս մեք մեկնեցաք, զտանի ի մատեանս նոցա, այս ինքն ի վաւերական մեկնութիւնս նոցա՝ որ քան զամենայն ինչ պատուական է առ նոսա²⁵: Պատենեմք անդ ըստ ամին բանից, թէ ի տանէ եւ ի թաղաւորութենէ Յուդայ՝ յոր ամիտօկերոցն էր երբեմն ամենայն զաւակն Յակովբայ եւ համօրէն ժողովուրդ Խարայէղի, զատաւորք եւ իշխանք ելցեն, մինչեւ զպալուսան Վրիստոսի՝ առ որով յամենայն ազգաց մի թաղաւորութիւն եղիցի:

Օսոյն վկայութիւն մատուցանելին շրէիցն, վարդապետքն նոցա երեւելիք եւ իմաստունք, յառաջին ժամանակն քրիստոնէութեան: Քանզի հին եւ հաստատուն տրչութեան իսկզբանն չէր մարթ եղծանել, եւ թէպէտ եւ շրեայք չառնուին ի Յիսուս զՅակովբայ մարդարէութիւնն, այլ դեռ եւս զայնմանէ յուրաստ չիշխէին լինել՝ թէ իցէ պատշաճ Օծերոյ Տեառն: Կսկ յայնպիսի անմտութիւն յետ բաղում ժամանակաց եկին, յորժամ տազնապեալ ի քրիստոնէից անտի, ապա ուրեմն առին ի միա՝ եթէ իւրեանց իսկ աւանդութիւն հակառակ է նոցա:

Եւ վասն մարդարէութեանն Պանիէղի, ուր վալուսան Վրիստոսի ի չորեքհարեւր եւ իննսուն ամս փակեալ կայր, սկսեալ ի քսաներորդ ամէ Արկայնարազուկն Արտաշէսի. քանզի սահմանեալ ժամանակն ի կատարած չորեքհազար ամաց աշխարհիս դիպեր, հին իմն տրչութիւն էր ի մէջ շրէիցն՝ եթէ յայաներոց է Օծեալն ի կատարած կոյս չորեքհազար ամացն, եւ իրրեւ երկու հազար ամօք յետոյ քան զԱբրահամ: Ազնա ոմն՝ որոյ մեծ

իմն անուէն է ի մէջ Հրէիցն, թէպէտ եւ չիցէ մարգարէն, զայս այսպէս ուսոյց յառաջ քան զճնունդն Վրիստոսի. եւ այնր աւանդութիւն պահեալ կայ ի Տաղմուդ գիրսն²⁶: Արդ՝ որպէս կանխադոյն ասացաք, ասհմանեալ ժամանակն ի դալստեանն Վրիստոսի կատարեցաւ. քանզի յայտնեցաւ նա իբրեւ երկու հազար ամօք յետոյ քան զԱբրահամ, մօտ ի չորեքհազարերորդ ամն աշխարհի: Բայց Հրեայքն ոչ ծանեան զնա. եւ ընդունայն ելեալ յակնկալութենէ իւրեանց, պատճառեցին թէ մեզք մեր յամեցուցին զ(Օ)ճեալն՝ որ դալոցն էր: Բայց սակայն թիւք ամաց մերոց, որպէս եւ ինքեանք իսկ խոստովան լինին, ճշգրտեալ են. եւ յոյժ իսկ անմտութիւն է ընդ մարդկաւ կապել զասհման ժամանակացն՝ զոր Աստուած ճշգիւ եցոյց ի Վանիէղի գիրսն:

Գարձեալ եւ այն եւս տաղնապէ զնոսա, զի տեսանեն՝ թէ այս մարգարէ զՎրիստոսի ժամանակն կանուխ քան զաւերն Արուսաղէմի զնէ. քանզի ի կատարել ժամանակի աւերածոյն Արուսաղէմի, հարկ է զի եւ ժամանակն՝ որ յառաջ քան զնա իցէ, կատարեալ իցէ:

Իսկ Յովսեպոս յայնմ կարի վրիպեաց²⁷: Օլեւթներորդան՝ զորոց զհետ դալոց էր կործանումն հրէական ազգին, բարուք համարեցաւ. եւ իբրեւ ետես՝ եթէ կատարեցան եւթներորդքն ի ժամանակի, զի պաշարեաց Տխոսս զԱրուսաղէմ, զիտաց՝ եթէ եկեալ հասեալ է կորուստ քաղաքին. այլ չած զմտաւ՝ թէ կործանումն այս յետոյ քան զգալուսան Վրիստոսի եւ զմահն լինելոց էր, վասն որոյ եւ զիէս միայն մարգարէութեանն խմցաւ:

Իսկ Հրեայքն՝ որ յետոյ քան զնա եկին, կամեցան լնուլ զթերութիւնն: Օ՛րդրիպպա ոմն մեղ ի մէջ մատուցանեն ի ցեղէ Հերովիի, զոր հոռմայեցիք, ասեն, սպանին փոքր ինչ յառաջագոյն քան զաւերն Արուսաղէմի. եւ Ադրիպպայս այս, ասեն, Վրիստոսն է, զորմէ ի Վանիէղն ճատի, եւ նա օճեալ է քանզի թաղաւոր իսկ է. այլ այս մեւս եւս նշանակ է անմտութեան նոցա: Վանիղ Ադրիպպայ ոչ միայն չէր մարթ թէ արդարն իցէ եւ սուրբն սրբոց, եւ կատարումն մարգարէութեանցն, որպիսի ոք պարտ էր Վրիստոսի լինել, զոր Վանիէղն յայնմ վայրի ցուցանէ. եւ ոչ միայն սպա-

նույն Ագրիպպայ՝ յորմէ անպարտ էին Հրեայքն, չէր մարթ թէ պատճառք կործանման նոցա լինէր, որպէս մահն Վրիստոսի լինելոց էր, զորմէ Վանիէզն ճառէ. այլ եւ զոր ասննն իսկ Հրեայք, առասպելք են եւ պառաւանց գրողները: **Օ**՛ի Ագրիպպա՛ որ ի ցեղէն Հերովդի էր, հանապաղ ի կողմն հռոմայեցւոց եկաց, եւ սիրելի էր նա թագաւորացն Հռոմոց, եւ թագաւորեաց ի կողմն մի ուրեք հրէաստանի, բազում ժամանակօք յետոյ քան զառնուլն Արուսապէմի, որպէս պատմեն Յովսեպոս, եւ այլ եւս ժամանակակիցք²⁶³:

Արդ ամենայն ինչ՝ զոր հայթայթանօք հնարեցան Հրեայք, զե խելօք ի մարդարէութեանցն զանձինս ապրեցուցանիցեն, ամօթալից խայտառակեն զնոսա: **Ա**՛ս եւ ինքեանք իսկ այնպիսի կցկցանաց չանսան. եւ իրբեւ վտանդին ուստեք, յորէնսն գիմեն, զոր ինքեանք անձանց եղին մի համարել ամենեւին զաւուրս Օծելոյն: **Ա**ստի կամօք փակեն զաչս ի ճշմարտութիւն անդր, եւ ուրացեալ են ի մարդարէութեանցն՝ յորս Հողին սուրբ գլխովին համարի զամեն. այլ մինչ դեռ ուրացեալ իցեն ի մարդարէութեանցն, ինուն զմարդարէութիւնսն, եւ ցուցանեն զճշմարտութիւն այնր՝ զոր ասնն մարդարէութիւնքն վասն կուրութեան մտաց նոցա եւ կործանմանն:

Օ՛ր ինչ կամիցինն տացեն պատասխանի մարդարէութեանցն, աւերն՝ զոր յառաջագոյն պատմէին մարդարէութիւնքն, յիւրում ժամանակի ել ի գլուխ. արդիւնք իրացն քան զամենայն ճարտարանս նոցա հզօրագոյն է. եւ եթէ Վրիստոսն չիցէ եկեալ յայնպիսում վշտաց ժամանակի, ապա մարդարէքն՝ յորս յուսացեալ են, խաբեցին զնոսա:

Աւ զե կարիցես ամենեւին իսկ ըմբերանել զնոսա, միտ դիր երկուց իրաց՝ որ ի կործանմանն նոցա եւ ի գալթատեան կենարարին եղեն. մի այն՝ զի պայազատութիւն քահանայապետացն, որ մշտնջենաւորն էր եւ առանց փոփոխելոյ յՆահարոնէ հեռէ, յայնժամ վախճանեցաւ. եւ մեւսն՝ զի ընարութիւն ցեղիցն եւ տանց, որ մինչեւ ցայնժամ պահէր, կորեաւ, որպէս եւ ինքեանք իսկ խոստովան լինին:

Ընտրութիւնս այս մինչեւ ցժամանակ Օծելոյն կարեւոր էր: Քանզի ի Ղեւեայ ճնանելոց էին պաշտօնեայք նուիրացն, յԱհարոնէ ելանելոց էին քահանայք եւ քահանայապետք, իսկ ի Յուդայ ծագելոց էր ինքն իսկ Օծեալն: Երգ՝ եթէ ընտրութիւն տանց նահապետացն չկայր մինչեւ ցաւերն Արուսողէմի եւ ցգալուսան Վրիստոսի, ապա հրէական զոհքն տարածամ ի միջոյ բառնային, եւ ի դերեւ ելանէր Վաւիթ ի պարծանաց անտի հայր Վրիստոսի ճանաչելոյ: Ահաս Օծեալն, եւ եղեւ նովաւ սկիզբն նորոյ քահանայութեանն ըստ կարգին Մեղքիսեղեկի, եւ յայտնեցաւ նոր թագաւորութիւնն՝ որ չէր յայսմ աշխարհէ. չեն ինչ պէտք այնու հետեւ Ահարոնի, ոչ Ղեւեայ, ոչ Յուդայ, ոչ Վաւիթի, եւ ոչ տանց նոցա: Չէին ինչ պէտք Ահարոնի ի ժամանակի՝ զի զոհքն դադարելոց էին, ըստ Վանիէղե²⁹: Իսկ որ ինչ ի տան Վաւիթի եւ Յուդայ լինելոցն էր, կատարեցաւ, յորժամ անտի ել Օծեալն Աստուծոյ. եւ որպէս թէ ինքեանք իսկ շրեայքն հատեալ իցեն զոյս իւրեանց, մոռացան այնու հետեւ զպայապատութիւն տոհմիցն՝ զոր մինչեւ ցայնժամ այնպէս փութով զուշութեամբ պահէին:

Զթողոցուք զմի ի նշանաց դալստեանն Վրիստոսի, եւ թերեւս զգլուխն իսկ ամենայնի, թէ բարեղք կարիցեմք առնուլ ի միտ, թէպէտ եւ անտի իսկ դայթակղեցին եւ խորշիցին եւ վարշիցին շրեայք. այն է մեղացն քաւութիւն՝ որ աւետարանէր չարչարանօք կենարարին՝ որ խոնարհեցան եւ հնազանդ եղեւ մինչեւ ի մահ: Յուցեալ էր Վանիէղե³⁰ ի մեջ եւթներորդացն, զխորհրդական եւթներորդն՝ զորմէ յառաջագոյն ճառեցաք, յորում Վրիստոսն զնկոյց էր, յորում կտակ ուխտին մահուամբ նորա հաստատելոց էր, յորում զոհք հնոց օրինացն ընդունայն լինելոց էին: Եռնթեր զիցուք Վանիէղե եւ Ղաւայի, եւ դացուք զխորս խորհրդոյն մեծի. անցուք Այր մի ի հարուածս, եւ գիտէ համբերել ցաւոց. նա զմեղս մեր բառնայ եւ վասն մեր չարչարի, նա վիրաւորեցաւ վասն մեղաց մերոց եւ պատժեցաւ վասն մերոց անօրէնութեանց. եւ նորա վիրօքն բժշկեցաք³¹: Իացէք զաչս թերահաւատք, ոչ ապաքէն թողութիւն

մեղաց ձեզ յանուն Յիսուսի Վրիստոսի խաչելոյ քարոզեցաւ : Ո՞ր ածեալ իցէ այսպիսի խորհուրդ զմտաւ : Ո՞ այլ որ քան զՅիսուս կամ յառաջ կամ զինի համարձակեցաւ ասել՝ եթէ իւրով արեամբ զմեզս լուանայցէ : Ասա՛ թէ վասն զիառս ի մարդկանէ առնլոյ, եւ զայնպիսի զլշտաց մարդարէութիւն յանձին իւրում ընլոյ ի խաչ ելեալ իցէ : Պարտ է լուռ իսկ լինել, եւ զարմանալ ընդ ուսումն վարդապետութեան աւետարանին՝ որ յուրոք միտս չէր մարթ անկանել, թէ ոչ ճշմարիտ էր :

Յայտ վայրի անհնարին շտապ տաղնապի է Հրէիցն . քանզի յիւրեանց զիրսն կան բազում բանք՝ վասն անարդանաց Օծելոյ իւրեանց : Այւ արդ զի՞նչ իցեն այն բանք՝ որ վասն նորա փառացն եւ պարծանացն ճառիցեն : Ըպտքէն յայտ է թէ յետ պատերազմացն ի պարծանս յողթութեանն դայցէ, եւ յետ չարչարանացն ի փառս : Ո՞ իրք Հաւատապիք . երկուս օծեալս յօժարեցին դնել Հրէայքն : Պատանեմք յիւրեանց Տաղմուզն, եւ յայլ եւս գիրս նոցա՝ որ իրբեւ զնա հին իցեն³², զե ակն ունին միում Վրիստոսի՝ որ չարչարիցի, եւ միւսումն՝ զե լի իցէ փառօք . մին՝ մեռեալ եւ յարուցեալ, եւ մեւն՝ Հանապաղ երանելի, որ եւ միշտ յողթիցէ . ամենայն՝ որ ինչ զտկարութենէ բանք ի գիրս են, միումն տան, եւ միւսումն՝ զամենայն զմեծութեան եւ զփառաւորութեան ճառս . զմին՝ Յովսեփայ որդի կոչեն, քանզի չկարացին իսկ չչնորհել նմա զմի նկարագիր Յիսուսի՝ որ Յովսեփայ որդի համարեալ էր . եւ զմեւն որդի Վաւթի անուանեն . եւ չկամին առնուլ ի միտ՝ թէ պարտ էր Օծելոյն, որդոյ Վաւթի, որպէս Վաւթիթն ասէ³³, զուխս ի ճանապարհի ընդել, մինչ չեւ բարձր արարեալ իցէ զզուխս . այն իսկ է չարչարել մինչ չեւ փառաւորեալ իցէ . որպէս ինքն իսկ ասաց որդին Վաւթի . Ով անմիտք եւ հեղզասիրտք ի հաւատալ ամենայնի՝ զոր խօսեցան մարգարէքն, ո՞չ զնոյնս պարտ էր չարչարել Վրիստոսի, եւ մտանել ի փառս իւր³⁴ :

Պարձեալ թէ զՕծելոյն իմանայցեմք զայն, զոր Ասայի ասէ³⁵ թէ Այլ մի ի հարուածս եւ գիտէ համբերել ցաւոց . նա վերաւորեցաւ վասն մեղաց մերոց, եւ պատժեցաւ վասն մերոց անօրէնութեանց . տեսիլ նորա

անարդ նուազեալ քան զամենայն որդւոց մարդկան. միաբանէ մեզ յայսմիկ որպէս եւ յայլան ամենեսին, հին տըշութիւն Հրէիցն. եւ թէպէտ եւ բիրապատիկ ճարտարն նորա, այլ՝ դու ի Տաղմուդ գրոց նոցա³⁵, զոր բաղում անգամ նշանակեցաք, ուսուցանէ՝ թէ այրս այս որ զմեզս մեր բառնայ, Օծեալն եղիցի: Ի նմին վայրի եւ յայլ եւս գիրս Հրէիցն, զցաւոց՝ զոր վասն մերոց մեղաց յանձն առ Օծեալն, կան բանք: Եւ բաղում ուրեք անպէ՛ն վասն մըտանելոյ նորա խոնարհութեամբ եւ փառաւորութեամբ Մարուսաղէմ ճառի, հեծեալ ի վերայ յաւանակի տրմիլի կրմիլ. եւ մարդարէութիւն Օգրարիայ յայն առեալ է: Եւ արդ՝ զի՛նչ ունիցին վասն որոց տրանջեցին Հրեայքն: Ըմենայն ինչ յայտնապէս յիւրեանց մարդարէան ցուցեալ էր. նոցին իսկ հին աւանդութիւնն, զբուն մեկնութիւն այսց մարդարէութեանցն պահեալ էր. եւ չէք իսկ ինչ քան զայն յանդիմանութիւն իրաւական, զոր յանդիմանէ զնոսա կենարարն³⁷. Աեղծաւորք, յորժամ երեկոյ լինի, ասէք՝ թէ, ջեր լինելոց է, քանզի կարմրացան երկինք. եւ բնդ այդս՝ այսօր ձմեռն, քանզի կարմրացան խոժոռեցան երկինք: Օ երեսս երկնից գիտէք քննել, եւ զնշանս ժամանակաց չկարիցէք:

Եւսա ուրեմն յիրաւի ասնն Հրեայք՝ թէ ամենայն ժամանակք Վրիստոսի սահմանեալք անցեալ են: Յուդա ոչ թագաւորութիւն է պժմ եւ ոչ ժողովուրդ. ազգք օտարոտիք ծանեան զ(Օ)ծեալն՝ որ առաքելոցն էր, յայտնեցաւ հեթանոսաց Վրիստոս. իրրեւ եղեւ նշանս այս, բնթայան նորա առ Եստուածն Երբասհամու, եւ նահապետին օրհնութիւն սիռեցաւ բնդ ամենայն երկիր. այր մի ի հարուածս քարոզեցաւ, եւ մեղաց թողութիւն նորա մահումն պատմեցաւ. ամենայն եւթներորդքն անցին, կործանեցաւ ժողովուրդն, քակեցաւ աւեր եղեւ տեղի սրբութեանցն, եւ յիրաւի եւ յարժանի զվրէժ մահուն Վրիստոսի լուծին. յայտնեցաւ նոցա Վրիստոս ըստ այնմ՝ զոր յաւանդութեանցն ուսեալ էին, եւ անհաւատութիւն նոցա առանց պատասխանի տալոյ է:

Յայնմ հետէ տեսանեմք յայտնի նշանակս անարդութեան եւ խոտելոյ նոցա յԵստուծոյ: Օ ի յետ դալատեանն Վրիստոսի երթան եւ ի տգիտութեան խորան իջանեն,

եւ յանհնարին տառապանս, ուստի միայն անհնարին աղէտք չարեաց նոցա եւ ամօթն ստէպ մոլորելոյ նոցա, հանցէ զնոսա. կամ մանաւանդ՝ մարդասիրութիւնն Աստուծոյ, յորժամ լցցի չափ ժամանակին՝ զոր եւ տեսչութիւնն Աստուծոյ, առ ի պատիժ պատուհասի ապախտաւորութեան նոցա եւ առ ցածուցանել զչպարտութիւն ամբարտաւանութեան նոցա:

Ի մէջ ժամանակացն այնոցիկ ծաղր են եւ կատականք ժողովոցոց, ատելի եւ դարշելի ազդաց, եւ այնպիսի երկայնժամանակեան գերութեամբն չղատացան, որ բաւական էր հաւանեցուցանել զնոսա: **Օ** ի որպէս սուրբն Արմենիոս ստէ³³. Ի՞մ իմիք ակն ունիցիս, այն անհաւատ շրեայ. բազմապատիկ յանցանս յանցեար ի դատաւորաց ժամանակն, վասն կռապաշտութեան քո յազարն մերձաւորս գերի վարեցար. այլ արագ արագ ողորմեցաւ ի վերայ քո Աստուած, եւ վաղվադակի առաքեաց փրկեաց զքեզ: **Յ**աճախեցեր դու զկռապաշտութիւնն քո առ թագաւորօքն քո. այլ վասն դարշութեանցն՝ յորս թաթաւեցար դու առ Աքաղու եւ առ Սանատէիւ, եւ թանասուն ամ միայն ի գերութեան կացեր: **Ա**կն եւ կաց **Ա**իւրոս, եւ դարձոյց ի քեզ զաշխարհն քո եւ զտաճարն քո եւ զզոհն քո: **Ա**ւ սպա յետոյ կործանեցար ի **Վ**եսպիանոսէ եւ ի **Տիտոսէ**: **Լ**ակ յեա ամաց յիսնից, եկն **Ա**գրիանոս եւ սատակեաց ամենեւին. եւ չորեքհարեւր ամ է, զի դու ի նեղութեան բնակեալ ես: **Օ** այս ինչ սուրբն Արմենիոս ստէր: **Ա**յլ արդ սաստկացաւ յանդիմանութիւնն, եւ հազար երկերիւր ամ յաւելաւ ի կործանումն հրէական ազգին: **Ա**րդ՝ ասացուք ցնա, փոխանակ չորեքհարեւր ամացն, թէ վեշտասան դար է, եւ ոչ թեթեւացաւ լուծ նորա: **Օ** ինչ գործ գործեցեր, ազգ եւ ժողովուրդ ապախտաւոր: **Ա**մենայն աշխարհաց եւ իշխանաց ի գերութեան կաս, եւ զից օտարութեաց դու ոչ ծառայես: **Ա**րդ՝ զիւրդ մոռացաւ ըզքեզ **Ա**ստուած՝ որ բնորեացն զքեզ. եւ ո՞ւր են ողորմութիւնք նորա առաջինք: **Օ** ինչ վնաս կամ զոր յանցանս մեծ քան զկռապաշտութիւն յանցեար, զի այսպիսի պատիժք պատուհասից հասին ի վերայ քո, որպիսի ինչ ի կռապաշտութիւնն քո ոչ կրեցեր: **Ա** ուս իսկ լինիս,

օրհնել եւ սրբել ի Վարխատոս Յիսուս, յորդին Վաւթի եւ Երբահամու: Օպս բալում անդամ նշանակեցաք:

Եւ յայն դեռ եւս չքննեցաք թէ վասն էր Յիսուս միայն, չարչարելովն եւ ի խաչ ելանելով եւ զանձն ունայնացուցանելով, առաջնորդ լինելոց էր դարձին հեթանոսաց, եւ յաղթելոց էր կռասպաշտութեանն:

Պաւղոս մեկնեաց մեզ զմեծաքանչ խորհուրդն, եւ բարւոք է միտ եղեալ նայել ընդ գեղեցիկ բանս նորահանդերձ ամենայն կարգան: Եւսաքեաց, սաէ՛, զես Վարխատոս աւետարանել, ոչ ճարտարութեամբ բանից, զի մի ընդունայն լիցի խաչն Վարխատոսի: Օի ճառ խաչին կորուսելոցն յիմարութիւն է. այլ փրկելոցս մեզ զօրութիւն Եստուծոյ: Օի դրեալ է՝ Արուսից զմնաստութիւն իմաստնոց, եւ զխորհուրդս խորհրդականաց արհամարհեցից: Ուր իմաստուն, ո՛ւր դպիր, ո՛ւր քննիչ աշխարհիս այսորիկ. ո՛չ ապաքէն յիմարեցոյց Եստուած զմնաստութիւն աշխարհիս: Եւ յո այո եւ կարի քաջ. քանզի զմարդիկ յանդիտութենէ իմաստութիւն աշխարհիս չկարաց հանել: Եւ յայնր եւս պատճառս Պաւղոս ընծայեցուցանէ՝ Վանդի իմաստութեամբն Եստուծոյ՝ ոչ ծանեաւ աշխարհ իմաստութեամբն զԵստուած. այս ինքն արարածովքս՝ զոր բարւոքն կարդեալ էր. յայլ իմն ճանապարհ եկն, եւ շածեցաւ յիմարութեամբ քարոզութեանն ապրեցուցանել զհաւատացեալս. այս ինքն խաչին խորհրդով, որում մարդիկեղէն իմաստութիւն չկարէ հասու լինել:

Չքնաղ է եւ նորաքանչ խորհուրդ Եստուծոյ տեսութեանն: Մուծեալ էր Եստուծոյ զմարդ յաշխարհ ուր ամենայն ուստեք յո եւ հայեր, իմաստութիւն արարչին պայծառանայր գեղեցկութեամբն, եւ մեծութեամբ, եւ կարդեալ յարդարմամբ գեղեցիկ արարածոյն. բայց սակայն մարդն զնա ոչ ծանեաւ: Երարածք՝ որ վասն զմեր միտս ի բարձունս թռուցանելոյ ընծայեցան, զմիտան արդելին. մարդն ի կուրութիւն եւ յանմտութիւն անկեալ նոցին ի պաշտօն մտեալ արբանեկութիւն հարկաներ. եւ չհամարեալ բաւական գործոյ ձեռացն Եստուծոյ երկիր պաղանել, գործոց ձեռաց իւրոց երկիր եպաղ: Արօնք նորա՝ առասպելք անպիտանք եղին, քան

զմանկատոյ զրոյցսն եւս ծաղրալիցք. ցնորեցաւ անկաւ ի մտաց հանձարոյ, վասն այնորիկ կամեցաւ Աստուած այլով օրինակաւ սաղիցուցանել զմիտս նորա: Քանզի գործըն՝ զորոյ զիմաստութիւնն իմանայր, ոչ ինչ օգուտ եղև նմա. այլ իմն գործընծայեցաւ նմա, ուր յսպուշ կրթին միտք նորա եւ բնաւ յիմարութիւն իսկ կարծի. այն իսկ է խաչն Վարխատոսի: Օչի ոչ եթէ իմաստութեամբ ինչ զայն խորհուրդ մարթի առնուլ ի միտ. այլ զերերով զամենայն միտս ի հնազանդութիւն հաւատոց, զխորհուրդս քակելով, եւ զամենայն բարձրութիւն հրպարտացեալ ի վերայ գիտութեանն Աստուծոյ⁷:

Քանզի զինչ ինչ իմանացեմք ի խորհրդեանս յայսմիկ՝ ուր Տէրն փառաց թշնամանեալ, եւ իմաստութիւնըն Աստուծոյ՝ յիմարութիւն համարեցաւ, եւ որ զիւր բուն մեծութիւնն անկողուպուտ ունէր, Աչ ինչ յափշտակութիւն համարեցաւ զինն ինչ հաւասար Աստուծոյ, այլ զանձն ունայնացոյց զկերպարանս ծառայի առեալ, ի նմանութիւն մարդկան եղեալ, եւ կերպարանօք գտեալ իրբեւ զմարդ. խոնարհեցոյց զանձն, լիեալ հնազանդ մահու չափ, եւ մահու խաչն⁸: Խորհուրդք մտաց մերոց ցնորին. եւ որպէս Պաւղոս ասէ, չիք քան զնոյն անմտադոյն այնոցիկ՝ որ չեցենն անդուստ ի վերուստ լուսաւորեալք:

Այսպիսի ինչ զարման բժշկութեան կազմէր Աստուած կռապաշտութեանն: Օմիտս մարդոյն ճանաչէր, եւ գիտէր թէ ոչ իմաստութեամբ ինչ պարտ էր քակել զայնպիսի մոլորութիւն՝ զոր իմաստութեան չէր հաստատեալ: Ան ինչ մոլորութիւնք՝ յորս խորհելով իմն անկանիւք, քանզի ազմկին իմն միտք մարդոյ ի խորհուրդս իւր. այլ կռապաշտութիւն յանմտութեան կարծեաց եւ մուտ, զամենայն խորհուրդ իմաստութեան մտացն շեջուցանելով, եւ տալով իշխել զզայնոցն՝ որք կամին թէ ամենայն ինչ երեւելի եւ զննելի եւ սղղելի իցէ: Աւ անտի իսկ յերեւելի եւ ի մարմնաւոր իրս իջուցին զաստուածութիւնն: Բստ անձանց կերպարանաց ձեւեցին զնա մարդիկ, եւ որ ծանակագոյն իսկ է, ըստ իւրեանց ախտից չարչարանաց: Չէր այնպիսում անմտութեան մոլորութեան հազորդ եւ բաժանակից իմաստութիւնն. այլ առողջ մտաց խոտորութիւն իմն էր այն եւ զառանցու-

Թիւն եւ յիմարութիւն: Այլէ դու խօսեաց ճառս խորհրդոց ընդ զառանցելոյ, եւ ընդ այնպիսուսն՝ որ սաստիկ ջերմամբ ծնւիցի, ի ցասումն զայրն ածես, եւ առանց բժշկութեան զցաւսն դործես. այլ պարտ է ի սրտաճառս ախտին ցաւոց ընթանալ եւ զխառնուածսն կշռել, եւ զչար մաղասն՝ ուստի այնպիսի լլկանք առնին, պարզել: **Նոյնպէս** չէր պարտ թէ զկռապաշտութեան յիմարութիւն՝ իմաստութիւն բժշկիցէ: **Ք**ի՞նչ շահ, որ օգուտ փիղիսոփայքն իւրեանց ճարտարութեան բանիւքն պաճուճելովք գործեցին, ճախարակեայս սեթեւեթեալս ճառս խորհրդոց ի մէջ մատուցանելով: **Պ**ղատոն իւրովն ճարտարարան խօսողութեամբ՝ որ աստուածեղէն իմն կարծեցաւ, բազին մի երբ կարաց կործանել, ուր դիցն երկիր պաղանէին: **Ա**յլ եւ ինքն եւ նորին աշակերտք եւ բնաւ իսկ իմաստունք աշխարհիս ստութեան նուիրեցան. **Ն**անրացան ի խորհուրդս իւրեանց, եւ խաւարեցան անմտութեամբ սիրտք նոցա, զանձինս առ իմաստունս ունէին՝ յիմարեցան՝ քանզի հակառակ իւրեանց մտացն աբարածոց ի պաշտօն մտեալ երկիր պաղին:

Աւ արդ ո՞չ ասպաքէն յիրաւի յայտ վայրի բողոքիցէ **Պ**աւղոս¹⁰ եթէ **Ո**ւր իմաստուն, ո՞ւր դպիր, ո՞ւր քննիչ աշխարհիս այսորիկ: **Վ**արացի՞ն ինչ նոքա զառասպելս եւ եթ կռապաշտութեանն քակել եւ ի միջոյ ի բաց բառնալ. կամ երբ յանուրջս ուրեք արժան համարեցան ընդդէմ այնչափ հայհոյութեանցն դառնալ. եւ ժուժկալ լինել, չասեմ՝ թէ յետին տանջանաց, այլ սակաւինչ նախատանաց ի վերայ ճշմարտութեան համբերել: **Ա**ւ ոչ միայն զայն չարարին, այլ եւ զճշմարտութիւնն անիրաւութեամբ կալան¹¹, եւ անձանց հրամանս եղին՝ թէ ի կրօնսն պարտ է խառնիճաղանձ ուամկին զհետ երթալ. արք դուհիկք՝ զորս ինքեանք այնչափ խտտին, յայնպիսի մեծամեծ իրս, նոցա օրէնսդիրք լինէին, ուր մանաւանդ իւրեանց մտաց իմաստութեան պէտք էին: **Ա**ւ արդ ի քէն զի՞նչ օգուտ եղեւով փիղիսոփայութիւն. **Ո**չ ասպաքէն յիմարեցոյց **Ա**ստուած զիմաստութիւն աշխարհիս, որպէս **Պ**աւղոսն ասէ¹². ո՞չ ասպաքէն քակեաց զիմաստութիւն իմաստնոցն եւ եցոյց անօգուտ զպտուութիւն գիտնոցն:

Երբ՝ այսպէս եղոյց Աստուած փորձիւ, թէ չէր ինչ մարթ միայն մարդկորէն խորհրդով՝ կռապաշտութեանն կործանել: Աւ ոչ միայն չեա խորհրդոց մարդկան բժշկել զայնպիսի խօթութիւնն, այլ եւ յամօթ իսկ արար Աստուած զխորհուրդս մարդկան ի ձեռն խաչին խորհրդոյ. եւ միանգամայն ցամաքեցոյց եկից զաղբուրս ակափն ցաւոց:

Առապաշտութեան սկիզբն, թէ ստոյգ որ միա գնիցէ, յառաւել անձնսիրութենէ՝ զոր ունիմքս, եղև: Քանզի նոյն եա իմանալ աստուածս նմանս մեզ, որ ոչ եթէ աստուածք ինչ էին, այլ իրրեւ զմեզ մարդիկ չարչարելէք եւ տկարք եւ անզօրք. որպէս զի յանուն զիցն սնտաւոց, խորհրդոց իւրեանց եւ յօժարութեան կամաց եւ կարծեաց երկիր պազանէին հեթանոսքն:

Իսկ Յիսուս Քրիստոս յայլ իմն ճանապարհ ամ զմեզ: Ազքատութիւն նորա եւ անարգանք եւ խանձ՝ ահադին կարծեցուցանեն զնա մտաց մերոց: Պարտ եւ պատշաճ է ուրանալ զանձն, յամենայնէ հրաժարել, զընաւ ի խաչ հանել, վասն զնորա զհետ երթալոյ: Յորժամ զատեալ որոշեցի մարդ յանձնէ իւրմէ եւ ի ցանկութենէ ապահանութեան, մարթի Աստուծոյ եւ նորա յաւիտենից ճշմարտութեանն այնու հետեւ երկիր պազանել, զի զյաւիտենից ճշմարտութեանն կարգաց յօժարեալ է ստէպ զհետ երթալ:

Յայնժամ ամենայն կուռք կորնչին եւ ի բաց քակին, եւ որոց ի վերայ բազնացն երկիր պազանէին, եւ զորս իւրաքանչիւր յիւրում սրտին պաշտէր: Քանզի սոքա իսկ կանդնեցին կացուցին զգրօշեպան՝ որ ի վերայ բազնացն էին. Աստուծան երկիր պազանէին, քանզի ցանկասէրք իսկ էին, եւ ընդ իշխանութեամբ ցանկութեան կալ յօժարէին. Ապանդարամետին՝ որ քան զամենայն զինս զուարճալից էր, բազինք կանդնեալ էին, քանզի ուրախութեան զզայնոցն իւրեանց զոհս իմն մատուցանէին, զի այն ուրախութիւն քան զզինի եւս քաղցրագոյն էր նոցա եւ արբեցուցիւ: Իսկ Յիսուս Քրիստոս ի ձեռն խորհրդոյ խաչի իւրոյ, եկն զցանկութիւն համբերութեան վշտաց ի սիրտս նկարել, փոխանակ սիրոյ հեշտականացն: Վրօշեալք՝ որոց արտաքուստն երկիր պազանէին, փշրեցան,

զի որոց ի ներքս երկիր պաղանէին, բարձան ի միջոյ. զի որպէս Յիսուս ինքնին ասէ¹³. որ սուրբն իցէ սրտիւ նա զՄատուած տեսցէ. եւ ոչ միայն մարդ զՄատուած իւրոց կերպարանաց շնաննեցուցանէ, այլ եւ ջանայ իսկ, որչափ ինչ իւրով տկարութեամբն բաւական իցէ, զի Մատուծոյ նման լինիցի:

Խորհուրդն Վրիտտոսի եցոյց մեզ՝ եթէ զհարգ աստուածութեանն, առանց նուազութեան, մարթ էր ընդ մերում բնութեանս միաւորել եւ զզննուլ զմեր տկարութիւնս: Բանն մարմին եղև, այն՝ որ զկերպարանս Մատուծոյ եւ զընութիւն ունէր, կացեալ զինչ էրն, զկերպարանս ծառայի առ¹⁴. ինքն առանց փոփոխելոյ կացեալ՝ միաւորեցաւ, եւ օտար իմն բնութիւն՝ իւր սեպչականեաց: Ղուք մարդիկ կամէիք աստուածս՝ որ իցեն լոկ մարդիկ, եւ մանաւանդ անօրէնք իսկ. այլ այն մեծ իմն անմտութիւն է: Բայց այլ որ այժմ՝ երկրպագութեան արժանի յայտնեցաւ ձեզ. այս ինքն է Մատուած եւ մարդ միանդամայն, այլ մարդ որ ոչ մի ինչ յայնմանէ՝ զոր ինչ էրն, յառնուին զմեր մարդկութիւնս, կորոյս: Մռանց փոփոխման կայ աստուածութիւնն, եւ ոչ ինչ նուազեալ յաստուածութեան պատուոյ, վերացուցանէ եւ բարձրացուցանէ զայն՝ զոր ընդ իւրն միաւորէ:

Մյլ զինչ իցէ, զոր առն ի մէնջ Մատուած: Օջիւտրս ինչ զմեր կամ զմեզս. առն անդր փարզաստ քաւ լիցի. այլ զոր ինչ ստեղծ ի մարդն, զնոյն եւ եթ առ. եւ յայտ է՝ թէ ոչ զմեզս ինչ ստեղծ ի նմա եւ ոչ զախտրս: Օբնութիւնն դործեալ էր ի նմա, զնոյն եւ առ: Թերեւս ասիցէ որ, թէ զմահականացութիւն նորա է աւարեալ, ընդ որում խառն է եւ տկարութիւն. զի թէպէտ եւ մահականացութիւն չորր զառաջինն, այլ արդար պատիժ պատուհասի մեզացն էր, եւ այնպէս Մատուծոյ ստուգութեանն դործ էր: Այսն որոյ եւ ոչ ինչ անարժան համարեցաւ Մատուած առնուլ զմահականացութիւնն. եւ զպատիժս մեզացն յանձն առեալ առանց մեզացն, յայտ արար՝ թէ ոչ մեզապարտ ինչ էր, զի ի պատիժս մահեւր, այլ թէ արդար էր եւ զայլոց մեզս քաւէր:

Անչ զի փոխանակ ախտից չարաց՝ զորս մարդիկ յիւրեանց զխան դնէին, ամենայն իսկ առաքինութիւնք

երեւեցան ի նմա՝ որ Աստուածն էր եւ մարդ, եւ զի ամենայն իւրք կատարեալ երեւեսցին գործք քաջութեանցն, յանհնարին տանջանաց միջի առաքինացաւ զայնպիսի քաջութիւնն: Սի այլ Աստուած երեւելի խորն գրեսցուք քան զնա, նա միայն արժանի է զամենայն կուռս գրօշնալս խորտակել. եւ նշան յաղթութեան՝ զոր ի վերայ գրօշնրոցն կանգնելոց էր, խաչուն նորա էր կանգնելոց:

Այս ինքն՝ զի կարծեալ յիմարութեամբն յաղթութիւն կանգնելոց էր. որպէս եւ Պաւղոս յառաջ մատուցեալ ասէ¹⁵ թէ Հրեայք նշան հայցեն. զի նշանօք շարժեալ եւ դրդեալ Աստուծոյ զարարածս, ի սարտութիւն մասնեացէ զթշնամիս նոցա առաջի նոցա, որպէս արար յերանելն յԱդիպտոսէ. Աւ հեթանոսք, ասէ, իմաստութիւն ինդրեն. եւ զբանս ճարտարութեան զիշնեալս եւ զյարմարեալս, որպէս զՊղատոնին եւ զՍոկրատայն. Այլ մեք, ասէ, քարոզեսցուք զխաչելեայն Վրիստոս, Հրեից գայթակղութիւն, եւ ոչ նշան. եւ հեթանոսաց յիմարութիւն, եւ ոչ իմաստութիւն. բայց նոցին իսկ կոչեցելոցն Հրեից եւ հեթանոսաց, զՎրիստոս Աստուծոյ զօրութիւն, եւ Աստուծոյ իմաստութիւն. զի յիմարն Աստուծոյ իմաստնագոյն է քան զմարդիկ եւ տկարն Աստուծոյ զօրագոյն է քան զմարդիկ:

Օայն ազդոյ վէրս արժան էր մերում հպարտացեալ տղիտութեանս զնել: Իմաստութիւնն՝ յոր գամբն, այնչափ վերագոյն եւ սքանչելի է, զի մերում իմաստութեանրս յիմարութիւն թուի, եւ այնչափ բարձրագոյն՝ իմաստութեանն պայման, զի մնորութիւն իմն կարծի:

Այս իմաստութիւն Աստուծոյ ինքնին մերոց մտաց չիմանի, այլ յարդեանց անտի գործոցն յայա առնի: Օջորութիւն ինչ ի խաչէն ել, եւ զամենայն կուռս տապալեաց: Անկան կործանեցան նոքա յերկիր, թէպէտ եւ հաստատէր զնոսս հռոմայեցւոց իշխանութիւնն: Այ իմաստունք, ոչ անուականք եւ ոչ հարուստք զայն մեծաքանչ նշան գործեցին. գործն Աստուծոյ կարգաւ եղեւ, եւ զոր սկսան ի ձեռն արհամարհանացն Վրիստոսի, ի ձեռն նորա աշակերտացն արհամարհանաց ի զլուխ տարաւ: Աւ կատարէ Պաւղոս այսպէս զքանչելի

ճառան . Չճեր խի, ասէ, կոչումն տեսէք եղբարք . զի ոչ բազում խնաստունք ըստ մարմնոյ, եւ ոչ բազում հզօրք, եւ ոչ բազում անուականք . այլ զսխմարս աշխարհիս ընտրեաց Աստուած, զի յամօթ արասցէ զխնաստունս, եւ զտկարս աշխարհիս ընտրեաց Աստուած, զի յամօթ արասցէ զհզօրս . եւ զանտոհմն աշխարհիս եւ զարհամարհեալս ընտրեաց Աստուած եւ զոչինչսն, զի զէսն իմն խափանեացէ . որպէս զի մի պարծեացի ամենայն մարմին առաջի Աստուծոյ¹⁵ :

Առաքեալքն եւ նոցին աշակերաք՝ որ ըստ մարդկան կարծեաց արհամարհք աշխարհի էին եւ ոչ ինչ խի, ամենեցուն թաղաւորաց եւ իշխանութեանց եւ տէրութեանց գեր ի վերոյ եղեն : Մոռացան մարդիկ զարարչութիւնն . եւ նորոգեաց Աստուած զարարչութիւնն, յոչնէ ի մէջ ամեալ զեկեղեցի, եւ ընդդէմ մոլորութեանն վառեաց զնա մեծազօր զօրութեամբ . յամօթ արար գրօշելովքն զամենայն մեծութիւն մարդկեղէն՝ որ կամէրն նոցա պատսպարան լինել . եւ զգործ մի զայնպիսի զմեծ, բանիւ լոկով հրամանի խւրոյ վճարեաց, որպէս յորժամ ստեղծն զաշխարհս :

¹⁾ Լուս. Բ. 2. 3. 17. 18: ²⁾ Լնդ. Բ. 3. 4: ³⁾ Յով. Գ. 22: ⁴⁾ Լ. Կորնթ. Բ. 17. 18. 19. 20: ⁵⁾ Լուս. Բթ. 14. Բթ. 18: ⁶⁾ Լ. Կորնթ. Բ. 21: ⁷⁾ Բ. Կորնթ. Գ. 4. 5: ⁸⁾ Փեղ. Բ. 7. 8: ⁹⁾ Լուս. Բ. 21. 22: ¹⁰⁾ Լ. Կորնթ. Բ. 20: ¹¹⁾ Լուս. Բ. 18: ¹²⁾ Լ. Կորնթ. Բ. 19. 20: ¹³⁾ Մեսթ. Ե. 8: ¹⁴⁾ Փեղ. Բ. 6: ¹⁵⁾ Լ. Կորնթ. Բ. 22. 23. 24. 25: ¹⁶⁾ Լնդ. Բ. 26. 27. 28. 29:

Գ Լ ՈՒ Խ Խ ԺԲ

ԱՐԳԻ ԱՐԳԻ ԿՈՊՊԵՐԱՆՔԻ ԿՈՊՊԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՅՈՒՆՔԻ ԵՒ ՀԵՂԵՒ ՆԻՍՏՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՒ Ի ՀՆՈՒԹԵՆԷ՛ ԵՅՆ ԵՅՅԷ՛, ԵՒ ԲԵՂԱՆՔԵՆ ՕՐԻՆՔԻ ԵՒ ՓԻՂՄՈՒՓԵՅՈՒԹՅԱՆ ԵՒ ԵՂԱՆՔԻ ԿՈՊՊԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՅԱՆ ԵՂԱՆ ԲՍԿ ԵԿԵՂԱՅԻ ԵՅՆՈՐ ԵՄՆԵՆՔԻ ԸՆԴՔԵՆ

ՎՈՊՊԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ տկար իմն եւ անղօր կարծի, եւ դժուարաւ իսկ առնումք ի միա՝ թէ այնչափ բռնութեան պէտք եղին վասն զնա քակելոյ: **Ա**յլ անպատեհութիւնն ցուցանիցէ՝ թէ որչափ դժուարին էր առ յաղթել. եւ բարեղք խորհրդոցն խոտորումն յայտ առնիցէ՝ թէ զկարգ եղծեալ եւ ասպականեալ էր սկիզբնն: **Ա**յլարհս ի կռապաշտութեան ծերացեալ էր, եւ ի կոռցն թովչութենէ խրացեալ՝ բարբառոյ բնութեանն չլսէր, որ հանապազ զգրօշնոցն բողբէր: **Ա**րդ՝ ո՞ր զօրութիւն բաւական էր արկանել ի միտս մարդկան զճշմարտան **Ա**ստուած՝ զոր ամենեւին իսկ մոռացեալ էին, եւ զարթուցանել զազո մարդկան ի զլիապարն թմբութենէ:

Ամենայն զգայունք, եւ համօրէն կարիք, եւ բոլոր շահք ի վերայ կռապաշտութեանն կռուէին: **Խ**աղ իմն եւ խնձոյ էր այն. ուրախութիւնք, եւ տեսիլք, եւ անառակութիւն իսկ՝ ընդ **Ա**ստուծոյ պաշտօնն խառնէին: **Տ**օնք տարեկանաց նորա խաղք էին. եւ ոչ ուստեք ի կեանս մարդկան այնպէս մերժեալ էր ամօթ, որպէս ի խորհրդոց պաշտաման կռապաշտութեանն: **Օ**խորդ զայնպիսի միտս եղծեալս՝ ի կարգս կրօնիցն ճշմարտութեան ի զբաստն եւ ի սաստիկ եւ ի հակառակորդն զգայնոց, եւ ի ցանկութիւն աներեւոյթ բարութեանցն մարթ էր ածել: **Պ**աւղոս¹ ընդ Փեղիկայ ոստիկանի հրէաստանի խօսէր վասն արդարութեան եւ ժուժկալութեան եւ հանգերձեալ զատաստանին: **Օ**ւշի հարեալ Փեղիքս, ետ պատասխանի. **Գ**ու առ այժմ՝ երթ, եւ յորժամ ժամ լնցի կռեցից զբեզ: **Ո**ր անխիղճ անխէթ յերկրաւոր բարութիւնս կամիցի վայելել, այնպիսին արժան համարի զայն բանս յապաղել եւ ի հեռի ինչ ժամանակ ձգել:

Վամի՞ս եւ զշահիցն զյուզել եւ զխռովել տեսանել, ողք զմարդիօրէն իրս զամենայն շարժեն: **Ս**ինչ գեռ եղծանել սկսանէր կռապաշտութիւնն յասխացոց

աշխարհին ի քարոզութենէն Պաւղոսի, անդ ճարտարքն եւ ձեռագէտք՝ որ զկեանս անձանց շահէին մեհեանս փոքրիկս արծաթիս Ենահտայ եփեսացւոց գործելով, եկին կուտեցան, եւ որ ճարտարապետն էր արուեստին ասէ ցձեռագէտսն՝ թէ շահս մեր խափանելոց է. Եւ ոչ միայն այս ճգնէ զմեր կողմն՝ գալ ի յանդիմանութիւն, այլ եւ զմեծին աստուածոց Երեսմեայ զմեհեանն յոչինչ համարեալ. նա՛ եւ քակելոց եւս իցէ մեծութիւն նորա, զոր ամենայն Եսիա եւ տիեզերք պաշտեն՝:

Քանի՛ բուռն եւ հզօր է շահ. եւ զհարգ յանգրդնի՛ յորժամ յաստուածպաշտութեան կեզծիս կեղծաւորիցի: Եստի իսկ անհնարին յուզեցան ձեռագէտքն. ելին համօրէն միանդամայն իրրեւ զմոլեկանս բանդազուշեալս շրջէին գոչէին ՄԾ՝ 1: ԸՔՏԵՄԵՍ ԵՓԵՍԵՆՈՅ. եւ զուղեկիցսն Պաւղոսի ձգեցին ի թեատրոնն՝ ուր ամենայն քաղաքն խռնեալ էր: Յայնժամ մեծարարառ յանդգնեալք գոչէին իրրեւ ժամս երկուս, եւ հնչէր հրապարակ քաղաքին ի ձայնէ բարբառոց նոցա՝ թէ ՄԾ՝ 1: ԸՔՏԵՄԵՍ ԵՓԵՍԵՆՈՅ: Իսկ Պաւղոս եւ ուղեկիցք նորա հազիւ յամբոխէ անտի մաղապուր պրծանէին ի ձեռն հաղարապետայն, զի մի եւս աւելի անկարգ ինչ ի խռանն գործիցի:

Յայց շահից վերայ, որ ոմանց միայն էր, յաւելդու եւ զշահս քրմացն՝ որ ընդ զիցն իւրեանց անկանելոց էին. յայնր վերայ եւ զքաղաքաց պարծանս, որ կոռոյն պաշտամամր երեւելի լինէին, որպէս քաղաքն եփեսացւոց մեհեանագարդ անահտական զիցն, որ տաճարաւն առաւելեալ իմն էր, ուր ի տար աշխարհաց եկեալ պատարաւօք՝ ընծայատար լինէին, որով եւ մեծանայր իսկ: Արպիսի՞ ինչ մըրիկ հակառակ եկեղեցւոյ՝ որ նորոգ ծնեալն էր, յառնելոց էր. եւ զինչ զարմանք իցեն տեսանել զառաքեալս բազում անգամ դանեալս, քարկոծեալս, կիսամահ ընկեցեալս ի մէջ բազմամբոխ հրապարակայն: Եւ մեծ ինչ շահ քան զսոյն՝ եւս մեծամեծ խելս մենքենայից խռոնիցէ. աշխարհին օգուա՛ զծերակոյտն եւ զազն շոռոնոց եւ զթագաւորս յուղեալ գորդիցէ:

Բազում ժամանակք էին, յորմէ հետէ ծերակուտին հրամանք արդելին զպաշտամունս օտարոտիս՝ Բնոցայն եւ թագաւորք հաճեալ էին. ի խորհրդեան ուրեք՝

յորժամ զօրէնս առաջնորդութեանն զեղծեալս կարգել
 եւ յարդարել կամէին, Մեկնասս զայս ինչ նախ առաջի
 եղ Նւղոստեայ⁴, զնորակրօնութիւնն խափանել, զի մի
 խռովութիւնք ի քաղաքի լինիցին: Աւ ճշմարիտ իսկ էր
 բանն, քանզի զի՞նչ ինչ քան զնորակրօնութիւն սասաւ
 կադոյն զմիտս մարթիցի յուղել եւ յանպատեհ իրս ա-
 ծել: Այլ յայտ իմն կամէր առնել Աստուած թէ հաս-
 տատութիւն կրօնիցն ճշմարտութեան չյուզէ ինչ այս-
 պիսի խռովութիւնս, զի եւ այս սքանչելիք իմն էին, ու-
 բով յայտ լինէր՝ թէ Աստուած էր որ դործէր զայդ.
 քանզի ո՞րք ոչ զարմանայցէ յորժամ տեսանիցէ՞ զի զե-
 րեքարեւր ամ բովանդակ, մինչ դեռ ի հարաճչացն ա-
 նազորոյն հնարից միշտս վշտանայր եկեղեցի, յայնչափ
 խռովութեան եւ յընտանի պատերազմաց միջի, ի խոր-
 հուրդս սպանման թաղաւորացն եւ ոչ մի որ քրիստոնեայ
 դատնիցի, ոչ բարի եւ ոչ չար: Պահանջն քրիստոնեայք
 ի սաստիկ թշնամեաց իւրեանց զմի որ եւ եթ ի մեջ բե-
 րել⁵. այլ չիք որ, չէ ուրեք. այսպէս ուսումն քրիստո-
 նէութեան խրատէր մեծարանս իշխանացն դնել, եւ այս-
 պէս հաստատուն նկարեալ կայր ի միտս ամենեցուն բանն՝
 զոր Արդին Աստուծոյ ասաց⁶, եթէ Տուք զիսյսեր՝ կայ-
 սեր եւ զԱստուծոյ՝ Աստուծոյ:

Յայամ զեղեցիկ ընտրութենէ պայծառաւոյն լու-
 սաւորեալ միայր նոցա, յամենայն ժամանակի յիշխա-
 նացն հարաճչաց ճշմարտութեան իրրեւ յԱստուծոյ
 պատկերէ ակն ածէին: Աւ յամենայն զիրս պաղատա-
 նաց նոցա այնպիսի նշանակ հնազանդութեան երեւի, զի
 եթէ որ եւ այժմ ընթեռնուցու, խրատեալ ուսանիցի
 զսէր հասարակաց յորինուածոց, եւ իմանայցէ թէ յԱս-
 տուծոյ եւ եթ ակն ունէին հաստատութեան քրիստո-
 նէութեան: Մարդք՝ որ այնպէս զմահ առ ոչ ինչ զրեալ
 արհամարհէին, եւ ի համօրէն տէրութեանն եւ յամե-
 նայն զօրուն սիռեալ էին, ոչ ուրեք երբեք զայնչափ ժա-
 մանակս նեղութեան խոտորեցան: Օգոյշ լինէին ան-
 ձանց, ոչ միայն խռովութիւն ինչ չյուզել, այլ եւ ոչ
 տրտունջ զնոցանէ լինել⁷: Մասն Աստուծոյ էր ի դոր-
 ծըն յայն, զի եւ ոչ իսկ այլոք ուրուք ձեռն բաւական էր
 զայնպիսի զուր լլկելոց զմիտս ունել յակաստանի:

Արդարեւ խիստ խսկ էր նոցա, հասարակաց եւ թա-
զաւորաց թշնամիս կարծել, այնոցիկ՝ որ զամենայն ինչ
հնազանդութեամբ վճարէին, եւ ուխտս եւ խնդրուածս
եւ պաղատանս վասն իշխանաց փրկութեան եւ աշխար-
հի շինութեան մատուցանէին: Այլ կարծէր իմն՝ թէ ի
հիմանց խախտէր եւ խարխալէր քաղաքն Հոռոմոց, յոր-
ժամ անարգէր ոք զդիւնն նորա: Պարծէր Հոռոմ՝ թէ
քաղաք սուրբ իցէ ի բնէ. եւ հմայիւք իսկզբանէ նուի-
րեալ, եւ թէ շինիչ քաղաքին՝ զիցն պատերազմաց մա-
տոյց զնա: Փոքր մեւս եւս եւ կարծէր՝ թէ քան յերկինս
ի կապիտողիտնին մանաւանդ մօտ իցէ Արամազդ. եւ կոոց
պաշտամամբ զիւր յաղթութիւնն ստոցեալ համարէր:
Նովին եւ զազա եւ զգիսն նոցա ընդ ձեռամբ նուաճեալ
էր, քանզի այնպէս իմն համարէին ի ժամանակին յայն-
միկ. մինչեւ կարծել խկ՝ թէ զիցն հռոմայեցոց պարտ
իցէ տեարս այլոց ազգաց զիցն լինել, զոր օրինակ եւ
հռոմայեցիք այլոց ի մարդկանէ տեարք էին⁸: Աւ իրրեւ
նուաճեաց Հոռոմ զհրէաստան, համարեցաւ զԱստուածն
Հրէից ընդ դիւնն՝ որոց յաղթեալն էր⁹. արդ զնա կամել
թապաւորեցուցանել կործանել զհիմունս տէրութեանն
էր, եւ չկամել ընդ յաղթութիւնս եւ ընդ զօրութիւն
Հոռոմոց ժողովրդեան: Նովին իրի քրիստոնեայք՝ որ
թշնամիք զիցն էին, միանգամայն եւ թշնամիք քաղա-
քին կարծէին: Թապաւորքն առաւել փոյթ յանձին ու-
նէին զնոսա ջնջել, քան զՊարթեւս եւ զՄարկոմանս եւ
զՎախս. եւ իրրեւ զՍարմատան վանեալս եւ կոտորեալս,
քրիստոնեայքն խորտակեալք փառաւորք յարձանադիրս
նոցա երեւէին: Այլ զուր խսկ պարծէին՝ թէ զայնպիսի
պաշտօն քակեալ իցեն, որ աճէրն եւ մեծանայր ի սուր
եւ ի հուր:

Աւ ի դործ անդր անապոքրունութեան եւ զրպարտու-
թիւնս եւս տարապարտ յաւելուին. մարդք՝ որ ի վեր
քան զմարդկօրէն օրէնս առաքինանային, վասն ախտից
ինչ՝ որ եւ բնութեանն դարշելիք են, բամբասէին: Ամ-
բաստան լինէին զնոցանէ իրրեւ զժանգապործաց, որ բզ-
ժութկալութիւն՝ իւրեանց հեշտականութիւն համարէին.
բամբասէին թէ զմանկունս իւրեանց ուտեն, որ եւ առ
իւրեանց հալածիւս բարերալք եւ երախտադործք էին:

Այլ թէպէտ եւ հասարակք առ հասարակ ղխացեալ առեին, բերան թշնամեաց նոցա առ բռնութեան ճշմարտութեան ականց վկայութիւն արդարութեան խօսէր: Պիտեն իսկ ամենեքին, զոր Պղնիսոս մանուկ ցՏրայիանոս զրեաց¹⁰ վասն բարւոք կարգացն քրիստոնէից: Արդարացան նոքա, այլ ի մահուն տանջանաց չապրեցան. քանզի եւ այս իմն պիտոյ էր նոցա, վասն զպատկեր կերպարանացն Վրիստոսի՝ որ ի խաչն ել, յանձինս նկարելոյ, զե պարտ էր նոցա իրբեւ զնա գնալ ի խաչ անդր, յետ ամենեցուն յայտնի լինելոյ՝ թէ չեք ինչ մեղուցեալ նոցա:

Այլ ոչ բռնութեամբ չափ միայն էր կռապաշտութեանն զօրութիւն: Օչ թէպէտ եւ հիմն եւ հաստատութիւն նորա անհանձարական իմն ազիտութիւն էր եւ ապականութիւն եւ եղծումն մտաց մարդկան, այլ կամէր իմն պատճառանօք զանձն ծածկել: Վանիցս անգամ կեղծաւորել ջանացաւ, եւ յազդի ազդի կերպարանս փոխեցաւ, զե զեւր ամօթն ծածկիցէ: Արբեք երբեք բարբէր մեծարիչ աստուածութեանն լինել. Մեհայն, ասէ, որ ինչ աստուածեղէն է, անծանօթ է, եւ չեք ոք բայց միայն աստուածականն՝ որ ինքն զինքն ճանաչէ, մեղ չէ արժան զայնպիսի բարձրադէյն իրաց ճառել. վասն այնորիկ իսկ պարտ է նախնեացն հաւատալ, եւ իւրաքանչիւր զանցնիւր պաշտամանն՝ զոր յիւրում աշխարհին դտանիցէ, պարտի զհետ երթալ: Այս պատկառի բանիւք առանց բժշկութեան լինելն մոլորութիւնքն անմիտք ամպարիշտք՝ որ ելեալ զեղուին ընդ ամենայն երկիր. եւ բարբառ բնութեանն՝ որ զճշմարիտն Աստուած պատմեր, չլինէր լսելի:

Սարթ եւ պատշաճ էր ամեւ զմտաւ՝ թէ մերոց մուրրելոց մտացն տկարութիւն վկայութեամբ ինչ իւրք կարօտանայ, որ զնա ի սկիզբնն ամիցէ. եւ թէ զճշմարիտ կրօնն՝ ի հնոց ժամանակացն պարտ է ուսանել: Արպէս եւ տեսեր իսկ դու զանշարժ կարգ ճշմարտութեան կրօնիցն ի բուն սկզբանէ աշխարհի: Այլ քանի՞ ինչ կանուխ ժամանակս յառաջ բերել կարիցեն հեթանոսք՝ որ իրբեւ ընդ իւրեանց պատմութիւնս անցանիցեն, ոչ միայն զսկիզբն պաշտամանցն իւրեանց դտանիցեն, այլ եւ զպիցն իւրեանց: Օայս ցուցին քաջ Վարոն եւ Արկերոն¹¹,

Թող զայլս եւս ի մատենագրացն: Կամ թէ առնուցումք ինչ յանձն զբերս բիւրուց անշափ ամաց՝ զոր եզխպտացիք հաշուիցին, յորս բազում առանցիկ ճառս եւ առասպելս կարկատունս պատմեն՝ թէ եղեն, զի հաստատուն ըզյաճախութիւն ժամանակացն՝ որով պարծինն, առնիցեն: Այլ տեսանիցէ որ անդէն, զի հանապաղ ճնանիցին եւ մեռանիցին դիքն եզխպտացւոց. եւ չէր մարթազդիս այսմիկ հին զինքն կարծեցուցանել, թէ ոչ եւ զսկիզբն իւրոց դիցն ցուցանէր:

Այլ են մեւս եւս կերպարանք կռապաշտութեան: Կամէին հեթանոսք զի ամենայն իմիք՝ որ աստուածականն կարծէր, ծառայութիւն հարկանիցի: Օրէնք քաղաքին Հռոմոց՝ որ զօտարոտի պաշտամունան սասախարդելուին, թոյլ տային եւ բարբարոսաց դիցն երկիր պագանել, թէ միայն հռոմայեցւոց օրէնք յիւրեանց դիսն ընդունիցին զնոսա: Օ՛ի ընդ ամենայն դիսն արդարակորով եւ իրաւախորհ երեւել կամէին, որպէս եւ ընդ համօրէն մարդկան: Արբեմն եւ զՀրէից Աստուածն՝ այլոց եւս դիցն ամենեցունց ի համար խառնէին: Գտանեմք դիր ինչ Յուդիանոսի ուրացելոյ¹², յորում խոստանայ Հրէիցն դքաղաքն սուրբ շինել, եւ զոհս նորօք հանդերձ Աստուծոյ արարչի աշխարհի մատուցանել: Այս հասարակաց իմն մոլորութիւն էր: Յառաջադոյն ասացաք՝ թէ հեթանոսք կամէին երկիր պագանել Աստուծոյ ճշմարտի, այլ ոչ ճշմարտին Աստուծոյ միայնոյ, եւ չեղեն ինչ ձեռնհաս թազաւորքն արդելու, զի մի ի մէջ հռոմայեցւոց կանգնեցցին սեղանքն Վրիստոսի՝ զորոյ ինքեանք զաշակերտան հալածէին:

Եւ արդ զխարդ, ածի՞ն ինչ զմտաւ հռոմայեցիք, եթէ մեծարանս իբրեւ Աստուծոյ գնիցին այնմ՝ զոր դատաւորք նոցա ի տանջանս մահու դատապարտեցին, զոր եւ բազումք ի մատենագրաց նոցա անարգեն եւ թշնամանեն: Բնդ այն չէ պարտ դարմանալ, զի ճշմարիտ են իրքն առանց հակառակութեան:

Եսա զայն ինչ՝ որ առ հասարակաց քինու եւ աւելութեան ասացեալ է, ընտրեցուք ի գործոցն եղելոց՝ ուստի ընծայութիւն ի մէջ բերիցեն: Հռոմք, թէպէտ եւ պարտաւորեցին զՅիսուս, այլ վասն իրիք վնասու

զնա չտալտանեն: Ասան որոյ եւ Պիղատոս տկամայ կամօք գատապարտեաց զնա, նեղեալ յաղաղակէ անտի Հրէիցն եւ ի սպառնալեաց: Այլ աւելագոյն այն վարմանք են՝ զի եւ Հրեայք գլխովին, որ նմա զիտաչին մահն նենդեցին, ի հին մատեանս իւրեանց զմիոյ իրիք դործոյ նորա կենացն յիշատակ չունին. թող թէ զգործ ինչ արժանի մահու՝ զոր նորա դործեալ իցէ: Սատի հաւատարիմ լինի յայտնապէս բան աւետարանին՝ եթէ այն միայն վնաս էր Տեառն մերոյ, զի ասաց զանձնէ՝ թէ Վրիստոսն իցէ որդի Աստուծոյ:

Տակիտոս¹³ պատմել պատմէ զճարչարանն Վրիստոսի, առ Պոնտոս Պիղատոսիւ առ թագաւորութեամբն Տիրերեայ. այլ վնաս ինչ արժանի մահու չյիշէ, բայց միայն զի առաջնորդ լինեալ իցէ աղանդոյ իրիք՝ որ ընդ մարդկութեան ռկայցէ, եւ ատելի մարդկան իցէ: Այսպիսի ինչ վնաս է Վրիստոսի եւ քրիստոնէիցն. զի եւ որ կարի թշնամիքն էին նոցա, բիծ ինչ չկարացին զնել, բայց միայն տարապարտուց բանիւք, ոչ ինչ դործ ճշմարիտ ի մեջ բերեալ, զոր մարթիցի կարծել զնոցանէ:

Թէպէտ եւ ի յետին հալածմանն, երեքարեւր ամօք յետոյ քան զՎրիստոս, իրբեւ չգտին հեթանոսք իւ կրչտամբեացեն զնա եւ զաշակերտս նորա, սիւեցին գիրս սուտս Պիղատոսի, յորս ջանային ցուցանել զվնասն՝ վասն որոյ ի խաչ ելեալ իցէ. այլ քանզի չիք ուրուք ճառեալ յառաջին ժամանակն վասն գրոցն այնոցիկ, եւ զի ոչ առ Վերոնիւ եւ ոչ առ Պոմպեոսիստիւ՝ որ ի սկզբան քրիստոնէութեանն թագաւորէին եւ քրիստոնէից թշնամիք էին, գտանին բնաւ այսպիսի ինչ, յայտ է՝ թէ ինքեանք ըստ կամաց իւրեանց յօդեցին կարկատեցին. եւ այնչափ հաստատուն ինչ բանս հակասակ Վրիստոսի չունէին հռոմայեցիքն, զի յայնպիսի հնարադիտութիւն եկին թշնամիք նորա:

Այս իսկ է առաջին ինչ, արդարութիւնն Վրիստոսի առանց կշտամբութեան: Աւ զմեւսն եւս առ ընթեր դիցուք, զարբութիւն կարգաց նորա եւ զվարդապետութեան՝ որ ծանուցաւն: Սի ոմն ի մեծ թագաւորացն Հռոմոց, Աղէքսանդրոս Սեւերոս անուն¹⁴, վարմանայր ընդ Տէր մեր, եւ տայր դրել ի հրապարակի

դիրս եւ յիւրում պաղատանն զբանս ինչ աւետարանի նորա: Այն թագաւոր յարգէր եւ գովէր, եւ օրինակ առաջի զինքն զգլուշութիւն եւ զհոգարարձութիւն քրիստոնէիցն, յորժամ ձեռնադրէինն պաշտօնեայս սպասուն սրբութեան: Եւ ոչ այսչափ միայն, այլ էր եւ ի պաղատան նորա նմանութիւն մատուան՝ ուր այդունն զոհս մատուցանէր. եւ էր նա անդ նուիրեալ զպատկերս ոգւոցն սրբոց՝ յորոց միջի ընդ Արփեայ զՔրիստոս եւ զԱրբաշամ գնէր: Աւնէր եւ այլ մատուան, կամ զայն՝ որ հռոմերէն ՂԵՐԵՐՈՅԷ կոչեցի, որ խոնարհագոյն էր քան զառաջինն, յորում կայր անդրի պատկեր Աքիւղեայ եւ այլոց արանց մեծամեծաց. այլ Յիսուս յառաջում կարգին եղեալ էր: Օչայս այր մի հեթանոս գրէ, եւ վկայ վաւերական զայր մի՝ որ յԱղէքսանդրի ժամանակն եկաց, ի մէջ մատուցանէ՝¹⁵: Արդ միում զործոյ երկու վկայք. այլ է մեւս եւս իմն զործ՝ որ իբրեւ զնա զարմանալի է:

Թէպէտ եւ Պորփիւրոս, իբրեւ ուրացաւ զքրիստոնէութիւնն, թշնամի եւ հակառակորդ մերում ուճոյս յայանեցաւ, սակայն ի մատենին՝ որ անուանեալ կոչեցի Փիղիսոփայութիւն ի ձեռն հրամանաց պատասխանոյ, խոստովան լինի՝ թէ հրամանք պատասխանոյ ի զիցն վասն սրբութեանն Քրիստոսի պատմեցան¹⁶:

Քաւ եւ մի լեցի՝ թէ ի մոլորեցուցիչ հրամանաց բղձիցն ուսանիցիմք զվասն Արգւոյն Աստուծոյ՝ որ ի ծնանն իւրում լռեցոյց զնոսա: Հրամանքս այս՝ զոր Պորփիւրոս ի մէջ բերէ, կցկցանք են. այլ բարեոք է զոր ինչ վասն Տեառն մերոյ տան իւրեանց զիցն բարբառել հեթանոսք, զիտել: Արդ՝ Պորփիւրոս ասէ, թէ եղևն ինչ հրամանք՝ յորս Քրիստոս այր աստուածապաշտ եւ անմահութեան արժանի կոչեցաւ, իսկ քրիստոնեայքն մարդք պիղծք եւ խաբեալք: Յետ այնորիկ եւ զհրամանն պատասխանոյ Հեկատեայ զիցն գրէ, ուր ծառէ նա ըզ-Յիսուսէ Քրիստոսէ իբրեւ զառնէ միոջէ՝ որ երեւելի իցէ աստուածապաշտութեամբ, որոյ մարմին տանջեցաւ եւ ոգին յերկինս է ընդ ոգւոցն երանելոց: Ասէ զիքն Պորփիւրի՝ թէ Այս ոգի, դէպք ինչ թշուառք լեալ, շնչեաց մոլորութիւն յողիս այնոցիկ՝ որոց ճակատադիր շեռ զպարգեւս զիցն, եւ զգիտութիւն մեծին Արամազդայ. վասն այնորիկ

խկ թշնամիք են նորա զիցն : Աւ յառաջ մատուցեալ զբանսն՝ որ վասն Վրիստոսի էր , առէ , Այլ զգոյշ լին , մի անդոսնեացն դու զնա , եւ սուգ առ միայն ընդ մալրութիւն այնորիկ՝ զորոց զչուառ հրաման ճակատագրին պատմեցի քեզ : Աշաւակութեան բանք են եւ թափուրք ի մտաց . այլ ցուցանեն՝ թէ փառքն Տեառն մերոյ տազնապեցոյց զթշնամիս նորա , տալ նմա գովութիւնս :

Բաց յարարութենէ եւ ի սրբութենէն Վրիստոսի , է մեւս եւս երրորդ՝ որ չիցէ ինչ քան զառաջինն նուազադոյն , այս ինքն սքանչելիք նորա : Յայտ իսկ է՝ եթէ ոչ երբեք յուրաստ եղեն շրեայք ի սքանչելեաց նորա . եւ գտանեմք ի Տազմուզն նոցա¹⁷ զնշանս ինչ յայնցանէ՝ զոր աշակերտք նորա ի նորա անուն զործեցին : Միայն՝ զի վասն զեղելոյ զնոսա , ասացին¹³ թէ կախարզանօք՝ զոր յԱզխատոս ուսեալ էր , արար . կամ յանուն իսկ Աստուծոյ , զի զանունս զայս անձառ եւ անձանօթ՝ որոյ զօրութիւն ամենայն խիք կարօղ է , ասեն , եզիս Վրիստոս ի անգլոջն սրբութեան , բայց թէ զխարզ եւ գիտ , զայն ոք ոչ գիտէ . եւ կամ զի մի ոմն էր ի մարգարէից անախ՝ զորս Մովսէսն եցոյց¹⁹ , որք պատիր նշանօքն ի կռապաշտութիւն ածելոց էին զժողովուրդն : Այլ Յիսուսի՝ որ յաղթեաց կռոյն , որոյ աւետարանն միոյ Աստուծոյ աստուածգիտութեամբ ելից զամենայն երկիր , չեն ինչ պէտք յայնմ մեղադրութենէ ազատանալ . զի որպէս ինքն , նոյնպէս եւ ճշմարիտ մարգարէքն քարոզեցին զաստուածութիւն նորա . եւ ի շրէիցն վկայութենէ այս ինչ յայտ լինի՝ թէ արար Վրիստոս նշանս վասն ըզճշմարտութիւն առաքմանն իւրոյ ընծայեցուցանելոյ :

Վարձեալ յորժամ բիծ զնիցեն նմա՝ թէ կախարզանօք արար , պարտ էր նոցա ածել զմտաւ՝ թէ եւ Մովսէս վասն նորին բամբասեցաւ : Օ՛ի այն իմն հին կարծիք էին եզիպտացւոց , որոց զարմացեալ ընդ նշանսն՝ զոր արար Աստուած յաշխարհին նոցա ի ձեռն առնն այնորիկ , համարեցան զնա ընդ առաջին մոզան : Օ՛տոյն կարծիս եւ ի Պղինիոս եւ յԱպողէոս²⁰ է տեսանել , որք զՄովսէս՝ ընդ Յանէս եւ ընդ Յամբէս երեւելի կախարդան համարին , զորոց Պաւղոս ճառէ²¹ , զորս եւ Մովսէս յամօթ արար նշանօք իւրովք : Այլ գիւրին իմն էր շրէիցն տալ պատաս-

խանի՝ թէ ցնորք եւ պատրանք կախարդացն ոչ ինչ ար-
 քիւնք տեւականք են, եւ ոչ վասն զպաշտօն ճշմարտին Աս-
 տուծոյ եւ զսրբութիւն կարգաց հաստատելոյ, որպէս
 զայն՝ զոր արարն Մովսէս. մանաւանդ՝ զի կարող է Աս-
 տուած ցուցանել թէ աէր է, եւ առնել գործս՝ որում
 ընդդիմակաց զօրութիւն չկարիցէ նմանել: Արդ՝ նոյն
 բանք եւ զՅիսուս ազատ առնեն ի զուր մեղադրութենէն՝
 որ այսու հետեւ, որպէս յառաջագոյն ասոցաք, զսքան-
 չելինն նորա հաստատուն եւ առանց հակառակութեան
 ցուցանելոյ միայն նշանակ է:

Աւարդարեւ այնչափ ինչ հաստատունք են եւ ա-
 ռանց հակառակութեան, զի եւ հեթանոսք չկարացին
 հակառակել, որպէս եւ ոչ Հրեայքն: Աեղսոս²², թշնամի
 եւ հակառակորդ քրիստոնէից, որ եւ անդստին յառա-
 ջնոց ժամանակաց հնարիւք եւ հայթայթանօք դոսայ ընդ
 նոսա, յուղեալ մեծաւ փութով եւ հոգարարձութեամբ
 զամենայն՝ որ ինչ նոցա վնաս մարթ էր լինել, զամենայն
 նշանն Տեառն մերոյ ոչ ուրացաւ, եւ ընդ Հրեիցն պատ-
 ճառի այսպէս՝ թէ ուսաւ Յիսուս զճաճուկս Ազիլպտա-
 ցւոյն, այս ինքն զմեղութիւն, եւ թէ կամէր Աստուած
 զանձն կարծեցուցանել սքանչելեօքն՝ զոր անօրէնութեան
 արուեստին արար: Աւ զքրիստոնեայս վասն նորին պատ-
 ճառանաց կախարդս համարեին. ունիմք դարձեալ զբանս
 ինչ Յուդիանոսի ուրացելոյ՝²³ որ զնշանօք Տեառն մերոյ
 արհամարհէ, այլ չլինի ինչ երկմիտ զնոցանէ: Օչոյն եւ
 Վոդուսիանոս առնէ յիւրում՝ թղթին՝ զոր առ սուրբն
 Աւգոստինոս գրեաց²⁴. եւ այսպիսի բանք յաճախեալ
 էին ի մէջ հեթանոսաց:

Արդ՝ չէ ինչ պարտ զարմանալ, եթէ որ սովորքն էին
 առնել զիս ի մարդկանէ՝ յորս չքնաղ ինչ իրս տեսանէին,
 յօժարեցին զՅիսուս ի մէջ զիցն իւրեանց կարգել: Տի-
 բերիտս վասն համբաւոյն՝ որ նմա ի հրէաստանէ հասանէր,
 յօժարեցուցանէր զճերակոյտն զից պատիւ Վրիստոսի
 շնորհել: Աւ այս ոչ կեղծիք ինչ են, զի եւ Տերաուղեա-
 նոս զնոյն իրրեւ զայսանի ինչ եւ զճանօթ պատմէ ի պա-
 զատանսն²⁵ զոր յեկեղեցւոյ անուն Տերակուսին մատու-
 ցանէ. որ արդարեւ չկամէր տկարագոյն զիւր հաստատուն
 բանն այնպիսի իրօք առնել, զորոյ զիւրին էր զստութիւն

ի մեջ բերել : Այս եթէ զհեթանոսի ուրուք զվկայութիւն որ կամիցի, ասացէ՛ Վամգրիդիոս²⁵ ի մտոյ՝ եթէ Ադրիանոս կանգնեաց մեհեանս Վրիստոսի, որ մինչեցայնժամ, յորժամ գրէրն, կային. եւ եթէ Աղէքսանդրոս Աւերոս, յետ առանձինն նմա մեծարանս գնելոյ, կամէր նմա ի հրապարակի բազին կանգնել եւ ի համար գիցն խառնել :

Արդարեւ անիրաւ իսկ է չկամել հաւատալ ինչ զՎրիստոսէ, բայց միայն զոր օտարքն գրեն գնմանէ, եւ ոչ նորին աշակերտք. քանզի այն իսկ է հաւատս յանհաւատից խնդրել, կամ զփոյթ եւ զհաւատախ յայնցանէ՝ որոց զայլ իմն իրօք պատաղեալ, անխտիր ինչ զկրօնսն համարէին : Այլ ճշմարիտ է թէ այնչափ պայծառացան փառքն Վրիստոսի, զի եւ աշխարհս ոչ կարաց վկայութիւն ինչ գնմանէ զվկայել. եւ ես այլ ինչ քան զթաղաւորացն վկայութիւն հաւատարիմ չկարեմ յառաջ բերել :

Այլ զիտեմ՝ զի եւ այլ եւս ինչ ունէին ի մտի : Օ՛հ ի պատիւն՝ զոր Վրիստոսի գնէին, խառն էին եւ քաղաքաց կարգք. խորհէին՝ զի ամենայն պաշտամունք ի մի միարանութիւն եկեալ խառնեցին, եւ ամենայն աղանդոցն զիքն հասարակաց լինիցին : Իսկ քրիստոնեայք զայնպիսի խառնակ պաշտօն չառնուին յանձն, եւ որպէս զաստեղն հռոմայեցոց, նոյնպէս եւ զգեջանելն արհամարհեցին : Այլ կամեցաւ Աստուած, զի վասն այլ ինչ իրաց մերժեցին հեթանոսք զտաճարսն՝ զոր սահմանէին Վրիստոսի թաղաւորքն : Վուրմք կոոցն, որպէս այրն հեթանոս՝ զոր բազում անգամ յիշեցաք, պատմէ²⁷, ասնն ցարքայ Ադրիանոս. Աթէ նուիրես դու զմեհեանս զայստոսի՞ զոր շինեցեր, ի պէտս պաշտաման քրիստոնէիցն, այլ ամենայն մեհեանք անապատ լինիցին, եւ ամենայն մարդ յանձն առնուցու զօրէնս քրիստոնէութեան : Ինքն իսկ կռապաշտութիւն ի միա առնոյր, թէ ի կրօնսն մեր էր ինչ զօրութիւն՝ որում անհնարին էր ի պարտութիւն մատնել, եւ աստուածքն սուտք չկարէին զգէմ ունել զօրութեանն, եւ նոյն արդարացուցանէր զճշմարտութիւն բանին առաքելոյ²⁸ եթէ Օ՛հնչ միաբանութիւն է Վրիստոսի ընդ բեղիարայ. կամ զի՛նչ նմանութիւն է տաճարի Աստուծոյ՝ մեհեանայ :

Արդ՝ պաշտօն հեթանոսութեանն ինքնին անձամբ յանձնէ կշտամբեալ, ի ձեռն խաչին զօրութեան կործանէր. եւ այնպէս միութիւն աստուածութեան հաստատէր, մինչեւ ապա կարծե՛լ թէ չէ ինչ անտի օտար կռպաշտութիւնն: Աստուծոյ բնութիւն, ասէ՞²⁹, մեծ է եւ սփիռ եւ տարած, եւ միով անուամբ եւ միով եւ եթ կերպարանօք չմարթի մեկնել. իսկ Արամաղդ, ասէ, եւ Արէս եւ Հերա եւ այլ եւս զիք, մի աստուած են, որոյ անկող զօրութիւնք բազում եւ ազգի ազգի անուամբք երեւին եւ յայտ լինին: Այլ յորժամ հարկ լինէր ի պղծակց վնասանութիւնս զիցն գալ, եւ յանօրէն ազգահամարս նոցա, եւ յանամօթութիւնս, ի տօնս տարեկանաց նոցա, եւ ի խորհուրդս նոցա, որ յառաւպելաց անտի եւ եթ ունէին զհաստատութիւնն, ամենայն կրօնք նոցա այնու հետեւ յայլասացիկ յորջորջումն շրջէին. մի Աստուածն, աշխարհս էր կամ արեգակն. եւ աստեղք, եւ օդք, եւ հուր, եւ ջուր, եւ հող, եւ ազգի ազգի ժողովք նոցա, ծածկեալ էին անուամբք զից եւ պղծութեանց նոցա: Ո՛ տկար եւ անգօր պատասխանիք անպի գայթակղութեան էին առապելքն, եւ ցուրտք եւ բռնաղբօսեալք ամենայն այլակերպ յորջորջմունքն. եւ զի՞նչ այլ ինչ որ ի նոցանէ գամներ, եթէ ոչ թէ մի Աստուածս այս՝ տիեզերք են հանգերձ ամենայն մասամբք իւրովք. որպէս զի հաստատութիւն կրօնից՝ բնութիւնս էր, եւ հանապաղ արարածք երկրպագութիւն առնուին փոխանակ ընդ արարչին:

Այս ամենայն բանք ի չմեղադրութիւն կռպաշտութեան³⁰, թէպէտ եւ ի փիղիսոփայութենէ անտի ստոյիկեանց էին, զմիտս փիղիսոփայից չկարացին հաճել: Աղեսոս եւ Պորփիւրոս այլ եւս օգնականութիւնս յուսումն Պրատոնի եւ Պլեթազորայ խնդրեցին³¹, եւ տես զկարդ զԱստուծոյ միութիւնն ընդ բազմութեան խառնազանձ զիցն միաբանէին: Մի գլխաւոր Աստուած է, ասեն³², այլ այնչափ մեծ է՝ զի ընդ մանր մանր իրս զանձրն չխառնէ. բաւական համարեալ զերկինս եւ զաստեղս առնել, չհամարեցաւ արժանի ձեռն ի ստորին աշխարհս մխել, եւ եթող այնոցիկ՝ որ խոնարհադոյն քան զնա էին, զերկիրս ի յարդ եւ ի զարդ եւ ի կերպարանս ածել. եւ

մարդ, թէպէտ եւ վասն զնա ճանաչելոյ ծնաւ, այնու՝ զի մահիանացու է, չէ ինչ գործ արժանի ձեռաց նորա: Սասն այնորիկ իսկ անմատոյց է նա մերում բնութեանս, բնակեալ է նա ի բարձունս վերագոյն եւ բարձրագոյն քան զմեզ. եւ ոչիքն երկնաւորք՝ որ արարինն զմեզ, լինին միջնորդք առ նմա, եւ վասն այնորիկ հարկ է եւ նոցա երկիր պապանել:

Այլ գործ աւելի համարիմ, կալ եւ կուուել ընդ դանդաչանաց բանից պղատոնիկեանցն, որ անձամբք յանձանց կործանին. խորհուրդն Քրիստոսի ի հիմանց քակեաց զնոսա: Ասուցանէ մարդկան խորհուրդս³³, եթէ Աստուած զմարդիկ՝ զոր ըստ պատկերի իւրում արար, ոչ խտտէ. իսկ եթէ միջնորդ եւս պիտոյ լինիցի նոցա, այն՝ ոչ վասն նոցա բնութեան ինչ է, զոր Աստուածն արար որպէս եւ զայլ բնութիւնն, այլ վասն մեղացն իւրեանց՝ որում ինքեանք միայն եղեն գտիչք. մանաւանդ զի բնութիւն իսկ նոցա ոչ ինչ այնչափ հեռացուցանէր զնոսա յԱստուծոյ, մինչ զի չգարշեցաւ Աստուած միաւորել ընդ նոսա մարդն լինելով. եւ միջնորդ ետ նոցա, ոչ զուգիսն երկնաւորս՝ զոր փիղիստփայք կոչեն դեւս, զոր եւ զիրք հրեշտակս անուանեն, այլ զայր մի՝ որ զգորութիւն աստուածութեանն ի տկար բնութիւնս մեր յաւել, եւ արար բժշկութիւն տկարութեամբ մերով:

Իսկ եթէ տարապարտ հպարտութիւն պղատոնիկեանցն չմարթէր ցածնուլ եւ իջանել մինչեւ ցխոնարհութիւն Բանին մարմին եղելոյ, գէթ չէր պարտ նոցա ի վերայ հասանել՝ եթէ մարդ, թէպէտ եւ փոքր ինչ խոնարհագոյն քան զհրեշտակս է, մարթի՝ թէ իրբեւ զնոսա զԱստուած ստանայցէ. որպէս զի եղբայր իցէ նա նոցա եւ ոչ ծառայ, եւ չպարտիցի նոցա երկիր պապանել, այլ նոքօք հանդերձ հասարակ այնմ՝ որ զնոսա եւ զնոսա ըստ պատկերի իւրոց կերպարանաց արար, երկիր պապանել: Սասն այսորիկ ոչ միայն անարգութիւն է, այլ եւ անհարին ապախատուորութիւն ազգի մարդկան, այլում ումիք քան զԱստուած զոհս մատուցանել. եւ քան զհեթանոսութիւն այլ ինչ չգոյր աւելի կուրութեան գործ, զի փոխանակ նմա միայնոյ մատուցանելոյ զպաշտօնն, զիւաց մատուցանել:

Յայտ վայրի կռապաշտութիւն՝ որ յանհնարին տաղնապ նեղութեան անկեալ թուէր, ամենեւին եցոյց զտխարութիւնն: Օ՛ի իրրեւ մերձ էր վախճան լինել հաւածանացն, Պորփիւրոս տաղնապեալ ի քրիստոնէից անտի, հարկեցաւ ասել թէ չէ մեծ քան զամենայն պաշտօն զոհն: Եւ ան յոր վայր տարաւ հասոյց զանհամ մորտութիւնն: Եւս Աստուած, ասէ³⁴, բարձրեալ, չընդունի զոհս. ամենայն՝ որ ինչ հիւթեղէն է, պիղծ է առաջին նորա, եւ զնա նմա չմարթի մատուցանել: Եւ զբանն իսկ չէ պարտ ի նորա պաշտօնն առնուլ, քանզի եւ բարբառ ինչ մի մարմնաւոր է. լռութեամբ պարտ է նմա երկիր պաղանկ եւ խորհրդովք լոկովք. եւ ամենայն այլ ինչ պաշտօն անարժան է մեծութեան նորա:

Ս ասն այնորիկ այնչափ մեծ էր Աստուած, զի անարժան էր նմա գովութիւն. զոր ինչ մեքս զնորա մեծութեանէ ածեմք զմտաւ, զայն բստ մերում կարի յայանել, մեղք էին. զոհ՝ որ մերոյ հնազանդութեան եւ խոստովանութեան տերութեան նորա նշանակ էր, չէր ինչ անկ նմա: Օ՛այս այսպէս Պորփիւրոս յայանապէս ասէր. եւ այս զի՛նչ այլ ինչ իցէ, թէ ոչ՝ զկրօնան եղծանել, եւ զայն՝ զոր Աստուած աստուածոց որ ճանաչէր, առանց պաշտաման թողուլ:

Այլ յաշան՝ զոր յամենայն մեհեանս հեթանոսք առնիցեն, առ ի՛մ իցէ: Պորփիւրոս եւ զայնր եւս զխորհուրդն եգիտ. Են, ասէ³⁵, այսք պիղծք, մորբեցուցիչք, չարք եւ չարչարիչք՝ որ հպարտացեալ զգից պատիւ կամին ըմբռնել, եւ պաշտօն ի մարդկանէ առնուլ: Հարկ է զնոսա զոհիւք ողորել, զի միմեզ մնաս առնիցեն: Ամանք՝ որ խնդագինքն են, տեսլեամբք եւ խաղօք ցածնուն. իսկ կիսոցն բնութիւն, քանզի դժնդակ է, զձենձերոյ հոտ կամին, եւ յորժամ արիւն նոխաղաց հեղուցու եւ միս պատրուճակաց յօշիցի, նորօք բուժանին:

Իսկ արդ՝ զի՛նչ շահ իցէ, որ օգուտ ընդ այնպիսի տխմարութեան բանից կռուել: Եւսչափ ինչ՝ զի քրիստոնեայք յաղթէին. եւ այն կայր մնայր հաստատուն, թէ ամենայն դիք՝ որոց զոհս մատուցանէին հեթանոսք, այսք չարք էին, որ հպարտացեալ զանձինս առ աստուածս ունէին. մինչև եթէ ընդ ինքն իսկ ընդ կռապաշտութիւն

որ հայեր, տգիտութեան միայն դործ թուեր. այլ թէ ի սկիզբն որ նայեր, դործ ինչ էր անդուստ ի հեռուստ կարգեալ եկեալ, եւ ըստ ամենայն չափ անցեալ զանցեալ դասներ ի դիւաց չարաց դրդելոյ: Օչյս այսպէս հանապաղ համարէին քրիստոնեայքն, զնոյն եւ աւետարանն ուսուցանէր, եւ սաղմոսանուաղն նուազէր³⁶ թէ Ամենայն կուռք հեթանոսաց դեւք են, եւ Տէր զերկինս արար:

Այլ ո՛հ անհարկն կուրութեան մարդկան. զի կուսպաշտութիւն, յետ ի մեծ տաղնապ հասանելոյ եւ անձամբ յանձնէ յանթ լինելոյ, դեռ եւս կայր կանգուն: Քանզի բաւական էր վասն զմարդիկ ի կուսպաշտութիւն յօժարեցուցանելոյ, սակաւ ինչ պաճուճանօք պաճուճել զնա, եւ հեշտական եւ քաղցրախտոն բանիւք ճառել զնմանէ: Պորփիւրոս զարմանալի երեւէր. Յամբղիկոս նորին աշակերտ, մարդ աստուածեղէն կարծէր, քանզի դիտէր զմիտ վարդապետին, բանիւք՝ որ խորհրդականք կարծէին, ծածկել եւ զեղչել, թէպէտ եւ արդեամբք շնանակիցեն ինչ: Յուղիանոս ուրացեալ, թէպէտ եւ կորովի իսկ էր մտօք, ըմբռնեցաւ ի պաճուճեալ բանից անախ. եւ ինքեանք իսկ հեթանոսք զնոյն պատմեն³⁷: Արիպեցուցանէին զմարդիկ հմայքն ճշմարիտք կամ սուտք՝ որովք փիղիսոփայքն պարծէին, եւ անկարգ վշտամբերութիւնք նոցա, եւ ծաղրալից ժուժկալութիւն նոցա, զի եւ զընչաւորաց միս ուտել մեղս համարէին, եւ աւելորդ սրբութիւնքն նոցա, եւ խորհուրդք նոցա՝ որ ի սնտախն յառեալ հայէին, եւ բանք նոցա յողոճողք եւ դողոճունք՝ որք շքեղքն կարծէին: Այլ բուն իսկ՝ սրբութիւն կարգաց քրիստոնէութեան, որ հրաման տայր զկամս անձանց արհամարհել. եւ առաւել քան զայս ամենայն, խոնարհութիւն՝ որ քրիստոնէութեան հիմն էր, խրտուցանէր զմարդիկ. իսկ զէն եւ զարդ կուսպաշտութեանն, թէ կարիցեմք առնուլ ի միտ, հպարտութիւն եւ անառակութիւն եւ անկարգութիւն միայն էր:

Օ կուսպաշտութիւն հանապաղ ուսմամբ իւրով եւ առաւել համբերութեամբն խլէր եկեղեցի: Այլ դեւք փնասակարք՝ որոց հանապաղ խարեալ էր զմարդիկ եւ ի կուսպաշտութիւն արիեալ, չմոռացան զբարս չարութեա-

նրն: Յարուցին նորա յեկեղեցւոջ զհերձուածսն՝ զորոց յառաջադոյն ճառեցաք: Մարդք ընդվայրախոյզք, սնապարծք, խռովիչք, կամեցան առնել անձանց անուն ի մէջ հաւատացելոցն, եւ չհամարեցան բաւական զգեղեցիկ եւ զքաղցրախառն իմաստութիւնն՝ զոր առաքեալ բազում փութով քրիստոնէիցն պատուիրէր³³: Յառաջադէմ մատչէին ի խորհուրդսն, եւ ջանային տառապէին տկարութեան մաօք մերովք չափել. փիղիսոփայք նորք՝ որ զմարդկեղէն իմաստութիւն ընդ հաւատոց խառնէին, եւ ձեռն արկանէին բառնալ ի միջոց զգժուարինսն քրիստոնէութեանն, չկարացեալ տանել յիմարութեանն՝ զոր աշխարհս յաւետարանի դասնէր: Ասն որոց կարգաւ իմն ընդ ամենայն բան հաւատոց մերոց բախէին. աւրարչութիւն աշխարհիս, օրէնքն Սովսիսի՝ որ հիմն իսկ է մերոց օրինացս, աստուածութիւնն Վրիստոսի, եւ մարմնաւորութիւն նորա, եւ շնորհքն նորա, եւ սրբութիւնք նորա, եւ ամենայն ինչ, քակելոյ պատճառք եղեն, որ գայթակղութեան իսկ են: Անդոս եւ այլք վասն նոցին յանդիմանէին զմեզ³⁰, եւ կռապաշտութիւն յաղթել կարծէր. զքրիստոնէութիւնն՝ նոր ինչ աղանդ փիղիսոփայութեան, հանդոյն այլոց աղանդացն, համարէին հեթանոսքն, եւ իրբեւ զնոսս ի բազում յայլ եւս ազանդս կոտորեալ: Այլեղեցի՝ մարդկօրէն ինչ գործ թուէր նոցա, մերձ անձամբ յանձնէ կործանել: Աւ անտի հաստատէին՝ թէ ի կրօնսն չէ պարտ վերագոյն քան զմեր նախնին ճարտարել, եւ ոչ ժառել յանդգնել որպէս թէ զաշխարհ փոփոխել ինչ որ կարիցէ:

Այլ յայնպիսում խառնակութեան աղանդոցն՝ որ պարծէինն թէ քրիստոնէայք իցեն, չեթող Աստուած զեկեղեցի իւր: Ատ նմա նշանակ ինչ ճոխութեան⁴⁰ զոր հերձուածքն չկարէին ունել: Օչի էր նա կաթուղիկէ եւ տիեզերական, զամենայն ժամանակսն ինքն առեալ ունէր, եւ ընդ ամենայն կողմանս տարածանէր. առաքելական էր նա, կարդ, եւ պայազատութիւն, եւ միարանութիւն վարդապետութեան, եւ առաջին իշխանութիւն նմա անկ էր: Ամենքին՝ որ զնա թողուին, յառաջադոյն ծանուցեալ էին զնա, եւ զնորակրօնութեան եւ զպատասաբութեան կեղտ յանձանց ի բաց չկարէին թօթափել: Աւ

Հեթանոսք իսկ ընդ նա իրրեւ ընդ արմատն նայէին, կամ իրրեւ ընդ ողջ իսկ մարմին՝ ուստի հասակոտորք հասեալ իցեն, եւ իրրեւ ընդ բունն՝ որ յետ ոստոցն քշտելոյ ողջ կայցէ :

Ահաոս՝ որ կշտամբեալ յանդիմանէր զքրիստոնեայս վասն բաժանման նոցա, ի մէջ այնչափ անչափ եկեղեցեաց հերձուածողացն զորս տեսանէր թէ յառնէին, մի եկեղեցի հզօր յայլոց ամենեցունց զատեալ տեսանէր, նմին իրի իսկ եւ եկեղեցի մեծ կոչէր զնա : Ան, ասէ՛, ի քրիստոնէից միջն՝ որ զարարին ոչ ճանաչեն, եւ զառչութիւնս Հրէիցն խոտեն, զմարկիոնեացոցն կամի յայտ առնել . այլ զայն ամենայն, ասէ, մեծ եկեղեցի ընդունի :

Ի ժամանակի՛ զե խռովութիւնս յուզէր Պաւղոս սամոսացի՛, արքայ Արեղիոս գիտաց վազվաղակի ընարել զճմարիտ եկեղեցի քրիստոնէիցն՝ որում անկ էր աուն եկեղեցւոյն, որ կամ տեղե աղօթից էր եւ կամ վանք եպիսկոպոսին : Հրաման եւ դարձուցանել զտեղին առ նոսա՝ որ ի հաղորդութեան էին ընդ եպիսկոպոսաց իտաղացւոց եւ հռոմայեցւոց աշխարհին . քանզի ետես՝ թէ յամենայն ժամանակի յաճախութիւն քրիստոնէիցն ի նմին կցորդութեան է :

Մինչ զեռ Պոստանդոս թագաւոր զընաւ եղճանէր յեկեղեցւոջ, եւ խառնակէր եւ խռովէր արխանտայ թեկն ածելով, Ամիանոս Մարկեղինոս՝ թէպէտ եւ հեթանոս իսկ էր, ծանեաւ՝ եթէ խտտրեալ է թագաւորն յուզիլ ճանապարհէ կրօնիցն քրիստոնէից, որ ինքնին պարզ եւ մեկին է, ի հրամանակարգ բանից վարդապետութեան եւ ի վարս զնացից իւրոց : Քանզի մեծ իմն փառաւորութիւն եւ ուղղութիւն ունէր ճմարիտ եկեղեցի՛ որում հերձուածքն չկարէին նմանել, եւ ոչ ծածկել ինչ զնա եւ թագուցանել . մանաւանդ թէ եւ ինքեանք իսկ ակամայ վկայութիւն կաթուղիկէ եկեղեցւոյ տային : Ետ Ամիանոս Մարկեղինոս՝, եթէ Պոստանդոս՝ որ զսուրբն Աթանաս հալածէր, վասն Չատաղով հին հաւատոցն լինելոյ, ցանկացեալ էր զե դատապարտեցէ զնա իշխանութեամբ՝ զոր եպիսկոպոսն հռոմայեցւոց ունէր վերագոյն քան զայլ եպիսկոպոսուանս : Երդ՝ այսպիսի հաստատութիւն իշխանութեան խնդրելով, տայր առ-

նուլ ի միտ հեթանոսացն իսկ թէ զինչ պակաս իցէ իւրու՛մ աղանդոյ, եւ մեծարանս զնէր եկեղեցւոյ՝ ուստի արիանոսքն ճեղքեալ էին. վասն որոյ եւ հեթանոսք իսկ ճանաչէին զկաթուղիկէ եկեղեցի: Եթէ հարցանէր որ ցնոսա՛ եթէ ո՛ւր իցեն ժողովք կաթուղիկէ եկեղեցւոյ, եւ ո՞յք նորա եպիսկոպոսքն իցեն, չէին ինչ անտեղեակք:

Իսկ հերձուածքն, թէպէտ եւ բիւրապատիկ հնարէին, չկարէին մերժել յանձանց զանուն առաջնորդաց իւրեանց: Սարեղիանոսքն, եւ պաւղիստեպքն, եւ արիանոսք, եւ պեղագիանոսք, եւ այլք, թշնամանս համարէին զանուն հերձուածոյն՝ զոր անուանէինն նոցա. այլ մարդիկ հակառակ կամաց նոցա, ըստ ընդեւրական սովորութեանն, զիւրաքանչիւր աղանդ ի նմանէ՛ որ այնր գրտիչն եղեւ, զատանէին:

Եւ մեծի եկեղեցւոյն՝ որ կաթուղիկէն է եւ առաքելական, չեղեւ ինչ հնար զայլ որ առաջնորդ անուանել, բայց միայն զՅիսուս Վրիստոս, եւ ոչ զայլ որ առաջին հովիւ բաց յառաքելոց ցուցանել, կամ այլ ինչ անուն քան զոր ունէրն զնել: Վասն որոյ որչափ եւ հնարէին հերձուածողք, զնա ի հեթանոսաց ծածկել ոչ կարէին: Տարածանէր նա զգիրկս իւր ընդ ամենայն երկիր. ամենեցուն զոտհ տուեալ անդր խուռնընթաց առ հասարակ զիմէին: Թներեւս ոմանք կորնչէին ի շաւիղսն կամակորս. այլ կաթուղիկէ եկեղեցի արքունի ճանապարհ էր, յոր մտանէին բազմադոյնք ի նոցանէ՛ որ զՎրիստոս ինչդրէին, եւ փորձ իսկ իրացն եցոյց՝ եթէ նորա էր ժողովել զհեթանոսս:

Եւ թաղաւորք անհաւատք ամս ի դիմի հարկանէին մեծաւ սաստկութեամբ: Արիղենէս⁶⁵ պատմէ՛ թէ սակաւք ի հերձուածորաց վասն հաւատոց չարչարեցան: Սուրբն Յուստինոս⁶⁶ որ երիցագոյն է քան զնա, ասէ՛ թէ հալածումն ոչ նեղէր զՄարկիոնս եւ զայլ եւս հերեւեիկոսսն: Վանդի զայն եկեղեցի հալածէին հեթանոսք, զոր ընդ ամենայն երկիր տարածեալ տեսանէին, եւ զնա միայն եկեղեցի Վրիստոսի գիտէին: Չի՛նչ վնաս էր՝ թէ զոսսս ինչ որ ի նմանէ կոտորէր. զի հիւթն եւ պարարտութիւն նորա դեղեցիկ չցամաքէր, եւ այլ ուստեք սփռէր. եւ ի հատանել աւերորդ ոստոց նորա, պը-

Գ Լ Ո Ի Խ ԺԳ

ՊԵՍՆ ԿԵՐԻՒ ԿՐՈՆԻՑ ԵՒ ՊԵՍՆ ՀԵՐԵՄԵՏՈՒԹԵԱՆ ՈՐ ԸՆԴ ԳԻՐՈ

ԿՏԱԿԵՐԵԱՅԵՆ Ի ՄԻՋԻ ԿԵՑ

ԼՅԱՍ Եկեղեցի՛ որում հանապաղ պատերազմ ի դիմի հա-
րաւ եւ ոչ երբեք պարտեցաւ, յամենայն ժամանակի նը-
շան յաւիտենական է, եւ վկայութիւն երեւելի՛ անփո-
փոխ խորհրդոցն Աստուծոյ: Ի մէջ խոռվութեան մարդ-
կօրէն իրաց, կայ նա մեծաւ զօրութեամբ յիւրում կայի
եւ ի հաստատութեան. մինչ զի ի հազար եւթն հարեւր
ամաց հեռէ կարգաւ մի ըստ միոջէ՛ մինչեւ ց՛Քրիստոս ե-
լանէ, յորում զպայազատութիւն հնոյ ժողովրդեանն ժո-
ղովեալ՝ ընդ մարդարէսն եւ ընդ նահապետս խառն զը-
տանի:

Ս ան որոյ այնչափ նշանքն զարմացուցիչք՝ զոր ե-
րբայեցիք իւրեանց իսկ աջօք տեսին, եւ մերոց եւս հաւա-
տոցն այժմ ի վկայութիւն դան: Եւ Աստուած մեծն եւ
սքանչելարարն՝ որ զայնպիսի սքանչելիսն եցոյց առ զիւր
միութիւնն եւ զմեծազօր զօրութիւն ընծայեցուցանե-
լոյ, զի՛նչ այլ ինչ մարթ էր վասն զիշատակս իրացն
պահելոյ սունել, քան զայն՝ զի ետ նա ի ձեռս ողջոյն
ազգի միոջ՝ զմատենագրութիւնս իրացն որ գրեցան ըստ
կարգի ժամանակացն: Օայս ունիմք ի դիրս հնոց կտա-
կարանացն, որ քան զամենայն գիրս՝ որ յաշխարհի ի-
ցեն, հնագոյնք են. եւ յամենայն դրոց հնոցն ժամա-
նակաց սա միայն է, յորում կայ աստուածածանօթ զի-
տութիւն եւ հրաման պաշտամանն Աստուծոյ, զոր եւ
հրէական ժողովուրդն մեծաւ զգուշութեամբ եւ բա-
զում հոգարարձութեամբ հանապաղ պահէր: Եւ յայտ
իսկ է՝ եթէ ժողովուրդս այս միայն ի սկզբանէ ծա-
նեաւ զԱստուած զարարիչ երկնի եւ երկրի վասն որոյ
պարտ էր եւ սմա միայն աւանդապահ աստուածեղէն
խորհրդոցն լինել: Արպէս եւ արդեամբք իսկ այնպէս
զգուշութեամբ պահեաց զնոսա, զի չեք այլ ինչ ազգ՝
որ նոյնպէս պահեալ իցէ:

Բազում ժամանակք են յորմէ հեռէ մատենաքն՝
զոր եգիպտացիք եւ այլ եւս աղղք աստուածեղէնս կո-

չէին, կորեան. եւ հաղիւ յիշատակք ինչ շփոթեալք ի նախնեաց պատմութիւնս կան: Սեհնական մատենք հռոմայեցւոցն՝ յորս Նումա առաջնորդ կրօնիցն նոցա, գրեալ էր զխորհուրդս պաշտամանն, ի նոցունց խակ ի հռոմայեցւոց կորեան¹, զի ետ այրել ձերակոյտն որպէս թէ եղծիչք եւ ապականիչք կրօնիցն իցեն: Յետոյ նուքին խակ հռոմայեցիք թողին կորնչել գրոցն սիրիլայց՝ որ յամայր ամս ի միջն նոցա իրրեւ զմարդարեականս մեծարէին. եւ համարէին թէ կայցեն անդէն հրամանք անմահ գիցն վասն թագաւորութեանն նոցա, այլ չհանէին ի դուրս ի գրոց անտի ոչ միայն մատենան մի, այլ եւ ոչ մի բան:

Հրեայք միայն էին, որոց նուիրական գիրք որչափ ծանօթ եւ յայանի էին, գոյնչափ եւ պատուականք էին եւ մեծարոյք: Յայնչափ հնոց աղղաց անտի՝ նոքա միայն զառաջին յիշատակս կրօնիցն իւրեանց պահեցին, թէպէտ եւ լի են մատենքն պատմութեամբք շարեայ գործոց նոցա եւ անօրէնութեան հարցն նոցա: Աւ այժմ խակ նոյն ժողովուրդ կայ ի վերայ երեսաց երկրի, զի առ ամենայն ազգս՝ յորս ցրուեալն է, հանդերձ կարգաւ կրօնիցն, տարցի զնշանս եւ զքանչկիս եւ զկանխաստութիւնս՝ որ մերոց կրօնիցն հաստատութիւնք եւ անբութիւնք լինիցին:

Իսկ յորժամ եկն եհաս Յիսուս Քրիստոս՝ որ առաքեցան ի Հօրէ, ընուլ զաւետիս օրինացն, եւ զիւր առաքումն եւ զիւրոց սեպհականաց աշակերտացն ի ձեռն նորացոյց քանչկեացն հաւատարիմ արար, նոյնպէս եւ նոքա ճշգիւ գտակաւ գրեցան ի մատենի, եւ ընդ ամենայն երկիր սփռեցան: Աւ ժամանակքն եւ արքն եւ տեղիքն բազում ինչ նպաստ եղեն, զի գիւրաւ քննել մարթայցեն, որք զիւրեանց փրկութենէ հոգ ի մտի ունիցին: Տեղեակ եւ հմուտ եղեն մարդիկ եւ հաւատացին. եւ եթէ սակաւ ինչ քննեալ ուրուք իցէ զհին յիշատակարանս եկեղեցւոյ, խոստովան լինիցի՝ թէ չէք ինչ երբեք գործ քան զնոյն աւելագոյն խորհեալ եւ ծանուցեալ:

Այլ ի համեմատութեան՝ զոր ունին ընդ միմեանս գիրք երկոցունց կտակարանացն, է ինչ ընտրութիւն ի

միջի, զոր պարտ է ճշգիւք քննել. քանզի Հին կտակարանք յայլ եւ այլ ժամանակս կարգեցան: Օչ այլ ժամանակք Մովսիսի են, եւ այլ Յեսովայ եւ զաստուորաց, եւ այլ Թադաւորաց. այլ այն ժամանակ է՝ յորում եւ ժողովուրդն յԱզգիպոտոէ եւ զօրէնսն ընկալաւ, եւ այլ այն՝ յորժամ եմուտ յերկիրն աւետեաց, եւ այլ դարձեալ այն՝ յորժամ դադարեալ հանգեաւ երեւելի նըշանօքն: Ասան հաւանեցուցանելոյ զԹերահաւատ ժողովուրդն՝ որ յերեւելիան բեւեռեալ էին, երկայնաձիգ ժամանակաւ մատակարարեաց Աստուած զքանչելիսն եւ զմարդարէան իւր, զի ստէպ ստէպ յիշեցուցէ նոցա զերեւելի վկայութիւնս ճշմարտութեանցն իւրոց: Իսկ ի նորումս յայլ իմն ճանապարհ եկն: Չկամի այլ ինչ նորոգ յայտնել Աստուած յետ Վրիստոսի, ի նմա իսկ է կատարումն եւ լրումն. եւ ամենայն գիրք աստուածեղէնք՝ որ ի նորումս կարգեցան, ի ժամանակս առաքելոցն կարգեցան:

Այս ինքն՝ զի վկայութիւնն Վրիստոսի, եւ նոցա՝ զորս վկայս յարութեան իւրոյ ընտրեաց Վրիստոս, շատ եւ բաւական եղև եկեղեցւոյ Վրիստոսի: Ամենայն՝ որ ինչ յետոյ եկն, շինեաց զեկեղեցի. այլ զայլ ինչ իբրև ամենեւին յԱստուծոյ ազգեցութենէ չհամարեցաւ եկեղեցի, բայց զոր առաքեալքն դրեցին, կամ զոր նոքա իւրեանց ճոխութեամբ հաստատուն եւ հաւատարիմ գործեցին:

Այլ յընտրութեանս յայսմ՝ որ ընդ գիրս երկոցունց կտակարանացն ի միջի կայ, հանապազ զայս կարգ զարմանալի անշարժ կալաւ Աստուած, զի զիրսն յիւրաքանչիւր ժամանակի՝ յորում գիպէինն, տայր մատենադրել, կամ մինչ դեռ նոր իմն էին յիշատակք իրացն: Ասան ուրոյ որ գիտէինն զնոսա, գրեցին զնոսա. եւ որ գիտէինն զնոսա, ընկալան զգիրսն՝ որ վկայէինն զնոցանէ. եւ սոքա եւ նոքա առ յապա եկելոցն իւրեանց ժառանգութիւնս պատուական թողին զնոսա. եւ զաւակն աստուածապաշտ պահեաց զնոսա:

Այսպէս բովանդակեցան գիրք հնոց եւ նորոց կտակարանացն, որ իսկզւանէ իբրև յամենայնի ճշմարտոք եւ աստուածատուրք համարեալ են, եւ այնպէս մեծաւ

փութով եւ զգուշութեամբ պահեալ՝ զին ամպարշտութիւն իսկ համարեալ էր զմի նշանագիր եւ եթ շրջել կամ փոփոխել :

Այսպէս հասին մինչեւ ցմեզ կտակարանքն միշտ սուրբ եւ նուիրական եւ անարատ. մին՝ ի հաստատուն արչութենէ հրէական ազգին պահեալ է, եւ մեւսն՝ աւանդութեամբ քրիստոնէից ժողովրդեան. որ արեամբն եւ մարտիրոսութեամբ, եւ որոց դրեցինն եւ որոց ընկալանն, հաւատարիմ եղեւ :

Սուրբն Աւգոստինոս² եւ այլ եւս հարք հարցանեն՝ եթէ ընդէր այնպէս ասեմք զարտաքնոցն մատենից՝ թէ այս գիրք յայս նիշ ժամանակի եւ յայտ անուանէ գրեցան, եւ այն գիրք յայնմ : Աւրաքանչեւ տան վաղվազակի պատասխանի՝ եթէ զատանին գիրք ի պէսպէս համեմատութենէ՝ զոր ընդ օրէնս, եւ ընդ սոփորութիւնս, եւ ընդ պատմութիւնս ժամանակի իրիք ունին. եւ անգրատին ի բանից կարգէ՝ որ զնշանակ տիոցն եւ մատենագրացն յայտ առնէ, եւ մանաւանդ՝ ի հասարակաց հաւանութենէ եւ ի հաստատուն աւանդութենէ³ : Այս ամենայն ի մի վայր եկեալ հաւատարիմ առնեն զգիրս աստուածեղէնս, եւ զժամանակացն որոշմունս, եւ զեւրաքանչեւր մատենագիրս՝ որ գրեցին զնոսս. եւ որչափ առաւել զգուշութիւն եղեւ առ ի բովանդակ պահել զնոսս, նոյնչափ առանց հակառակութեան է աւանդութիւնն՝ որ պահեաց մեզ զնոսս :

Աւ զայս այսպէս իսկ գիտէին ոչ միայն ուղիղ փառաւորիչք, այլ եւ հերձուածօղքն եւ անհաւատք : Սովսէս՝ յամենայն ժամանակի յարեւելս, եւ յետոյ յամենայն տիեզերս, Հրէից օրէնագիր եւ զբոցն՝ որ ի նորա անուն կրէին, առաջնորդ ճանաչէր : Շամրտացիք՝ որ յերկոտասան ցեղիցն որոշելոց առին զնոսս, փութով յօժարութեամբ պահեցին, որպէս եւ Հրեայքն : Օււանդութիւն նոցա եւ զպատմութիւն յառաջագոյն գրեցաք⁴ :

Քանզև հակառակք եւ նախանձընդդէմք միմեանց էին ազգքն երկրքին, ոչ նա ի սմանէ եւ ոչ սա ի նմանէ՝ առ զգիրսն, այլ երկրքեան անգուստ ի բնէ առ հասարակ ընկալանն, ի Սողոմոնի եւ ի Վաւթայ ժամանակսն : Աւ

զի շամբտացիք զքնացին զհետ Ազգրի՝ որ զնշանագիրսն փոփոխեաց, յայտ անտի է՝ զի արդ եւս զհին նշանագիրս հերբայեցւոց ունին: Սասն այնորիկ իսկ՝ շամբտացւոց եւ Հրէից հինդ զիրք, երկու կատարեալ օրինակք են, որ չունին ինչ հազորդութիւն ընդ միմեանս: Ողջ եւ կատարեալ միաբանութիւնն՝ որ ի միտս ընթերցուածոյն դտանի, արդարացուցանէ զհաւատս աղպացն երկոցունց. սքա են վկայք հաւատարիմք՝ որ ոչ ի դաշն ինչ ընդ միմեանս մտեալ, մանաւանդ թէ ընդ իրեարս թշնամացեալ, ընդ միմեանս միաբանեն. եւ ի կանուխ աւանդութենէ միայն երկոքին կողմանքն ի նոյն խորհուրդ եկեալ գտանին:

Արդ՝ որ յօժարեցինն ասել առանց իրիք պատճառանաց՝ թէ վասն զի կորուսեալ էին գիրքն կամ թէ չէին իսկ, եւ Ազգրա նորոգեաց կամ ինքն իսկ նորոգ կարգեաց կամ փոփոխեաց զնոսա. ոչ միայն սուտ առնէ բլլ նոսա Ազգրաս, որպէս մարթի ոք ի կարգի նորա պատմութեանն տեսանել, այլ եւ սուտ առնեն զնոսա հինգ դպրութիւնքն՝ որք եւ ցայժմ իսկ առ շամբտացիսն գտանին, այնպէս՝ որպէս յառաջին ժամանակն Աւսերի կեսարացւոյ եւ սրբոյն Արոնիմեաց եւ այլոց եւս եկեղեցւոյ մատենագրաց ընթերցեալ էր, որպէս եւ ի բնէ պահեալ էր ազգին. եւ թուի իմն՝ եթէ աղանդ մի այնպիսի տկար եւ անզօր վասն այնորիկ միայն այնչափ երկայնաձիւք ժամանակաւ տեսիցէ, զի վկայութիւն տացէ նախաւորութեանն Մովսիսի:

Այնպէս եւ որ զչորս աւետարանն գրեցին, ունին նմին հանգոյն հաստատուն վկայութիւն ի միարան հաւանութենէ հաւատացելոցն եւ հեթանոսաց եւ հերձուածողաց: Աւ յաճախութիւն այլ եւ այլ ազգաց՝ որ ընկալան զգիրսն աստուածեղէնս եւ թարգմանեցին վաղ վաղակի, միարանն առ հասարակ ի թիւս ժամանակացն եւ ի մատենագիրս գրոցն: Աւ հեթանոսք իսկ այն աւանդութեան չդարձան ընդդէմ. ոչ Աեղսոս՝ որ գրոց սրբոց հակառակեցաւ ի սկզբան քրիստոնէութեանն, եւ ոչ Յուդիանոս ուրացեալ, թէպէտ եւ յուղեաց տեղեկացաւ ամենայնի եւ չեթող ինչ՝ զոր ոչ գործեաց վասն զգիրս անվաւերական ցուցանելոյ, եւ ոչ այլ ոք երբեք ի

Հեթանոսաց երկմտեաց, որպէս թէ սուտ իցեն. այլ ամենեքին առ հասարակ զնոյն մատենապիտրս զբոցն համարելին, զոր եւ քրիստոնեայքն: Այլ հերձուածողքն, թէպէտ եւ ի դրոցն ճոխութենէ յանդիմանեալք եւ կշտամբեալք լինէին, չեշխէին ասել թէ չեն աշակերտաց Տեառն մերոյ, մանաւանդ զի էին ոմանք ի հերձուածողայն՝ որոց զսկսանել եկեղեցւոյն անեալ էր, որոց եւ առաջի աչաց գրեցան գիրք աւետարանացն, վասն որոյ եթէ նենդ ինչ էր, վաղվաղակի յայտ գայր դաւն, եւ չմարթէր յաջողել:

Իսկ յետ առաքելոցն, յորժամ ընդ ամենայն երկիր տարածեցաւ եկեղեցի, Մարկիոն եւ Մանի յանդգնագոյնք եւ տգիտագոյնք քան զամենայն հերձուածողն, հակառակ առաքելոցն աւանդութեան՝ որ կարգէր դայր յաշակերտաց անտի նոցա եւ յեպիսկոպոսաց՝ որոց թողն զՏօմ իւրեանց եւ զառաջնորդութիւն ժողովոցոյ, որ եւ յամենայն եկեղեցւոջ Վրիստոսի ընկալեալ էր, իշխեցին ասել թէ երեք աւետարանքն խարէութեամբ են. եւ թէ խառն է ստութիւն յաւետարանն՝ Վուկայ՝ զոր քան զայլն նախամեծար առնէին, թէպէտ եւ չէ ինչ յայտ թէ ընդէր արդեւք, քանզի եւ նա նոցին օրինակաւ էր հասեալ: Այլ զինչ պատճառս յառաջ բերիցեն. լոկ անիրս եւ արդիւնք ինչ ոչ: Պատճառս զայն ասէին՝ եթէ որ ինչ հակառակ իւրեանց մտաց իցէ, հարկ է թէ այն յայլոց ոմանց հնարեալ իցէ, եւ ոչ յառաքելոց անտի. եւ ընծայութիւն ի մէջ բերէին միայն զկարծիսն իւրեանց՝ յորոց վերայ հակառակութիւնն լինէր, զկարծիսն զգանդաչանաց եւ զխմարութեան, մինչև զարմանք են՝ թէ զկարգ այնպիսի կարծիք անկան ի միտս մարդկան: Այլ եթէ մեղադիր ինչ եկեղեցւոյ հաւատարմութեան կամէին լինել, պարտ եւ պատշաճ էր զօրինակս այլակերպս յօրինակաց նորա առ իւրեանս ունել, կամ ընծայութիւն ինչ հաստատուն: Իսկ իբրեւ տաղնապեցան՝ այնպիսի ինչ ի մէջ բերել ինքեանք եւ աշակերտք նոցա, համրացեալ դտան ի պատասխանոյ, եւ իւրեանց լռութեամբն ընծայութիւն առանց երկմտութեան թողին՝ եթէ յերկրորդում դարու քրիստոնէութեանն՝ յորում գրէինն, եւ ոչ մի նշանակ

յայտարար ստուծեան եւ ոչ սակաւ ինչ բան հակառակ արւչութեան եկեղեցւոյ գոյր :

Օրնչ ասացից եւ զմիաբանելոյ ընդ միմեանս զբրոցն, եւ զզարմանալի վկայութենէ՝ զոր ամենայն ժամանակք ժողովրդեանն Աստուծոյ զերերաց վկայեն : Ժամանակք երկրորդի տաճարին յուշ առնեն զժամանակ առաջնոյ տաճարին, եւ հանեն զմեզ մինչեւ ի Սողոմոնի ժամանակսն : Խաղաղութիւն՝ յետ պատերազմացն եկն, եւ յաղթութիւնք ժողովրդեանն Աստուծոյ՝ մինչեւ ցդատաւորսն եւ ցՅեսու եւ ցերանել նոցա յերկրէն եգիպտացւոց հանեն զմեզ : Այլ յորժամ տեսանիցէ որ՝ զի ազդ մի ողջոյն յաշխարհէ միջէ՝ ուր պանդխտաւրն էր, երանէ, յիշէ՝ թէ զհարգ մտեալ էին անդր : Այլ զվաղակի երկոտասան նահապետքն երեւին, եւ տեսալ զժողովուրդն՝ որ իբրեւ մի տոհմ զինքն համարեալ էր, ընթանալք առ Աբրահամ հայրն նորա : Իսկ ժողովուրդեանն իմաստնագոյն եւ անյօժար ի կռապաշտութիւն լինել, յետ դարձի դերութեանն բարեղացւոց, այն՝ գործ էր մեծաց պատժոց պատուհասից, զոր իւրեանց յանցանօք կորցեցին յանձինս : Այլ թէ պարծիցի ինչ ժողովուրդս այս վասն բազում ժամանակս նշանս մեծամեծս տեսանելոյ, զորս այլոց ազգաց չէր տեսեալ, նոյնպէս կարող իսկ է եւ ընդ աստուածածանօթ գիտութիւնն պարծել, զոր այլ ժողովուրդ չունէր : Այլ զնչ թրփատութիւնն, եւ տօն տաղաւարահարացն եւ զատիկն եւ այլ եւս տօնք երեւելիք յազդի անդ ի կանուխ ժամանակաց, յայտ առնիցեն, թէ ոչ զիրան՝ որ կան ի դիրսն Մովսիսի : Արդ՝ զնչ քան զայս չհաւատալի առասպելք կայցեն, կարծել թէ ազդ մի, յայլոց ազգաց կրօնիւք եւ առանձինն բարոյիւք զատեալ եւ մեկնեալ, որ ի բնէ իսկ ի վերայ հիման արարչութեան եւ ի վերայ հաւատոցն տեսչութեան Աստուծոյ, զայնպիսի կարգեալ եւ զպատաստական ուսումն վարդապետութեան եւ զսիշատակ բազմապատիկ իրաց զիպելոց եւ զկարգս կանոնեալս եւ զհամօրէն սովորութիւնս պահէր, կացեալ մնացեալ իցէ առանց իրիք պատմութեան՝ որ զսկիզբն ժողովրդեանն ցուցանիցէ, եւ առանց օրինաց՝ որք օրէնադիւ լինիցին սովորութեանցն նորա, եւ այն զհազար ամ՝ մինչ գեո անդէն յիւրեանց աշխարհին բնա-

կէին. եւ կամ թէ Ազրի կամեցեալ իցէ առ ժամայն վարդապետի յանուն Մովսիսի, հանդերձ պատմութեամբ նախնեաց ազգին, սալ նմա օրէնս առ ի զվարս յերիւրելոյ եւ ածելոյ յուզղութիւն, յորժամ ի գերութեան եղև ազգն եւ անկեալ ամենեւին յառաջին միահեծան իշխանութենէ. եւ մարթ ինչ իցէ արդևք ումք այնմ հաւատալ, թէ ոչ ի հայհոյութեան վերայ եւ ազխաութիւն եւս յաւելուցու:

Աւ առ այսպիսի օրինաց կորնչելոյ յեա ընդունելութեանն, հարկ է՝ զի ազգ մի բովանդակ ջնջեցի, կամ թէ վասն պէսպէս եւ ազգի ազգի փոփոխմանց յայն հասեալ իցէ՝ զի անյայտ ինչ յիշատակս միայն զկրօնիցն իւրոց եւ զսովորութեանց ունիցի ի մտի: Աւ եթէ այս անցք ընդ հրէական ազգն անցին, եւ օրէնքն՝ որ ծանօթ էին առ Սեղեկիսաւ, վաթսուն ամօք յետոյ կորեան, թէպէտ եւ Ազելիէզ եւ Արեմիա եւ Բարուք եւ Վանիէզ եւ այլք զգուշանային, եւ մանաւանդ յայնպիսում ժամանակի՝ յորում եւ վկայք եւս օրինացն կային, որպէս յայտ Վանիէզի եւ երկոց մանկանց հալածանք առնեն. մինչեւ տեսեալ Ազրի զյանկարծակի կորնչել եւ զմոռանալ օրինացն, այնու հետեւ համարձակել ըստ իւրում կարծեաց զինչ եւ կամէր նորոգել, չէր ինչ նմա բաւական զայն զիրս լոկ յարմարել: Այլ հարկ էր նմա զամենայն միանգամայն զմարդարէութիւնն զհինս եւ զնորս կարգել. այս ինքն զնոսա՝ որ յառաջ քան զգերութիւնն եւ ի գերութեանն գրեալ էին, եւ զնոսա՝ զորոց զգրելն ետես ժողովուրդն, կամ զորոց զյիշատակն ունէին ի մտի. եւ ոչ միայն զմարդարէան, այլ եւ զգիրսն Սողոմոնի, եւ զերգս սաղմոսացն Վաւթի, եւ զամենայն գիրս պատմութեան. քանզի հազիւ թէ յամենայն ի պատմութեանն դորձ ինչ մեծ գտանիցի, եւ յայլ եւս զիրսն մի գլուխ միայն, որոց զատեալ ի Մովսիսէ, այնպէս որպէս էն տակաւին մարթիցին կալ: Ամենայն ինչ ի գիրս անդ զՄովսիսէ անարկէ, ամենայն ի Մովսէս հաստատեալ է. եւ այնմ սրբաւ էր այնպէս իսկ լինել, քանզի ամենեցուն հասարակաց եւ իւրաքանչիւր ուրուք վարուց եւ զնացից հիմն եւ հաստատութիւն Մովսէս էր, եւ օրէնք նորա եւ պատմութիւնն՝ զոր նա գրեաց: Աւ արգարեւ.

գործ մի սքանչելի էր այս Ազգրի, չքնադ եւ չնաշխարհիկ, տալ խօսել հանդերձ Մովսիսի զայնչափ մարդիկ միանգամայն՝ որ այլապուճակ բարս եւ բարբառս ունէին, եւ զեւրաքանչիւր որ, իւրով առանձինն նմանադոյն օրինակաւ. եւ հաւանեցուցանել վաղվաղակի զազգ մի՝ թէ այս իսկ են հին մատեանքն՝ զոր յամենայն ժամանակի մեծարէիր, եւ նորքն՝ զորս տեսեր թէ գրէին. որպէս թէ չէր ինչ երբեք ժողովրդեանն լուեալ, կամ թէ յանկարծակի վաղվաղակի եղծաւ կորեաւ գիտութիւն մօտաւոր ժամանակին, որպէս եւ յիշատակք անցելոց ժամանակացն : Արդ՝ այսպիսի անպատշաճ եւ անպատեհ իրաց հարկ է հաւատալ, յորժամ սքանչելեաց որ ամենազօրին չկամկցի հաւատալ. եւ ոչ ընդունել զվկայութիւնն տուեալ ժողովրդեան միոջ մեծի՝ որ զնոսին իսկ զնշանսն աջօք իւրովք տեսեալ էր :

Այլ եթէ ժողովուրդն յորժամ դարձաւ ի Ռարեզոնէ յերկիր հարցն իւրոց, այնչափ ազէտ եւ անտեղեակ էր, զի հազիւ երբեք յիշէր՝ թէ անդ երբեմն լինեալ իցէ, մինչեւ զամենայն ինչ՝ զոր Ազգրս տայր նմա, առանց քրննելոյ ընդունել. սպա զիւրդ ի գիրսն՝ զոր Ազգրս եւ նորին ժամանակակից՝ Աէեմիաս գրեցին, տեսանեմք՝ զի զաստուածեղէն գրոց բազում ճառք կան. որով երեսօք Ազգրսս եւ Աէեմիաս իշխէին զօրինացն Մովսիսի բազում ուրեք ճառել, եւ այն հրապարակաւ, իրրեւ զիրաց ինչ՝ որ ծանօթ ամենայն մարդկան իցեն, եւ ամենեքին առ իւրեանս ունիցին. եւ զիւրդ ամենայն ժողովուրդն իւրովի ըստ այնմ օրինաց գործէր, որպէս թէ յամենայն ժամանակի զնա առ իւր մօտ ունէր : Այլ զիւրդ ասի յայնմ ժամանակի՞ եւ ի դարձի գերութեան ժողովրդեանն՝ թէ ամենայն ժողովուրդն զարմացեալ էր ընդ ելանել ի գլուխ բանին Արեմիայի, որ վասն եւթանասուն ամաց գերութեանն մարդարեացաւ : Արեմիա մարդարէ՞ զոր Ազգրսս կցկցէր հանդերձ այլովք մարդարէիւք, զիւրդ յանկարծակի լինէր հաւատարիմ : Ամ որպիսի՞ ինչ հնարիւք զամենայն ժողովուրդն կարացին ածել ի հաւան, եւ ըզձերսն՝ որոց տեսեալ եւս էր զմարդարէն, թէ յամենայն ժամանակի ակն ունէին սքանչելի փրկութեանն՝ զոր նաւթձէր նոցա Արեմիա ի գիրսն իւրում : Այլ գիցուք գրեա-

ցուք թէ եւ այս ամենայն՝ բանք յօգուածոյք իցեն . Ազգրի եւ Աէեմեայ չիցէ գրեալ զպատմութիւն ժամանակացն իւրեանց, եւ այլ ոք ի նոցա անուն գրեալ իցէ . եւ որոց զայլ ամենայն գիրս հնոց կտակարանացն գրեցին, այնպէս ինչ յաջողեալ իցէ, զի յառ յապոյ ժամանակս այլ եւս խարերայք ի նոյնս այլ եւս գիրս յաւելեալ իցեն եւ եղեալ առ ընթեր, զի հաւատարիմ զնոցա խարեութիւն առնիցեն :

Ազգ ի յաճախութենէ անտի անպատեհութեանն ամաչեցեալ ուրուք, փոխանակ ասելոյ՝ թէ Ազրաս յանկարծակի այնչափ գիրս զատեալս եւ մեկնեալս ի միմեանց նշանակօք բանիցն եւ ժամանակաց երեւեցոյց, ասիցէ թէ զքանչեղինս եւ զկանխասացիկսն՝ որ աստուածեղէն իմն զգիրսն կարծեցուցանեն, եմոյծ ի նոսա . եւ այս չար քան զառաջինն մտորութիւն է . քանզի սքանչելիքս այս եւ կանխախօսութիւնք այնպէս անդէն ի գիրսն ամենայն սփռեալ են, եւ բազում անգամ ազգի ազգի կերպարանօք դունակս դունակս յեղլեղեալ, եւ այնպէս բովանդակ ըզմարմին դրոցն երեւեցուցանեն, զի եթէ բացեալ լիկ ուրուք իցէ զգիրս սուրբս, իմանայ՝ զի եւս գիւրազոյն է միւսանգամ բովանդակ զգիրսն յարմարել, քան մուծանել զերսն՝ ընդ որս դժկամակք լինիցին թերահաւատքն : Աւ եթէ շնորհեսցի եւս նոցա ամենայն՝ զոր ինչ խնդրենն, սակայն եւ այնպէս աստուածեղէն եւ սքանչելարար զօրութիւն հիմն եւ հաստատութիւն է դրոցն այնոցիկ, մինչ զի թէպէտ եւ չկամիցի իսկ ոք զայն տեսանել, սակայն տեսանէ :

Ազգ եթէ ասիցէ ոք՝ թէ Ազրաս յաւել զկանխախօսութիւնս իրացն ի դլուխ ելելոց յիւրում ժամանակին . իսկ զնոսա՝ որ յետոյն կատարեցան, որ եւ բազում իսկ են, ոյր յաւելեալ իցէ : Թներեւս Աստուծոյ՝ մարդարէութեան պարզեւ Ազրայ տուեալ իցէ, զի խարեութիւնն Ազգրի ճշմարիտ երեւիցի . այլ այս զինչ այլ ինչ իցէ, եւ թէ ոչ՝ յօժարել զի խարերայ ոք մարդարէ լինիցի քան Ասայի կամ Արեմիա կամ Վանիէղ . եւ կամ ասիցեմք՝ եւ թէ յիւրաքանչիւր դարս կացին խարերայք յաջողեալք, որոց ժողովուրդն ամենայն հաւատայր, եւ թէ այլ եւս խարերայք, նախանձեալ զնախանձ կրօնիցն, անգաղար

յաւելին ի գիրս աստուածեղէնս, յետ բովանդակելոյ իսկ կանոնին, եւ սփռելոյ հանդերձ շրէիւքն ընդ ամենայն երկիր եւ փոխելոյ ի լեզուս օտարս: Այլ ապաքէն այս փոխանակ զիրօնան կամելոյ հաստասակ, ի հիմանց եղծանել էր: Օխարդ ազգ մի ողջոյն թոյլ տայր փոփոխել զայն ինչ՝ զոր աստուածեղէն իմն կարծէր, թէպէտ ճշմարտութեամբ թէպէտ մոլորութեամբ: Մարթիցի՞ որ ակն ունել հաւանեցուցանել զքրիստոնեայնս, մի միայն դուրս յաւետարանն յաւելուլ, կամ զՏաճիկն՝ յիւրեանց գիրսն: Այլ թերեւս մեղմագոյնք ինչ եւ հլուք քան զայլ ազգս էին շրեայքն, կամ թէ չառնէին ինչ փոյթ իրբեւ զնոսա պահել զգիրս սուրբս իւրեանց: Արպիսի՞ անմրտութեան խորհուրդս հարկ իցէ ածել զմտաւ, յորժամ զլուծ Աստուծոյ իշխանութեան խլկցէ որ, եւ իւրովք խտորեալ մտօք կամիցի օրէնս խորհրդոյն իւրոց եւ կարգաց գնացից իւրոց գնել:

Այլ մի որ ասիցէ, թէ քննութիւն՝ որ վասն իրացն այնոցիկ է, աշխատեցուցիչ է. զի եթէ աշխատեցուցիչ էր քննութիւնն, պարտ էր կամ եկեղեցւոյ իշխանութեան անսալ, եւ աւանդութեան այնչափ դարուց, եւ կամ ամենեւին ի խոյզ արկեալ քննել մեծաւ զգուշութեամբ. եւ չկարծիցէ որ՝ թէ զերծ իցէ անտի, վասն զի բազում ժամանակաց կարօտ իցէ քննութիւնն, աւելի քան զոր ինքն վասն իւրոյ փրկութեանն կամիցի ծախել: Այլ առանց զգիրս երկոցունց կտակարանացն մեծաւ աշխատութեամբ կրկտելոյ, բաւական է զգիրս սաղմոսացն միայն ընթեռնուլ, յորում ժողովեալ են բազում հին երգք ժողովրդեանն Աստուծոյ, որք քան զամենայն երգս վիպասանաց զեղեցիկ են, յորս կան յիշատակք պատմութեանն Մովսիսի եւ դատաւորացն եւ թագաւորաց նկարեալք ի միտս մարդկան գեղեցկախառն նուագօք եւ չափովք: Իսկ ի նոր կտակարանն, պքանչելի եւ դեղեցիկ թուղթքն Պաւղոսի, յորս բազում իրաց՝ որ յայնժամ էին, կան պահին յայտնի նշանակք, զոր եւ եկեղեցիք առորս դրեալ էին, ընկալան, եւ անտի առայլ եւս եկեղեցիս անցին, բաւական էին հաւանեցուցանել զմտավարժս թէ ամենայն ինչ անեղծ եւ անարատ է ի գիրսն՝ զոր առաքեալք թողին մեզ:

Ս անն որոյ միմեանց պատասպարան լինին գիրք մեծաւ զօրութեամբ: Պործք առաքելոցն զաւետարանին պատմութիւն յառաջ մատուցանեն, եւ թուղթք նոցա յետոյ քան զգործս առաքելոցն կարգին: Այլ զի ամենայն ինչ միարան լինիցի, գործք⁸ եւ թուղթք եւ աւետարանք վեր ի վայր յեղձեզուն զՀին գիրս Հրեիցն. Պաւղոս⁹ եւ այլ առաքելալք ստէպ ի մէջ բերեն, զոր ինչ ասաց եւ գրեաց Մովսէս եւ զոր մարգարէքն յետ Մովսիսի ասացին եւ գրեցին: Աւ Քրիստոս¹⁰ ի վկայութիւն կոչէ զօրէնան Մովսիսի, զմարգարէս եւ զսաղմոսն, իբրեւ վկայս՝ որ երաշխաւոր վասն նորին ճշմարտութեան լինիցին: Աւ յորժամ զեւր խորհուրդսն կամէր մեկնել¹¹, ի Մովսիսէ եւ ի մարգարէից սկսանէր, եւ յորժամ ցւրեայն¹² ասաց՝ եւ թէ Մովսէս վասն իմ իսկ գրեաց, զնէ իբրեւ Հիմն զայն՝ որ Հաստատադոյն էր ի միջի նոցա, եւ ածէ զնոսա անդր իսկ ի սկիզբն տրւածեանցն նոցա:

Բայց սակայն տեսցուք զինչ ընդդէմ զնիցեն այսպիսի յայտնի վկայութեան՝ որում եւ այնչափ դարք միարանեն. քանզի, որով Հետեւ ի մերում ժամանակի իշխեցին ոմանք սիռել յայլ եւ այլ լեզուս գիրս Հակոտակ գրոց սրբոց, չէ պարտ թաղուցանել զայն՝ զոր վասն անվաւերական ցուցանելոյ զնախաւորութիւն գրոցն ասեն: Աւ արդ զե՞նչ ինչ վասն անվաւերական ցուցանելոյ ըզհինգ զպրութիւնննն սփիցեն. եւ զե՞նչ ընդդէմ զնել կարիցեն երեք Հազար ամաց աւանդութեան՝ որ ինքն զինքն Հաստատուն ունէր եւ յայնց ժամանակաց կարգէր զայր: Ոչինչ կարգաւ, ոչինչ Հաստատուն, ոչինչ կարեւոր մարթեն ի մէջ բերել, այլ զթիւսն եւ զտեղիսն եւ զանուանսն կամին Հայթայթանօք աղարտել, եւ զայնպիսի բանս՝ որք յայլ ինչ իրս դատարի քննութիւնք եւ եթ Համարեալ են եւ չեն ձեռնհաս վնաս ինչ իրացն ճշմարտութեան առնել, զայն ամենայն յայտ վայրի ի մէջ մատուցանեն, որպէս թէ բաւական իցեն նոքին տալ վճիռ իրացն՝ որ քան զամենայն ինչ մեծամեծք եւ կարեւորք եւ պիտանիք իցեն:

Բազում ինչ, ասեն, դժուարինք կան ի դրոց պատմութեան: Երգարեւ են իսկ, եւ չլինէին նոյնք թէ նոր ինչ էր մատենան. կամ որպէս իշխենն ասել, յառնէ միտ-

ջէ խարերայէ եւ ի ճարտարէ գրեալ էր. կամ թէ որ ընկալանն չգգուշանային այնպէս որպէս առինն տալ, եւ յանդգնեալ որ ինչ դժուարին եւ չհաւատալի թուէր, ուղղէին: Ան ինչ ինչ դժուարինք վասն երկայն ժամանակացն՝ որ ի վերայ անցին, յորժամ տեղեաց անուանք եւ իրք փոփոխեցան, թիւք ամացն մոռացան, եւ ազգահամար չէ ծանօթ, եւ չէք ինչ հնար ուղղել զփրկածսն՝ որ ի դպրացն գրելոյ դիւրաւ սպրդիցեն մտանել յայնպիսի ինչ իրս, յորժամ սակաւ ինչ որ չգգուշանայցէ, կամ թէ դորձք ինչ զերծեալ յուշոյ յիշատակաց մարդկան, զեղեն եւ թաղուցանեն զկողմանս ինչ պատմութեանն: Այլ կարգն կամ բուն խկ իրքն զեղեալ եւ զօղեալ իցեն. ոչ երբեք. ամենայն ինչ կարգաւ է, եւ որ ինչ ծածուկ եւ զեղեալ իցէ՝ զգեղեցիկ նախաւորութիւն գրոցն յայտ առնիցէ:

Այլ փոփոխմունք են յրնթերցուածն, հին թարգմանութիւնք չեն միաբան, երբայեցին բազում ուրեք ինքքն ընդ անձին կռուի, եւ շամրտացոյ օրինակն ի տեղեւ տեղեւ ի շրէից օրինակէ զառ է, թող զբանն՝ վասն որոյ յանդիմանին իսկ թէ կամակար փոխեցին¹³ վասն տաճարին՝ որ ի Վարիղին էր: Իսկ աստի բնաւ զեղն¹⁴ յայտ առնիցի, արդեւք զեւ շրէայքն կամ Ազրա յանձանց գրեցին զհինգ դպրութիւնան յորժամ դարձանն ի գերութեանն: Արդարեւ զնորին հախառակն աստի հարկ է առնուլ ի միա: Այնու՝ զեւ այլակերպ է շամրտացին, հաստատուն լինի այն՝ զոր կանխադոյն ասացաք, թէ նոցա օրինակն չունի ինչ ընդ շրէիցն հաղորդութիւն: Օի ոչ միայն չէ մարթ ումեք կարծել կամ իմանալ թէ առեալ իցէ շամրտացոյ ինչ ի շրէից կամ Ազրայ, այլ եւ տեսաք իսկ¹⁵, զեւ վասն քինուն՝ զոր ընդ շրէայսն եւ ընդ Ազրաս ունէին, եւ վասն առելութեան՝ զոր ասէին զտաճարն զառաջինն եւ զերկրորդն, հնարեցին եւ կանգնեցին զտաճարն՝ որ ի Վարիղին էր: Արդ¹⁶ որ չգիտիցէ թէ մանաւանդ բամբասէին իսկ զշրէիցն խարէութիւն, քան թէ ինքեանք զհեա երթային խարէութեանն: Արդ սոքա՝ որ արհամարհեցին զԱզրա եւ զամենայն մարգարէսն շրէից, հանդերձ տաճարաւն նոցա եւ Սողոմոնիւ՝ որ շինեաց զնա, որպէս եւ զԱսա իթ՝ որ զտեղե տաճարին եցոյց, վասն

էր իրիք մեծարելին զհինգ դպրութիւնսն իւրեանց, թէ ոչ վասն զի կանխադոյն եւ երկցադոյն էր, ոչ միայն քան զԱղբաս եւ քան զմարգարէսն, այլ եւ քան զՍողոմոն եւ զԱաւիթ, եւ նախաւորութեամբ հաւասար Սովսիսի, զորմէ աղբքն երկոքին միարանեն: Արդ՝ այսպէս առանց հակառակութեան է վկայութիւնն Սովսիսի եւ հինգ դպրութեանցն, զի ամենայն՝ զոր ինչ հակառակեալ ի մէջ բերեն, աւելադոյն ճշմարիտ եւ հաւատարիմ առնեն զնոսա:

Այլ այլ եւ այլն լինել օրինակացն, եւ թարգմանութեանց բնաւ իսկ ուստի՞ իցէ: Աչ ուստեք այլ ուստեք իցէ, թէ ոչ ի գրոցն հնութենէ, որ ընդ այնչափ դրչաց ձեռս անցին, ի բազում ժամանակաց յորմէ հետէ երբայեցի լեզու՝ յոր գրեցան, բազմաց անծանօթ եղեւ:

Այլ թողցուք զտարապարտ հակառակութիւնսն, եւ միով բանիւ միանգամայն զհակառակութիւնն մօտ կորեցուք: Աղէ եկ ասա դու ցիս, ոչ ապաքէն յամենայն թարգմանութիւնսն ի բնաւ օրինակն նոյն օրէնք, եւ նշանք եւ կանխախօսութիւնք, եւ նոյն կարգ պատմութեան, եւ նոյն ուսումն վարդապետութեան եւ բանից ճշմարտութիւն երեւիցին: Իսկ զե՞նչ վնաս իցէ յետ այսորիկ այլ եւ այլն լինել օրինակացն: Օ՞րէնչ պիտոյ էր մեզ աւելի քան զայս անփոփոխ հաստատութիւն գրոց սրբոց, եւ զե՞նչ ինչ քան զնոյն աւելի մարթէաք յԱստուծոյ խնամակալութենէ պահանջել: Իսկ ի թարգմանութիւնսն՝ ստութեան ինչ կամ նոր լինելոյ նշանակ իցէ, յորժամ յոյժ հին իցէ գրոց լեզուն, մինչեւ զգեղեցկութիւն բանից բարբառոյն չմարթիցի յայլ լեզու անեղծ եւ անարատ փոխել, եւ չկարիցէ որ զամենայն վայելութիւն եւ զամենայն զօրութիւն ամենեւին որպէս իցէն թարգմանել: Աչ ապաքէն այս մանաւանդ մեծի հնութեան ընծայութիւն իցէ: Այլ եթէ դեռ եւս մանունոյն որ կամիցի ճշդիւ միտ դնել, ասացէ՛նա ցիս՝ եթէ իցէ՞ ուրուք նորոգեալ յիւրոց մտաց կամ ի կարծեաց, զմի ինչ տեղի ի տեղեացն՝ յորս հակառակութիւն լեալ թուիցի: Այլ ամենեքին օրինակացն հաւատացին, եւ քանզի աւանդութիւն չեթող փոփոխել ինչ ի ճշմարիտ վարդապետու-

Թենէ անտի, վասն այնորիկ այնոգէս համարէին՝ թէ այլ եւս ինչ եթէ վրիպեալ իցէ, այն յայտ առնէ՝ թէ չէ սատ ուրուք ինչ յիւրոց մնաց նորոգեալ :

Եյլ այս խակ է հլօրադոյնն՝ զոր ի մէջ բերիցեն. չիք ինչ, ասեն, յաւելուած յինթերցուած գրոցն Մովսիսի, խակ ուստի՞ իցէ մահն՝ որ ի կատարած գրոցն՝ զոր նորա համարին, կայ : Օտարմանք ինչ իցեն, եթէ նոցա՝ որ զնորա պատմութիւն յառաջ մատուցին, յաւելեալ իցէ վերանելի վախճան նորա յայլ եւս գործսն նորա, զի յամենայնէ մի մարմին առնիցեն :

Իսկ զայլ եւս յաւելուածսն տեսցուք, թէ զինչ իցեն : Մի թէ նոր ինչ օրէնք իցեն, կամ նոր ինչ կարգ կամ հրաման կամ նշան կամ կանխախօսութիւն : Եւ ոչ յերազի անգամ ած որ զայս զմտաւ, չիք ինչ կասկած ըզնոցանէ եւ ոչ նշանակ. զի այն՝ յաւելուլ ինչ ի գործս Եստուծոյ էր, զոր եւ օրէնք արդելուին¹⁵, եւ մեծի գայթակղութեան պատճառք լինէր, որ զայնպիսի ինչ գործ գործէր :

Եւ արդ զինչ. թերեւս ուրուք յառաջ մատուցեալ իցէ զազահահամարն՝ զոր այլոց սկիզբն արարեալ էր գրել. կամ զքաղաքի իրիք զանունն՝ որ յետ ժամանակաց փոխեցաւ, մեկնեալ իցէ. եւ ի պատմութեան մանանային՝ որով զքառասուն ամ ժողովուրդն կերակրէր, իցէ ուրուք նշանակեալ եւ զժամանակն՝ յորում այն երկնաւոր կերակուր պակասեաց¹⁶, եւ իբքս այս՝ որ յետոյ յայլում մատենի գրեցան, կացեալ իցեն իբրեւ առ տեղեակ առնելոյ եւ ի Մովսիսի գիրսն¹⁷, որպէս հաստատուն ինչ եւ հասարակաց, որում եւ բովանդակ ազգն վկայ էր : Չորք կամ հինգ տեղեկութիւնք նոյնպիսիք նոյնգունակք ի Յեստովոյ կամ ի Սամուէղէ կամ յայլմէ մարգարէէ՝ որ հաւասար իցէ նոցա ժամանակաւ, կարգեալ, զիրաց յայտնեաց՝ զորոց չգոյր ինչ հակառակութիւն, ինքնին յետ ժամանակաց ի բուն ընթերցուածն անցեալ իցեն, եւ նովին տըչութեամբ առ մեզ հասեալ հանդերձ մնացելովքն : Եւ արդ՝ վասն այնորիկ ամենայն ինչ վաղվաղակի եզճանիցի. զՆգրայ ամբաստան լինիցիմք, ուր եւ շամբրտացւոց օրինակն՝ յորում նոյն տեղեկութիւնք գտանին, յայտ առնէ՝ եթէ ոչ միայն քաջ ի բաց հին քան զՆգրի

Ժամանակին կանխադոյնք են, այլ եւ անդլ ի բաց քան զհերձուած տասն ցեղիցն: Բայց եւ այս չեցէ ինչ. հարկ է՛ զի զամենայն վնաս զԱզրաւ արկանիցեմք. քանզի եթէ այն տեղեկութիւնք կանխադոյնք եւս անդուստ ի վերուստ էին, հարկ էր ապա եւ հինգ դպրութեանցն առաւել հին՝ քան զոր ենն, լինել. եւ մեծ իմն յոյժ նախաւորութիւն էր դրոյն՝ որոյ տեղեկութիւնք իսկ այնպէս կանուխ էին ժամանակաւ:

Ապա զամենայն Ազրի արարեալ իցէ, եւ չածեալ ըզմտաւ ամենեւին՝ եթէ զՄովսէս ի մէջ մուծանէ խօսել, տուեալ իցէ նմա խառն ի խուռն զիրաց ինչ իրրեւ զեղերոց ճառել, որ յետոյ ուրեմն քան զնա դիպեցան: Աւ վասն նորին միայն ամենայն մատեանն կցիցեալ համարեացի, եւ ոչ իսկ այնչափ ժամանակաց վկայութիւն, եւ հասարակաց միտք մարթիցեն այնու հետեւ նպաստ ինչ նորա ճշմարտութեանն լինել. թէպէտ եւ զնորին հակառակն տեսանեմք, զի նոյն իսկ տեղեկութեանցն յաւելուած՝ որով պարծինն, մեւս եւս իմն հաստատութիւն ճշմարտութեան է եւ հաւատարիմ լինելոյ, ոչ նոցա միայն՝ որ դրեցինն, այլ եւ նոցին իսկ՝ որ անդատին զնոյն առեալ երկրորդեցին: Այլ արդ՝ բնաւ իցէ՞ իսկ արժան զճշմարտութենէ, չասեմ թէ աստուածեղէն գրոց, այլ եւ զինչ եւ պէտ այլոց գրոց, վասն այնպիսի դոյզն պատճառանաց երկեւան երկմտութեան ի ներքս մուծանել: Սակայն այս իսկ են պատճառքն՝ զի աստուածեղէն դիրք հակառակ են ազրի մարդկան, քանզի կամին բռնադատել զմարդիկ՝ զլուրեանց միտս Աստուծոյ հնազանդել, եւ զկարիս անհանձարական սանձահարել, եւ վասն այնորիկ իսկ նորին կորստեանն ցանկանան մարդիկ. եւ ապաքէն հարկ է եւ այսպէս եւ այնպէս, անառակութեանն ի բուռն անկանել:

Այլ դու մի ինչ կարծիցես՝ եթէ ամբարշտութիւն վայրապար ինչ զանձն ի մէջ արկանիցէ այնչափ անպատեհութեանց՝ զոր յայտ յանպիման իսկ տեսեր: Յայն սակա հակառակ վկայութեան ազրի մարդկան, եւ հակառակ ամենայն կարգաց ողջմտութեան ջանան սուտ առնել զհինգ դպրութեանցն եւ զմարդարեութեանց մատենագիրս՝ որք ամենայն ուրեք ծանօթք են, եւ հակա-

ուսիս ղԺԻւ համարոյ ժամանակաց դրոյն ցուցանել, զի զժամանակացն թիւ եղծանելով, զամենայն դիւրաւ վճարեն վասն երկուց ինչ իրաց. նախ այն իսկ, զի գիրք՝ յորում այնչափ նշանք մանր մի ըստ միոջէ պատմին հանգերձ նոցին առանձինն հանդամանօք, ոչ միայն իրրեւ ի հրատարակի յայտ յանդիման եղեալ, այլ եւ անդէն ի մօտաւոր ժամանակի դործեալ, եթէ յիւրեանց ճշմարտութենէ վրիպիցեն, այնու հետեւ ինքնին բարձեալ բերիցեն զիւրեանց դատապարտութիւն, եւ փոխանակ այնր՝ զի իւրեանց անուանի մեծութեամբն իւրովի պատասպարին, վաղ ուրեմն անձամբ յանձանց կործանեալ իսկ էին: Արկրորդ անգամ՝ զի եթէ կարգք ժամանակացն հաստատուն կայցեն, չէ հնար ումեք այնու հետեւ ջնջել ի դրոց անտի զանմոլար դրոշմն աստուածեղէն ազդեցութեանն՝ զոր դրոշմեալ կրեն, եւ զբազում եւ զերկայնաձիգ կարգս նշանաւոր կանխախօսութեանցն՝ որովք լի են ամենայն աստուածեղէն գիրք:

Ս ան զերծանելոյ ի նշանաց աստի եւ ի կանխախօսութեանց յայսպիսի անպատեհ իրս՝ ընդ որս դուզ զարմացեալ ես, կործանեցան ամպարիշտք: Այլ մի կարծիցեն՝ թէ ապրիցին ինչ յԱստուծոյ. եղ նա ի գիրս իւր նշանակ ինչ աստուածեղէն զօրութեան՝ որում չկարէ ոք ի գիմի հարկանել. եւ այս՝ համեմատութիւն երկոցունց կտակարանաց է: Օ՛ի գէթ ընդ այնր չվիճի ոք՝ թէ հին կտակարանք չիցեն յառաջ քան զնորս դրեալ: Աւ չեք աստ այլ ոք Ազրա՝ որ կարիցէ հաւանեցուցանել զչրեայս հնարել գտանել գիրս, կամ ստութիւն ի նոսա մուծանել, շնորհս առնելով քրիստոնէիցն՝ զոր ինքեանք հաւածէին: Աւ այս իսկ բաւական է: Օ՛ի համեմատութեամբն՝ զոր ընդ միմեանս ունին երկոքին կտակարանքն, յայտ առնի՝ թէ եւ սա եւ նա աստուածեղէն է. երկօքեան սոքա զնոյն միտս եւ զնոյն կարգ ունին, մին հորդէ ճանապարհ կատարմանն՝ զոր մեւան յայտնապէս ցուցանէ, մին հիմն արկանէ, եւ մեւան զչինուածն կատարէ, մին յառաջագոյն բարբառի զոր ինչ մեւան ի գլուխ կլեալ ցուցանէ:

Այսպէս ամենայն ժամանակք ընդ միմեանս կապեալ են, եւ խորհուրդ յաւիտենից Աստուծոյ ինամակալու-

Թեանն մեզ յայտնեալ : Տըւչութիւն հրէական ազգին եւ քրիստոնէից, առ միմեանս եկեալ զնոյն կարգ կրօնից յուցանեն, եւ զիրք երկոցունց կտակարանացն միանգամայն բովանդակեալ մի զիրք լինին :

Եւ քանզի առ իմանալ զմիտս իրիք իրիք կանխախօսութեանց՝ որ ինքնին լի են լուսաւորութեամբ, բազում իրաց պէտք են, որոց ամենայն մարդիկ չկարեն նոյնպէս խելամուռ լինել, ընտրեաց Աստուած քանի մի ի կանխասացիկ բանից անտի, զորս եւ ազխոացն եւ տխմարաց երեւելի արար : Եւ այս են գործք մեծամեծք եւ լուսաւորք՝ զորոց ամենայն համօրէն աշխարհս վկայէ, զորս եւ յայս վայր պատմեցաք . կործանումն ազգին Հրէից, եւ դարձն հեթանոսաց, որ ի միասին կատարեցան . եւ երկոքին միանգամայն յայնմ ժամանակի՝ յորում աւետարանն քարոզեցաւ եւ Քրիստոս երեւեցաւ :

Սոքա երեքինս, որպէս ի միում ժամանակի միանգամայն կատարեցան, եւս աւելի ի խորհուրդսն Աստուծոյ միանգամայն նկատեալ էին : Եւ ի հին մարդարէութիւնն նոյնպէս ի միասին գտանեմք . այլ Յիսուս Քրիստոս, ստոյգ թարգման մարդարէութեանցն եւ կամաց Հօր իւրոյ, ազնուադոյն եւս մեկնեաց մեզ զհամեմատութիւնս զայս յաւետարանին իւրում : Եւ զայս եցոյց նա այգւոյն առակաւ՝ որ ծանօթ եւ ընդելլական էր մարդարէիցն : Այլ մի տանուտէր տնկեաց այգի¹³, այս ինքն՝ զճշմարիտ կրօնն հաստատեալ ի վերայ ուխտի կրտակարանաց իւրոց . եւ ետ զնա ցոճական՝ որ են Հրեայք : Եւ բազում անգամ առաքեաց զճառայս իւր՝ որ են մարդարէքն, առնուլ զպտուղս նորս . եւ մշակքն չարք լուսանին զնոսա : Յետոյ գթացեալ՝ առաքեաց առ նոսա զորդի իւր, իսկ նոքա եւս չարադոյն անցս քան ընդ ճառայն ընդ նա անցուցին : Եւ ապա հան զայգին ի նոցանէ, եւ ետ զնա այլոց մշակաց . առ ի նոցանէ զչնորհս ուխտին իւրոյ տալ հեթանոսաց :

Արդ՝ սոքա երեքինս միանգամայն զխպելոց էին . առաքումն Արդւոյն Աստուծոյ, մեթուումն Հրէիցն, եւ կոչումն հեթանոսաց : Եւ չէ ինչ հարկ մեկնութիւն ընծայեցուցանել առակին, զի եւ արդիւնք իրացն թարգմանեցին զնա :

Տեսեր իսկ յառաջագոյն՝ թէ խոստովան լինին շարեայք, եթէ արքայութիւն Յուդայ եւ ընկերհաշտութիւն նոցա, տակաւ կործանէին ի ժամանակն շարեայքի եւ յորժամ եկն Քրիստոս յաշխարհ: Այլ եթէ վասն փոփոխմանցն՝ զոր յօրէնան Աստուծոյ ասնէին, այնպէս նուազեաց իշխանութիւն նոցա, հարկ է զի յետինսուերն՝ որ արդ եւս տեւէ, մեծ եւս յանցանաց պատիժք իցեն:

Աւ այն իսկ են յանցանք նոցա, զի ապախառուորք եղեն առ Օծեալն իւրեանց՝ որ եկն ուսուցանել զնոսա եւ յազատութիւն հանել: Աւ յայնմ ժամանակէ հետէ լուծ երկաթի է ի վերայ պարանոցաց նոցա. եւ ամենեքին իսկ սատակէին ընդ լծոյն, թէ ոչ Աստուծոյ պահեալ էր զնոսա, ծառայել երբեմն Օծելոյն՝ զոր ինքեանք ի խաչ հանին:

Արդ այս իսկ է մին՝ որ կատարեցաւ եւ ել ի դուռն յանդիման առաջի ամենայն աշխարհաց, բովանդակ կործանումն իրացն շարեայք ի ժամանակն Քրիստոսի: Այնպէս եւ հեթանոսաց դարձն՝ որ ի նմին ժամանակի դիպելոց էր, կատարեցաւ: Ապովազակի իրբեւ հին պաշտօնն եղծաւ յարուսաղէմ հանդերձ տաճարաւն, յամենայն կողմանց պատերազմ ի դիմի հարկանէր կռապաշտութեան. եւ ազդքն՝ որոց ի հազար ամաց հետէ մոռացեալ էր զարարիչն, սթափէին եւ զուարթանային յերկայնժամանակեան թմբութենէ:

Աւ զի ամենայն ինչ ի դէպ եկեալ գտանիցի, աւետիքն հոգեւորք՝ աւետարանին քարոզութեամբ յայտնեցան, մինչ գեռ ազգն շարեայք՝ որոյ զառժամայն աւետիքն եւ եթ առեալ էր, յայտնապէս խոտեալ առ թերահաւատութեան իւրեանց եւ վարեալ ի գերութիւն ընդ ամենայն երկիր, չունէր ինչ այնու հետեւ ակն մարդկօրէն մեծութեան: Յայնժամ խոստացեալ եղև արքայութիւն երկնից այնոցիկ՝ որ հալածինն վասն արքայութեան. քարոզեցան անձառ ճառք կենացն հանդերձելոց, եւ ստոյգ երանութիւն յայտնեցաւ հեռի ի բնակութենէ աստի ուր թագաւորէ մահ, ուր յաճախեալ են մեղք եւ չարիք ամենայն:

Ապա եթէ ճշմարիցէ, ոք աստ խորհուրդ ինչ նկատեալ կարգաւ, եւ չտեսանիցէ ոք զմի զնոյն կարդ խոր-

Հրդոցն Աստուծոյ, որ պատրաստէ ի սկզբանէ աշխարհի զայն՝ զոր ի կատարած ժամանակացն կատարէ, որ եւ ազգի ազգի փոփոխմամբքն, այլ հաստատուն կարգ յամենայն ժամանակի հանապազորդ ցուցանէ, առաջի ամենայն աշխարհաց զուրբ ժողով միարանութեան մարդկան՝ յորոց կամի պաշտօն առնուլ եւ փառաւորել. այնպիսին արժանի է մի ինչ բնաւ ամենեւին տեսանել եւ յիւր կամակոր յամառութիւնն եւ ի խտութիւն մասնել, որ իրաւացի եւ սաստիկ է քան զամենայն պատիժս պատուհասից :

Եւ զի այս կարգ ժողովրդեանն Աստուծոյ լուսաւորադոցն երեւիցի շլամտացն իսկ, երեւելի եւ զննելի արար զնա Աստուած ի ձեռն դործոց՝ զորոց չէ մարթ թէ ալխտանայցի, որ, եթէ ոչ կամաւ զաս առ ճշմարտութիւն փակիցէ : Միսիայի ակն ունէին հերբայեցիք. եկն նա, եւ զհեթանոսս կոչեաց, որպէս յառաջադոցն ասացեալ էր զնմանէ : Այլքն՝ որ ծանեանն զնա թէ եկեալ է, միարանեցին ընդ այնոսիկ՝ որ սպասէինն նմա, առանց իրիք անջրպետութեան ժամանակաց ընդ մէջ մտանելոյ, ժողովուրդս այս ընդ ամենայն երկիր տարածանէր, եւ հեթանոսք հանապազ գային ժողովէին անդր, եւ եկեղեցիս այս՝ զոր Վրիստոս ի վերայ վիմին հաստատութեան կանգնեաց, ոչ երբեք կործանեցաւ, թէպէտ եւ բազում անգամ բախեցաւ ի սասանայէ :

Արպիսի ինչ մտիթարութիւն իցէ այս որդւոցն Աստուծոյ, եւ որպիսի հաստատութիւն ճշմարտութեան, յորժամ տեսանիցեն՝ զի եթէ համարիցի որ յՆնոկենդեայ ԱՃ երրորդէ՝ որ այժմ արժանաւորութեամբ զառաջին աթոռն եկեղեցւոյ ունի, ելանէ կարգաւ մինչեւ ի Պետրոս՝ զոր Վրիստոս զլուի առաքելոց կացոյց. եւ անտի համարելով զքահանայապետան՝ որ առ օրինօքն կացին, զայ հասանէ մինչեւ ցԱհարոն եւ ցՄովսէս, եւ անտի մինչեւ ցնահապետան եւ ցսկիզբն աշխարհիս : Արպիսի ինչ կարգ իցէ այս, որպիսի տըւութիւն, զնչ բաքանչելի յօրինուած : Այթէ մտաց մերոց՝ որ ի բնէ կասկածոտ են եւ իւրովք կասկածանօք զեղեւեալ գրդուիցին ի մտացն խորհրդոց, պիտոյ իցէ ի խնդիրս փրկութեան, կանգնել կալ հաստատուն ի ձեռն ճշմարտութեան իրիք՝

որ առանց երկմտութեան իցէ. զինչ քան զկաթուղիկէ եկեղեցւոյ բանից ճշմարտութիւն մեծ կայցէ, որ ունի յինքն զամենայն հաստատութիւն ճշմարտութեան անցելոց ժամանակացն եւ զհին տրււթիւնս մարդկան մինչեւ յբուն սկիզբն նոցա:

Ս ասն որոյ ժողովս այս զոր Վարխատոս՝ որում յամենայն անցեալ ժամանակն ակն ունէին, ի վերայ վնմին հաստատեաց, ուր եւ Պետրոս եւ նորին պայազատք դահերեց նստելոց են ի ձեռն հրամանացն նորա, անձամբ զանձն հաւատարիմ առնէ իւրով իսկ կարգաւն, եւ հաւնապազորդ տեւականութեամբն բարձեալ բերէ զնկարագիր ձեռինն Աստուծոյ:

Օ այս պայազատութիւն չկարենն ցուցանել եւ ոչ մին ի հերձուածոցն կամ յաղանդաց, բայց միայն եկեղեցի Աստուծոյ: Մմանել նմանեն աղանդք՝ եկեղեցւոյ ի բազում ինչ իրս, եւ մանաւանդ այնու՝ զի ասենն իբրեւ զնա թէ Աստուած է որ հիմն արկ նոցա. այլ այն տարապարտ բանք են ի բերանս նոցա եւ անօգուտ զրոյշք. զի եթէ Աստուծոյ ստեղծեալ է զմարդկութիւնս, եւ եթէ ըստ պատկերի նմանութեան կերպարանաց իւրոց ստեղծանելովն՝ չգարշեցաւ զհանդամանս աստուածպաշտութեան եւ աստուածահաճոյ կարգաց կրօնից նմա ուսուցանել, ապա ամենայն աղանդ՝ որ զիւր պայազատութիւն անդատին ի սկզբանէ աշխարհի ոչ ցուցանէ, այն է յԱստուծոյ:

Աստ կործանին առաջի եկեղեցւոյ ամենայն աղանդք մոլորութեան՝ զոր մարդիկ ի ներքոյ եւ արտաքոյ քան զքրիստոնէութիւն հաստատեցին:

Արպէս եւ սուտ մարդարէն արարացւոց ասաց զանձնէ՝ թէ յԱստուծոյ առաքեալ իցէ, եւ յեա մոլորեցուցանելոյ զտգէտսն եւ զանտեղեակս ի ժողովրդոցն, մինչ զեռարուարձանեայքն ի միմեանց քակտեալք եւ պառակտեալք էին, նա պարապ դտեալ, սիռեաց եւ տարածեաց ի սուր սուսերի զկրօնս ժանդութեան. այլ չիշխեաց կարծեցուցանել՝ թէ նմա ակն ունէին մարդիկ, եւ չկարաց իսկ զանձնէ կամ զկրօնիցն ասել՝ թէ ունիցին ինչ կապ ընդ անցելոց ժամանակացն: Աւ զի աստի սպրիցի, նոր իմն հնարս հայթայթանօք իմացաւ: Օ ի մի ռք ի քրիստու-

նէից դիրս՝ վկայութիւն զիւրոյ առաքմանէ կամիցի խընդրել, հանդոյն այնմ՝ զոր Վրիստոս ի դիրս Հրէիցն գտանէր, ասաց՝ եթէ քրիստոնեայքն եւ Հրեայք եղծին եւ ապահանեցին զամենայն դիրսն իւրեանց: Մորա աշակերտք տղէտք եւ տխմարք, զնոյն նոյնպէս իսկ հաւատացին վասն նորա բանին, վեցհարեւր ամօք յետոյ քան զՎրիստոս: Այս պատմեաց նա զանձնէ, ոչ միայն առանց իրիք վկայութեան՝ որ յառաջ քան զնա իցէ, այլ եւ ոչ ինքն եւ ոչ իւրքն ժտեցան ամենեւին նշան ինչ երեւելի կարծեցուցանել կամ խոստանալ, որով առաքումն նորա ճշմարիտ լինիցի:

Մոյնպէս եւ հերձուածապետքն՝ որ ազանդս նորս ի մէջ քրիստոնէիցն սերմանեցին, զիւրադոյն զհաւատան կարացին առնել, յուրաստ լեւալ ի խորհրդոյ՝ որ ըստ միտս անցանիցեն. եւ զմարդիկ մարթացին պատրել ճարասարխօսութեամբ քաղցրարան պաճուճանօք կեղծաւորութեամբ, զիէսն իւրեանց իսկ կարեօքն յուղել եւ շարժել, եւ զայլս յուսովք շահիցն ձգել, եւ զմանա զնորամուտան մուծանելով, եւ մտաց կամ զգայնոց համարձակութիւն եւ ազատութիւն խոստանալով, եւ զի՞ իսկ զմի մի թուիցեմ, այլ միանգամայն ասել՝ դիւրաւ կարացին նոքա կամ զանձինս խարել կամ զայլս. քանզի չեք այլ ինչ պայման գործոց մարդկան: Այց ոչ միայն չկարացին պարծել թէ նշան ինչ ի հրատարակի արարին, եւ զկրօնիցն իւրեանց ճշմարտութիւն հաստատուն ինչ իրօք ցուցանել, որոց իւրեանց աշակերտքն վկայք իցեն. այլ եւ են ինչ ի վերայ նոցա յամենայն ժամանակի թրշնամանք՝ զոր չկարեն իսկ երբեք թաղուցանել, այն՝ զի նորք են: Համենայն ժամանակի առաջի աշխարհաց երեւեացի՝ թէ ինքեանք եւ աղանդն զոր դաին, ճեղքեալ եւ քակեալ են ի մեծ մարմնոյ աստի եւ ի հին եկեղեցւոյ աստի՝ որում Վրիստոս արկ հիմն, ուր Պետրոս եւ նորին պայազաաք ունին զգահերէց դիւսաւորութիւնն, եւ ամենայն ազանդք դաին զնոսա ի նմին գահու. եւ ժամանակ բաժանմանն յայտնի լինիցի, զի եւ հերձուածօք ինքնին չկարեն յուրաստ լինել, եւ չիշխիցեն իսկ ջանալ ցուցանել թէ ունիցին կարգ ինչ իսկզբանէ մինչեւ ցայժբմ, որ չեցէ երբեք ընդ մէջ հատեալ: Այս տկարու-

Թիւն է, ամենայն տղանդոյն՝ զոր մարդիկ հաստատեցին. զանցեալ ժամանակն ոչ ոք կարէ փոփոխել, եւ ոչ քան զինքն յառաջ մարդիկ կարգել, այնպէս՝ թէ լեալ իցեն յառաջագոյն ի նմին կարգի:

Միայն կաթուղիկէ եկեղեցի զամենայն ժամանակն զառաջինս լնու, կարգաւ՝ որում չկարէ ոք հակառակել: Օրէնք կարապետ լինին աւետարանին. սրայաղատութիւնն Մովսիսի եւ նահապետացն մի կարգ է ընդ այնմ՝ կարգի՝ որ ի Վրիստոսէ կարդեալ դայ. նմայն ակն ունել, եւ գալ, եւ յառ յայայ եկելոցն մինչեւ ցվախաձան աշխարհի ճանաչել, Մեսիայի նշանակ է, յոր եւ մէքս հաւատամք: Յիսուս Վրիստոս երէկ եւ այսօր, նոյն եւ յաւիտեանս¹⁹:

Ըրդ բաց յառաւելութենէ աստի՛ զոր ունի եկեղեցի Վրիստոսի, զե ինքն միայն ի վերայ նշանացն եւ սքանչելեաց հաստատեալ է, որք եւ համարձակութեամբ գրեցան ի ժամանակի՛ յորում զիպեցանն, եւ առանց զանգիտելոյ թէ դուցէ երեւեսցի ստութիւն. է մեւս եւս նշան հաստատուն յամենայն ժամանակի, որ զայլոց ամենեցուն նշանաց զճճմարտութիւն ցուցանէ, վասն այնոցիկ՝ որ չկեցին ի ժամանակս առաջին նշանացն. այս իսկ է կարգ կրօնիցն՝ որ յամենայն ժամանակի, մտրութեանցն՝ որ կամիցին կործանել զեկեղեցի, յաղթէ: Յաւել ի նոյն եւ զայլ իմն կարգ, զհանապազորդ պատժոց պատուհասից ի վերայ չլէիցն՝ որք զՎրիստոս չընկալան, որ խոստացեալն էր հարցն նոցա:

Վեռ եւս սպասեն եւ ակն ունին նմա չրեայք, եւ զուր ակնկալութիւն իսկ նոցա մի է ի ամնջանաց անտի նոցա. ակն ունին նմա, եւ ակն ունելովն յայտ առնեն՝ թէ յամենայն ժամանակի ակնկալութիւն էր նմա: Արշտամբեալ յանդիմանեալ անդատին ի գրոցն իւրեանց, ըզճճմարտութիւն կրօնիցն հաստատեն. եւ զկարգ կրօնիցն իրրեւ ի ճակատու գրեալ շրջեցուցանեն. միով հայելով ոք իմանայ թէ որպիսիք ոքք լինալ իցեն, կամ հիմ իցեն այնպիսիք՝ որպէս տեսանեմքն, կամ թէ վասն էր իրիք պահեալ կայցեն:

Ըստպէս չորք կամ հինգ դործք վաւերականք եւ սրայճատագոյնք քան զլոյս արեւական, ցուցանեն՝ թէ

կրօնքս մեր իբրև զաշխարհս հին է. եւ նոքիմք ապա յայտ լինիցի՝ եթէ որ հիմն արկ այսց տիեզերաց, նա է առաջնորդ կրօնիցն մերոց, որ քանզի զամենայն ի բռին ունի, միայն կարօղ եղև սկսանել եւ ի դլուխ տանել զխորհուրդս մտաց իւրոց՝ յորում բովանդակեալ կան առ մենայն յաւիտեանքն :

Չէ պարտ այսու հետեւ ընդ այն զարմանալ, որպէս սովոր իսկ են ոմանք, թէ Աստուած առաջի դնիցէ մեզ հաւատալ այնչափ իրաց՝ որ արժանի ըստ նորա մեծութեանն իցեն, միանգամայն եւ անհաս մտաց մարդկան. այլ մանաւանդ պարտ եւ պատշաճ է սքանչանալ թէ յետ այսչափ հաստատութեամբ եւ յայանութեամբ հաւատարիմ լինելոյ հաւատոցն, զեռ եւս յաշխարհի կոյրք եւ թերահաւատք կան :

Այն պատճառք՝ մեր անկարգութիւնս, եւ յերեւելիսս բեւեռելն, եւ անհնարին հպարտութիւն է : Առհամարիմք ամենեւին իսկ կալ ի վտանգի, քան զանձինս պնդել. լաւ համարիմք հաշել մաշել յանդիտութեան մերում, քան զտգիտութիւնս խոստովան լինել. լաւ համարիմք ընդ վայր ի խոյզ արկեալ քննել, եւ անհաւան մտօք զամենայն՝ զոր ինչ կամիցիմք, ածել զմտաւ, քան խոնարհել մտանել ընդ լծով իշխանութեանն Աստուծոյ :

Վսկին իրի իսկ բազում թերահաւատք կան. եւ Աստուած թողու այնպէս զի լինիցի ի խրատ որդւոցն իւրոց : Աթէ կոյրք չէին եւ ոչ վայրենամիտք եւ անհաւատք ի քրիստոնէից իսկ միջի, չկարէաք բարւոք առնուլ ի միտ զանհնարին ապականութիւն մերոյ բնութեանրս, եւ զխորս անդնդոցն՝ ուստի Վրիստոսն հան զմեզ : Աթէ ճշմարտութեան բանից նորա ոչ որ հակառակէր, չտեսանէաք զքանչելիսն նորա՝ որ յայնչափ հակառակութեանց միջի զճշմարտութիւնն միշտ անարատ պահէ, եւ մոռացօնք լինէին մեզ՝ եթէ շնորհօք փրկեցաք : Իսկ այժմ՝ կիսոց թերահաւատութիւն զայս խոնարհեցուցանէ. եւ ապստամբքն՝ որ ընդդէմ դարձեալ հակառակին խորհրդոցն Աստուծոյ, լուսաւորադոյն յուցանեն զգորութիւն նորա՝ թէ առանց այլոց ինչ իրաց կարօտանալոյ, կատարէ զաւետիսն՝ զոր իւրում եկեղեցւոյ խոստացեալ է :

Եւ արդ՝ զե՞ իսկ այսու հետեւ յամիցեմք հաւանել
հնազանդել զանձինս: Մի թէ անկն ինչ ունիցիմք՝ թէ հա-
նապաղ նոր սքանչելիս առնիցէ Եստուած, զի հանապազն
առնելով այնու հետեւ անպիտանք լինիցին, եւ ընդե-
լանիցին աչք մեր, որպէս ընդ գնացս արշաւելոյ արեգա-
կանն ընդելեալ են, եւ ընդ այլ ամենայն հրաշակերտան
բնութեան: Աստ թէ անկն ունիցիմք՝ թէ ամպարիշտքն
եւ հետեալք լիցին, եւ լաւքն եւ յոռիքն հասարակ
վիայութիւն ճշմարտութեան մատուցանիցեն, եւ ամե-
նայն մարդիկ միարանեալ նախամեծար քան զԵրեւանց
զախոս ցանկութեանց զճշմարտութիւն համարիցին, եւ
պատիր գիտութիւնն՝ որ իւրով նորակրօնութեամբ եւ
եթ զարմացուցանէ, դադարիցի ի մոլորեցուցանելոյ զմար-
դիկ: Չիցէ՞ իսկ այն բաւական՝ զի տեսանեմք թէ չե-
ղք՝ որ ընդ կրօնիցն կռուիցի, եւ ոչ վաղվազակի անհնա-
րին մոլորութեամբ յայտ առնիցէ՝ եթէ անկեալ է ի
մտաց, եւ այնու հետեւ յամբարտաւանութենէ եւ յան-
զխաութենէ ասէ, զինչ ասէն: Եկեղեցի՝ որ ժամանա-
կաց եւ մոլորութեանց յաղթեաց, չկարիցէ՞ յաղթել
ի միտս մեր տկար եւ անզօր խորհրդոցն՝ որ նմա հակա-
ռակիցին. եւ աւետիքն Եստուծոյ՝ զոր հանապազ տեսա-
նեմք զի կատարին, չկարիցեն զմեզ վերադոյն քան զԵ-
րեւելիսս բարձրացուցանել:

Եւ մի ոք ասիցէ յիս՝ եթէ աւետիքս այս դեռ եւս
անցայտք են, եւ զի մինչեւ ցկատարած աշխարհիս ձգին
աւետիքն, եւ ի վախճան աշխարհի միայն մարթեմք
ասել՝ եթէ տեսաք զլրումն նոցա. քանզի որ ինչ ան-
ցինն, զհանդերձելոցն ճշմարտութիւն դուշակեն: Եյն-
չափ անչափ հին կանխախօսութիւնքն՝ որ յայտնապէս
կատարեցան, ցուցանեն՝ թէ ամենայն ինչ ի դուխ ելա-
նելոց է, եւ թէ եկեղեցի՝ զոր գրունք դժոխաց չկարա-
ցին յաղթահարել, որպէս Արդին Եստուծոյ խոստացաւ,
կալոց մնալոց է հանապազ մինչեւ ցկատարած աշխարհի.
քանզի Վրիստոս՝ որ ճշմարիտն է յամենայնի, զայս միայն
չափ եւ սահման ժամանակի եղ նմա:

Նոյն աւետիք եւ զկեանս յախտենականս մեզ հա-
ւատարիմ՝ առնեն: Օ՛ի եթէ հաւատարիմ երեւեցաւ Ես-
տուած ի դուխ հանեալ կատարել զաւետիս զմօտաւոր

ժամանակիս, նոյնպէս հաւատարիմ լինիցի եւ ի կատարումն աւետեաց հանդերձելոց ժամանակացն, որոց պատրաստութիւն է ամենայն ինչ՝ զոր տեսանեմք. եւ եկեղեցի անշարժ կացցէ, յամենայն ժամանակի ի վերայ երկրի, եւ ոչ պարտեսցի, մինչեւ ի ժողովել որդւոցն իւրոց փոխեսցի համօրէն միանդամայն յերկինս՝ որ ճշմարիտ բնակութիւնն է նորա:

Իսկ որոց մերժեսցին ի բաց յերկնաւոր քաղաքէ աստի, յաւիտենական պատիժ պատուհասի մթերեալ պահի նոցա, եւ յետ կորուսանելոց նոցա զյաւիտենիցն երանութիւն ի ձեռն չարեաց դորձոց իւրեանց, կացցեն մնացնն նոցա տանջանք յաւիտենականք:

Այսպէս խորհուրդքն Աստուծոյ անշարժ կարգաւ կատարին. աւետիքն նորա եւ սպառնալիք առ հասարակ ճշմարիտք են. եւ այնու՝ զոր ի ժամանակի աստ յայսմիկ արդեամբք կատարէ, հաւատարիմ դորձէ զայն՝ զոր պատուիրէ մեզ կամ յուսալ կամ երկնչել ի յաւիտենից ժամանակսն:

Այս իսկ է՝ զոր ուսուցանէ քեզ ԿԵՐԿՆ ԿՐՈՒՄՑ, զոր համոռօտեալ եղի առաջի քո. ժամանակաւն ի մշանջնաւորութիւն ամէ գրեզ: Տեսանես դու կարդ ինչ հաստատուն յամենայն ի խորհուրդան Աստուծոյ, եւ երեւելի նշանակ մեծազօր զօրութեան նորա ի տեւել մնալ մշանջնաւոր ժողովրդեան իւրոյ: Այլ գիտես իսկ՝ եթէ արմատ հաստատութեան ունի եկեղեցի, եւ չէ մարթթէ ձեզքիցի ոք ի նմանէ եւ չկորնչիցի. եւ թէ ոլք ի նայն հաստատեալ իցեն, եւ արժանի ըստ հաւատոցն դործս դործիցեն, զկեանս յաւիտենականս անձանց պատրաստիցեն:

Ուսիր դու այսու հետեւ մտադիւրութեամբ զկարգս զայս եկեղեցւոյ, որ զճշմարտութիւն ամենայն աւետեացն խոստացելոց յԱստուծոյ քեզ յայտնապէս ցուցանէ: Երկիր դու յայնմ ամենայն՝ որ զյօրինուածս զայս եղծանիցէ, եւ ի կարգէ աստի ելանիցէ, եւ որ յառնիցէ ինքըն անձամբ յանձնէ եւ ոչ ի ձեռն աւետեացն եղելոց առ եկեղեցի իսկզբանէ աշխարհի: Արք՝ փոյթ յանձին կալջիր մեծաւ հողարարձութեամբ, զխոտորեալսն յեկեղեցւոյ ի սոյն միաբանութիւն կոչել, եւ յօժարեցուցանել

զամենեսին լսել եկեղեցւոյ՝ որով Հոգին սուրբ զհրամանս-
սըն բարբառի :

Պարծանք հարցն քոց, ոչ այն միայն է՝ զի ինքեանք
չթողին զեկեղեցի, այլ զի եւ պատասպարան եւս եղեն.
ուստի արժանի իսկ եղեն նորա որդիք անդրանիկք կոչել,
որ քան զամենայն անուանս նոցա փառաւոր եւ սքան-
չելի է :

Ինչ չէ ինչ պիտոյ զԱղովսեայ ճառել, եւ զԱարողո-
սէ մեծէ, եւ ոչ զարդոյն Վուզովիկեայ. միայն զմտաւ ած
զժամանակն՝ յորում դուդ կաս, եւ թէ յորմէ հօրէ եւ
քեզ Մատուած ծնանել : Թագաւոր մի այնպիսի մեծ ա-
մենայնիւ, քան այլովք ինչ զարմանալի իրօք, առաւել
հաւատովքն իւրովք երեւելի է : Թեկն ածէ նա կրօնիցն,
ի ներքոյ եւ արտաքոյ քան զերկիր տէրութեան իւրոյ, եւ
մինչեւ ի ծագս երկրի : Օրէնք նորա պատուար ամուր է
եկեղեցւոյ. ճոխութիւն բանից նորա՝ յորմէ պատկառեն
վասն արժանաւորութեան նորա եւ վասն մեծութեան
թագաւորութեան նորա, ոչ այնպէս երբեք պայծառա-
գոյն երեւի, որպէս յորժամ ջատագով դատաստանայն
Մատուծոյ լինիցի : Բարասու հայհոյութեան ոք ոչ լսէ,
սարսէ առաջն նորա ամպարշտութիւն. սա է թագաւորն՝
զոր եցոյց Սողոմոն, որոյ ոչ դառնայցէ բնդդէմ աչաց նո-
րա ամենայն չարագործ : Աթէ ընդ հերետիկոսութեան
մեծաւ փութով կռուիցի, առաւել քան զառաջին թա-
գաւորսն, ոչ զի երկնչի ինչ նա վասն աթոռոյ թագաւո-
րութեան իւրոյ, քանզի ամենայն ինչ հանդարտեալ է
առաջն նորա, եւ ի զօրութենէ նորա եւ ի զինուց նո-
րա զահի հարաւ ամենայն երկիր. այլ զի սիրէ նա զժո-
ղովուրդս իւր, եւ զի տեսեալ՝ թէ ձեռամբն Մատուծոյ
յայնպիսի իշխանութիւն ելեալ է, որում հանգոյն չէ
մարթ թէ իցէ յաշխարհիս, չգիտէ յայլ ինչ լաւութիւն
զայն իշխանութիւն ի կիր արկանել, քան ի բժշկութիւն
հարուածոցն եկեղեցւոյ :

Վմանող լեր դու գեղեցիկ օրինակիս այս, եւ զնոյն
օրինակ բարեաց թող պայազատայն քոց : Հանձն արա
դու նոցա զեկեղեցի առաւել քան զմեծ տէրութիւնս զայս՝
զոր յայնչափ ժամանակաց հետէ վարեն հարբն քո : Արե-
ւելի աղգաստհմն քո՝ որ առաջին է յաշխարհի պատուովն,

առաջին լինիցի առ լինել ջատագով իրաւանցն Աստու-
ծոյ, եւ ասրաճանել ընդ ամենայն աշխարհ զարքայու-
թիւնն Վրիստոսի՝ որ այնպիսի փառօք թաղաւորեցու-
ցանէ զազատոհմն քո :

¹⁾ ՏԵՏ. ԳԻԹ. ԳԻՐՔ Խ. ԳԼ. 29: ՎԵՐ. ԳԻՐՔ ՎՍՈՆ ՊԱՀԱ-
ԴԻԿ. առ ԸԼԳ. ՎՍՈՆ ՎՍԱԶԱՐ. Լ. 34: ²⁾ ԱԻԿ. ԸՆԳԳ. ՓԱԼԱՍ. ԺԸ.
2. ԼԻ. 21. ԼԳ. 6: ³⁾ ԻՐՆԵ. Ը. 2. 17: ՏՆՏՆԻՎ. ԸՆԳԳ. ՍՊՐԻԿ.
Դ. 1. 4. 5: ԱԻԿ. ՎՍՈՆ ՕՊ. ՀԱԸ. 3. 17. ԸՆԳԳ. ՓԱԼԱՍ. ՍՊՐ-
ՆԻՔ. ԻԼ. 79. ԻԼ. 1Գ. 1Գ. ԸՆԳԳ. ՀԱԿ. ՕՐ. Եւ ՍՊՐԳ. Ը. 20.
ԱՅՍԿՔՆ ՏՈՆԳԵՐՃ: ⁴⁾ ՏԵՍ ՏԼ. ԳՊՐՈՒ. ՏԼԻՐ. 18. 28. 41. 49. 53.
70. 76: ⁵⁾ ԻՐՆԵ. ՏՆՏՆԻՎ. ԸԻԿ. ԻՆՃԱ. ՏԵԳ: ⁶⁾ Ը. ԼՏԵՐ. Գ. Լ.
Թ. Ժ. ՆԵՆԵՐ. Ե. Ը. Թ. ԺԻ. ԺԳ: ⁷⁾ Ը. ՍՆԵՏ. ԼՕ. 22. Ը.
ԵՏԵՐ. Ը. 1. ⁸⁾ ՎՍՏՎ. Գ. 22. Լ. 32. ԱՅՍԿՔՆ ՏՈՆԳԵՐՃ: ⁹⁾ ՀՈՍՐ.
Ժ. 5. 19: ¹⁰⁾ ՎՍՏՎ. ԻԴ. 44: ¹¹⁾ ԱՆԳ. ԻԴ. 27: ¹²⁾ ՅՈՎ. Ե.
46. 47: ¹³⁾ ԼՏԵՐ. ՕՐ. ԻԼ. 4: ¹⁴⁾ ՏԵՍ ՏԼ. ԳՊՐՈՒ. ՏԼԻՐ. 41. 47.
53: ¹⁵⁾ ԼՏԵՐ. ՕՐ. Դ. 2. ԺԻ. 12: ՏԵՍ ՏԼ. ԳՊՐՈՒ. ՏԼԻՐ. 183:
¹⁶⁾ ՅՆՍ. Ե. 12: ¹⁷⁾ ԼՎ. ԺՕ. 35: ¹⁸⁾ ՍՆՏՄ. ԻԸ. 33: ¹⁹⁾ ԼՏԵՐ.
ԺԴ. 8:



ԵՐՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ

Պ Ե Տ Ո Ւ Թ Ւ Ի Ն Ք

UNIVERSITY OF TORONTO LIBRARY

130 St. George Street, Toronto, Ontario M5S 1A5

ԵՐՐՈՐԳ ԴՊՐՈՒԹԻՒՆ

Պ Ե Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Ք

Գ Լ Ո Ւ Խ Ե

ՓՈՓՈԹՈՒՆՔ ՊԵՏՈՒԹԵՆՑ ԵՆՍՏՈՒԾՈՑ ԻՆՍՄԵՆՍԻՍՏՐԱՆՍԻՆԵՆԵ
ԿԵՐԳԻՆ ԳԵՍԻ ԶԲՇԻԵՆՈՆ ԻՈՆԵՐԷՑՈՒՑԵՆՍԻՆԵ

ՉԻՔ ինչ որ համեմատ իցէ կարգի ճշմարիտ եկեղեցւոյ, զոր քեզն առաջի դրոշմեցի, բայց սակայն եւ պետութեանցն կարգ՝ զոր այժմիկ պարտ եւ պատշաճ է առաջի աչաց քոյ յօրինել, ոչ ինչ պակաս քան զայն շահաւէտ իցէ թաղաւորացն մեծաց, որպէս գուռ իցես:

Օ՛ի նախ բազումք ի պետութեանց անտի ի հարկէ մերձաւոր կցորդութիւն ընդ պատմութեան ժողովրդեան Եստուծոյ ունին: **Ա**ռ Եստուած ի ձեռն զասորեստանեայս եւ զբարեղացիս, պատուհասել նորօք զժողովուրդ իւր. զՊարսիկս ի դարձուցանել յաշխարհ իւրեանց. զՂեքսանդրոս եւ զառաջին պայազատս նորա պաշտպանել նմա նորօք. զՆախորդոս Երեւեալ, եւ զորս ըստ նմանէ մի ըստ միօջէ պայազատեցին, փորձել զնոսա. զհռոմայեցիս՝ զի թիկունք օգնականութեան լինիցին ժողովրդեանն, պահել զազատութիւն իւրեանց յերեսաց թաղաւորացն Եստուծոյ որ զնոսա սատակել կամէին: Հրեայք կացին մնացին ընդ իշխանութեամբ նոցին իսկ հռոմոց մինչեւ ցժամանակս Վրիստոսի. այլ իբրեւ անձանօթք եղեն ի նմանէ, եւ զտաշին մահն նենգեցին նմա, նորին իսկ հռոմայեցիքն յանդէտս ձեռնտու Եստուծոյ վրէժնորդութեանն եղեն, եւ սատակեցին զժողովուրդն ապախաւաւոր: Եստուած՝ որ անդատին իսկզբանէ, կարգեաց ընտրել իւր ի նմին ժամանակի յամենայն ազգաց ժողովուրդ նոր, սկսանէր նախ ժողովել զամենայն երկիր զձով

և զցամաք ընդ Հոռոմոց տէրութեամբ: Այլ ապա միաբանութեամբ այնչափ այլալեզու ազանց՝ որ երբեմն օտար էին ի միմեանց, և յայնժամ ապա եկեալ խառնէին ի միմեանքս ընդ իշխանութեամբ Հոռոմոց, հնարեցաւ Աստուծոյ տեսչութիւնն ընդ ամենայն կողմանս տարածանել զաւետարանին քարոզութիւն:

Հալածել հալածեցին հոռոմայեցիք զանս երեքարեւր զժողովուրդս զայս զնոր՝ որ յամենայն կողմանց յիւրեանց միջի ծագէր, այլ այն նեղութիւնք չարչարանաց և հալածանաց հաստատեաց և ամրացոյց զեկեղեցի Վրխատուի, և պայծառացոյց զնորս փառս հաւատովքն նորս և համբերութեամբ: Այլ ապա ուրեմն տեղի տայր Հոռոմոց պետութիւնն, և տեսեալ էթէ չմարթի յաղթահարել նուաճել զեկեղեցի Աստուծոյ, առնոյր ընդունէր զնա խաղաղութեամբ ի ծոց իւր, ընդ որում այնչափ երկայնժամանակեան անհնարին պատերազմաւ մտաւ եղեալ կրօնէր: Ամենայն հնարիք ջանային Հոռոմոց կայսերք հնազանդել զամենեւին եկեղեցւոյ Աստուծոյ, և Հռոմ քաղաք լինէր գլուխ հոգեւոր պետութեանն՝ զոր եկն Յիսուս Վրխատուս ընդ հանուր տարածանել:

Այլ իբրեւ եկն և հաս ժամանակն՝ իշխանութեան Հոռոմոց անկանելոյ, և զի մեծ պետութիւնս այս՝ որ ձեռն յանձին հարեալ պարծէր կարծելով՝ թէ մշանջեանս որ կայցէ, զայլոց պետութեանց անցս կրելոց էր, աւար հարեալ արիւնի քաղաքին խուժուժքն, այլ նա կրօնիք զառաջին շքեղութիւն և զպայծառութիւն պահէր: Այլ որ զՀոռոմոց աշխարհն ընդ ձեռամբ նուաճէին, տակաւ ուսանէին ի նմա զաստուածպաշտութեան կրօնս՝ որով զգազանութեան զվայրենական միտս ցածուցանէին. և թագաւորք իսկ նոցա՝ իբրեւ մի մի իւրաքանչիւր յիւրեանց աշխարհին զկայսերաց տեղի ունէին, քան զամենայն անուանս իշխանութեան փառաւոր և սքանչելի համարէին անուանեալ կոչել պաշտպան եկեղեցւոյ:

Այլ պարտ և պատշաճ է յայտ առնել և ցուցանել աստէն զճաճուկ խորհուրդս Աստուծոյ ի վերայ Հոռոմոց տէրութեան և Հռոմ քաղաքի գլխովին. զայս խորհուրդս յայտնէր Հոգին Յովհաննու երանելւոյ, և

դայն՝ առաքեալս եւ աւետարանիչ եւ մարդարէ պատմեաց յիւրում յայանութեանն մի ըստ միոջէ :

Անհարին իմն էր Հռոմ քաղաքի՝ որ անդուստ ի վերուստ ջերմանջերմն պաշտօնասէր զից լիեալ էր, ի բաց կալ ի դիւցապաշտութեան բարոյիցն, եւ ընդ քրիստոնեայ ընդ աստուածապաշտ թաղաւորօք իսկ. եւ ճերակոյտ ժողովրդեանն պատիւ համարէր իւր պաշտանել զիցն Ռոմիզայ, քանդի նոցա միայն համարէր զամենայն յազթութիւնս հնոյ ընկերհաշտութեանն¹ : Մաղում անդամ աշխատ առնելին զինքնակալս իւրեանց հրեշտակութեամբ՝ որով զիցն իւրեանց զպաշտօն անդրէն միւսանդամ հասաատել խնդրէին, եւ համարէին այնպէս՝ եթէ մեծ թրշնամանք են Հռոմոնոց պետութեանն ջնջել բառնալ ի միջոյ զհնացեալ գնտաի զընդունայն պաշտամունս զիցն : Ասան որոյ չէր մարթ զժողովս զայս միաբանութեան՝ որ ի դիւսաւորաց եւ ի նշանաւորաց ամենայն համօրէն քաղաքին կայր, եւ զայլ եւս անթիւ բազմութիւն մարդկան՝ յորս էին դրեթէ ամենայն իշխանք հօրօք հռոմայեցւոց, ի բաց դարձուցանել ի սնտաի կարծեաց անտաի իւրեանց, ոչ աւետարանին քարոզութեամբ, ոչ հնոց մարդարէից զուշակութեամբ՝ որ յայանապէս ի դուլս ելեալ կատարէին, ոչ զառնալով ի հաւատս դրեթէ այլ եւս ամենայն կողմանց տէրութեանն, եւ ոչ թաղաւորացն իսկ զառնալով, որք իւրեանց հրովարտակօք համարձակելին զքրիստոսական հաւատս. այլ զնորին հակառակն՝ թշնամանելին եւ անարդէին զեկեղեցի Աստուծոյ, եւ ըստ օրինակի հարցն իւրեանց, պատճառս ամենայն անհարթութեանց եւ չարեաց տէրութեանն զնոսա համարէին, եւ յօժարք եւ պատրաստք էին զառաջին հալածանս նորոգել եթէ ոչ ինքնակալք ընդդէմ դարձեալ նուաճելին զնոսա :

Այսպիսի էր եկեղեցի ի չորրորդ դարուն, հարելք ամօք յետոյ քան զՊոստանդիանոս. այլ յայնժամ ածեալ զմտաւ Աստուծոյ զահագին զանհարին վճիռ մահու՝ զոր ի վերայ հաւատացելոցն տայր ճերակոյտն, եւ զգազանական զմոլիկան բարբառ աղաղակի ժողովրդեանն՝ որ արեան քրիստոնէիցն ծարաւեալ, բաղում անդամ ի թատերան ահագին գազանութեամբ աղաղակ եղեալ գոչէին ընդդէմ նոցա, առ մասնեաց ի ձեռս խուժագուժ

ազգաց զքաղաքն՝ որ արեամբ մարտիրոսացն արեալ էր, որպէս երանելին Յովհանն ասէ²: Աճ նորոգեաց նա ի վերայ Հռոմոց զահագին պատիժ պատուհասին՝ զոր երբեմն ի Ռարեղոնն եցոյց, զի եւ Հռոմ քաղաք նովին անուամբ կոչեցեալ է: Այս նոր Ռարեղոն՝ որ ամենայնիւ զհետ երթեալ նմանէր առաջնոյն, ըստ առաջնոյն օրինակի ամբարտաւան հպարտացեալ վասն իւրոց յաղթութեանցն, համարձակեալ ի փափկութիւնս եւ ի մեծութիւնս, պրղծեալ աղանդեալ հեթանոսական պաշտամամբք, թշնամի հալածիչ ժողովրդեանն Աստուծոյ, ըստ նմին օրինակի եւս անկանէր անկումն մեծ անհնարին, եւ զնորա աւերն Յովհաննէս երանելին նուազէ³: Ազճան կորեան փառք յաղթութեանց իւրոց՝ զոր ի դիան իւր հանէր. կոխան եղև առաջի բարբարոսաց՝ որ երկցս եւ չորիցս անգամ տիրեալ քաղաքին, աւար հարեալ քանդէին կործանէին: Սուր բարբարոսաց՝ քրիստոնէից միայն խնայէր: Աոր Հռոմ քաղաք անդատին ի մոխրոյ այրեցածոյն առաջնոյն ծնանէր լի կարգօք քրիստոնէութեան. եւ յայնժամ ապա յեա արշաւանաց բարբարոսաց ի գլուխ ելեալ կատարէր յաղթութիւնն Վրիստոսի ընդդէմ՝ զիցն Հռոմոց, որ ոչ միայն քակէին եւ կործանէին, այլ եւ ամենեւին իսկ ի մոռացօնս անկանէին:

Արդ՝ այսպէս այլ եւ այլ պետութիւնք աշխարհի սպասաւոր եղեն կրօնից եւ պահպանութեան ժողովուրդեանն Աստուծոյ. վասն որոյ Աստուած՝ որ զպէսպէս անցս իւրոյ ժողովրդեանն ի ձեռն մարգարէիցն յառաջագոյն պատմեաց, նոյն դարձեալ նոքօք եւ զպայազատութիւն պետութեանց կանխադոյն բարբառեցաւ: Տեսեր ապաքէն՝ եթէ զհարզ զԱբուբքոզոնոսոր ցուցանեն գիրք, թէ զպոյց է եւ զժողովուրդս հպարտացեալս պատուհասելոց, մանաւանդ զազն Հրէից՝ որ ապախտաւոր երախտակորոյս առ իւր տէրն գաանէր: Տեսեր՝ թէ զհարզ յայանապէս յանուանէ իսկ զԱլիբոս կոչեն գիրք, երկերիւր ամօք յառաջ քան զնորա ծնունդն, եթէ նա զժողովուրդն Աստուծոյ դարձուցանելոց է, եւ զհպարտութիւն ամբարհաւածութեան բարեզայեոց ցածուցանելոց: Ըստ նմին օրինակի եւ աւերն Աինուէ քաղաքի յայանապէս կանխադոյն ճա-

ուեր: Պանիէղ ի զարմանալի տեսիլս իւր եցոյց յայտ յանդիման՝ եթէ որպէս յանկարծակի վաղվազակի բարեկացւոց տէրութիւնն, Սարաց եւ Պարսից, Աղէքսանդրի եւ Յունաց անցանէին: Աս դարձեալ զՏայհոյութիւնս եւ զանադորունութիւն Անախթայ Արեւելոյ յառաջագոյն ճառէր, նոյն եւ զգրանչիլի զզարմանալի յազթութիւնս ժողովրդեանն Աստուծոյ ի վերայ առնն՝ որ հարածէրն եւ նեղէր զնոսս, գուշակէր: Տեսաննս որպէս ոճով մանր սրտով՝ թէ զխարզ այն մեծամեծ պետութիւնք անկեալ կործանեսցին մի ըստ միոջէ, եւ դարձեալ թէ զխարզ զնոր պետութիւնն՝ զոր եկն Տէրն մեր հաստատել, եւ զնորս ճշմարիտ կերպարանս ճշգիւ գտակաւ նշանակի, որպէս զի չէ հնար՝ եթէ չծանիցէ որ զնա: Այն ինքն է պետութիւն սրբոց Բարձրեղոյն, այն՝ տէրութիւն Արգւոյ մարդոյ, եւ այդ տէրութիւն միայն, իրրեւ այն ամենայն մի ըստ միոջէ անկեալ կործանեսցի, կոյցէ մնայցէ մշանջնաւոր:

Խորհուրդք կամայն Աստուծոյ ի վերայ Հռոմոնց պետութեանն՝ որ քան զայլ ամենայն պետութիւնս աշխարհիս մեծ էր եւ երեւելի, ոչ ինչ ծածկեցան ի մէնջ, որպէս ինչ եւ ի բերանոյ Յովհաննու երանելոյ լուար: Հռոմ ինքնին դիտովին ի միտ առ զգորութիւն ձեռին Աստուծոյ, եւ իրրեւ զմի յայլոցն պետութեանց եղևնա առակ օրինակի արդարութեանն նորա: Այլ երանելի քան զայլ քաղաքսն դիպեցաւ, այնու՝ զի սրբեալ իւրով թշուառութեամբք ի մնացեալ կռապաշտութենէն, քրիստոսական կրօնիւք եւ եթ կայ այժմ, զոր պատմէ իսկ ամենայն աշխարհաց:

Արդ ամենայն մեծամեծ պետութիւնք աշխարհի՛ զոր տեսաքն մի ըստ միոջէ, դարձակից լինէին պէսպէս կերպարանօք օգտի կրօնից եւ փառայն Աստուծոյ, որպէս եւ Աստուած իսկ եցոյց մարդարեւիւքն:

Աւ իրրեւ ընթեռնուս դու ստեպ ստեպ ի գիրս անդ նոցա՝ եթէ թաղաւորք խուռն մասնիցեն յեկեղեցի անդր, եւ թէ պատասարանք եւ սնուցիւք լինիցին, անդրատին յանձնէ ի միտ առեալ ծանիցես՝ եթէ զինքնակալաց եւ զայլոց թաղաւորաց քրիստոնէից են բանքն. եւ քանզի թաղաւորք քո նախնիք քան զայլսն ամենեօին

երևելի նշանաւոր գտան հովանի լինել եւ տարածանել զկեղեցի Աստուծոյ, վասն որոյ համարձակիմ վճիռ տալ հաստատութեամբ՝ եթէ վասն նոցա առաւել յայտնութեամբ, քան վասն այլ ամենայն թաղաւորաց ճառեն երևելի մարդարէութիւնքս :

Արդ քանզի այնպէս իմն ի մտի եղեալ էր Աստուծոյ՝ եթէ ի ձեռն առնուցու զայլ եւ այլ պետութիւնս աշխարհի, ի պատժել կամ ի կրթել, ի տարածանել կամ հովանի լինել ժողովրդեան իւրում, վասն այնորիկ իսկ կամեցեալ ցուցանել՝ եթէ ինքն է առաջնորդ այնմ ամենայնի, եցոյց եւ յայտ արար մարդարէիցն յառաջագոյն զճաճուկ խորհուրդսն, եւ նոցա տայր կանխաւ բարբառել, զոր ինչ միանգամ յառ յապայ ժամանակի կատարելոց էր : Ասան որոյ քանզի պետութիւնք մտանէին ի կարգ աստուածեղէն խորհրդոցն վասն ընտրեալ ազգին, նմին իրի եւ աջորութիւնք նոցին պետութեանց գտանին յառաջադոյն գուշակեալ ի պատգամաց անտի Հոգւոյն սրբոյ՝ որ անգուստ ի վերուստ զհաւատարիմ ազգին պայազատութիւն բարբառէր :

Արչափ առաւել փոյթ յանձին ունիցիս գու զհետ երթալ մեծամեծ դործոց, եւ զնոսա անզր յիւրեանց սկիզբն տանել, այնչափ առաւել բնդ խորհուրդս աստուածեղէն տեսչութեանն զարմանայցես : Պարտ եւ պատշաճ է, զի ասակն ի մօտոյ ի միտ առնուցուս զԱստուծոյ խնամակալութեանն կերպարանս, որ տակաւ օր ըստ օրէ լուսաւորեցին ի միտս քո, եւ զի ուսանիցիս ածել զմարդկօրէն իրս առ կարգս յախանից իմաստութեանն՝ յորմէ ամենայն իրք մարդկան զիւրեանց սկիզբն ունին :

Չառնէ յայտ հանապաղ Աստուած զիւր կամեն ի ձեռն իւրոց մարդարէիցն, վասն թաղաւորաց եւ վասն միահեծան իշխանութեանց՝ զոր ամբառնայ կամ քակէ . բայց քանզի զայդ բազում անգամ ի մեծամեծ իշխանութիւնս՝ զորոց վերադոյնն ճառեցաք, դործեանց, յայտ առնէ մեզ այնպիսի յայտնադոյն օրինակօք, զոր ինչ եւ յայլ իշխանութիւնսն դործիցէ, եւ նովին խնլամուտ առնէ, զթաղաւորս զերկու ինչ հաւաստեաւ ճանաչել . նախ՝ թէ ինքն է, որ զթաղաւորութիւնս կարգէ, առ ի տալ

զնոսա ում՝ եւ կամիցի. եւ երկրորդ անգամ՝ եթէ մարթի զնոսա ի կիր արկանել վասն խորհրդոց ինչ, զոր ի վերայ իւրում ժողովրդեանն ունիցի, ի ժամանակի եւ ի կարգի՝ զոր ինքն յառաջագոյն սահմանեաց:

Այն իսկ պարտի զհամօրէն թագաւորս ի կատարեալ հնազանդութեան ունել, եւ զնոսա մտադիրս ուշակալուս աստուածական հրամանացն դործել, որպէս զի յամենայն դէպս՝ զոր նոցա առաջի մատուցանիցէ, ձեռն կարկառիցեն խորհրդոցն նորա վասն իւրոց փառացն:

Եւ այց սոյն իսկ իշխանութեանցն կարգք, թէպէտ եւ մարդկօրէն եւս զերան զմտաւ անիցեմք, բազում շահօգտի ունին, յաճախագոյն վասն իշխանաց: Վանդի ամբարհաւածութիւն, ընտելական ընկեր աւազութեան պատուոյ, կարի իմն նուաճեալ գտանի յահալին տեղենէ աստի. զի եթէ մարդիկ ցածնուլ եւ զեջանել ուսանին, իրրեւ տեսանիցեն զթագաւորս զի մեռանին, ո՞րչափ եւս առաւել ի տարապարտ հպարտութենէ անտի զեջանիցին, իրրեւ տեսանիցեն՝ եթէ եւ պետութիւնք ինքնին գլխովն անցանեն. եւ մարթ ինչ իցէ արդեւք պայծառագոյն եւ լուսաւորագոյն քան զայս առակ օրինակի ընդունայնութեան մարդկեղէն մեծութեան ուրեք գտանել:

Ասան որոյ յորժամ տեսանիցես՝ զի անցանեն զնան առաջի աչաց քոց, ի վայրկեան ժամանակի ոչ միայն թագաւորք եւ ինքնակալք, այլ մեծամեծ պետութիւնք իսկ յորոց զահի հարեալ գողացին ամենայն համօրէն տիեզերք. իրրեւ տեսանիցես զասորեստանեայս զհինան եւ ըզնորս, զՄարս, զՊարսիկս, զՅոյնս եւ զհռոմն, որք եկեալ յանդիման լինիցին քեզ մի ըստ միոջէ, եւ ապա անկանիցին իմն իրրեւ ի միմեանց վերայ, առնուցուս անգրասին ի միտ՝ եթէ չեք ինչ ի մարդկան միջի հաստատուն, եւ թէ յողողողումն եւ խռովութիւն առանձինն իմն է մարդկօրէն իրաց:

1) Օստոյ. Գ. Բան Սիմո. առ Բմբ. Տումար 1. Վերք 1. թուղթ 30: Ընդ. Սասն Քաղաք. Ը. 1. սղովքն հանդերձ:
2) Յուս. Ժ. 6: 3) Ընդ. Ժ. Ժ. Ժ.:

Գ Լ ՈՒ Խ Ի

ՆԼ ԻՆՉ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՆԵՂԻՆԻ ՊԵՏՈՒԹԵՆԵՆ ՓՈՓՈՒՄԵՆՆԵՑ ԲԱՐՍ ՊԵՏ
ՆԻ ՊԵՏՇԵՆ Ե՛ ԹԵՂԵՆՈՐԵՅ ՈՒՍԵՆՆԻ.

Ընչ, այն տեսիլ եւս առաւել շահաւոր եւ հեշտական
գործիցի, յորժամ ոչ միայն զվերանալ պետութեանցն
եւ զանկանել անիցես զմտաւ, այլ եւ զպատճառս եւս
զանկերց նոցա եւ զնուազերց :

Քանզի զոր օրինակ Մատուած յօրինեաց զյարգա-
րումն տիեզերաց, եւ այն՝ որ ինքն ամենազօրն էր, կա-
մեցաւ վասն կարգի հաստատութեան՝ զի իւրաքանչիւր
կողմանք աշխարհի զմիմեանց կախիցին . նոյնպէս յօժա-
րեաց՝ զի ամենայն իրք մարդկօրէնք կարգ իմն եւ համե-
մատութիւն ընդ միմեանս ունիցին, այս ինքն՝ զի մարդիկ
եւ ազգք իւրաքանչիւր ունիցին կերպարանս, ըստ համե-
մատութեան բարձրութեան՝ յոր վերանալոց էին, եւ զի
բաց ի սահաւ ինչ իրաց՝ որք արտաքոյ սովորութեան ե-
կեալ զիպեցան, յորս կամէր Մատուած՝ զի աջ իւր միայն
երեսացի, չիք ինչ փոփոխումն յիրս աշխարհիս զիպեալ,
որոյ չիցն պատճառք ի ժամանակն առաջինս :

Ըյլ քանզի յամենայն գործս է ինչ՝ որ յարգա-
րեալ պատրաստէ զնոսա, է՛ որ բերէ զմարդիկ բուռն
հարկանել զնոցանէ, եւ է գարձեալ՝ որ ի դուռս հա-
նեալ կատարէ, վասն որոյ ճշմարիտ գիտութիւն պատ-
մութեան այն է՝ զի յամենայն ժամանակս, զծածուկ
պատրաստութիւնն՝ որովք մեծամեծ փոփոխմունք լինի-
ցին, եւ զանցս երեւելիս՝ յորոց նոքայն ի դուռս ելանի-
ցն, զայն գտանել որ մարթացէ :

Եւ արգարեւ իսկ չէ բաւական առաջի աչաց միայն
հայել, այս ինքն զմեծամեծ դէպն եւ եթ նկատել, որք
յանկարծ բախտաւորութեան կամ չաջողութեան պե-
տութեանց պատճառք լինիցին . վասն որոյ յորժամ մարդ-
կիդէն իրաց ի վերայ կալ հաւաստեաւ կամիցի որ, պարտ
եւ պատշաճ է ելանել բարձրանալ մտօք, եւ քննել մի
ըստ միոջէ զյօժարութիւն եւ զբարս, կամ զի միանգա-
մայն միով բանիւ ասացուք՝ զըոյս բարուց ծննդեան,
եթէ համօրէն զլիաւոր ժողովրդոց եթէ, թաղաւորաց ա-

աւանձինն եւ եթէ ամենայն համօրէն նշանաւոր մարդկան՝ որ իւրեանց իշխանութեան պատուովն պատճառք փոփոխմանց տէրութեանց եղին ի բարիս կամ ի չարիս, եւ հասարակաց աջողութեան կամ թշուառութեան:

Տանայցայ պատրաստել զմիտս քո առ այսպիսի կարեւոր խորհուրդս յառաջին դպրութեան ճառիս. անդ տեսեր մի ըստ միովէ զբարս ազգացն եւ երեւելի մարդկանն՝ որ առաջնորդեցին նոցա: Յուցի քեզ զգէպս ինչ՝ որ ընդ առ յայսպիսի դիպելոց իրաց ունէին կցորդութիւն. եւ զի ցանկ ունիցիս ի մտի զյօրինեալ յարդարումն երեւելի իրաց աշխարհիս, զի զայն իմն առաւել կամէի յայանել քեզ, զանց արարի զբազում ինչ առանձինն իրօք՝ զորոց ոչինչ մեծամեծ իրք զհետ գային: Այլ քանզի ուշ արարեալ կարգի պատմութեանն՝ զբազում ինչ իրօք վարկաբազի անցեալ չկարացաք ըստ նոցին արժանեացն խորհել, այժմիկ պատշաճ է միտ դնել քեզ այնմ հաւաստեաւ, եւ զմիտսդ կրթել զի զըուն պատճառս իրաց խնդրեսցես:

Աստի ուսանիցիս դու զայն ինչ՝ զոր քեզ կարեւոր պէտք են դիտել, զի թէպէտ եւ ընդ առանձինն իմն դէպրս նայեցեալ այնպէս ինչ թուիցի՝ եթէ փոփոխունք բախտին եւ եթ իցին պատճառք կանդնելոյ եւ կործանելոյ պետութեանցն, բայց սակայն յորժամ ընդ ամենայն միանգամայն նայիցի ոք, նոյն դէպք ընդ առաջ ելաննն, որ ինչ ի խաղան դիպիցի, զի որ քան զամենեսեան յաջողակ իցէ՝ նա ստանայ զյաղթութիւնն:

Արդարեւ իսկ ի խաղս յայս սատակիչ՝ յորում աղքատ աղք է վերայ տէրութեան եւ իշխանութեան ճակատ տուեալ կռուէին, նա գեր ի վերոյ լեալ յաղթէր եւ զբախտն իսկ զլիովին ըստ իւրոց կամաց ի կիր արկանէր, որ միանգամ յառաջագոյն իսկ խելամուտ ելից իրացն եւ զեւ, որ առաւելն վաստակեցաւ եւ յերկարագոյնս տարաւ աշխատութեանց, եւ որ դիտաց ոք միջամուխ լինել եւ զգուշանալ ըստ իրացն պատշաճի:

Ասան որոյ մի իցէ թէ անփոյթ առնիցես խնդրել զպատճառս մեծամեծ փոփոխմանցն՝ որ եղեն, զի չեք ինչ որ այնպէս զմիտս քո կրթել կարիցէ: Այլ առաւել ի մեծ պետութեանցն կարգս խնդրեսցես, զի անդ մեծութիւնք իրացն դիպելոց՝ առաւել յայտ զպատճառսն առնիցեն:

ՅԵՅՍՍ վայրի ոչ ինչ ընդ մեծամեծ հարստութիւնն զՎիտնիսեայ եւ զԷրակղե հարստութիւնն համարիմ, որք Հնդկաց եւ արեւելից կողմանցն յաղթեալ՝ փառաւոր եւ անուանի եղին: Չիք ինչ ճշմարիտ ի վէպս նոցա եւ ի յաղթութիւնս նոցա չիք ինչ կարգաւ, արդ պարս եւ պատշաճ է թողուլ պւեակից, զի նոքա երգեսցեն, որ եւ անտի իսկ նիւթս ժողովեցին անձանց վասն իւրեանց կարկատուն առասպելաց:

Կարձեալ չճառեմ ինչ գպեաութենէն՝ զոր կանգնեաց սակաւ ժամանակս յասիացւոց աշխարհին Մագիւէս՝ զորմէ գրէ Արոգոտոս¹, որ նման իսկ է Անդաթիւրսեայ՝ զորմէ ճառէ Մեղասթենէս², եւ Տանաուսի՝ վասն որոյ Յուստինոսն գրէ³: Միւթացիք՝ զորս նա ի պատերազմ ուրեմն տանէր, արշաւանս եւ եթ գնէին, եւ ոչ եթ է յաղթութիւնս կատարէին: Կսկ այն ըստ զիսկաց իմն եղեւ՝ զի մինչ գեռ զհեռ մտեալ հարածէին զկիմերկացիս, մտին յաշխարհն Մարաց, հարին զնոսա, եւ հանին ի նոցանէ զկողմն ասիացւոց՝ յորում հաստատեալ էր նոցա զտէրութիւն իւրեանց: Արդ սոքա՝ որ նորոգն յաղթեցին, զամս քսան եւ ութ միայն տիրէին յաշխարհին, եւ անդէն ամպարշտութեամբ իւրեանց եւ սղահութեամբ եւ գազանամտութեան դնացիւքն կորուսանէին, եւ Միաքսարէս, ուստր Փրաւորտեայ, յորմէ առեալ էին, վանէր զնոսա: Աւ զայն ոչ եթէ զենու ինչ զօրութեամբ գործէր, այլ ճարտարութեամբ, քանզի ի կողմն մի ուրեք իւրոյ թաղաւորութեանն ստիպեալ երթալ, զորմէ անփոյթ արարին որք յաղթեցինն, կամ թէ չկարէին առնուլ, անդ կայր մնայր նա՝ զի նոքա իւրեանց զազանութեան բարոյիւքն զանձինս ատելիս ամենեցուն առնիցեն, եւ անձամբ յանձանց իսկ իւրեանց անպատեհ առաջնորդութեամբն ի պարտութիւն մատնեցին:

Գտանեմք դարձեալ ի գիրս Մարարոնի⁴ որ եւ ինքն ի Մեղասթենեայ առնու, զՅէւարկոնի զոմն եթւովպացւոց թաղաւորութեանս Թարակ իցէ, զորմէ գրի յաս-

տուածեղէն գիրանն, որ էր գոռ պատերազմող ի ժամանակս Սենեքերիբայ արքայի ասորեստաննաց: Սա անց գնաց մինչեւ ցՀերակղեայ արձանն, որպէս ինչ Հաւանութեան թուի առ ավամբք փրիկեցուց աշխարհին, եւ եկն եհաս մինչեւ ցեւրոպէացուոց կողմանս: Այլ զինչ իցէ ասել վասն առն միոջ՝ զորմէ սակաւ բանս մատենագիրք ճառիցեն. եւ որոյ պետութիւնն անդէն անհետ կորնչէր:

Աթուովացիք՝ որոյ թագաւոր եկաց նա, որպէս Արողոտոս պաամէ՞, ամենեւին քան զամենայն մարդիկ Համեմատադոյնք էին անգամովք, եւ բարձր Հասակալոյթ: Սխաբ նոցա կորովի էր եւ Հաստատուն. այլ չառնէին ինչ փոյթ զիրթութենէ, քանզի ի Հարուստ ոսկերըս մարմնոց իւրեանց եւ ի զօրութիւն բազկաց զնէին զյոյս իւրեանց: Ինքեանք ընտրէին իւրեանց թագաւորս, եւ որ մեծ քան զամենեւեան էր, եւ ուժով մարմնոյ զօրադոյն, զնա կացուցանէին իւրեանց թագաւոր: Պաամէ ինչ Արողոտոս զնոցանէ, յորմէ մարթ է ի վերայ կալ Հաւաստեաւ բարուց նոցա: Իբրեւ առաքէր առ նոսա Պամրիւսէս նեղութեամբ հրեշտակս եւ պատարագս, որպէս օրէն էր Պարսից մատուցանել, ծիրանի եւ ապարանջանս ոսկիս եւ խունկս խառնուածոյս ազգի ազգիս, նոքա այսն զպատարագօքն առնէին, յորս չէր ինչ պիտանի կենաց, նոյնպէս եւ զհրեշտակօքն գլխովին արհամարհեալ առ լրտեսս ունէին զնոսա, որպէս եւ էինն իսկ: Այլ թագաւոր նոցա կամեցաւ տալ նոցա պատարագս ըստ իւրում չափու վասն արքային Պարսից, եւ առեալ ի ձեռին աղեղն՝ զոր պարսիկ այր Հապլու ի ձեռին ունել կարէր, թող թէ ձգել, նա լարեաց անդէն զաղեղն առաջի հրեշտակացն, եւ խօսէր ընդ նոսա զայս ձեւ օրինակի. Այս խորհուրդ է, ասէ, զոր արքայ եթուովացուոց տայ արքային Պարսից: Իբրեւ կարիցեն Պարսիկք գիւրաւ ի կիր արկանել աղեղն մի այսպիսի, որպէս եւ եսս արարի, յայնժամ եկեալ ի վերայ յարձակեցին եթուովացուոց եւ ածցեն զօրս աւելի քան զոր ունիցի Պամրիւսէս: Աւ զգիցն գոհացին, զի չետուն նոքա եթուովացուոց ցանկութիւն արաաքոյ իւրեանց աշխարհին կլեալ տարածանելոյ: Աւ իբրեւ զբանսն կատարեաց, ան-

դէն թուլացուցեալ զաղեղն տայր ի ձեռս հրեշտակացն : Չմարթի ասել ճշմարտիւ՝ թէ որպիսի ինչ վախճան պատերազմին լինելոց էր : Ամբիւսէս սրամտեալ ի վերայ բանից պատասխանուոյն , չու առնէր վաղվազակի խաղայր դնայր յեթուովպացւոց աշխարհն , որպէս այր մի ի մտաց անկեալ , անկարգ , անպատրաստ , առանց կրթութեան , եւ ամենայն զօրքն սատակէին ի սովոյ յաւազին սեղես , մինչ չեւ էր առ թշնամիսն հասեալ :

Արդ՝ այս եթուովպացիք չէին արդար , որչափ ինչ ինքեանք պարծէին , եւ ոչ ի սահմանս աշխարհին իւրեանց փակեալ եւ արգելեալ . եգիպտացիք՝ որ դրացիք սահմանորդք էին նոցա , բաղում անգամ զփորձ առին զգօրութեան նոցա : Չիք ինչ կարդեալ ի խորհուրդս ազգացս վայրենեաց եւ չկրթելոց : Բաղում անգամ իբրեւ ի բնութենէ զգեղեցիկ ինչ գործոց բուռն հարկանիցեն , առանց կատարելոյ թողուն : Ասան որոյ սակաւ ինչ գտանեմք ի նոսա յուսումն վարդապետութեան , եւ ի նմանել նոցա : Այսու հետեւ ճառեսցուք ինչ զնոցանէ , եւ դարձցուք անդրէն յազգս կրթեալս :

Եգիպտացիք զառաջինն զկարգս առաջնորդութեան աշխարհի կալան : Այս ազգ զգաստ եւ իմաստուն յառաջամէ իսկ ծանեալ՝ թէ զինչ ինչ ճշմարտ կէտ օրինաց քաղաքի իցէ , որ է զկեանս անդորր առնել , եւ զժողովուրդս՝ երանելիս : Օգն՝ այնու զի ցանգ եւ միշտ միագոյն կերպարանս ունի յաշխարհի անդ նոցա , զմիտս նոցա հաստատունս եւ պնդակազմն առնէր : Եւ քանզի առաքինութիւն համօրէն ամենայն միաբանութեան հիմն է , վասն այնորիկ նոքա մեծաւ խնամակալութեամբ այնմ պատկառ կային : Պլխաւոր առաքինութիւն նոցա շնորհակալութիւնն էր : Ի պարծանաց անտի՝ զոր համարին զնոցանէ՞ թէ քան զամենայն մարդիկ շնորհակալու միտս ունիցին , զայն մարթ եւ պատշաճ է ի միտ առնուլ՝ եթէ քան զամենայն մարդիկ եւս միաբանք միախորհուրդք բնդ միմեանս էին : Բանզի երախտիք՝ զօդ են հասարակաց համօրէն եւ առանձինն միաբանութեան , եւ որ միանգամ ոք զերախտիս երախտաւորին ծանիցէ , կամի զի եւ ինքն երախտաւոր առ այլս գտանիցի . եւ իբրեւ զապախտաւորութիւնն ոք ի բաց ի միջոյ բառնայցէ , յայնժամ

այնպէս հաճոյ եւ հեշտական բարերարութիւնն գտանի, զի չեք որ այնմ չեցէ յօժար:

Օրէնք նոցա յտակ էին եւ արդար, միաբանիչք քաղաքացեաց ընդ միմեանս: Եթէ որ չփրկէր զհարստահարեալն եւ զնեղեալն իրրեւ ձեռնհաս էր, զնոյն կշեռ հասարակ պատիժս պատուհասից ընդ սպանողին կրէր⁸: Եւ եթէ որ չէր ձեռնհաս օգնել տառապելոյն, պարտ էր նմա զառաջնորդ բռնութեանն գուշակել, վասն որոյ եւ պատիժք պատուհասից սահմանեալ կային յօրինաց անտի վասն այնոցիկ՝ որ յանցաւոր այնպիսի օրինաց գտանէին: Սովին օրինակաւ իւրաքանչիւր քաղաքացի պահապան էր ընկերին, եւ բովանդակ աշխարհն միաբանեալ հակառակ չարադործացն:

Չէր օրէն չէր պատշաճ անպիտան ումէք յաշխարհին գտանել. յօրինաց անտի կարգեալ էր միում միում իւրաքանչիւր գործ առանձինն՝ զոր որդի ի հօրէ առնուին⁹: Չմարթէր ումէք երկուս գործս միանգամայն ունել կամ զարուեստն փոփոխել, բայց եւ ամենայն արուեստք մեծարոյ եւ պատուական էին: Պարտ եւ պատշաճ էր՝ զի լինիցին ի միջի նոցա մարդիկ քան զայլն պատուականք եւ մեծարեալք, զոր օրինակ ի դէպ է՝ զի աչք ի մարմնի լինիցին, այլ ոչ եթէ առաւելութիւն նոցա պատճառք արհամարհելոյ զոտս եւ զայլն եւս անարդ անդամն իցեն: Վասն որոյ եւ յեղիպտացիս քրմացն եւ զինուորաց առաձինն նշանակք էին պատուոյ, բայց եւ այլ եւս արուեստքն, եւ անարդադոյնք եւս, չէին ինչ արհամարհ. եւ մեղս իմն համարէին անարգել զքաղաքացիս՝ որ իւրեանց աշխատութեամբն յօգուտ հասարակաց նպաստ լինէին: Սովին օրինակաւ ամենայն արուեստք տակաւ կատարէին, զի յամենեսեան ի նոսա խառն էր պատիւն՝ որ դայեակ եւ սնուցիչն է նոցա. եւ իւրաքանչիւր որ զնուագոյնս գործէր զայն ինչ՝ զոր հանապազն տեսանէր, եւ ընդ որ ընդելեալ էր ի մանկութենէ իւրմէ:

Եւ զործ մի էր հասարակաց ամենեցուն, ուսումն օրինաց եւ իմաստութեան. եւ ոչ ումէք, յորմէ եւ իցէ կարգէ, չէր օրէն տղիտանալ զլրս կրօնից եւ զյօրինուած քաղաքի: Եւ մենայն արուեստից կարգեալ էր կողմն մի առանձինն. բայց չլինէր ինչ անտի նեղութիւն, քանզի

չէր ինչ մեծ լայնութիւն դաւառին. եւ յայնպիսի յօրինեալ յարգարման, չէր ուրեք վատացն եւ ծուլացելոյ թաքչել:

Յայսպիսի բարւոք օրէնս լաւագոյն այն էր՝ զի ամենքեան ուսեալ եւ կրթեալ էին ի մանկութենէ հետէ պահել զնոսա¹⁰: Իբրեւ սքանչելիս իմն համարէր նոցա նորաձեւս ինչ նորոգել. ամենայն ինչ հանապաղ զնոյն օրինակ կատարէր. եւ քանզի բազում զգուշութեամբ փոյթ յանձին ունեին պահել զմանունս, վասն այնորիկ խի եւ զմեծամեծսն եւ զերեւելի ինչ իրս հաստատուն ունեին: Չիբ խի ուրեք ժողովուրդ իբրեւ զնոսա՝ որ այնպէս հաստատուն զիւր օրէնս եւ զսովորութիւնս պահեալ իցէ:

Գարձեալ կարգ դատաստանացն եւս բազում ինչ ի պահպանութիւն օրինացն նպաստ լինէր¹¹: Ի գլխաւոր քաղաքաց որոշեալ առնուին դատաւորս երեսուն, յորոց կայր ժողովն՝ որ զհամօրէն թագաւորութիւնն դատէր: Սովորութիւն խի էր ոչ զոք յայս աստիճան ամբառնալ, բայց եթէ որ քան զամենայն քաղաքացիս իմաստունք եւ զգաստասէրքն էին. թագաւորն կարգէր նոցա հասս եւ ռոճիկս, որպէս զի յամենայն հոգոց տանն եւ ընտանեաց զերծեալ, զամենայն ժամանակս իւրեանց յայն եւ եթ ծախեսցեն՝ զի օրէնքն ամենայն ուրեք հաստատուն պահեսցին: Այնչ վարձս վասն դատաստանաց առնուին, զի չեւ եւս էր արգարութեանն ի կարգ արուեստիցն մտտեալ: Եւ զի մի զիւրաւ խարիցի ոք, գրով զիրսն վրձարէին ի ժողովն անդ. երկուցեալ ի բաց փախչէին ի սնտախ ի թրթրակ լեզուի խարէութենէ՝ որ զմիտս շացուցանէ եւ զկարիսն գրգռէ. ջանային զճշմարտութիւնն ամենեւին առանց պաճուճանաց պատմել: Արակացու ծերակուտին արկանէր մանեակ ոսկի ի պարանոց իւր ընդելուզեալ ախմբք պատուականօք, զորմէ կախեալ կային կերպարանք մարդոյ առանց աչաց, զայն կերպարանս առնուանեալ կոչէին ճշմարտութիւն¹²: Երգ՝ իբրեւ արկանէր նա զայն նշան, այդ նշանակ էր սկսանելոյ դատաստանի. եւ կողման՝ որ յաղթէր ի դատաստանի, մատուցանէր նա զնշանն. եւ այս էր օրինակ զվճիռն տալոյ:

Եւգլխատացիք հնարս իմն ճարտարութեան ի կիր արկանէին, վասն զառաջին զհին ինչ կարգս իւրեանց հաս-

ատուուն ունելոյ . զի զայն ամենայն պէսպէս կերպարանօք սեթեւեթեալ պաճուճէին, որով եւ ի միտս ամենեցուն հաստատուն զյիշատակս նոցա զրոշմէին: Օայս ամենայն մտադիւրութեամբ կատարէին . եւ քանզի անդստին ի բնէ մտադիւրք եւ ուշակալուք էին, չմարթէր զայս ամենայն իրրեւ լոկ կերպարանս իմն ի կիր արկանել: Ալք շունէին ինչ գատախաղութիւն եւ որոց արգարութեամբ էին կեանք նոցա, ի քննութենէ անաչառ ատենին ապրել նոքա կարէին:

Յայսր վերայ էր յեղիպտացւոց աշխարհին եւ այլ եւս դատաստան, արտաքոյ օրինաց սովորութեան այլոց դաւառաց, յորմէ չէր հնար ումք զերծանել¹³: Սխիթարութիւն մեծ է, ի մահուն զիւր յիշատակն մեծարոյ առաջի մարդկան թողուլ . եւ յամենայն իսկ մարդկեղէն իրաց, զայս միայն չէ մարթ մահուն յափշտակել եւ հանել ի մէնջ: Եւ չէր համարձակ յեղիպտացւոց աշխարհին զամենայն մեռեալս խառն ի խուռն անխալիր գովել, հասարակաց դատաստանաւ պարտ եւ պատշաճ էր արժանի այնմ գտանել: Եւ զվաղվաղակի իրրեւ մեռանէր ոք, ի դատաստան զնա ածէին . անդ մատուցեալ խօսէր հասարակաց դատախաղն, եթէ յայտ առնէր եւ ցուցանէր ինչ եթէ չար են կեանք նոքա, անդէն զնորա յիշատակն դատապարտէին, եւ դիահանութեան իսկ չլինէր արժանի: Ժողովուրդն զարմացեալ սքանչանայր ի վերայ օրինացն զօրութեան՝ որ եւ յեա մահուն իշխէր, վասն որոյ ամենեքին զահի հարեալ յօրինակէ անախ նոցա, փոյթ յանձին ունէին շառնել արհամարհ զյիշատակս իւրեանց եւ զանուն ազգատոհմին: Եւ չէր յանցանս ինչ ի նմա չգտանէին, յայնժամ մեծաշուք փառաւորութեամբ յուղարկէին զնա . խօսէին բանս գովութեան զնմանէ, յորում ոչ ինչ բանք զպնուականութենէ տոհմին լինէին, զի ամենայն եղիպտացիք առ հասարակ աղնուականք էին, եւ դարձեալ՝ ստոյգ գովութիւն զայն համարէին, զոր իւրով իսկ առանձինն գործովք ոք ստանայցէ:

Յայտ իսկ է ամենեցուն՝ եթէ որպիսի ինամով եղիպտացիք զբիախունս մեռելոց պահէին . եւ այժմ իսկ ի սմին ժամանակի ամենայն ուրեք զնոցա զմոսեալ գիտիունս վրտանեմք: Ասան որոյ եւ շնորհակալութիւն նոցա առ իւ-

րեանց ծնանելիս մշտնջենաւոր էր. քանզի ուստեք իրրեւ զգիսկունս հարցն տեսանէին, վաղվաղակի զմտաւածեալ յիշէին զնոցա առաքինութիւն քաջութեան՝ զորմէ առ հասարակ ամենայն աշխարհն վկայեալ էր, եւ նովին յօժարէին զհետ երթալ օրինացն՝ զոր նորայն թողին:

Արդէս զի մի ստէպ ստէպ փոխս որ առնուցու, յորմէ վատութիւն եւ ծուլութիւն եւ նենդութիւնք եւ կաղք եւ հակառակութիւնք ծնանին, օրէնս իմն այնպէս կարգէր Ասիւքիս թագաւոր՝ զի եթէ փոխս որ յումեքէ առնուցու, զհօրն մարմին ի պատանդս առ փոխատուն թողուցու¹⁴: Արդ՝ ամպարշառութիւն եւ անհնարին վատանուանութիւն համարէր ի միջի նոցա, եթէ որ ոչ վաղվաղակի զայնպիսի աղնուական պատանդս յետս առ իւր դարձուցանէր, եւ եթէ առանց զայս պարտիս կատարելոյ որ մեռանէր, ի դիւհանութենէ զրկեալ դտանէր այնպիսին:

Թագաւորք եզիպտացւոց որդի ի հօրէ առնուին զիշխանութիւնն. սակայն քան այլոց ամենեցուն, առաւել նոցա անկ էր ըստ օրինաց վարս ընծայեցուցանել¹⁵: Այն եւ այլ օրէնք ուրոյն առանձինն՝ զոր միոյ ուրուք ի թագաւորաց կարգեալ էր, որք եւ ի կարգս մեհնական մատենից համարեալ էին: Այլ եթէ դիւհարձ ինչ որ էր թագաւորաց կամ բռնադատիչ, այլ մանաւանդ զնորին հակառակն՝ իրրեւ զբիս մեծարէին զնոսա. այլ զի հին ինչ օրէնք զամենայն ուղղեալ էին, եւ ոչ այլաբունակ ինչ քան զիւրեանց նախնիս յօժարէին վարս յանձինս ցուցանել: Ասան այնորիկ ոչ միայն յանձն առնուին զի աղզի աղզի հանդամանաց խորտկաց, ըմպելեաց եւ կերակրոց չտի եւ սրբման զնիցեն¹⁶, քանզի այս ընդելական իմն էր յեզիպտացւոց աշխարհին՝ ուր ամենայն որ ժուժկալ էր, եւ օդք իսկ աշխարհին դիւստութիւն շնչէին, այլ եւ թոյլ եւս տային՝ զի ամենայն իրաց ժամանակ կարգիցեն¹⁷: Անդ այլն ընդ առաւօտն յարուցեալ, մինչ դեռ յստակադոյն են միտք եւ սրբագոյն խորհուրդք, զթուղթս հրովարտակաց ընթեռնուին, զի արդարակորովք եւ իրաւակոհք յիրաւունան՝ զոր ընտրելոց էին, լինիցին: Արրեւ զհանդերձսն ազանէին, վաղվաղակի յարուցեալ երթային զոհս ի մեհնին մատուցանել: Անդ մեծամեծք արքունի

շուրջ բակ առեալ զթագաւորաւն, եւ զոհք ի վերայ բազնին, եւ քրմապետն աղօթս առ ի խրատ թեղադրեալ, դիցն մատուցանէր զի զամենայն առաքինութիւնս կարեւորս թագաւորին շնորհիցեն. զի դիւցապաշտ լինիցի եւ մարդասէր, զգաստ, արդարակորով, ազնուական, առանց կեղծաւորութեան, ճշմարտասէր, առատամիտ, իշխան անձին իւրում լինիցի, չարագործացն խնայելով պատիժս ի վերայ անիցէ, եւ ուղղագործացն աւելագոյն վարձս պարզեւիցէ: Վրմապետն անդէն զնովմբ անեալ եւ ըզյանցանաց՝ զոր թագաւորաց մարթ էր յանցանել, խօսէր. սակայն այնպէս համարէր՝ եթէ ոչ կամաւ ինչ, այլ յանգէտս յանկամս վրիպիցեն թագաւորք. եւ պաշտօնէիցն իմն մեղադիր լինէր որ զվնասակար խրատսն տայցեն, եւ զճշմարտութիւնն թագուցանիցեն. զայս օրինակ կրթէին զթագաւորս: Վանդի համարէին՝ եթէ կշտամբանք առաւել զիծեցուցանեն զնոսա. եւ թէ չիք ինչ՝ որ այնպէս ըզնոսա յառաքինութիւն անիցէ, որպէս ցուցանել որ ինչ նոցա պատշաճ իցէ, հանդերձ գովութեամբ՝ որ չիցէ հակառակ օրինաց, եւ զայն մեծաւ շքով առաջի զից բարբառելով: Յետ աղօթիցն եւ զոհից, ի մեհնական մատենասրն զնորհուրդս եւ զգործս արանց աւագաց ընթեռնուին յականջս թագաւորին, որպէս զի ըստ նոցա խրատուցն զիւր իշխանութիւնն վարիցէ, եւ զգուշանայցէ օրինաց՝ որք զթագաւորսն որ յառաջագոյն քան զնա եղին, հանդերձ իւրեանց հնազանդեցելովքն երանեալս գործեալ էին:

Իսկ եթէ արգարեւ խնամով այսպիսի խրատք կատարէին, եւ թէ այնց մտադեւր ունկնդիր լինէին, արդիւնք իրացն՝ որ ի խրատուէ անտի գործէին, յայտ առնիցեն: Ի մէջ թերացւոց, այս ինքն ի գլխաւոր հարբատութեան՝ յորում օրէնք զգուշութեամբ պահէին, որ եւ յետոյ այլոց հարատուութեանց եզիպտացւոց աշխարհին իշխան լինէր, քան զամենեսեան մեծ եւ զարմանալի թագաւորքն եղեն: Զերմէս՝ որ մօտ ի ջրհեղեղի ժամանակն էր, եւ մեւս Զերմէս Մովսիսի ժամանակից, որ Տրիսմեգիստէսն յորջորջեցաւ, այս ինքն երիցս մեծ, երկոքեան եւս իմաստունք եզիպտացւոց՝ որ իմաստութեան եւ կարգաց առաջնորդք ճանաչին, թերացւոց քաղաքին թագաւորք էին: Զամօրէն եզիպտացւոց աշխարհն բազում

շահա ի նոցա լուսաւոր կարդացն շահեցաւ . եւ ի նոցա ազնուական խրատուցն լինէր, զի սակաւ թաղաւորք թե-
րացեոց կացին, որ զեղծ վարս ունէին¹⁸ : Այնպիսեացն՝
մինչ զեռ կենդանիքն էին, խնայէին . զի աշխարհին խա-
ղաղութիւն զայն իմն պահանջէր . սակայն չէին ինչ ազատ
ի դատաստանաց՝ զոր յետ մահուան հարկ էր նոցա կրել¹⁹ :
Ոմանք ի թաղաւորաց զիահանութեան չեղն արժանի,
բայց այնպիսեաց սակաւ օրինակք կան . իսկ զնորին հա-
կառակն՝ բազումք ի թաղաւորաց այնպէս սիրելի եւ ցան-
կալի ժողովրդեան եղեն, զի ամենեքին անձկայրեաց տըր-
տմութեամբ եւ արտասուակաթ ողբովք իրբեւ զհարց եւ
զորդեկաց, զնոցա մահն կական բարձեալ լային :

Յետ մահուան զթաղաւորան դատել, այնպէս ազ-
նուական թուեցաւ ժողովրդեանն Աստուծոյ, մինչ զի
հանապաղ զնոյն ի կիր արկանէին : Յաստուածեղէն զիրս
տեսանեմք՝ զի թաղաւորք անօրէնք ի գերեզմանս հարց
իւրեանց չթաղէին, եւ ի Յովսէպայ զրոցն ուսանիմք²⁰
եթէ նոյն սովորութիւն եւ յասամնեանց ժամանակն
տեւեր : Աւ յայտ իմն աւնել կամէին թաղաւորաց՝ եթէ
թէպէտ եւ վասն իւրեանց փառաւորութեան, ի կենդա-
նութեան ազատ ի մարդկեղէն դատաստանաց իցեն, սա-
կայն յորժամ մահ զնոսա ի կարգ այլոց մարդկան իջու-
ցանիցէ, յայնժամ զնոյն դատաստան եւ ինքեանք կրիցեն :

Ազգիպտացիք միաս հնարագէտս ունէին, եւ զայն
յօգուտ եւ ի շահ ի կիր արկանէին : Հերմէսն նոցա եւ
մեւս Հերմէս նոր եւ շքնաղ զիւտիւք զեզիպտացեոց աշ-
խարհն լցին . եւ ամենեւին իսկ որ ինչ ի գէպ վայելու-
թեան եւ խաղաղութեան կենաց իցէ, ուսուցին նոցա :
Ի զուր է պարծելն եզիպտացեոց՝ եթէ Ոսիրիս նախ զեր-
կիր դործելոյ հանգամանս եցոյց²¹ . քանզի զայն եւ ան-
դուստ ի վերուստ ի մօտաւոր սահմանս աշխարհին՝ ուստի
ազդ մարդկան փութեցաւ, գտանեմք . եւ չէ ինչ երկրայ-
ութեան՝ եթէ այնմ մարդիկ անդատին ի սկզբանէ աշ-
խարհի տեղեակ էին : Այսն այնորիկ եւ նոքին իսկ եզիպ-
տացիք այնպէս երիցազոյն ժամանակաւ զՈսիրիսն համա-
րին, մինչեւ յայտնի իսկ երեւել էթէ զնորս ժամանակն
ընդ սկզբանս աշխարհի խառնեն . եւ կամին նմա համարել
զերսն՝ որոց սկիզբն ուր ուրեմն ի բացեայ էր յայնց ժա-

մանակաց՝ որ ի նոցա պատմութեանն ծանօթ են: Բայց թէպէտ եւ եզիպտացիք չեղեն դատակ հողագործութեան, եւ ոչ այլոց ինչ ճարտարութեանց՝ որ յառաջագոյն խակ քան զՃրհեղեղն կային, սակայն այնպէս յօրինեալ յարգարեցին, եւ այնչափ փոյթ յանձին կարան զի եւ ի մէջ ազգաց՝ որոց բարբարոսիկ բարք զամենայն արուեստս ի մոռացօնս դարձուցեալ էր, անգրէն նորոգիցեն, մինչև շինէր ինչ մեծաբոյն փառք նոցա, եթէ ճարտարութեանցն գտիչ ինքեանք լեալ էին:

Բայց են խակ եւ այլ եւս բազում արուեստք պիտանացուք՝ որոց նոքա գտակ ճանաչին: Առ քանպէ հարթ հաւասար յատակեալ էր երկիր նոցա, եւ հանազազ պարզ եւ վճիտ եւ յատակ էին երկիրք յամոյց, ինքեանք եղեն՝ որ զառաջինն միտ եղեալ զիտեցին զզնացս աստեղաց, նոյնպէս նոքին նախ զընթացս ստրուոյն յօրինեալ կարգեցին²²: Առ այսպիսի քննութիւնք ածին վնասս ի բնէ ի համարողութեան ճարտարութիւն. եւ եթէ ստոյգ ինչ համարիցիմք զայն՝ զոր Պլատոնն ասէ²³, եթէ արեգակն եւ լուսին ուսուցին մարդկան զհանդամանս թուոց, այս ինքն անգտին ի համարելոյ զաւուրս եւ զամիսս եւ զտարիս, յօրինեալ ինչ թիւք սկիզբն առին. ապա հարկ է ասել եթէ եզիպտացիք եղեն՝ որ զառաջինն յայնպիսի զարմանալի վարդապետաց ունկնդրութեան վայելեցին: Այնպէս եւ զաստեղան պատրանաց եւ զայլ եւս աստեղս ծանեան եզիպտացիք. եւ գտին զտարին մեծ՝ յորում երկիրք համօրէն առածեալ զինքեամբք, շրջին ի նոյն տեղի:

Առ ի ճանաչելոյ իւրաքանչիւր զեւր դեափն, յետ ցածելոյ ջուրց՝ Նեղոս դեափոյ՝ որ ամի ամի յորդեալ ողու զէր զերկիր նոցա, ի չափս ինչ բնթացան, որով մարթիցեն զասհմանս անդոցն չափել. եւ անտի ուսան զերկրաչափութեան ճարտարութիւն²⁴: Ղարձեալ անհնարին քննիչք էին անկոյ եւ ամենայն երկրարուզիս արմտեաց, որ յաշխարհին յայնմիկ յօդս քաղցրաշունչս եւ ի հեշտ արեւս արեգական սնեալ, շայեկան եւ պտղաբեր լինէր: Ս ասն այնորիկ բժշկական ճարտարութեան եւս նոքա եղեն գտիչք կամ կատարիչք²⁵:

Այսպէս գիտութիւն մեծարոյ էր ի մէջ եզիպտացւոց: ճարտարապետք զիւտից իրաց օգտակարաց, կեն-

զանեօք եւ յետ մահուան իսկ հասուցումն արժանաւոր
բառ իւրաքանչիւր վաստակոցն ընդունէին: Յայն սակա իսկ
եւ մատենաք երկոցունց իմաստնոցն նոցա՝ որ Հերմէան կո-
չեցան, մեհնական կարգեցան. որք եւ հաւասար դիւցա-
զանց գրոց համարէին²⁶: Ազխատայլք յառաջագոյն քան
զամենայն ազգս մատենադարանս կազմեցին: Անունն իսկ՝
որով զմատենադարանն յորջորջէին, զամենեսեան ի նա-
խանձ յորդորէր, մասնել եւ իրազէտ միջամուխ լինել
ամենայնի՝ որ ի ներքս համբարեալ կայցեն. եւ այսպէս
անուանեալ կոչէին, Պանձ առ ի դարման ողւոց. զի անդ
բժշկէին ոգիք յանդիտութենէ՝ որ քան զամենայն ցաւս
ողւոց դժնդակագոյն է, եւ անտի իսկ բղխն այլ ամենայն
ժանտագործ ցաւք ողւոցն մերոց:

Պոյ եւ այլ ինչ՝ որ հաստատութեամբ ի միտս ե-
զխատացւոց անկէր, այս ինքն մեծարել եւ սիրել զեւ-
րեանց հայրենի աշխարհն²⁷: Պից իմն բնակութիւն զայն
համարէին. քանզի դից, ասեն, յառաջնումն թաղաւո-
րել աշխարհին ընդ բազում բեւրս ամաց: Օնա մայր եւ
մարդկան եւ անասնոց կարծէին. քանզի առասպելարկին,
մինչ դեռ ընդ բնաւ, ասեն, անապատ եւ անջուր էր, ե-
զխատացւոց երկրին ի Նեղոս գետոյ թանալ եւ ծնանել
զմարդիկ եւ զանասունս: Քուրմն՝ որ զեզխատացւոց
պատմութիւնն գրեցին, անչափ թիւս ամաց դումարենն,
յորում եւ բազում ինչ զառանցելոց առասպելս տողեն, եւ
զգիցն ազգահամար կարգեն, որպէս զի զեւրեանց նախա-
ւորութիւն եւ զազնուականութիւն ժողովորդք ի միտ
առնուցուն: Բայց եզխատացւոց վաւերական պատմու-
թիւնն ընդ ճշգրիտ սահմանօք է. սակայն պատշաճ համար-
բէին ընդ այնչափ խորութիւն բազմութեան ամաց մտա-
նել, որով թուէր իմն՝ եթէ մշտնջեան իցէ ազգն նոցա:

Բայց էր եւ այլ հիմն հաստատութեան սիրոյն նո-
ցա՝ որով զեւրեանց զաւառն սիրէին: Արդարեւ նրստ եր-
կրին զեզեցիկ էր յոյժ, ի բնէ յուսթի քան զամենայն եր-
կիր, շուրջանակի հերկս հարեալ եւ վարեալ, մեծազանձ,
վայելուչ, զարդարեալ ի փութոյ եւ յառատամիտ կա-
մաց թաղաւորաց աշխարհին:

Ազխատայլք ցանգ ի մեծամեծս թեւակոխէին եւ
ի գործս աղնուականս: Ար ինչ վասն զՆեղոս գետ յազգի

ազգի պէսս ի կիր արկաներոյ դործեցին, անհաւատ պատմութիւնք կարծին: Դուն ուրեք եւ անօր տեղայ անձրեւ յեղիպտացւոց երկիրն, այլ գեան՝ որ ըստ սովորութեան ոռոգանէ՝ զերկիրն, անդր զանձրեւաջուրն եւ ըզձիննաջուր այլոց գաւառաց ժողովէ: Առ ի բազմացուցանելոյ զգեան՝ որ այնչափ շայեկանութիւն մատուցանէր, ընդ բնաւ երկիրն արարին ջրարուղիս եւ ջրմուղս անհնարին երկայն եւ լայն²³: Եւ զոս գետ զամենայն կողմանս արուցեալ արդիւնս շայեկանս ծնուցանէր, ճանապարհ յատակեալ էր քաղաքաց ի քաղաքս, զհամատարած ծովն եւ զծովն կարմիր ընդ միմեանս խառնէր, բնակք եւ եկք ընդ այն բերէին եւ տանէին վաճառս, եւ էր ամուր ազաստանի աշխարհին յերեսաց թշնամեաց. այնպէս՝ զի եւ սնուցիչ եւ պատսպարան էր երկիրն եղիպտացւոց: Օգաշտս եւ զխորաձորս հեղեղատէր. իսկ քաղաքք ի վերայ բարձրաւանդակաց շինեալք մեծաւ աշխատութեամբ, եւ բարձրացեալք իրբեւ զկղզիս ի մէջ ջուրոց, զուարճացեալ նայէին շուրջանակի ընդ երկիրն իրբեւ զջրամարդս մօրացեալ եւ ի պողարերութիւն պատրաստեալ: Իրբեւ արտաքոյ քան զչափն աճէր, ծովալիճքն՝ զորս ուրուք ուրուք ի թագաւորաց փորեալ էր, զյորդութիւն ջուրցն ի գոգս իւրեանց ամփոփէին: Աւ էր անդի կարգեալ ընդ որ միւսանդամ զեղոյր ելանէր ջուրն, սահանք մեծամեծք էին՝ որ բանային եւ խնուին որպէս պիտոյն էր. եւ իրբեւ գտանէին ջուրքն կայանս գնացից իւրեանց, ոչ եւս այնու հետեւ զետղ առեալ կային յանդաստանսն, այլ սկացեալ մնայր այնչափ՝ որչափ բաւական էր լինել պարարիչ բուսոյ ծննդեան երկիրն:

Այսպիսի էր պիտանութիւն ծովալիճին՝ զոր անուանեալ կոչէին միւրիսեան կամ մերիսեան²⁴, քանզի Միւրիս անուն էր թագաւորին՝ որ զծովալիճն զայն ետ փորել: Աւ էր իրբեւ հարեւր եւ ութսուն մեր վտաւանս շուրջանակի. որ զարմանալի ընթեռնելացն թուիցի, սակայն ստոյգ է: Ընդ կողմն զիրէացւոց աշխարհին էր նիսան, քանզի այնպէս փորեցին, զի մի բազում վայրք ի բարւոք երկրէն խափանեցին: Յորոց ձկանցն՝ զոր անափ ըմբռնէին, արծաթ բազում գայր թագաւորին. զի յորժամ երկիրն չառնէր ինչ արդիւնս, ծածկեալ զերեսս երկրին ջրով,

զանձս բաղումն համբարէին: Աւ էին երկու յուրանք բլրաձեւք ի մէջ լճին, եւ ի վերայ նոցա անդրիք երկու մեծամեծք ի վերայ ակժողոց, մին Սիւրբիզայ եւ մեւան նորին կնոջն. եւ էին յուրանքն յերկերիւր կանգնոյ ի բարձրութիւն ի վերոյ ջուրցն, եւ յերկերիւր կանգնոյ ի խորութիւն ի ներքոյ ջուրցն. որով յայտ առնէին՝ եթէ յառաջ քան զխորսն ընուլ, կանգնեցան անդրիքն. եւ թէ ձեռադարձ մարդկան է լինն այն լայնանիստ մեծութեամբ, եւ ընդ միով իշխանաւ ի գլուխ ելեալ:

Անտեղեկաց՝ որ շինն գիտակ եթէ զեարդ մարթ իցէ ի դէպն վարել զերկիր, պատիր պատմութիւնք կարծին յորժամ նոցա զթուոյ քաղաքացն Ադիպտոսի ճառիցէ որ³⁰: Աոյնպէս եւ մեծութիւնք զանձուց քաղաքաց անհնարին առ հաւատալ էին: Աւ էր տեսանել յամենայն քաղաքս եգիպտացւոց մեհեանս մեծապայծառս եւ ապարանս գեղեցիկս: Անդ շինողութեան ճարտարութիւն ընդ բնաւ երեւեցուցանէր զլին զայն գեղեցիութիւն եւ զազնուական մեծութիւն՝ որ բաղում շնորհօք զողիան լին առնէ: Անդ ի մեծամեծ սրահս եղեալ կային ի պահեստ քանդակադորձք ճարտարացն եգիպտացւոց, յորոց Յոյնք առնուին նմանութիւնս: Թեքացւոց քաղաքն քաջ քաջ ամենայն քաղաքաց յաղթէր գեղեցիութեամբն³¹: Հարևար գրունք նորա՝ զոր Հովերոսն երգէ, ընդ ամենայն աշխարհ անուանի են: Ալ միայն մեծանիստ էր, այլ եւ մարդաշատ. ասի՝ թէ կարող էր բևւր մի սպառազինաց ընդ իւրաքանչիւր գրունսն հանել³²: Թող բսա աւելեաց իմն համարիցի զասացեալս, եթէ որ կամիցի. սակայն հաստատուն է՝ եթէ առանց թուոյ էր բաղմութիւն քաղաքին:

Յոյնք եւ հռոմայեցիք զնորա փառաւորութիւն եւ զմեծութիւն հռչակ հարին, թէպէտ եւ զաւերական միայն տեսին. զե յետ աւերածին իսկ այնպէս անհնարին հոյակապ եւ ճնաշխարհիկ էր³³:

Աթէ մեր ճանապարհորդքս անդր՝ ուր քաղաքս այս շինեալ էր, երթայցեն, տակաւին բաղում ինչ անզուգական ի միջոյ աւերածոյն գտանիցեն. քանզի դորձք ճարտարաց եգիպտացւոց այնպէս յորինեալ էին, զև մի դիւրաւ փնասիցին ի ժամանակեայ եղծուածոյ: Պատկերս

յաղթա կոխէին³⁴, եւ սիւնս ստուարս: Ազխատացիք մեծամեծ ինչ իրաց ուշ առնէին, եւ կամէին բացուստ ի բաց ընդոստուցանել զտեսողսն. բայց եւ հանապաղ պայմանաւոր չարիով միակշիռ գործեալ, որով զհաւանութիւն տեսողացն կորզեցեն:

Ի քաղաքին սայխտացւոց՝ որ է թերայխտացւոց, մեհեանք եւ ապարանք գրեթէ ողջ բովանդակ ի յայտ եկին³⁵, յորս այնպիսի սիւնք եւ պատկերք անթիւ գտանին: Անդ ապարանք ինչ նշմարին կարի զարմանալի, որոյ մնացորդք թուին իմն՝ եթէ առ ի պիտոս մեծամեծ յօրինուածոց ձեռագլխոսաց եղծանելոյ մնացեալ իցեն: Ղանապարհք չորք երկարաձիգք յոյժ՝ որ ըստ ակն անկանին, ասնին ի չորս սրահս բարձրաբերձս զարմանալիս. եւ աստի եւ անտի ճանապարհացն նմանութիւնք ահագին ինչ եւ նորագործ գազանի, ի նիւթոյ իմեքէ՝ որ անօսար գտանի, եւ բարձրութիւն նոցա նոյնպէս նշանաւոր: Արպիտի՛ փառաւորութիւն, քանի՛ ընդարձակութիւն: Աոյն իսկ՝ որ մեզ գնորանշան շինուածոյն գրեցին, շեղեւ ժամանակ ի դէպ շուրջ գալ եւ զամենայն տեսանել. եւ ոչ իսկ՝ եթէ զկէսն տեսեալ իցեն, գիտեն հաւաստեալ. բայց զոր միանգամ տեսինն, նորակերտ նորանշան եւ ճաշխարհիկ էր: Աւ էր այլ սրահ՝ որ թուի եթէ ի միջոցին իցէ շքեղ ապարանիցն, եւ սիւնք հարեւր եւ քսան ի վեր ունէին զսրահն, եւ թանձրութիւն միոյ միոյ սեանցն վեց դիրկ, եւ մեծութիւն ըստ նմին համեմատութեան, եւ կոթողք կանդնեալք ի մէջ անջրպետաց սեանցն, որ յայնչարի ժամանակաց հեռէ տակաւին կանգուն կային: Պոյնքըն իսկ՝ զոր դիւրաւ եղծանէ ժամանակն եւ յայլագոյնս դարձուցանէ, ի մէջ աւերածոյ զարմանալի շինուածոյն նոյնպէս՝ որպէս էինն, երփն երփն հարկանին. քանզի եզխատացիք ճարտար գիտէին անեղծութեան նշանակ ի գործս իւրեանց դրոշմել:

Այ ապաքէն արժան իցէ, արժուական փութոյ թագաւորիս զգեղեցիկութիւնսն՝ զոր թերայխտացւոց անապատքն թագուցեալ ունին; ի յայտ ածել, եւ յեզխատացւոց ճարտարացն հնարողութենէ; արժուազոյն զվեր ձեռագլէտս գործել. թագաւորիս ասեմ, որոյ անուն այժմ յաշխարհս անձանթա հասանէ, որ եւ մինչեւ ի հեռաստան

ձգալի տալ խուզել եւ ի մէջ բերել զցանկալի գործուածքս՝ որ ի բնութենէ եւ ի ճարտարութենէ գործեալ իցեն : Ո՞ր զօրութիւն, որպիսի՞ ճարտարութիւն կարաց զաշխարհն զայն ցանկալի զարմանալի ամենայն տիեզերաց գործել : Աւ ո՞ր զեղ վայելչութեան ոչ գտանիցէ, յորժամ յարքունական քաղաքն նոցա ոք երթայցէ, ուր եւ ի բացուստ իսկ այնչափ չքնաղ զարմանալիք ի յայտ դան :

Ազխպտացւոց միայն անկ էր յիշատակս վասն առ յապայ եկեղոցն կանգնել : Աթոզքն նոցա եւ այժմ՝ իսկ մեծութեամբ եւ զեղեցիութեամբ իւրեանց սքանչելապէս զհռոտնոց քաղաքն զարդարեն . եւ հռոմայեցւոց զօրութիւնն, քանզի եզխպտացւոց հաւասարել չունէր ակն, բաւական համարեցաւ յիւրոյ մեծութեանն փառաւորութիւն զկոթողս թաղաւորացն նոցա ի կիր արկանել :

Ազխպտացւոց չեւ եւս մեծամեծ ինչ շինուածս, քան զԽարեղոնի աշտարակն տեսեալ էր, իբրեւ ի մալ եղին զիւրեանց յուրանս կանգնել, որք կերպարանօք եւ մեծութեամբ՝ ժամանակին եւ բարբարոսաց ապականչաց յաղթեցին : Ազխպտացիք անդտալին իւրեանց այնուական մըտօքն ընարեալ՝ զհասաատունն զմիակշիւ յօրինուածն սիրեցին, մերկ յաւերորդ պաճուճանաց : Ապաքէն բնութիւնն ինքնին ածիցէ զմիտան սիրել զլին եւ զմիախառնըն, բայց այնմ հասանել դժուարին է յորժամ միտք սովորեալ իցեն հանապաղ նորաձեւս առնել եւ քան ըզդէպն ճարտարել : Բայց եզխպտացիք հանապաղ կարդինչ եւ յօրինուածութիւն ցուցանէին . եւ եթէ ուրեք նորանչան ինչ եւ զարմանալի գործս երեւեցուցանէին, զայն ոչ եթէ օտար ինչ ի բնութենէ, այլ ամենեւին համեմատ բնութեան գործէին . եւ պարծէին իսկ եթէ ըզդէպն ճարտարութիւն ունին, զի գործուածք իւրեանց, իբրեւ զնոցայն առանց եղծանելոյ են : Բանքն իսկ՝ զորս ի ներքոյ բրգանցն դրէին, ոչ սակաւ այնուական քան զնոսին զգործուածսն էին . եւ խօսէին առ հանդիսատեսսրս³⁶ : Միոյ ի բրգանցն՝ որ ի թրծուն աղիւսոյ կազմեալ էր, արձանադիրն յայտ առնէր՝ եթէ չէ պարտ ումեք զնա հաւասար ինչ այլոց համարել . եւ թէ զոր օրինակ Արամազդ վերագոյն քան զամենայն զիսն է, նոյնպէս եւ նա ի վեր է քան զամենայն բրդունս :

Բայց որչափ եւ ջանայցեն մարդիկ, ամենայն ուրիշ երեւի՝ եթէ եղծականք են: Յուրանքն գերեզմանք էին³⁷. եւ թաղաւորացն իսկ՝ որ զնոսայն կանգնեցին, անդէն թաղել չեղեւ հնար. եւ ի գերեզմանս իւրեանց չվայելեցին:

Չգեղեցիկ ապարանիցն՝ որ անուանեալ կոչէր բաւիղ բաւղակաձեւ, թերեւս չճառէի, եթէ Արողոտայ³⁸ որ զայն տեսեալ էր, չէր վկայեալ՝ եթէ քան զյուրանսն նորանշան եւ զարմանալի էր: Առ եղբոր ծովալճին շինեալ էր, որ կոչէր միւրիսեան. համեմատ իւրոյ մեծութեանն եւ անսիւն էր: Այլ ոչ եթէ մի եւ եթ, այլ երկոտասան ապարանք էին, կարգաւ մի ըստ միոջէ յօրինեալք, եւ ընդ միմեանս խառնեալք: Այլ էին սրահք երկոտասան, եւ սենեակք հազար եւ հինգ հարեւր արտաքոյ սրահիցն շուրջանակի, եւ գաւիթք խառն ի մէջ սենեկացն. որ միանգամ միջամուտ լինէր սրահիցն շրջել ի ներքս, ոչ կարէր արտաքս ելանել: Այն անդ եւ բազում գեանափորք ընդ հողով: Յայսպիսի գարափորս լթաղաւորս թաղէին, եւ զկոկորգիզոս գաղանս սնուցանէին, որոց ելիպտացիքն՝ որ այնպէս խմաստունք էին, իրրեւ աստուածոց պաշտօն մատուցանէին. եւ ո՞րք ոչ ամօթ համարիցի պատմել զայդ, եւ կամ ոչ ողբայցէ ըզմարդկեղէն մտաց կուրութիւն:

Չարմանք մեծաքանչ են տեսանել զմեծազեղ փառաւորութիւն եւ զպայծառազեղն զարդ շիրմացն եւ գիպտացւոց: Քանզի ոչ միայն իրրեւ նուիրական կոթողս կանգնէին զնոսա, զինոքօք մեծամեծ թաղաւորաց յիշատակ՝ գալոց ժամանակաց պահեսցի. այլ եւ իրրեւ բնակութիւն յաւիտենից զնոսա համարէին: Չտունս՝ օտարանոցս կոչէին³⁹, յորս իրրեւ հեւրս անցաւորս բնակեալ եմք, կարճակեացք, սակաւօրեայք, եւ ոչ կարեմք զամենայն խորհուրդս մեր կատարել. իսկ ճշմարիտ բնակութիւն զգերեզմանս համարէին, ուր պարտ է մեզ բնակել անսպառ ժամանակս:

Բայց ոչ եթէ ի վերայ անշնչականաց միայն վաստակէին ելիպտացիք. ազնուագոյն վաստակ նոցա եւ գեղեցիկ արուեստգիտութիւն նոցա էր առ յերիւրել զմարդիկ: Յոյնք զայդ ճարտար գիտէին, վասն այնորիկ արքաւաղք՝ որ եղին ի մէջ Յունաց, որպէս Հովերոս, եւ

Պիւթադորաս, եւ Պղատոն, Վիկուրդոս իսկ եւ Սողոն մեծանուն օրէնսգիրքն, եւ այլ բազումք՝ զորս աւելորդ է յանուանէ յիշատակել, չորքան Ղազխպոս ուսանել զեմաստութիւն⁴⁰: Սամեցաւ Եստուած՝ զի եւ Սովսէս վարժեսցի ամենայն իմաստութեամբ եզիպտացոց, որ եւ անտիսկսաւ լինել զօրաւոր բանիւք եւ արդեամբք⁴¹: Նըշմարիտ իմաստութիւնն զամենայն ի կիր արկանէ. եւ չկամի Եստուած զի նոքա՝ զորս ինքն շնորհօքն վառիցէ, յայն ապաստան՝ զամենայն մարդկօրէն հնարս ի բաց թողուցուն, զի եւ նոքին իսկ մարդկեղէն հայթայթանք անզըստին յԵստուծոյ են:

Եզիպտացիք կարգս իմն ուսեալ էին, որով մարդիկ մտավարժք լինէին, մարմնադեղք, անդամայաղթք, կանայք՝ բազմաճին, եւ մանկունք՝ կայտառք եւ շոյտք: Մովին կարգաւ ազնւածէր եւ զօրանայր: Արկիրն ի բնէ առողջազոյն զորձէր զմարդիկ. սակայն փիղեսոփայութիւնն ուսոյց նոցա՝ եթէ պարտ է դարման տանել բնութեան: Արուեստ իմն գոյ, որով միտք եւ մարմին զոյգ յարդարին⁴²: Օարուեստս զայս՝ զոր մեք առ մերոյ ծուլութեանրս եւ հեղգութեան կորուսաք, նախնիքն ճարտար զիտէին, եւ եզիպտացիք այնր գտակ եղեն: Օժուժկալութիւն եւ զմարմնոյ կրթութիւն ի նոյն ակնուական արուեստ ի կիր արկանէին: Յընդարձակ ուրեք տեղոջ ճակատու՝ զոր Արողոտոս ետես⁴³, դանդաք անկեղոյն Պարսից զիւրաւ բեկանէին, իսկ եզիպտացոցն քան դքարինան եւս՝ յորոց միջի խառն անկեալ զնէին, կարծրազոյնք էին. որով յայանի լինէր՝ եթէ նոքա կնատազոյնք էին, եւ սոքա զօրաւորք պայմանաւ. որ ոչ այլ ուստեք լինէր, եթէ ոչ ի չորաբեկ սեղանոյ եւ ի հրահանդս կրթելոյ: Եզիպտացիք զարմանալի ճարտարութեամբ՝ իւրեանց հեախառիւքն եւ երիւարօք եւ կառօք արշաւանս ցուցանէին. եւ ընդ բնաւ տիեզերս ակնուազոյն քան զեզիպտացոց հեճեալսն ոչ գտանէր:

Վիողորոս ասէ⁴⁴ եթէ եզիպտացիք զգիրկ ընդ խառն կախ մերժէին, որպէս թէ զօրութիւնն՝ զոր նոյն կրթութիւն պարզեւիցէ մարմնոց, վնասիչ իցէ եւ չտեւիցէ ընդ երկար. բայց Վիողորի բանսն՝ զանկարգ մարտէ բմիշ նահատակացն իմանալի է. եւ Յոյնք իսկ՝ որք

զնահատակս կռուոյն պսակէին, ծանականս զիրան համարեցան, եւ անարժան մարդոյ ազատի: Բայց յորժամ համոզն եւ պարկեշտութեամբ լինէր, կարի իսկ ցածնոց եւ զգաստից օրէն էր ի նմին վայելել: Եւ Վիտգորոս ինքնին յայտ առնէ՝⁶⁵ եթէ Հերմէսն եզիպտացւոց, զոր օրինակ զայլ մարմնոյ հրահանգս, նոյնպէս եւ զօրէնս զիրի ընդ խոռն մարտին եզիտ:

Նոյնպէս իմանալ պարտ է եւ զայն՝ զոր նոյն արդի ճառեալ այրս վասն երգոց արուեստականաց ասէ՝⁶⁶: Քանզի եզիպտացիք՝ զորոց ասէն եթէ զերաժիշտս խոտէին որպէս թէ մեղիկցեն զոգիս, զայնպիսի նուազս՝ որ ի մեղկութիւն եւ ի լիտութիւն գրգռիցեն, յիրաւի խոտէին. այլ ոչ եթէ զայն՝ որ ազնուական երգոյն միաբանութեամբ զմիտս եւ զսիրտս ի բարձունս թուուցանիցէ. քանզի, որպէս ասէ նոյն այր՝⁶⁷, Հերմէս նախ զնուազածութիւն եւ զազնուազոյնն ի գուսանական գործեաց եցոյց: Յամենաժողով աօնին՝ յորում եզիպտացիք՝⁶⁸ զՏրիամեզիստեայ մատենան հռչակաւ հանեալ շրջեցուցանէին, գուսանն առաջի երթայր եւ ի ձեռին նորա նշանակ գուսանական արուեստին եւ նուիրական երգոյն մատենաք. իսկ զնոյն նշանակն էր, չէ յայտ:

Ըրդ՝ եզիպտացիք փոյթ յանձին կալեալ ջանային ամենեւին զոգիս յերիւրել, ազնուազոյն զսիրտս գործել, եւ զմարմինս զօրացուցանել:

Չորեքհարեւր հազար սպառազէն քան զամենայն քաղաքացիսն փութով եւ խնամով կրթէին: Օրէնք զօրացն գիւրաւ եւ ինքնին պահէին, զորս հարք անդստին որդւոց իւրեանց ուսուցանէին. քանզի արուեստ զինուորութեան, իրիւր զայլ արուեստս, որդի ի հօրէ զայր. եւ յետ տոհմի քրմացն, առ եզիպտացիս որպէս եւ առ մեզ, ազատագործն եւ ամենայն սպայ աշխարհին պատուական եւ երեւելի համարէին:

Սակայն չիամիմ ասել՝ եթէ եզիպտացիք պատերազմօղբ իցեն: Օչ թէպէտ եւ դունդք կարդեալք եւ յօրինեալք կայցեն ի քաղաքի, թէպէտ եւ հանապաղ զօրքն ընդ հրահանգս անցանիցեն, եւ կերպարանօք զմարտն մղիցեն, սակայն այն չէ ինչ. յայնժամ միայն պատերազմօղբ լինիցին մարդիկ, յորժամ արդեամբք պատերազմ

Հարկանիցեն, եւ ոչ կերպարանօք: Ազխպտացիք խաղաղասէր բարս ունէին, քանզի զարդարութիւն սիրէին. եւ ի պահպանութիւն աշխարհին միայն էին զօրքն: Հաճեալ ընդ երկիր իշխանութեան իւրեանց՝ յորում այնպէս ծաղկալից ամենաշատ վայրքն էին, չկամէին այլոց աշխարհաց տիրել. բայց այլ աղօ իմն սիռեալ տարածանէին, դադրեալանս ընդ ամենայն երկիր առաքեալ, եւ նոքօք հանգերձ՝ կարգս եւ օրէնս ընդ բնաւ հաստատեալ⁴⁹: Ի հոյակագ եւ ի հռչակաւոր քաղաքաց դային հասանէին յաշխարհն եզխպտացոց, անդուստ ի վերուստ զիւրեանց սկիզբն, եւ զգեղեցիկ կարգացն պայման ուսանել: Ի կողմանց կողմանց զիմէին, ի նոցանէ՝ տեղեակ օրինաց իմաստութեան լինել: Ազխպտացիքն իրրեւ զամբշական մրցութիւնս՝ որ անուանի են յաշխարհին Յունաց, հաստատէին, հրեշտակս առաքեալ խնդրեցին զհաճութիւն հաւանութեան եզխպտացոց, եւ ի նոցանէ ուսան կարգըս զարմանալիս՝ որովք զնահատական քաջալերել մարթայցին⁵⁰:

Ազխպտացիք իշխան խրատտու ի վերայ ամենեցուն էին. եւ այս իշխանութիւն խրատտութեան մտաւոր եւ խօսուն՝ ազնուագոյն եւ փառաւոր երեւեցաւ նոցա քան զմեծաշուք փառս թագաւորութեան՝ զոր ի սուր սուսերի իւրոյ ժառանգիցէ որ: Թէպէտ եւ թերացոց թագաւորք առանց համեմատութեան ուժգնագոյն էին քան զայլ թագաւորսն եզխպտացոց, սակայն չեղն երբեք ձեռներէց ի վերայ հարստութեանց իւրեանց արուարձանեաց ճոխանալ, բայց յորժամ արարացիք ի նոսա արշաւէին, զնոսա վանեալ՝ ունէին զաշխարհն. մինչեւ յիրաւի է ասել՝ եթէ ի ձեռաց օտարաց թափէին, եւ ոչ եթէ՝ տիրել ինչ ի վերայ բնակչաց մտարբրէին:

Բայց իրրեւ միջամուխ եղն տիրելոյ աշխարհաց, զամենեքումք անցին զանցին: Չկամիմ զԱսիրիոցայ ճառել, որ Հնդկաց յազթեաց. եւ թուի՝ եթէ Վիտնիստոն իցէ, եւ կամ այլ որ ի զիւցազանց՝ որ յառասպելն կան: Հայրն Աստուտորիոց⁵¹, զորմէ ասեն իմաստունք՝ եթէ Ամնովփիսն իցէ, որ եւ Ամնոն յորժորջեցաւ, կամ յանկարծ ինչ վայրապար, կամ խորհրդով յիւրոց բարուց, եւ կամ որպէս եզխպտացիքն ասեն, ի զիցն հրամա-

նաց, զնէր ի մտի զիւր որդին աշխարհակալ առնել: Բարձրագոյն խորհրդովք ըստ օրինակի եգիպտացւոց իրացն սկիզբն առնէր: Օ՜ ամենայն մանկունս՝ որք ի նովին առւր յորում Սեսովարիսն ծնաւ, ծնեալ էին, հրաման տայր յարքունիս անդր ածել. որոց իբրեւ իւրոց որդեկաց խնամ ունել եւ դարման տանել պատուիրէր, որք եւ նովին խընամով ընդ արքայորդւոյն սնանէին: Չէր իսկ մարթ հօրն՝ պաշտօնեայս առաւել հաւատարիսն եւ նիզակակիցս կարի նախանձաւորս մանկանն կարգել, քան զիւր սննդակիցսն: Իբրեւ փոքր մի զարդանայր հասակաւ, հայրն նորա զնա ի պատերազմ ընդդէմ արարացւոց առաքէր, յորում իբրեւ ի հրահանգս կրթիցի: Արոյ երթեալ քաղցի եւ ծարաւոց տանել ուսանէր, եւ զթշնամիսն զորս մինչեւ ցայնժամ նուաճել ոք չկարաց, ի հարկի կացուցանէր: Իբրեւ նովին յաղթութեամբն ընդ ճգունս պատերազմաց ընդեկանէր, հայր նորա զօր ի ձեռին դումարէր յարեւմտաս կոյս եգիպտացւոց աշխարհին երթալ ի մարտ պատերազմի. նորա երթեալ ի վերայ զերէացւոց աշխարհին անկանէր, եւ բազում վայրս յաշխարհէն վտարէր:

Յայնմ ժամանակի հայր նորա ի կենաց վճարէր, եւ թողոյր զնա. որ յայնժամ ամենայն իրաց բաւական էր: Ազգավազակի խորհուրդ ի մտի զնէր երթալ զընաւ նուաճել⁵², բայց նախ ձեռն ի դործ առնէր կարգել յարգարել զիրս աշխարհին. այնուականութեամբն եւ արդարութեամբ զսիրտս իւրոց հնազանդելոցն յինքն յանկուցանէր, եւ մեծաւ խնաստութեամբ այնուազոյնս զաշխարհին առաջնորդութիւն կարգէր: Բայց եւ ի մարտ պատերազմի պատրաստէր. զօր ժողովէր, դունդ կազմէր, եւ զօրավարս զօրացն զիւր դայեկորդիսն կացուցանէր, արս հազար եւ եւթն հարեւր, որք մարթ էին քաջալերել զգօրսն, ի խրատու ունել եւ ի թագաւորին սէր յորգորել: Իբրեւ զայս ամենայն յարգարէր, յեթևովացւոց աշխարհն մխէր, եւ ընդ հարկօք արկանէր: Յասիացւոց աշխարհին հասանէր հարկանէր. երուսաղէմացւոց քաղաքն զառաջինն զնորս զօրութեան զփորձ առնոյր: Աորովամ չունէր ժոյժ նմա. եւ եհան Սեսովարիս զամենայն դանձա արքային Սողոմոնի, զօր Աստուած յիրաւի մասնեաց ի ձեռս նորա:

Անտի ի Հնդկաց աշխարհն արշաւէր եւ հեռագոյն քան զՀերակղէսն եւ զՎիոնիսոս երթեալ հասանէր. եւ զաշխարհն որ յայն կոչս Վանդէս գետոյ էր, նուաճեալ հնազանդէր, զոր եւ Աղէքսանդր իսկ յետոյ դործել չլինէր ձեռնհաս⁵³: Անտի մարթի յանձնէ իմանալ եթէ կողմանք՝ որ առաւել մօտաւորք էին, զգէմ ունել նմա չկարէին: Օսկիւթացիս մինչեւ ի Տայանիս հնազանդէր, զՆայոց եւ զհապադովկացւոց աշխարհն ընդ ձեռամբ նուաճէր: Սարատականս ի Ադդքոսաց աշխարհին թողոյր բնակութիւն, ուր եզխպտացւոց բարք յետոյ իսկ հանապաղ մնացին: Արոգոտոս բայ ասէ, տեսանել նմա յատկացւոց աշխարհին ի միջէ ծովէ մինչեւ ցմեւս ծովն զնորա յաղթութեանցն յիշատակս կանգնեալ, եւ յարձանագրին գրեալ զայս ձեռք օրինակի՝ եթէ Աեսովսորիս արքայից արքայ եւ տերանց տէր: Ի թրակացւոց աշխարհին եւս նոյնպէս զիւր քաջութիւն գրով ի սիւնս գրոշմէր. եւ ի Վանդէս գետոյ մինչեւ ցՎանուր գետ համօրէն ամենեցուն շահեալ տիրէր: Իրրեւ սաշար զօրաց չգտանէր, յառաջ եւս յեւրոպացւոց աշխարհն խաղալ չիշխէր:

Յետ ինն ամաց դայր հասանէր, խաղացուցեալ զառ եւ զաւար ազգացն սարտելոց: Ոմանք յաղաց վասն ազատութեան խրախուսեալ ի մարտ սատերապմի ընդ նմա բախէին, այլք վաղվազակի ի նա ձեռս տային: Սեսովսորիս փոյթ յանձին կալաւ զայնպիսի զզունակ գունակ բարս աղզացն այնոցիկ, ըստ օրինի եզխպտացւոց այլափոխ նուիրական նշանագրոշմիք ի սիւնսն գրոշմել: Օպէսպէս կողմանս աշխարհի ի տախտակս նկարելոյ հանդամանս եզիտ, զն նովաւ եւ զիւրոյ իշխանութեանն սահման նրկարիցէ: Սեհեանք հարեւր հոյակապք՝ զորս ի գոհութիւն զիցն խնամակալաց ամենայն քաղաքաց կանգնէր, առաջին եւ անուազոյն նշանակ իւրոց յաղթութեանց եզին. եւ յարձանագիրսն գրեալ ամենեցուն յայտ առնէր՝ եթէ այն ամենայն յօրինուածք առանց ինչ աշխատութեան իւրոց հնազանդելոցն ի գլուխ ելեալ կատարեցան⁵⁴: Վանդի նա իւրոց սեփականացն խնամ ունել փառս համարէր, իսկ առ ի զիւրոց յաղթութեանցն յիշատակս կանգնելոյ, զգերին ծառայեցուցանէր: Անգաստին այնպիսի աշնուականութեան օրինակս եւ արքայ Սողոմոն, որ ի

ընեն զւրեքն զհրաշակիրտան՝ որք անմահ զնորա թագաւորութիւնն գործեցին, զազոս հարկատուս ի գործ սպասաւորութեան վարէր⁵⁵ : Իսկ քաղաքացիքն յազնուագոյն հրահանգս կրթէին, մարտ դնել, հրամանատար լինել ուսանէին : Զէր մարթ Սեսովստրիզայ օրինակ առաւել կատարեալ քան զՍողոմոն գասնել, որով զանձն յարգարիցէ :

Արեսուն եւ երիս ամս թագաւորեաց, յերկար ժամանակս յիւր յաղթութիւնսն վայելեալ . փառաւորագոյն եւս լինէր, եթէ չէր ի սնապարծութենէն յաղթեալ, որով մեծամտեալ ամբարտաւանեալ զթագաւորսն՝ որոց յաղթեաց, ի կռսն լծէր⁵⁶ : Թուի իմն՝ եթէ զմահ այլոց մարդկան մեռանել չհամարեցաւ արժանի . ի ժամանակի ծերութեան իւրոյ վատեցին աչքնորա, եւ սուր առեալ զիւրովի չոքաւ, թողեալ զեզիպտացւոց աշխարհն լցեալ մեծացեալ յոյժ : Սակայն իշխանութիւն նորա տեւէր բաւէր մինչեւ ի չորս ազոս միայն . բայց եւ ի ժամանակս Տիրերի կայսեր⁵⁷ կային բազում մեծապայծառ յիշատակք՝ յորս մեծաձիգ երկայնութիւն սահմանաց իշխանութեան նորա, եւ յաճախութիւն հարկացն նշանակեալ կային :

Ազիպտացիք յետ այնորիկ անդրէն յիւրեանց խաղաղասեր բարս դարձան . ասի⁵⁸ թէ Սեսովստրիս յետ յաղթութեանցն մեղկեաց զբարս եզիպտացւոց, առ երկիւղի զի մի յապտամբութիւն ինչ մտաբերիցեն : Աթէ հաւատալ ինչ այդմ պարտ իցէ, հարկ է ասել՝ եթէ ոչ վասն իւր ինչ, այլ վասն իւրոց պոյսաղատաց զայն հնարեցաւ . զի չէ մարթ ի կարծիս անկանել եթէ նա՝ որ այնպէս իմաստուն էր եւ միահեծան, յիւրոց ժողովրդոց՝ որ նմա պաշտօն մատուցանէին, երկնչէր : Զանդերձ այսու դարձեալ թագաւորի իմաստնոյ չվայելեն այնպիսի խորհուրդք . եւ ի կործանումն իսկ թագաւորութեանն լինէր, զսիրաս իւրոց հնազանդեցելոցն մեղկել եւ ի ծուլութիւն գարձուցանել :

Բայց եւ ճշմարիտ է՝ եթէ մեծ իշխանութիւնն ոչ ինչ կարի տեւեաց . քանզի հարկ է ուստեք կործանել : Զերձուածք եղեն յեզիպտացւոց աշխարհին⁵⁹ : Ընկոյն Ընիսիդաւ, Սարակոնիս եթւովագցի ել ի վերայ թագա-

ւորութեանն, որ իրրեւ զբնակ թագաւորան ազնուագոյն կալաւ զազգն, եւ բազում մեծամեծ իրս յարգարէր: Աորին ալիուական մտացն նման որ չեղել երբեք. քանզի յետ զամս յիսուն ի թագաւորութեանն վայելելոյ, հրամանաց ինչ զոր ի զից ուստեք կարծէր, հնազանդեալ, յեթուովացւոց աշխարհն դառնայր:

Իրրեւ չգոյր որ յանձանձիչ իշխանութեանն, Աթովն առնոյր զվերակացութիւնն, որ էր քուրմ Ափեստեայ, բարեպաշտօն, բայց չէր կարի պատերազմօղ. որ եւ ի վատութիւն զգօրսն հատանէր, զի զօրս ի զինուորութեան վարս էին, նեղէր: Յայնմ հետէ եգիպտացիք զօրս օտարօտիս իւրեանց թիկունս օգնականութեան առնէին: Օայնու ժամանակաւ դիպեցաւ եւ անտէրընչութիւն նոցա: Յետ այնորիկ երկոտասան թագաւորք ընտրեցան ի ժողովրդենէ, որք զաշխարհին վերակացութիւն բաժանեալ ունէին: Սորա շինեցին զերկոտասան ապարանն՝ որ է բաւիղ բաւղակաձեւ: Թէպէտ եւ եգիպտացիք զիւրեանց փառաւորութիւն ոչ մոռացան, սակայն ընդ երկոտասան թագաւորօք տկարացան եւ ձեղքեցան: Մի ոմն ի նոցանէ՝ որ Փսամետիկոն կոչէր, զօր ուստեք յօգնականութիւն հասեալ նմա, համօրէն ամենեցուն տիրէր: Ագիպտացւոց աշխարհն վերստին յօրինեալ յարգարէր, եւ ընդ հինգ կամ վեց թագաւորօք հարստագոյն եւ բռնագոյն լինէր: Ապա ուրեմն պետութիւնն՝ որ բազմաժամանակեան հաստատեալ կայր, աւելեալ բաւեալ ամս հազար եւ վեցհարեւր, եւ դձձեալ ի թագաւորաց բարեղացւոց եւ ի Աիւրոսէ, Աամբիսեայ ի բուռն անկանէր, որ անմտագոյն եւ անազորունագոյն քան զամենայն թագաւորսն էր:

Արք զբոյս բարուց եգիպտացւոց ծանեան, ի վերայ հասին՝ եթէ չէր պատերազմօղ ազգն այն⁶⁰. զորոյ զպատճառսն ի վերագոյնն հատուցար: Օամս իրրեւ հազար եւ երեքարեւր ի խաղաղութեան էր աշխարհն, յորժամ ծնաւ Աեսովտորիս՝ որ եղև առաջին պատերազմօղ եգիպտացւոց: Աւ տեսանեմք իսկ՝ զի թէպէտ եւ խնամով պահէին զօրս, սակայն եւ այնպէս դուռնիք յօտարակողմըն կուսաց եկեալ զօրավիզն լինէին նոցա, որ մեծի թեւորութեան է աշխարհի միոջ: Սակայն իրք մարդկօրէնք

չեն ամենեւին առանց թերակատարութեան . եւ չէ իսկ դիւրին զճարտարութիւն արուեստից՝ որ ի խաղաղութեան պայծառանան , ընդ առաւելութեանց՝ որ ի պատերազմաց լինին , միարանել . եւ այն իսկ կարի զարմանալի է , զի իշխանութիւն նոցա մինչեւ ի վեշտասաներորդ ազդ ձգեալ յաւտկանեցաւ , սակաւ արանց եթւով պացւոց ի միջի թաղաւորեալ , ընդ որս Վարակովն էր , եւ թարակոս որպէս կարծի : Բայց եզիպտացիք զայս ինչ յազնուագոյն օրինաց աշխարհին իւրեանց շահէին , զի եթէ օտարուստ ոք եկեալ տիրէր նոցա , ըստ նոցա բարուցն զանձն յարդարէր , եւ ոչ յիւրոց ինչ նոր մուծանէր . եւ այսպէս զտեարս եւ ոչ զօրէնս առաջնորդութեան փոփոխէին : Վասն այնորիկ զժողովին տաղակային ընդ Պարսս , քազնէին եւ բազում անգամ զուծն նոցա ընկենուլ կամէին . բայց չէին ինչ կարի բռնագոյն զի մեծագոր զօրութեանն նոցա իւրեանց ուժով գիմակալ լինիցին . եւ Յոյնք՝ որք նոցա զօրավիզն էին , այլուր զբաղեալ , զնոսա թողուլ յօժարէին . այնպէս՝ զի ցանդ ընդ առաջին իշխանօքն նուաճէին , բայց եւ միշտ պնդեալ յամսուեալ կային մի իւրք յիւրեանց նախնեացն սովորութեանէ խոտորել , եւ կամ խախտել ինչ յառաջնոց թաղաւորացն օրինաց : Թէպէտ եւ բազում ինչ ըստ առաջնոց սովորութեանն առ ժամանակօք Պտղոմեանցն հաստատուն ունէին եզիպտացիք , բայց վասն կարի ընդ Յունաց եւ ընդ ասիացւոց բարուց խառնելոյ , առաջնոց եզիպտացւոցն բարք դրեթէ բնաւ ճնշմարէին :

Չէ պարտ եւ զայն մոռանալ եթէ վասն ժամանակաց նախնեաց թաղաւորացն եզիպտացւոց երկբանութիւն է , ի նոցին իսկ եզիպտացւոց պատմութեան : Վժուարին է եթէ յորում ժամանակի պարտ իցէ զԱսիմենգիան գնել , զորոյ մեծապայծառ յիշատակս ի Վիոզորի գիրսն տեսանեմք ⁶¹ , եւ զազնուագոյն նշանակս պատերազմացն նորա : Ազիպտացիք թերեւս զԱեսովարիզայ հայրն չգիտէին . զի Արոզոտոս եւ Վիոզորոս զնմանէ ինչ ոչ յիշատակին : Սեծագոր զօրութիւն նորա առաւել ի սիննս՝ զորս ընդ բնաւ երկիր կանգնեալ թողոյր , քան ի յիշատակս իւրոյ դաւառին զրոշմեալ պահէր . ուստի յայտ է՝ եթէ չէ պարտ զամենայն վասն եզիպտացւոց նախաւորութեան

զառ ի նոցանէ զբեալսն ստոյգ համարել, որպէս ոմանք համարին իսկ այնպէս. թէպէտ եւ եգիպտացիք պարծին՝ եթէ զամենայն ճշդիւ զտակաւ պատմեն, զի եւ ինքեանք ոչինչ հաւատեալ վասն պայծառադոյն ժամանակաց իւրեանց միահեծան իշխանութեանն ճառեն:

- 1) Երոտ. Գիրք Ը: 2) Սրբբ. Գիրք Ժ: 3) Յարսբ. Ը. 1: 4) Գիրք Ժ: 5) Գ. թուր. ժ. 9. Լսբ. Ը. 4: 6) Երոտ. Գիրք Գ: 7) Գրոտ. Գիրք Ը. շատ. 2: 8) Լնդ: 9) Լնդ: 10) Երոտ. Գիրք Ը: Գրոտ. Գիրք Ը. շատ. 2: 11) Գրոտ. Գիրք Ը. շատ. 2: 12) Լնդ: 13) Լնդ: 14) Երոտ. Գիրք Ը: Գրոտ. Գիրք Ը. շատ. 2: 15) Լնդ: 16) Երոտ. Գիրք Ը: 17) Գրոտ. Գիրք Ը. շատ. 2: 18) Երոտ. Գիրք Ը: 19) Գրոտ. Գիրք Ը. շատ. 2: 20) շատ. ժ. 23: 21) Գրոտ. Գիրք Ը. շատ. 1: 22) Գրոտ. Գիրք Ը. շատ. 2: Երոտ. Գիրք Ը: 23) Գրոտ. Գիրք Ը. շատ. 2: 24) Գրոտ. Գիրք Ը. շատ. 2: 25) Լնդ: Երոտ. Գիրք Գ. Յառաջ: 26) Գրոտ. Գիրք Ը. շատ. 2: 27) Գրոտ. Գիրք Ը. շատ. 1: 28) Երոտ. Գիրք Ը: Գրոտ. Գիրք Ը. շատ. 2: 29) Երոտ. Գիրք Ը. Եւ Գրոտ. Գիրք Ը. շատ. 2: 30) Երոտ. Գիրք Ը. Գրոտ. Գիրք Ը. շատ. 2: 31) Լնդ: 32) Գրոտ. Գիրք Ը. 9: 33) Սրբբ. ժ. Տեղ. ժամ. Ը. 60: 34) Երոտ. Եւ Գրոտ. Լնդ: 35) Ղանապոհ. թեւեւնս: 36) Երոտ. Գիրք Ը: 37) Լնդ: Գրոտ. Գիրք Ը. շատ. 2: 38) Երոտ. Եւ Գրոտ. Լնդ: 39) Գրոտ. Գիրք Ը. շատ. 2: 40) Լնդ: Գրոտ. Գիրք Ը. շատ. 1: 41) Երոտ. Գիրք Գ: 42) Գրոտ. Գիրք Ը. շատ. 1: 43) Երոտ. Գիրք Գ: 44) Գրոտ. Գիրք Ը. շատ. 1: 45) Լնդ: 46) Լնդ. շատ. 2: 47) Լնդ. շատ. 1: 48) Կրտ. Երոտ. Լնդ: 49) Գրոտ. Գիրք Ը. շատ. 2: 50) Երոտ. Գիրք Ը: 51) Գրոտ. Գիրք Ը. շատ. 2: 52) Լնդ: 53) Լնդ: 54) Երոտ. Եւ Գրոտ. Լնդ: 55) Ը. Լնդ. Ը. 9: 56) Գրոտ. Գիրք Ը. շատ. 2: 57) Տեղ. ժամ. Ը: 58) Գրոտ. Գիրք Ժ. Գրոտ. Գիրք Ը. շատ. 2: 59) Երոտ. Եւ Գրոտ. Լնդ: 60) Սրբբ. Գիրք Ժ: 61) Գրոտ. Գիրք Ը. շատ. 2:

Պ Լ ՈՒ Խ Պ

ԸՍՏՐԵՍԵՆՆԵՑՆ ԸՌԵՒՔԻՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԻ ՄՐԵՆՆԵՐՆ ԻՇԽԵՆՈՒԹԻՒՆ
ՄԵՐԵ ԵՒ ԿԻՐՈՍ

ՄԳԻՊՏԵՆՆԵՑՆ միահեծան իշխանութիւն որպէս ուրոյն
և անջատ յայոց իշխանութեանց է. և որպէս վերա-
դոյն տեսաք, չէ ինչ երկայնածիղ կարգ պայտաւորացն
նոցա: Այլ որ առաջիս կայ, առաւել հաստատուն է,
զորոյ և զժամանակացն թիւ ճշդիւ գտակաւ կարգեալ
գտաննեմք:

Սակայն զառաջնոյն ասորեստանեաց իշխանութենէ
տակաւ ինչ հաւաստեաւ գրեալ կայ. բայց յորում ժա-
մանակի և զսկիզբն նորա դնել ոք կամիրի ըստ պէտպէս
կարծեաց պատմագրաց¹, գտաննեմք՝ զի ի սկզբան իրբեւ
սկսան մարդիկ ուրոյն ուրոյն ի բազում ջոկս զատանել,
ընդ ցեղապետօք և ընդ իշխանօք՝ որք առաւել ի պահ-
պանել զնոսա քան աճեցուցանել փութային, Նինոս ուժ-
գնազոյն և բռնադոյն քան զիւր արուարձականն գը-
տեալ, զնոսա մի ըստ միոջէ՝ նուաճեալ հնազանդէր, և
ընդ արեւելսիողմն ձգէր տարածանէր զիւր իշխանութիւ-
նրն: Աորին կին Շամիրամ, որ հանդերձ փառասիրու-
թեամբն՝ յոր կանանց ազգ կարի միտեալ է, քաջ ևւս
էր, և մտօքն խորհրդական, զոր չէ մարթ զիւրաւ ի կին
մարդ գտանել, զմեծամեծ խորհուրդս առն իւրոյ ի
զլուխ հանել ի մտի դնէր, և զմիահեծան իշխանու-
թիւնն համօրէն յարդարէր:

Ապաքէն մեծ էր իշխանութիւնն, և մեծութիւն
Նինուէ քաղաքի՝ զոր վերագոյն քան զբարեղացւոց քա-
ղաքն դնեն², զիշխանութեանն մեծութիւն բաւական յու-
ցանիցէ: Բայց բազումք ի պատմագրաց իմաստնոց³, որք
ոչ այնպէս կանուխ ժամանակաւ զնոյն միահեծան իշխա-
նութիւն դնեն, որպէս այլք կարծեն, չհամարին զնա այն-
չափ մեծ: Այլէ ասորեստանեաց իշխանութիւնն այն-
պէս հեռի ժամանակաւ էր, և անդստին ընդ բնաւ եր-
կիր տարածեալ, որպէս որ զառասպելն յօդեաց Ատե-
սիէս, և որք ի նորա բանն սպաստան գրեցին, վկայեն,
ապա հարկ է ասել եթէ և այն թագաւորութիւնք փու-

քունք՝⁴ յորոց ասորեստանեաց իշխանութիւնն յօրինեալ եկաց, կանխադոյն եւս ընդ ձեռամբ նոցա նուաճեալ իջնն. բայց դասնեմք՝ զի այն թագաւորութիւնք ընդ բազում ժամանակս ձգեալ յերկարեցան: Արդարեւ Պղատոն⁵ որ բազում հոգաբարձութեամբ հնոց ժամանակաց պատմութեանցն մտադիր լինէր, ընդ ասորեստանեաց պետութեամբն ասէ լեալ զտրովացւոց թագաւորութիւնն առ Պրիամու. սակայն ի Հոմերոսի գիրսն այնպիսի ինչ չդասնեմք, որ առ ի զՅունաց աշխարհին փառս յաճախելոյ, զայն կարեւոր դէպս՝ որ ի մեծ պատիւ փառաւորութեան Յունաց աշխարհին մարթէր լինել, չառնոյր արդեւք յանձն առանց ճառելոյ թողուլ: Աւ ի դէպ իսկ է կարծել՝ եթէ արեւմտեայք զասորեստանեայս ոչ ճանաչէին. քանզի պետեան՝ որ այնպէս իմաստուն էր եւ հանճարեղ, եւ այնպէս մտադիր զի ամենայն իրօք՝ որ նմա պատշաճ իցնն, զերգս իւր զարդարիցէ, զասորեստանեաց ոչ ինչ յիշատակէ:

Արդ ըստ համարոյն՝ որ ինձ առաւել հաւանութեան թուի, տրովացւոց քաղաքին պաշարումն յայնուագոյն ժամանակս ասորեստանեաց իշխանութեանն զիպէր, մինչ գեռ Շամիրամն ամենեցուն շահեալ տիրէր՝, բայց ընդ արեւելքակողմն միայն ընդարձակէր զիւր իշխանութիւնն. զի եւ նոքին իսկ՝ որք մեծաւ գովութեամբ զՇամիրամայ իրսն վկայագրեն, ասնն գնմանէ՝ եթէ զօրաժողով լեալ հասանէր ի վերայ արեւելից աշխարհին: Շամիրամ խորհրդակից եւ գործակից էր Նինեայ ի յաղթութիւնս նորա, ապա պարտ էր նմա գնորա մտաց զհետ երթալ, եւ տիրել արեւելիայց՝ զոր Նինոսն ի մտի եղեալ էր գործել, մանաւանդ զի տեղին՝ յորում կայր թագաւորութիւնն ասորեստանեաց, կարի դիպան էր իրացն ի դուռն ելանելոյ: Աւ թուի ինձ եթէ չէ մարթ ումեք ի կարծիս անկանել՝ եթէ չունէր ի մտի Նինոս ի վերայ արեւելեաց երթալ. զի եւ Յուստինոս իսկ՝ որ որչափ ի կարի իւրում է ջանայ վերադոյն զնա ցուցանել, ասէ զնմանէ՝ եթէ յարեւմտից կողմանսն մինչեւ ի սահմանս զերէացւոց աշխարհին հասանէր հարկանէր:

Աւ արդ՝ յորում ժամանակի արդեւք թագաւորք ասորեստանեաց մինչեւ ցաշխարհն տրովացւոց հասին, զի

դՆինեայ եւ զՇ ամիրամայ չէ ուստք յայտ՝ եթէ յայնպիսի ինչ մտարեցին. իսկ նոցա պայազատք, անդատին ի Նինեայ նոցին որդւոյ, ամենեքին ի փափկութիւն եւ յանպիտանութիւն հատեալ՝ ոչ ինչ արժանի յիշատակաց գործեցին, մինչ զի հազիւ անուն նոցա մնայր. եւ պարտ եւ պատշաճ է առաւել զարմանալ՝ զի իշխանութիւն նոցա հաստատուն եկաց, քան կարծել՝ եթէ առաւել ընդարձակեցաւ:

Ապաքէն կարինուագեաց ասորեստանեաց իշխանութիւնն ի ժամանակին՝ յորում Սեսովտորիս շուրջանակի հասեալ տիրէր. սակայն յազազս սակաւ ժամանակեան լինելոյ իշխանութեան նորա, եւ վասն իւրոց պայազատացն յուլութեան եւ ծուլութեան մարթ է կարծել, եթէ ամենայն զաւառք՝ զորս Սեսովտորիս յասորեստանեաց եհան, վասն բազում ժամանակաց ընդելութեանն՝ զոր ընդ ասորեստանեաց ունէին, անդրէն ի նոսա զարձան. որպէս զի պետութիւնս այս որպէս էրն՝ մեծագոր եւ ի բազում խաղաղութեան պահէր մինչեւ ցՍ արբակէս, որ զգրգութիւն թագաւորացն ասորեստանեաց՝ որ ի բազում ժամանակաց հետէ ի ծածուկ յապարանն ծանակէին, յանդիմանեալ խայտառակէր. նմին իրի եւ ըլլարդանապաղոսն՝ որ անհնարին զեղծ վարուք էր, ոչ միայն անգոսնէին իւր հնազանդեալքն, այլ եւ ժուժալ եւս նմա չկարէին:

Օթագաւորութիւնն՝ որ յառաջնոյ ասորեստանեացն իշխանութենէ զատան կացին, որպէս նինուէացւոցն եւ բարեղացւոց հանդերձ այլովք, յառաջագոյն տեսեր: Թագաւորք նինուէացւոց՝ զթագաւորաց ասորեստանեաց զանուն կալան, եւ ուժգնագոյն քան զայլս եղին: Անհնարինս մեծամտեալ ամբարտաւանել սկան վասն յաղթութեանցն՝ զոր ընդ բնաւ երկիր կացուցանէին. ի մէջ այլոց աշխարհաց զհրէաստան կամ զՍամարիա համարին, զոր նոքա ընդ իւրեանց իշխանութեամբ նուաճեցին: Մեծազօր ձեռնն Աստուծոյ եւ երեւելի ինչ նշանք պիտոյ լինէին, առ արդելուլ զնոսա ի նուաճելոյ եւ զթագաւորութիւնն Յուդայ առ Ազելկիաւ. բայց ամենեւին անընդդիմակաց համարեցաւ զորութիւն բռնութեան նոցա, յորժամ յարուարձանեայ աշխարհն մտեալ

բարեկացւոց եւս թագաւորեցին, առ չգիտարթանական ազգին:

Վարեկացւոց քաղաքն թուէր իմն՝ եթէ առ լինել իշխանն հրամանատար ամենայն երկրի, լեալ իցէ: Դողովուրդ երկրին խնաստուն էր եւ քաջ: Անդափն փիղեսոփայութիւնն հանդերձ ամենայն ճարտարութեամբ ի մէջ նոցա պայծառանայր. եւ ընդ ամենայն աշխարհն պրեւելից անուագոյն քան զգորս քաղեկացւոց ոչ գասնէր: Վասնիք ընդ առատութիւնն հնձոց երկրին զարմանային⁵, որ այժմ՝ առ ծուլութեանն բնակչացն խոսանացեալ կայ. վասն այնպիսի առատութեան, բարեկացւոց երկիրն առ առաջին թագաւորօք Պարսից, իրրեւ երրորդ մասն յաղթ պետութեանն համարէր:

Արդ թագաւորք ասորեստանեաց յաւելեալ յիւրեանց իշխանութիւնն զհոյակապ քաղաքն բարեկացւոց, սկսան հպարտանալ յոյն կալ, եւ ի մեծամեծս յանդրդնել յօժարել: Վարուքոզոնոսոր առաջին համարեցաւ այնպէս՝ եթէ անարժան իցէ նմա իշխանութիւնն իւր, եթէ ոչ զամենայն օրեկերս ի նոյն յաւելուցու: Արկրորդն Վարուքոզոնոսոր քան զամենեսեան՝ որ յառաջ քան զնա էին, ամբարտաւան, հպարտացեալ ի յաջողութիւնսրն, առաւել կամէր աստուածակերպ օրինակ բարձրանալ, պաշտօն ստնուլ, քան թագաւորարար հրաման տալ: Օրնչ ինչ ոչ գործեաց նա ի քաղաքին բարեկացւոց: Քանի՛ անուագոյնս պատնօք եւ աշտարակօք, զբամբ եւ պարսպօք զՎարեղոն զարդարէր: Անհեանն Ռեզայ՝ զոր կանգնեաց նա նորանշան զարմանալի բարձրութեամբ, իրրեւ զառաջին աշտարակն Ռարեղոնի երեւէր. եւ թուէր իմն՝ եթէ Վարուքոզոնոսոր միւսանդամ սպառնալ երկնից կամիցի: Թեպէտ եւ ինքն վասն հպարտ ամբարտաւան մտացն պատուհաս յԱստուծոյ կրէր, սակայն պայտք նորա ի նորա ամբարտաւանութենէն չկային մեկուսի: Անդ այլ թագաւորութիւնս՝ որ շուրջ վնորօք էին, քինացեալ խանային. եւ կամեցեալ զամենեսեան ընդ ձեռամբ նուաճել՝ ամենայն ազգաց մծտաւորաց ատելի լինէին:

Օր խառնիճազանձ ի նախանձ սրտմտութեան վառեալ, յարեւելից կողմանէ խաղալլր ի վերայ նոցա, հան-

դերձ թագաւորօք Մարաց եւ Պարսից: Ըմբարտաւանութիւնն վաղվաղակի յանապորունութիւն դառնայ: Ըզգբ բազումք՝ որ ընդ բարեղացւոց իշխանութեամբ էին, իշխանօքն հանդերձ եւ խառնաղանձ՝ ամբոխիւն վասն անագորոյն խստութեան թագաւորացն՝ ձեռս ապին ի Աիւրոս եւ ի Մարս⁹: Բարեղացիք, քանզի սովոր էին հանապաղ իշխան եւ յաղթօղ երեւել ի բազմամբոխ զօրաց անտի՝ որ ի վերայ նոցա դումարեալ էին, չերկնէին. եւ մինչ դեռ անհնարինս առ պարտութիւն զանձինս համարէին, յանկարծօրէն Մարաց՝ զորս հնազանդելն կամէին, ի դեւութիւն վարեցան, եւ կորեան յամբարտաւանութեան իւրեանց:

Ասիւծան քաղաքիս նորանշան իմն եղլւ. քանզի իւրով հնարադէտ ճարտարութեամբն կորեաւ: Ըրածանի յընդարձակ դաշտս նորա զնոյն գործ գործէր, որ ինչ՝ Աեղոն՝ յգիպոսս. բայց առ դիւրաւ յիւրեանց պէտս ի կիր արկանելոյ զգետն, առաւել սոցա քան եգիպտացւոց, ճարտարութիւն եւ աշխատութիւն պիտոյ էր¹⁰: Օհ Ըրածանի ուղիղ գնացս ունի, եւ ոչ իբրեւ զԱեղոս գետ զեղու եւ յորդէ: Յայն սակա ընդ ամենայն երկիրն ընդ այն ջրմուղս բազումս գործեալ էր բարեղացւոց արբուցանել զերկիրն, որ եւ այնպէս ոռոգեալ՝ առանց համեմատութեան պողարեր լինէր: Բայց առ ի կարճելոյ ըզբռնութիւն յորդութեան ջուրցն, հարկ եղլւ նախ մանուածապատ շրջանօք ընդ բազում կողմանս զգետն դարձուցանել, եւ լինս մեծամեծս փորել, զորս մի ոմն ի տիկնաց աշխարհին նորանշան մեծապայծառ զարդարեաց. եւ տիկնոջն՝ Ախտովկրիս անուն էր, մայր Ղարինիտայ՝ որ եւ Աարոնեդոսն կամ Բաղտասար կոչի, եւ է հուսկ վերջին թագաւոր բարեղացւոց: Բայց տիկինս այս առաւել քան զսոյն նորակերտ զարմանալի ինչ գործ գործէր. ի վերայ Ըրածանւոյ քարեղէն կամուրջ արկանէր, զի երկրորին կողմանք քաղաքին՝ զոր գետն ընդ մջ անցեալ բազում անջրպետօք բաժանէր, ի միմեանս յարեցին, եւ հազորդութիւն աստի եւ անտի քաղաքին լինիցի: Ամին իրի նախ ջամաքեցուցին զգետն յորդէգնաց եւ խորաջուր, դարձուցեալ ի լինս մեծաձիգ լայնատարած՝ զոր տիկինն ետ փորել: Յետ այնորիկ ետ զկամուրջն շինել ի խիստ

եւ ի հաստատուն նիւթոց՝ զոր յառաջագոյն պատրաստեալ էր. եւ զեզր զեւոյն աստի եւ անտի պարսպեաց որմովք ի նիւթճուէն աղիւսոյ զարմանալի բարձրութեամբ, եւ տեղիս իջանելոյ նոյնպէս աղիւսեայս գործեաց, նշանակերտ յօրինուածով հանգոյն պարսպաց քաղաքին: Պործելեացն փոյթ՝ գործոյն մեծութեան հաւասար էր:

Բայց տիկինն խնատուն չած ինչ զմտաւ՝ եթէ այնպիսի իրօք իւրոց թշնամեացն հնարս առնոյ զքաղաքն ուսուցանէր¹¹: Քանզի Սիւրոս՝ որ զքաղաքն պաշարեաց, իրրեւ ոչ զինուց զօրութեամբ եւ ոչ սովով կարէր գամագիտ պաշարմանն լինել, ի լիճ՝ անդր զգեան զարձուցանէր. եւ ընդ երկուս կողմանս քաղաքին դռոհ տուեալ ի ներքս մտանէր, որպէս յաճախ մարգարէքն յայտ աբարին:

Եթէ բարեղացիք, իրրեւ զայլ ամենայն իրս մարդկեղէնս, կորստական զանձինս համարէին, եւ եթէ չէր նոցա սնտաի յուսով ի կուրութիւն անկեալ, ոչ միայն զոր Սիւրոսն արար յառաջագոյն մարթէին խմանալ, զի եւ ինքեանք նորոգ ի նոյն գործ վաստակեալ էին. այլ եւ ի վերուստ զեզր զեւոյն աստի եւ անտի կալեալ՝ զօրսն Պարսից անգէն առ ետեղ ի մէջ գեւոյն՝ ընդ որ անցանէին, համօրէն սատակել կարէին: Բայց նոքա ամենեւին ի զեղիսութիւն եւ ի գրգռութիւն հատեալ խնձոյս ուրախութեան կացուցանէին. ամենայն ինչ խառն ի խուռն էր, առանց կարգաց ինչ եւ հրամանաց: Ոչ միայն ամրական անառիկ վայրք, այլ եւ մեծամեծ իշխանութիւնք զայս օրինակ կորնչին: Օջրացն առ հասարակ ընդ դրրունան խուժելոյ, ահ կալաւ զամենեսեան. եւ թաղաւորն ամբարիշտ ի բուռն անկեալ սատակէր: Քսենոփոն¹² որ ամպարիշտ զհուսկ յետինն ի թագաւորաց բարեղացւոց անուանէ, թուի ինձ՝ եթէ նովին բանիւք զանօրէն զտաճարակողոյսուս սեղանակապուս ամպարշտութիւնն Բաղասարայ յայտ առնել կամիցի. քանզի եւ Վանիէդ վասն այնր տաճարակապտութեան մեղացն, աւսէ, կրեալ զերագահասն պատուհաս:

Սարք, որպէս զառաջինն՝ նոյնպէս եւ զերկրորդ իշխանութիւն ասորեստանեաց քակեցին. որպէս թէ ազգս այս միշտ պատճառք թշուստութեան էր փառաւորու-

Թեան ասորեստանեաց : Լայց զայս նուաք, վասն քաջութեան եւ մեծի անուան Վիւրոսի, Պարսիկք՝ որոց Թադաւորէր Վիւրոս, զյաղթութեանն փառս ժառանգեցին :

Երգարեւ Վիւրոս ի գլուխ տարաւ զյաղթութիւնն, որ ի խիստ վարս եւ ի զգաստութեան սնեալ, անդստին ի մատաղ հասակէն կրթէր ի ժուժկալութիւն եւ ի զինուորութեան հրահանգս, բառ սովորութեան Պարսից՝ որ այնչափ զգաստադոյնք էին յայնժամ, որչափ եղենն յետոյ անձնդեւրք¹³ : Սարք՝ որ յառաջագոյն այնպէս աշխատասէրք եւ պատերազմասէրք էին, յետոյ առ յըզփութեան մեղկեալք, որպէս հանապաղ դէպ լինի, այնպիսի զօրավարի պէտս ունէին : Վիւրոս խիզախէր ի մեծութիւնս եւ յանուն Մարայ՝ որ հանապաղ հոյակապք էին յարեւելից աշխարհին¹⁴. բայց զոյս իւր վասն իրայն յաջողութեան եղեալ ունէր յիւր զօրսն՝ զորս ի Պարսից աշխարհէն ած ընդ իւր¹⁵ : Ենդէն յառաջնում պատերազմին Թադաւորն բարեղացւոց սպանանէր, եւ ասորեստանեայք ի պարտութիւն մատնէին : Յաղթօղն միայն ընդ միայն ընդ նորոց Թադաւորին կուռել յօժարէր. եւ զիւր քաջութիւն ցուցեալ, զինամածի եւ զգորովագոյն Թադաւորի անուն ժառանգէր, վասն խնայելոյն իւրոյ յարիւն ժողովրդեանն : Ոչ միայն զիւր քաջութիւն այլ եւ զինաստուն վերակացութեան նշանակա եցոյց : Եւ երկիւղն զն մի շէն երկիրն՝ զոր իբրեւ իւր համարէր, յաււեր լինիցի, կանխեաց հաւանեցոյց զնոսա, զն մի ոք յերկոցունց կողմանց եւս մշակաց եւ արդիւնարարաց վնաս ինչ առնիցէ¹⁶ : Օչոգոս արուարձականս ի նախանձ բարկութեան գրգռեաց ընդդէմ բունութեան ամբարտաւանութեան բարեղացւոց՝ որ զամենայն ընդ բռամբ ածել ջանային. եւ քանզի Վիւրոս վասն առատամիտ եւ արդարասէր բարուցն, եւ վասն յաջողութեան պատերազմացն՝ զորս մղէր, քաջանուն եւ փառաւոր էր առաջի ամենայն ազգաց, ամենեքեան ի մի վայր եկեալ ընդ նմա միաբանեցին. որոց օգնականութեամբն Վիւրոս նուաճէր զընդարձակ զերկիրն զայն՝ յորմէ յօրինեալ եկաց իշխանութիւն նորա :

Օչոս օրինակ սոյն միահեծան իշխանութիւն կանգնեցաւ : Վիւրոս այնպէս զօրացոյց զպետութիւնն, մինչ

զի չէր մարթ դադարել յաճելոյ առ նորա արայազատօքն :
 Իսպց զի ի վերայ հասանիցեմք՝ եթէ զինչ այն ինչ իցէ,
 որ այնպիսի հօր թագաւորութեան պատճառք կորստեան
 եղև, հարկ է զՊարսիկս եւ զպայազատս Ալեքոսի՝ ընդ
 Յունաց եւ ընդ զօրավարաց նոցա, մանաւանդ ընդ Ա-
 ղէքսանդրի, ի կշիռ համեմատութեան բերել :

¹⁾ ՊՌՈՒՄ. ԳՐԸ Ի : ՅՈՒՍ. ԳՐԸ Լ : ²⁾ ՍՏԸԸ. Ժ. Ը : ³⁾ ԼՐՈՒՄ.
 Լ : ԴՌՆ. ԸՂԸ. Լ : ԼՊՊ. Սկից. Սասե : ⁴⁾ ՇՆՆ. Ժ. Դ. 1. 2 : ՅՈՒՄ.
 Գ. 8 : ⁵⁾ ՊՂԸՏ. Վան Օրինաց. Գ. : ⁶⁾ ՅՈՒՍ. Լ : ԴՌՈՒ. Ի :
⁷⁾ ՎՍՆՆՈՓ. ԿԻՐ. ԽՐԱ. Գ. Դ. : ⁸⁾ ԼՐՈՒՄ. Լ : ⁹⁾ ՎՍՆՆՈՓ. ԿԻՐ.
 ԽՐԱ. Գ. Դ. : ¹⁰⁾ ԼՐՈՒՄ. Լ : ¹¹⁾ *ԱՂԻՆ. ԼՆԳ. : ¹²⁾ ՎՍՆՆՈՓ. ԿԻՐ.
 ԽՐԱ. Լ : ¹³⁾ *ԱՂԻՆ. ԼՆԳ. Լ : ¹⁴⁾ ՊՈՂ. Լ. 44. Ժ. 24 : ¹⁵⁾ ՎՍՆՆՈՓ.
 ԿԻՐ. ԽՐԱ. Դ. Լ : ¹⁶⁾ *ԱՂԻՆ. ԼՆԳ. Լ :

Գ Լ ՈՒ Խ Ե Ե

ՊԵՐՍԻԿ ԵՅԵՆԻ ԵՒ ԵԳԷՐՍԵՆԿՐԱՍ

ՄԱՐԿԻՄԻԱՅԻՍ որդի Ալուրոսի զՊարսից ազնուականութիւն զեղծոյց¹ : Նորին հայրն Ալուրոս ամենեւին վարժեալ եւ թեքեալ ի հրահանգս սրատերազմաց, ոչ որպէս պարսն էր փոյթ յանձին կալաւ զիւր որդին եւս՝ որ զմեծ իշխանութիւնն պայազատերոյ էր, նոյն օրինակ ի նոյն հրահանգս թեքել : եւ ըստ հասարակաց կարգի մարդկեղէն իրաց, անչափ փառաւորութիւն եղծիչ եւ մնասիչ առաքինութեան լինէր :

Վարեհ Ա շտասպեայ՝ որ ոչ յաւազաց ոք էր, եւ ի բարձ թաղաւորութեան հասանէր, բազում կարգ եւ յօրինուածութիւն ի գլխաւոր իշխանութեանն եցոյց, ջան յանձին կալեալ զերսն անդրէն յառաջին կարգն յարդարել : Բայց համօրէն իմն ամենեցուն էր ապականութիւնն, եւ բարեկեցութիւն եւ անչափ զեղխութիւն եղծ զեղծ զամենայն աղնուադոյն բարս. եւ Վարեհ իսկ գլխովին ոչ այնչափ ժուժկալ ինչ ոք էր, մինչեւ բաւական լինել զայս ի նոյն զգաստական առաքինութիւն յորդորել : Եւ նորին պայազատօքն ամենեւին ամենայն եղծաւ, եւ Պարսիկք այնու հետեւ առանց չափոյ ի զեղխութիւն եւ ի բարեկեցութիւն հասան :

Բայց թէպէտ եւ Պարսիկք, իրրեւ զօրացան եւ մեծացան, ի փափկութիւնս ընկղմեալ կարի իսկ յառաջին առաքինութենէն վրիպեցին, սակայն տակաւին կերպարանս ինչ մեծութեան եւ ազնուականութեան յանձինս ցուցանէին : Բնդ սուտն խօսել ամենեւին չախորժէին, եւ զայն ամօթոյ եւ անարդանաց համարէին. եւ զինչ քան զայս ազնուադոյն կայցէ² : Այ միայն զսուտն խօսել, այլ եւ զայլոց ինչ յանօթ առեալ ի կիր արկանել վատութեան գործ հաշուէին : Սուրութիւն եւ քարուականութիւն եւ ծառայից կեանս զայնպիսի կեանս համարէին, եւ անչափ սրտաւանաց, այնու՝ զի ի ստութիւն ածէ : Վրանզի Պարսից ազգն ի բնէ մարդասիրադոյնք էին, բազում խնամս առ թաղաւորս յողթեալս ցուցանէին³ : Իրրեւ նոցին որդիք սակաւիկ մի ըստ Պարսից օրինաց զանձինս

յարդարելին, անդէն յաշխարհին իւրեանց իշխան եւ հրամանատար լինելին, զրեթէ ըստ օրինի առաջին աւագութեան իւրեանց: Պարսիկք քաղցրագոյն եւ զզօնագոյն եւ առատամիտք էին առ օտարս. եւ զնոսա յիւրեանց պէտս վարելին: Օլաւս եւ զառաքինիս ճանաչելին, եւ զամենայն հնարս հնարելին առ ի զնոսա յինքեանս կորզելոյ: Երգարեւ չեղեն նոքա ընդել եւ ծանօթ ճշմարիտ իմաստութեանն՝ որ զբարեոք վերակացութեան հանգամանս ուսուցանէ, ի յաղթ պետութեանն առաջնորդութեան հանապաղ անկարգ ինչ եւ անհեղեղ դտանէր: Չեղեն նոքա հմուտ հանգամանաց այնր արնուագոյն արուեստի՝ զոր յետոյ հռոմայեցիք մեծաւ ճարտարութեամբ ի կիր արկին. այս ինքն զբազում կողմանս մեծի աշխարհին ի մի յօդելոյ, եւ ի բազում յօդուածոյից մի մարմին յարդարելոյ հանգամանս. եւ յայն սակա խակ Պարսից աշխարհն ցանդ յազմկի եւ ի խռովութեան էր: Սակայն չէին ամենեւին առանց կարգաց եւ յօրինուածութեան:

Օրէնս արդարութեան ճանաչելին նոքա, եւ թագաւորք բազումք եւ մեծամեծք եղեն նոցա, որք բազում զզուշութեամբ եւ խնամով տային զօրէնսն պահել⁴: Սատիկ պատուհաս ի վերայ չարագործաց զնէին, բայց այնպիսի իմաստութեամբ եւ չափով, զի թէպէտ եւ որոց զառաջին նուագն յանցանէին, գոյր ներել թողութեան, սակայն որ բազում անգամ ի նոյն չարիս յանդգնէին, անհնարին պատիժս կրելին: Բազում ազնուական օրէնս ունէին⁵, որք զրեթէ բովանդակ ի Ալեքոսէ եւ ի Վարեհէ Վշտասպեայ եղան: Վարձեալ գոյին նոցա եւ օրէնք առաջնորդութեան⁶, եւ ատեան խորհրդոյ կարգեալ ի նոցա պահպանութիւն. եւ բազում հրամանատարք գործակալութեան սպասու իրաց իրաց մի զմիով կարգեալք: Օմեծամեծս աւագանւոյն՝ որ զխորհրդոյն զատեան յօրինէին, աչք եւ ականջք թագաւորին համարելին⁷, բայց եւ թագաւորին եւս ազգ առնէին՝ եթէ զոր օրինակ անգամք մերոց զպայնոցս, նոյնպէս եւ նմա պաշտօնեալք տուեալ են, ոչ զի ի նոսա ինչ սպաստան՝ ինքն յուլանայցէ եւ ի դատարկութիւն հաստանիցի, այլ զի նոքօք վարիցի⁸. նոյնպէս եւ զպաշտօնեայն խրատելին՝ եթէ չէ արժան նոցա առ անձանց օգուտ յիրս ինչ մտարերել, այլ

վասն թաղաւորաց իւրեանց բնատերանց եւ առ Համաշխարհի օգուտ զամենայն գործել : Պարտ եւ պատշաճ էր պաշտօնէիցն կրթել եւ ընդելանել ի նախնեացն խրատս եւ ի թելադրութիւն՝ որ վասն տեսչութեան միահեծան իշխանութեան⁸ : Մատենաք յիշատակաց՝ ուր զիրս անցեալս զբողմէին⁹, կանոն ուղղութեան առ յապայ եկեւոյցն լինէին : Ամենայն ծառայութիւն՝ զոր ծառայէր որ, ի յիշատակաց մատենաս դրով նշանակէր, առ երկիւղի՛ զի մի ինչ երբեք առանց վարձուց Հասուցման մնայցէ, եւ այն առ ամօթոյ լինիցի թաղաւորին, եւ աշխարհին ի մեծ փնաս¹⁰ : Այնուազոյն պայման զեւրաքանչիւր որ ի Հասարակաց օգուտ յօժարեցուցանելոյ էր, ուսուցանել նոցա՛ եթէ չէ պարտ նոցա վասն անձանց եւ եթ ջանալ, այլ եւ վասն թաղաւորին եւ համօրէն աշխարհին, ուր իւրաքանչիւր որ խառն ընդ այլոցն ամենեցուն գտանի :

Պարտ եւ պատշաճ էր թաղաւորին առաւել քան զամենայն հողադործութեան խնամ տանել¹¹. եւ նախարարքն՝ որոց երկիր կալուածոցն բարեք գործեալ եւ արօրադիր եղեալ էր, առաւել քան զայլս շնորհս առաջի թաղաւորին գտանէին : Օր օրինակ վասն հրահանգաց զինուորութեան խնամ տանելոյ բազմաց հողաբարձութիւն յանձն էր, նոյնգունակ բազում վերակացուք կային, որք ի վերայ գործոց արդիւնարարաց սկէին. այս երկու կարգ գործակալութեան էր, որոց միումն աշխարհին վերակացութիւն յանձն էր, եւ միւսումն հողադործութեան փոյթ : Թաղաւորն զերկոսեան զոյգ սիրէր, եւ զմի օրինակ խնամ ունէր երկոցունց, զի հաւասար ի հասարակաց օգուտ նպաստ լինիցին¹² : Յետ նոցա՛ որոց արութիւնս ինչ ի պատերազմի ցուցեալ էր, առաւել պատուականք էին՝ որոց բազում որդեակս ծնեալ էր եւ սնուցեալ :

Անգատին ի մատաղ հասակէն Պարսիկք զթաղաւորաց ճօխութիւն պատուել ուսանէին, որ անցանէր զանցանէր քան զչափ. քանզի երկրպագութիւն ի պատիւն խառնէին, առաւել գերեաց նմանեալ քան մարդկան՝ որ թաղաւորի օրինօք կարգելոյ հնազանդիցեն. այլ այս բարք են արեւելեաց, եւ թերեւս նոցա բնութիւն սաստիկ եւ ուժգին՝ իշխանութիւն իմն առաւել հաստատուն եւ առաւել անարգել պահանջիցէ :

Ընդ հանդամանս սնուցանելոյ զԹաղաւորաց մանկունս զարմանայ Պղատոն¹³, եւ զնոյն օրինակ ազնուագոյն կրթութեան Հոռնաց առաջի դնէ: Ընդատին յեւթօրն ամաց հասակէ հանէին զնոսա ի ձեռաց ներքինեաց, զի ի ձեռոց հրահանգս եւ յորս երէնոյ կրթիցին: Կրբեւ չորեքասանամեայ լինէին եւ միտք նոցա սկսանէին յարգարել, արս չորս առաքինիս եւ խմաստունս ածէին վարդապետս մանկանցն: Ըռաջինն, ասէ Պղատոն, մտութիւն ուսուցանէր նոցա, որ ի նոցա բարբառ զից պաշտօն յայտ առնէ, ըստ նախնեացն կրօնից, եւ ըստ օրինացն՝ զոր Օրադաշան եզ որդի Արմզի: Արկրորդն ընդեկացուցանէր զնոսա զի ճշմարտասէլք եւ արդարակորովք լինիցին, եւ իրաւանց ուշ առնիցին: Արբորդն կրթէր զնոսա զի մի ի փափկութիւնս ինչ հատանիցին, այլ զի ազատք ի կարեաց եւ ստոյգ թաղաւորք լինիցին, եւ անձանց եւ ցանկութեանց տեսքք իցին: Չորրորդն զօրացուցանէր զնոցա միաս մի վայրսպար ինչ երկնել, զի մի իրբեւ զգերիս կալ եւ կապ ունիցի զնոսա երկեւզն, որ եւ զվտասհութիւնն՝ որ կարեւորն է որոց հրամանատարքն են, ի նոցանէ բառնայցէ: Այնպէս որդիք իշխանաց յարքունիս անդ թաղաւորին ընդ որդիսն արքայի սնանէին: Բաղում փոյթ յանձին ունէին՝ զի մի գործս ինչ ծանականաց տեսանիցեն մանկտին, եւ բանս լիտիս լիցին¹⁴: Ընդ մանկանցն զնացից համարս թաղաւորին տային վարդապետքն. եւ ըստ համարոյն տուելոյ, վարձք կամ պատուհաս յարքայէ ելանէր: Սանկտին՝ որ զայն տեսանէին, անդատին ի մատաղ հասակէն ի միտ առնուին զպատշաճս իշխանաւորաց եւ իշխանաց:

Այսպիսի ազնուագոյն հրահանգօք իմ իմիք չէր մարթ ի թաղաւորաց Պարսից եւ յազնուականաց նոցա ակն ունել, եթէ զնոյն խնամս զնոցանէ, զոր օրինակ ի տղայութեանն, նոյնդունակ եւ յետ ի չափ հասակի հասանելոյ ունէին: Այլ ըստ զեղծ վարուց արխական ապլին վաղվաղակի ի բարեկեցութիւն հատանէին. եւ յայնպիսի զեղծութեան չէ մարթ կրթութեանն կալ յակաստանի: Սակայն պարտ եւ պատշաճ է ասել եթէ անձնգիւրութիւն Պարսից եւ զարգասիրիկ ցանկութիւն նոցա, չլինէր ինչ խափան քաջութեան նոցա. ընդ այն իմն հա-

նապաղ նախանձ բերէին, եւ բազում երեւելի նշանակա
քաջութեան ցուցին:

Օգարուեստ զինուորութեան որպէս պարտն էր մե-
ծարէին, իբրեւ ամուր ինչ սպաստանի՝ ընդ որով այլն
ամենայն ի հանդստեան վճարի¹⁵: Բայց նորին հանդամա-
նաց չեղեն գիտակ, եւ ոչ զայն ինչ գիտացին՝ եթէ զինչ
ինչ ի զօրուն վճարել բաւականք իցեն խտութիւնն եւ
հրահանգք, զնդաց զնդաց պատրաստութիւն, օրէնք չուե-
լոյ եւ բանակելոյ, եւ ազնուագոյն առաջնորդութիւն՝ որ
անթիւ զօրաց առանց շփոթութեան ինչ եւ ի դէպ ժա-
մու տայցէ խաղալ: Ամենեւին զամենայն ինչ վճարեալ
կարծէին, յորժամ ամբոխ բազում մարդկան կուտեալ
առանց ընտրութեան ածէին ի մարտ պատերազմի, ինքնա-
կամ նահատակեալք, այլ խտուն ի խուռն եւ անկարգ. եւ
անչափ խառնադանձ բազմութիւն մարդկան՝ զորս թա-
գաւորն եւ մեծամեծք նորա ի սպաս զկնի ձգեալ տա-
նէին, վայրապար խէթ եւ խութ լինէին ի ճանապարհին.
զի այնչափ բուռն էին բարեկեցութեանն տենչանք, մինչեւ
ի զօրուն իսկ զնոյն փառաւորութիւն եւ զնոյն հեշտակա-
նութիւն՝ յոր յարքունիան վայելէին, խնդրէին. եւ այն-
չափ՝ մինչեւ կանայս եւ հարձս եւ ներքինեաց դասակա
եւ զամենայն սպաս զեղևութեան ընդ իւրեանս շրջեցուցա-
նել: Անթառ ոսկեղէնս եւ անթառ արծաթեղէնս եւ
սպասս մեծադինս, եւ զամենայն հանդերձանս պիտոյից
վայելչութեան այնպիսի կենաց մեծաւ պատրաստու-
թեամբ զնոցա զհետ ածէին: Այսպէս յաճախազունդ
զօրօք, բազմատարած բանակօք, լի աղմկաւ չու արա-
րեալ խաղացեալ երթային. հանդերձ անթիւ եւ անհա-
մար եւս բազմութեամբ մարդկան՝ որ ոչ ի պատերազմ
ինչ երթային, այլ լինել խափանիչ բանակին: Ի մէջ
այնչափ խտան չէր մարթ զօրացն միարան ուրեք շար-
ժել, ոչ ի դէպ ժամու հրամանք զօրավարացն հասա-
նէին, ամենայն ինչ ի ճակատու խտուն ի խուռն վայ-
րտպար առանց խորհրդոյ դործէր, եւ չէր մարթ ումեք
իրայն խնամ ասնել: Մանաւանդ զի եւ հարկ ի վերայ
կայր արաղ արաղ զիրան վճարել, եւ փութանակի յայլ
գաւառ անցանել. քանզի այնչափ աշխարհախումբ բազ-
մութիւն մարդկան՝ որք ոչ կարեւորացն միայն այլ եւ ա-

ւերորդացն ցանկային, որովք շուայտիցին, վազվազակի զամենայն սպառէին. եւ զժուարին առ հասանել է՛ եթէ ուստի այնչափ դարման ռոճկաց գտանէին:

Սակայն եւ այնպէս, Պարսիկք այնպիսի մեծաւ պատրաստութեամբ զարմացուցանէին զազգս՝ որք չէին ինչ առաւել քան զնոսա տեղեակ օրինաց պատերազմի: **Ս**ա աւանիկ եւ նոքին իսկ՝ որ տեղեկազոյնքն էին, կամ յիւրեանց երկզառակութենէ տկարանային, եւ կամ ի թշնամեացն բաղմութենէ նկուն լինէին. այս իսկ է պատճառք եղիպտացւոց աշխարհին ընդ Պարսից իշխանութեամբ նուաճելոյ, որ այնպէս անդուստ ի վերուստ հզօր եւ փառաւորեալ էր, եւ վասն իմաստուն կարգացն եւ վասն Սեսովսորի յաղթութեանցն: **Վ**իւրաւ եւ անջան պատերազմաւ զփոքր ասիացւոց աշխարհն ընդ ձեռամբ նուաճեցին, եւս եւ զՅունաց գաղթականն՝ զոր ասիացւոց աշխարհին փափկութիւն ապականեալ էր:

Բայց իբրեւ ի Յունաց աշխարհն արշաւեցին, իրս չքնաղս՝ զոր չէր նոցա ուրեք տեսեալ, անդ տեսանէին. անդ էր տեսանել զօրս կարգեալս յարդարեալս, եւ զօրավարս՝ որոց հրամանաց ամենեքին անսային. զօրականս սովորեալս ի ժուժկայութիւն, եւ մարմինս բրտացեալս ի վաստակս, զորս գիրկ ընդ խառն կռիւ եւ այլ մրցութեան հրահանգք՝ որ յաշխարհին յայնմիկ լինէին, ժիրս ամենեւին գործէին. արդարեւ դունդք սակաւաձեռն, բայց հանդոյն պնդակազմ մարմնոց՝ յորս թուի իմն եթէ ամենայն մարմինն ջիղ իցէ եւ բնաւն ողի. հանդերձ այսու դարձեալ՝ այնպէս բարւոք յարդարեալք եւ յօրինեալք, եւ այնպէս կարճ եւ յօժարք ի հնազանդել հրամանաց զօրավարաց իւրեանց, մինչև յիւրաւի կարծէր որ՝ եթէ մի ողի ամենեցուն զօրաց իցէ. այնպէս ի միասին միահոյլ խաղային:

Բայց կարի ազնուադոյն ի մջ Յունաց էր հաստատուն եւ իմաստուն վերակացութիւն աշխարհին, որով մերթ թողուին խուսափէին, եւ մերթ միջամուլս լինէին եւ զդէմ ունէին, ըստ իւրաքանչիւր պատշաճից. եւ քաջասրտութիւն՝ զոր ազատութեան եւ հայրենի դաւառին սէր անհնարին գործէր առ յաղթութիւն, որ կարի զարմանալոյ է:

Յոյնք՝ որ ի բնութենէ արարածոյն իւրեանց հանձարեղք եւ քաջք էին, անդատին բազում կարգս ուսան ի թագաւորաց եւ ի հատուածից եկեղոց անգր յեզիպտացւոց աշխարհէն, որոց յառաջին ժամանակն ջան աստ անդ յաշխարհին բնակեալ, զազնուազոյն կարգս եզիպտացւոց ընդ բնաւ սփռեցին: Ի նոցանէ ուսան Յոյնք զմարմինս յմբշամարտ մրցութիւնս կրթեալ, ի զիրկ ընդ խառն մարտին, ի հետիոտս ընթանալ եւ ի ձիոցն ասպարեղս եւ ի կառամարտիկ կռուին, եւ յայլ մրցութեան հրահանգս զորս ինքեանք կառարեալ գործեցին փառաւոր պատկօքն ըմբշական մրցութեանցն:

Իսցյց քան զամենայն ինչ՝ զոր ուսուցին նոցա եզիպտացիք, ազնուագոյն այն էր՝ զի ուսան զգօնաբարոյ լինել եւ օրինօք զանձինս յարդարել վասն հասարակաց օգտի: Յոյնք չէին ըստ օրինակի մարդկան՝ որք զանձանց եւ եթ հոգան, եւ չզգան ինչ չարեացն՝ որ ի վերայ աշխարհին հասանիցեն, եթէ ոչ եւ ինքեանք եւս ի նոյն չարիս ըմբռնիցին, եւ կամ առանին խաղաղութիւն նոցա ազմկիցի. այլ ուսեալ գիտէին նոքա եւ զանձինս եւ զիւրեանց ընտանիս իրրեւ մասն մի մեծի մարմնոյ համարել, որ է բովանդակ աշխարհն: Հարք այսպիսի խորհրդով զիւրեանց որդեակս սնուցանէին, եւ որդիքն անդատին ի ճիզմ եւ ի մատաղ հասակէն ուսանէին զիւրեանց հայրենի դաւառն իրրեւ զմայր որ հասարակաց համարել, որում առաւել պարտականք էին քան իւրեանց ծնողաց: Մարդասիրութեանն անուռն ի մեջ Յունաց ոչ քաղցրութիւն եւ եթ յայտ առնէր, եւ փոխարէն շնորհս՝ որ ըզմարդիկ ընդերկիցս միմեանց յարդարէ. զի մարդ մարդասեր ոչ այլ որ ինչ է, եթէ ոչ բարւորք քաղաքացի՝ որ զանձն անդամ աշխարհին համարի, որ օրինաց հպատակ կայ, եւ նոքօք հանդերձ առ հասարակաց օգուտ միամտէ, եւ անձին ինչ խորել չկամի: Թագաւորք՝ որք անդուստ ի վերուստ կացին ի տեղիս տեղիս ի Յունացաշխարհին, որպիսի որ Մինտսն էր եւ Աեկրոփս, եւ Թեսսեւս եւ Ադրոսս եւ Տեմենէս եւ Արեսփոնտէս եւ Աւրիսթենէս եւ Պատրոկղէս, եւ այլք նոցին նմանք, զնոյն ազնուական փոյթ ի բովանդակ ազգին տարածեցին¹⁰: Որքա ամենեքին ի ժողովրդեանէ կուսէ էին, ոչ վասն այնորիկ ինչ՝ զի փաղաքչէին նո-

ցա, այլ զի որ ինչ լաւն էր՝ զայն նոցա խորհէին, փոյթ յանձին կալեալ զի օրէնք թաղաւորիցեն:

Իսկ զի՞նչ զանաչառ դատաստանայն ասացից: Ուր ուրեք բնաւ ատեան ինչ լեալ իցէ այնպէս մեծարոյ, որպիսի արեոսպաղոսն էր, որ այնչափ մեծապատիւ ի Յունաց աշխարհին մեծարէր, մինչեւ ասել իսկ եթէ զիք իւրովի անգր դային ի դատաստան: Արեոսպաղոսն անգրատին ի վաղուց հետէ հոյակապ եւ հռչակաւոր էր, եւ թուի Աեկրոպայ այնմ հիմն արկանել, ըստ օրինակի ատենից եզրկատացուոց աշխարհին: Չիք ուրեք ժողով՝ որ նմին նման երկայնաձիգ ժամանակաւ զիւրոյ առաջնոյ խրատութեանն անուն պահեալ իցէ. պատիր բանից ճարտարութիւն հանապաղ խոտան եւ տարազիր էր անտի:

Յոյնք այսպէս սակաւ սակաւ քաղաքային կարգս ուսեալ՝ անձամբ զանձինս վարել մտարերեցին, եւ շտաբ ի քաղաքաց ընդ ընկերահաշտեաց վերակացութեամբ զանձինս կարգեցին: Այլ բազում օրէնադիրք իմաստունք՝ որ ըստ դաւառաց դաւառաց եղեն, որպէս Թադէան եւ Պիւթադորաս, Պիտտակոսն եւ Ղիկուրդոս եւ Սողոն եւ Փիզողաւոս, եւ այլ բազումք՝ որ ի պատմութիւնս կան, արեւելին՝ զի մի աղատութիւնն ի ստահակութիւն դառնացէ: Օրէնք ինչ զիւրալուր, կարճառօտ, զժողովուրդն յիւրեանց պայմանին պահէին, եւ տային նոցա ի միասին ի համաշխարհի օգուտ ընթանալ:

Իսկ թէ որպիսի միտս զաղատութենէ ունէին Յոյնք սովին օրինօք թեղադրեալ, այն կարի զարմանալի է: Արդ աղատութիւնն ըստ նոցա մտացն ընդ օրինօք նուաձեալ էր, այս ինքն ընդ մտացն օրինօք՝ որ ամենայն ժողովրդեան ծանօթ էր: Չկամէին բնաւ՝ եթէ ոք իշխան եւ հրամանատար ի մէջ իւրեանց լինիցի: Ատիկանք՝ ի ժամանակի իշխանութեան իւրեանց այնպէս ահադինք, յետ այնորիկ իրրեւ զայլս ի քաղաքացեաց լինէին, որոց չէր ինչ կարի առաւելութիւն, բայց այնչափ միայն՝ զի զբազում իրաց զփորձ առեալ եւ զհանգէս տեսեալ էին: Իշխան զօրէնսն համարէին, նա էր՝ որ ոստիկանս եւ տեսուչս եւ հրամանատարս կացուցանէր, եւ զնոցա իշխանութիւն կարգէր, եւ յորժամ չարաչարն վարէին՝ պատիժս պատուհասից ի վերայ ածէր:

Աւելորդ է աստ քննել՝ եթէ այս կարծիք Յունաց, որը զազատութենէ կարծէին, իցէ արդեւք հաստատուն որպէս էն ալնուական: Յանկալի եւ զարմանալի զայն ազատութիւն համարէին. եւ մտադեւր ընտրէին յանձն առնուլ՝ զի բազում ինչ դժուարին եւ ծանրատաղտուկ յազատութենէ կրիցեն, քան սակաւ ինչ ի հնազանդելոյ իշխանի՝ որ օրինօք կարգեալ իցէ: Բայց քանզի յիւրաքանչիւր կարգս առաջնորդութեան օգտակար ինչ եւ շահաւետ դասնի, Յունաց աշխարհին առաջնորդութիւն զայս օգուտ մատուցանէր, զի զքաղաքացիսն յօժարեցուցանէր սիրել զիւրեանց հայրենի դուստն, ուր ամենեքին միարան առաջնորդէին, եւ ամենայն մարդոյ հնար էր յառաջին իսկ պատիւ աւագութեան հասանել:

Իսկ թէ զի՞նչ ինչ ի պահպանութիւն աշխարհին նպաստ եղև Յունաց իմաստնոցն ճարտարութիւն, թերեւս չհաւատալի թուիցի: Արչափ առաւել ալատ էր աղոյն, այնչափ աւելագոյն իմաստուն օրէնսդրութեան պէտս ունէր, առ ի զբարս մարդկանն յարգարելոյ, եւ զտոհմային քաղաքակից ընկերութեան բարեկենդանութիւն: Արդ՝ Պիւթադորաս, Թաղէս, Անաքսագորաս, Սոկրատէս, Արքիտաս, Պղատոն, Վսենոփոն, Արիստոտելէս եւ այլք յիմաստնոցն Յունաց, այսպիսի դեղեցիկ հրամանօք զաշխարհն լցին: Եղև եւ այլք յանհանձարից՝ որ զնոյն իմաստութեան անուն զինքեամբք առին. բայց նոքա՝ յորս այլք ընդելեալ յարէին, այնպիսիք էին՝ որք իւրեանց աշակերտելոցն զանձանց օգուտ եւ զկեանս իսկ փոխանակ հասարակաց օգտի եւ աշխարհին փրկութեան մատուցանել ուսուցանէին. այս էր հասարակաց փրկեստփայլիցն վարդապետութիւն՝ եթէ պարտ եւ պատշաճ է կամ ի հասարակաց իրաց ի բաց կալ, եւ կամ միայն զհասարակաց օգուտ խնդրել:

Եր վասն զփրկեստփայլից խօսիմք. պետիկոյք իսկ՝ որոց զիրք յամենեցուն ձեռս շրջէր, առաւել մտավարժս եւ խրատեալս զնոսա գործէին, քան թէ ճարտարութեամբն իւրեանց զուարճացուցանէին: Հռչակաւորն քան զամենայն աշխարհակալս զժողովրդս վարդապետ համարէր, որ բարեօք թագաւորել ուսուցանիցէ: Բայց նա ոչ եթէ զբարեօքն թագաւորել միայն ուսուցանէր, այլ

և բարեզբ հնազանդ լինել և բարեզբ քաղաքացի: Աս և այլ բազումք ի պեւտէից՝ որոց երգք ոչ հնշտական միայն են այլ և աղնուական, զարուեստս պիտանացուս ի սպասաւորութիւն մարդկեզէն կենաց նուազեալ հռչակին, զհասարակաց համաշխարհի օգուտ թեկադրեն, զմիարանութիւն և զքաղաքացիին կարգս արժանի զարմանալոյ՝ զոր ի վերագոյնն մանր նշանակեցաք:

Այսպէս սնեալ և կրթեալ Յունաց, իրբև յասիացիս հայէին ի փափկութիւնս և ի զարդարանս հատեալք ըստ օրինակի ընդվայրապաճոյճ լիտաղարդ կանանց, անդսնեալ արհամարհէին զնոսա: Բայց զողումն և սոսկումն ունէր զնոսա, իրբև ընդ կարգս առաջնորդութեան աշխարհին նոցա նայէին. զի անդ ամենայն ինչ՝ որպէս զեարդ թաղաւորն կամէր, վճարէր, և թաղաւորին կամք՝ իշխան ամենայն օրինաց էր, և ոչ եթէ վայրապար ինչ օրինաց այլ և կարի սրբոց և նուիրականաց:

Քան զամենայն ինչ ատելի Յունաց խուժգուժքն էին:

Օստելութիւնս զայս ի վաղընջուց հետէ ունէին Յոյնք, և որպէս բնակ իմն համարեալ էր նոցա՝: Հանդերձ այլովքն և այլ պատճառ էր, յոյր վասն Յոյնք բզձովերոսի երզան սիրէին. քանզի նա զյաղթութիւնսն և զառաւելութիւն Յունաց աշխարհին, որով վերադոյն քան զասիացւոց աշխարհն գտանի, նուազեալ երգէ: Յասիացւոց կողմանէ անտի էր Աստղին, այս ինքն՝ բարեկեցութիւն, անպատեհ ցանկութիւն և զբզութիւն. իսկ ի Յունաց կուսէ՝ Հերայն, այս ինքն է զգաստութիւն, առն և կնոջ սէր. և Հերմէսն հանդերձ ճարտարախօսութեամբն, և Արամազդ և իմաստութիւն՝ որ պիտոյն է յաշխարհին առաջնորդութիւն: Այնպէս և Արէսն յասիացւոց անտի, ուժգին և զազանամիտ, որ բզմարտս մտրեկանս յայտ առնէ. իսկ Աթենաս՝ ի Յունաց թերէ, որ է զնուորութեան արուեստ, և քաջութիւն պատերազմի՝ որ իմաստութեամբ մղելի: Յոյնք անգասին ի նմին ժամանակէ հանապաղ կարծիս կալան՝ եթէ հանձար և քաջարտութիւն ընտարոյս իցէ նոցա. բմբոստանային իմն և զչարէին ընդ ասիացիսն, եթէ բնաւ ընդ ձեռամբ նուաճել զնոսա մտաբերիցեն. և համարէին այնպէս՝ եթէ, յորժամ ինքեանք ընդ նոցա լծով մր-

տանիցեն, յայնժամ եւ առաքինութիւն՝ փափկութեան գերի երթայցէ, եւ ոգիք՝ մարմնոց, եւ ճշմարիտ քաջութիւն՝ վայրասպար ինչ զօրութեան, որ ի բազմամրոտըս մարդկան միայն հաստատեալ իցէ:

Յոյնք ի սոյն խորհուրդս թեւակոխէին, յորժամ Վարեհ Վչտասպեայ եւ Վսերքսէս ի վերայ աշխարհին զօրածողով եղեն բուռն կազմութեամբ, եւ այնչափ թիւհամարոյ զօրացն էր, մինչեւ առասպելք կարծին: Արագարագ պատրաստեցան, ի զէն ընթացան, զիւրեանց ազատութիւն պատասպարէին: Թէպէտ եւ ըստ քաղաքաց քաղաքաց Յունաց աշխարհին, նոյնչափ եւ իշխանութիւն էր, սակայն վասն հասարակաց օգտի ի մի վայր ժողովեցան. եւ յայն իմն պնդեալ էին՝ եթէ ո առաւել վասն աշխարհին ջան յանձն առնուցու: Մտադեւր յանձն առին ամենացիք թողուլ զիւրեանց քաղաքն ի ձեռս աւարառուաց իւրեանց եւ հրոյ ճարակ լինել. եւ յետ զձերս եւ զկանայս եւ զմանկտի զերծուցանելոյ, սկսան զայր ընտիր զէն ընտիր ժողովել, զամենայն մարդ՝ որ կարօղն էր զէն առնուլ ի նաւան կուտեցին: Աղփայտակի զօրահատոյց եղեն զուռդ մի զակեղմոնացւոց հանդերձ իւրեանց թազաւորան, կամակար ի մահ ընթացան, զկիրձս առին զի զաւուրս ինչ զգօրսն Պարսից արդելուցուն, եւ տայցեն նոցա ի միտ առնուլ զինչ Յունաց աշխարհն իցէ. զբազումս ի բարբարոսաց անտի տապաստ արկեալ վասն աշխարհին փրկութեան, եւ օրինակ չքնաղ քաջութեան՝ իւրեանց տոհմային քաղաքացեաց թողեալ, մտադեւր մեռանէին: Առձան լքան զօրքն Պարսից գիտակալ լինել այնպիսի զօրու՝ որ այնպէս օրինօք յարդարեալ էր. իբրեւ բազում անգամ ձախողեցաւ նոցա, զփորձ առեալ գիտացին՝ եթէ քան զբազմութիւն եւ զամրոխ զօրաւոր է կրթութիւն, եւ քան զբռնութիւն տաղնապաւ՝ զօրութիւն հանդերձ ճարտարութեամբ:

Աւ ոչ այլ ինչ հնարք գոյին Պարսից՝ որ այնչափ ի պարտութիւն մատնեցան, բայց եթէ բաժինս ի մեջ Յունաց արկանել. եւ յայնպիսի պայման հասեալ էին Յոյնք յաղթութեամբքն իւրեանց, մինչեւ զիւրին իսկ լինել իրացն ի գլուխ ելանելոյ: Օք զոր օրինակ երկեւղ ի միաբան հաւանութեան պահէր զնոսա, յաղթութիւնն եւ

վատահուծութիւն եղծ զմիարանութիւնն¹³ : Աւ քանզի սո-
վոր իմն էին ցանդ պատերազմել եւ յաղթել, իրրեւ տե-
սին՝ եթէ չէք այլ եւս ի Պարսից զօրութենէն կասկածել,
սկսան ընդ միմեանս դռալ : Ասցց պարտ եւ պատշաճ է
վասն այսպիսի բարուց Յունաց, եւ վասն ի ծածուկ հայ-
թայթանացն Պարսից սակաւ ինչ յերկարադոյն տողել
բանս :

Ի մեջ ամենայն իշխանութեանց Յունաց աշխարհին,
աթենացւոցն եւ զակեղմոնացւոց իշխանութիւն առանց
համեմատութեան գլխաւոր էր : Աթենացիք քան զամե-
նեսեան իմաստնագոյնք էին, իսկ զակեղմոնացիք՝ ուժ-
գնադոյնք : Աթենացիք բարեկեցիկ լինել ակործէին. զա-
կեղմոնացիք զվշտակեցութիւն եւ զաշխատութիւն սիրէին :
Աւ սոքա եւ նոքա փառաց եւ ազատութեան տենչային .
բայց յԱթէնս ազատութիւն ի բնէ ի ստահակութիւն ա-
ծէր . իսկ ի Ապարտիա ընդ խիտ օրինօք էր, բայց որչափ
ի ներքոյ սանձահարէին զակեղմոնացիք, նոյնչափ արտա-
քոյ ընդարձակել զիշխանութիւնն իւրեանց խնդրէին :

Նոյնպէս եւ աթենացիք իշխան լինել կամէին, բայց
այլապունակ . զանձանց շահ ընդ փառաց խառնէին : Տե-
ղեակ եւ հմուտք էին արուեստինաւարկութեան, եւ ծովն՝
յորում ծովակալէին, մեծացոյց զնոսա : Օքնաւ ընդ ձե-
ռամբ նուաճել կամէին, զի ինքեանք միայն իշխան վաճա-
ւաշահութեան լինիցին . եւ մեծութիւն նոցա՝ որ զնոսա
յայնպիսի ժլտտութիւն յօժարեցուցանէր, հնարս եւս ու-
սուցանէր նոցա որով զցանկութիւնն հաճել մարթացին :
Օնորին հակառակն զակեղմոնացիք վարձաթ եւ զուկի
արհամարհէին : Արով հետեւ ամենայն օրէնք նոցա յայն
իմն կարգեալ էին՝ զի պատերազմօղ զազն յարդարիցեն,
միայն փառքն՝ զոր զինու զարդու եւ ի սուր սուսերի իւ-
րեանց ժառանգէին, զնոցա միտս յինքն յանկուցանէր :
Անդստին ի բնէ իշխան եւ հրամանատար լինել փառիա-
քէին . եւ որչափ առաւել ի վեր եւ ազատ էին յազա-
հութենէ, նոյնչափ առաւել իշխանութեան ցանկային :

Ղակեղմոնացիք վասն զգաստասէր բարուցն յօրէնս
եւ ի խորհուրդս իւրեանց հաստատուն կային : Աթենա-
ցիք սաստիկ էին, եւ ժողովուրդն կարի ճոխանայր . թէ-
պէտ եւ փիզխոփայութիւն եւ օրէնք բազում շահս դոր-

Ճէին յայնուադոյն բարս նոցա, բայց ոչ որ կարէր յիւրոց մտաց խմանալ զարժանն եւ զգաստանալ: Ամն խմատուն յաթենացոց՝¹⁹ որ զըոյս բարուց իւրոյ հայրենի գաւառին ճարտար զխակը, ասէ՝ թէ երկեւղ պիտոյ էր առ ի զյանդուզն եւ զստահակ միտս աթենացոց սանձահարելոյ. եւ թէ չեղեւ հնար զնոցա յանդգնութիւն կարծել, իբրեւ յետ ի Սաղամին յաղթելոյ, տեսին՝ եթէ չէք այլ երկեւղ ի Պարսից:

Յայնժամ երկու իբր՝ նոցա պատճառք կորստեան եղէն. փառք արութեան քաջութեան նոցա, եւ վատահութիւնն՝ որով զանձինս անխէթ եւ անկասկած համարէին: Չանասյին այնու հետեւ ատենակալացն, եւ մինչ զեռ Պարսիկք ընդ անհնարին խիստ ծառայութեամբ անկեալ տառասպէին, աթենացիք, ասէ Պղատոն, զփորձ առնուին զչարեաց աղատութեանն՝ որով կարի համարձակեալ յանդգնէին:

Արկու մեծամեծ իշխանութիւնքս այտքիկ, զակեգմոնացոց եւ աթենացոց, որ բարուք եւ զնացիւք կարի այլակերպք էին ի միմեանց, միմեանց խոչընդակն լինէին առ ի չկատարելոյ զխորհուրդն՝ զոր ի մտի ունէին, համօրէն զՅունաց աշխարհնուածելոյ. այնպէս՝ զի առաւել վասն հակառակ օգտի միմեանց մենքենացելոյ, քան վասն իւրաքանչիւր բարուց այլակերպութեան ընդ իրեարս ռսացեալ էին:

Վմենայն քաղաքք Յունաց աշխարհին՝ երկոցունց եւս թագաւորել չկամէին. ոչ միայն վասն զիւրեանց աղատութիւն պահելոյ, այլ զի եւ երկոքեան ծանրատաղատուկք էին:

Ղակեգմոնացոց ընկերհաշտութիւնն խիստ էր, եւ յաղզին յայնմիկ դազանամտութեան ինչ նշանակ երեւէր²⁰. խիստ առաջնորդութիւնն եւ վշտակեցութիւն վայրենամիտս զնոսա դարձէր, եւ դժնդակ եւ սաստիկ. մանաւանդ եւ հարկ ի վերայ կայր՝ որոց ընդ նոցա հնազանդութեամբ լինէին, յանձն առնուլ հանապաղ ի խռովութեան եւ ի պատերազմի լինել. քանզի զակեգմոնացոց քաղաքն՝ որ վասն պատերազմի յօրինեալ էր, չկարէր առօանց հանապազորդ մարտից պատերազմաց հաստատուն կալ²¹: Այսպէս զակեգմոնացիք հրամանատար լինել կա-

մէին, եւ ամենեքին յահի եւ յերկիւղե կային՝ զև մի այնպիսի ինչ զխպիցի²² :

Աթենացիք ի բնէ քաղցուոնք եւ մարդասէրք էին²³ : Չէր ինչ ցանկալի ի տեսանել քան զաթենացւոց քաղաքն՝ ուր հանապազ խաղս եւ խնճոյս ուրախութեան կատարէին, ուր միտք եւ ազատութիւն եւ ախար զօր ամենայն նոր եւ չքնաղ տեսիլս ցուցանէին : Բայց յեղյեղուկ զնացք նոցա զաշնաւորաց իւրեանց չթուէին հաճոյ, եւ առաւել իւրեանց հնազանդելոց ծանրատաղառուկ էին : Հարկ էր տանել անշնորհաւոր բարուց ժողովրդեանն այնորիկ՝ որ յողբանս սնեալ էին. եւ այսպիսի բարք ժողովրդեան միոջ, որպէս ասէ Պլատոն, առաւել վնասակար է քան զթաղաւորի ուրուք՝ որ ի փաղաքշանաց սուտակասպասաց մեղկեալ իցէ :

Այս երկու քաղաքք չայսին թոյլ էջունաց աշխարհին ի խաղաղութեան վայելել : Պատերազմն՝ որ ի Պեղոպոնեսոս դուամրեցաւ, եւ այլ եւս պատերազմունք, սկիզբն առին կամ տեւեցին ի նախանձաւորութենէ անտի՝ զոր զակեղմոնացիք եւ աթենացիք ընդ միմեանս ունէին. բայց այս նախանձաւորութիւն՝ որ զէջունաց աշխարհն խռովեցուցանէր, պահէր եւս զաշխարհն, եւ չթողոյր ընդ ձեռամբ միոյ յերկուց նուաճել :

Պարսիկք վաղվազակի ի վերայ հասին այսպիսի անցից աշխարհին. եւ փասն այնորիկ զամենայն հնարս հնարէին ի ծածուկ, զև զնոսա ի նմին նախանձաւորութեան պահիցեն, եւ ամեցուսցեն զերկպառակութիւնն եւ զբաժինն : Վախ զակեղմոնացիք՝ որ առաւել իշխանութեան տենչային, մուծին զՊարսս ի կռիւս էջունաց : Սորս համարձակեցան ձեռներէց եղեն ի ներքս մխեցան, ի մտի եղեալ համօրէն զազն ընդ ձեռամբ նուաճել. եւ զամենայն փոյթ ի մէջ առեալ առ ի զէջոյնս տկարացուցանելոյ, կային մնային հասանելոյ ժամուն՝ յորում միահամուռ զնոսանկուն առնիցեն : Էջոյնք յառաջադոյն իսկ ի մարտս պատերազմաց իւրեանց զթաղաւորն Պարսից միայն առաջի աչաց ունէին. զոր եւ վերագրաւն հանդերձ թաղաւոր մեծ, կամ լոկ թաղաւոր իրրեւ առանձինն անուամբ առնուանէին, որպէս թէ զանձինս անդստին ի կարգս հնազանդելոցն նորա համարէին²⁴ :

Բայց հարկ էր Յունաց սթափել եւ զարթնուլ ի մերձենալ իւրեանց յանկանել ի ծառայութիւն եւ ի ձեռս բարբարոսաց : Թագաւորք տկարք ի Յունաց աշխարհէն, ձեռներէց եղեն զխմադարձ լինել մեծի թագաւորին, եւ եղծանել զնորա թագաւորութիւնն : Ագետիղաւոս զակեմոնացւոց թագաւոր գոյզն զնդաւն՝ որ ի հրահանգս զինուորութեան սնեալ եւ կրթեալ էին, գողացոյց ըզՊարսիկս ի փոքր ասիացւոց աշխարհին՝, եւ յայտ արար՝ եթէ մարթ է զնոցա մեծազոր իշխանութիւն կործանել : Սիայն երկպառակութիւնք Յունաց աշխարհին արդել եւ խափան եղեն յաղթութեանցն նորա :

Յայնմ ժամանակի գէպ լինէր մանկանն Ալեքոսի հակառակ Արտաշէսի եղբօր իւրոյ յառնել : Ունէր նա բեւր մի Յունաց ի զօրս իւր. եւ իբրեւ ամենայն զօրք նորա խորտակէին, գունդն Յունաց միայն կայր մնայր հաստատուն : Ալեքոս ի ճակատուն սպանանէր, եւ որպէս ասեն, ի ձեռաց Արտաշէսի եղբօր իւրոյ : Յոյնք ի մեջ Պարսից ի սահմանս բարեղացւոց քաղաքին կային անոք եւ անօգնական. բայց Արտաշէս՝ որ յաղթեայն, ոչ կարաց ստիպել զնոսս կանօք կամ բռնութեամբ թողուլ զգէնն. նոքա յանդգնեալ համարձակեալ ի մաի եզին վառեալ սպառազէն անցանել ընդ երկիր իշխանութեան նորա, եւ երթալ յիւրեանց գաւառն, զոր եւ ի դուխ հանեալ կատարեցին : Յայնժամ Յոյնք համօրէն ի միտ առեալ ծանեան յայտնապէս՝ եթէ չէ հնար յաղթել զօրաց իւրեանց, եւ կամ զդէմ ունել զօրութեան նոցա. եւ թէ միայն փան երկպառակութեանցն մարթ է նոցա ի բուռն անկանել թշնամոյն՝ որ այնչափ տկար էր, մինչեւ՝ ջորքան ժամանակս միարան կային, զխմակալ լինել նոցա չկարէր :

Փիղիպպոս արքայ մակեդոնացւոց ժիր եւ քաջ, մեծաւ խնաստութեամբ վարեալ զիւր իշխանութիւնն՝ որ թէպէտ եւ սակաւաւոր էր բայց միարան եւ միահեծան, այնչափ քաղաքաց եւ իշխանութեանց բաժանելոց աշխարհին Յունաց զխմադարձ լինէր, եւ զկէսս խելօք, զայլս բռնարար ընդ ձեռամբ նուաճեալ՝ քան զընաւ Յոյնս հզօրագոյն լինէր, եւ զնոսս բռնադատէր ընդ իւրով ձեռամբ ընդգէմ հասարակաց թշնամոյն ի մարտ պատե-

բաղմի խաղալ : Փիղեպոպոս՝ մինչ զեռ յայսմ մտաց խորհրդի էր, սպանանէր. բայց նորին որդին Աղէքսանդրոս զնա պայազատէր եւ փութայր զՏօրն խորհուրդ ի գլուխ հանել :

Աղէքսանդր զմակեղոնացիս ոչ միայն տեղեակս եւ հմուտս պատերազմաց գտանէր, այլ եւ յաղթողս. եւ տեսանէր՝ զի վասն մեծամեծ յաջողութեանցն, զօրութեամբ եւ հրահանգօք գրեթէ այնչափ վերագոյն քան զայլս ի Յունաց եղեալ էին, որչափ համօրէն Յոյնք ի վեր են քան զՊարսիկս եւ քան զայլ ազգս՝ որ նոցին նման իցեն :

Պարեհ՝ որ ի ժամանակին յայնմիկ ի Պարսից աշխարհին թագաւորէր, էր այր արդար եւ քաջ եւ ազնուական, սիրելի ժողովրդեան, ոչ նիսազ յիմաստութեանէ եւ ոչ կարօտ ի զօրութեանէ, որով զամենայն՝ զոր ինչ միանգամ ի մտի գնէր, մարթ էր ի գլուխ հանել : Բայց եթէ որ զնա ընդ Աղէքսանդրի համեմատել կամիցի, զմիտս նորա ընդ սորա սուր եւ սաստիկ հանձարոյն, զնորա քաջութիւն ընդ սորա բարձրագոյն եւ հաստատուն մտացն եւ անհնարին քաջասրտութեանն՝ որով զամենայն խոչ եւ զխափան արհամարհեալ առաւել եւս զօրանայր, ընդ սաստիկ եռանդնոտ մտացն՝ որով եռայրն հանապազ առաւելուլ զիւր անուն, որով եւ զսակաւիկ աստիճան փառաց քան զամենայն վտանգ եւ քան զընաւ աշխատութիւն եւ քան զբեր մահունս նախամեծար բնարէր, ընդ մեծի վստահութեանն՝ որով կարծէր ի միտս իւր եթէ ամենայն ինչ յաջողելոց է նմա, իրրեւ մարդոյ՝ զոր իւր ճակատագիրք վերագոյն քան զամենայն մարդիկ գործեալ իցեն. եւ զնոյն վստահութիւն ոչ միայն իւրոց զօրավարացն այլ եւ խառնադանձ զօրացն թեկադրեալ ի մտի գնէր, որով զնոսս վառէր ամենայն ծանր եւ դժուարին իրաց, նա եւ անձանց իսկ գեր ի վերոյ լինել. արդ ընդ այսպիսի զօրավարի ասեմ, յորժամ զՊարեհ որ ի կշիռ բերել կամիցի, գիւրաւ ի միտ առնուցու եթէ առ ո յերկուց անտի ելանելոց իցէ յաղթութիւնն : Եւ եթէ յայն ամենայն յաւելուցու որ եւ զառաւելութիւնն՝ զոր Յոյնք եւ մակեղոնացիք ի վերայ իւրեանց թշնամեացն ունէին, վաղվազակի խոստովան լինիցի՝ եթէ յորժամ

այնպիսի քաջ զօրավար հանդերձ այնչափ գնդաւ ի վերայ Պարսից խաղայցէ, հարկ է նոցա զիւրեանց տէրն թողուլ, եւ ընդ սորա հնազանդութեամբ լինել: Աւ այսպէս իսկ եւ իսկ ի միտ առնուցու՝ եթէ զինչ այն ինչ իցէ, որ զՊարսից իշխանութիւն կործանէր, եւ զինչ այն՝ որ Ղլքսանդրին բարձրացուցանէր:

Դէպք եւ պատահարք պատահէին Պարսից, զիւրեանց զօրավարն զՄեմնոն ռոգացի կորուսանել, որում միայն մարթ էր զդէմ ունել Յունաց. եւ այս յաջողէր Աղէքսանդրի զիւրաւ զյաղթութիւնն ի դլուխ տանել⁵⁰: Յորքան Աղէքսանդրոս զմեծանուն զօրավարն ունէր իւր գիմակաց, յիրաւի պարծէր՝ եթէ արժանի իւր թշնամոյ յաղթէր: Փոխանակ խառն ի խուռն ընդդէմ Յունաց պատերազմ մղելոյ, կամէր Մեմնոն զկիրճս առնուլ, զանցրս ճանապարհաց ունել, շթողուլ պաշար զօրաց թշնամեացն, չու առնել խաղալ գնալ յերկիր նոցա ի մարտ պատերազմի, հասանել հարկանել աւերել եւ սախել զնոսա դալ պահ ունել իւրեանց հայրենի դաւառին: Աղէքսանդրոս զայն ամենայն յառաջագոյն ածեալ զմտաւ, եթող զԱնտիպատրոս զօրօք՝ որ բաւական էին ի պահպանութիւն Յունաց աշխարհին: Բայց նորին բախա եւ յայնմ եւս տագնապէ զնա ազատէր. ի սկզբան յարձակելոյ զօրացն՝ որ զՅունաց աշխարհն խռովէին, մեռանէր Մեմնոն, եւ Աղէքսանդր զամենայն ընդ իւրեւ նուաճէր:

Իշխանս այս մտանէր ի Բաբելոն քաղաք, մեծաւ շքով՝ որոյ նման ոչ ուրեք տեսաւ յաշխարհի. եւ յետ զՅունաց աշխարհին վրէժս պահանջելոյ, եւ յետ յանկարծօրէն արագ զամենայն երկիր՝ որ ընդ Պարսից իշխանութեամբ էր, նուաճելոյ, առ ի զնոր իշխանութիւնն յամենայն կողմանց յապահովս առնելոյ, կամ մանաւանդ առ ի զիւր զհպարտ զամբարտաւան միտս հաճելոյ, եւ քաջանուն եւ փառաւոր լինելոյ քան զԱիոնիսոսն, ի Հնդկաց աշխարհն մտանէր, ուր առաւել քան զմեծանուն զայն աշխարհակալ զիւր իշխանութիւնն տարածանէր: Բայց նա՝ զոր անապառք հանդերձ գետովք եւ լեռամբք բարձամբք չկարէին արգելուլ, իւրոց զօրաց՝ որ հանգիստ խնդրէին, անսալ բռնադատէր: Սեծուպայծառ յիշատակրս առ ավն Արասպէս գետոյ կանգնեալ, ընդ այլ ճա-

նապարհ ածէր զգօրան, եւ տիրեալ քաղաքաց քաղաքաց՝
ընդ որս անցանէր, գայր հասանէր անդրէն ի Վարեղոն
քաղաք, ահազին եւ մեծարոյ ամենեցուն եղեալ, ոչ ի-
րրեւ զաշխարհակալ որ այլ որպէս զաստուած:

Բայց հօր թագաւորութիւնն՝ որում նայն տիրեաց,
ոչ ընդ երկար տեւեաց քան զիւր կեանն՝ որ սակաւա-
վախճան եղեւ: Ի հասակի երեսուն եւ երից ամաց, մինչ
զեռ բազում ինչ ի մտի եղեալ, յուսայր երանելի եւ
փառաւոր իշխանութեանն լինել, յանկարծ մեռանէր,
մինչեւ չժամանէր իսկ հաստատութեամբ զիրն կարգել,
թողեալ եղբայր մի մտօքն տխմար, եւ մանկունս մատաղս՝
որ չկարէին զայնպիսի մեծ բեռն բառնալ: Բայց մեծի
թշուառութեան պատճառք լինելոց էին տան եւ թագա-
ւորութեան նորա զօրավարքն՝ որոց ուսոյց նա ոչ այլում
իմիք այնպէս փափագել, որպէս փառաց իշխանութեան
եւ պատերազմի: Յառաջագոյն ծանեաւ նա՝ թէ յորպիսի
անհնարին չարիս մտարերիցեն, յորժամ ինքն յաշխար-
հէ կրանիցէ. ոչ իշխեաց ցուցանել զոք իւր յաջորդ եւ
յանձանձիչ մանկանցն, զի մի դրդուիցին եւ դիմադարձ
լինիցին հրամանացն. միայն գուշակէր՝ եթէ բարեկամք
իւր առնելոց են նմա յուզարկաւորութիւն հանդերձ մե-
ծաւ պատերազմաւ. եւ վախճանէր ի ծաղկի հասակին,
ի միտս տրտմեալս վասն խռովութեանցն՝ որ յետ իւրոյ
վախճանին լինելոց էին:

Եւ այն կատարեցաւ, զի որպէս յառաջագոյն տե-
սեր, թագաւորութիւն նորա բաժանէր, եւ ջնջէր ազ-
գատոհմն նորա. զառաջին թագաւորութիւն նորա զմա-
կեղոնացւոցն՝ զոր իւր նախնիք ի բազում ժամանակաց
հետէ ունէին, յամենայն կողմանց իրրեւ անտէրունչ
բռնարարէին. որ առաւել բռնագոյն էր՝ ժամանակս բա-
զումս ընդ ձեռամբ նուաճէր, եւ յետոյ ապա յայլ ցեղ
անցանէր իշխանութիւնն: Եւ յապէս մեծ աշխարհակալն,
քան զամենեսեան անուանի եւ երեւելի, եղև վերջին
թագաւոր յազգատոհմին իւրում: Եթէ կացեալ էր խա-
ղաղութեամբ ի մակեդոնացւոց աշխարհին, մեծութիւն
իշխանութեան նորա չառնէր նախանձարեկ զօրավարս
նորա, եւ կարէր թողուլ զորդիս իւր պայազատս հայրե-
նի իշխանութեանն. բայց որով հետեւ կարի զօրացաւ,

կորոյս զեւրսն. եւ ահա այս եղև շահ այնչափ անթիւ աշխարհս նուաճելոյ :

Ահա նորա եղև պատճառք մեծի խռովութեանն. զի հարկ է ասել՝ եթէ Աղէքսանդրի միայն հնար էր եւ ոչ այլում ումեք, հաստատունունել զայն մեծ իշխանութիւն, թէպէտ եւ նորոգ ընդ ձեռամբ նուաճեալ էր : Քանզի նա զոր օրինակ քաջութեամբն, նոյնպէս եւ մտօքն զարմանալի էր, եւ այս ոչ սակաւ փառք են նմա : Այս ոչ նմա, այլ մահկանացութեան պարտ է մեղադիր լինել վասն անկանելոյ պղծատոհմին նորա, թէպէտ եւ զոյ նմա եւս մեղադրութիւն : Բայց եթէ ասիցէ որ, եթէ մարդոյ՝ որ միշտ զհետ փառաց անկեալ գեղեւրեալ իցէ, որպիսի որ Աղէքսանդրոսն էր, չէ հնար գտանել ժամանակ պարագոյ կարգել զիրս իւր :

Բայց զինչ եւ ասիցէ որ, տեսանեմք օրինակաւ նորա, զի ոչ միայն են բազում վրէպք՝ զոր կարեն մարդիկ ուղղել, այս ինքն յորժամ յանկարծ ի յուզից եռանդման եւ առ անգիտութեան յանցանիցեն, այլ եւ զոյ եւ այլ ինչ՝ որում չէ մարթ գարման տանել, որ եւ յամենայն խորհուրդս մարդկան մօտ է, եւ այն է մահկանացութիւն : Սովաւ մարթ է ամենայն մարդկօրէն իրաց ի միում վայրկենի կործանել. սա բռնադատէ զմեղ խոստովան լինել, եթէ բիծ իմն զոյ յամենայն իրս մարդկեղէնս ընդարոյս բնակաւոր՝ որ ի նոցանէ ոչ բաժանի, որ է սակաւավախճան լինել նոցա : Ար որ զիշխանութիւն իւր պահել եւ հաստատել զիտիցէ, այնպիսին ի բարձունս անդր իմաստութեան եհաս, քան զնա՝ որ զիտիցէ տիրել աշխարհաց եւ պատերազմոց յաղթել :

Չէ ինչ պիտոյ մանր մի ըստ միոյն պատմել քեզ զայն ինչ՝ որ պատճառք եղև կործանելոյ թաղաւորութեանցն՝ որ ի պետութենէն Աղէքսանդրի յօրինեալ կացին, այս ինքն՝ Ասորւոյն եւ մակեդոնացւոց եւ եգիպտացւոց. յայանի իսկ է պատճառն. բռնադատեցան նոքա խոնարհել առաջի Հոռոմոց զօրութեանն՝ որ քան զամենեսեան բռնադոյն էր : Բայց եթէ կամիցիմք մտադիր լինել յետին ժամանակաց միահեծան իշխանութեանցն այնոցիկ, դիւրաւ մարթացուք գտանել զբուն պատճառս անկանելոյ նոցա. եւ հանդերձ այլովքն եւ զայն եւս տես-

ասնկցելք, զև Ասորուոց իշխանութիւնն՝ որ քան զայլն
ուժգնագոյն էր, յետ փափկութեամբ եւ զեղխութեամբ
զեղծանկոյ՛² երկպառակութեամբ թագաւորացն յորհա-
սական վախճան եհաս :

- 1) ՊՂԵՏ. վասն Օրինաց. Գ. 2) *Եղն. ԼՂԿԻՐ. Լ. ԵՐՈՒ. Լ.
3) *Եղն. Գ. 4) *Եղն. Լ. 5) ՊՂԵՏ. վասն Օրինաց. Գ. 6) ԼՏԹ. Լ. 13: 7) ՎՍՆՆՈՓ. ԿԻՐ. ԽՐԱՍ. Բ. 8) ԼՏԹ. Լ. 13: 9) ԼՆԳ. Գ. 13: 10) ԼՏՐՈՒ. Լ. 11) ՎՍՆՆՈՓ. վասն Խնամակ: 12) ԼՏՐՈՒ. Լ. 13): ՊՂԵՏ. ԼՂԿԻՐ. Լ. 14) ՎՍՆՆՈՓ. վասն ԼՐՇԱԸ. ԿԻՐ. Ս՝ԱՆ. ԿԻՐՐ. Լ. 15) ՎՍՆՆՈՓ. վասն Խնամակ: 16) ՊՂԵՏ. վասն Օրինաց. Գ. 17) ԽՍՍԿ. ԳՈՎ: 18) ՊՂԵՏ. վասն Օրինաց. Գ. 19) *Եղն. ԼՆԳ. Գ. 20) ԼՐԻՍ. Բաղար. Լ. 4: 21) *Եղն. ԼՆԳ. Լ. 14: 22) ՎՍՆՆՈՓ. վասն Ընկերհաշ. Ղակեդ: 23) ՊՂԵՏ. վասն Ընկերհաշ. Լ. 24) *Եղն. վասն Օրինաց. Գ. ԽՍՍԿ. ԳՈՎ. այլովքն հանդերձ: 25) ՊՈՂՐԻՐ. ԳԻՐՐ. Գ. 6: 26) ՊՐՈՒ. Ժ. 1. 1. 1.

ԼՆՄԻՍԻԿ առ այն մեծագոր իշխանութիւն հասար, որ համօրէն զտիեղերաց իշխանութիւնսն եկուլ, յորմէ եւ մեծամեծ թագաւորութիւնք աշխարհին՝ յորում մէքս բնակեալ եմք, հաստատեալ կացին. զորոյ եւ զօրէնան եւս պատիւ արարեալ մեծարեմք, զոր եւ վասն այնորիկ պարտ եւ պատշաճ է մեզ աղնուազոյնս քան զայլ ամենայն իշխանութիւնսն ճանաչել: Յայտ իսկ է եթէ շոռոմոց իշխանութիւնէ են բանքս. զորոյ զերկայնաձիգ եւ զարժանի յիշատակաց պատմութիւն մի ըստ միոջէ տեսեր:

Իայց առ Ճշգիւ ի վերայ հասանելոյ՝ եթէ զխարդ կամ որպէս հոյակապ հոռոմայեցւոց քաղաքն լինէր, եւ եթէ զինչ պատճառք իցեն մեծամեծ փոփոխմանցն՝ որ ի նմին իշխանութեան դիպեցան, հարկ է մեղմով միտ դնել բարուց հոռոմայեցւոց, եւ ժամանակացն՝ յորոց ամենայն յոյգք փոփոխմանց սկիզբն առին:

Քան զամենայն ազգս աշխարհի առաւել խիստ եւ յանդուգն, բայց նոյնգունակ արդարակորով եւ խորհրդական, հաստատուն, մտավարժ, խրատեալ, աշխատասէր եւ երկայնամիտ շոռոմոց ազգն եղել:

Ընտի յօրինեալ կացին ընտիր ընտիր զօրք աշխարհին, եւ քաղաքային օրէնք՝ քան զորս եղենն երբեք առաւել իմաստուն եւ սերտ, որ եւ ընդ բազում ժամանակս ձգեցաւ:

Իոյս բարուց առն հոռոմայեցւոյ, զե այդպէս իմն աւայցից, էր զիւր ազատութիւնն եւ զհայրենի դաւառն սիրել, որոց մին նմա սիրելն զմեւսն առնէր. քանզի այնու իսկ՝ զի զիւր ազատութիւնն սիրէր, սիրէր նոյնգունակ եւ զիւր դաւառն, իրրեւ զմայր ոք՝ որ զնայն ազնուական եւ սքանչելի խրատութն սնուցանէր:

Սովին ազատութեան անուամբ շոռոմայեցիք որպէս եւ Յոյնք, իշխանութիւն իմն իմանային, ուր ամենայն ոք ընդ օրինօք միայն իցէ, եւ ուր օրէնք հզօրազոյն քան զմարդիկ դռանիցին:

Ղարձեալ հռոմայեցւոց քաղաքն թէպէտ եւ ընդ արքունի իշխանութեամբ ծնաւ, բայց եւ ընդ թաղաւորօքն իսկ յայնպիսի ազատութեան վայելէր, որ միահեծան իշխանութեան չէ պատշաճական. զի ոչ միայն թաղաւորքն ընտրէին, եւ ամենայն ժողովուրդն ընտրոյն աէր էր, այլ եւ զօրէնան եւս ժողովուրդն ի մի վայր դումարեալ հաստատէին, եւ խաղաղութեան եւ պատերազմի ինքեանք վճիռ տային. եւ բազում անգամ դէպ լինէր՝ զի եւ զգլխաւոր դատաստանն թաղաւորք նոցա թողուին. որպէս յայտ ի Տուղեայ Աստիղեայ իրացն է, որ իբրեւ զԱրատիոս՝ մեծապատիւ մեծարեալ վասն կուրխատեանցն յաղթելոյ, եւ զարձեալ ամօթալից եւս եղեալ վասն զիւր քոյրն սպանանելոյ, ոչ դատապարտ առնել եւ ոչ արձակել իշխէր, ի ժողովուրդն ապաստան առնէր զի որպէս ինչ ինքեանք կամին, դատիցին: Այսպէս թաղաւորք զգօրացն հրամանատարութիւն միայն ունէին, եւ իշխանութիւն՝ օրինօք ատեան ժողովել եւ անդ վասն կարեւոր պիտոյից աշխարհին խորհուրդ ի մէջ առնուլ, օրինաց սկիւլ եւ զարքունի հրամանն ի կիր արկանել:

Սերբիոս Տուղեոս ի մտի եղեալ զքաղաքն ընդ ընկերահաշտեաց վերակացութեամբ առնել, ի ժողովուրդեան՝ որ յառաջագոյն ի վաղուց հետէ յազատութեան վայելէր, եւս քան զեւս զազատութեանն սէր բորբոքեաց: Աստի մարթի ի միտ առնուլ՝ եթէ քանիօն նախանձախնդիր ազատութեան եղին հռոմայեցիք, իբրեւ ընդ հիւպատիքն բովանդակ զնորա զձաշակն առին:

Գողումն եւ սոսկումն ունի զլսօղան, յորժամ ի պատմութիւնս զԲրուտեայ հիւպատոսի զանհնարին հաստատութիւնն լսիցեն, եթէ զլարդիւր իսկ առաջի զերկոսեան որդիան տայր սպանանել, որք զհետ անօրէն նենդութեան խորհրդոյն միտեցան, զոր Տարկինոսքն ի Հռոմ քաղաքի վասն զԼուբեանց իշխանութիւնն հաստատելոյ նիւթէին: Արպէս ի սէր ազատութեան հաստատէր ժողովուրդն, տեսեալ զնստութիւն բղեշխին՝ որ վասն ազատութեան իւրում տոհմին իսկ ոչ խնայէր:

Չեն ինչ զարմանք՝ եթէ հռոմայեցիք զազգան արուարձականս արհամարհեցին, որք պնդեալ զՏարկինեանն վաւրեալս յաշխարհէն անդրէն հաստատել ձեռններկ լինէին:

Այլրապար զնոսա Պորսեննա թաղաւոր ընդ իւրով վերակացութեամբն առնոյր. հռոմայեցիք զրեթէ սովաբեկ սովամահ լեալ տակաւին պնդեալ էին, յայտ արարեալ նմա՝ եթէ կամին յազատութեան մեռանել: Ժողովուրդն հաստատագոյն քան զսինկղիտոսն գտաւ. եւ միարանեալ քաղաքացւոցն առ հօր թաղաւորն՝ որ զնոսա յեփն տաղնապ հասուցեալ էր, յղեցին պատգամ վասն Տարկինեանցն չլինել բարեխօս. զի մեր, ասեն, ի մտի եղեալ զամենայն վասն ազատութեան յանձն առնուլ, առաւել զթշնամիս քան զըռնաւորս ընդունիցիմք²: Պորսեննայ ընդ ազգին անհարին պնդութիւն, եւ ընդ գեղեցիկ համարձակութիւն ոմանց ի քաղաքացւոցն հիացեալ, եղ ի մտի թողուլ հռոմայեցւոց խաղաղութեամբ վայելել յազատութեանն՝ զոր այնպէս ամնուագոյնս պատասպարէին:

Վանձ ցանկապէ զազատութիւնն հռոմարէին, եւ զայն քան զամենայն մեծութիւնս աշխարհի նախամեծար ընտրէին: Աւ տեսանեմք իսկ՝ զի յիւրեանց սկզբանն, եւ յետոյ եւս իբրեւ յառաջադէմն եղին, անձանց եղեռն զազատութիւնն չհամարէին, նա աւանիկ՝ ամնուագոյն պայման զիւրեանց ազատութիւնն պահելոյ, զչքաւորն լինել հաշուէին. զի չեք իսկ որ այնպէս ազատ՝ որ ընդ ուրուք իշխանութեամբ չեցէ, որպէս զանինչն զանստացուածն՝ որ սակաւուք շատանայցէ, որ յուրուք վերակացութիւն կամ յառատութիւն չյուսայցէ, այլ անձամբ անձին զիւր պէտս յանձին ճարտարութենէ, եւ յիւրոց վաստակոց հայթայթիցէ:

Օգոյն զայդ հռոմայեցիք գործէին: Օլխաշինս եւ զանդեայս սնուցանել, զերկկր գործել, ի ճշգութենէ եւ յաշխատութենէ կեալ, ահա այս էին կեանք նոցա. սովիմբ գտուն եւ զորդեակս սնուցանէին, զորս եւ նոյն գունակ վշտասէր եւ աշխատասէր ուսուցանէին:

Յիրաւի ասաց Տիտոս Ղիւխոս, եթէ չեղել երբեք ազդ՝ որ ըստ օրինակի հռոմայեցւոց, այնպէս ընդ երկար ժամանակս զլոկն եւ զանհանդերձ սեղան, զիննայութիւն եւ զազատութիւն պատուեալ իցէ: Օկարի փառաւորեալն ի սինկղիտոսաց չէր մարթ ի շինականաց ընտրել. զի ոչ ինչ պայծառութիւն կամ փառաւորութիւն արտաքոյ ունէին, բայց միայն ի հասարակաց ատենի եւ

ի մէջ խորհրդական տառնակալացն: Յորժամ խնդրէր որ
 զնոսա իշխան հրամանատար ի վերայ զօրաց կացուցանել,
 ի հողագործութեան, զարգեամբք եւ զարարովք պատա-
 զեալ եւ յայլ հոգս շինականութեան զնոսա գտանէր:
 Այսպիսի օրինակք բազում ուրեք ի Հոռոմոց պատմու-
 թեան գտանին. Աուրիոս եւ Փարբիկոս հոյակապ իշխանք
 զօրաց՝ որ զՊիւռոս զմեծատուն զընչաւէտ թագաւորն
 ի պարտութիւն մատնեցին, չունէին ինչ կարասի բաց ի
 խեցեղէն անօթոցն. որոց առաջինն, իբրեւ սամիտացիքն
 նմա անօթս յոսկւոյ եւ յարծաթոյ մատուցանէին, պա-
 տասխանի տուեալ ասէր՝ եթէ ինքն ոչ եթէ ոսկի ինչ
 կամ արծաթ ստանալ կամիցի, այլ որոց զայնպիսիսն ու-
 նիցին հրամանատար լինել: Յետ զթշնամիսն նշաւակե-
 լոյ, եւ զընկերհաշտութիւնն աւարօք աղղացն մեծացու-
 ցանելոյ, ինքեանք չունէին ինչ որովք թաղեցին:

Աոյն զգաստութիւն եւ ի ժամանակս պունիկեան
 պատերազմաց տուէր: Յառաջնումն տեսանեմք զՊե-
 դուղոս սպարապետ զօրացն հռոմայեցւոց՝ որ հրաման ի
 սինկղիտոսաց խնդրէր երթալ արօրադիր առնել զագա-
 րակ իւր, որ մինչ գեռ ինքն ի բացեայ էր, խոպանացեալ
 էր: Աոյնպէս եւ յետ կարբեդոնացւոց քաղաքին յատակելոյ
 մեծամեծ օրինակս առաջնոյն զգաստութեան գտանեմք:
 Պաւղոս Ամիղոս՝ որ զարքունի գանձն ցանկալի աւարօք
 թագաւորացն մակեդոնացւոց մեծացոյց, ըստ օրինակի
 նախնեացն կենաց անկազմ եւ անհանգերձ կեանս կեայր,
 եւ մեռաւ իսկ ի նմին աղքատութեան: Մումիոս՝ որ բղ-
 կորնթացւոյ քաղաքն ընչաւէտ փափկացեալ ի յատակաց
 բրեաց, զմեծութիւնս քաղաքին ի հասարակաց պէտս ի
 կիր արկանէր: Այսպէս մեծութիւն արհամարհեալ էր.
 զգաստասիրութիւն եւ յատկութիւն հռոմայեցւոց զօ-
 րավարաց, զամենայն ազգս պարտեալս զարմացուցանէր:

Ինչոց հռոմայեցիք, թէպէտ եւ զաղքատութիւն սի-
 բեին, այլ շինայէին իմիք վասն զիւրեանց քաղաքն մե-
 ծացուցանելոյ եւ գեղեցիկ գործելոյ: Անդասին իսկ ի
 սկզբանէ քաղաքին հասարակաց յօրինուածք այնպէս չրք-
 նաղ եւ զարմանալի էին, մինչ զի յետոյ եւս իբրեւ իշ-
 խան ամենայն աշխարհի եղեն, զայնպիսի յօրինուածս
 չհամարէին ինչ ամօթ: Ասպիտողիոնն՝ զոր Տարկինոս Ամ-

բարտաւան շինեաց, եւ մեհեանն՝ զոր նա ի նմին զգեկի կանգնեաց արւոյն Ալամազուայ, արժանի մեծին ամենայն զից եւ հանդերձեալ փառաւորութեան հռոմայեցւոց ազգին էին⁵: Այն ամենայն հանգոյն այնմ փառաւորութեան էր: Մեծամեծ տաճարք եւ հրապարակք եւ բազանիք եւ պողոտայք եւ արքունի ճանապարհք եւ ջրմուղք, առուք տղրանոցաց իսկ եւ կոյանոցք քաղաքին մեծապայծառ յօրինեալ էին, որ չթուէր արժանի հաւատարմութեան, եթէ ամենայն պատմագրաց միտքան էր վկայեալ. որոց եւ նշխարն՝ զոր այժմ տեսանեմք ի նմին քաղաքի, հաւատարիմ գվկայութիւնն տունիցեն:

Իսկ վասն փառաւորութեան ձաղութեանցն, վասն կրօնիցն կարգաց, վասն խաղուց եւ թատերաց՝ ուր ազգի ազգի տեսիլ նշաւակի առաջի ժողովրդեանն լինէին, ասել ո՞ր բան արդեւք բաւիցի⁶: Համառօտ իսկ ասել, ամենայն ինչ՝ որ ի հասարակաց պէտս պաշտէր, կամ որ ինչ միանգամ մարթէր տալ ժողովրդեանն մեծամեծս զլուրեանց հայրենի դաւառէն իմանալ, այն ամենայն՝ որպէս ինչ պատշաճ ի ժամանակին թուէր, առատութեամբ վճարէր⁷: Ամենայն որ առանձինն յւրում տան ունէր ճշդութիւն. որ որ զիւր մուտս յաճախէր, իւրով ձարտարութեամբն եւ վաստակովք զերկիր կալուածոցն իւրոց պտղաբեր դործէր, որ որ բարւոք վերակացու լինէր, եւ առաւել պնդութեամբ եւ ճշդութեամբ կեայր, քան զամենեսեան ազատ եւ հօր եւ երանելի համարէր:

Գրգութիւն եւ փափկութիւն ամենեւին հեռի էր յայնպիսի զգաստական կենաց: Առաւել ի վշտակեցութիւն քան ի բարեկեցութիւն յօժարեալ էին: Ամին իւրի հռոմայեցիք ի բարուց բուսոյ ոչ միայն խտտադոյն եւ խոշորագոյն վարս ունէին, այլ եւ վայրենագոյնս եւ քաղանազոյն: Բայց զամենայն հնարս հնարեցան՝ զի անձամբ զանձինս ընդ աղնուագոյն օրինօք արկանիցեն. եւ ազլ՝ որ ամենեւին առաւել քան զամենայն ազգս նախանձայոյզ քինախնդիր ազատութեան էր, իւրոց ատենակալաց եւ օրինաւոր իշխանութեան քան զամենեսեան հպատակագոյն էր:

Եւ զօրք եւս այնպիսի ժողովրդեան ոչ սակաւ ինչ զարմանալի եւ սքանչելի էր, որ հանդերձ արութեամբ

քաջութեամբն եւ ոսկերաց պնդութեամբ, զիւրահաւան եւ ունկնդիր եւս էր :

Օրէնք զօրականին խիստք էին, բայց կարեւորք : Տաղթել եւս տագնապ էր, եւ յաճախ առ եղեռանէ այնոցիկ՝ որ անդէպն հակառակ հրամանաց յաղթէին : Աւ միայն որք զէնրնկէցք փախստեայ գնացին, եւ կամ ի բաց ոստանելոյ ուշ առնէին, մահու պատժապարտ լինէին. այլ եւ որք միանգամ շարժել ինչ կամ խախտել ի տեղւոջն ժաէին, եթէ ոչ ճակատայարգարն հրաման տայցէ կամ ազդ առնիցէ : Արք առաջի թշնամեացն ըզղէնան ընկենուին, կամ որք առաւել ի բուռն անկանել քան փառաւոր եւ քաջանուն վասն հայրենի աշխարհին մեռանել ընտրէին, արժանի արգահատութեան չհամարէին : Օգտերին ըստ յաճախ սովորութեան ոչ եւս թըւէին ի մէջ բնակաց տոհմային քաղաքացւոց. եւ զնոսա իրրեւ զանդամս յապաւեալս յընկերհաշտութենէ՝ թըշնամեացն թողուին : Ընթեանումք իսկ ի Փղորեայ եւ ի Աիկերոնի գիրսն՝ զԱնգուղայ պատմութիւնն, որ իւրոյ անձինն վնասու հաճէր եւ հաւանեցուցանէր զճերակոյսն թողուլ կարքերոնացւոց զգերին : Ի կռուին Ընիրաղայ՝, եւ յետ ի Աանեայն ի պարտութիւն մատնելոյ, այս ինքն ի ժամանակին՝ յորում հռոմայեցւոց քաղաքն առ ի ստէպն պարտելոյ նուազեալ ի զօրաց գտանէր, սինկղեոսն լաւ համարէր զօրահատոց առնել, ութ հազարս ի ծառայից գերեաց հակառակ սովորութեան գումարել, քան ութ հազարաց հռոմայեցւոց տալ փրկանս եւ գնել, որոց գինք ոչ առաւել ինչ էին քան զծախս ստրկացն՝ յորոց զօրաժողովն լինէր¹⁰ : Սակայն ի կարեւոր պէտս իրաց, իրրեւ հաստատուն ինչ օրէնս եզին՝ եթէ առն հռոմայեցւոյ կամ յաղթել եւ կամ մեռանել արժան է :

Սովին օրինօք հռոմայեցւոց զօրն, թէպէտ եւ վայրափաստնք եւ ցրուեալք՝ անդրէն ի մի վայր ժողովէին, եւ մինեւ ցյեալին վիշտ վտանգին մարտ եղեալ կռուէին : Աւ որպէս Սաղուստիոսն յայտ առնէ¹¹, բազումք ի մէջ հռոմայեցւոց գտանին, որք վասն ինքնակամս առանց հրամանաց կռուելոյ՝ պատիժս պատուհասից կրեցին, քան վասն զէնրնկէց փախստեայ գնալոյն. նմին իրի իսկ պիտոյ էր

առաւել զհամարձակութիւնն կարճել, քան զվատութիւնն յորդորել:

Հռոմայեցիք ազգի ազգի հայթայթանս ի քաջութիւն իւրեանց յաւելին: Այ միայն ինքեանք միտս ուշակալուս եւ հնարադէտս ունէին, այլ եւ որ ինչ ի մէջ այլոց ազգաց դիւրադոյն ինչ եւ հեշտադոյն տեսանէին, զայն ամենայն վաղվազակի յիւրեանց պէտս ի կիր արկանէին: որպէս զօրէնս բանակելոյ, ճակատ յարդարելոյ, պատերազմ մղելոյ, զազգի ազգի ազգս զինուց, դիւրաւ ի վերայ յարձակելոյ կամ զանձինս պատուարելոյ հանդամանս, այլովքն հանգերձ: Սաղուստիոս եւ այլք ի մատենադրաց հմուտ առնեն վասն ամենայնի՝ զոր հռոմայեցիք յիւրեանց արուարձականաց եւ ի թշնամեաց իսկ ուսան: Միցէ որ չգիտիցէ՝ եթէ զտորմիզ նաւամարտիկ նաւացն, որով նոքա զկարքեղոնացիս խորտակեցին, ի նոցունց իսկ ի կարքեղոնացւոց ուսան հնարել, եւ յամենայն ազգաց ծանօթից ճարտարութիւն ինչ յինքեանս կորզեցին, որով ընդդէմ նոցա առ ի զնոսայն յաղթահարելոյ վարեցան:

Արգարեւ ստոյգ է, եւ յայտ ի նոցունց իսկ վիայելոյ է՝ եթէ զազատացիք ուժգնագոյն քան զնոսա էին, եւ արութեամբ քաջութեամբ ոչինչ ընդհատ ի նոցանէ: Պողիբիոս¹² յայտ առնէ՝ եթէ ի պատերազմի ուրեք զազատացւոց՝ որք յաճախագունգ գումարութեամբ զօրաց ի վերայ հասեալ էին, առաւել քան զհռոմայեցիս սկսան խիզախել, որոց զոգիս ի բռին կալեալ մարտնէին: Սակայն եւ այնպէս յայնմ մարտի հռոմայեցիք՝ որք յամենայն կողմանց խոնարհագոյն քան զգաղատացիսն էին, նոցա յաղթէին. քանզի զէն աղնուագոյն ընտրել, բարւոք ճակատել, եւ ի խառնուրդս ճակատուցն ի դէպն վարել գիտէին: Օայս ամենայն ի Պուզիբեայ գիրսն յայտնագոյնս գտանիցէ որ. նոյնբունակ եւ ի մատենան յիշատակաց Ապսեր նշանակեալ կայ՝ եթէ հռոմայեցիք առաջնորդեալք ի նմին իսկ ի Ապսերէ, զգաղատացիս առաւել զինուորութեանն արուեստին ճարտարութեամբ քան անձանց զօրութեամբ ընդ ձեռամբ նուաճեցին:

Սակեղոնացիք՝ որ այնպէս նախանձախնդիրք էին ի պահել զնախնեացն պայման զօրսն ճակատելոյ, զոր Փի-

զեպպոսն եւ յետ նորա Աղէքսանդրոս յօրինեցին, եւ անհնարին առ յաղթութիւն զԼըբեանց ճակատն համարելին, եւ հաւանել չառնոյին յանձն՝ եթէ մարգկեղէն մտաց մարթիցի առաւել քան զայն գունդ հաստատուն ինչ եւ պնդակազմն գտանել: Սակայն արդի ճառեալ այրս Պողիւրիոս եւ ըստ նմանէ Տիտոս Վիլոս¹³ յայտ առնեն՝ եթէ լոկ զկազմութիւն զնդի Հուռոմոցն եւ մակեդոնացւոց զմտաւ ածեալ, յաջող է ի վերայ հասանել՝ եթէ սոքա յետինքս չկարեն ի տոկ մարտնչել առանց ի պարտութիւն մատնելոյ. զի մակեդոնացւոց ճակատն որ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ ստուար ինչ գունդ չորեքկուսի խիտ յամենայն կողմանց մածեալ, չկարէր շարժել բայց եթէ բովանդակ անձամբն, ուր հռոմայեցւոց ճակատն ի գունդս գունդս բաժանեալ, մարթէր դիւրաւ եւ պատրաստագոյնս պէսպէս կարգս եւ կերպարանս առնուլ, եւ յամենայն կողմանս խայտալ:

Արդ՝ հռոմայեցիք գտին, կամ վաղվաղակի ուսան զհանդամանս ի բազում գունդս եւ յուրոյն դասս զգօրսն բաժանելոյ, եւ դարձեալ այլ վաշտս առանձինն նիզակակից օգնական գնդաց գնդաց պատրաստելոյ, որ արձակ արձակ խաղայցեն արագ հասանիցեն հարկանիցեն, կամ զօրավիզն օգնականութեան աստի եւ անտի գնդացն լինիցին, յորժամ մին ի թեւոցն բեկանիցի: Աղէ՛ ձայն տուր մակեդոնացւոց ճակատուն, խաղալ յարձակել ի զիմի հարկանել այնպիսի պնդակազմն գնդի. արդարեւ մենքենաւոր խարակաձեւ թանձր եւ յաղթ մարմնովն ահ եւ երկեղ արկանիցէ ի վերայ գնդայն՝ յորոց վերայ անկանիցի, բայց, որպէս Պողիւրիոսն ասէ, չկարիցէ ընդ երկար զկազմած յօրինուածոյն պահել, այս ինքն զսեղմութիւնն եւ զհաստատութիւն. քանզի խնդրէ տեղի տափարակ դաշտաձեւ իրրեւ ուրոյն կազմեալ եւ յարգարեալ, եւ յորժամ զդեւրն եւ զհարթ չգտանիցէ, ինքնին քայքայիցի եւ անձամբ զանձն փլուզանիցէ իւրովն շարժմամբ. եւ եթէ միանգամ խախտիցի, ասէ, կարգն, ոչ է մարթ այնու հետեւ առ միմեանս զալ եւ կարկատել: Իսկ հռոմայեցւոց զօրն ի փոքրիկ ջուկս զատուցեալ, զամենայն վայր իւր զիպան համարի, եւ ըստ տեղեաց տեղեաց զանձն յարգարէ. վաղվաղակի ի մի վայր գան եւ անդէն

ի միմեանց անջատին, որպէս ինչ զօրավարն կամիցի. զիւրաւ խաղան եւ անջան ժողովին, քստ դիպաց զիպաց մարթի բովանդակ գունդն կամ մի մասն նորա ձգտել եւ ամփոփել, յազդի ազդի կերպարանս փոփոխել եւ շարժել. եւ համարօտ իսկ ասել՝ առաւել քան զմակեղոնացւոց ճակատն պէսպէս կերպարանս եւ արդիւնս եւ զօրութիւն ունի: Այլա զիւրին է ընդ Պողիւբեայ յանձանց իսկ տալ զվճիռն՝ եթէ հարկ էր մակեղոնացւոց ճակատուն վատթարել եւ ի պարտութիւն ի հռոմայեցւոց մասնել:

Բաղում՝ ուրախութիւն բերիցէ զայդպիսի իրաց ճառել քեզ, զորոց զհանդամանս յայնուադոյն վարդապետաց ուսեալ, ցանդ հրամանաւ մեծին՝ Վուզովկիկայ ի կիր արկեալ տեսանես, ցանկալի եւ զարմանալի, եւ թուի ինձ քան զհռոմայեցւոցն գեղեցիկ եւ վայելուչ: Բայց աստ ոչ եթէ ի կոխ ինչ զմեր զօրս ընդ Հռոմոցն գրդռել կամիցիմք, այլ մեր ի մտի այն կայ՝ զի յայտ արարեալ ցուցանիցեմք եթէ հռոմայեցւոց զօրն, եթէ վասն զի հմուտ եւ տեղեակ էին օրինաց պատերազմի, եւ եթէ վասն անաչառ խստութեամբ զօրէնս պատերազմին պահելոյ, զամենքումք՝ որ ի հինան կղեն, անհնարին անցեալ զանցեալ գտանի:

Օ մակեղոնացւոցն ճառեալ, աւելորդ է եւ վասն Յունացն խօսել. զի մակեղոնացիք, որպէս յայտ է, վերագոյն էին քան զայլ ազգս Յունաց. աստի յաջող է զմնացեալն յանձնէ իմանալ: Յետ Ադէքսանդրի մակեղոնացւոց չեղել ինչ զք երեւելի ի մէջ աթենացւոց: Ատողեացիքն՝ որք ի բաղում մարտս պատերազմաց նշանաւորք եղեն, առաւել անհաւանք էին քան ալատք, եւ դաւանամիտք եւ վայրենագոյնք՝ քան պատերազմօդք: Յետին ոյժ պնդութեան զակեղոնացւոց Աղէոմենէան կղեւ. եւ Փեղոպեմենէան նոյնպէս հուսկ վերջին յաքայեցւոց քաջացն ճանաչի: Հռոմայեցւոց չեղել ինչ մլել պատերազմի ընդ երկոցունց զօրավարացս անուանեաց. բայց վերջինն^ն, որ յՆնիբաղայ եւ ի Վկիպիոնի ժամանակն կենդանի էր, իբրեւ տեսանէր՝ եթէ հռոմայեցիք ի մակեղոնացւոց աշխարհն մխեցան, վաղվազակի ի միտ անոյրք եթէ, եւ յունական աղատութիւնն յողիս ապաստան լե-

նել մերձեալ է. եւ թէ ոչ այլ ինչ կարօղ էր առնել բայց եթէ զժամանակ կործանման աշխարհին յամեցուցանել:

Այսպէս ազգք՝ որ անհնարին պատերազմօղք էին, զգէմ ունել հռոմայեցւոց չկարէին: Հռոմոց ազգն անցոյց զանցոյց զարութեամբ քաջութեամբ զազատացւոց, եւ զարութեամբ եւ զճարտարութեամբ հունաց. իսկ իրրեւ Աննիրաղայ յաղթեցին, ոչ միայն քաջութեամբ եւ ճարտարութեամբ, այլ եւ ազնուազոյն եւ հնարազէտ առաջնորդութեամբ՝ որով Աննիրաղն զօրավարէր, անցեալ զանցեալ երեւեցան. մինչ զի չեղև ուրեք զուգական այնմ փառաց՝ զոր նորբայն ժառանգեցին:

Ասն այնորիկ յամենայն իշխանութեան իւրեանց ոչ յայլ ինչ բնաւ այնպէս յօրանային, որպէս ի զինուորութեան հրահանգան՝ զոր եւ հանապազ հաստատութիւն եւ բարգաւաճանս իշխանութեան իւրեանց համարէին: Արցութեան հրահանգք յառաջագոյն քան զամենայն ինչ ի նոցա իշխանութեան երեւեցան, եւ քան զբնաւ հուսկ յետոյ բարձան. այնպէս զհաստատութենէ ընկերհաշտութեանն նոցա կախեալ կային:

Ազնուազոյն իմն այն էր ի հռոմայեցւոց զօրուն՝ զի որք կերպարանօք եւ եթ եւ ոչ ճշմարտութեամբ քաջքն էին, չառնուին երբեք յարգանս եւ գովութիւնս: Ան պատուոյն տենչանք՝ որ առ մեք բազում վնաս մարդկան գործեն, բնաւ ամենեւին չգոյր ի մէջ այնպիսի որերոյ՝ որ ստոյգ փառացն տենչային: Աւ յայտ ի Ակիպիոնէ եւ ի Ապսերէն է, որ թէպէտ եւ պատերազմօղք եւ անհնարին քաջք ի մէջ հռոմայեցւոց եղեն, սակայն ոչ երբեք անձամբ ձայնատուր պատերազմացն լինէին, բայց եթէ յորժամ հարկ ի վերայ կայր, բայց եւ յայնժամ ինամով եւ զզուշութեամբ¹⁵: Աչ ինչ լուազունի ակն ունէին ի զօրավարէ՝ որ անձին զզուշանալ եւ իւրում կենաց սկել չգիտէր¹⁶, եւ դիպօղ ժամանակի պահել զկարի իմն համարձակութիւն յանդգնութեանն: Հռոմայեցիք ընդ անդէպն եւ ընդ յանդուզն մարտ չկամէին, եւ ոչ ընդ յաղթօցն լինել ակտորժէին ի ճակատու՝ յորում բազում կռատորած լինիցի. չեղև ուրեք զօրք՝ յորում հանդերձ համարձակութեամբն եւ շար եւս եւ յօրինուածութիւն իցէ, որպէս ի հռոմայեցւոց զօրուն:

Բայց քանզի ոչինչ օգուտ անտի լինիցի, յորժամ հմուտ որ պատերազմաց իցէ, եթէ չիցեն խորհրդականք իմաստունք՝ որ զդէպ ժամանակ պատերազմին ցուցանիցեն, եւ բարւոք վերակացու լինել աշխարհին գիտիցեն, նմին իրի հարկ է եւ զպնուական խնաման եւ զհոգարար ձութիւն շոռոմոց խորհրդականութեան ատենակալացն ցուցանել: Այլէ յազնուագոյն ժամանակ ընկերհաշուութեանն որ նայիցի, բնաւ չգտանիցէ երբեք ատենն ինչ լեալ խորհրդականաց՝ յորում իրք կարեւորք այնպէս խնամով, ի ծածուկ եւ իմաստութեամբ, եւ բազում յաճախութեամբ եւ մեծաւ նախանձու վասն հասարակաց օգտի վճարեալ իցեն:

Շողին սուրբ չհամարեցաւ ամօթ զնոյն ի մակարեացւոց զիրան զբողմել, եւ զխնաստուն եւ զհանձարեղ խորհուրդս խորհրդականացն շոռոմոց գովել¹⁷. ուր ոչ եթէ անձին ինչ որ շուք զնէր յանդէպս, այլ մեծաւ խորհրդով իւրաքանչիւր որ ի նոցանէ զհամաշխարհի օգուտ խնդրէր, ոչ ումեք պաշտօն առնելոյ վասն, կամ առ ուրուք ականէ գործէին, այլ ազատ ամենեւին ի խանտաւորութենէ:

Իսկ վասն զխորհուրդս ի ծածուկ պահելոյ, Տիտոս Վիլիոս երեւելի ինչ օրինակ ի մէջ բերէ¹⁸: Մինչ դեռ մարտիւ՝ Պերսեայ պատահել խորհէին, նորին ոսոխ Աւամենէս արքայ պերդամացւոց եկն ի շոռոմ քաղաք դաշինս բարեկամութեան ընդդէմ նմին ընդ սինդղիստոսին կռել: Ի մէջ բազմութեան ժողովոյ ատենակալացն ճառարկեալ խօսեցաւ, եւ անդէն արագ արագ հաւանութեամբ աւագանւոյն արանց իբրեւ երեք հարիւրոց իրքն հաստատէին: Աւարդ ո՞ որ բնաւ հաւատալ յանձն առնուցու՝ եթէ իրքն ի ծածուկ պահեալ իցեն, եւ թէ ըզգաշանցն կռելոյ ինչ որ ոչ գիտաց, բայց եթէ յետ քառամեայ ժամանակի պատերազմացն զբաւ լինելոյ: Բայց որ կարի զարմանաց է, Պերսեւս ունէր հրեշտակս ի հոռմայեցւոց քաղաքին, զիտել զԱւամենէայ զնացան: Ետնգունակ յամենայն քաղաքաց Յունաց եւ ասիացւոց աշխարհին՝ որ կասկածէին զի մի ի նոյն աղմուկ եւ ինքեանք ըմբռնիցին, անդր հրեշտակագնաց լեալ էին, եւ ամենեքին վասն այնպիսի կարեւոր իրաց պնդեալ էին ի-

մանալ սակայն եւ այնպէս ոչ ել բանն ի վեր ի ծերակուտէն: Ասան դաղանեաց պահելոյ, չեղեն ինչ պէտք պատուհասից, կամ պատիժս ի վերայ դնելոյ զի մի ոք ընդ օտարաց խօսիցի. քանզի խորհուրդք ինքնին ի ծածուկ պահել ուսուցանեն:

Եւ այն իսկ զարմանալի է ի մջ հռոմայեցւոց, զի ժողովուրդն՝ որ գրեթէ հանապաղ խանտայր ընդ ծերակոյտն, ի կարեւոր պէտս կամ յորժամ անհնարին ինչ տաղնապ ուստեք հասանէր, նմա զիջանէր եւ անսայր. եւ նորին վճռոց իրբեւ գից ինչ հրամանաց մնայր: Յաճախագոյն զփորձ առեալ գիտէին՝ եթէ ամենայն խորհուրդք կարեւորք յաշխարհին փրկութիւն, անտի ելանէին:

Նին ինչ կարգք, շունչ եւ ոգի ընկերհաշտութեանն ի ծերակուտին պահէին. անդ խորհուրդք կարգէին եւ նովին կարգաւ կատարէին. եւ որ մեծն է՝ ոչ երբեք այնպէս խստիւ եւ իմաստութեամբ հրամանս ինչ տայր ծերակոյտն, որպէս ի մեծամեծ տաղնապս:

Ահնարին ազէտ տարակուսի ի վերայ աշխարհին կայր, ի ժամանակին՝ յորում գեռ տկար եւ նորոգ յարգարեալ ազգն, ի ներքոյ՝ ի բաժնից ցեղապետացն, եւ արտաքոյ՝ ի Արիողանեայ նեղէր, որոյ ցասուցեալ զվողակացիս ընդդէմ հայրենի դաւառին ի մարտ պատերազմի գումարէր. արդ՝ յայնպիսի վիշտ վտանգի հասեալ ծերոցն, չվհատէին այլ առաւել սրտապնդէին: Աողակացիք ցանկ խորտակեալք ի հռոմայեցւոց՝ ակն ունէին վրէժ առնուլ առաջնորդութեամբ Արիողանեայ, առն աւագի քաջի եւ ծոխի եւ փառաւորի քան զամենայն հռոմայեցիս, որ զանիրաւութիւն ատեայր, բայց եւ անհնարին խիտ էր եւ դժնդակ եւ ժանա: Աամէին իմն բռնաբար քաղաքակից հռոմայեցւոց լինել. եւ յետ բազում վայրս յաշխարհէն վտարելոյ եւ յաղթելոյ պատերազմին, սպառնային համօրէն զամենայն յապականութիւն դարձուցանել, եթէ ոչ զոր խնդրէինն շնորհիցեն: Առոմայեցւոց քաղաքն առանց զինուց եւ զօրավարաց էր. սակայն եւ այնպէս յայնմ կարեոջ եւ երկիւղի ժամանակի, մեծաւ համարձակութեամբ հրաման տայր ծերակոյտն, պատրաստ լինել առաւել ի մեռանել քան թշնամեացն:

ինչ շնորհել . եւ թէ զոր ինչ իրաւամբքն խնդրիցեն, յետ յաշխարհէն ի բաց մեկնելոյ առնուցուն¹⁹ :

Սայրն Կորիողանեայ՝ որ առաքեցաւ ի հաւան ածել զնա, հանդերձ այլովքն եւ զայս եւս ասէր . Չիցն՝ աւսէ, ծանօթ բարուց հռոմայեցւոց . չգիտիցն՝ որդեակ, եթէ չէ մարթ ումեք այլազգ ինչ առնուլ ի նոցանէ, եթէ ոչ աղաչանօք . եւ քեզ բռնութեամբ մեծի խիբ կամ փոքու հասանել չէ հնար : Կորիողանոս՝ որ սաստիկն էր, եկն ի հաւան, եւ այն նմա պատճառք մահուան լինէր . եւ վողակացիքն այլ զօրավար ընտրեցին : Բայց սինկղետոսն եկաց հաստատուն ի բանն . եւ վճիռն՝ զոր վասն բռնի ինչ ումեք չտալոյ եհան, իրբեւ հաստատուն ինչ օրէնք համարեցաւ, զորով հռոմայեցիք, որչափ իշխանութիւն նոցա տեսեաց, ամենեւին ոչ անցին²⁰ : Ի մէջ նոցա, ի ժամանակի անձկութեան, վայրապար ինչ խորհրդոց չանսային . առաւել ի յաղթելն քան ի պարտութիւնն մատնել մեղմագոյն եւ մարդասիրագոյն էին . այսպէս գնախնեացն խրատս հաստատուն պահէր ծերակոյտն, եւ զժողովուրդն եւս ի նոյն զգուշացուցանէր :

Մովին ազնուական խրատու վարժեալ, բազում անգամ վճիռ տայր ծերակոյտն, մարտիւ պատերազմաւ յաղթել թշնամեացն, եւ մի հնարիւք ինչ կամ հայթայթանօք նենդութեան, թէպէտ եւ ըստ օրինաց մարտի լինիցի : Օայդ ոչ վասն սնապարծութեան ինչ, կամ առչգիտել զօրէնս մարտի առնէր ծերակոյտն, այլ զի ոչինչ այնպէս պատշաճական ի ցածուցանել զթշնամեացն ամբարտաւանութիւն համարէր, որպէս բառնալ ամենեւին զամենայն կարծիս ի մտաց նոցա, որովք յիւրեանց ինչ զօրութիւն ապաստան լինել կարիցեն . որպէս զի մտօք եւս յաղթեալ՝ ոչ այլուստ ուստեք կենաց ակն ունիցին, եթէ ոչ ի յաղթողին գթութենէ :

Սովին իսկ լինէր՝ զի ամենայն տիեզերք մեծամեծս զհռոմայեցւոց իմանային . եւ համբաւն ընդ բնաւ տարածեալ անընդդիմակաց լինելոյ զօրութեանն նոցա, տայր անձնատուր ի նոսա լինել, զզէն եւ զզարդ ի ձեռաց թողուլ, եւ զօրաւիզն օգնականութեան դաշնաւորաց նոցա լինէր : Այլ այժմ՝ յամենայն եւրոպացւոց աշխարհին ամենեւեքին գնոյն օրինակ կարծիս զզաղիացւոց կարծեն . ամե-

նեքին զարմանա առնեն, սքանչանան հիանան ընդ թա-
գաւորիս քաջութիւն, եւ վկայեն իսկ՝ եթէ նմա միայն
մարթ եւ հնար էր սահմանա իւրում իշխանութեան դնել :

Հոռոմոց Տերակուտին դնացք այնպէս ահաղին
ընդդէմ արտաքնոցն, ոչ սակաւ ինչ զարմանալի էր յոր-
ժամ ընդ իւրոց սեփականաց վարէր: Ամաստուն խորհրդ-
դականքն բազում անգամ իրաւամբք ըստ մտաց ժողո-
վըրդեանն զիջանէին. որպէս ի կարեւոր ինչ պէտս ոչ
միայն առաւել քան զայլս ինքեանք հարկս հարին, զոր
եւ յաճախ դործէին, այլ եւ ի սինլքորաց ժողովրդեանն
զսակ հարկին ամենեւին իսկ բարձին, ասելով՝ եթէ ազ-
քատք ծանրագոյն հարկս հարկանեն աշխարհին, զեւ-
րեանց որդեական սնուցանելով²¹:

Սովին հրամանաւ յայտ արար Տերակոյտն՝ եթէ զի-
տէ որ ճշմարիտ մեծութիւն աշխարհին իցէ. ընդ այսպի-
սի ազնուական խորհուրդս եւ ընդ նշանակս հայրենի ա-
ղեացն հայեցեալ ժողովրդեանն՝ յայնչափ փոյթ վառե-
ցան, մինչեւ յետին իսկ չարեաց տոկալ վասն աշխարհին
փրկութեան :

Բայց յորժամ արժանի պարսաւանաց լինէր ժողո-
վուրդն, կշտամբէր զնոսա Տերակոյտն ճոխութեամբ իմն
եւ ուժգնութեամբ որպէս վայել իսկ էր այնպիսի իմաս-
տուն ժողովոյ. որպէս եղեւն իսկ յարդէացւոց ընդ արի-
կիացիս կռուին²²: Ղէպք իրացն անուանի են եւ արժա-
նի իսկ պատմելոյ :

Ի մարտ պատերազմի ընդ միմեանս բախէին ազգքն
երկոքեան վասն կալուածոց ինչ երկրի՝ զորմէ իւրաքան-
չիւր ի նոցանէ վիճէր թէ իւր իցէ. եւ ապա ուրեմն վաս-
տակեալք ի պատերազմաց անտի, միաբանեցին զիրսն ի
դատաստան Հոռոմոց ժողովրդեան ապաստան առնել, զի
ամենայն արուարձանեայքն զնոսա արդարակորովս գիտե-
ին: Ի մի վայր ժողովեցան ցեղքն, եւ իրրեւ զխոաց ժո-
ղովուրդն ի հակառակութեան անդ, եթէ իրաւամբ իւր
անկ է երկիրն՝ յորոյ վերայ այլքն վիճէին, դատեցաւ թէ
իւր է այն: Իսկ Տերակոյտն թէպէտ եւ ի միտ առ թէ
ճշմարիտ է դատաստան ժողովրդեանն, այլ չկարաց այնմ
տանել՝ զի մոռացին հռոմայեցիք զբարս առաքինութեան
իւրեանց, եւ վատթարութեամբ վրիպեցուսցեն ի յուսոյ

գարուարձանեայն իւրեանց՝ որք զանձինս կամաց կարծեաց նոցա արարին յանձն. զամենայն հնարս հնարէր ծերակոյան զի զայնպիսի վնասակար դատաստան խափանիցէ, յորում դատաւորք՝ իւրեանց առնուին զերկիրն՝ զորս երկոքին կողմանք ընդ միմեանս հակառակեալ առնուլ կամէին: Իսկ յետ վճիռն տալոյ, արդէացիքն՝ որոց առաւել թուէին իրաւունք, զայրադնեալք ընդ այնպիսի անիրաւ դատաստանն, պատրաստէին վրէժ առնուլ զինու. ոչ ինչ խորշեցաւ ծերակոյան յայտ առնել նոցա հրապարակաւ՝ թէ եւ ինքն վշտացեալ է իրբեւ զնոսա, ընդ զրկանան՝ որ եղենն նոցա, եւ թէպէտ եւ չկարէր ինչ եղծանել զհրաման ժողովրդեանն, այլ եթէ յետ այսր նեղութեան կամիցին ապաստանել ի ծերակոյան՝ զի լինիցի հատուցումն նոցա, որպէս իրաւունս ունէին նոքա պահանջել, այնպիսի ինչ փոյթ յանձին ունիցի ծերակոյան հաճել զնոսա, մինչեւ չմնալ ամենեւին վասն որոյ տրանջեսցեն: Արդէացիքն հաւատացին բանիցն: Ահպ եղև նոցա վշտաց ինչ ի վերայ հասանել, մինչև մերձ լինել քաղաքին ի հիմանց յատակել. եւ վաղվաղակի զօրավիշն եղև նոցա ծերակոյան ի ձեռն հրամանացն, մինչ զի եւ ինքեանք խմացան՝ թէ եղև նոցա աւելի հատուցումն ընդ երկրին՝ որ հանաւն ի նոցանէ, եւ շնորհակալ եւ եթ լինէին հաւատարիմ բարեկամացն իւրեանց. այլ ծերակուտին միտք ոչ հաճեցան, մինչև սուեալ նոցա զերկիրն՝ զոր ժողովուրդն Հոռոմոց առեալ էր իւր, ջընջեաց զյիշատակ զայնպիսի անօրէն դատաստանին:

Չճառեմ ինչ ես աստ՝ թէ որպէս բազում ինչ նման սմին դործեաց ծերակոյան. քանիցս անդամ եթող ի ձեռս թշնամեաց զքաղաքացիսն՝ որ ընդ երդմունս անցանէին եւ չկամէին կալ ի դաշինսն, կամ նենդէին ինչ յերգմունսն, եւ քանիցս խոտեաց նա զչար խորհուրդան՝ որոց կատարածք բարւոք էին²³. այլ զայն միայն ասեմ՝ թէ ծերակոյտս այս ի մեծամեծսն եւ եթ յօժարեցուցանէր զժողովուրդն Հոռոմոց, եւ յամենայնի զբարձրադոյն օրինակ իւրոց խորհրդոցն ընծայեցուցանէր, այսպէս ի մտի եղեալ եթէ համբաւ՝ նեցուկ ամուր է աշխարհաց:

Մարթի ի վերայ հասանել թէ յազգի անդ՝ որ այնպէս իմաստութեամբ զնայր, վարձք եւ պատիժք մեծաւ

խորհրդով կարգեալ էին: Միայն որ յօգուտ աշխարհին փութայր եւ վաստակէր, հաւաստեաւ հասանէր պատուոյ մեծութեան. դարձեալ՝ եւ վասն զօրականացն գործոց բազմապատիկ վարձք կային, որ առանց հասարակաց ինչ ծակից էին, եւ կարի իսկ պատուական էին իւրաքանչիւր ումք. քանզի փառք կապեալ էին ընդ նոսա, որ սիրելին էր պատերազմող ժողովրդեանս այսմիկ: Պսակ մի յանօսր ոսկւոյ, կամ բազում անգամ ի կազնւոյ կամ ի դափնւոյ, կամ յայլ ինչ բուսոյ՝ որ եւս անարգագոյն իցէ, մեծ իմն համարեալ էր ի մէջ զօրականացն՝ որք նշանակս ինչ գեղեցիկս քան զառաքինութեան նշանակս չհամարէին, եւ ոչ այլ ինչ ազնուական ընտրութիւն առաւել քան զընտրութիւնն՝ որ ի գործոց քաջութեան ինիցի:

Օտերակոյան՝ որոյ գովութիւն փոխանակ վարձուց էր, յարգէր եւ պարսաւէր յորժամ պատշաճ էր: Աղլ վաղակի յետ պատերազմին, բգեշխքն եւ այլ եւս զօրագլուխք հրապարակաւ զօրականացն եւ ոստիկանացն գովութիւնս եւ պարսաւանս՝ որպէս արժանի էին, տային. այլ եւ ինքեանք իսկ մնային դատաստանի ծերակուալին՝ որ քննէր թէ իմաստութեամբ արդեւք էին խորհուրդք նոցա, ոչ ինչ պատրեալ աջողութեամբք դիպացն ի գլուխ ելելոց: Պատուական էին գովութիւնքն, քանզի հանգերձ դիտութեամբ էին. եւ պարսաւանքն հարկանէին զսիրտս ազնուականս, եւ զտկարսն ի չափու ունէին: Տանջանք չարեացն գործոց զարհուրեցուցանէր զզօրականսն ահիւ, եւ վարձք եւ արդարութեամբ բաշխել փառացն քաջայերէր զնոսա:

Ար կարիցէ որ արկանել ի միտս ժողովրդոց զփառս, եւ զհամբերութիւն ի վաստակս, եւ զմեծութիւն զաղդին, եւ զսէր հայրենի աշխարհին, այնպիսին կարող է պարծել նթէ այնպէս կարգեցի զգաւառս, զի արքաւաղք անտի երանիցեն. եւ զօրութիւն հաստատութեան թագաւորութեան միոջ այս արքաւաղք են: Ընտրութեամբ յամենայն գաւառս իմաստունք մտօք եւ զօրաւորք զօրութեամբ ճնանին. այլ պարտ եւ պատշաճ է եւ ընտրեանն օգնել, զի նոքա յարգարեցին եւ ի կերպարանս դայցեն. եւ որ յարգարէն զնոսա եւ կատարէ, են խորհուրդք զօրեղք եւ խրատք ազնուականք, որ յա-

մենայն միտս սփռիցին, եւ յանզգայ յայլս անցանիցեն: **Օ**րինչ իցէ, որ զմեր ազնուականս այնպէս հզօրս եւ դազանացեալս ի մարտի առնիցէ եւ համարձակս ի դործս, թէ ոչ բանն՝ զոր անդատին ի մանկութենէ լսեն եւ միտքան ամենայն աղզս մեր հաստատէ, եթէ այլ մի ազնուական՝ որ վատասիրտ իցէ, անձամբ զանձն ի պատուոյն մեծութենէ արկանիցէ, եւ չիցէ իսկ արժանի զարեւ տեսանելոյ:

Ամենայն հռոմայեցիք ընդ այսպիսի խորհուրդս սնանէին, եւ ժողովուրդն եւ ազնուականք ի նոյն խորհուրդս ելեւել առնէին: **Յ**որժամ ամենայն կարգք բարեղք յօրինեալ էին ի **Հռոմ**, եւ մանկտին իսկ յաշխատութիւնս կրթէին. չլսէր որ անդ զայլոց իրաց ինչ ճառել, բայց զքաջ անուանէ հռոմայեցւոց: **Պ**արտ էր ի կռիւ երթալ. եթէ այնպէս ինչ հրաման լինէր, եւ անդէն վաստակել, բանակ հարկանել ձմերայնի եւ ամարայնի, հնազանդել առանց ընդդէմ դառնալոյ. մեռանել կամ յաղթել: **Հ**արք՝ որ այսպիսի խրատու զմանկունս իւրեանց ոչ կրթէին, եւ ոչ որպէս պարտն էր վարժէին զնոսա՝ զի բաւականք լինիցին ծառայութիւն ինչ աշխարհին հարկանել, դատաւորք եկակոչ առնէին զնոսա եւ դատ եղեալ յանցաւորս համարէին զնոսա, որպէս թէ հասարակաց վնաս առնիցեն:

Յորժամ սկիզբն այսպիսի կարգաց ուրեք լինիցի, արք աւաղք կարգ ըստ կարգէ յարդարիցին. եւ եթէ առաւել քան զայլ քաղաքս ի **Հռոմ** արք մեծամեծք եղեն, այն չէ ինչ ըստ զիպաց, այլ զի աշխարհն **Հռոմ** մոց այսպիսի կարգօք յօրինեալ, որպէս ինչ յառաջագոյն ասացաք, յայնպիսում յարդարման էր՝ զի յաճախագոյն զիւցաղունս ծնանելոց էր:

Արդ աշխարհ՝ որ այսպէս յօրինեալ եւ յարդարեալ զինքն գիտիցէ, իմանայ միանգամայն՝ եթէ անհամեմատ է զօրութիւն իւր, եւ չիք ինչ նմա երբեք անհնարին եւ առանց պաճարանաց: **Ա**սան այնորիկ իսկ տեսանեմք՝ զի չվհատեցին ինչ երբեք հռոմայեցիք, ոչ յորժամ **Պորսենա** արքայ ետրուրիացւոց սովարեկ առնէր զնոսա ի միջ պարըսպացն իւրեանց. ոչ յորժամ դազատացիքն յեա այրելոյ գբաղաքն նոցա, զամենայն դաւառս նոցա ապականէին, եւ ի կապիտողոնին նդեալ արդելեալ փակէին զնոսա. ոչ

յորժամ Պիւռոս արքայ եպիրացոց՝ որ յաջողակն էր եւ համարձակ, զարհուրեցուցանէր զնոսս փղովքն, եւ ցանէր ցրուէր զամենայն զօրս նոցա. եւ ոչ յորժամ Ենիքաղ՝ որ բազում անդամ յաղթեալ էր նոցա, սպան ի նոցանէ աւելի քան զլիսուն հազար այր, եւ կոտորեաց զազնուագոյն դունդն նոցա ի Աանեայ կուռին:

Ի նմին ժամանակի եւ Տերենդիոս Ալարոն բղեշն՝ որ զայնպիսի մեծ պատերազմ իւրով իսկ յանցանելով կորոյս, իրբւ ել յաղթօղ ոք եմուտ ի Հոմ, վասն այնորիկ միայն՝ զի յայնպիսի կարուջ ժամանակի ոչ ինչ վհատեցաւ յիրաց աշխարհին: Շնորհակալ լինէր հրապարակաւ Տերակոյան, եւ յայնմ ժամանակէ հետէ հաստատեցաւ, ըստ առաջին սովորութեանն, չլսել յայնմ նեղութեան ժամանակի հրեշտակութեան խաղաղութեան. զահի հարան թշնամիք, զօրացաւ եւ միխթարեցաւ ժողովուրդն, եւ գիտաց՝ եթէ գոյ դարման, զոր Տերակոյան իւրով իմաստութեամբն ճանաչէր:

Եւ արդարեւ այսպիսի պնդութիւն եւ հաստատութիւն Տերակուաին յայնչափ չարեաց միջև՝ որ ի վերայ միմեանց յաճախէին, ոչ անտի միայն էր՝ զի յամուռեալ պնդեալ էին ոչ վհատել երբեք ի չաջողութենէ բախտին, այլ զի հռոմայեցոց եւ թշնամեացն զօրութեան քաջ տեղեակ էին: Օչ հռոմայեցիք ի մատենից անտի յիշատակաց քաղաքացեացն՝ որ հանապաղ ճշդիւ դատկաւ գրեալ էր ի Աերուիոսէ Տուղղեստէ հետէ, գիտէին՝ թէ որչափ քաղաքացիք կայցեն, որ կարօղքն իցեն զէն առնուլ, եւ թէ զինչ յոյս մարթէին յուսալ ի մանկաւոյ անտի՝ որ զոր հանապաղ կրթէին: Վասն այնորիկ ճրչգելով յարդարէր զզօրութիւնս իւր առաջի թշնամոցն՝ որ ի կողմանց ամիրիկեցոց յարձակեալ դայր, զոր եւ ժամանակն իսկ միայն ցրուելոց էր ի հեռաւոր աշխարհին՝ ուր օղնականութիւն հեղգաղոցն հասանէր, որում եւ յաղթութիւնք իսկ՝ որք բազում հարուածովք իւրոց զօրացն կատարէր, մնաս իսկ էր. վասն այնորիկ իսկ զինչ ինչ կորուստ եւ դիպէր, Տերակոյան քանզի գիտէր՝ եթէ որչափ քաջ զօրականք կայցեն, զիպոզ ժամու անկ կալեալ ոչ վհատեր ինչ երբեք եւ ոչ տաղնասպէր: Ի Աանեայ կուռին պարտելն եւ ի լինել անտի սպստամբութեանց,

յորժամ ետես՝ եթէ զօրութիւն ընկերհաշտութեանն պակասեաց, մինչև հաղիւ բաւական լինել պատասպարել, թէ յանկարծ թշնամեացն նեղեալ էր, եկաց հաստատուն համարձակութեամբ. եւ ոչ ինչ խռովեալ վասն ուրոց կորոյսն, դէտ ակն կալեալ ընդ դնացս յաղթողն նայէր: Այդվաղակի իբրեւ զդաստ լինէր՝ եթէ Աննիրաղ փոխանակ յաճախելոյ ի յաղթութիւնս իւր, այնմ եւ եթ ուշ առնէր՝ զի սակաւիկ ինչ ի յաղթութեան վայելցէ, հաստատեցաւ եւ ճշմարտեալ գիտաց ի միտս իւր ծերակոյտն, եթէ թշնամին՝ որ չկարաց վարել ի դէպ իւրով բախտաւորութեամբն եւ ապշեցաւ մեծամեծ աջողութեամբքն, չէ ինչ յաղթելոց հռոմայեցւոց. յայնմ հետէ զօր հանապաղ հռոմայեցիքն զգործոց եւս մեծամեծաց բուն հարկանէին, եւ Աննիրաղ թէպէտ եւ աջողակ եւ աներկեւղ եւ յաղթող էր, ոչ կարաց զգէմ ունել հռոմայեցւոց:

Գիւրին է ի դիպաց աստի միայն առնուլ ի միտ՝ թէ ում անկ էր յաղթութիւնն: Աննիրաղ ի մեծամեծ աջողութիւնս հպարտացեալ՝ դիւրին համարեցաւ զառն Հռոմայ, եւ ծուլացաւ. իսկ հռոմայեցիք ի մէջ անհարին չարեացն ոչ լքան եւ ոչ վհատեցան, եւ բուն հարին զիրաց մեծամեծաց յոյժ: Փութանակի յետ ի Աանեայ մարտին ի պարտութիւն մատնելոյ, զԱիրակուսա եւ զԱսպուա պաշարեցին, զի մին չկայր հաւատարիմ ի դաշնանս եւ մեանս ապստամբ էր: Աիրակուսա չկարաց ապրել ոչ ամբութեամբք իւրովք, եւ ոչ Ալքիմիդեայ հնարագիտութեամբք: Օրն յաղթող Աննիրաղայ՝ զուր եկն ի թիկունս օգնականութեան Ասպուայ, այլ հռոմայեցիք ի բաց մերժեցին զօրավարն ի Կողեայ պաշարմանէ: Յետ սակաւ ինչ միոյ կարքեդոնացիք հարին եւ սպանին ի Ապանիա զերկոսին Ահիպիոնսն: Ի պատերազմի անդ չէր ինչ քան զայն չար եւ վնասակար դիպեալ հռոմայեցւոց. այլ վնասըն նոցա ետ նոցա մեծաւ սաստկութեամբ կռուել: Սանուկն Ահիպիոն, որդի միոյ ուրուք ի զօրավարաց աստի, չհամարեալ բաւական զկատարել յաջողութեամբ զիրս հռոմայեցւոց ի Ապանիա, խաղաց ի ճակատս ի վերայ կարքեդոնացւոց ի բուն քաղաք անդր նոցա, եւ զյետին հարուածս հասոյց ի վերայ ակրութեանն նոցա:

Չէր ինչ մարթ կարբեդոնացւոց քաղաքին այնպէս բռնութեամբ ընդդէմ դառնալ Ակիլիոնի, որպէս Հռոմ հակառակեալ ընդդէմ դառնայր Անիբաղայ. եւ առնուցուս իսկ զայս յանձն, եթէ սակաւ ինչ միտ եղեալ նայիցիս ընդ երկոցունց քաղաքացն յորինուածս :

Հռոմ ամուր էր եւ հզօր, եւ Աարքեդոն՝ որ առ սակաւ սակաւ կործանէր, Անիբաղաւ միայն պատասպարէր²⁴ : Ի Հռոմ միաբան էր ծերակոյտն, եւ ճշդիւ իսկ ի նմին ժամանակի լիեալ գտանի միաբանութիւնն՝ զոր մակարայեցւոց դիրք բազմապատիկ գովեն. իսկ կարբեդոնացւոց ծերակոյտն բաժանեալ էր վասն հին անհաշտ երկպառակութեանցն, եւ բազումք իսկ ի մեծամեծաց անտի ախորժէին զիրուստն Անիբաղայ : Հռոմայեցիք, քանզի դեռ աղքատք էին եւ ի մշակութիւն զբօսեալ, զօրս զարմանալիս սնուցանէին, որք զփառացն եւ զպարծանաց եւ եթ լինէին կրկնաթ, եւ զհռոմայեցւոց համբաւն մեծացուցանել կամէին. իսկ Աարքեդոն մեծացեալ վաճառօքն, զամենայն քաղաքացիս ընդ իւրեանց մեծութիւնս զբօսեալս տեսանէր, եւ զպատերազմացն կրթութենէ անփոյթ արարեալ : Գրեթէ ամենայն զօրքն Հռոմոց ի քաղաքացեաց անտի էին. ուր նմին հակառակ՝ կարբեդոնացիք զօր օտար միայն ունել արժան համարէին, յորոց բազում անգամ երկնչին եւ որք վարձեցինն զնոսս, եւ ընդդէմ որոց վարձեցանն :

Այս ամենայն վրիպմունք լինէին կէս յառաջումէ հաստատութենէ կարբեդոնացւոցն ընկերհաշտութեանն, եւ կէս՝ ժամանակաւ սպրդեցին մտին : Աարքեդոնացիք միշտ զմեծութիւն սիրեցին. եւ անգոսնէ իսկ զնոսս Արիստոտեղէս²⁵. Թէ կարի ընդ ընչաւէտութիւն զբօսեալ են, մինչեւ ապա զմեծութիւն քան զառաքինութիւն նախամեծար առնել. նովմբ ընկերհաշտութիւնն՝ որ վասն պատերազմացն եւ եթ էր, որպէս նոյն Արիստոտեղէս յայտ առնէ, ապա ուրեմն զպատերազմացն կրթութիւն անտես արար : Այ ինչ ստգտանէ զնոսս փիղիսոփոսն վասն օտար զօրս միայն ունելոյ, ուստի թուի թէ յետ բազում ժամանակաց յայն անկան վրիպեալք : Այլ յաճախութիւն մեծութեանց ի բնէ իսկ յայն տանի զքաղաք վաճառաշահ, զի ի բարութիւնս իւրեանց կամին վայելել,

եւ համարին այսպէս՝ թէ դամենայն ինչ արծաթով իւրեանց գտանիցեն : Օանձինս հլօրս կարծէին կարքեղոնացիքն վասն բազում զօրականս ունելոյ, եւ չկարացին առնուլ ի միտ յայնչափ ապստամբութեանցն՝ որ ի ժամանակն յետինս եղեն, թէ չիք ինչ թշուառագոյն քան զաշխարհ՝ որ յօտարացն պատսպարիցի, յորս չգուցէ յօժարութիւն եւ ոչ հաւատարմութիւն եւ ոչ ունկնզրութիւն :

Երգարեւ կարծէր այնպէս՝ թէ մեծ իմաստութիւն Աննիրաղայ արար դարմանս եւ բժշկեաց զայն ամենայն՝ յորս վրիպեալ էր ընկերհաշտութեանն²⁶. զարմանք իսկ են՝ զի յօտար երկրի զվեշտասան ամ, չասեմ՝ թէ խռովութիւն, այլ եւ ոչ քրթմնջիւն ինչ եղել ի զօրուն, յորս բազում ազգք էին, որք ի միմեանց օտարք էին բայց հրամանաց իւրեանց զօրավարին անսային :

Եւ չկարէր իսկ պատսպարել զԱրքեղոն ճարտարութիւն Անիրաղայ, յորժամ Ալիպիոն զօրավար քաջ հարկանէր զպարիպս նորա, եւ զօր ոչ գոյր ի քաղաքին : Հարկ եղև զԱնիրաղ կոչել, որոյ զօրքն տկարացեալ էին մանաւանդ իւրեանց յաղթութեամբքն քան հռոմայեցոց յաղթութեամբք, եւ ամենեւին իսկ լքան անկան երկայնութեամբ ճանապարհին : Երդ Աննիրաղ ի պարտութիւն մատնեցաւ. եւ Արքեղոն՝ որ երբեմն տիկին էր աշխարհին ափրիկեցոց, եւ ծովուն մեծի, եւ վաճառաց ամենայն աշխարհաց, տաղնապեալ առ զլուծն՝ զոր Ալիպիոն եդ ի վերայ նորա :

Տեսանես զլանկալի պտուղ հռոմայեցոց համբերութեան : Եզգ՝ որ համարձակագոյն եւ զօրագոյն լինէր նեղութեամբք իւրովք, յիրաւի կարծէր՝ թէ յամենայնէ ապրի, թէ միայն չվհատիցի եւ ի կոր կործանիցի. եւ Պողիւրիոս բարաք իմացաւ՝ թէ վասն հանդամանաց միայն երկուց ընկերհաշտութեանցն, ի հարկէ ապա հնազանդելոց էին հռոմայեցոց կարքեղոնացիք :

Թէ հռոմայեցիք զայնպիսի գեղեցիկ կարգս քաղաքի եւ զինուորութեան, միայն վասն զաշխարհն ի խաղաղութեան պահելոյ արկանէին ի կիր, կամ վասն դաշնաւորացն իւրեանց նեղելոց ապաւէն լինելոյ, որպէս ինչ կեղծաւորէին, յարա էր որպէս զզօրութիւն նոցա եւ զի-

մաստուծիւն, նոյնպէս եւ զարդարուծիւն գովել . այլ իրրեւ ճաշակեցին զքաղցրուծիւն յաղթուծեան, կամեցան՝ թէ ամենեքին հնազանդեցին նոցա, եւ այնմ միայն ուշ արարին՝ զի նախ զիւրեանց արուարձականս եւ ապա զամենայն համօրէն տիեզերս ընդ իւրեանց իշխանութեամբ նուաճեցեն:

Այլ զի այնմ հասանիցեն, պահեցին զդաշնաւորս իւրեանց ի կատարեալ դաշինան, միաբանեցին զնոսա ընդ միմեանս, արկին բաժինս եւ նախանձ ի մէջ թշնամեաց իւրեանց, իմացան զխորհուրդս նոցա, զխտացին զպատգամազնաց լինել նոցա ի ծածուկ, եւ քան զգործս նոցա կանխեալ հասին:

Այլ միայն ընդ զնացս թշնամեացն իւրեանց միտ եղեալ նայէին, այլ եւ ընդ յառաջադէմն լինել արուարձանեացն իւրեանց . եւ զամենայնէ փոյթ յանձինս ունէին՝ զի կամ բաժանիցեն կամ այլ ուստեք ի հաւասարակչութիւնս ունիցին զգորուծիւնն՝ որք ահագինք եւ սոսկալիք լինէին, կամ որք անհնարին խափան լինէին նոցա երթալ տիրել աշխարհաց:

Այսն որոյ Յոյնք ոչ ուղիղ ածէին զմտաւ ի Պողիւրեայ ժամանակս՝ եթէ մանաւանդ բախտիւ մեծանայր Հռոմ քան առաջնորդութեամբ²⁷. առաւել իմն սիրէին զազն իւրեանց, եւ խանտային ընդ ազգս՝ որք քան զնոսա ի վեր բարձրանային. կամ թերեւս հայեցեալ ի հեռաստանէ ընդ տէրութիւն Հռոմոնց՝ զի յառաջէր այնպէս փութանակի, ոչ ինչ իմացեալ զխորհուրդսն՝ որովք առաջնորդէր յաղթ պետութիւնն, ըստ մարդկան սովորութեան, բախտին գրէին զիրս՝ որոյ պատճառք չէին ինչ նոցա ծանօթք: Այլ Պողիւրիոս՝ որ վասն կարի ընտանութեան ընդ հռոմայեցւոց, միջամուխ էր զազանեաց խորհրդոցն, եւ մօտ նայէր ընդ կարգս քաղաքին հռոմայեցւոց ի ժամանակի պունիական պատերազմացն, արդար խօսեցաւ քան զայլս ի Յունացն, եւ ետես՝ եթէ հռոմայեցւոց յաղթութիւնք ի բարեք խորհրդոց լինէին. քանզի տեսանէր զհռոմայեցիս՝ զի ի մեծ ծովէն ընդ ամենայն շուրջանակի հայէին, մինչեւ ի սպանիացիս եւ յԱսորիս, եւ դէտ ակն ունէին՝ թէ զինչ ինչ ի նոսա գործիցի. եւ յառաջէին կարգաւ առ սակաւ սակաւ, եւ

մինչ չեւ տարածեալն էին նախ Հաստատէին, եւ չառնէին ծանրաբեռնի զանձինս բազում իրօք, փոքր ինչ կերպարանէին, եւ ի դէպ ժամանակի յայտնէին. մնային՝ եթէ Անիրազ ի պարտութիւն մասնեցի, զի մերկացին զՓիղիպպոս արքայ մակեդոնացւոց ի զինուց, որ օգնական լինեալ էր նմա. յետ սկիզբն առնելոյ դործոյն, չլքանէին եւ չհամարէին բաւական մինչ չեւ էր ամենայնի կատարեալ. եւ չետուն մակեդոնացւոց սակաւ ինչ ուղի առնուլ, եւ յետ յաղթելոյ նոցա, յաշխարհն Յունաց՝ որ ի գերութեան էր զբազում ժամանակս, առաքեցին ավատութեան հրովարտակ՝ որում չունէին ակն Յոյնք. սոքիմբք եւ ահ արկանէին, եւ տային ակն ածել յանուանէ իւրեանց: Այս ամենայն բաւական էր առ իմանալ թէ ոչ բախտիւ ինչ խաղացեալ տիրէին աշխարհի հռոմայեցիք, այլ առաջնորդութեամբ:

Օչայս ամենայն ետես Պողիւրիոս, յորժամ յառաջագէմն լինէր հռոմայեցւոց քաղաքն: Օսոյն եւ Վիտնիսոս աղեկառնացի²⁸ որ յետ հաստատելոյ պետութեանն ի ժամանակի Աւգոստոսայ գրեաց, իմացաւ. հայեցեալ ընդ սկիզբն առաջին օրինաց Հռոմոց ընկերհաշտութեան, որք ի բնէ իսկ զիպոզ են առնել ժողովուրդ յաղթօղ եւ իշխան:

Ըտտ է զոր ասացիդ, առ հաւանել քեզ բանից իմաստուն մատենագրացն, եւ առ անդոսնել զՊղուտարքոս՝ որ վասն զՅոյնս յոյժ սիրելոյ, զփառս հռոմայեցւոց՝ բախտին եւ եթ գրէ, եւ զԱղէքսանդրին՝ առաքինութեան միայն համարի²⁹:

Այլ որչափ ինչ ցուցանեն պատմագիրք՝ եթէ նկատեալ խորհրդովք տիրեցին աշխարհաց հռոմայեցիք, դոյնչափ եւ զանիրաւութիւն նոցա յայտ առնեն. անիրաւութիւն ոչ մեկնի յիշխանութեան տենչանաց՝ որ վասն այնորիկ իսկ յիրաւի անդոսնի յաւետարանին հրամանաց: Այլ եւ փիղիսոփայութիւն միայն բաւական է խելամուտ առնել զմեզ, թէ զօրութիւն մեզ վասն այնորիկ տուեալ է՝ զի զմեր ինչ պահիցեմք, եւ ոչ զի զօտարին յափշտակիցեմք: Օսոյն եւ Աիկերոն գիտաց³⁰, եւ կանոնք՝ զորս վասն պատերազմացն դնէ, յայտնի իսկ կշտամբութիւն է դործոց հռոմայեցւոց:

Արդարեւ ի սկզբան ընկերհաշտութեանն իւրեանց երեւեցան արգարակորովք, եւ իրաւասորհք: Թուէր՝ թէ եւ ինքեանք կամէին դնել չափ պատերազմօղ բարուց իւրեանց, եւ կալ ի սահմանս արգարութեան: Օչնչ քան զժողովս հրեշտակաց պատերազմի եւ խաղաղութեան գեղեցիկ եւ սրբագոյն կայր, թէպէտ Նումայ իցէ եղեալ զնոսա, որպէս Վիոնիսոս աղիկառնացի ասէ, թէպէտ Անկեսայ Սարկեսայ, որպէս Տիտոս Վիլոս գրէ³¹: Այս խորհրդականութիւն հաստատեալ կայր՝ զի արասցեն դատաստան, թէ արդար իցէ պատերազմն թէ անիրաւ: Սինչ չեւ էր Տերակուտին եղեալ առաջի զպատերազմն կամ ժողովրդեան վճիռ տուեալ, այն քննութիւն արգարութեան միշտ կանխեալ կատարէր: Յորժամ պատերազմին արգարութիւն յայտնի լինէր, այնու հետեւ խորհուրդ խորհէր Տերակոյտն սկիզբն առնել պատերազմին. այլ յառաջ իսկ քան զամենայն առաքէին ըստ օրինացն պատշաճի խնդրել յայնմանէ՝ որ յափշտակեացն զոր յափշտակեացն յանիրաւի, եւ յետ զամենայն ճանապարհս զքաղցրութեան եւ զմարդասիրութեան յուզելոյ, ապա եւ ի խտտութիւնն գային: Սուրբ իսկ է կարգն քան զամենայն կարգս՝ որք լինեալ երբեք իցեն, որ եւ զքրիստոնեայս յամօթ առնիցէ, զորս ի սէր եւ ի խաղաղութիւն չկարաց կրթել Աստուած՝ որ եկն յաշխարհ զի զամենայն հաշտեցուցէ:

Այլ զնչ օգուտ իցեն օրէնք ազնուագոյնք, յորժամ ի կարգս ինչ լոկ արտաքինս փոխեացին: Վանզե քաղցր իսկ էր յաղթել եւ տիրել, ապականեցաւ վաղվաղակի ուղղութիւնն՝ զոր բնականոր արգարութեան տուեալ էր նոցա: Խորհուրդ հրեշտակաց խաղաղութեան եւ պատերազմի անօգուտ ինչ գործ եղեւ ի միջի նոցա. եւ թէպէտ եւ մեծի արգարութեան եւս գործս, եւ գրթութեան իսկ առ սաստիկ թշնամիս իւրեանց ցուցանէին, այլ փառացն ցանկութիւն չտայր արգարութեան թագաւորել ի խորհուրդս նոցա:

Վարձեալ անիրաւութիւնքն նոցա առաւել վնասակարք էին, զի գեղեցիկ կերպարանօք արգարութեան ծածկէին եւ թաղուցանէին, եւ մեղմով յանզգայ զթագաւորս եւ զազգս ընդ լծով կայուցանէին, կեղծաւորեալ

մեղմեխանօք որպէս թէ պաշտպանեացեն ինչ նոցա եւ պատասպարան լինիցին :

Յայսր վերայ եւ առ այնոսիկ՝ որ նոցա ընդդէմ դառնային, անագորոյնք էին. զի եւ այս բարք բնածինք են այնոցիկ՝ որ աշխարհաց տիրիցեն, որք կարծեն՝ թէ ահ եւ երկեւղ զմեծ մասն յաղթութեանն վճարիցէ: Աւարդ՝ արժան ինչ իցէ այնպիսի իրօք տիրել. այսչափ քաղցր իցէ տիրել, զի մարդիկ տմարդութեան գործովք կամիցին իշխել³²: Առմայեցիք, զի ամենայն ուրեք ահարկանիցեն, կամէին ի քաղաքսն՝ զորս առնուին, տեսիլս ահագինս անագորունութեան թողուլ, եւ երեւել անգութ եւ անխնամ առ այնոսիկ՝ որք հակառակիցինն նոցա. եւ թաղաւորաց իսկ ոչ խնայէին, եւ սատակէին զնոսա անագորոյն մնօք, յետ ածելոյ զնոսա ի ձաղումն ի շղթայս կապեալ կծկեալ, եւ ձգելոյ առ կառօքն եւ անդրուարօք իբրեւ զվարանդիս:

Այլ թէպէտ եւ անագորոյնք եւ անիրաւք էին առ ի տիրել, բայց ազգացն նուաճելոց արդարութեամբ առաջնորդէին: Ս անային զԵրեանց առաջնորդութիւն քաղցրացուցանել ազգացն հնազանդելոց, եւ համարէին՝ թէ այս իցէ ազնուագոյն օրինակ պահելոյ զաշխարհսն՝ որոց տիրեալն էին: Օտերակոյտն ունէր ի չափու զվարիչն, եւ առնէր իրաւունս եւ արդարութիւն ժողովրդոց: Իբրեւ ապաստան ամբութեան էր ծերակոյտն նեղելոց եւ լլկելոց. վասն այնորիկ եւ զրկանք եւ բռնութիւնք ոչ էին ի հռոմայեցւոց միջի, բայց միայն ի ժամանակս յետինս ընկերհաշտութեանն. եւ ընդ զգաստութիւն դատաւորացն նոցա զարմացեալ էր ամենայն երկիր:

Զէին ինչ նօքա իբրեւ զաշխարհակալսն զազանաւորոս եւ կծծիս, որ աւար հարկանել եւ քանդել միայն կամին, եւ հաստատել զտէրութիւն իւրեանց ի վերայ աւերակաց նահանգացն՝ որոց յաղթեցին: Առմայեցիք զամենայն՝ զոր առնուին, ազնուագոյն գործէին. զարդարութիւն պայծառացուցեալ եւ զմշակութիւն եւ զվաճառս, եւ զարուեստս իսկ եւ զգիտութիւնս յետ միանգամ ճաշակելոյ զքաղցրութիւն նոցա:

Սոյն իսկ պայծառագոյն արար զտէրութիւն նոցա, եւ առաւել հաստատուն, եւ մեծ եւ ընդարձակ յոյժ:

Յեփրատ եւ ի Տանայիս գետոյ մինչեւ ցարձանան շե-
րակղի եւ ցատղանտիկոս համատարածն, ծով եւ ցա-
մաք հնազանդեաց նոցա. ի միջոյ ծովուն մեծի ունէին
զընդարձակութիւն ծովուն, հատեալ անցեալ յերկայնու-
թիւն եւ ի լայնութիւն զամենայն աշխարհս շուրջանակի,
եւ կալեալ զծովն ի մէջ երկուց կողմանցն, որ ընդ մի-
մեանս զսահմանս տէրութեանն իւրեանց խառնէր: Վար-
ձեալ սոսկալի եւ զարմանալի է՝ յորժամ ածիցէ որ զմտաւ,
թէ սահմանք ազգացն՝ որ այժմիկ ահեղ թաղաւորու-
թիւնք են, շոտոմոց նահանգք էին բազում ժամանակս,
ամենայն գաղատացիք եւ սպանիացիք եւ գրեթէ ամենայն
մեծ աշխարհն բրիտանացւոց, եւ Վիւրիկէ մինչեւ ցեղան
Վանուբ. աշխարհն գերմանացւոց մինչեւ ցՆիդրիս գետ,
եւ զիբէաստան մինչեւ ցանասպատս ահադինս եւ անկոխս.
աշխարհն Յունաց եւ թրակացւոց եւ Ատրւոց եւ եգիպ-
տացւոց, եւ ամենայն թաղաւորութիւնք փոքր ասիա-
ցւոց, եւ որ բնակեալ են ի մէջ Աւքսինոս ծովուն եւ ծո-
վուն Ասսպից, եւ այլք բազումք՝ զորս թերեւս մոռացայ
կամ թէ չկամիցիմ իսկ յառաջ բերել: Ամենայն ազգք
աշխարհիս, մինչեւ ի կարի իսկ բարբարոսս, ան ածէին
յիշխանութենէ նոցա. եւ հռոմայեցիք, գրեթէ ամենայն
ուրեք հանդերձ իւրեանց տէրութեամբն, օրէնս եւ քա-
ղաքաց կարգս հաստատէին:

Աքանչելի իմն էր զի յայնպիսի յաղթ տէրութեան՝
որ զայնչափ ազգս եւ զթաղաւորութիւնս փակեալ ու-
նէր, հնազանդ էին ժողովուրդք եւ ապստամբութիւնք
գուն ուրեք լինէին: Վանդի հռոմայեցիք այնմ յառա-
ջագոյն զգուշացեալ էին ազգի ազգի հնարիւք՝ զորս
պարտ է սակաւ բանիւք ցուցանել քեզ:

Վաղթականք շոտոմոց՝ որ ամենայն ուստեք ի տէ-
րութեանն հաստատէին, երկուս իրս զարմանալիս գոր-
ծէին. մի՛ զի նուազեցուցանէին ի քաղաքին զյաճախու-
թիւն քաղաքացեացն, որոց մեծ մասն աղքատք էին. եր-
կորդ անգամ՝ զի պահէին զգլխաւոր վայրսն, եւ առ սա-
կաւ սակաւ ընդերուզանէին զազգս օտարոտիս ընդ բարս
հռոմայեցւոց:

Այս գաղթականութիւնք՝ որք զառաւել պատիւն
իւրեանց ընդ իւրեանս բարձեալ տանէին, յընկերհաշ-

տու թ ենէն չքակէին, եւ զտէրութիւն Հոռոմոց շէն մարգաշատ ցուցանէին:

Այլ բաց ի հատուածիցն, բազում քաղաքաց քաղաքացիք հռոմայեցւոց հաւասար քաղաքացի դրէին. եւ վասն իւրեանց ինչ օգտի խառնեալ յազն՝ որ տիրէր, զարուարձական քաղաքսն ունէին ի պատշաճ չափու: Աւ յետ այնորիկ դէպ եղև ամենեցուն՝ որ ընդ տէրութեամբ ընէին, հռոմայեցի իսկ համարել: Առ սակաւ սակաւ ազգքն՝ որք ի պարտութիւն մատնեցան, բաժանակից եղևն պարճանաց յաղթօղ ազգին. համարձակ եղև նոցա մտանել ի ճերակոյտ անդր, եւ տէրութեան իսկ կարէին ցանկալ թէ հասանիցեն: Ասան որոյ հռոմայեցւոց մարդասիրութեամբ ամենայն ազգք եւ ազկնք մի ազգք եղևն, եւ Հռոմ իրրև հասարակաց հայրենի աշխարհ եղև:

Արպիսի՞ ինչ դիւրութիւն չիցէ առ ի նաւարկութիւն եւ ի վաճառաշահութիւն, այս միաբանութիւն պրանչել ամենայն ազգաց աշխարհի ընդ միով տէրութեամբ: Օ՞ ամենեսին բովանդակեալ ունէին հռոմայեցիք. եւ բաց ի սահմանաց ինչ՝ որ երբեք երբեք նեղեալ լինէին յարուարձանեացն, ամենայն տիեզերք ի խոր խաղաղութեան վայելէին: Այ աշխարհն Յունաց եւ ոչ փոքր ասիացւոց, ոչ ասորեստան եւ ոչ Ագիպտոս, եւ ոչ մեծ մասն այլոց նահանգացն եղևն երբեք առանց պատերազմաց, բայց միայն ընդ Հոռոմոց տէրութեամբ. եւ դիւրին իսկ է առնուլ ի միա՝ եթէ այնպիսի դեղեցիկ հաղորդութիւն ազգացն օգուտ էր առ ի պահել զմիաբանութիւն եւ զհնազանդութիւն ի բովանդակ տէրութեանն:

Գուենդքն՝ որք ի պահպանութիւն սահմանացն բաշխեալ էին, յարաքնոցն զզուշացեալ, գնեքքինսն պրնդէին: Չէին սովոր հռոմայեցիք դղեակս բերդս յիւրեանց աշխարհին ունել, եւ ոչ պնդել զզուխս սահմանացն. եւ առ Ազգենտիանեաւ առաջնորդիւ, այնր փութոյ սկիզբն լեալ դտանեմ: Յառաջն՝ զօրութիւն եւ ամրութիւն տէրութեանն զպունդս զօրականացն համարէին, զօրս այնպէս կարդէին եւ կազմէին՝ զի միմեանց ձեռն տացին: Գարձեալ՝ քանզի հրաման էր միշտ բանակ հարկանել, ոչինչ նեղեալ լինէին նոքօք քաղաքքն. եւ քան

զի կրթեալք եւ ուսեալք էին, յանդս եւ յարտորոյս ոչ սփռէին: Ասան այնորիկ զօրք Հոռոմոց չմնասէին, ոչ վաճառաց եւ ոչ մշակութեան: Անդէն ի դաշտին զետեղեալ իրբեւ քաղաքի նմանութիւն յարդարէին, որ չէր ինչ զատ յայլոց քաղաքաց, բայց զի աստ հանապազօրոյ աշխատութիւն էր, եւ սաստիկ կրթութիւն, եւ բուռն հրաման: Հանապազ կազմ եւ պատրաստ էին յորժամ խռովութիւն ինչ ուստեք լսելի լինէր. եւ վասն զաղզս ի պատշաճ չափու ունելոյ, բաւական էր միայն մօտ հասեալ զգօրսն յաղթօզս ցուցանել նոցա:

Այլ չէր ինչ՝ որ այնպէս զիտաղաղութիւն տէրութեանն պահէր, որպէս օրէնք արդարութեան՝ զորս հին ընկերհաշտութիւնն հաստատեաց կացոյց, եւ ինքնակալք եւ իմաստունք մեկնեցին ի նմին հաստատութեան վերայ. ամենայն ազգք, եւ որ կարի բարբարոսքն էին, հայեցեալ զարմանային ընդ նոսա, եւ մանաւանդ անտի իսկ է՝ զի հռոմայեցիք տեսար աշխարհի լինելոյ արժանի համարեցան: Գարձեալ Հոռոմոց օրէնք վասն այնորիկ այնպէս սուրբք երեւեցան՝ մինչեւ յետ տէրութեանն կործանելոյ կալ մնալ նոցա փառաւորութեանն, զի միտք եւ հանճար իմաստութեան՝ որ իշխանն է մարդկան կենաց, թաղաւորէ ի նոսա, եւ ոչ ետես ոք ուրեք զեղեցիկ ինչ քան զնոյն գործ բնածին արդարութեան:

Արդ՝ թէպէտ եւ այսպէս մեծ անուն քաջութեան էր հռոմայեցոց, եւ քաղաքաց կարգք յարդարեալք, եւ օրէնք զեղեցիկք անուանի ընկերհաշտութեանն, այլ անպէն յիւրեանց միջի զիւրեանց կործանմանն պատճառս կրէին, զհանապազօրոյ նախանձ ժողովրդեան հակառակ ծերակուտին, կամ մանաւանդ ռամկին հակառակ պատրկաց: Օայդ ընտրութիւն Առմիզոս եղ³³: Պարտ իսկ էր թաղաւորաց ունել արս զատուցեալս պատուով ի ժողովրդենէ անտի, զի յարեսցին առ նոսա առանձինն խնամովք, եւ նորօք առաջնորդել ամենայն ժողովրդեանն. եւ վասն այսորիկ Առմիզոս ընտրեաց զհարսն՝ յորոց եւ զծերակոյտն հաստատեաց: Հարս կոչէին զնոսա վասն պատուոյն եւ տիոցն, եւ ի նոցանէ ելին ասպա պատրկացն տոհմք: Գարձեալ՝ որչափ ինչ ճօխութիւն եւ շնորհեաց Առմիզոս ժողովրդեանն, սակայն զռամկին բաղմնապատիկ

օրինակաւ ընդ պատրկացն իշխանութեամբ արկ³⁶. եւ այս հնազանդութիւն՝ որ պիտոյն էր թագաւորութեան, ոչ միայն առ թագաւորոքն, այլ եւ յընկերհաշտութեանն պահեալ էր: **Օ**խորհրդականս հանապազ ի պատրկաց առնուին. պատրկացն անկ էին գործք եւ հրամանատարութիւնք, եւ պատիւ եւ քրմութիւն իակ. եւ հարքն՝ որ աղատութեանն առաջնորդք լեալ էին, զեւրեանց զառաւել պատիւն ոչ թողին: **Ա**յլ վաղվաղակի նախանձ անկաւ ի մէջ երկոցունց կարգացն. քանզի չէ ինչ պիտոյ զհեծելազօրաց հռոմայեցւոց ինչ ճառել, որ էր երրորդ կարգ իբրեւ միջին իմն ի մէջ պատրկացն եւ խառնադանձ ոսմկին, որ մերթ ի սա տայր ձեռն, եւ մերթ ի նա: **Ա**րդ՝ ի մէջ երկուց կարգաց էր նախանձն, եւ բազում անգամ գրգռէր, այլ այնր բուն պատճառք՝ ազատութեան սէրն էր:

Այս խորհուրդ էր ընկերհաշտութեանն, զազատութիւն իբրեւ անբաժին համարել ի հռոմայեցւոց անուանէ: **Ժ**ողովուրդ՝ որ յայնպիսի միտս անեալ էր, աւասոցուք եւս աւելի, թէ ժողովուրդ՝ որ վասն այլոց ժողովրդոց տիրելոյ ծնեալ կարծէր, զոր եւ **Ա**խրդիզիոս վասրն այնց պատճառանաց ազնուականապոյնս արքունական ժողովուրդ կոչէ, այլ ինչ օրէնս չկամէր ընդունել՝ բայց միայն զեւր կամն:

Օերակուտին ճոխութիւն կարեւոր թուէր՝ զի չսփու ունիցի զխորհուրդս հասարակաց. քանզի եթէ ի չսփու ոք զնոսա չունէր, խռովութիւն յոյժ ի նոցանէ յուզէր: **Ա**յլ արդեամբք՝ ժողովրդեան էր տալ հրամանրս, դնել օրէնս, եւ տալ վճիռ վասն խաղաղութեան եւ պատերազմի: **Ժ**ողովուրդ՝ որ ի բուն օրէնս թագաւորութեան վայելէր, զթագաւորաց բարս ստանայր: **Ա**մէր ընդունել խորհուրդ ի ծերակուտէն, այլ բռնադատել ոչ: **Ա**մենայն՝ որ ինչ ճոխութեան թուէր, եւ որ վերագոյն քան զայսն ամբառնայր, եւ ամենայն՝ որ ինչ վնասէր կամ վնասելն կարծէր հանդիտապատիւ զուգականութեան՝ որ պիտոյն էր աշխարհին ազատութեան, ընդ այն ժողովուրդն կասկածէր: **Ա**ղատութեանն սէր, եւ ցանկութիւն փառաց եւ տիրելոյ աշխարհաց, զմիտս նոցա անընդերս ի հնազանդութիւն գործէր. եւ համարձակու-

Թիւնն՝ որով յանդէնեալ զամենայնէ բուռն հարկանէին արտաքոյ, երկպառակութեան պատճառք ի ներքոյ լինէին:

Արդ ի Հոսով որ իւրոյ ազատութեանն նախանձախնդիր էր, ի սիրոյ անախ ազատութեանն՝ որ հաստատութիւն էր աշխարհին, անկաւ երկպառակութիւն ի մէջ ամենայն կարգացն՝ յորոց հաստատեալ կայր Հոսովոց իշխանութիւն: Անտի եղեւ մոլեկան նախանձն ի մէջ ծերակուտին եւ ժողովրդեանն, եւ ի մէջ պատրկացն եւ ռամկին. նոքա ասէին հանապաղ՝ եթէ անչափ ազատութիւն անձամբ յանձնէ քակի, իսկ սոքա զնորին հակառակն կասկածէին թէ իշխանութիւնն՝ որ ի բնէ իսկ հանապաղ աճէ, ապա ի բռնակալութիւն դառնայցէ:

Ժողովուրդ՝ որ այլով ամենայնիւ իմաստուն էր, զմիջին ինչ ի մէջ երկուց ծաղացն չկարաց դտանել: Օխ ոմանց ոմանց օգուտն՝ որ յերկոցունց կողմանց անդր քան զպատշաճն իսկ առեալ տանէր զայն ինչ՝ որ առ հասարակաց օգուտ սկսեալ էր, չտայր թոյլ կալ յիմաստուն խորհրդեանն: Փառասէրքն եւ խռովեչք զբռնէին զնախանձրն, զի նովին զօրացեալ յաղթահարեցին. եւ այս նախանձ՝ որ մերթ ծածկէր եւ մերթ յայանէր բտա ժամանակացն, եւ հանապաղ բորբոքեալ էր ի սիրտս նոցա, եւ զեւ պատճառք մեծի փոփոխմանն՝ որ յաւուրս Ապստեր եւ այլոց՝ որք զհետ նորա եկին, զխպեցաւ:

¹⁾ ՊՄԻՆ. ԵՂԻ. Ե: ²⁾ ՏԻՏ. ԴԻԻ. Ը. 13. 15: ³⁾ ԱՊՅՆ. ԳԻՐՔ Ժ. Բ: ⁴⁾ ԱԲԿ. ԱՍԱՆ ՊԱՐԱ. Ը: ⁵⁾ ՏԻՏ. ԴԻԻ. Ը. 53. 55. 56. Զ. 5: ԴԻՈՆ. ԵՂԻ. Գ. Գ. ՏԵՄՏ. ՊԱՄԲ. Գ. 72: ՊԴԻՆ. Ը. 15: ⁶⁾ ՊՄԻՆ. ԵՂԻ. Ը: ⁷⁾ Հոսով. Նախն. Պամմ: ⁸⁾ ԱԲԿ. ԱՍԱՆ ՊԱՐԱ. Գ. 4. ԲԻՐ. Ը. 2: ⁹⁾ ՊՈՂԻՒԲՆ. Զ. 56: ՏԻՏ. ԴԻԻ. Ը. 57. 58: ¹⁰⁾ ԱԲԿ. ԱՍԱՆ ՊԱՐԱ. Գ. ¹¹⁾ ԱԵՂՈՍ. ԱՍԱՆ ԿԱՏԻՂԻՆ. ՊԱՄԵՐ. 9: ¹²⁾ ՊՈՂԻՒԲՆ. Ը. 28. եւ որ ի կարգին: ¹³⁾ ԱՊՅՆ. Ժ. Ը. Բաղուածոյսն. ԳԸ. 24. այլովքն հանդերձ: ՏԻՏ. ԴԻԻ. Ը. 19. Ը. 39. եւ որ ի կարգին: ¹⁴⁾ ՊՈՂԻՒԲՆ. Ի ՓԻՂՈՍ: ¹⁵⁾ ՊՈՂԻՒԲՆ. Ժ. 13: ¹⁶⁾ ԱՊՅՆ. 29: ¹⁷⁾ Ը. ԱԲԿ. Ը. 15. 16: ¹⁸⁾ ՏԻՏ. ԴԻԻ. Ը. 14: ¹⁹⁾ ՊՄԻՆ. ԵՂԻ. Ը: ՏԻՏ. ԴԻԻ. Ը. 39: ²⁰⁾ ՊՈՂԻՒԲՆ. Զ. 56. Բաղուածոյսն Ասան Հրեշտա. 69: ԴԻՈՆ. ԵՂԻ. Ը: ²¹⁾ ՏԻՏ. ԴԻԻ. Ը. 9: ²²⁾ ԱՊՅՆ. Գ. 71. Գ. 7. 9. 10: ²³⁾ ՊՈՂԻՒԲՆ. ՏԻՏ. ԴԻԻ: ԿԵԿ. ԱՍԱՆ ՊԱՐԱ. Գ. Այլովքն հանդերձ: ²⁴⁾ ՊՈՂԻՒԲՆ. Ը. Գ. Զ. 49: ²⁵⁾ ԱԵՂՈՍ. ԱՍԱՆ ԲԱՂԱՔ. Ը. 11: ²⁶⁾ ՊՈՂԻՒԲՆ. Ժ. Ը. 17: ²⁷⁾ ԱՊՅՆ. Ը. 63: ²⁸⁾ ՊՄԻՆ. ԵՂԻ. Հոսով. Նախն. Պամմ. Ը. Ը: ²⁹⁾ ՊՈՂԻՒԲՆ. ԳԻՐՔ ԱՍԱՆ ԶԱՋՈՂ. ԸՂԷՔԱ. եւ ԱՍԱՆ ԶԱՋՈՂ. Հոսով: ³⁰⁾ ԱԲԿ. ԱՍԱՆ ՊԱՐԱ. Գ: ³¹⁾ ՊՄԻՆ. ԵՂԻ. Հոսով. Նախն. Պամմ. Ը: ՏԻՏ. ԴԻԻ. Ը. 32: ³²⁾ ՊՈՂԻՒԲՆ. Ժ. 15: ³³⁾ ՊՄԻՆ. ԵՂԻ. Ը: ³⁴⁾ ԱՊՅՆ. ԸՆԴ:

ԴԻՐԻՆ լինիցի քեզ զամենայն պատճառս փոփոխմանն-
ցըն առնուլ ի միտ, եթէ յետ անդեակ լինելոյ բարուց
հռոմայեցւոց, եւ հաստատութեան օրինաց քաղաքի նո-
ցա, փոյթ յանձին կալցիտ անցանել ընդ իրս ինչ երեւե-
լն՝ որ թէպէտ եւ յայլ եւ այլ ժամանակս զիպեցան,
այլ յայանի իսկ ընդ միմեանս կապեալ են: Երբ՝ զսոսա
աստ ի մի վայր գումարեմք, զի զիւրին լինիցի որոց ըն-
թեռնուցունն:

Ուովիղոս ի պատերազմի սնեալ, եւ Երեայ որդի
համարեալ, շինեաց զհռոմ քաղաք. եւ ելից զնա ա-
րամբքն՝ զորս ուստեք ուստեք ժողովեաց, հովուօք եւ դե-
րեօք եւ աւաղակօք՝ որ ի քաղաք անդր իրրեւ ի անդի ա-
պաստանաց ամբութեան գային աղատանալ, եւ զերծա-
նել ի պատժոց պատուհասից, քանզի առ ամենեւին բա-
նայր նա զքաղաքն զի անդր մտեալ ամբասցին. գտան ի
նոսա եւ ոմանք մեծարոյք եւ պատուականք: Ուսոյց նա
վայրենի ժողովողեանն այնմիկ զամենայն ինչ բռնութեամբ
զործել, մինչև զկանայսն անգամ՝ զոր արարին, քանու-
թեամբ արարին:

Եւ սակաւ սակաւ կարգ եղ, եւ նուաճեաց զմիտս
նոցա օրինօք սրբովք: Երար սկիզբն ի կրօնիցն, զի վայն
իրրեւ զհիմն կարգաց աշխարհին համարեցաւ: Եւ յոյժ
խմաստուն եւ ցածուն եւ զպաստական կրօնս եղ, որչափ
ինչ կարօղ էր ի խաւարի կռապաշտութեանն: Երբեւ նա
զկրօնն օտարոտիս եւ զզոհս՝ որ արտաքոյ քան զհռո-
մայեցւոց սովորութիւնս էին: Յապա ժամանակս չպահե-
ցան օրէնքս այս. այլ այս էին միտք Ուովիղայ՝ զի պահես-
ցին, եւ պահեցաւ իսկ ինչ անախ յամենայն ժամանակի:

Եւ ընտրեաց զատոյց նա ի ժողովողենէ անախ արս
ընախրս կարգել ի նոցանէ զհասարակաց խորհրդականու-
թիւնն՝ զոր ծերակոյտն կոչեաց: Վացոյց երկերիւր խոր-
հրդականս՝ որոց թիւ յետոյ յաւելաւ. եւ ի նոցանէ ե-
լին ամբուական տոհմքն՝ որ պատրիկքն կոչէին: Եւսկ այլքն
ուամիկ անուանէին, խաժամուժ ամբօնն:

Պարտ էր ծերակուտին կարգել եւ առաջի արկանն լ զիրս ամենայն . էր ինչ՝ զոր ինքն ծերակոյտն համարձակութեամբ հանդերձ թագաւորաւն կարգէր . այլ եթէ հասարակաց ինչ էին իրքն եւ ամենեցուն, ժողովրդեանն յանձն լինէր, զի նա վճիռ տայցէ զիրացն :

Ուովիդոս ի ժողովի ուրեք՝ ուր յանկարծ խռովութիւն մեծ յուզեցաւ, ի խորհրդականաց անտի պատառ պատառ կոտորեցաւ, քանզի տեսին՝ թէ կարի ճոխացաւ ի վերայ նոցա . եւ յայնմ ժամանակէ սկսաւ ծերակոյտն ցուցանել թէ չկամի երբեք մտանել ընդ ուրուք տէրութեամբ : Եւ զի ցածուսցեն զժողովուրդն՝ որ զթագաւորն իւր սիրէր, եւ զի մեծ զոմն զշինիչ քաղաքին կարծեցուսցեն, համբաւ հանին խորհրդականքն՝ եթէ յերկինս յափշտակեցին զնա զիքն . եւ կանգնեցին նմա բաղինս :

Եւ մաս Պոմպիլիոս երկրորդ թագաւոր, յերկայն ժամանակեան խաղաղութեան յորինեաց բովանդակ զբարբա, եւ կանոնեաց զկրօնսն ի վերայ հիմանն՝ զոր Ուովիդոս արկ :

Տուղղոս Ոստիղոս հաստատեաց կացոյց սաստիկ կարգօք զվարժս զինուորութեան եւ զօրէնս պատերազմաց, յորս նորին պայազատն Ընկոս Մարկոս կարգս նուիրականս խառնեաց, զի սուրբ իմն առնիցէ զլինուորութիւնն :

Յետ նորա Տարկինոս Պրիսկոս, վասն զբազումս զիւրեւ ածելոյ, յաւել զթիւ խորհրդականացն մինչեւ ցերեքհարեւր, յորում հաստատուն կացին ժամանակս բազումս . եւ սկիզբն արար մեծամեծ գործոցն՝ որ ի հասարակաց զիւրութիւն լինելոց էին :

Սերբիոս Տուղղոս խորհէր հաստատել ընկերհաշտութիւն, ընդ առաջնորդութեամբ երկուց իշխանաց տարեւորաց՝ որ ի ձեռն ժողովրդեան ընտրիցին :

Վասն Տարկինեայ Եմբարտաւանի բարձաւ թագաւորութիւնն, հանդերձ խորշելով եւ գարշելով եւ նդովելով զամենեկին՝ որք զնոյն հաստատել մտաբերիցեն . եւ Բրուտոս երգմենեցոյց զժողովուրդն՝ զի պահեսցէ զիւր ազատութիւն յախոհանս ժամանակաց :

Օւսերբիոսի Տուղղոսի զհետ գնացին ի փոփոխմանս յայսմիկ : Բզեշիքն՝ որ ի ձեռն ժողովրդեան ի մի-

Ջոյ պատրկացն ընտրեին, հաւասար էին թագաւորաց. բայց միայն՝ զի երկուք էին, եւ ունէին կարգ պայմանեալ իշխանութեան ի մէջ իւրեանց, եւ ամի ամի փոփոխէին:

Սողատինոսն ընդ Բրուտոսի բոլորն անուանեցաւ, քանզի եւ նովաւ հանդերձ առաջնորդ լեալ էր ազատութեան. թէպէտ եւ այր եւս էր սա Վուկրեաեայ՝ որոյ մահն պատճառք եղեւ փոփոխմանն, եւ քան այլոցն ամենեցուն նմա հասանէր խնդրել զվրէժ թշնամանացն Վուկրեաեայ, կասկած եղեւ զնմանէ, քանզի յաղգէ թագաւորացն էր, եւ մերժեցաւ ի բաց:

Սաղբրիոս փոխանակ նորա եկաց. ի դառնալ իւրում յարշաւանէն՝ որով զհայրենի դաւառն իւր ի վէրացւոց եւ յետրուրիացւոց զերծոյց, եղեւ կասկած զնմանէ ժողովրդեանն՝ թէ բռնակալել կամիցի, վասն ապարանիցքն՝ զոր տայր շինել ի վերայ բարձրաւանդակի միջ: Եւ նա ոչ միայն դադարեաց ի շինելոյ զտունն, այլ եւ ամենեւին իսկ ի կողմն ռամկին անկաւ, թէպէտ եւ սրտորիկ եւս էր. եւ կացոյց նա օրէնս՝ զի համարձակ լիցի ի ժողովուրդն բողոքել, եւ ետ ժողովրդեանն համառօտ դատել:

Նոր օրինօքս այս՝ իշխանութիւն հիւպատոսութեան տկարացաւ վաղվաղակի, եւ յաճախեցոյց զերաւունս իւր ժողովուրդն:

Ի ստիպել աղքատացն ի մեծատանց վասն պարտեացքն, յարեաւ ժողովուրդն հակառակ իշխանութեան հիւպատիցն եւ ճերակուտին, եւ մեկնեցաւ դնաց յԱւենտինոն լեառն:

Մենայն բանք զազատութենէ էին ի ժողովն. եւ ժողովուրդն Հռոմոց ազատ զինքն չհամարեցաւ, մինչ չեւ էր տուեալ համարձակութիւն օրինօք ընդդէմ դառնալ ճերակուտին: Ստիպեցան տալ նոցա ուրոյն ոստիկանս՝ որ ռամկապետքն կոչէին, զի կարիցեն նորա ժողովել զժողովուրդն, եւ օգնական լինել նմա հակառակեալ իշխանութեան հիւպատիցն, ընդդէմ դառնալով կամ բողոքելով:

Եւս իշխանք վասն առաւել ճոխանալոյ, յաճախեին զերկպառակութիւնն ի մէջ երկուց կարգացն. եւ չդադարէին յողորմելոյ զժողովուրդն, հաւանեցուցանելով զնո-

սա՝ եթէ երկիր նահանգացն պարտելոց, կամ արծաթն՝ որ ի վաճառելոյ անտի երկրին դայր, բաժանեացի ի մջ քաղաքացեացն :

Օերակոյան հանապալ պնդադոյն հակառակ կայր այնպիսի օրինաց՝ որ աւերիչ էր աշխարհին, եւ կամէր՝ թէ արծաթ վաճառելոյ երկրին ի գանձ հասարակաց երթիցէ : Ժողովուրդն զնայր ըստ կամաց իւրոց խռովիչ իշխանացն. բայց սակայն դեռ եւս ունէր իրաւունս եւ արգարութիւն, զի զարմանայր ընդ առաքինութիւն աւագ որերոյն՝ որք նաւ ընդդէմ դառնային :

Այնչ լաւագոյն դարմանս ընտանի երկպառակութեանց մարթաց ծերակոյան իմանալ, բայց հանապազորդ օտար պատերազմաց դէպս գտանել. զի պատերազմունք խափան լինելին անհնարին սաստկանայոյ երկպառակութեանցն, եւ միարանէին զամենեւին լինել պատրասարան հայրենի աշխարհին : Այլ յորժամ պատերազմունք յաջողէին եւ յաճախէին արիւր աշխարհաց, զարթնոյր նախանձն :

Արկղքին կողմանքն վաստակեալ յայնչափ երկպառակութենէն՝ որ կործանումն աշխարհին սպառնայր, միարանեցին զնել օրէնս՝ զի հանդարտեցեն եւ սքա եւ նոքա, եւ հաստատել զհանդիտապատիւ զուգականութիւնն՝ որում պարտ է յազատ քաղաքի լինել :

Իւրաքանչիւր ի կարգաց անտի վիճէր՝ թէ նա հասանէ զնել զօրէնսն : Իբրեւ աճեաց նախանձն ի հակառակութենէ անտի, ամենեքին միարանեցին հասարակաց հաւանութեամբ հրեշտակս ի Հոյնս առաքել, զի խընդրեցեն զօրէնս քաղաքաց աշխարհին, եւ մանաւանդ զՍողոնին՝ որ առաւել ընկերհաշտութեան էր : Ազան օրէնք երկոտասան տախտակացն. եւ Տասն արքն՝ որ զնոսա դրեցին, անկան յիշխանութենէ անտի՝ որով ստահակեալ ի չարիս զառաժան :

Այնչ դեռ ամենայն ինչ հանդարտեալ էր, եւ թուէր իմն՝ թէ այնպիսի արդար օրէնք ցանդ հաստատեցեն ըզհասարակաց խաղաղութիւն, միւսանդամ երկպառակութիւնք բորբոքեցան ի միւսանդամ հակառակելոյ ժողովորդեանն, որ կամէր առնուլ զպատիւ եւ զհիւպատտութիւնն՝ որ մինչև ցայնժամ առաջնոյ կարգին անկ էր :

Օրէնք առաջի եղան՝ զի թողցի նոցա այնմ հասարակութիւնը : Միտարանեալ ծերակուտին , քան զհիւպատոսութիւն զԵլուցանել , լաւ համարեցաւ կացուցանել այլ եւս երիտ իշխանս՝ որք զհիւպատից ճոխութիւն ունիցին , եւ անուանիցին հաղարապետք զօրաց , եւ թողին ժողովորդեան յայն պատիւ ելանել : Զաճեալ ժողովորդեանն ընդ հաստատել իրաւանցն իւրոց , չափով եւ իմաստութեամբ զիւր յաղթութիւն ի կիր արկանէր , եւ ժամանակ ինչ իւրրեւ զառաջինն տայր պատիւս եւ աւագութիւնս պատրկացն միայն :

Յետ բազում հակառակութեանց դարձեալ ի հիւպատոսութիւնն եկին . եւ առ սակաւ սահաւ ի մեջ երկոցունց կարգաց եղև հասարակ պատիւն , թէպէտ եւ պատրիկքն միշտ երեւելիք էին յընտրութիւնան :

Եւ էր պատերազմն անդադար , եւ հռոմայեցիք յետ հինգ հարեւր ամաց զգաղատացիս՝ որ յայս կոյս Եղպից էին , զգլխաւոր թշնամիս իւրեանց , եւ զամենայն աշխարհքն իտաղացւոց հնազանդեցին³ :

Յայնմ ժամանակի սկիզբն լինէր պունիկական պատերազմացն . եւ յայն վայր հասին իրքն՝ զի իւրաքանչիւր յերկուց նախանձոտ ժողովորդոց համարէր՝ եթէ ոչ եւս կացցէ ինքն , թէ ոչ զմեան կործանիցէ :

Զուրմ մերձ ի կործանումն հասեալ՝ պատուարեցաւ ի նեղութեան իւրում մանաւանդ հաստատուն մտօք եւ իմաստութեամբ ծերակուտին :

Եւս պառուրեմն հռոմայեցւոց համբերութիւն յաղթեաց . Եննիրազ ի պարտութիւն մատնեցաւ , եւ Աարքեղոն ի ձեռն ամբիկանոսն Ալիպիոնեայ նուաճեցաւ :

Զռոմայեցիք յաղթութեամբք յերկերիւր ամաց ժամանակի սքանչելապէս ընդ ծով եւ ընդ ցամաք հասեալ տիրէին , եւ զամենայն տիեզերս ընդ իւրեանց իշխանութեամբ կացուցին :

Ի ժամանակն յայնոսիկ եւ յետոյ քան զաւերն Աարքեղոնի , զմիմեամբք ելանէին փութալ ըմբռնել զէործս իշխանութեան , որոց պատիւ եւ շահ յաճախէր ըստ յաճախել եւ մեծանալ տէրութեանն : Որ փառաց եւ իշխանութեան ցանկացեալ հասանել կամէին , զժողովորդն համակ որդիել ջանային . եւ կարգացն միտարանութիւն՝

որ վասն պունիկական պատերազմացն պահէր, յանհնարին խռովութիւն դարձաւ: Պարսկեանք զամենայն եղծին շիտթեցին, եւ բանք նոցա խռովեցուցիչք՝ եղեն սկիզբն ընտանի պատերազմաց:

Յայնժամ սկսան զէն ընդ անձն արկանել, եւ յայտնի բռնութեամբ դործել ի ժողովս Հռոմոց ժողովըրդեան⁴. ուր յառաջն իւրաքանչիւր ոք օրինօք միայն կամէր յաղթել, եւ ազատութեամբ կարծեաց:

Իմաստուն առաջնորդութիւն ծերակուտին, եւ պատերազմունք մեծամեծք՝ որ եկին հասին ի վերայ, ցածուցին զխռովութիւնսն:

Մարիոս յռամկէ անտի, այր քաջ պատերազմող, իւրով զինուորութեան ճարտարխօսութեամբն եւ խռովիչ հրապարակախօսութեան բանիւք, յորս ստէպ գոռայր ընդ անուականացն հպարտութեան, զարթոյց զնախանձ ժողովրդեանն, եւ նորիմբ ի մեծամեծ պատիւս ել:

Շիղա պատրիկ, եկաց ի դուխ ընդդիմակաց կողմանըն, եւ Մարիոս այնու հետեւ սկսաւ նախանձել ընդ նա:

Յայնմ հեռէ նենդութեամբ եւ ապականութեամբ ամենայն ինչ ի Հռոմ վճարէր: Աէր աշխարհին եւ ակն ածել յօրինացն բարձաւ անտի:

Եւ յաւելան չարիք ի չարեաց վերայ, զի ասիացւոց պատերազմունք՝ հռոմայեցւոց զեղխութիւն ուսուցին, եւ զաղահուցութիւն յաճախեցին:

Ի նմին ժամանակի, զօրավարք զօրաց զԷրեանց զօրականս յինքեանս յարեցուցանէին, որք մինչեւ ցայնժամ զհասարակաց ձոխութեան միայն նկարագիր յԷրեանց զօրավարս տեսանէին:

Աւելղա ի կռուին՝ զոր ընդդէմ Միթրիդատայ կրռուեցաւ, թոյլ տայր իւրոց զօրականացն մեծանալ, զի շահեսցի զնոսա:

Իսկ Մարիոս յառաջադրէր նոցա՝ ուրք ընդ իւր միաբանեալն էին, զի զարծաթն եւ զերկիրն բաժանեացեն ի միջի:

Եւ յալիսի հայթայթանօք եղեն տեարք իւրեանց գնդացն, մին՝ պատճառանօք որպէս թէ ծերակուտին պատրապարան լինիցի, եւ մեւսն՝ ժողովրդեան անուամբ, եւ զայրադնեալք ի մարտ պատերազմի ընդ միմեանս բախեցան մինչեւ ի քաղաքորմնն իսկ:

Աողմն Մարեայ եւ ժողովրդեանն ամենեւին հարաւ ,
եւ Շիղա եկաց իշխան , եւ առ անուն զիկատտոր :

Ահաբն կոտորած դործեաց , եւ վարեցաւ անագո-
րոյն խառութեամբ ընդ ժողովրդեանն , եւ բանիւք եւ ար-
դեամբք , մինչեւ ի ժողովն անգամ՝ որ օրինօք էին :

Իբրեւ զօրացաւ յոյժ , եւ հաստատեցաւ յիշխա-
նութեանն , իւրովի ի հասարակաց կեանս դարձաւ , այլ
յեսա յայտ առնելոյ՝ եթէ մարթի Հոռոմնց ժողովրդեան
ունել իւր իշխան եւ հրամանատար :

Պոմպէոս՝ զոր Շիղա յիշխանութիւն հանեալ էր ,
յաջորդեաց զմեծ մասն իշխանութեան նորա : Սա մերթ
զժողովուրդն ողորէր եւ մերթ զճերակոյտն , զի հաստա-
տեցի . այլ ապա վասն իւրոյ յօժարութեանն եւ օգտու-
թեան յարեցաւ ի ճերակոյտ անդր :

Հինից ծովու եւ սպանիացւոց եւ ամենայն արեւե-
լից յաղթեալ , զօրացաւ յոյժ յրնկերհաշտութեանն եւ
մանաւանդ ի ճերակուտին :

Այսոր՝ որ գէթ նմին հանգոյն կամէր թէ իցէ , դար-
ձաւ ի կողմն ժողովրդեան . եւ իբրեւ եկաց հիպատ՝ խոռ-
վեցուցիչ ուսմկապետաց նմանօղ լեալ , եղ առաջն զեր-
կիրն՝ զի բաժանեցին , եւ օրէնս իմն՝ քան զոր աւելի չե-
ցէ մարթ գտանել պատշաճ ժողովրդեան :

Պաղատացւոց աշխարհին տիրելով , փառք եւ իշ-
խանութիւն Աայսեր ի բարձրագոյն պայման կհաս :

Պոմպէոս եւ Աայսր միարանեցին ընդ միմեանս վասն
իւրեանց ինչ օգտութեան , եւ ապա ի նախանձ դարձան :
Իորրորդեցաւ ընտանի պատերազմն : Պոմպէոս , քանզի կար-
ծէր՝ թէ միայն անունն իսկ իւր բաւական իցէ զամենայն
վճարել , չարար ինչ փոյթ : Իսկ Աայսր , քանզի ժիր էր
եւ հանճարեղ , տարաւ ի գլուխ զյաղթութիւնն , եւ
իշխան եղև :

Սա բաղում անգամ ազգի ազգի փորձ փորձէր տե-
սանել թէ կարիցեն հոռոմայեցիք ընդելանել ընդ անուն
թաղաւորի , եւ ոչինչ վճարեալ տտելի եւս եղև : Ասն
զհասարակաց ոխութիւն աճեցուցանելոյ , շնորհեաց նմա
ճերակոյտն պատիւս՝ որք ցայնժամ չեւ էր լեալ լսելի ի
Հոռոմ քաղաքի . մինչեւ իբր բռնաւոր դք ի ճերակուտին
սպանաւ :

Անտոնիոս անուցեալն ի նմանէ, որ ի ժամանակի նորա սպանմանն հիւպատոս դաւաւ, յուզեաց զժողովուրդն հակառակ այնոցիկ՝ որք սպանին զնա, եւ ջանացաւ ի խռովութեանց անտի պարսպ գտեալ զգլխաւոր իշխանութիւն յիւր վտարել: Ղեպիդոս՝ որ մեծ իմն իշխանութիւն ունէր առ Ապսերբ, փութայր պահել: Ապա մանուկն Ապսր իննեւտասն ամաց, ձեռն ի գործ արկանէր առնուլ զվրէժ հօրն մահուան, եւ խնդրէր պարսպ զնորա իշխանութիւն յաջորդելոյ:

Հնարիւք իւր օգտակարս արար զիւրոյ տանն թշնամիս, եւ զիւր իսկ նախանձորսն:

Գուեղ զօրաց հօր նորա՝ նմա ետուն զանձինս, գութ արկեալ անուանն Ապսեր, եւ զարմացեալ ընդ անհնարին առատութիւնն՝ զոր առատանայրն նոցա:

Օերակոյսն այնու հետեւ շէր իմիք ձեռնհաս. ամենայն ինչ բռնութեամբ վճարէր, եւ զօրականօք՝ որք նմա տան զանձինս, որ աւելի սոճիկս բաշխեացէ:

Յայնմ վշտաց ժամանակի, Արեք արք զամենայն աներկեւզս եւ զբռնակալութեան հակառակորդս՝ որ ի Հոմ էին, հարին: Ապսր եւ Անտոնիոս զԵրուտոս եւ զԱսախոս պարտեցին. եւ ազատութիւն նոքօք հանդերձ թափեաց եհան զողին: Յաղթօղքն՝ յեա ի պարտութիւն մատնելոյ տկարն Ղեպիդեայ բազում անգամ ի գաշն ընդ միմեանս մտանէին եւ ազգի ազգի բաժանմունքս բաժանէին. յորս Ապսր, քանզի առաւել աջողակ էր, միշտ գտեալ հնարս զազնուազոյն բաժինն առնելոյ, զհռմայեցիս յինքն յանկոյց եւ եղև վերագոյն: Անտոնիոս զուր ջանացաւ միւսանգամ կանգնել, եւ Ակտիոնի կուին զամենայն տէրութիւնն ընդ Աւգոստեայ Ապսեր իշխանութեամբ կացոյց:

Հռոմայեցիք, վաստակեալք եւ վատնեալք յայնչափ ընտանի պատերազմաց, հարկեցան յիւրեանց ազատութենէն հրաժարել զի հանդիցեն:

Տունն Ապսերաց սեպհականեաց իւր զգօրափարութիւն զօրուն, ինքնակալ անուն առեալ, եւ արձակ իշխանութեամբ վարէր:

Հռոմայեցիք ընդ կայսերօք առաւել փոյթ յանձին կալեալ պահել զաշխարհն, քան ընդարձակել եւ մեծա-

ցուցանել, գրեթէ ոչ ինչ վայրաց տիրեցին, բայց միայն վասն զբարբարոսս մերթելոյ, որ յերկիր տերութեանն մտանել կամէին:

Ի Աղղիզուղայ մեռանել, մինչ զեռ կամէր ծերակոյտն զազատութիւն եւ զեշխանութիւն հիպատիցն նորոգել, արգելաւ յարանց պատերազմողաց, որք կամէին՝ թէ իցէ որ նոցա գլուխ հանապազորդ, եւ նա իցէ իշխան եւ տէր:

Ի լինել ապստամբութեանց վասն Աերոնի բռնութեանցն, իւրաքանչիւր ի գնդաց անտի մի մի ինքնակալ ընտրէր, եւ համարէին իսկ զօրականքն՝ եթէ իշխան են տալ զտէրութիւն ում եւ կամիցին:

Աւ յայն եկին՝ զի ի հրապարակ իսկ ածեալ աւելի արծաթոյ զտէրութիւնն վաճառէին, եւ սովորեցան ընկենուլ զլուծն: Բնդ ունինգրութեանն եւ կրթութիւն անհետ կորեաւ ի միջոյ: Իշխանք լաւք զուր պնդեցին զանձինս զկրթութիւնն պահել, եւ վասն նախանձուն՝ զոր նախանձէին առ ի հաստատուն ունելոյ զհին կարգս Հոռոմոց զինուորութեան, մատնեցան ի սրտմտութիւն զօրականացն:

Ի փոփոխել ինքնակալացն, իւրաքանչիւր ի գնդաց ձեռն արկանէր զելւր զօրավար կացուցանել, եւ լինէին ընտանի կռիւք եւ ահադին կոտորած:

Արդ այսպէս անկանէր տէրութիւնն ի զօրութենէ, ի կրթութեանն թուլանալոյ, եւ միանգամայն վատնէր յայնչափ ներքին պատերազմացն:

Յայնչափ անկարգութեանց միջի ահն եւ փառաւորութիւնն հռոմայեցւոց համբաւոյն նուազեաց: Պարթեւք՝ որք բազում անդամ ի պարտութիւն մատնեալ էին, ահադինք եւ սոսկալէք ի կողմանս արեւելից եղին, եւ զառաջին անունն առեալ Պարսիք կոչէին: Արդք հիւսիսականք՝ որք ի ցուրտ եւ յանդարման տեղիսն բնակէին, ակն եղեալ զեղեցկութեան եւ մեծութեան վայրաց տէրութեանն, յամենայն կողմանց ջանային անդր մտանել:

Սի մարդ այնու հետեւ չեղև բաւական բառնալ զընդն այնպիսի յաղթ տէրութեան՝ որում եւ սաստիկ պատերազմ ի դիմի հարկանէր:

Վասնզի մեծ յաճախութիւն էր պատերազմացն, եւ բարբ էին զօրականաց կամել՝ զի իցեն ինքնակալք եւ կայսերք ի գլուխ նոցա, հարկ եղեւ բազմացուցանել զինքնակալս եւ զկայսերս :

Վարձեալ՝ քանզի տէրութիւնն իսկ իրրեւ ժառանգութիւնն ինչ համարէր, ինքնակալք բազմացան ի բազմութենէ որդւոց թագաւորացն :

Սարկոս Եւրեղիոս զիւր եղբայրն բարձակից թագաւորութեան արար : Սեւերոս զերկոսին որդիսն իւր ինքնակալս կացոյց : Ի հարկէ իրացն ստիպեալ բաժանեաց Վիտիգեստիանոս զարեւելս եւ զարեւմուտս ընդ ինքն եւ ընդ Սարսիմիանոս . եւ իւրաքանչիւր դք ի նոցանէ ծանրացեալ բռամբք, թեթեւացան ընտրեալ մի մի կայսր :

Ի բազմութենէ անտի ինքնակալաց եւ կայսերաց՝ անհնարին ծախք յաշխարհին եղեն, բաժանեցաւ տէրութիւնն, եւ ընտանի պատերազմուք բազմացան :

Առստանդիանոս որդի Առստանգեայ Վզորեայ ինքնակալի, զտէրութիւնն իրրեւ ժառանգութիւն որդւոցն բաժանեաց ետ . եւ յետ այնորիկ ընդ նոսա հայեցեալ զնոյն եւ ամենեքին արարին, եւ այնու հետեւ գրեթէ չեք իսկ մի միայն ինքնակալ տեսանել :

Սնորիոս եւ Ալաղենափնիանոս Վ որդ ինքնակալք արեւմտից զբնաւ յուլութեամբ ծուլութեամբ կորուսին : Յատաղիա իսկ եւ ի Հոմ բազում անգամ ասպատակաւորք արշաւեցին, եւ բարբարոսք սովորեցան դալ եւ աւար հարկանել :

Եմենայն արեւմուտք թողան լքան : Օլափրիկեցւոց աշխարհն Ա անդադք կալան . զԱպանիա Վութք արեւմտեայք, եւ զգաղատացւոց աշխարհն Փրանկք, եւ զմեծ աշխարհն բրիտանացւոց՝ Սաքսոնք, եւ զՀոմ եւ Վատաղիա իսկ Հերուդք, եւ ապա Վութք արեւելեայք : Հոմոմոց ինքնակալք փակեցան կացին յարեւելս, եւ զայլն ամենայն ի բաց թողին, եւ զՀոմ իսկ եւ Վատաղիա :

Եւ Յուստինիանոսիւ փոքր ինչ զօրացաւ տէրութիւնն՝ Բեղիսարեայ եւ Ներսիսի քաջութեամբ : Հոմ քաղաք բազում անգամ առեալ, ապա ինքնակալաց մնաց : Տաճիկք զօրացեալ յերկպառակութենէ իւրեանց արուարձանեացն, եւ յանփոյթ առնելոյ ինքնակալաց, հա-

նին ի նոցանէ զմեծ մասն արեւելից, եւ այնչափ ինչ նեղեցին զնոսա յայնմ կուսէ, զի չաճէին ինչ այնու հետեւ զմտաւ զհտաղացւոց աշխարհէն: Յայնմ ժամանակի դոնդորարդացիք գեղեցիկ գեղեցիկ վայրս եւ նահանգս ընչաւէաս յիտաղացւոց աշխարհէն ունէին: Հռոմայեցւոց քաղաքն ի նեղ անկեալ ի հանապազորդ հնարից նոցա, եւ կացեալ անպատասպարան եւ անօղնական յիւրոց ինքնաւարաց, ի դաղիացւոց ձեռս եղեւ ապաստան: Այեպիմոս արքայ գաղեացւոց անց ընդ լեւինան եւ զդոնդորարդացիս վանեաց: Արորոս մեծ, յեա բառնալոյ ի միջոյ զտէրութիւն նոցա, առ զթագ զիտաղացւոց, եւ իւրով ցածուն խորհրդով միայն, զսակաւ ինչ զմնացորդս աշխարհին պահեաց պայազատացն կայսերաց, եւ յութ հարիւրորդի ամի Տեառն մերոյ, ի հռոմայեցւոց ինքնակալ ընտրեցաւ, եւ արկ հիմն նորոյ պետութեանն:

Դիւրին է քեզ այժմիկ ի միտ առնուլ զպատճառս վերանալոյ եւ անկանելոյ հռոմայեցւոցն:

Տեսանես՝ զի աշխարհն այն ի պատերազմաց վերայ հաստատեալ, եւ նորիմք յօժարեալ տիրել ի վերայ իւրոց արուարձանեացն, զամենայն տիեզերս արկ ընդ լծով, քանզի զքաղաքի կարգս եւ զզինուորութեան արուեստս ի բուն կատար հասոյց:

Տեսանես՝ զի պատճառք երկպառակութեանց աշխարհին եւ ապա կործանմանն, քաղաքացեաց նախանձն եղեւ, եւ սէր ազատութեան՝ ըստ ամենայն չափ անցեալ, եւ յանհնարին դրդութիւնն հասեալ:

Զի ինչ քեզ այսու հետեւ դժուարին ընտրել զամենայն ժամանակին հռոմայեցւոց, թէ զնոցունց իսկ զհռոմայեցւոց միայն կամիցիս խորհել, եւ թէ առ համեմատութեամբ այլոց եւս ազգաց աճիցես զնոսա զմտաւ, եւ նշմարեցես զփոփոխմունսն՝ որք լինելոց էին յիրացն կարգէ յիւրաքանչիւր ժամանակս:

Թէ ընդ նոսին իսկ ընդ հռոմայեցիս նայիցիս, տեսանիցես դու զնոսա յառաջնումն ի միահեծան իշխանութեան հաստատեալ ըստ առաջին օրինացն. յեա այնորիկ յազատութեանն, եւ ապա միւսանդամ ի հազանդութեան միահեծան իշխանութեան, այլ ակամայ կամօք եւ բռնութեամբ:

Այլ զիւրին իսկ է քեզ առնուլ ի միտ, թէ զհարդ կամ որով օրինակաւ ընկերհաշտութիւն յիրաց անտի՛ որք ի թաղաւորութեան ժամանակին էին, յարդարեցաւ. եւ տեսնիցես դարձեալ մեծաւ յայտնութեամբ՝ թէ զհարդ յազատութեանն առ սակաւ սակաւ մեղմով հիմն անկանէր միւսանդամ միահեծան իշխանութեան:

Օ՛ր զոր օրինակ տեսեր զհանդամանս ընկերհաշտութեանն, զոր ի միահեծան իշխանութեան Արքիմիտրոս Տուղղիոս եցոյց, որ զառաջինն ետ ճաշակել Հռոմոց ազգին զազատութեանն ճաշակս. տեսեր նոյնպէս՝ զի Շիղայ բռնակալութիւնն, թէպէտ եւ անց եւ չյերկարեաց, այլ եցոյց՝ թէ հռոմայեցիք թէպէտ եւ յանդգնադոյնք են, սակայն մարթն բառնալ զլուծ հանդոյն ազգայն՝ զորս ընդ հարկօք ունէին:

Առ ի միտ առնելոյ զայն՝ որ ի մոլեկան նախանձուէն ի մէջ կարգացն մի ըստ միոջէ դործեցաւ, բաւական է ընտրել քեզ զերկուս ժամանակն՝ զոր յայտնի իսկ ցուցի քեզ. մի՛ յորժամ կայր ժողովուրդն ի չափս սահմանեալս, վասն վշտացն՝ որ զնա յամենայն կողմանց պատեալ պաշարեալ ունէին. եւ մեւս եւս՝ յորժամ յարաքնոց անտի անկասկած եղեալ, զնայր ըստ իւրոց կամաց յօժարութեան:

Իւրաքանչիւր յերկոցունց ժամանակացն բուն նկարագիր այն է, զի ի միումն՝ սէր հայրենի աշխարհին եւ օրինաց զմիտան ունէր յակաստանի, իսկ ի միւսումն՝ ամենայն ինչ շահիւք եւ բռնութեամբ վճարէր:

Ատի իսկ դէպ լինէր՝ զի յառաջնումն յերկոցունց ժամանակացն, արք հրամանատարք՝ որք ցանկայինն պատուոց օրինօք, զգորականն ի չափու ունէին, եւ հաւատարիմն աշխարհին առնէին. ուր ի միւսում ժամանակին՝ յորժամ զամենայն բռնութեամբ վճարէին, զայն եւ եթ խորհէին՝ թէ այնպէս կարգեացեն զգորան, զի այնմ՝ զոր ի մտի ունիցին, հասանիցեն հակառակ ծերակուտին իշխանութեան:

Արդ՝ յայսպիսում ժամանակի հարկ էր պատերազմաց ի Հռոմ լինել. եւ քանզի ի պատերազմի օրէնք ոչ գոն, եւ բռնութիւն միայն յաղթէ, պարտ էր զի նա՛ որ քան զամենեսին հարուստ եւ զօրաւոր էր, իշխան լինիցի:

ուստի եւ տէրութիւնն ի միոյ ուրուք իշխանութիւն դառնայցէ :

Եւ այսպէս իսկ իրքն ինքնին յայն պատրաստէին, զի Պողիբիոս⁵ որ եկացն ի ժամանակի փառաւորութեան ընկերհաշտութեանն, յառաջագոյն իմացաւ միայն յիւրացն կարգէ՝ թէ աշխարհն հռոմայեցւոց յետ բազում ժամանակաց ի միահեծան իշխանութիւն դառնայցէ :

Եւ փոփոխմանն պատճառք այն են՝ զի երկպառակութեանն ի մէջ երկոցունց կարգացն հռոմայեցւոց չեղեւ հնար ցածնուլ, եթէ ոչ անընդգիմակաց իշխանութեամբ առն թաղաւորի. եւ դարձեալ՝ յոյժ սիրելի էր ազատութիւն եւ կամաւ չթողուին : Ասան այնորիկ պարտ էր առ փոքր փոքր զնա տկարացուցանել կերպարանաւոր պատճառանօք եւ այնպիսի հնարիւք յայն իմն հասուցանել՝ զի մարթիցի յայանի բռնութեամբ կործանել :

Խարէութեանն ըստ Արիստոտելեայ⁶ պարտ էր յողորմելոյ զժողովուրդն առնուլ սկիզբն, եւ ի բնէ պարտ էր բռնութեանն դալ զհետ նորա :

Այլ անտի յայլ անպատեհ իրս հասանէր կործանել, վասն իշխանութիւն ունելոյ արանցն պատերազմօղաց. ախտ անհրաժեշտ աշխարհին այնորիկ :

Քանզի միահեծան իշխանութիւնս այս՝ զոր կայսերք եղին, ի ձեռն զինուց հաստատեցաւ, հարկ էր՝ թէ ամենեւին զինուորական լինէր. եւ վասն այնորիկ իսկ, որ զայն իշխանութիւն հաստատեաց՝ ինքնակալ անուանեցաւ, որ էր բուն անուն զօրաց զօրավարութեան :

Սովմբ եղեր իսկ բաւական տեսանել՝ թէ զոր օրինակ ընկերհաշտութեանն էր ինչ տկարութիւն անհրաժեշտ, այս ինքն նախանձն՝ որ ի մէջ ժողովրդեան եւ ճերակուտին էր. նոյնպէս էր եւ կայսերացն միահեծան իշխանութեան տկարութիւն, զօրականացն ստահակութիւնն, որք զնոսս կայսր կացուցեալ էին :

Քանզի չէր մարթ թէ արք պատերազմօղք՝ որոց փոխեալ էր զառաջնորդութիւնն, եւ կացուցեալ ինքնակալս, չիմանայցեն բազում ժամանակս՝ թէ ինքեանք են տէրութեանն իշխան եւ տուիչ :

Մարթ ես այժմիկ ի ժամանակսն՝ զորս ի խոյլ արկեալ քննեցեր, յաւելուլ եւ զայն ժամանակսն՝ որ զլե-

նուորու թեանն փոփոխումն ցուցանիցեն. զայն ժամանակն՝ յորժամ հնազանդ եւ հաւատարիմ էին զօրականք ծերակուտին եւ Հոռոմոց ժողովրդեան, եւ զայն՝ յորում յիւրեանց զօրավարն յարեցան. զայն՝ յորժամ զիւրեանց զօրավարն յարձակ իշխանութիւն հանէին ինքնակալ կոչելով, եւ զայն՝ յորում լեալ տեսարք իւրեանց ինքնակալացն՝ զոր ինքեանք ընտրէին, կացուցանէին զնոսա եւ հանէին, որպէս ինչ նոցա հաճոյ թուէր: Անտի յուլութիւն, անտի խոռովութիւնք եւ պատերազմունք՝ զորոց յառաջագոյն ասացաք, եւ ապա անտի կործանումն զինուորութեան հանգերձ կործանմամբն տէրութեան:

Այս են ժամանակք նշանաորք՝ որք ցուցանեն զփոփոխունս նոցանց իսկ հռոմայեցւոց իրացն: Իսկ զժամանակն՝ որք առ համեմատութեամբ այլոց եւս ազգացն զհռոմայեցիս մեզ ցուցանիցեն, նոյնպէս զիւրին է ընտրել:

Իբ ինչ ժամանակ՝ յորժամ ընդ իւրեանց հաւատարս ճակատ տուեալ կռուէին, եւ էին ի տաղնապի: Այլ այս բաւեր սակաւ ինչ աւելի քան զհինգհարեւր ամ. եւ յանկանել զաղատացւոց յատաղիս, եւ ի կարբեղոնացւոց հարստութեան կործանել, վախճանեցաւ:

Իբ եւ ժամանակ՝ յորում միշտ զօրագոյնք էին եւ առանց վտանգի, որչափ ինչ սաստիկ եւ էին ճակատքն՝ զորս մղէին: Այլ այս յերկարեալ ձգեցաւ երկերիւր ամ, եւ եհաս մինչեւ ի կանգնել կայսերացն հարստութեան:

Սեւս եւս ժամանակ՝ յորժամ զիւրեանց տէրութիւն եւ զփառաւորութիւն պահէին: Այլ տեւեաց չորեքհարեւր ամ, եւ վախճան եղև ի թագաւորութեան Թէոգոսեայ մեծի:

Այլ ապա այն ժամանակ՝ յորում իւրեանց տէրութիւնն յամենայն կողմանց կրճեալ հատեալ, առ փոքր փոքր կործանեցաւ: Այլ այսց իրաց՝ որք չչորեքհարեւր ամ ձգեցան, սկիզբն ի Թէոգոսեայ որդւոյն եղև, եւ վախճանեցաւ ի Աարոզոս մեծ:

Չեմ ինչ անտեղեակ թէ մարթ էր ի պատճառս կործանման Հռոմ քաղաքի բազում ինչ ուրոյն պատահարս յաւելլուլ: Խստութիւն փոխատուաց՝ ի վերայ պարտապանացն իւրեանց, մեծամեծ ապստամբութիւնս ստեպ ըստեպ յուղէր: Յաճախութիւն մենամարտիկ ոգորելոյցն եւ

Ճառայից՝ որովք լինէր հռոմայեցւոց եւ իտաղացւոց աշխարհն, անհնարին բռնութեանց պատճառք եղեւ եւ սաստիկ պատերազմաց իսկ: Հռոմայեցիք ծախեալ յայնչափ ընտանի եւ յօտար պատերազմաց, այնչափ նոր քաղաքակիցս կամ նենդութեամբ կամ իրաւամբք ստացան, զի հազիւ բաւական լինէին ինքեանք զանձինս ճանաչել, յայնչափ օտարաց միջև՝ զորս ընդ իւրեանց բնակ քաղաքացիս արարեալ էին: Ալ լինէր ծերակոյտն բարբարոսօք, եւ հռոմայեցւոց արիւնն խառնէր. սէր հայրենի աշխարհին՝ որով հռոմայեցիք քան զամենայն ազգըս աշխարհի բարձրացան, չէր ինչ բնակաւոր քաղաքացեացն՝ որք եկին մտին արտաբուստ. եւ այլքն ամենեքին խառնելով ապականէին: Ի բազմանալ այնպէս յոյժ նորոց քաղաքացեացն, բազմանայր եւ ակնառութիւնն, եւ միտք խռովիչք՝ գտանէին անդէն հնարս խռովելոյ եւ յուզելոյ:

Ընդ այն ժամանակս ազքատացն թիւ յաճախէր, վասն առաւել զեղիութեանն եւ պղծութեան եւ դատարկութեան՝ որք սպրդեցին մտին: Ալ որք կործանէինն, չունէին ուստեք մարթել զտանել ինչ հնարս, թէ ոչ ի խռովութեանցն, եւ ամենեւին չառնէին փոյթ՝ թէ կորիցէ ամենայն ընդ նոսա: Տայտ իմն է՝ թէ սոյն իսկ ետ լինել Աստիղինայ դաւաճանութեանն: Սեճամեծք, փառասէրք, եւ թշուստացեալք՝ որք չունիցին ինչ զոր կորուսանիցեն, միշտ զփոփոխումն սիրեն: Այս երկու ազգք քաղաքացեաց զօրացեալ էին ի հռոմ. եւ քանզի միջին քաղաքացիքն՝ որք միայն զամենայն ի հասարակակշիւ կշիւս ունիցին յրնկերհաշտութիւնս, յոյժ իսկ տրկարազոյն էին, հարկ էր՝ թէ ժողովրդեանն առաջնորդութիւն կործանէր:

Մարթի ի սոյն յաւելուլ եւ զառանձինն բարս եւ զյօժարութիւն այնոցիկ՝ որք պատճառք մեճամեճ խռովութեանցն եղեն, զգրակքեանցն ասեմ՝, եւ զՄարեայ, եւ զԱիւղղայ, եւ զՊոմպէէ եւ զՅուղեայ Ապսերէ, եւ զԼատոնիստէ եւ զԼուգոստեայ: Ինչ ինչ ցուցի յայնցանէ. այլ մանաւանդ ի մտի եղի զհամօրէն պատճառսն յայտ առնել, եւ զճմարիտ արմատս ակափն ցաւոց, այս ինքն զնախանձն՝ որ ի մեջ երկուց կարգացն էր. զի կարեւոր պի-

տոյ էր քեզ ուշ եղեալ նայել ընդ այն՝ որ ինչ ի նախանձուէ անտի կարգաւ գրպեցաւ :

Այլ յուշ լիցի քեզ՝ թէ այս կարգք երկար առանձինն պատճառանաց՝ որովք հաստատին եւ քակին պետութիւնք, ի ծածուկ կարգաց Աստուծոյ տեսչութեանն են :

Աստուած ի բարձրաբերձ բարձանց երկնից զամենայն թաղաւորութեանց երասանակս ի բռին ունի, եւ ամենայն սիրտք ի ձեռին նորա են . մերթ զկարիսն արգելու, եւ մերթ թողացուցանէ զսանձսն, եւ անտի զամենայն մարդկութիւնս շարժէ : Յորժամ աշխարհակալս կամիցի առնել, սայ ահի եւ երկիւղի ընթանալ առաջի նոցա, եւ պարգեւէ անհնարին արութիւն քաջութեան նոցա եւ զօրականաց նոցա : Աթէ օրէնազիրս կամիցի առնել, առաքէ նոցա զիւր ոգին իմաստութեան եւ հանձարոյ, եւ սայ նոցա կանխել յառաջ քան զպարիսն՝ որ հասանելոյց իցեն ի վերայ աշխարհաց, եւ արկանել հիմունս հասարակաց խաղաղութեան : Վիտէ զմարդկեղէն իմաստութիւնս՝ զի իւրք իւրք նուազազոյն է, լուսաւոր առնէ զնա, եւ զհայեցուածս նորա ձգտեցուցանէ, եւ ապա թողու զնա յիւրում ազիտութեանն, կուրացուցանէ զնա, դահալէժ զարահոս ի վախէ արկանէ, անձամբ յանձնէ յամօթ առնէ . անդէն պատեալ պատատի մարդկեղէն իմաստութիւն, եւ ի նուրբ խորհուրդս իւր շաղեալ գրաւի, եւ զգուշութիւնք նորա որոգայթք են նմա :

Այսպէս դատի Աստուած զդատաստանս իւր ահագինս, բստ կարգաց արդարութեան իւրոյ՝ որ միշտ առանց վրիպելոյ է . նա է՝ որ պատրաստէ զգործս արդեանցն ի պատճառս հեռաւորս յոյժ, եւ գործէ կանուխ զամենայն՝ որք յետ բազում ժամանակաց ի գլուխ կլանիցին . յորժամ կամիցի վախճան ի վերայ հասուցանել եւ զհարստութիւնս կործանել, ամենեքին տկար եւ անզօր եւ անհաստատ խորհրդովք դռանին : Ագիպտոս՝ որ երբեմն այնպէս իմաստունն էր, արբեալ սխալակեալ ապշեալ յիմարեալ զրգուեալ դեպեւի . քանզի արկ Տէր ոգի յիմարութեան ի խորհուրդս նորա, եւ զոր առնէն չգիտէ, կորեաւ սպառեցաւ :

Այլ մի ինչ խաբեցին մարդիկ . միւսանդամ կանգնէ Աստուած զմիասն խտորեալս, յորժամ նմա հաճոյ

Թուեսցի. եւ որ զոսա ի վերայ տրոփէր եւ ճիծաղէր զայլոցն կուրութեամբ, ինքն ի Թանձրամեծ խաւարն անկանի. զև երկար աջողութիւնք իսկ նորա բաւական են բազում անգամ շրջել զմիտս նորա:

Այսպէս թագաւորէ Աստուած յամենայն ազգաց վերայ: Այսու հետեւ մի ճառեսցուք, մի զգիպաց եւ մի զբախտէ, կամ թէ խօսեսցուք զնմանէ իրրեւ զանուանէ իմեքէ՝ որով զմեր ազխտութիւնս թագաւորացնիցեմք. որ ինչ առ համեմատութեամբ մերոց զողոջունն խորհրդոցս զէպք իցեն, խորհուրդ նկատեալ է ի միտսն բարձրադոյնս, այս ինքն ի խորհուրդսն յաւիտենից՝ որ զամենայն պատճառսն եւ զպատճառաւորս ի միում կարգի բովանդակեալ ունի: Ասան այնորիկ ամենայն միախուռն զէմ եւ զեալ ի նոյն կատարած ընթանայ. եւ առ չնմանալ մեր զամենայն, յանկարծաղէպ ինչ կամ վրիպակ կամ անհարթութիւն յիրս իրս՝ որ զիպիցին, զտաննեմք:

Ասան որոյ ճշմարիտ է զոր առաքեալ ասէ՞. եթէ երանելի է Աստուած, եւ միայն հօր, թագաւոր թագաւորաց, եւ տէր տերանց: Արանելի՛ որոյ հանգիստն առանց փոփոխելոյ է. որ զամենայն փոփոխէն, եւ ինքն ոչ փոփոխի, եւ զամենայն փոփոխմունսն միով անշարժ կարգաւ գործէ. որ տայ զիշխանութիւն եւ հանէ, որ ի մարդոյ ի մարդ զիշխանութիւն փոխէ, տանէ ի տուն, ի ժողովրդենէ ի ժողովուրդ. զև ցուցցէ եթէ ամենեքին նոքա յանօթ առեալ ունին, եւ եթէ ինքն միայն է՝ որ բնութեամբ ունի զիշխանութիւնն:

Ասան այնորիկ իսկ ամենեքին՝ որք տիրենն, իմանան՝ թէ ընդ մեծաւ զօրութեամբ իւրք են. զործեն աւելի կամ պակաս քան զոր կամինն, եւ խորհուրդք նոցա հանապաղ գործս՝ զորս չունէին ի մտի, վճարեն. ոչ տեարք են կարգելոյ եւ յօրինելոյ այժմու իրացս յանցելոց ժամանակաց, եւ ոչ զինչ յետոյ լինելոց իցէ, մարթեն տեսանել, թող թէ բռնադատել: Աս միայն ի բռին ունի զամենայն, որ զիտէ զանուն այնորիկ՝ որ իցէն, եւ որ չեւ եւս իցէն. որ ամենայն ժամանակաց իշխէ, եւ քան զբոլոր խորհուրդս կանխէ:

Աղէքսանդրոս չկարծէր՝ թէ վասն իւրոց զօրազբլխացն վաստակիցի, եւ աշխարհաց տիրելով զիւր տունն

կործանիցէ: Յորժամ Բրուտոս ազատութեան սաստիկ սէր ի միտս Հուլոնոց ժողովրդեան արկանէր, չածէր ինչ զմտաւ՝ թէ անհնարին ստահակութեանն խորհուրդս արկանիցէ ի միտս նոցա, որով բռնակալութիւնն՝ զոր քակելն կամէր, երբեմն նորոգեսցի եւս դժնգակ քան առ Տարկինեանց բռնութեամբն: Յորժամ ողորէինն կայսերք զգօրականս, չունէին խորհուրդ ի մտի զնոսս տեսարըս իւրեանց պայազատացն եւ տէրութեանն առնել:

Օչ չիք ինչ մարդկեղէն իշխանութիւն՝ որ ոչ յանդէտս յանկամս, այլ ինչ՝ քան զոր ինքն խորհիցի, կատարիցէ. Աստուած եւ եթ բաւական է, զամենայն ըստ իւրոց կամաց վարել: Ասն այնորիկ ամենայն ինչ զարմացուցիչ է՝ թէ ընդ առանձինն պատճառս միայն նայիցիմք, բայց սակայն ամենայն ինչ յարգարեալ կարգաւ իւրք վարի:

Այս ճառս տայցէ առնուլ զայդ քեզ ի միտ. տեսանես թէ քանի անձանօթ, այլ յօրինեալ եւ յարգարեալ խորհրդովք, հոռմայեցւոց իրք կարգեցան հասին ի Առովիզայ ի Աարողոս մեծ. իսկ զայլոց պետութեանց լուռ իսկ եղէց:

Թերեւս համարիցիս՝ թէ պարտ էր եւ զգաղիացւոց ճառել ինչ աւելի, եւ զԱարողոսէ մեծէ՝ որ արկ իսկ հիմն պետութեանն նորոյ. բայց ոչ միայն նորս պատմութիւնն գաղիացւոց վիպասանութեանն մասն է, զոր դու իսկ գրես ի մատենի, զոր եւ յառաջ իսկ մատուցեալ ես, այլ եւ ունիմ խորհուրդ ի մտի մեւս եւս խօսս գրել, ուր ի դէպ իցէ ինձ ճառել քեզ զգաղիացւոց եւ զմեծ աշխարհակալէս՝ որ հաւասար գտեալ արութեամբ եւ քաջութեամբ այնոցիկ՝ որ յառաջին ժամանակն կային, աստուածպաշտութեամբ եւ իմաստութեամբ եւ արդարութեամբ անցոյց զանցոյց զնորօք:

Սոյն իսկ ճառս յայտ առնիցէ քեզ եւ զպատճառս զարմանալի յաջողութեանց Մահոմետայ եւ նորին պայազատաց. զայսմ հարստութենէ՝ որ երկերիւր ամօք կանխադոյն քան զԱարողոս մեծ սկիզբն առ, մարթ էր աստէն ի ամին ճառիս խօսել, այլ համարեցայ այսպէս՝ թէ առաւել լաւ էր զսկիզբն նորա եւ զնուազել ցուցանել քեզ ի միտմ կարդի:

Այդ այսու հետեւ չեք ինչ՝ զոր ասիցեմ՝ վասն առաջին գրոց տիեզերական պատմութեանն. զամենայն՝ որ ինչ ծածուկ իցէ ի նմա, զայն դու ի մէջ ածցես, եւ ի քեզ միայն ապաստան իցէ միտ եղեալ նայել համօրէն կարգի կրօնիցն, եւ մեծամեծ պետութեանց մինչեւ ցլաւորոս մեծ:

Եւ իրրեւ տեսանիցես՝ զի գրեթէ ամենայն հարստութիւնք յանձանց կործանիցին, եւ նշմարիցես զկրօնսն՝ որ իւրով զօրութեամբ հաստատեալ կան, առնուցուս զիւրաւ ի միտ՝ եթէ զինչ ճշմարիտ փառաւորութիւնն իցէ, եւ յո պարտ իցէ առն իմաստնոյ դնել զյոյս իւր:

¹⁾ ՊԵՏՈՒ. ԸՂԻ. Բ. 3: ²⁾ ԿՊՅՆ. Զ. 3: ³⁾ ԱՊՊ. Սկիզ. Ս՝ատե: ⁴⁾ ՍԿ. ՊԵՏՈՒ. Բ. 3: ⁵⁾ ՊՈՂՈՒՐ. Զ. 1. եւ որ ի կարգին. 41. եւ որ այլն եւս մի ըստ միջէ: ⁶⁾ Ս՝ան Բաղար. Ե. 4: ⁷⁾ Ը. ՏԻՄ. Զ. 15:



սի գործս վիպագրեն : Արողոտոս երիս իմն օրինակս նորա պատմութեան յայտ առնէ , թող զայն՝ զորոյ ինքն զհետ դնաց՝, եւ չասէ ինչ թէ այն՝ զորոյ ինքն դնաց զհետ , գրեալ իցէ ի մասնագրաց ոմանց՝ որք քան զայսն առաւել հին իցեն կամ ընդունելի : Աւ ինքն իսկ յայտ առնէ՝ թէ Աիւրոսի մահն պէսպէս եւ այլադունակ պատմի , եւ թէ որ առաւել ճշմարտութեան թուէր , զայն ընտրեաց , եւ աւելի ինչ զայն չգործէ հաւատարիս : Վսենտիոն՝ որ ի Պարսս էր , ի սպասու մանկան Աիւրոսի եղբօր Արտաշեսի՝ որ Աւշեղն կոչէր , կարաց անդէն տեղեկանալ կենաց եւ մահու Աիւրոսի առաջնոյ ի դիւանին Պարսից եւ յաշխարհին աւանդութեանէ . արդ թէպէտ եւ սակաւ ինչ որ տեղեակ իցէ հնոց ինչ իրաց , չկարէ երկմտել թէ արժան է , հանդերձ սրբով Արոնիմոսիւ , զՎսենտիոն ըզփիղխոսիոսն իմաստուն եւ զգօրավար քաջ , նախամեծար առնել քան զԱտեսիաս վիպագիր՝ որ բազում ինչ . է- որ է կարգին :

35. 30. Արողոտոս , թինչ- ցայն լայր՝ զէ ասէ Պարձեալ , թ-ո օրինակն Արողոտոս զատանէ զժամանակ ազատութեան նոցա ի ժամանակէ առաջնոյ թագաւորի նոցա Վիտիայ , եւ որպէս քաջք ի ժամանակագրաց կարծեն , իբրեւ քառասուն ամաց անջրպետութիւն է ի մէջ երկուց ժամանակացն :
39. 36. Յեօ Անուանս ունէին , թ-ո օրինակն յա-եւո- Սասն որոյ չէ ինչ երկմտութեան , թէ մարթի՛ կթէ Վարեհ Մար իցէ մի ոմն յայնցանէ՝ որ կոչեցին Արշաւիր կամ Ախաքսարէս . եւ ամենայն ինչ պաշաճ՝ ցուցանէ զմի յանուանց աստի նմա տալ :
40. 2. Փոխանակ Սարակոսն՝ Սենեքերիբ է , այլովն հանդերձ , թինչ- Սարթ է , թ-ոն այսպէս Այս անունն ի Վարոյէ է , որ մի էր ի դիցն՝ որոց բարեզացիքն երկիր պագանէին , եւ խառնէին ի թաղաւորացն անուանս ազգի ազգի օրինակաւ : Սարակոսն՝ Սենեքերիբ է , Աղիասն՝ Աղարիաս ,

Սեղեկիսան՝ Սաթանիս, Յովաքացն՝ Սեղղում
 եւս կոչէր. թուի թէ Սուսն կամ Սովա՝ Սա-
 րակոն արքայ եթւովպացւոց է. իսկ Շտորան՝
 զոր անխտիր Նասարադոն կամ Շտորադոն եւս
 անուանեն, ի քութացւոցն Ասենափար յոր-
 ջորջի. կարծի՝ թէ Սարգանսպաղղոսն նոյն է,
 զոր ոմանք ի պատմադրաց Սարակն անուանե-
 ցին. եւ նորանչան իմն անուամբ՝ զորոյ սկիզբն
 չմարթի ումք դտանել, ի Յունաց Թոննոս
 Աոնկողերոս կոչի: Յոռաջադոյն ասացաք թէ
 Սարգանսպաղղոսն թուի՝ թէ Սարգան՝ Փուղայ
 կամ Պուղայ որդի իցէ: Այլ⁶ գիտէ թերեւս
 Պուղոսն կամ Փուղոս՝ զորմէ ճառի ի գրոց սըր-
 րոց պատմութեան³, Փաղսար իցէ: Քանզի եւ
 այս պայման իմն փոփոխելոյ զանուանս էր, կար-
 ճել զնոսս կամ երկայնել կամ յաղղի աղղի կեր-
 պարանս զճայրան շջել, ըստ լեզուացն սովո-
 րութեան: Ասան որոյ Թաղղաթփաղսար,
 այն իսկ է Թաղղաթ՝ Փաղսարայ որդի, մար-
 թի՝ թէ մի ոմն ի Փուղայ որդւոցն իցէ, որ
 քան Վարգանսպաղղոս զեւր եղբայրն ուժգնա-
 դոյն գտեալ, կալեալ իցէ զմասն մի Հարստու-
 թեանն՝ զոր յիւրմէ տանէն յափշտակեցին:

40. 20.

Յէր Յօդուա լինիցի. Եւս օրնուին յաւելո-
 լսակ զնոսս՝ որք զարմանայցեն ընդ անչափ յա-
 ճախութիւն թուոյ ամացն՝ զոր եզփպտացիք
 անձանց գրիցեն, առ Արողոտոս առաքեմ, որ
 Հաստատութեամբ պատմէ, որպէս եւ ասացաք
 իսկ՝ թէ չիք ինչ ստոյգ ի պատմութեան նոցա
 մինչեւ ցՓասամիտիքեայ ժամանակն⁴, այս ինքն՝
 վեց կամ եւթն Հարեւր ամօք կանուխ քան ըզ-
 Վրիստոս: Ապա թէ երկմտեալ ուրուք այսր
 անդր զմիտս Հարկանիցէ վասն այնչափ ձգելոյ
 ասորեստանեաց առաջին Հարստութեան, որ-
 պէս բաղուվք սովոր են Համարել, զմտաւ աճցէ՝
 եթէ Արողոտոս զայն ի Տինդ-Հարեւր եւ քսան
 ամաց ժամանակ փակեաց⁵, եւ թէ մտադեւր
 զնորա զՏեա դնաց Վիոնիսոս աղեկառնայի,

քան զամենայն պատմագիրս խմաստնագոյն, եւ
 Ապոկիսանոս: Այլ որք յետ այսր ամենայնի յան-
 ձուկ արկեալ եւ գրաւեալ ի հասարակաց թիւս
 ամացն, չկարիցեն կարգել ըստ իւրեանց կա-
 մացն զամենայն դէպսն եւ զհամօրէն ամացն հա-
 մար՝ զոր ստոյգն համարին, մարթեն ընդար-
 ձակել եւ անդորրանալ որչափ ինչ նոցա հաճոյ
 թուեսցի, ի թիւս ամաց եւ թանասնիցն թար-
 դմանութեան. զոր եկեղեցի համարձակ թողու-
 նոցա. զի անդէն զեռեղեցեն ըստ անձանց դիւ-
 րին զամենայն թաղաւորան՝ զորս նինուէացւոց
 թաղաւորել ասեն, հանդերձ ամենայն ամօք՝
 զորս նոցա թաղաւորութեանն գումարեն. եւ
 զամենայն հարստութիւնսն եղիպտացւոց, որ-
 պէս զհարդ եւ կամիցին կարգել. եւ զամենայն
 պատմութիւն եւս զճննաց, թէ կամին՝ եւ ա-
 ռանց իսկ միտ դնելոյ, թէ առնիցի լուսաւորա-
 գոյն պատմութիւնն:

49. 35. Փոխանակ Սամարացիք, մեղէն Վրոշմեալ գը-
 տանեմք. Ձեռն օրինակն Ասացի՝ թէ քաղղեացւոց
 նշանագրօք եւ եթ գտանին այժմիկ զիրք առ
 Հրեայս: Այլ ի մեր աւուրս մովսիսեան հինգ
 դպրութիւնք ի մեջ շամրտացւոց գտան հին ե-
 րրայեցի նշանագրօք, որպիսի եւ ի քանդակաց
 զրոշմն եւ ի շերիմն հին ժամանակաց զրոշմեալ
 գտանեմք: Այս հինգ գիրք չեն այլակերպ ի
 Հրէիցն հինգ դպրութեանց, բայց միայն ի
 միում վայրի՝ զոր եղծեալ են վասն հասարա-
 կաց պաշտամանն, վասն որոյ պնդէին շամրտա-
 ցիքն՝ թէ զայն եղ Աստուած ի վերայ Վարի-
 զին լերին մօտ ի Շամրին, եւ Հրեայք պնդէին՝
 թէ յԵրուսաղէմ եգ: Ան գարձեալ ինչ այլա-
 կերպութիւնք, այլ չեն ինչ մեծ: Յայտ իսկ է,
 թէ հարքն առաջինք՝ յորոց միջն եւ Աւսե-
 բիոս եւ սուրբն Արոնիմոս, զայս հին շամրտա-
 ցւոց հինգ գիրս տեսին. եւ յայնմ՝ զոր մեքս
 ունիմք, գտանին ամենայն նշանակք այնորիկ՝
 զորմէ նորայն ճառեցին:

Ան համօրէն ի վերայ հասանելոյ նախնեաց պատմութեան ժողովրդեան Աստուծոյ, պարտ է յայտն վայրի սակաւ բանիւք զչամրտացւոց եւ զհինդ դպրութեանց նոցա պատմութիւն կարգել: Արդ պարտ է յիշել թէ յետ Սողոմոնի՝ եւ առ ի պատիժս պատուհասից անօրէնութեանցնորա, առ Հռորովամաւ նորին որդւով, զատ որոշեաց Յերթովամ զտասն ցեղսն ի թագաւորութենէն Յուդայ, եւ կացոյց զթագաւորութիւնն Իսրայէլը՝ որոյ քաղաք գլխաւոր Շամրին եղեւ:

Թագաւորութիւն Իսրայէլը՝ որ զատեաւն, յայտն հետէ զոհս յերուսաղէմացւոց տաճարին ոչ մատոյց, եւ ի բաց ընկէց զամենայն զիրս՝ որք ի Վաւթայ եւ ի Սողոմոնէ հետէ դրեցան, եւ առ ոչ ինչ համարեցաւ զհրամանս երկոցունց թագաւորացն՝ յորոց մին զտաճարն պատրաստեաց, եւ մեւսն շինեաց եւ արար նաւակատիս:

Հռոմ յերեքհազարերորդի երկերիւրորդի յիսներորդի ամի շինեցաւ. եւ երեսուն եւ երիւք ամօք յետոյ, յերեքհազարերորդ երկերիւրորդ ութսներորդ երրորդ ամի աշխարհի, տասն ցեղքն բաժանեալք ի Վինուէ փոխեցան եւ ի մեջ հեթանոսաց սիռեցան:

Ան Ասորդանաւ արքայիւ ասորեստանեաց, քութացիք առաքեցան՝ երթալ բնակել ի Շամրին: Սոքա յազլաց ասորեստանեաց էին, որք եւ յետոյ շամրտացիք կոչեցան, եւ զԱստուծոյ պաշտօնն ընդ կռոցն պաշտօն խառնեցին, եւ յԱսորդանայ քահանայ իսրայէլացի ընկալան, որ ուսոյց նոցա զպաշտօն Աստուծոյ տեղւոյն, զպահպանութիւն օրինացն Սոլսիսի: Այլ քահանայն զՍոլսիսի զիրսն միայն ետ նոցա, զորս մեծարէին տասն ցեղքն ապստամբեալք. եւ այլ եւս զիրս սուրբս չյաւելուին ի նոսա, վասն պատճառանայ՝ որք յառաջագոյն ասացան:

Այսպէս կրթեալ եւ ուսեալ ժողովրդոցն այնոցիկ պնդեցան կացին յոխու թեանն՝ զոր տասնն ցեղքն ռիացեալ էին ընդ Հրէից . եւ յորժամ Ալուրոս թոյլ ետ Հրէից՝ շինել միւսանգամ գտածարն երուսաղէմացւոց, շամրասցիք որչափ ինչ ձեռնհաս եղեն, խորհրդոց նոցա խափան եղեն⁷. սակայն կեղծաւորէին կամել գործակից շինուածոյն լինել, պատճառանօք՝ եթէ եւ ինքեանք երկիր պագանեն Աստուծոյ Խորայեղի, թէպէտ եւ զպաշտօնն նորա ընդ պաշտօն իւրեանց գիցն սնտուոց խառնէին:

Ի վէզ եկին եւ պնդեցին զանձինս հանապաղ հակառակ կալ խորհրդոց Հրէիցն, յորժամ զքաղաքն իւրեանց միւսանգամ կանգնէին, եւ առաջնորդէր նոցա Աէեմիա, եւ հանապաղ թշնամիք էին ազգքն երկրքին:

Յայսմ վայրի յայտ լինի՝ եթէ ընդէր ընդ Հրէիցն զերբայեցի նշանագիրս ի նորանկար քաղաքացւոց նշանագիրս չփոխեցին: Չունէին ինչ փոյթ ի մօի Հրէիցն նմանել եւ ոչ Ազրի մեծի ուսուցչի նոցա, զի գարշէին ի նոցանէ. վասն այնորիկ իսկ հինգ դպրութիւնք նոցա հին երբայեցւոց նշանագրովք գտան, այնպէս՝ որպէս ասացան:

Աղէքսանդրոս թոյլ ետ նոցա՝ ի Պարիզին տաճար շինել: Մանասէ եղբայր Յազդեայ քահանայապետի Հրէից, որ յանձն առ զշամրտացւոց հերձուածն, հրամանն առ զայն տաճար շինել. եւ թուի իմն՝ եթէ առ նովաւ սկսան թողուլ զպաշտօն գիցն սնտուոց, եւ չլինէին զատ ի Հրէից բայց այնու՝ զի կամէին պաշտօն մատուցանել, ոչ յարուսաղէմ՝ որպէս հրաման տուեալ էր Աստուծոյ, այլ ի լերինն Պարիզին:

Յայսմ վայրի յայտ առնի՝ թէ վասն էր իւրիք իւրեանց հինգ դպրութիւնսն մուծին բան սուտ, յայնմ տեղոջ՝ ուր վասն Պարիզին լերին

ճառիցի. քանզի կամէին իմն յայտ առնել թէ այն լեառն օրհնեալ էր յԱստուծոյ եւ սրբեալ ի պաշտօն նորա, եւ ոչ Արուսաղէմ:

Աւ էր հանապաղ ռիուեթիւն ի մէջ երկուց ազգացն. շամրաացիք պնդէին թէ տաճարն նոցա՝ որ ի Պարիզին էր, ազնուաբոյն քան զԱրուսաղէմացւոց տաճարն է: Աւ յուզեցաւ հակառակուեթիւն առաջի Պողոմեայ Փիղոմեաուրայ արքայի եղխաւացւոց: Հրեայք՝ որք ունէին յայտնի աւանդուեթիւն, յաղթեցին, մինչ զեռ հրապարակաւ դատաստան լինէր⁸:

Շամրաացիք՝ որք ի հալածել Անտիոքայ՝ եւ թագաւորացն Ասորւոց, երթային յարեւին հանապաղ ինոսա, առ հակառակ կաղը Հրէիցն, նուաճեցան ի ձեռն Յովհաննու Հիւրիանեայ որդւոյ Շմաւոնեայ⁹, որ զտաճարն նոցա ի Պարիզին ի հիմանց կործանեաց. այլ չկարաց կարծել վնոսա ի պաշտամանէ անտի՝ զոր մատուցանէին ի լերինն, յորոյ վերայ տաճարն կանգնեալ էր, եւ հաւանեցուցանել զկամակոր ազն երկիր պաղանել յերուսաղէմացւոց տաճարին:

Աւտի եւ ի ժամանակսն Վրիստոսի տեսանեմք՝ զի ի նոյն պաշտօն մեծաւ փութով յաճախէին շամրաացիք, եւ ի Վրիստոսէ դատապարտեցան⁹:

Ժողովուրդս այս հանապաղ եկաց մնաց անդստին յայնց ժամանակաց, յերկուս կամ յերիս վայրս արեւելից: Մի ոմն ի մերոց ճանապարհորդաց եղիտ եւ ծանեաւ զազն, եւ երբր մեզ զօրինակ հնդից դպրութեանց նորա, զորս շամրաացին կոչեն, որոյ այժմիկ նախաւորութիւնն երեւի. եւ առնու զք համօրէն ի միտ զպատճառսն թէ ընդէր այնպէս կայցէ, որպէս տեսանեմքս:

85. 30. Յէր Օկրծանիցին, Գնն յաւելու Օպոդ արժան է զիտել առ չժիթիկոյ յարապնոցն

մատենագրաց, եւ առ ի վերայ հասանելոյ, որչափ ինչ պէտք իցեն, հրէական նախաւորութեանն: Այլ եւս հակառակութիւնք ժամանակագրացն աստ չեն ինչ ամենեւին պիտոյ: Օ՛ի եթէ հարկ իցէ ամօք ինչ կանուխ եւ անագան զՏեառն մերոյ ծնունդն գնել, եւ բզժամանակ կենաց նորա ձգել սակաւ ինչ աւելի կամ պակաս, այն այլակերպութիւն ի չլինելոյ ստոյգ տարեաց աշխարհիս եւ ամացն Վրիստոսի է: Այլ որպիսի ինչ եւ իցէ, եթէ ուշակալ որ իցէ՝ որ ընթեւոնուն, մարթի ի վերայ կալ թէ, այն չէ ինչ վնաս կարգի եւ ոչ կատարման խորհրդոցն Աստուծոյ: Պարտ է ի սխալ համարոյ ժամանակաց՝ որ զկրացն կարգ եղծանէ, խորշել եւ մերժել, իսկ զայլոցն թողուլ զի իմաստունք վիճեցին:

Իսկ զնոցանէ՝ որք կամիցին յարտաքնոցն պատմութիւնս զգարմանալի իրս կենացն Վրիստոսի եւ նորա առաքելոցն դասնել, որոց աշխարհս ոչ կամէր հաւատալ, եւ ձեռն ի դործ արկանէր մեծաւ սաստիկ զօրութեամբ ճակատալ եւ կռուել, իբրեւ ընդ իրաց ինչ՝ որ զնա կշտամբիցեն, այլուր ճառեսցուք՝ եթէ չեն իրաւացեաց այնպիսի բանք: Տեսցուք դարձեալ թէ դասնին յարտաքնոցն մատենագիրս բանք ճշմարիտք, աւելի քան զոր մարթիցի կարծել որք քրիստոնէից օղուտ իցեն. եւ ես յայսմ վայրի եղից օրինակ միայն զնուագութիւն արեգական՝ որ ի Տեառն խաչելութեան եղեւ:

152. 9. Յե՞ր Չիցէ երեւեալ, Բնօ օրինակն յաւելոյ՝ Մարգն կանգուն, զլուխ ի վեր, աչք ընդ երկինս կարկառեալ. եւ այս կազմած՝ որ առանձինն իմն է նմա, յայտ առնէ նմա զծագումն նորա, եւ զտեղին՝ յո պարտիցի ձգել եւ հասանել:
157. 16. Յե՞ր Բանիցն Փոխէ զմեզ, Բնօ օրինակն յաւելոյ՝ Յայանեալ մեզ զհանդերձեալ փրկութիւն մեր անդատին յօրէ՛ յորմէ կորեաքն:

157. 20. Փոփանակ՝ Այցոյց Աւայի մօր մերում, Բնէ-
 Որ յաղթեացն նմա, Բն օրնուին Այցոյց Ա-
 վայի մօր մերում զազգի ազգի կերպարանս ա-
 տելիս, եւ միանգամայն եւ զարդար պատիժս
 թշնամւոյ նորա պարտելոյ: Օձն քան զամե-
 նայն անասունս ատելի լինելոց էր, որպէս դե-
 անիճեալ քան զենաւ արարածս է: Օր օրի-
 նակ օձ ի վերայ պորտոյ իւրոյ սողի, նոյնպէս
 դեւ յիբաւի յերկնից՝ ուր ստեղծեալն էր, կոր-
 ծանեալ, չկարէ այսու հետեւ կանգնել եւ պա-
 տրսպարել: Զողն՝ ուստի ասացաւ օձին թէ
 կերիցէ, զգեանաքարչ զերկրանախանձ խորհր-
 դոցն՝ զորս դեւն ի մեր միտս թելադրեալ ար-
 կանիցէ, յայտ առնէ, նա՛ եւ ինքն իսկ ընդ դե-
 ասին եւ եթ քարչի, քանզի ամենայն իսկ խոր-
 հուրդք նորա մեղք են: Ի հանապազորդն թրչ-
 նամուժենէ մարդկան եւ դիւսց ուսանիմք՝ թէ
 մեր լինելոց է յաղթութիւն, քանզի անդէն
 յայտ լինի զաւակն օրհնեալ՝ որով ջախջախե-
 լոց էր դիւստ այնորիկ՝ որ յաղթեացն, այս ինքն՝
 զի կոխելոց էր ամբարտաւանութիւն նորա, եւ
 յամենայն երկրէ քակելոց իշխանութիւն նորա:

157. 29. Եւ Ի Զողւոյն սրբոյ, Բն օրնուին յաւելու-
 Արդ ի ձեռն աստուածեղէն շառաւեղին, կամ
 ի ձեռն կնոջն՝ որ բխելոցն էր զշառաւեղն, ըստ
 պէսպէս ընթերցուածոյ բանին, լինելոց էր դիւստ
 կորստեան մարդկութեանս, եւ իշխանութիւն
 հանելոց էր յիշխանէ աշխարհիս այսորիկ՝ որ
 յիւրոց անախ ի Քրիստոս ինչ ոչ եզխտ¹⁰:

158. 24. Փոփանակ՝ Աւ նմա ի հարկի կան հրամանաւ ա-
 րարչին, Բն Եւ զի նորօք վարեացի ի փառա-
 ւորութիւն արարչին նոցա:

Եւ ասոյս յաւելու Արար եւ այլ ինչ. եւ
 որպէս թէ ստրջանայցէ՝ զի այնպիսի սաստիկ
 արդարութիւն ի վերայ մարդկութեանս ած,
 խոստացաւ չառաքել այնու հետեւ ջրհեղեղ
 ջուրց ողողանել զամենայն երկիր, եւ չգարչե-
 ցաւ ոչ միայն ընդ մարդկան զայն ուխտ հաս-

տատել, այլ եւ ընդ ամենայն շնչոյ կենդանոց,
 թռչնոց եւ անասնոց եւ ամենայն գազանաց
 երկրի¹¹. զի ցուցցէ՛ թէ տեսչութիւն իւր ի
 վերայ ամենայնի՝ որ ունիցի կենդանութիւն,
 ձգի: Արեւեցաւ յայնժամ ազեղն յերկինս.
 Ընտրեաց Աստուած զգոյնս նորա զհեշտականս՝
 որք երփն երփն հարկանիցեն ազգի ազգի յամե-
 նայն դունակաց, անկեալ ի վերայ ամպոյն՝ որ
 լի իցէ մանաւանդ քաղցրական ցօղոյն քան ա-
 պականիչ անշայեկան անձրեւոյն. զի լինիցի վը-
 կայութիւն յաւիտենական՝ թէ այսու հետեւ
 յորժամ անձրեւածք առաքիցին, չսունիցեն
 բնաջինջ համակորոյս սատակումն: Յայնմ հետէ
 ծիածանն ի տեսիլսն երկնաւորս իրրեւ մի ինչ
 ի մեծամեծ զարգուց աթոռոյն Աստուծոյ ե-
 րեւի¹², եւ անդէն բարձեալ բերէ զնշանակ ու-
 ղորմութեանց նորա:

160. 23. Յայնմ վայրի մեռ օրինակն յաւելոյ՝ Պարթէ հա-
 րեւր ամօք յետոյ քան զՋրհեղեղն, եհար Աս-
 տուած այլով իւիք գաւազանաւ զազգ մարդ-
 կան, լեզուացն բաժանմամբ: Յորժամ ցրուե-
 լոց էր ազգատոհմն՝ Աոյի ընդ ամենայն երկիր
 բնակութեան, զօդ իմն լինէր այն ընկերութեա-
 նրն, եթէ լեզուն՝ յոր առաջինք ի մարդկանէ
 խօսէին, զոր եւ Ադամայ ուսուցեալ էր իւրոց
 որդւոցն, հասարակաց լեզու կայր: Այլ եւ այս՝
 որ մնացեալ էր յառաջին միաբանութենէն, ի
 Քաբեղոնի աշտարակին կորեաւ. կամ զի որ-
 դիքն Ադամայ միշտ թերահաւատք՝ ոչ հաւա-
 տացին հաստատութեամբ խոստացելոց աւե-
 տեացն Աստուծոյ, որ ասացն՝ թէ այսու հե-
 տեւ մի լիցի Ջրհեղեղ ջուրց, եւ պատրաստե-
 ցին անձանց ապաստան ամրութեան հաստա-
 տութեամբն եւ մեծարերձ բարձրութեամբ ամ-
 բարտաւանութեան շինուածոյն. եւ կամ թէ
 չունէին ինչ խորհուրդ ի մտի, բայց զի առնի-
 ցեն անուն յաւիտենից մեծապքանչն կազմուե-
 ծով, մինչ չեւ էին ի միմեանց մեկնեալ, որ-

պէս յարարածոցն գիրս կայ¹³. շնտ թոյլ նոցա
 Աստուած մինչև յամպս հասուցանել, որ-
 պէս ինչ ինքեանք ակն ունէին, եւ ոչ սպառնալ
 իմն երկնից բարձրացուցեալ զմենքննաւոր գոր-
 ծըն. եւ արկ խառնակութիւն ի նոսա, մոռա-
 ցուցեալ նոցա զառաջին խօսան իւրեանց: Արդ՝
 անդ սկիզբն եղև բաժանելոյ նոցա ի միմեանց
 լեզուօք եւ ազգօք: Աշտարակին անուն Բարե-
 դոն կոչեցաւ, որ խառնակութիւն յայտ առնէ,
 ի վկայութիւն անկարգութեանն, զի լինիցի
 յիշատակարան յաւիտենից մարդկան, թէ ամ
 բարտաւանութիւն երկպառակութեան եւ խռ-
 վութեան մարդկան աղբեր է:

169. 6. Յէր Խարայէղ անուն եգ, մէս օրհնաին յաւելո-
 Վախամեծարն լինել Յակովբայ յայտ եղև յե-
 բեւելի օրհնութենէն՝ զոր օրհնեցաւ յաահա-
 կայ, զի կերպարանօք՝ պատրանք էին իրքն, այլ
 արդեամբք՝ յայտնապէս Աստուծոյ անսշութեա-
 նըն կարգ: Այս գործ մարգարէական եւ խոր-
 ճրդական պատրաստեալ էր ի ձեռն պատաս-
 խանւոյ, ի ժամանակէ՝ յորում Ռերեկա մայր
 Ասաւայ եւ Յակովբայ կրէր զերկոսեան զնո-
 սա յարգանդին: Քանզի կինն աստուածապաշտ
 խռովեալ ի կռուելոյ որդւոցն իւրոց յարգան-
 դին իւրում, եհարց զԱստուած եւ ընկալաւ
 ի նմանէ պատասխանի՝ եթէ Արկու ազգք են
 յարգանդի քում, եւ երէցն կրտսերոյն ծա-
 ոայեացէ: Առ ի գլուխ կլանելոյ հրամանին,
 առեալ էր Յակովբայ՝ յեղբօրէն իւրմէ զան-
 դրանկութիւն նորա հանդերձ երգմամբ¹⁴. եւ
 Խաահակ յորժամ օրհնեացն զնա՝ աւելի ինչ ոչ
 արար, բայց միայն զի կացոյց զնա ի ժառան-
 գութիւն այնր՝ զոր Աստուծոյ իսկ շնորհեալ
 էր նմա: Վախամեծար լինել իսրայէլացւոյ
 որդւոցն Յակովբայ քան զեղովմայեցիս որդիս
 Ասաւայ, յառաջագոյն պատմեցաւ գործովն
 այնուիկ, որ եւ յայտ առնէ զառ յապա նա-
 խամեծար լինել հեթանոսացն՝ նորոգ յուխան

կոչեցելոց ի ձեռն Հիսուսի Վրիսաօսի, առաւել
քան զառաջին ժողովուրդն :

182. 27. Փոխանակ Սինեւ ցՕծեայն, Բնուլ- ցայն վայր՝
զէ առէ Ի ժամանակս Օծեայն, Բնուլ օրինակն
Վրիսաօս միայն էր՝ որ ժողովելոց էր ժողովուրդ
նոր, որում եւ ասացն իսկ՝ եթէ Պատուիրանն
նոր ասմ ձեզ¹⁵. եւ դարձեալ Նթէ սիրէք զիս,
զպատուիրանս իմ պահեսջիք¹⁶. եւ դարձեալ
եւս յայտնադոյն, Ասացաւ առաջնոցն՝ թէ մի
սպանանիցես. եւ ես ասեմ ձեզ¹⁷. եւ այլն եւս
մի ըստ միոջէ, ըստ նմին օրինակի եւ ըստ նմին
իշխանութեան :

Ահաւասիկ մարգարէս նոր իրրեւ զՄով-
սէս, եւ օրէնագիր նորոց օրինաց, զորմէ եւ
Մովսէս ասաց պատմելով զգալուստ նորա.
Նմա, ասէ, լուիջիք¹⁸. եւ առ կատարելոյ զա-
ւետինն, իրրեւ առաքեաց Աստուած զԱրդին
իւր, ինքն ի վերուստ իրրեւ զձայն որոտման
աստուածապէս բարբառ արձակեալ ասէ. Վա
է որդի իմ սիրելի՛ ընդ որ հաճեցաց, զմա
լուարուք¹⁹ :

Նոյն մարգարէ էր եւ նոյն Վրիսաօս, զոր
Մովսէս կերպարանեաց յօձն պղնձի՛ զոր կան-
գնեաց յանապատին : Հարուածք օձին առա-
ջնոյ, որք սփռեցին ընդ ամենայն մարդկութիւ-
նրս զթոյնսն՝ որով ամենեքին կորեաք, բժշկե-
լոց էին ընդ նա հայելով. այս ինքն՝ ի նա հա-
ւատարմով, որպէս եւ ինքն իսկ գնոյն մեկնէ :
Այլ զե՞ է յայտմ վայրի միայն զօձն պղնձի ի
մէջ բերել : Ամենայն օրէնք Մովսիսի, բոլոր
ողջակէզք պատարագաց, քահանայապետն՝ զոր
կացոյց նա հանդերձ այնչափ խորհրդական սպա-
սուքն, եւ մտանելն նորա ի սրբութիւն սրբու-
թեանց, եւ ամենեւին իսկ ամենայն կարգք
նուիրականք հրէական պաշտամանն՝ ուր ամե-
նայն ինչ արեամբն սրբէր, եւ գառնն իսկ՝ զոր
ի գլխաւոր տօնին զենուին, այս ինքն՝ ի զատ-
կի պատեքատօնին, ի յիշատակ զերժանելոյ ժո-

ղովրդեանն, այն ամենայն ոչ ինչ այլ ինչ առնէր յայտ, բայց զՎրիստոս՝ որ ապրեցոյցն իւրով արեամբ զամենայն ժողովուրդն Աստուծոյ:

Սինչեւ ցգալուստն նորա, ընթեռնչոց էր Մովսէս ի ժողովուրդան իբրեւ մի միայն օրէնսդիր: Ս ասն որոյ տեսանեմք՝ զի մինչեւ ցգալուստն նորա ժողովուրդն, է- ուր այլն է- ու:

185. 32. Աստուծոյ օրէնսին յառնելու- Ամենայն մարգարէք՝ որք եղեն յետ նորա յօրէնսն յառաջինս, եւ ամենեքին՝ որք զնուիրական մատեանսն զբեցին, պարծանս համարեցան նորա աշակերտ լինել: Վանդի տիրաբար խօսի. եւ երեւի ի գիրսն նորա ամենեւին ուրոյն նշանակ ինչ, եւ առաջին բուն նկարագիր՝ զոր չէք յայլ ինչ գիրս գտանել. անդէն ի դոյզն եւ ի լոկ կերպարանսն շքեղ փառաւորութիւն նշմարի, որում չէ մարթ իմիք հանդոյն գտանել. եւ եթէ ի լսել այլոց մարգարէիցն համարիցի ոք՝ թէ արանց յԱստուծոյ աղեցութենէ բարբառելոց լսիցէ, ապա թուի իմն՝ թէ ինքն իսկ Աստուած անձամբ իցէ, որոյ բանք լսելի լինիցին բարբառոմն եւ զրովքն Մովսիսի:

202. 29. Փոխանակ ինչ նոսա եւ, մինչ- Իսրայէղի, մ- ուր օրէնսին ինչ նոսա եւ ընդ քահանայսն աստուածապաշտ՝ որք պահէին զպահպանութիւնսն՝ զորս առաջինքն նոցա, կարգաւ յԱհարոնէ թողին նոցա: Յամպարշտագոյն թագաւորացն ժամանակս, որպիսի ինչ Աքաղուն էր եւ Մանասէի, Ասայի եւ այլ եւս մարգարէք ոչ ինչ յանդիմանէին զնոսա՝ եթէ չվարին թրիատու թեամբ, որ էր կնիք ուխտին, յորում եւ բովանդակեալ կայր, ըստ Պաւղոսի վարդապետութեանն, ամենայն պահպանութիւն օրինացն: Աւ չէք երբեք զշարաթանս եւ զայլ եւս տօնս բարձեալս ի միջոյ տեսանել. թէպէտ եւ Աքաղ փակեաց ժամանակ ինչ զգուռն տաճարին²⁰, եւ զաղարեցին փոքր ինչ զոհքն, այլ այն բանութիւն էր որ չկարէր փակել զբերանս

այնոցիկ՝ որք օրհնէին եւ խոստովան լինէին յայնապէս անուանն Աստուծոյ. քանզի չեթող Աստուած այնմ բարբառոյ լռել ի միջոյ ժողովրդեան իւրոյ: Աւ յորժամ ձեռն արկ Համան եղծանել զժառանգութիւն Տեառն, եւ փոփոխել զաւետիսն նորա, եւ լռեցուցանել զօրհնութիւնս նորա²¹, շխեն ամենեքեան՝ թէ զինչ գործեաց Աստուած առ ի խափանելոյ զնա: Աւ ոչ պակաս ինչ քան զնոյն յայտնեցաւ զօրութիւն նորա, յորժամ Անտիոքոս յօժարեաց եղծանել զպաշտօնն: Օհնչ ոչ ասացին մարգարէքն ցԱքաղ եւ ցՄանասէ, առ ի լինել պատսպարան ճշմարտութեան կրօնիցն եւ սրբութեան պաշտաման: Առ իրական ընթերցուածն յայտ առնէ, եթէ Բանք տեսանողայն՝ որք խօսեցան ընդ նոսա յանուն Տեառն Աստուծոյ Իսրայէլի, գրեալ են ի զիրս աւուրց թագաւորացն այնոցիկ²²: Աթէ Մանասէ պատկառեցաւ ի բանից անտինոցա եւ սորջացաւ, ապա չէ մարթ երկմտել՝ եթէ վարդապետութիւն նոցա չիցէ զբազումս ի հաւատացելոյ ի հնազանդութեան օրինացն պահեալ, եւ այնպէս բազում եւ զօրագոյնք էին լաւքն՝ զի յորժամ զթագաւորաց յեա մահուն գատաստան լինէր, զթագաւորացն ամպարշտելոյ վճիռ տային՝ թէ չեն արժանի թաղել ի շիրիմս Գաւթի եւ այլոց աստուածապաշտաց՝ որք յառաջ քան զնոսա թագաւորք կացին: Օհ թէպէտ եւ գրեալ է՝ թէ Աքաղ ի քաղաքին Գաւթի թաղեցաւ, այլ յայտ առնէ զիր՝ եթէ Աջ մուծին զնա ի գերեզմանս թագաւորացն²³: Աւ ոչ Մանասէ զերծաւ ի սաստիկ գատաստանէն, թէպէտ եւ ապաշխարեալ եւս էր, զի կայցէ յիշատակարան յաւիտենից՝ եթէ դարչեցան ի դնացից նորա: Աւ զի մի ոք կարծիցէ եթէ բազմութիւն այնոցիկ՝ որք համարձակ յԱստուծոյ սպասն յաճախէին հանդերձ մարգարէիւքն, պակասեալ իցէ յօրինաւոր պայազատութենէ հովուացն ըստ

սովորութեանն կարգելոց, Ազեկիէզ յերկուս
տեղին յայտ առնէ՝²⁴ զքահանայան զեւտացիս
որպէս Սագովկայ՝ որք պահեցին զպահպանու-
թիւն սրբութեանց ի մտորել տանն Իսրայէլի:

215. 7. Մե՞ն օրինակն է՝ զէսնս մարգարէին ի մէջ Բեբէ-
Յուդա, ասէ, ճակատեսցի յԱշրուսարէմ:

215. 35. Մե՞ն օրինակն յառեւը՝ Աւ ճշգիւ իմն են բանք
մարգարէին. Բարձից, ասէ, զերիս հովիւսն,
այս ինքն՝ զերիս իշխանս ի միում ամսեան. եւ
ճանրասցի անձն իմ ի վերայ նոցա, ի վերայ
ժողովրդեան իմոյ, քանզի եւ անձինք նոցա գո-
չէին ի վերայ իմ, եւ չկացին ի պատուիրանս իմ.
Եւ ասեմ, Աչ հովուեցից ձեզ. այսու հետեւ ոչ
առաջնորդեցից ես ձեզ մեծաւ փութով եւ հո-
գարարձութեամբ որպէս միշտն առաջնորդէի,
բարձից թողից զձեզ անձանց ձերոց, եւ ի թը-
շուառութիւն տառապանաց ձերոց, ի միտս երկ-
պատակութեան՝ որ անկանիցի ի ձեզ, եւ ոչ ինչ
այսու հետեւ փոյթ յանձին կալայց զարձուցա-
նել զչարիս՝ որք զայցեն հասանիցեն ձեզ: Ար
մեռանեղոյն է՝ մեռցի, եւ որ սատակեղոյն է՝ սա-
տակեսցի. եւ մնացեալքն կերիցեն իւրաքանչիւր
զմարմինս ընկերի իւրոյ: Տեսանե՞ս որպիսի տա-
ռապանք հասանեղոյ էին ի վերայ Հրէիցն յի-
րաւ ի բրեղոյ յԱստուծոյ. տեսանե՞ս յայտնի բա-
նիւքն զսկիզբն կործանմանն՝ յանկանել երկոյ իշ-
խանացն: Աւ որ առաջիս կայցէ, ցուցանիցէ՝
թէ չէ ինչ պակաս քան զայն յայտնի ի դուռն
կլանել մարգարէութեանն:

220. 28. Մե՞ն օրինակն զէսն մարգարէութեանն ի մէջ Բեբէ-
ասէ Տես եւ զմարգարէին իսկ բանս. Աւ եղի-
ցի յաւուր յայնմիկ բարձցէ Տէր զանուանս կռոյ
յերկրէ, եւ ոչ եւս եղիցի յիշատակ նոցա. եւ
գտուտ մարգարէան եւ զայս պիղծս բարձից յեր-
կրէ: Աւ եղիցի թէ մարգարեանայցէ որ տակա-
ւին, եւ ասացեն ցնա հայր եւ մայր իւր՝ որ
ճնան զնա, մի կեցջիր՝ զի սուտ խօսեցար յա-
նուն Տեսան: Աւ զայլն եւս մարթ է ի բուն

գիրսն տեսանել, զի եւ նոքին գեղեցիկ են եւ
 զօրեղ :

222. 10. Յէր Ի թշնամութենէն, Բ-ն օրինակն յաւելլա-
 Սանաւանդ թէ ոչ երբեք թշնամացաւ ընդ նո-
 սա. այլ հանել եւ եթ կամէր զնոսա ի թագա-
 ւորայն Եսորոց յիւրոց թշնամեաց :
223. 23. Փոխանակ Սեծամեծ չարիք ի վերայ ամենայն
 ազգին հասանելին, Բ-ն Սեծամեծ չարիք ի
 վերայ ամենայն ազգին եւ քաղաքին սրբոյ հա-
 սանելին : Յայնժամ ի գլուխ ել այն՝ զորմէ ա-
 սացաք եթէ յառաջագոյն պատմեաց Չարա-
 րիա²⁵, թէ Յուդա ճակատեսցի յԱրուսաղէմ.
 եւ մատնեցաւ քաղաքն ի քաղաքացեաց անախ :
225. 35. Յէր Վրիստոսի, Բ-ն յաւելլա- թմէպէտ եւ
 խորհրդական եւ բարձրագոյն պայմանաւ, քան
 որում ունէին ակն :
226. 7. Փոխանակ Ի ձեռն հրամանին, Բնէ- Ը. սո-
 վաւ, Բ-ն օրինակն շրէական պաշտօնն մեծաւ
 փառաւորութեամբ պայծառացաւ, եւ ընկալաւ
 նշանակ նոր Եստուծոյ պաշտպանութեանն : Ե-
 րուսաղէմ պաշարեալ եւ ի նեղ հասեալ յԱն-
 տիոքայ սիզէպլոյ արքայէ Եսորոց, սքանչելի
 օրինակաւ ապրեցաւ ի պաշարմանէն : Օտաւ-
 ջինն թագաւորն ի դուր զարձաւ իրրեւ ետես
 զազգն՝ զի սովոյն սրայր, եւ առաւել ընդ պաշ-
 տօնն քան ընդ իւր վիշտս վարանէր, եւ շնորհս
 արարեալ նոցա ցածոյց զպատերազմն զեւթն օր
 վասն սրբոյ շարաթուն տօնի տաղաւարահա-
 րացն²⁵ : Եւ ոչ միայն ճնեղեաց ինչ զպաշարեալսն
 ի ժամանակին յայնմիկ, այլ եւ արքունական
 առատութեամբ ողջակէզս պատարագաց յղէր
 զենուլ ի տաճարին նոցա, եւ չառնէր ինչ փոյթ՝
 թէ այն նոցա յանհարին կարօտութեանն պա-
 արաստութիւն եւս ռոճկաց լինիցի : Բստ ժա-
 մանակագրացն տեղեկութեամբ յայտ առնելոյ²⁷,
 շրեայք գեռ եւս պահեալ էին զամն շարա-
 թուն կամ հանգստեան, այս ինքն զամն եւ-
 թնկրորդ՝ յորում ոչ դք սերմանն լոց էր, եւ հանդ-

չելոց էր երկիր ի հանապազորդ վաստակոց իւրոց, որպէս ասէ Սոփսէս²³ : Ամենայն ինչ նուազեալ էր ի հրէաստանի, եւ ձեռնհաս էր արքայն Ասորւոց հասանել եւ միանդամայն սատակել զհամօրէն ազն՝ զորնմա հանապազորդ թշնամի եւ ապստամբ կարծեցուցանէին : Իսկ Աստուած առ ապրեցուցանելոյ զորդեակս իւր յանհրաժեշտ կորսանէն, ոչ որպէս երբեմն, առաքեաց զհրեշտակս իւր սատակիչս, այլ որ նոյնպէս զարմանալի է, թէպէտ եւ այլով իւրիք օրինակաւ, զսիրտ թագաւորին ի գութ դարձոյց . զի զարմացեալ թագաւորին ընդ աստուածպաշտութիւն իարայէղացւոցն՝ զորս ոչ ինչ տաղնապ խոտորեցոյց ի դժուարին պահպանութենէ օրինացն, շնորհեաց նոցա կեանս եւ խաղաղութիւն : Սարգարէքն յառաջագոյն պատմեցին՝ թէ ոչ սքանչելեօք ինչ հանգոյն առաջնոց ժամանակացն ապրեցուցէ զժողովուրդ իւր Աստուած, այլ առաջնորդութեամբ քաղցրագոյն տեսչութեանն, որ ոչ ինչ նուազագոյն քան զնա դործ դործէր, եւ ընդ երկարն լինելով՝ զննելի եւ երեւելի լինէր : Ի ձեռն այնպիսի տեսչութեանն Աստուծոյ, Յովհաննէս Հիւրկանոս՝ որ արութեամբ քաջութեամբ անուանի լեալ էր ի զօրսն Անտիոքայ, յետ թագաւորին մեռանելոյ միւսանդամ զիւրոյ աշխարհին տէրութիւն առ :

227. 34. Փոխանակ Յայսմ վայրի, Բնիկ- Սարգարէութիւնք, Բն օրինակն Այլ զոր ասացիդ, շատ է առ հաւանել եւ յանձն առնուլ զերեւելի մարդարէութիւնն՝ որք մերոց հաւատոցս հիմն են . որչափ ի խորս ոք նոցա մատիցէ, գոյնչափ ճշմարիտ միտս ի նոսա դտանիցէ : Աւ մարդարէութիւնք, Է- որ է կարգին :

267. 31. Սեռն յաւելու Սինչեւ ցկատարած աշխարհի, եւ որչափ հաճոյ թուեսցի Աստուծոյ՝ զի կայցէ յետ զարմանալի իրացն ի դլուխ երանելոյ :

339. 25. Յեք Պահէր, Բն օրինակն յաւելու Օդր եւ այժմ՝ առանց եղծանելոյ ընդ ամենայն երկիր կրէ :

Յետ այսր ամենայնի պարտ ինչ իցի, արդեւք հաւատալ անհեղեղ առասպելաց արտաքնոյն մատենագրաց, զորս վասն սկզբան այնպիսի ասնուական եւ հին ազգին տողեն: Յառաջագոյն իսկ յայտ արարաք²⁰ եթէ պատմութիւնն ծննդեան ազգին եւ պետութեան անդ վախճանեցաւ, ուր յունական պատմութիւնն սկիզբն առնէ. մինչ զի չեք ինչ ակն ունել ի նոցանէ առ լուսաւորագոյն իմանալոյ զերբայեցւոց իրս: Ղշմարտիւ իսկ Հրեայք եւ պաշտօնն նոցա չէր ինչ ծանօթ Յունաց, մինչեւ նոցա գիրք սուրբք ի յոյն լեզու թարգմանեցան, եւ ինքեանք իսկ Հրեայք ի յունական քաղաքսն սիռեցան, երկերիւր կամ երեքհարեւր ամօք կանխագոյն քան զՔրիստոս: Այնչափ չգիտէին յայնժամ զԱստուած հեթանոսք, զի եւ քաջ մատենագիրքն նոցա չկարէին հասու լինել՝ թէ որում Աստուծոյ երկիր պաղանիցեն Հրեայք: Արդարակորովքն ի նոցանէ համարեցան՝ թէ նոցա Աստուած ամպք եւ երկինք իցեն, քանզի ըստէպ ստէպ ընդ երկինս հայէին, իբրեւ ի տեղի ինչ՝ որ բարձրաբարբառագոյնս զԱստուծոյ ամենալօր զօրութիւնն յայտ առնէր, եւ անդէն հաստատեալ էր Աստուծոյ զաթոռ իւր: Ղարձեալ՝ Հրէիցն պաշտօնն այնչափ օտար էր եւ հակառակ այլոց ամենեցուն պաշտամանց, եւ օրէնք եւ շաբաթք եւ ասոնք տարեկանաց եւ ամենայն բարք ազգին այնչափ առանձինն, զի վաղվազակի նոքին՝ յորոց միջի բնակեալ էին, նախանձէին եւ ռխանային ընդ նոսա: Հայէին ընդ նոսա իբրեւ ընդ ազգ մի՝ որ զայլ ամենայն ազգս խտտիցէ: Ղանզի հրաման էր նոցա ընդ հեթանոսս ոչ խառնակել ի բաղում իրս, այնչափ ատելի լինէին, որչափ արհամարհ իմն թուէին: Ղասն միաբանութեանն՝ զոր տեսանէին ի նոսա, եւ կցորդութեանն՝ զոր ամենեքին փութով յօժարութեամբ ունէին ընդ գլխոյ պաշտամանն իւրեանց, այս ինքն ընդ Արուսազէ-

զիրաց ինչ՝ որ ծանօթ ամենայն մարդկան իցեն
 եւ ամենայն մարդիկ ի ձեռս ունիցին: Աշխէի՞ն
 ինչ ըստ այնմ գոծնս տարեկանացն եւ զգոհան
 եւ զտոբրութիւնս եւ զձեւ սեղանոյն շինելոյ,
 եւ զամուսնութիւնս եւ զքաղաքի յօրինուածս
 եւ ամենեւին զամենայն կարգել, ասելով ստէս
 ստէս՝ թէ ամենայն լինէր ըստ գրեւոյն յօրէնսն
 Մովսիսի առնն Աստուծոյ³⁰:

Անգէն անուանի Ազրա՝ պատմիչ օրինացն՝
 զոր ետ Աստուած Իսրայէղի ի ձեռն Մովսիսի.
 եւ Աբտաշէս հրաման ետ նմա ըստ այնմ օրի-
 նաց, իբրեւ ուղիղ կարգաւ իւրք՝ զոր ունէր,
 շքել եւ կարգել եւ յարգարել զամենայն իրս
 ժողովրդեանն: Ուստի յայտ է՝ թէ եւ հեթա-
 նոսք իսկ գիտէին զօրէնսն Մովսիսի իբրեւ օրէ-
 նրս՝ զոր ամենայն ժողովուրդն եւ ամենայն ու-
 սուցիչք նորա յամենայն ժամանակի իւրեանց
 կանոն համարէին: Ըստ քաղաքի քաղաքի քա-
 հանայք եւ զեւտացիք բաշխեցան, սպասքն նո-
 ցա եւ կարգն ըստ գրեւոյն յօրէնսն Մովսիսի
 յարգարեցան: Սորջացաւ ժողովուրդն, այլ
 ընդ այն սորջացաւ՝ զի ըստ օրէնսն այնոսիկ ան-
 ցեալ էր. նորոգեաց զուխտն ընդ Աստուծոյ եւ
 իւրաքանչիւր ոք արկ ձեռնադիր, այլ ի վերայ
 հաստատութեան նորին օրինաց, վասն այնորիկ
 իսկ եւ օրէնքն ընթեռնուին յառաւօտէ յոր-
 ժամ ծագէր արեգակն մինչեւ ցօր հասարակ ա-
 ռաջի արանց եւ կանանց. եւ իմանային ամենե-
 քեան եւ զնէին ունին ամենայն ժողովուրդն.
 որպէս թէ այն իսկ իցեն օրէնք հարցն իւրեանց.
 արք եւ կանայք իմանային յընթեռնուին, եւ
 հրամանքն՝ զոր ի մանկութենէ ուսեալ էին,
 յուշ լինէր նոցա: Արժի երեսօք Ազրա տայր ըն-
 թեռնուլ ողջոյն ժողովրդեան միոջ մեծի, իբրեւ
 ծանօթ ինչ զգիրսն՝ զոր ինքն կցկցէր, կամ ըստ
 իւրում կարծեաց փոփոխէր, առանց ուրուք նըշ-
 մարելոյ ի նմա սակաւ ինչ մոլորութիւն կամ փո-
 փոխումն: Ամենայն պատմութիւնք յաւիտեան-

ցրն անցելոց երկրորդէին, յարարածոց զբոց մինչև ցայն ժամանակն: Ժողովուրդն՝ որ բազում անգամ ընկեցեալ էր զուծ օրինացն, առ զանհարին բեռնն՝ առանց դժկամակ լինելոյ եւ ընդդէմ դառնալոյ, հաւանեալ արդեանց փորձիւ՝ թէ վասն արհամարհելոյ նոցա զօրէնան, եկին հասին ամենայն չարիքն՝ յորս չարաբեալս տեսանէին զանձինս: Աշխբ եւ տոկոսիք եւ շարիատք կարճեցան ըստ օրինացն ընթերցուածոյ, եւ զբանս իսկ զօրինացն ի մէջ բերէին. ամուսնութիւնք՝ որ դաշամբք հաստատեալ էին, քակեցան, առանց ուրուք բողոք հարկանելոյ: Աթէ կորուսեալ ինչ էին օրէնք կամ մոռացեալ, զհարգ ամենայն ժողովուրդն բնութեամբ ըստ այնմ օրինաց գործէր, որպէս թէ հանապազ մօտ ունիցի զօրէնան: Օխորդ է՝ զի ժողովուրդն ամենայն լսէր Անդեայ, եւ Օքարիայ, եւ Մաղաքիայ՝ որք մարդարեանային յայնժամ, որք իբրեւ զայլ մարդարէսն՝ ոչք յառաջ քան զնոսա եղեն, զՄովսէս եւ եթ քարոզէին նոցա եւ զօրէնան Մովսիսի, որպէս պատուիրեաց նմա Աստուած ի Վարէք³¹. եւ զայն իբրեւ զճանօթ ինչ, եւ յամենայն ժամանակի հաստատուն յազգի անդ: Այլ զխորդ ասի, եւ որ է կարգին:

356. 4.

Յետ ասելոյ Սի գիրք լինին, մեռ օրէնսին յառեւում մե ողջ գլուխ՝ զորմէ եւ է յառաջաբանին որոյն ազր ասել, ինչ մէ է յայնցանէ՝ որք յետ մահոան Ռոսո-Երայ գրան որեւ գրեալ է նման է ի քարոզի:

Այս ամենայն յայտնադոյն լինիցի թէ մտադիւրութեամբ որ ուշ եղեալ նայիցի ընդ նոսա: Այլ քանզի ամենայն միտք չեն նոյնպէս բաւական կարգաւ ածել զմտաւ, զձեռանէ առնեալ զտկարացն ածցուք մեզմով առ սակաւ սակաւ ի սկիզբնն:

Աստի ածցեն զմտաւ զքրիստոնէից կարգս, եւ անտի՝ զչրէիցն. զնոցին աղբեւրն խնդրեացեն, սկսեալ ի մերոց աստի՝ որք ընտանեգոյնք

իցեն նոցա, եւ միտ եղեալ նայեսցին ընդ օրէնս՝ որք վասն մերոց վարուց եւ զնացից իցեն. հայեսցին ընդ մեր գիրս, այս ինքն՝ ընդ շորս առատարանսն, ընդ դործս առաքելոցն. ընդ թուղթրս առաքելականս, եւ ընդ յայանութիւնն. ընդ խորհուրդս մեր, ընդ զնուումն, ընդ պատանն. եւ ի մէջ խորհրդոցն, ընդ մկրտութիւնն՝ յորում տեսանիցեն զարբել առն քրիստոնէի կոչելով յայանապէս զՆորորդութիւնն. ընդ խորհուրդն գոհութեան՝ որ առ յիշատակի մահուն Վրիստոսի, եւ քաւութեան մեղաց՝ որ ի նմայն հաստատեալ է, եղաւ. յայսր ամենայնի վերայ յաւելցեն եւ զեկեղեցական առաջնորդութիւնն, զմիաբանութիւն եկեղեցւոյ Վրիստոսի առ հասարակ, զառանձինն եկեղեցիս, զեպիսկոպոսս, զերիցունս, զսարկաւազունս՝ որք կարգեալ են առաջնորդել եկեղեցեացն: Ապաքէն է ինչ սկիզբն այնպիսի նոր եւ չքնաղ եւ համաշխարհական իրաց: Այլ զնչ սկիզբն որ այնոցիկ համարիցի, թէ ոչ զՎրիստոս եւ զնորին աշակերտս. քանզի ընդ աստիճանս ելեալ ուրուք յազգէ յազգ, կամ թէ յամէ յամ, անդէն դտանէ զնոսս եւ ոչ եւս վերադոյն, եւ տեսանէ՝ թէ անդ սկիզբն առնուն ոչ միայն այն կարգք, այլ եւ քրիստոնէութեանն անուն: Աւնիմք մկրտութիւն եւ խորհուրդ գոհութեան, հանդերձ ամենայն հանդամանօք՝ զոր ասացաք, այլ այնր ամենայնի առաջնորդ Վրիստոս է: Նա է՝ որ եթող աշակերտաց իւրոց զայս նկարագիրս հաւատոցն նոցա, զյիշատակս գործոցն իւրոց, զգործիսն շնորհաց: Մեր գիրք սուրբք ի ժամանակէ առաքելոցն սիռեալ են, ոչ կանխագոյն եւ ոչ անագան. յանձինս իսկ նոցա գտանեմք զեպիսկոպոսութեանն սկիզբն: Ապա եթէ ի մերոց եպիսկոպոսաց միջի իցէ մի որ յառաջակաց, նոյնպէս եւ ի մէջ առաքելոցն է ինչ գահերէց գլխաւորութիւն. եւ որ յառաջակացն է ի մերում միջի, համարեալ է անդստին

ի սկզբանէ քրիստոնէութեան, թէ նա պայազատ է այնորիկ՝ որ առ Քրիստոսիւ իսկ յառաջակաց էր, այս ինքն՝ Պետրոսի: Օայս ամենայն համարձակութեամբ ասեմ, նա՛ եւ զվերջինն իսկ, իբրեւ հաստատուն ինչ, քանզի չէ մարթ մտացեաց այնմ հակառակել, որպէս եւ ոչ այլոցն. եւ զիւրին իսկ էր զայն եւ ի նոցունց իսկ ցուցանել, որք առ անգիտութեան կամ հակառակութեան մտօք ոսբիցցին այնմ ընդդէմ դառնալ:

Աւասիկ եկաք հասար ի սկիզբն կարգացն քրիստոնէից: Ան առեալ նովին պայմանաւ եւ ընդ սկիզբն շրէից կարգացն ելանիցեմք: Օոր օրինակ անդ զՔրիստոս դտաք, ոչ ինչ ածեալ ուրուք զմտաւ եւս վերագոյն ելանել. եւ աստ նովին օրինակաւ եւ նովին պատճառանօք ի հարկէ դադարեցուք ի Մովսէս, կամ վերացեալ ելցուք մինչեւ ցսկիզբն՝ զոր եցոյց մեզ Մովսէս:

Շրեայք ունէին իբրեւ զմեզ, եւ ունին իսկ ի մասնէ, զօրէնս իւրեանց եւ զպահպանութիւնս իւրեանց, խորհուրդս եւ զիրս եւ առաջնորդութիւն եւ քահանայապետս եւ քահանայութիւն եւ սպաս տաճարին: Քահանայութիւնն հաստատեալ էր ի տոհմին Ահարոնի եղբոր Մովսիսի: ՅԱհարոնէ եւ յորդոց նորա լինէր ընտրութիւն քահանայական տոհմին. իւրաքանչիւր զիւրեանց ծագումն ճանաչէին, եւ ամենայն յԱհարոնէ կարգէր դայր, մինչեւ չլինել մարթ եւս վերագոյն ելանելոյ: Օստիկն եւ այլ եւս տօնք չկարէին յետնագոյն քան զնա դտանել: Ի գատկին, ամենայն ինչ զգիշերոյն՝ յորում զերծաւ ժողովուրդն ի ծառայութենէ եգիպտացւոց եւ ամենայն իրօք պատրաստ լինէր ելանել, յուշ առնէ: Մոյնպէս պենտակոստէն աւուրցն թուով յիշեցուցանէր զժամանակ օրինացն տալոյ, այս ինքն՝ զյիսներորդ օրն յետ ելանելոյ յԱգիպտոսէ: Աւ նոյն թիւ աւուրց զայն երկու տօնս զատանէր: Խորանք եւ յարկք կանգնեալք

յոստոց կանաչացելոց՝ յորս ի կանուխ ժամանակաց ժողովուրդն ամի ամի եւթն տիւ եւ եւթն գիշեր բնակէր, նմանութիւն էր զքառասուն ամ յանապատին բանակելոյ. եւ չէր ինչ ի մէջ Հրէիցն, ոչ տօն, ոչ խորհուրդ, ոչ սովորութիւն՝ զոր Մովսիսի չէր կացուցեալ կամ հաստատեալ, եւ կամ որ չունիցի զանուն իմն եւ զնշանակ մեծի օրէնսդրին:

Այս պահպանութիւնք օրինաց ոչ ամենեքին հաւասար նախաւորութեամբ են: ԹՎիատութիւնն, եւ հրամանն չուտելոյ զարիւն շնչոյ, եւ շարաթն իսկ կանխագոյն քան զՄովսէս եւ զօրէնսն էին, որպէս յայտ յելից դրոց է³². այլ ժողովուրդն զայն ամենայն ժամանակս դիտէր, եւ Մովսէս ցուցեալ էր: ԹՎիատութիւնն յԱրրահամ ածէր, ի սկիզբն ազգին, յաւեախս ուխտին³³: Հրամանն զարիւն շնչոյ չուտելոյ՝ ի Նոյ եւ ի ջրհեղեղն տանէր³⁴, եւ շրջջրել շարաթուն՝ յարարչութիւնն աշխարհի եւ ցօրն եւթներորդ՝ որ օրհնեցաւն յԱստուծոյ, յորում զմեծ գործն հան ի գլուխ³⁵: Այսպէս ամենայն իրաց մեծամեծաց դիպելոց՝ որք մարթէին լինել ի խրատ հաւատացելոցն, կային յիշատակք ի մէջ Հրէիցն. եւ այս հին պահպանութիւնք խառնեալ ընդ պահպանութիւնս՝ զորս Մովսէս եդ, միացոյց ի ժողովրդեանն Աստուծոյ զամենայն կրօնս յաւիտեանցն անցելոց:

Սնան մի ի պահպանութեանց անտի այժմ՝ չերեւի ի հրէական ազգին: Տաճարն չիք ի միջե, եւ նովաւ հանդերձ լռելոց էին զոհք եւ քահանայութիւն իսկ օրինացն: Չիք գտանել ի միջի նոցա որպիս Ահարոնի, եւ ամենայն տոհմք շփոթեցան: Այլ քանզի այս ամենայն ողջ կայր յորժամ եկն Վրիստոս, եւ զամենայն հաստատութեամբ ի Մովսէս հան, չէր ինչ պիտոյ աւելի ինչ առ հաւանել թէ այսպիսի ինչ հաստատուն անդուստ ի հեռուստ դայ եւ յազգին ծագմանէ:

Այլ գրեացուք՝ թէ չեցէ այնպէս. եւս վերագոյն ելանիցեմք, եւ ընդ ամենայն թիւ ամաց՝ յորս մարթիցի դադարել, անցանիցեմք: Վասն չէ մարթ քան զԱզրաս խոնարհագոյն իջանել. քանզի Վարխատոս յերկրորդում տաճարին յայանեցաւ, եւ տաճարն հաստատութեամբ յԱզրայ ժամանակս շինեցաւ: Օայն գիրս Վարխատոս ի մէջ բերէր, զոր շրէից եղեալ էր յիւրեանց կանոնին. այլ ըստ հաստատուն ազգին հաւանութեան, յԱզրայ ժամանակս փակեցաւ եւ կնքեցաւ կանոնն, առանց յաւելլոյ ինչ յետոյ շրէից. եւ չէք իսկ ոք՝ որ վասն սորին երկմտիցէ: Արդ աստ երկու ինչ թիւք ամաց են, եւ թէ կամիցիս՝ ժամանակս անուանեալն, որ երեւելի են վասն պատմութեանն նոցա, եւ մանաւանդ վասն գրոցն պատմութեան: Այլ մեզ քան զարեգական լոյս եւս պայծառագոյն երեւեցաւ՝ թէ չէր հնար անդէն դադարել, քանզի եւ ի նմին իսկ ամենայն առ այլ իմն սկիզբն հայի: Ամենայն ուրեք Մովսէս անուանի իրրեւ զայր մի՝ որոյ մատեանք պատուեալք յամենայն ժողովողենէ եւ ի համօրէն մարգարէից, յայնցանէ՝ որք յայնժամն էին, եւ որք յառաջ քան զնոսա լեալ էին, միայն հաստատութիւն էին հրէական պաշտամանն: Սի հայեացուք ընդ մարգարէան այնոսիկ իրրեւ ընդ արս յԱստուծոյ ազգեցութենէ բարբառեալս. թէ կամիք, մարդիկ եւ եթ իցեն՝ որք յայլ եւ այլ ժամանակս եւ առ այլ եւ այլ թագաւորօք երեւեալ իցեն, եւ լուեալ իցէ նոցա ժողովուրդն իրրեւ պաշտամանն մեկնչաց. միայն նոցին պայազատութիւն, խառն ընդ պայազատութեան թագաւորացն՝ որոց պատմութիւն հանդերձ նոցա պատմութեամբն դրոշմեալ կայ, յայանապէս զմեզ ի Մովսէս ասիցէ: Մաղաքիա եւ Ընդէոս եւ Օւքարիա եւ Ազրա՝ որք զօրէնն Մովսիսի հաստատեալ իմն յամենայն ժամանակս համարին, մօտ ի Վանիէզի

ժամանակս էին, յորս լուսաւորագոյն երեւի թէ նոյն օրինակ ծանօթ էին օրէնք: Ղանիէզ մօտ է Ղըրեմիա եւ Ղըզեկիէզ՝ յորս չեք այլ ինչ տեսանել, բայց զՄովսէս եւ զուխան՝ որ առ նովաւ եղեւ, զհրամանսն՝ զորս պատուիրեաց, եւ զպառնալիսն եւ զպատիժս՝ որոց անցանիցեն զպատուիրանօքն³⁶. ամենեքին զօրինացն ճառեն, որպէս թէ ի մանկութենէ իսկ իւրեանց ճաշակեալ իցեն. եւ ոչ միայն իրրեւրնդունելի զայն ի մէջ բերեն, այլ եւ ոչ գործինչ գործեն, եւ ոչ բան ինչ խօսին որ ընդ օրինացն չունիցի ծածուկ համեմատութիւն:

Արեմիա ի հովսիայ արքայի ժամանակս ածէ զմեզ, առ որով ինքն սկսաւ մարգարեանալ: Ապա օրէնքն Մովսիսի ծանօթ եւ երեւելի էին յայնժամ, որպէս զգիրս այսր մարգարէի՝ զորս ամենայն ժողովուրդն իւրովք իսկ աչօք ընթեռնոյր, եւ իրրեւ զկանխախօսութիւնս նորա՝ զորս իւրաքանչիւր զք իւրովք ականջօք լսէր: Ղանգի իւր իսկ զովէր ի պատմութեան գրոց սրբոց այնր թագաւորի աստուածպաշտութիւնն, թէ ոչ՝ վասն զի քակեաց ի մանկութենէ իսկ զամենայն մեհեանս եւ զբազինս՝ զորս օրէնքն արդելուին, եւ զի արար մեծաւ փութով զտօնս տարեկանացն՝ զորս օրէնք հրամայէին, որպէս զլատիկի տօնն, հանդերձ ամենայն պահպանութեամբքն՝ որք արդ եւս յօրէնսն գրեալ կան ցսիւղորայս ասպատան³⁷. զի զահի հարաւ եւ զողաց հանդերձ ամենայն ժողովրդեամբն իւրով, իրրեւ ետես զյանցանսն՝ զոր ինքեանք եւ հարք իւրեանց յանցեան ընդդէմ օրինայն, եւ հակառակ Աստուծոյ՝ որ այնր առաջնորդն էր³⁸: Այլ չէ պարտ անդէն ի նմին կալ: Ազեկիտաս նորին հաւն արար զատիկ բառ նմին փառաւորութեան, եւ նովին կարգօք, նոյնպէս ի մտի եղեալ զհետ դնալ օրինացն Մովսիսի: Ասայի չգաղարէր ի քարոզելոյ հանդերձ այլովք մարգարէիւքն, ոչ միայն առ Ազե-

կիայ թագաւորութեամբն, այլ եւ բազում ժամանակս առ այլովք թագաւորօք՝ որք յառաջ քան զնա կացին: Ի ձեռն օրինացն այնոցիկ Ազիա հաւ հօրն Ազեկիայ, քանզի բորոտեալ էր, ոչ միայն ի տաճարէն մերժեցաւ, այլ եւ որոշեցաւ ի ժողովրդենէն հանդերձ ամենայն փութով եւ զգուշութեամբ զոր օրէնք դրէին³⁹: Այսպիսի օրինակ երեւելի ի վերայ առն թագաւորի, եւ մեծի թագաւորի, յայտ առնէ՝ թէ օրէնքն կարի մօտաւորք եւ ծանօթք ամենայն ժողովրդեանն էին, եւ անգուստ եւս ի վերուստ եկեալ: Նոյնպէս դիւրին է յԱմասիայ եւ ի Յովսափատայ եւ յԱսայ եւ յԱրիայ եւ ի Ռորովամայ ելանել ի Սողոմոն հայր Ռորովամայ, որ համարձակագոյնս պատուիրէ պահել զօրէնս հարցն իւրոց ասելով յառակսն⁴⁰. Արդեակ պահեա զօրէնս հօր քոյ եւ մի մերժեր զխրատ մօր քոյ: Բնկալ զնոսս յանձին եւ ի գլուխ քո հանապաղ. եւ արկ իբրեւ մանեակ ի պարանոց քո: Յորժամ շրջեցիս, ընդ քեզ տարջիր, եւ ընդ քեզ եղիցի. յորժամ ննջեցես, պահեսցէ զքեզ. եւ յորժամ յառնիցես, խօսակից իցէ քեզ: Օ, ի ճրագ է պատուիրան օրինացն, եւ լոյս, եւ ճանապարհ, յանդիմանութիւն եւ խրատ: Արով զայն եւ եթ՝ զոր Վաւիթ հայր իւր նուագեաց, երկրորդէ⁴¹. Օրէնք Տեառն անրիժ են եւ դարձուցանեն ըզհոգիս. վկայութիւն Տեառն հաւատարիմ, եւ իմաստուն առնէ զտղայս: Արդարութիւն Տեառն ուղիղ է եւ ուրախ առնէ զսիրտս, պատուիրանք Տեառն լոյս են եւ լոյս տան աչաց: Աւ զի՞նչ այլ ինչ իցէ այս ամենայն՝ թէ ոչ երկրորդութիւն եւ կատարումն այնորիկ՝ զոր օրէնք իսկ ասէին⁴²: Աղիցին պատգամքս այսօրիկ՝ զոր ես պատուիրեմ քեզ այսօր, ի սրտի քում եւ յանձին քում, եւ իմացուցես որդւոց քոց. եւ խօսեսցիս սքօք, ի նստել ի տան եւ ի դնալ ի ճանապարհի եւ ի ննջել եւ յառնել: Ա՛

արկցես զսոսս նշան ի ձեռին քում, եւ եղիցի անշարժ առաջի աչաց քոց . եւ դրեցես զնոսս ի վերայ սեմոց ասնց քոց, եւ ի դուռնս քո : Այլ կամին իմն թէ մարթ իցէ օրինաց՝ որք այնպէս ընտանի լինելոց էին եւ ի ձեռս ամենայն մարդկան, ծածուկ եւ անյայտ իմն հասանել, կամ թէ հնար իցէ թէ մոռանայցեն զնա մարդիկն, եւ թէ պատրանք իմն գործեալ իցեն ամենայն ժողովրդեանն, հասանցուցեալ զնա՝ եթէ այս օրէնք են հարցն իւրոց, առանց տեսանելոյ ժողովրդեանն յամենայն ժամանակի յիշատակարանս ինչ ճշմարիտս զօրինացն :

Առդ քանզի եկաք հասար ի Վաւիթ եւ ի Սողոմոն, քան զամենայն ինչ երեւելի գործնոցս, այն՝ որոյ յիշատակ չմարթէ եղճանել, տաճարն էր : Այլ զինչ գործ գործեցին երկու մեծամեծ թագաւորք, յորժամ պատրաստեցին եւ կազմեցին զչքնազ շինուածն . զինչ գործեցին, բայց կատարել զօրէնսն Մովսիսի՝ որք հրաման տային ընտրել վայրս ինչ՝ ուր կատարեսցի սպաս ամենայն ազգին⁶³, եւ մատուցին զօհրն՝ զորս Մովսէս գրեաց, եւ ածցի անգր տապանակն՝ զոր շինեաց յանապատին, ուր ապա մեծ եւս կազմեալ յարդարեցաւ վրան ժամուն՝ զոր ետ շինել Մովսէս, զի իցէ օրինակ հանդերձեալ տաճարին . մինչ զի չեք իսկ մի միայն վայրկեան ժամանակի՝ յորում Մովսէս եւ օրէնք նորա չեցեն կենդանի . եւ աւանդութիւն այնք երեւելի օրէնսգրին ի թագաւորութենէ ի թագաւորութիւն ելանէ, եւ դրեթէ յամէ յամ՝ մինչեւ յօրէնսգրին իսկ գլխովին :

Իոսատովան լիցուք՝ թէ այնպէս յայտնի է աւանդութիւնն Մովսիսի, եւ կարգաւ, զի չեք ինչ ամենեւին կասկած ստութեան ի նմս . եւ թէ ժամանակքն՝ յորս կարդեալ դայ այն աւանդութիւն, այնչափ մօտ միմեանց են, զի չեք սակաւ ինչ անճշտութիւն կամ դատարկութիւն՝ ուր մարթ իցէ զխարէութիւնն զնել : Այլ զինչ

իսկ ասիցեմ խորէութիւն . զայն եւ ածել ան-
 գամ զմտաւ չէր պարտ, թէ եւ կարի տկար ոք
 մտօք էր : Օրինօքն Յովսիսի եւ նորին դրովք
 լի էր ամենայն, եւ վարէր ամենայն, եւ լուսա-
 ւորէր իմն ամենայն : Չիք հնար՝ թէ մոռացեալ
 իցեն զնա մի միայն վայրկեան ժամանակի : Չէ
 ինչ անհաստատագոյն քան զկարծելն, թէ օրի-
 նակն՝ որ դտաւ ի տաճարի անդ ի ձեռն Վեղ-
 կիայ քահանայապետի՝ յութեւտաներորդում
 ամին Յովսիայ եւ ածաւ առաջի թագաւորին,
 այն միայն մնացեալ իցէ յայնժամ : Վանդի ոյր
 արդեւք ծախեալ էր զայլսն : Օչնչ եղեն
 մտտեանքն Ովսեայ եւ Ասայեայ եւ Եմովսայ եւ
 Միքեայ եւ այլոցն՝ որք անդէն յառաջ քան
 զայն ժամանակն գրէին, եւ ամենեցուն նոցա՝
 որք զհետ նոցա գնացին աստուածպաշտու-
 թեանն կրթութեամբ : Աւ ուր ուսաւ Արեմիա
 զգիրս սուրբս, այն՝ որ սկսաւ մարգարեանալ
 յառաջ քան զայն յայանութիւն, եւ յերեք-
 տասաներորդ ամէն Յովսիայ : Սուգ առին եւ
 աշխարհցին մարգարէքն՝ թէ անցանեն ընդ օ-
 րէնան Յովսիսի, այլ ոչ թէ եւ զգիրսն կարու-
 սին : Չիք գրեալ ոչ վասն Աքազու, ոչ վասն
 Մանասէի, ոչ վասն Եմոնայ եւ ոչ վասն ուրուք
 յամպարիշտ թագաւորաց անտի՝ որք յառաջ
 քան զՅովսիա թագաւորեցին, թէ ջանացեալ
 իցեն զգրեանն բառնալ ի միջոյ : Աւ որչափ ամ-
 պարշտութեան էր գործն, գոյնչափ եւ յիմա-
 րութեան եւ անհնարին իրաց, եւ յիշատակ
 այնպիսի գործոյ չնչէր երբեք . եւ եթէ ձեռն
 արկանէին նոքա զաստուածեղէն գիրս բառնալ
 ի միջոյ ի թագաւորութեան Յուդայ, չձգէր
 իշխանութիւն նոցա ի վերայ երկրին թագաւո-
 րութեան Իսրայէլի՝ յորում պահեալ կային
 գիրք աստուածեղէնք : Ապա ուրեմն յայտ է՝
 եթէ այն գիր՝ զոր քահանայապետն ետ տանել
 առ Յովսիա, օրինակ ինչ ուղղագոյն եւ ճշմար-
 տագոյն էր, գրեալ առ առաջին թագաւորօքն

եւ եղեալ ի տաճարին, կամ մանաւանդ թէ
 առանց իսկ խուզելոյ, մատենան Մովսիսի՝ զոր
 հրամանն ետ օրէնսգիրն իմաստուն զնել ի կող-
 մանէ տապանակի ուխտին տեսան Մատուծոյ, զի
 եղիցի անդ ընդ ամենայն ժողովրդեանն ի վկայ-
 ութիւն⁴⁵: Աւ սոյն զիսոզ է բանից պատմու-
 թեանն. Աւ մտեալ, ասէ, ի սուն Տեսան, ե-
 րբ Վեղիկիսա քահանայ գիրս օրինացն Տեսան՝
 որ ի ձեռն Մովսիսի⁴⁶: Այլ որով եւ օրինակա-
 ոք զբանն իմանայցէ, սակայն ճշմարիտ է՝ թէ
 չէր ինչ այնպէս բաւական զաղղն թմբրեալ զար-
 թուցանել, եւ նախանձ արկանել յօժարեցու-
 ցանելով յրնթ երցուած օրինացն՝ զորմէ թերեւս
 յայնժամ կարի անփոյթ առնէին, բայց այնպի-
 սի կարեւոր օրինակ գրոցն թողեալ ի սրբութեան
 սրբութեանցն փութով եւ հրամանաւն Մովսի-
 սի ի վկայութիւն հետտութեան եւ խտտապա-
 րանցութեան եւ յանցանելոյ ժողովրդեանն. եւ
 չէ ինչ պիտոյ զանհնարինն քան զամենայն իրս
 աշխարհիս ածել զմտաւ, այս ինքն՝ զի մոռաս-
 ցին օրէնքն Մատուծոյ կամ թէ մի օրինակ մնայ-
 ցէ օրինացն գրոց: Վանդի եւ տեսանեմք իսկ
 յայտնապէս՝ թէ ի յայտնելոյ անտի գրոցն, չու-
 սաւ ինչ նորոգ ժողովուրդն. այլ միայն յօժա-
 րադոյնք եղնն մտադիւրադոյնս ունին զնել բար-
 բառոյն՝ որ ծանօթ իսկ էր նոցա: Ասան որոյ
 եւ ասէ իսկ թաղաւորն՝ եթէ Արթայք խըն-
 դրեցէք ի Տեսանէ վասն իմ, եւ վասն ամենե-
 ցուն մնացելոցս յԱսրայէզէ եւ Յուդայ, յա-
 զապս բանից գրոցդ այդոցիկ՝ որք գտան. վասն
 զի մեծ սրտմտութիւն Տեսան բորբոքեալ է ի
 մեզ, զի ոչ լուան հարքն մեր զբանս Տեսան,
 առնել ըստ ամենայնի՝ որ ինչ գրեալ է ի գիրսդ
 յայդոսիկ⁴⁷:

Յետ այսր ամենայնի աւելորդ է քննել մի
 ըստ միոջէ զամենայն՝ զոր ճարտարիցնն թերա-
 հաւաստք եւ չգիտունք եւ սուտ քննիչք, վասն
 իսարէութեան գրոցն Մովսիսի: Աւ սոյն անհնա-

րինք՝ որք անդէն յամենայն ժամանակս գտանին, որպիսի ինչ Ղազարայ ժամանակն, գտանին եւ ամենայն ուրեք: Ի ժողովրդեանն միշտ նոյնպէս գտանի անհնարին հակառակութիւն առ համարել հին զայն ինչ՝ զորոյ զճառս չէր իսկ ամենեւին լուեալ, եւ իրրեւ ի Մովսիսէ տուեալ եւ յառաջագոյն ծանօթ եւ յայանի, զայն՝ զոր նորոգ իսկ տայցեն ի ձեռս նոցա:

Պարտ է զցեղսն որոշեալս յիշել, զի երեւելի իսկ են իրքն: Ըստ ժամանակ ի պատմութեան ազգին քան զամենայն երեւելի է, քանզի յայնժամ եկաց մեւս եւս թագաւորութիւն, եւ թագաւորութիւնն Վաւթի եւ Մողմոնի ընդ երկու բաժանեցաւ: Ըսլ քանզի մովսիսեան գիրք իրրեւ հասարակաց ժառանգութիւն եղեւ երկուց կողմանց ընդ միմեանս հակառակելոց, ապա եւ ի հասարակաց հարց կարգեալ հասանէին յառաջ քան զբաժանելն. ուստի եւ ի Մողմոնէ եւ ի Վաւթայ, եւ ի Սամուէղէ՝ որ օծն իսկ զնա, ի Հեղեայ՝ առ որով Սամուէղ ի մատաղ հասակի ուսեալ էր զՍատուծոյ պաշտօնն եւ զպահպանութիւն օրինացն. այնր օրինաց՝ զոր եւ Վաւթ յերգս սաղմոսացն իւրոց նուագէր, զոր եւ ամենայն մարդիկն երդէին, եւ Մողմոն ի պատգամս իւր՝ որք յամենայն ժողովրդեան ձեռս էին: Ըստպէս որչափ վերագոյն ոք ելանիցէ, գտանէ միշտ զօրէնսն Մովսիսի, զի հաստատեալ կան, անուանի եւ երեւելի եւ ամենայն աշխարհաց ծանօթ, եւ չէք ուրեք դադարել, բայց ի Մովսէս գլխովն. որպէս եւ ի քրիստոնէիցն ժամանակագիր մատեանս չէ մարթ ուրեք հանգչել՝ բայց ի ժամանակսն Վրիստոսի եւ առաքելոցն:

Ըսլ զինչ ինչ անդէն գտանիցեմք. զինչ այլ ինչ յերկուս կողմանն, ի Մովսիսի եւ ի Վրիստոսի գտանիցեմք, թէ ոչ, որպէս յառաջագոյն իսկ ցուցար, նշանս երեւելիս եւ առանց հակառակութեան ի վկայութիւն երկոցունցն

առարման: Աստի՛ զհարուածս եզխպտացւոցն, եւ զանցանել ընդ ծովն կարմիր, եւ զօրինացն ընծայութիւն ի լերինն Աինայի, զերկրին պատառել, եւ զայն եւս ամենայն սքանչելիսն՝ զորոց ասացաւ ողջոյն աղգին, թէ ինքն իսկ վկայ լեալ իցէ այնմ ամենայնի. եւ անտի՛ անթիւ անհամար բժշկութիւնս, մեռելոց յարութիւննրս, եւ զնորին իսկ զՔրիստոսի յարութիւնն, վկայեալ յայնցանէ՝ որք ականատես եղնն, որք եւ մահուամբ չտի վասն նորին ճգնեցան, եւ քան զայն ամենայն աւելի իմիք չէ մարթ ումեք ջանկանալ առ իմանալ զճշմարտութիւն իրիք իրաց. քանզի եւ Աստուած իսկ, անկասկած ասեմ, չկարէր յայտնագոյն ինչ ի հաստատութիւն ճշմարտութեան իրացն առնել, բայց ի զգայնոցն վկայութիւն ածել զերան, եւ ոչ ընծայութիւն ինչ հզօրագոյն առ հաստատութիւն անմեղական միամտութեան որոց վկայելինն, քան զանագորոյն մահն:

Այլ յետ ելանելոյ յերկրոցունց կողմանց, զչրէիցն ասեմ եւ զքրիստոնէից, եւ գտանելոյ զակիղճնն զարդարել սքանչելին եւ աստուածեղէն, պիտոյ էր առ հանելոյ ի գլուխ զդործն, ցուցանել եւ զհազորգութիւն երկրոցունց կարգաց յայտնագէս Աստուծոյ եղելոց: Քանզի պարտ է թէ իցէ ինչ համեմատութիւն ի դործս նորա, եւ ամենայն ի միոջէ խորհրդոյ իցէ, եւ քրիստոնէից օրէնք՝ որք յեանագոյնք են, զմիւսմէն կախեալ իցեն: Աւ զսմանէ յուրաստ ոք չկարէ լինել: Չէ որ երկմիա՝ եթէ չունէին եւ չունին իսկ այժմ՝ չրեայք ակն Քրիստոսի. եւ մարգարէութիւնք՝ զորս նոքա կրեն, չտան յերկմիտս լինել եթէ Քրիստոս՝ որ խոստացեալն էր չրէից, իցէ նա՝ յոր մեքս հաւատամք:

369. 5. Փոխանակ բանեցն՝ զսր ասէ թաղաւորացն մեծաց, որպէս դուդ իցես. Եւս օրէնակն Այ միայն թաղաւորացն մեծաց, որպէս դուդ իցես, այլ եւ իւրաքանչիւր ումեք՝ որ տեսանիցէ ի մեծամեծ

իրս յայտոսիկ, զճաճուկս Աստուծոյ անշու-
թեանն:

424. 23. Յէր ասէլոյ ինչ Ի գլուխ հանեալ կատարեցին,
Բն օրհնակն յասէլոյ Սոյն իսկ է գեղեցիկ պա-
տմութիւնն՝ զոր Վսննոփոն բարւոք մի ըստմիս-
ջէ պատմէ ի մատենի զարձի բիւրուն, կամ ար-
շաւանի կրտսրոյն Ախրոսի:

1) ԼԵՐԵՒ. ԳԻՐԸ Ը. ԳԼ. 95: 2) *ԵՊՆ. ԸՆԴ. ԳԼ. 214: 3) Դ.
ԹՎԵՒ. ԺԼ. 19. Ը. ՍՆԵՑ. Ը. 26: 4) ԼԵՐԵՒ. ԳԻՐԸ Ը. ԳԼ. 154:
5) *ԵՊՆ. ԳԻՐԸ Ը. ԳԼ. 95: 6) Դ. ԹՎԵՒ. ԺԼ. 24. Ը. ԵՐԲ. Դ. 2:
7) Ը. ԼԵՐԸ. Դ. 2. 3: 8) ՅՈՎ. ՆՈՎ. ԳԻՐԸ ԺԳ. ԳԼ. 6: 9) ՅՈՎ. Դ.
23: 10) ԸՆԴ. ԺԳ. 30: 11) *ՕՆՆ. Թ. 9. 10. այլովքն հանդերձ:
12) ԼԵՐԵՒ. Ը. 28. ՅԵՑ. Դ. 3: 13) *ՕՆՆ. ԺԼ. 4. 7: 14) ԸՆԴ. ԻԸ.
22. 23. 32: 15) ՅՈՎ. ԺԳ. 34: 16) ԸՆԴ. ԺԳ. 15: 17) ՍՆԵՑ. Ը.
21. Եւ որ ի կարգին: 18) ԼԵՐԸ. օր. ԺԸ. 15: 19) ՍՆԵՑ. ԺԼ. 5.
ՍՆԵՑ. Թ. 6. ԴՆԵՒ. Թ. 35. Ը. ՊԵՏ. Ը. 17: 20) Ը. ՍՆԵՑ. ԻԸ. 24:
21) ԼԵՐԸ. ԺԳ. 9: 22) Ը. ՍՆԵՑ. ԻԳ. 18: 23) ԸՆԴ. ԻԸ: 27: 24) ԼԵՐԵՒ.
ԻԳ. 15. ԻԸ: 11: 25) *ՕՆՆ. ԺԳ. 14. ՏԵՍՆԸ. 495: 26) ՅՈՎ. ԺԳ.
16: ՊՆԵՑ. ԻՅՈՒՐ. ԹՎՈՒ. Եւ յնքնա: ԴՆԵՒ. ԻԳ. Ի Բազում-
ճարմն փոսոյ. ՍՆԵՑ. Ը. 1150: 27) ԴՆԵՑ. ՏՆԸՄ. Ը. յամ.
3870: 28) ԼԵՒ. ԻԳ. 10. 11. ԴՆԵՑ. ԻԸ. 4: 29) ՏԵՍՆԸ. ԴՎՈՒ.
ԻԸ. 49: 30) Ը. ԼԵՐԸ. Դ. 2. ԴՆԵՒ. Ը. ԺԳ. այլովքն հանդերձ:
31) ՍՆԵՑ. Դ. 4: 32) ԼԵՒ. ԺԳ. 23: 33) *ՕՆՆ. ԺԼ. 11: 34) ԸՆԴ.
Թ. 4: 35) ԸՆԴ. Ը. 3: 36) ԼԵՐԵՒ. ԺԼ. 1. այլովքն հանդերձ. ԸՆԸ.
Ը. 2. ԵՐԵՒ. ԺԼ. 12. ԺԼ. ԻԸ. ԻԳ. Եւ որ ի կարգին. ՍՆԵՑ. Դ. 4:
37) Ը. ՍՆԵՑ. ԻԸ: 38) Դ. ԹՎԵՒ. ԻԸ. ԻԳ. Ը. ՍՆԵՑ. ԻԸ: 39) Դ.
ԹՎԵՒ. ԺԼ. 5. Ը. ՍՆԵՑ. ԻԸ. 19. Եւ որ ի կարգին. ԴՆԵՑ. ԺԳ. ԹՎԵՒ.
Ը. 2: 40) ԸՆԸ. Ը. 20. 21. 22. 23: 41) ՍՆԸ. ԺԸ. 8. 9: 42) ԼԵՐԸ.
օր. 9. 6. 7. 8. 9: 43) ԸՆԴ. ԺԸ. 5. ԺԸ. 23. ԺԸ. 20. ԺԸ. 2. այ-
լովքն հանդերձ: 44) Դ. ԹՎԵՒ. ԻԸ. 10. Ը. ՍՆԵՑ. ԻԸ. 14: 45) ԼԵՐԸ.
օր. ԻԸ. 26: 46) Ը. ՍՆԵՑ. ԻԸ. 14: 47) ԸՆԴ. ԻԸ. 21:

Գ Լ ՈՒ Խ Վ

Թե վասն էր իրիք գրեցաւ մատենս Ե

ԸՈՒՆՁԻՆ ԴՊՐՈՒԹԻՒՆ

Ժ Ե Մ Ե Ն Ե Կ Վ

Ժ.ԸՄ.Ե.Ն.Ե.Կ Ե	Ըրամ կամ արարչութիւն, առաջին դար աշխարհի	1
Ժ.ԸՄ.Ե.Ն.Ե.Կ Բ	Նոյ կամ ջրհեղեղ. երկրորդ դար աշխարհի.	5
Ժ.ԸՄ.Ե.Ն.Ե.Կ Գ	Ըբրահամու կոչումն. երրորդ դար աշխարհի.	8
Ժ.ԸՄ.Ե.Ն.Ե.Կ Դ	Սոփսէս կամ գրով օրէնք. չորրորդ դար աշխարհի	12
Ժ.ԸՄ.Ե.Ն.Ե.Կ Ե	Ըննուլ Իղիոնի	16
Ժ.ԸՄ.Ե.Ն.Ե.Կ Զ	Սողոմոն կամ տաճարին կազմած. հինգերորդ դար աշխարհի	18
Ժ.ԸՄ.Ե.Ն.Ե.Կ Է	Ոսթիղոս կամ շինուած շում քաղաքի	25
Ժ.ԸՄ.Ե.Ն.Ե.Կ Ը	Կիւրոս կամ դառնալ շրէից ի գերութենէ. վեցերորդ դար աշխարհի.	41
Ժ.ԸՄ.Ե.Ն.Ե.Կ Թ	Սկիպիոն կամ կարբեդոնացոցն ի պարտութիւն մատնել	67
Ժ.ԸՄ.Ե.Ն.Ե.Կ Ժ	Նոնուդն Վրիստոսի. եւթներորդ եւ յետին դար աշխարհի	83
Ժ.ԸՄ.Ե.Ն.Ե.Կ ԺԱ	Կոստանդիանոս կամ եկեղեցւոյ խաղաղութիւն	102
Ժ.ԸՄ.Ե.Ն.Ե.Կ ԺԲ	Կարողոս մեծ կամ հաստատութիւն նորոյ պետութեան	140

ԵՐԿՐՈՐԻ ԴՊՐՈՒԹԻՒՆ

Կ Ե Ր Գ Կ Ր Օ Ն Ի Յ

Գ.Լ.ՈՒ.Ի Ե	Ըրարչութիւն կամ առաջին ժամանակք	145
Գ.Լ.ՈՒ.Ի Բ	Ըբրահամ եւ նահապետքն	163
Գ.Լ.ՈՒ.Ի Գ	Սոփսէս, գրով օրէնք եւ մտանել ժողովրդեան յերկիրն աւետեաց	172
Գ.Լ.ՈՒ.Ի Դ	Վաւիթ, թագաւորք եւ մարգարէք	190
Գ.Լ.ՈՒ.Ի Ե	Ժամանակք երկրորդ տաճարին	220
Գ.Լ.ՈՒ.Ի Զ	Վրիստոս եւ ուսումն նորա	236

ԳԼՈՒԽ Է	Հողւոյն սրբոյ իջանել, եկեղեցւոյ հաստա- տութիւն, դատաստանք Մատուծոյ ի վե- րայ շրէից եւ հեթանոսաց	260
ԳԼՈՒԽ Ը	Սանն պատժոց շրէիցն, եւ վասն կանխա- խօսութեանցն Քրիստոսի՝ որովք զպա- տիժսն եցոյց	274
ԳԼՈՒԽ Թ	Երկու կանխախօսութիւնք Տեառն մերոյ մե- կեին, եւ լրումն նոցա յայտ առնի ի պա- տմութենէ	285
ԳԼՈՒԽ Ժ	ՄԼ եւս մոլորութիւնք շրէիցն, եւ թէ զե- արզ մեկնիցեն նոքա զմարգարէութիւնսն	296
ԳԼՈՒԽ ԺԱ	Սանն դարձին հեթանոսաց. անճառ խորհուր- դն Մատուծոյ՝ որ ի ձեռն խաչին Քրիս- տոսի կամբ դարձուցանել զնոսա, եւ Պաւ- ղոսի վասն նորին բանն	312
ԳԼՈՒԽ ԺԲ	Մզգի ազգի կերպարանք կռապաշտութեան, զգայունք եւ շահ եւ ազիտութիւն եւ ի հնութենէ ակն ածել եւ քաղաքաց օրէնք եւ փիղիսոփայութիւն եւ աղանդք՝ կռա- պաշտութեան օգնական եղեն, իսկ եկե- ղեցի այնմ ամենայնի յաղթեաց	320
ԳԼՈՒԽ ԺԳ	Սանն կարգի կրօնից, եւ վասն համեմատու- թեան՝ որ ընդ գիրս կտակարանացն ի միջի կայ	339

Ե Ր Ր Ո Ր Գ Դ Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Պ Ե Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Վ

ԳԼՈՒԽ Ա	Փոփոխմունք պետութեանց Մատուծոյ խնա- մակալութենէն կարգին, վասն զիշխանսն խոնարհեցուցանելոյ	369
ԳԼՈՒԽ Բ	Էն ինչ պատճառք առանձինն պետութեանցն փոփոխմանց, զորս պարտ եւ պատշաճ է թագաւորաց ուսանել	376
ԳԼՈՒԽ Գ	Սկիւթացիք, եթուպացիք եւ եգիպտացիք .	378
ԳԼՈՒԽ Դ	Մտրեստանեացն առաջին եւ երկրորդ միա- հեծան իշխանութիւն, Պարք եւ Նիւրոս .	403
ԳԼՈՒԽ Ե	Պարսիկք, Յոյնք եւ Ղէքսանդրոս	411
ԳԼՈՒԽ Զ	Հոռմայեցւոցն իշխանութիւն	431
ԳԼՈՒԽ Է	Թէ զինչ կարգ փոփոխմանց իրացն հոռմայե- ցւոց եղև՝ յայտ առնի	461
	Փոփոխմունք օրինակաց	481



Ա Ն Ո Ւ Ա Ն Ք

- ԱՐԵՐԵՐԱՍ.** 130:
Արեղ. 2. 162. 282:
Արիա. 19. 507:
Արիմեղէք. 14. 15:
Արիմեղէք գերարացւոց թագաւոր. 174:
Արինէեմ. 14:
Արիզենոս. 37:
Արսիմարոս, ակո Տիբերիոս Արսիմարոս:
Արրահամ. 7. 8. 9. 12. 83. 141. 148. 162. 163. 165—169. 173. 174. 176. 177. 180. 182. 188. 191. 193. 199. 200. 233. 238. 243. 257. 262. 263. 264. 269. 300. 301. 304. 305. 309. 313. 327. 345. 504:
Ազաթան. 127:
Ազամեմնան. 16:
Ազեսոր. 10:
Ազեսիգաւոս. 51. 425:
Ազրիպինա. 86. 87:
Ազրիպպա. 305. 306:
Ազամ. 7. 1. 2. 157. 162. 163. 176. 490:
Ազրիանոս. 86. 89. 103. 262. 294. 303. 310. 330:
Ազրիանոս քահանայապետ. 134:
Ազրիանուպողիս. 107:
Ազարիաս, ակո Ողիս:
Աէտիոս. 113. 114. 115:
Աէրիոս. 106:
Աթանաս Երանելի. 104. 105. 336:
Աթենաս. 420:
Աթենայիք. 10. 15. 17. 24. 28. 31. 42. 43. 44. 48. 50. 52. 182. 231. 421—424. 439:
Աթէղ զեա. 126:
Աթէք. 24. 32. 230. 422:
Աժգահակ. 30. 32. 33. 34:
Ակիրաս. 294:
Ակիդիա. 108:
Ակիսենիա. 118:
Ակաիա, Ակաիոն. 81. 468:
ԱՀարոն. 12. 13. 182. 194. 198. 306. 307. 358. 493. 503. 504:
Աղագարաղէս Անոնիանոս. 90:
Աղարիկոս Ա. 110. 111:
Աղարիկոս Բ. 118:
Աղանայիք. 23. 25. 29:
Աղբինիոս. 120:
Աղբիս զեա. 84. 456:
Աղէքսանդր Սեծ. Բ. 34. 36. 52—56. 66. 90. 211. 222. 369. 373. 398. 410. 411. 426. 627. 429. 438. 439. 453. 486:
Աղէքսանդրայիք. 194. 110. 114. 127. 137. 222:
Աղէքսանդրիա. 71. 82. 222:
Աղէքսանդրոս Ասղաս, ակո Ասղաս:
Աղէքսանդրոս Չարինաս. 76. 77:
Աղէքսանդրոս Յաննէա. 77. 80. 233:
Աղէքսանդրոս Սեւերոս. 91. 93. 326. 327. 330:
Աղիպիոս. 293:
Աղիւս զեա. 30:
Աղիկիրիազէս. 50:
Աղիման. 24:
Աղղիա. 51:
Աղբբոզէս. 77:
Աղւանք. 79:
Աղպք. 63. 77. 133. 134. 465:
Աղփանտոս Ճշմարտահաւատ. 132:
Աղփանտոս պարիէշա. 138:
Ամաղասնաէ. 118:
Աման. 221. 494:
Ամասիա. 22. 507:
Ամբրոսիոս Եպիսկոպոս. 108. 109:
Ամնուլփիս Սեմնան. 396:
Ամնանոս Սարիէղինոս. 293. 336:
Ամիդիար Աարիաս. 61:
Ամն. 30. 509:
Ամնայիք. 47. 204. 205. 226:
Ամնիոս. 93:
Ամովս. 509:
Ամովրհայիք. 172. 175:
Ամուղիոս. 25:

Լճի՛. 19:
 Լճի՛խորին՛. 15:
 Լճա՛հիս, Լճա՛հասկան զի՛ր. 321:
 Լճաստասիրոս. 117. 118:
 Լճաստասիրոս Բ՛րորդ. 128. 129:
 Լճաքոսագորոս. 66. 419:
 Լճդէոս. 214. 216. 217. 501. 505:
 Լճդղիս. 139:
 Լճդղեացիք. 114. 121. 122. 125. 126. 127:
 Լճըրեւասոս. 63:
 Լճիրազ. տես Լճնիրազ:
 Լճիկիոս. 68:
 Լճիսիս. 399:
 Լճիսոս Ս՛արկոս. 30. 454. 462:
 Լճնիրազ. 61. 63. 64. 67. 436. 439. 440. 448 — 451. 453. 465:
 Լճաիզննոս Վ՛նմասոս. 57—59:
 Լճաիզննոս հայր Վ՛եմարի Պա՛չարոզի. 55. 56. 211:
 Լճաինցյոս. 89:
 Լճաիւք. 95. 222:
 Լճաիւքացիք. 70. 91. 95. 137:
 Լճաիւքոս Լ՛սիացի. 233:
 Լճաիւքոս Վ՛սիւպոս. 76. 77:
 Լճաիւքոս Լ՛ւպիհանէս, Լ՛րեւելի. 68. 69. 70. 101. 211. 223. 224. 369. 373. 487. 494. 497:
 Լճաիւքոս Լ՛ւպատովք. 69:
 Լճաիւքոս Թ՛էոս. 58. 65. 222:
 Լճաիւքոս Թ՛էոս Բ՛աղայ. 72:
 Լճաիւքոս Ս՛եծ. 67. 68:
 Լճաիւքոս սիզէացի. 70. 74. 75. 77. 496:
 Լճաիւքոս Սո՛վաէր. 65:
 Լճաիպատրոս. 55. 211. 427:
 Լճաննինոս Բ՛արեպաշտոն. 89. 303:
 Լճաննինոս, տես Կպիոս Լճաննինոս:
 Լճաննինոս, տես Սճարկոս Լճաննինոս:
 Լճաննինոս, տես Լճազարազէս:
 Լճաննինոս, տես Կարակաղզոս:
 Լճաննինոս, տես Սճարկոս Լճըղիս:
 Լճաննիոս, տես Լճաննինոս:
 Լճիոս Կճազիոս. 48:
 Լճոզէոս. 328:
 Լճոզնիրոս Տ՛իւանէս. 288:
 Լճպիհանոս. 484:

Լճրոս. 97:
 Լճնորիոս. 270:
 Լճոս. 19. 507:
 Լճամնեացիք, Լճամնեանէք. 69. 73. 80. 82. 226. 232. 233. 234. 386:
 Լճենափար, տես Լճարդան:
 Լճիս. 42. 321:
 Լճիացիք. 15. 17. 28. 38. 42. 44. 50. 51. 55. 56. 58. 65. 67. 78. 81. 95. 198. 222. 228. 320. 378. 397. 398. 401. 416. 420. 425. 441. 456. 457. 466:
 Լճիւքիս. 384:
 Լճիազնն. 205:
 Լճարդան, Լճարազդան. 28. 29. 40. 483. 485:
 Լճարեւասն. 28. 72. 73. 76. 79. 80. 91. 234. 457:
 Լճարեւասնեւպէք. 15. 23. 25. 26. 28. 29. 30. 34 — 38. 198. 203. 205. 264. 369. 375. 379. 403 — 409. 481. 483. 485:
 Լճորիք. 11. 14. 22. 26. 33. 37. 42. 55. 58. 65. 67 — 77. 90. 126. 165. 203. 204. 211. 214. 222. 223. 225. 227. 233. 286. 290. 369. 429. 430. 452. 456. 487. 496. 497:
 Լճուերոս, տես Լճշաւիր:
 Լճաղիկ. 16. 229. 230. 316. 420:
 Լճատղիոս. 133. 134:
 Լճատուրիացիք. 82. 129:
 Լճատուրազ. 62. 63:
 Լճաղարիկէս. 118:
 Լճասզիոս. 111:
 Լճաննաիկիոս Տ՛ով. 456:
 Լճոտոս. 44:
 Լճատաղոս. 74:
 Լճատիզա. 115:
 Լճարաջիք. 11. 36. 42. 47. 120. 124. 165. 290. 291. 359. 396. 397:
 Լճրածանի զէս. 79. 191. 207. 407:
 Լճրամազդ. 16. 17. 224. 323. 327. 331. 392. 420. 435:
 Լճրասպէս զէս. 427:
 Լճրատոս. 59:
 Լճրոզատաէս. 108. 109:
 Լճրդիացիք. 8. 59:

Աբղաս . 13. 59 ;
 Աբղէայիք . 444. 445 ;
 Աբեգ . քաղաք . 71 ;
 Աբէս . 331. 420. 461 ;
 Աբիանուք . 103. 105. 106. 107.
 110. 111. 113. 117. 121. 129.
 272. 273. 336. 337 ;
 Աբիկիացիք . 444 ;
 Աբիսս . 102. 272 ;
 Աբիտաբուզոս որդի Հիւրկա-
 նեայ . 77 ;
 Աբիտաբուզոս որդի Աղէքսան-
 դրի (Յաննեայ . 233 ;
 Աբիտրիզէս . 45 ;
 Աբիտոպիան . 42 ;
 Աբիտասեղէս . 6. 35. 66. 419.
 450. 473 ;
 Աբիպէս . 109. 110 ;
 Աբմիհոս . 84 ;
 Աբմոդիոս . 42 ;
 Աբշակ . 65 ;
 Աբշակունիք . 65. 73. 80 ;
 Աբշամ . 53 ;
 Աբշաւիր . 39. 42. 221. 482 ;
 Աբուարք . 120 ;
 Աբսէս . 52. 53 ;
 Աբտաշէս Արկայնարացուի . 46.
 47. 50. 85. 212. 213. 304.
 500 ;
 Աբտաշէս Սենմնն , Ուշեղ . 50.
 52. 425. 482 ;
 Աբտաշէս , կամ Աբտաշեր որդի
 Սասանայ . 91 ;
 Աբտասաղ . 132 ;
 Աբտասան Վսեղբսի անձնապա-
 չապետ . 45 ;
 Աբտասան աբրայիլարթեւաց . 91 ;
 Աբտեմիս . 321 ;
 Աբիուքսոզ , տես Պիսկէս ;
 Աբբեղայոս . 299 ;
 Աբրիմիդէս . 449 ;
 Աբրիտաս . 419 ;
 Աբդասիմոս երանելի . 112. 122.
 247. 258. 329. 342 ;
 Աբդաստոս կոյսր . 36. 40. 81 —
 84. 286. 322. 453. 468. 475 ;
 Աբդաստոս , Աբդաստուզոս . 116 ;
 Աենարինն լեւան . 44. 463 ;
 Աբիտոս . 116 ;
 Աւովգ . 14 ;
 Աւրեղիանոս . 95. 96. 336 ;

Աւստրասիա . 129 ;
 Աւստրասիացիք . 119. 120 ;
 Ափրիկեցիք . 20. 60. 64. 65. 113.
 121. 188. 379. 448. 451. 470 ;
 Աքսար . 19. 20. 21 ;
 Աքսաղ . 26. 310. 493. 494. 509 ;
 Աքսեցիք . 59. 72. 439 ;
 Աքիւղէս . 16. 327 ;
 Աքսուերոս , տես Աքշաւիր ;
 Աարեղացիք . 5. 26. 28. 31. 33.
 34. 36. 37. 39. 41. 165. 203.
 205—208. 212. 221. 228. 263.
 277. 278. 345. 369. 372. 373.
 400. 403. 405 — 409. 425.
 482 ;
 Աարեղն . 5. 6. 30—33. 35. 37.
 38. 53. 203. 205. 206. 208.
 209. 257. 278. 297. 347. 372.
 392. 400. 406. 427. 428. 490.
 491 ;
 Աազուս . 53 ;
 Աակարիացիք . 65. 73 ;
 Աաղաս . 70. 71. 72. 76 ;
 Աաղան . 26 ;
 Աաղտասար . 207. 407. 408 ;
 Աանարաս . 86 ;
 Աասիանոս , տես Պարակղզոս ;
 Աասիդիոս երանելի . 106. 117 ;
 Աասիդիկոս . 116 ;
 Աատաւիա . 295 ;
 Աարակ . 14 ;
 Աարաբիտ . 196 ;
 Աարկոբերաս . 294. 303 ;
 Աարուք . 346. 499 ;
 Աարսեղ , տես Աասիդիոս ;
 Աեթզահէմ . 109. 189. 195. 236 ;
 Աեղեսիս , տես Աաղան ;
 Աեղնարիտ . 119. 470 ;
 Աեղովեսէս . 32 ;
 Աենեղիկոս երանելի . 117 ;
 Աենիամին . 188. 190. 200 ;
 Աեթթա . 122 ;
 Աերոսոս . 37 ;
 Աեղ . 14. 15. 208. 406 ;
 Աեովիա . 11 ;
 Աիկննա գաղատացուց . 92. 108 ;
 Աիւզանտացիք . 103 ;
 Աիւթանայիք . 55. 67 ;
 Աիւթանիա . 102 ;
 Ասէկէս . 118 ;

Բանիփակիսս սասիկան ամբիկե-
 ցւոյ . 113 :
 Բանիփակիսս եպիսկոպոս . 130 :
 Բանիփակիսս Ե Երրդ Քաճա-
 նայապետ . 125 :
 Բուկեղնոս . 120 :
 Բուզարբ . 126. 135. 138 :
 Բուրդիններ . 95. 111 :
 Բուրդնայեք . 117. 119 :
 Բրասիզաս . 50 :
 Բրենոս . 56 :
 Բրիտանայեք . 90. 91. 98. 115.
 456. 470 :
 Բրիտանիկոս . 87 :
 Բրունաւզակ . 122. 123 :
 Բրուտինայեք . 57. 59 :
 Բրուտոս . 81. 468 :
 Բրուտոս Հիւպատոս . 43. 432.
 462. 463. 477 :
 Գարաւան . 191 :
 Գազա . 205 :
 Գաղատայեք . 32. 52. 56. 57.
 59. 62. 63. 65. 77. 78. 80. 90.
 91. 92. 94. 96. 100. 105. 107.
 108. 110. 111. 114—117. 130.
 248. 270. 286. 437. 440. 447.
 456. 465. 467. 470. 474 :
 Գաղատայեք սենսեններ . 51 :
 Գաղատիա . 98 :
 Գաղբաս . 87 :
 Գաղերիոս . 98—102 :
 Գաղիա . 119. 133. 139 :
 Գաղիանոս . 95 :
 Գաղիայեք . Բ . 111. 119—123.
 128. 129. 130. 132. 133. 134.
 136. 443. 471. 478 :
 Գաղղոզբեռայեք . 56 :
 Գաղղոս . 94 :
 Գամբր . 78 :
 Գանդէս դետ . 398 :
 Գարիղն լեառն . 54. 70. 76.
 351. 486. 487 :
 Գեդէն . 14 :
 Գենսերիկոս . 113. 115 :
 Գետոս . 90 :
 Գետուղիայեք . 91 :
 Գետր . 95 :
 Գեթարայեք . 174 :
 Գերմանայեք . 89. 92. 95. 96.
 105. 107. 117. 270. 286. 456 :

Գերմանիա . 32. 82. 91. 130. 139.
 195 :
 Գերմանիկոս . 84. 86 :
 Գերմանիեք, տես Գերմանայեք :
 Գերմանոս . 130. 131 :
 Գերմանք , տես Գերմանայեք :
 Գետր . 93 :
 Գոթայիա . 20. 21. 22 :
 Գոթանիկ . 14 :
 Գոզգոթա 283 :
 Գոցիաթ . 17 :
 Գոմար . 209 :
 Գորդիանոս . 93 :
 Գութր . 93. 95. 107. 110. 111.
 113. 118. 120. 129. 130 :
 Գութր արեւելեայք . 117. 118.
 119. 470 :
 Գութր արեւմտեայք . 110. 111.
 118. 121. 470 :
 Գոիւպոս , տես Մնախրոս Գր-
 սիւպոս :
 Գրակրեններ . 74. 466 :
 Գրակրոք , տես Տիրերիոս եւ
 Կայիոս Գրակրոս :
 Գրասիանոս . 106. 107 :
 Գրիգորիոս Նաղիանդայի . 100 :
 Գրիգորիոս Բ բորդ Քաճանայա-
 պետ . 130. 131 :
 Գրիգորիոս Քաճանայապետ մեծ .
 121. 122. 123 :
 Գրիսնայեք , տես Հ աւտայեք :
 Դադոյն . 208 :
 Դակք . 88. 91. 323 :
 Դամասկոս Քաղաք . 65. 165.
 205 :
 Դամասոս . 107 :
 Դանաւոս . 13 :
 Դանիկ . 31. 32. 33. 46. 47. 54.
 84. 85. 197. 206. 207. 211. 214.
 223. 224. 249. 264. 289. 290.
 296. 304—307. 346. 348. 373.
 408. 499. 505. 506 :
 Դանուր դետ . 95. 498. 456 :
 Դարեհ Կոզմանոս սրբի Ըջա-
 մայ . 53. 54. 426 :
 Դարեհ Հարճորդի . 50 :
 Դարեհ Սար , տես Կիւրաբարէս
 Բ բորդ :
 Դարեհ Վ շտապեւայ . 42. 43. 44.
 411. 412. 421 :

Վա. իթ. 17 — 22. 27. 83. 145.
 183. 189 — 200. 203. 225. 226.
 236. 242. 263. 264. 300. 307.
 308. 313. 342. 346. 351. 352.
 485. 494. 507. 508. 511:
 Վերսփրա. 14. 15:
 Վեկերագրոս. 88:
 Վեկոս. 94:
 Վեղփես. 56:
 Վեմարիտոս Նիկանոսիք. 70—77:
 Վեմարիտոս Պաշարիչ. 56. 57:
 Վեմարիտոս Սոփոէր. 68. 69. 70:
 Վեմսիլիտոս. 66:
 Վեմսոթենէս. 52:
 Վեւկաղիան. 10:
 Վիգիւրոս. 134:
 Վիգիտոս Յուզիանոս. 90:
 Վիգոն. 20:
 Վիդասէս Տրիփոն. 72:
 Վիդորոս սիկեղացի. 34. 394.
 395. 401. 499:
 Վիսիէս. 28. 29. 30. 35. 481.
 482:
 Վիսիկեարիանոս. Վ. 97 — 100.
 470:
 Վիսնեսիտոս Երանէլի. 94:
 Վիսնիտոս. 378. 396. 398. 427:
 Վիսնիտոս աղեկաւանացի. 453.
 454. 483:
 Վիսսիորոս. 114:
 Վսմեարիանոս. 87. 88. 326:
 Վստիթեոս. 302:
 Վստիլիտոս. 60:
 Լճրայեցիք. 5. 9. 10. 12. 37. 38.
 39. 49. 58. 141. 148. 165. 173.
 174. 177 — 181. 185. 190. 192.
 197. 203. 209. 210. 211. 215.
 217. 339. 343. 358. 498:
 Լճիպապայիք. 5. 6. 10 — 13. 19.
 27. 29. 35. 42. 55. 56. 58. 65.
 68. 70. 71. 76. 81. 172 — 176.
 186. 198. 203. 204. 222. 229.
 325. 328. 329. 339. 345. 378.
 380 — 403. 407. 416. 417. 418.
 456. 483. 484. 487. 499. 503.
 512:
 Լճիպատոս. 6. 10. 11. 12. 16. 82.
 91. 168. 228. 257. 270. 318.
 328. 341. 390. 394. 407. 457.
 476. 503:

Լճղոմ. 14:
 Լճեւսայիք. 120:
 Լճիդըերզոս. 122:
 Լճոմիմ. տես Լճասա:
 Լճոմիմ. քաղաք. 205:
 Լճոմիմայեցիք. 76. 165. 204. 224.
 226. 481. 491:
 Լճուինոս. 125:
 Լճեկիտոս. 27. 183. 303. 405.
 506. 507:
 Լճեկիկէղ. 31. 196. 202. 203.
 206. 221. 226. 346. 495. 506:
 Լճրատ. 48. 49. 210. 343. 346.
 347. 348. 351 — 355. 486. 500.
 505. 511:
 Լճոմիպապայիք. 27. 82. 378. 379.
 380. 397. 400. 401. 483:
 Լճրատանք. 28. 224. 481:
 Լճիտար. 16:
 Լճրեա թեղացի. 20. 196. 217.
 218. 236. 303:
 Լճրեա, վարդապետ Էրէկց. 304:
 Լճրեա քաղաք. 89:
 Լճրեղաք որդի Լճարանի. 13. 188:
 Լճրեղարոս. 58:
 Լճրեանոս. 36:
 Լճրեասիք. 47:
 Լճիկեպայիք. 396:
 Լճիմատ. 288:
 Լճիշա, Լճիտէ. 20. 196:
 Լճրեա քաղաք. 23:
 Լճրեպապատոս. 45:
 Լճիիլիանոս. 94:
 Լճիպեղոկիէս. 66:
 Լճնէաս. 16. 23:
 Լճոմիք. 2:
 Լճնրիկոս Վ. որդ. Վ:
 Լճպամինանդէս. 52:
 Լճպիկուրեանք. 66:
 Լճպիկուրոս. 66:
 Լճպիւրացիք. 56. 62. 448:
 Լճպիւրոս. 58:
 Լճպիփան. 106:
 Լճսայի. 23. 196. 197. 205. 207.
 208. 209. 221. 224. 236. 243.
 267. 307. 308. 312. 348. 493.
 506. 509:
 Լճարադդոն, տես Լճորդան:
 Լճասա. 9. 186. 481. 491:
 Լճիթեր. 42:
 Լճիտոգոս. 20:

Լատղացիք . 439:
 Լարուբիա . 43:
 Լարուբիացիք . 32. 57. 447. 463:
 Լբակղևոս . 123. 124:
 Լբևմիա . 31. 197. 203. 205 —
 210. 212. 226. 277. 284. 346.
 347. 348. 506. 509:
 Լբիբով . 187:
 Լբողոտոս . 15. 29. 34. 35. 36.
 49. 378. 379. 393. 394. 398.
 401. 482. 483:
 Լբոն . 61:
 Լբոնիմոս երանելի . 34. 109. 113.
 141. 310. 343. 482. 484:
 Լբոնիմոս թագաւոր Սիրակու-
 սայ . 64:
 Լբուղացիք . 116. 117:
 Լբուսաղէմ . 21. 27. 31. 32. 34.
 42. 46. 49. 54. 73. 74. 86. 87.
 89. 103. 188. 190. 192. 198.
 201. 203. 209. 210. 214 — 217.
 222. 225. 231. 240. 241. 250.
 258. 260. 264. 275 — 283. 285.
 286. 288 — 294. 298. 300. 305.
 306. 307. 309. 312. 357. 484.
 486. 487. 495. 496. 498:
 Լբուսաղէմացիք . 54. 71. 86. 103.
 205. 207. 212. 222. 223. 279.
 285. 397. 485. 486. 487:
 Լբւ . 2. 154. 155. 157. 167. 489:
 Լբզինեոս . 108. 109:
 Լբզոբոս կին Երիզդէայ . 110:
 Լբզոբոս զուարթ թէոզոսեայ
 կրտսերայ . 115:
 Լբիզմարուզոբոս . 32:
 Լբմնէս . 441:
 Լբնոս . 74:
 Լբսերիոս կեսարացի . 37. 46.
 343. 484:
 Լբտիբէս . 113. 114:
 Լբտիբիանոսք . 116:
 Լբարսպիոս . 110:
 Լբրիթենէս . 417:
 Լբրուղացիք . Ռ. Գ. 36. 65. 197.
 379. 398. 443:
 Լբրոպիա . Գ. 95. 198:
 Լբքսինոս ծով . 95. 116. 456:
 Լբիեսացիք . 129. 321:
 Լբիեսոս . 113:
 Լբիեսոս . 400:
 Լբիրատ զեա . 29. 73. 456:

Օարինոս, տես Եղէբանդրոս
 Օարինոս:
 Օարարիա մարդարէ . 196. 214.
 216. 220. 226. 233. 264. 309.
 496. 501. 505:
 Օարարիա որդի Յովիպյեայ .
 22:
 Օարարիա շոտմայ քահանայա-
 պետ . 132:
 Օէնորիա . 95:
 Օէնոն կայսր . 116. 117:
 Օէնոն փիղիսափոս . 66:
 Օմբրիա . 42:
 Օմբրիա մեղ . 42:
 Օմիւսնացիք . 91:
 Օսիմոս . 112:
 Օտարարէղ . 41. 210:
 Օրագաշա . 414:

Լմննուէղ . 195. 243:
 Լքս քաղաք . 77:

Թագաղթ, Թագաղթ փաղաք .
 26. 36. 483:
 Թագէս միղեսացի . 65. 418. 419:
 Թագըս պատմագիր . 86:
 Թարակ . 378. 401:
 Թերայիտացիք . 391:
 Թերացիք . 6. 19. 385. 386. 390.
 396:
 Թերացիք Ռեւմիայ . 11. 52. 53:
 Թեդմոս քաղաք . 95:
 Թեմիատսկէս . Ռ. 45. 46. 47:
 Թեսալոնիկ . 58:
 Թեսես . 15. 417:
 Թեսաղացիք . 10:
 Թերամնէս . 50:
 Թերմուպիւղէք . 45:
 Թեարկոյն . 378:
 Թեոզոսիոս մեծ . 107. 108. 109.
 474:
 Թեոզոսիոս կրտսեր . 110. 112. 113.
 115:
 Թեոզոսիոս Գ. որդ . 129:
 Թեոզոսէ . 138:
 Թեոզոտոս . 65:
 Թեոզորեսոս . 114. 120:
 Թեոզորիկոս . 117. 118:
 Թեոզորոս մագաւեստացայ ե-
 պիսկոպոս . 120:

Թճեղ սրտ ըստ հանայապետ. 125:
Թճեղ սրտ. 110:
Թճիւնացիք. 6:
Թճաննու կանեղերու, տես Սար-
գանապարհու:
Թճովմա առարեալ. 269:
Թճուկիկիկէս. 46. 47:
Թճրակացիք. 116. 126. 398. 456:
Թճրասիրբուղու. 50:

Թրաս. 120:
Թրերու գետ. 62. 63:
Թղնաարիս երանելի. 91:
Թղարիս. 105:
Թղիս. 25:
Թղինն. Ե. 15. 16. 18. 20:
Թնարու. 8. 13:
Թնդաթիւրսէս. 378:
Թննակենարիս. 110. 112:
Թննակենարիս Բ.Ժ. երորդ. 358:
Թպարբու. 42:
Թպիաս. 42. 43:
Թպպրկրատէս. 66:
Թսահակ. 9. 162. 167. 168. 169.
174. 176. 177. 182. 199. 200.
257. 263. 491:
Թամպէղ. 165. 167:
Թարպէղ. 9. 18. 19. 21. 22. 24.
26. 41. 169. 180. 181. 182.
188. 192. 193. 198. 202. 225.
228. 231. 236. 238. 242. 258.
264. 266. 267. 287. 304. 311.
485. 486. 491. 493. 494. 495.
500. 509. 510:
Թարպէղացիք. 9. 11. 13. 14. 20.
28. 169. 175. 190. 198. 201.
202. 220. 303. 491. 497:
Թասղացիք. 16. 23. 27. 51. 59.
60. 63—66. 78. 91. 110. 115.
117. 119. 120. 121. 126. 132.
134. 140. 336. 465. 471:
Թասղիս. 32. 56—62. 78. 81.
100. 121. 131. 134. 139. 295.
470. 474:
Թրենէ. 135. 138:
Թրենէս. 92. 93. 270:
Թաղաիք. 120:
Թասրով. 120. 121:
Թասրով Բ. բորդ. 123:
Թար Բասրիք. 65:

Օսով մեծ. 60. 389. 456:
Օսուք. 205:

Սաղմա. 10:
Սաղիկուղա. 86. 469:
Սաղիւթենէս. 6:
Սամբիւսէս հայր կիւրասի. 32. 33:
Սամբիւսէս որդի կիւրասի. 42. 65.
379. 380. 400. 411:
Սամիղլու. 51:
Սայէն. 2. 160:
Սայիս Բնանիննու. 80:
Սայիս Գրակրու. 77:
Սայսր, տես Յուզիս եւ Լուդու-
սոս կայսր:
Սանիս. 436. 448. 449:
Սանտարբացիք. 82:
Սանտացիք. 122:
Սապաղովկացիք. 55. 121. 398:
Սապիտաղինն. 51. 323. 434:
Սապուս. 449:
Սասանդրու. 55. 56:
Սասիս. 81. 468:
Սասպից ծով. 456:
Սաստովք. 16:
Սատիղնա. 80. 475:
Սարաղացիք. 29:
Սարակաղլու. 90:
Սարիննու. 97:
Սարղամաննու. 132:
Սարմիք ծով. 173. 178. 512:
Սարսղու թ. երորդ. Բ:
Սարսղու Սարակուս. 129—133:
Սարսղու մեծ. Ե. 134. 135. 138.
140. 365. 471. 474. 478. 479:
Սարու. 97:
Սարբէղան. 20. 62. 71. 75. 450.
451. 465:
Սարբէղանացիք. Ե. 45. 59—67.
71. 92. 94. 434. 436. 437. 449.
450. 451. 474:
Սեկրոփս. 10. 15. 417. 418:
Սեղեսարիս. 112. 113:
Սեղոս. 329. 331. 335. 336.
343:
Սենարիս. 68:
Սեսարիս. 290. 291:
Սէաղուսաղէս. 127:
Սիւքրասրէս Բ. 30. 32. 378:
Սիւքրասրէս Բ. 32. 33. 482:

Աիկերոն . 80. 324. 436. 453 :
 Աիդանոս . 127 :
 Աիդեկեցիք . 126 :
 Աիմբրացիք . 78 :
 Աիմբրացիք . 378 :
 Աիմնն . 50 :
 Աիպրացիք . 126 :
 Աիպրիանոս . 94 :
 Աիսապեղացիանոսք . 112 :
 Աիւպրոս . 45. 66 :
 Աիւր . 114 :
 Աիւրեղ . 113. 114. 120 :
 Աիւրոս . Ռ. Լ. 32—38. 41. 42.
 44. 46. 65. 205—208. 214.
 221. 310. 372. 400. 403. 407—
 412. 481. 482. 486 :
 Աիւրոս կրտսեր . 50. 425. 482.
 513 :
 Աղաւզիտ . 86 :
 Աղաւդիտ Ռ բորդ . 95 :
 Աղեղիւս . 43 :
 Աղեմն աղէքսանդրացի . 92 :
 Աղզն Վաղեսայ . Վ :
 Աղէմմէնէս . 439 :
 Աղէուպատրա . 70. 71. 73. 74. 76.
 81. 82 :
 Աղտիոն շերաւոր . 114 :
 Աղտամիրոս . 119 :
 Աղտիւս . 117. 119. 127. 365 :
 Աղտերոս . 119 :
 Աղտերոս Ռ բորդ . 123 :
 Աղտաիղղէ . 117 :
 Աղուսայիք . 43. 51 :
 Աղզրոս . 17. 417 :
 Աղզատինոս . 463 :
 Աղջոսացիք . 269 :
 Աղքատք . 398 :
 Ասմոզոս . 90 :
 Անկողիտանոս . 63 :
 Աննն . 127 :
 Ասպրոնիմոս . 132—135 :
 Առննեղիտ Տարիւրայեւ . 261 :
 Առննեղիտ Նեպոս . 46 :
 Աստանդիանոս մեծ . Ռ. Լ. 99—
 104. 114. 127. 272. 371. 470 :
 Աստանդիանոս որդի մեծին Աս-
 տանդիանոսի . 104 :
 Աստանդիանոս ոստիկան ասիրե-
 կեցւոյ աշխարհին . 111 :
 Աստանդիանոս որդի Ղէւոնդեայ
 Վ որդի . 135. 138 :

Աստանդիանոս Պոզմնասոս . 126.
 127 :
 Աստանդիանոս Ասպրոնիմոս, աւս
 Ասպրոնիմոս :
 Աստանդիւնա . 121 :
 Աստանդիւնուպոլիս, Աստան-
 դիւնական բաղար . 103. 107.
 110. 113. 119. 121. 126—130.
 132. 133. 135. 137 :
 Աստանդիոս Վլադրոս . 98. 99.
 470 :
 Աստանդոս . 104. 105. 272. 273.
 336 :
 Աստանդոս թոսն Երակղեայ .
 124. 125. 126 :
 Աստաս . 112 :
 Աստաս որդի մեծին Աստան-
 դիանոսի . 104 :
 Ասրբուզնն . 87 :
 Ասրբուրացիք . 103 :
 Ասրիոզանոս . 44. 442. 443 :
 Ասրկիւրա կղզի . 62 :
 Ասրնիթացիք . 434 :
 Ասրնիթոս . 27. 72 :
 Ասուիրոս . 23 :
 Ասւրիատեանք . 29. 432 :
 Ասւրիտ . 58. 434 :
 Ատեսիւս . 34. 403. 481. 482 :
 Արասոս . 79. 80. 82 :
 Արեսոս . 33 :
 Արեսփոնտէս . 417 :
 Արէոն . 28 :
 Արիսպոս . 103 :
 Արովտոն . 27 :
 * աման , աւս Աման :
 * այք . 55. 79. 87. 91. 132. 398 :
 * եկատեսայ դիք . 327 :
 * եղի . 16. 511 :
 * եղինէ . 103 :
 * եղինոս Վեւիսղիտնի որդի . 10 :
 * եղիտարաղէս , աւս Աղազա-
 րաղէս :
 * եղղէնք . 10 :
 * երա . 331. 420 :
 * երակղէս . 15. 16. 23. 378. 398 :
 * երակղէ արձանք . 36. 79. 379.
 456 :
 * երակղիտոս . 66 :
 * երմս . 385. 386. 388 :
 * երմս , դիք . 420 :

* Երմէս Տրիստէզիատէս. 385. 386.
 388. 395:
 * Երովղէս Բ. գրիպատ. 298:
 * Երովղէս Եղովմայեցի. 81. 84.
 234. 236. 296—300. 305. 306.
 357:
 * Երովղիանոսը. 299:
 * Երուզբ. 470:
 * Իւրիանոս, տես Յովհաննէս
 * Իւրիանոս:
 * Իւրիանոս Բ. բորդ. 80. 82. 233:
 * Իդիկբ. 53. 73. 82. 91. 248.
 269. 378. 396. 398. 427:
 * Եղափեսնէս. 30:
 * Եմբրոս. 20. 390. 393. 404.
 419. 420:
 * Ենք. 115:
 * Եստմբ, տես * Եովմայեցիբ:
 * Եստիմ. 26:
 * Եստեննատ. 117. 120. 131. 132.
 133:
 * Եեկարեդոս. 132:
 * Եեմն քաղաք. 117:
 * Եեռայիբ. 82:
 * Եոզեբիկոս. 128:
 * Եոզոզսնատ. 74. 76:
 * Եոմ. Ե. 18. 25. 32. 41. 43.
 46. 47. 51. 67. 68. 69. 72. 75.
 78. 81—87. 98—104. 107.
 108. 110. 112. 114. 115. 116.
 119. 120. 121. 126. 128. 133.
 134. 140. 234. 262. 323. 370—
 373. 432. 441. 447. 449. 450.
 452. 457. 460. 461. 465—468.
 470. 472. 474. 475. 485:
 * Եովմայեցիբ. * Եստմբ. Բ. Կ. Ե.
 15. 16. 25. 27. 29. 30. 32. 40.
 42. 43. 44. 47. 48. 51. 54. 56—
 72. 74—83. 85. 88—91. 93.
 96. 97. 98. 102. 104. 111. 113.
 115. 117. 119—124. 126. 127.
 128. 132. 134. 136. 137. 138.
 140. 141. 182. 229. 230. 234.
 240. 261. 262. 264. 265. 269.
 278. 279. 280. 282. 286. 288.
 290. 292. 293. 294. 297. 298.
 303. 305. 306. 318. 321. 323.
 325. 326. 330. 336. 340. 369—
 373. 375. 390. 392. 412. 429.
 431—445. 447—453. 455—
 461. 463. 465—475. 478:

* Երեայբ. Ե. 27. 30—35. 41. 47.
 49. 50. 54. 58. 68—75. 77.
 87. 89. 109. 141. 165. 169.
 171. 179. 182. 183. 196. 197.
 203. 204. 205. 208. 209. 210.
 214—217. 221—226. 228. 232.
 233. 234. 236—240. 249. 258.
 260—268. 271. 274. 275. 276.
 278—282. 284. 286—310. 312.
 318. 323. 325. 326. 328. 329.
 336. 339. 340. 342. 343. 346.
 349. 350. 351. 355. 356. 357.
 360. 261. 369. 372. 484. 486.
 487. 495. 496. 498. 499. 501.
 503. 504. 505. 512:
 * Երեատան. 21. 25. 27. 29. 30.
 34. 48. 49. 73. 77. 80. 82. 165.
 169. 198. 203. 204. 224. 231.
 234. 237. 264. 281. 288—291.
 294. 299. 306. 320. 323. 329.
 405. 497:
 * Երեատանեայբ. 225. 299:
 Պարնիտաս, տես Բաղրասար:
 Պաղիկեանք. 55. 222:
 Պաղոս, տես Պաղամկոս Ղա-
 ղոսեայ:
 Պակեղամնայիբ. 21. 45. 50. 51.
 52. 59. 182. 421—425. 439:
 Պամբ. 160:
 Պամբրիկիտ. 330:
 Պատերանոս. 125:
 Պատնայիբ. 10. 23. 30. 34.
 36. 39:
 Պառմեդոն. 15. 16:
 Պաւրենաիտ. 94:
 Պեպրոս. 81. 468:
 Պեթ. 9. 182. 307:
 Պեոնդէս քահանայապետ մեծ.
 114. 115:
 Պեոնդէս Բ. բորդ. քահանայա-
 պետ. 127:
 Պեոնդէս Կ. որդ. քահանայա-
 պետ. 140:
 Պեոնդէս Թրակացի. 116:
 Պեոնդէս իտաւրացի. 128—133:
 Պեոնդէս Դ. որդ. որդի Կոպրու-
 նիմեայ. 135:
 Պեոնիդատ սպարաբաշայեց թա-
 ղաւար. 45:
 Պեոնիդէս հայր Որբիկնեայ. 93:

Պ եւտաքրիզէս . 45 :
 Պ եւտացիք . 13. 22. 184. 198.
 200. 202. 210. 500 :
 Պ իրանոն . 192 :
 Պ իրերիս . 104 :
 Պ իրէատանն . 91. 119. 126. 128.
 198. 456 :
 Պ իրէացիք . 60. 112. 113. 123.
 389. 397. 404 :
 Պ իկինոս . 99. 100. 102 :
 Պ իկուբդոս . 21. 182. 394. 418 :
 Պ իւզացիք . 33 :
 Պ իւկիացիք . 126 :
 Պ իւսանդբոս . 50 :
 Պ իւսիաս . 69 :
 Պ իւսիմուքոս . 55. 56 :
 Պ իւրիկեցիք . 62. 68 :
 Պ իւրիկէ . 100. 456 :
 Պ անդորարդացիք . 120. 121. 126.
 131 — 135. 471 :
 Պ սլա . 292 :
 Պ սւղովիկոս Պ.Ժ. Երորդ մեծ . Բ.
 439 :
 Պ սւղովիկոս Թ. Երորդ երանելի .
 365 :
 Պ սիսապրանդոս . 131. 132 :
 Պ սկաս . 289. 344 :
 Պ սկիոս Բերոս . 90 :
 Պ սկիոս Սկիպիոն . 67 :
 Պ սկուզդոս . 79 :
 Պ սկտանիա քաղաք . 91 :
 Պ սկրեստիա . 43. 48. 463 :
 Պ ստատիոս . 61 :
 Ղ նէք . 484 :
 Ս ազնեւտիս . 104 :
 Ս ադիանացիք . 14 :
 Ս ադիւէս . 378 :
 Ս աթանիաս , աես Սեզեկիաս :
 Ս ախարայեցիք , աես Սակա-
 բեացիք :
 Ս ախարէ , աես Յուզա Ս ախարէ :
 Ս ախարէացիք . 69. 72. 226. 249.
 297. 441 :
 Ս ախեզան . 107 :
 Ս ախեզանացիք . 52. 55 — 59. 67.
 68. 425 — 429. 434. 437. 438.
 439. 453 :
 Ս ախեզանիա . 56. 57. 59. 68 :
 Ս ախրինոս . 91 :

Ս ահամէս . 124. 126. 478 :
 Ս ադարբիաս . 214. 217. 218. 501.
 505 :
 Ս առէա . 91 :
 Ս ադիորիանոս . 116 :
 Ս անայեմ . 24 :
 Ս անասէ եղբայր Յազդէայ քա-
 չանայապետի . 53. 54. 486 :
 Ս անասէ թագաւոր . 27. 30. 202.
 310. 493. 494. 509 :
 Ս անդանէ . 32 :
 Ս անի . 344 :
 Ս ախիզնոս . 86 :
 Ս աաաթի . 68. 224 :
 Ս աբաթան դաշա . 44 :
 Ս աբդանիոս . 44. 45 :
 Ս աբիամ Տայր Տեառն . 246 :
 Ս աբիամ կին Աստանդիանոսի
 որդւոյ Վեանդէայ Վ որդի . 138 :
 Ս աբիոս . 78. 79. 466. 467. 475 :
 Ս աբիւկոս . 64 :
 Ս աբիխանոս կայսր . 114. 116. 127 :
 Ս աբիխն . 344 :
 Ս աբիխնք , Ս աբիխնեստոյք .
 336. 337 :
 Ս աբիոմանք . 89. 323 :
 Ս աբիովրոս . 111 :
 Ս աբիոս աւետարանիչ . 289 :
 Ս աբիոս Բնտոնիանոս . 81. 82. 468.
 475 :
 Ս աբիոս Բերեղիոս Բնտոնիանոս .
 89 — 92. 303. 470 :
 Ս աբիղիա քաղաք . 31 :
 Ս աբախնոս եպիսկոպոս . 106 :
 Ս աբախնոս քաջանայապետ . 125 :
 Ս աբք . 25. 28. 29. 30. 32 — 35.
 37. 38. 39. 206. 207. 208. 264.
 373. 375. 378. 403. 407. 408.
 409. 481 :
 Ս աբրեգատոս . 138 :
 Ս աբրիտիս . 121. 122. 123 :
 Ս աբսեւտիոս . 99. 100. 102 :
 Ս աբսիփանոս . 98 — 101. 470 :
 Ս աբսիփանոս . 99. 101. 102 :
 Ս աբսիփանոս բռնաւոր . 93 :
 Ս աբսիմոս . 115 :
 Ս աբսիմոս բռնաւոր . 107. 108 :
 Ս աբսիմոս երանելի . 125 :
 Ս եգաաթեւն . 36. 378 :
 Ս եգիսդանն . 63. 108. 120 :
 Ս եզան . 17 :

Սեկենաս . 322 :
 Սեկհա . 124 :
 Սեղբխեղեկ . 8. 162. 174. 188. 194. 307 :
 Սեման սողացի . 427 :
 Սեմիացիք . 6 :
 Սեմիխ . 205 :
 Սենանդրոս . 302 :
 Սենեզաուս . 16 :
 Սենենիոս Ազրիպպա . 44 :
 Սեոհա . 83. 193. 235. 302. 303. 358. 361 :
 Սեոայէք . 295 :
 Սեոեզդոս . 78 :
 Սերիկացիք . 125 :
 Սերբեւա . 114. 116 :
 Սեոմսին ծովակ . 115 :
 Սիթրիդատէս կապադովացոյց թագաւոր . 55 :
 Սիթրիդատէս մծ , արքայ պնտացոյց . 78. 79. 233. 466 :
 Սիթրիդատէս Պարթեւոյ թագաւոր . 73. 74 :
 Սիկազէս . 45 :
 Սիդաիազէս . Ի . 44. 50 :
 Սիմօս . 21. 417 :
 Սիջուէոք . 14. 97 :
 Սիւնդորէս . 50 :
 Սիւսիա . 126 :
 Սիւրիս . 389. 390 :
 Սիւրիսեան կամ Սիւրիսեան ծովակ . 389. 390 :
 Սնտանոս . 92 :
 Սոպուսեոսայէք . 120 :
 Սոփար . 14 :
 Սոփարացիք . 204. 205 :
 Սոփէս . Գ . 1. 10—14. 18. 20. 22. 23. 28. 48. 49. 68. 71. 76. 145. 148—151. 153. 160. 161. 162. 172—191. 199. 202. 210. 218. 221. 224. 239. 243. 247. 256. 258. 261. 295. 297. 328. 329. 335. 341—354. 358. 361. 385. 394. 485. 492. 493. 499—511 :
 Սոփիտանայէք . 81. 91. 128—130. 138 :
 Սուդեոս . 138 :
 Սուսիոս . 72. 434 :
 Յարէթ . 5 :
 Յարին . 14 :

Յազդոս . 53. 54. 486 :
 Յաղկերա . 110 :
 Յակովբ . 9. 10. 162. 168—172. 174. 176. 177. 179. 180. 182. 199. 200. 209. 214. 226. 257. 262. 263. 264. 267. 294. 296. 298—302. 304. 491 :
 Յակովբոս առաքեալ եղբայր Յովհաննու . 283. 298 :
 Յակովբոս եղբայր Տեաան . 283 :
 Յամբղիկոս . 334 :
 Յամբէս . 328 :
 Յանէս . 328 :
 Յաննէս . 82 :
 Յապետովթէ . 5 :
 Յասն . 16 :
 Յերուսայէք . 188. 190 :
 Յեզարէղ . 19. 20. 21 :
 Յեուս . Յեոսով . 13. 14. 185. 187. 188. 341. 345. 353 :
 Յեուս Յովսեղեկեանց . 41 :
 Յեուէ . 189. 197 :
 Յերորովամ . 18. 19. 485 :
 Յերորովամ Ի բորդ . 22 :
 Յեթիթայէ . 14. 15 :
 Յերմիա . 31 :
 Յեու . 21 :
 Յիսուս կենարարն մեր . 8. 12. 83—86. 113. 122. 124. 134. 146. 196. 213. 240. 241. 246. 247. 250. 252. 257. 258. 260. 261. 276. 283. 292. 298. 301. 304. 307. 308. 313. 316. 317. 325. 327. 328. 329. 337. 340. 356. 361. 370. 492 :
 Յիսուս կամ Յեուս . 276 :
 Յիսուս , սես Յեուս :
 Յովթոր . 11 :
 Յոբ . Ի . Գ . 8. 10. 11. 13. 15. 16. 23. 26. 27. 29. 31. 34—40. 42. 44. 46. 48—53. 55—59. 62. 65—68. 72. 78. 89. 91. 103. 107. 136. 141. 211. 222. 223. 224. 228—231. 264. 373. 375. 390. 393. 394. 396. 401. 404. 410. 411. 414. 416—427. 431. 439. 440. 441. 452. 453. 456. 457. 464. 481. 483. 498 :
 Յոնիա . 17 :
 Յոնիացիք . 29. 31. 45. 65 :
 Յովար . 190 :

Հովածամբ. 23. 25:
 Հովակիմ. 31:
 Հովաս. 21. 22:
 Հովաքաղ. 40. 483:
 Հովաքիմ, տես Հեքոնիա:
 Հովբ. 185. 186:
 Հովիանոս. 105. 106:
 Հովիգայէ. 21. 22:
 Հովհան դամասկայի. 131:
 Հովհաննէս առաքեալ. 87. 91.
 250. 298. 370. 372. 373:
 Հովհաննէս շիրիանոս. 74—77.
 226. 302. 487. 497:
 Հովհաննէս Սկրտիչ. 84. 236.
 271. 301:
 Հովհաննէս Վորդ քահանայապետ. 124:
 Հովհան Սոկերեան. 110. 293:
 Հովնածան, Հովնածէս. 70-72.
 73. 225. 232:
 Հովնան. 24:
 Հովսարէէ. 21:
 Հովսափած. 19. 20. 22. 183.
 507:
 Հովսեպոս. 27. 274. 275. 278.
 280. 288. 289. 291. 299. 300.
 305. 306. 386:
 Հովսէփ. 9. 176:
 Հովսէփ փեսայ սրբոյ Սուսան. 308:
 Հովսիա. 30. 31. 184. 506. 509:
 Հովրամբ. 20. 21:
 Հորդանան. 187:
 Հրկացիք. 126:
 Հուգուրթաս. 78:
 Հուդա. 9. 10. 18. 19—22. 26.
 27. 28. 41. 58. 69. 76. 169.
 170. 188. 189. 190. 192. 193.
 195. 200. 202. 206. 210. 214.
 215. 226. 227. 262. 263. 264.
 277. 296. 298. 300. 304. 307.
 309. 357. 405. 485. 495. 496.
 509. 510:
 Հուդա Սահարէ. 69. 70. 224.
 225. 302:
 Հուգայական աղգ, տես Հուգա:
 Հուգայասան. 169. 263:
 Հուգայեանք. 169. 201. 210.
 225:
 Հուդիմ. 29. 481:
 Հուդիա. 90:

Հուդիանոս սրացեալ. 105. 228.
 273. 293. 325. 329. 334. 343:
 Հուդիանոս կամն. 128:
 Հուդիոս Սայր. 80. 81. 467.
 468. 475:
 Հուդիոս քահանայապետ առաջին. 104:
 Հուսարիէ. 107. 108:
 Հուսարիանոս. 118. 119. 120.
 470:
 Հուսարիանոս Ռորդ. 127. 128:
 Հուսարիոս. 118:
 Հուսարիոս Ռորդ. 120:
 Հուսարիոս պատմագիր. 34. 378.
 404. 499:
 Հուսարիոս փիլիսոփոս ի մերմէ սճոյս. 91. 270. 303. 337:
 Կարգ. 482:
 Կարնաստարոս. 26:
 Կարսնեզոս, տես Բաղաստար:
 Կարովիմ. 20:
 Կարուկոզրոսոս. 39:
 Կարուկոզաստարոս. 39:
 Կարուպոզար. 30. 31:
 Կարուքոզնոսար. 29. 30. 39.
 481:
 Կարուքոզնոսար Ռորդ. 31. 32.
 36. 39. 203—207. 220. 224.
 277. 278. 279. 281. 377. 406:
 Կարսնական Վաղասիա. 77:
 Կերրովիմ. 5. 7. 160:
 Կեղոս զեա. 10. 387. 388. 389.
 407:
 Կեստորիոս. 113. 119:
 Կերիգլաստարոս. 32:
 Կերոն. 40. 87. 261. 286. 287.
 300. 326. 469:
 Կերուաս. 88:
 Կերսէս. 119. 120. 470.
 Կեստորիա. 129:
 Կեստորիացիք. 119:
 Կէսպոզսեցիք. 65:
 Կէսմի. 46—49. 210. 347. 348.
 486:
 Կեկանովբ. 69:
 Կեկիա. 135. 136:
 Կեկիացիք. 102:
 Կեկոզարա դամասկայի. 37:
 Կեկովիդիա. 98:
 Կեղէս. 17:

*Ահնու Ռեզայ. 15. 38. 403. 404.
 405:
 *Ահնու կրտսեր, տես թագազաթ:
 *Ահնուս. 15. 405:
 *Ահնուէ. 5. 15. 26. 27. 30. 201.
 205. 372. 403. 485:
 *Ահնուէացիք. 24. 26. 28. 38. 405.
 484:
 *Ախտովորիս. 407:
 *Ասղա. 64. 449:
 *Ասիկրիանոս. 97:
 *Ասիկաովք. 25:
 *Ասյ. Դ. 3. 5. 7. 162. 163. 176.
 490. 504:
 *Ասրթուճրեղանդացիք. 125:
 *Ասմանտիանացիք. 75:
 *Ասման Պամպիզիոս. 27. 182.
 340. 454. 462:
 *Ասմիդացիք. 78:

Աամիրամ. 15. 403. 404. 405:
 Աամրին. 19. 21. 28. 42. 54. 77.
 205. 226. 405. 484. 485:
 Աամրտայիք. 28. 41. 42. 47. 49.
 50. 54. 70. 71. 76. 77. 238. 302.
 342. 343. 351. 353. 484—487:
 Աապուհ Մրտաշրի. 93:
 Աապուհ Որմիզի. 104:
 Աաշ. 53:
 Աաուդ. 16. 17. 189:
 Աիզա. 78. 466. 467. 472. 475:
 Ամուսն. 72. 72. 74. 225. 226.
 302. 487:
 Ամուսն ձերուներ. 236:
 Աուշան. 297:

Աղենատոս. 95:
 Ադրուս. 16:
 Ադրակրոս. 116. 117:
 Ազիս. 22. 23. 40. 482. 507:
 Աթոն. 87:
 Ակտարիոս, Աքտաւիանոս, տես
 Ալգոստոս կայսր:
 Անիա. 71:
 Անորիոս կայսր. 110. 111. 112.
 470:
 Անորիոս քահանայապետ առա-
 ջին. 124. 125. 127:
 Ասրազդէս. 125:
 Ասիմենդիս. 401:
 Ասիրիս. 386. 396:

Աստինոս. 125:
 Աստիս քաղաք. 30:
 Ավսէէ. 23. 509:
 Ավսէէ արքայ. 26:
 Ավսիոս. 103. 104:
 Ավքոս. 52:
 Արասաներ. 29:
 Արասիոս. 432:
 Արասիոս սրեռէս. 84:
 Արասիոս կոկղէս. 43:
 Արեստոս. 116:
 Արիգենէս. 93. 120. 270. 292.
 337:
 Արմիզդ. 414:
 Արմիզդ քահանայապետ. 118:
 Արդինէս, տես Որիգենէս:
 Արիէտացիք. 131:
 Արփեւոս. 16. 327:
 Աքոզիս. 21:

Պաղոս զեռ. 32. 63:
 Պաթմոս կղզի. 87:
 Պաղենտինացիք. 91. 126. 174.
 257:
 Պանոնիա. 82:
 Պանոնիացիք. 108:
 Պապիրիոս Սուրհանդակ. 55:
 Պարթեւք. 65. 73. 74. 75. 80.
 82. 87. 88. 89. 91. 323. 469:
 Պարիս քաղաք. Գ:
 Պարիսատէ. 50:
 Պարմենիդէս. 66:
 Պարսիկք. Պարսք. Ռ. 30. 32 —
 35. 37. 39. 41. 43. 44. 45. 47.
 50—55. 67. 91. 93. 95. 97. 98.
 103. 105. 107. 110. 119. 120.
 123. 124. 126. 206. 207. 208.
 210. 213. 221. 222. 234. 264.
 297. 369. 373. 375. 379. 394.
 401. 406—414. 416. 421—427.
 469. 482:
 Պարսիկէս. 417:
 Պաւիս. 120:
 Պաւղիստոսայք. 337:
 Պաւղոս առաքեալ. 86. 87. 93.
 261. 262. 263. 265. 266—270.
 273. 283. 287. 292. 298. 312—
 315. 318. 320. 321. 328. 349.
 350. 493:
 Պաւղոս Արտամանդինուպոլսի հայ-
 րապետ. 135:

Պաւլոս Լսիլիոս. 68. 434:
Պաւլոս սամսատացի. 95. 336:
Պաւսանիաս թագաւոր զակեղ-
մնացւոց. 45:
Պաւսանիաս մեւս եւս. 53:
Պեղադիանոսը. 337:
Պեղադիոս. 129. 132:
Պեղադիոս Հերձուածապետ. 112:
Պեղզա քաղաք. 291:
Պեղզպոնեսացիք. 66:
Պեղզպոնեսոս. 14. 50. 424:
Պեղզոփո. 14:
Պեպինոս Լըրիտեղոս. 128. 129:
Պեպինոս գաղիացւոց թագաւոր.
132. 133. 134. 471:
Պետրոս աւարեալ. 86. 87. 93.
121. 237. 260. 261. 262. 283.
287. 292. 298. 358. 359. 360.
503:
Պերդամնայէք. 55. 74. 441:
Պերդիկկաս. 55:
Պերիկղէս. 50:
Պերիպատեաթիկեանք. 66:
Պերսեւս. 68. 441:
Պերսոս. 299:
Պերսինաքս. 90:
Պիկտաւիացիք. 105:
Պիլատոս, տես Պոնտոս Պիլատոս:
Պինդարոս. 53:
Պիոս. 23:
Պիտիատրատեանք. 42:
Պիտիատրատէս. 32. 42:
Պիտտակոս. 418:
Պիւթագորաս. 65. 331. 394.
418. 419:
Պիւռոս. 56 — 59. 434. 448:
Պիւրենական լերինք. 63. 82. 111.
118. 129. 130:
Պլակիդա. 111. 112. 113:
Պլատինա. 45:
Պլատոն. 35. 66. 231. 315. 318.
331. 387. 394. 404. 414. 419.
423. 424:
Պլատոնիկեանք. 332:
Պլինիոս. 328:
Պլինիոս մանուկ. 324:
Պլուտարքոս. 47. 453:
Պոզանատոս, տես Լիստանդիա-
նոս Պոզանատոս:
Պոդիւրիոս. 437. 438. 439. 451.
452. 453. 473:

Պոլեկարպոս. 91. 92:
Պոլղլքս. 16:
Պոլղքրա. 110. 114:
Պոմպէոս. 79. 80. 233. 234. 297.
467. 475:
Պոնտացիք. 55. 78:
Պոնտոս Պիլատոս. 240. 298. 326:
Պորսենա. 43. 433. 447:
Պորփիրոս. 228. 327. 331. 333.
334:
Պուլլոս, տես Փուլլոս:
Պաղամեանք. 401:
Պաղամէոս գրագիր. 26. 36:
Պաղամէոս Կերաւնոս. 56:
Պաղամէոս Վազոսեայ. 55. 56.
58. 211. 222:
Պաղամէոս փիլղազեղիոս. 58. 222:
Պաղամէոս փիլղամատլը. 70. 71.
487:
Պրիամոս 15. 16. 404:
Պրորոս. 96. 97:
Պրոսպեր. 112:
Պրովենկիա. 117:
Պրուսիաս. 67:
Ռագազեւս. 110:
Ռեբեկա. 491:
Ռեզուզոս. 60. 434. 436:
Ռեկարեզոս. 121:
Ռեմոս երանելի. 117:
Ռեմոս եղբայր Ռոմիղայ. 25:
Ռեննո գէւ. 96. 111. 119:
Ռիփինէս. 105:
Ռորովամ. 18. 19. 200. 397.
485. 507:
Ռոմեղոս արքայ Իսրայէլի. 26:
Ռոմիղոս. Լ. 25. 27. 29. 30.
182. 371. 458. 461. 462. 478:
Ռուփինոս. 110:
Սարակ, Սարակոն. 27. 399.
401. 483:
Սարեղիանոսը. 337:
Սարեղիոս. 94:
Սարինացիք. 29:
Սաղոնդիա քաղաք. 63:
Սաղովի. 202. 495:
Սաղուկեցիք. 249:
ՍաՀակ, տես ԻսաՀակ:
Սաղամին. 45. 423:
Սաղեացիք. 77:

Սաղեմ. 174. 188:
 Սաղմանասար. 26. 27. 36:
 Սաղնա քաղաք. 99:
 Սաղուսաբոս. 436. 437:
 Սամարացիք, տես Շամրացիք:
 Սամարիա, տես Շամրին:
 Սամիրացիք. 54. 57. 59. 434:
 Սամուէլ. 16. 189. 353. 511:
 Սամիան. 16:
 Սայխացիք. 391:
 Սանարաղատոս. 54. 76:
 Սանդարամետական զիք. 229:
 Սառա. 166. 167:
 Սասունիներ. 78:
 Սարակ. 483:
 Սարակոս, տես Վինազազան եւ
 Սենեքերիբ:
 Սարայիաս. 31:
 Սարգան. 23. 483:
 Սարգանապատկոս. 23—26. 34.
 35. 38. 40. 405. 483:
 Սարգանփուշու. 23:
 Սարդանիա. 61. 63:
 Սարդանիացիք. 60. 126:
 Սարմատք. 91. 105. 323:
 Սարսեղան. 16:
 Սասագուքին. 29:
 Սարսանիացիք, Սաքսնք. 115.
 138. 470:
 Սեզովեսէս. 32:
 Սեզեկիա. 31. 40. 277. 279. 280.
 287. 346. 483:
 Սեթմիւ. 400:
 Սեղբետրոս. 103:
 Սեղեւիկեանք. 55. 222. 234.
 297:
 Սեղեւիոս կղզուպատրոյ. 76:
 Սեղեւիոս Նիկանայր. 55. 56. 58.
 211. 222:
 Սեղեւիոս փղուպատոյր. 68:
 Սեղղում, տես Տօվաբազ:
 Սեմ. 5. 163:
 Սենեքերիբ. 27. 28. 36. 40. 379.
 482:
 Սեսալտարիա. 19. 205. 396—401.
 405. 416:
 Սերբիոս Տուզդիոս. 32. 41. 43.
 432. 448. 462. 472:
 Սերգիոս. 127:
 Սերուիոս Տուզդիոս, տես Սեր-
 բիոս Տուզդիոս:

Սերտարիոս. 79:
 Սեւերոս. 98. 99:
 Սեւերոս Վփրիկանոս. 90. 92. 470:
 Սեքստիոս. 77:
 Սեքստոս. 43:
 Սէթ. 2. 162:
 Սիբիլաք. 340:
 Սիկիդեա. 27. 45. 59. 61. 63.
 64. 74. 78:
 Սիկիդեացիք. 60. 126:
 Սիմաքոս. 118:
 Սիմոնիդէս. 229:
 Սիմոն մուգ. 288. 302:
 Սինա լեռան. 12. 173. 512:
 Սիսմե. 190. 197. 267. 312:
 Սիսակ. 19:
 Սիսարա. 14:
 Սիրակուսա. 27. 61. 64. 449:
 Սիրակուսացիք. 64:
 Սիւզլա, տես Շիլա:
 Սիւքեմ. 76:
 Սիււոյա. 43:
 Սիլիպիոս Վփրիկանոս մեծ. 1. 40.
 64. 65. 67. 71. 439. 440. 449.
 450. 451. 465:
 Սիլիպիոս Ամիդիանոս Վփրիկանոս
 կրտսեր. 40. 71. 75:
 Սիլիպիոս Նասիկայ. 75:
 Սիլիպիոսեանք. 64. 449:
 Սիլիթացիք. 91. 95. 378. 398:
 Սիւնուացիք. 60:
 Սոգում. 209:
 Սոլոմոնցիք. 292:
 Սոկրատէս. 66. 230. 231. 318.
 419:
 Սոյաման. 1. 17. 18. 95. 183.
 190—193. 200. 226. 242. 249.
 280. 342. 345. 346. 351. 352.
 365. 397. 398. 399. 485. 507.
 508. 511:
 Սոյան. 31. 182. 230. 394. 418.
 464:
 Սոմա, Սուս, տես Սարակին:
 Սուետանիոս. 299:
 Սոփիա. 120:
 Սպանդարամետ. 316:
 Սպանիա. 36. 61. 64. 75. 78. 79.
 98. 138. 139. 449. 470:
 Սպանիացիք. 60. 62. 64. 81. 91.
 110. 111. 113. 121. 128—131.
 138. 270. 286. 452. 456:

Սպարապետ . 79 :
 Սպարապետիք . 45. 51 :
 Սպարափա . 422 :
 Ստեփանոս նախավկայ . 86. 282. 298 :
 Ստեփանոս քահանայապետ . 94 :
 Ստեփանոս Գ որդ քահանայապետ . 133 :
 Ստրղելոն . 110. 111 :
 Ստյոկենանք . 66. 331 :
 Ստրարոն . 36. 378 :
 Ստրերտոս . 128 :

Սաստոս . 117 :
 Սաղենախանուք . 93 :
 Սաղենախնիանոս . 106 :
 Սաղենախնիանոս Ի բորդ . 107. 108 :
 Սաղենախնիանոս Գ որդ . 112. 115. 470 :
 Սաղերիանոս . 94. 95 :
 Սաղերիոս Գ . 43. 44 :
 Սաղէս կայսր . 106. 107. 273 :
 Սաղէս շեղիսկոպոս . 104 :
 Սաղիս . 111 :
 Սանդաղք . 110. 113. 119. 470 :
 Սարգիէս . 25. 35. 405 :
 Սարոն . 23. 324 :
 Սենեսիկ . 115 :
 Սեպրիանոս . 87. 263. 300. 310 :
 Սեխացիք . 30. 51. 463 :
 Սեղբերտոս . 128 :
 Սեղիզաս . 113 :
 Սեղբբորդէս . 128 :
 Սեղփրիտոս . 126 :
 Սեուրդիս գետ . 82 :
 Սեռեղիս . 87. 290 :
 Սերգիդիոս . 84. 459 :
 Սերդիսիս . 48 :
 Սերք . 79 :
 Սղոսիանոս կայսր . 94 :
 Սղուսիանոս . 329 :
 Սղսկացիք . 44. 442. 443 :

Տակիտոս . 96. 275. 299. 326. 499 :
 Տաճիկք . 120. 124. 126. 128. 129. 130. 133. 135. 138. 165. 295. 349. 470 :
 Տայանիս . 6. 10. 205 :
 Տանայիս գետ . 398. 456 :
 Տանաւոս . 378 :


Տանապէս . 14 :
 Տարանտոն . 28. 59 :
 Տարանտոնացիք . 57. 59. 60 :
 Տարասիոս . 135 :
 Տարկինեանք , Տարկինուք . 43. 432. 433. 478 :
 Տարկինոս Սուպերբոս , Լժբարտաւան . 41. 43. 434. 462 :
 Տարկինոս Պրիսկոս . 32. 462 :
 Տարկուինոս , տես Տարկինոս :
 Տարոս լեւոն . 67 :
 Տեմնէս . 417 :
 Տերենդիոս Վարոն . 448 :
 Տերտուղիանոս . 92. 93. 270. 329 :
 Տեւտա . 62 :
 Տեւտոնք . 78 :
 Տիբերիոս . 84. 85. 86. 326. 329. 399 :
 Տիբերիոս Լբսիմարոս . 128 :
 Տիբերիոս Վրասկոս . 74. 77 :
 Տիբերիս գետ . 30 :
 Տիբերոս Ի բորդ . 121 :
 Տիդիանոս . 36 :
 Տիտոս . 87. 262. 263. 277—281. 290. 291. 292. 294. 305. 310 :
 Տիտոս Ղիւրոս . 433. 438. 441. 454 :
 Տիւրացիք . 15. 20. 54 :
 Տիւրոս . 20 :
 Տոգրիակ . 117 :
 Տոդոսացիք . 118 :
 Տովրիթ . 200. 201 :
 Տուղլոս Ստրիդիոս . 29. 432. 462 :
 Տուրոնիացիք . 106. 130 :
 Տրայիանոս . 88. 91. 324 :
 Տրիբոնիանոս . 119 :
 Տրիփոն . 72. 73. 74 :
 Տրովաղա . 25 :
 Տրովացիք . 15. 404 :

Փարիոս . 77 :
 Փարիոս Սարսիմոս . 64 :
 Փարբիկոս . 57. 434 :
 Փակէոս . 26 :
 Փաղեակացիք . 51 :
 Փաղսար . 26. 483 :
 Փաննակէս . 25 :
 Փարամոնդոս . 111. 114 :
 Փարաւոն . 9. 10. 11. 173. 174 :
 Փարսապիա . 81 :

ՎՄԻՊԵԱԼԷՔՆ Ի ԳՐՈՇՄԵԼ ՄԱՏԵՆՆԻՍ

Է.Ք.	ՏՈՂ.	ՍԽԱՆ.	ՈՒՂԻՎ.
5	20	Սէթ սյ	Սէմայ
133	2	Էրկերբէր	Հարեւր
140	21	յու.թ	յե.թն
312	11	տասն	Էրկոտասան
328	4	սյնորիկ	սյնոցիկ
371	7	պաշտանեւ	պաշտպանեւ
381	25	առ.աձինն	առ.անձինն







Handwritten text on a small strip of paper, possibly a label or note, oriented horizontally. The text is mirrored, appearing as if written on the reverse side of the paper. It includes the number "26/5" and some illegible characters.

•••••

